Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ
Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն

ԳԱԲՐԻԵԼ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆ

ԵՐԿԵՐ

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ— 1984

ԳՄԴ 84 Հ1
Ս 942

Կազմող՝ Հ. Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Առաջաբանը՝ Ս. Բ. ԱՂԱԲԱԲՅԱՆԻ

Սունդուկյան Գ.
Ս 942 Երկեր (Կազմ.՝ Հ. Ա. Պետրոսյան; Առաջաբանը՝ Ս. Բ. Աղաբաբյանի.— Եր.: Սովետ գրող. 1984;
էջ 870: (Հայ դասականների գ-րան);
Ժողովածուում ամփոփված են դասական դրամատուրգի հանրահայտ պիեսները:

4702090100 (10) ԳՄԴ 84 Հ1
Ս ——————— 84 «Տ»
705 (01) 84

© «Սովետական գրող» հրատարակչություն. կազմելու, առաջաբանի և ձևավորման համար, 1984

ԳԱԲՐԻԵԼ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆ

Մինչև Գաբրիել Սունդուկյանի ասպարեզ գալը հայ թատերագրության մեջ տիրապետող դիրքեր էին գրավել երկու ուղղություն. մեկ կլասիցիստական-ռոմանտիկական շնչի պատմական ողբերգության ուղղությունը՝ «արշակյան», «վարդանյան», «շուշանիկ-սանդուխտյան» մեծաքանակ ցիկլերով, մեկ էլ կենցաղագրական ողնիլների ուղղությունը:

Պատմական ողբերգության ժանրը, անտարակուսելիորեն, դրական դեր խաղաց ազգային ինքնագիտակցության արթնացման, հայրենի անցյալի հիշատակներով ժամանակակիցներին զինելու գործում: Այդուամենայնիվ, սահմանափակ ու միակողմանի էր պատմական ողբերգության ընդգրկման տեսահորիզոնը, հնացած էր նրա պաթոսն ու արտահայտման ոճը, որի համար արժանացավ Մ. Նալբանդյանի և Հ. Պարոնյանի նման իրատես մտածողների ուժեղ քննադատությանը: Թեև Մ. Նալբանդյանը դրական խոսքով պաշտպանում էր կենցաղի մասին պատմող ողնիլների ուղղության ծնունդը, սակայն այդ ժանրը ևս ի վիճակի չէր դառնալու լիարժեք թատերագրություն: Այդ թատերագրության՝ դրամայի պահանջը, օդի չափ անհրաժեշտ էր հայ հասարակությանը:

Թատերական-թատերագրական նոր մտածողության կրողը եղավ Գաբրիել Սունդուկյանը, որը դիմելով դարձյալ ազգագրական-բանահյուսական-կենցաղային նյութին, ինչպես և օգտագործելով ռուս ու համաշխարհային թատերագրության փորձը, ստեղծեց ազգային լիարժեք թատերագրություն՝ դրամա, որին վիճակված էր հարուստ կյանք հայոց թատրոնի տարեգրության մեջ:

«Էլի մեկ զոհ», «Խաթաբալա», «Քանդած օջախ», «Պեպո» կատակերգական հիմքի դրամաները, ինչպես նաև «Վարինկի վեշերը» պատմվածքը, «մասլահաթների» նշանավոր «Կտակը» մտան հայ գրականության գանձարանը՝ իբրև նրա անձեռնմխելի արժեքներ:

Ինչպես ստեղծագործության հիշյալ գլուխգործոցներում, այնպես էլ մյուս, շարքային դրվագներում Գաբրիել Սունդուկյանը ասպարեզ հա-

նեց իր ուրույն մոտեցումը աշխարհի ու կյանքի հանդեպ, իր աշխարհայացքային կոորդինատները, ուր առանձնահատուկ տեղ է գրավում այսպես կոչված «էթիկական երակը»:

1

Գաբրիել Սունդուկյանի ծննդավայրը Թիֆլիսն է, իրենց տոհմական քաղաքը, ուր 1825 թվականի հունիսի 29-ին (հին տոմարով) աշխարհ է բացել ապագա թատերագիրը: Հայրը՝ Մկրտում Սունդուկյանը, թեև զբաղվել է առևտրական գործառնություններով՝ Ռուսաստանի և Կովկասի քաղաքներում, սակայն ամբողջ տոհմով հորտական կախման մեջ են եղել էջմիածնից:

Շուտով՝ 1831-ին մահանում է հայրը, երեխաների հոգսը ծանրանում է մոր՝ Թինաթինայի վրա, որը եղել է կրթության հարգը գնահատող կին: Թիֆլիսում հանրահայտ Հակոբ Շահան-Զրպետյանից և նրա ֆրանսուհի կնոջից 1832—1838 թթ. դասեր առնելով գրաբարից, հին և նոր եվրոպական լեզուներից, այնուհետև Գ. Սունդուկյանը սովորում է Արգանյանների (1838—1840), ապա նաև Խ. Արովյանի մասնավոր պանսիոնում՝ ստանալով «աշխարհիկ» դաստիարակություն:

Թինաթինայի՝ մոր, եռանդուն ջանքերի շնորհիվ ազատվում են «հորտագրյալ» վիճակից, և Գաբրիելը հնարավորություն է ստանում մինչև 1846 թվականը ուսանելու Թիֆլիսի գիմնազիայում:

Շուտով նա հայտնվում է Պետերբուրգի կայսերական համալսարանում: Այստեղ նա սովորում է պատմաբանասիրական ֆակուլտետի արևելյան լեզուների ֆակուլտետում՝ «չինովնիկ» դառնալու հեռանկարով: Այդ հեռանկարը նրան բնավ չէր գոհացնում, թեև համալսարանը ավարտելուց հետո, գիտական աստիճանով (դիսերտացիայի նյութը պարսկական պոեզիայի տաղաչափությունն էր) վերադառնում է ծննդավայր և 1850-ին աշխատանքի անցնում Կովկասի փոխարքայության գրասենյակում իբրև թարգմանիչ:

Իհարկե, կենսագրության «պետերբուրգյան հանգրվանը» շատ բան չի տալիս ապագա պաշտոնյային, սակայն վճռական դեր է խաղում նրա հոգևոր աշխարհի ձևավորման և հարցասիրությունների լայնացման մեջ:

Պետերբուրգյան թատրոններում նա հիմնավորապես ծանոթանում է խաղացանկին, ուր գլխավոր տեղում էին Շեքսպիրը, Շիլլերը, Մոլիերը, ռուս հեղինակները (Գոգոլ, Օստրովսկի), այստեղ նա դիտում է Շչեպկինի, Մոչալովի, Կարատիգինի նման մեծահռչակ արտիստների խաղը:

Պետերբուրգյան գաղափարական խմորումների մեջ էին Վ. Գ. Բելինսկու քննադատական հոդվածները, առձակի «գոգոլյան ուղղությունը», որը շատ բարձր էր գնահատում Ն. Գ. Չերնիշևսկին (ենթադրություններ կան, որ Գ. Սունդուկյանը անձամբ ծանոթ է եղել ռուս մեծ վաթսունականի հետ):

Գաղափարական նոր հովերը չէին կարող հետք չթողնել մանավանդ կովկասյան երիտասարդության՝ «Թերեքի ջուր խմածների», տրամադրությունների վրա, նրանց կողմնորոշելով դեպի կյանքի կատարելագործման ու ժողովրդի լուսավորության սկզբունքները:

Մենդավայր վերադառնալուց հետո Գ. Սունդուկյանը Կովկասի փոխարքա Վարանցովի կարգադրությամբ մեկուսացվում է Դերբենտում՝ իբրև «ազատական»: Թեև Դերբենտում նա տարվել է իր ինժեներական-ճարտարագիտական մտահղացումներով, քաղաքի վերաշինության համարձակ ծրագրերով, սակայն հայրենիքի կարոտը, մայրական գիրկը հանգիստ չեն տալիս նրան: 1858-ին Գ. Սունդուկյանը ստանում է Թիֆլիս վերադառնալու թույլտվությունը, երկար ժամանակ, մինչև դարավերջ, նա աշխատում է ճանապարհների Կովկասյան վարչությունում:

Գ. Սունդուկյանի կենսագիրների վկայություններով նա «թիֆլիսյան հանգրվանում» աչքի է ընկել հասարակական ծառայության երեսի վարքագծով, հայ թատրոնի և դպրոցական ցանցի բարեհորոգման համար ներդրած ջանքերով: Նրա հասարակական գործունեության ամենանշանակալից դրվագը մասնակցությունն է 1865 թվականի թիֆլիսյան «նամբարական շարժումներին», դեմոկրատական-պլեբեյական տարերքի այն շարժմանը, որի նպատակն էր մարդկային ինքնուրույնության և կյանքի արդարությունների հաստատումը: Արհեստավորական կառուցվածքի այդ շարժմանը գաղափարական անհրաժեշտ լիցքեր էին հաղորդում անձնվեր հայ մտավորականները, դրանց մեջ նաև Գ. Սունդուկյանը, որին հազիվ հաջողվում է խուսափել նոր աքսորից՝ իբրև «քաղաքական անբարեհույսի»:

Վերջերս վրացական «Մեգոբրոբա» («Բարեկամություն») Տեղեկագրի երրորդ պրակում տպագրվել են Գ. Սունդուկյանի չհրապարակված նամակները (թվով՝ 6) իր դստեր, որոնք, ինչպես հաղորդում է դրանց հրատարակող Լ. Սարիբեկովան, նոր լույս են փռում 1907—1912 թթ. Գ. Սունդուկյանի գործունեության վրա (այս մասին տե՛ս «Вопросы литературы», 1984, № 1):

2

Գ. Սունդուկյանի թատերագրության անդրանիկ էջը 1863-ին գրած «Գիշիրվան սաբրը խեր է» ոդևիլն է՝ գրված Ն. Փուղինյանի «Դալալ Ղազո» հաչակված ոդևիլի ներշնչանքներով (ինչպես ինքն է խոստովանել):

Մոտ տասը տարվա ժամանակահատվածում (1863—1872) Գ. Սունդուկյանը գրում է իր ոդեիլների ցիկլը՝ «Գիշիրվան սաբրը խեր է», «Օսկան Պետրովիչը էն կինոումը», «Եվ այլն կամ նոր Դիոգենես», «Բաղերսի բոխչա» (սա գրվել է 1907-ին) և իր կատակերգությունների ցիկլը՝ «Խաթաբալա», «Էլի մեկ զոհ», «Պեպո», «Քանդած օջախ»:

Թեև հարազատության ներքին թելեր են ձգվում երկու ցիկլերի միջև, անգամ կրկնվում են իրադրություններ և մարդկային փոխհարաբերություններ, սակայն վճռական, էական տարբերություններ կան դրանց միջև ոչ այնքան գաղափարական-բարոյախոսական հայեցվածքի, որքան ձևակառուցվածքային հատկանիշների՝ տիպագրման ու դիալոգի վարպետության, դրամատիկական հանգույցների դրվածքի և դրանց լուծման առումներով:

Ոդեիլները շատ բանով չեն տարբերվում 60—70-ական թթ. հայ իրականության մեջ տարածված «կենցաղային ժանրից» կամ, եթե դիմենք կերպարվեստի գիտական տերմինաբանությանը՝ «ժանրապատկերներից»:

«Հայ թատրոնի բեմը դարձել էր արդեն պահանջ հայ հասարակության համար, ուրեմն պետք էր պահպանել նորա գոյությունը, վերականգնել նորա դերասանական ուժերը»[1],— այս առաքելության մեջ էր պատկերացնում արևելահայ թատրոնի ապագան նրա կառուցողներից մեկը՝ Գևորգ Զմշկյանը:

«Թատերական երազանքներով» էին շնչում ուրիշ գործիչներ ևս՝ **Միհրդատ Ամրիկյանը, Սեդրակ Մանդինյանը, Գաբրիել Սունդուկյանը:**

Վերջինս իր երազանքներին ճանապարհ տվեց նաև ոդեիլի ժանրում՝ զգալով, ինարկե, դրա որոշակի սահմանափակությունը, պպա՝ կատակերգություն-դրամայի, որով վերաշրջվում, վերանայվում էր «ոդեիլային կատակաբանության» այն ուղղությանը, որը մի որոշ ժամանակ դրական դեր խաղաց հայ թատրոնի կենսական տարածության, կյանքի նյութի լայնացման առումով:

Այսուամենայնիվ, նույն այդ ոդեիլների մեջ Գ. Սունդուկյանը ի հայտ է բերում որոշակի աշխարհայեցողություն՝ հին, նահապետական, որոշ առումով բանաստեղծական բարքերի փլուզումը կապելով վերբարձրացող հասարակական այն խավի (վաճառականներ, շինովնիկներ և այլն) հետ, որոնց գործունեության դրոշակի վրա գրվում է արդեն «փող, փող, փող» նշանաբանը: Այլևս անցյալ են դառնում արհեստավորական Թիֆլիսին բնորոշ վառվռուն, բազմաբեսակ գույները և

1 *«Իմ հիշատակարանը», 1953, Երևան, էջ 116։*

մնում է միայն «ոսկու փայլը»: Այդ հոգեբանությամբ են ասպարեզ հանված «Գիշիրվան սաբրը խեր է» կատակի մանրավաճառ Իրասածովը, նույն ինքը՝ Օսկան Պետրովիչը, որը հայոց թատրոնին խոստացած դրամը չտալու համար Դժոխք է ընկել և առաքինություն քարոզող հոգևորականների, օրինավոր վարք ուսուցանող մանկավարժների, բարոյականություն քարոզող խմբագիրների հետ միասին ենթարկվում է Դժոխքի շարշարանքին («Օսկան Պետրովիչը էն կինոումը»), ապա նաև Եվայլենը, որի հետ կրկնվում է Դիոգենեսի տակառի պատմությունը՝ իր ամբարտավանության և բարոյական վերասերման պատճառով:

Սունդուկյանական ոդեիլները արտահայտում էին չարիքի կրողներին ըստ նրանց գործած մեղքերի չափի դատ ու դատաստան բացելու ժողովրդական բարոյախոսությունը: Այդպես, դատն ու կծու երգիծանքի ոլորտի մեջ են հայտնվում Օսկան Պետրովիչն ու Եվայլեն-ը, հետագայում նաև «Բաղերսի բոխչա» ոդեիլի հերոսները:

Ոդեիլները, ինչպես հուշում են ժամանակի մամուլի տվյալները և հուշագրությունները, ունեցել են լուրջ հաջողություն հայ և վրաց հանդիսականների շրջանում: Այդ հաջողությանը մեծապես նպաստել են, մերկացման պաթոսից բացի, ժողովրդական հյութեղ բառաբանի հմուտ կիրառությունները, կալամբուրային սրամտությունները, մականունների առատությունը, նաև ներկայացումների տոնական արդուզարդը՝ պարեղանակները, սիրային և հայրենասիրական երգարանը՝ «Ով լուսին, լուսին», «Հայոց աղջիկներ...», «Բաժակներն առնում ք, եղբայրք», «Եղբայրք, մի շուրջ ժողվեցեք», Թիֆլիսի կենցաղի բանաստեղծական պատկերագծերը:

3

Գ. Սունդուկյանին, ինարկե, թատերագրի անուն բերեց «Խաթաբալան», որը և հետաքրքրություն է ներկայացնում ոչ այնքան սոցիալական բևեռացումներով, որքան իր բարոյա-էթիկական նկարագրի բովանդակությամբ:

Գ. Սունդուկյանն, իրատես, շեշտը, գլխավոր շեշտը գցում է իր հայացքների բարոյական եզրի վրա, ինչպես փորձել են ներկայացնել «Խաթաբալան» առաջին բեմադրություններում: «Խաթաբալան» բեմ բարձրացավ 1866-ին (առաջին տարբերակը), իսկ 1879-ին ներկայացվեց վերջին տարբերակը՝ շոշ գործողությամբ հայտնի այն կատակերգությունը, որը կարելի է համարել պիեսի «կանոնիկ բնագիրը»:

Մասիսյանցի պատրանքը՝ փողոցում տեսած գեղեցիկ կնոջ շփոթելը

տանը մնացած աղջկա հետ,— այս թյուրիմացությունը դարձնելով կա-
տակերգական դրությունների շարժառիթ, Գ. Սունդուկյանը նույն այդ
«թյուրիմացության մոտիվներով» շարադրում է խորապես դրամատի-
կական մի պատմություն, որի առանցքը ոչ այնքան Զամբախովն է, որ-
քան նրա դուստրը՝ Մարգարիտը:

Անտարակույս, Գ. Սունդուկյանը ռենոգենյան հառագայթներ նե-
տել է նաև Գերասիմ Յակուլիչ Զամբախովի էության խորքերը՝ չրի երես
հանելու վաճառականության նոր ֆորմացիայի ներկայացուցչի ուրույն,
նահապետական անցյալից միանգամայն տարբեր կենսափիլիսոփայու-
թյունը, որի առանցքը դարի գլխավոր խնդիրն էր՝ «կանխիկ հաշվի»
սրբագործումը, ապա նաև «խաբելու», իբրև գոյության կռվի գլխավոր
լծակի («խաբելը ո՞րն է...» մենախոսությունը) հիմնավորումը:

Այսուամենայնիվ. ինքնատական ուժեղ վերաբերմունք ունենալով
Զամբախովյան կենսափիլիսոփայական դրույթների հանդեպ, Գ. Սուն-
դուկյանը մի ինչ-որ տեղ էլ շրջանցում է մերկացման պաթոսը, ի դեմս
Զամբախովի կերպարի գնահատելով նրա իսկ անզորությունը Մարգա-
ռիտի ճակատագիրը տնօրինելու հարցում, ապա նաև հայրական սերը
աճօգնական, բախտից հալածված, խոսակցության նյութ դարձած Մար-
գարիտի հանդեպ, այն Մարգարիտի, որը հուսահատության մի պահի
դիմում է ասածուն՝ «Ախ, աստուծ, երանի ինձ չէիր ստեղծի... ով գիդի՝
ինչ պիտի գա գլխիս»:

Զամբախովը, ինարկե, մնում է Զամբախով (թեև նրա կերպարի թա-
տերական անձնավորումների մեջ կան անհարկի սոցիոլոգիական կոշ-
տացումներ), սակայն Գ. Սունդուկյանին տվյալ պարագայում զբաղեց-
րել է նաև երեսյթի մյուս կողմը՝ նույն Զամբախովի հայրական զգաց-
մունքների բացահայտումը, Մարգարիտի հոգեկան ցնցող դրաման:

Մնյալ տգեղ, Մարգարիտը իրենց շրեղ տան շորս պատերի մեջ մե-
կուսացած ապրել է՝ ինչպես վանդակում, երազելով ազատ թռչունի կյան-
քը, երազելով մարդկային երջանկությունը՝ հրեշտակի թևերով:

Նա սպասում է այդ երջանկությանը, բայց չի գալիս իր սպասածը:
Այդպիսի առաքելություն թերևս պետք էր սպասել կայսրության մայ-
րաքաղաքում կրթություն ստացած, մարդկային հոգու ազատության
իդեալներով գինված Մասիսյանցից, սակայն, ինչպես պարզում են հե-
տագա գործողությունները, սա ևս մնում է իր միջավայրի՝ նահապե-
տականության դիրքերում, իր արարքով (փախուստով) չի արդարացնում
այնքան բարձր ագդարարվող ազատամտությունը:

«Խաբաբալայի» ընդհանուր հաշվեկշռի մեջ Մասիսյանցը չունի այն

կշիռը, ինչ ունեն Զամբախովը, Եսային, Խամփերին՝ իրև կենդանի բնա-
վորություններ և, վերջապես, Մարգարիտը:

Այս կերպարի մեկնաբանության ուղղության մեջ էլ արտահայտվել
է Գ. Սունդուկյանի էթիկական կանոնագիրքը՝ ամեն մարդկայինի, բոլոր
թույլ և կործանվող հոգիների, վիրավորվածների և ստորացվածների
պաշտպանությունը:

«Խաբաբալայի» բեմական պատմությունից հայտնի է մի դեպք, որը
լույս է սփռում Գ. Սունդուկյանի էթիկայի վրա:

1886-ին «Խաթաբալան» բեմադրվում է վրաց թատրոնում: Ներկա-
յացումը գնահատվում է Իլյա Ճավճավաձեի «Իվերիա» թերթում: Գրա-
խոսը, բարձր գնահատելով պիեսի արժանավորություններ, անում է
հետևյալ ոչ անկարևոր դիտողությունը. «Բնությունը Մարգարիտին տգեղ
է ծնել, մի՞թե դրա համար պետք է ծաղրել նրան: Դա մեծ սխալ է»:

Ավելի քան հետաքրքրական է այս ռեպլիկին Գ. Սունդուկյանի տված
պատասխանը՝ նույն «Իվերիա» թերթում (1886, № 49): Գ. Սունդուկյա-
նը գրում է, «Պարոն ռեցենզենտը ի միջի այլոց գրում է. «Մեզ զարմաց-
նում է այն հանգամանքը, որ հերոինակը (այսինքն ես) ինչպես լայեղ
արավ այնպիսի անգթություն, անկարեկցություն և նույնիսկ անարդա-
ություն Մարգարիտի նկատմամբ: Տգեղ աղամարդին, այն էլ աղջիկը,
մեր կարծիքով, գթասրտության և կարեկցության արժանի է և ոչ թե
բեռբուռ անելու: Դա մեծ սխալ է և ըստ ամենայնի անթույլատրելի
սխալ»:

Այնուհետև հիշելով «Խաթաբալայի» քսանամյա կյանքը հայոց թա-
տրում, տասնամյա կյանքը վրաց թատրում, Գ. Սունդուկյանը դարձյալ ու
դարձյալ ընդգծում է իր գեղարվեստական խնդրի գլխավոր ուղղությունը՝
շարժել հանդիսատեսի կարեկցությունը Մարգարիտի հանդեպ:

Հիշում է նաև օրինակները այն հասարակությունից, որը «արցունք
է թափել» դժբախտ աղջկա բախտի համար:

Գ. Սունդուկյանի երկերի ժողովածուի քառահատորյակի ծանոթա-
գրություններում բերված են փաստեր, թե ինչպես էր Գ. Սունդուկյանը
ուղղություն տալիս Մարգարիտի դերակատարներին և սրբագրում նրանց
խոտորումները, «սխալ ճանապարհները», շեշտը գցելով Մարգարիտի
«ոսկե սրտի»՝ բարության, անմեղության վրա: «Նրան պետք է խղճալ,
սիրել, գուրգուրել և ոչ թե ծիծաղել»,— ասել է Գ. Սունդուկյանը (Ոլգա
Գուլազյան, «Իմ հուշերը», «Գրական թերթ», 1950, № 28):

Գ. Սունդուկյանի աշխարհայացքի ուղղությունը պարզելու առումով
հիանալի փաստաթուղթ է թատերագրի ծրագիրը՝ վերջնական խմբագրու-
թյամբ. **«Գործողություն Ա., պատկեր Ա.** անմեղ բանը քան և դառնում,

պատկեր Բ. դիվ խափել ու խափել, Գործողություն Բ. պատկեր Ա. խեղճ տղա, Գործողություն Գ. պատկեր Ա. խեղճ աղջիկ, պատկեր Բ. Մենք մագիեր մեկելը, պատկեր Գ. Նուրին ջվալումը չի թաք կենա (առաջին տարբերակում եղել է «Խաթաբալա»):

Հեղինակային ծրագրային նշումները վկայում են Գ. Սունդուկյանի հատուկ կենտրոնացումը մարդկային խեղճություն, մարդու նվաստացման փաստի վրա, որը իբրև նոր ժամանակներին առավել բնորոշ երևույթ դրական նշանով հիշեցնում է «Հայր Աբրահամու վախտը», երբ դեռ կենդանի էին կարեկցության զգացմունքները:

«Խաթաբալայի» առաջին տարբերակին հետևեց մի ուրիշ պիես՝ «Մախլաս» անունով, որի վերախմբագրված տարբերակը՝ «Էլի մեկ զոհ» խորագրով, բեմադրվեց 1870-ին:

Այս պիեսը նույնպես արժանացավ մամուլի իրարամերժ, հակադիր արձագանքներին: Գևորգ Զմշկյանը, Գրիգոր Արծրունին, Բաֆֆին և ուրիշներ բաժանում էին դրական գծի տեսակետը: Ի դեմս Միքայելի և Անանիի կերպարների նրանք արժեքավորում էին մարդկային հոգիները ամեն տեսակի բռնադատող կապանքներից ազատագրելու այն գաղափարները, որը հատուկ էր ժամանակի տարբաստիճան մտավորականության, որի ներկայացուցիչների կերպարներն, ի դեպ, բավական մեծ կենսական տարածություն էին գրավում ռուս թատերագրության (Ա. Օստրովսկու) և գեղարվեստական արձակի (Ի. Ս. Տուրգենևի) երկերում:

Գ. Սունդուկյանը Յուրի Վեսելովսկուն հայտնել է, թե «Միքայելը այդ ես եմ», ինչպես նույն բանն է ասել «Խաթաբալայի» Մասիսյանցի մասին: Անկախ ինքնակենսագրական տարրից, այդ երկու կերպարների միջև կա ներքին, խոր հարազատություն: Միքայելը Մասիսյանցի ուղղակի շարունակությունն է՝ կոչված մայրաքաղաքային առաջադիմական տրամադրություններով ցրելու հայ իրականության «խավարի բազավորությունը» և այնտեղ հաստատելու «լուսավոր աշխարհի» քարերը: Բայց հայրենիքում, ուր վերադառնում է ի անդավա մղումներով ու ծրագրերով, նա չունի համապատասխան հենակետեր, այսպես կոչված «գաղափարական համախոհներ»: Ներք ընտանիքների՝ Սարգսի, Սուրաբովի, Բրիլիանտովի տերերն ու տիրոջները իրենց էության մեջ կրում են դարի գործնական ոգին, ընչաքաղցության և կուտակման տենչանքները:

Գ. Սունդուկյանը, ինչպես նա կարող էր անել, ֆենոմենական մերկացման դասաստանի առաջ է կանգնեցնում առեղծական-շիզովենիկական վերնախավին, մերկացման մեջ հասնելով մինչև վերջին սահմանագիծը:

Սա իր տեղում և իր ներքին:

«Էլի մեկ զոհ» պիեսի ողբերգական տարողությունը կրում է Անանիին՝ լուսամիտ, ազնվանոգի, բարեկիրթ մի աղջիկ, որը հեզ ու խոնարհ բնավորությամբ իսկ ծառանում է իր իսկ շրջապատի, իր ընտանիքի դեմ, ծառանում է՝ հանուն մարդկայնության և նշմարտության. «Մի՞թե խեղճի համար բախտավորություն չկա այս աշխարհում, մի՞թե ամեն բան առևտրի վրա է հիմնված, մի՞թե էլ ոչինչ սուրբ ոչինչ չի մնում...»:

Անանու սերը առ Միքայելը և Միքայելի սերը առ Անանին ենթարկվում է այնպիսի դաժան փորձությունների, որ հեղինակին մնում է «Էլի մեկ զոհի» եզրակացությունը:

Գ. Սունդուկյանն իր այս պիեսում սահմանում է կյանքի բանաստեղծական սկզբունքի (տվյալ դեպքում՝ Անանիի) սրտի և ազնվության, ապա նաև արդարության ու աշխատանքի սկզբունքի (Միքայելի) գերազանցությունը, «նոր սերնդի», անհաշտ պայքարազմի անհրաժեշտությունը՝ հանուն կյանքի «բարոյական վերանորոգության» (այսպես է ձևակերպել գրվածքի բովանդակությունը «Մշակ» թերթը):

«Էլի մեկ զոհը» նաև հետաքրքրական բեմական պատմություն ունի: Հիշարժան են, օրինակ, Պետրոս Ադամյանի և Սիրանույշի անձնավորումները՝ Միքայելի և Անանու: Ավելի քան հետաքրքրական են վրացի նշանավոր բանաստեղծ Ակակի Մերեթելու, դրամատուրգ Յագարելու, հայտնի արձակագիր Ալեքսանդր Ղազբեգիի դերակատարումները 1876 թվականին, Թիֆլիսի վրացական թատրոնի բեմում:

4

Հայոց թատրոնի տարեգրության մեջ ժամանակագրական նոր թվական էր 1871 թվականի ապրիլի 30-ը: Այդ օրը Թիֆլիսի հայոց թատրոնն առաջին անգամ ներկայացնում է «Պեպոն»՝ գլխավոր դերակատար ունենալով Գևորգ Զմշկյանին, այն նույն դերասանին, որի «Հիշատակարանի» տվյալներով Գ. Սունդուկյանը նրան է թելադրել «Պեպոյի» ձեռագիրը (պիեսն առաջին անգամ տպագրվել է 1876-ին):

«Խաթաբալայից» հետո,— գրում է Զմշկյանը,— վաղուց էր ես այդպիսի բազմատեսակ հաստակություն չէի տեսել հայերեն ներկայացումների ժամանակ... Այսպիսի անսպասելի հաջողությամբ վերջացավ «Պեպոյի» ներկայացումը, որով և հանձնվեցավ այդ պրեսան հայոց թատրոնի ռեպերտուարին ընդմիշտ»[1]:

Ոչ միայն Զմշկյանը, այլև շատ ուրիշ հայ ու վրացի թատերական

[1] Գ. Զմշկյան. *«Իմ հիշատակարանը»*, 1953, էջ 97։

գործիչներ, դերասաններ, հրապարակախոսներ իրենց մեմուարներում, նոթերում, նամակներում «Պեպոն» գնահատում են իբրև կովկասյան թատերական աշխարհի ամենանշանակալից իրադարձությունը:

Շուտով «Պեպոն» տպագրվում է վրացերեն՝ Իլյա Ճավճավաձեի «Իվերիա» թերթում, ապա առանձին գրքով, այնուհետև բարձրանում է վրացական բեմ:

Այդ նշանակալից, տոնական, խանդավառ օրերից հետո սկսվում է «Պեպոյի» հարյուրամյա համփոդությունը Անդրկովկասի և Հյուսիսային Կովկասի, Ռուսաստանի հարավի և Միջին Ասիայի, աշխարհագրական այլ կետերի՝ քաղաքների, շրջանների, գյուղերի բեմերում, միշտ հարուցելով հանդիսականների ակտիվ վերաբերմունքը:

Թատերական վիճակագրության տվյալներով «Պեպոն» հայ թատրոնի ամենաբանուկ պիեսն է եղել ծննդյան օրից մինչև այսօր: Հավասար հաջողություն է ունեցել հայ, վրացի, ռուս, ադրբեջանցի, այլազգի հանդիսականների շրջանում:

«Պեպոն» գնահատողների մեջ էր նաև Մաքսիմ Գորկին, որը Վահան Տեր-յանի աջակցությամբ պիեսը թարգմանում է ռուսերեն և տպագրում իր խմբագրությամբ 1916-ին լույս տեսած «Հայ գրականության ժողովածու»-ի մեջ: Հայտնի է Վ. Տեր-յանի հուշը այն մասին, որ Մ. Գորկին ցանկություն է արտահայտել երբևէ խաղալու Պեպոյի դերը:

«Պեպոյի» տարածմանը, իհարկե, մեծ չափով նպաստեց 1934-ին Համո Բեկնազարյանի նկարահանած կինոժապավենը, որը եղավ նաև առաջին հայ հնչյունային ֆիլմը:

Ո՞րն է «Պեպոյի» հանդեպ հանդիսականների (նաև ընթերցողների) եղած ամենատաք վերաբերմունքի «գաղտնիքը»:

Առաջին հերթին, իհարկե, այն պարագան, որ Գ. Սունդուկյանի պիեսում կատարյալ հերդաշնակության են եկել հեղինակին զբաղեցնող սոցիալական-բարոյական բովանդակությունը և այդ բովանդակության արտահայտման ձևակառուցվածքը, հազվագյուտ հերդաշնակություն ոչ միայն հայ դրամատիկական գրականության, այլև առհասարակ հայ գրականության մյուս սեռերի պատմության մեջ:

Ի դեմս ձկնորս Պեպոյի և նրան շրջապատող մարդկանց (Շուշան, Կեկել, Գիքոր, Կակուլի) կերպարների Գ. Սունդուկյանը թատրոն բերեց հասարակության այսպես ասած «ներքին խավերին», օրինքուն իրենց «հալալ» աշխատանքով իրենց գլուխը մի կերպ պահող պլեբեյներին, որոնց համար անմատչելի են «բարձրացող դասակարգի»՝ Զիմզիմովների և էքսմիաների կենցաղային նոխությունը:

Զիմզիմովից չստանալով իրեն հասանելիք դրամը (մուրհակը չի

հարվում մոր զգրոցների մեջ), Պեպոն, ի վերջո, «դատ» է սկսում ուրիշի աշխատանքը «հաշա ուտողների» դեմ՝ հանուն իր ուռնահարված մարդկային արժանապատվության, հանուն արդարության և ճշմարտության:

Թեև Պեպոյի կերպարի էությունը, նրա կոիվը և ըմբոստացումը Զիմզիմովի դեմ սունդուկյանագետները կապել են 60-ական թվականների թիֆլիսյան նշանավոր համքարական շարժումների ապստամբական տարերքի հետ և Պեպոյին էլ տվել են հեղափոխականի անցաքուղք, սակայն իրականությունն այն է, որ չնայած սոցիալական ինքնագիտակցության որոշ առկայծումներին (այդպիսիք են մի շարք մենախոսություններ), Պեպոն իր «դատը» վարում է, եթե կարելի է ասել, բարոյաբանության դիրքերից՝ խղճի, վեհանձնության, բարության, մարդկայնության, ազնվության, ասուվածասիրության: Նա իր միջավայրի հարազատ ծնունդն է, իր խավի հոգեբանության կրողը, ուստի և նրան անհասկանալի են ուրացումը (Զիմզիմովի ուրացումը), անխղճությունը, անազնվությունը, հակամարդկային արարքները:

Եկել է Զիմզիմովի տուն՝ իր հասանելիքի ետևից, սակայն արժանանում է վերջինիս արհամարհանքին ու ծաղրին: Երևի թե «զարմացած» —«ապշած» Պեպոն ձեռնունայն էլ վերադառնար, եթե չլիներ իր համար ամենաթանկ արժեքի՝ մարդու պատվախնդրության հարցը (նա պետք է օժիտ պատրաստի հարսնության պատրաստվող քրոջ՝ Կեկելի, համար):

Պատվախնդրության պատճառով էլ Պեպոյի հոգեկան աշխարհի շիկացումը հասնում է իր բարձրակետին, որի սքանչելի մեկնաբանությունն է Հովհաննես Թումանյանի խոսքը. «Ու անվերջ էն մեծ Պեպոն, կյանքի բեմի վրա մաքուր, հաղթական՝ Զիմզիմովի դեմը կանգնած իր հալալ աշխատանքի կոշտ ձեռքը կվարկի մուրհակին ու Թիֆլիսի բարբառով կորոտա—քու սրտումն ի՞նչ է գրած... Ու կվարի իր ազնիվ կոիվը, ոչ թե մուրհակի համար, այլ ճշմարտության համար, արդարության համար»:

«Մուրհակի խնդիրը» լոկ շարժառիթ էր Գ. Սունդուկյանի համար՝ շարադրելու իր էթիկական պատկերացումները:

Ասացինք, որ Պեպոն իր էության մեջ պարփակում է սոցիալական ինքնագիտակցության ինչ-ինչ տարրեր (գործողությունից գործողություն, տեսիլից տեսիլ հասունանում է նրա միտքը և բանտ գնալուց առաջ դառնում որոշակի համոզմունք), սակայն ամբողջ էությամբ նա կապված է սրտի, իբրև գլխավոր դատավորի («քու սրտումն ի՞նչ է գրած»), խղճի, իբրև մեծագույն բարոյականության, աստծո սահմանած անարդարության («վուրին էն դադա դովլաթ է տալի, վուր իր դովլաթը չի կա-

նացի մարսի, և վուրիմեն օրվան թիրեն խլում է ու էն էլ դովլաթվարին է տալի...»), հասկացությունների սրբագործման հետ:

Իհարկե, նաև աշխատանքի, հալալ աշխատանքի գաղափարի հետ, որը ձկնորս Պեպոյի բանաստեղծական էության ամենաթանկագին արժեքն է:

Պեպոն հայ գրականության մեջ աշխատանքի՝ կեցության հիմքերի, փիլիսոփա-բարոյախոսն ու բանաստեղծն է, նրա ամեն մի շարժումից ու խոսքից, նրա բառ ու բանից բուրում է աշխատանքի մարդու հոգու ազնվությունը և գեղեցկությունը:

Դրա ցայտուն նշաններն են հատկապես մենախոսությունները («Գնա, Պեպո...», «Ո՞վ իս դուն, ի՞նչ իս դուն...», «Էս օսկե պատիրը վուր շինիլ Ես...»), որոնք թեև ողողված են դառնագին ապրումներով, հոգեկան հիշերով ու աղաղակներով, սակայն ոչ թե պարտված մարդու ապրումներ են, այլ հաղթական շեշտեր:

Ի դեպ, Պեպոյի, իբրև աշխատանքի բանաստեղծական էությունը սրբագործողի կերպարը հիանալի է բացահայտված կինոժապավենի Պեպոյի երգի մեջ («Դամբը ձեռիս օր ու գիշեր»), որի տեքստը գրել է Ե. Չարենցը՝ Դ. Մալյանի խորհուրդներով, իսկ երաժշտությունը հյուսել է Արամ Խաչատրյանը:

Պեպոյի բարոյախոսական դավանանքին են նաև մյուս հերոսները՝ Շուշանը, Գիքոն, Կեկելը, անգամ Կակուլին,— առաջինն իր ասավածապաշտությամբ և ամեն ասածու օր խաչակնքելով, Գիքոն՝ իր ոսկեդարյան անմեղությամբ («խեր, շատ, ասավածի» սահմանագծով), Կեկելն իր պարկեշտ, անտրտունջ հեզությամբ, Կակուլին թեև բռնկվող, բայց ընկերական նվիրվածությունն ամեն ինչից վեր դասող հայացքով:

Գ. Սունդուկյանը նվիրագործում է բարոյական այդ արժեքները, որոնք նրա ստեղծագործության մի ծայրից մյուսն անցնող «էթիկական ուսմունքի» կետերն են:

Ասենք նաև, որ սունդուկյանական էթիկան հենվում է ոչ թե կրոնական-ավետարանական «սիրո և գթասրտության», «խղճի և մեռածվորության» դրույթների վրա, այլ, նախ և առաջ, դարից դար փոխանցված ժողովրդական բարոյախոսության, սիրո, խղճի, կարեկցության, ընկերության ժողովրդական պատկերացումների վրա:

Այս հանգույցում էլ Պեպոն հանդես է գալիս իբրև ժողովրդական փորձի խոր արմատներից վեր բարձրացող հերոս, որն իր էության մեջ կրում է նաև անձնվիրումի ու մաքառման, գեղեցկության ու ճշմարտության ժողովրդական պատկերացումները:

Հենց այս հատկությունների շնորհիվ է, որ Պեպոն դարձել է ժողովրդական լավագույն գծերի ու երազների խորհրդանշանը, ազգային գրականության ամենավառ ու ամենասիրելի հերոսներից մեկը:

Այդպիսին է դարձել ոչ միայն իր բարոյախոսական ազնիվ պաթոսի, այլև կերպարի ստեղծման, առնասարակ պիեսի կառուցման սունդուկյանական վարպետության համար:

«Մուրճակի» (բարաթի) միջադեպը դարձնելով կառուցվածքային առանցք, Գ. Սունդուկյանը այնքան ճարտար ու հմուտ ձևով է հյուսում տեսիլը-տեսիլին, որ չես զգում արհեստականության ոչ մի հետք:

Իհարկե պիեսի ամենաերևելի կերպարը Պեպոն է, որի հոգեկան ներքին շարժումները, խռովքն ու խաղաղության պահերը, ըմբոստացման ու ծառացման շեշտերը, հոգեկան ամեն մի «գաղտնիք» ու կնճիռ, ամեն մի ժեստ վերարտադրված է վիրտուոզ բատերագրի թափանցումով:

Նույնը կարելի է ասել նաև պիեսի մյուս բոլոր հերոսների գծագրության վերաբերյալ. ամեն մեկը երևում է իր էությանը համապատասխանող գույն ու գծերով:

Գ. Սունդուկյանի ճարտարապետական վարպետության արտահայտությունն է «Պեպոյի» կառուցվածքը, ուր ամեն մի տեսիլ, գործողության ամեն մի օղակ շղթայաբար միացած է ամբողջ կառույցին, ոչ մի ավելորդ շերտ կամ շեշտ:

«Պեպոն», ինչպես մինչ այդ գրած ողբերգերն ու կատակերգությունները գրված են Թիֆլիսի բարբառով: Թեև բարբառով գրելը 60—70—80-ական թվականներին ուներ ժողովրդական լեզվի պաշտպանության խնդիր, թեև ինչ-որ տեղ էլ բարբառագրությունը «գրական-թատերական ողբերգություն էր» (անմատչելիության՝ անհասկանալիության իմաստով), այդուամենայնիվ նույն Թիֆլիսի բառն ու բանը, պատկերավոր դարձվածքներն ու խոսքերը, հնարանքներն ու վրացաբանությունները, ոճաձևերն ու ժողովրդական երգիծանքի աղբյուրները մեծապես նպաստեցին «Պեպոյի» գեղարվեստականությանը: Այստեղ դեր է խաղացել բատերագրի հազվագյուտ բծախնդրությունը, ոսկերչական աշխատանքը ամեն մի բառի ու տողի ճնշեցման համար, բանաստեղծական ռիթմի զգացողությունը (նույնիսկ փորձեր են արել «Պեպոն» անդամահատելու ոտանավորային չափերի): Երևի թե Գ. Սունդուկյանը այն հայ գրողն է, որի ստեղծագործությունը, մանավանդ «Պեպոն», հարուստ նյութ է տալիս հետազոտողներին՝ «բատերագրական արվեստանոցի» գաղտնիքները լուսաբանելու համար:

«Պեպոյից» հետո Գ. Սունդուկյանի ստեղծագործության թերևս ամենահետաքրքրական, ողբերգական լիցքերով հարուստ գրվածքը «Քան-

դած օջախը» պիեսն է, որն իր ոպագրության և բեմադրության օրերին հարուցեց վեճեր և բանակռիվներ՝ հատկապես նրա քննադատական պաթոսի կապակցությամբ: Ժամանակի մամուլի օրգանները ափ ի բերան ընդվզում էին Գ. Սունդուկյանի գալափարական դիրքերի դեմ, այն դիրքերի, որի համաձայն, ըստ «Մեղու Հայաստանի» քննադատի, «Մեր վանառականությունը ոչինչ է, ընտանեկան կյանքը ոչինչ բան է, կանանց ստացած ուսումը ոչինչ է, «դիվ կիսատ», ժողովրդի մեջ բարոյականություն չկա, միով բանիվ, ինչ որ կա-չկա այն էլ ոչինչ, ոչնչությունը մեր կյանքի հիմն է»:

Եվ, այսպես, Գ. Սունդուկյանը համարվում էր «ոչնչական» (նիհիլիստ)՝ ռուս նիհիլիստների հայացքների դասակարգումով, հայոց կյանքի մեջ մուտք գործած հոռի երևույթների քննադատության պատճառաբանությամբ:

Գ. Սունդուկյանը, իրապես «Քանդած օջախում» նոր վանառականության, նոր բարքերի ավելի անողոք քննադատ է, քան իր որևէ այլ գործի մեջ:

«Մեղու Հայաստանի» քննադատն իր դատողությունները կառուցելիս ամենևին էլ չէր դիմում վերագրումների, այսպես ասած՝ «փիլիսոփայական հայտնությունների», այլ հենվում էր արդիականության այն գնահատականին, որն արտահայտում է պիեսի գլխավոր հերոսը. «Կիսատ, դիվ կիսատ, ածիլն էլ կիսատ, սորվիլն էլ կիսատ, ուսումն էլ կիսատ, խոսիլն էլ կիսատ»:

Այս դիպուկ բանաձևի հեղինակը վանառական Օսեփն է, որն ապրում է բարի, հին ժամանակների անփարատելի կարոտով, այն ժամանակների վարք ու բարքով, երբ վանառականությունը դեռևս չէր տարածել իր արմատները՝ իբրև կյանքի զարգացմանը հակընդդեմ ուժ, երբ Օսեփը և նրա նմանները իրենց խանութներում սովորական առևտուր էին անում պատվախնդրության, տգամարդկության չափանիշներով: Անվերադարձ անցել են այդ երանելի ժամանակները, Օսեփներին կանգնեցնելով նակատագրական փակուղիների առաջ՝ կամ դիմադրել նոր բարքերի անկասելի արշավին, կամ տեղի տալ նոր բարքերի ապականությունների առաջ:

Օսեփը դիմադրության, մաքառման, փլուզվող բարոյական չափանիշները փրկելու տարերքի մեջ է, յուրօրինակ մի Դոն Քիշոտ, որը կարծում է, թե միայնակ կարող է ետ շրջել պատմության անիվը և վերադառնալ սրբազործված բարքերի ժամանակները, կարող է օջախների կործանման առաջն առնել:

Օսեփը անգեն է ապականության և ընչաքաղցության դեմ մղած իր

մենամարտի մեջ. Փարսիդը և նրա շրջապատը այն ուժը չէր, որին նա կարող էր հաղթել:

Մինչ Օսեփը անգեն է, նոր վանառական Փարսիդը զորավոր է այն աստիճան, որ կարող է մատի մի շարժումով շրջել կյանքի սովորական ընթացքը և տանել իր ցանկացած ուղղությամբ: Այդ ամենազորության միտքն է ակնարկում գիժ Մոգին, պիեսի ճշմարտախոս հերոսը, Փարսիդին բնութագրելիս. «Ի՞նչ չես արի դուն, ի՞նչ. ախպեր ասես՝ դուն իս զբնի, ենգիր ասես՝ դուն իս խափի, գողութին ասես՝ դուն իս արի, հարևնի դուքան ասես՝ դուն իս կրակ տվի»:

Փարսիդի վարքագիծը շատ որոշակի արտահայտված է «աշխարհը մեղրի կարաս է» «փիլիսոփայական» հայտնության մեջ: Նա է արժանի անվան և պատվի,— փիլիսոփայում է Փարսիդը,— ով կարողանում է աշխարհի այդ «մեղրի կարասից» շերեփով վերցնել իր հասանելիք բաժինը, ով կարողանում է մրցակցության մեջ սրել իր ճանկերը և չդառնալ «իշի մարտիրոս»:

Գ. Սունդուկյանի երգիծանքի շիկացումը թերևս նրա ոչ մի գործում չի հասել այնպիսի բարձրության, ինչպես «Քանդած օջախում»՝ Փարսիդի անմարդկային էությունը և աստիճանական զարգացումը (փողոցային «Փառոյից» մինչև «Վասիլ Մատվեևիչ» դառնալը) բնութագրելիս:

Մինչ Զամբախովը ունի հայրական զգացմունքներ, մինչ Զիմզիմովին. այդուամենայնիվ. անհանգստացնում են որոշ կասկածանքներ, Փարսիդը իր գործը առաջ է տանում առանց սայթաքումների և հարցականների, անքեք և «ուղիղ» ճանապարհով: Փարսիդի «փիլիսոփայության» մերկացնողը գիժ Մոգին է՝ ժողովրդական երգիծական խոսքի պաշարներով: Այդ «փիլիսոփայության» առաջ ծնկի է գալիս Օսեփը, որը ժամանակակից կենցաղի մեջ չի տեսնում քիչ թե շատ ուշադրության արժանի դրական գծեր, այդ «փիլիսոփայությունն է» հակադրում վաղեմի երանելի ժամանակների վարքն ու բարքը մարմնացնող խախոն՝ «Օսեփի մի մասը», ինչպես մեկնաբանում է Գ. Սունդուկյանի ստեղծագործության երկարամյա հետազոտող Ս. Հարությունյանը. «Պատմության գիրկն անցնող, սակայն դեռ կենդանի նահապետականության փիլիսոփա խախոն Օսեփի տանը կատարվող իրադարձությունների տարեգիրն է: Խախոն անցյալի աչքն է ներկայի վրա, անցյալի միտքը: Հետադարձ հայացքով նա պետք է հաստատեր անցյալի ճշմարտությունը: («Հայ նոր գրականության պատմություն», հ. 3, 1964, էջ 202):

Խախոյի ցանկացածը հենց այն էր, ինչ ցանկանում էր Գ. Սունդուկյանը՝ բարություն, անկաշառություն, հոգեկան գեղեցկություն:

Այդ կերպարի տված «դասերը» կյանքի անփոփոխելիության վերաբերյալ Գ. Սունդուկյանին բնավ չեն դարձնում եռահայաց մտածող՝ անցյալի օրհներգու:

Գ. Սունդուկյանի պաթոսը բարոյական ստուգված չափանիշների պահպանումն է, այն չափանիշների, որոնց ոտնահարումը կյանքի մեջ բացում է խոր ճեղքվածքներ: Դրա մի վկայությունն է Օսեփի օջախի փլուզման ողբերգական պատմությունը, որը Գ. Սունդուկյանը ներկայացրել է իր երանգապնակի բնական գույներով, դրամատիկական լարի աստիճանական շիկացումով, բնավորությունների հոգեբանական բախանցման խոր դրվածքով:

* * *

«Քանդած օջախից» հետո Գ. Սունդուկյանի թատերագրության մեջ կատարվում է եռընթաց: Տևական լռությունից հետո նա ասպարեզ է հանում «Ամուսիններ» (1899) պիեսը՝ գրական լեզվով գրած առաջին գործը, ապա «Սեր և ազատություն» (1910), «Կտակ» (1912) պիեսները:

Իսկական դրամատիզմից լիցքաթափված և սոսկ բարոյախոսական դեղատոմսերին ապավինած այդ պիեսները, իհարկե, պատասխանում էին «հայկական կյանքի» նոր խնդիրներին, որոնցով առհասարակ զբաղված էր ժամանակի հասարակական միտքը՝ հրապարակախոսությունը, մամուլը, գեղարվեստական գրականությունը:

Այդ նոր խնդիրներից մեկն էր ընտանիքի և ապահարզանի խնդիրը, որն արդեն, ի դեմս Ալ. Շիրվանզադեի, գտել էր իր գեղագետին:

«Ամուսիններում» մեջ Գ. Սունդուկյանը ևս անդրադառնում է «զորդյան հանգույցին»՝ ապահարզանին, շաղկապված ազգային-ազատագրության գաղափարներին: Այս պիեսի առանցքը, իհարկե, անձնվիրուհու՝ հայրենասիրական ներշնչանքներով խանդավառված Մարգարիտի կերպարն է, խորհրդավոր միանձնուհու՝ ուխտավորի մի ուրիշ տարբերակի, որն ազգային փրկության համար նվիրաբերել է իր գիտելիքներն ու դիրքերը:

Ապահարզանի հասարակական կարևորության դրվածքով աչքի ընկավ նաև «Սեր և ազատություն» պիեսը, ուր բարդ, կենսոտ հարցը լուծվում է զարմանալի ներդաշնակ՝ ոչ թե «Ամուսիններ» պիեսի կողմերի լարվածությամբ, այլ կնոջ և տղամարդու իրավունքների հավասարության ու հավասարակշռության դրույթով:

Ինչպես այստեղ, այնպես էլ «Կտակը» պիեսում Գ. Սունդուկյանը հակված է դեպի բարոյախոսության ընդհանուր մարդասիրական դրվածքը, որի կրողն է դառնում հանգուցյալ վաճառականը իր «Կտակով»: Այդ կտակը բարեգործության ակցիա է՝ հանուն հոգու փրկության, նախկին արածների զղջման: Գ. Սունդուկյանը ժողովրդական բարոյախոսությունից աստիճանաբար հակվում է դեպի ավետարանական «մեղքերի թողության» գաղափարախոսությունը, որը և իր կնիքն է դնում նրա պիեսների գեղարվեստական կողմի վրա՝ դարձնելով դրանք գործողություններից, տիպերից, գույներից ու բառուբանից լիցքաթափված գրվածքներ:

5

Գաբրիել Սունդուկյանի գեղարվեստական ժառանգության մի հեռաբրբական և վերին աստիճանի ինքնատիպ հատվածն է նրա արձակը, որն ընդգրկում է «Վարինկի վեշեր» պատմվածքը, Համալի («Մշակ», 16 նմուշ) և Հաղիդի («Արձագանք», 6 նմուշ) «Մասլահաթները», թատերագրի նամականին: Արձակի «ժանրային մանրուքներին» թատերագիրը դիմել է 1872 թվականից և մինչև կյանքի վերջը, մինչև 1912 թվականը, շարադրել է իր «Մասլահաթները»՝ լրագրային թերթոններ:

Ինչպես բծախնդիր էր իր թատերագրության երկերը շարադրելիս (այդ բծախնդրությունն են վկայում կենսագրության հուշագիրները), նույնքան էլ պատասխանատվության բարձր զգացումով էր մշակում արձակ գրվածքները: Դրա ամենապերճախոս արտահայտությունը, իհարկե, «Վարինկի վեշեր» (մի ուրիշ անվանումով՝ «Մակակո») պատմվածքն է՝ ոսկերչական հազվագյուտ մշակման, մտահղացման, ֆրազի կառուցման, բառահամանայնության, պատումի ռիթմային կազմակերպման մի օրինակելի նմուշ, որի նմանը քիչ կարելի է ցույց տալ անգամ նայ դասական պատմվածքի անթոլոգիական հավաքածուներում:

«Վարինկի վեշերը» Թիֆլիսի հետամնաց թաղերից մեկի բնակիչ կարուհի Մակակոյի մեկօրյա պատմությունն է, այն օրվա, երբ հրավերք է ստանում մասնակցելու Սոլոլակի շքեղ ու փարթամ հասարակության՝ «շենեռալ դամաների» հավաքույթին, ավելի ճշգրիտ՝ «լոտոյախաղին», որը ազնվական, հարուստ խավի գերազույն հանույքն էր: Մակակոն Վարինկի վեշերին է գնում ակամա հրճվանքով և ակամա զարմացած, առաջին անգամ իր կյանքում տեսնում է շլացուցիչ շքեղություն (տանտիրուհու պատշգամբի աստիճանները բարձրանալիս նրան թվում էր, թե ինքը հասնում է դրախտի երկինքը):

Ինչպես մյուս «դամաները», Մակակոն ևս մասնակցում է լոտոյի վիճակախաղությանը և այդ ընթացքում էլ կրում դաժան հարվածը. նա տանուլ է տալիս իր մոտ եղած գումարից ավելի մեծ չափով և այդ խակ

պատճառով արժանանում է «դամաների» արհամարհանքին, հեգնանքին, սառաբացմանը, նրա մարդկային արժանապատվությունը իջնում է մինչև հոգեկան ցնցման աստիճանը:

«Գաբրիել Սունդուկյանի միակ պատմվածքը» ուսումնասիրության մեջ («Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 4) էդ. Ջրբաշյանը առանձնացնում է պատումային մի քանի շերտ, նախ՝ **գործող անձանց, ապա՝ պատմողի,** որի մտորումների մեջ աստիճանաբար ձևուժարմին է առնում պատմվածքի հերոսուհու հակատագիրը:

Պատմվածքի իսկ սկզբում պատմողը «զրույցի» եղանակով իրավացիորեն տալիս է Մակակոյի սպառիչ սոցիալական բնութագիրը. «Չիմ գիդի թե վուր ամսի մեկն էր, շափաք օրը լուսանում էր:

Էս էն օրն էր, վուր Սանքուրինց Մակակոն մե մինձ փառի պիտի արժանացիլ էր:

Ո՞վ էր Սանքուրինց Մակակոն: Սանքուրինց Մակակոն, պարուն դուն իմն իս, մե խիղճ մարքու կնիկ էր, չեհել ու մե էրեխի դեդա: Խիղճ էլ վուր ասում իմ, չգիդենամ, աղա չան, թե մարք ու կնիկ դոնե դուրը ախկտուրին էին անում:

... էս էր նրանց խիղճությունը. վայի նաչարի ապրում էին ու օչովուն ձիրը չէին դեմ տալի: Միր մեչը կոսինմ, վուր շատ ձեռը դեմ տվող մարք կա, վուր Մակակոյի մարքու վրա չեն է:

Մե խոսկով Մակակոյի մարքը, ասում իմ, մե խիղճ փեշամար էր»:

«Վարինկի վեչերի» մեջ «սոցիալական մտքերը», իհարկե, չունեն «Պեպոյին» բնորոշ բյուրեղացումներ, բայց այս գրվածքի ընդհանուր ծառացման պաթոսի մեջ տեղ են գտել ժամանակի հասարակական-գաղափարական առաջադիմության որոշակի արձագանքները:

Դա արտահայտվել է հատկապես դեպքերի հեղինակային գնահատականների՝ հակակրանքների ու համակրանքների ձևով, ինչպես ճիշտ մեկնաբանել է էդ. Ջրբաշյանը վերոհիշյալ հոդվածում:

«Վարինկի վեչերը»,— ճիշտ է նկատված,— ունի ասքային (сказ-ի) կառուցվածք, որը ավելի քան ցայտուն է երևում պատմվածքի ասացողական-ասմունքային կատարման (Սուրեն Քոչարյանի) մեջ:

Այդ ասմունքը «մի դերասանի թատրոնի» զգաքներից մեկն է, դրանով ավելի քան որոշակի է ընդգծվում պատումային ոճի կատարելությունը, հոգեբանական մանրամասների մշակվածությունը, երգիծականի ու ֆարակունի շաղախը և, վերջապես, հումանիստական կրքոտ պաթոսը, որով պատմվածքը կանգնում է Ն. Վ. Գոգոլի «Շինելի» կողքին:

«Խեղճ փեշամար» էր նաև ինքը՝ Մակակոն, իր ընտանիքի հոգսերին գամված, աշխարհը իր թաղի չափանիշներով դիտած մեկը, որի

միակ «մեղքը» այն է լինում, որ գնում է Վարինկի և նրա ամուսին Ալեքոյի սարքած հավաքույթին: Դա «հակատագրական մեղք» էր, իսկ դրա հետ կապված պատմությունը Գ. Սունդուկյանը, իր գրվածքի պատմողի միջոցով, շարադրել է այնքան բնական, այնքան հավաստի, այնքան գունեղ, հոգեբանական մանրամասներով այնքան հարուստ, որ մոռանում ես գրական բոլոր պայմանականությունները, և քո հայացքի առաջ կանգնում է կյանքի իրական պատկերը:

Առհասարակ էթիկական չափանիշներով մտածող Գ. Սունդուկյանն իր եզրակացությունների համար դիմում է սոցիալական նյութին, ուրիշ խոսքով՝ նրա էթիկայի սնուցող միջավայրը կյանքի սոցիալական հակադրություններն են:

Դրա մի օրինակն է նաև «Վարինկի վեչերը» պատմվածքը, ուր, ինչպես Գ. Սունդուկյանն է արտահայտվել «Պեպոյի» մասին, կան «նորագույն սոցիալական մտքեր»:

Առձակի կարճ ձևը՝ մասլահաթը կամ ֆելիետոնը, դարավերջյան լրագրային հրապարակագրության տարածված և ճկուն ժանրն էր: Զինտապնդելով գեղարվեստական լայն խնդիրներ, ժամանակի ֆելիետոնիստները (օրինակ՝ Հակոբ Պարոնյանը, Ռափ. Պատկանյանը և այլք), նաև Գ. Սունդուկյանը, առձագանքում էին ժամանակի քաղաքական, ազգային, տնտեսական-սոցիալական, դիվանագիտական, կենցաղային անցուդարձին, յուրովի մեկնաբանելով դրա էությունը:

Գ. Սունդուկյանի մասլահաթները՝ սկզբում Համալինը, ապա Հաղիդինը, միակողմանի և միանշանակ չէին իրենց բովանդակությամբ:

«Ազգի շարավոր վերքերը լվանալու» առաքելությամբ (այսպես է նրան գնահատել Ռ. Պատկանյանը) ասպարեզ մտած թատերագիրը մասլահաթներում նույնպես հավատարիմ է մնում իր դավանանքին՝ **«դրուստ խոսքի»** միջոցով ի ցույց դնել կյանքի բազմաթիվ ստվերները, նրա «աղն ու փրփուրը» հանդիսացող ստերը, հասարակությանը բերել բարության և արդարության չափանիշներին:

Ուշագրավ է, հատկապես, առաջին մասլահաթը (1872, «Մշակ»), ուր Գ. Սունդուկյանն իրեն համարում է համալ (մշակ, բեռնակիր) և նկարագրում է մի սովորական բեռնակրի քաշած շարչարանքները տիրոջ տասներկուփքանոց ջվալը նրա տան բարձրահարկը բարձրացնելիս: Գ. Սունդուկյանի «համալությունը» խոր իմաստ ուներ, դրանով նա ակնարկում էր իր հոգեբանական հարազատությունը ներքնախավերին, որոնց տեսանկյան տակ էլ գործի էր դնում իր երգիծանքի հորդաբուխ աղբյուրները՝ կյանքի մեջ եղած անհամար ու բազմատեսակ արատները մերկացնելու, մարդու անկումը կանխելու համար:

Ինչպես միշտ, մասլահաթներում ևս միանգամայն հստակ է Գ. Սունդուկյանի կեցվածքը. մերկացումներին զուգընթաց նա դատնում էր դեպի խղճի ու հավատի, սրտի ու ավետարանի, «հայալ աշխատանքի» բարոյախոսությանը, դրանց սրբագործման մեջ դիտելով գոյության իդեալական ձևերի հաղթությունը «խալխի փողերը» կողոպտողների, խալխի ազնիվ աշխատանքը շահատակողների հանդեպ։

«Համալի վիրշի մասլահաթը» («Իմ մահն ու իմ թաղման հանդեսը» ենթախորագրով) Գ. Սունդուկյանը գրել էր 1911-ի հունիսի 29-ին՝ մահվանից շատ ամիսներ առաջ (մահացել է 1912 թ. մարտի 16-ին) և տպագրել մամուլում («Մշակում»)։

Գրականագիտության-թատերագիտության մեջ այդ վերջին մասլահաթը հայտնի է նաև «Կտակ» անունով։

Գաբրիել Սունդուկյանի «Կտակը»։

Սա, ըստ էության, իր ամբողջ կյանքի, աշխարհի իր ըմբռնումների, գոյության հեռանկարի իր պատկերացումների, էթիկական իր հայացքների խտացում-հանրագումարային խոսքն է՝ ուղղված իր հայրենակիցներին։

Համարյա թե հարյուրամյակին մոտեցող կենսագրության տեր Գ. Սունդուկյանը մանվանը հրաժեշտ էր տալիս «փիլիսոփայական հայացքով»։ Դեն նետելով ավետարանական դրույթները և դիմելով դարձյալ ժողովրդական բարոյախոսության արժեքներին, «Կտակում» Գ. Սունդուկյանը հոչակում է համատարած մարդասիրության և լայնատարած ժողովրդասիրության իր պատվիրանները, որոնք, անպայմանորեն, ունեն իմաստնության, հոգեկան վերելքի, կյանքի փառաբանության նշանակություն։

Գ. Սունդուկյանի հոգևոր կտակը սկսվում է վերին աստիճանի նշանակալից տողերով. «Մնաք բարով. ես գնացի, գնացի էն հանգի տեղ, վուրդանց, ինչ աշխարհը ստեղծվիլ է, ջեր օշով չէ հիդ էկի... Մնաք բարով, սիրելի մարթիք, ինչ ասկի, ցիղի ու հավտի էլ ըլիք»։

Արդարև, այսպես կարող էր գրել մեկը, որն ամբողջ կյանքում ունեցել է անբասիր վարքագիծ, ապրել է բոլոր ազգերի ու ցեղերի, առհասարակ մարդկության շահերով։

Գ. Սունդուկյանը նույն Կտակում խնդրում է հայրենակիցներից, որ իր տապանաքարին գրվի միայն իր «համալության» մասին հիշատակությունը, որ չլինեն շքեղ ծեսեր, արձաններ, որ իր անյունը... խոսքը տանք իրեն. «Ուր համալ ու ուր կինտո մնձրեցիք, հերքով ծաի պես կու թոցնեն ինձ»։ Իսկ եթե արձան են կառուցելու, ապա դա լինելու է միայն և միայն Պեպոյի արձանը։

«Մնաք բարովների» սունդուկյանական շարակարգությունը, ըստ էության, արտահայտում էր մեծ թատերագրի կյանքի անցած հանապարհը և այդ հանապարհից հանած խորհուրդները։

6

60—70—80-ական թվականներին ոչ միայն թատերագրության ասպարեզում, այլև հայոց թատրոնում թեև ընդհատակյա հոսանքներով, բայց ուժեղ բանակոիվներ էին գնում արտահայտման ռեալիստական ոճի, կենցաղի հետ նաև հոգեբանության արտացոլման համար։

Պատմա-ռոմանտիկական ողբերգության վերամբարձ, զգայացունց, հռետորական արտահայտությունը և ոդեիլային-կատակների «նաիվ ռեալիզմը», բնականաբար, ընդդիմադրության թիրախներն էին՝ հանուն ռեալիստական-հոգեբանական թատերային ոճի հաստատման։

Գ. Սունդուկյանի ծառայություններից մեկն էլ այն էր, որ, շնորհիվ նրա առաջնակարգ պիեսների, հայ թատրոնում ևս զորեղացավ բեմական ռեալիզմը՝ ի դեմս Գ. Զմշկյանի, Մ. Ամիրկյանի, Ա. Սուքիասյանի, Սաթենիկ Զմշկյանի, Քեռևան Արամյանի, Ս. Մանդինյանի, Գ. Պետրոսյանի և այլոց անձնավորումների։

Գ. Սունդուկյանը նույն դերը կատարեց նաև դարավերջյան վրացական թատրոնում. նրա պիեսների բեմադրություններով նանապարհ բացվեց մի շարք ականավոր դերասանների համբավի համար, որոնք բեմական ռեալիզմը հոչակեցին իբրև իրենց գործի բարձր նշանաբանը։

Թեև դարասկիզբը արժեքների վերագնահատման ժամանակաշրջան էր, թեև նորագույն հոսանքների «ճնշման» տակ խմբագրվում էին որոշ հայացքներ, գեղարվեստը ապրում էր վերանորոգման ծրագրերով, մանավանդ թատերական մտածողությունը տարուբերվում էր նատուրալիզմի (ռեալիզմի) և սիմվոլիզմի-իմպրեսիոնիզմի (Իբսեն, Մետերլինկ, Չեխով և այլք) բևեռներում, այդուամենայնիվ Գ. Սունդուկյանի ստեղծագործության գլխավոր էջերը դիմանում են «մրցակցությանը», հայ թատրոնում վառ պահելով նշմարտության և հոգեբանության սկզբունքները։

Դերասանական նոր հերթափոխը իր ձեռքում պահեց Գ. Զմշկյան—Մ. Ամիրկյանով հաստատված ռեալիստական խաղակերպի, դպրոցի ավանդները։ Այդ ավանդների շարունակողները եղան նաև հայ սովետական թատրոնի ռեժիսորներն ու դերասանները։

1922 թվականի հունվարի 25-ին Երևանում բացվեց Հայկական առաջին պետական թատրոնը՝ «Պեպոյի» բեմադրությամբ (առաջարկությունն արել էր Ալ. Մյասնիկյանը՝ Մարտունին)։

Տարիներ անց թատրոնին տրվեց մեծ թատերագրի անունը, որով հիմնավորվում էր «ժամանակների կապի»՝ ժառանգորդության, գեղագիտությունը:

Հայ սովետական թատրոնը գոյության 65 տարիների ընթացքում ստեղծեց սունդուկյանական թատրոնի ժամանակակից դպրոցը, ուր տեղ ունեն և՛ ռեժիսորները (Ստ. Քափանակյան, Ա. Գուլակյան, Վ. Անեմյան, Ա. Աբարյան և այլք), և՛ դերասանները (Օլգա Գուլազյան ու Գրիգոր Ավետյան, Ավետ Ավետիսյան ու Գուրգեն Գաբրիելյան, Հասմիկ ու Սյուզան Գարագաշ, Լուսինյան ու Դորի Ամիրբեկյան և շատ ուրիշներ):

Թեև եղել են Գ. Սունդուկյանի մեկնաբանության սայթաքումներ ևս, սակայն հիմնորոշ որակով արդի թատրոնը հավատարիմ է մնացել մեծ թատերագրի ստեղծագործության ոգուն:

* * *

1912-ին տպագրած խոսքի մեջ («Տարազ», № 4) Ալ. Շիրվանզադեն հետևյալ կերպ է գնահատել Գ. Սունդուկյանի ստեղծագործության հասարակական նշանակությունը. «Ամբողջ սերունդները լսել են այդ պատկառելի անունը, ամբողջ սերունդներ տեսել են նրա գվարթ ու համակրելի դեմքը, ամբողջ սերունդներ հոգեկան բերկրանքի, ոգևորության ու խանդաղատանքի ժամեր են ապրել նրա ստեղծած տիպերի հմայքի ազդեցության տակ»: Նույն Շիրվանզադեի գնահատությամբ Գ. Սունդուկյանը հայ թատրոն բերեց «կենդանի էակներ»՝ դուրս մղելով «մեռելներին», ստեղծեց «հայ գրականության ամենից «ավելի գեղարվեստական» և «ամենից ավելի անկեղծ» գրվածքը՝ «Պեպոն», որն, իրապես, ուղեկցել է նորանոր սերունդների՝ հարուցելով նրանց մեծագույն հիացմունքը հերոսի հանդեպ:

Գ. Սունդուկյանի նշանակության խորունկ բացահայտումներ կան նաև Դ. Դեմիրճյանի թատերական հուշերում և հոդվածներում:

Մի հոդվածում նա ասում է. «Սունդուկյանը մնում է իբրև եզակի ֆիգուրա մեր դրամատուրգիայի մեջ, մանավանդ, երբ նրան գնահատում են իր ժամանակի միջավայրի հետ միասին... Սունդուկյան—այդ նշանակում է գեղարվեստական կատարելություն և ամբողջականություն... Սունդուկյանն ինչ որ տվեց, տվեց իր ցանկության բոլոր ուժերով, իր կարողության լրիվ չափով, իր արվեստի հմուտ տիրապետությամբ»:

ՍՈՒՐԵՆ ԱՂԱԲԱԲՅԱՆ

ԳԻՇԻՐՎԱՆ ՍԱԲՐԸ ԽԵՐ Է

ԿԱՏԱԿ ՄԵԿ ԱՐԱՐՎԱԾՈՎ

1863

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՕՍԿԱՆ ՊԵՏՐՈՎԻՉ ԻՐԱՍԱԾՈՎ, մանդրում ծախող
ՄԱՐԹԱ, նրա կինը
ԿԵԿԵԼ, նրա աղջիկը
ԱՐՈՒԹԻՆ ՃԱՐՏԱՐՈՎ, բազազխանի տղա
ՔԻՏԵՍԻ, խամ իմերել, Իրասածովի ծառան

Սաղանդարներ, երգեր և պարեր։

Անցքը պատահում է Թիֆլիզում Օսկան Պետրովիչ Իրասածովի տանը, 1863-ին։

Թիֆլիզի մի հասարակ սենյակ երկու դռնով՝ ձախ կողմը և խորքում: Վերջի դուռը բացվում է դեպի պատշգամը: Սենյակի աջ կողմը՝ տախտ, գորգով և մուրճաճերով զարդարած. իսկ ձախ կողմը՝ բազմոց (divan), որի գլխին պատից կախած է հայելի բատ սովորության: Բազմոցի մոտ երկու բազկաթոռ և գունավոր սփռոցով ծածկած սեղան: Այս սեղանի վրա դրած են՝ համրիչ և երկու արծաթափայլ աշտանակ հանգած խտակ մոմերով: Մի քանի աթոռներ լրացնում են սենյակի զարդարանքը: Գիշեր է. սենյակը լուսավորված է դեռ նրագվե մոմով, որ հասարակ աշտանակով դրած է տախտի վրա, հետո վերոհիշյալ խտակ մոմերով, ինչպես նշանակած է իր տեղը: Երաժիշտների տեղում նստած են սազանդարներ, որոնք մինչև վարագույրի բացվիլը նվագում են ու երգում տեղական եղանակներ:

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ՄԱՐԹԱ, մենակ, տախտի վրա նստած՝ նրագի մոտ չիֆիլա է կարում:

Էսենց բա՞ն կուլի՝ իմ մարթն է անո՜ւմ։ Աշխարքն իրանց ախչիկը մարթու էրիտ ու իմ խիղճ Կեկելն էլի մնում է։ Քու դուշմանը՝ թե մե էրկու տարի էլ էսենց անց կացավ, տանը կու քացխի խիղճս։ Ի՞նչ անիմ, վուր օխտա չիմ կանացի դա իմ իրասածի մարթումեն։ Խան ասում է՝ ի՞նչ իս շտապում. խան ասում է՝ ջեր էտղադա փուղ չունիմ։ Ով ասիս՝ հազար-հազար թումնիր համբրից իր ախչկա համա, յիս կի մե էրկու հարուր էլ չկանացի խոստանա։ Օ՜լոս-բոլոս էս մե ախչիկն ունինք, էլի՜։ Իժում ի՞նչ՝ էն ճար կտրած Թաթելն ասում էր էսօր առուտեհան, թե շատ լավ տղա է, կոսե, էն Թանաքուտողինց տղեն. պալատումն է զուլուղ անում, կոսե. զուրթ է կայինք չունե, ամա թաքավուրիմեն լավ տոնլուղ է վի կալնում, կոսե. յիրիք հարուր թումնով կու շինիմ, կոսե։

Աբա՜, ի՞նչ մոգոնիմ, վուր իմ մարթուն փափկեցնիմ։ Ասում է՝ չէ՜, չէ՜ չէ՜, չէ՜... յիս դարդակ չինովնիկին ախչիկ չիմ տա, կոսե. թո՜ղ առուտրի տղա ըլի ու փուղ ունենա, կոսե։ Փո՜ղ, փո՜ղ, դիփ փո՜ղ. յարաբ ի՞նչ դառավ էն անիծած փուղը։ Խիղճիմ Կեկել, նրա բոյին ածե մե բաժինք, ամա վուր էլի առանց փուղ չէ ըլո՜ւմ... Լ՞մ, վի՜ր ննգնին հիմիկվան տղերքը, հըա՜... Է՜հ, էս չիքիլի սիրտ էլ չունիմ։ (Զիլիլան վայր է ձգում): *Աբա՜, մե տեսնիմ, թե թուխտն ի՞նչ է ասում...* (Նեալու տակից խաղալու բուղը է հանում ու բաց անում): *Գիշերվան ճամփով ովոր ջնհել տղա է գալի... մեքաշ ուրախացնում է... քա՜, թուխ-թուխ է, ովոր վուր է... Ո՞վ կուլի էրնեկ. կուլի Թանաքուտողինց տղեն ըլի՜. աբա՜, ինձ ո՞վ կու տա էս բախտը... Քա՜, չուրս կիկոն էլ մնտի. էս ի՞նչ լավ փայ դուս էկավ։ Տե՜ր աստուծ, դո՜ն դեվեր մտիկ անիս։* (Շտապով կանչում է:) *Կե՜կել, Կե՜կել, քա՜ Կե՜կել։*

Կեկելը մտնում է ձախ կողմի դռնից:

ՏԵՍԻԼ Բ

ՄԱՐԹԱ, ԿԵԿԵԼ

ԿԵԿԵԼ

Ի՞նչ է, ի՞նչ իս ուզում, դե՜դի ջան։

ՄԱՐԹԱ

Քա՜, քանի կանչիլ տաս, չիս իմանո՞ւմ։

ԿԵԿԵԼ

Ջեռիս բան ունեի, վա՜. ի՞նչ իս ուզում։

ՄԱՐԹԱ

Մե էս չուրս կիկոն դո՜ւս տար բալկոնը. տի՜ս, թե ի՜նչ խոսք կու իմանաս քուչումը։

ԿԵԿԵԼ

Է՜հ, դե՜դի ջան, դուն ու քու թուխտը. չո՜ւրս ասը մետի լավ է, էլի՜։ Էլ ի՞նչ իմանամ։

ՄԱՐԹԱ

Քա՛, տա՛ր մե, հենց ապրիս։

Կեկելը չորս թուղթը առնում է և խորհի դռնից շտապով դուրս է գնում պատշգամբ։

ՏԵՍԻԼ Գ

ՄԱՐԹԱ, մենակ։

Սիրտս գլըմփգլըմփում է։ Ո՛վ Փեթխայինի կամար-կատար աստուծածին, մե շափաթ ամեն օր քու սանդըխտներու վրա օխտն-օխտը ջեր բոբլիկ վո։տով դիվիր ու դեվեր կոնիմ, թաք դո՛ւն բարեխոսիս իմ Կեկելի համա։

Կեկելն ուրախ-ուրախ ներս է վազում։

ՏԵՍԻԼ Դ

ՄԱՐԹԱ, ԿԵԿԵԼ

ԿԵԿԵԼ, շտապով։

Էրկու մարթ գնում էին, դե՛դի ջան, ու մեկն ասավ, թե մեքաշ հենց գու քա, վուր դուն էլ չիմանաս, կոսե։

ՄԱՐԹԱ

Հալա, հե՛նց ապրիս, ղուրթ իս ասո՞ւմ։

ԿԵԿԵԼ

Աստուած գիդենա։

ՄԱՐԹԱ, ձեռները բարձրացնելով ու առանձին։

Մե՛ռնիմ քու զորութենին։ (Բարձր։) *Ո՞վ կուլի յարաբ։*

ԿԵԿԵԼ, վերջին խոսքերը լսելով։

Ո՛վ պիտի ըլի, միր լվացկ անող Շուշանը թե կուլի. մեքաշ գալը նա գիդե։

ՄԱՐԹԱ

Ի՛հ, խո՛ւդիմ նրա շշկըլած գլուխն էլ. աճկիրս ո՞ւրիլ է նրա համա՛։

ԿԵԿԵԼ

Բաս ուրիշ ո՞վ պիտի ըլի, դե՛դի ջան։

ՄԱՐԹԱ

Էրնե՛կ գիդենամ, քիզ ո՛վ է հարցնում, քա՛։ (Ոտի ձայն է լսվում։ Շտապով թուղթը հավաքում է ու պահում։) *Հորե՛ն, մամեն էլ տուն էկավ էս կարը մո՛դ արա ու գնա՛, բա՛նդ տիս։*

Խորհի դռնից մտնում է Օսկանը, վերարկուն վրան զցած, գլխին ֆուրաժկա, մեկ ձեռին կապույտ թաշկինակով պաշարեղեն, մյուս ձեռին ձեռնափայտ։

ՏԵՍԻԼ Ե

ՆՐԱՆՔ, ՕՍԿԱՆ

ՕՍԿԱՆ, կապոցը տալով Կեկելին։

Կե՛կել, էս տա՛ր կուխնեն, հենց ապրիս։ (Նկատելով չիֆիլան։) *Հը՛ա՛, էլի թազա չիքիլա՞...* (Ձեռնափայտը թողնում է խորհի դռան մոտ։) *Տո՛, հաց ու պանրի պես իք ուտում, ի՞նչ է։*

Վերարկուն դնում է նույն դռան մոտ աթոռի վրա, իսկ Կեկելը, կարճ ու կապոցը ձեռին, դուրս է գնում ձախ դռնից։

ՏԵՍԻԼ Զ

ՕՍԿԱՆ, ՄԱՐԹԱ

ՄԱՐԹԱ

Ուրիշներու պես դրո՛շկա ու կալասկա խոմ չիմ ուզում։

ՕՍԿԱՆ, ծաղրելով։

Ի՞նչ է ասում... վա՛հ, հիմի է՛տունք ուզե... Ափսո՛ւս, վուր մազով սալոփ էլ չիս ուզում։

ՄԱՐԹԱ, տեղից վեր կենալով և մոտենալով Օսկանին:

Հանաքը դենը, Օ՛սկան ջան, ու մե լավ բան պիտի ասիմ։

ՕՍԿԱՆ, առանձին:

Ջանը վուր ասավ, թային դժար բան է ուզում ասի։ (Մարթային:) *Աբա՛, ի՞նչ է, Մա՛րթա ջան։*

ՄԱՐԹԱ, առանձին երեսը խաչ հանելով:

Տե՛ր աստուած։ (Օսկանին:) *Ախար էս տարի էլ թողնի՞նք խիղճ ախչըկան. միիկ չէ՞։*

ՕՍԿԱՆ, առանձին:

Վուր ասի՞։ (Մարթային, նստելով տախտի վրա:) *Հրա՛, է՛լի սարքեցիր ճիանուրը՞դ...* (Մարթան վերցնում է վառած մոմով աշտանակը:) *Ջահլես մի՛ տանի, քու հորն օղորմի։*

ՄԱՐԹԱ, աշտանակը դնելով սեղանի վրա:

Հալա մե ա՛նգամ դի, ի՛նչ իմ ասում, է՛... (Գալիս է, նստում է Օսկանի կողքին և ձեռը նրա ուսին դնում:) *Էսօր Թաթեչն էլի էկավ էն չինովնիկի համա, յիրիք հարուրով կու շինիմ, կոսա։*

ՕՍԿԱՆ, առանձին:

Ի՛րան տվեք տասչուրս շային։ (Մարթային:) *Ի՞նչ չինովնիկ։*

ՄԱՐԹԱ

Ա՛յ, էն Թանաքուտողինց տղեն։

ՕՍԿԱՆ, տեղից վեր թռչելով և հետզհետե տամանալով:

Տո՛, ձե՛ռը վի կալ, թե աստուած կու սիրիս մե, է՛։ Յիս դարդակ չինովնիկին ախչիկ չիմ տա, չէ՛. ինչո՞վ չիմացար։ Էլի մե ունևուր տղա ըլի, հա՛, յիս էլ մեչը կու լվլըվամ. թե չէ՝ յիս ո՞վ, Թանաքուտողովն ո՛վ. լավը վուր ըլի, իմ ախչիկը չի ուզի։ Գժվի՞լ իմ, վուր յիս իմ պե՛տլած Կեկելին տիկին-խաղողի ձեռը գցի՛մ։

ՄԱՐԹԱ

Գուն է՛տենց ասա ու անբախտ էն օրը զուքած ու զարթրած ման էր գալի։

ՕՍԿԱՆ

Է՛տ է ձիր աճկիրը քոռացնում, է՛... Գանա ովոր չինովնիկ չէ, քու մտկումը մարթ չէ՞։ Տո՛, էս քու չինովնիկնիրը չի՞ն, վուր մե գրոշի բանի համա մե աբասու թուղթ ու թանաք ին խարաբ անո՛ւմ։ Չէ՛, քիզ իմ հարցնում՝ էքուց, էլօր, բան է, ղուլուղնեն դուս արին էս քու պարուն Թանաք լպըստողին... իժում խոմ յիս պիտի պահիմ նրան... (Աջ ձեռը շարժելով:) *Փա՛հ, կու շինվի իմ բանն, էլի՛... Օսկան Պետրովիչը դադե ու Թանաք խպըշտողն ուտե. համ էլ ձեռնիրս կցած առչիվը ղուլուղ ըլիմ անում, միթամ նրա հոր ճուրտն իմ. ու թե մե ջգրած վուխտն էլ բան ասի, պիտի վրես վուտնիրը քարե քար տա ու ռսեվար ասի՝ մա՛ըլի, մա՛ըլի, մոյա չինովնիկ. յիս էլ ի՞նչ անիմ էն վուխտը, պիտի ասիմ՝ պոժոլուստա, մինավատ։ Հայդա-հա՛... Չէ՛, չէ, յիս չինովնիկի հիդ բան չիմ բռնի, ախպեր։ Յիս հեստի փեսա գուզիմ, վուր նա՛ ինձ պատիվ տա, չէ թե յիս նրան. ինձ պես փուղ դադելու ճամփեն գիդենա, ինձ պահե։ Ուփրո լավ չի ըլի՞, վուր փողոցի տղա ըլի ու փուղ ունենա, վուր յիս էլ դովլըթումը գլդիգըլուր գա՛մ։*

ՄԱՐԹԱ, տեղից վեր կենալով:

Բաս ի՞նչ անինք, հորեն տասնուօխտը տարին թամամեցավ, տասնուութումն է խիղճս։

ՕՍԿԱՆ, նստելով բազմոցի վրա:

Վա՛հ, ի՞նչ իս շտապում, դարդակ չինովնիկին վուր չիմ տալի ախչըկաս, աշխարքումը մարթը ղթլուղ է էլի՞։

ՄԱՐԹԱ

Գուն գիդիս, ումնոր գուզիս տու։ (Նստելով Օսկանի մոտ բազկաթոռի վրա:) *Մե էրկու հարուր թուման վուր ղիմիշ անիս, առուտրի տղա էլ լավը կու ճարինք։*

ՕՍԿԱՆ

Վո՛ւր գլխամեռ էտու փքրումը չէ դիպ, ամա վուր չէ ըլում ջեր, ի՞նչ վայ տամ յիս իմ գլուխը։

ՄԱՐԹԱ

Էտենց մե ի՞նչ դժար ճարելու է քիզ համա էտ փուղը։

ՕՍԿԱՆ

Ա՛ կնիկ, դուն հեսաբ իսկի չիս գիդի։ Էրկու հարուր թուման վուր փուղ տամ, հիմի փալաս է, փուլաս է, շալիր է, էլի ինչ գա՛հրումար է իմ գլխին. էս յիրիք հարուրն էլ կու անց կենա, իժում մինք ի՞նչով ապրինք։

ՄԱՐԹԱ, վշտացած։

Հապի՛ր ասիս, վուր ա՛խչկատ համա փուղ չիս ղիմիշ անո՛ւմ։

ՕՍԿԱՆ, բարկացած, տեղից վեր կենալով։

Հա՛, ղիմիշ չիմ անում, ձե՛ռը չիս վի կալնի՛։

ՄԱՐԹԱ, նույնպես։

Բաս վի՛ կալ ու մե հաց թխողի տու. քու ասածի մարթ իս, ախար, է՛։

Ջարացած դուրս է գնում ձախ դռնից։

ՏԵՍԻԼ Է

ՕՍԿԱՆ, մենակ։ Մաղրելով։

Ռրրր՛... (Երեսը խաչակնքելով։) *Տե՛ր օղորմած աստուած։ Տո՛, զարմանք կնիկ է էս իմ կնիկը. Է՛րկու հարուր տու, յի՛րիք հարուր տու, հենց գիդենաս միլիոն ունենամ։* (Այս ու այն կողմը երկյուղով նայում է։) *Աստուած գիդենա, դիփ ինձ համա էրկու հարուր թուման մայա չունիմ։ ամա էս թաքուն ձիզ իմ ասում, օ՛չովու չասիք, թե չէ տունս կու քանդվի։ Դուքանս լիքը վուր տեսնում ին, հենց գիդին դիփ իմն է։* (Երբեմն ման է գալիս, երբեմն կանգնում։) *Քա՛նի տեր ունե ապրանքս, էն յիս գիդիմ։ Է՛ստի առ, է՛նդի տու. սրա՛մեն* (Աջ ձեռը աջ կողմն է ձգում։) *վի կալ, նրա բե՛ռանը* (Աջ ձեռը ձախ կողմն է ձգում։) *ծածկե. սո՛ւտ ասա, ղո՛ւրթ ասա, անջախ-անջախ ծերը ծերին* (Երկու ցուցամատի ծայրերը միմյանց է կպցնում։) *վրա իմ բերում։ Ախար,* (Ձեռներն առաջ տանելով։) *ո՞վ կու դիմնա հիմիկվան ապրելուն։ Էս պիտի ու էն պիտեմեն զահլես գնաց։ Ափսուս չէ՛ վաղուցվան ժամանակը՛, վուր ամեն մարթ իր չափս ու ձիվը գիդե՛ր։ Հաա՛, էն վաղ էր, վուր էշը կաղ էր։ Էս մոդեքը խոմ* (Իր ճաստ փորը ցույց տալով։) *ճլե՛ռք գցեցին ինձ, էլի՛... Տո՛, էրեգ մեկէլ օրը իմ սարսաղ կնիկը վեր կալավ ու թաղա բուռնուսի փիշիրքը ծակծրկից.* (Կանացի ձայնով։) *պիտի առիվը ջիբիր ունենա, կոսե։* (Իր ձայնով։) *Ի՛նչ է՝ ձեռնիրն էսենց դարսե մեչն ու* (Շարժվածքով ձևացնում է։) *տիտրին, տիտրին* (Մաղր անելով ման է գալիս։) *ման գա։ Արի՛ հիմի ու ախչիկ էլ մա՛րթու տու։ Ա՛խ, բա՛ժինք մոգոնող, էն կինքումն էրվիս, վունցոր յիս էստի իմ էրվում։ Ի՞նչ անիմ, ի՞նչ ջուրը նընգնիմ. վո՞ւրդի ճարիմ մե էրկու-յիրիք հարուր թուման։* (Մտածմունքի մեջ է ընկնում։) *Առուտրի խերն էլ գնաց. էլի թե մե էրկու շայի ճարվում է, էն էլ փոդրըթներումը. ամա ինձ փոդրաթն ո՞վ է տալի։ Ա՛խ, աստո՛ւծ, դուն էլ դիփ հարուստներուն իս օտկում. մե՛ միր կուռն էլ դե՛վեր մտիկ տու, է՛։* (Նստում է տխուր։) *Ա՛խ, բա՛ժինք մոգոնող, կի՛նծիտ կոտրվիս։* (Շարժվածքով արտահայտում է, որ զանազան բաներ է մտածում։) *է՛հ, չէ՛... Կուլի ըլի՛... Չէ՛, էս էլ չէ՛լավ... Հրա՞... հա՛...* (Հանկարծ ուրախ վեր է թռչում տեղից և ճակատին խփելով։) *Ախմա՛խ, ախմա՛խ. տո՛, էլ ի՞նչ իմ հիռու ման գալի. ա՛յ հաու թրեաթրը. արի՛, շալիշ գամ, իջարով վի կալնիմ. մե էրկու հարուր թուման վո՛ւնց չիմ դադի։ Էստու վրա լավ փոդրաթ կուլի՞. էլ վունց զալոգ գուգե, վունչիչ։ Մե Արութինին կանչիմ. նա էստունց ճամփեն ուփրո լավ գիդե։* (Կանչում է։) *Քի՛ տեսավ, բիճո՛ (Քի՛ տեսի, տո՛։)*

ՏԵՍԻԼ Ը

ՕՍԿԱՆ, ՔԻՏԵՍԻ

ՕՍԿԱՆ, Քիտեսուն, որ մտնում է խորքի դռնից։

Բի՛ճո, չեմ դուքնիս գվերդիթ, ռում ախալգազդա բիճի զիս, իցի՞։ (Տո՛, իմ դուքնի կշտին վուր ջեհել տղա կա նստած, գիդի՞ս։)

ՔԻՏԵՍԻ

Բա՛վա արա, շենի ճիրի մե։ (Վո՛ւնց չէ, չարըդ տանիմ։)

ՕՍԿԱՆ

Գուշին ռում շենթվիս սաախալուխե մովաճրեվինե։ (Էրեգ վուր քիզ համա ախալուխացու կտրիլ տվի նրան։)

ՔԻՏԵՍԻ

Կի՛ բատոնո, կի՛ բատոնու։ (Հրա՛միլ իս, պարուն, հրա՛միլ իս։)

ՕՍԿԱՆ

Ախլավ չաիրբիեն դա ութխարի, բոմ աք մոմբձանդես. ձալիան սաՀիրո սաքմե մաքվա, թքու Մա՛լե, ջեր դուքանի ար էքնեբա դա կետիլի։ (Հիմիկ էվետ դե՞ վեր վազի ու ասա՛ ներան, վուր է՛ստի շնուր բերե. խիստ հարկավուր բան ունիմ, ասա՛։ Զո՛ւստ, ջեր դուքանը չի ունենա կոխպած։)

ՔԻՏԵՍԻ

Ամ ծուԹշի, շենի ճիրի մե։ (Էս նմուտիս, չարբդ տանիմ։)

Գնալիս մեկ անգամ փոշտում է։

ՕՍԿԱՆ

Ա՛յ, զահրումար... էրԹից, բի՛ճու։ (Ա՛յ, զահրումար... Մե՛կ էլ, տո՛։)

ՔԻՏԵՍԻ

Մետի արդա մեցխինկվեբա, ա՛դա ջան։ (Էլ չէ գալի փոշտալս, ա՛դա ջան։)

ՕՍԿԱՆ, Քիտեսու գլխին խփում է։

Մե շեն գեուբնեբի, էրԹս նու գաացեմինեբ, Թորեմ Մոգկլամ։ Ծա՛դի մա՛լե, շե վի՛րու։ (Ես քեզ ասում իմ՝ մեկ մի փոշտացնի՛, Թե չէ կու սպանիմ։ Գնա՛ չուստ, ա՛վանակ։)

Քիտեսին դուրս է փոգում խորքի դռնից։

ՏԵՍԻԼ Թ

ՕՍԿԱՆ, մենակ։

Ա՛յ, քու տո՛ւնն աստուած քանդե։ էս սաբրը լավ չէլավ. ամա գիշերով խեր է, ասում ին... Հա՛յ Թե լավ բան միտս էկա՛վ։ Հիմի խալիքը ղնամիշ կոնի ինձ. կոսին՝ Թե հաու Թրեաթրը ի՛նչ նրա խիլքի բան է։ Տո՛, էստուրն ի՞նչ խիլք գուզե. խաղոզը կու խազա, յիս փուղիրը չիբս կոծիմ։ Կոսին՝ Օ՛սկան Պետրովիչ, էս բա՛նը խաղցու, յիս էլ ի՛նչ իմ հոքում, էն կու խաղցնիմ։ Հալա մե լավ հեսաբ անիմ, հուրը չնեգնիմ։ (Համրիչը վեր է առնում, նստում է ու երկար հաշիվ անելով։) *Վից ու վից՝ տասէրկու. քսանուչուրս. քառասունուԹ. էս հինգ Թուման. էս տասը Թուման. էս չուրս քսան։ էսղանց դուս գանք, ա՛ղա ջան, քսան մեկ ու տասն էլ մեկ, կու մնա իսուն. իսուններեն դուս գանք քառասուն, կու մնա տասը։ Քսան ջեր տասը, էս քեզ իստակ էրկու հարուր Թուման։* (Ուրախ վեր է կենում համրիչը ձեռին։) *Դրուստ խերի բան է, քու արիվը. դադումն աշքարա է։ Աբա՛, նուր բա՞ն ու միր քաղաքը։ էն օրը բիլեԹ առնելու էննենց մոդ էր էլի խալիքը, կոսեիր, Թե Թազա գելաքնուր է էկի։* (Համրիչը դնում է սեղանի վրա։) *Աստուած գիդենա, լավ բան մոգոնեցին էս միր ուսում առաջներն, ա՛յ։ Ամա նրանք էլ խիստ խիլքին զոռ ին տալի խանդիսխան. մարԹ իրմեն պիտի կտրի, ուրիշին օտկե, կոսե։ Տեսնիմ, Թե ո՞վ է՝ դուրս ԹիԹրիկեցնում ու ասում Թե՝ Օ՛սկան Պետրովիչ, բռնե՛ էս էրկու հարուր Թումանը, ախչկատ մա՛րԹու տու։ Աբա՛, ա՛վտալու է էս հանգի բանը՞։ Չէ՛, ձիր արիվը, շատ կարԹալը գոգրին* (Գլուխը ցույց տալով։) *զարար է անում։ Հիմի յիս, վուր ունիփբրստա չիմ էլի, խիլք չունի՞մ, մեբաշ մե աբասու մագիեր հինգ շայի չտամ։ է՛հ, մա՛խլաս. էլի տերը բար տա էս ուսում առաջներուն, Թե չէ ինձ համա վո՞ւրդի էր բաց ըլում Թրեաթրի իշարեն։ Ա՛խ, Թե մե գլուխ էկավ էս բանը, դո՛ւն մտիկ իժում Փուքսավատովի հալը։* (Ման է գալիս երգելով։) *Համու լամու, Թրեաթր լամո՛։ լամու լամու, իշար լամո՛։, յա՛ր խաթա՛մ։* (Ավելի չպետք է երգել։) *Հա՛յ-Թե կու խոսին փողոցումը՝. կոսին՝ տո՛, էս անիծած Օսկան Պետրովիչը վո՛ւրդի գԹավ էս խերի բանը։ Աբա՛, ո՞ւմ խիլքումը գու քեր հաու Թրեաթրի իշարեն։* (Սիծաղում է ու ցուցամատի ծայրը ճակատին խփելով։) *Փիլիսոփի գո՛գրա խս, գո՛գրա, Օ՛սկան Պետրովիչ։ Հա՛յ-Թե ախչկաս բանը շինվեցավ։* (Մոտենում է ձախ դռանն ու կանչում է։) *Կե՛կել։*

ՏԵՍԻԼ Փ

ՕՍԿԱՆ, ԿԵԿԵԼ

ԿԵԿԵԼ, ներս գալով։

Հա՛մե։

ՕՍԿԱՆ

Մե, հենց ապրիս, հիմիկ էվետ էս օԹախը կա՛րքի բի ու կարտոփիլի մո՛ւմիրը վառե։ էտ շամգանն էլ ուա՛դ տրաս։

ԿԵԿԵԼ

Ղո՞նաղնիր պիտի գա, մա՛մի ջա՜ն։

ՕՍԿԱՆ

Չէ՛, մե տղա է, հիդը բան ունիմ։

ԿԵԿԵԼ

Ո՞վ է, մա՛մի ջան։

ՕՍԿԱՆ

Տո՛, քիզ ի՞նչ, ովոր վուր է. դուն բա՛նըդ տիս. յիս էլ հենց հիմի գալիս իմ։ (Երգելով գնում է:) *Լամու լամու, թրեաթր լամո՜ւ. լամու լամու, իջար լամո՜ւ. յա՜ր իսթա՜մ։*

Դուրս է գնում ձախ դռնից:

ՏԵՍԻԼ ԺԱ

ԿԵԿԵԼ, մենակ:

Հերս ի՜նչ ուրախ է. շատ վուխտ է խաղ չէ ասի։ (Սենյակը կարգի բերելով:) *Իմ դեդի փալն էլ ի՜նչ լավ դուս էկավ. մեբաշ հենց գու քա, վուր դուն էլ չիմանաս, կոսե։ Է՛րնեկ, ո՞վ պիտի գա։ Հիմի վուր էրազս կատարվի. միթամ մե սիրուն տղա ասում էր հորս, վուր քու ախչիկը մուքթ ուզում իմ, կոսե, ու մե՛բաշ ինձ նշնեցին... Աբա՛, դա՛րդը կտրվիլ է հիմիկվան տղերանցը՛. օղունդ փո՛ւղ ասա նրանցը, թեգուզ ախչիկը քաչալ ըլի։* (Խտակ մոմերը վառում է, ճրագուն հանգցնում ու աշտանակը թաքցնում. հետո հայելու մեջ կոկվում է:) *Ի՜նչ ուրախ ի՜մ. էլախտվան խաղը լա՛վ խաղ է, ա՜յ։* (Ոտքից հանում է մի ծալած թուղթ:) *«Ա՛խ դիլավ, դիլավ»-ի ձենի վրա է ասած։* (Երգում է, սազանդարները ձայնակցում են:)

«Հայոց աղջիկնե՛ր, ձեր հո՛գուն մատաղ.
Երբ միտս եք գալիս, ասում եմ ես՝ ա՛խ.» և այլն։

Երգը ավարտում է և նորից հայելու մեջ կոկվում:
Այդ միջոցին Օսկանը ներս է մտնում ձախ դռնից:

ՏԵՍԻԼ ԺԲ

ՕՍԿԱՆ, ԿԵԿԵԼ

ՕՍԿԱՆ

Տո՛, է՞տենց իս կարքի բերում օթախը՛։

ԿԵԿԵԼ

Դիփ սարքեցի, մա՛մի ջան. աբա՛, մտի՛կ, ի՞նչն է պակաս։

ՕՍԿԱՆ

Գնա՛, լավ է, դե՛դիտ օտկե էնդի։

Կեկելը դուրս է գնում ձախ դռնից:

ՏԵՍԻԼ ԺԳ

ՕՍԿԱՆ, մենակ:

Տո՛, էս հալիլեն վուր չըլի, ի՞նչ պիտին անի ախչըկիրքը. է՜հ, իժում ուրիշ բան կու մոգոնին։ Ամա իջարեն գլխես չէ դուս գնում, չէ՛. քանի շատ իմ փիքր անում, էնղադա դադումը շատանում է... Ասում էի՝ էրկու հարուր թուման կու դադի՛մ։ Էրկու հարուրն ի՜նչ է. բաբաթ-բաբաթ բանիր է պտուտ գալի մտկումս։ Մեկ էս վուր՝ հաու թրեաթրի համա ի՞նչ հարկավուր է, վուր առչիվը վաթսուն հոքի նեմենցու մուզիկանտանիր ըլին նստած ու տիրու-տուրո՛ւ, տիրու-տուրո՛ւ բանիր ըլին ածում. ուփրո լավ չի ըլի՞, վուր մե էրկու դաստա դուդուկչիք ըլին նստած էնդի ու լա՛վ սահարի, ռաստ, հեյդարի, նաղմ, մավարան, մուխամբազ ըլին ածո՛ւմ. էս ո՛ւփրո կու դուր գա խալխին, համ էլ չուրս ջեր էժան կու նստի։ Մեկ էլ էս՝ վուր դիփ սորված տղերք չմո՛դ անիմ խաղալու համա, բազազխանի տղերքը նրանցմեն պա՛կաս կու խաղա՜ն։ Մե գա էն ճարտարովը։ (Նայում է ծոցի ժամացույցին:) *Հորես ութը կու թամամի։ Ինչի՞ ուշացավ հեր օխնածը։ Ա՛յ, իմ խարջ տղա. բլբուլ է, բլբուլ, դրուստ։ Թե մե է՛րկու հարուր թուման ավելի կունենա՜մ, ձեռնեմես չիմ թողնի, ամա վո՞ւրդի է էս սահաթիս։ Ա՛խ, բա՛ժինք մոգոնող, Սաթանելի չանգերով պատռտվիս։*

Կեկելը ներս է մտնում խոհի դռնից:

ՏԵՍԻԼ ԺԴ

ՕՍԿԱՆ, ԿԵԿԵԼ

ԿԵԿԵԼ

Մա՛մի ջան, մե ինչոր տղա է հարցնում քիչ. ասում է՝ Արութին Ճարտարովն իմ, կոսե։

ՕՍԿԱՆ, ուրախ։

Ա՛սա գա, ա՛սա գա, յիս էլ նրան իմ մնում։

ԿԵԿԵԼ

Ա՛րի, մա՛մի ջան, դո՛ւն ասա. բիչը ջեր չէ հիդ էկի, ու դեղեն էլ սարդըփումն է։ Մեկ խոսեցա էն տղի հիդ հենց գիդեի ամութու գեդինը մտա։

ՕՍԿԱՆ

Տո՛, գնա՛ ասա՝ համեցեք իմ ասում, է՛. գե՞լ խոմ չէ՛, վուր կուլ սա։ Իժում չայ էլ կու բերիս միդ համոնա։

Կեկելը դուրս է գնում խորհի դռնից կափիճերն ուղղելով։

ՏԵՍԻԼ ԺԵ

ՕՍԿԱՆ, մենակ։

Տո՛, զարմանք խալխ է էս միր խալխը... Փռանգստանու ամեն մոդեքն տրվեցան ու քաղաքավարութինը չէ՛։ Թե ամութեմեն շատ ին քաշվում, էն կրինոլինիմեն ամանչին, վուր հենց գիդենաս շուրտվանց. բըզրիալեք ըլի՛ն։ (Հետ է նայում։) *Էս ի՞նչ էլան... մե տեսնիմ...* (Դուրս նայելով խորհի դռնից։) *Դիվեր է գալի։* (Նկատելով իր վերարկուն։) *Էս էլ էստի է թողի...*

Վերցնելով վերարկուն, շտապով դուրս է տանում ձախ դռնից, խորհի դռանը երևում են՝ ասաչ Կեկելը, հետո Արութինը։

ՏԵՍԻԼ ԺԶ

ԿԵԿԵԼ, ԱՐՈՒԹԻՆ

ԿԵԿԵԼ

Համեցե՛ք։ (Այս ու այն կողմը նայելով։) *Հորես մամեն գու քա. է՛ստի մուլափ տվեք։* (Յույց տալով բազմոցը։) *Համեցե՛ք...*

Արութինը զլուխ է տալիս, Կեկելը պատասխանում է և դուրս է գնում ձախ դռնից։

ՏԵՍԻԼ ԺԷ

ԱՐՈՒԹԻՆ, մենակ։ Փոքր լռությունից հետո։

Ա՛խ, ի՛նչ սիրուն է։ Իմացիլ էի, վուր լավ ախչիկ է, ամա չէի գիդի, թե էսենց անտիկա է։ (Առաջ գալով։) *Ջենը դրուստ սրտումս նստեցավ։ Էնդուր էլ դիփ ասում էին ինձ՝ թե կնիկ գուզիս, կոսե, սրա հանգի ախչիկ չկա քախկումը, կոսե՛։ Ա՛խ, յիս սրա հոքուն մեռնիմ, բոյին շիմշատ ըլի հենց գիդենաս։ Ամա էրանի գիդենամ, թե էս Օսկան Պետրովիչն ո՞ւր է կանչի ինձ... Թե բան ուներ, ինչի՞ փողոցումը չասավ։*

Օսկանը մտնում է ձախ դռնից։

ՏԵՍԻԼ ԺԸ

ՕՍԿԱՆ, ԱՐՈՒԹԻՆ

ԱՐՈՒԹԻՆ

Բա՛րիգուն, Օ՛սկան Պետրովիչ։

ՕՍԿԱՆ

Օ՛հ, բա՛րով, պա՛րուն Արութին. ինչի՞ ուշացար։

ԱՐՈՒԹԻՆ

Գուքանա, խոմ գիդիս, ուշ իմ կոխպում... (Միմյանց ձեռն են տալիս։) *Ի՞նչ հարկավուր բան ունիս։*

ՕՍԿԱՆ

Ա՛յ, արդ անիմ, ախպեր. (Հրավիրելով նրան դեպի բազմոցը:) *Համեցե՛ք նստի...* (Արութինը պատրաստվում է բազմոցի մոտ դրած բազկաթոռի վրա նստելու:) *Վա՛, դի՛վանի վրա համեցեք։*

ԱՐՈՒԹԻՆ, նստելով նույն բազկաթոռի վրա:

Դիփ մեկ է, Օ՛սկան Պետրովիչ, էսենց էլ լավ իմ։

ՕՍԿԱՆ

Քու քեփն է... (Նստում է տախտի վրա:) *Մե լավ բան իմ գթի, ուլիտիս օտկի, Ա՛րութին ջան. քու լավութինը կու վչարիմ։*

ԱՐՈՒԹԻՆ

Ջո՛ւխտ աճկիս. ի՞նչ դուլուզ կա. հրամայե՛, Օսկան Պետրովիչ։

ՕՍԿԱՆ

Մե ա՛սա, լա՞վ բան մոդա չէկավ հաու թրեաթրը՞։

ԱՐՈՒԹԻՆ

Հալբաթտա, ասկի պայծառութին է։

ՕՍԿԱՆ

Հա՛, ամա մարթ վուր ուզենա՝ խե՛ր կու տեսնե էս բանումը։

ԱՐՈՒԹԻՆ, առանձին:

Ի՞նչ է ասում։ (Օսկանին): *Վո՞ւնց թե խեր կու տեսնե. չիմ իմանում, Օ՛սկան Պետրովիչ։*

ՕՍԿԱՆ

Գիդի՞ս ինչ է, ա՛խպեր. յիս ուզում իմ հաու թրեաթրը իշարով վի կալնի։ Խերի բան է, գա՞նա։

ԱՐՈՒԹԻՆ, առանձին:

Գժվիլ է՞։ (Օսկանին:) *Հանաք իս անո՞ւմ, Օ՛սկան Պետրովիչ։*

ՕՍԿԱՆ

Հանաք կի չէ, դուրթ իմ ասում, քո՛ւ արիվը. քունը սուտ չգիդենաս, իմ արիվրն իմ ասում։

ԱՐՈՒԹԻՆ, վեր է թռչում տեղիցն ու առանձին։

Վա՛յ մե, խիլքեն էլիլ է։

ՕՍԿԱՆ

Վա՛հ, ի՞նչ իս արմնում։ Ջի՞ս գիդի, վուր ամեն բանումը փուղ կու դադվի՞, օղունդ մարթ ճա՛մփեն գիդենա։

ԱՐՈՒԹԻՆ, առանձին

Քու դո՛ւշմանը. ա՛փսուս Օսկան Պետրովիչ։ Ամա ի՞նչ ախչիկ ունե՞. յիս նրա հոգուն մեռնիմ։ (Նստելով, Օսկանին:) *Հալբաթտա ամեն բանումը փուղ կա, ամա մեքաշ էնդու վրա արմցա, վուր ուրոր գնացի՝ հա՛ու տրեատր, հա՛ու տրեատր, գլո՛ւխս գնաց. էլի՞. էլ օչով վունց բան ունե, վունց գուրձ։ Բա՛ս իստակ մտկումդ դրիլ իս, վուր իշարով վի կալնի՞ս։*

ՕՍԿԱՆ

Իստա՛կ. ու էն իմ հարցնում՝ խերի բան է՞, թե չէ։

ԱՐՈՒԹԻՆ, առանձին:

Խե՛ղճ մարթ. ա՛րի կոսիմ, թե խերի բան է, տեսնիմ, իժում ի՞նչ կոսե։ (Օսկանին:) *Վա՛հ, խերի բան վուր չըլի, ո՞ւր կու մոգոնեին։*

ՕՍԿԱՆ, առանձին:

Մտի՛կ թե վո՛ւրդի է միտկը հասնում։ (Արութինին:) *Յիս էլ էտ իմ ասում. ամա ի՞նչ իս կարծում, միր բազազխանի տղերքը, վուր ուզենան, չի՞ն կանա հաու թրեաթրը խաղա՞։*

ԱՐՈՒԹԻՆ, առանձին զարմանք է արտահայտում:

Վա՛հ, բաս ի՞նչացու է միր բազազխանեն. միր Լա՛զրովի շկոլեն էլ էն է. էլի՞... Այ՝ Բանբակինց Պետոն, Մահուդինց Ստեպկոն, Ջիթումինց Դարչոն. Կանչոինց Միխոն. հիմիկվան խաղացողներու վրա պակաս չին խաղա՞։

Առանձին, դեմքը ծամածռում է:

ՕՍԿԱՆ, առանձին:

Ի՞նչ ասիս՝ սա գիդե։ (Արութինին:) *Բա՛ս տարեքը մե քսան-յարսուն թուման վուր ունենան, խանդեխան կու խա՞ղան հաու թրեաթրումը՞։*

ԱՐՈՒԹԻՆ, առանձին։

Խի՛ղճ Օսկան Պետրովիչ։ (Օսկանին)։ *Վա՛հ, ջանեներուն չի դուռ գա՛. յարսուն թումնով յիս էլ կու խաղամ ո՞։*

ՕՍԿԱՆ, տեղից վեր է թռչում ու առանձին։

Ա՛յ փուղի ղադր գիդացող։ (Արութինին։) *Է՛հ, ղո՛ւրթ կու խաղա՞ս*

ԱՐՈՒԹԻՆ, առանձին։

Ավտում է խիղճը։ (Օսկանին։) *Բաս չի՞մ խա...*

Ձախ դռնից կեկելը արծաթյա սկուտեղով բերում է թեյ և պահսիմատ։

ՏԵՍԻԼ ԺԹ

ՆՐԱՆՔ, ԿԵԿԵԼ

ՕՍԿԱՆ, Արութինին, որ շփոթվելով ոտի է կանգնում. մինչդեռ Կեկելը թեյ է առաջարկում նրան։

Համեցե՛ք, Արութին ջան։

ԱՐՈՒԹԻՆ, Օսկանին։

Ջեր հրա՛մանքդ, Օսկան Պետրովիչ։

ՕՍԿԱՆ

Վա՛, վա՛ գեթաղվա... (Արութինը վերցնում է մի բաժակ, գլուխ տալով Կեկելին, որ մյուս բաժակը տանում է դեպի Օսկանը։) *Լա՛վ, կենա էտի ստոլի վրա...* (Կեկելը բաժակն ու պահսիմատը սեղանի վրա է դնում։ Արութինը աչքը չէ հեռացնում նրանից։ Առանձին։) *Ի՞նչ խիստ է անցղում. թային հավնեցավ... Կուլի ղուրթ՝ աստուձ օղորմա՞...* (Կեկելին, ցածր։) *Մուրաբա էլ մո՞դ բի, ա՛սա էնդի...*

Կեկելը, դատարկ սկուտեղը ձեռին, դուրս է գնում ձախ դռնից։

ՏԵՍԻԼ Ի

ՕՍԿԱՆ, ԱՐՈՒԹԻՆ

ՕՍԿԱՆ, նստելով։

Քաս էանենց, Ա՛ռութին ջան, կու խա՞դաս, էլի՞։

ԱՐՈՒԹԻՆ, նույնպես։

Վա՛հ, ինչի՞ չիմ խաղա... Անմիղ, անգեթ վուր յարսուն թումանի դադիմ, բաս չի՞մ խաղա՞... Գուլի՞ս քսան-յարսուն թումնով էրկու հարուր տղա ճարիմ։

ՕՍԿԱՆ, առանձին։

Ա՛յ իմ խարջ փեսեն. ա՛խ, փո՞ղ։ (Արութինին։) *Օ՛հ, աստուձ օխնե քիզ, Արութին ջան. բանս կու շինվի... Քու մե օրը հազար անե ու մուրազիտ հասնիս, վուր ինձ էսենց ուրախացրիր։*

ԱՐՈՒԹԻՆ, առանձին։

Ղո՛ւրթ ավտաց. խի՛ղճ մարթ. ախչկան ո՞վ տիրութին կոնե հիմա։ (Օսկանին)։ *Թե քանդ էտու վրա է, հալբաթտա շինած է։* (Առանձին։) *Արի՛ սուտ մե քանի հանգը խաղամ, տեսնիմ ի՞նչ կոսե. համ էլ կուլի ձեննիս վրա էն ախչիկն էլի էրևա* (Օսկանին։) *Աբա՛՝ ո՞ւմ հանգը գուլիս, վուր խաղամ։*

ՕՍԿԱՆ

Աքա՛, հոքուտ մեռնիմ։

ԱՐՈՒԹԻՆ, փեր կենալով տեղից։

Ա՛յ, օրինակ ասիմ քիզ Դալալ Ղազոյի հանդումը։ (Ներկայացնում է։) *«Ա՛խ, իմ օղորմած հոքի բիձա Կանկո՛... էլ Սաղմոսաք, Աստուծքը ու դիմի տեքստերնիրու գրիքը, ասում է, փո։քամն է։»**

ՕՍԿԱՆ, առանձին։

Վուր ասում իմ՝ բլբուլ է։

ԱՐՈՒԹԻՆ, որ նույն միջոցին հետ ելյեց ձախ դռան կողմը։

Վո՞ւնց է, նրանց վրա փիս իմ ասո՞ւմ։

ՕՍԿԱՆ

Փիս կի՛ չէ՞, ուիրա լալ ես ասում. ասա է ա՛, վուր Դալալ Ղազոն հատ փուր ունե, ու դուն բարակ ես։

* Այս ու հետևյալ երկու տեղ չակերտներով նշանակած խոսքերն ասված են պ. Ինչիկ Մանդինյանից, որ առաջին անգամ կատարեց Արութին ձարտարովի դերը։

ԱՐՈՒԹԻՆ

Վա՜հ, հե՛նզադա բալիշ կու դարսիմ փուրիս վրա, վուր Ալիխանի ռումբին դառնա։

ՕՍԿԱՆ

Հաա՜... գանա էտունք էլ կա՞։

ԱՐՈՒԹԻՆ

Վա՜, բաս վո՞ւնց գիդեիր։

ՕՍԿԱՆ, առանձին։

Գիդեի, վուր շնուրքով տղա է. (Արութինը դարձյալ նայում է դեպի ձախ դուռը։) *ամա էսենց չէի ճանչնա։ Ա՛խ, մե ավելի երկու հարուր թումանա։* (Արութինին։) *Բարաքալա՛, Արութին ջան. տեսնում իմ, վուր թրեաթրի բանիրը դուն նեքսի տկերեմեն իս գիդացի։*

ԱՐՈՒԹԻՆ

Բաս վո՞ւնց կու ճանչնեիր ինձ։ Հիմի գուզի՞ս էն թաքավուրի հանգը՝ սիրեկնի հիդ վուր խոսում է։ (Ներկայացնում է։) *«Ցի՛ս քիզ սիրում իմ, ասում է, յա՜ր. ամա թե դուն ինձ չի՛ս սիրի, յիս ջուրը կու ննգնիմ. ասում է. իո գիդիս, վուր յիս էտթավուր խասիաթ ունիմ», ասում է։*

ՕՍԿԱՆ, առանձին։

Դրուստ կու ըռ՛ւքրե թրեաթրը, ձիր արիվը։ (Արութինը կրկին նայում է նույն դռան կողմը։) *Ջա՜նում սան, բազազխանա... Լա՜զզաթ։* (Արութինին)։ *Օ՛խ, Արութին ջան, սիրտս դաղեցիր, էլի՜... Ա՜փերում։*

ԱՐՈՒԹԻՆ, առանձին։

Իմ սիրտն էլ դաղվեցավ։ (Օսկանին։) *Էստու վրա լավ-լավը գիդիմ, Օ՛սկան Պետրովիչ։* (Առանձին)։ *Աբա՜ թե մեկ էլի դուս գա... Ղուրթ, լավ միտս էկավ։* (Օսկանին։) *Ա՛յ, գուզի՞ս, հիմի Սամելի հանգը խաղամ, իր հեր Վահանին վուր սպանում է։ Դուն է՛ստի կանգնի, միթամ Վահանն իս։* (Օսկանին կանգնեցնում է բեմի մեջտեղը, երեսը ձախ կողմը դարձրած, և նրա ձեռնափայտը վեր առնում։) *Էս ջոխին էլ միթամ իմ թուրն է։* (Ինքը կանգնելով նրա դեմ առ դեմ, ներկայացնում է շատ բարձր ձայնով, փայտը ձեռքին խաղացնելով ու հետզհետե առաջ գնալով դեպի Օսկանը։) *«Ցիս քրիստոնա իմ, ասում է, դուն թուրք իս, ասում է. յիս վուրթի իմ, ասում է, դուն հեր իս», ասում է։* (Կեկելը ֆաղցրավենիքով

սկուտեղը ձեռին մտնում է ձախ դռնից և շփոթված իսկույն հետ է դառնում։) *«Ամմա դուն, ասում է, իմ ասկս ու հավատս չիս սիրում, ասում է. բաս մե՛ռի լոթիանա», ասում է։*

Օսկանը հետուհետ քաշվելով մինչև տախտը, վերջը վրան վայր է ընկնում. Մարթան ու Կեկելը նեղս են վազում։ Արութինը շփոթված՝ փայտը ձեռից վայր է ձգում։

ՏԵՍԻԼ ԻԱ

ՆՐԱՆՔ, ՄԱՐԹԱ, ԿԵԿԵԼ

ՄԱՐԹԱ

Վո՛ւյ, քոռանամ ու կուրանամ յիս. ի՞նչ խաբար է։

ԿԵԿԵԼ, Օսկանին։

Մա՛մի ջան, մի՛ վախենա, ջոխին ձեռնեմեն վեր գցից։

Արութինը, սիրով արբած, անլպաղաբ նայում է Կեկելին։

ՕՍԿԱՆ, ծիծաղելով։

Ա՛յ սարսաղնիր։ (Արութինին։) *Օ՜հ, շա՜տ ապրիս, Ա՛ռութին ջան։*

Ծիծաղից շունչը կտրում է։
Մարթան ու Կեկելը զարմացած նայում են երբեմն Օսկանին, երբեմն Արութինին։

ԱՐՈՒԹԻՆ, առանձին։

Սուտը սուտ է, էլ յիս առանց սրան չիմ կանա ապրի. հալբաթ իմ բախտն է։

ՄԱՐԹԱ, Օսկանին։

Քա՜, ահու կինաղամ սիրտս գնաց. մե ասա՝ էս ի՞նչ բան է։

ՕՍԿԱՆ, Մարթային, շարունակելով ծիծաղը։

Տո՜, մե գլխեմես ձե՛ռը վիկալ, քո հո՞րն օղորմի, է՜։ (Արութինին։) *Օ՜հ, զորանա՜ս, Ա՛ռութին ջան։*

Մարթան ու Կեկելը զարմացած նայում են միմյանց։

ԱՐՈՒԹԻՆ, Մարթային:

Հըա՛, դեդի ջան, ի՞նչ վախեցար. հանաք էի անում. ամա թե դուրթը գուզիս՝ (Առանձին երեսը խաչակնքելով:) *ձիր ախչկա համա լավ փեսա իմ ճարի։*

Կեկելը թեկուզ գուրա է փախչում ձախ դռնից ու այնտեղից ծածուկ ականջ է դնում։

ՕՍԿԱՆ, տեղից վեր թռչելով, Արութինին։

Ի՞նչ... փեսա՞։

ՄԱՐԹԱ, Օսկանին:

Քա՛, էս ո՞ւմն իս տուն թողի, վուր հիմի մասխարա էլ է գցում։

ՕՍԿԱՆ, Մարթային։

Մուլա՛փ, դուն հալա ձեն մի՛ հանի։ (Արութինին:) *Ի՞նչ ասիր, ի՞նչ... փեսա՞։*

ԱՐՈՒԹԻՆ

Հա՛, Օ՛սկան Պետրովիչ։

ՕՍԿԱՆ

Աբա՛, էտ լա՛վութինն արա, էլի՛. ո՞վ է, ո՞վ։

ԱՐՈՒԹԻՆ

Մի ինձ պես տղա է. կու տա՞ս ախչկատ։

ՕՍԿԱՆ

Ի՞նչ վուրթին իս, Արութին ջա՛ն... Քի՛ պեսին կու տամ էլ ու կայինքս էլ չիմ խնայի... Ո՞վ է. ա՛սա ու պրծի։

ԱՐՈՒԹԻՆ

Հենց յիս իմ, ի՞նչ կոսիս... Ի՞նչ կու տաս, քու քեփն է։

ՕՍԿԱՆ

Ղո՞ւրթ։

ԱՐՈՒԹԻՆ

Իմ արիվը գիդենա, դուրթ իմ ասում։

ՕՍԿԱՆ, վրա ընկնելով Արութինին:

Քու հոքուն մեռնիմ, փե՛սա ջան, (Փաթաթվում է ու համբուրում:) *մայինց քիզ կու սիրեի ու աստուծ էլ քիզ ինձ էրիտ...* (Կանչում է:) *Կե՛կել, կեկե՛լ...* (Կեկելը երևում է ձախու դռան շեմքում:) *Ա՛րի, ա՛րի, է՛ստի արի։* (Կեկելը ամաչում է ու դժվարանում:) *Ա՛րի իմ ասում, է՛։* (Գնում բռնում է նրա ձեռը և առաջ բերելով, դիմում է Արութինին:) *Հըա՛, վո՛ւրթի։* (Կեկելի ու Արութինի ձեռները միավորելով:) *Աստուծ ձիզ միասին ծիրացնե։* (Արութինը համբուրում է Կեկելին:) *Բարի սահաթի ըլի, վո՛ւրթիք. աստուծ ա՛նիոշիվնելի անե... Վուխչ իմ կայինքը ձիրն է ու ձիրը...* (Առանձին:) *Ա՛յ լոթիանա բա՛ն...* (Ձեռները բարձրացնելով:) *Գուհանա՛մ քի, տե՛ր. աղաչանքս լսեցիր...* (Մարթային, որ զարմանքից մնացել է բերանաբաց:) *Վա՛հ, ի՞նչ իս էտի ցից էլիլ. տո՛, ա՛րի, օ՛խնե, է՛։*

ՄԱՐԹԱ, Օսկանին:

Ախար, մե չի՞ս ասի՝ ո՛վ է՞։

ՕՍԿԱՆ, Մարթային ճաշելով Արութինի կողմը:

Տո՛, ա՛րի, օ՛խնե իմ ասում, է՞. խիստ լավ տղա է. գնա՛ ու գնա՞ Մա՛րթա ջան։

ՄԱՐԹԱ, Օսկանին:

Ա՛ռանց ինձ նշնեցիր, էլի՛. քո՛ւ ասածի մարթ իս, ախար, է՞... (Արութինին:) *Աբա՛, վո՛ւրթի, նշա՛ն, նշա՛ն։*

ԱՐՈՒԹԻՆ, իր մատանին տալով Մարթային:

Համեցե՛ք, գե՛դի ջան, ու էքուց լավ նշան կու բերիմ։

ՕՍԿԱՆ

Հա՛, է՛քուց սաղ բազազխանեն պիտիմ Օրթաճալա ղոնաղ անի բաղումը. յիս նրանց հոքուն մեռնիմ, դարդիմանդ տղերք ին քի պես։

Արութինը ձեռնափայտը վերցնում, մի կողմն է դնում ու այնուհետև Կեկելի կողմից այլևս չէ հեռանում:

ՄԱՐԹԱ, առանձին:

Քա՛, իմ փալը կո՞ւդիան է՞ր... (Մատանին դնելով Կեկելի մատը:) *Շնահավուր ըլի, կե՛կել ջան...* (Համբուրվում են: Հետո դիմելով Արու-

թինին:) *Բախտավոր ըլիք, վո՛ւրթիք. ը՛մբրով կշտանաք. աստծու օխնանքն ըլի ձիզ վրա...*

ՕՍԿԱՆ

Ամի՛ն։

ԱՐՈՒԹԻՆ

Ջի՛զմով, ի՛մ մեր... (Մարթան համբուրում է Արութինին, իսկ սա—նրա ձեռը:) *Ջիր օխնանքն անպակաս ըլի միզմեն. Օսկան Պետրովիչին սաղ ունենանք... Հեստի պահիմ սրան, ի՛մ մեր, վունցոր իմ աճկի լուսը. դուք ա՛րխային կացիք։*

ՄԱՐԹԱ

Սեր ու միաբան պահե ձիզ աստուած... Կա՛մար-կատարն ըլի ձիր քոմագը...

Մի քանի վայրկյանից հետո շտապով մտնում է ձախ դռանը, այնտեղից դեպի կողմի սենյակը՝ իր թե մեկին հրամաններ է տալիս և շուտով վերադառնում է:

ՕՍԿԱՆ, նույն միջոցին:

Քու դարդիմանդ սրտին մեռնիմ, Ա՛րութին ջան, փե՛սա ջան... Ա՛րի, լոթիանա մեկ է՛լի պոռշտի անինք... (Համբուրվում են:) *Կեկել ջա՛ն...* (Համբուրում է Կեկելին, սա—նրա կուրծքն ու ձեռը:) *Ա՛պրիս... Աստուած տա ձիզ. ի՛նչ իմ սիրտը դուզն...* (Կեկելին): *Դուն գիդիս, վո՛ւրթի, հորեսի դենը... Վա՛, նստեցե՛ք, է՛...*

Նստում են՝ Կեկելն և Արութինը բազմոցի վրա, իսկ Մարթան—մոտի բազկաթոռի վրա:

ՏԵՍԻԼ ԻԹ

ՆՐԱՆՔ, Քիտեսի

ՕՍԿԱՆ. Քիտեսուն, որ ձախ դռնից բերում է սկուտեղով ֆաղցրավենիք, միրգ և խմիչք բոլոր պարագաներով:

Ա՛քեթ... (Է՛ս թենը...) (Քիտեսին սկուտեղը դնում է սեղանի վրա և անցնում է բեմի աջ կողմը:) *Հա՛մեցեք, Արութին ջան...* (Արութինը վերցնելով ֆաղցրավենի, փոքրիկ ափսեով տալիս է Կեկելին, որ լուռ ողջունում է, իսկ ինքը՝ Օսկանը, լցնում է բաժակները:) *Էս ձիր կինացը...* (Բաժակը բարձրացնելով:) *Կի՛նոք ըլիք, վո՛ւրթիք...* (Արութինը, Կեկելը և Մարթան ոտքի են կանգնում, վերցնելով մի-մի բաժակ:) *Ա՛նհատ ու անպակաս անե աստուած իր օդորմութինը ձիզ դիփունիտ վրա...*

Բաժակը դարձնում է նաև դեպի հանդիսականները:

ՄԱՐԹԱ

Էրգար օր ունենաք, վո՛ւրթիք. արժանի ըլինք ձիր թագին ու փսակին...

ՕՍԿԱՆ, մինչդեռ Արութինը և Կեկելը լուռ ողջունում են։

Աստծո՛վ...

Ամենքը խմում են միմյանց կենացը. Կեկելը բաժակը միայն մատնացնում է շրթունքներին: Հետո Մարթան, Կեկելը և Արութինը կրկին նստում են իրանց տեղերը:

ՔԻՏԵՍԻ, նույն միջոցին, առանձին:

Ամգենս քալի քե դոունիշնավթ. թու ախլաց էրջեր դամացխինկվա, ցեմիթ գամբերավս էս օջախքորի։ (Սրանք էս է ախչկան նշնիլ ին. թե հիմի էլ մե ջեր փոշտացի, ծեծելով կու սպանե ինձ էս տնաքանդը։)

Դուրս է փախչում խորքի դռնից և այնտեղից ծածուկ նայում է։

ԱՐՈՒԹԻՆ, Օսկանին:

Աբա՛, իմ հեր, յիս իմ մուրազին հասա, վունցոր օխնեցիր. հիմի տրեատրի իջարի վրա ի՞նչ իս ասում։

ՕՍԿԱՆ

Յիս էլ իմ մուրազին հասա, վուրթի, վուր քի պես փեսա ճարեցի ինձ համա։ Թրեաթրի իջարի վրա էքուց կու խոսինք կանանչ ու նարգիզ շարխեյիվնումը սեյիր անելիս... Մե ճաշ սարքիմ էնդի ձիզ համա գուլաբի տանձի տակը, մե ճա՛շ զուռնով ու դուդուկով. վուր—անտիֆոնի... Ա՛փսուս, վուր վարթ մանուշակի վուխան անց կացավ. ամա ումիկ ունիմ՝ էլի լավ քեփ անինք... Հիմի ջեր մե լեզգինվար խաղանք ձեռաց... (Առանձին:) *Տո՛, իմ իջարին իմ ախչիկն էր. Թրեաթրի մոգոնողին էլ*

ի՞նչ ասիմ... (Արութինին ու Մարթային:) *Աբա՛, մե տա՛շի խփեցեք, ուզում իմ խաղա...* (Սազանդարներն ածում են լեզգիներն պարի նվագակը: Պարում է:) *Վուրն էլ էքուց Օ՛րթաճալա թամաշա արեք...* (Դեպի հանդիսականները:) *Յիս վուր ասի՝ «Գիշիրվան սաշրը խեր է՞»։* (Մյուսներին:) *Հիմի ձիր հիրթն է։* (Ամենքը կարգով պար են գալիս սազի ներդաշնակությամբ: Պարը վերջանալիս, տեսնելով Քիռեսին խորի զուսանը:) *Աբա՛, Քիռեսավ, էրթի շենեբուրաղ։* (*Աբա, Քիռեսի, մե քու հանգը։*) (Քիռեսին հանկարծ ներս է վազում, գլուխ է տալիս նշանածներին և նիստալի պարում է:) *Հա՛, զոչաղ... եվալ էրթ կարգ չոխաս գաշուքեր։* (*Հա՛, զոչաղ... էքուց մե լավ չոխա կու բախշիմ ջիզ։*)

Քիռեսին ավելի մեծ ճարպիկություն է ցույց տալիս.
Օսկանը և Արութինը ծափահարում են նրան:

ՎԵՐՋ

ՕՍԿԱՆ ՊԵՏՐՈՎԻՉՆ ԷՆ ԿԻՆՔՈՒՄԸ

ԿԱՏԱԿ ՄԵԿ ԱՐԱՐՎԱԾՈՎ

1866

Արտաշես Սուքիասյանի հիշատակին

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՕՍԿԱՆ ՊԵՏՐՈՎԻՉ
ՄԵԾ ՍԱՏԱՆԱ
ՄԱՐԹԱ, Օսկան Պետրովիչի կինը
ԿԵԿԵԼ, նրանց աղջիկը
ԽԱՄՓԵՐԻ, սգավոր կին
ԳԱՐԱՍԻՄ ՅԱԿՈԲԼԻՉ,
ՋԱՆԳԱԿՈՎ,
ՋԱՐԽԱԾՈՎ,
ՄՂԴՍՈՎ,
ԳԵՂԵՑԻԿ ԿԻՆ,
ՏԳԵՂ ՀԱՐՈՒՍՑ ԿԻՆ,
ԳՆՂԵՑԻԿ ՀԱՐՈՒՍՑ ԿԻՆ,
ԲԺԻՇԿ,
ՍԱԴԱՅԵԼ, դժոխքի բագավորը

} **Դժոխքում տանջվող մեղավորներ**

Սատանաներ, պար եկող չար ոգիներ, սգավոր կանայք, մեղավորներ գևեր, վիշապներ, չար հրեշտակներ, դժոխքի պաշտոնյաներ ու ծառաներ և այլն։

Անցքը պատահում է դժոխքի կատրի վրա, Օսկան Պետրովիչի տանը և դժոխքի մեջ։

Բեմը ներկայացնում է դժոխքի կոտրը: Աջ ու ձախ երեսի մեղավոր մարդկանց արձաններ: Խորքում՝ երկինքը, ուր փայլում են աստղեր և նորածին լուսինը: Բեմի վրա բավականին մութ է, բացի այն վայրկյաններից, երբ դժոխքից բոց է բարձրանում. իսկ դրախտը կամ դժոխքը բացվելուն պես, ամբողջ բեմը լուսավորվում է համապատասխան լույսով, ինչպես նշանակած է իրանց տեղը:

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ՕՍԿԱՆ, ՍԱՏԱՆԱՆԵՐ, ՊԱՐ ԵԿՈՂ ՉԱՐ ՈԳԻՆԵՐ

Վարագույրը բացվելիս սատանաները բերում են Օսկանին, ձեռքերի վրա բարձրացրած:

ՕՍԿԱՆ, սատանաների ձեռքից ազատվելով:

Վա՜, խա՜նի-խարաբնիր, ձե՛ռը չիք վիկալնի՞, ի՞նչ գուզիք ինձմեն... (Սատանաներն ու չար ոգիները պարում են նրա առաջ, անհասկանալի ձայներ հանելով, և շուտով դադարում:)* *Էս ո՞ւր բերին ինձ էս անիծածները...* (Զարմացած նայում է այս ու այն կողմը:) *Հորես կու խիխտվիմ, ձիր արիվը գիդենա...* (Հոտոտում է իր շուրջը:) *Էս ի՞նչ կպրի ու նավթի հոտ է գալի, ա՛խպեր... Ո՜հ, էս ի՞նչ շուք է, ա՛խպեր...* (Գրպանից հանում է իր կապույտ թաշկինակը** և բռնիմբը սրբում:) *Ձիր արիվը, վունչիչ չէ օտկում. Սոլոլակի ջրիրը գլխեմես մեճկն է անց կենում...* (Հանկարծ վեր է թռչում և ոտները զնում:) *Վա՜յ մե, վուտնիրս էրվում է...* (Գետնից զանազան կերպի նոր սատանաներ են դուրս գալիս, ուրախանում են և հետ իրանց տեղերը ցած թռչում:) *Էս էՙրազումս իմ, թե արագուճի իմ տեսնում... Դրո՜ւստ սատանաներու նման ին, ձիր արիվը, էս անիծածնիրը...* (Զարհուրած այս և այն կողմն ընկնելով, մոտենում է մի արձանի*, որ ողջունում է նրան:) *Էս էլ ի՞նչ է... Հը՜, բա՜րի աչողում...* (Արձանը դարձյալ ողջունում է:) *Բա՜րի աչողում, ասում իմ. քեփդ վո՞ւնց է...* (Արձանը կրկին ողջունում է:) *Աբա՜ թե ձեն հանե... Է՜յ, քեփդ վո՞ւնց է, վո՞ւնց...* (Արձանը մնում է անշարժ:) *Է՜հ, զրըշմալ...* (Մոտենում է մի ուրիշ արձանի, որ նույնպես ողջունում է նրան:) *Էս ո՞վքիր ին, ա՛խպեր:* (Արձանին:) *Բա՜րով, հազար բարի. թե քու հոքին կու սիրիս, մե ինձ ասա՛՝ էստի ի՞նչ իմ շինում...* (Արձանը նորից ողջունում է:) *Տո՜, լիզուտ աստուձ կտրի՞լ է՜...* (Արձանը կրկին ողջունում է և հետո մնում է անշարժ:) *Է՜հ, սա էլ զրշմալ է էլի...* (Ոտները թափ տալով:) *Օ՜հ, օ՜հ, օ՜հ...* (Սատանաներին:) *Է՜յ, խա՜նի-խարաբնիր, էս ո՞ւր բերիք ինձ...* (Սատանաները ուրախ-ուրախ նրա առաջ խաղում են. երկու փոքրիկ սատանա թռչում են նրա ուսերին, մի ուրիշն անցնում է նրա շեֆամիջով:) *Գժվիլ ի՞ն էս անիծածնիրը՜...* (Ազատվելով նրանցից:) *Ի՞նչ իք ուզում ինձմեն, ա՛խպեր:* (Թռում է:) *Փո՜ւ, էս ի՞նչ ասի. վո՜ւրդանցի ախպեր ին իմը:*

ՍԱՏԱՆԱՆԵՐ, վեր ու վեր թռչելով:

Ա՛խպեր ինք, ա՛խպեր ինք, ա՛խպեր ինք: (Գետնի տակից դարձյալ սատանաներ են բարձրանում և նրանք էլ են կրկնում:) *Ա՛խպեր ինք, ա՛խպեր ինք:*

Վերջիններն իսկույն իջնում են իրանց տեղը:

ՕՍԿԱՆ

Է՜յ, ա՛խմախնիր, վո՞ւրդանցի ախպեր ինք:

ՄԵԾ ՍԱՏԱՆԱ

Բաս ի՞նչ ինք, վուր ախպեր չի՛նք. հորեսի դենը դիփ մետի պիտի ապրինք:

* Առհասարակ սատանաներն ու պար եկող չար ոգիները պետք է խելոք վարվին և լիանգարեն գործողության ընթացքը, ինչպես արին այդ առաջին ներկայացմանը:

** Տե՛ս «Գիշերվան սարը խեր է» կատակը:

* Արձան և ոչ թե կենդանի մարդ, ինչպես արին այս պիեսը ներկայացնելիս, մի քանի տարի առաջ, Արտիստական ընկերության թատրոնում, ուր, փոխանակ երկու մարդու արձանի, բեմի աջ ու ձախ կողմը կանգնեցրել էին երկու դերասան, սպիտակ չարսավների մեջ փաթաթված: Շատ ծաղրելի էր նրանց դրությունը: Եթե միջոցը չէ ներում, ավելի լավ է բոլորովին չդնել այդ արձանները:

ՕՍԿԱՆ, տաքությունից և ճռտից նեղտանալով:

Է՛յ, սա՛ըսաղնիր, գժվի՞լ իք, ձիզ մոդ ո՞ւր իմ ապրում. խիլքս հաց ու պանրի հիդ իմ կերի՞, վուր օղլուշաղս թողնիմ ու ձիզ մոդ ապրի՞մ։

Սատանաները ծիծաղում են:

ՄԵՆ ՍԱՏԱՆԱ, ծիծաղելով:

Ի՞նչ օղլուշաղ. քու օղլուշաղը մինք ինք հոբեսի դենը...

Փոքրիկ սատանաները թռչելով կրկին նստում են Օսկանի ուսերին:

ՕՍԿԱՆ, երեսը խաչ հանելով:

Մեղա՛յի ասածս։ (Սատանաները վայր են թափվում նրա ուսերից:) *Տո՛, կոբե՛ք, ա՛նիծածնիր, է՛...* (Մեծ սատանային:) *Վո՞ւնց թե իմ օղլուշաղը դուք իք։*

ՄԵՆ ՍԱՏԱՆԱ

Հա՛, բա՛ս։

ՕՍԿԱՆ

Ինչի՞։

ՄԵՆ ՍԱՏԱՆԱ

Էնդուր վուր մեռար ու քու միխկի համա դժոխկն իս գալիս։

ՕՍԿԱՆ

Մեռա՞։

ՄԵՆ ՍԱՏԱՆԱ

Հա՛, բա՛ս, ու հիմի դժուխկի կարի վրա ինք։

ՕՍԿԱՆ

Մեռա՛... (Լալով:) *Վա՛յ մե, Մա՛րթա ջան...* (Թաշկինակը մոտեցնում է աչքերին, սատանաները ծիծաղում են. հետո ուշքի գալով:) *Վո՞ւնց թե մեռա, ի՞նչ բեսաբ նամադուլ իք անում. թե մեռա, ձիզ մոդ վո՞ւնց իմ խոսում։*

ՄԵՆ ՍԱՏԱՆԱ

Էտ՝ էլ դո՛ւն չիս։

ՕՍԿԱՆ

Վո՞ւնց թե չիս չիմ. բաս չիս Օսկան Պետրովիչը չի՞մ։

ՄԵՆ ՍԱՏԱՆԱ, ծիծաղելով:

Օսկան Պետրովիչի հոքին իս։

ՕՍԿԱՆ, խելագարվածի պես այս ու այն կողմն է ընկնում։

Վա՛յ մե, հիմի իմացա. շվիդո՞բիթ ցոլո դա շվիլո... Բաս էլ միր քաղաքը չիմ տեսնի՞։

ՄԵՆ ՍԱՏԱՆԱ

Չէ՛, պրծավ քու բանը։

ՕՍԿԱՆ

Էլ չէ՞... (Ձեռքը թափ տալով:) *Պրաշչա՛յի Թիփլիզ...* (Լալիս է:) *Ա՛խ, իմ Մա՛րթա ջան, յարաբ ի՞նչ իս անում հիմի էտի։*

ՄԵՆ ՍԱՏԱՆԱ

Ա՛յ, ի՛նչ է անում... Աբա՛, մե հի՛դ մտիկ տու...

Բեմի խորքումը երևում է Օսկանի տան մի սենյակը, ուր սեղով նստած են՝ նրա կին Մարթան, աղջիկ Կեկելը* և ուրիշ սգավոր կանայք։ Սենյակում լույս է:

ՏԵՍԻԼ Բ

ՕՍԿԱՆ, ՍԱՏԱՆԱՆԵՐ, և բեմի խորքում՝ ՄԱՐԹԱ, ԿԵԿԵԼ, ՍԳԱՎՈՐ ԿԱՆԱՆՔ, ՀԵՏՈ ԵԱՄՓԵՐԻ**

ՄԱՐԹԱ, սգալով:

Իմ փաշա ու դրոշա Օ՛սկան ջան...
Ինձմեն խոով ո՞ւր իս գնում...
Թե ինձ կու սիրիս, մե ձե՛ն տու ինձ...

ՕՍԿԱՆ, լալով:

Է՛ստի իմ, էստի, Մա՛րթա ջան... եի՛ղ իմ կնիկ, շատ կու գլուխս մազիրդ, ամա էլ վունչիչ չիս օգկի...

* Տե՛ս «Փիշիրվան սարբ խեր է» կատակը։
** «Խաբաբալա» կատակերգության հերոսուհիներից։

ՄԱՐԹԱ, սգալով:

Քու լենքին ու էրգնքին մեռնիմ, Օ՜սկան ջան...
Քու ժամասեր ջանին մեռնիմ, Օ՜սկան ջան...
Հրիշտքներու մոդ ցնծում կուլիս, Օ՜սկան ջան...

ՕՍԿԱՆ, լալով:

Վո՜ւնց չէ, սրա՜նցն էլ հարցրու...

ՄԱՐԹԱ, շարունակելով:

Իմ մամին բա՜րով արա, Օ՜սկան ջան,
Ասա՜ վուր Կեկելի համա լավ մարթ ճարեցինք.
Իմ դեդին էլ թո՜ղ իմ մագիեր պաչ անե։

ՕՍԿԱՆ

Դիպ էտու փըքրումն իմ էստի։

ՄԱՐԹԱ, շարունակելով:

Վա՜յ, վա՜յ, վա՜յ, վա՜յ, վա՜յ, վա՜յ... Օ՜սկան ջան ու Օսկան ջա՜ն։

ԲՈԼՈՐ ՍԳԱՎՈՐՆԵՐԸ, լալով:

Ը՜հը՜, հը՜, հը՜, հը՜, հը, հը՜...

ՕՍԿԱՆ

Խի՜ղճ իմ կնիկ, հալա լավն էլ է, իր մակումը արթար մարթ էր համարում ինձ. վուր գիդենա թե դժուխկն իմ գալի, էն չախն ի՞նչ կուլեր նրա հալը։

ԿԵԿԵԼ, սգալով:

Ա՜խ, մամի ջան, ու ջա՜ն, մամի ջան.
Քու հանաքչի ջանին մեռնիմ, մամի ջան.
Ուրախ օրըս ինչի՞ սիվցրիր, մամի ջան,
Վա՜յ իմ ապրելուն, մամի ջան ու մամի ջան։
Ա՜խ, ա՜խ, ա՜խ, ա՜խ, ա՜խ, ա՜խ, մա՜—մի՜ ջա՜—ն։

ԲՈԼՈՐ ՍԳԱՎՈՐՆԵՐԸ, լալով:

Վո՜ւյ, վո՜ւյ, վո՜ւյ, վո՜ւյ, վո՜ւյ, վո՜ւյ...

ՕՍԿԱՆ, լալով:

Զարդ տանիմ, Կեկել ջան, թաք դուն բախտավոր ըլիս, վուրթի։ քու մարթու սիրեկան ըլիս համաշա. ո՜ւհ, ո՜ւհ, ո՜ւհ, ո՜ւհ, ո՜ւհ, ո՜ւհ...

ԽԱՄՓԵՐԻ, դաղիբան ծածկած մտնում է սգավորների մոտ և սգալով:

Ա՜խ, Օ՜սկան ջան, ու վա՜խ, Օ՜սկան ջան,
Ասկի ռուքար, իմ Օ՜սկան ջան.
Արա՜, մե ձե՜ն հանե, Օ՜սկան ջան.
Քու քաղցր ձենին մեռնիմ, Օ՜սկան ջան.
Դուն էտղանց վի՜ կաց. Օ՜սկան ջան,
Քու մագիեր յիս պառկիմ, Օ՜սկան ջան։

(Օսկանը գլուխը շարժում է:)

Քու պետլած ջանին մեռնիմ, Օսկան ջա՜ն։

ԲՈԼՈՐ ՍԳԱՎՈՐՆԵՐԸ, լալով:

Օ՜հ, օ՜հ, օ՜հ, օ՜հ, օ՜հ, օ՜հ...

ՕՍԿԱՆ

Է՜ստի մարիկ... Հալա էն իմ կնիկն ու ախչիկը վուր լաց ին ըլում, սրտներուն ցավում է գիդիմ. ամա էն անիծած Խամփերին էլ, վուր սուք է անում ինձ վրա, արմբնելուն էն է... Էն կինքումը արունս խմում էր ու հիմի կի միթամ վո՜ւնչիչ... Օ՜հվե, ի՜նչ սուտիր ին... Խա՜մփերի, Խա՜մփերի, խա՜փե էտի աշիրքին, կարե կարասը հազիր է էստի քիչ համա...

Սգի տեսարանը ծածկվում է:

ՏԵՍԻԼ Դ

ՕՍԿԱՆ, ՍԱՏԱՆԱՆԵՐ

ՕՍԿԱՆ, հետ նայելով:

Վա՜յ մե... (Մեծ սատանային:) *Մե՜կ էլ, մեկ էլ։*

ՄԵԾ ՍԱՏԱՆԱ, ծիծաղում է:

Հա՜, հա՜, հա՜...

ՕՍԿԱՆ, լալով։

Վա՛յ քիզ, իմ Մա՛րթա ջան. խի՞ղճ իմ կեկել... էրվեցի՛ք, խորվեցի՛ք դուք էտի, յիս էստի... (Երկար լալիս է. հետո հանկարծ հազում է։) Ը՞հ, օ՛հ, օ՞հ... Վա՛յ մե, խիխտվում իմ. նավթի ու կպրի հուտը բողազս է գնում.... (Հոտոտելով։) Ուփրո վուր քոքուրթի հուտը շատ է... Օ՞հ, օ՞հ, օ՞հ...

ՄԵՆ ՍԱՏԱՆԱ, ծիծաղելով։

Հաջաթ չէ, կու սորվիս։

ՕՍԿԱՆ

Տո՛, էստուրը վո՞ւնց կու սորվիմ. հորես կու խիխտվիմ։

ՄԵՆ ՍԱՏԱՆԱ

Ի՞նչ իս ասում, Օ՛սկան Պետրովիչ, բաս ներքիվը վուր դեվեր գնաս, էնդի ի՞նչ կոսիս։

ՕՍԿԱՆ

Գանա էնդի էստու վրա վաթար է՞։

ՄԵՆ ՍԱՏԱՆԱ

Վաթար է՛... Աբա՛, ա՛րի, մտի՛կ տու...

Նշանակած տեղից կրակ ու բոց է դուրս գալիս և իսկույն գաղարում։

ՕՍԿԱՆ, զարհուրած և հետ քաշվելով։

Վա՛յ մե, էս ի՛նչ տեսա... Ա՛յ, թուրմեն դժուվկն ի՛նչ է էլի... Ա՛խ. իմ կանա՛նչ ու նարգիզ Օրթանալա...

ՄԵՆ ՍԱՏԱՆԱ

Հը՞, էտ հալա ի՛նչ է. վուրն ի՛ժում թամաշա արա։

ՕՍԿԱՆ, աղաչելով։

Ի՞նչ գուզիս կու տամ, օղուեդ ինձ է՞սդանց ազատեցնք։

ՄԵՆ ՍԱՏԱՆԱ

Ի՞նչ պիտի տաս, գլխեմետ ինչրու վուտը միրն իս ու միրը։ Սաղ աշխարքի օսկին ու էրծաթն է՛լ դիփ մե՛տի միրն է... Ամա մի՛ վախենա, քիզ

էնենց չինք չարչրի, վունցոր ուրիշներուն. դուն էլի բախտավորներեմեն իս ու քու հանգը հիմիկվան ժամանակին խիստ քիչն ին գալի։

ՕՍԿԱՆ

Բաս իմ պատիժն ի՞նչ է, մե ասե՛ք։

ՄԵՆ ՍԱՏԱՆԱ

Էտու վճիռը Սաթաելի ձեռին է. ամա մինք կարծում ինք, վուր քիզ համա մինձ պատիժ չկա։ Շատ վուր պատժին քիզ՝ օրենը մե էրկու ջեր վառած կրակը կու գցին քիզ, իժում մե էրկու ջեր էլ յեփվան արձրճումը կու լիզցնին քիզ։

ՕՍԿԱՆ, առանձին։

Իրան տվեք տասչուրս շալին, միթամ վունչիչ։ (Մեծ սատանային։) Ը՛յ, ա՛խմախ, էտ թո կու մեռնիմ։

ՄԵՆ ՍԱՏԱՆԱ, ծիծաղելով։

Ի՞նչ իս ասում, Օ՛սկան Պետրովիչ, հոքին կու մնանի՞. հոքին անմահ է։

ՕՍԿԱՆ

Հա՛, էտ զուրթ է. վա՛յ իմ միխկը... (Շոգից և հոտից նեղանալով։) Էտու վրա ավելի չարչաբանք էլի կա՞։

ՄԵՆ ՍԱՏԱՆԱ

Բաս չկա՞. աբա՛, արի՛, տի՛ս...

Ցույց է տալիս մի ուրիշ տեղ, որ իսկույն բացվում է և մեջից ավելի սաստիկ կրակ ու բոց է դուրս գալիս։

ՕՍԿԱՆ, զարհուրած վայր է ընկնում, սատանաները վրան թոչկոտում են, հետո ֆիշ-ֆիշ ուշքի գալով։

Էս ի՛նչ տեսա, դե՛դի ծծիր, դուն բարեխոս... Վիշապնի՛ր, տասէրկու գլխանի օցի՛ր, քառասուն հազար սատանե՛ք, կրա՛կ, ալի՛ք. վա՛յ, վա՛յ, վա՛յ, վա՛յ, վա՛յ... Տե՛ր աստուած, դո՛ւն օղորմա։ (Կամաց-կամաց ոտի է կանգնում։) Հորեն, զուրթ՝ կպրի կարասը դրած է, կպրով լիքը յեփ է գալի, ով ասիս մեչն է ածած ու կիրկաշ լոքու պես մեչը խլթխլթում ին... Օ՞հվե... (Սատանային։) Մե, քու հորն օղորմի, էս կրա՛կին ասա մե քիչ դենը գնա... (Սատանան թոչում է բոցի վրայով և բոցն իսկույն մեղմա-

նում է:) Բոլորքը սատանեքը շարած են, կրակե քափկիրներիրը ձեռին, թե մեկն ու մեկն ուզում են դուս թռչին, գլխումը վեր են տալի ու հիդ մեչն են ածում... Վա՜հ, էն էլ ի՞նչ է. քառասուն հազար միլիոն մեկզմեկու վրա դարսած են, տակեմեն կրակը կպած է, հենց գիդենաս քուրախանումը ագուռ ըլին էրում։ Էնթենն էլ մե մինձ պղնձումը արճիճ են հալում ու չամչերով վուրին բերանն են ածում, վուրին անգճումը։ Մե խոսքով՝ լիզու չի պատմի... Վա՜յ, վա՜յ, վա՜յ, վա՜յ, էս ինչիր տեսա. մարթիք վուր գիդենան թե էս հանգի բանիր կա էստի, էլ իրանց օրումը միխկ չին անի...

ՄԵՆ ՍԱՏԱՆԱ

Հը՜, թե խելոք չիս կենա, քիզ էլ կու տանինք էնդի։

ՕՍԿԱՆ

Զարես ի՞նչ է, վուր խելոք չիմ կենա... Սո՜ւ, հալա, էստի ճանանչ օմքներիր էլ կան... Օ՜հ, Օսե՜փ, դուն ի՞սա։

ՕՍԵՓԻ ՁԱՅՆԸ, անդունդից:

Յիս իմ, յիս. բա՜րով, հազար բարի իս էկի, Օ՜սկան Պետրովիչ։

ՕՍԿԱՆ

Լավ տարի լեգզերուն գա, լավ բարով յիս իմ էկի։ (Առանձին:) Ախար յիս գիդնի, վուր էս գուղ ավազակի բինեն էստի է, է՜... (Նորից ճայում է:) Հորեն՝ Թաթոն... (Կանչում է:) Թա՜թո, Թա՜թու։

ԹԱԹՈՅԻ ՁԱՅՆԸ, անդունդից:

Հը՜, օղլուշաղիմես ի՞նչ խաբար. վո՞ւնց են։

ՕՍԿԱՆ

Աստուծ վուչ գիդե քու գլուխը։ (Առանձին:) Միթամ օղլուշաղի համա սիրտը շատ է ցավում... Ի՜նչ ուներ ու չուներ թխտումը տանուկ էրիտ, քաղցած ծարավ էրթուղ օղլուշաղին ու ինքը գոռբեգոռ էլավ. հախն է վուր էստի են բերի... (Կրկին ճայում է:) Հորեն՝ Բայղուշովը, քաղաքը վուր քանդից. հա՜խտ է... Մտի՜կ՝ ի՜նչ են անում, է՜. պա՜, պա՜, պա՜, պա՜, արճրճումը թաթխում են ու հանում, կոսիս Կախեթու չուրչխելա ըլին շինում... (Դարձյալ ճայում է:) Վա՜հ, Գա՜բասիմ Յակուլի՜չ*, դուն ի՞սա։

* «Խաքարալու» կատակերգության գլխավոր հերոսը։

ԳԱԲԱՍԻՄ ՅԱԿՈՒԼԻՉ, անդունդից, լալով:

Յիս իմ, Օ՜սկան ջան։

ՕՍԿԱՆ, առաջ գալով, մեծ սատանային:

Տո՜, խա՜նի-խարաբ, փարալի ասինք, վուր է՝ գուղիրը, ավազակներիրը, մարթասպաններիրը, աշխարք քանդողներիրը էստի են էկի, էն խիղճ Գաբասիմ Յակուլիչին էստի ի՞նչի իք բերի. ժամասեր, ասծապաշտ, ախկտին օղորմող ու պասն էլ չէր կոտրի իր օրումը։

ՄԵՆ ՍԱՏԱՆԱ

Էնգուր վուր դրսեմեն էտենց էր էրևում, ամա տակետակ ումն ասիս խափիլ է։

ՕՍԿԱՆ

Ի՜նչ բեսաբ նամաղուլ իս անում։

ՄԵՆ ՍԱՏԱՆԱ

Վա՜, ա՜րի՝ ի՜րան հարցրու։

ՕՍԿԱՆ, մոտ գնալով:

Գա՜բասիմ Յակուլիչ, Գա՜բասիմ Յակուլիչ...

Գետնի տակից դուրս է գալիս Գաբասիմ Յակուլիչը:

ՏԵՍԻԼ Դ

ՕՍԿԱՆ, ՍԱՏԱՆԱՆԵՐ, ՁԱՆԱՁԱՆ ՄԵՂԱՎՈՐՆԵՐ

ՕՍԿԱՆ, շարունակելով:

Վա՜հ... (Մնում է ապշած:) Ախար էստի ո՞ւր են բերի քիզ, Գա՜բասիմ Յակուլիչ. թե՞ վուր դուն ժամասեր ու ասծապաշտ էիր։

ԳԵՐԱՍԻՄ ՅԱԿՈՒԼԻՉ

Խափով ուզում էի ախչկաս մարթու տա ու վուիչ իմ կինքը խափելով իմ անց կացրի։

ՕՍԿԱՆ

Վա՜հ։

ԳԱՐԱՍԻՄ ՅԱԿՈՒԼԻՉ

Էստու համա ինձ խո էստի դեվեր գցեցին ու հիմի տեսնիմ թե ո՞վ է միր քախկումը առանց խափել յոլա տանում իր բանը։ «Ես ասացի ի գարմանալի իմում, ասում է, թե ամենայն մարթ սուտ է», կոսեն։*

Ցած է գնում։

ՕՍԿԱՆ

Ափսուս իմ Գարասիմ Յակուլիչ. ո՞վ կու ավաեր... (Կրկին ճանաչելով մեկին։) *Վա՛, Հորեն՝ պարոն Զանգակովը...* (Կանչում է։) *Պա՛րոն Զանգակով, պա՛րոն Զանգակով։* (Գետնի տակից դուրս է գալիս Զանգակովը։) *Դո՞ւն էլ էստի ի՞ս... Տո՛, թե վուր խղճերուն օղորմում էիր։*

ԶԱՆԳԱԿՈՎ

Հինգ-հինգ մանեթ բաիշում էի, ամա հազարներով թաքուն-թաքուն վիր էի խփում։

ՕՍԿԱՆ

Էտ վո՞ւնց էիր ժաժ գալի, վուր օչով չէր իմանում։

ԶԱՆԳԱԿՈՎ. Ձայնը երկարացնելով։

Հա՛նգը գիդեի։

Ցած է գնում։

ՕՍԿԱՆ

Բաս քու հա՛խն է։

ՄԵՆ ՍԱՏԱՆԱ

Օ՛սկան Պետրովիչ, ի՞նչ իս արմքնում, էտ հանգիքը հազարներով կան էստի, վուր ձիր կինքումը լավ մարթկերանց անում ին ունեցի ու իրանց միխկի համա հորես քանի տարի է էստի էրվում ին... Ա՛յի՝ մեմեկ-մեմեկ շանց տամ քիզ... (Տանում է մի այլ տեղ։) *Ա՛յի, մտի՛կ արա... Ա՛յ, հորես՝ Զարխածովը։* (Գետնի տակից դուրս է գալիս Զարխածովը։) *Խո ձիր աշխարքումը լավ անում էիր։ Հարցրո՛ւ, ասա՛՝ ինչի՞ իս էկի։*

ՕՍԿԱՆ

Պա՛րոն Զարխածով, էստի ի՞նչ իս շինում. դուն չէի՞ր վուր վարցկի խաթիր աշխարքին հաց էիր ուտեցնում ու էգեղեցիք շինո՛ւմ։

* *Փոխանակ՝ ի գարմանալ։*

ԶԱՐԽԱԾՈՎ

Գուղերու հիդ ննգիր էի, է՛նդով հարստացա ու իժում իմ ճաշերով ու իրիգնահացերով խալխի աճկիրը կապում էի, վուր ուփրա լավ գուղուքին անիմ։

ՕՍԿԱՆ

Հա՛, բաս քու հա՛խն է, տանջվի՛ հիմի էտի։

ԶԱՐԽԱԾՈՎ

Էս տանջանքին վունցոր կուլի կու դիմնամ, վա՛յ վուր գողնալու բան չեր էլի շատ մնաց քախկումն ու իմ ննգրտիքը առանց ինձ պիտի քեփ անին։

Ցած է գնում։

ՕՍԿԱՆ

Օ՛հ, օ՛հ, օ՛հ.. ա՛յ ծակ աճկանի։

ՄԵԾ ՍԱՏԱՆԱ, Օսկանին տանելով մի այլ տեղ։

Հորեն՝ Բամբակովը, (Գետնի տակից դուրս է գալիս Բամբակովը։) *վուր ուրիշի փուղերով դրոշկեք ու կալասկեք սարքից ու խալխին իրանց փուղը էլ հիդ չէրիտ... Աբա՛, ա՛յի հիմի դեսը...* (Բամբակովը ցած է գնում։) *Հորես՝ Կիրակուսը,* (Գետնի տակից դուրս է գալիս Կիրակոսը։) *վուր խալխի առիվը դրուստ դադամեր էր էրևում, ամա ով շատ քրթամ էր տալի, բանը նրա կուտն էր շուտ տալի։* (Գետնի տակից դուրս է գալիս մի փաստաբան։) *Այ՝ դավերու էն շատախոս վեքիլը, վուր համ էսղանց էր շահվում, համ էնղանց... Հորես՝ էն ավազակ վուրթին,* (Գետնի տակից դուրս է գալիս ավազակ որդին, իսկ Կիրակոսը և փաստաբանը մատով սպառնում են միմյանց ու ցած գնում։) *վուր դեդին տանեմեն դուս աբավ, ամա աշխարքումը պատավավուր մարթ էր էրևում։* (Ցույց տալով մի այլ տեղ։) *Հորես՝ Մղդսովը։* (Գետնի տակից դուրս է գալիս Մղդսովը, մինչդեռ ավազակ որդին գնում է ցած։) *Խո, կու ճա՞նչնեիր սրան։*

ՕՍԿԱՆ, առաջ վազելով, երկու ձեռքով խփում է ծնկներին։

Վա՛, սա էլ է՛ստի է էլի՛. սրապես արթար մարթ միր քախկումը իսկի էլ չէ էլի։ (Մղդսովին ճեռվից։) *Պա՛ռն Մղդսով, ճամփեա ո՞ւր իս ծռի, էսթենն ո՞ւր իս էկի. դուն չէ՞իր վուր օխտը ջեր էրուսաղեմ էի՛ր։*

ՄՂԴՍՈՎ

Ղուրթ է օխտը չեր էրուսաղեմ էի, ամա ախպերս վուր մեռավ, նրա վուրթկերանցն ու օղլուշաղին զբնեցի ու իմ ախպուր վուխչ կայինքը յիս զավթեցի։

Ցած է գնում։

ՕՍԿԱՆ, առանձին։

Բաս աճկտ էլ ին հանի, վուր էստի ին բերի քիզ։

Գետնի տակից դուրս է գալիս մի գեղեցիկ կին։

ՕՍԿԱՆ

Վա՜... (Գեղեցիկ կնոջը։) *Ա՛խչիկ-պարուն, քիզ ի՞նչի ին բերի էստի։*

ԳԵՂԵՑԻԿ ԿԻՆԸ

Մարթուս խափում էի։

ՕՍԿԱՆ, մի կողմը։

Խի՛խճ մարթ, ա՛րի ու ի՛մացի։ (Գեղեցիկ կինը գնում է ցած, իսկ նրա փոխարեն դուրս է գալիս մի տգեղ կին, շատ հարուստ հագնված։) *Հը՜, դուն ի՞նչի իս համեցեք էլի. դուն էլ էիր մարթուտ խափո՞ւմ։*

ՏԳԵՂ ԿԻՆԸ

Յիս համ մարթուս էի խափում, համ սիրեկնիս։

ՕՍԿԱՆ

Վա՜յ, գեղինը մտնիս դուն։ (Տգեղ կինը գնում է ցած։) *Տո՛, ի՛նչ ախմախներն ին էլի մարթն էլ ու սիրեկանն էլ... Մե տեր հարցնող ըլի թե ի՞նչ ուներ սա խափելու...* (Տգեղ կնոջ ետևից։) *Ա՜յ, օցիրն ու սատանեքը լըզին քիզ էտի։* (Գետնի տակից դուրս է գալիս մի ուրիշ գեղեցիկ կին, նույնպես շատ հարուստ հագնված։) *Վա՜, վա՜... Աճկերուս չիմ ավտում. գանա էտ դուն ի՞ս, ախչիկ-պարո՞ւն... Սաղ Սոլոլակը քու գովքեմեն չկա ու դուն էստի ի՞նչ իս շինում։ Ջըլի՞ թե՝ դո՞ւն էլ քու մարթուն էիր խափում։*

ԳԵՂԵՑԻԿ ՀԱՐՈՒՍՏ ԿԻՆԸ

Իմ մարթը շատ վուխտ է մեռավ. ամա նրա մոդ արած փուղերով յիս խիստ մինձի մինձ էի պատրաստվում ու ումը փուղ էի փուխ տալիս, տասը շալի էլ շահ էի վրեն բարցում։

ՕՍԿԱՆ

Տե՛ր օղորմած աստուած... (Հարուստ կնոջը։) *Քի՛ պես հարուստ կնիկը։ Վո՞ւնց էիր լայիզ անում։*

ԳԵՂԵՑԻԿ ՀԱՐՈՒՍՏ ԿԻՆԸ, frfrվելով։

Վո՜տ, եշչո՜... Բաս յիս վո՞ւնց էի ապրի... Ինձ վրա հարուստնիրը կան էստի ու շատն էլ չեր էլի գալու ին։ Քու աճկով կու տեսնիս դիփունանցը։ (Բռնելով փեշը և գլուխ տալով։) *Դա սվիդա՜նիա։*

Գնում է ցած։

ՕՍԿԱՆ

Ա՛րի ու ա՜սա. Աբա՜, ո՞վ կու ավտեր կնիկարմըտիմեն էստունք... Մա՜խլաս ու մա՜խլաս... (Գետնի տակից դուրս է գալիս մի բժիշկ։) *Վա՜, վա՜... Պարո՜ւն հեքիմ-բաշի, դո՞ւն էլ էստի իս շնուրհ բերի՜... Թա՜յին հիվընդիտ լավ չիս մտիկ արի, յա լոթիանա էկիլ իս մաչեն է՛ստի տընդղի՜ս...* (Մոտենալով և մտերմաբար։) *Վո՞ւնց է... էստի է՞։*

ԲԺԻՇԿԸ

Շատին իմ պրծըցրի ու մահեն ազատի, շատին էլ էսթենը ղրգի իրանց պապերու մոդ... Ամա էրկու բանումը խիստ դայիմ չաթեցին ինձ յախեմես... Հենց վուր վիզիտիս փուղն ուշացնում էին, յա նիղացած՝ ուրիշ հեքմի բան հարցնում, էն սահաթին էվետ խռովում էի ու իրնի մահի աճկես գցում հիվընդին էլ, հիվընդի տիրուշն էլ.. Քու հեքիմն էլ չուստ գու քա էստի, կու իմանաս թե ի՞նչ օյին էկավ նա գլխիտ... Քեփ է, վուր կու շանց տաք մեկ մեկու... Բիդա՜թ։

Ցած է գնում։

ՕՍԿԱՆ

Ջա՜նումսան, հեքիմ-բաշի... Ամա էն ի՞նչ ասավ... Հը՜մ... (Ճկույթը դեպի բերանն է տանում։) *Է՜ն է, էն... Հիմի է միտս գալի... Կուճուս բերանը կապվիլ էր, էլ վունչիչ չէի կանացի մարսի, նա ինձ դողցնելու դիզ էր տալի... Քինաքինե տրաք արավ ինձ էն գիժ հաբուլդին... Ա՜յ, աստուած անե քու դիվանը, ահրա՜... Ի՞նչ էր ուզում ինձմեն, յա օղլուշաղիս միխկն ո՞ւր էր ննգնում. մաղուլ ապրում էի ինձ համա արխալին... Մե գա՜ չեր հալա, հե՜ստիկ շինիմ, վուր... Տե՛ր ամինակալ աստուած, էս ո՞վքեր տեսա ու ի՞նչիր իմացա յիս էստի... Վա՜յ, վա՜յ, վա՜յ, վա՜յ, վա՜յ... Յիս փաս սրանց մոդ... է՛ս հանգի էլ մեղավուրնի՜ր։*

ՄԵԾ ՍԱՏԱՆԱ

Ա՛րի, քա՞նիսը գուզիս վուր էլի շանց տամ... Ահա՛, ահա՛, ահա՛... հը՞, էլի՞... ահա՛...

Գեռնի տակից դուրս են գալիս երկու սեռից հայտնի մեղավորներ, դեռ մեկը մյուսի ետևից, հետո շատերը միասին:

ՕՍԿԱՆ

Վա՛, վա՛, վա՛, վա՛, վա՛... էս դիփ միր աղազադեքն ին աշքարա... (Գլուխը շարժում է:) *Մտի՛կ, է՛. իսկի չին փոխվի...*

ՄԵԾ ՍԱՏԱՆԱ

Էլի՞...

Գեռնի տակից դուրս են գալիս ուրիշ մեղավորներ, օձերով փաթաթված:

ՕՍԿԱՆ, *հայեր երկարացնելով:*

Վա՛ա... (Մեծ սատանային:) *Լա՛վ է, լա՛վ, քու հորն օղորմի, զահլես մի՛ տանի...*

Մեղավորները ցած են գնում:

ՏԵՍԻԼ Ե

ՕՍԿԱՆ, ՍԱՏԱՆԱՆԵՐ

ՕՍԿԱՆ, *շարունակելով:*

Ցիս տեսնում իմ, վուր սաղ աշխարքը դիփ էստի ին էկի... Բաս արքաութինն էլ օշով չէ գնո՞ւմ:

ՄԵԾ ՍԱՏԱՆԱ

Հապքենը մեկը. էն էլ թե գնում է, էլի խիղճ մարդկերանցմեն. հարուստները դի՞փ էստի ին գալի մե գլուխ, դի՞փ:

ՕՍԿԱՆ, *գլուխը շարժելով և առանձին:*

Էնդուր էլ Քրիստուսն ասավ, է՝ ավելի հեշտ է, ասում է, ուխտն ասղումն անց կենա, կանց թե մինձատունն արքաութինը տուն գնա, կոսե՞...

* *Ավետ. Մատթ. գլ. ԺԹ, պ. 21:*

Վա՛յ նրանց միխկը... Ամա իմ բանը խիստ շլուր է, ձիր արիվը... Ի՞նչ մոգոնիմ, վուր էսղանց ազատվիմ... (Մեծ սատանային:): *Մե ասա՝ արքաութենի ճամփեն վո՞ւրթենն է:*

ՄԵԾ ՍԱՏԱՆԱ, *բեմի աջ կողմը ցույց տալով:*

Ա՛յ, էնթենը մնաց:

ՕՍԿԱՆ, *այս ու այն կողմը նայելով, առանձին, մինչդեռ մեծ սատանան փսփսում է ուրիշ սատանաների հետ:*

Վո՞ւնց ծլկըվիմ...

Դարձյալ նայում է այս ու այն կողմը: Հանկարծ բեմի խորքում բացվում է երկինքը և, նրանից շատ հեռու, երևում է դրախտը, որ դյութիչ տպավորություն է գործում ու պայծառ լույս է տարածում իր շուրջը: Սատանաները իսկույն դուրս են փախչում, մեծ սատանան—աջ կողմից:

ՏԵՍԻԼ Զ

ՕՍԿԱՆ, *մենակ:* Տեսնելով դրախտը, շարժմունքով սաստիկ զարմանք է արտահայտում, ապշում է և՛, երկար լռությունից հետո, երեսը խաչ հանելով:

Տե՛ր, օղորմած աստուած... (Աչքերը տրորելով վերցնում է գլխարկը և շոքում է:) *Միղա, միղա քիզ, արարիչ... դո՛ւն փրկե ու ազատե ինձ էսղանց...* (Հառաչելով:) *Ա՛խ, ա՛խ, ա՛խ... էրանի է ձիզ, ով էտի իք... Ա՛յ բախտավորներ... Ի՞նչ էի հոքում... զալբութին չէի բանեցրի էն կինքումն ու ցիս էլ էտի էի էլի հիմի... Բա՛խշե ինձ, աստուած, բա՛խշե. միղավուր իմ քի մոդ...* (Վեր թռչելով տեղից և կրկին նայելով դրախտին, զմայլվում է:) *Վա՛յ ձիր հոքուն մեռնիմ, ձիրը... Մտի՛կ է՛. հորեն ախկատ Ղազարոսը հայր Աբրահամի գուքումը նստած է... էնդադա հարուստ աղազադեքը կի դժուխկումն ին ածած էստի... Հա՛յ թե լավ բան է էլի դրախտը... Պա՞հ, պա՛, պա՛, պա՛, պա՛... Հրիշտըքներու հիդ ազա՛տ-ազատ մե ծաղկեմեն մեկելն ին թռչում էնդի մարթիք. էստի կի մինձ ու պստիկ, վառ կրակումը ջնջլով կապած, մե գլուխ էրվում ին ու խորովվում սատաներու ձեռին...* (Լուռ շարժում է գլուխը:) *Ի՞նչ խիլք է՝ մարթ էն լուս դրախտը թողնե, էն անարատ հրիշտըքներն ու սրփիրը թողնե, էն անմահական ջրիրն ու ռանգե-ռանգ ծաղկները թողնե, գա էս անիծած դժուխկումը տանջվի ու սիվերես սատաներու սփաթին թամաշա անե՞... Փվո՞ւհ, հուտում է էսղանցորեն... Չէ՛, ուրիշ ճար չկա, վունցոր ըլի՝ պիտի փախչիմ*

էսղանց, գնամ դրախտի դուռը թխթրխկեցնիմ. կուլի աստուծ խղճա ինձ, նա օղորմած է... Հա՛յ թե կու ազատվի՞մ... (Աջ ու ձախ նայելով:) *Սո՛ւ, լավ վուխտն է... Աբա՛, Օսկան, դուն գիդիս հիմի...* (Գլխարկը ձեռին վազելով դեպի աջ կողմը:) *Հիմի վուր զուրթ ազատվիմ էս զահրումար տիղեմեն ու էսղանցի կարք ու սարքեմեն. ա՛յ ազատութի՞ն...* (Հասնելով կողմանոցին [coulisse], կանգ է առնում:) *Ամա չէ՛, էսթենը չի ըլի. էլախտ էն յարամազ բեձաթը ծո՛ւռը կու սորվեցներ ինձ ճամփեն...* Վազում է դեպի հակառակ կողմը, մի անգամ ևս նայում է դրախտին, սխանչանում է և գլխարկը ծածկելով դուրս է նետվում այն կողմից:

ՏԵՍԻԼ Է

ՕՍԿԱՆ, ՄԵԾ ՍԱՏԱՆԱ

ՕՍԿԱՆ, ձախ կողմանոցում աղաղակելով:

Վա՛յ, վա՛յ, վա՛յ...

Դրախտի տեսարանը չքանում է և երկինքը նորից փայլում է աստղերով ու լուսնով. բեմի վրա տիրում է նախկին մթությունը:

ՄԵԾ ՍԱՏԱՆԱ, վզից բռնած ներս բերելով Օսկանին:

Էս ո՞ւր իս փախչում, վուր փախչում իս... Հենց գիդեիր՝ չէի իմանա՞։

ՕՍԿԱՆ, առանձին:

Վա՛յ, անիծած... (Մեծ սատանային:) *Տո՛, մե թո՛ղ, վուր ասիմ, է՞։*

ՄԵԾ ՍԱՏԱՆԱ, թողնելով Օսկանին:

Ահրա՛, էս էլ թողի. տեսնիմ՝ ի՞նչ իս ասում։

ՕՍԿԱՆ

Քիզ էի պտռտում... (Մեծ սատանան շարժմունքով և երեսը ծամածրռելով ծաղրում է Օսկանին:) *Ախար, քա՞նի մնամ յիս էստի. մե դե՛վեր գնա, քու Սաթաելին ի՞մաց արա, վուր յիս էկիլ իմ, է՞։*

ՄԵԾ ՍԱՏԱՆԱ

Աբա՛, ձիզ ի՞նչը կու կոտրե։ էնղադա բանիրը քու աճկով տեսար էստի ու էլի իս ուզում խափի՞. ուզում իս ինձ ցանի քու մտկումն, է՞լի։

ՕՍԿԱՆ, առանձին:

Վո՞ւրդի իմացավ. դրուստ վուր սատանա է էլի էս անիծածը։

ՄԵԾ ՍԱՏԱՆԱ

Ի՞նչ ապրանքնիր իք դուք է՞լ, սատաներու վրա վաթար իք դառի. վա՛յ էն սատաներու միխկը, ո՞վ ձիզ չի ճանչնա... Վաղուցվան ժամանակը առուտեհան վաղ-վաղ վուր գալիս էինք ձիր քաղաքը, իմանում էինք, վուր մարթիքը, տանեմեն դուս գալիս, ասում էին. «Հրաժարիմք ի սատանայէ և յամենայն խափէութենէ նորա». հիմի մինք պիտի ասինք՝ հրաժարիմք ի մարդկանէ և յամենայն խափէութենէ նոցա։

ՕՍԿԱՆ

Դե՛հ, բաս ձե՛ռը վի կալ ինձմեն, հրա՛ժարվի ու պրծի՛, էլի՛... Հը՞, լա՛վ փիքր արա, յիս վուր գնամ արքաութի՞ն, էնդի բարի կու խոսիմ քիզ համա. կուլի վիրչը՝ հիդ նուր-մեկանց էլի հրիշտակ չինին քիզ։

Առանձին, ծաղրելով, երեսը ծամածռում է:

ՄԵԾ ՍԱՏԱՆԱ

Ո՞վ կու տուն թողնե քիզ արքաութին. ինչի՞ր իս դուս տալի... Խուն տարի էդնեամ ման իմ գալի, ձլիվ մե ճանգեցի քիզ. գժվի՞լ իմ, վուր ձեռնեմես դուս թողնիմ քի՞զ. ո՛ւզում իս քու մագիեր ինձ տանջի՞ն։

ՕՍԿԱՆ

Ա՛խ, տեր աստուծ, նեռայի ինձ էլի աշխարք բերիս ու իմ սրումն էլ միխկ չիմ անի։

ՄԵԾ ՍԱՏԱՆԱ

Էտ գլխե՛մետ հանե, վուր էլ չի ըլի... (Սաստիկ փայլատակումն և ռռռումունք, շղթաների ձայն է լսվում:) *Դե՛հ, հա՛դրվի, Սաթաելը գալիս է։*

Հանկարծ բեմի խորքումը բացվում է դժոխքը, որ համապատասխան կարմիր լույս է տարածում ամբողջ բեմի վրա։ Գետնի տակից դուրս է գալիս Սաղայելը, գահի վրա նստած և շրջապատված զանազան տեսակի ու աստիճանի անթիվ սատանաներով, դեվերով, վիշապներով ու շատ հրեշտակներով, որոնք փայլում են առանձին շքեղությամբ և դժոխային շքանշաններով։

ՕՍԿԱՆ, ՍԱԴԱՅԵԼ, ՍԱՏԱՆԱՆԵՐ

ՕՍԿԱՆ, զարհուրած:

Տէ՛ր, մի՛ դարձուցանիր զերեսդ քո յինէն։*

ՄԵՆ ՍԱՏԱՆԱ, Օսկանին:

Է՛նթենը կանգնի. կու կանչին քիզ։

Սատանաները խիստ կարգապահությամբ և խուրին ճարտանքով ու ստրկաբար ողջունում են Սադայելին՝ նրա ծնկներն ու ոտները համբուրելով, իսկ մի քանիսը նաև երկրպագելով նրան:

ՕՍԿԱՆ, ժամանակ առ ժամանակ և մեկուսի, մինչդեռ հանդեսը շարունակվում է:

Վա՛... էստունք էսաի էլ է էլի՞... Մտիկ՝ թե ինչիր ին անում... Ջեր սատանեն ի՛նչ է, վուր նրա վուտնիրն ի՛նչ ըլի... Հորես ինձ համա կու պարպին։

ՍԱԴԱՅԵԼ, միշտ հանգիստ և գոռոզաբար:

Աբա՛, բերե՛ք դրան էստի։

ՄԵՆ ՍԱՏԱՆԱ, բռնում է Օսկանին՝ որը ցավ է արտահայտում, և տանում է նրան դեպի Սադայելը:

Ա՛յ, քու Սաթանեական մինձությունը, էս Օսկան Պետրովիչ Իրասածովն է։

ՍԱԴԱՅԵԼ

Գիդիմ...

Նշանով հրամայում է բաց թողնել Օսկանին:

ՕՍԿԱՆ, ազատվելով մեծ սատանայից, Սադայելին:

Քու մինձությունը, ի՞նչ իմ արի. ախար ինձմեն ի՞նչ ին ուզում։

* *Փոխանակ ասելու՝ «մի՛ դարձուցաներ զերեսս...»։*

ՍԱԴԱՅԵԼ

Ի՛նչ իս արի՞... Բաս էն վո՞ւնց էր, վուր օրենը հարուր ու իսուն ջեր սուտ ասուած էիր օրթում ուտում, Քրիստուսին խաչեմեն վեր բերում ու ապրանքտ էնդով սաղացնում։

Սարսափելի հայացք է ձգում իր շուրջը:

ՕՍԿԱՆ, առանձին:

Էս անիծածները վո՞ւրդի ին իմացի... (Սադայելին): *Քու մինձությունը, մի՛ ավտա. էտ վրես շատ ին մոգոնի սատանեքը։*

ՍԱԴԱՅԵԼ

Սա՛... էստի էլ իս սուտ ասո՞ւմ։

ՕՍԿԱՆ

Ասինք թե էտ էտենց է. ուրիշ ի՞նչ իմ արի, քու մինձությունք։

ՍԱԴԱՅԵԼ

Իժում էն վուր՝ կշիռքը ձեռիտ վուր վիր էիր կալնում, մի՞տա է, վուր ճիրտովգ քաշը ծռում էիր ու շատ ծախածի մագիեր առնողին քիչ էիր տալի՞։

ՕՍԿԱՆ, առանձին:

Էս անիծածները թա՛յին գլխես կանգնած ին էլի։ (Սադայելին:) *Հա՛, քու մինձությունը, ի՞նչ անիմ, վուր էտունք արիլ իմ. ինչ միխակ ասիցիլ իմ, խոստվնիլ իմ ու զղճացիլ իմ. անմիդն սատուած է։*

ՍԱԴԱՅԵԼ

Ղուրթ է, խոստովնիլ իս էլ, զղճացիլ իս էլ, ամա խստակ սրտով չիս զղճացի։ Մի՞տա է, վուր տերտերի մոգ չոքած, խոստովանելիս, էլի ուշկ ու միտկա առուտուրումն է՞ր. զղճալիս, ժամումը կանգնած, մտկումդ դա՛ռսում էիր, վուր տերտերի դրած ապաշխարանքը չուտ պրծնիս ու գնաս, էլի նուր-մեկանց կցիս խափով առուտուրը՞։

ՕՍԿԱՆ, լալով։

Ղուրթ է, միզա՛յի ասուած։

Աչքերը սրբում է։

ՍԱԴԱՅԵԼ, սատանաներին:

Սրան օրենը էրկու ջեր վառած կրա՛կը դրեք... (Օսկանը դողում է:) *Ցիրիք ջեր եփվան կպրո՛ւմը լիդցրեք ու, չունքի էստի էլ ուզում էր իմ պատվական սատանին խափի, մե-մե չամչա հալած ա՛ռնիճ ածեք բերանը... Ջեր թողե՛ք, մե քիչ էստի քեփ անեմ. ուրիշ հարկավոր բան կա։*

ՕՍԿԱՆ, մեկուսի:

Ա՛յ, լենենց դո՛ւք քեփ անիք։ (Սաղայելին:) *Ախար, քու մի՛նձութինը...*

ՍԱԴԱՅԵԼ

Սո՛ւ, ձե՛նդ... (Սատանաներին:) *Աբա՛, թո՛ղ բերին, ինչ ասիլ իմ...* (Դժոխքի զանգը մեկ անգամ զարկում է: Գետնի տակից բոցապատ դուրս են գալիս Սաղայելի աջ ու ձախ կողմից երկու սենեկապետ սատանա կրակե բարձերով, որոնցից մեկի վրա դրած է կրակե մանգաղ, իսկ մյուսի վրա նույնպես կրակե շքանշան—Սաղայելի պատկերը երկար շղթայով:) *Լա՛վ...* (Մեծ սատանային:) *Առա՛ջ արի... «Ցարգս յարգաւուրաց, պատիւս արժանաւուրաց»...* (Սենեկապետ սատանաներին:) *Բերե՛ք...* (Սենեկապետ սատանաները մոտենալով Սաղայելին, համբուրում են նրա ձեռքերն ու ոտները և շոռում նրա աջ ու ձախ կողմը: Մեծ սատանային:) *Ցիս քիզմեն շատ շնորհակալ իմ... Դուն արժանի իս իմ առանձին օգորմութենին։* (Մեծ սատանան շոռում է Սաղայելի առաջ և նմանապես համբուրում նրա ձեռքերն ու ոտները:) *Էս քիզ մանգաղ, վուր ավելի հիշտութենով հնձիս մարթկերանցը։* (Տալիս է նրան մանգաղը, որից իսկույն բոց է բարձրանում:) *Էս էլ քիզ իմ պատկիրքը, վուր ուրիշներու համա օրինակ ըլի քու հավատարմութինը։* (Կախ է անում նրա վզից դժոխային շքանշանը, որից նույնպես բոց է բարձրանում:) *Ա՛պրիս, զո՛րանաս...* (Դնում է թաթը նրա գլխին:) *Ջա՛ղով վայելիս։*

ՕՍԿԱՆ, մեկուսի և դառնությամբ:

Ինձ դժուխկն ին գցում, իրանք փեշքըշնիր բաժնում։

Մեծ սատանան և սենեկապետ սատանաները կարգով համբուրում են Սաղայելի ձեռքերն ու ոտները և գնում կանգնում իրանց տեղը: Մեծ սատանան խնդում է:

ՍԱԴԱՅԵԼ, սատանաներին:

Աբա՛, ասե՛ք՝ դիվիր գան, ուրախանանք, վուր նուր թիքա էկավ միզ համա։

Դժոխքի զանգը զարկում է երկու անգամ: Լսվում է սատանաների երաժշտություն. բեմը լցվում է երկսեռ պար եկող շար ոգիներով:

ՏԵՍԻԼ Թ

ՆՐԱՆՔ, ՊԱՐ ԵԿՈՂ ՉԱՐ ՈԳԻՆԵՐ

ՕՍԿԱՆ, դարձյալ ժամանակ առ ժամանակ և մեկուսի, մինչդեռ շար ոգիները պարում են, նրան փայփայելով:

Ա՛զբաթը խեր ըլի սրանցը. սիրտս մե քիչ հիդ էկավ... էս գրո սատ թրեաթրի հանգն ին խաղում էս անիծածները... Ա՛խ, Մա՛րթա ջան... (Մեծ սատանային, որ այս միջոցին հափշտակված զննում է կրակե շքանշանը:) *Էս ա՞մեն օր կու տեսնիմ սրանցն էստի՞։*

ՄԵԾ ՍԱՏԱՆԱ

Էլ քիզ ո՞վ կու դուս թողնե դժուխկեմեն։

Ջերմաջերմ համբուրում է կրակե շքանշանը, որից կրկին ու կրկին բոց է բարձրանում:

ՍԱԴԱՅԵԼ

Լա՛վ է... (Պարը և երաժշտությունը դադարում են, ամենքը մնում են քարացած, բացի Օսկանը, որ հետզհետե ընկնում է սարսափելի դրության մեջ): *Ամենակարող աստծու բարգութենով, յիս չար սաթանայս, դժուխկի հավիտենական թաքավորը, իշխանն ու հրամանատարը,— մութն ու խավարի պաշտպանը, տերն ու տիրականը,— լուսի, լուսավորութենի, արթարութենի, ազատութենի, օգորմութենի, մարթասիրութենի, ամե՛ն բարութենի ու ճշմարտութենի ներհակը, հակառակն ու անհաշտ թշնամին,— ստութենի ու խափեութենի, անօրենութենի ու անիրավութենի, անառակութենի ու անսկամութենի, նենգութենի ու խաբդախութենի, գողութենի ու ավազակութենի, գաղանութենի ու մարթասպանութենի, ամե՛ն չարութենի, ամե՛ն լրփութենի անհատնելի աղբյուրը, ներշնչողն ու առաջնորդողը, իսկզբանե անտի մինչ ցկատարածն աշխարհի,— հրամայիում իմ ձիզ, հավատարիմ իմ արբանյակներ՝ չա՛ր գևեր, չա՛ր վիշապներ, «չար սատանեք, չա՛ր հրիշտակներ, չա՛ր պաշտոն վարողներ, չա՛ր խորուրդ տվողներ, չա՛ր կամք կատարողներ ու ամե՛ն չա՛ր զորութին ունեցողներ», տարե՛ք դրան՝ Օսկան Պետրովի՛ին, վասն մեղաց իւրոց. դժուխկը դեվեր, հավիտե՛նս հավիտենից, ու կատարեցե՛ք էնդի դրա գլխին, ինչ վուր էլախտ հրամայեցի...*

(Դժոխքի տեսարանը սաստկանում է:) *«Ա՛նդ հղիցի լայ և կրճել ատամանց»։* (Սաղայելի նշանի վրա շար ոգիները նորից պարում են ավելի

մեծ ուժով և արագությամբ. դժոխքի զանգը երեք անգամ զարկում է։)
Դե՜հ։ Սատանաները հափշտակում են Օսկանին և բարձրացրած տանում
են նրան դեպի բեմի խորքը։

ՕՍԿԱՆ

*Վա՜յ մեզ, դե՜դի ջան, վա՜յ մեզ... Օգնեցեք, ո՞վ է քրիստոնա... Պրաշ-
չա՜յի Թիֆլիզ... Պրաշչա՜յի ազատությունն...*

Սատանաները ձգում են նրան դժոխքը։

ՎԵՐՋ

ԽԱԹԱԲԱԼԱ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹՅՈՒՆ ՁՈՐՍ ԱՐԱՐՎԱԾՈՎ ԵՎ ՎԵՑ ՊԱՏԿԵՐՈՎ

1866–1867

Միհրդատ Ամերիկյանի հիշատակին

ԳՈԲԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԳԱՐԱՍԻՄ ՅԱԿՈԲԼԻՉ ՁԱՄԲԱԽՈՎ, հարուստ վաճառական
ՄԱՐԳԻՍ, նրա նշանելու աղջիկը, տգեղ և կարճահասակ
ԻՍԱՅԻ, վաճառական, Ձամբախովի ազգական
ՆԱՏԱԼԻԱ, Իսայու կինը, գեղեցիկ և բարձրահասակ
ԳԵՈՐԳ ՄԱՍԻՍՅԱՆՑ, աստիճանավոր երիտասարդ
ՔԵԹԵՎԱՆ, Գեորգի մայրը, այրի կին
ԽԱՄՓԵՐԻ, Գեորգի մորաքույրը
ՍԱՐԳԻՍ, Ձամբախովի ծառան
ԱՐՏԵՄ, Իսայու ծառան, փոքրիկ տղա

Առաջին, երրորդ և չորրորդ արարվածները կատարվում են Ձամբախովի տան առաջ և տանը, իսկ երկրորդը՝ Մասիսյանցի տանը։

Անցքը պատահում է Թիֆլիզում 1860-ին։

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԳԱՐԱՍԻՄ (ԿԱՐԱՊԵՏ), 60 տարեկան, միջին հասակով, պատկառելի դեմքով և բոլորովին սպիտակ մազերով։ Երեսը ածելած, հոնքերը հաստ, բեխերը միջակ։ Սև մահուդե եվրոպական հագուստ՝ երկայն ժիլետ, փոքր ինչ լայն անդրավարտիք, երկար ու լայն սերթուկ, հին ձևի մեծ գլխարկ—ֆուրաժկա և մետաքսյա սև լայն փողպատ։ Փողոցում՝ ձեռքին կարճ հաստ ձեռնափայտ, իսկ վրան գցած երկար ու լայն վերարկու—պալտու։ Գործ է ածում արծաթե հին ձևի հաստ ժամացույց սև բարակ ժապավենով և կանաչադույն մետաքսյա ծաղկախառն թաշկինակ։ Քայլը հաստատ, ձայնը ապոր, շարժվածքը և խոսակցության ձևերը ծանր։ Ըստ երևույթին շատ պատվավոր անձն։

ՄԱՐԳՐԻՏ, 19 տարեկան, տգեղ և կարճահասակ օրիորդ, տեղական վրաց հագուստով, գլուխը վրացնակ զարդարված։ Առաջին արարվածում հագնված է բավականին հասարակ և առանց գոտկի, իսկ երրորդում և չորրորդում՝ ամենաշքեղ ձևով, գոտկով և պանաշան ակնեղեններով զարդարված։ Ձայնը քաղցր, խոսակցության ձևերը և շարժվածքը համեստ։

ԻՍԱՅԻ, 40 տարեկան, վայելուչ կազմվածքով և գեղեցիկ, բայց փոքր ինչ հիմար դեմքով։ Երեսը ածելած, մազերը բոլորովին սև, հոնքերը բարակ, բեխերը միջակ։ Թիֆլիզի վաճառականի ընտիր հագուստ՝ մետաքսյա սև արխալուխ, կուրծքը կապած և բարակ ոսկեթելով բոլորած, բարակ փողպատ, սև մահուդե կաբա, մոխրագույն մետաքսյա գոտիկ, մահուդե բաց-շագանակագույն լայն անդրավարտիք և գլխարկ—փոքրիկ սև ֆուրաժկա։ Գործ է ածում դեղին մետաքսյա ծաղկախառն թաշկինակ։ Շարժվածքը և խոսակցության ձևերը հասարակ։

ՆԱՏԱԼԻԱ, 20 տարեկան, նուրբ կազմվածքով և կախարդիչ դեմքով։ Հասակով Մարգրիտից շատ բարձր։ Երկու ձեռք բուն վրաց գեղեցիկ հագուստ՝ մինը առաջին արարվածում, իսկ մյուսը երրորդ և չորրորդ արարվածներում, գլուխը վրացնակ զարդարված։ Փողոցում՝ ձեռնոցներ, փոքրիկ հովանոց և սպիտակ թեթև վերարկու։ Շարժվածքը կենդանի. երգում է հիանալի։

ԳԵՈՐԳ, 27 տարեկան, սև մազերով և թարմ գրավիչ դեմքով։ Հագուստը բոլորովին եվրոպական, ամենարնտիր ճաշակի և գլխարկը միշտ սիլինդր։ Փողոցում՝ կարճ պիջակ, դեղին ձեռնոցներ և բարակ ձեռնափայտ. տանը՝ սկզբում, մոխրագույն բաճկոնակ (ժաքետ) կարմիր ժապավենով բոլորած, հետո սև սերթուկ և ֆրակ, ինչպես նշանակված է իր տեղը. գավթումը՝ վերարկվով և ձեռնափայտով. իսկ Ջամբախովի տանը՝ ֆրակով և սպիտակ ձեռնոցներով, ինչպես և հագնված է երկրորդ արարվածի վերջումը։ Ձայնն ախորժելի, խոսակցության ձևերը և շարժվածքը բաղարակրթված։

ՔԵԹԵՎԱՆ, այրի կին, 52 տարեկան. գեղեցիկ դեմքով, երեսը թուխ, հոնքերը սև։ Վրաց հագուստ, գլուխը վրացնակ զարդարված, հասարակ չիթիկա, մուգ դալամքարե ճակտի աղլուխ առանց քորոցի, մետաքսյա սև գլխի փաթաթան, մուգ մանիշակագույն դող սև թավիշե ժապավենով բոլորած և հասարակ քորոցով, մուգ միխակագույն մետաքսյա դերիա և քիրմանի շալե սև գոտիկ։ Խոսակցության ձևերը և շարժվածքը ծանր։ Ամենաբարի և ամենապատվելի անձն։

ԽԱՄՓԵՐԻ, 50 տարեկան, հաճելի դեմքով ու սև բարակ հոնքերով Նիհար կին։ Վրացնակ մետաքսյա սև հագուստ կապույտ դող ու գոտկով. գլուխը վրացնակ, հասարակ չիթիկա, կապույտ թավիշե ճակտի աղլուխ և մուգ գլխի փաթաթան։ Գործ է ածում սպիտակ զաթիբա։ Խոսակցությունը, ման գալը և շարժվածքը արագ և կրակոտ։

ՍԱՐԳԻՍ, 25 տարեկան։ Առաջի արարվածում՝ չթե արխալուխ սև հասարակ քամբրով, իսկ երրորդում և չորրորդում՝ սև մահուդե չերքեզկա դեղին կլապիտոնե բարակ զայթանով բոլորած և արծաթե շրիկ քամար։ Միշտ առանց գլխարկի։

ԱՐՏԵՄ, 14 տարեկան տղա, սպիտակ մահուդե չերքեզկայով։

ԱՐԱՐՎԱԾ ԱՌԱՋԻՆ

Տեսարան առաջին

Բեմը ներկայացնում է Թիֆլիզի մեկ փողոց. աջ կողմը Կարապետ Զամբախովի երկու-հարկանի նոյակապ տունը դռներով, պատուհաններով և փոքրիկ պատշգամով: Ժամանակը կեսօրին մոտ է:

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ԳԵՈՐԳ, հետո ՆԱՏԱԼԻԱ, ԱՐՏԵՄ

ԳԵՈՐԳ, մենակ, ձախ կողմը տուն է փնտրում:

Այս էլ չէ... երևի ուղիղը չիմացա... Ո՞ւմ հարցնեմ... Զարմանալի փոփոխություն է ստացել այս փողոցը: (Նատալիան մտնում է աջ կողմից և Կարապետի տան դուռը ծեծում. Արտեմը հետևում է նրան, ձեռքին երկար թղթի մեջ փաթաթած մեռամսեղեն:) *Ոչ ոք էլ չկա այստեղ, որին մարդ դիմի և հարցնի. կարծես անապատ լինի:* (Տեսնելով Նատալիային:) *Բայց ահա՛... Կարելի է այս աղջիկն իմանա...* (Մոտենալով Նատալիային, քաղաքավարությամբ ողջունում է նրան:) *Ներեցե՛ք, խնդրեմ...*

ՆԱՏԱԼԻԱ, վախենալով:

Ա՛խ:

ԳԵՈՐԳ

Մի՛ վախենաք, խնդրեմ... Կարելի է հրամանքդ իմանաք՝ Մարտիրոսյանցի տունը ո՞րն է այստեղ:

ՆԱՏԱԼԻԱ, շփոթված/

Էս քիչումը Մարտիրոսյանցի տուն չկա:

Դուռը ծեծում է:

ԳԵՈՐԳ

Ինձ այստեղ ասացին:

ՆԱՏԱԼԻԱ, նույնպես:

Չիմ գիդի, պարոն:

Դուռը սաստիկ ծեծում է:

ԳԵՈՐԳ

Ո՞ր կողմը հարցնեմ, չե՞ք իմանում արդյոք:

ՆԱՏԱԼԻԱ, ավելի շփոթված:

Ա՛խ, աստուծ, ասում իմ վուր չիմ գիդի. ի՞նչ իք կամենում ինձմեն:

Ավելի սաստիկ է ծեծում դուռը:

ԳԵՈՐԳ, ողջունելով:

Ներողություն եմ խնդրում, ես ձեզ նեղություն պատճառեցի: (Միմյանց ողջունում են. Գեորգը հեռանում է և առանձին:) *Այս ի՞նչ գեղեցիկ արարած է... Ո՞վ պետք է լինի սա... Ա՛յ գեղեցկություն...*

Նայելով զանազան տների՝ դուրս է գնում ձախ կողմից:

ՏԵՍԻԼ Բ

ՆԱՏԱԼԻԱ, ԱՐՏԵՄ, դռան մոտ. հետո ՄԱՐԳԱՐԻՏ պատշգամի վրա:

ՆԱՏԱԼԻԱ, առանձին:

Ի՞նչ վախեցա, քա՛... Արա՛ թե բաց անին:

Դուռը շարժում է:

ՄԱՐԳԱՐԻՏ, դուրս գալով պատշգամ և այնտեղից նայելով:

Քա՛, դո՛ւն իս, Նատալիա ջա՛ն. ի՞նչ խեչեն է՝ մխտդ ինք էկի:

ՆԱՏԱԼԻԱ

Ցիս իմ, Մարգարիտ ջան, մե չուստ ասա՛ բաց անին, թե չէ հորեկ սիրտս կէհա:

ՄԱՐԳՐԻՏ, պատշգամից:

Էս սհաթիս, գենացվալե. ի՞նչ է պատահի։

Շտապով ներս է մտնում:

ՆԱՏԱԼԻԱ, առանձին:

Ինչրի էն կունձոն ժաժ գու քա, իմն ինձ կու հասնի։ (Դարձյալ դուռը ծեծում է:) *Ա՛խ, աստուած, բաց անին, է՛լի։*

ՏԵՍԻԼ Գ

ՆԱՏԱԼԻԱ, ՄԱՐԳՐԻՏ, ԱՐՏԵՄ, ՍԱՐԳԻՍ

ՄԱՐԳՐԻՏ, դուրս վազելով դռնից:

Զլիվ մե չէկա՞ր, Նատալիա ջան... (Համբուրվում են:) *Ամա սիրտդ ո՞ւր է գնում. ի՞նչ է պատահի, գեթաղվանե։*

ՆԱՏԱԼԻԱ, ազատ շնչելով:

Օ՛հ, հենց գիդեի սիրտս կէհա։

ՄԱՐԳՐԻՏ

Վիդիս պատռվեցավ. քա՛. ի՞նչ խաբար է։

ՆԱՏԱԼԻԱ

Էլ վունչիչ, Մարքրիտ ջան, անց կացավ։ Մե ջեհել ֆրանտ տղա վախեցրուց։

Սարգիսը և Արտեմը իրար հետ ցածր խոսում են:

ՄԱՐԳՐԻՏ

Վո՛ւյ քոռանամ յիս. էտ վո՞ւնց։

ՆԱՏԱԼԻԱ

Վերիվը կոսիմ, Մարքրիտ ջան։ Ուրի՞շ, ձալոն վո՞ւնց է. իմացա բեհալ է։

ՄԱՐԳՐԻՏ

Էնդուր էլ չուստ-չուստ հարցնում իս։ Էտե՛նց պիտի՞, Նատալիա ջան. տարիք իս անց կացնում, ինչկլի միզ միտդ կու բերիս։

ՆԱՏԱԼԻԱ

Ի՞նչ անիմ, Մարքրիտ ջան, խոմ գիդիս իմ բանը. տանեն ուշ-ուշ իմ դուս գալի։ Վո՞ւնց է հիմի, մե ասա՛, է՛։

ՄԱՐԳՐԻՏ

Ինչ նրա հա՛լն է, Նատալիա ջան, վուր էլ ի՞նչ ասիմ. գլխացավն աշլա էլավ։

ՆԱՏԱԼԻԱ

Քա՛, ղո՞ւրթ իս ասո՛ւմ։

ՄԱՐԳՐԻՏ

Աստուած գիդենա։ Էս ի՞նչ է, իմքին իս առի՞։

ՆԱՏԱԼԻԱ

Աբա՛, լա՞վն է, Մարքրիտ ջան. ինձ համա դերիացու կտրիլ տվի։

Արտեմի ձեռքից առնում է բոքե կոպոցը և բաց անելով՝ տալիս է Մարգրիտին:

ՄԱՐԳՐԻՏ, զենելով:

Ի՛վֆ, ի՛վֆ, ի՛վֆ, ի՛վֆ, ի՛վֆ... արեգագի պեծ է տալի՞, Նատալիա ջան... Էս ի՛նչ հիացք իմքին իս առի։

ՆԱՏԱԼԻԱ

Ի՛հ, հեստրկնիրը տեսա, Մարքրիտ ջան, վուր աճկս վրեն մնաց... Արի՛ հալա, տի՛ս՝ ինչիր հիդ ասիմ ջիզ։

ՄԱՐԳՐԻՏ, Նատալիայի թևն առնելով:

Արի՛, ա՛րի, գենացվալեբի։ Աբա ի՛նչ փիքր կոնեի թե էսօր քու տիսին արժանի կուլենիք... Հայ թե կու ուրախանա դեղեն։

ՆԱՏԱԼԻԱ

Ցիս էլ շատ վուխտ է կարոտիլ էի ձյոզ. աստուած գիդենա։

Թևակցած ներս են մտնում, Սարգիսը և Արտեմը հետևում են նրանց. դուռը հետևից փակվում է:

ԳԵՈՐԳ, ԻՍԱՅԻ

ԳԵՈՐԳ, վերադառնալով ձախ կողմից, հանդիպում է Իսայուն, ու գալիս է հակառակ կողմից:

Օ՜հ, բարև, պարոն Իսայի։

ԻՍԱՅԻ, զարմացած:

Զենդ ճանանչս գալիս է, ախպեր, ամա չիմ գիդի ո՞վ իս։

ԳԵՈՐԳ

Մի՞թե այդպես փոխվել եմ, Իսայի ջան։ (Ձեռք տալով:) *Գեորգ Մասիսյանց։*

ԻՍԱՅԻ

Վա՜, դո՞ւն ի՞ս, Գիորգի ջան։ (Գրկելով համբուրում է նրան:) *Իմացիլ էի՝ էկիլ իս, ամա վուր չէիր ասի, աստուծ գիդենա, չէի կանա ճանչնա։ Ի՞նչ խիստ իս փոխվի, ախպեր։*

ԳԵՈՐԳ

Տարիքս ավելացան, Իսայի ջան, ու քանի ժամանակ է, որ ինձ չես տեսել. բայց քեզ տարիքը չեն հաղթում, էլի այն Իսային ես։ Ի՞նչպես ես. խո լա՛վ ես, Իսայի ջան։

ԻՍԱՅԻ

Գուհանամ իմ աստծուն, լավ իմ... Դուն վո՞ւնց իս, Գիորգի ջան. դեղետ վո՞ւնց է։ Ուրախ կուլի քու գալուն, էլ ի՞նչ ասիլ գուզե։

ԳԵՈՐԳ

Լավ ենք, լավ։ Իսայի ջան, փառք աստուծու։

ԻՍԱՅԻ

Է՜, փառք աստծուն։

ԳԵՈՐԳ, շարունակելով:

Շատ ուրախ եմ, որ քեզ տեսա, Իսայի, շա՛տ։ Արի՛ երբեմն մեզ մոտ. մեկ հին ազաթի նստենք, քեֆ անենք։ Էլի առաջվա պես քեֆ սիրո՞ւմ ես, Իսայի։

ԻՍԱՅԻ

Վա՜, առանց քեփ գրող չարժե միր մարթը, Գիորգի ջան. բա՛ս չիմ սիրո՞ւմ։ Ուրի՞շ, էս ո՞ւր իս էլի էսթենը։

ԳԵՈՐԳ

Օ՜հ, Իսայի, ամբողջ մեկ ժամ Մարտիրոսյանցի տունն էի փնտրում հազիվ գտա։ Ի՞նչպես փոխվել է քաղաքը։ (Ցույց տալով իր աջ կողմը:) *Այստեղ չէ՞ր, որ խրճիթներ, այսինքն՝ քոխիք է՞ր. հիմա նայի՛ր, երեք-էտաժանի տներ են ձգել։*

ԻՍԱՅԻ

Լուսավորվում է միր քաղաքը, Գիորգի ջան։

ԳԵՈՐԳ

Հա՜, Իսայի, ես էլ այդպես եմ տեսնում, որ մեր քաղաքը դրսից շատ է փոխվում, լուսավորյալ քաղաքների նման է դառնում. բայց բանն այն է, որ ժողովուրդը լուսավորվի, իսկ սորանից, ես ինչպես տեսնում եմ, մենք դեռ շատ հեռու ենք։

ԻՍԱՅԻ

Միր լավն էլ ու վադն էլ աստծու ձեռին է, Գիորգի ջան, դուն էլ խոմ լավ գիդիս. ամա չիս կարծում իմ վուր վաղուցվան մարթիքը ուփրո խելոք ու արթար էին։ Միր մեչը խոմ սեր ու ավտալ էլ չկա. անօրենութինը ու խափիլը շատացավ։ Հիմի տեսնինք, թե դուն ու քու նմաններիրը վո՞ւնց իք խրատում խալխին։

ԳԵՈՐԳ

Է՜հ, Իսայի, ծովումը մեկ կաթիլը ի՞նչ կարող է անել. գեռ հարյուր տարին էլ բավական չէ մեզ խելքի բերելու։

ԻՍԱՅԻ

Ղուրթ իս ասում, ախպեր, ամա դուք էլ գնում իք, էն մունդրեկ Գիորգի ջուր է ինչոր խմում իք ու դառնում իք իստակ բոն-ժո՞ւռ։

ԳԵՈՐԳ, ծիծաղում է:

Հա՜, հա՜, հա՜... Օ՜հ, Իսայի, ֆրանսերեն էլ ես ասվորել։

ԻՍԱՅԻ

Է՛, հեր օխնած, էստուրն ինչ սորվիլ գուզե. օրենը քառասունն ին անց կենում մեր քուչեքը. ա՛յ, դուն էլ նրանց հանգը չո՛ւնիս հաքի՛տ։ (Գեորգի փեշը բռնում է։) Էս ի՞նչ կարճ է, ախպեր. նստած՞ իս ձևիլ ավի՛։

ԳԵՈՐԳ, ավելի է ծիծաղում։

Հա՛, հա՛, հա՛,հա՛, հա՛... Այդ ի՛նչ լավ խոսք ասացիր, Իսայի, երբեք մտքիցս չի ընկնիլ։ Ճշմարիտ որ՝ նստած ձևել տված։ Մոդա է, ի՛նչ անես։

ԻՍԱՅԻ

Օ՛հ, Գիորգի ջան, մոդա ասիր ու պրծա՛ր։ Աստուձ է վկա, քունս կոտրրվիլ է էս մոդերեմեն։ Իստակ խառնվեցավ մեր խալխը. էլ ինչրու հաց ուտելումն էլ մոդնի ին ուզում ժամ գա։ Փուզ պիտի վուր էստուրը զիմնա՞՝ թե չէ՛։ Ինչրու հիմի մե ճրաքվե մումով յոլա էի գնում, ախպեր, հիմի կի գիշերով մե գրվանքա կարտոփիլի մումը հերիք չէ գալի։ Էս էլ քի լուսավուրութին։

ԳԵՈՐԳ

Լավ լուսավորություն է, երանի՛ է մեզ... (Ժպտալով։) Գիտես, Իսայի, մեկ վառ մա՛շխալա առ ձեռքիդ ու տնե տուն ման արի, հենց ամենքին իսկույն կլուսավորես... (Ծիծաղում են։) Է՛հ, մնաս բարյավ, Իսայի։ (Զեոֆ տալով։) Արի՛ մեր տուն, ա՛յ. անպատճառ շնորհ բերես, թե չէ կնեղանամ, հավատա՛։

ԻՍԱՅԻ

Գու քամ, գու քամ, բաս չի՛մ գա՛։ (Զեոֆը բռնելով։)
Ամա ի՛նչ նշնելու տղա իս, Գիորգի ջա՛ն... Հը՛, ջեր չին նշնո՞ւմ։

ԳԵՈՐԳ

Դու էլ իմ մայրը մի՛ դառնար, Իսայի. այդ ի՞նչ սովորություն ունեք, ճշմարիտ. առանց նշանադրության և պսակման ձեր մեջը խոսել չէ լինում։

ԻՍԱՅԻ

Օ՛, մերը լավ բան է, Գիորգի ջան. բաս վո՞ւնց խիթարվի խիղճը քի վրա։

ԳԵՈՐԳ, ժպտալով։

Մայրս որ իմանա թե այդպիսի խորհուրդներ ես տալիս ինձ, Իսայի, առաջի բարեկամը քեզ կհամարե։

ԻՍԱՅԻ

Միթամ ի՛նչ փիս բան կոնե. ավոտաս ուրիշներու պես խափիմ, ա՛յ։

ԳԵՈՐԳ

Քո ճշմարտասիրության մասին ես բոլորովին հավատացած եմ, Իսայի ջան։ Մնաս բարյավ։ (Տեսնելով Կարապետի տունը։) Հա՛, Իսայի, դու չգիտե՞ս արդյոք՝ այստեղ ո՞վ է կենում։

ԻՍԱՅԻ, հետ է նայում։

Վա՛հ, բաս չիմ գիդի՛. էս մեր ապա Կարապետ Զամբախովի տունն է։ Ինչի՞ վրա իս հարցնում. փոդրբթի բան խոմ չէ՞, խիստ մինձ փոդրբթներ ունե։

ԳԵՈՐԳ

Դու ճանաչո՞ւմ ես դորան, Իսայի։

ԻՍԱՅԻ

Վո՛ւնց թե կու ճանչնամ. ապա Կարապետը իմը խնամի է ախար, Գիորգի ջան։

ԳԵՈՐԳ, ուրախությամբ։

Մի՞թե։

ԻՍԱՅԻ

Աստուձ գիդենա։

ԳԵՈՐԳ

Իսայի ջան, ծանոթացրո՛ւ ինձ նորա հետ։

ԻՍԱՅԻ

Ի՞նչ կոնիս, ուզում իս հիդը ննգի՛ր դառնա՛. թե՞ կանտորումը բան ունիս։

ԳԵՈՐԳ, ժպտալով։

Չէ՛, Իսայի, բոլորովին ուրիշ բան է։

ԻՍԱՅԻ

Վա՛հ, ինձմեն ի՞նչ իս թաքցնում. էրեխա ձեռիս մինձացիլ իս։

ԳԵՈՐԳ

Մի՛ նեղանար, մի՛, Իսայի ջան. ես քեզ կխոստովանիմ... Այստեղ մեկ աղջիկ տեսա... շատ հետաքրքրեց նա ինձ։

ԻՍԱՅԻ

Ախչիկ տեսա՞ր։ (ձկույթի ծայրը շրթունքներին է դնում, ճեռո ձեռքը դեպի գլուխը տանում։) *Վա՛յ քու տղիս տղա, էլ հիռու ո՞ւր իմ գնում։ Ի՞նչ պտուղ իս, Գիորգի ջա՛ն... Թային օմքին գովիլ է ու էկիլ իս, վուր քու աճկով տեսնիս։ Ինչի՞ր իս մոգոնում, թե Մարտիրոսինց տունն իմ պտրոտում, կոսա։ Զաղ տիդ է, ա՛յ. լավ նշանելու ախչիկ գուզես՝ էս։*

ԳԵՈՐԳ, ուրախ։

Մի՞թե նշանելու է, Իսայի ջան։

ԻՍԱՅԻ

Է՛ստի մտիկ... վո՞ւնց թե նշանելու է. բաս փսակա՞ծ իս ուզում ուզի՞։

ԳԵՈՐԳ, ծիծաղում է։

Հա՛, հա՛, հա՛...

ԻՍԱՅԻ

Ի՞նչ իս ծիծաղում։ Աստուծ գիդենա, լավ ախչիկ է՝ ջահիլ, խելոք, սիրուն, ուսում առած ու բոյին էլ պակաս չունե։ (Առանձին։) *Օ՛հ, հոքուս մե քիչ միխկ արի։*

ԳԵՈՐԳ

Դա է, դա, Իսայի ջան։

ԻՍԱՅԻ, առանձին։

Ա՛յ բախտ... (Գեորգին։) *Բաս դո՞ւր էկավ քիզ, էլի՞։*

ԳԵՈՐԳ

Շա՛տ, շա՛տ։

ԻՍԱՅԻ, առանձին։

Մտիկ թե փուղն ի՛նչ գիդե։ (Գեորգին։) *Վուր դուր էկավ, ախպեր, ու՝ արի՛ ձեռաց յիս շինիմ էտ բանը...* (Գեորգի գրպանին խփում է։) *Դենգի դա մնոգո, հրա՛։*

ԳԵՈՐԳ

Դու ինձ ասա՛, Իսայի. ո՞վ է այդ աղջիկը։

ԻՍԱՅԻ

Ախչիկն էլ, պարուն, դուն իմն իս, միթամ դուն չիս գիդի, ինչի՞ր իս ինձ խափում, իրան Զամբախովի ախչիկն է. շատ հարուստ մարթ է ու ջիզ դրուստ հերութին կոնե։ Փուղ ու բաժինք էլ էնքան կու տա, ախպեր, վուր ջեր սչոլու էլ չլրին տվի... Կուլի դուն էլ լավ գիդենաս՝ էրկու հազար թուման փուղ ու յիրիք հարուր թումնի բաժինք. ուրիշ ի՞նչ իս ուզում, տո՛։ Ախչիկը խոմ, օրինավուր ախչիկ է, յիս ու իմ հոքին. նրա խասիաթն աժե մե ախչիկ։ Անումով Մարքրիտ է, ամա սրտով մարքրըտներու գլուխն է... Աստուծ գիդենա, քիզ համա լավ բան կուլի, թե դուրթ ախչկան հավնում իս... Հը՞, բի՛, խփե՛ ձեռդ, բանը քութահ անինք ու պրծնինք։

ԳԵՈՐԳ

Է՛հ, Իսայի, ինչե՞ր ես խոսում. ես բոլորովին միտք չունեմ այդ ձևով ամուսնանալու։ Մի՞թե կարելի է կին ուզել առանց փոքր ի շատե նորան ճանաչելու։ Ես ուրիշների վրա էլ եմ նեղանում այդ բանի համար, ո՛ւր մնաց, որ ինքս այդպես վարվեմ։

ԻՍԱՅԻ

Աբա էնդուր իմ ասում, ախպեր, վուր Գերգի ջուրը խմում իք, է՞։ Նշանելու ախչիկը վուր կա. անկտրիլ ձմերուկ է. ինչ բախտը կու տա, կու տա։ Վո՞ւնց կանաս դուն նրանցը ճանչնա, յա ո՞վ կու թողնե քիզ իր նշանելու ախչկա հիդ սիլի-բիլիք անիս։

ԳԵՈՐԳ, ծիծաղում է։

Հա՛, հա՛, հա՛...

ԻՍԱՅԻ, շարունակելով։

Չէ՛, հիմի չի՞ս ուզի մի շաբաթ քու տուն էլ ղրգին, վուր ուփրո լավ ճանչնենա՛ս։

ԳԵՈՐԳ, ավելի է ծիծաղում։

Հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛...

ԻՍԱՅԻ

Միզ էտունք չի սազ գա, ախպեր. մենք խո ռանիր չինք, յիս վուր մե տեսնելով կնիկ իմ ուզի, ինչո՞վ է փիս, փառք իմ աստծուն։

ԳԵՈՐԳ, ժպտալով:

Ինձ որ սպանեն, Իսայի, ես այդպես չեմ կարող կին ուզել... Բայց ի՞նչ ենք այստեղ կանգնել. գնանք այսպես խոսելով, եթե ժամանակ ունես։

ԻՍԱՅԻ

Գնանք, ախպեր։ Ղուրթ է, յիս էլ տուն էի գնում, կնիկս մնում կուլի, ամա մե քիչ քիզ պրավաժատ կոնիմ։ (Առանձին:) *Ձիր արիվը, ձեռնեմես դուս չիմ թողնի։* (Գեորգը Իսայու թևից բռնած՝ խոսելով տանում է նրան դեպի աջ, ուր բեմի խորքում պատահում են Կարապետին:) *Էս սհաթիս գալիս իմ, Գիորգի ջան։*

Գեորգը դուրս է գնում այն կողմից։

ՑԵՍԻԼ Ե

ԻՍԱՅԻ, ԿԱՐԱՊԵՏ

ԻՍԱՅԻ, բռնելով Կարապետի թևից և առաջ բերելով նրան:

Է՛ս սհաթիս հիդ գու քամ, լավ խաբար կու իմաց անիմ. էն տղեն մնամ վուր քու Մարքրիտին տեսիլ է էստի բալկոնումն ու հավնիլ է։ Ուզում իմ բանը գլուխ բերի, շատ լավ տղա է. հենց էս սհաթիս հիդ իմ գալի։

Դուրս է վազում աջ կողմից:

ՑԵՍԻԼ Զ

ԿԱՐԱՊԵՏ, մենակ, երկար ժամանակ մնում է ապշած:

Ի՞նչ ասա՜վ... Մարքրիտին տեսիլ է ու հավնիլ է, կոսե՜... Գժվի՞լ է, թե էրազումն է. թե՞ էն տղեն մասխարա է գցի... Ախար իմ Մարքրիտին ո՞վ կու հավնի։ Մե տեսնիմ՝ ի՞նչ խաբար է։ (Դուռը ծեծում է:) *Ո՞վ կուլի էն տղեն... Հավը կի էրևում է, ախպեր, ովոր վուր է ո՞ւ... իմ օրումը չիմ տեսի... Լավը վուր չըլի, Իսային չէր խառնվի, իմ խաթրը շատ ունե...*

* Այստեղ հանգուցյալ Ամերիկյանը ավելացրել է միշտ այ սխոսքերը՝ «Թե՛ ինձ իմ տեսի, թե՛ իմ Մարքրիտին»:

Կո՞ւլի դուրթ ասում օղորմա ու Մարքրիտի ցավիմեն պրծնի՞մ... Դրժար չէ՞ մարթու համա վուր փուդ էլ ունենա, խիլք էլ ունենա ու ախչիկը զիղճ ըլի՞... Ի՞նչ օլին գուլիք հանիլ իմ, ասում գիդենա. ամա վուր ղսմաթը չէ կտրում՝ ի՞նչ անիմ. վուր օչով չէ ուզո՞ւմ... Է՛սենց էլ աշխարք կուլի՞... Լավ տղերքն ասում ին՝ սիրուն ըլի, կոսե, ու փսին խոմ յիս ինքս չիմ տա։ (Սարգիսը դուռը բաց է անում:) *Ա՜յ, քանդվի էս աշխարքը, լավն էլ ու վադն էլ հիդը, հը՞ա։*

Շտապով ներս է մտնում:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Կարապետի տանը շրեղ սենյակ երեմ դռնով՝ աջ, ձախ և խորքի: Սենյակի հատակը ծածկած է զորգով, առաստաղից կախած է ոսկեզօծ ջահ հանգած մոմերով: Ձախ կողմը ընկողմարան [բուշեթ] փոքրիկ սեղանով և բազկաթոռով, իսկ աջ կողմը՝ բազմոց մեծ սեղանով և բազկաթոռներով. խորքումը աթոռներ: Սեղանները ծածկած են գունավոր գեղեցիկ սփռոցներով և դռները զարդարած նույնպիսի դրապերիներով: Մեծ հայելի և ժամացույց. որ բանում է և ցույց է տալիս կեսօրից մեկ քառորդ անց: Ուր հարկն է հանգած լապտերներ և հանգած մոմերով աշտանակներ ու կանդելաբրներ:

ՑԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ԿԱՐԱՊԵՏ, ՄԱՐԳՐԻՏ

ԿԱՐԱՊԵՏ, մտնում է խորքի դռնից, ծանր քայլով առաջ է գալիս և դնելով գլխարկը աջ կողմի սեղանի վրա՝ կանչում է:

Մա՜րքրիտ։

Նստում է այն սեղանի մոտ:

ՄԱՐԳՐԻՏ, դուրս գալով ձախ դռնից:

Համէ՛։

ԿԱՐԱՊԵՏ

Էսօր բալկոնումն է՞լիլ ի՞ս։

ՄԱՐԳՐԻՏ

Հա՛. մամի ջան, մեկ դուս գնացի։

ԿԱՐԱՊԵՏ

Օմքին տղա տեսա՞վ քիզ բալկոնումը՞։

ՄԱՐԳՐԻՏ

Չէ՛, մամի ջան, օշով չիմ տեսի։

ԿԱՐԱՊԵՏ, զարմանում է և առանձին։

Ի՞նչ մոգոնից էն սարսաղ Իսային. նրան էլ մարթ ինչ ասում է, էն սհաթին ավտում է։ (Մարգրիտին։) *Մե ինձ ասա՛, բալկոնը ինչի՞ համա դուս գնացիր. շատ սիրուն կա՛րտինկա իս, քու գլխի արիվը, վուր դիփուանքը քիզ վրա մայիլ մնա՞ն։*

ՄԱՐԳՐԻՏ, լացակումած։

Սեյր անելու իս չդուս գնացի, մամի ջան։ Կինաղամ դռնիրը կոտրտեցին. դուս մտիկ անիմ, տեհնիմ Նատալիեն է, ու հանց դուռը բաց արին, էն սթահին հիդ տուն էկա, աստուած գիդենա։

ԿԱՐԱՊԵՏ, զարմացած։

Նատալիեն է՞ստի էր գանա՞։

ՄԱՐԳՐԻՏ

Հիմի էլ էստի է, դեդի մոդ նստած։

ԿԱՐԱՊԵՏ

Է՞ստի է՞։ Փժում հա՞ էր դուսը բալկոնումը՞։

ՄԱՐԳՐԻՏ

Չէ՛, մամի ջան, նա էլ չէ էլի։

ԿԱՐԱՊԵՏ, զարմանում է։

Բեսաբ նամաղուլ իս անում, դրո՛ւստ ասա։

ՄԱՐԳՐԻՏ

Աստուած գիդենա, մամի ջան, չէ էլի. ի՛նչ բալկոնի պրա ուներ, ահու չեր էլի սիրտը հիդ չէ էկի։

ԿԱՐԱՊԵՏ

Ի՞նչ ահ։

ՄԱՐԳՐԻՏ, առանձին։

Վա՛յ մե՛, էս ի՞նչ ասի, իսո Նատալիեն կու չգրվի։ (Կարապետին։) *Չիմ գիդի ինչի վրա էլ վախեցիլ է։*

ԿԱՐԱՊԵՏ, վեր կենալով։

Մարքրի՞տ, ինձ իսո կու ճա՞ննաս. ասա՛ դրուստը, թե չէ էլ ինձմեն չիս պրծնի։

ՄԱՐԳՐԻՏ

Վա՛, յիս ի՞նչ անիմ, մամի ջան. ասում էր, թե մե ֆրանտ տղա վախեցրուց, կոսե. ամա գենացվալի, մամի ջան, ինձմեն վունչիչ չասիս, թե չէ նրամեն էլ չիմ պրծնի։

ԿԱՐԱՊԵՏ, առանձին։

Ֆրանտ տղա՞։ (Մարգրիտին։) *Լա՛վ է. գնա՛ Նատալիին ասա՛ էստի գա։* (Մարգրիտը գնում է։) *Դեղեստ վո՞ւնց է։*

ՄԱՐԳՐԻՏ

Էլի պառկած է։

Դուրս է գնում ձախ դռնից։

ՏԵՍԻԼ Բ

ԿԱՐԱՊԵՏ, մենակ։

Հա՛յ, էնե՛նց պառկի վուր էլ չվիկենա, հը՞։ Օղլուշաղ մոգոնողին էլ ի՛նչ ասիմ... Ախար պատիժ է՞. դուս իս գնում, քրտինք իս քաշում, սուտ ու դուրթ իս ասում, տուն իս դալի մե թիքա հացը քնթետ հանում իմ... Հալբաթտա՝ ո՞ւմը չի պատահի հիվընդութին. ամա վուր մարթ գնա, զոռով հիվընդանա, էնդու պես էլ ախմախութին կո՞ւլի աշխարքումը՞... Շատ վուխտ էր հեքիմ չէր էկի իմ տուն ու ճրել-ճրել թումնիրը չէր համբրիլ տվի... Հորեն Նատալիեն գալիս է. վո՞ւնց կոտրիմ, վուր դրուստն իմանամ, թե չէ հիմիկվան վուխտը իսո դրուստ խոսիլը ադաթ չէ։

ՏԵՍԻԼ Գ

ԿԱՐԱՊԵՏ, ՆԱՏԱԼԻԱ

ԿԱՐԱՊԵՏ, Նատալիային, որ մտնում է ձախ դռնից:

Օ՜հ, բա՜րով, Նատալիա ջան։

ՆԱՏԱԼԻԱ

Բա՜րով, ձիա ջան։

Միմյանց ձեռք են տալիս:

ԿԱՐԱՊԵՏ

Էս ի՞նչ խեչեմեն է, միտտ ինք էկի, ախչիկ-պարուն։

Նստում են:

ՆԱՏԱԼԻԱ

Ի՞նչ խեչեմեն պիտի ըլի, ձիա ջան. իմացա, վուր ձալոն բեհալ է ու էկա տեսնելու։

ԿԱՐԱՊԵՏ, առանձին:

Էտ է վուր ավտացի։ (Նատալիային:) *Ինչի՞ր իս խոսում, Նատալիա, հենց գիդենաս քիզ չճանչեննամ։ Հիմի քու մարթու տուն գնալու վուխտն է. էս չախքն ի՞նչ կուլիս շինում դուն էստի, թե վուր մի բան չըլի։*

ՆԱՏԱԼԻԱ

Ի՞նչ բան պիտի ըլի, յադ խոմ չիմ։

ԿԱՐԱՊԵՏ

Յիս էլ գիդիմ վուր յադ չիս ու ջիգրս էլ էնդու վրա է գալի, վուր ուշ-ուշ իս գալի. ամա յիս հուտով իմանում իմ, վուր առանց միզեզ չէիր գա էստի։

ՆԱՏԱԼԻԱ

Դուն վուր, ձիա ջան, բանեմեն բան կու հանիս. ասում իմ վուր ձալոյի տիս էկա, աստուծ գիդենա։

ԿԱՐԱՊԵՏ, առանձին:

Խերխիս չկտրից։ (Նատալիային ժպտալով:) *Բաս վո՞ւնց էր վուր էն ոգեն վախեցրուց քիզ։*

ՆԱՏԱԼԻԱ, շփոթվում է:

Քիզ ո՞վ ասավ, ձիա ջան։

ԿԱՐԱՊԵՏ

Միտը խաբարն էրի։

ՆԱՏԱԼԻԱ

Մարքրիտը կոսեր, էլի՛. նրա բերնումը խո լոբի չի թրչըվի։

ԿԱՐԱՊԵՏ

Չէ, Մարքրիտը ինձ վունչիչ չէ ասի. ամա մե ինձ պատմե՝ վո՞ւնց է էլի էտ բանը։

ՆԱՏԱԼԻԱ

Է՛հ, անմիզ բան էր, ձիա ջան, աստուծ գիդենա. ամա փեսին չասիս դեթաղվանե։

ԿԱՐԱՊԵՏ, առանձին:

Դիբավ ձուդը չանգլին։ (Նատալիային:) *Չէ՛, չիմ ասի, ասա՛։*

ՆԱՏԱԼԻԱ, աթոռը մոտ քաշելով դեպի Կարապետը:

Քիմեն ինչ թաքցնիմ, ձիա ջան։ Էսօր առուտեհան տալս ղրդիլ էր, թե նուր մաղազինումն էժան ապրանք ին ծախում, կոսեր։ Քա՛նի վուխտ էր ինձ համա դերիացու էի ուզում, յիս էլ գնացի իմ տալուչ հիդ ու ինչ ուզում էի առա։

ԿԱՐԱՊԵՏ, ճեգնական ձևով:

Է՛տ է, հիմի մինք տանը նստինք ու միր բանը դուք շինեցե՛ք։

ՆԱՏԱԼԻԱ

Մաղազինեմեն վուր դուս էկանք, տալս ուրոր գնաց, հարկավոր բան ուներ, ու յիս մենակ միր պստի բջի աբով էկա էստի։

ԿԱՐԱՊԵՏ

Հորեսի դենը առանց բջի էլ կու ման գաք ասծու օղորմութենով։ Իժո՞ւմ...

ՆԱՏԱԼԻԱ

Դռանը վուր մոդ էկա, ձիա ջան, մե ջեհել ֆրանտ տղա առաչ էկավ, մե հեստի հանգը գլուխ վեր էրի, կոսեիր նրա բիձու ախչիկն ըլիմ, ու

հարցրուց, թե Մարտիրոսյանցի տունը խոմ չիք գիդի, կոսե։ Մեքաշ հեստի վախեցա, ձիա ջան, վուր ահու կինաղամ սիրտս գնաց։

ԿԱՐԱՊԵՏ, ճկույթի ծայրը շրթունքներին է տանում։

Իժո՞ւմ...

ՆԱՏԱԼԻԱ

Իժում էլ ի՛նչ. ասի վուր չիս նրա տունը չիմ գիդի. նա էնենցը դիվիր գնաց միր քուչովն ու չիս տուն էկա էստի։

ԿԱՐԱՊԵՏ

Վա՜, հեր օխնած, էտու համա էլ ո՞ւր էիր վախենում. խոմ չէր կուլ տա։

ՆԱՏԱԼԻԱ

Արի ասա էլի, մե բաշ վախեցա։

ԿԱՐԱՊԵՏ

Ի՞նչ հանգի տղա էր։

ՆԱՏԱԼԻԱ

Գիփ նրան էի տնդղում, նրա գլխի արիվը գիդենա։

ԿԱՐԱՊԵՏ

Չէ՜, մայինց, ախար։

ՆԱՏԱԼԻԱ

Մի չեհել ֆրանտ տղա էր, էլի՛. ամա խիստ կարճ շուրիր ուներ հաքին ու ձեռին էլ դիղին փերչտկներ։

ԿԱՐԱՊԵՏ, առանձին։

Հե՛նց նա է։ (Նատալիային։) Կա՛րճ շուրիր ուներ, ասում ի՞ս։

ՆԱՏԱԼԻԱ

Հա՛։

ԿԱՐԱՊԵՏ, գլուխը շարժելով և առանձին։

Հենց էնենց է. ամա Իսային խոմ չխափից ինձ։ (Նատալիային։) Էտ քա՛վ բան է էկի գլխիս, ախպեր։

ՆԱՏԱԼԻԱ

Է՛, ձիս ջան, վուր միտս է գալի ծնգնիբյա ջեր էլի դողում է։

ԿԱՐԱՊԵՏ

Շատ լավ էլ է ըլում. ձիզ ինչրու մե լավ օյին չգան, խիլքի չիք գա։ Աբա ի՞նչ կարք է վուր մաղազիներումն ու քուչա-քուչա մենակ սե՛յր իք անում։ Տո՜, դերիա գուզեի՛ր, քու մարթին ուփրո էժանն ու լավը չէ՞ր առնի՜։

ՆԱՏԱԼԻԱ

Գենացվալե, ձիա ջան, փեսին վունչիչ չասիս, թե չէ, խոմ գիդիս նրա խասիաթը, էլ տանեմեն դուս չի թողնի։

ԿԱՐԱՊԵՏ, առանձին։

Գժվի՞լ իմ։ (Նատալիային։) Էտ է, ջհել տղերքը ձիզ հիդ քուչումը մասլահաթնիր սարքին ու՝ (Կանացի ձայնով։) փեսին վունչիչ չասիս։ (Իր ձայնով։) Շինվեցավ մարթկերանց բանն, էլի՜։

ՆԱՏԱԼԻԱ

Քա՛, չիս ի՛նչ միդ ունիմ։

ԿԱՐԱՊԵՏ

Էն միդն ունիս, վուր մաղազիեք ման գալը միր կնիկարմտին չի վայելի, չէ՜։

ՆԱՏԱԼԻԱ

Թե կի աշխարքը ման է գալի, քա՜։

ԿԱՐԱՊԵՏ

Է՜հ, աշխարքը։ Էտ է վուր շատ մեկմեկու մտիկ տալով խստակ քոռացել իք, է՜։ Մա՛խլաս, բայրաղնիրդ խիստ իք վիր թողի։ (Ձայնը մեղմացնելով։) Ուրիշ ի՞նչ բարին հարցնիեք, խո լա՞վ իս։

ՆԱՏԱԼԻԱ

Փա՛ռք աստծու, ձիա ջան. դուն վո՞ւնց իս։

ԿԱՐԱՊԵՏ

Վունցոր տեսնում իս, լավ իմ։ Ամա ձալոյիտ խոմ տեսար, մե քիչ նրա բեհալութինը քեփս խարաբ է անում։

ՏԵՍԻԼ Դ

ՆԱՆՔ, ՄԱՐԳՐԻՏ

ՄԱՐԳՐԻՏ, դուրս գալով ձախ դռնից:

Ճաշը վո՞ւրդի կու անուշ անիք, մամի ջան, բալկոնումը թե բախչումը։

ԿԱՐԱՊԵՏ

Ասա՛ վուր բախչումը գցին սուփրեն ու մե պրիբոր էլ ավելցնին։

ՆԱՏԱԼԻԱ

Ձիա ջան, յիս ճաշին չիմ կանա կենա։

ԿԱՐԱՊԵՏ

Լայիղ կոնիս։

ՆԱՏԱԼԻԱ

Աստուած գիդենա, չիմ կանա, ձիա ջան։ Իսային չի էլ գիդի թե էստի պիտի էկիլ էի։

Մոտենում է Մարգրիտին:

ԿԱՐԱՊԵՏ

Հաջաթ չէ, դուն արխային կաց։

Մտածմունքի մեջ է ընկնում:

ՆԱՏԱԼԻԱ, ծածուկ ճմլելով Մարգրիտի թևը

Հիմի ի՞նչ կուլեր վուր իմ ափալը ձիին չէիր ասի։

ՄԱՐԳՐԻՏ

Ո՞վ է բան ասի, ի՞նչ իս ասում։

ՆԱՏԱԼԻԱ

Քու ճոթրվիլը գիդենա։

ՄԱՐԳՐԻՏ

Ի՜հ, ունցնավուր իս, Նատալիա ջան. աբա մա՛մին հարցրու, թե բան իմ ասի։

ՆԱՏԱԼԻԱ, ձեռքով ապառնում է Մարգրիտին:

Մուլափ տո՜ւ, թավլափիան։

ՄԱՐԳՐԻՏ

Քա՛, ասում իմ վուր վո՛ւնչիչ չիմ ասի. ի՞նչ անավատալի իս։

ԿԱՐԱՊԵՏ, մտածմունքից սթափվելով:

Հ՜ը, ի՞նչ դալմաղալ սարքեցիք։ (Մարգրիտին:) *Ցիս քիզ չասի՞, թե գնա՛ մե պրիբոր ավիլցնիլ տո՜ւ։ Դե, չո՛ւստ արա, էն մարթը գու քա, ամութ է։*

ՆԱՏԱԼԻԱ

Ո՞ւմն ունիս ղոնաղ, ձիա ջան։

ԿԱՐԱՊԵՏ

Ղոնաղ չէ, հիմի սազանդար. քու մարթը պիտի գա։

ՄԱՐԳՐԻՏ, առանձին ուրախ:

Էս ի՜նչ լավ օր լուսացավ։

Դուրս է վազում ձախ դռնից:

ՏԵՍԻԼ Ե

ԿԱՐԱՊԵՏ, ՆԱՏԱԼԻԱ

ՆԱՏԱԼԻԱ

Բաս յիս չիմ կենա, ձիա ջան, էստի. վա՛յ թե ջիգր գա, վուր տունը մենակ իմ թողի։

ԿԱՐԱՊԵՏ

Տո՛, ինչի՞ պիտի ջիգր գա. նա ինձ էս սհաթիս ասավ վուր ճաշին գու քամ քի մոդ, կոսե. յիս էլ կոսիմ՝ վուր տուն էկա՞, ակոշկիմեն միթամ քիզ տեսա վուր տուն էիր գնում ու կանչեցի։ Էստումը ի՞նչ կա ջգրվելու։

ՆԱՏԱԼԻԱ

Վա՛յ թե էտենց ուփրո խիալ տանե, ձիա ջան։

ԿԱՐԱՊԵՏ, առաձին:

Խիստ խուռը փիքր անող վուր նա՛ է։ (Նատալիային:) *Տ՛ո, ի՞նչ կա էստի խիալ տանելու. կոսիմ էսենց էր, նա էլ պիտի ավտա վուր էսենց էր։*

ՆԱՏԱԼԻԱ, ուրախ:

Բաս վունչիչ չի՞ս ասի, ձիա ջան։

ԿԱՐԱՊԵՏ, առաձին:

Ախմախ էլ կուլիմ։ (Նատալիային:) *Ասի վուր չիմ ասի, խո գիդիս՝ իմ խոսկը խոսկ է։*

ՏԵՍԻԼ Զ

ՆՐԱՆՔ, ԻՍԱՅԻ

ԻՍԱՅԻ, ներս մտնելով խորհի դռնից, ապշում է և զարմացած նայում

Նատալիային:

Վա՛, դուն էստի՞ իս գանա. յի՞փն էկար։

ՆԱՏԱԼԻԱ

Հենց էս սահաթիս։

ԻՍԱՅԻ

Ի՞նչ գիդեիր թե յիս էստի պիտի գամ։

ՆԱՏԱԼԻԱ

Վուր չէին իմաց արի, ի՛նչ կու գիդենեի. իմաստուն խոմ չէի։ Տուն էի գնում, ձիեն ակոշկեմեն տեսավ ինձ ու ասավ թե փեսեն ճաշին գու քա, կոսի, ու դուն էլ արի՛։

ԻՍԱՅԻ

Հենց հիմի՞։

ՆԱՏԱԼԻԱ

Հենց հիմի, քա՛։

ԻՍԱՅԻ, առաձին:

Ո՛ւհ, սիրտս հիդ էկավ։ (Նատալիային:) *Ղուրթ իս ասո՞ւմ։*

ԿԱՐԱՊԵՏ, վեր է կենում:

Հեր օխնած, տուն էկար՝ մե բարով ասա՛, հազար բարի լսե. սլետստվի անելու խո չի՛ս էկի։

ԻՍԱՅԻ

Ի՞նչ սլետստվիի խիլք ունիմ յիս. մեբաշ արմըցա, վուր սրան էստի տեսա։

ԿԱՐԱՊԵՏ

Ի՞նչ կա, ախպեր, էստի արմընալու. դուն չասի՞ր, թե էս սահաթիս գու քամ, կոսե։ Տուն էկա, տեսնիմ դա տուն էր գնում ու կանչեցի. թե շնորակալ չիս, գուզիս հիդ տուն դրգե, հավիրը ջուր տալ գուզենան։ Աբա էնդուր իմ ասում, Իսայի, վուր միզմեն հեռու իք ման գալի, է՛. գնալ ու գալ վուր ունենաք միզ մոդ, քու կնգա էստի ըլելու վրա չէիր արմընա։

ԻՍԱՅԻ

Ի՛նչ ասիմ, Գարասիմ Յակուլիչ. աստուձ գիդենա, հիմիկվան ժամանակումը հենց գիդենաս օրիրը կարճացավ. մարթ իր բանին էլ չէ վրահասնում։

ԿԱՐԱՊԵՏ

Թե գուլի գուլոբս, ասած է, քադա օր խելիթ իճմեվա՞։ է՛, մախլաս... (Նստում է աջ կողմի սեղանի մոտ:) *Վա՛, նստեցի՛ք, է՛...* (Իսային և Նատալիան նստում են, բայց այնպես, որ Իսային գտնվում է Կարապետի և Նատալիայի մեջտեղը: Իսայուն:) *Ուրիշ վո՞ւնց իս։*

ԻՍԱՅԻ

Փառք ասծու, վունցոր տեսնում իս, ապրում ինք. խնամին վո՞ւնց է։

ԿԱՐԱՊԵՏ

Նրա բեհալութինը խո ջանդա բեզար արավ ինձ. հորեն էլի պառկած է։

ԻՍԱՅԻ

Աստուձ լավութին տա. ի՞նչն է։

ԿԱՐԱՊԵՏ

Աստուձ վուչ գիդե իմ գլուխը։

* Վրացերեն է:— *Եթե սիրտն ուզում է, գաթան երկու ձեռով կուտեն։*

ՆԱՏԱԼԻԱ, Իսայուն:

Զալոյի գլխացավն էլի աշլա է էլի։

ԿԱՐԱՊԵՏ

Տո՛, հազիր դրուստ խոսի՛ք։ Իրիգուն տասէրկու սհաթն էր վուր տուն էկավ... Ինչոր անդեր ու մունդրեկ լոտո իք մոգոնի... զառափի գլուխ պիտի վուր ձիր համբրբրքին դիմնա։ (Իսային գլուխը շարժելով հանդիմանում է Նատալիային:) *Քառասուն հոգի մետի մոդ իք ըլում մե օթախումը, հենց գիդենաս խոշի բաղնիսն ըլի, իժում տաք-տաք դուս իք գալի կես գիշերին ու հալբաթտա գլուխն էլ կու ցավի ու վուտն էլ։ Մա՛խլաս, մե քիչ պիտի լկամներուտ ղայիմ պահինք, թե չէ վա՛յ միր միխ՝ալ հորեսի դենը։*

ԻՍԱՅԻ

Ավետրանի խոսկիր իս ասում, Գարասիմ Յակուլիչ, յիս ու իմ հոքին։

ՆԱՏԱԼԻԱ

Խիղճ ախչկիրք, յարաք ի՛նչ պիտի ըլի միր չարեն. էլ տեատրումը բան չմնաց վուր միզ վրա չասին։ Աստուձ գիդենա լավ բան է. մարթիքն ուզենան բաղը գնան քեփ անելու, ուզենան մեկ-մեկու մոդ րիգիս պուրիք սարքին, ուզենան ինչրու կես գիշերն էլ կլուբումն ըլին ու մինք կի մե լո՛տո էլ չկանենանք խաղա՛։ Բաս մենակ չուրս պատի մեչը ճիտը ձքինք ու նստինք։ Թե գուզիք դուք դիփ տա՛նը կացեք, մինք էլ տանը կուլինք։

ԻՍԱՅԻ

Լա՛վ է, ձենդ. ճիանուրը մի՛ սարքի։ Էտենց իք խոսում վուր տուն ու տիղը քոծի ու բջի արով է մնում, է՞։

ԿԱՐԱՊԵՏ

Նատալիեն էլ ղուրթ է ասում, Իսայի։ (Նատալիան հեգնական շարժվածքներ է ցույց տալիս Իսայուն:) *Թե դրանք խերով չին, մե մինձ խերով ապրանք մինք էլ չինք... է՞հ, գնանք բախչեն, ինչրու սուփրեն էլ կու զցին։* (Վեր են կենում:) *Հա՛...* (Նատալիային:) *Էս սահաթիս գալիս ինք, Նատալիա։*

Նատալիան գնալով, Իսայուց ծածուկ շարվածքներով խնդրում է Կարապետին, որ Իսայուն ոչինչ չասե. Կարապետը նշաններով հանգստացնում է Նատալիային, որ հետո դուրս է գնում ձախ դռնից:

ՏԵՍԻԼ Է

ԿԱՐԱՊԵՏ, ԻՍԱՅԻ

ԿԱՐԱՊԵՏ

Ի՞նչ էիր ասում էլախտ, Իսայի։

ԻՍԱՅԻ

Էլ ի՞նչ էի ասում. աբա ի՞նչ իս տալի, ախչկատ բանը չինիլ իմ։

ԿԱՐԱՊԵՏ

Է՛հ, հանա՞ք իս անում, Իսայի՛։

ԻՍԱՅԻ

Հանաք կի չէ, ղուրթ իմ ասում, քու արիվը. քունը սուտ չգիդենաս, իմ արիվն իմ ասում։ Աբա՛ վուր ասում իմ, թե մարթ չի գիդի ի՛նչ կու պատահի։

ԿԱՐԱՊԵՏ, առանձին:

Թե էնենց է, յիս լավ գիդիմ՝ ինչոր պատահիլ է։

ԻՍԱՅԻ, շարունակելով:

Տո՛, հալալ միամիտ ինձ համա տուն էի գնում. հենց էստի էվեստ էն տղեն ռաստ էկավ ու միամիտ հիդը խոսելիս, իմացա, վուր Մարքրիտին տեսիլ է էստի, չիմ գիդի բալկոնումը թե դռանը, ու շատ հավնիլ է։

ԿԱՐԱՊԵՏ, առանձին։

Էլ էստումը խիալ չկա, Նատալիի օյինն է։

ԻՍԱՅԻ

Իմը ջեր խիլքս չկտրից. ամա վուր փիքր արի, թե մարթ ու կնգա բանը յիրգնքումն է շինվում, կոսե, յիս էլ հալբաթտա ինչ կանացի՝ Մարքրիտին գովեցի. հոքուս էլ մինձ միխկ չարի. լավ ախչիկ է, յիս ու իմ հոքին։ Հիմի դուն կու գիդենաս, յա կու իմանաս, ղուրթ Մարքրիտին է տեսի՞, թե էստի ուրիշ օմքին է էլի։

ԿԱՐԱՊԵՏ, որ խորին ուշադրությամբ ականջ էր դնում, առանձին:

Կուդիս ծվաց, ախար, է՞։ (Իսայուն:) *Հա՞, Մարքրիտն ասիլ էր դեդին, թե քուչի դռանը կանգնած էի, կոսե, ու մե ջհել փրանտ տղա անց ու դարց արավ, կ՛ոսե, ու խիստ խիթից, կ՛ոսե։*

ԻՍԱՅԻ

Հենց լսենց է բանը, վունցոր մաշուր արի։

ԿԱՐԱՊԵՏ, առանձին։

Էտ է վուր իմացար։ (Խայուն։) Ամա իրան վունչիչ չասիս աստուձ կու սիրիս, միթամ վունչիչ չիս գիդի։

ԻՍԱՅԻ

Վա՛, խի՛լքս հաց ու պանրի հիդ իմ կերի՞։

ԿԱՐԱՊԵՏ

Հա՛, էնենց մուղայիթացնում իմ։ (Նստում է։) Քու արիվը, իմացիլ կուլի վուր փուղ շատ ունիմ, ու հալբաթտա ախչիկս էլ կարտինկա կու էրեր։

Հրավիրում է Խայուն նստելու։

ԻՍԱՅԻ, նստելով։

Քու ագիզ արիվն իմ ասում, Գարասիմ Յակուլիչ, վուր էն տղի հիդ խոսելիս, իմ մտկումն էլ էտ անց կացավ։ Ջասիս թե խիլքս բան չէ կըտրում, հրա՛... Փիքր արի, վուր թային օմքին իմքին բան է ասի նրան ու էսի զասիդի անց ու դարց է արի, Մարքրիտին ուզեցիլ է իր աճկով տնդղի։ Ախար, խիստ բոնժուռնիր ին էս Հիմիկվան տղերքն է՛. օչովի խոսկին չին ավտում։ Մանդր ու թեթիվ է արի իմ մտկումը, ու խոսելիս էլ մաշուր արի վուր սիրունութենի վրա խիստ հարց ու փուրց չէր անում. հենց էն է խասիաթն ու վարքն էր հարցնում գիփ։

ԿԱՐԱՊԵՏ

Գիդիմ, դուն էլ կու գովեիր։

ԻՍԱՅԻ

Վա՛, բաս կու փտնեի՞... Նշնելու ախչկա խասիաթը սուտ էլ վուր գովին՝ միխկ չէ, կոսե, ու Մարքրիտը խոմ դուրթ լավ խասիաթ ունե։

ԿԱՐԱՊԵՏ

Ժուում, ո՞վ է էտ տղեն. իմ օրումը չիմ տեսի։

ԻՍԱՅԻ

Շատ լավ տղա է, չիս ու իմ հոքին, Գարասիմ Յակուլիչ։

ԿԱՐԱՊԵՏ

Ախար, ո՞վ է, ո՞ւմ վուրթի է, մե ասա՛, է՞...

ԻՍԱՅԻ

Ա՛յ, Մասիսինց Նիկողոսի տղեն է, է՛լի. էս մոդիկ ժուգն էկավ ու խիստ լավ տիղ ին տվի էսաի։

ԿԱՐԱՊԵՏ

Նա՞ է՞։ Էտ խոմ աստուձ զամբիլով դեվեր է ղրգի միզ համա։ Իմացիլ իմ, շատ լավ տղա ին գովում ու դուրթ լավ տիղ էլ է ճարի։

ԻՍԱՅԻ

Վա՛, խոմ գիդիս, հազար թումնով սուտ չիմ ասի, էն էլ քի մոդ։

ԿԱՐԱՊԵՏ

Իժում, փուղի անում տվի՞ր իմքի՞ն։

ԻՍԱՅԻ

Վա՛, բաս առանց էտ կուլե՞ր. քրթամի ջոջոխեթս գաանաթլեբս*, ասած է։

ԿԱՐԱՊԵՏ

Քանի՞ ասիր։

ԻՍԱՅԻ

Ցանն իր պատիվով**, է՛լի։

ԿԱՐԱՊԵՏ

Էտ ղադամին մեբա՞շ։

ԻՍԱՅԻ

Հա՛, մեբաշ բերնեմես դուս թռավ։

ԿԱՐԱՊԵՏ

Հեր օխնած, գանա յիս մե օր վուր ասի, թե էտ ղադամի կու տամ, խոմ չա՞սի թե հենց ով ռաստ գա դիփունանցն էտենց ասա՛։ Ջեր կեսը կոսեիր, իժում սանդուխտ-սանդուխտ դիվիր կէհեիր։

* Վրացերեն է։—Կաշառքը դժոխքը կլուսավորեն։

** Վրացերեն է։— (3) տառը պատիվով նշանակում է երկու հազար թուման կամ յոան հազար ռուբլի։

ԻՍԱՅԻ

Չէ՛ր ըլի, քու արիվը, Գարասիմ Յակուլիչ. մուշտարիք շատ ունե։

ԿԱՐԱՊԵՏ

Դե՛ լա՛վ, ինչ ասիլ իս, ասիլ իս, օղունդ մե օտկե ու էս Մարքրիտի գավեմեն պրծրցրո՛ւ ինձ։

ԻՍԱՅԻ

Օտկիլ էլ իմ ու պրծիլ էլ, ամա բանն էստու վրա է, վուր մե տիղ հարսնքքումը, յա նշանտեքումը պիտի ռաստ բերինք Մարքրիտի հիդ։

ԿԱՐԱՊԵՏ, առանձին։

Կու շինվի բանս, հը՛։ (Իսայուն։) էլ ի՞նչ հարսնիք ու նշանտեք, Իսայի, թե՞ վուր ասում իս՝ տեսիլ է ու հավնիլ է, կոսե։

ԻՍԱՅԻ

Վա՛, հեր օրհնած, մարթ է ու քեփ։

ԿԱՐԱՊԵՏ

Վուր չհավնի՛, իժո՞ւմ։

ԻՍԱՅԻ

Վուր չհավնի՝ նա իր համա, մինք միզ համա զոռով բա՞ն կուլի աշխրքումը՞։

ԿԱՐԱՊԵՏ

Չէ՛, Իսայի, դուն նրան էստի բի էս գիշիր էվետ.

ԻՍԱՅԻ

Իժո՞ւմ։

ԿԱՐԱՊԵՏ

Իժում ի՛նչ. բի՛, է՛լի։

ԻՍԱՅԻ

Ջեր վուր նշան տալու խոսկ չէ տվի վո՞ւնց բերիմ։

ԿԱՐԱՊԵՏ

Հայաթ չէ, նշանն էլ կու տալ տանք, է՛լի։

ԻՍԱՅԻ

Վա՛, վուր չտա՞, խոմ խայտառակ կուլինք։

ԿԱՐԱՊԵՏ

Վո՞ւնց թե չտա, նրա հո՞րն օղորմի. իմ տուն գա ու առանց նշան տալու դո՛ւս գնա՞։

ԻՍԱՅԻ

Յիս էլ էտ իմ ասում, Գարասիմ Յակուլիչ, վուր մե տիղ հարսնքումը, յա նշանտեքումը ռաստ բերինք, է՛։ Էստի վունչիչ ամութ բան չկա, համ էլ ո՞վ կու իմանա։

ԿԱՐԱՊԵՏ

Աբա՛, քիմեն չիմ արմնո՞ւմ. Իսայի՛. իմ մունդրեկի ափալը չիմ գիդի՛. էն տղեն մեկ հիռու մոդիկ տեսիլ է ու ձլիվ հավնիլ է, հիմի գո՞ւցիս դիվ մետի մո՛շլա ըլի բանը՛։ Չէ՛, ախպեր, դուն նրան տո՛ւն բի էստի, տուն. յիս գիդիմ վունցոր մե նմուտումը մալամաթը մեչը կու դնիմ։

Վեր է կենում և մի քանի քայլ անց ու դարձ է անում։

ԻՍԱՅԻ, վեր կենալով։

Բաս զո՞ռով իս ուզում նշան տալ տա՛։ Էտ խոմ իստակ խափելու հեսաբ է. իժում մի՞խկ չէ ասծու մո՛դ։

ԿԱՐԱՊԵՏ, վշտացած ճայում է Իսայուն, հետո։

Խափիլը վո՞ւրն է, ինչի՛ր իս ասում, Իսայի. դուն ուզում իս հայր Աբրահամու վախտվան հանգը ժա՛ծ գա՞մ։ Ասած է՝ ինչ չիրգիր գնաս, էն չիրգրի գդակ ծածկե։ Կոսե։ Աբա՛, քիզ իմ հարցնում, էս միր քախկումը վուր մեկ մեկու չըլին խափում, մե օր կա՞նա մարթ ապրի՛, կա՞նա վուտը վուտի առչիվը դնի՛։ Տո՛, ինչ գուզիս փե՛ղակ ասա, ինչ գուզիս ա՛ռուտուր ասա, մեկը կա՞ վուր առանց խափիլ յոլա ըլի տանում իր բանը՛։ Քա՞նի օրինակ գուզիս ասիմ... Հը՛մ, տո՛, հացը վուր հաց է, քուչումը ննգած վուր տեսնում իս, միխկ իս համարում գա՞նա, վիր իս կալնում, թե ինչ է, մարթու վուտի տակը չննգնի. կոսե. չէ՞ վուր սուրփ իս համարում։

ԻՍԱՅԻ

Բաս ի՞նչ է, ասծու տուրք է։

ԿԱՐԱՊԵՏ

Հա՛, յիս էլ էտ իմ ասում, է՞։ Աբա՛, հիմի էն ասծու տուրքի ծախողը ի՞նչ հանգն է խափում մի՞զ։ Ալուր իս ուզում մեյդնումն, ախպե՞ր, ինչ ասիս մեչը դուս է գալի. թխած իս առնում՝ կշռումը պակաս ին տալի. բաս հիմի քու մտքումը հաց թխողներուն պիտի խի՛խտին, է՞լի։ Էստու վրա վատթար խոմ մեկելնիրն ին ժաժ գալի։ Ամա փեշաքրերուն ու մանդրում ծախողներուն թողնինք, ասինք խիղճ մարթիք ին. խիղճը վուր հաց գողնա տուելու, միխկ չէ, կոսե։ Աբա՛, էս քու հարուստնիրն ի՞նչ ին անում, թեգուզ էս քու գրանիցի ապրանք ծախողնիրը. տեսնինք թե նրանցմեն վո՞ւրն է հալալ առուտուր անում։ Ասում ին էրկու շահի շահ առնիլը միխկ է, կոսե. նրանք կի մե գրոշի կարաքը վից աբասով ին ծախում. պո՛մադա է, կոսե... Ի՞նչ պոմադա, ի՞նչ փլավ. ի՞նչ փստան, դիփ խափիլ ու խափիլ. խափիլը էստուրը կոսին, թե գուզիս, չէ թե ախչիկ մարթու տալուն... Հը՞, ի՞նչ իս բերանդ բաց արի, սո՞ւտ իմ ասո՞ւմ։

ԻՍԱՅԻ, ուշի գալով։

Սուտ կի չէ, զուրթ իս ասում, Գարասիմ Յակուլիչ։

Դարձյալ նստում են։

ԿԱՐԱՊԵՏ

Վուր զուրթ իմ ասո՞ւմ, բաս տանին դիփունանցը խիխտին, է՞լի։ Ախչիկ մարթու տալն էլ մե փեշակ է. բաս վուրդի ախչկա տեր կա, նրանցն էլ հիդը խիխտի՞ն։ Իժում էտ ի՞նչ օրենք կուլի։ Միր քախկումը դրըստութենով բան չի շինվի. չէ՛, թեգուզ յիրգնուց հրիշտակ դեվեր գա. ինչի՞ր իս ասում դուն։ Տո՛, հիրու ո՛ւր իմ գնում—էս սահաթիս, ասինք, ինձմեն մե բան խլեցիր, էլ հիդ չիս տալի, մե խոսկով, ինձ աբիժատ արիր։ Գնում իմ դաղաստան իմ ուզում. ասում ին՝ զավթրի. զավթրեն գնում իմ, էլի ասում ին՝ զավթրի. էլի իմ գնում, էլի էն զավթրին ին ասում։ Տո՛, էս խափիլ վուր չէ, բաս ի՞նչ դարդուբալա է. բաս խափիլը վո՞ւնց գուզիս։ Հիմի քու թիլքով չինովնիկներուն էլ խիխտին դիփունանցն, է՞լի։ Էտենց վուր ասինք, էս ո՞ւր կէհա, է՞յ։ Բարեմց ասա՛, թե միր քաղաքը մեքաշ վիկալնին կրակ տան ու պրծնի՞ն... Իժում, չունքի քու մտկումը դուն շատ իստակ մարթ իս, մենակ քիզ համա բո՛լթա տու ու տեսնիմ թե վո՛ւնց իս ապրում։

ԻՍԱՅԻ

Խուրը վուր փիքը իմ անում, ախպեր, է՞, զուրթ վուր դրուստ մարթ խիստ քիչ կա միր քախկումը։

ԿԱՐԱՊԵՏ

Հա՛, Իսայի ջան, յիս էլ էտ իմ ասում, է՞, վուր ամեն բանումը խափում ինք ու խափում ինք։ Ուտելումը, խմելումը, հաքնելումը, մե խոսկով՝ նստում ինք թե վիր ինք կենում, պառկում ինք թե ման ինք գալի, յալիս ինք թե ծիծաղում, դիփ խափում ինք, խափում ինք ու խափում. մինք էլ դիփ խափած ինք ու խափած։ Գլխեմեն ինչրու վուտը սուտ է էս աշխարքը։ «Յիս ասացի ի զարմանալի իմում, ասում է, թե ամենայն մարթ սուտ է», կոսե։

ԻՍԱՅԻ

Վա՛յ միր միխկը, էտ խոմ էտենց է ու էտենց։

ԿԱՐԱՊԵՏ

Պրծավ, գնա՛ց... Ամա մե բան էլ ասիմ... Դուն չա՞սիր էս սահաթիս թե ախչկատ բանը չինեցի, կոսե՞... Վո՞ւնց չինեցիր, քիզ իմ հարցնում, փտնելով թե՞ գովելով։

ԻՍԱՅԻ

Հալբաթտա վուր գովեցի։

ԿԱՐԱՊԵՏ

Հիմի էտ խափիլ չէ՞։

ԻՍԱՅԻ

Վա՛, հեր օխնած, խափիլ էլ կա, խափիլ էլ. յիս մեքաշ գովիլ իմ, խոմ չիմ փտնի։ Ախչկա գովիլն ու էգեղեցի չինիլն, ասում է, մեկ է, ամա դուն սարքովի բանիր իս դարսում։

ԿԱՐԱՊԵՏ

Բաս գուզի՞ս քսան բան ասիմ, վուր դուն ըլիս սարքովի խափի մարթկերանցը։

ԻՍԱՅԻ

Է՛հ, լավ է, քու հարն օղորմի, բա՞դրոս էտունք է։

ԿԱՐԱՊԵՏ

Էտենց, ա՛յ... Յիս քիզ ասում իմ, ինձ մի՛ չգրեցնի...

ՏԵՍԻԼ Ը

ՄԱՐԳՐԻՏ, ԿԱՐԱՊԵՏ, ԻՍԱՅԻ

ՄԱՐԳՐԻՏ, դուրս գալով ձախ դռնից:

Մամի ջան, ձիզ ին մնում։

ԿԱՐԱՊԵՏ

Էս նմուտիս գալիս ինք։

Մարգրիտը դուրս է գնում ձախ դռնից։

ՏԵՍԻԼ Թ

ԿԱՐԱՊԵՏ, ԻՍԱՅԻ

ԿԱՐԱՊԵՏ, վեր կենալով, ձեռքը դնում է Իսայու ուսի վրա և խաղցր ձայնով:

Աստուած գիդենա, Իսայի, փիս մարթ չիմ։ Դուն լավ գիդիս վուր ախկրտին էլ իմ փուղ տալի, խղճին էլ իմ օտկում, պասս էլ չիմ կոտրում, ժամեմեն էլ հիդ չիմ ննգնի իմ օրումը. (Ձեռքը վերցնում է Իսայուց, որ իսկույն կանգնում է:) ամա աչ ու ձախ վուր հիդ իմ մտիկ տալի, ախպեր, մե՛կին չիմ տեսնում վուր ինձ չըլի խափի. յիս էլ նրանց հիդ էնենց իմ ժամ գալի։ Հիմի էս խափի՞լ է. խափիլ կի չէ. խիլք բանեցնիլ է. խի՛լք։ Բաս ինչե՞մեն է վուր ասում ինք, թե չուրը կու տանե ու ծարավ հիդ կու քիլե. կոսե. ի՞նչի վրա է ասած էս անդազեն՝ խա՞փելու վրա թե խի՛լքի վրա. քի՞զ իմ հարցնում։

ԻՍԱՅԻ

Հարցաթամա վուր խիլքի վրա։

ԿԱՐԱՊԵՏ

Հա՞, օղորմի քու հորը։ Կուլի Փռանգստուն էս անդազեն խափելու վրա իմանան... ամա միզ համա խիլք է ցուց տալի, խի՛լք... Ի՞նչ անիս, ախպեր. մեր քաղաքն էսենց է։

ԻՍԱՅԻ

Ցիս ու իմ հոգին. դրուստ իս ասում։

ԿԱՐԱՊԵՏ

Վուր դրուստ իմ ասում, գալիս է էլի իմ ասածը, վուր առանց խափիլ չէ ըլում... Տո՛, հիմի յիս ինչո՞վ իմ միղավուր վուր ախչիկս զիղմ է. ամա հալալ վուր ժամ իմ գալի, օչով վուր չէ ուզում, ի՞նչ անիմ... Ախպեր, քիմեն ինչ թաքցնիմ, յադ խոմ չիս... (Իսայու ականջին մոտենալով և ձայնը ցածրացնելով:) Ցի՛րիք ջեր տնդզիլ ին ու թողիլ ին, աստուած գիդենա։ Հիմի հազիր էտ տղեն տեսիլ է մեկ ու հավնիլ է. տո, բի՛, է՛, էգեբա աստուած խռովի ու նշանն էլ տա, է՛։

ԻՍԱՅԻ

Լավ իս ասում, Գարասիմ Յակուլիչ ջան, ամա, օրինակ, ասիմ՝ բելի ու բանը գլուխ չէկավ, էս խոմ ախչկատ բողազը դուս կտրվեցավ սաղ աշխարքումը։

ԿԱՐԱՊԵՏ

Տո՛, քիզ ի՞նչ. իմ ապրանքը չէ՞, փիե՛։

ԻՍԱՅԻ

Ի՞նչ իմ հոքում, ախպեր. վունցոր կոսիս, էնենց կու ժամ գամ, մինկն ու վարցկը քու շլնքին։

ԿԱՐԱՊԵՏ

Օղորմի քու հորը՛. էտենց ասա՛ ու պրծի։

ԻՍԱՅԻ

Բաս հիմի հոքեմես ձեռը վիկալնիմ ու խափով բերիմ, է՞լի։

ԿԱՐԱՊԵՏ

Արի՛ ու գիլի գլխին ավետրան կարթա՛. դրուստ խիլքի ախկատ է էս հեր օխնածը։ Տո՛, հոքեմետ ձեռն ո՞ւր իս վիկալնում, յա խափով ո՞ւր իս բերում։ Դուն էն տղին աղավարի ասա՛ իմ մագիներ, թե համեցե՛ք, ախչկաս վունցոր գուզիս տի՛ս իմ տանը, օչով էլ չի ըլի ասա՛. թե հավնի՛, ուզե, ախպեր, թե չէ՝ նա իր համա, իմ ապրանքն ինձ համա։ (Առանձին:) Թե մե վուտը կու տուն դնե՛։

ԻՍԱՅԻ

Հա՞, էտ օրինավուր իս ասում, Գարասիմ Յակուլիչ. հացը ուտինք, էս սահաթիս էվետ գնամ։

ՏԵՍԻԼ Ժ

ՆՐԱՆՔ, ՆԱՏԱԼԻԱ

ՆԱՏԱԼԻԱ, դուրս գալով ձախ դռնից և առանձին:

Քա՛, իմ բանը չլի՞ հեքիաթ անում։

Մոտենում է և ծածուկ ականջ է դնում։

ԿԱՐԱՊԵՏ, առանձին:

Զլիվ մե գոգրումը չնստեցրի՛։ (Իսայուն:) *Ի՞նչ իմ ասում, Իսայի. թե բանը դժարացավ, մե իմքին էլ ավելցո՛ւ, ջհանդամը նրա գլուխը, հիմի փուղ շատ ունիմ, ու ասա՛ էլ՝ թե էս գիշիր չի գա, էքուց ուզում իմ Կոչորինց տղին տա. խոսած ինք ու բանը քութահ արածի պես է։*

ԻՍԱՅԻ

Իժում ինչի՞ վունչիչ չէիր ասում։

ԿԱՐԱՊԵՏ

Էսօր առուտեհան իմ խոսի, հեր օխնած, վո՛ւրդի էի ասի։

ԻՍԱՅԻ

Վա՛, ափսուս չէ՞ իմ ասած տղե՞ն։

ԿԱՐԱՊԵՏ

Վուր ափսուս է ու չինե՛, էլի՛. քու լավութինն էլ կու վչարիմ։

ԻՍԱՅԻ

Էս սահաթիս էվետ. մե թիքա հաց ուտիմ ու գնամ։ Կես սահաթումը խարար բերիմ քիզ համար։

ԿԱՐԱՊԵՏ

Ակա՛, Իսայի ջան, ժա՛ժ ու մաժ արի։

ՆԱՏԱԼԻԱ, ուրախ:

Իմացա, իմացա, իմացա...

Կարապետը և Իսային զարմացած հետ են նայում և մնում են ապշած:

ԿԱՐԱՊԵՏ, վախեցած:

Ի՞նչ իմացար։

ՆԱՏԱԼԻԱ, ժպտալով:

Վուր Մարքրիտին նշնում իք։

ԻՍԱՅԻ

Տո՛, ի՞նչ սատանեք ին էս կնգդիքը։

ԿԱՐԱՊԵՏ

Ո՞ւմ վրա ինք նշնում։

ՆԱՏԱԼԻԱ, ժպտալով:

Վա՛, դուք էիք խոսում, յիս ի՞նչ գիդիմ։

ԿԱՐԱՊԵՏ

Բաս վո՞ւնչիչ չիմացար թե ով է՞...

ՆԱՏԱԼԻԱ

Աստուած գիդենա, վունչիչ. հենց էս սահաթիս տուն էկա վուր ասիք՝ թե նա չի ուզի, Կոչորինց տղեն հազիր է, կոսեն Ո՞վ է, ձիա ջան, գեթաղվա։

ԿԱՐԱՊԵՏ, առանձին:

Վունչիչ չէ իմացի։

ԻՍԱՅԻ, Նատալիային:

Թե էս սահաթիս չիմացար, չի ըլի քու բանն, ա՛յ։

ՆԱՏԱԼԻԱ, Իսայուն:

Գենացվալեքի, Իսայի ջան, ասա՛, ո՞վ է՞...

ԻՍԱՅԻ, առանձին:

Ա՛րի ու հիմի սրան դնչացու։

ԿԱՐԱՊԵՏ, Նատալիային:

Ցիս իժում կոսիմ քիզ, Նատալիա ջան, ամա Մարքրիտի մոդ վունչիչ չգիդենաս. գնանք չեր հաց ուտինք։ (Գնում են դեպի ձախ: Կարապետը վերադառնում է և վերցնելով գլխարկը, առանձին:) *Ակա՛, Գարասիմ Ցակուլիչ, հիմի դո՛ւն գիդիս։* (Նատալիային և Իսայուն:) *Վա՛, հա՛մեցեք, է՞։*

Դուրս են գնում ձախ դռնից, վարագույրն իջնում է:

ԱՐԱՐՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Հասարակ սենյակ Մասիսյանցի տանը երեք դռնով՝ աջ, ձախ և խորքում: Ձախ կողմում դրած է գորգով ծածկած և մուրճաճեռով զարդարած տախտ, իսկ աջ՝ սեղան, որի վրա դրված են մի քանի գրքեր և երկու արծաթափայլ աշտանակ հանգած մոմերի մնացորդներով: Ընդի խորքումը և սեղանի մոտ աթոռներ:

ՏԵՍԻԼ ԱԹԱՋԻՆ

ԳԵՈՐԳ, մենակ, բանկոնակով, սեղանի մոտ կանգնած է:

Զարմանալի բան. հանկարծ պատահեց և նորա տեսքը բավական էր ինձնից բնական հանգստություն խլելու։ Նորա գեղեցիկ դեմքը, նորա կրակոտ աչքերը, նորա այն մեղմ, սիրալիր ձայնը ինձ բոլորովին գրավեցին... Գեղեցկություն, ուսում, հարստություն. այդ բոլորը կա, բայց աղջիկը ի՞նչ աղջիկ է. ի՞նչ հասկացողության, ի՞նչ բնավորության տեր է. ի՞նչպես իմանամ... Ա՜խ, այս ի՞նչ սովորություն է, որ օտար աղջկա հետ խոսել և ծանոթանալ չէ լինում... Չէ՛, ի՛նչ կամենան թո՛ղ ասեն, իսկ ես մինչև լավ չճանաչեմ, (Աջ ձեռքով ճակատից իբրև մեկ բան է պոկում և հեռու գցում:) *մտքիցս հանում եմ և դեն եմ գցում... Այո՛, այո՛, վերջացավ... Այս բանի վրա այլևս չեմ մտածիլ...* (Նստում է և լուռ կարդում, ճանկարծ գիրքը գցում է սեղանի վրա:) *Ոչինչ չեմ հասկանում... Մտքիցս չէ հեռանում այն աղջիկը... Ի՞նչպես վախեցավ խեղճը... Ի՞նչպես դողալով ասաց՝ «ա՜խ, աստուծ, ինձմեն ի՞նչիք կամենում...»։ Պետք է վերջ դրած այս վրդովմունքիս, պետք է մի կերպիվ ծանոթացած նորա հետ... բայց ի՞նչպես։*

Խորը մտածմունքի մեջ է ընկնում՝ գլուխը ձեռքի մեջ առած:

ՏԵՍԻԼ Բ

ԳԵՈՐԳ, ՔԵԹԵՎԱՆ

ՔԵԹԵՎԱՆ, գուլպա գործելով դուրս է գալիս ձախ դռնից և նստում տախտի վրա:

Ի՞նչ իս խուրը փիքր անում, վուրթի. ո՞ւղում իս իմանա՝ թե փշի ծերն ո՛վ է սրի՞։

ԳԵՈՐԳ

Դրուստ ասեցիր, դեղի, որ խորն եմ փիքր անում։

ՔԵԹԵՎԱՆ

Դեղետ տանե ցավդ, վուրթի. ինչի՞ իս անմիդ նիղանում. աշխարքն էտենց էկիլ է, էտենց կէհա. մենակ դուն խոմ չիս յիրգրումը։

ԳԵՈՐԳ. վեր կենալով:

Էլ այդ բանի վրա չխոսենք, թե ինձ կսիրես։

ՔԵԹԵՎԱՆ

Ինչի՞, վուրթի, ինչի՞ չխոսինք, գենացվալոս դեղեն. փիս բան խոմ չիմ ասում. չէ՞ վուր քու լավն իմ ուզում... Ախչիկն օրինավուր ախչիկ, լավ մարթու վուրթի, սիրուն վուր ասում իս հատը չունե, ուսում առած ու էն դաղա փուղ ու բաժինք, ուրիշ էլ ի՞նչ իս ուզում. կիսին էլ արժանի չինք քու արիվը։

ԳԵՈՐԳ

Դիպ շատ լավ, բայց աղջկան որ չեմ ճանաչում. ախար մեկ տեսնելով ի՞նչպես ուզեմ։ Այս ի՞նչ երկիր է, տեր աստված. ո՞վ գիտե ինչ աղջիկ է։

Նստում է և ծխախոտ ծխում:

ՔԵԹԵՎԱՆ

Դուն պրծնիս ամեն ցավեմեն, վուր էնենց սիրունութինը չին գովում էն ախչկանը, վունցոր խասիաթը. էրնեկ չի ըլի քի պես մե յիս էլ տեսիլ ըլիմ ու հիդը խոսիլ, վուր ուփրո դրուստ խոսիմ. ամա ի՞նչ անիմ, վուր էրեգվան դեսն իմ իմանում թե աշխարքումը Զամբախինց ախչիկ էլ կա։

ԳԵՈՐԳ

Լա՜վ... ուրեմն ի՞նչ է. աչքերս խփած գնամ ջո՞ւրն ընկնե՞մ։

ՔԵԹԵՎԱՆ

Էն օրը մահ ըլի Քեթևանի գլխին. էտ վո՞ւնց իս ասում, վուրթի։

ԳԵՈՐԳ

Այդպես է դուրս գալիս, ուրիշ ի՞նչ ասեմ։

ՔԵԹԵՎԱՆ

Ինչի՞, վուրթի, աշխարքը հարց ու փուրցով է։ Իսայուն կու ճանչնաս, դուն իս ասում թե սուտ խոսիլ չի գիդի ո՜։ մե կոմեն էլ միր ասկականները դիփունքը խեիրաթ ին տեսնում։ Մե իմ քուր Խամփերուն չիմ տեսի, նա էլ հորես գու քա, ապսպրիլ իմ. նա դիփունանցը կու ճանչնա։

ԳԵՈՐԳ

Է՜հ, մեկ դրուստ խոսողն էլ նա է։

ՔԵԹԵՎԱՆ

Ինչոր գուզե ըլի, է՛լի մե իմքին կու իմանանք ու էտումեն դենը խիստ շատ հարց ու փուրցն էլ լավ չէ, վուրթի։ Ո՞վ գիդե, էգեբա դուշման էլ ունենանք, կուլի դասիդի էլ քարուքանդ անին բանը։ Խաչը գիդենա, շատի ջիգրն էլ է գալի, վուր քիզ էտղադա փուղի ին տալի։

ԳԵՈՐԳ, վեր կենալով։

Է՜հ, դեղի ջան, փողի անունը որ չխաղար այս գործի մեջ, ավելի լավ կլիներ, հավատա՛ ինձ։ Ես կարծում եմ, որ հենց այդ փողն է շշկլացնում մեզ ամենքիս... (Բեմի մի ծայրից մյուսն է անցնում։) *Ես հավիտենական քնկեր եմ ուզում ինձ համար, փողի պատճառով գլուխս խոմ չե՞մ ծախիլ։*

ՔԵԹԵՎԱՆ

Ինչի՞ իս փուղի խաթիր գլուխդ ծախում, վուրթի. ննգիրտ էլ վուր լավն ըլի ու փուղն էլ շատ, բո՜ղոգիտ կու կանգնի՜։ Ջեր ջեհել իս, վուրթի. լավ գիդացի վուր առանց փուղ օչով օչովի ախչկան չէ ուզում։

ԳԵՈՐԳ, կանգնելով մոր առաջ։

Ուրեմն ի՞նչ կհրամայես, մեկ ասա՜։

ՔԵԹԵՎԱՆ

Ի՜նչ պիտի հրամայիմ, վուրթի. աստրձուքինը ռաստ է բերի, մեկ տեսիլ իս, հավնիլ իս, էլ ի՞նչը պիտի տեսնիս։ Հենց գիդիս վրա ու վրա տնդդիլը լա՜վ բան է՜. մեկ էլ տեսար աճկդ խափս էրիտ ու բանը մոշլա էլավ. էս խո ախչկա բողազը դուս կտրվեցավ, գնա՜ց. դրուստ մահացու միխկ կուլի, քու արիվը. ով գիդե իժում խղճի գլխին ինչ գա... Չէ՜, չէ՜, վուրթի, դուն իմը լսե՜, հորես Իսային գու քա, էրեսդ խեչը հանե ու գնա՜ դեմ ու դեմը նշանը տո՜։

ԳԵՈՐԳ, զայրացած։

Որ սպանես էլ, դեղի, չեմ կարող. մինչև գոնե մեկ անգամ էլ հետը չխոսեմ ու նորա խոսակցությունը չլսեմ, բոլորովին չի լինիլ այդ բանը, թեև մեկ միլիոն էլ տան։

ՔԵԹԵՎԱՆ

Թե ասում իս, վուր հիդը խոսիլ էլ իս, ուրիշ ի՞նչ պիտի խոսիս։ Գիդենաս վուր էտ էլ մե մինձ բախտ է, վուր էտենց ռաստ է էկի. հազրենը մեկին չի պատահի էտենց։

ԳԵՈՐԳ

Է՜հ, այն ի՜նչ խոսելու հաշվումն էր։— Խո՜սել ե՜ս։

ՔԵԹԵՎԱՆ

Ի՜հ, լավ է, գենացվալոս դեղեն, սիրտս մի՜ շուռ տա. աքա էտ խո՞սկ է վուր դուն իս ասո՜ւմ։ Նշնելու ախչիկը վուր գիդենա թե իրան պիտի ուզիս, էլ իր ձենը կու իմաց անե ջի՜ղ։

ԳԵՈՐԳ

Եթե նա էլ այն աղջիկներից է, որ ինձ հետ խոսակցությունը պետք է սկսի միայն հարսանիքի մյուս օրը, թո՜ղ չնեղանա, ես նորա ուզողը չեմ... Մեկ տիկինի պես բերեն, նստացնեն կողքիս և ամբողջ ժամերով լուռ ու մունջ մնա, իբրև թե փայտի կտոր է, միայն դեմքն ունենա մարդու, ուրիշ ոչինչ։— Օրիո՜րդ, հաց կամենո՞ւմ եք։ (Ներկայացնելով երևակայական օրիորդին, գլուխը բացասական շարժում է։)— *Օրիո՜րդ, ջուր կամենո՞ւմ եք։* (Նույն խաղը։)— *Ուրեմն ի՞նչ եք կամենում, օրիորդ։* (Աչքերը վայր թողնելով, երևակայական օրիորդի պես ամոթանքարվում է։) *Ես կտրաքվեմ խո։* (Քեթևանը ծիծաղում է։) *Ծիծաղի՜ր։ Տասն անգամ լավ է ինձ խեղդելու տանեն, քան թե այդպիսի բանի հանդիպեմ... էլ ինչո՞ւ համար է նորա ուսումը, եթե իրավի ուսում առած է, ինչպես Իսային ասում է։*

ՔԵԹԵՎԱՆ

Ի՞նչ գուզե ուսում առած ըլի, վուրթի, միր հաու նամուսավուր ախչիկն ուրիշ է։

ԳԵՈՐԳ

Էհ՛, նա՛մուս... Մի՞թե նամուսն ու ամոթը նորանումն է, որ մարդ մարդու հետ չխոսի։ Այսպիսի էլ ժողովուրդ կլինի՞ աշխարհիս երեսի՞ն. հագուստը նոր, կերակուրը նոր, շինությունները նոր, մոդաները նոր և նոր, իսկ հասկացողությունը էլի է՛ն, էլի է՛ն, էլի է՛ն... Մարդ կգժվի այստեղ, ճշմարիտ։

ՔԵԹԵՎԱՆ, հեղացած:

Էլ քու գլուխ չունիմ. գնա՛ ինչ գուզիս արա... Վի՛հ, գենացվա՛։

ԳԵՈՐԳ

Փառք աստուծո, հենց դորանից պետք է սկսեիր... (Նստում է մոր կողքին:) *Դու մեկ երկու շաբաթ համբերիր, դեդի. ինչպես և լինի ես անպատճառ կծանոթանամ այն աղջկա հետ և այն ժամանակ կտեսնենք։*

ՔԵԹԵՎԱՆ

Ա՛խ, վուրթի, ինչի՞ր իս ասում. ախար քի մոդ օրթում չկերա՞վ Լրեգ Իսային, վուր չուրս-հինգ տանեմեն գժված ուզումին էն ախչկա՞ն... Ի՞նչ աղանչաք պաղանտաքով կոտրիլ իմ, վուր էս էրկու օրը մուլափ տան... Խիլք ունիս ձեռնեմետ մի՛ թողնի, թե չէ վիրչը դառ ու դարդակ կու նստիս, աստուձ գիդենա։

ԳԵՈՐԳ, վեր կենալով և բարկացած:

Ո՛ւմ ուզենան, թո՛ղ տան, էլ ես կին չեմ ուզում բոլորովին... Ոտս կոտրվել էր և երեկ այն թաղովը չէի անցկացել... Մարտիրոսյանցի տուն չդառավ ինձ համար, ցավ դառավ, է՛լի։

ՔԵԹԵՎԱՆ, երկար լռությունից հետո:

Է՛հ, վուրթի՛, ջեհել օրս խավրեցրիլ իմ քիզ համա, ումբրս սիվցրիլ իմ, գիշիր ցերեկ լենքտ ու էրգենքտ չափիլ իմ, բերիլ իմ մարթ իմ շինի ու վիրչը՝ մե քու թագին ու փսակին էլ չի՛ս արժանի անում ի՞նձ։

ԳԵՈՐԳ

Ա՛խ, դեդի, վերջացրո՛ւ թե աստված կսիրես։

ՔԵԹԵՎԱՆ

Էտենց կուլի, վուրթի, հալբաթ իմ ճակտին էտ էր գրած, վուր էլ լավ օր չտեսնիմ։

ԳԵՈՐԳ

Օ՛հ, աստված...

ՔԵԹԵՎԱՆ, աչքերը սրբելով:

Ջարչարանքով ապրիլ իմ ու մեռնելիս էլ քու դարդը պիտի տանիմ հիդս. վուրթի։

ԳԵՈՐԳ

Էլ չեմ կարող դիմանալ... (Բարկացած գնում է մինչև աջ դուռը, հետո վերադառնում:) *Դու գիտես որ ես քեզ շա՞տ եմ սիրում, դեդի. կյանքս չեմ խնայիլ քեզ համար, եթե հարկավոր լինի. բայց այս գործը քո գործը չէ, դու իզուր ես նեղանում... Օ՛հ, գլուխս սկսեց ցավել, ճշմարիտ. դուրս գնամ մի փոքր ինձ հովի տամ։*

ՔԵԹԵՎԱՆ, վեր կենալով:

Գնա՛, վուրթի, գնա՛. գնա՛ մե քիչ ման արի։ Օղունդ քու գլուխը չցավի, թո՛ղ իմ գլուխը քիզ չարի փուխ ըլի։

ԳԵՈՐԳ

Ա՛խ, իմ բարի, իմ քաղցր դեդի ջան, քո երախտիքը ես երբեք չեմ մոռանալ, ես քեզ շատ եմ պարտական... (Ժպտալով:) *Մի՛ վախենար, դեդի, դու իմ թագը շուտով կտեսնես։*

ՔԵԹԵՎԱՆ, գրկում է Գեորգին:

Գենացվալոս դեդեն, վուրթի։

Պատկեր։

ՏԵՍԻԼ Գ

ՆՐԱՆՔ, ԻՍԱՑԻ

ԻՍԱՑԻ, մտնելով խորքի դռնից:

Բարի իրիգուն ձիզ։

ՔԵԹԵՎԱՆ

Ասծու բարին, պարուն Իսայի։

ԳԵՈՐԳ

Բարև, Իսայի։

ԻՍԱՅԻ

Փառք աստծու, մե դեդա ու վուրթի տեսա էլի մեկսմեկու փաթթած. էրևում է ասծու աճկը չէ հիռացի միր ջահկեմեն։

ՔԵԹԵՎԱՆ

Հա՛, իմ վուրթին ինձ խիստ է սիրում։ Համեցե՛ք նստի, Իսայի ջան։

ԻՍԱՅԻ

Լավ տղա ունիս, դեդի ջան. աստուծ զորացնե։ (Գեորգին:) *Աբա՛, Գիորգի ջան, ի՞նչ իս տալի, վուր քիզ ուրախացնիմ։*

ԳԵՈՐԳ

Էլի նոր բան կա՞։

ԻՍԱՅԻ

Նուրն էն է, վուր Գարասիմ Յակուլիշն էկիլ է, ուզում է քիզ տեսնի։

ԳԵՈՐԳ, զարմացած:

Նա՛ այստե՞ղ. ա՛յ բան... Գնա՛ ասա՝ շնորհ բերե, խնդրեմ։

Դուրս է գնում աջ դռնից:

ՏԵՍԻԼ Դ

ՔԵԹԵՎԱՆ, ԻՍԱՅԻ

ՔԵԹԵՎԱՆ

Ո՞ւր է Թարժաժ էլի, գինացվալերի։

ԻՍԱՅԻ

Ա՛յ, դեդի ջան, էլախտ էն քու պարուն տղեն ինձ կտրականն ասավ, վուր ինչրու Գարասիմ Յակուլիշին չճանչնենամ, նրա տուն վուտս չիմ կանա դնի, կոսե. յիս էլ հիդ ասի։ Ուզում էի տանս մե լավ ճաշ սարքի, վուր է մեկսմեկու ռաստ բերիմ. ամա չունքի շտապով բան է, էն խիղճ մարթը մե բաշ գդակը վիկալավ ու էկա՛վ։ Ճամփին դիփ էն էր ասում՝ թե խոնարութինը ասծու դուրեկան բան է, կոսե, ու հիմի դուսը մնում է։

ՔԵԹԵՎԱՆ

Վո՛ւյ իմ աճկին, դուսն ո՞ւր իս թողի։

ԻՍԱՅԻ

Տուն էկա վուր դոկլադ անիմ։

ՔԵԹԵՎԱՆ

Գնա՛ չուստ, Իսայի ջան, խնդրե՛ վուր շնուր բերե. ամութ է, ի՞նչ կոսե էն մարթը։

ԻՍԱՅԻ

Էս սահաթիս։

Դուրս է գնում դիմացի դռնից, իսկ աջից մտնում է Գեորգը սև սերթուկով:

ՏԵՍԻԼ Ե

ՔԵԹԵՎԱՆ, ԳԵՈՐԳ

ԳԵՈՐԳ

Ջե՞ս զարմանում, դեդի։

ՔԵԹԵՎԱՆ

Աբա՛, վուրթի, տի՛ս ինչ խոնար մարթ է էլի։

ԳԵՈՐԳ

Շատ լավ, բայց այդ ի՞նչ է նշանակում։

ՔԵԹԵՎԱՆ

Բախտն էկիլ է, գռանդ չոքիլ է, վո՛ւրթի՛։

ՏԵՍԻԼ Զ

ԵՐԱՆՔ, ԿԱՐԱՊԵՏ, ԻՍԱՅԻ

ԿԱՐԱՊԵՏ, մտնելով խորքի դռնից:

Բարի իրիգուն ձիզ։

ՔԵԹԵՎԱՆ

Ասծու բարին. համեցե՛ք։

ԻՍԱՅԻ, որ հետևում էր Կարապետին, վերցնում է նրա վերարկուն, ձեռնափայտն ու գլխարկը և առաջ գալով:

Ա՛յ, դեդի ջան, էս է իմ ասած մարթը. էս էլ, Գարասիմ Յակուլիչ, իմ գոված տղեն. էլ անումն ու ասկն ի՞նչ ասիմ, իսում դուք էլ լավ գիդիք։

Կարապետի իրեղենները դարսում է դիմացի դռան մոտ դրած աթոռի վրա:

ԳԵՈՐԳ, առաջ գնալով, Կարապետին ձեռ է տալիս:

Շատ ուրախ եմ... Նստեցե՛ք խնդրեմ։

Աթոռ է առաջարկում:

ԿԱՐԱՊԵՏ

Շատ ապրիս, վուրթի. (Աջ և ձախ հայելով:) *ամա համարցակութինս բա՛խշեցեք. վուր դեմ ու դեմն էկա, ձիդ թարժած արի։*

ԳԵՈՐԳ

Ի՞նչ եք հրամայում, պարոն, դուք մեզ բոլորովին պարտավորեցնում եք։ (Աթոռը ցույց տալով:) *Հրամայեցե՛ք, խնդրեմ։*

ԿԱՐԱՊԵՏ, ողջունելով Գեորգին և կիսաձայն:

Շնորակալ իմ, վուրթի։ (Քեթևանին, նստելով:) *Նիղութին չտամ ասի, իմ քուր... Վա՛, համեցե՛ք, է՞։*

Ամենքը նստում են՝ Քեթևանը տախտի վրա, իսկ մյուսները աթոռների վրա, այնպես որ Կարապետը գտնվում է Քեթևանի և Գեորգի մեջտեղը, բայց սրանից ձախ և փոքր ինչ հեռու՝ Իսային:

ՔԵԹԵՎԱՆ

Էտ ի՞նչ խոսկ է, պարուն, վուր դուք իք հրամանք անում։ Դո՛ւք բախշեցեք իմ տղին, վուր ինչրու էտի նիղացրուց ձիզ։

ԳԵՈՐԳ

Իմ մայրը մի փոքր սխալվում է, պարոն. ես բոլորովին միտք չունեի ձեզ այդքան նեղություն տալու, բայց և շատ ուրախ եմ որ ձեզ մեր տանն եմ տեսնում այժմ և միջոց եմ գտնում ձեզ հետ ծանոթանալու։

ԿԱՐԱՊԵՏ

Ապրիս, վուրթի, ապրիս։

ԻՍԱՅԻ

Աբա՛, Գարասիմ Յակուլիչ, սո՞ւտ էի ասում վուր գիդուն է՞։

ԳԵՈՐԳ, Իսայուն, դժգոհ։

Ի՞սայի...

Գնում է սեղանից թաշկինակը վերցնելու։

ԿԱՐԱՊԵՏ

Իմ թամահութինն էլ դրա ուսումն է. Իսայի, թե չէ դուն լավ գիդիս ուզողնիր շատ կան։ (Քեթևանին:) *Շատ լավ տղա իս ունեցի, դեդի ջա՛ն, խիստ էլ գովում ին.. Հերն էլ լավ մարթ էր. օղորմած հոքին... իմը լավ բարեկամ էր... հայիփ վուր վաղ փչացավ։*

ՔԵԹԵՎԱՆ, խորը հոգոց հանելով:

Է՞հ...

ԿԱՐԱՊԵՏ, շարունակելով:

Ամա էլի փառք տո՛ւ աստծուն, դեդի, վուր էս հանգի մխիթարութին է թողի քիզ համա։ (Գեորգին, որ վերադառնում է իր տեղը:) *Շատ ապրիս, վուրթի, շատ... Իմացա վուր մորդ պատիվն էլ չիս մոռանում. Իսային ասավ հիմի։*

ԳԵՈՐԳ

Ես միայն իմ պարտականությունն եմ կատարում դեպի ծնողս։

ԿԱՐԱՊԵՏ

Զորանաս, վուրթի։ Հորն ու մոր պատիվ տալը ասծու պատվիրանք է։

ԳԵՈՐԳ

Իհարկե։

ՔԵԹԵՎԱՆ

Աստուած քու վուրթկերանց պատիվն էլ անպակաս անե քիմեն։

ԿԱՐԱՊԵՏ

Էտ ասա՛, դեդի ջան. սերն ու պատիվն անց էլ ի՞նչ պիտի տան միզ միր վուրթիքը։ Է՞հ, փառք աստծու, զարթնի մե ախչիկս մնացածները չեր էրեխերք ին. ամա ումիկ ունիմ ասծեմեն վուր նրանք էլ իրանց մինձի պես խոնար ու պարկիշտ դուս կանգնին։

ՔԵԹԵՎԱՆ

Աստուած քիզ բախշե մինձիտ էլ ու պստկներուտ էլ։

ԿԱՐԱՊԵՏ

Աստուած սրան էլ (Մատնացույց անելով Գեորգին:) *քիզ բախշե։ Ղուրթ է, ջեր իրան լավ չիմ ճանչնա, ամա շատ խելոք է ժաժ գալի։*

ԳԵՈՐԳ

Օ՛հ, պարոն, ես այդքան գովասանության արժանի չեմ։

ԿԱՐԱՊԵՏ

Բաս ո՞վ է արժանի, վուրթի, վուր դուն չիս։ (Քեթեանին:) *Քու արիվը, քեփս էկավ վուր Իսային ասավ՝ թե էնդուր չէ գալի ինձ մոդ, վուր ջեր ինձ չէ ճանչնում... Ցիս էլ իմ մտկումն ասի, թե չունքի սա լայիղ չէ անում ինձ մոդ գալը, յիս կէհամ Ավետրանի խոսկը կատարեցի, վուր ասում է, թե՝ «եվ որ իր անձը կու խոնարեցնէ, ասում է, նա բարձրացուցանէ իր հոքին» կոսե։*

ԻՍԱՅԻ, Գեորգին։

Տի՛ս՝ ինչ մարթ է։

ԿԱՐԱՊԵՏ

Վադ խոմ չի՞մ ժաժ էկի, վուրթի, վուր էկա։

ԳԵՈՐԳ

Ընդհակառակը, պարոն, մեզ հատուկ բախտավորացրիք ձեր գալովը։ Բայց ինչո՞ւ եք կարծում, որ ես արհամարհեցի ձեր տունը. իբրև անծանոթ՝ դժվարանում էի գալ։

ԿԱՐԱՊԵՏ

Խիստ դրուստ իս ասում, վուրթի. ամա դեմ ու դեմը խոսինք, ի՞նչ իս ուզում ինձմեն, մե ասա՛, հենց ապրիս... Ախչկաս տեսիլ իս, հավնիլ իս, հիմի զնակոմիտ էլ իս ուզո՞ւմ... ջուխտ աճկիս, յիս թաքցնելու ապրանք չունիմ։

ԳԵՈՐԳ

Շատ շնորհակալ եմ, Գարասիմ Յակուլիչ։ Ճշմարիտն ասեմ, ես ձեր և ձեր աղջկա մասին շատ գովասանքներ եմ լսել... (Իսային առանձին երեսը խաչ է հանում:) *և կարելի է մեր ցանկությունները կատարվեն, եթե ի հարկե մենք միմյանց հավանենք։*

ԿԱՐԱՊԵՏ

Քու բանը դուն գիդիս, վուրթի, ամա իմ ախչիկը վո՛ւնց չի հավնի քիզ։

ԻՍԱՅԻ, առանձին։

Վա՛հ, ջանն էլ չի վազի՞։

ԳԵՈՐԳ

Այդ հետվա բան է, Գարասիմ Յակուլիչ։

ՔԵԹԵՎԱՆ

Էլ մի՛ էրգարացնի, վուրթի. ամութ է, քու արիվը, էս պատվական մարթուն էլ էս դադա նիղացնում իս։

ԳԵՈՐԳ

Ա՛խ, մայր...

ԻՍԱՅԻ

Ցիս ու իմ հոքին դրուստ իս ասում, դեդի ջան։

ԿԱՐԱՊԵՏ

Չէ՛, ինչի՞, դեդի ջան, շատ լավ է խոսում քու տղեն. ախչիկս էլ սրա հանգն է մինձացած ու բախտավուր է, վուր սրա պես տղի է ռաստ գալի... էրևում է վուր իր համա սրտի ննգիր է պտռտում, չէ թե փուղ ու բաժինք։

ԳԵՈՐԳ

Շատ ուղիղն եք հրամայում, պարոն. փողի համար ամուսնանալը, իմ կարծիքով, շատ անվայել բան է։

ԿԱՐԱՊԵՏ

Ախար իմացել էի էս հանգի տղա է, վուր յիս էլ էսենց դայիմ իմ կպի, է՛... Աստուած գիդենա, դեդի, յիս մենակ փեսութենով չիմ ուզում սրան... Աշխարքի բան ու գուրձ ունիմ։ Վուրթիքս, էլախտ էլ ասի, պստրկնիր ին ու քաղաքը էնենց է դառի վուր էլ օչովու ավտալ չէ ըլում... Սրա ղալամը թանգ ածե ինձ համա, դեդի... Իմ կայինքին յիս չիմ կանացի աճկը հասցնի՛, թո՛ւղ սա կառավարե. միթամ իրը չի ըլի, թե ի՞նչ... Արի՛, վուրթի, արի՛, չէ թե մե անգամ, տասն անգամ. հիդը նստի՛ էլ, վիկացի՛ էլ. գուզիս հայերեն խոսի՛ հիդը, գուզիս ռուսերեն. փռանցուցեվար էլ իմա-

նում է, ամա չեր համարցակ չէ կանացի. պորտուպիանը խում, մե՛ պոլ-
կեք ու վալցիր կոծե, քու արիվը, վուր քեփդ գու քա։ Աշխարքի փուղ իմ
մխսի վրեն. չեր Ֆավրի պենցիոնումը. իժում տանը։ Արի՛՝ էսօր, էքուց,
էլօր, յիփոր մե խոսքով քեփդ տա, գուզիս մե շափաթ, գուզիս էրկու շա-
փաթ, թե հավնի՞ս նշանը տո՛ւ, վուրթի, թե չէ ու՝ դուն քիզ համա, իմ
աչչիկն ինձ համա՞։

ԳԵՈՐԳ

Դուք ձեր խոսքերով ինձ բոլորովին գրավում եք, Գարասիմ Յակուլիչ։
իմ խնդիրն էլ հե՛նց այդ է։

ԻՍԱՅԻ

Թե՞ ասում էիր, Գարասիմ Յակուլիչ, վուր թե էս մե էրկու օրումը չի
ըլի, թո՛ղ իսկի էլ չըլի, կոսե, աչչկաս անումը չկոտրվի, կոսե, ու հիմի
էրկու շափաթ վա՞դա էլ իս տալի՞. ախար ինձ սուտ մի՛ դուս բերի սրանց
մոդ, է՞։

ԿԱՐԱՊԵՏ

Սուտ ինչի՞ իս, ախպեր, իմ խոսկն է՝ թե էս օրերումը բանը չի վիր-
չացնի, է՛լի վուր չէլած է ու չէլած, ու թե շնուր կու բերե ու աչչկաս էլի
էնենց կու հավնի, վունցոր մեկ հավնիլ է, ի՛նչ իմ հոքում, յիփոր ուզե-
նա, էն չախը նշանը տա... Վուր իմ ապրընքեմեն ումիկ չունենամ, խում
էսենց էլ չիմ ժաժ գա։

ԳԵՈՐԳ

Հատուկ պարտավորում եք ինձ, Գարասիմ Յակուլիչ։

ԿԱՐԱՊԵՏ

Ինչ ասի, արխային կացի, վուրթի ջան, փե՛սա ջան։

ԳԵՈՐԳ, ժպտալով։

Է՛հ, պարոն, դեռ վաղ է ինձ փեսա կանչելը. այդ շատ հեռու գնացիք։

ԿԱՐԱՊԵՏ

Բաս ի՞նչ իս, վուրթի, վուր փեսա չիս. դուն հենց գիդիս, թե հի՞մի
պիտի դառնաս իմը փեսա՞։ Չէ՛, վուրթի, էս բանը մարթու բան չէ, յիրգն-
քումն է շինվում։

ԻՍԱՅԻ, նայելով դեպի երկինքը։

Մեռնիմ նրա զորութենին։

ԿԱՐԱՊԵՏ

Աստծու կամքը վուր չէր էլի, վուրթի, էրեգ իմ աչչկան չէիր ռաստ
գա քուչումը։

ՔԵԹԵՎԱՆ

Փուխ էհամ նրա օղորմութենին։

ԻՍԱՅԻ, Կարապետին։

Վո՞նց թե քուչումը, թե կոսե դռանն է տեսի։

ԿԱՐԱՊԵՏ

Հա՛, իժում իմացա վուր մոդիկ մաղազիումն է էլի իր դեդիդի հիդ։

ԳԵՈՐԳ

Չէ՛, ես նրա հետ միայն մեկ փոքրիկ ծառա տեսա։

ԻՍԱՅԻ, Կարապետին։

Դուք փուքր ծառա չունի՞ք, Գարասիմ Յակուլիչ։

ԿԱՐԱՊԵՏ

Հա՛, չէ... դեդիդի պստի բիջն է էլի։

ԻՍԱՅԻ

Իժում պստի բջի արով թո՞ղնում իս դուսը աչչկատ։

ԿԱՐԱՊԵՏ

Թե վուր ասի վուր իր դեդիդի հիդ է էլի, օխնած հոքի. նա էլ ճամ-
փեմեն ուրիշ տիդ է գնացի... է՛հ, բախշեցե՛ք, (Վեր կենալով։) գլխա-
ցավութին տալի ձիզ։ (Ամենքը վեր են կենում։) Հիմի դուն գիդիս, վուրթի,
յիփոր շնուր կու բերիս. ինձ համա մինձ ուրախութին կուլի։ (Գեորգը ող-
ջունում է։) Ամա թե աստուծ կու սիրիս, վիզիտներեմեն ձե՛ռը վիկալ...
էնենց, իրիգնապահը, էս օրերումը, յիփոր քեփդ տա... Գիդիս փողոցի
մարթիք ինք, վուրթի, ցերեկով դիփ բանումն ինք։

ԳԵՈՐԳ

Շատ լավ, շատ լավ։

ԿԱՐԱՊԵՏ

Աբա՛, յիփը մնամ քիզ, վուրթի։

ԳԵՈՐԳ

Երբ կամենաք, ես այս օրերս բոլորովին ազատ եմ։

ԿԱՐԱՊԵՏ

Գիդիս ի՞նչ է, վուրթի, արի՛ ցերեմոնիեքը դենը թողնինք, հենց էսօր էվետ չայու վրա համեցեք ինձ մոդ... Ըա՜, ի՛նչ կոսիս, լավ չիմ ասո՞ւմ։

ԳԵՈՐԳ

Ինչու չէ, մեծավ ուրախությամբ, Գարասիմ Յակուլիչ։

ԿԱՐԱՊԵՏ

Բաս կու մնամ քիզ, վուրթի. Իսայու հիդ մետի շնուր կու բերիք... էտենց... (Գեորգին ձեռ է տալիս։) *Բա՛րով մնաս ու բարո՛վ գաս...* (Քեթևանին։) *Դուք էլ բա՛րով մնաք, դեդի. աստուած վիրշներուս բարի անե։*

Իսային հագցնում է Կարապետի վերարկուն և տալիս է նրան գլխարկն ու ձեռնափայտը։

ՔԵԹԵՎԱՆ

Շնորհակալ ինք, ջափա քաշեցիք... Աստուած ձիր մե օրը հազար անե, վուր իմ վուրթու սիրտը հանգստացրիք։ Իմ անտիս քվիրը շատ հարց ու բարով կոնիք իմ մագիեր։

ԿԱՐԱՊԵՏ

Ջուխտ աճկիս, մնա՛ք բարով։

ԳԵՈՐԳ, ճեռը գնալով մինչև դուռը։

Գնա՛ք բարով։

Կարապետը դուրս է գնում խորմի դռնից։

ՏԵՍԻԼ Է

ՔԵԹԵՎԱՆ, ԳԵՈՐԳ, ԻՍԱՅԻ

ՔԵԹԵՎԱՆ

Գնա՛ ու գնա՛, վուրթի, բախտավուր իս էլի։

ԳԵՈՐԳ

Աստված տար որ այդպես լիներ։

ԻՍԱՅԻ

Հը՛, վո՞ւնց է Իսայու բերած խաբարը. հի՞մի էլ փիս մարթ ի՞մ։

ԳԵՈՐԳ

Շատ լավ մարդ ես, Իսայի ջան, հիմի տեսնենք աղջկան ինչպես կհավանենք։

ԻՍԱՅԻ

Է՛հ, գլխեմեն մի՛ կցի, քու հորն օղորմի. հավնած էլ է, ու պրծած էլ։

ԳԵՈՐԳ

Լա՛վ, լա՛վ, կտեսնենք։

ԻՍԱՅԻ

Էլ ի՞նչ տեսնինք, ախպեր. աճկով տեսածիտ չիս ավտո՛ւմ, արի՛ հիմի անդճոլդ իմացի։ Դուն ինձ ասա՛, էն հանգի հոր վուրթին վա՞դը նուլի՞։

ԳԵՈՐԳ

Ոչմարիտ որ զարմանալի մարդ է եղել Գարասիմ Յակուլիչը... Ես նորան սիրեցի։

ԻՍԱՅԻ

Բաս չիս էլ ի՞նչ էի ասում։

ՔԵԹԵՎԱՆ

Հալբաթ աստուած քու հոր վարցկն է վչարում, վուրթի, վուր քիզ համա նուր մեկանց էտ հանգի հեր է ղրգում... խիղճ օղորմած հոքու խոսկ ու ջուղաբն ունե դրուստ. կոսիս թե խնձուրը կես իս արի... (Աչքերը սրբելով։) *Ինչ անիս, պիտի ջրատարը սաղ էր էլի, վուր նա էլ ուրախացել էր։*

ԻՍԱՅԻ, ձեռը բարձրացնելով։

Նրա հոգին էնդի իմանում է դիփ, դեդի։

ՔԵԹԵՎԱՆ

Նա բարեխոս ըլի Գիորգուս համա, թե չէ իմ միղավուր բերնով չիս ի՞նչ արժանի իմ։

ԳԵՈՐԳ

Սիրտդ ուրախ պահիր, դեդի ջան, աստված ողորմած է։

ՔԵԹԵՎԱՆ

Ամբրով կշտանաս, վուրթի։

ԳԵՈՐԳ, գնալով։

Իսկույն, Իսայի ջան։

Դուրս է գնում աջ դռնից։

ՏԵՍԻԼ Ը

ՔԵԹԵՎԱՆ, ԻՍԱՅԻ

ԻՍԱՅԻ

Գո՛հանամ քիզ աստուած... Բախտավուր կնիկ իս, դեդի, էս հանգի վուրթի ունիս. հիմիկվան տղերքն իրանց ծնողներուն էլ էտենց չին սիրում, վունցոր Գիորգին քի սիրում է։

ՔԵԹԵՎԱՆ

Մեռնիմ նրա արևուն, զարթնի նրան ո՞վ ունիմ աշխարքումը. վից տարեկան էրեխա մնացիլ է ձեռիս, իմ շունչն ու կենթանութինը նա է էլի։ Համեցե՛ք նստի, Իսայի ջան, հորևս շուրը կու հաքնե. յիս էլ մե Փեթխային իմ ուզում դիվիր գնա. նրա օղորմութինը. փրկե ու ազատե իմ Գիորգուն ամեն ցավեմեն։

Մի քանի քայլ գնում է։

ԻՍԱՅԻ

Քու բարի աղոթկն ըլի դիփունիս վրա, դեդի։

Նստում է սեղանի մոտ, խորշի դռնից մտնում է Խամփերին դաքիքայով։

ՏԵՍԻԼ Թ

ՆՐԱՆՔ, ԽԱՄՓԵՐԻ

ՔԵԹԵՎԱՆ

Օ՛հ, լուսը քու տեսնողին։

ԻՍԱՅԻ, նստած և առանձին։

Էս անիծածն էլ վո՞ւրդի էր հիմի։

ԽԱՄՓԵՐԻ, խոսում է միշտ շտապ-շտապ։

Շեմովդգի փեխի, գծդայորգեթ դմեբթի. փեխի չեմի, կվալի անգելոզիսա։ Բարիգուն, աստծու բարին, քեփեններուտ վո՞ւնց է, ի՞նչ իք անում, ի՞նչ բարին հարցնիմ, վո՞ւնց իք, վո՞ւնց կաք, խո լա՞վ իք դիփունքդ։*

Դաքիքան վայր է գցում աթոռի վրա։

ԻՍԱՅԻ, առանձին։

Սարակել է՞։

ԽԱՄՓԵՐԻ, տեսնելով Իսայուն։

Էս մարթն ո՞վ է... Քա՛, Իսային չէ՞։

ՔԵԹԵՎԱՆ

Հա՛, իմ Գիորգու Իսային է։

ԽԱՄՓԵՐԻ

Մեքաշ չճանչըցա։ (Իսայուն)։ *Ի՞նչ բարին հարցնիմ։* (Իսային կամենում է ոտի կանգնել։) *Ո՞ւր իս նիղանում, գեթաղվա, հա՛մեցեք նստի։*

ԻՍԱՅԻ, նստած։

Փառք աստծու, շնորակալ իմ։

ՔԵԹԵՎԱՆ

Էս ո՞ւր իս կորի, քա՛, վուր բջի ջանը մաշվեցավ շատ քու պտուտելեմեն։

ԽԱՄՓԵՐԻ, նստելով տախտի մոտ աթոռի վրա։

Տաք-տաք բանումն իմ, Քեթևան ջան. իմ տալուշ տղա Կոնոյի համա ձլիվ մե ախչիկ գթա, տաս թուման առաչ իմ, քու արիվը։

ՔԵԹԵՎԱՆ, նստում է տախտի վրա։

Գիդեի վուր էտ հանգի բան կույի, է՞։

ԽԱՄՓԵՐԻ

Ջանս գնաց էրեգվան դեսը. Գիորգին պրծնի ամեն ցավեմեն։ Ո՞ւր է, տանը չէ՞ իմ թայգուլը՞։

---

* Վրացերեն է։— *Ոտս գրի ներս, աստված օգնե ձեզ. ոտն իմս, հետքը հրեշտակինը։*

ՔԵԹԵՎԱՆ, ժպտալով։

Հորես դուս գու քա, տանն է։

ԽԱՄՓԵՐԻ

Գենացվալե նրա պետլած ջանին. ուրիշ իմքին է, Քեթևան ջան։ Աշխարքի տղերք իմ տեսնում, մեկը չունե նրա շնուքն ու լազաթը. ռուքրում է միզ դիփունիս։ Բաս չէ ու Կոնոն կուլի. հոքիս հանից դրուստ է՛լի։ Խոմ գիդիս նրա ափալը, ծանդր ժաժ գալ գիդե. ջեր մուլափ ու, ջեր բան ունիմ ու, ջեր էսենց է ու, ջեր էնենց է ու... Իմն ինձ հասավ ինչրու Խոջի-Վանքը դուս տարա։ Հիմի է՛նդի՝ մեկ անցկացնիլ էրիտ, էրկու անցկացնիլ էրիտ, հալից ու մաշից խիղճ ախչկան. հըա՛, հըա՛, հը՛ա, հըա՛, վիրը բելգեն էրիտ։

ԻՍԱՅԻ, առանձին։

Ձիեմեն մարթ վեր կու բերե էս անիծածը։

ԽԱՄՓԵՐԻ, շարունակելով։

Ծամալը օմքինը կու ասիմ աշխարքումը։ (Ծաղրելով։) *Ըա՛մ, ըա՛մ, ըա՛մ. ջանդա բեզար էլա դրուստ, է՛լի... Ըյի՛, աստուձ անե նրա դիվանը։ Տղեն պիտի տղա ըլի, չախմըխի պեծը վիր ըլի անում... Ջնսով ձեթիր ին, Քեթևան ջան։*

ՔԵԹԵՎԱՆ, ճանգիստ։

Խամփերի՛, քիզ բան հարցնիմ...

ԽԱՄՓԵՐԻ, խոսքը կտրելով։

Հա՛, ղուրթ. ի՞նչ իք հայհարա կանչի, փափեն խոմ չէ սառի։

ՏԵՍԻԼ Ժ

ՆՐԱՆՔ, ԳԵՈՐԳ

ԳԵՈՐԳ, դուրս գալով աջ դռնից զարդի սև ժիլետով և անդրավարտիքով, սև փողպատը ձեռքին և բանկոնակը ճագնելով։

Դորա պատասխանն էլ դու ասա՛, է՛լի, դեդիդա. այդ ինչե՞ր ես պատմում։

Փողպատը կապում է։

ԻՍԱՅԻ, առանձին։

Էրիհա՛...

ԽԱՄՓԵՐԻ, վեր թռչելով տեղից։

Գենացվալոս դեդիդեն։ (Գրկում է Գեորգին։) *Ասկի ռուքաբ ջան, վո՞ւնց իս, վո՞ւնց։*

ԳԵՈՐԳ

Լավ եմ, դեդիդա, դու ի՞նչպես ես։

ԽԱՄՓԵՐԻ

Քի լավ ունենամ, վուրթի, ինձ բա՞ միճիրս։ (Ձեռքով խփում է գրպանին։) *Ա՛յ, էքուց տաս թուման Նիկալայի մանեթը կու չխչխկա էստի. մեր անդալ Կոնոյի համա կլեկն ու նիշադուրը հադրիլ իմ, ուզում իմ խլեպուզինց ախչկա հիդ լեհեմի. դիփ էրկու սահաթ չկա բելգեն տալ տվի, քու արիվը։*

Նստում է իր տեղը։

ԳԵՈՐԳ

Բանը վերջացրել ես, դեդիդա, էլ լեհեմելը ո՞րն է։

Խաղում է աթոռով։

ԽԱՄՓԵՐԻ

Բելգեն ցամաք բան է ջեր, ցավդ տանիմ. նշանը վուր կու տա, էն չախը կու լեհեմվը։

ԳԵՈՐԳ

Նշանը որ լեհեմվել է, ուրեմն պսակին էլ մեկ ուրիշ անուն գրած կլինես։

ԽԱՄՓԵՐԻ

Փսակը խոմ հավիդենական ջնջիլ է, անումիտ մեռնիմ։ Ցի՞փ կուլի մե քու թագին էլ արժանի անիս, վուր մե չաղ քրթամ վիր խփիմ. հարուր թումնեն պակաս չիմ անի, քու արիվը։

ԻՍԱՅԻ, առանձին։

Հիմի էս էր պակաս։

ՔԵԹԵՎԱՆ, հեգնական ձևով:

Ինքսուն ու ինը վուր ըլի, բողազիդ կու կանգնի, ա՜յ։

ԽԱՄՓԵՐԻ

Ինչի՞ լայիղ կոնիմ։

ԳԵՈՐԳ, ժպտալով:

Լա՛վ դեդիդա ես եղել, ես ու իմ աստվածը. իմ գործումն էլ պետք է կա՞շառք վերցնես և ինձ խափե՛ս։

ԽԱՄՓԵՐԻ

Քիզ ո՞ւր իմ խափում, չարդ տանիմ, քիմեն խոմ չիմ ուզում. քիզ ի՛նչ վուր քու աներանցմեն ավելի փուղ դուս գչլիմ։ Դուն ումը գուզիս հավնի, էտումը չիմ խառնվի, օղունդ սիրուն կի ըլի, զըղճերու գլուխ չունիմ։ Օ՜յի, տա՛, տա՛, տա՛, տա՛, տա՛...

ԻՍԱՅԻ, առանձին

Ա՛յ, անումդ կտրե աստուծ։

ԽԱՄՓԵՐԻ, շարունակելով։

Ամա ինչրու հարուր թումանը չթափ տալ տամ, դուն չմեռնիս վուր վուտդ չիմ դուս դնիլ տա. թո՛ւղ ջաններերուն վազի, համբրին՝ քիզ ի՞նչ, քու բաժնքի փուղեմեն խոմ չիմ ուզում։

ԻՍԱՅԻ, առանձին։

Քու տունն աստուծ քանդե։

ԳԵՈՐԳ

Է՛հ, լավ է, դեդիդա, մի՞թե կարելի է այդպես խոսել։

Գնում է դեպի սեղանը և ծխախոտ վառում:

ՔԵԹԵՎԱՆ; Խամփերուն, կիսաձայն:

Ախար, էն մարթն էնդի նստած է, ի՞նչ կոսե. ամութ չէ՞։

ԽԱՄՓԵՐԻ, Քեթևանին:

Ինչի՞ ամութ է, էտ ադաթ է. բաս յիս միխկ չի՞մ, քսան տիղ հաղար ծակ ու ծուկ ունիմ։ Էլի տերը բարին տա հիմիկվան դարդիմանդ ախչ-

կերանցը. Էրեգ չուրս քսան հոքու էրկու-էրկու մանեթ վեր գցիլ ամի մարթագլուխ, քու ազիզ արիվն իմ ասում։ Մե պիկնիկ սարքիմ, մե պի՛կնիկ՝ վուր քու հավնած։ Մե տղամարդ չի ըլի զարթնի սազանդրերուն։ (Մոտենալով Գեորգին:) *Գո՞ւցիս դուն էլ արի, գենացվա,* (Գրկում է նրան:) *Թո՛ւղ խիթարվին, սիրուն տղա իս.* (Ծիծաղում է:) *Հա՜, հա՜, հա՜, հա՜, հա՜...*

ԻՍԱՅԻ, առանձին:

Օ՛հ, հո՛, հո՛, հո՛, հո՛...

ՔԵԹԵՎԱՆ, Խամփերուն շանչ (fnfոլա) անելով:

Ը՛հ։

ԳԵՈՐԳ

Է՛հ, ինչե՛ր ես ասում, դեդիդա։

ԽԱՄՓԵՐԻ

Ինչի՞ր իմ ասում. քու ումիկն ունիմ, քի պես փեսացու էլ վո՞ւրդի կու ռաստ գա ինձ։ Ամեն սրտերու մոդ իմ աղանչաքն էն է էլի, վուր քո թագին արժանի անին ինձ. ամագս մո՛ւքթ կորչի՛։

Գեորգը ծիծաղում է:

ԻՍԱՅԻ, առանձին:

Տե՛ր օղորմած աստուծ։

ՔԵԹԵՎԱՆ

Ի՛հ, լավ է, քա՛, ձենդ պահե, մե անգամ դի՝ ի՛նչ իմ ասում, է՞։

ԽԱՄՓԵՐԻ, նստելով:

Հա՛, ղուրթ, ի՞նչ բանի իք կանչի։

ՔԵԹԵՎԱՆ

Թո՞ղնում իս վուր մարթ խոսի։

ԻՍԱՅԻ, առանձին:

Ջաչանակ է դրուստ։

ԳԵՈՐԳ

Դեդիդա՛, ուզում եմ նշանվել։

ԽԱՄՓԵՐԻ

Հալա՛, գենացվալոս խամփերին։

ԳԵՈՐԳ

Ճշմարիտ. ի՞նչպես ասացիր էլախտ... հա՛, լեհեմածի պես է։

ԽԱՄՓԵՐԻ

Իժո՛ւմ, առանց ի՞նձ, թավլափիա՛ն։

ՔԵԹԵՎԱՆ

Քա՛, մո՞ւլափ չիս տա՛. բաս ինչի՞ կանչեցի, թե առանց քիզ էր։

ԽԱՄՓԵՐԻ

Իժո՛ւմ, իմ հարուր թո՞ւմանը։

ՔԵԹԵՎԱՆ

Է՛լի։

ԳԵՈՐԳ, հանդիմանական ձևով։

Դեդիդա՛։

ԻՍԱՅԻ, առանձին։

Արի հիմի ու էշը ցխեմեն հանե՛. վո՞ւրդի էկավ էս անիծածը։ (Խամփերուն։) *Հարուր չէ, էրկու հարուր չիս ուզի՛. ինչ կարքն է կուլի, է՛լի։*

ԽԱՄՓԵՐԻ, վեր կենալով։

Դիա՛խ, դիա՛խ, ոչխս կարք-մարք չիմ գիդի. էս հանդի պեալած տղին պա՞կաս կու թողնի՛մ։

Գեորգը ծիծաղում է։

ԻՍԱՅԻ

Լա՛վ է, լա՛վ, մե լավ շալին էլ զարուկ կոնիս. չիս կու շինիմ։

ԽԱՄՓԵՐԻ

Բաս ի՞նչ իմ արի։

ՔԵԹԵՎԱՆ, խամփերուն։

Քա՛, մե դե՛սն արի։ (Առանձին։) *Սիրթաթս գնաց։*

ԳԵՈՐԳ

Է՛հ, դեդիդա, հերիք է, ասուված կսիրես։ (Իսայուն։) *Իսայի, դու սորա հանաքներին ականջ մի դնիր։*

ԽԱՄՓԵՐԻ

Իսկի էլ հանաք չիմ անում. մե ինձ ասե՛ք՝ չա՞ղ տիղ է՞։

ՔԵԹԵՎԱՆ

Էրկու հազար թուման փուղ, յիրիք հարուր թումնի բաժինք ու հինգ տարով սարքած կարքած տուն. ախչիկն էլ՝ սիրուն, ջեհել, ուսում առած, լավ հորն ու մոր վուրթի ու լավ սիրելի բարեկամի տեր։

ԽԱՄՓԵՐԻ

Վա՛հ, վա՛հ, վա՛հ, ծղա՛րս է՞։ (Գրկում է Գեորգին։) *Հալա՛, գենացվալոս դեդիդեն, ղո՞ւրթ է ասում Քեթևանը՞։*

ԳԵՈՐԳ

Ջե՞ս իմանում որ դեդեն սուտ խոսել չէ սիրո՛ւմ։ Հետո որ գիտենաս, դեդիդա, ի՞նչ սիրուն է, ի՞նչ սիրուն, օ՛հ, հո՛, հո՛, հո՛...

Իսային զարմանում է։

ԽԱՄՓԵՐԻ

Գենացվալոս քիզ իմ պլուխը, էտենց լավ ախչիկ ու է՛տ զադամի փո՞ւղ։

ԳԵՈՐԳ

Է՛հ, փոդն ի՞նչ հիշելու է, դեդիդա, ազգիկ եմ ասում, որ քաղաքումը հատը չկա։

Իսային փառք է տալիս աստծուն։

ԽԱՄՓԵՐԻ

Բա՛ս հիմի էրկու հարրրեն պակաս չիմ անի։

ԻՍԱՅԻ

Տաս-տաս թո՞ւմնանուց իս ուզում, թե հինգ-հինգ թումնանուց էլ վուր ըլի հաչաթ չէ։

ԽԱՄՓԵՐԻ

Էրնեկ գիդենամ, Իսայի, դուն ի՞նչ բան ունիս. մոցիքուլը դո՞ւն չըլիս։

ԻՍԱՅԻ, վեր թռչելով։

Մոցիքով էլ իս ու չիս էլ գիդի։

ՔԵԹԵՎԱՆ, մոտենալով Խամփերուն։

Սու, քա՛, ի՞նչ էլավ քիզ, իսո ամութու գեդինը մտա։

ԻՍԱՅԻ, առանձին և կիսաձայն։

Ա՛նսկամ։

ԳԵՈՐԳ, մոտենալով Իսայուն։

Իսայի՛, Իսայի՛։ (Դառնալով դեպի Խամփերին։) *Դեդիդա՛, ի՞նչ եղավ քեզ. աստված վկա, ինձ դուր չէ գալիս քո արարմունքը. դուքան բազար իսո չէ մեր տունը, մի փոքր քաղաքավարություն ունեցիր, է։*

Իսային նստում է իր տեղը։

ՔԵԹԵՎԱՆ, առանձին։

Էրնեկ չէի կանչի։

ԽԱՄՓԵՐԻ

Վի՛ս էկադրեբա. բաս կու թո՞ղնիմ վուր սա նշնե քի՛զ։ Մե ասեք հալա ո՞վ է, ո՞ւմ ախչիկն իս ուզում, իմ ճամփեն յիս կու գթնիմ։

Անցնում է Քեթեանի աջ կողմը։

ՔԵԹԵՎԱՆ

Ախար. օխնած հոքի, մե անգճիտ էլ հիրթ չիս տալի վուր մարթ իմքին ասե ու, ո՞վ ինչ անե, համան լիզուտ իս բանեցնում։ Էտ դադա էլ խո՛սիլ կուլի՞. մե խչա՛լաթ քաշե, է՞։

ԻՍԱՅԻ, առանձին։

Քամու ջաղաց է, էլի՛, անիծածը։

ԽԱՄՓԵՐԻ, տախտի մոտ։

Ահա՛, բերնիս կոխպեք իմ դնում։ (Ձեռքով իր բերանը ծածկում է։) *Աբա՛, ո՞վ է, ասե՛ք։*

Նորից բերանը ծածկում է։

ԻՍԱՅԻ, վեր կենալով։

Տո՛, էլ ի՞նչ նուր չար, նուր բարի. ուշացանք, Գիորգի, աստուած գիդենա, գնա՛ չուստ շուրդ հաքի, է՞։

ԳԵՈՐԳ

Էս սահաթիս, Իսայի ջան։ (Խամփերուն։) *Դեդիդա, մեկ ինձ ասա՛, Գարասիմ Յակուլիչ Զամբախովի աղջկան կճանաչե՞ս։*

Այս ժամանակ Քեթեանը գտնվում է Իսայու և Գեորգի մեջտեղը, իսկ սրանից աջ՝ Խամփերին։

ԽԱՄՓԵՐԻ, արհամարհանքով։

Նրա՞ն իս ուզո՞ւմ։

Ամենքը շվարվում են։

ԳԵՈՐԳ, վախեցած։

Հենց նորան, ի՞նչ է։

ԽԱՄՓԵՐԻ

Իժում, նրա՞ն իք ասում թե սիրուն է՞։

ԳԵՈՐԳ

Ի՞նչ է, սիրուն չէ՞։

Իսային, Գեորգից և Քեթեանից ծածուկ, նշաններով խնդրում է Խամփերուն լռել. խոստանալով նրան փողի մեծ գումարներ, բայց Խամփերին չէ տեսնում։

ԽԱՄՓԵՐԻ, շարունակելով։

Նրա սիրունությինը առչի իմանալս է։

ՔԵԹԵՎԱՆ

Վո՛ւյ, քոռանամ յիս, ղո՞ւրթ իս ասո՛ւմ։

ԳԵՈՐԳ

Ի՞նչ ես ասում, դեդիդա, իմ աչքով եմ տեսել։

ԻՍԱՅԻ, Գեորգին, ցածր։

Աստուած գիդենա, խափում է։

ԽԱՄՓԵՐԻ

Կուլի ուրիշ օմքին ին շանց տվի, թե չէ Ջամբախինց կա... (Իսային կրկնում է միևնույն նշանները, խամփերին հասկանում է:) *...դապիտի ախչկան սիրուն չին ասում։*

ՔԵԹԵՎԱՆ

Լիզուտ պապանձվի, հրա՜. հենց գիդեի դուն ինքտ իս տեսի, կի նաղամ սիրտս գնաց։

Անցնում է խամփերու աչ կողմը և տախտի վրա նստում:

ԳԵՈՐԳ

Ուրեմն դու ինքդ չե՞ս տեսել։

ԽԱՄՓԵՐԻ

Չէ՛, վուրթի, էնենց իմացիլ իմ։

Խորհրդավոր հայացք է գցում Իսայու վրա:

ԳԵՈՐԳ, նկատելով խամփերու խաղը, սաստիկ շփոթվում է:

Այդ ի՞նչ է նշանակում... Օհ, աստված։

Բարկացած հեռանում է:

ԻՍԱՅԻ, խամփերուն:

Վուր չիս տեսի, բաս ինչի՞ր իս դուս տալի. անմրթի իմ. քի մոդ։

ՔԵԹԵՎԱՆ

Անմիդ խիղճ էրեխիս սիրտն էլ խարաբ իս անում. հոքուտ ի՞նչ իս ասում։ Էտենց աշքարա սուտ կուլի՞, թավլափիա՛ն։

ԳԵՈՐԳ, բեմի խորից, բարկացած:

Ձեր մտկումն է սուտ։

ՔԵԹԵՎԱՆ, խամփերուն:

Քու աճկն էլ։

ԽԱՄՓԵՐԻ

Ցիս ի՞նչ անիմ, քա՛. ի՛նչոր իմացիլ իմ, էն իմ ասում. կուլի զուրթ խիստ սիրուն էլ է, յիս ի՛նչ գիդիմ։ Էստի մո՛ւլափ տվեք, գնամ դրուստ խաբար բերիմ։

Գնում է դաթիբան վերցնելու:

ԻՍԱՅԻ, Գեորգին, ծածուկ:

Ա՛յ, ուղում է գնա իր քրթամը վիր խփի. աբա դրա խոսկն ա՛վտալու է՝։

ԳԵՈՐԳ

Այսուհետև քեզ էլ չեմ հավատում, Իսայի, հավատիցս հանեցիք բոլորովին։

Շփոթված ման է գալիս:

ԻՍԱՅԻ

Վա՜...

ԽԱՄՓԵՐԻ, դաթիբան ձեռին:

Գնում իմ, ա՛յ։

ԻՍԱՅԻ, առանձին և կիսաձայն:

Ա՛յ, ջառը, գնաս ու չհանդամը, հը՜։

ՔԵԹԵՎԱՆ, վեր թռչելով:

Քու գնալն իսկի էլ հարկավուր չէ. (Խլելով խամփերու ձեռից դաթիբան:) *իր աճկով տեսիլ էլ է ու էլի կու տեսնի։* (Գեորգին:) *Գնա՛, վուրթի, էլ մի՛ ուշանա, շո՛ւրդ հաքի։*

ԳԵՈՐԳ, նեղացած:

Թե ինձ կսիրես, դեղի, ձե՛ռք վերցրու ինձնից. էլ ես ո՛չ մեկ տեղ չեմ գնում։

ՔԵԹԵՎԱՆ, դաթիբան ձեռին:

Վո՛ւյ քոռանամ ու կուրանամ յիս։ (Խամփերուն:) *Ա՛յ կինձիտ կոտրրվիլ էր վուր չէիր էկի, հրա՜։*

Դաթիբան գցում է աթոռի վրա:

ԻՍԱՅԻ, առանձին և կիսաձայն:

Պիտի էտենց էր էլի, վուր լավ էր էլի։

ՔԵԹԵՎԱՆ, շարունակելով:

Էրնեկ գիդենամ հայհարա ո՞ւր էի կանչում քիզ, խոմ գիդեի քու ափալը։ (Գեորգին:) *Ի՛նչ իս անում, վուրթի, գնա՛ շուրդ հաքի, գենացվալոս դեղեն։*

Այստեղից սկսած ամեն անգամ, երբ Գեորգը բարկացած ման գալիս երեսը պատի կողմն է անում և Քեթևանը նրա հետ խոսում է, խամփերին և Իսա-

յին բեմի աջ կողմում ծածուկ վիճում են իրար հետ. իսկ հենց որ Գեորգը և Քեթևանը երեսը դարձնում են նրանց կողմը, նրանք իսկույն կարում են իրանց վեճը:

ԳԵՈՐԳ

Ջեմ գնում, չէ՛, դեդի։

ՔԵԹԵՎԱՆ

Աբա էտ ի՞նչ արարմունք է, վուրթի, բարեմց վիկալ ու սաղ-սաղ գերեզմանը դի ինձ։

ԳԵՈՐԳ, նեղացած:

Ա՛խ, տե՛ր աստված։

ՔԵԹԵՎԱՆ

Քիմեն չիմ արմընո՞ւմ, վուրթի, վուր քարափշուտա խամփերու խոսկերուն անգամ իս դնո՞ւմ. չի՞ս տեսնում վուր սա իր փուրացավանքն ունե՞։ (Խամփերին ցույց տալով վեռաբար իր աջու ճինգ մատը Իսայուն, հեռանում է նրանից:) *Աստուծ տա, գլուխ գա էս բանը, դուն ի՛րան տու՝ ինչ ուզում է. վարսալամ, վարքալամ, ա՞հա։*

ԽԱՄՓԵՐԻ

Դրա բախշիշը քրթմումն ո՞ւր իմ խառնում. դրամեն առնիմ ու նրանք իրանց ախչիկը մո՛ւքթ սաղացնի՞ն։

ՔԵԹԵՎԱՆ

Ա՛յ, ձենդ կտրե հախմիան տերը, հրա՞։

ԻՍԱՅԻ, առանձին և կիսաձայն:

Ա՛մին։

ԳԵՈՐԳ, բարկացած:

Վերջապես համը տանում իս, դեդիդա։

ԻՍԱՅԻ, առանձին:

Ա՛յ, օղորմի քու հորը՞։

ԽԱՄՓԵՐԻ, կիսաձայն:

Մտիկ էս բեհայուն։

ՔԵԹԵՎԱՆ, մոտենալով Գեորգին:

Արի՛, արի՛, գենացվալոս դեղեն։ Ախար էն պատվական մարթու խոսկիրը մի՞տդ չէ՞։ Գնա՛, քու աճկով տես զուրթն ու սուտը. թե չիս հավանի, ձեռտ ո՞վ է բռնում, թամասուքով խոմ չի՞ս կապվի։

ԳԵՈՐԳ, փոքր լռությունից հետո:

Այո՛, այո՛, ես նորան խոստացա գնալ և պետք է կատարեմ խոսքս։

Դուրս է գնում աջ դռնից:

ՏԵՍԻԼ ԺԱ

ՔԵԹԵՎԱՆ, ԽԱՄՓԵՐԻ, ԻՍԱՅԻ

ՔԵԹԵՎԱՆ, Խամփերուն:

Խո՛ղիմ քու գլուխը՞. է՞տ ղադա էլ փուղի թամահութի՞ն։ էն ախչկա տերիրը վուր իմանան, թե քի պես քուր իմ ունեցի, էլ էրեսներուս չին պիտի մտիկ անի, հախ աստծու։

ԽԱՄՓԵՐԻ, արհամարհանքով:

Վո՛ւյ նրանց պե՛ծին։

ՔԵԹԵՎԱՆ, Խամփերուն:

Լիզուտ չորնա ու պրծնի, ահրա՞։

ԻՍԱՅԻ, առանձին և կիսաձայն:

Ո՞ւր է, հը՞։

ՔԵԹԵՎԱՆ

Էլ նուր մեկելանց չխառնշտորիս, խամփերի, թե չէ, աստուծ գիդենա, իրնի մահի կու կտրվինք մեկմեկեմեն։ (Իսայուն:) *Իսայի ջան, մե քիչ էլ մո՛ւլափ տու, գեթաղվա. հորես շուրը կու հաքցնիմ ու տա՛ր, գենացվալե։*

ԻՍԱՅԻ

Էստի իմ, էստի, դեդի։

ՔԵԹԵՎԱՆ, Խամփերուն չանչ անելով:

Լա՛վ տարի քի գա, լավ իմքին դուն իս դառի։

Դուրս է գնում աջ դռնից։

ՏԵՍԻԼ ԺԹ

ԽԱՄՓԵՐԻ, ԻՍԱՅԻ

ԻՍԱՅԻ

Ախար, օխնած հոքի, ի՞նչ իս ասում. իսուն թուման էլ քրթա՛մ կուլի՞։

ԽԱՄՓԵՐԻ

Ինչի՞. թե կի ուրիշնիրը հարուրնիր էլ կու վիկալնին, ինձ ի՛սունը հառամ է՞։

ԻՍԱՅԻ

Ի՞նչ իս չինի, ախար, վուր մեքաշ իսուն թուման իս ուզում. մե տաս թուման ըլի, քսան թուման ըլի, էլի հա՛, թե չէ է՛տ զադամի բան կուլի՝ դուն իս ուզո՞ւմ։ Բաս ինձ ի՞նչ պիտի ենգնի, էրեգվան դեսը մահվան քրտնքումը քառսուն ջեր անց ու դարց իմ արի։ Մե քիչ էլ աստուծ ունեցի, օխնած հոքի, է՞։

ԽԱՄՓԵՐԻ

Քու բանը դուն գիդիս, Իսայի, իմ բանը յիս։ Բաց ասիմ ու վուշ ամանչիմ, վուր թե էս սահաթիս չիս բերի ու չիս տվի, դիփ տակն ու վրեն կոնիմ, աստվածածինը գիդենա։ Աշքարա էրևում է վուր ուրիշ օմքին է քեսի. բաս չէ ու՝ Զամբախինց կուբաճիեն կուլեր։

ԻՍԱՅԻ, շփոթված երեսը խաչ է հանում և առանձին:

Միղա քիզ, տեր աստուծ, մտկուս ինչիր է գալի։

ԽԱՄՓԵՐԻ

Ջի՞ս գնում։

ԻՍԱՅԻ

Աշխար, հորես դուս գու քա էն աղեն. տանիմ, էնդի կոսիմ Գարասիմ Ցակուլիչին, կոսիմ խոստացա։

ԽԱՄՓԵՐԻ, նայելով աջ կողմի դռանը:

Քու արիվը վուր է վուտն էլ չիմ փոխիլ տա, ինչրու չիս բերի։

ԻՍԱՅԻ

Քու կնիկարմատ ասողին էլ ի՞նչ ասիմ. գնամ բերիմ, ա՛ճկդ դի, հը՞... Թե տղին էլա մայինց սրտավուրե ինչրու իմ գալը։

ԽԱՄՓԵՐԻ, կրկին նայելով նույն դռան կողմը:

Էտուրը յիս գիդիմ։ Դո՛ւն գնա, չո՛ւստ արա... Աբա՛, հրա՛, մնում իմ քիզ էստի... Գիդենաս՝ տանեն վուտը չիմ դուս դնիլ տա, ինչրու չբերիս։

ԻՍԱՅԻ, գնալով աղաղակում է:

Ա՛յ, հա՛յ, հա՛յ, հա՛յ, հա՛յ, հա՛յ...

Դուրս է գնում խորթի դռնից:

ՏԵՍԻԼ ԺԳ

ԽԱՄՓԵՐԻ, մենակ:

Էտենց, ա՛յ. աճկիրս ուռիլ է Զամբախինց բակուրի համա. նրա պտուղն էլ կարիմ. յիս իմ թիքեն լավ աշիմ դիփունանց վրա։ Ամա իմ քվիր տղեն խում չէ՞ գժվի... Կուլի զո՛ւրթ Մարքրիտին ըլի տեսի ու հավնի՞... Թա՛յին փուղ ու բաժինքն աճկիրը կապիլ է։ Զո՛ւրթ, էն զադա փո՛ւղ ու բաժինք կուլի՞... ո՞ւմ աճկիրն աբլանդվա չի անի. յիս էլ վուր ըլիմ, գուզիմ ո՞ւ... Ամա թե կի ինքը հավնում է ու ուզում է, յիս ի՞նչ իմ հոքում, դարդերուս գլուխն է՞. մինք էլ կու լվլվանք։

ՏԵՍԻԼ ԺԴ

ԽԱՄՓԵՐԻ, ԳԵՈՐԳ

ԳԵՈՐԳ, դուրս է գալիս աջ դռնից ֆրակով, սպիտակ փողպատով, ձեռքին սիլինդր և սպիտակ ձեռնոցներ: Դառնալով դեպի կուլիսը:

Լա՛վ է, լա՛վ, դեդի, դու գնա՛։ (Խամփերուն:) *Դեդեն կանչում է։* (Աջ ու ձախ նայելով:) *Իսային ի՞նչ եղավ։*

ԽԱՄՓԵՐԻ

Հորես գու քա... Գենացվալոս խամփերին, ինձ վրա ո՞ւր իս նիղանում. ախար հիմի էլ վուր չխերվիմ, էլ յի՞փուցութին։

ԳԵՈՐԳ, շփոթվում է, ետո գլխարկը դնելով սեղանի վրա և ձեռնոցները հագնելով:

Դեդիդա՛, ասա՛ դրուստ՝ այն աղջկան ճանաչո՞ւմ ես թե չէ՞։

ԽԱՄՓԵՐԻ, կակազելով:

Չէ՛... վուրթի... չիմ տեսի. (Հաստատապես:) ամա լավ ախչիկ ին գովում, հախ աստծու, ու էլախտ էնդուր փտնեցի, վուր իմ թիքեն չկորչի։ Տի՛ս վուր ուստութենով ժաժ էկա. գնաց վալիվաղ քու պարուն Իսային ու դեմուդեմը կոսե քու անիրուչը, վուր յիս էլ դեդիդա կամ աշխրքումն ու ինձ էլ հարգ ու պատիվ է հարկավուր։

ԳԵՈՐԳ

Ի՞նչ ես ասում... Օ՛հ, անաստվածներ... դուք ինձ բարեկամություն անելո՞ւ եք եկել, թե երեսս սևացնելու։ (Առանձին:) *Անիծվե՛ք դուք, անիծվե՛ք. ձեզ հետ խոսելն անգամ անպատվություն է։*

Բարկացած նստում է:

ԽԱՄՓԵՐԻ

Էստու համա դուն ո՞ւր իս նիղանում. ադաթ է, վուրթի։ Դուն քու բանը ղայիմ բռնե. հավնիս՝ ո՛ւղե, չհավնիս՝ խեիրաթ չիմ տեսնի. ամա ո՛ւմն ուզիս, գիդացի վուր յիս էլ իմ փային գուզիմ... (Աջ կուլիսից Քեթևանը կանչում է՝ *Խա՛մփերի, խա՛մփերի։*) *Գալիս իմ, գալիս։* (Գեորգին:) *Ջարդ տանիմ, մի՛ նիղանա, ասկի ռուքար Գիորգի ջան։* (Ձեռքը Գեորգի ուսի վրա դնելով:) *Դուն ջեր նշնվի, վուրթի, զողն էդի գամն է. հարսնրքումդ խախլով ջուր կու բերիմ, քու արիվը, դիփունի վրա շատ բանը յիս կու շինիմ, շուշպար ու լեգզեվար էլ կու խաղամ, թե գուզիս։ Հենց գիդիս չի՛մ կանա՛, ի՛նչ անիմ թե իսուն տարեկան ավել իմ. ա՛յ* (Միծաղելի ձևով պար գալով:)

Ջիֆ թը պի տում, ջիֆ թը տի տու,
Ջիֆ թը պի տում, ջիֆ թը տի տու.
Դը՞նգ, դը՞նգ, ջիֆ թը պի տու,
Դընգ տը պը տըմ, ջիֆ թը տի տու։

Դուն միր ադաթն ու սովորութինը իսկի էլ այնումդ մի՛ գցի, վուրթի։

(Գրկելով Գեորգին, գլուխը համբուրում է:) *Ջարդ տանիմ, Գիորգի ջան, ասկի ռուքար Գիորգի ջան։*

Դուրս է վազում աջ դռնից:

ՏԵՍԻԼ ԺԵ

ԳԵՈՐԳ, մենակ. երկար լռությունից հետո և տեղից վեր թռչելով։

Ա՜յ, աստված անիծե ձեր ադաթն էլ ու ձեր սովորությունն էլ... Այս ի՞նչ խայտառակություն է. ի՞նչ կարծիք պետք է տանի այժմ այն մարդը մեզ վրա։ Օ՛հ, ամո՞թ, հազա՛ր ամոթ... Չէ՛, այս բոլորը սովորականից դուրս բաներ են և այստեղ անպատճառ մեկ գաղտնիք կա, որ աշխատում են ինձնից ծածկել... Ի՞նչ պիտի լինի. ի՞նչպես իմանամ... Կարելի է ճշմարիտ իմ տեսած աղջիկը ուրիշ լինի և ինձ խա՛բելիս լինին. ի՞նչ կա այստեղ զարմանալու։ Իմ մորաքրոջ այն հայացքը, որ նա ձգեց Իսայու վրա, նորա փոփոխական խոսքերը, նորա կակազելը, վերջապես իրան Իսայու գնալը առանց ինձ սպասելու, բավականին հաստատում են իմ կարծիքը... Այո՛, այո՛, այլևս կասկած չկա, ինձ կամենում են խաբել, ինչպես շատերին են խաբել... Օ՛հ, տեր իմ, այս ի՛նչ մարդիկ են, այս ի՛նչ երկիր է մեր երկիրը. ամեն մի քայլափոխում ստություն, խաբեություն, սուտ բարեկամ, սուտ ազգական, մեկ չնչին օգտի համար պատրաստ՝ ամենամոտ մարդուն անգամ զոհել, նորա անունն ու պատիվը խայտառակել... Չէ՛, ես այդպես շուտ չեմ խաբվիլ. մինչև ստույգը չիմանամ թե ի՛նչումն է բանը, ոտս անգամ չեմ դնիլ Զամբախովի տանը։

Գլխարկը ծածկելով դուրս է գնում խորքի դռնից:

ՏԵՍԻԼ ԺԶ

ԽԱՄՓԵՐԻ, մենակ. դուրս վազելով աջ դռնից:

Մտի՛կ, մտի՛կ էս թավլափիանին... Գի՛որգի, Գի՛որգի... քա՛, Գի՛որգի... (Նախասենյակից, ձայնը բարձրացնելով:) *Գի՛որգի, Գի՛որգի ջան, ո՞ւր իս գնում, քա՛, չիս իմանո՞ւմ, քի՛զ իմ ասում... Գի՛որգի ջան...* (Հետ դառնալով:) *Դուն չմեռնիս, հիդ էլ չմտիկ արավ...* (Առաջ գալով:) *Գնա՛ց, փա՛խավ, կո՛րավ փուլիրս, մնա՛ցի դառ ու դարդակ...* (Ընկնելով տախտի վրա և երկու ձեռով խփելով ծնկներին:) *Վա՛յ քիզ, վա՛յ քիզ, իմ իսուն թուման...* (Հանկարծ վեր թռչելով տեղից:) *Չէ՛, էտենց չէ վուր դուք գիդիք... Բաս յիս կնիկ չիմ ըլի ու* (Բռնելով չիբիլան:) *էս չիքիլին գլխիս չիքիլա չի ըլի, թե ձեր օխտեմին չէկա յիս։*

Շտապով վերցնում է գաթիքան և դուրս է վազում խորքի դռնից: վարագույրն իջնում է:

ԱՐԱՐՎԱԾ ԵՐՐՈՐԴ

Տեսարան առաջին

Կարապետի տան առաջին արարվածի սենյակը: Ժամացույցի պտմները ցույց են տալիս ժամը վեցը: Ուր հարկն է հանգած լապտերներ և հանգած մոմերով աշտանակներ ու կանդելաբրներ:

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ՍԱՐԳԻՍ, մենակ, աթոռները սրբում է:

Զլիվ մե բա՛ց չէլավ Մարքրիտի բախտը՝... Էրանի գիդենամ թե ուզողն ո՛վ է... Հնդու մաթա կու տանե, ձիր արիվը հը՝... Ամա ի՞նչ. հեստի հանգը զուքիլ ին ու զարթրրիլ, վուր հրիշտակ կու էրևա դրուստ. էնենց պետված ախչկան ո՞վ չի հավնի... Ի՞նչ արին, տո՛, ավտաս կես լիդրն ավել սիպտրկադիղ ըլին բանեցրի, բոյին էլ մե թիզը մեբաշ ին ուզում ավելցնի լոթիքը. դառավ վուր շիմշատ է ու շիմշատ, էլի՞... Փուղն ի՞նչ հանգի բան է, յիս նրա մոգոնողի հոքուն մեռնիմ. մե ջուխտ բաթինկեն մետի կես օրումը կարել տվին: Ամա ի՞նչ կրընգնիր ունե՞... պա՛յ, պա՛յ, պա՛յ, պա՛յ... յիս դավի չունիմ, ախպեր: Էն չաթուքեսներու լափշրքնիրը տե՛սել ի՞ք. էրկու էն էն ղադա կրընգնիր իմ ասում, արիվս վկա... Վա՛յ, ձիր տունն ասառուձ շինե, էս ի՞նչ յիրգիր է մեր քաղաքը: Ասինք էսօր խափեցին, էքուց խում կու էրևա. իժում դո՛ւք թամաշա արեք նրանց տուր ու դմփուցին: Էհ, աստուձ վիրշը բարի անե. լավ ախչիկ է Մարքրիտը, յիս ու իմ հոգին. էս ղադա տարի է էստի ղուլուղ իմ անում, մե օր նրամեն փիս խոսկ չիմ իմացի: Հիմի ի՞նչ անինք վուր էքուց էրեսը կու լվանա ու էլի էն Մարքրիտը կուլի. սիրունութինն ու զղճութինը աստուձու միդ է:

ՏԵՍԻԼ Բ

ՍԱՐԳԻՍ, ԿԱՐԱՊԵՏ

ԿԱՐԱՊԵՏ, դուրս գալով աջ դռնից:

Տո՛, չբերի՞ր էնդունք:

ՍԱՐԳԻՍ

Էս սահաթիս էվետ ինքն ուստեն կու բերե, աղա. ձեռին ուներ, մե էրկու ասղի ծեր էլի պակաս է, կոսե:

ԿԱՐԱՊԵՏ

Տո՛, թե՞ ասի վուր գլխին կանգնի ու չո՛ւստ վրահասցրու:

ՍԱՐԳԻՍ

Էս նմուտիս կու բերե, աղա ջան, հենց բռնե հադիր էր, իմ աճկով տեսա. յիս էլ էստի աշխարքի բան ունիմ, ախար:

ԿԱՐԱՊԵՏ

Լա՛վ, թե ուշանա, Է՛լի գնա, հենց ապրիս, ու չո՛ւստ վազեցրու...

ՍԱՐԳԻՍ

Բաշ ուսթա, աղա ջան:

ԿԱՐԱՊԵՏ

Էստի դիփ պրծա՞ր:

ՍԱՐԳԻՍ

Հրամանք իս, աղա. մենակ ղոնաղի օթախն է մնացի ու սանդուխտը:

ԿԱՐԱՊԵՏ

Լավ բարաթ կա՛րքի բի. դես ու դեն ծաղկնիր կու դարսիս, վունցոր ասիլ իմ. մումիրը դի՛փ մետի վառե, պադիեզդի դռան առչիվն էլ քո՛ւչեն ավիլե, վուր իստակ ըլի...

ՍԱՐԳԻՍ

Հեստիկ շինիմ, աղա ջան, վուր հալիլա:

Դուրս է գնում խորքի դռնից:

ՑԵՍԻԼ Դ

ԿԱՐԱՊԵՏ, մենակ, սկզբումը նստած է:

Բանս լավ է գնում. ամեն կոնեմեն յոնդրնիրը ձքած է. փեիքրի աբլաբուդի պես դամբս գորձած է... Գու քա հիմի պարուն փեսացուս, ճանջի նման բզզալով՝ թը՛րբխկ, (Ձեռքը ձեռքին է խփում:) *դամբումս դեվեր կու ննգնի։ Շատ իժում բզ-զզ-զզ-կոնե, ամա էլ իմ չանգերեմեն օշով չի կանա գնա... Չէ՛, հիմի մեկն ու մեկը վուր ասում ին՝ թե փեիքարն, ասում է, գարշելի անասուն է։ Ինչի՞, մե ձիզ իմ հարցնում. շան պես մա՛րթիք է, գարշելի անասուն է։ Ինչի՞, մե ձիզ իմ հարցնում. շան պես մա՛րթիք է կտրում, թե գիլի պես ու ասլընի պես մարթիք է կուլ տալի. ի՞նչով է նա փիս. ինչ աստուձ շնուք է տվի, էն շնուքով է ապրում... Ախար, գազանի պես ակռեք չունե վուր կծելով իր կերակուրը ճարե, թռչունքի պես թիվիր չունե վուր իր թռչելով ապրի. բաս ի՞նչ անե խիղճը, վուր օթախի քնչներքումը աբլաբուդեք չսարքե ու ճանջիրն էնդով չբռնե... Հիմի չիք ուզի՞ վուր վուտներով ման գա ու էնենց իր կերակուրը ճարե՛. գանա չիմ գիդի, էն սհաթին կու թողնիք, հրա՛...* (Լուռ մտածում է:) *Ղո՛ւրթ, շատ վուր փիքր իմ անում, է՛, էս աշխարքը դիփ մեկսմեկու ուտելու է ստիղծած։ Էրեխա վուխտս լսում էի, թե՝ «Ժանգմա թոփի, թոփման գելի. գելմա թխա, թխամ վենախի շեճամա»*։ *Էստունք յիս հենց գիդեի դիփ տուտուց մարթկերանց ասած բանիր է, ամա հիմի վուր լավ հեսաբ իմ անում, ղուրթ վուր դիփ մեկսմեկու ուտում ին. մե թռչունք մեկին է ուտում, մե անասուն մեկելին, մարթու աճկը խոմ զարթնի խուղը ի՞նչը կու կշտացնե. ի՛նչ բաբաթ-բաբաթ անասուն ասիս, թռչունք ասիս, միր փուրն է դեվեր գնում. էն կինքեմեն վուր չըլինք վախենում, է՛, մեկ-մեկու էլ կուտինք։ Ամա միթամ չինք ուտում, ա՛յ. էս աշխարքումը ովոր ումն ախտում է, նա է ղոչաղը. ախտիլն ու ուտիլը մեկ է, էլի՛... Ամա միր հիրթն էլ գալիս է. խուղն է անուշ անում միզ, դառնում ինք՝ խո՛ւղ։ «Հուղ էիր, ասում է, եվ հուղ դարցի» կոսե։* (Լուռ գլուխը շարժում է:) *Է՛հ, փուչ աշխարք... Ամա ինչի՞ վրա միտս էկավ էստունք... հա՛, փեիքրի վրա. չէ՛. փեիքրի վրա կի չէ, իմ արարմունքի վրա։ Հիմի միթամ յիս խա՛-փիփա ի՛մ. ո՞ւմն ինչ գեթ իմ անում, ախպեր. թո՛ւղ ինձ օշով չխափե, յիս էլ օշովու չիմ խափի... Հիմի էսենց վուր չժաժ գամ, դո՞ւք իք ուզում իմ ախչըկա՛ն. գանա չիմ գիդի, ավտաս դռնիրս կոտրտիք։* (Ծոցի ժամացույցը ճանելով:) *Ջեր սհաթի վիցն է. ի՛նչ ուշ է մթնանում, ախպեր... հորես Իսային ու փեսացուս պիտի գան. հեստի հանգն ընթունիմ վուր է՝ աճկիրն աբլանդվա անիմ իմ պարուն փեսացուին։ Ջեր հալա մոհրաթ կոնիմ... է՛հ... Իժում հեստի բաներու վրա կու խոսիմ հիդը, վուր սուրփ համարե ինձ... Իժո՞ւմ... իժում էլ ի՛նչ, դուս կու բերիմ իմ կարտինկա Մարքրիտին ու տեսնիմ թե էս քու պարուն Գեվուրք Մասիսյանցը ի՛նչ կոսե... Ի՞նչ պիտի ասի...* (Ուսերը վեր է քաշում:) *կու ամանչի ու նշանը կու տալ տամ։ Ճլի... Ամա վա՛յ թե էն մեկի հանգը գդակը վիկալնե ու ասե՝ մնա՛ք բարով։ Վո՞ւնց կանա, յիս էն մարթն ի՛մ. աստուձ վկա, էստի էվետ գլուխը կեռ կոնիմ։ Ամ խափիլը հիշտ բան չգիդենաք, հը՛ա. ինձ Գարասիմ Յակուլին Ջամբախով կոսին։*

Դուրս է գնում աջ դռնից:

ՑԵՍԻԼ Դ

ՄԱՐԳՐԻՏ, մենակ. մտնում է ձախ դռնից երեսը գեղեցկացրած և նատալիային նմանեցրած. դերիայի փեշերը այնքան երկար է, որ խանգարում է ման գալ: Նստում է և մի փոքր ժամանակ լուռ մնում:

Սիրտս հենց գիդիմ քամվում է... էսենց շտապով բան չիմ տեսի, էս հանգի ախչկա նշնիլ էլ չիմ իմացի... Ասում ին լավ տղա է, ամա խիլքս չէ կտրում. լավը վուր ըլի, առանց տնդղիլ ա՛խչիկ գուզե օմքի՞ն։ Հալբաթ փուղի խաթիր է ուզում ինձ... Վա՛յ իմ միխկը. փուղիրս կու խժռե ու իժում քոծի պես վեր կու գցե ինձ։ Ամա կո՞ւլի ինձ տնդղելու է գալի ու ինձմեն թաքցնում ի՞ն... է՛տ է, միթամ փողոցի ապրանք իմ, միթամ չիթ է առնում. հավնի՝ ուզե, չհավնի՝ դուս գնա։ (Տեղից վեր է կենում:) *Ա՛խ, աստուձ, ի՞նչ էիր հոքում ինձ էլ ուրիշներու պես սիրուն էիր ստիղծի. թո՛ղ սիրտս քար էր էլի, լավն ու վադը մեկ էր էլի ինձ համա աշխարքումն ու էրեսս սիրուն, դինջ կու ապրեի, ավատացած կուլեի վուր իմ մարթու սիրեկան իմ։* (Գնում է դեպի հայելին և մեջը նայում:) *Էս իստակ իմ նման չիմ...* (Հայելիից հեռանում է և այնպես նայում մեջը:) *Էրանի դիփ էսենց ըլիմ, էլ իմ մարթու սիրտը չի հովնա ինձմեն։ Ամա ովոր վուր է էն տղեն հալբաթ մենակ փուղի համա չէ ուզում ինձ, թե չէ էսենց ո՞ւր ին սիրունացնում ինձ նրա աճկումը... Ա՛խ, աստուձ, թաք նա ինձ սիրե, խոմ գիդիս դիփ քու կամքի կատարող իմ էլի, ու հորեսի դենը իմ գլուխը չարի փուխ կոնիմ բարերարութենի համա...* (Նայում է ժամացույցին:) *Սհաթի վիցն է, հորես պիտի գա, ասում ին. ինչրու նրա գալը՝ իմն ինձ կու հասնի... Ա՛խ, աստուձ, էրանի ինձ չէիր ստիղծի, էրանի ախկտի*

* Վրացերեն է:—*Ժանգը հրացանին, հրացանը գայլին, գայլը այծին, այծը այգին կերավ։*

վուրթի էի էլի ու մի ակկտի մոդ բախտավուր էի էլի, ո՞վ գիդե՝ ի՞նչ պի-տի գա գլխիս։

Թաշկինակով աչքերը սրբում է և նստելով բազմոցի վրա լուռ լաց է լինում։

ՏԵՍԻԼ Ե

ՄԱՐԳՐԻՏ, ՆԱՏԱԼԻԱ

ՆԱՏԱԼԻԱ, մտնում է ձախ դռնից, ձեռքին թղթե կապոց։

Հը՛, Մարգրիտ ջան, բաթինկեքդ բերին... Քա՛, ի՞նչ իս անում, լաց իս ըլո՞ւմ. խո էրեսիտ դիդը վեր գու քա։

ՄԱՐԳՐԻՏ

Ցիս էլ էտ իմ վայ տալի իմ գլուխը, Նատալիա ջան։

Առնում է Նատալիայից կապոցը։

ՆԱՏԱԼԻԱ

Է՛հ, տուտուցացիլ իս, ի՞նչ է. դուն հենց գիդիս մենակ դո՞ւն իս լաց ըլո՞ւմ. ինձ էլ վուր նշնում էին, լիրթ ու լիդիս դիվիր էկավ լացեմեն։

ՄԱՐԳՐԻՏ, ճոգոց ճանելով։

Քու լացը իմ լացի մոդ ծիծաղ կուլեր, Նատալիա ջան։ (Լուռ բաց է անում կապոցը և ճանելով միջից սարսափելի երկայն կրունկներով կոշիկները, զարհուրած վեր է թռչում տեղից։) *Էս ի՞նչ է, քա՛, է՞ս ղադա կրընգնիր կուլի. վուտիս վրա վո՞ւնց կանգնիմ. Աբելը* խոմ չի՞մ։*

* ՆԱՏԱԼԻԱ

Ի՞նչ գիդիմ, գեթաղվա, քու մամեն է կարիլ տվի... (Կոշիկները առնում է Մարգրիտի ձեռքից և առանձին։) *Էս ի՞նչ ունցնավուր իմքնիր է, քա՛։* (Մարգրիտին։) *Ինչոր վուր է, էստունք է, Մարգրիտ ջան, չարա չկա, պիտի յոլա տանիս։ Բռնե՛, հաքի՛, էլ մի՛ ուշանա։*

Կոշիկները տալիս է Մարգրիտին։

* *Աբելը Թիֆլիզի հասարակությանը ծանոթ մի ճարպիկ անձն էր, որ հանդիսավոր տոներին երեք—չորս սաժենաչափ ձողերի վրա կանգնած, իր ձեռնածություններով զվարճացնում էր ժողովրդին և զարմանալի դյուրությամբ մաս էր գալիս այն ձողերով։*

ՄԱՐԳՐԻՏ, վիրավորված։

Հիմի իմ իմանում էս դերիի էրգենութինը։ Էտենց պիտի, մոդա է, կոսե... Խի՛ղճ տղա, ի՞նչ հանգն ին ուզում խափի։ (Ցնդելով կոշիկները։) *Մեռնի՛ սրա կարողի արիվը։*

Կոշիկները դեն է գցում։

ՆԱՏԱԼԻԱ

Վո՛ւյ, քոռանամ յիս, էտ ի՞նչ արիր, քա՛. մամետ վուր իմանա, ի՞նչ ջուղաբ կու տաս։

ՄԱՐԳՐԻՏ, ձեռքը ճակատին տանելով։

Ա՛խ։

Լռություն։

ՆԱՏԱԼԻԱ

Քա՛, լավ է, մե չուստ հաքի, է՛։ (Դարձյալ լռություն։) *Քու խաթիր տուն ու տիղս թողիլ իմ, դուն կի էտենց իս ժաժ գալի հիդս։*

ՄԱՐԳՐԻՏ, փաթաթվելով Նատալիային։

Բախշե՛, բախշե՛, Նատալիա ջան, յիս էլ չիմ գիդի՝ ի՞նչ իմ անում...

ՆԱՏԱԼԻԱ

Լա՛վ է, լա՛վ, Մարգրիտ ջան. դուն սիրտդ լա՛վ պահե... (Համբուրում է գլուխը։) *Օղունդ քու բանը լավ գա, ուրիշ վունչիչ չիմ ուզի յիս։* (Վերցնում է կոշիկները ու տալով Մարգրիտին։) *Բռնե՛, չո՛ւստ արա։*

ՄԱՐԳՐԻՏ, կոշիկները ձեռքին, գնալով։

Ա՛խ, աստուած, սպանե՛ ինձ ու պրծի։

Դուրս է գնում ձախ դռնից։

ՏԵՍԻԼԶ

ՆԱՏԱԼԻԱ, մենակ։

Խիղճ ախչիկ, միխկա գալիս է... էն բաթինկեքն էլ ի՞նչ մոթխրա է, քա՛... էն հանգի կրընգնիր էլ չէի տեսի իմ օրումը... Հիմի վուր մոդա գա. հա՛յ թե բոյի կու բռնին մեբաշդիփունքը՛... Տե՛ր աստուած, իմ դուշմնին էլ

շատաս զիղձ ախչիկ։ (Հայելիի մեջ զննում է իրան երկար ժամանակ։) *Ի՞նչ գրուստ է շանց տալի էս հալիլե՞ն։*

Շարունակում է նայել հայելիի մեջ։

ՑԵՍԻԼ Է

ՆԱՏԱԼԻԱ, ՄԱՐԳՐԻՏ

ՄԱՐԳՐԻՏ, մտնում է ձախ դռնից բարձր հասակով։

Էրնեկ քիզ, Նատալիա։

ՆԱՏԱԼԻԱ

Քա՛, դրուստ իմ բոյի իս, Մարքրիտ ջան. ո՞ւմը չիս դուր գա էտենց։

ՄԱՐԳՐԻՏ

Է՛հ, Նատալիա ջան, մե իմ սրտումն էլ դե՛վեր մտիկ տո՛ւ. մահս էրնեկ իմ տալի, աստուձ գիդենա։ Մամիմեն վախենում իմ, թե չէ ուզում իմ ասի՝ վուր յիս մարթ չիմ ուզում. թո՞ղ կսանանցը տա ինձ։

Նստում է ընկողմարանի վրա։

ՆԱՏԱԼԻԱ

Գժվի՞լ իս, Մարքրիտ, թե ի՞նչ է էլի քիզ։

ՄԱՐԳՐԻՏ

Իսկի՛ էլ չիմ գժվի. էն տղեն միխկս գալիս է... էրանի կանենամ, թաքուն իմաց կոնիմ վուր վունց էրեսիս ավտա, վունց բոյուս, թե էնչախն էլ գուզե ինձ ու կու տեսնիս. ամա վո՞ւնց ասիմ յիս նրան էս բանը, ամուսնու գեդինը կու մտնիմ։

ՆԱՏԱԼԻԱ, նստելով բազկաթոռի վրա։

Վո՛ւյ իմ աճկին. գանա պիտի խո՞սիս էլ հիդը՞. քար-գուրձ անելու կու դառնաս խոմ։ Ցիրիք ամիս նշնած էի, մե չեր իմ ձենը չէ իմացի Իսային, քու արիվը։

ՄԱՐԳՐԻՏ

Գիդիմ, Նատալիա ջան, ու մամեն էլ սաստից վուր ձեն ծպտուն չհանիս էս գիշեր, կոսե. ամա էն տղեն մե օր խո կու իմա՞նա իմ ափալը. խո

կու տե՞սնի վուր էրեսս էլ սուտ է էլի ու բոյիս էլ. էնչախն իստակ աճկեմեն կու գցե ինձ։

ՆԱՏԱԼԻԱ

Դարդ մի՛ անի, Մարքրիտ ջան, վունց աճկեմեն կու գցե ու շատ էլ կու սիրե քիզ, յիփոր քու խասիաթը կու իմանա։

ՄԱՐԳՐԻՏ

Է՛հ, Նատալիա ջան, խասիաթի համա վուր ուզում ըլի, էսենց տիկին էլ չէին շինի ինձ... էրանի գիդենամ նա ի՞նչ խասիաթի տեր է։

ՆԱՏԱԼԻԱ

Աստուձ գիդենա, Մարքրիտ ջան, Իսայիս գովում էր՝ թե խիստ լավ տղա է, կոսե, խասիաթն էլ լավն ունե ու ուսումն էլ, կոսե. զարթնի էս համ ջեհել է ու համ սիրուն. ուրիշ ի՞նչ իս ուզում. քա՛։

ՄԱՐԳՐԻՏ

Վա՛յ իմ միխկը, վուր վունց սիրունութենով կանամ գա հիդն ու վունց ուսումով. էրնեկ չէր ըլի՝ մե-էրկու տարի թողիլ էին ինձ էն պենսիոնումը... Դուն չի՞ս տեսի էն տղի՞ն. Նատալիա։

ՆԱՏԱԼԻԱ

Իմ օրումը չիմ տեսի... Դուն խա՛թրջամ կաց, Մարքրիտ ջան. ասում իմ՝ վուր Իսային խիստ էր գովում, ավատա՛ ինձ։

ՄԱՐԳՐԻՏ

Ա՛խ սիրտս փիս է, Նատալիա ջան. հենց գիդիմ խիխտելու պիտի տանին ինձ։

Թաշկինակով աչքերը սրբում է։

ՆԱՏԱԼԻԱ, կանգնելով Մարգրիտի առաջ և ձեռքը նրա ուսին դնելով։

Հե՛րիք է, թե քու աստուձ կու սիրիս, Մարքրիտ...

ՄԱՐԳՐԻՏ, դառնությամբ։

Ցիս ինչո՞վ իմ միղավուր վուր զիղձ իմ։

ՆԱՏԱԼԻԱ, նստելով Մարգրիտի կողքին ձեռքը միշտ նրա ուսին։

Ի՛հ, լավ է՝ հենց ապրիս... (Մարգրիտը հանկարծ ընկնելով Նատալիայի գիրկը, հեկեկում է։ Պատկեր։) *Աբա էտ ի՞նչ արարմունք է, Մարքրիտ. վո՛ւխտ իս գթի՛. էլ բա՞ դրուս լաց է հիմի։*

ՄԱՐԳՐԻՏ, հեռացնում է գլուխը Նատալիայից և աչքերը սրբում:

Ա՛խ, Նատալիա, ինձ պես բեբախտ ախչիկ չկա։

ՆԱՏԱԼԻԱ

Լավ է, մե սիրտդ հիդ բի, է՞. ի՞նչ էլավ քիզ, քա՛։

ՄԱՐԳՐԻՏ

Իմ սիրտը վաղ է կոտրած. աստուծ ինձ վուր ստիղծից, դիփունի համա ծիծաղ ու մասխարա ստեղծից ինձ։

ՆԱՏԱԼԻԱ, վեր թռչելով տեղից:

Ի՛հ, ուցնավուր իս, քա՛։

Գնում է դեպի աջ:

ՏԵՍԻԼ Ը

ՆՐԱՆՔ, ԻՍԱՅԻ

ԻՍԱՅԻ, մտնելով խորքի դռնից, գլխարկը ձեռքին:

Ո՞ւր է Կարապետը։ (Տեսնելով Մարգրիտին:) *Օ՛հ, լավ իս դառի, Մարքրիտ ջան։* (Մարգրիտը ոտի կանգնելով ողջունում է **Իսայուն**, որ զարմացած. մի քայլ հետ է քաշվում. Նատալիան ծիծաղում է:) *Վա՛, հեր օխնած, մեքաշ վախեցա. էտ ի՞նչ դադա բռյի իս բռնի։*

ՄԱՐԳՐԻՏ, վշտացած:

Ասում ին վուր մոդա է։ (Առանձին և կիսաձայն:) *Ա՛խ, աստուծ։*

ԻՍԱՅԻ

Էս բացրութին էլ մոդա չէի իմացի, հորես դենը կտուրն էլ առանց սանդո՛ւխտ դիվիր կէհաք աստծու օղորմութենով։ Մե ասեք՝ ո՞ւր է Կարապետն, է՞։

ՆԱՏԱԼԻԱ

Չիմ գիդի, մնամ վուր տանն է։

ԻՍԱՅԻ

Խիստ հարկավուր բան ունիմ, մե տեսեք՝ վո՞ւր օթախումն է. պիտի էս սհաթիս հիդ գնամ, ամոթ է, էն տղեն մնում է, հորես գու քանը։

ՄԱՐԳՐԻՏ, առանձին:

Հորես սիրտս կէհա։

Մանր քայլով դուրս է գնում ձախ դռնից

ՏԵՍԻԼ Թ

ՆԱՏԱԼԻԱ, ԻՍԱՅԻ

ՆԱՏԱԼԻԱ

Խի՞ղճ ախչիկ, հալվեցավ դրուստ։

ԻՍԱՅԻ

Յիս ու իմ հոքին, քու սիրունութինը նա պիտի ունենա, յա նրա սիրտը դուն։

ՆԱՏԱԼԻԱ

Ի՞նչ լ՝ փի՛ս սիրա ունի՞մ, յի՛փ կու հավնիս. աբա յիս քիզ ո՞ւր ուզեցի, վուր էտունք իս ասում հիմի։

ԻՍԱՅԻ

Լա՛վ է, գլխեմեն մի՛ կցի, քու հորն օղորմի. փիսը վուր ըլիս, խում իմ կնիկ չէիր ըլի։

ՆԱՏԱԼԻԱ

Վո՞ւնց կուլեր քու բանը։

ԻՍԱՅԻ

Նատալիա՛... էրեգ էստի գալիս խում քիզ օմքին ջեհել տղա չռա՞ստ էկավ։

ՆԱՏԱԼԻԱ, վախեցած:

Չէ՛, ի՞նչ խաբար կա։

ԻՍԱՅԻ, առանձին, Երեսը խաչ է հանում:

Միդա քիզ, աստուծ։ (Նատալիային:) *Դրուստ իս ասո՞ւմ։*

ՆԱՏԱԼԻԱ

Քա՛, ի՞նչ շատիր իս մոգոնում գլխիս... (Թաշկինակով աչքերը սրբում է:) *Հիմի է՞տ է պակաս։*

ԻՍԱՅԻ, առանձին:

Տո, յիս էլ ինչ սիմսին իմ. ինչի՞ր իմ փիքր անում։ (Գրկելով Նատալիային, կամենում է նրան համբուրել:) *Լա՛վ է, լավ, բարիշինք, Նատալիա ջան։*

ՆԱՏԱԼԻԱ, ազատվելով Իսայու գրկից:

Քա՛, ի՞նչ իս անում, գուզիս օմքին տեսնե՞։

ԻՍԱՅԻ

Ա՛յ սարսաղ. ո՞վ պիտի տեսնի դարդակ օթախումը։

ՆԱՏԱԼԻԱ

Հարսնքութին անտիկ մորե կու ա՞ռնիս ինձ համա՞։

ԻՍԱՅԻ, առանձին:

Իրան տվեք տասչուրս շային։ (Նատալիային:) *Է՛յ, ջեր ջուրը չիս տեսի, ո՛ւզում իս բաշմըկնիրդ հանի՞։*

ՆԱՏԱԼԻԱ, ձեռքով Իսայու բերանը ծածկում է:

Ի՜հ, դուն վուր անկարք խոսիլ գիդիս։

ԻՍԱՅԻ, Նատալիայի ձեռքը բռնելով:

Ի՛վֆ, սի՛պտա բամբակ է՞։

ՆԱՏԱԼԻԱ

Բաս չի՛ս առնի՞։

ԻՍԱՅԻ

Հ՛ը, էլի ուզում իս անգաճս կտրի՞։

ՆԱՏԱԼԻԱ, ձեռքը Իսայու ուսին դնելով:

Հա՛, ի՞նչ է, Իսայի ջան, գենացվալերի։

ԻՍԱՅԻ

Է՛յ, տո՛, վից-օխտը թուման փուղ կոնե, ի՛նչ իս ասում. էտ զադամին մե ամսումն էլ չիմ կանա դադի։

ՆԱՏԱԼԻԱ, գրկելով Իսայուն:

Գեթաղվանե, Իսայի ջան. ուրիշներեմեն ինչի՞ ջոգվիմ։

ԻՍԱՅԻ

Ա՜խ, կնիկն ո՞վ մոգոնից։

ՆԱՏԱԼԻԱ, փաթաթվելով:

Գենացվալե, Իսայի ջան, թե ինձ կու սիրիս։

ԻՍԱՅԻ, առանձին:

Արի՛ ու դիմցի։ (Նատալիային:) *Տո՛, քիզ վո՞ւնց չիմ սիրի, հոքիս էլ չիմ խնահի քիզ։*

ՆԱՏԱԼԻԱ

Բաս կու առնի՞ս։

ԻՍԱՅԻ

Ջարես ի՛նչ է վուր չիմ առնի։

ՆԱՏԱԼԻԱ, վրա ընկնելով, Իսայուն պինդ համբուրում է:

Ախ, Իսայի ջան։

ԻՍԱՅԻ, առանձին:

Սաղ անգաճս գնաց։ (Համբուրում է Նատալիային:) *Քու մե պաչը քառասուն թուման աժե, Նատալիա ջան...* (Հանկարծ ձեռքը ճակատին տանելով:) *Վա՛յ մե՛, բանս մնաց... էսենց խափից Ցիվեն Աթամին, է՛... Տո՛, մե գնա՛ Կարապետին գթի, է՛. ասա՛ էստի մնում իմ։*

ՆԱՏԱԼԻԱ

Է՛ս սահաթիս, Իսայի ջան։

Թոչկոտելով դուրս է գնում ձախ դռնից։

ԻՍԱՅԻ, Նատալիայի ետևից նայելով և նրա դուրս գնալիս վեր թռչելով։

Ը՜հ, շե՜նի կի ճիրի մե՛...

ՏԵՍԻԼ Ժ

ԻՍԱՅԻ, մենակ։

Աղունակ է դրուստ... Լավ բան է կնիկը, յիս ու իմ հոքին. դրուստ բլբոլի վարթ է, վուր հուտ իս կալնում, լավ Կախեթու գինու հանգը հարփեցնում է. ամա մեկ էլ տեսար սրտով հուտ կալնելիս՝ էն մունդռեկ փուշը ցցվեցավ մեքաշ քնթումն ու իժում, ինչրու հանիլը, իսան խեր փոշտա՛։ ու խան սարը... (Գլուխը շարժում է։) *Ախար օխտը թուման էլ դերիա կուլի՞... Պիտի հորեսի դենը գնանք գիղումն ապրինք, թե չէ վա՛յ մեր միխկը... Սուտ չէր ասում էն խիղճ Օսկան Պետրովիչը՛, թե՝ «էս պիտի ու էն պիտեմեն զա՛հլես գնաց», կոսե... Է՛հ, մախլաս... ջհանդամը օխտը թումանը, թաք մե էս բանը գլուխ գա ու ամագս աժենա... Ջիր արիվը, հազար թումնի ապրանք վուր ծախիլ էի, էս ղաղա չէի շարշրվի. դրուստ խաթաբալա է էլի ախչիկ մարթու սալը. էն էլ ով գիդի վո՛ւնց կու անց կենա... Տեր աստուած, դուն դեվեր մտիկ անիս ու վունց մեկի մոդ չամանչեցնիս ինձ... Ա՛խ, ի՞նչ էլավ էն մարթը, աբա թե գա։*

Կարապետը մտնում է ձախ դռնից։

ՏԵՍԻԼ ԺԱ

ԻՍԱՅԻ, ԿԱՐԱՊԵՏ

ԻՍԱՅԻ

Էս ո՞ւր իս, Գարասիմ Յակուլիչ։

ԿԱՐԱՊԵՏ

Հ՛ը, մենակ ո՞ւր իս էկի. էլ չէ գալի՞։

ԻՍԱՅԻ

Վո՞ւնց չի գա, ամա մե անիծած դեդիդա է ունեցի էլի, վախենում իմ բանը չխարաբ անե. ուրիշ հանգն է խոսում, զահրումար է ուզում. ասում է ինչրու չիս բերի, վուտն էլ չիմ փոխիլ տա, կոսե, ու հիմի մնում է ինձ տղի տանը։

ԿԱՐԱՊԵՏ

Տո՛, էրեգ թե դեդիդին էլ խոստացանք ու դեդիդի մարթուն էլ։

ԻՍԱՅԻ

Մեկն էլ նուր լուս ննգալ, մե խիստ աշաղլար իմքին է։

ԿԱՐԱՊԵՏ

Դե՛, գնա՛ իրան տու, ինչ ուզում է. ամա էլ մի՛ ուշացնի, թե չէ մե մամիդա էլ ուրիշ կու լուս ննգի։ Էլ էտու համա ո՞ւր էիր գալի, հեր օխնած։

ԻՍԱՅԻ

Վա՛հ, իսուն թումնեն մե գրոշ պակաս չէ անում։

ԿԱՐԱՊԵՏ

Է՛հ, գժվիլ ի՞ս, թե՞ հանաք իս անում։

ԻՍԱՅԻ

Աստուած գիդենա, զուրթ իմ ասում։

ԿԱՐԱՊԵՏ

Աբա՛, յիս անմիղ իսուն թուման կու դեն գցի՞մ. խուրմա է՞։

ԻՍԱՅԻ

Ջիս դեն գցի ու էն տղեն չի գա։

ԿԱՐԱՊԵՏ, վախեցած։

Ինչի՞։

ԻՍԱՅԻ

Աստուած վուչ գիդե էն անիծած դեդիդի գլուխը. մեքաշ ասավ թե Մարքրիտի սիրունութինը առչի իմանալուս է, կոսե։

ԿԱՐԱՊԵՏ, շփոթված։

Իժո՞ւմ։

ԻՍԱՅԻ

Իժում էլ ի՛նչ, կինաղամ բանը մոշլա էր ըլում, ասում իմ։ Հա՛յ դես, հա՛յ դեն, վունցոր էլավ էլի սարքեցի։

ԿԱՐԱՊԵՏ, շունչ առնելով և կիսաձայն։

Ո՛ւֆ։

ԻՍԱՅԻ, շարունակելով։

Հենց բոնե հոքիս ծախեցի քու իաթիր, իմ հոքին գիդենա. դեդիդին նշներով իմաց արի, վուր միթամ ինչ ուզում իս կու տանք, ու էն տղին ասի անգճմումը, թե դեդիդետ խափում է։ Ախար, սիրունութինն ու զղճուութինը հավնելու վրա չէ՞, թե կի տղեն մեկ հավնիլ է ու էլի կու հավնի, ո՞ւմն ինչ դավի կա։ Վիրչը, ինչ էրգարացնիմ, դեդեն տուն տարավ տղին շուր հաքցնելու ու էն անիծած դեդիդեն բաց ասավ ու չամանչեցավ, թե վիրչի գինը իսուն թուման է, կոսե, թե չիս բերի, կոսե, դիփ մետի մոշլա կոնիմ, կոսե, յիս գիդիմ վուր ուրիշ օմքին է տեսիլ, կ՝ոսե։ Հիմի ի՞նչ խոսկ ունիս։

ԿԱՐԱՊԵՏ

Ի՞նչ... խոսկ ունի՞մ։ Ի՞նչ... խոսկ... պիտի... ուններամ, ախպեր. տար սի՛վցու, ջանս դուս գա, պիտի համբրիմ, ուրիշ ի՞նչ չարա ունիմ. գնա՛ վիկալ, էլախտ կնգաս ձեռաց պահ տվի։

ԻՍԱՅԻ

Քի պես լավ մարթ աշխարքումը չի ըլի, Գարասիմ Յակուլիչ։

ԿԱՐԱՊԵՏ

Դե՛, գնա՛, ջա՛լդ արա, Իսայի։ Ուրիշ, դեդեն ի՞նչ է ասում տղինը։

ԻՍԱՅԻ

Ուրիշ ի՛նչ պիտի ասի, վունցոր քի մոդ խոսում էր, էլի էնենց է քարոզում տղին. ուրախու վուտի վրա չէ կանգնում. ասում է՝ էս ղադա փո՛ղ ու բաժինք կուլի՞, կոսե։

ԿԱՐԱՊԵՏ

Լավ կնիկ է երևում, ա՛յ. ինձ շատ դուր էկավ։

ԻՍԱՅԻ

Վա՛հ, աստծու հոքի է, ասում իմ։

ԿԱՐԱՊԵՏ

Դե՛, բաս չո՛ւստ գնա, ամա էլ տղիմեն չհիռանաս. ինչրու չրերիս։

ԻՍԱՅԻ

Էս սահաթիս էվետ։ (Շտապով գնում է դեպի ձախ դուռը, հետո հետ է դառնում։) *Ամա, ի՛նչ միտս էկավ, Գարասիմ Յակուլիչ. խոմ գրո՞ւստ*

գիդիս վուր էն տղեն ուրիշ ախչիկ չէ տեսի. ո՞վ գիդե, մեքաշ չխայտառակվինք։

ԿԱՐԱՊԵՏ

Աբա՛, քիմեն չի՛մ արմնում, Իսայի՛, յիս թա՛վաքալի բան կու բրոնի՛մ։

ԻՍԱՅԻ

Օղորմի քու հորը, էս սահաթիս էվետ բերիմ։

Շտապով դուրս է գնում ձախ դռնից։

ՏԵՍԻԼ ԺԲ

ԿԱՐԱՊԵՏ, մենակ։

Հը՛մ... դրուստ ճքնավուր է էս Իսային, աստուծ գիդենա, իր հալալ միամտութենով... (Լուռ անց ու դարձ է անում։) *Հիմի բանը վուր դուրթ բացվի...* (Մտածմունքի մեջ է ընկղմվում։) *Չէ՛, չէ՛, ամեն բան լավ ունիմ սարքած... Օղունդ մե նշանը տալ տամ ջեր, մնացածը իժում յիս գիդիմ։*

Դուրս է գնում աջ դռնից։

ՏԵՍԻԼ ԺԳ

ԻՍԱՅԻ, ՆԱՏԱԼԻԱ

ԻՍԱՅԻ, շտապով դուրս գալով ձախ դռնից և փողերը ծոցը դնելով։

Հա՛, հա՛, էս սահաթիս գալիս ինք։

ՆԱՏԱԼԻԱ, հետևելով Իսայուն։

Ինչրու դուք գուքաք, հոքին կու դուս գա խղճինը։

ԻՍԱՅԻ, շտապով։

Էրանի մե գլուխ գա բանը, կես սահաթ ուշ ըլի, ի՞նչ հաջաթ։ Ամա, Նատալիա՛... (Բռնելով ձեռքը, առաջ է բերում։) *բեդամաղ մի՛ ըլի, ինձ կու սիրիս, էլի իմ հարցնում... Ծովի տալղի պես գնում ու գալիս է մըտ-*

կումս... Խո դրո՞ւստը գիդիս վուր էրեգ օշով տղա չէ ռաստ էկի քիզ էստի դռանը։

ՆԱՏԱԼԻԱ

Ի՞նչ էրազ իս տեսի, չիմ գիդի. Թե վուր ասի՝ չէ՛, քա՞նի հարցնիս։

ԻՍԱՅԻ

Քու արիվը՞։

ՆԱՏԱԼԻԱ

Իմ արիվը, քա՛. չիս ավտո՞ւմ։

ԻՍԱՅԻ, աջ ու ձախ նայելով գրկում է Նատալիային։

Ը՞հ, քու հոքուն մեռնիմ, քու հո՛քուն։

Պինդ համբուրում է և շտապով գնում։

ՆԱՏԱԼԻԱ, բռնելով Իսայուն։

Իմքին բան կա՞, ի՞նչ իս թաքցնում։

ԻՍԱՅԻ

Իժում, իժում, էտ իժում, հիմի շտապում իմ... (Մի քանի քայլ գնում է։) *Ինչրու դուն փի՛քր արա՝ էն հանգի լավը՝ ուրիշ էլի ի՞նչ գուզիս սըրտով, առնիմ քիզ համա։* (Վրա ընկնելով։) *Ճի՛րի մե շենի, աղունա՛կ։* (Կրկին համբուրելով։) *Ը՞հմ։*

Դուրս է վազում խորթի դռնից։

ՏԵՍԻԼ ԺԴ

ՆԱՏԱԼԻԱ, մենակ։

Էս ի՞նչ խաբար է՞։

Ձեռքը ճակատին տանելով, մնում է անշարժ, մտածմունքի մեջ խորասուզված։

Պատկեր։

Տեսարան երկրորդ

Բեմը ներկայացնում է Կարապետի տան գավիթը։ Խորքում, ձախ կողմը, պարտեզ, իսկ աջ կողմը՝ տուներ, որի սաստիկ լուսավորված պատուհանները գետնից բավականին բարձր են։ Գավթում—աջ կողմը սրահ՝ կողպած փոքրիկ պատուհանով առաջին կարգում և նույնպես կողպած դռնով երկրորդ կարգում։ Այս սրահը այնպես է դուրս դրած կուլիսների առջև, որ նրա պատուհանից, որ գտնվում է հանդիսականների դիմացը, անհնարին է տան պատուհանները տեսնել։ Ձախ կողմը, առաջին կարգում, մեծ ծառ, իսկ երկրորդում՝ գավթի դուռը, որի երկու փեղկերն էլ որոշ կերպով բոլորովին բաց են մնում մինչև վերջը։ Ծառի ետևից երկնքում փայլում է լուսինը, որ լուսավորում է պարտիզի մեկ մասը։ Գավթումը բավականին մութն է։

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ՍԱՐԳԻՍ, մենակ. ավելը ձեռքին երգելով մտնում է գավթի դռնից։

«Արազ ղըրաղընդա յամ, լամո,
«Ջեշմեյ չըրաղընդա յա՛մ. (Կրկնել։)
«Իթիրմիշամ յարըմի, յամո,
«Օնուն սորաղընդա յա՛մ։ (Կրկնել։)
«Լամո, լամո, խան լամո, լամո,
«Սարգի սուսան ջան, լամո՛,
«Յարի վաֆադար, լամո՛,
*«Օ բոյա դուրբան, լամո՛»։**

Ավելը մի կողմն է դնում։

Էս էլ պրծա՛... Դիփ հադիր է. մնացիլ է հիմի վուր նորափեսեն շնուր բերի ու հրեղեն Մարգրիտին պռոշտի անե. ամա էն սրտանց պաչ անելիս պռոշներուն վուր մե քիչ սիպտըկադիզ կպչի, չիս միդ չունենամ... Հաչաթ չէ, կանֆետ կու գիդենա. մայինց նշվանտեք է ու նշվանտեք...

* Թուրքերեն է։

Արաքսի ափերումն եմ, հոգյա՛կ,
Աչքերիդ բոցերումն եմ. (Կրկնել։)
Կորցրել եմ սիրուհուս, հոգյա՛կ,
Նըրան որոնելումն եմ։ (Կրկնել։)
Հոգյա՛կ, հոգյա՛կ, խա՛ն հոգյակ, հոգյա՛կ,
Դալար շուշան ջան, հո՛գյակ,
Սիրուդ մտերիմ, հո՛գյակ,
Հասակիդ մատաղ, հո՛գյակ։

Օ՛հ, հո՛, հո՛, հո՛, ջանդան բեգար էլա էսօր շատ բան շինելեն։ Հայ՝ դե՛սը գնա, դենը գնա, է՛ս տար, է՛ն բի, է՛ս վիկալ, է՛ն վեր դի... դրուստ ցավ է ղուլուղ անիլն, էլի՛... էրնեկ նոքարն ի՛նչ ստիղծելու էր, վուր ստիղծում էր աստուձ... Ում տանն ինչ պատահի, նոքրի ջանը պիտի դուս գա. աղեքն ուրախանան՝ դո՛ւն չարչրվի, աղեքը տխրին՝ է՛լի դուն չարչրվի, դի՛փ չարչրրվի ու չարչրվի մե զլուխ... է՛հ, աստուձ, բարեմց ստիղծում էիր ու ստիղծում, դիփունին մետի պարուն կու ստիղծեիր մեբաշ ու պրծնեիր մե, է՛... Վախտ ու բեվախտ՝ (Կարապետի ձայնով։)— *Սա՛րքիս։* (Իր ձայնով։)— *Հա՛մմե։*

ՑԵՍԻԼ Բ

ՍԱՐԳԻՍ, ԿԱՐԱՊԵՏ

ԿԱՐԱՊԵՏ, դուրս գալով աջ կողմից, կանչում է։

Տո՛, Սա՛րքիս։

ՍԱՐԳԻՍ, զոռալով։

Հա՛մմե։

ԿԱՐԱՊԵՏ, հանգիստ։

Ի՞նչ իս զռում, տո՛. վո՞ւրթենն իս։

ՍԱՐԳԻՍ

Էստի իմ, աղա ջան։

ԿԱՐԱՊԵՏ

Տո՛, Իսային խում չէ՞ էկի էլի։

ՍԱՐԳԻՍ

Չէ՛, աղա, չէ էկի։

ԿԱՐԱՊԵՏ, ճեղացած։

Լո՛բի է դրուստ էն մարթն, է՛լի։ (Լռություն։) *Մարթ ինչ բան ունենա, նրան պահ տա։*

Բարկացած մաճ է գալիս։

ՑԵՍԻԼԳ

ՆՐԱՆՔ, ԻՍԱՅԻ

ԻՍԱՅԻ, ճերս վազելով գավթի դռնից, կանչում է։

Սա՛րքիս, Սա՛րքիս, տո՛ Սա՛րքիս... Ո՞ւր է կորի էն անիծածը։

ՍԱՐԳԻՍ

Ի՞նչ է, աղա, ի՞նչ։

ԻՍԱՅԻ

Տո՛, էն տղեն խում էստի չէ՞։

ՍԱՐԳԻՍ

Ի՞նչ տղա։

ԻՍԱՅԻ

Ա՛յ, միր փեսացուն։

ՍԱՐԳԻՍ

Ռանգն էլ չիմ տեսի։

ԻՍԱՅԻ

Վա՛յ մե, ի՞նչ անիմ հիմի, բաս իսկի օչով չէ՛ էկի էստի՞։

ՍԱՐԳԻՍ

Չէ՛. ասում իմ՝ վուր օչով չէ էկի։

ԻՍԱՅԻ

Վո՞ւրթենը ննգնիմ հիմի, ի՞նչ անիմ, ի՞նչ ասիմ Կարապիտին. սաղ-սաղ կուտե ինձ, թոխլո ձվի պես կու խպշտե. վո՞ւրդի գթնիմ, ո՞ւր գնամ, վո՞ւրթենը գնամ, վո՞ւր ջուրը ննգնիմ, վո՞ւր սարը կորչիմ... Կուլի էլի տա՛նը գթնի՛մ։

Կամենում է գնալ։

ԿԱՐԱՊԵՏ, բռնելով Իսայուն։

Մուլա՛փ, մուլա՛փ հալա, ի՞նչ իս ասում։

ԻՍԱՅԻ, կակազելով։

Վը վը վը վունչիչ։

Սարգիսը բռիչը պահելով մի կողմն է քաշվում։

ԿԱՐԱՊԵՏ

Հը՞, բերնումդ թիքա ունի՞ս, յիս թե՞ քիզ ասի վուր էն տղիմեն չհիռանաս։

ԻՍԱՅԻ

Տանը տե՛սա ու հիռացա՛։

ԿԱՐԱՊԵՏ

Բաս տանը չէ՞. ի՞նչ է էլի։

ԻՍԱՅԻ

Վուր գիդենամ, խո էլ սարեսար չիմ ննգնի։

ԿԱՐԱՊԵՏ

Ախար, տեսնում իմ վուր շնո՛ւք չունիս, է՞։

ԻՍԱՅԻ

Յիս ի՞նչ անիմ, Գարասիմ Յակուլիչ. գնացի հալալ միամիտ, վուր ասիմ շնուր բերե. ամա ինչրու իմ գնալը, չիմ գիդի թե թազա ի՛նչ միտկ է անց կենում էն տղի գլխումը, գդակը վիր է կալնում ու հա՛յդա... Շատ դես ու դեն ննգա, չգթա. հիմի կի դեդիդեն ռաստ էկավ ճամփին, ասավ վուր իր քվիր տղեն էստի է էկի միթամ, ամա ո՞ւր է։

ԿԱՐԱՊԵՏ

Իժում փուղն ի՞նչ արիր։

ԻՍԱՅԻ

Փուղն էլ էն անիծած դեդիդեն առավ ձեռնեմես. դեմուդեմը էստի էր վազում։ Դիփ մետի էս սահաթիս էվետ քար ու քանդ կոնիմ, թե չիս տվի, կոսե. չարես ի՞նչ էր։

ԿԱՐԱՊԵՏ, բարկացած։

Ա՛սած է, ախար, է՞, Իսայի, թե գիլի շլինքն էնդուր է հաստ, վուր իր բանը իր ձեռով է շինում։ Յիս վուր քի վրա չէի գցի էս բանը, ինչրու հիմի նշանը տված էլ էր ու պրծած էլ։

ԻՍԱՅԻ

Ախար, ինձ վրա անմիղ իս չարանում, Գարասիմ Յակուլիչ, յիս ի՞նչ անիմ։

ԿԱՐԱՊԵՏ

Էն անիս, վուր է դեդիդեն էլախտ վուր զահրումարն ուզից, պիտի վունցոր էլիլ էր ավատացրիլ էիր վուր կու տանք։ Էլ ինձ մոդ ո՞ւր էիր վազում, ո՛ւր. վա՞խենում էիր վուր չէի տվի՞։

ԻՍԱՅԻ

Գա՛նա լսից ինձ էն անիծածը՛... Նրա անումը կտրե աստուծ։

ԿԱՐԱՊԵՏ

Մե խոսկով չէիր պիտի էլախտ էկի, չէ՞։ Ջիս գիդի՞ վուր նշնելու տղեն խա՛մ թոչունք է՞. ո՞ւր էիր հիռանում, ո՞ւր, քի՛զ իմ հարցնում։

Բարկացած մաճ է գալիս։

ԻՍԱՅԻ

Բաս հիմի ի՞նչ անիմ։

ԿԱՐԱՊԵՏ, առաճնին։

Ա՛յ, զահրումար անիս գլխիտ։ (Իսայուն։) *Տո՛, էլ ի՞նչ իս էտի ցից էլի. գնա՛ վուրդի վուր ըլի գթի ու բի՛, թե չէ միր մեչը չալեն կտրած է, աստուծ գիդենա։*

ԻՍԱՅԻ

Ա՛խ, Գիորգի ջան, ձեռնեմես թռար, է՛լի։

Դուրս է գնում գավթի դռնից։

ԿԱՐԱՊԵՏ, ձեռքը թոթափելով և առաճնին։

Քու մա՛րթ ասողին էլ ինչ ասիմ։

Բարկացած դուրս է գնում աջ կողմից։

ՏԵՍԻԼ Դ

ՍԱՐԳԻՍ, մենակ։

Ձեռնեմես թռար, կոսե։ Վա՛հ, ա՞կռավ է, թե աղունակ... Թա՛յին սապոժնիկը բան է ասի էն տղին ու նա էլ թախ է կացի։ Խիղճ Մարքրիտ, բախտը չէ կտրում, ի՛նչ անիս։

Դուրս է գնում աջ կողմից։

ՏԵՍԻԼ Ե

ԻՍԱՅԻ, ԳԵՈՐԳ

ԻՍԱՅԻ, գավթի դռան մեջ։

Ախար, էտ ինչի՞ր իս ասում, Գիորգի ջան. մա՞րթ խափիմ ու է՛ն էլ քի՛զ... է՛տենց իս ճանչնում ի՞նձ։

ԳԵՈՐԳ, նույն դռանը։

Ուրեմն ինչի՞ փախար, ինչի՞ չսպասեցիր ինձ, ի՞նչ առևտուր սարքեցիր մորաքրոջս հետ... (Մտնելով գավիթը Իսայուն մի քանի քայլ առաջ է բերում և ցածր ձայնով։) *Ա՛յս կողմն արի, մարդիկ են անցնում... Ի՞նչ է նշանակում այս բոլորը։*

ԻՍԱՅԻ

Վուր էլ ձեռը չվիկալավ էն օխնած հոքին...

ԳԵՈՐԳ, զգուշացնելով։

Կա՛մաց...

Խոսակցությունը շարունակվում է ցածր ձայնով։

ԻՍԱՅԻ

Ցիս էլ ի՞նչ էի արի. էկա վուր Գարասիմ Յակուլիչին հարցնիմ... էտ հանգի կնիկ գանա է՛լի ստեղծվգիլ է աշխարքումը՝. անմրթի իմ, քունը դեդիդա է։ (Առանձին։) *Ա՛յ, նրա վիզը կոտրե աստուծ։*

ԳԵՈՐԳ

Ինչի՞ ի՛նձ չհարցրիր, ի՛նձ, եթե դու դրուստ մարդ ես, ինչի՞... Բայց ձեզ հետ ի՛նչ խոսի մարդ... Դու գնա՛ իսկույն Գարասիմ Յակուլիչից ներողություն խնդրիր իմ կողմանե. ասա՛, որ այս գիշեր չկարողացա բանն պատահեցավ, ասա՛, մեկ խոսքով՝ ի՛նչ կամենաս հնարիր, իսկ էգուց ես ինքս բոլորը կպարզեմ...

ԻՍԱՅԻ

Հանաքի վուխտը չէ, Գիորգի ջան, է՞։

ԳԵՈՐԳ

Գնա՛, գնա՛...

Կամենում է գնալ։

ԻՍԱՅԻ, ձեռքը բռնում է։

Ախար, էս խո քարուքանդ էլավ դիփ. արի՛ դիվիր գնանք, թե քու հոր գերեզմանը կու սիրիս. էլի թազա բանիր մի՛ մոգոնի, է՞։

ԳԵՈՐԳ, ազատվելով Իսայու ձեռքից։

Չէ՛, չէ՛։ (Իսայուն առաջ բերելով։) *Այստեղ մեկ բան կա... Իմ տեսածը Մարգրիտը չէ։*

ԻՍԱՅԻ

Վա՛... Արի՛, ախպեր, քու աճկով տիս սուտն ու դուրթը։

ԳԵՈՐԳ

Էգուց, էգուց։ (Մի քանի քայլ գնում է և տեսնելով Նատալիային սենյակումը պատուհանների մոտ անցնելիս։) *Ա՛հ, նա՛ էր, նա՛. Իսայի. կարծեմ նա էր։*

Նայում է պատուհաններին։

ԻՍԱՅԻ, նկատելով Նատալիային անհետանալիս և առանձին։

Վա՛, էս նա՞ էր... (Նայելով պատուհաններին։) *Էլ օչով չկա...* (Գեորգին շվարված։) *Մո՛ւլափ, մո՛ւլափ, լավ բան միտս էկավ, յիս էս նմուտիս էվետ Մարքրիտին քիզ շանց տամ հենց էս ակոշկումը։*

ԳԵՈՐԳ

Ի՞նչպես։

ԻՍԱՅԻ

Ցիս մե դիվիր գնամ, դուն ինչրու էտնցներումը մա՛ն արի։ (Գնալով։) *Հենց էս նմուտիս էվետ։*

ԳԵՈՐԳ

Կա՛ց, կա՛ց։

ԻՍԱՅԻ

Սո՛ւ, վուր փիլիսոփի խիլք իմ ունեցի։ Մի՛ վախենա, էս դոնիրն ինչրու կես գիշերն էսենց բաց է... (Վազում է դեպի աջ և հետ է դառնում։) *Թե քու տեսածը չէ, ախպեր, թեգուզ էլ բարի լուս մի՛ տա ինձ հորեսի դենը։*

Դուրս է վազում աջ կողմից։

ԳԵՈՐԳ, մենակ, փոքր լռությունից հետո:

Գոնյա վերջապես բոլոր կասկածներս կփարատվեն... Բայց ոտի ձայն է լսվում...

Դուրս է գնում գավթի դռնից:

ՏԵՍԻԼ Ա

ԿԱՐԱՊԵՏ, ԻՍԱՅԻ, դուրս են գալիս աջ կողմից:

ԿԱՐԱՊԵՏ

Հը՛, էլի իմքին կա՞:

ԻՍԱՅԻ, շշնջելով:

Սո՛ւ, սո՛ւ, Գարասիմ Ցակուլիչ, էն տղեն էստի է: Աբա՛, վո՞ւնց անինք վուր է Մարքրիտին էստի ակոշկումը դուս բերինք: Թո՛ղ մեկ էլի տեսնե, չէ ավտում վուր իր տեսածը Մարքրիտն ըլի:

ԿԱՐԱՊԵՏ, նույնպես:

Ի՞նչ իս ասում, Իսայի, գժվիլ ի՞ս:

Խոսակցությունը շարունակվում է շշնջելով:

ԻՍԱՅԻ

Աստուձ գիդենա, առանց էս չի ըլի:

ԿԱՐԱՊԵՏ

Տո՛, թո՛ւղ տուն գա, էնդի վունցոր ուզենա տեսնե:

ԻՍԱՅԻ

Չի ըլի, ասում իմ, սիրտը խիստ ին իարաբ արի. դե՛հ, չո՛ւստ, թե չէ էլի ձեռնեմես կէհա:

ԿԱՐԱՊԵՏ, շփոթված:

Հը՛մ... հը՛մ... հը՛մ... աբա՛, վո՞ւնց անինք. քիզ վուր տեսնին, ուվրո խիալ կու տանին... (Բարկացած): *Ա՛խ, Իսայի՛:*

ԻՍԱՅԻ

Վա՛, յիս էստի կու մնամ:

ԿԱՐԱՊԵՏ

Չէ՛, չէ՛... հա՛, լա՛վ, լա՛վ... Դուն էստի թա՛խ կացի, էն տղեն չտեսնե քիզ, գնամ յիս սարքիմ. ա՛յ, էստի սարայումը կա՛ց. (Տանում է Իսայուն դեպի սրահը և դուրը բաց անում:) *վուտդ դրոշկին չխփիս:*

Ներս մղելով Իսայուն, նշաններով զգուշացնում է նրան ձայն չհանել:

ԻՍԱՅԻ

Լա՛վ, լա՛վ:

Մտնում է սրահը:

ՏԵՍԻԼ Է

ԿԱՐԱՊԵՏ, մենակ. սրահի դուռը փակում է Իսայու վրա, հետո երկաթե փականով դուռը կողպում:

Նա՛լաթ քի, չար սատանա... Չիր արիվը, իմ դամբի թիլիրը մեկն էրկուսով ավելցավ. գնամ դիվիր, Նատալիին նստեցնիմ, մե խաղ էլ ասեցնիլ տամ: (Խնդալով:) *խի՛լքեմեն կուլի պարուն փեսացուս:*

Գաղտագողի դուրս է գնում աջ կողմից:

ՏԵՍԻԼ Ը

Լուռ տեսարան

ԳԵՈՐԳ, մենակ. մտնում է գավթի դռնից, ծածուկ նայում է այս և այն պատուհանին, բայց հանկարծ, ոտի ձայն լսելով՝ դուրս է գնում նույն դռնից:

ՏԵՍԻԼ Թ

ՍԱՐԳԻՍ, մենակ. դուրս է գալիս աջ կողմից:

Էս էլ քիզ նշվանտեք... Մնամ վուր բանն էլ գլուխ չէ գալի, թե չէ ո՞ւր է էն տղեն, ինչի՞ չէ համեցեք ըլում... Խիղճ Մարքրիտի սիրտը կի էնդի գնում ու գալիս է իժում ավտաս ի՞նչ ումիկ ուներ, է՞.. Փո՛ւ, ղսմա՛թ. ի՞նչ ասիմ քիզ... Ա՛փսուս իմ ամագ... Հիմի վի՛կալ ու իմ շի-

նած ու սարքած բանիրը հիդ էլի իմ ձեռով քար ու քանդ արա... Վո՛ւր ասում իմ, չի՛ ըլի, ախար, է՛. էլի իմ միճկի զոլը պիտի կտրվի... Մեն քանի մանեթ բախշիշի ումիկ ունեի, էն էլ փուստ էլաւ (Ցուցամատը նատիճ խելով:) *Ի՛նչ գրած է էստի, գրած է... է՛հ, էն էլ ձիր շարը տանեւ* (Թառ ածելու ձայն է լսվում: Սենյակի պատուհաններում երևում են Նատալիան և Կարապետը. Նատալիան նստում է միջի պատուհանի մոտ, իսկ Կարապետը շուտով հեռանում է:) *Սո՛ւ հալա... Հա՛, էս միր դուքնի աշկիրտն է թառ ածում. հալբաթ Մարքրիտին ուզում ին իխտիլաթ շանց տաւ։*

ՏԵՍԻԼ Ծ

ՆԱՏԱԼԻԱ, սենյակում պատուհանի մոտ նստած. ԳԵՈՐԳ. ԿԱՐԱՊԵՏ, ՍԱՐԳԻՍ, զավթում, ԻՍԱՅԻ. առաջ սրահի պատուհանում, հետո զավթում:

ՆԱՏԱԼԻԱ, թառի ներդաշնակությամբ երգում է առանց բնդհատելու մինչև վերջը. իսկ մյուս գործող անձինք խոսում են միայն այն ժամանակ, երբ Նատալիան շունչ է առնում: Փակագծում նշանակած Իսայու և Կարապետի խոսակցությունը ոչ միայն շշնջելով է կատարվում, այլ արտահայտվում է նաև շարժվածքներով:

Ա՛խ, ի՛մ սիրեկան, ինձմեն հիռացար,

ՍԱՐԳԻՍ, ցածր ձայնով:

Էս լա՛վ է։

ՆԱՏԱԼԻԱ, շարունակում է երգել:

Քիզ ի՞նչ գեթ արի, վուր ինձ ուրացար.
Վիրշը թե էս էր, էլ ո՞ւր մոդ կացար,
Քու սրտի սերը ինձ ո՞ւր խոստացար։

ՍԱՐԳԻՍ, զմայլված և դարձյալ ցածր ձայնով:

Ոխա՛կ։

Կարապետը կամաց-կամաց դուրս է գալիս աջ կողմից, սրահի դռան փականը շոշափում է, հետո սրահի մոտ կուչ է գալիս: Սարգիսն ապշած, ծածկվում է ծառի տակ և այնտեղից հետաքրքրությամբ հետևելով բոլոր անցքին, հետզհետե զարմանք է ցույց տալիս: Իսային սրահի դուռը ներսից կամաց շարժում է. Կարապետը, շփոթվելով. կրկին շոշափում է դռան փականը:

ՆԱՏԱԼԻԱ, շարունակելով, երգում է երկրորդ տունը:

Սուր էշխիտ նիտը սրտիս խփեցիր,
Քու սիրու կրակը ջանս գցեցիր.

ԳԵՈՐԳ, դարձյալ մտնելով զավթի դռնից և ցածր ձայնով։

Այս ձա՛յնը...

Իսային սրահի պատուհանը բաց է անում, գլուխը դուրս բերում և զարմացած ականջ դնում, բայց Նատալիային չէ կարողանում տեսնել:

ՆԱՏԱԼԻԱ, շարունակում է երգել։

Սրտիս յարերուն մհլամ չքսեցիր,
Էրած ու խորված մըտետ գցեցիր։

ԳԵՈՐԳ. տեսնելով Նատալիային, ցածր ձայնով:

Նա՛ է։

Իսային ապշած երեսը խաչ է հանում:

ԿԱՐԱՊԵՏ, տեսնելով Իսայուն, սաստիկ շփոթվում է, բարկանում և շշնջում, առանձին:

Սատանականց սա էլ էստի է դուս բերի գլուխը։

Մոտենում է նրան:

ՆԱՏԱԼԻԱ, շարունակելով, երգում է երրորդ տունը:

Արի՛, սի՛րեկան, ի՛նձ մե ռա՛հմ արա.

ԿԱՐԱՊԵՏ, Իսայուն շշնջելով:

Մարքրիտին նստեցրի ակոշկումն ու խաղ էլ իմ ասեցնիլ տալի։

Միասին

ՆԱՏԱԼԻԱ, շարունակում է երգը:
Էրեսըտ մի՛ շուր տա, մեկ մըտի՛կ արա.

ԻՍԱՅԻ, շշնջելով և շարժվածքով:
[*Մտի՛կ է՛. ինձ Նատալիի ձենը թվաց։*]

ԿԱՐԱՊԵՏ, նույնպես:
[*Ի՞նչ իս սարսաղ դուս տալի։*]

Կարապետը, վախենալով որ Իսային չլսե Նատալիայի ձայնը, վարպետությամբ մոտ է քաշում նրա գլուխը և, մեկ ականջում փսփսալով, մյուս ականջը ձեռքով ծածկում է: Գեորգը զմայլվում է։

ՆԱՏԱԼԻԱ, շարունակում է երգը։

Խղճա՛ քու ղուլին, մեկ ա՛նգամ արա։

ԻՍԱՅԻ, ցածրաձայն։

Ղոչաղ Մարքրիտ։

ԿԱՐԱՊԵՏ, Իսայու բերանը ծածկելով։

Սո՛ւ...

ՆԱՏԱԼԻԱ, շարունակում է երգը։

Քու քաղցր ձենին ինձ ա՛րժան արա։

Գեորգը հիացած առաջ է գալիս և նորից մոտենում է պատուհանին։

ՆԱՏԱԼԻԱ, վեր կենալով, կրկնում է։

Քու քաղցր ձենին ինձ ա՛րժան արա՞։

Պատուհանից հեռանում է։ Դադարում է թառը։ Կարապետը սրահի դուռը բաց է անում։

ԳԵՈՐԳ, ցածր ձայնով կանչում է։

Ի՛սայի, Ի՛սայի... (Հափշտակված այս ու այն կողմն է ընկնում։) *Ա՛խ, ի՞նչ եղավ...*

Անհետանում է։

ԿԱՐԱՊԵՏ, Իսայուն, սրահի դռան մոտ, շշնջելով։

Աբա՛, Իսայի ջան, հիմի դուն գիդիս։

ԻՍԱՅԻ, ճանդիպում է Սարգսին և գրկելով նրան շշնջում է։

Աբա՛, Գիորգի ջան, հիմի...

ՍԱՐԳԻՍ

Վա՛յ մե, դեղի։

---

* Այս երգի շարունակությունն ու վերջը՝
Թե աղանչաքս դուն չիս իմանա,
Էլ Լսենց կինքին չիս չիմ դիմանա.
Գլուխս կու սպանիմ, ասում գիդենա,
Կուլի քո սերը սրտես վիրանա։

ԻՍԱՅԻ, հետ մղելով Սարգսին։

Տո՛, անիծած, փեսին գիդեի։ (Կանչում է։) *Գիո՛րգի ջան, Գիո՛րգի։*

ԳԵՈՐԳ, առաջ գալով։

Ա՛խ, Իսայի ջան, դո՞։ Հա։

ԻՍԱՅԻ

Բաս ո՛վ կուլի... Հը՛, սիրտդ տիղն էկա՞վ, քու խաթիր խաղ էլ ասիցնիլ տվի, ա՛յ. վո՞ւնց էր։

ԳԵՈՐԳ

Հիանա՛լի, հիանա՛լի, Իսայի ջան։ Հիմա ա՛րի վերև գնանք։

ԿԱՐԱՊԵՏ, առանձին, ցածր ձայնով։

Հիմի հոքին ձեռիս է։

Գաղտագողի դուրս է գնում աջ կողմից։

ԻՍԱՅԻ, Գեորգի ձեռքը բռնելով։

Ա՛րի, Գիորգի ջան, ա՛րի։

Տանում է դեպի աջ կողմը։

ԳԵՈՐԳ, ազատվելով Իսայու ձեռքից։

Չէ՛, չէ՛, հյուրերի ճանապարհով, Իսայի։

Գնում է դեպի ձախ։

ԻՍԱՅԻ, Գեորգի փեշը բռնելով։

Լա՛վ, լա՛վ։

Դուրս են գնում գավթի դռնից։

ՏԵՍԻԼ ԺԱ

ՍԱՐԳԻՍ, մենակ։

Է՛սենց էլ օյի՞ն։ (Ներկայացնելով ձեռնածու պարսկին կապիկ խաղացնելիս։)

«Ֆասլի բըհար,
Սուրաթի յար,
Ջեշմի խումար,
Լալի նըգյար,
Դադե շարար
*Բար դիլի զար։»**
Կրրր...

Դուրս է վազում աջ կողմից։ Վարազույրն իջնում է։

* Պարսկերեն է։—
Գարնան ժամեր,
Անուշ պատկեր,
Խումար աչեր,
Կարմիր թշեր,
Սիրտ նետեր
Սիրտս են ցցել։

ԱՐԱՐՎԱԾ ՁՈՐԲՈՐԴ

Ամենաշքեղ դահլիճ Կարապետի տանը՝ թանկագին կահ-կարասիքով զարդարած։ Աջ, ձախ և խորքում դռներ։ Դահլիճի հատակը ամբողջապես ծածկած է գորգով. առաստաղից կախած է շքեղ չահ վառ մոմերով։ Ձախ կողմը՝ բազմոց սեղանով և բազկաթոռներով, իսկ աջ կողմը՝ փոքրիկ սեղան երկու աթոռով։ Աջ ու ձախ մեծ հայելիք և ոսկեզօծ կանդելաբրներ նույնպես վառ մոմերով։ Խորքում՝ աթոռներ, դաշնամուր իր բոլորակ աթոռով և ժամացույց, որի սլաքները ցույց են տալիս ժամը ութը։ Սեղանները ծածկած են գունավոր սփռոցներով և դռները նույնպիսի դրապրիներով։ Տեղ-տեղ ծաղիկներ։ Ժամացույցը բանում է։

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ԳԵՈՐԳ, ԻՍԱՅԻ, մտնում են դիմացի դռնից։

ԻՍԱՅԻ

Բաս էտենց հա՞վնում իս, է՛լի, Գիորգի ջան։

ԳԵՈՐԳ

Ա՛ննման է, Իսայի ջան, աննմա՜ն։

ԻՍԱՅԻ

Տո՛, վուր էտենց է ու էտենց, էսօր էվետ քո՛լթահ արա ու պրծի, է՛լի. էլի՞նչ իս ջանջլացնում։

ԳԵՈՐԳ

Ա՛խ, Իսայի, ի սեր աստուծո, նորից մի՛ սկսիր, ես իմ գործը գիտեմ... Դու միայն ծանոթացրո՛ւ, ծանոթացրո՛ւ շուտով։

ԻՍԱՅԻ

Ա՛յ, է՛ս սահաթիս, Գիորգի ջան. ամա, քու արիվը, էս գիշիր էվետ վուր նշանը տաս ու վիրշացնիս, խիստ լավ կոնիս։

ԳԵՈՐԳ

Նշա՞նը, նշա՞նը... դեռ թո՛ղ մեկ ծանոթանանք, խոսենք, ասում եմ, նշանը ո՞ւր կերթա. այսօր չլինի, վաղը լինի, ի՞նչ կա... Գնա՛, գնա՛, իմաց տուր, որ այստեղ ենք։

ԻՍԱՅԻ

Ինչ քու ասածին իս, տո՛... Օհ՛, հ՛ո, հ՛ո, հ՛ո, հենց դիփ մետի պիտի քու խոսկն ըլի։ (Գեորգը ժպտում է։) *Հա՛, ծի՛ծաղի, սո՛ւտ իմ ասո՛ւմ... Ա՛յ, ախպեր. ջեր ասիր՝ թե ինչրու չգնակոմանամ, վուտս էլ չիմ տուն դնի, կոսե, ու էնենց բերիր բանը, վուր Գարասիմ Յակուլիչին իր վուտով բերիր քու տուն. իժում ասիր, թե իմ տեսածը Մարքրիտը չէ, կոսե, ու փառք աստծու, վուր էստումն էլ պարզերես դուս էկա քի մոդ. մեկ էլ տեսնիմ կանգնեցար, թե ջեր մե դարփա կտրեմեն էլ պիտի տնդղիմ, կոսե. վիկալ հիմի ու խիզճ ախչկան կտուրն էլ դիվիր տար քու խաթիր։*

ԳԵՈՐԳ, ժպտալով։

Մի՛ վախենար, Իսայի, հիմա գործը իր կարգին կե՛րթա։

ԻՍԱՅԻ

Չէ՛, դուն ինձ ասա՝ վո՞ւնց իս մաշուր անում. բանը խոմ գլո՞ւխ գալու է...

ԳԵՈՐԳ

Իհարկե. եթե այսպես կերթա գործը, այստեղ էլ ի՞նչ կասկած կարող է լինել։

ԻՍԱՅԻ

Վունչիչ չիմ ուզի, ախպեր, ամագս ածենա ու մե էրկուսիտ մետի կուռը կռանը գցած տեսնիմ ձիզ բոլթա տալիս... Հա՛յ թե կու խիթարվիմ վրեներուտ. դիրամալա կու կանգնիմ ուրախու, աստուձ գիդենա։

ԳԵՈՐԳ

Շուտով, շուտով, Իսայի ջան. շատ կարելի է որ շուտով տեսնես այդ ուրախությունը։

ԻՍԱՅԻ

Բաս դառավ վուր իմը փեսա կու դառնաս մեբաշ, Է՛լի, Գիորգի ջան։

ԳԵՈՐԳ

Այն ժամանակ փեսա էլ, ազգական էլ, Իսայի ջան. իմ ցանկությունն կայդ է։

ԻՍԱՅԻ, փաթաթվում է Գեորգին։

Օ՛հ, քու հոքուն մեռնիմ, Գիորգի ջան։ (Առանձին։) *Է՛սենց է զսմաթն, ա՛յ...* (Գեորգին։) *Գնամ էս նմուտիս էվետ Գարասիմ Յակուլիչին իմաց անիմ։* (Գնալիս, առանձին։) *Դրուստ աստծու բան է, ձիր արիվը գիդենա, յա հենց հիմիկ էվետ դեգիդեն ձեռաց թլիսմ արավ իր մըտկումն, անիծածը։*

Դուրս է գնում ձախ դռնից։

ՏԵՍԻԼ Բ

ԳԵՈՐԳ, մենակ։

Հետաքրքրական է մարդուս կյանքը, ճշմարիտ. մեկ չնչին պատահմունք որտեղից որտեղ է հասցնում... Երկու օր առաջ ես ի՛նչ կմտածեի, թե ա՛յսպես սիրով կընդունվեմ այստեղ կամ մինչև ա՛յս աստիճան կսիրահարվեմ... Այո՛, սիրահարված, սիրահարված՝ առանց ճանաչելու, առանց ծանոթ լինելու... Չէ՛, պետք է խելքս ժողովեմ և աշխատեմ սխալ քայլ չանել։ Հեշտ բան չէ. այստեղ պետք է ամբողջ կյանքիս հարցը վճռվի.... Օ՛հ, Մարգարի՛տ, եթե քո հոգին համապատասխանում է քո գեղեցկությանը՝ դու պետք է լինիս իմ սրտակից բարեկամը, ազնիվ ընկերը, իմ մխիթարիչ հրեշտակը։ Այո՛, այն ժամանակ ես կնվիրեմ իմ բոլոր կյանքը քո զարգացմանը, քո երջանկությանը։

ՏԵՍԻԼ Գ

ԳԵՈՐԳ, ԿԱՐԱՊԵՏ, ԻՍԱՅԻ

ԿԱՐԱՊԵՏ, դուրս գալով ձախ դռնից Իսայու ուղեկցությամբ։

Բարի իրիգուն, վուրթի, էս ինչի՞ ուշացար։

ԳԵՈՐԳ

Ներեցե՛ք, Գարասիմ Յակուլիչ, մի փոքր գործ պատահեցավ։

Միմյանց ձեռք են տալիս։

ԿԱՐԱՊԵՏ

Համեցե՛ք, համեցե՛ք. բա՛րի ըլի քու վուտը, վուրթի։

ԳԵՈՐԳ

Շատ ուրախ եմ որ ինձ որդի եք համարում։

ԿԱՐԱՊԵՏ, համբուրում է Գեորգին։

Յիս էլ ուրախ իմ, վուրթի, վուր քի պես փեսա ճարեցի. (Գեորգը հեգնորեն ժպտում է։) *շատ լավ տղա ին գովում քիզ. շատ ապրիս, վո՛ւրթի։ Հերտ էլ լավ մարթ էր, օղորմած հոքին, էլախտ խոմ քու դեդին էլ ասի... Իսաումեն պիտի ըլիմ շնորակալ, վուր քիզ ռաստ էբի.* (Գեորգը ողջունում է։) *սրա խոսկին խիստ իմ ավտում, սուտ խոսիլ չի գիդի։*

ԳԵՈՐԳ

Ես ինքս համոզված եմ, որ Իսային միշտ ճշմարիտ է խոսում։

ԻՍԱՅԻ

Շատ մի՛ գովիք, ախպեր, յիս էլ մե միղավուր մարթ իմ. առանց սուտ՝ ղուրթ էլ չկա։

ԿԱՐԱՊԵՏ

Համեցե՛ք, նստեցե՛ք, վուրթի... Նստի՛, Իսայի։ (Գեորգը գնում է դեպի աջ՝ աթոռ վերցնելու։) *Դե՛սը, դե՛սը համեցե՛ք։*

Հրավիրում է դեպի բազմոցը։

ԳԵՈՐԳ

Միևնույն է։

ԿԱՐԱՊԵՏ

Վա՛, գեթաղվա, փեսա ջան։ (Գեորգը նստում է բազմոցի վրա, իսկ Կարապետը և Իսային նրա մոտ աթոռների վրա այնպես՝ որ Կարապետը գտնվում է Գեորգի և Իսայու մեջտեղը։) *Բաս ամեն բանը վիրշացած է միր մեջը, վուրթի, վունցոր Իսային ասում է։*

ԳԵՈՐԳ

Մենք ոչինչ հաշիվ չունինք, Գարասիմ Յակուլիչ։

ԿԱՐԱՊԵՏ

Մենակ փուղի համա չլիմ ասում, վուրթի։ Էս հիմիկվան ջհելերը մե քիչ փուղ չիք սիրում. ամա փուղի ղադրը գիդացի, վուրթի. ուսումը խիլքի յարաղ է, ամա փուղը համ խիլքի յարաղ է, համ կամքի. շատ բան, ինչ ուսումով չի կանա շինի մարթ, փուղով կու շինե։

ԳԵՈՐԳ

Իհարկե որ փողով մեծ դժվարությունների կարելի է հաղթել։

ԻՍԱՅԻ

Աբա՛, Գարասիմ Յակուլիչ ջան, վուր գովում էի, հիմի խոմ տեսնում իս, վուր սուտ չէի ասում. տի՛ս վուր փուղի ղադրն էլ ի՛նչ հանգի գիդե։

ԳԵՈՐԳ, հանդիմանորեն։

Ի՛սայի, Ի՛սայի։

ԿԱՐԱՊԵՏ

Ինձ մոդ պարզերես իս, Իսայի ջան, աստուած տա, սրա մոդ էլ պարզերես դուս գաս։

ԳԵՈՐԳ

Ես հույս ունիմ։

ԻՍԱՅԻ, վեր կենալով, երեսը խաչ է հանում։

Փուխ էհամ աստծու զորությենին։ (Առանձին, նայելով դեպի երկինքը։) *Յարաբ էս վո՞ւնց վրա բերիր։*

ԿԱՐԱՊԵՏ

Էստի նստի՛ հալա, Իսայի։ (Իսային նստում է։) *Հա՛, էն էի ասում, վուրթի, վուր մենակ փուղի վրա չէ միր հեսաբը։ Հիմի ինձ ասա՛, փեսա ջան. ախչկաս վուր դուս բերիմ, ղուրթ մտկումդ հաստատ կա՞, վուր ուզիս նրան, թե էնենց ժամանակ իս ուզում անց կացնի հիդը։*

ԳԵՈՐԳ

Ես ձեզ չեմ հասկանում, Գարասիմ Յակուլիչ... Եթե ես ձեր աղջկան ուզենալու միտք չունենայի, ես այս բոպիս այստեղ չէի գտնվիլ... Միայն,

իհարկե, ինչպես խոստացել եք, ժամանակ կտաք մեզ միմյանց հետ ծանոթանալու։

ԿԱՐԱՊԵՏ

Շատ ապրիս, վուրթի։ Ամա գիգիս ի՞նչ է. յիս էլախտ էլ խոստացա քիզ՝ վուր շնուր բերիս, Մարքրիտս միամիտ դուս գու քեր բանի խաբարութին չէր ունենա. ամա էս խանի խարաբ Իսային տուն ննգավ էնդի դեմուդեմը, թե խիստ սրտով ուզում իս, կոսե, ախչիկս իմացավ ու սիրտը չեր էլի թրթռում է։

Գեորգը շփոթվում է։

ԻՍԱՅԻ

Վա՛, հեր օխնած, յիս ի՞նչ անիմ. վունցոր առա, էնենց էլ ծախեցի. էս տղէն վուր էտենց ասավ, ես իմ խիլջեմեն խոմ բանիր չէի մոգոնի։ Էտենց չէ՞, Գիորգի ջան։

ԳԵՈՐԳ

Բայց...

ԿԱՐԱՊԵՏ, Իսայուն։

Է՛տի է գալի ասածս է՛։ (Գեորգին։) Հին պայմանի վրա, վուրթի, էլի էնենց դուս կու բերեի. ամա հիմի վուր դուս բերիմ ու բան է մեքաշ անմիղ անգեթ սիրտը կո՛ճաեցիր ախչկա՛։

ԳԵՈՐԳ

Ինչի՞ եք այդպես հրամայում, Գարասիմ Յակուլիչ. իմ միտքը ձեզ հայտնի է, մենք դորա մասին բավականին խոսեցանք այս երեկո մեր տանը։

ԿԱՐԱՊԵՏ

Հա՛, վուրթի, լա՛վ փիքր արա էլի. հանաք մասխարութին չէ ախչիկաս բեղնամ անիլը։ Քանի դուս չէ էկի, էլի վունցոր գուզիս կու վիրշացնիմ քի մոդ թո՛ղ փեսա չըլիս, հաջաթ չէ, բա՛րեկամ ըլինք գուզիս էլի վո՛ւրթի կու։ Համարիմ քիզ, ի՞նչ կա։

ԻՍԱՅԻ, Գեորգին։

Աբա, է՛սենց էլ մարթ կուլի՞։

ԿԱՐԱՊԵՏ

Ամա թե դուս էկավ ու իժում մե խայտառակութին բերիր գլուխը, խոտակ նրա բողազն էլ դուս կու կտրիս, իմն էլ. մե խոսկով աշխրքումը մե մատը միղը կու դառնանք։

ԳԵՈՐԳ

Ինձ զարմացնում եք, ճշմարիտ. ես ձեզ տեղիք չեմ տվել այդպես խոսելու։

ԿԱՐԱՊԵՏ

Ի՞նչ անիս, վուրթի. ի՞նչ էն մե տղեն մե բան արավ, աճկեներուս կոտրվեցավ. ախչկա հերն ու մերը հենց գիդեին թե էն սհաթին պիտի նշանը տա, ամա էն ա՛նհավատը գդակը վիկալավ ու փախավ։

Իսայի, գլուխը շարժելով։

Յիս էլ իմացիլ իմ։

ԳԵՈՐԳ

Եթե խոստացել էր և չէ կատարել իր խոսքը, շատ անազնիվ է վարվել։

ԿԱՐԱՊԵՏ

Աբա՛, վուրթի, էտենց բան էլավ միր քախկումը. էնդումեն դեսը էլ չհել տղի ավտալը դժարացավ։

ԳԵՈՐԳ, ոտի կանգնելով։

Է՛հ, Գարասիմ Յակուլիչ, մարդ էլ կա, մարդ էլ։ Այդ կողմանե դուք իմ մասին բոլորովին հա՛նգիստ կացեք։

Աջ դռնից բերում են Սարգիսը՝ արծաթյա սկուտեղով թեյը, և Արտեմը՝ նրան հետևելով, արծաթյա ամանի մեջ պաֆսիմատներ։

ՏԵՍԻԼ Գ

ՆՐԱՆՔ, ՍԱՐԳԻՍ, ԱՐՏԵՄ

ԿԱՐԱՊԵՏ, ոտի կանգնելով։

Զորանաս, վուրթի։ (Հրավիրելով Գեորգին թեյ վերցնել։) Համեցե՛ք, փեսա ջան, ա՛նուշ արեք։ (Իսայուն՝ որ նմանապես ոտի է կանգնել։) Վի՛կալ, Իսայի։ (Ամենքը վերցնում են թեյ։) Էս սահաթիս գալիս իմ, փե-

սա ջան. գնամ ախչկաս իմաց անիմ։ (Իր բաժակը դնում է սեղանի վրա և հրավիրելով Գեորգին պատսիմատ վերցնել։) Համեցե՛ք, գեթաղվա։ (Արտեմին՝ մինչդեռ Իսային բռնով վերցնում է պատսիմատներ։) Դե՛ սը թավազա արա, տո՛։

Դուրս է գնում ձախ դռնից։

ՍԱՐԳԻՍ, առանձին։

Վուր գիդենա, թե ին՛չ խաբար է։

Ժպտալով, դեմքը ծամածռում է. հետո, Արտեմի հետ ծածուկ մշփշալով, դուրս է գնում աջ դռնից։

ՏԵՍԻԼ Ե

ԳԵՈՐԳ, ԻՍԱՅԻ

ԳԵՈՐԳ

Զարմանալի մարդ ես, Իսայի. ես քեզ բարեկամաբար մի քանի խոսք ասացի, իսկ դու գնում ես՝ մի առ մի բոլորն այնտեղ պատմում։ Այդ ինչպես կարելի է։

ԻՍԱՅԻ, բաժակը ձեռքին։

Ա՛խ, սուտ խո վունչիչ չիմ մոգոնի, Գիորգի ջան. ինչի՞ չէի ասի, հազիր սրաներուն ումիկ տվեցավ էս գլխեն էվետ դիփունանցը։

ԳԵՈՐԳ

Բայց մեկ մտածիր, թե ինձ ի՛նչ տեղը հասցրիր. ճշմարիտ, էլ չէի իմանում, թե ի՛նչ էի պատասխանել Գարասիմ Յակուլիչին։

Անբավական նստում է փոքրիկ սեղանի մոտ։

ԻՍԱՅԻ

Հաչաթ չէ, Գիորգի ջան. հորես դիփ մետի կու դրստվի բանը։

Նստում է նույն սեղանի մյուս կողմը, Գեորգի հանդեպ, երեսը դեպի ձախ դուռը դարձրած։

ԳԵՈՐԳ

Ա՛խ, Իսայի, դու ինձ շատ նեղացրիր այսօր։

ԻՍԱՅԻ, թեյով զբաղված և մեղմ ձայնով։

Հոքուտ մեռնիմ, փեսա ջան։

ԳԵՈՐԳ, անբավականությամբ։

Է՛հ, փե՛սա, փե՛սա. քա՞նի ասեք։

ԻՍԱՅԻ

Լա՛վ է, լա՛վ, Գիորգի ջան, օղունդ դուն քու քեփը խարաբ մի՛ անի, ախպեր, վունցոր կու հրամայիս, էնենց կու ժաժ գամ, գուզիս դրուստ փեսա էլ վուր դառնաս, էնչախն էլ փեսա չիմ ասի։

ԳԵՈՐԳ

Եվ շատ լավ էլ կանես։

ԻՍԱՅԻ, առանձին։

Ամբիրը մոդ էլան... (Գեորգին։) Չէ՛, դուն ինձ ասա՝ վո՞ւնց իս տեսնում Գարասիմ Յակուլիչին. լա՛վ մարթ չէ՞։

ԳԵՈՐԳ

Այո՛, լավ է երևում։

ԻՍԱՅԻ

Ասում իմ, է՛... դրուստ հերութին կոնե քիզ, քու արիվը։

ԳԵՈՐԳ

Շատ կարելի է։

ԻՍԱՅԻ

Ի՞նչս ասում, Գիորգի ջան. դրա պես բարի ու ճշմարիտ մարթ սաղ թիֆլիզումը չկա...։ (Թեյը խմելով։) Ուրիշ մարթ է ասում իմ, է՛... Մև իոսկով քանի գնաս, էնդադա կու սիրիս Գարասիմ Յակուլիչին... (Պատսիմատ ծամելով։) Ժամասեր... աստվածապաշտ... ախկըտին օղորմոդ... ու իր օրումը մարթու բեդամաղ չի անի... ասկականի համա խոմ՝ գլուխը հիդ դրած ունե...

Կարապետը Մարգրիտի ձեռքը բռնած դուրս է բերում ձախ դռնից։

ՏԵՍԻԼ Զ

ՆՐԱՆՔ, ԿԱՐԱՊԵՏ, ՄԱՐԳՐԻՏ

ԻՍԱՅԻ, շարունակելով:

Ա՛յ, հի՛դ մտիկ տո՛ւ, քու դուշինկեն էլ դուս էկավ։

Գեորգը իսկույն ոտի է կանգնում:

ԿԱՐԱՊԵՏ, թողնում է Մարգրիտին բազմոցի մոտ և մոտենալով ԳԵՈՐԳԻՆ:

Ա՛րի, փեսա ջան, աստուծ միասին ծիրացնե (Գեորգը շփոթվում է:) *քիչ քու հավնած Մարքրիտի հիդ։*

Զեռքը բռնում է:

ԳԵՈՐԳ, ազատելով ձեռքը:

Խնդրեմ։

Գնում է դեպի Մարգրիտը:

ԻՍԱՅԻ, ոտքի կանգնելով և առանձին:

Մենակ քու օղորմութենին, աստուծ։

ԳԵՈՐԳ, մոտենալով Մարգրիտին, փոքր ինչ շվարվում է, բայց իսկույն զսպելով իրան՝ առնում է նրա ձեռքը:

Օրիորդ... շատ... ուրախ եմ... (Թերև ողջունում է և հեռանալով, առանձին:) *Օ՛հ, տեր իմ։*

Մնում է ապշած:

ՄԱՐԳՐԻՏ, առանձին, ցածր ձայնով:

Ա՛խ...

Շփոթված՝ ընկնում է բազմոցի վրա:

ԻՍԱՅԻ, մոտենալով Գեորգին և շշնջելով:

Վա՛, ի՞նչ իս անում, հեր օխնած։

ԳԵՈՐԳ, Իսայուն նմանապես շշնջելով:

Սա Մարգրիտը չէ։

ԻՍԱՅԻ, նույնպես:

Վո՞ւնց թե նա չէ, գժվի՛լ ի՛ս։

ԿԱՐԱՊԵՏ, անցնելով Իսայու ձախ կողմը և ցածր ձայնով:

Հը, ի՞նչ է. սի՛վ կատու անց կացա՞վ։

ԻՍԱՅԻ

Տո՛, սիվ կատու կի չէ, ասում է՝ Մարքրիտը չէ, կոսե։

ԿԱՐԱՊԵՏ, ժպտալով:

Ի՞նչ իս ասում, փեսա ջան. վո՞ւնց թե Մարքրիտը չէ, թեգուզ սա՛ղ աշխարքին հարցրու։

Մարգրիտը նեղանում է:

ԳԵՈՐԳ, առանձին:

Տեր աստված, մի՞թե սա նա է... Բայց այս անկարելի է։

ԿԱՐԱՊԵՏ, անցնելով Գեորգի աջ կողմը:

Է՛հ, լավ է, փեսա ջան, մի՛ սպանի խիղճ ախչկաս, ա՞րի, կշտի՛ն նստի։

ԻՍԱՅԻ, մյուս կողմից և ցածր:

Միխկ է, մի՛ խայտառակի խիղճ ախչկան։

ԳԵՈՐԳ, լուռ նայում է Կարապետին և Իսայուն, հետո առանձին:

Այս ո՞րտեղ ընկա ես։

Գնում, նստում է Մարգրիտի մոտ:

ԿԱՐԱՊԵՏ

Աստուծ անփոշվնելի անե։

ԻՍԱՅԻ

Ա՛մին, տեր աստուծ։

ԳԵՈՐԳ, արհամարհական հայացք է ձգում Կարապետի և Իսայու վրա, հետո Մարգրիտին:

Ներեցե՛ք, օրիորդ, իմ վրդովմունքը... (Թերև ժպտալով:) *Ես բոլորովին չէի սպասում այսպիսի դիպվածի... Ձեր հայրը խոստացավ ինձ*

ծանոթացնել ձեզ հետ և հանկարծ այսպես է վարվում... Ի՞նչպես է թվում ձեզ, օրիորդ, այս բանը... (Մարգրիտը ամոթխածությամբ գլուխը քարշ է գցում. լռություն:) *Խոսեցե՛ք, օրիորդ, խոսեցե՛ք, խնդրեմ...* (Լռություն:) *Ինչի՞ չեք խոսում, օրիորդ։* (Մարգրիտը շփոթվում է. դարձյալ լռություն: Գեորգը զայրացած ուսերը բարձրացնում է և տեղից վեր կենալով, դիմում է Կարապետին և Իսայուն:) *Ասացե՛ք խնդրեմ, ի՞նչ է նշանակում բոլոր այս կոմեդիան։*

Գնում է դեպի Իսային:

ՄԱՐԳՐԻՏ, առանձին՝ ցածր ձայնով:

Ա՜խ, աստուծ։

ԳԵՈՐԳ, Իսայուն:

Քեզ եմ հարցնում... (Ձայնը ցածրացնելով:) *Ո՞վ էր այն աղջիկը, որ երգում էր։*

ԻՍԱՅԻ, նույնպես ցածր:

Ի՞նչ իս ասում, Գիորգի ջան. ախար, հենց դա՛ չէր ակոշկումը՝։

ԳԵՈՐԳ, բարկացած:

Իհա՛րկե որ չէ... իբրև թե ի՞նքդ չգիտես... Օ՜հ, Իսայի, սպասի՛ր։

ԻՍԱՅԻ, երեսը խաչ է հանում և առանձին:

Միղա՛ քի, տեր։

ԿԱՐԱՊԵՏ

Պարոն փեսա, հա՛նաք իս անո՛ւմ։

ԳԵՈՐԳ

Ի՞նչպես թե հանաք եմ անում... Դուք ինձ ո՞ւմ տեղ եք ընդունում, պարոն... Մտաբերեցե՛ք թե ինչե՛ր էիք խոսում մի քանի ժամ առաջ, իսկ այժմ ի՞նչպես եք վարվում... (Ձայնը ցածրացնելով:) *Ո՞ւր եք բերել այդ խեղճին, այստեղ նստացրել և խայտառակ անում. դուք լավ գիտեք, որ դա իմ տեսածը չէ։*

ԻՍԱՅԻ, լսելով Գեորգին, առանձին:

Ալմուրին գլուխս է ննգնում...

ԿԱՐԱՊԵՏ, մեղմաբար։

Լա՛վ է, քու հորն օղորմի, է՛. սա վուր չէ քու տեսածը, բաս ուրիշ ո՞վ կուլեր, դուն ինձ ասա՛...

ՄԱՐԳՐԻՏ, առանձին։

Էս ի՞նչ բան է։

ԻՍԱՅԻ, Գեորգին ցածր ձայնով։

Մե լավ տի՛ս, Գիորգի ջան, թե ախպեր իս. կուլի աճկդ խափս է տալի։

ԳԵՈՐԳ, առանձին։

Ցնորվել են, ի՞նչ է։

ԿԱՐԱՊԵՏ

Տեսնում իս լիզուն կապվեցավ մեքաշ. դիփ մետի խառնեցիր խղճին, ախար... Դուն ինձ շշկլեցրիր, վուրթի, չէ թե սրան... Սրա պես սիրուն ու կարտինկա գանա է՛լի կա քախկումը՝, թեգուզ սա՛ղ աշխարքումը՝...

Մոտենում է Մարգրիտին։

ԳԵՈՐԳ, առանձին, զայրացած:

Տե՛ս, տե՛ս...

ԻՍԱՅԻ, առանձին:

Ա՜խ, սիրտս ի՞նչ հանգն է դընգդընգում։

ԿԱՐԱՊԵՏ, շարունակելով:

Փա՜հ, դրուստ հրիշտակ է, է՛լի... (Մարգրիտին տեղից վեր է կացնում:) *Աբա մե թա՛մաշա արա...*

ԳԵՈՐԳ, առանձին:

Օ՜հ, անիրա՛վ...

ԿԱՐԱՊԵՏ, Մարգրիտին աջ ու ձախ պտույտ տալով միևնույն կետի վրա։

Ի՞նչն է պակաս՝ բո՛յին, բո՛ւսաթը, մա՛զիրը, թե՛ էրեսի ռանգը... (Գեորգը սարսում է:) *Սաղ աշխարքը կոսե, վուր թաքավո։րի արժանի է, յիս ու իմ հոքին։*

ԳԵՈՐԳ, առանձին:

Խե՛ղճ աղջիկ։

ՄԱՐԳՐԻՏ, առանձին։

Վա՛յ իմ միխկը։

Նստում է իր տեղը և թաշկինակով աչքերը սրբում է։ Իսային՝ մտատանջության մեջ, ինքն իրան ձեռքերով խոսում է։

ԿԱՐԱՊԵՏ, մոտենալով Գեորգին։

Ա՛յի, փեսա՛ ջան, նշանը տու ու քո՛ւթահ արա, թե քու հոր գերեզմանը կու սիրիս։

ԳԵՈՐԳ

Բա՛վական է, պարոն, բա՛վական է. վերջացրե՛ք, խնդրեմ։

Գնում է և վերցնում է գլխարկը։

ԿԱՐԱՊԵՏ, առանձին։

Է՛տ է վուր գնացիր։

Պատրաստվում է ճանապարհը կտրելու։

ՄԱՐԳՐԻՏ, առանձին։

Ինչի՞ էստի էվետ չիս սպանում ինձ, աստուծ։

ԻՍԱՅԻ, առանձին։

Ա՛խ, աստուծ, վո՞ւնց իմանամ դրուստը...

ԳԵՈՐԳ, գլխարկը ձեռքին, մոտենում է Մարգրիտին։

Օրիորդ, շատ ցավում եմ որ ակամա պատճառ դարձա ձեր նեղությանը... Մնա՛ք բարյավ... (Դառնալով Իսայուն։) *Շնորհակալ եմ, Իսայի, լա՛վ բարեկամություն արիր։*

Կամենում է գնալ։ Աջ դռնից մտնում են Սարգիսը՝ ձեռքին ատրճանակ սկուտեղի վրա շամպանիայով լի բաժակներ, և Արտեմը՝ դատարկ սկուտեղով։

ՏԵՍԻԼ Է

ԵՐԱՆՔ, ՍԱՐԳԻՍ, ԱՐՏԵՄ

ԿԱՐԱՊԵՏ, առանձին։

Աստուծ գիդենա, սաղ դուս չիմ թողնի։ (Ձախ ձեռքով բռնում է Գեորգի օձիքից։) *Ցիս քիզ համով ասում իմ, ախպեր, ա՛յի, նշա՛նը տու թե խիլք ունիս, թե չէ դուն ինձ չի՛ս ճանչնում. ինձ Գարասիմ Ցակուլիչ Զամբախով կոսին։*

ԳԵՈՐԳ, ազատվելով Կարապետից և բարկացած։

Թողե՛ք, խնդրեմ... Դուք ձեզ մոռանում եք, պարոն... (Տեսնելով Արտեմին, որ փոքրիկ սեղանից հավաքում էր թեյի բաժակները, ձեռքը խփում է իր ճակատին։) *Ա՛հ...* (Արտեմին։) *Ա՛յ տղա, այն ի՞նչ աղջիկ էր, որի ետևից երեկ գալիս էիր։*

ԿԱՐԱՊԵՏ, շփոթված խփում է իր ճակատին և առանձին։

Վա՛յ, էս մեկը մտես ննգավ։

Արտեմին նշանները հրամայում է լուռ մնալ
հետո Գեորգի և Իսայու ետևովն անցնում է Արտեմի ձախ կողմը։

ԳԵՈՐԳ, շարունակելով։

Քեզ հետ եմ, ասա՛ շուտ՝ ո՞ւր է այն աղջիկը։

ԱՐՏԵՄ

Էնթի օթախումն է։

ԻՍԱՅԻ

Ի՞նչ ախչիկ, տո՛։

ԱՐՏԵՄ

Վա՛, միր ախչիկ պարունն, աղա։

ԿԱՐԱՊԵՏ, աջ արմնկով խթում է Արտեմին և ցածր ձայնով։

Կո՛րի, տո՛ անիծած։

ԻՍԱՅԻ, Արտեմին, մեղմաբար հետ մղելով Կարապետին։

Նատալիե՞ն, տո՛։

ԱՐՏԵՄ

Հրամիլ իս։

ԳԵՈՐԳ

Ա՛յ, խաբեբա անաստվածներ... Վերջապե՞ս...

ԻՍԱՅԻ, բարկացած։

Ախար, սի՛րտս իմանում էր, է՛։

Կամենում է գնալ։

ԿԱՐԱՊԵՏ, բռնելով Իսայու ձախ թևից և միամտաբար։

Էս ի՞նչ խաբար է։

ԻՍԱՅԻ, ազատվելով Կարապետի ձեռից։

Մե մո՛ւլափ, քու հո՞րն օղորմի, է՞։

Դուրս է հեռվում ձախ դռնից, Աստեմը դատարկ սկուտեղով հետևից դուրս է վազում. Կարապետը մնում է շվարված։

ՏԵՍԻԼ Ը

ԳԵՈՐԳ, ԿԱՐԱՊԵՏ, ՄԱՐԳՐԻՏ, ՍԱՐԳԻՍ

ՍԱՐԳԻՍ, բեմի աջ կողմը, շամպանիայով սկուտեղը ձեռին և առանձին։

Դեղի ծծիր, դո՛ւն բարեխոսիս։

ՄԱՐԳՐԻՏ, առանձին։

Սիրտս գնում է։

ԳԵՈՐԳ, Կարապետին, փոքր լռությունից հետո։

Այժմ ի՞նչ եք ասում, պարոն. այժմ ի՞նչ եք հնարելու...

ԿԱՐԱՊԵՏ, շվարված։

Ցիս վուր չիմ իմանում թե ի՞նչ բան է...

ԳԵՈՐԳ

Դո՞ւք՝ պարոն, ո՛չ հոգի եք ունեցել, ո՛չ խիղճ... Գոնե ձեր աղջկան կխնայեիք...

Ողջունելով Մարգրիտին, հեռվում է դեպի խորի դուռը, ուր հանդիպում է Իսայուն։

ԿԱՐԱՊԵՏ, Գեորգի հետևից մի քանի քայլ առաջ գնալով և թոթովելով։

Կա՛ց, կա՛ց։

ՏԵՍԻԼ Թ

ՆԱՆՔ, ԻՍԱՅԻ, ՆԱՏԱԼԻԱ, հետո ԱՍՏԵՄ

ԻՍԱՅԻ, այլայլված, ձախ ձեռքով կանգնեցնում է Գեորգին դռան շեմքումը։

Մո՛ւլափ, մո՛ւլափ հալա։

ԳԵՈՐԳ

Թո՛ղ, ասում եմ...

ԻՍԱՅԻ, նույնպես։

Մե մուլափ, է՞...

ԳԵՈՐԳ, հետ դառնալով և զայրացած։

Օ՛հ, աստվա՛ծ....

ՆԱՏԱԼԻԱ, դռան հետևից։

Գե՛թաղվա, Իսայի ջան։

Կարապետը շփոթված անցնում է բեմի ձախ կողմը։

ԻՍԱՅԻ, նույն դռանը։

Ա՛յի, ասում իմ, է՞... (Թոնի ներս բերելով Նատալիային, դիմում է Գեորգին։) *Սրա՞ն իս ասում, ախպե՛ր։*

Աստեմը խորի դռնից գլուխը հանում է և մնում է այնպես մինչև վերջը։

ԳԵՈՐԳ, առաջ գնալով։

Ա՛յ, իմ տեսածը։

ՆԱՏԱԼԻԱ, նշում է։

Ա՛խ։

Ամոթից երեսը դարձնելով, ծածկում է իր դեմքը և մնում է այնպես մինչև վերջը։ Միևնույն ժամանակ Մարգրիտը ոտի կանգնելով, կամենում է առաջ գնալ, բայց ուշաթափ իսկույն վայր է ընկնում բազմոցի վրա։

ԻՍԱՅԻ, շվարված։

Քու տեսածը՞... Տո՛, սա խում իմ կնի՛կն է։

ԳԵՈՐԳ, զարհուրած հետ քաշվելով։

Քո կի՛նը...

Մնում է արձանացած։

ԿԱՐԱՊԵՏ, բեմի ձախ կողմը կանգնած և սարսափելի դրության մեջ, բռնցքով խփում է իր ճակատին։

Էնդո՛ւր է ասած՝ վուր շուբին ջվալումը չի թախ կենա։

Ձեռքը ճակատին՝ մնում է անշարժ։

ԻՍԱՅԻ, փոքր լռությունից հետո, նայում է Նատալիային և երկու ձեռքով իր գլխին խփելով:

Վա՜յ քու խայտուն։

Մնում է նույն դրության մեջ:

ՍԱՐԳԻՍ, բեմի աջ կողմը, շամպանիայով սկուտեղը ձեռքին և առանձին:

Ա՜յ խաթաբալա։

Ամենքը քարացած մնում են իրանց դրության մեջ:

ՊԱՏԿԵՐ: Մի քանի վայրկյանից հետո, վարագույրը կամաց-կամաց իջնում է:

Վերջ

ԵՎԱՅԼՆ ԿԱՄ ՆՈՐ ԴԻՈԳԻՆԵՍ

ԿԱՏԱԿ

1869

Բնագիրը նվիրված է մեծարգո պարոն Գեորգ Զմշկյանին

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՄՈՍԵՍ, վաճառական
ՆԻՆՈ, Մոսեսի կինը
ՂԱՂՈ, Մոսեսի կրտսեր եղբայրը, նույնպես վաճառական
ՊԱՐՈՆ ԵՎԱՅԼՆ, հարուստ երիտասարդ, Նինոյի հեռու ազգական
ՍԵՐԳՈ, Մոսեսի դուքանի աշկերտ
ԱՌԱՋԻՆ ՀՅՈՒՐ,
ԵՐԿՐՈՐԴ ՀՅՈՒՐ,
ԵՐՐՈՐԴ ՀՅՈՒՐ,
ՉՈՐՐՈՐԴ ՀՅՈՒՐ, } երիտասարդ վաճառականներ

Ուրիշ հյուրեր վաճառական դասից, սազանդար Յավանգուլն ու զուռնաչի Արտեմը իրանց խմբերով և ծառաներ։ Սազ, զուռնա ու դուդուկ. երգեր և պարեր։

Առաջին արարվածը կատարվում է Մոսեսի տանը, իսկ երկրորդը նրա տան պարտեզում։

Անցքը պատահում է Թիֆլիզում վաթսունական թվականներին։

ԱՐԱՐՎԱԾ ԱՌԱՋԻՆ

Բեմը ներկայացնում է Մոսեսի տանը մի շքեղ հյուրասենյակ երեք դռնով՝ աջ, ձախ և խորքում. աջ կողմը՝ մեծ լուսամուտ: Հյուրասենյակը զարդարած է գեղեցիկ կահ-կարասիքով: Առաստաղից կախած է ոսկեզօծ չաՀ՝ հանգած մոմերով. հատակը ամբողջապես ծածկած է գորգով: Աջ կողմը՝ բենկոմարաՀ, բոլորակ փոքրիկ սեղան և բազկաթոռ. ձախ կողմը՝ բազմոց, բազկաթոռներ և բանկագին սփռոցով ծածկած սովորական սեղան, որի վրա դրած է մի ալբոմ. խորքում աթոռներ: Պատից կախած են զանազան նկարներ ոսկեզօծ շրջանակներում: Դռները զարդարած են թավիշե դրապերիներով, իսկ լուսամուտը նաև սպիտակ այլուլ վարագույրներով: Ուր հարկն է՝ հայելիներ, թղթախաղի ծալովի սեղաններ, հանգած լապտերներ, հանգած մոմերով կանդելաբրներ ու աշտանակներ, ծաղկե փնջեր, կենդանի ծաղիկներ և վառարանի վրա դրած ժամացույց, որի սլաքները ցույց են տալիս ժամը նիշտ վեցը: Ցերեկ է:

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ՆԻՆՈ, հետո ՄՈՍԵՍ

ՆԻՆՈ, ամենագեղեցիկ կին, տեղական շքեղ հագուստով, վերարկուով և հովանոցը ձեռին. հուզված ներս է վազում խորքի դռնից:

Օտկեցե՛ք, մեռա։

Ընկնելով ձախ կողմը բազմոցի վրա, հովանոցը ձգում է իր կողքին:

ՄՈՍԵՍ, տեղական հագուստով*, գլխարկը (ֆուրաժկա) ձեռին, մտնում է աջ դռնից:

Հը՛ա, ի՞նչ խաբար է։ (Նինոն լուռ նայում է նրան:) *Վա՛, օխնած հոգի, լիզուտ ի՞նչ էլավ։*

* Բոլոր դերասանները տեղական հագուստներով են, բացի Եվայլն, որ հագնված է եվրոպական ձևով։

ՆԻՆՈ, հեկեկալով լաց է լինում:

Է՛սենց էլ բան կուլի՞, թե մարթ իր տանեմեն չկանենա դուս գնա՛։

Շարունակում է հեկեկալ:

ՄՈՍԵՍ, գլխարկը ձգելով աջ կողմի սեղանի վրա:

Հը՛ա, ի՞նչ է, ի՞նչ է էլի։ (Մաղրելով Նինոյին, որ լացի ձայնը ավելի է բարձրացնում:) *Հը՛մ, հը՛մ, հը՛մ... Տո՛, ա՛սա ու պրծի՛, էլի... Կուլի՞ էլի ռաստ էկա՛վ։*

ՆԻՆՈ, լացը մեղմացնելով:

Սիվնա նրա օրը... Վուր գիդենաս, թե ինչիր ասավ, աստուծ գիդենա, մաս-մաս կոնիս։ (Աչքերը սրբում է:) *Էստուրն էլ վուր համփիրիս, էքուց էլօր ուփրո փիս բանիր կու դուս գա։*

ՄՈՍԵՍ

Մո՛ւլափ, մո՛ւլափ հալա, Նինո ջան, մե ա՛սա, տեսնիմ ի՞նչս ասում։

ՆԻՆՈ

Էլ ի՛նչ պիտի ասիմ, գեդինը պատռե ու ինձ դեվեր տանե... Ջիս գիդի, ասում է, թե ինչ հանգն իմ սիրում քիզ, կոսե. գիշիրով, ասում է. քուն չունիմ ու ցերեկը աշխարքը մութն է ինձ համա առանց քիզ, կոսե. սրտիս կրակ է կպի ու էրվում է, կոսե... Է՛րվի նրա ջա՛նը, խուղիմ նրա գլուխը, հը՛ա... Վուչ էի ճանչցի նրան։

Ցածր ձայնով լաց է լինում ու աչքերը շուտ-շուտ սրբում է:

ՄՈՍԵՍ, որ ապշած նայում էր Նինոյին, շարունակում է:

Վա՛յ, յիս նրա... (Բարկացած մանր գալով:) *Էս սահաթիս գնամ, ակոքնիրը ջարթ ու փշուր անիմ... Ամա չէ՛, խալխն ի՞նչ կոսե, ու նրա ջիգրը վո՛ւնց պիտի ուտիմ։* (Գլխարկը սեղանին խփելով:) *Յա էս գդակը էլ ի՛նչ գդակ է գլխիս։*

Շարունակում է բարկացած մանր գալ:

ՆԻՆՈ, վերարկուն հանելով, մոտենում է Մոսեսին:

Լա՛վ է, Մոսես ջան, գեթաղվա, սիրուս մի՛ շուռ տա. թավաթ ջգրու էլ չկամ... Գանա առանց էտ չի՞ս կանա նրա ջիգրը հանի՞...

ՄՈՍԵՍ

Ա՜ղ ըլի գլխեմես։

ՆԻՆՈ, ճորից լաց լինելով։

Քա՜, յիս ի՞նչ անիմ. էն անիծածի ջիգրը հերիք չէ՞, վուր Տիմի դուն էլ իս ջզրվո՜ւմ։

ՄՈՍԵՍ

Ձե՛նդ, ձե՛նդ, ասում իմ. ջեր պիտի քիզ մաս-մաս անին։

ՆԻՆՈ, լացը շարունակելով։

Ցիս ի՞նչ միղ ունիմ, քա՜։

Նստում է ձախ կողմը բազկաթոռի վրա։

ՄՈՍԵՍ

Էն միղն ունիս, վուր դուն նրանց տուն վուտդ իսկի չպիտի դրիլ էիր։ Ձի՞ս դիդի, վուր էտ թավուրներուն էրես շանց տաս, գլխիտ էլ կու նստի՞ն... Ջեր ավտաս յիրիք չուրս ջեր վիզիտով է էլի էստի էն լի՛րփ անսկամը։

ՆԻՆՈ

Բաս Հորեսի դենը ասկաններեմես էլ կտրվիմ, է՞լի։

ՄՈՍԵՍ

Ա՛սկական. ա՜սկական... Ինչի՞ ասկական է... էտ ասկական է՞... Նրա քուրը ի՞նչ է քունը, ի՞նչ, վուր խիլքիտ ծերը գնում է նրա համա. քու բիձու տդի կնգա բիձու ախչկա թուռն է, ինչոր զահրումար է... Նրանց գլուխն էլ անիծվի... Վույ մե՜... (Բռունցք ցույց տալով։) Վույ մե՜, ի՜նչ անիմ... (Լուսամուտից դուրս նայելով։) *Տի՛ս, տի՛ս, նա չէ՞։*

ՆԻՆՈ

Նա կուլի, բաս ո՞վ կուլի։

ՄՈՍԵՍ

Վո՞ւնց թե նա կուլի։

ՆԻՆՈ

Բա՛ս. ասավ, վուր խանդիսխան ակոշկեմեն դո՛ւս մտիկ արա, վուր քիզ տեսնիմ, կոսե, թե չէ ճլերք կու ննգնիմ, կոսե։ Ճլե՛րք ննգնի նրա ջա՛նը։

ՄՈՍԵՍ, չափից դուրս ճուզված, ուզում է լուսամուտից դուրս թռչել. հետո հետ քաշվելով։

Վա՜, դժվիլ ի՞մ։ (Կրկին մոտենում է լուսամուտին։) *Է՛ստի համեցեք, աղաղադա, է՛ստի համեցեք։*

ՆԻՆՈ, վեր թռչելով տեղից։

Ի՞նչս անում, գենացվալե։

ՄՈՍԵՍ

Ձիմացավ. ինչոր խուրը դումիտումն է։ (Հեռանալով լուսամուտից, կանչում է։) *Սե՛րգո, Սե՛րգո։* (Մոտենալով խորքի դռանը, կրկին կանչում է։) *Սե՛րգո... էստի չէ. թային գնաց դուքանը...* (Ցույց տալով Նինոյին բեմի աջ կողմը։) *Էտթենը խո չի՞ ըլի, մե տի՛ս։*

Դուրս է գնում ձախ դռնից. Նինոն աջու դռան կողմն է գնում։ Լսվում է Մոսեսի ձայնը՝ *Սե՛րգո, Սե՛րգո։*

ՏԵՍԻԼ Բ

ՆԻՆՈ, ՍՊԱՍԱՎՈՐ

ՆԻՆՈ, հանդիպելով սպասավորին, որ հասարակ շերեգկայով և սպիտակ սրբիչ ձեռին դուրս է գալիս աջ դռնից։

Սերգոն գնա՞ց, թե է՛ստի է։

ՍՊԱՍԱՎՈՐ

Գնում է, ներքիվն է։

ՆԻՆՈ

Գնա՛, կանչե՛, չո՛ւստ արա։

ՍՊԱՍԱՎՈՐ

Էս սահաթիս, ախչիկ-պարուն։

Դուրս է վազում դիմացի դռնից։

ՏԵՍԻԼ Գ

ՆԻՆՈ, ՍԵՐԳՈ, հետո ՄՈՍԵՍ

ՆԻՆՈ, մոտենալով ձախու դռանը:

Էստի է, էստի, ապսպրեցի։

ՍԵՐԳՈ, տուն վազելով դիմացի դռնից:

Էստի իմ, էստի։

Վազում է ձախ դռան կողմը.
Նինոն հետ է դառնում:

ՄՈՍԵՍ, վերադառնալով, բռնում է Սերգոյին:

Սերգո ջան, Սերգո, (Տանելով նրան դեպի լուսամուտը:) *էն տղին տեսնում ի՞ս, վուր էնդի փքրուտ բոլթա է տալի՞։*

ՍԵՐԳՈ

Է՞ն. բոնժուռ աղազադե՞ն։ Մե ջեր տեսիլ իմ էստի։

ՄՈՍԵՍ

Հա՜, հենց նա։ Գնա՛ էս սահաթիս, ասա՛՝ կանչում իմ։

ՍԵՐԳՈ, վազելով:

Էս սահաթիս, աղա ջան։

ՄՈՍԵՍ

Չէ՛, մուլա՛փ. ասա՛, վուր Նինոն է կանչում։

ՆԻՆՈ

Ինձ ո՞ւր իս խառնում։

ՄՈՍԵՍ, Սերգոյին:

Դուն գնա՛, յիս քիզ ասում իմ, ու մե կետի էլ կուլի էտի, բի՛. ջանը պիտի դրբստիմ։

ՆԻՆՈ

Ա՛խ, աստուծ։

ՍԵՐԳՈ

Հնստիկը բերիմ, աղա ջան, վուր, է՜, նրա տրոսած ջանին արժանի։

Դուրս է վազում դիմացի դռնից:

ՏԵՍԻԼ Դ

ՆԻՆՈ, ՄՈՍԵՍ

ՆԻՆՈ, մեկուսի:

Էս ի՞նչ բան արի յիս։ (Մոսեսին:) *Ախար, ի՞նչ իս անում, աբա՛, ուզում իս խա՞յտառակ ըլինք աշխարքումը՞։*

ՄՈՍԵՍ

Քու բանը չէ. յիս գիդիմ ինչոր անում իմ։

Զարացած մաճ է գալիս:

ՆԻՆՈ, մեկուսի:

Ի՞նչ անիմ հիմի։ (Մոսեսին:) *Մոսես ջան, գեթաղվա։*

ՄՈՍԵՍ

Թա՛ղ մե, է՜... Կնիկարմբտի ձեռնեմանն մեկը չէ խարաբ էլի ու երկուսը... (Գրպանում որոնելով:) *Ի՞նչ արի՜....*

Բարկացած դուրս է գնում աջ դռնից:

ՏԵՍԻԼ Ե

ՆԻՆՈ, մենակ:

Վո՞ւնց աղատիմ յիս էն անխիլին... (Այս ու այն կողմն ընկնելով, գնում է լուսամուտից դուրս նայում:) *Հորեն Գիգոլին հիդը խոսում է... Վո՜ւյ, գեղինը մտնիմ. ուրախ-ուրախ վազում է դեսը... Գնամ ասիմ, վուր չհամարցակվի տուն գա. ինչ կուլի, կուլի։*

Գնում է դեպի դիմացի դուռը:

ՏԵՍԻԼ Զ

ՆԻՆՈ, ՄՈՍԵՍ

ՄՈՍԵՍ, վերադառնալով, ձեռին թաշկինակ:

Հը՜, ո՞ւր իս գնում, ի՞նչ կա։

Թաշկինակը պահում է:

ՆԻՆՈ, շվարվելով։

Վունչիչ. ի՞նչ շինիմ էստի։

ՄՈՍԵՅ

Չէ՛, համեցե՛ք էստի կաց. պիտի դաղանակը ձեռիս, քու առչիվը խոսեցնիմ էն աղազադին ու մե լավ քոթկիմ։

Բարկացած մաե է գալիս։

ՆԻՆՈ

Աբա՛, էտ ի՞նչ մարթութին է, ո՞ւզում իս բոդազս դուս կտրի իստա՞կ...

ՄՈՍԵՅ

Մարթութի՞ն... Ա՛յ, յիս կու շանց տամ Ներան մարթութինը։

ՆԻՆՈ

Քու տա՞նը վուր չանիս էտ բանը, էլ օչով տիղ չկա՞։

ՄՈՍԵՅ

Օ՞հ, զահլես մի՛ տանի։

Բարկացած դուրս է գնում ձախ դռնից։

ՏԵՍԻԼ Է

ՆԻՆՈ, հետո ԵՎԱՅԼՆ

ՆԻՆՈ, մենակ։

Ի՞նչ ջուրը ննգնիմ հիմի. ազատելու էլ ճար չկա...

Շփոթված մաե է գալիս. հանկարծ նկատելով բազմոցի վրա իր հովանոցը. վերցնում է, մի կողմ դնում։

ԵՎԱՅԼՆ, գեղեցիկ երիտասարդ, նուրբ ճաշակով հագնված եվրոպական ձևով, ցիլինդրը ձեռին, պենսնեն վզից կախած և ձեռնոցներով. մտնում է դիմացի դռնից։ Շարժվածքը և խոսակցությունը միշտ եվրոպական քաղաքակրթված երիտասարդի։

Կրկին բարյավ ձեզ, աննման արարած...

Մեկնում է ձեռը։

ՆԻՆՈ

Գնացե՛ք շուտով։

ԵՎԱՅԼՆ

Այս ի՞նչ է նշանակում. մի՞թե դուք չհրավիրեցիք ինձ։

ՆԻՆՈ

Յիս ձիզ ասում իմ՝ գնա՞ցեք շուտով։

ԵՎԱՅԼՆ

Օ՞հ, հասկանում եմ, հասկանում... Երևի դուք խղճացիք ինձ, (Նինոն շփոթվում է։) *և այժմ ինքներդ վախենում եք բաց անել ինձ ձեր սիրտը։* (Գլխարկը թողնելով ձախ կողմը, մոտենում է Նինոյին, որ կանգնած է բեմի աջ կողմը, և բռնում է նրա ձեռը։) *Օ՞, մի՛ լռեք, ի սեր աստուծո մի՛ լռեք... Այս երրորդ անգամն է, որ ես ինձ ձգում եմ ձեր ոտների տակ և ամեն անգամ դուք արհամարհանոք և սառնասրտությամբ եք վերաբերվում դեպի իմ ջերմեռանդ սերը...* (Նինոն աշխատում է ազատել ձեռը։) *Մի խոսք, մի խոսք, միմիայն մի խոսք, մի քաղցր խոսք... մի՝ այո՛, որ ընդունում եք իմ սերը, և ես երջանիկ կլինիմ հավիտյան...*

ՆԻՆՈ

Թողե՛ք, թե աստուած կու սիրիք։

Ազատում է ձեռը։

ԵՎԱՅԼՆ

Մի՛ բարկանաք, տիկին... Ինչո՞ւ եք բարկանում... Մի՞թե ես մեղավոր եմ, որ սիրում եմ ձեզ. սիրում եմ անկեղծ, անվերջ, անսահման. թեև գերեզմանը դնեք ինձ կենդանի, այն ժամանակ ես շրթունքս չի դադարիլ արտահայտել ձեզ իմ սերը, զգացմունքը, հավատարմությունը...

Ստեպ-ստեպ ճամբուրում է Նինոյի ձեռը։

ՆԻՆՈ, հետ ու հետ նայելով, խլում է ձեռը և բարկությամբ։

Ի՞նչ իք անում, գժվիլ ի՞ք։

ԵՎԱՅԼՆ, շարունակելով։

Խղճացե՛ք ինձ, սիրուհի, աղաչում եմ ձեզ՝ խղճացե՛ք... Ամբողջ կյանքս, կայքս, հանգստությունս ձեզ եմ նվիրում, ձեզ համար պետք է

ապրիմ, ձեզ համար մեռանիմ... (Կրկին կամենում է համբուրել Նինոյի ձեռը. նախատենչակում Մոսեսն աղաղակում է՝ *Դե՛, ա՛րի չուստ)։* Ա՛խ, *չորա վազմի...*

Հեռանալով Նինոյից, անցնում է բեմի ձախ կողմը և գլխարկը վեր առնում. դիմացի դռնից մտնում է Մոսեսը։

ՏԵՍԻԼ Ը

ՆՐԱՆՔ, ՄՈՍԵՍ

ԵՎԱՅԼՆ, Մոսեսին։

Պատիվ ունիմ... (Մեկնելով ձեռը։) *Բարյավ ձեզ, պարոն. իմ խորին հարգանքներս...*

ՄՈՍԵՍ, ակամա տալով ձեռը։

Համեցե՛ք, համեցե՛ք, պարոն. քիչ մոպ իրատ հարկավոր բան ունիմ... (Հրավիրելով դեպի բազմոցը։) *Հա՛մեցեք նստի...* (Նինոյին, որ կամենում էր դուրս գնալ։) *Մո՛լափ, Նինո, ո՞ւր իս գնում, էս պատվական մարթը շնուր է բերի։*

ԵՎԱՅԼՆ

Մեծ պատիվ եք անում ինձ, պարոն, շնորհակալ եմ... Հրամայեցե՛ք՝ ի՞նչ եք ցանկանում. տիկինը ոչինչ չէ կամենում ասել։

ՄՈՍԵՍ

Էս սահաթիս, պարոն։ (Գնում է, դուրս է նայում դիմացի դռնից և առանձին։) *Աբա՛, թե գա։*

Եվայլն գլխարկը վայր դնելով, նստում է բեմի ձախ կողմը և վերցնում է սեղանի վրա դրած պրոմը։

ՆԻՆՈ, առանձին։

Ո՛վ քաղցր աստուծածին , դուն ըլիս միր քոմագը։

ՄՈՍԵՍ, անցնելով բեմի աջ կողմը, Նինոյին, ցածր։

Ինձ կու սիրիս, ինչրու չասիմ, չժաժ գաս էսպանց։

ՆԻՆՈ, նույնպես ցածր։

Ջա՛լիշ արի, չիայտառակիս քու գլուխը, իմն էլ հիդը։

ԵՎԱՅԼՆ, որ բերբելով պրոմը, աչի տակով նայում էր Նինոյին։

Ի՞նչ են խոսում։

Դիմացի դռնից մտնում են՝ Ղաղոն և նրան հետևելով Սերգոն, ձեռին պրելու մի երկար փայտ։

ՏԵՍԻԼ Թ

ՆՐԱՆՔ, ՂԱՂՈ, ՍԵՐԳՈ

ՂԱՂՈ

Հրա՛, ի՞նչ խաբար է։

ՄՈՍԵՍ, խառնված։

Վունչիչ, ասում էր էլախտ Սերգոն, թե չուգունի պլիտի համա լավ փետ իմ առի, կոսե, ու նմուշը բերիլ է, վուր տեսնիմ... (Սերգոյին։) *Լա՛վն է, տա՛ր... էլ մի՛ ուշանա. դուքանը միխկ է։*

Ղաղոն նայելով Սերգոյին, դժգոհությամբ շարժում է գլուխը։

ԵՎԱՅԼՆ, առանձին։

Այստեղ ինչ որ անցնում է։

Սիրով նայում է Նինոյին։

ՍԵՐԳՈ, առանձին։

Ափսո՛ս իմ ամագ։

Փայտը ձեռին դուրս է գնում դիմացի դռնից։

ՏԵՍԻԼ Ժ

ՆՐԱՆՔ, առանց ՍԵՐԳՈՅԻ

ՆԻՆՈ, առանձին։

Տերը քի բարի տա, Ղաղո, վրա հասար։ (Ղաղոյին։) *Բա՛րով, Ղաղո... Համեցե՛ք։*

Ինքը նստում է աջ կողմը։

ՂԱՂՈ

Բարով, բարիգուն ձիգ... (Եվայլն պենսնեով նայում է Ղաղոյին և իսկույն շարունակում է գնել ալբոմը: Մոսեսին, ցածր:) *Էս ո՞վ է։*

ՄՈՍԵՍ, նույնպես ցածր:

Նինոյի ասկականի ասկական է։

Եվայլն պատանում է ալբոմում Նինոյի պատկերին և զմայլված ստեպ-ստեպ ու զաղտագողի համեմատում է պատկերը Նինոյի հետ:

ՂԱՂՈ, շարունակելով, ցածր:

Անումը՞։

ՄՈՍԵՍ, նույնպես:

Եվայլն։

ՂԱՂՈ, նույնպես:

Ի՞նչ։

ՄՈՍԵՍ, նույնպես:

Եվայլն, էլի, վա՜։

ՂԱՂՈ, նույնպես:

Իմացա, ամա Եվայլն էլ անում կուլի՞... (Դառնալով Նինոյին, բարձր:) *Աբա՜, յիս իմ թաղարիկը պրծա.* (Մոսեսին:) *դուք էլ ձիր պատրաստութինը տեսա՞ք, թե չէ՜։*

ՄՈՍԵՍ

Վա՜յ քու աղիս տղա... Մտի՜կ, է՜, իստակ մտկեմես էլավ, էսօր խո. իմ հիրթն է։

ՂԱՂՈ

Վա՜, բա՜ս. թե էն օրն էս գիշիրութին մեձրեցիր դիփունանցը։

ՄՈՍԵՍ

Հա՜, հա՜... (Նինոյին:) *Աբա՜, Նինո, դուն խո, ավտաս, իսկի է յիս ֆիքր արի։*

ՆԻՆՈ

Ֆիքր էլ իմ արի ու կատարիլ էլ. հենց էտու համա էի հիմի դուսը... Ամեն բան հաղիր է ու ջեր խո վաղ է. հիմիսկ էվետ սարքիլ տամ։

ՂԱՂՈ

Տո՜, էլ ի՜նչ վաղ է. հարես լուսնիակը դուրս գու քա։ Ինչրու քիչքն ու խալիչեքը դեվեր կու ատանին բախչեն, զոնապնիրն էլ մոդ կուլին։

ՄՈՍԵՍ, հանկարծ ուրախանալով և ձեռը ճակատին տանելով, մեկուսի:

Սո՜... ա՜յ բախտ... (Նինոյին:) *Աբա՜, Նինո, գնա՜, հենց ապրիս, հրամաե՜՝ չուստ դեվեր ատանին, ինչ հարնավոր է։*

ՆԻՆՈ, վեր կենալով:

Էս սահաթիս. դուն հա՜նդիստ կաց, ամեն բան կարքին կուլի։

ՄՈՍԵՍ

Իժո՜ւմ, Սերգոյին ասել ի՞ս, վուր էս գիշեր էստի բլի՜։

ՆԻՆՈ

Ասել իմ, բա՜ս. մենակ ըշերանց արով խո չէինք մնա։

Վերցնելով հովանոցը, գնում է դեպի ձախ դուռը. Եվայլն այս միջոցին սիրտ-ցիր հայացքով հետևում է, երան և, երբ Նինոն դուրս է գնում, ձեռը սրտին է տանում և անձայն խուր հոգոց հանում:

ՏԵՍԻԼ ԺԱ.

ՆԻՆՈՆ, առանց ՆԻՆՈՅԻ

ՄՈՍԵՍ, Ղաղոյին:

Բա՜ս լավ քեփի ումիկ ունի՞ս. սաղանդար էլ խո կուլի՞։

ՂԱՂՈ

Բա՜ս, բա՜ս. Յավանդուլը իր դաստով։ Կուլի Արտեմն էլ վրա հասնի իր զուռնով ու դուդուկով. խոստացավ։ Ուրիշ տիղ խոսք ունի տված, էնդանց դեմուդնմը միպ մոդ դու քա։*

ՄՈՍԵՍ

Հա՞, յիս էլ էտ էի ուզում։ (Եվայլնին:) *Պարուն Եվայլն, անմթի իմ քի մոդ. շուղարս մե քիչ ուշացրի...* (Եվայլն ոտի է կանգնում:) *Քի մոդ*

* Խոսքը հանգուցյալ Արտեմ Բոտինյանցի մասին է, որ երևելի զուռնա ու մանավանդ դուդուկ ածող էր։

խիստ հարկավոր բան ունիմ, ամա հիմի էլ ժամանակ չէ մնում խոսելու. էս գիշերվան զոնաղլուղությունը, դուն էլ տեսար, իստակ մոռացել էի, թե չէ քիզ էսօր չէի նիղացնի... Թարջիմլումը յիս քիզ խնդրում իմ՝ հրամանքդ էլ շնուր բերիս էս գիշեր իմ բախչեն, մետի քեփ անինք. ումիկ ունիմ, լավ քեփ շանց տամ քիզ... էնդի կու խոսինք միր խոսելուն։

ԵՎԱՅԼՆ

Մի՞թե... (Մեկուսի:) *Ահա՛ պատվական մարդ։* (Մոսեսին:) *Ձեր քաղաքավարությունը, պատվելի, ինձ հիացնում է... Մեծավ ուրախությամբ, մեծավ ուրախությամբ, պարոն, ընդունում եմ ձեր հրավերը, միայն այն պայմանով, որ դուք էլ բարեհաճեք շնորհ բերել մեր տուն, մեր այգումն էլ քեֆ անեք. յիս ձեզ կհանդիպեմ իսկ և իսկ* ա լա փարիզիեն: *Քույրս շատ ուրախ կլինի ձեզ հետ ծանոթանալու...*

ՄՈՍԵՍ

Լա՛վ, ինչի՞ չէ. ջեր դո՛ւք համեցեք հայա։

ԵՎԱՅԼՆ

Իհարկե... Վերջապես, գոնե այս անգամ մենք կարժանանանք ձեզ տեսնելու մեզ մոտ... (Մատնացույց անելով Ղաղոյին:) *Եթե պարոնը ձեր բարեկամն է, խնդրեմ միասին շնորհ բերեք։*

ՄՈՍԵՍ

Վո՞ւնց թե բարեկամ. Ղաղոն իմ ախպերն է։

ԵՎԱՅԼՆ

Մի՞թե... (Ղաղոյին:) *Պարոն Ղաղո, շատ ուրախ եմ...* (Մեկնելով ձեռը:) *Եվայլն... Պարոն Մոսեսի եղբայրը իմ եղբայրն է։*

ՄՈՍԵՍ, առանձին:

Էտ է, վուր ավտացի։

ՂԱՂՈ, տալով ձեռը Եվայլնին:

Յիս էլ ուրախ իմ, պարուն Մոսեսի բարեկամը, իմ բարեկամն է։

ԵՎԱՅԼՆ, Ղաղոյին:

Ուրեմն հույս ունիմ, որ ձեր եղբոր հետ միասին շնորհ կբերեք ինձ մոտ։

ՂԱՂՈ

Վա՛, Մոսեսի հիդ թեգուզ ջանդամը կէհամ։

ԵՎԱՅԼՆ

Ես ձեզ երկուսիդ էլ, պարոններ, այնպիսի սիրալիր ընդունելություն ցույց տամ, որ ինձանից բավական մնաք։

ՄՈՍԵՍ, Եվայլնին:

Միր խաթիր ինչի՞ իս նիղանում, պարուն...

ԵՎԱՅԼՆ

Պատրաստ եմ հաստատել ձեզ իմ բարեկամությունը, սերը, մտերմությունը... և այլն։ (Ծոցից հուշատետրը հանելով:) *Ներողություն, ես իսկույն։*

Նստելով ձախ կողմի սեղանի մոտ, հուշատետրի մեջ մատիտով գրում է:

ՂԱՂՈ, Մոսեսին, ցածր:

Տո՛, էս ի՛նչ ուրիշ հանգն է խոսում. գեթաղվա, ձեռնեմետ չդուս թողնիս, կու ծիծաղինք։

ՄՈՍԵՍ, նույնպես:

Ուփրո լավ թամաշի ումիկ ունեցի։ (Եվայլնին:) *Բաս ումիկ ունենամ, վուր անպատճառ գու ջաս։*

ԵՎԱՅԼՆ

Հավատացած կացեք, պարոն, որ իմ խոսքս խոսք է... (Հուշատետրը ցույց տալով:) *Ահա՛, հենց դրա համար էլ այս բոպեիս նշանակեցի այստեղ, որ ես ձեզ շուտով ընդունելու եմ... Իրավ է, կան մարդիկ, որ չեն գնահատում իրանց խոսքի սրբությունը, բայց ես, ես... այլ եմ... Իմ կարծիքով ավելի լավ է մարդ մեռանի, քան թե տված խոսքը չկատարի... և այլն։*

Հուշատետրը ծոցն է դնում։

ՂԱՂՈ, Մոսեսին, ցածր:

Մուլա՛փ, Մոսես ջան, սրան խո ավելի անում չին կպցրի, վուր դիփ և այլն է ասում։

ՄՈՍԵՍ. Նույնպես:

Խոսեցրո՛ւ, դուն ինքդ կու իմանաս։ (Եվայլնին:) *Պարոն Եվայլն, անմրթի իմ, պիտի գնամ, էնթևնը մոթկ անիմ։* (Գլխարկը վերցնելով:) *Էս սահաթիս դալիս իմ...*

ԵՎԱՅԼՆ

Խնդրեմ, պարոն։

Մոսեսը դուրս է գնում ձախ դռնից:

ՏԵՍԻԼ ԺԲ

ԵՎԱՅԼՆ, ՂԱՂՈ

ՂԱՂՈ, իմքն իրան:

Եվա՜յլն...

ԵՎԱՅԼՆ

Մի՞թե դուք չեք հավանում Եվայլն բառը, այս սուրբ բառը, որ պարունակում է յուր մեջ բաղում խոսքեր, մտքեր, զգացմունքներ... և այլն։

Ուշադրություն դարձնելով պատից կախած մեկ ճկարի, գնում, մոտիը գնում է:

ՂԱՂՈ, առաջին:

Վա՜յ քու տղիս տղա, իծաներով լիքն է էլի։ (Եվայլնին:) *Ղուրթ իս հրամանք անում, պարոն, լավ խոսկ է. ամա մև քիչ միր քախկումը էտ հանգի խոսիլը չէ անց կենում, ի՜նչ անիս։* (Հրավիրելով նստել:) *Համեցի՜ք։*

Նստում են: Եվայլն ամբողջ ժամանակ հեռանում է:

ԵՎԱՅԼՆ

Օ՜, քաղաքը... Այս քաղաքը դեռ շատ հեռու է իսկական լուսավորությունից. երկար տարիներ են հարկավոր, պարոն, մեր ժողովուրդը զարգացնելու համար։

ՂԱՂՈ

Ղուրթ իս հրամանք անում, պարոն Եվայլն, ուրիշ խալխ է միր խալխը. մինք քեփն ոչ զողն անց էլ վունչիչ չինք պիդի։

ԵՎԱՅԼՆ

Քեֆը ո՞վ չի սիրիլ. քեֆը կյանք է, պարոն։

ՂԱՂՈ

Բաս խաղի անգամ դնիլ էլ սիրում կուլիս, էլ ի՜նչ ասիլ գուզե։

ԵՎԱՅԼՆ

Կամենում եք ասել՝ երգ. այսինքն սրտի զգացմունքի արտահայտություն։ Օ՜, ինչպե՞ս կարելի է երգ չսիրել. այն ժողովուրդը ժողովուրդ չէ, որ երգ չունի, ասաց մեծն Շիլլեր։ Ես ինքս երգող եմ, պարոն։

ՂԱՂՈ

Բաս հրամանքդ լավ շքասթա էլ կու գիդենաս։

ԵՎԱՅԼՆ

Տեղական երգերի հետ ծանոթ չեմ, պարոն. ի մանկութենե մեր երկրից ես դուրսն եմ մեծացել։

ՂԱՂՈ

Հրամանքդ վուրղանցի իք։

ԵՎԱՅԼՆ

Ես, ես... հայ եմ և մնացյալն... և այլն։

ՂԱՂՈ, աշխատում է ծիծաղը զսպել։

Մոսկով էլի՞լ իք հրամանքդ։

ԵՎԱՅԼՆ

Այո՛, Մոսկվա, Պետերբուրգ, արտասահման...

ՂԱՂՈ

Էտ ի՞նչ յիրգիր է արտասահմանը։

ԵՎԱՅԼՆ

Եվրոպա, Եվրոպա, պատվելի. մի՞թե չգիտեք... (Մեկուսի:) *Օ՜, տգիտություն, տգիտություն...* (Առձակելով ծխի ֆուլաճեր:) *Քել ինեարանս։*

ՂԱՂՈ

Վունց չիմ գիդի. շա՞տ վուխտ իք կացի էնդի՜։

ԵՎԱՅԼՆ

Այո՛, բավական երկար ժամանակ... Տարիներ, պարոն, տարիներ։

ՂԱՂՈ

Էտ խո խելի փո՞ւղ կու նստեր։

ԵՎԱՅԼՆ

Իհարկե առանց փողի չէր լինի, բայց երբ փող կա, ամոթ է, որ մարդ խնայե իր լուսավորության և զվարճության համար... և այլն։

Ոտը ոտի վրա դրած, ծնկան վրա հարդի մի փշրանք նկատելով, շրտիով (միջի մատի հարված) հեռացնում է։

ՂԱՂՈ

Բա՞կլեն էժան է էնդի, թե լո՛բին։

ԵՎԱՅԼՆ

Ես վաճառականությամբ չեմ պարապում, պարոն, գիտացե՛ք։

ՂԱՂՈ

Բեդամաղ մի՛ ըլի, գեթաղվա, էնենց հարցնում իմ... Զեթիսխիլի ու ջոնջոլ խո կա՞ էնդի։

ԵՎԱՅԼՆ

Ինչե՞ր եք հարցնում, պարոն. դուք ինձ ո՞ւմ տեղ եք ընդունում... (Տեղից վեր կենալով։) *Ֆի՛, մովե թոն, մովե ժա՞ներ...*

Ղաղոն, առանձին, դեմքը ծամածռում է։

ՏԵՍԻԼ ԺԴ

ՆՐԱՆՔ, ՄՈՍԵՍ

ՄՈՍԵՍ, ներս մտնելով ձախ դռնից։

Աբա՛, Ղաղո ջան, հիմի դուն գիդիս. էնդի դիփ հադիր է։

ՂԱՂՈ, վեր կենալով։

Դուն արխային կաց. վունչիչ չի մտես ննգնի։

ՄՈՍԵՍ

Հրամանքդ էլ, պարոն Եվայլն, մի էրկու սահաթվան էնդեն շնուր կու բերիս քուչի դռնեմեն ու դեմուդեմը բախշեն համեցեք կոնիս։ Ումիկ ունիմ, լավ քեփ շանց տամ քիզ. էսօր իմ ըրդիս-պուրին է։

ԵՎԱՅԼՆ

Ա՜, ըրդիս-պուրի, այսինքն՝ հերթա-հաց կամ հերթա-ճաշ... Օ՜, գիտեմ, գիտեմ. ալա-վերդի, յախշի-օլ... և այլն... Ես այդ ամենը գիտեմ։

ՄՈՍԵՍ

Բա՛ս, բա՛ս... Դուն համեցե՛ք. հեստի քեփ շանց տամ, ասում իմ, վուր քու էլած օրումն էլ չիս ըլի տեսի։

ԵՎԱՅԼՆ

Անպատճառ, անպատճառ. ձեզ համար ես պատրաստ եմ ուրախությամբ մտնել վառ կրակը կամ ալեկոծյալ ծովը։ (Առնելով ձեռը։) *Ցտեսություն։*

Գնում է դեպի Ղաղոն։

ՄՈՍԵՍ, առանձին։

Կրակն ու ծովը կու շանց տամ չիս քիզ էս գիշիր։

ԵՎԱՅԼՆ, Ղաղոյին։

Մնաք բարյավ։ (Նույնպես առնում է ձեռը, հետո ընդհանուր ողջույն տալով։) *Ադիեո՛, ո՛չ օ երվուա՛ր, պարոններ... և այլն։*

Դուրս է գնում դիմացի դռնից։

ՏԵՍԻԼ ԺԴ

ՂԱՂՈ, ՄՈՍԵՍ

ՂԱՂՈ, փրթկում է, հետո ծիծաղելով։

Էսենց էլ մարթ կուլի՞... Ի՜նչ միլլեթի մարթ ասիս, տեսիլ իմ, Մոսես. ամա էս հանգին չէ ոաստ էկի, վունց էլ Եվայլ անումով օմքին տեսի։

ՄՈՍԵՍ

Մի՛ վախենա, խիլքով ու խասիաթով էտ հանգի Եվայլնիր շատ կան քախկումը։

ՂԱՂՈ

Համ ուսում առած ու համ էլ ծալ-պակա՞ս։

ՄՈՍԵՍ

Ա՛յ, խռով կենա ինձ դրա ուսումը... Ի՞նչ գլխիս իմ տալի էն ուսումը, վուր մարթ ուրիշի կնգա վրա աչկ ունենա, էն էլ իր առկականի վրա... (Ղաղոն զարմանք է արտահայտում։) Հոր թողած փուղիրը շա՛տ, ինքը սիրուն ու կոխտա. վուրդի ասիս, թրև է էկի... Փրանգստանեմեն հորեն նուր է շնուր բերի... Իր ուսումը էնղանցի դավախաներումը կուլի թամամ արի ու էլի սատանեն գիդե վուրդի։

ՂԱՂՈ

Մտի՛կ, է՛. լիզվին անգամ դնիս, կոսիս՝ խիլքի կոլոփ է դրուստ։

ՄՈՍԵՍ

Է՛հ, թութի-ղուշն էլ է շատ բան ասում, ի՛նչ անիմ։

ՂԱՂՈ

Ամա կու ծիծաղինք էս գիշիր, հա՛. աբուշի կու շինին միր տղերքը։ Ջեր մե դարփա յիս սլբլեցրի աղազադին։

ՄՈՍԵՍ

Բանը մենակ ծիծաղի վրա չէ, Ղաղո ջան. քիմեն ի՛նչ թաքցնիմ, յագ խում չիս... Էլախտ էն փեսը խում տեսար, վուր Սերգոն տուն էբի. աստուած գիդենա, ուզում էի բան-հոքի անի էն անիծածին, ամա վուր տուն էկար, մեքաշ սառած մնացի։

ՂԱՂՈ

Ցիս էլ մաշուր արի, Մոսես, ամա էլ վունչիչ չասի... Էնդուր էլ Սերգոն մեռավ, կտրվեցավ ու չասավ ինձ էստի տուն գալիս, թե ինչի՞ է բերում էն փեսը... Մե ասա՛՝ ի՞նչ խաբար է՞։

ՄՈՍԵՍ

Էլ ինչ խաբար է, ախպեր, անումս բեդնամ էլավ... Էլ ճանփա չէ տալի էտ աննամուսը քու հարսին. վուրդի ասաստ է գալի, ինչ բեարում խոսկ ասիս, նրան է ասում։

ՂԱՂՈ

Մուլա՛փ հալա... փիս ախչիկ չէ Նինոն. նրան ի՞նչ գեթ է արի։

ՄՈՍԵՍ

Տո՛, փսութինով կի չէ. ասում է՝ սիրում իմ քիզ, կոսի, ու էլ ձեռը չէ վիկալնում։

ՂԱՂՈ

Ղո՞ւրթ իս ասում, Մոսե՞ս։

ՄՈՍԵՍ

Ի՞նչ հանաքի բան է։

ՂԱՂՈ

Տո՛, տո՛, տո՛, մե ինձ կոսեիր, է՛... Հարսիս նա վո՞ւրղանց է ճանչընում։

ՄՈՍԵՍ

Նրա հիոու ասկական է. թե ասի էլախտ...

ՂԱՂՈ

Վա՛յ, յիս նրա... Սո՛ւ, սո՛ւ, Մոսես ջան... Խո գու քա էս գիշիր, նրա ջիգրը իմ շլնքին. հեստի բան անիմ, վուր իր օրումն էլ չմտեն ննգնի։

ՄՈՍԵՍ

Քի դրուստն ասիմ, յիս էլ մտկումս էտ դրի, վուր էս գիշիրութին մեծրեցի. ասի՝ թե տանը վուր ծեծիմ, վայ թե փիս անում վիր ըլի, ու էս գիշիր մե ուրիշ բան մահանա կ՝ոնիմ, ասի, ու խալխի մոդ ջարթ ու փշուր կ՝ոնիմ ակոքնիրը։

ՂԱՂՈ

Ջարթ ու փշո՞ւր... վուրն ինձ թա՛մաշա արա. տի՛ս թե ինչ հալն իմ գցում յիս նրա կոկած ու տրոսած ջանը. մե գնում հալա, կարք ու սարքին մտիկ անի՞մ։

ՄՈՍԵՍ

Հա՛, չո՛ւստ արա, Ղաղո ջան։

ՂԱՂՈ

Դուն քեփդ քո՛ք պահե։

Դուրս է գնում ձախ դռնից:

ՏԵՍԻԼ ԺԵ

ՄՈՍԵՍ, մենակ:

Կինաղամ ի՞նչ էի անում, է՞... դրուստ էր ասում Նինոն, ինչ ասում էր... Ղուրթ վուր խանդսխան կնիկարմատն է խելոք տղամարթու վրա... Հը՞մ... (Աչու բռունցքը կրծելով:) *Մո՛ւլափ, պարուն Եվալդ, հեատի բան բերիմ գլխիս, վուր զուրս դուն պատվիրեցիր։*

Դուրս է գնում ձախ դռնից, վարագույրը իջնում է:

ԱՐԱՐՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Թեմը ներկայացնում է գեղեցիկ պարտեզ, որի ետևից, խորքում, Մոսեսի երկու հարկանի տունը: Երկնքում փայլում է լուսինը: Պարտեզում, դեպի ձախ, ծաղիկների մեջ փռված է ֆեյսաներով ու մուրբաներով զարդարած մեծ գորգ, որի վրա ձգած է կանանչ տերևներով և ծաղկե փնջերով զարդարած ընթրիքի ճոխ սփռոց: Աջ կողմը ևս ծաղիկներ: Խորքում՝ տան առջև, գետնի վրա ընկած է մի փայտե դատարկ մեծ տակառ (շամարի բոշկա): Թեմը լուսավորված է գույնզգույն թղթե վառ լապտերներով և սփռոցի վրա դարսած ճրագներով: Տան վերի հարկը նմանապես լուսավորած է:

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ՂԱՂՈ, սազանդար **ՅԱՎԱՆԳՈՒԼ** իր խմբով* և բազմաթիվ **ՀՅՈՒՐԵՐ**, ծալապատիկ նստած սփռոցի շուրջը, ընթրում են, **ՄՈՍԵՍ**, ոտի վրա կանգնած, հյուրասիրում է, **ՍԵՐԳՈ** և երկու **ԱՊԱՍԱՎՈՐ**** ծառայում են: Մի քանի հյուրեր գլխարկներով են, մյուսները առանց գլխարկի: Վարագույրը բացվելիս սպասավորները վերջացնում են հյուրերի սպասները փոխելը մաքուրներով և բանեցրածները դուրս են տանում աջ կողմից. նույն կողմից դուրս է գնում և Սերգոն, նախապես շարժվածքով հրահանգներ ստանալով Մոսեսից:

ՅԱՎԱՆԳՈՒԼ, բարձր ձեռին, սազի ներդաշնակցությամբ երգում է:

«Մե խոսկ ունիմ իլթիմազով,
ա՛նգամ արա, ո՛վ աճկի-լուս.

---

* *Ցավանգուլու խումբը, առաջին ներկայացման ժամանակ, կազմում էին, ըստ սովորության, չորս անձինք։ Գլխավորը ինքը Ցավանգուլն էր—թառ ածող և երգիչ. երկրորդը՝ հիանուր (քամանչա) ածող—Ցովանես Վարդանյանն էր. մնացած երկուսին անվանում էին՝ դայիրա ածողին—Պապուչի, իսկ դիմպլիպիտո ածողին—Ճիղու։*

** *Մինը առաջին արարվածի սպասավորն է, զուգված շքեղ չերքեզկայով և արծաթապատ դաշույնով. մյուսը—ֆրակով և սպիտակ ձեռնոցներով։*

Սրտումըս ինթիզար ունիմ,
քու տիսրն բարով, աճկի-լուս.
Աջա՞ք քիզ ինչ գլթ իմ արի՝
կենում իս խորով, աճկի-լուս.
Աշխարս աշխարով կըշտացավ,
յիս քիզանից սով, աճկի-լուս» Եվն։

Սայաթ-Նովա

Մինչդեռ այս երգը շարունակվում է։

ԱՌԱՋԻՆ ՀՅՈՒՐ, բաժակը ձեռին։

Հա՛-ջան, հա՛-ջան, Ցավանգուլ ջան։ (Ղաղոյին։) *Թամադա ջան, դուն ինձ դաստուր տվիր՝ մե կինաց ասիմ... էս էլ աստուած սաղ պահե՝ օվոր ումը կու սիրե։* (Ղաղոն ու Մոսեսը ճայում են միմյանց։) *Էս խաղին էս կու սաղ գա։* (Երկրորդ հյուրին։) *Ալա-վերդի։*

ԵՐԿՐՈՐԴ ՀՅՈՒՐ

Ցախշի-օլ։ (Մինչդեռ առաջին հյուրը խմում է, սա վերցնելով բաժակը։) *Էս էլ՝ էրած ու խորված սիրեկնի կենացը։* (Արմունկով ծածուկ խթում է իր դրացուն և գլխի շարժմամբ, հայացքով ու երեսը ծամածռելով ցույց է տալիս նրան երրորդ հյուրի վրա, ուրին և դիմում է։) *Ալա-վերդին քի մոդ իմ։*

ԵՐՐՈՐԴ ՀՅՈՒՐ

Ցախշի-օլ։ (Բաժակը ձեռին, չորրորդին։) *Ալա-վերդի։*

ՉՈՐՐՈՐԴ ՀՅՈՒՐ

Ցախշի-օլ։

Խմում են։ Այսպես շարունակում են և մնացած հյուրերը, մեկը մյուսին շարժվածքով արտահայտելով իրանց ալա-վերդի յախշի-օլը։ Երգի վերջանալու ժամանակ աջ կողմից Սերգոն զամբյուղով բերում է շիշերով գինի, դարսում է նրանց սփոռցի վրա և դատարկները հավաքում զամբյուղում։ Այս միջոցին վերոհիշյալ սպասավորները նույն կողմից բերում են սկուտեղների վրա դրած երկու չամփուր խորոված։

ՄՈՍԵՍ, սպասավորներին ցույց տալով այն կողմը, ուր նստած է առաջին հյուրը։

Էնթենը թա՛վազա արեք։ (Նույն կողմը։) *Աբա՛, տղերք, մտի՛կ արնք՝ ի՞նչ սուկիք է։*

ԱՌԱՋԻՆ ՀՅՈՒՐ

Ջա՛ն, ջա՛ն, խաղեին։ (Ջերմեզկավոր սպասավորին։) *Դուն մուլա՛փ։* (Մյուս սպասավորին՝ ցույց տալով երրորդ հյուրին։) *Էս տա՛ր էն սիրուն տղին թա՛վազա արա, մշկուլ վուր նստած է։* (Երրորդ հյուրին։) *Աբա՛, Մանդրո ջան, մե ճակատդ բա՛ց արա. ի՞նչ իս էտ պանս քինթդ մե գազ վեր թողի. էտ խորոված մե քու դալիդ թայգուլ շինե, թե ախպեր իս։* (Իր մոտ կանգնած սպասավորին։) *Բի՛ էստի։* (Առնում է սկուտեղը և բաշելով խորոված, դիմում է Ղաղոյին։) *Աբա՛, թամադա, էստուրն ի՞նչ իս ասում. մտիկ՝, է՛ հենց գիդենաս կարմիր յաղուլնիր ըլի կաթկթում։*

Միևնույն ժամանակ երրորդ հյուրը բռաշում է իր ձեռի խորոված առանց կտորները հեռացնելու, այնպես որ այդ կտորները կազմում են մի տեսակ փունջ, որ չամփուրը կողից բռնած նա առաջարկում է աջ ու ձախ. հասնողները ձեռով պոկում են խորոված կտորները և ուտում։

ՂԱՂՈ, նույն միջոցին պատասխանելով ← **ջին հյուրին։**

Օ՛հ, քու հոքուն մեռնիմ, վասո ջան։ (Առնում է խորոված կտորը, լոշի մեջ փաթաթում և ծամելով։) *Ըհմ, ը՛հմ, ը՛հմ... Մե էտթենն էլ թա՛վազա արա։* (Վեր կենալով տեղից։) *Էս սահաթիս էվետ գալիս իմ։* (Դիմելով Մոսեսին։) *Մոսես, է՛ստի արի։* (Մոսեսի հետ առաջ է գալիս։) *Մե հոքևորն ի՞նչ էլավ. ի՞նչի ուշացավ։*

Մեղմ կերպով ածում են սազը. խորոված մատուցանում են։

ՄՈՍԵՍ

Գու քա, մի՛ վախենա։

ՂԱՂՈ

Գիդիս ի՛նչ փիքր արի, Մոսես ջա՛ն... Տղերքը մե քիչ վուր տաքնան, կոսիմ՝ գնանք խեյվնի կուռը. հաուզի մոդ վուր մոդ կէհանք, մե իմ էլ շատ կու գցիմ յիս էն աննամուսին ու կու բլնցիմ դեմուդեմը հաուզը։

ՄՈՍԵՍ

Էտ չէլավ, Ղաղո ջան... Ջգրած սրտիս վրա էլ հիռու չփիքր արի էլախտ... Պիտի էնենց ժաժ գանք, վուր օչովեն օչով չիմանա... Քի դրուստն ասիմ՝ խիստ փոշիվան իմ, վուր մեծրեցի յիս էն լիրփ անուկամին, ահա հիմի էլ նա փաիդա, վունցոր ըլի պիտի յոլա տանինք, դոնաղներուն էրես պահինք... Իմ սիրտը խո կոտրած է ու կոտրած. էնենց բան բռնինք, վուր նրանց սիրտն էլ չկոտրվի ու է՛ս քեփը քնթեններեմեն չկուս գա դիփունանցը... Հիմի, Ղաղո ջան, էսենց դարսինք դոնաղներուն վուր

կու դեվեր տանիս խեյվանը, յիս էն լպստածին թաքուն դրաղ կու քաշիմ ու դեմուդեմը կոսիմ իրան, վուր Նինոիմեն ձեռը վիկալնե, թե չէ, ղուրթ վուր մաս-մաս կոնիմ յիս նրան։

Սերգոն դատարկ շիշերով զամբյուղը տալիս է ֆրակավոր սպասավորին, որ դուրս է տանում աջ կողմից։

ՂԱՂՈ

Վունցոր քու քեփն է, Մոսես ջան, էնենց կու ժաժ գամ։

ՄՈՍԵՍ

Տեսնինք, աստուած վո՞ւնց է վրա բերում։

Այս խոսակցության ժամանակ, միջոցներ սազը մեղմ ձայնով շարունակվում է, հյուրերը երբեմն երբեմն զանազան բեֆի խոսքեր են ասում միմյանց՝ *օհ, շենի կի ճկրի մե, ալա-վերդի, յախշի-օլ, և այլն։* Աջ կողմից մտնում է Եվայլն ցիլինդրով, ձեռնոցներով, պենսնեով, ձեռնափայտով և ամենաշքեղ մի ծաղկի փունջ ձեռին։

ՏԵՍԻԼ Բ

ՆՐԱՆՔ, ԵՎԱՅԼՆ

ՂԱՂՈ, Մոսեսին։

Հորեն, էկավ։

ՄՈՍԵՍ, առանձին, բռունցքը կրծքին տանելով։

Վոյ մե՜... (Ղաղոյին, ցածր։) *Հա՛բա պատիկ* արա. միթամ վունչիչ խաբար չկա։*

ՂԱՂՈ, նույնպես ցածր։

Էտ յիս գիդիմ։ (Նվագածուներին։) *Տո՛ւշ, տո՛ւշ։*

Ածում են տուշ։

ՄՈՍԵՍ, դեմ գնալով Եվայլնին։

Համեցե՛ք, պարուն. ինչի՞ ուշացար։

* *Հարգ ու պատիվ։*

ԵՎԱՅԼՆ, թողնում է ձեռնափայտը բեմի խորքում և գլխարկը վերցնելով ողջունում է։

Ներողություն, ներողություն, պարոն... զանազան գործեր և հանգամանքներ ստիպեցին ինձ կորուսանել մի քանի րոպե բավականության. բայց հույս ունիմ՝ այնպիսի զվարճություն ստանալ այստեղ, որ կորուսյալ ժամանակս մոռանամ... և այլն։

ՂԱՂՈ

Հեստի քեփ շանց տանք ջիզ, պարուն, վուր դիփ մետի մոռանաս։

ԵՎԱՅԼՆ, գլխարկը ձեռին, գլուխ տալով Ղաղոյին, դառնում է Մոսեսին։

Իսկ այս փունջը, խնդրեմ, տիկնոջը ուղարկեք իմ կողմանե։

ՄՈՍԵՍ, առնելով փունջը։

Ինչի՞ էիր նիղանում. ջեր էստի կենա, սուփրին սազ գու քա։ (Տալով փունջը Ղաղոյին։) *Էս մե էնդի սարքե, հենց ապրիս։*

ԵՎԱՅԼՆ, մեկուսի։

Նախանձում է... Լա ժալուզի... ժր ֆոնե։

ՄՈՍԵՍ, հրավիրելով Եվայլնին հյուրերի կողմը։

Համեցե՛ք, համեցե՛ք, պարուն... (Ղաղոյին, ցածր։) *Ղաղո ջան, մե քիչ գինուն զոռ կոնիս...* (Սերգոյին։) *Սերգո, ասա՛, էլի գինի բերին։*

Սերգոն դուրս է վազում աջ կողմից։

ԵՎԱՅԼՆ, գլխարկը ձեռին, մոտենալով հյուրերին։

Բարյավ ձեզ, հարգելի պարոններ։

ՀՅՈՒՐԵՐ

Բարով, բարով, համեցե՛ք, պարուն։

ԵՎԱՅԼՆ, Մոսեսին։

Աթոռ, աթո՛ռ հրամայեցեք, խնդրեմ. այդպես նստել հարմար չէ։

ՄՈՍԵՍ, շերեզկավոր սպասավորին։

Մե սկա՛մի բի։

Սպասավորը դուրս է վազում աջ կողմից։

ՍԵՐԳՈ, վերադառնալով, Մոսեսին ցածր:

Ախչիկ-պարունը խնդրում է. մի նմուտ էստի համեցեք, կոսե։

Սոսեսը իսկույն դուրս է գնում աջ կողմից. Սերգոն հետևում է:

ՏԵՍԻԼ Դ

ՆՐԱՆՔ, առանց ՄՈՍԵՍԻ

ՂԱՂՈ, Եվայլնին:

Էլ ի՞նչ սկամի, համեցե՛ք նստի, վունցոր մինք ինք, էնենց էլ հրամանքդ միզ մոդ դաբուլ արա։

Նստում է իր աեղը և ծաղկե փունջը դնում է սփռոցի վրա մի ծաղկակալի մեջ:

ԵՎԱՅԼՆ

Շատ ուրախ կլինեի, պարոններ, ձեզ հետ նստելով, ձեզ պես վարվեի։ (Գլխարկը վայր դնելով գորգի վրա և քաղցրությամբ:) *Բայց ծընկներս ծալել, ինչպես դուք եք ծալում, չեմ կարող. հավատացե՛ք՝ չեմ կարող... Ի մանկութենե սովոր չեմ...* (Խոսելով, ձեռնոցները հանում է:) *Այնուամենայնիվ զարմանալի է, որ ամեն բանում մենք ամենքս աշխատում ենք եվրոպացվոց նմանվիլ. իսկ մի քանի դեպքում դարձյալ մնում ենք* (ժպտալով:) *Իսկ և իսկ հին ասիացիք։*

Ձեռնոցները ձգում է գլխարկի մեջ:

ՂԱՂՈ

Էս մեկը բախշե՛, պարուն, ու հորեսի դենը ստոլի վրա կու մեծրինք քիզ։ (Ձերեզկավոր սպասավորը բերում է մի աթոռ, իսկ նրան հետևելով ֆրակավոր սպասավորը—բոլորակ փոքրիկ սեղան, հարկավոր պարագաներով:) *Ա՛յ, հա՛մեցեք նստի. քիզ համա ստոյ էլ ին բերի։*

ԵՎԱՅԼՆ, խորին գլուխ տալով:

Շատ շնորհակալ եմ, պարոն, ձեր առանձին ուշադրության համար։ (Գլխարկը վերցնելով:) *Ներողություն, ես իսկույն։*

Գլխարկը տանում է, դնում է մի կողմ բեմի խորքում իր ձեռնափայտի մոտ, մինչդեռ սպասավորները պատրաստում են նրա համար սեղանը, բեմի աջ կողմը, ծաղիկների մոտ:

Նույն միջոցին:

ԱՌԱՋԻՆ ՀՅՈՒՐ, Ղաղոյին:

Էս ո՞վ է։

ՂԱՂՈ

Վա՛հ, չի՞ք ճանչնա՛, էս միր պարուն Եվայլն է։

ՄԻ ՔԱՆԻ ՀՅՈՒՐԵՐ

Եվա՛յլն։

ՂԱՂՈ

Հա՛, Փրանգստանեմենկ նուր է էկի... Գիդենաք՝ լավ կա իր համա. դովլըթումը զմզրմում է։

ԵՐԿՐՈՐԴ ՀՅՈՒՐ

Ինչոր վուր է, լավ կի շշպըռից միզ դիփունիս ո՞։

ԱՌԱՋԻՆ ՀՅՈՒՐ

Մո՛ւլափ, դրա ջիգրը չիմ ուտի. մի՛ վախենա... Փուղն ու հարստությինն է դրան լիղու տալի ու էտենց խոսեցնում։

Ֆրակավոր սպասավորը դուրս է վազում աջ կողմից:

ԵՎԱՅԼՆ, վերադառնալով:

Ներողություն, պարոններ։

ՂԱՂՈ

Համեցե՛ք, համեցե՛ք նստի։ (Եվայլն գլուխ տալով, նստում է աթոռի վրա, որ մոտ է բերում ձերեզկավոր սպասավորը:) *Էտենց, միթամ դուն միր մինձավուրն իս։*

ԵՎԱՅԼՆ, ոտի կանգնելով:

Հավատացե՛ք, պարոն, և դուք, պարոններ, որ ես ամենևին դիտավորություն չունիմ՝ որևէ կերպիվ ձեզանից բարձր երևալու... Արդար է, ես այժմ ձեր կարգում չեմ նստած և մի փոքր հեռու եմ ձեզանից, այնուամենայնիվ սիրտս ձեզ մոտ է միշտ և ես ձերն եմ հավիտյան։ (Շատերը ծափահարում են: Գլուխ տալով:) *Մենք ամենքս, պարոններ, եղբայրներ ենք։*

Նստում է:

ՂԱՂՈ, Եվայլենին:

Ա՛յ, ափերում։

ԵՐԿՐՈՐԴ ՀՅՈՒՐ, առաջինին:

Չէ՛, էրեսը դեսն է էլի։

ՂԱՂՈ, ճյուռեերին:

Աբա՛, տղերք, գի՛նի ածեք, պարուն Եվայլի կինացը լիքը լիքը պիտիք դարդըկի, հը՞. էլ ալա-վերդի յախշի-օլ չկա, դեմուդեմը խմեցե՛ք... Տո՞ւշ, տո՞ւշ։ (Ածում են տուշ:) *Պարուն Եվայլն, քու հրամանուց կինացը։*

Եվայլն ողջունում է, Ղաղոն խմում է: Սերգոն և ֆրակավոր սպասավորը մեծ զամբյուղով բերում են շիշերով գինի:

ԵՐԿՐՈՐԴ ՀՅՈՒՐ

Պարուն Եվայլն, ձիր կինացը։

ԵՐՐՈՐԴ ՀՅՈՒՐ

Ձիր կինացը։

ՀՈՐՐՈՐԴ ՀՅՈՒՐ

Ձիր կինացը։

Խմում են:

ԱՌԱՋԻՆ ՀՅՈՒՐ

Պարուն Եվայլն, ձիր հրամանուց կինացը... Տղե՛րք, միր պարուն Եվայլի կինացը։

Խմում է:

ՄՅՈՒՍ ՀՅՈՒՐԵՐ

Ձիր կինացը, ձիր հրամանուց կինացը։

Խմում են: Եվայլն ամենքին կարգով գլուխ է տալիս իր ժամանակին:

ՂԱՂՈ, Եվայլենին:

Աբա՛, մե շնորակալութին ա՛նուշ արա։

ԵՎԱՅԼՆ

Մեծավ ուրախությամբ։ (Լցնելով բաժակը, ոտի է կանգնում:) *Շնորհակալ եմ, պարոններ, խորին շնորհակալություն... գրան մերսի...*

(Խմում է:) *Թեպետ չունիմ պատիվ ձեզ ճանաչելու և ձեզ ծանոթ լինելու, սակայն հույս ունիմ, պարոններ, որ շուտով կճանաչենք միմյանց և ես կարժանանամ ձեր գնահատության... և այլն։*

Նստում է:

ԵՐԿՐՈՐԴ ՀՅՈՒՐ, իր դրացուն, ցածր:

Էս ի՞նչ նեքսի տակեմեն է կցում, տո՛։

ԱՌԱՋԻՆ ՀՅՈՒՐ, Եվայլենին:

Ումիկ ունինք, պարուն, վուր միր աստղն էլ միզ օտկե՝ քիզ միր գլուխը լավ ճանչըցնիլ տալու։

ՂԱՂՈ

Լավ է, ձիր հորն օղորմի, բա դրոս աստղաբաշութին է ու ցերեմոնիեք. քեփ ինք անում, քեփ անինք... էս գինին տաքցավ էստի ձեռիս։ (Եվայլենին:) *Աբա՛, պարուն, ջեր մե թարջիմլումը անուշ արա էս յիրիք ստաքանը, վուր ուշացար։*

Առաջարկելով Եվայլենին ափսեի վրա գինով լիքը երեք բաժակ, որ տալիս է շերեզկավոր սպասավորին:

ԵՎԱՅԼՆ

Այդքանը ի միասի՞ն. տվե՛ք ինձ ժամանակ, խնդրեմ։

ՂԱՂՈ

Չէ՛, չէ՛, պարուն, պիտի միզ հիդ դրըստվիս։ էս էլ մինձ խաթրն ինք անում քիզ։

ԵՎԱՅԼՆ

Ձեր պահանջը ճշմարիտ չէ։

ՂԱՂՈ

Թե ճշմարտութինը կու սիրիս, պիտիս խմի, ախպեր։

ԵՎԱՅԼՆ

Ճշմարտությո՞ւն, լա վերիթե։

ՂԱՂՈ

Բա՛ս մինք քանի ինք խմի. տաս էրկու կինաց թաս ավել ինք դարդըկի, կարքեն դուսը հալա դենը կենա։ էտ յիրիք ստաքանն էլ, հեր օխ-

նած, հրամանքդ ա՛նուշ արա, է՛, վուր մեր խոսկիրը քի մոդ հիմար չէ-բևա... (Եվայլն տատանվում է:) *Խմե՛, թե քու հոր գերեզմանը կու սիրիս։*

ԵՎԱՅԼՆ

Դժվարին է, դժվարին, պարոն։

ՂԱՂՈ

Հաջաթ չէ. մտկումդ սիրեկնիտ ա՛նումը տու, հիշտ դեվեր կէհա։

ԵՎԱՅԼՆ

Այնպիսի սուրբ բառ ասացիք, որ այսուհետև այդ բաժակներից հրաժարվիլը ամենամեծ հանցանք կլիներ... և այլն։

ՂԱՂՈ

Ասում իմ, է՛։

Եվայլն առնում է սպասավորից բաժակները և սկսում է կամաց-կամաց խմել:

ՅԱՎԱՆԳՈՒԼ, սազի նեղդաշնակցությամբ երգում է:

«Էշխըն վառ կըրակ է՝ էրվելով գու քա.—
Շատ մարթ կոսե՝ յիս յարի հիդ ման գու քամ։
Էս դարդեմեն ով չէ քաշի՝ վո՛ւշ քաշե,
Ո՛վ յար սիրե, է՛լ չասե, թե՝ «ջա՛ն, գու քամ։» Եվն։

Սայաթ-Նովա

ԵՎԱՅԼՆ, մինչդեռ երգը շարունակվում է, խմելով:

Վուալա՛ դեռն... *Ահա՛ այս մինը ավարտեցի... ահա՛ երկրորդը... ահա և այս երրորդը... և այլն։* (Երգը վերջանում է:) *Թողե՛ք, խնդրեմ, այդ ասիական երգերը... Առե՛ք օրինակ եվրոպացվոց քաղցր և քնքուշ երգերից. զորօրինակ՝*

Ոտի կանգնելով, հիանալի երգում է իտալական օպերայից մի երգ հայերեն լեզվով*:

---

* *Եվայլնի դերը գրած է պ. Արսեն Կարապետյանի համար, որ իր գեղեցիկ ձայնով և շնորհալի խաղով, այս դերը կատարելիս. հիացրեց հանդիսականներին և որ այնուհետև իր տաղանդի շնորհիվ հրավիրվեց Մոսկվա օպերետային թատրոն, ուր երկար տարիներ ծառայելով Դավիդովի անունով, մեծ հռչակի արժանացավ։*

ՀՅՈՒՐԵՐ, ծափահարելով։

Բի՛ս, բի՛ս, բի՛ս... (Մեկը նրանցից:) *Գանա մինք չի՞նք գիդի նուր դայիդի խաղիր։*

Երգում են Յավանգուլի հետ միասին՝

«Բաժակներ առնունք, եղբա՛րք,
Լիք լիք բաժակներ գինով,
Կարմիր ու ճերմակ գինին
Մեզ լինի անուշ համով։» Եվ այլն։

Ռ. Ց—Գ. Պատկանյան

Մի քանի վայրկյանից հետո Եվայլն մասնակցելով այս խմբին, առանձին փայլ է տալիս ամբողջ երգին:

ՂԱՂՈ, երգը վերջացնելուց հետո:

Աբա՛, մե կինաց, մե կինաց. բողազներուս խանձվեցավ... էս էլ աստուած սաղ պահե մեր Յավանգուլուն... Յավանգուլ ջան, շատ ապրիս, ձենդ անպակաս ըլի միզմեն. ուրախ ըլիս համաշա։

ՀՅՈՒՐԵՐ

Յավանգուլ ջան, քու կինացը։

Ածում են տուշ. ամենքը խմում են: Սպասավորները փոխելով հյուրերի սպասները, բանեցրածները դուրս են տանում աջ կողմից:

ՅԱՎԱՆԳՈՒԼ, հանկարծ բարձր ձայնով «բայաթի» է երգում. վերջացնելուց հետո, բաժակը ձեռին, ոտի է կանգնում:

Շնորակալ իմ, պարուններիր, դուք սաղ ըլիք ինձ համա... (Խմում է, հետո դիմելով Ղաղոյին:) *Հիմի, պարուն Թամադա, կամք տու, մե կինաց էլ յիս ասիմ։*

ՂԱՂՈ

Ա՛սա, Յավանգուլ ջան, ասա՛, գեթաղվա։

ՅԱՎԱՆԳՈՒԼ, շարունակելով:

Էս էլ նրանց կինացը՝ վուրդի հիվանդ ու նիղացած կա, թե մարթ, թե կնիկ. աստուած նրանցը ջան տա, առուքչուքին ու իրանց ցավեմեն ազատուքին... Բախտավուրուքին է ու բախտավուրուքին։

ԲՈԼՈՐԵՔՅԱՆ

Ա՛մին, ա՛մին, ուրա՛...

ԵՎԱՅԼՆ

Կեցցե՛...

ԲՈԼՈՐԵՔՅԱՆ

Կեցցե՛, տո՛ւշ, տո՛ւշ...

Ածում են տուշ. խմում են. Ցավանգուլը նստում է:

ԵՎԱՅԼՆ, ոտի վրա և բաժակը ձեռին, սազի ներդաշնակցությամբ ու շատերի ձայնակցությամբ, գեղեցիկ երգում է:

«Եղբա՛ր՝ մի շուրջ ժողովեցե՛ք,
Քաջ հայոց կերպիվ կոնծեցե՛ք,
Բաժակներդ դարդրկեցե՛ք } Կրկնե՛:
Մեր հայ ազգի կենացը։» } *Եվայլն։*

Ք. Տ—Գ. Պատկանյան

Խմում է և շարունակում է երգը:

ՀՅՈՒՐԵՐ, երգը վերջանալուց հետո:

Բրավո՛, բրա՛վո, պարոն Եվայլն։

ՏԵՍԻԼ Դ

ՆՐԱՆՔ, ՄՈՍԵՍ, որ դուրս է գալիս աջ կողմից:

ԵՎԱՅԼՆ, շարունակ ոտի վրա, լցնում է բաժակը և դիմելով Ղաղոյին:

Պարոն Թամադա, թույլտվություն եմ խնդրում՝ մի կենաց թաս հրոչակել։

ՂԱՂՈ

Հրա՛մանք արա։

ԵՎԱՅԼՆ

Ես առաջարկում եմ մի կենաց, այնպիսի մի կենաց, պարոններ, որ հույս ունիմ, ա՛մենքդ հոժարությամբ կընդունեք... Մեր պատվելի... հյուրասեր տանտիրոջ կենացը, տանտիրոջ, որին ի սրտե ցանկանում եմ՝ երկար կյանք, առողջություն, բախտավորություն, ամեն տեսակ հաջողություն... և այլն, և այլն։ Տո՛ւշ, տո՛ւշ, պարոններ։ (Ածում են տուշ:) *Կեցցե՛։*

ՀՅՈՒՐԵՐ, միասին։

Կեցցե՛... Մեր խազեինի կինացը, Մոսես ջան, քու կինացը, քու կինացը, Մոսես...

ՂԱՂՈ, մոտենալով Մոսեսին։

Մոսես ջան, քու կինացը. սաղ ըլիս, վար ըլիս։

Համբուրվում են: Տուշը շարունակվում է. ամենքը խմում են:

ՄՈՍԵՍ, բաժակը ձեռին:

Շնորհակալ իմ, տղերք, շատ ապրիք. քե՛փ արեք, գեթաղվա... (Ղաղոյին:) *Ղաղո ջան, ապրիս, բախտավուր ըլիս...* (Խմում է. հետո կրկին Ղաղոյին, ցածր:) *Ա՛խ, էլ չիմ կանացի գլուխս պահի. տեսա՞ր՝ ինչ ղալթաբանդութին բանեցրո՛ւց. միթամ խիստ է ուզում իմ լավութինը։*

ՂԱՂՈ, նույնպես ցածր։

Դեվեր տանի՞մ։

ՄՈՍԵՍ, նույնպես։

Չէ՛, մո՛ւլափ տու չեր. (Սպասավորները սկուտեղներով բերում են գեղեցկազարդ պաղպաղակ:) *քաղցրեղեն ին բերում։*

ՂԱՂՈ, նույնպես։

Դուն գիդիս։

Գնում է դեպի իր տեղը:

ՄՈՍԵՍ, բարձր:

Ղա՛ղո, միրքն ի՞նչ արիր։

ՂԱՂՈ

Սե՛րգո, Սե՛րգո, էտի բոչկի էդնեն խախլով միրք կա, բի՛ էստի, հենց ապրիս։

Սերգոն խախալով բերում է ամենարնտիր մրգեղեններ:

ԵՎԱՅԼՆ, տեսնելով միրգը, մոտենում է Մոսեսին:

Ձեր նուրբ ճաշակը ինձ հիացնում է։ (Մեկնելով ձեռը Մոսեսին:) *Թույլ տվեք ինձ սեղմել ձեր պատվական ձեռքը։*

Մոսեսը ակամա տալով Եվայլնին ձեռը, առաջնին, տհաճություն է արտահայտում։

ՂԱՂՈ, առնելով Սերգոյի ձեռից խախալը:

Աբա՛, տղերք, տեսե՛ք ինչ թարփ իմ շինել տվի ձիզ համա։

Խախալը սփռոցի վրա դնելով, նստում է:

ՀՅՈՒՐԵՐ

Պա՛, պա՛, պա՛, պա՛... ջա՛ն, ջա՛ն, Ղաղո ջա՛ն, ջա՛ն թամադա...

ԵՎԱՅԼՆ, մոտենալով Ղաղոյին:

Ուրեմն պարտավոր եմ սեղմել և ձեր ձեռքը... (Առնելով ձեռը:) *Երկու եղբայրդ էլ մեծ գովասանքի եք արժանի։*

ՂԱՂՈ

Վիրշն է գովելի։

Մոսեսը նստում է Ղաղոյի մոտ կամ նրա դիմացը: Նինոն երևում է լուսամուտում և իսկույն անհետանում է:

ԵՎԱՅԼՆ, տեսնելով Նինոյին, առանձին:

Ահա՛ կյանքիս նպատակը... Իմ աստվածուհին. Մա դեես:

ՅԱՎԱՆԳՈՒԼ, սազի ներդաշնակցությամբ երգում է:

«Հայոց աղջիկներ, ձեր հոգուն մատաղ,
Երբ միտս եք գալիս, ասում եմ ես՝ «ա՜խ»,
Հալվում եմ, հալվում օտարության մեջ,
Ա՜խ, սիրտս խորվում, ցավիս չկա վերջ»։ Եվն։

Գևորգ Միրիմանյանց

ԵՎԱՅԼՆ, մասնակցելով երգին, կրկին հիացնում է ամենքին իր ձայնով. հետո, դարձյալ կանգնած:

Պարոններ, պարոններ, ուշադրություն, ուշադրություն... Նախապես թույլտվություն եմ խնդրում մեր բարի թամադայից առաջարկելու մի կենաց թաս ևս։

ՂԱՂՈ

Հրամա՛նք արա, յիս ղաբուլ իմ։

ԵՎԱՅԼՆ, վերցնելով լիքը բաժակ:

Այս երկրորդ կենաց թասն է իմ առաջարկությամբ, որ կարծեմ ավելի ախորժելի պետք է լինի ձեզ ամենիդ... Մեր քնքուշ տանտիկնոջ կենացը։

ՂԱՂՈ, Մոսեսին, ցածր:

Հախն է, վուր վեր տանք։

ՄՈՍԵՍ, նույնպես:

Մո՛լափ, էստի չի սազ գա։

ԵՎԱՅԼՆ

Խնդրեմ, պարոններ, բաժակները լցնել... (Դառնալով դեպի դատարկ լուսամուտը:) Թել դամ... *Ամենագեղեցիկ տիրուհի, ահա՛ բաժակը, որի մեջ պարունակվում են իմ ջերմեռանդ իղձերը... Ի բոլոր սրտե ցանկանում եմ ձեզ՝ ամենաերկար կյանք, անխախտ առողջություն, հարատև երջանկություն, մշտնջենական գեղեցկություն...* (Երգելով:) *Եվ... այ....լըն... Կեցցե՜։*

ՀՅՈՒՐԵՐ, միասին:

Տո՛ւշ, տո՛ւշ, տանդիկնի կինացը, տո՛ւշ... Կեցցե՛։

Ածում են տուշ. Նինոն երևում է լուսամուտում և գլուխ տալով հեռանում է. ամենքը խմում են. Եվայլն, առանձին և անձայն, խորը հոգվոց է հանում:

ՄՈՍԵՍ

Շնորակալ իմ, շնորակալ, տղերք. ապրիք, բախտավոր ըլիք... (Խմում է. հետո Ղաղոյին ցածր:) *Աբա՛, Ղաղո, վուխան է, դե՛վեր տարե։*

ՂԱՂՈ, հյուրերին:

Տո՛, ի՞նչ ինք էստի սոկո դառի, դեվեր գնանք խեյվանը։

ՀՅՈՒՐԵՐ

Գնանք, գնանք։

Ամենքը վեր են կենում:

ԱՌԱՋԻՆ ՀՅՈՒՐ

Ձեր մե ձեռաց լեզզեվար, լավ չի ըլի՞։

ՄՅՈՒՍ ՀՅՈՒՐԵՐ

Լա՛վ, լա՛վ։

ՂԱՂՈ

Խիստ լավ կուլի, համեցեք՝ լեգզեվար։

Ածում են լեգզերեն պարի եղանակը. պարում են՝ դեռ առաջին հյուրը, հետո մյուսները.* Նինոն գալիս է, լուսամուտից նայում է պարին։

ԵՎԱՅԼՆ, առանձին:

Այս կի՛նը խելքից կհանե ինձ բոլորովին։

ՂԱՂՈ, պարը վերջանալուց հետո:

Աբա՛, Յավանգուլ ջան, հիմի մե լավ լոթեբո։

ՅԱՎԱՆԳՈՒԼ, երգում է սազի ներդաշնակցությամբ:

«Լոթեբո նետաի չվենա, արիա-լալի,
Դղես մոգվեցա շվեբա-լխենա, թարիա-լալի.
Շեմոդգոմամա Բախուսի, արիա-լալի,
Սածնախելշի չաաղենա, թարիա.լալի։»

Սազի ձայնակցությունը շարունակվում է:

ԱՌԱՋԻՆ ՀՅՈՒՐ

Հա՛-ջան, հա՛-ջան, Յավանգուլ ջան։

Հյուրերը սփռոցից վերցնում են նրագներ. Նինոն մնում է լուսամուտում:

ԵՎԱՅԼՆ, նայելով Նինոյին, առանձին:

Ո՞վ գեղեցկության աստվածուհի։

Առանձին, հալ ու մաշ է լինում: Հեռվից լսվում է շվու ձայն:

ՂԱՂՈ

Ը՞հմ... Սե՛րգո, Սե՛րգո, դեվեր վազի, հենց ապրիս. զուռնաչի Արտեմն է նշան տալի։ Տո՛ւն բի, թո՛ղ ներքիվը, հաուզի մոդ, մե լավ «սահարի» ածե։

Սերգոն դուրս է վազում ձախ կողմից:

ԱՌԱՋԻՆ ՀՅՈՒՐ, Ղաղոյին:

Քի պես թամադա չի ըլի, Ղաղո ջան։

* Եթե պարողներ լինին, ածում են ու պարում են նաև «յալլի» և «ուզուն դարա»։

ՅԱՎԱՆԳՈՒԼ, շարունակում է:

«Բազինդ զամթարի հղինավդես, արիա-լալի,
Գինդ ղվավից վեղարա հփրինավդես, թարիա-լալի.
Վեր շեգվաչինոս սիցիվեմ, արիա-լալի,
Թու թավշի ղվինո պրծղինավդես, թարիա-լալի։»

Սազի ձայնակցությունը դարձյալ շարունակվում է:

ԵՐԿՐՈՐԴ ՀՅՈՒՐ

Ճիրի մե շենի, Յավանգուլ։

ԵՐՐՈՐԴ ՀՅՈՒՐ, կոկորդային ձայնարկությամբ:

Ը՞հմ։

ԱՌԱՋԻՆ ՀՅՈՒՐ, երկրորդին, ցածր:

Նեքսեմեն խիստ ին նիղացնում սրան։

ՉՈՐՐՈՐԴ ՀՅՈՒՐ, սոխակի պես գեղգեղում է:

ԱՌԱՋԻՆ ՀՅՈՒՐ

Բլբուլի ձենիտ մեռնիմ, Միխակ ջան։

Հյուրերը վերցնում են սփռոցից մնացած բոլոր նրագները:

ԵՎԱՅԼՆ, վերցնելով գլխարկը, առանձին:

Ես գնում եմ, բայց հոգիս մնում է այստեղ։

Բոլորեքյան միասին նրագներով դուրս են գնում ձախ կողմից, բացի՝ սպասավորները, որոնք դուրս են գնում աջ կողմից: Մեղմ լույս լուսնակից և թղթե լապտերներից:

ՅԱՎԱՆԳՈՒԼ, կուլիսում շարունակում է երգել:

Մինդա վսվա, սաղվինո մամե, արիա-լալի.

(Նինոն դուրս նայելով լուսամուտից, ականջ է դնում երգին:)

Մոձղվարո, դաստուրի դամե, թարիա-լալի.
Ծղլիս ղլապվա ցողվիլթ ծեսիա, արիա-լալի,
Ծարղվնաա ամիս մոծամե, թարիա-լալի։»

Լսվում են նույն գեղգեղանքը և սազի ձայնակցությունը:

ՅԱՎԱՆԳՈՒԼ, շարունակում է:

«Նոեմ բա էրթխել ինեբա, արիա-լալի,
Ղուրձնիս ծվենիս գեմովնեբա, թարիա-լալի.

(Երգի ձայնը հետզհետե հեռանում է:)

Թիթոն նունուաս միուզդա, արիա-լալի,
*Ծղալի պէրուտղվթ դասանեբա, թարիա-լալի։»**

Երգը դադարում է. լսվում են միայն սազի ձայնակցությունը և սոխակի նման երգը, որից հետո, Նինոն անհետանում է. իսկ ձախ կողմից մտնում է Սերգոն և շտապով դուրս գնում աջ կողմից: Մի փոքր անցած հեռվից լսվում է զուռնայի ձայնը. ածում են՝ «սահարի»:

ՏԵՍԻԼ Ե

ԵՎԱՅԼՆ, մենակ, ցիլինդրը գլխին. զգուշությամբ մտնելով ձախ կողմից, սփռոցից վերցնում է իր բերած ծաղկեփունջը, երկյուղով նայում է այս ու այն կողմը և մոտենում լուսամուտին:

Ահա՛ երջանիկ լուսամուտը... (Շշնջելով կանչում է:) *Տիրուհի՛... Տիրուհի՛... Մաղամ... Շերդամ... Ավա՜ղ, չէ լսում... Մտնե՞լ... բայց ճանապա՞րհը... արգելքներ... պատահմունքներ... և այլն...* (Նորից կանչում է:) *Տիրուհի՛... տի՛կին... ամենագեղեցիկ Նունե՛... Շեր Նինե՛ բ, լսեցե՛ք... Ա՜խ...* (Աթոռը մոտեցնում է լուսամուտին և կանգնում է վրան:) *Տիրուհի՛... Հեռու է, չէ լսում...* (Իջնում է, այս ու այն կողմը նայում, հետո ձեռը ճակատին տանելով:) *Օ՜, բախտավոր միտք...* (Տակառը գլորելով տանում, կանգնեցնում է լուսամուտի տակ:) *«Եւ ելեալ Մովսիսի ի լեառն Սինայ»...* (Աթոռի միջոցով բարձրանում է տակառի վրա:) *Տիրուհի՛, տիրուհի՛... Օ՜, եթե իմանա՝ ինչպես է բաբախում սիրտս...* (Երկին կանչում է:) *Տիկին Նունե՛... աննման Նունե՛... Մոռ անժ... (Փունջը ձգում է սենյակը, տակառը կոտրվում է, ինքն ընկնում է մեջը:) Ա՜խ..*

Ցիլինդրը գլորվում է գետնին: Սրանից հետո զուռնան հեռվից լսվում է ավելի բույլ ձայնով և շուտով բոլորովին դադարում է:

ՏԵՍԻԼ Զ

ԵՎԱՅԼՆ, տակառում, ՄՈՍԵՍ, ՂԱՂՈ

ՄՈՍԵՍ, մտնելով ձախ կողմից:

Գնա՜ց ձեռնեմեա։

ՂԱՂՈ, հետևելով Մոսեսին:

Չէ՛, էստի կույր։

ՄՈՍԵՍ

Բա՛ս դուն, Ղաղո ջան, էտթենը պտտե. յիս գնամ մեկել խեյվնոքը։

Դուրս է գնում ձախ կողմից:

ՏԵՍԻԼ Է

ԵՎԱՅԼՆ, տակառում, ՂԱՂՈ

ԵՎԱՅԼՆ, գլուխը տակառից դուրս հանելով, առանձին, մինչդեռ Ղաղոն ուռնում է նրան տակառից հեռու:

Ո՜վ չար փորձություն, վա՜սն էր հալածես զիս։

Ոտի ձայն լսելով, իսկույն թաքչում է տակառի մեջ:

---

* Վրացերեն է.

Այս ընդարձակ երգը պատկանում է հանգուցյալ վրաց նշանավոր բանաստեղծ իշխան Ալեքսանդր Ճավճավաձեին. իսկ ներկա չորս տունը և հետևյալ երկու տունը թարգմանված են պարոն Ն. Տ. Ղ-ից այսպես՝

«Ընկեր լոթիք, երանի՜ մեզ, արիա-լալի,
Եկի՜ք քեֆի բանանք հանգես, թարիա-լալի.
Աշունքն եկավ. անուշ գինին, արիա-լալի,
Երթանք, ձոնենք մենք Բաքոսին, թարիա-լալի։

Որքան էլ գուրա լինի ձրմեռ. արիա-լալի,
Թեկուզ սառչին դիփ ագռավներ. թարիա-լալի.
Մեզ չեն ապդիլ սառնամանիք, արիա-լալի,
Երբ գբլիխ մեջ ցոյան գինիք, թարիա-լալի։

Գավը պե՛ս բեր, կամիմ խմել, արիա-լալի,
Իրավո՛ունք տուր, խոստովնահեր, թարիա-լալի.
Ջուր կուլ տալը մեղավոքաց, արիա-լալի,
Ջրհեղեղով տրվեց ասված, թարիա-լալի։

Նոյ նահապետն երբ կամեցավ, արիա-լալի,
Որթան հյութի համը տեսնել, թարիա-լալի.
Ինքը վազան մոտ նչստեցավ, արիա-լալի։
Ջուրն անասնոց թողեց խմել, թարիա-լալի։»

ՂԱՂՈ, ցիլինդրը գտնելով, կանչում է։

Է՛սթենը, Մո՛սես, գթա՛... (Շարունակելով որոնել Եվայլնին առանձին։) *Էս վո՞ւրթենն է կորի։*

ՏԵՍԻԼ Ը

ԵՎԱՅԼՆ, տակառում, ՂԱՂՈ, ՄՈՍԵՍ

ՄՈՍԵՍ, վերադառնալով։

Աբա՛, վո՞ւրդի է, վո՛ւրդի։

ԵՎԱՅԼՆ, գլուխը դուրս հանելով, առանձին։

Սարսափելի դրություն... Քե՛լ սմանդալ...

Նորից թաքչում է տակառում։

ՄՈՍԵՍ, Ղաղոյին։

Էտ նրա գդակը չէ՞. ինքն ի՞նչ էլավ։

ՂԱՂՈ

Մո՛ւլափ, է՛, պտոտինք։

ՄՈՍԵՍ

Թե՞ բղավում էիր՝ գթա, կոսե։

ՂԱՂՈ

Վա՛հ, գլուխը խո գթանք, վուտնիրն էլ հիշտ է։

ԵՎԱՅԼՆ, գլուխը դուրս հանելով, առանձին։

Բարբարոսնե՛ր։

Կրկին թաքչում է։

ՄՈՍԵՍ, ճակատին խփելով։

Վա՛յ քու տղիս տղա, Նինոյի մոդ չըլի՞ դիվիր գնացի։

Շտապով դուրս է գնում աջ կողմից։

Ձախ կողմի կուլիսում Յավանգույը, սազի և դուդուկի ներդաշնակցությամբ և հետզհետե մոտենալով, երգում է՝

«Ամա սոփլիսա ցխովրեբա, (խմբովին։) *արիա-լալի,*
Վերցխլիթ ար մոիպովեբա, (խմբովին։) *թարիա-լալի.*
Մդիդարնի բեվրնի ղոփիլան, (խմբովին։) *արիա-լալի,*
Օխրաթ ըչենիաթ քոնեբա, (խմբ.) *թարիա-լալի։»**

Սրանից հետո դարձյալ լսվում է սոխականման երգը և սազի ու դուդուկի ձայնակցությունը, ինչպես նշանակած է իր տեղը, հետևյալ տեսիլի վերջում։

ՏԵՍԻԼ Թ

Մինչդեռ վերոհիշյալ երգը կատարվում է կուլիսում։

ԵՎԱՅԼՆ, տակառում, ՂԱՂՈ

ՂԱՂՈ, այս և այն կողմը գնալով, առանձին։

Փիե՛... (Եվայլնի գլխարկը դնելով մի կողմ, աչքը ձգում է տակառին։) *Էս էսթենն ո՞վ էբի...* (Մոտենում է տակառին, Եվայլն հանկարծ գլուխը դուրս է հանում։ Ղաղոն այլայլվում է։) *«Հրաժարիմք ի սատանայէ»։*

ԵՎԱՅԼՆ

Պատվելի պարո՛ն։

Աշխատում է դուրս գալ տակառից, բայց չէ կարողանում։

ՂԱՂՈ

Տեր օղորմած աստուած... Տո՛, էտի ի՞նչ իս շինում։

ԵՎԱՅԼՆ

Ես... ես...

---

* *Վրացերեն է.*

«Մեր առօրյա կյանքն աշխարհի, արիա-լալի,
Արծաթ-ոսկով չենք ձեռք բերի, թարիա-լալի.
Շատ ենք տեսել մենք հարուստներ, արիա-լալի,
Իրանք մեռած, կայքը անտեր, թարիա-լալի։»
(Տե՛ս ծանոթություն 210 երեսում։)

ՂԱՂՈ, փրթկում է, հետո ծիծաղելով կանչում է:

Մո՛սես, Մո՛սես... (Վազելով դեպի աջ կողմի կուլիսը:) *Է՛ստի է, է՛ստի...*

Դուրս է գնում աջ կողմից: Այստեղ վերոգրյալ երգը դադարում է. նրանից հետո լսվում են միայն սոխակի երգի նման գեղգեղանքը և սազի ու դուդուկի ձայնակցությունը, որ ավելի երկար է տևում:

ՏԵՍԻԼ Ժ

ԵՎԱՅԼՆ, մենակ, տակառում:

Դուք այդտեղ սոխակի նման գեղգեղացե՛ք, նրա սերն ու ազատությունը փառաբանեցե՛ք. իսկ ես տանջված իմ սիրով, բանտարկված եմ այստեղ, ի խայտառակություն մարդկային ազգի... (Շարունակում է իր ջանքը ազատվելու:) *Ո՜վ սեր, սե՜ր, քանի և քանի մարդիկ ես կլանել դու աշխարհում, քանիսին զոհ ես տարել քո կամակորությանը՜... Ահա՜ և ես ամենահավատարիմ հպատակությամբ գնում եմ իմ թշվառ գլուխը քո վարդակազմ և փշալից գահի տակ... Եղիցի կամք քո յաւիտեան... և այլն։*

Բոլոր հյուրերը երգներով և երգեցող ու նվագող խմբերի հետ միասին մտնում են ձախ կողմից. Եվայլն բարձրում է. բեմը լուսավորվում է ինչպես առաջ. երգները վայր են դնում սփռոցի վրա:

ՏԵՍԻԼ ԺԱ

ԱՄԵՆՔԸ, ԵՎԱՅԼՆ, տակառում, հետո ՆԻՆՈ, լուսամուտում:

ՅԱՎԱՆԴՈՒԼ, շարունակելով երգը:

«Բոս դավեսծրաթ գազափիուլսա, (խմբ.) *արիա-լալի,*
Վելսա վսխդեթ մծվանեթ մոսիլսա, (խմբ.) *Թարիա-լալի.*
Ջվեն ծիթելս ղվինոս վեծափնեթ, (խմբ.) *արիա-լալի,*

Աջ կողմից դուրս են գալիս Մոսեսը, Ղաղոն ու նրանց հետևելով Սերգոն, ձեռին դաղանակ:

ՂԱՂՈ, մինչդեռ անընդհատ կատարվում է երգը, Մոսեսին, ծիծաղելով և մատնացույց անելով տակառը:

Ա՛յ քու պարուն Եվայլն։

Սերգոն մնում է անկյունում անշարժ:

ՅԱՎԱՆԴՈՒԼ, շարունակելով:

Վարդի վանեբոթ բուլբուլսա, (Եվայլն գլուխը դուրս է հանում տակառից:) *Թար... իա... լա... լի»։**

Սազը, դուդուկը և երգը ընդհատվում են:

ԵՎԱՅԼՆ տակառում:

Ես... ես, պարոններ, ուզում եմ ծանոթացնել ձեզ Դիոգինես փիլիսոփայի հետ, որ ամենաաղքատ դրության մեջ ապրում էր հին ժամանակներում, մոտավորապես երկու հազար երեք հարյուր տարի մեզանից առաջ... Նա յուր կյանքով ապացուցանում էր աշխարհի ունայնությունը և ուրիշ բնակարան չուներ, բացի մի տակառից, որի մեջ նա հանգըստանում էր, ինչպես ես այժմ այս տակառում... Նա այն փիլիսոփան էր, պարոններ, որ շրջելով բազմամարդ փողոցներում, օ՛ր ցերեկով, վառ լապտերը ձեռին, ասում էր՝ Թե մարդ է որոնում... Աղեքսանդր Մակեդոնացին, որ թագավորում էր այն ժամանակ, երբ իմացավ այս փիլիսոփայի համբավը, վճռեց յուր մոտ պահել այս հանճարավոր մարդուն, տալով նրան ամենաբարձր պաշտոն թագավորական պալատում... Սրա համար էլ այն մե՜ծ թագավորը անձամբ եկավ, տեսավ նրան տակառի մեջ արևի տակ տաքանալիս և հարցրեց՝ (Ոգևորությամբ:) *Դիոգինե՜ս, Դիոգինե՜ս, ի՞նչ մեծություն, փառք ու երջանկություն ես ցանկանում դու աշխարհում, ասա՜, ավելին տամ քեզ... Դիոգինեսը, չնայած յուր վերին աստիճանի աղքատությանը, պատասխանեց մե՜ծ թագավորին՝* (Ավելի ոգևորությամբ:) *Ես ոչինչ չեմ ուզում քեզանից, ասաց նա, բացի այն, որ մի փոքր հեռանաս իմ արևից, որից դու զրկում ես ինձ, առջևս կանգնելով... Այս պատասխանը լսելով, Աղեքսանդր Մակեդոնացին մտածեց՝ որքան ավելի երջանիկ է մի մահկանացու, որ ոչինչ ցանկություն չունի, քան թե ի՛նքը, որ կամենում է ամբողջ աշխարհի տեր դառնալ... և ա՜յլն, և ա՜յլն, և ա՜յլն։*

Ամենքը մնում են արձանացած. Մոսեսն ու Ղաղոն նայում են միմյանց. նույն միջոցին Նինոն, ծաղկե փունջը ձեռին, գալիս է, կանգնում է լուսամուտում: ՊԱՏԿԵՐ:

---

* Վրացերեն է.

«Երբ-որ կանաչ բացվի դարուն, արիա-լալի,
Կերթանք դաշտը մենք զարդարուն, Թարիա-լալի,
Եվ դու կըտանք կարմիր գինուն, արիա-լալի,
Վարդը Թոդած սոխակներուն, Թարիա-լալի»
(տե՛ս ծանոթություն 210 երեսում։)

ԱՌԱՋԻՆ ՀՅՈՒՐ, փոքր ժամանակից հետո, նվայլելիս:

Ջանում սան, ուստա-բաշի... (Նվագածուներին:) *Լե՛զգեվար, լե՛զ-զեվար, թե ախպեր իք, լե՛զգեվար...* (Սազը և դուդուկը ածում են լեզգե-րեն պարի եղանակը. աջ կողմից ներս են վազում սպասավորները և կանգ-նում Սերգոյի մոտ անշարժ:) *Տա՛շ, տա՛շի...* (Պարելով:) *Ը՛հ, ը՛հ, ը՛հ, ը՛հ...* (Նվայլելիս:) *Դուն էտենց, յիս էսենց. դուն գիդուն, յիս ազա՛տ... Յո՛ւֆ, յո՛ւֆ, յո՛ւֆ, յո՛ւֆ...* (Հյուրերի կողմը նայելով:) *Աբա՛, Միխակ ջան, դուն վուր գիդիս...* (Զորորդ հյուրը սոխակի պես երգում է, իսկ ին-քը շարունակում է պարել և ձայնը ավելի երկարացնելով:) *Յո՛ւֆ, յո՛ւֆ, յո՛ւֆ, յո՛ւֆ...*

ԵՎԱՅԼՆ, տակառում, թևերը խաղացնելով:

Յո՛ւֆ, յո՛ւֆ, յո՛ւֆ, յո՛ւֆ...

Հյուրերից շատերը ծիծաղում են, Մոսեսը և Ղազոն, տեսնելով ծաղկե փունջը Նինոյի ձեռին, զարմանում են ու զայրանում: ՏԵՍԱՐԱՆ: Վարագույրը կամաց կամաց իջնում է:

ՎԵՐՋ

ՊԵՊՈ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՔ ԱՐԱՐՎԱԾՈՎ

1870

«Պեպո» կատակերգությունը նվիրված է մեծարգո պարոն Գեորգ Զմշկյանին հետևյալ առաջաբանով

ՍԻՐԵԼԻ ԳԵՈՐԳ

Դու վազուց խնդրում էիր ինձ՝ մեկ բան գրել թատրոնի համար մեր Թիֆլիզի «պա-ժարնիների» կյանքից:

Երկար ժամանակ ես չէի կարողանում գտնել նյութի առարկա, թեև քո պատվերը ե-բեք մտքիցս չէր հեռանում:

Բայց պատահմունքը վճռեց գործը:

Մեկ օր թատրոնում ներկայացնում էին հանգուցյալ Փուղինյանցի Մոլիերից փո-խադրած «Վուր տրամվիս, պիտի պսակվիս» կատակերգությունը, որի մեջ դու կատարում էիր Շամիրի դերը:

Քո հագուստը, դեմքը, շարժվածքը, խաղը, ձայնը այն դերի մեջ, հանկարծ մտքումս ծագեցրին հարց թե՝ ի՞նչպես կվարվեր Շամիրի նման մարդն այնպիսի դեպքում, երբ մեր հարստահարողներից մեկը փող պարտ լիներ նրան և չկամենար նանաչել իր պարտքը:

Պեպոյի հիմը զգվեց, մնացածն ինքն ըստ ինքյան եկավ. նամանավանդ այնպիսի մեկ դիպված, որ այն ժամանակներում ես անձամբ փորձել էի (մեկ հարուստ ինձ տված խոսքն ուրացել էր), արդեն նախապատրաստել էր իմ գլխում Պեպոյի հակառակորդի պատկերը:

Կազմելով հետզհետե երևակայությանս մեջ պիեսի կապը և նրա հերոսների տիպերը, ես ի նկատի ունեցա, որ այն դասի մեջ, որի զանազան ներկայացուցիչներին այստեղ ար-համարհանքով անվանում են՝ «պաժարնի, լոքի, կինտո», կան մարդիկ, որոնք իրանց բա-ռյականությամբ, մեծահոգությամբ և վեհանձնությամբ կարող են օրինակ լինել շատ և շատ բարձր դասին պատկանող մարդկանց: Այս պատճառով Շամիրի բնավորությունը պիեսումս մարմնացավ Կակուլու մեջ, իսկ նրանից բարձր տիպը՝ միևնույն դասի, ես իմ կարողու-թյան չափ աշխատեցի ցույց տալ Պեպոյի մեջ:

Երբ ես մոտավորապես պատմեցի բեզ Պեպոյի բովանդակության գլխավոր միտքը, այն օրից սկսած՝ դու էլ ձեռ չվեր առար ինձանից, ստվերի պես հետևում էիր ինձ՝ աշ-խատելով շուտով և շուտով հանել իմ գլխից քո սիրեկան Պեպոյին և գրչի տալ իմ խոս-քերը:

Եվ ահա, 1870 թվի սկզբում, դու, ըստ սովորականին, վեր առար թուղթ ու գրիչ, և էս սկսեցի թելադրել ինձ Պեպոն, որը թեև շուտով ընդմիջվեց, բայց հիշյալ թվի հույիս ամսին միևնույն ձևով շարունակվեց և վերջացավ Կրծանիսում:

Թերթելով այժմ Պեպոյի սկզբնական օրինակը, ես զգում եմ, որ համարյա ամբողջ պիեսը քո ձեռքով է գրված, բացի մի քանի տեսիլներից, ուր քո բացակայության ժամանակ օգնել են ինձ պ. Զաքարիա Բաբանասյանցը և մեր թատրոնի տաղանդավոր աշխատակից պ. Հովհաննես Ամերիկյանը:

Շնորհակալություն հայտնելով հիշյալ անձանց, նամանավանդ, պ. Ամերիկյանին, որ ուրիշ շատ անգամ ևս օգնել է ինձ իմ թատերգրական ասպարիզում, ես չեմ կարող մոռանալ այն աշխատանքն ու անձնանվիրությունը, որ դու կրել ես՝ թե՛ ներկա հեղինակության և թե՛ այլ գրվածքներիս մեծ մասի մեջ: Բայց այժմ խոսքս միայն Պեպոյի մասին է:

Քանի՛ և քանի անգամ՝ զարդ թղած, ամառային շոգ պապանձիին, ոտով նկել ես Երծանիս և գնացել. քանի և քանի անգամ հետդ խորհրդակցել եմ. օգուտներ քաղել քո խորհուրդներից և ձանձրացրել քեզ իմ ծանր ու բարակ մասլահաթներով. քանի՛ և քանի անգամ ամբողջ ժամերով, գրիչը ձեռքիդ, անշարժ նստած ես եղել սեղանիս առաջ՝ ձեռացնելով քեզ մեկ գրող մեքենա, երբ ես հեղինակելով՝ բոլոր իմ շարժվածքների ազատությունն եմ վայելել. քանի՛ և քանի անգամ երբեմն արագությամբ թերթեր ես լցրել իմ խոսքերով և ստեպ-ստեպ հանությունդ ցույց տալով, ուժ ես ավել ինձ շարունակելու, երբեմն էլ հոնքերդ տարելով՝ կամ տասն անգամ կրկնել ես միևնույն վերջին խոսքերս, կամ լռտ ու մունջ մնացել, առանց մեկ բառ արտասանելու՝ կամենալով արգելք չդնել մտքիս բերացքին: Ո՞վ իմանա՝ ի՛նչ մտքեր են ծագել քո մեջ այն ժամանակ, ի՛նչ մտքեր ես կլանել, ի՛նչ մտքեր զոռել, երբ ես, ուղեղս փոթելով, աշխատելիս եմ եղել իմ միտքն արտահայտել, իմ խոսքերը գեղեցկացնել: Միով բանիվ՝ քո կամքը ենթարկել ես իմ կամքին, քո սովորություններն իմ սովորություններին, քո ժամանակն իմ ժամանակին, քո աշխատանքն իմ աշխատանքին. և այս բոլորը, բոլորը միայն նրա համար, որ Պեպոն շուտով լույս տեսնի. դու քո սիրեկան թատրոնի համար մեկ նոր պիես ստեղծ:

Ստաբերելով անցյալը, մտաբերելով այն ժամերը, երբ Պեպոն գրվում էր, երբ մեր մտերիմ խոսակցության մեջ Պեպոյից մենք անդադար անցնում էինք դեպի նրա եղբայրակիցները, նրանցից դեպի ժողովուրդը, ժողովրդից դեպի ազգը, ես խոստովանում եմ, որ այն ժամերը միշտ կմնան իմ կյանքիս ամենաերջանիկ ժամեր:

Հիշո՞ւմ ես, սիրելի՛ Գեորգ, այն առավոտները, երբ արեգակը, գլուխը դուրս բերելով հեռու հորիզոնում, մեկ առանձին լույս էր թափում ծառերի տերևների ու դիմացի սարի վրա, մինչդեռ հազարավոր թռչունների կանուխ երգը շատ անգամ խոսքս բերանիս կիսատուր թողնելով, տանում էր մեզ կարծես ուրիշ աշխարհ: Հիշո՞ւմ ես բարեկամների այն փոքրիկ խումբը, որ շարունակ հավաքվում էին իմ ընտանիքում, այն հանդիպումները, ձիծաղը, ուրախությունը, Յազոյի երևակայական «սարի օմքնիրը», Եռվանեի ճիանուրը, խեղճ Յավանգուլի բայաթիները, ձկնորս Լոփիանի պարը, քո արհեստալի բարբարոսական եղանակով երգած «Ինձ ու իմ սիրեկան յարին», Ամերիկյանի երգերը, նրան ընծայած ոսրսափելի փուչը, և այլն, և այլն... Բոլորն ուներ իր գեղեցկությունը, իր հիացքը, մինչև անգամ այն անտանելի սև միջատների անթիվ զորքը, որ մոմի առաջ հավաքվելով մեր գլխին, մանավանդ քո գլխին, շատ անգամ ահիր էին լինում Պեպոյի թերթերը ցիր ու ցան անելու:

Հիշո՞ւմ ես դու Թեյերի այն բազմաթիվ ուխտավորներին, որոնք կյուրակի առավոտները ժամը չորսից սկսած, հերկայացնելով իրանցից մեկ գեղեցիկ զանավոր ժայռվեն, անցնում էին մեր բնակարանի առաջից և բարձրաձայն պատմում միմյանց իրանց վշտերը: Քանի՞ խսկական Շուշան ու Կեկել, քանի՞ հատուկ Պեպո և Կակուլի ենք տեսել նրանց թվում: Ես երբեք չեմ մոռանալ այն խոսքերը, որ մեկ կին, նայելով մեր պատշգամբին, ասաց իր ընկերուհուն՝ «Է՛ստի մտիկ, սրանք բաղումն էլ դիվանքներով ին, յիս կի տանս մի կատրած սկամի էլ չունիմ», և այս դառը խոսքերը նա կնքից ուրախ ծիծաղով, կարծես թե խեղճի ուրախության աղբյուրը նրա խեղճությունը լիներ: Քանի՞ այսպիսի դատողություններ են արտահայտել նրանք, քանի՞ մտքեր են զարթեցրել նրանց զանգատները: Ճշմարիտն ասած, տեսնելով այդ մարդկանց, լսելով և համակրելով դրանց, հարկավոր էր ինձանից շատ և շատ վարպետ նկարիչ, որ կարողանար արժանավոր գույներով նկարել դրանց: Բայց երբ մարդ, ապրելով ժողովրդի մեջ, նրա ուրախության հետ ուրախանում է, նրա արտմությամբ տրտմում, և այս զգացմունքները նա կարողանում է փոքր ի շատե պատկերացնել, այդ էլ, արդարև, մեծ բավականություն է:

Ինչևիցն, ժամանակը հասավ. Պեպոն ներկայացրինք թատրոնում առաջին անգամ 1871 թվի ապրիլի 30-ին: Պեպոյի դերը դու ինքդ կատարեցիր և կատարում ես ցարդ՝ բեմի վրա: Դու ավիր նրան շունչ և կենդանություն, քո խաղը գեղազանցեց զրվածքից, իսկ պ. Ամերիկյանը, որ ներկայացնում էր Պեպոյի հակառակորդի պատկերը, և մյուս մասնակցող անձինք իրանց հանճարավոր խաղով օգնեցին մեզ ավելի պարզ ցույց տալու հարստահարված Պեպոյի համակրական ոգին:

Այն ծափահարությունը, այն ընդունելությունը, որ առաջին ներկայացման օրը ստացա հանդիսականներից թատրոնում, ես արդեն բաժանել եմ քեզ և քո ընկերների հետ: Այժմ բա՛յլ տուր ինձ, սիրելի՛ Գեորգ, խնդրել քեզ՝ ընդունել և այս նվազ նվերս իբրև հիշատակ քո չափազանց աշխատության և հարկ քո՛ անսահման սիրույն դեպի մեր թատրոնը:

Քո ԳԱԲՐԻԵԼ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆՑ

Թիֆլիզ

6 նոյեմբերի 1876

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԱՐՈՒԹԻՆ, հարուստ վաճառական
ԷՓԵՄԻԱ, Արութինի երկրորդ կինը
ՊԵՊՈ, ձկնորս
ՇՈՒՇԱՆ, Պեպոյի մայրը, այրի կին
ԿԵԿԵԼ, Պեպոյի քույրը
ԳԻՔՈ, Պեպոյի ազգական
ԿԱԿՈՒԼԻ, Պեպոյի բարեկամ
ԳԻԳՈՒԼԻ, Արութինի դուքանի աշկերտ
ՍԱՄՍՈՆ, Արութինի տանու ծառան
Երկու այլ ծառա Արութինի տանը

Առաջին և երրորդ արարվածները կատարվում են Պեպոյի տանը, իսկ երկրորդը՝ Արութինի տանը։

Անցքը պատահում է Թիֆլիզում 1870-ին։

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՂ ԱՆՁԱՆՑ

ԱՐՈՒԹԻՆ. 60 տարեկան, միջին հասակով և կազմվածքով. երեսը կարմիր, լիքը և ածելած։ Սև ներկած կարճ մազեր, հաստ հոնքեր և խուզած բեխեր։ Եվրոպական հագուստ։ Սպիտակ շապիկ, գունավոր փողպատ, նույնպիսի ժիլետ և պանտալոն։ Սև սերթուկ և գրլխարկ-ցիլինդր։ Ոսկե ժամացույց ոսկե շղթայով։ Գործ է ածում գունավոր մետաքսե թաշկինակ, փոքրիկ դեղին սաթե համրիչ և ծոցի մեջ պորտմոնե։ Շարժվածքը, ման գալն ու խոսվածքը ծանր։ Ըստ երևույթին պատվավոր անձն։

ԷՓԵՄԻԱ. 30 տարեկան, գեղեցիկ և վայելչակազմ կին, շեկ մազերով։ Եվրոպական մոդայի ամենաշքեղ բաց-կապույտ հագուստ, վրացնակ գլխով (չիբիլա, ոսկեկար ճակտի-աղլուխ և այլն)։ Զարդարված է ոսկե ժամացույցով, երկար շղթայով և զանազան ակնեղեններով։ Պարանոցին կարմիր բանտ։ Խոսակցությունը, շարժվածքը և ման գալը արագ ու կրակոտ։ Շատ է քրքրվում։

ՊԵՊՈ. 35 տարեկան, թուխ և գեղեցիկ դեմքով, բարձր հասակով, ամուր կազմվածքով և լայն կրծքով։ Սև կարճ մազեր, ճակատի վրա բերած. բարակ հոնքեր և բեխեր. երեսն ածելած։ Ունի երկու ձեռք Թիֆլիզի բուն լոթու հագուստ՝ միևը հասարակ, մյուսը զարդի։ Առաջինն է՝ չթե կամ սպիտակ շապիկ. մուգ-կապույտ դոշլուղ, սև դայթանով բոլորած. սև նաշուրի արխալուխ. լեգզու սև շալից չոխա առանց զարդարանքի. միևնույն շալից լայն շալվար, ծայրերի ներսի կողմը զանգյալի մեջ շարշուրաղով ամրացրած. սև դափաղավոր լափչիններ. արծաթե նեղ քամար. կարմիր մորթե երկար դղակ, ծայրը փոքր ինչ ներս ծռ... լած. կարմիր բամբակե թաշկինակ։ Զարդի հագուստն է՝ մետաքսե կարմիր դոշլուղ և սև արխալուխ, երկուսն էլ բարակ ոսկեթելով բոլորած. դավայունի դեղին չոխա, սև լայն չափրիշով զարդարած. նույն կտորից լայն շալվար, ծայրերը վերոհիշյալ ձևով ամրացրած. սպիտակ դափաղավոր լափչիններ կանաչ դայթաններով։ Բուխարու սև գդակ, ծայրը կտրած։ Իմերեթու մետաքսե գոտիկ. կապույտ բամբակե թաշկինակ։ Քայլը հաստատ, ձայնը քաղցր և ազդու. շարժվածքն ու խոսակցության ձևերը բուն ժողովրդական։ Միշտ գլխարկով, բացի նշանակած տեղերից։

ՇՈՒՇԱՆ. 50 տարեկան, այրի կին. միջին հասակով և հաճելի դեմքով։ Վրացնակ հասարակ հագուստ։ Մե տակ (ցածր կապած) գլուխ (սև ճակտի-աղլուխ, սպիտակ հաստ չաչաք, սև փաթաթելու)։ Սև տերնոյից կամ ալպակայից հասարակ դերիա, կուրծքը ծածկած։ Հասարակ սև շալ։ Տանից դուրս գնալու ժամանակ գործ է ածում սպիտակ դաթիբա։

ԿԵԿԵԼ. 18 տարեկան, միջին հասակով, թարմ, գրավիչ դեմքով, սև երկար մազերով։ Վրացնակ հասարակ հագուստ (ճակտի-աղլուխ, չիբիլա, չթե դերիա և այլն)։ Զայնը քաղցր, շարժվածքը համեստ։

ԳԻՔՈ. 65 տարեկան, միջին հասակով, մեջքը փոքր ինչ ծռած։ Սպիտակ մազեր և բեխեր, երեսն ածելած։ Վրացնակ հագուստ։ Սպիտակ շապիկ, կուրծքը սև դայթանով բոլորած. սպիտակ զալամքարե կամ մուգ-կապույտ նաշուրի արխալուխ. սև մահուդից կաբա և լայն շալվար։ Խարազի սև լափչիններ ցածր կրունկներով. բուխարու սև գդակ, ծայրը ներս ծալած, հասարակ շալե կամ կապույտ զանավուզե գոտիկ։ Գործ է ածում ձեռնափայտ, քթախոտ և կապույտ չթե թաշկինակ։ Ման գալը, շարժվածքն ու խոսակցությունը չափից դուրս դանդաղ։ Միշտ գլխարկով և ձեռնափայտով։

ԿԱԿՈՒԼԻ. 25 տարեկան, հասակով փոքր ինչ ցածր Պեպոյից։ Երեսը կարմիր և գեղեցիկ. սև մազեր, ճակատի վրա բերած. բարակ հոնքեր, բարակ բեխեր և նոսր կարճ միրուք։ Թիֆլիզի բուն պաժարնու կամ կինտոյի շքեղ հագուստ։ Մավի մորթե մեծ գդակ Հաղվի ձևի. կարմիր մետաքսե շապիկ և դոշլուղ. կապույտ կամ սև զանավուզե արխալուխ։ Քոբաչու սև շալից կարճ և չաքերով չոխա. միևնույն շալից լայն շալվար, ծայրերը զանգյալում կամ պաճիճում բոլորովին ամրացրած։ Դոշլուղը, արխալուխը և չոխան ամենաշքեղ ձևով զարդարած են կլապիտոնե լայն բաֆթաներով։ Լեգզու երկար ճտերավոր չուստիներ, բարակ ոսկեթելով բոլորած. արծաթե լայն քամար։ Բաղդադի թաշկինակ։ Զայնը, շարժվածքն ու խոսակցության ձևերը կոշտ։ Միշտ գլխարկով։

ԳԻԳՈՒԼԻ. 25 տարեկան։ Վրացնակ հասարակ հագուստ. Սպիտակ չՓե արխալուխ, կրծքի կոճակները մեր գցած. սև մահուդից կաբա. նույն մահուդից կամ սպիտակ պարուսինից շալվար. արծաթե նեղ քամար. ձեռքին գլխարկ-ֆուրաժկա։

ՍԱՄՍՈՆ. 18 տարեկան սև երկար մազեր, եվրոպական ձևով սանդրած։ Եվրոպական սպիտակ շապիկ. հասարակ չՓե արխալուխ, կրծքի կոճակները բաց. նեղ քամար և գունավոր նեղ շալվար։ Հետո Չերքեզի շրեղ հագուստ։ Սոսանի ատլասե արխալուխ, բոլոր կոճակները մեր գցած. սպիտակ մահուդի չերքեզկա արծաթե մասրաներով. նույն մահուդից նեղ շալվար, ծայրերը կարմիր մահուդով։ Բոլոր հագուստը զարդարած է կլապիտոնե բաֆթաներով։ Եվրոպական փայլուն կոշիկներ. արծաթե շքեղ քամար արծաթապատ դաշույնով։ Արծաթե փորրիկ վառոդաման կլապիտոնե լայն բաֆթայով։ Բոլոր ժամանակ առանց գլխարկի։

ԵՐԿՈՒ ԱՅԼ ԾԱՌԱ՝ ֆրակով, սպիտակ ձեռնոցներով և առանց գլխարկի։

ԱՐԱՐՎԱԾ ԱՌԱՋԻՆ

Բեմը ներկայացնում է ճին ձեի աղքատիկ սենյակ բարեՓՆերով, դոլաբներով, լուսամուտով և երեք դռնով՝ աջ, ձախ և դիմացը։ Ձախ կողմը (հանդիսականների դիրքից) գորգով ծածկած տախտ նստելով և մուրճաներով, իսկ աջ՝ հասարակ սեղան, գունավոր սփռոցով ծածկած։ Սենյակի այս անկյունում մի թոկ կա կապած։ Դոլաբներում և բարեՓՆերի վրա դարսած են ճինորյա պղնձե, կավե ու փայտե ամաններ ու զանազան ձեի գինու բաժակներ։ Մի քանի հասարակ աթոռներ լրացնում են սենյակի զարդը։

Կեսօր է։

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ՇՈՒՇԱՆ. տախտի վրա նստած. գուլպա է գործում, ԿԵԿԵԼ. սեղանի մոտ, աթոռի վրա նստած, շտապով կար է անում, աչքեր կարի գույնզգույն թոխչա։

ՇՈՒՇԱՆ

Չիս իմանո՞ւմ, քա՛։

ԿԵԿԵԼ, թել վերցնելով բոխչից։

Ա՛յ, էս էլ պրծնիմ, դեդի։

ՇՈՒՇԱՆ

Թո՛ղ, մի քիչ դնչա՛ցի, ի՛ժում պրծի։

ԿԵԿԵԼ

Չի ըլի, դեդի, է՞, հորես տերը գու քա։

ՇՈՒՇԱՆ

Նրա աճկն էլ կարիմ. խի՛ստ շատ է տալի՞։

ԿԵԿԵԼ

Բանն էլ էտ է, է՞, դեդի. ինչրու նրա գալը դիփ հազիր վուր չըլի, էլ ֆամամ գինը չի տա։ Խո գի՛դիս ինչ անաստուձն է։

ՇՈՒՇԱՆ

Ախար, աճկիդ լուսը խո չի՞ս կանա հանի. սաղ գիշիր, հենց բռնե, չիս քնի ու ջեր վուրդի էր ծեքը, վուր էլի բանի նստեցար։

ԿԵԿԵԼ

Ի՞նչ անինք, դեդի, խղճի հացը էժան չէ ճարվում։

ՇՈՒՇԱՆ

Հե՛րիք արա, հե՛րիք, վուրթի։ Ջա՛նդամը միր գլուխը, վունցոր ըլի կու ապրինք։

ԿԵԿԵԼ

Էս սահաթիս, դեդի ջան, ա՛յ աստուձ գիդենա, քիչ է մնացի։

ՇՈՒՇԱՆ

Սաղ գիշիր ջում-ջումի բերիք ինձ՝ դուն մե կուսը, քու ախպուր փիքրը մեկելը։ (Լռություն): *Նա էլ ի՞նչ էլավ. իմքին բան չըլի էկի գլուխը։*

ԿԵԿԵԼ, վախեցած:

Ի՞նչս ասում, դեդի. գանա է՛ս անց էլ չէ մնացի դուսը գիշիրո՞վ։

ՇՈՒՇԱՆ

Էսօր խիստ ուշացավ, Կեկել. ստանց էն առուտնիրը տուն է էկի ու հիմի հորես կեսօրի վուխտն է։

ԿԵԿԵԼ

Ի՞նչ հաջաթ, դեդի ջան. էգեբա փողոցումը բան լուս ննգավ։

ՇՈՒՇԱՆ, հոգվոց հաճելով:

Աստուձ անե էտենց ըլի, վուրթի. սիրտս գնում ու գալիս է... Ո՞վ գիդե ջուրը մինձացավ, ո՛վ գիդե իմքնի էդնեն ննգավ ու ինքն էլ հիդը գնաց...

ԿԵԿԵԼ

Է՛, ինչի՞ր իս ասում, դեդի։

ՇՈՒՇԱՆ

Նրա գլխին էլ վուր մի բան գա, ջուրն ածելու կու դառնանք։

ԿԵԿԵԼ

Աստուձ գիդենա, անմիղ իս նիղանում, դեդի ջան. էրեխա խո չէ՞։ սիրտս էլ անմիղ շուռ ու մուռ իս բերում։

ՇՈՒՇԱՆ

Է՛սենց էլ ապրիլ կուլի՞... Հախմիան տե՛ղն անե քու դադաստանը, Ա՛րութին։

Դրսից ոտի ձայն է լսվում:

ԿԵԿԵԼ, ուրախ:

Ա՛յ, դեդի, հորե՛ն։

ՇՈՒՇԱՆ, ականջ դնելով:

Նա է՞... (Գլուխը շարժում է:) *Չէ՛։*

ԿԵԿԵԼ, նմանապես ականջ դնելով:

Գի՛քոն է։

ՏԵՍԻԼ Բ

ՆՐԱՆՔ, ԳԻՔՈ

ԳԻՔՈ, նեղս մտնելով դիմացի դռնից. գլխարկը ծածկած և ձեռնափայտով:

Բարի լուս ձիզ։

ՇՈՒՇԱՆ, տխուր:

Աստուձ բարին, Գիքո... Համեցե՛ք։

ԿԵԿԵԼ, վեր կենալով, Գիքոյին գլուխ է տալիս, նեղս առաջին:

Աճկս քի՛զ էր մնում։

Նստում է իր գործին:

ԳԻՔՈ, նստելով աթոռի վրա Շուշանի մոտ։

Վո՞ւնց իք, ի՞նչ բարին հարցնինք։

ՇՈՒՇԱՆ

Փստոք աստծու, կանք։

ԳԻՔՈ

Է՜, փառք աստծու։ Էս ո՞ւր է Պեպոն, չեր չէ տուն է՞կի։

ՇՈՒՇԱՆ, վախեցած։

Հը՛, իմքին խաբար կա՞։

ԳԻՔՈ

Հա՛, բան ունիմ ասելու։

ՇՈՒՇԱՆ, ծնկանը խփելով։

Վո՜ւյ, քոռանամ յիս, ի՞նչ խաբար է։

ԳԻՔՈ, ուղղվելով։

Ի՜նչ խաբա՜ր...

ՇՈՒՇԱՆ

Հա՞։

ԳԻՔՈ

Լավ խաբար չէ, Շուշան։

ՇՈՒՇԱՆ, ավելի վախեցած։

Ի՞նչ է, խի՞խտվիլ է՜։

Կեկելը, կարը թողնելով, վախեցած նայում է նրանց։

ԳԻՔՈ, զարմացած։

Ո՞վ է խիխտվի. ի՞նչ իք ասում։

ՇՈՒՇԱՆ

Պե՛պոն. բաս չէ խիխտվի՞։

ԳԻՔՈ, երեսը խաչակնքելով։

Տե՜ր օղորմած աստուած. էտ յիս չիմ իմանում, ի՞նչ իք ասում։

ՇՈՒՇԱՆ

Ախար, իրիգուն կես գիշերին դամբը վիկալավ, գնաց ու չեր չէ տուն էկի։

ԳԻՔՈ

Վա՜, օխնած հոգի, վախեցա. նա ի՞նչ խիխտվիլու ահ ունի... էն ի՞նչ քուրը պիտի ըլի, վուր նրան ախտեր։

ՇՈՒՇԱՆ

Բաս ի՞նչ խաբար էիր ասում։

ԳԻՔՈ

Ի՞նչ խաբար էի ասում...

ՇՈՒՇԱՆ

Հա՛, մե չո՜ւստ ասա, թե աստուած կու սիրիս։

ԳԻՔՈ

Մո՜ւլափ, է՜. մե քիչ հա՜մփիրութին ունեցի, հեր օխնած։ Աստուած շատ բանիր է գրի մարթու ճակտին՝ վախտ կա ուրախութին, վախտ կա տրխրութին։

Գրպանից հանում է քթախոտի տուփը։

Կեկել, առանձին։

Ինչկլի կոսե, իմն ինձ կու հասնի։

ՇՈՒՇԱՆ

Միզ համա խո զարթնի տխրութինը աստուած ուրիշ բան չէ տվի։

ԳԻՔՈ

Ի՞նչ անիս, Շուշան, աստծու ձեռին է՝ ուրախութինն էլ, (Հառաչում է։) տխրութինն էլ... (Կրկին հառաչում է և քթախոտ քաշում։) Հը՜մ... է՜է... Վունցոր աստուած գուզե, էնենց կուլի մարթու բանը։

ՇՈՒՇԱՆ

Նրա կամքն ըլի, ի՞նչ անինք։

ԳԻՔՈ

Է՛տենց է, է՛տենց, Շուշան... Ախար, էսօր առուտեհան լավ բան չիմացա. էլ չդնչացա, ինչրու չգնացի ու ձիր փեսի հիդ դեմուդեմը չխոսեցա։ (Կեկելին։) *Շատ հարց ու բարով արավ քիզ, ա՛յ Կեկել։* (Կեկելը թեթև գլուխ է տալիս Գիքոյին, առանձին աչքերը սրբում է և կարը շարունակում։) *Խիստ իմ կարոտի, կոսե...* (Քթախոտ քաշելով։) *Հը՛մ... է՛է...*

Կեկելը նույն միջոցին դարձյալ սրբում է աչքերը։

ՇՈՒՇԱՆ

Հալեցիր ու մաշեցիր խոմ, Գիքո. մե ասա՛ ու պրծի, է՛լի։

ԳԻՔՈ

Է՛ս սահաթիս, էս սահաթիս, Շուշան... (Քթախոտ քաշելով։) *Հը՛մ... հը՛մ... ոխա՛կ... աստուծ վուր մարթուն ստիղծիլ է, համփիրութինն էլ հիդն է տվի։* (Քիթը սրբում է թաշկինակով։)

ՇՈՒՇԱՆ, առանձին։

Քու աճկն էլ։

ԳԻՔՈ, կրկին քթախոտ քաշելով։

Հը՛մ... էն էի ասում, վուր, (Կամենալով փոշտալ։) *վուր, վուր, վուր...* (Փոշտում է։) *բա հըա՛...* (Կրկին կամենալով փոշտալ)։ *Ը՛ա, բա՛ բա՛...* (Փոշտում է։) *բա հըա՛... Օ՛, հո՛, հո՛, հո՛, հո՛... ի՛նչ բուռնութի է՛. խեր էկավ, ա՛յ։*

ՇՈՒՇԱՆ

Առուխչ ըլիս։

ԳԻՔՈ

Վուրթիքդ (Կամենալով փոշտալ։) *ա ա ա պրին,* (Փոշտում է։) *բա հըա՛...*

ՇՈՒՇԱՆ, առանձին։

Ա՛յ, չոռ ու ցավ, թե խոսիս։

ԳԻՔՈ

Էս խեր ու կես... (Կամենալով փոշտալ։) *էս էլ, էլ...* (Կրկին փոշտում է։) *բա հըա՛... էս էլ ջուխտ խեր... Կուլի վիրշը խեր ըլի։*

ՇՈՒՇԱՆ

Քունը վունց խերն իմացա ջեր ու վունց շառը։

ԳԻՔՈ

Խերն էլ ու շառն էլ աստծու ձեռին է, Շուշան։ (Քթախոտի տուփը գրպանը դնելով։) *Օ՛հ, խիստ թեժ բուռնութի է էլի անիծածը։ Հազրենը մե ջեր չի պատահի, վուր բուռնութու վրա փոշտամ. ամա էրևում է իմ սովոր բուռնութին չին տվի... Ղալբացավ աշխարքը, Շուշան, ի՛նչ անիս։* (Տուփը կրկին հանելով գրպանից և բաց անելով։) *Ի՛մքին խո չկա մեչը խառը։* (Ձգելով։) *Չէ՛, վունչիչ չէ՛ էրևում... Աբա՛, Շուշան, քու աճկը կուլի ուփրո լավ ըլի կարում։*

ՇՈՒՇԱՆ, առանձին։

Քու աճկի պիպիկն էլ կարիմ։

ԿԵԿԵԼ, առանձին։

Պա՛տիժ է՛։

ԳԻՔՈ

Մե տի՛ս, է՛, թե աստուծ կու սիրիս։

ՇՈՒՇԱՆ, առանձին։

Ղազար է՛... (Առնում է տուփը և գնում։) *Լավ բուռնութի է էրևում. ամա, մե ասա՛, թե ստիղծողը կու սիրիս, ի՞նչ խաբար իս բերի... Հոքեներուս խո հանեցիր։*

Տուփը դնում է Գիքոյի մոտ տախտի վրա։

ԳԻՔՈ

Տո՛, ինչ խիստ իս շտապում։ Մուլափ տանք, էգեբա Պեպոն էլ վրա հասնի, նրա բանն ուփրո է։

Քիթը շարունակ սրբում է թաշկինակով։

ԿԵԿԵԼ, առանձին։

Ճաշն էլ էստի է ուզում անուշ անի. մինք խո խիստ շատ ունինք ուտելու, մնացիլ էր սա։

ՇՈՒՇԱՆ, առանձին։

Ը՛ը... Բարի-բան ննգնի քնթումդ, հրա՛... (Գիքոյին։) *Ախար, մե խոսկ էլ է մա՛յինց ասա։*

ԳԻՔՈ

Գիդիս ի՞նչ է, Շուշան. (Ձայնը ցածրացնելով։) *մե ախչկատ դուս ղրկե ախար, է՞։*

ՇՈՒՇԱՆ, ցածր։

Նա իր բանին է, ի՞նչ կու իմանա. ցա՛ծր ասա։

ԳԻՔՈ

Վուր իմանա, լավ չէ, Շուշան, է՛. չի՛ս գիդի թե խիկարն (Ցուցամատը ճակատին տանելով։) *ինչիր է ասում էստու վրա։*

ՇՈՒՇԱՆ

Խիկարն ո՞վ է, քա՛. նա՛ էլ խառն է էստումը՛։

ԳԻՔՈ, ծիծաղելով։

Հը՛, հը՛, հը՛... (Սիծաղը դառնում է հազ։) *Հո՛ւ, հո՛ւ, հո՛ւ, հո՛ւ...*

ՇՈՒՇԱՆ, առանձին։

Ա՛յ, աստծու կրակ, թե ասիս ու պրծնիս։

ԳԻՔՈ, հազը շարունակելով։

Խիկարը, հո՛ւ, հո՛ւ, հո՛ւ, հո՛ւ... փիլիսոփա... էր. հո՛ւ, հո՛ւ, հո՛ւ... (Պեպոն կուլիսի ետևից երգում է՝

«Շարա՛բի Շամ շուդա ասթ,
Շուբհի նա դարադ։»

ԿԵԿԵԼ, առաջ վազելով և ուրախ։

Ա՛յ, Պեպոն։

ՏԵՍԻԼ Գ

ՆՐԱՆՔ, ՊԵՊՈ

Պեպոն, երգը շարունակելով, ներս է մտնում դիմացի դռնից՝ գլխարկով, հասարակ սև հագուստով, թևերը ետ ծալած, դամբը (ուկան) ուսին և առջևը գոտկից կապած կարմիր բաշկինակում կենդանի ձկներ։

«Արաղի քիշմիշ ասթ,
Բար դար փիալա,
*Գյալ այլաշ։»**

ԿԵԿԵԼ

Աճկենեբուս խո չուր կտրեցիր, Պեպո։

ՇՈՒՇԱՆ

Ինչի՞ գիդիս, տո՛, կէհաս ու կու կորչիս։

ՊԵՊՈ, ուրախ։

Վա՛, է՛սենց վուր չանիմ, աստուձ մանանա խո չէ՞ դեվեր ղրգում միղ համա... Օ՜, Գիքո, լավ վուխտ իս էկի։ Մե մուրծեք ուտեցնիմ քիզ էս սնաթիս, վուր քեփդ գա. ամա թե քնթետ բուռնութի իս կաթեցրի վրեն, էլ մե թիքա չիմ տուր տա, հրա՛... (Հանելով մի մեծ ձուկ։) *Աբա՛...* (Ձկան պոչով Գիքոյի բշերին խփելով։) *Օ՜, շե՛նի կի ճիրի մե... մե թա՛մաշա արա, է՞։*

ԳԻՔՈ

Ջա՛նես, չա՛նես, տո՛։

Կեկելը ծիծաղում է։

ՇՈՒՇԱՆ, ժպտալով։

Մե մո՛ւլափ, տո՛, բա՞ դրոս հանաք է. բան էր խոսում։

---

* Պարսկերեն է՝ Գինին Դամասկոսի է եղել,
Կասկածանք չկա,
Հյուքը քիշմիշի է,
Վե՛ր առ փիալան։

Թուրքերեն է՝ Ծ՛կ նստիր։

ՊԵՊՈ, թաշկինակը հավաքելով և ծիծաղելով։

Բա՞ն էր խոսում. ավտաս խոսկը խոսկին կարկլտի պես վրա տա։ (Գիքոյի ձախ կուռը բռնելով և ամուր շարժելով։) *Վո՞ւնց իս, վո՞ւնց, Գիքո։*

ԳԻՔՈ

Կո՞ւռս, կո՞ւռս, տո՛, է՞րկաթ է մաջե՞տ։

ՊԵՊՈ, ծիծաղելով։

Բաս չէ ու քի պես փափա կուլի։ (Թաշկինակով ձկները տալով Կեկելին։) *Ահա՛, Կեկել, էս տա՛ր մե էնդի ջուրն ածա ու մե կրակ էլ չա՛ղ արա...* (Ցածր ձայնով։) *Փետ իտ ո՞ւնինք։*

ԿԵԿԵԼ, ուրախ և ցածր։

Մե էրկու վառելու էլի կա։ (Առնում է կապոցը։) *Մո՞ռթոտիմ է՞լ։*

ՊԵՊՈ

Չէ՛, չէ՛, չէ՛, չէ՛, Կակուլին աղանչաք արավ, վուր նրան մուլափ տանք, խիստ է սիրում ձգան մորթիլը։ (Տնտղելով ձուկը Կեկելի ձեռքին, թաշկինակի մեջ։) *Մե մտի՛կ էս բեձաթին՝ վո՛ւրդի է կուչ էկի, է... Տա՛ր, տա՛ր, յիս սրանց հոքուն մեռնիմ։ Էս էլ վուր առանց փուղ չըլի ճարվում, ո՞վ արժանի կոներ միզ։* (Իր ծոցին խփելով և Կեկելին՝ ցածր։) *Փուղ էլ ունիմ, Կեկել. ա՛յ. մի՛ վախենա, հինգ մանեթի ծախեցի։*

ԿԵԿԵԼ

Էնդուր էլ ուշացա՞ր։

ՊԵՊՈ

Վա՛... բա՛ս... Մե էս գիշեր էլ գնամ. աստուձ աճկը քաղցրացրիլ է ինձ վրա։

ԿԵԿԵԼ

Ա՛խ, Պեպո ջան, յարաբ քա՞նի չարչրվիս միզ համա։

Դուրս է գնում ձախ* դռնից, տանելով հետը կարը, կարի բռնչան և թաշկինակով ձուկը։

* Աջ, ձախ՝ *պետք է ընդունել միշտ հանդիսականների դիրքից նայելով։*

ՏԵՍԻԼ Դ

ՆՐԱՆՔ, առանց Կեկելի

ՊԵՊՈ

Ուրիշ, Գիքո. ասա՛, է՞. փո՞ղը լավ է թե ջա՛նը։

ԳԻՔՈ

Էրկուսը մետի լավ է, Պեպան, թե աստուձ կու տա։

ՊԵՊՈ

Տո՛, է՛տղադա տարի է ապրում իս աշխրքումն ու չի՞ս գիդի, վուր փո՛ղը աստուձ չէ բաժնո՛ւմ։ Թո՛ղ աստուձ մենակ ջան տա մարթու, փո՛ղ է ու փուղ։ (Դամբը բաց անելով։) *Փո՛ղով իմ առի է՞ս։* (Իր կրծքին խրփելով։) *Ա՛յ սաղ ըլի...* (Կռացած դամբը գնում է։) *Օ՞, հո՛, հո՛, հո՛, հո՛... ի՞նչ դամբ է՞. է՛նղադա գցեցի, էլի սաղ սալամաթ է մնացի... Պետրե-Մորեվի պես տիղ չի ըլի. փռում էի թե չէ՝ ղը՛մ-ղը՛մ, դուս էին գալի լոթիքը խըլպըլտալի։ Խալխը վուր խիլք ուններա, էսանց էլ բան ու գործ չի ունենա։ Էն վուր գցում իս... ու ինչրու դուս քաշիլը, սիրտդ՝ ղը՛նգդը՛նգ, կոսիս թե մահ ու կինքդ պիտի բաժնին։ Թե մութ գիշեր էլ է, հենց գիդենաս աստղիրը հիդդ մասլահաթ ըլին անում, ու թե լուս է խում՝ կոսիս լուսնիակը գլխիս փարվնի պես կա՛նգնած է լոթին... էշխումն էլ վուր տուն իս գնում ու վուտնիրտ էլ թաց է ըլում, ու մե բաշ փռում իս... Օ՛հ, շե՛նի կի ճիրի մե...* (Հեռվից գցում է դամբը Գիքոյի գլխին, Գիքոն մնում է մեջը։) *Օ՛հ, օ՛հ, օ՛հ... Գիքո, ի՛նչ ձուգն ի՞ս, արդի պղինձ պիտի քիզ։*

Ծիծաղում է։

ՇՈՒՇԱՆ, ծիծաղելով։

Տո՛, բա՞ դրոս էտունք է։

ԳԻՔՈ, ազատվելով։

Տո՛, վախեցա, է՞յ. էս ի՞նչ հանգի հանաք է։

ՊԵՊՈ, դամբը հավաքելով։

Բաս դիփ մե՞ գլուխ իտ չիմ լաց ըլի... Սիրտս վուր գարդին տուր տամ, լուրի պես կու տրաքի։

ԳԻՔՈ

Չէ՛, մայինց մե քիչ անդնջում իս։

ՊԵՊՈ. դամբը թոկի վրա փռելով։

Բաս չէ ու քի պես հում-հում խաշլամա կուլիմ. բուռնութին քնթեմէս ծլծլալի դեվեր ըլի գալի ու ինչրու մե բան ասիմ, ուխտի լոխմի պես խոսկիրը բերնումս ծամում ըլիմ... (Միծաղում է։) *Հա՛, հա՛, հա՛ հա՛...*

ԳԻՔՈ

Հե՛յ գիդի, Պեպան։

ՇՈՒՇԱՆ

Տո՛, քա՞նի ասիմ, մե անգամ դի ախար, է՛. սիրտս շուռ էկավ.... ինչոր փիս խաբար է իմացի միր փեսի դեչիբ։

ՊԵՊՈ, վախենալով։

Ի՞նչ փիս խաբար։

ԳԻՔՈ

Մե՛ նստի, Պեպան, հենց ապրիս։

ՊԵՊՈ

Էսենց էլ լավ իմ, ասա՛։

ԳԻՔՈ

Չէ՛, վուր նստիս, ուփրո լավ կուլի։

ՊԵՊՈ, ճեղքելով։

Տե՛ր օղորմած աստուած։ (Մաս է քաշում մեկ աթոռ և նստում Գիքոյի ձախ կողմը։) *Հը՛, է՛ս էլ նստեցա։*

ԳԻՔՈ

Մո՛ւլափ, է՛. տաքանալով բան չի դառնա ախար։ Պիտի փիքր անինք, թե վո՛ւնց օտկինք բանին։ (Հրոնում է քթախոտի տուփը։) *Ի՞նչ էլավ, տո՛, էստի էր։*

ՊԵՊՈ, տուփը գտնելով և տալով նրան։

Հը՛, բռնե՛. ինչրու չքաշիս, խո չիս կանա խոսի։

ԳԻՔՈ, վերցնելով քթախոտ։

Ա՛յ, ախպեր... էսօր առուտեհան մե փիս հուտ իմացա... (Քաշում է քթախոտը։) *Հը՛մ... Միթամ ձիր փեսի համա ուրիշ ախչիկ ին լուս գցի։*

ՇՈՒՇԱՆ

Վո՛ւյ, քոռանամ չիս։

ՊԵՊՈ, վախեցած և ձայնը երկարացնելով։

Է՛յ...

ԳԻՔՈ

Բա՛ս... Միթամ խիստ լավ ախչիկ է կոսե, ու փուղ ու բաժինքն էլ ձիր խոստացածի վրա ուփրո շատ։ (Կրկին վերցնում է քթախոտ և քաշում։) *Հը՛մ...*

ՊԵՊՈ, բարկացած։

Հը՛մ, հը՛մ, տո՛, քա՛շե ու պրծի, է՛լի... (Տուփը խլելով՝ քթախոտը թափում է Գիքոյի բուռը և այդպես մոտեցնում նրա քթին։) *Հը՛, կշտացի՛։*

ԳԻՔՈ

Վա՛, վա՛, բո՛ւռնութիս, բո՛ւռնութիս... Ի՞նչ գիժ մոդին իս, տո՛։

Քթախոտը կրկին տուփն է ածում։

ՊԵՊՈ

Արիվս գիդենա, Գիքո, էլ սաղ չիս պրծնի, թե դիփ մետի էս սհաթիս չիս հիդ աբի։

ԳԻՔՈ

Տո՛, ախար, վուր դա՛թար չիս տալի՛։

ՇՈՒՇԱՆ

Դուն ո՛ւփրո շշկլեցրիր, քա՛։

ՊԵՊՈ

Դե՛, չո՛ւստ։

ԳԻՔՈ

Հա՛, էն էի ասում... ի՞նչ էի ասում. մոռես ննդավ...

ՊԵՊՈ, կիսածայն, առաճգիկ։

Ա՛յ, զա՛հրումար։

ԳԻՔՈ, շարունակելով։

Հա՛, վուր առուտհան էն հանգի բան իմացա։

ՊԵՊՈ

Ը՛հ, քու մարթ ասողին ի՞նչ ասիմ. տո՛, էտ խոմ ասիր, իժո՞ւմ։

ԳԻՔՈ

Ա՛յ, իժում... Գնացի դեմուդեմը ձիր փեսի մոդ, տեսա տանը չէր. էնդանց գնացի դուքանը, տեսնիմ՝ էն ալդի-դաշտի Նաթելը հիդը քշփշում է։ էն սհաթին ճկըտկիս կծեցի, (ճկույթը բերանն է ատանում։) ասի բանը բանի նման է։ Մե քիչ մնացի. էն սատանի կնիկը վուր քաշվեցավ, մոդ գնամ մե լավ ծա՛նդը ու բարակ հիդը խոսիմ էս միր պարնի հիդ։

ՊԵՊՈ, անհամբերությամբ։

Իժում ի՞նչ ասավ։

ԳԻՔՈ

Ա՛յ, էս սահաթիս, կարքով գալիս իմ, էլի՛։

ՊԵՊՈ, բունցիր բարձրացնելով։

Ը՛հ, Գիքո, էկավ, աստուած գիդենա։

ԳԻՔՈ, ճետ քաշվելով։

Տո՛, մի՛ խառնի, է՛։

ՇՈՒՇԱՆ. բոլոր խոսակցության ժամանակ անհամբերությամբ ծնկները արոբում է։

Վա՛, բա՞ դագեմարթա, Պեպո։

ԳԻՔՈ

Ջեր անգաճը բաղմնչու արավ, ամա վիրչը կոտրվեցավ ու իմացածս դուրթ դուս էկավ։ Կինաղամ լիզուս փուրը ննգավ, էսօրվան անմահ պատարաքը գիդենա։

ՇՈՒՇԱՆ

Վո՛ւյ, գեդինը պատռե ու նրան դեվեր տանե, վուչ։

ՊԵՊՈ, բարկանալով։

Վա՛, գժվի՞լ իս, թե՛ հանաք իս անում։

ԳԻՔՈ

Իմ հոգին գիդենա։

ՊԵՊՈ

Տո՛, իժում նա ի՞նչ ասավ։

ԳԻՔՈ

Նա էլ էն ասավ, վուր յիս ձիր Կեկելին խիստ իմ ուզում, կոսե, ամա բանը վուր գլուխ չէ գալի, կոսե, յիս ի՞նչ անիմ, կոսե։

ՇՈՒՇԱՆ, երկու ձեռքով ծնկներին խփելով։

Մտի՛կ էն աննամուսին, է՛։

ՊԵՊՈ, բարկանալով։

Վո՞ւնց թե գլուխ չի գալի։

ԳԻՔՈ

Էնենց, էլի՛. ասում է՝ ինչի՞ ինչ խոստացիլ իք, չիք տալի, կոսե։ (Հոգվոց հանելով։) *Է՛հ, աստուած։*

ՊԵՊՈ

Վո՞ւնց թե չինք տալի... Տո՛, գա՞նա ինքը չի գիդի բանի զորութինը՞։

ԳԻՔՈ

Յիս ինչրու վո՞ւր մե օրը մնամ, կոսե։

ՇՈՒՇԱՆ

Ո՞ւր է մնում, ո՞վ է ասում նրան վուր մնա։ Թո՛ղ ուզե, խոստացածն էնդի չէ։ Յիփոր դուս գու քա, իրն է ու իրը... ա՛ստուած անե քու դիվանն, Ա՛ռութին։

ԳԻՔՈ

Նա էլ էտ է ասում, Շուշան, է՛. յիս ասում է ախչիկ իմ ուզի, կոսե, դավի դառաբա խոմ չի՛մ առնում, կոսե։

Գլուխը շարժում է։

ՊԵՊՈ

Տո՛, էտունք դիփ մեատի խո հարուր ջեր խոսիլ ինք. հիմի նո՛ւր չար, նո՛ւր բարի՛։

ԳԻՔՈ

Բանն էլ էն է, Պեպո ջան, վուր նա ասում է՝ էտ բանն, ասում է, տարիք կու քաշե, կոսե, ու յիս էլ չիմ կանա համփիրի, կոսե. կնի՛կ ուզիլը խիստ իմ ուզում սրտով, կոսե։ (Աղաղակում է։) *Միդա՛ ջիզ, ասուած, միդա... էս իմ միխկի պատիժն է դիփ։*

ՇՈՒՇԱՆ

Մե խոսկով՝ ասա՛, Գիքո, վուր Կեկելին թողնում է, էլի՞...

ՊԵՊՈ

Ու բանը մո՛շլա է ըլում։

ԳԻՔՈ

Թե էս սահաթիս փուղը չճարեցինք, մոշլա արած է ու մոշլա արած։

ՊԵՊՈ

Իստա՞կ։

ԳԻՔՈ

Ի՛ստակ, ի՛ստակ։

ՊԵՊՈ, չարացած վեր է թռչում տեղից և մի քանի քայլ առաջ նետվելով՝ ձեռքը ձեռքին խփում։

Վա՛յ, քու տղիս տղա... (Հետ դառնալով, դիմում է Գիքորին՝ ձեռքերը առաջ տանելով։) *Տո՛, իժում ի՞նչ ասիր։*

ԳԻՔՈ, հետ քաշվելով, վեր է կենում տեղից։

Դուն ինձ ասա՛, էլ ի՞նչ պիտեի ասի։

ՊԵՊՈ, առաջ գնալով։

Տո՛, ախար չհա՞սկացրիր իրան, վուր չի՛նչ խափո՛ւմ։

ԳԻՔՈ, հետ քաշվելով։

Վա՛, բա՛ս չհասկացրի՞։

ՊԵՊՈ, առաջ գնալով։

Իժո՞ւմ։

ԳԻՔՈ, հետ քաշվելով։

Իժում էլի էն ասավ, է՛լի, վա՛։

ՊԵՊՈ, առաջ գնալով։

Ու դուն էլ ղա՛բուլ արիր։

ԳԻՔՈ, հետ քաշվելով։

Վա՛։

ՊԵՊՈ, առաջ գնալով։

Չէ՛, մե ի՞նչ խիլք բանեցրիր, ի՞նչ...

ԳԻՔՈ, հասնելով բեմի աջ կողմը և ճանապարհ չգտնելով։

Վա՛, հեր օխնած, յիս ի՞նչ անիմ, թե կի էն մարթն էնենց է ասում։

ՊԵՊՈ

Տո՛, դուն ի՞նչ ասիր, դո՛ւն։

ՇՈՒՇԱՆ

Պեպան, գժվիլ ի՞ս, թե ի՞նչ խաբար է։ Ախար, է՛տ հանգի խոսիլ կուլի՞։

ԳԻՔՈ

Տո՛, յիս էլ էն ասի, ինչոր գիդիս, էլի՞։ Ասի՝ յա մնա՛ ինչրու աղա Արութինի փուղը դուս գա. է՛ն չախն ուզե, ասի, յա թե չէ, ասի, հի՛միսկ էվետ ուզե ու Արութինեմեն փուղը դո՛ւն առ, ասի։

ՊԵՊՈ

Իժո՞ւմ։

ԳԻՔՈ

Իժում է՛ն, վուր նա կտրական ասավ, թե յիս դավի-դառաբի գլուխ չունիմ, կոսե։ Գուզիք փուղը էսօր բերե՛ք, յիս է՛ս գիշիր էվետ փսակվիմ, կոսե։ Յիս իմ խոսկեմեն հիդ չիմ կանգնում, կոսե։

ՊԵՊՈ

Տո՛, բաս է՞տ էիր քովլանում, թե խե՛լոք մարթ իմ, կոսե՛. է՞տ էիր ասում, թե խի՛կար իմաստունը գլխեմեն ինչրու վուռքը դի՛փ կարթացիլ իմ, կոսե՛։ Է՞տ է է՛լի քու շնուքը։

ԳԻՔՈ

Ախար... (Հազում է։) *Հո՛ւ, հո՛ւ... յիս ի՞նչ միզ ունիմ...* (Հազը ասպարկանում է։) *Հո՛ւ, հո՛ւ, հո՛ւ...*

ՊԵՊՈ

Ա՛յ գա՛հրումար ու չոս ու ցավ։

ՇՈՒՇԱՆ

Պե՛պո, Պե՛պո, ի՞նչ էլավ քիզ։

ՊԵՊՈ, հեռանալով Գիքոյից։

Չէ՛, յիս գնամ մե էս սհաթիս հիդը խոսիմ՝ տեսնիմ թե վո՞ւնց է թողնում։

ՇՈՒՇԱՆ, վեր կենալով տեղից։

Չէ՛, դուն կա՛ց ջեր, Պեպո, յիս գնամ մե էն կապ-կտրած Նաթելին տեսնիմ։ (Շտապով դաքիրան հանում է նանալու տակից և գնալով։) *Գի՛քո, մե հի՛դս արի, թե քու աստուձ կու սիրիս, էս քուչեն ա՞նց կացրու։*

Դուրս է գնում պիմացի դռնից։

ԳԻՔՈ, գնալով և հագից խեղդվելով։

Քի մոդ բան բռնիլը դավի-դառաբա է դրուստ։

Դուրս է գնում Շուշանի ետևից։

ՊԵՊՈ, Գիքոյի ետևից։

Քու մա՛րթ ասողին էլ ինչ ասիմ։

ՏԵՍԻԼ Ե

ՊԵՊՈ, մենակ, մի փոքր լռությունից հետո։

Ուրիշ ա՛խչիկ գուզի՞ս. բաս Պեպոն մեռավ, է՞լի... Տեսնիմ վո՞ւնց իս ուզում... (Նորից լռություն։) *Չէ՛, Պեպո, դուն հալալ տղա իս, հալալութինը սիրում իս, քու բանումն էլ հա՛լալ կաց։ Ինչո՞վ է սուտ քի մոդ քու փեսեն. խո՛ստացիլ իս, պիտիս կատարի քու խոսկը... Թե գլխիտ դդակ ունիս, պիտիս տա. թեգուզ կաշիտ պլոկվի, թեգուզ հոքիտ դուս գա, պիտիս տա... Ամա վո՞ւրդի ճարիմ էն գա՛հրումար փուղը... Ո՞վ կու տա ինձ էնդադա...* (Նայում է պատերին։) *Ո՞վ ինչ կու տա էստուրը. դիփ մետի վուր գրավ դնիմ, դիփ մետի վուր ծախիմ՝ տուն, տիղ, շուր... ի՞նչ կու տան... կիսի կեսն էլ չի դուս գա... Է՛ս էր վիրչն, է՞լի. էս էիր ուզում, է՞լի, Արութին. էստու համա էիր չարչրում, է՞լի, ինչրու հիմի... Աշխարքումը պիտի խայտառակ ըլիմ, է՞լի... էլ իմ ննգրտերանց էրեսին վո՞ւնց մտիկ անիմ, ի՞նչ կոսին։* (Գլխարկը հատակին է խփում։) *Փո՛ւ քու նամուսին...*

ՏԵՍԻԼ Զ

ՆԱ, ԿԵԿԵԼ

ԿԵԿԵԼ, շփոթված ձեռս մտնելով ձախ դռնից։

Էս ի՞նչ խաբար է, Պեպո։

ՊԵՊՈ, գլխարկը վերցնելով և թափ տալով։

Վունչիչ, ի՞նչ խաբար պիտի ըլի։

ԿԵԿԵԼ

Ի՞նչ իս ինձմեն թախկացնում... (Լալով։) *Ցիս իմացա, դիփ իմացա, Պեպո...*

ՊԵՊՈ, գլխարկը ծածկելով։

Ի՞նչ իմացար, Կեկել, ինչ իս լաց ըլում։

ԿԵԿԵԼ, թաշկինակով սրբում է աչքերը և կսկիծով։

Իմացա, Պեպո ջան, իմացա... էս սհաթիս դեղեն ու Գիքոն վուր գնացին... Նրանց խոսիլն իմացա... ինձ թո՞ղնում ին...

ՊԵՊՈ

Մո՛ւլափ, մո՛ւլափ, Կեկել, ջեր էլի աստուձ օղորմած է...

ԿԵԿԵԼ

Աստուձ շատ վուխտ է՝ խռով է կացի իմ գլխին, էլ ի՞նչ օղորմած է... Խալխումն ինձ պաչ անե, դիփունքը շնահավուրին, իժում ինձ թողնե ու գնա ո՛ւրիշին ուզե՞... Է՞ստու համա ստիղծից ինձ աստո՞ւձ... Միթամ անմիղ փալաս էի, քուչեն գցեցին... միթամ քուչի ցեխ իմ, թո՛ղ վուտի տակը կոխչրտին... Վա՛յ իմ նամուսին... Լաց է լինում և աչքերը սրբում։

ՊԵՊՈ

Ախար, ջեր անմիղ իս լաց ըլում, Կեկել, է՞։

ԿԵԿԵԼ, շարունակելով լացը:

Ինչի՞ գեղինը չիմ մանում էս սհաթիս։ Էլ իմ տոլ ախչկերանց էրեսին վո՞ւնց պիտի մտիկ անիմ. դիփունանց խոսելու պիտի դառնամ, դիփունքը մասխարա պիտի գցին ինձ, դիփունքը պիտի վրես ծիծաղին...

Աչքերը սրբելով՝ լաց է լինում:

ՊԵՊՈ, փաթսրվելով:

Կե՛կել ջան, Կե՛կել։

ԿԵԿԵԼ

Կեկելի շինքին քա՛ր կապե, Պեպո ջան, ու տա՛ր Քուռը շպոտե... էլ յիս վո՞ւնց պիտի ապրիմ աշխարքումը։

ՊԵՊՈ

Մե սիրտդ հի՛դ բի, Կեկել, է՛... Փուղի բան չէ՞. վուրդիոր կուլի, կու ճարինք... Թե Արութինը չի տա, դիփ մնտի կու ծախծխիմ, կէհամ ախկըտութին կոնիմ, գլուխս գրավ կու դնիմ ու քիչ էտենց չիմ թողնի։

ԿԵԿԵԼ

Չէ՛, չէ՛, Պեպո ջան. յիս իմացա, վուր էտ փուղը էսօր էվետ է հարկավուր ու մե օրումը միզ ո՞վ ինչ կու տա, ո՞վ ինչ կու սիվցնե։ Գլուխտ առանց էն էլ միզ համա գրավ իս դրի ու գրավ։ Վուչ էր էլի էն փուղի անումը, էս բեդնամութինն էլ չէր գա գլուխս.. (Լաց է լինում, կուլիսից լսվում է ԿԱԿՈՒԼԻՆ ձայնը՝ *Պեպո՞*) *Գեղինը պատռե ու ինձ դեվեր տանե։*

Աչքերը սրբելով՝ դուրս է վազում ձախ դռնից:

ՊԵՊՈ, ծնկանը խփելով:

Վա՛յ, քու Պեպոյին։

Վշտացած նստում է տախտի վրա:

ՏԵՍԻԼ Է

ՊԵՊՈ, ԿԱԿՈՒԼԻ

ԿԱԿՈՒԼԻ, գլխարկը ծածկած, ներս գալով դիմացի դռնից, մեկ ձեռքին թաշկինակում կապած պաշարեղեն, իսկ մյուս ձեռքին կեսթունգանոց:

Մե գի՛նի իմ բերի, Պե՛պո, մե գի՛նի, վուր է՛, դավի չունիմ։

ՊԵՊՈ, դառնացած:

Քեփ կոնինք, էլի՛։

ԿԱԿՈՒԼԻ

Վա՛, ի՞նչ է պատահի։

ՊԵՊՈ

Վունչիչ։

ԿԱԿՈՒԼԻ

Վա՛, չիմ տեսնում. էփած էլ կու ճանչնամ քիզ։

ՊԵՊՈ

Է՛հ, մա՛խլաս, կու խոսինք, է՛լի, իժում։

ԿԱԿՈՒԼԻ

Հը՛, է՞լի տեսիլ իս նրանցը՞։ Հի՛ռու կացի, թե ախպեր իս։

ՊԵՊՈ

Թո՞ղնում ին, վուր հի՛ռու կենա՞մ։

ԿԱԿՈՒԼԻ

Արի՛, մե-մե՛ ստաքան գցինք ջեր հալա, թե անդիկորը չին կորչի ու կու տեսնիս... Վաղ ու վաղ ինձ մոգ էլ խիստ շուստ-շուստ էին գալի, ամա (Խփում է կես-թունգանոցին:) *դիղը գթա... Հանց պուզիրը տեսնում իմ թե չէ՝ շաբա՛շ։* (Վրա է քաշում կես-թունգանոցը, ճետո երգում է բայաթի:)

«Ագիկմ, նաչաբ, աղլամա,
Գյուն գլբր, գեչար, աղլամա.
Բու դափի թարս բաղլիան»

ՊԵՊՈ, գլուխը շարժելով, կիսաձայն ու թիվ:

«Բիր գյուն աչար, աղլամա»։

ԿԱԿՈՒԼԻ, շարունակելով երգը, ճերշացնում է բայաթին:

«Բիր գյուն աչար, աղլամա»։*

Աբա՛, (Կես-թունգանոցը առաջարկելով Պեպոյին:) *տի՛ս թե թրի պես չկտրե։*

---

* Թուրքերեն է՝

Սիրելիս, ա՛նճար, մի՛ լար,
Օր է, կանցնի, մի՛ լար.
Այս գլուրը թարս կողպոզը
Մեկ օր բաց կանե, մի՛ լար.

ՊԵՊՈ

Է՜հ։

ԿԱԿՈՒԼԻ

Զխկո՜ւմ. տեսնում իմ խիստ մի՛նձիրն ին էկի, է՜։ Հը՜, վո՞ւնց ին... (Թաշկինակը և գինու ամանը դնում է սեղանի վրա և ձեռքերով պոզեր ներկայացնում։) Էս էսդադա պո՛ղզիրը... հը՜... ջեր արթուրմնքը սարքիլ ի՛ն թե չէ։ Ախար, կու ճանչնամ ի՛նչ պտուղ էլ իս, է՜։

ՊԵՊՈ

Հանաքի վուխտը չէ, Կակուլի, թե աստուծ կու սիրիս. բողազներուս դուրս է կտրվում։

Վեր է կենում տեղիցը։

ԿԱԿՈՒԼԻ

Վա՛, ի՞նչ խաբար է։

ՊԵՊՈ

Էլ ի՞նչ խաբար, պիտի ըլի, բեղնամ ինք ըլում. քվիրս թողնում ին։

ԿԱԿՈՒԼԻ

Փեսե՞ն։

ՊԵՊՈ

Բաս ուրիշ ո՞վ կուլի։

ԿԱԿՈՒԼԻ

Է՜յ։

ՊԵՊՈ

Աստուծ գիդենա։

ԿԱԿՈՒԼԻ

Վա՜յ, յիս նրա... Արի՛ գնանք ծեծինք, Պեպո. մե՛ ալիղուլի ծեփիմ էս սհաթիս, վուր սապոկի կրնգի վրա յիրիք ջեր վրա ու վրա պտուտ գա... Աբա՛, յիս քիզ ասում էի, Պեպո, է՜, վուր կուպեծը միր բա՛ն չէ։

ՊԵՊՈ

Բանը բանեմեն անց է կացի, Կակուլի, էլ էտուրը ի՞նչ փայիդա։ Բանն էն է, վուր թե ինչ խոստացել ինք, էս սհաթիս չտվինք, էս գիշիր ուրիշի վրա է նշնվում։

ԿԱԿՈՒԼԻ

Դե՛, քո՛ւթահ արեք ու պրծեք, էլի՜... (Քամարը հետ է աճում։) Թե իմքին պակսի, էս էլ վրեն ավելցրո՛ւ, մե՛ հինգ թուման կու տան... (Ձախ

ձեռքով քամարը բարձրացնում է։) Զարթնի է՜ս, Պեպո ջան, (Աջու բռունցքը գոյց տալով։) ու մեկ էլ՝ է՜ս, էլ ուրիշ վունչիչ չկա իմ մեջն, ախպեր։

ՊԵՊՈ

Էտրնցութենով բան չի դառնա, Կակուլի ջան. դուն լավ գիդիս, վուր հարուր թուման փուղ ինք խոստացի, ու էն անիծած Արութինը էսօր էքուցն է գցում։

ԿԱԿՈՒԼԻ

Օ՜հ, նա՛ ապրա՜նք. յիս քիզ ասում իմ, ինչրու նրա փուրի վրա էլ մե դհոլ չածինք, վունչիչ չի դուս դա։

ՊԵՊՈ

Է՜հ, Կակուլի, դուն էլ հենց գիդիս ամեն բան մենակ մուշտե կովով է շինած։

ԿԱԿՈՒԼԻ

Բաս ինչի՞ չէ տալի, թե դուրթ պարտ է։

Քամարը կապում է։

ՊԵՊՈ

Վո՞ւնց թե դուրթ պարտ է. բաս սո՛ւտ իմ խոսում քի մո՛դ. ամա էն անիծած բարաթը վուր չէ գթնըվում, ի՞նչ անիմ։

ԿԱԿՈՒԼԻ

Ի՞նչ բարաթ, էդ չիմ իմացի։

ՊԵՊՈ

Վա՜, բաս չի՞մ ասի ջո՜ղ։

ԿԱԿՈՒԼԻ

Չէ՜։

ՊԵՊՈ

Վուր բարաթ ունեինք նրանն ու էն բա՛րաթը կորա՜վ։

ԿԱԿՈՒԼԻ

Չէ՜, Պեպո, չէ՜. էն կի իմացիլ իմ, վուր էն բայղուշը փուղ է պարտ տեցի քու հորը, ամա բարաթը առչի իմանալս է... Իժում էտ վո՞ւնց կորավ, տո՜։

ՊԵՊՈ

Աստուած վուչ գիդե միր գլուխը։

ԿԱԿՈՒԼԻ

Թե ախպեր իս։

ՊԵՊՈ

Ա՛սիմ, չասիմ, Կակուլի ջան, էլ ի՞նչ կու օտկրվի։

ԿԱԿՈՒԼԻ

Թե լո՛թի իս, տո՞։

ՊԵՊՈ

Ա՛յ, վունց էր, ախպեր... Իմ հերը փուղ է ունենում, տալիս է նրան շահով.— լա՛վ շահվեցանք.— բարաթն առնում է ու պահում է... Քանի սաղ էր իմ հերը, թեգուլ քսան ցեր իմ տեսի էն անիծած բարաթը. հենց մեռնելու մի շափաթ առաջ էլ ձեռին ուներ իրիդը... Մահի էդենն դուրին բաց անինք՝ էլ չկա, չկա, չկա ու չկա։

ԿԱԿՈՒԼԻ

Էէէ՞... ա՛յ, թուրմե ի՞նչ բան է էլի... Տո՛, Պեպո, ինքն Արութինը չըլի՞ գողցի էն բարաթը։

ՊԵՊՈ

Է՛հ, ի՞նչ իս սարսաղ-սարսաղ դուս տալի, տո՛. միր դուքումը նա ի՞նչ դավի ուներ։

ԿԱԿՈՒԼԻ

Բաս ո՞վ կու գողներ, Պեպո։

ՊԵՊՈ

Վուր գիդենամ, խո՛միզ համա էլ լավ կուլի։

ԿԱԿՈՒԼԻ

Կո՞ւլի քու հերը հիդը տարավ, տո՞։

ՊԵՊՈ

Մինք էլ էտենց ինք ասում. կուլի շուր հաքցնելիս հիդը գնաց։

ԿԱԿՈՒԼԻ

Մտի՛կ է՞... Աբա էն կինջումը թա՛մաշա աբա, Պեպո, թե ի՞նչ կոնին աղա Արութինին։ Ջուրս-չուրս սատանեն վուր բարաթն առչիվը կու ձգեն,

վա՛յ, վա՛յ, գե՛ղի ծծիր, դո՛ւն բարեխոս... Նետալի մե թամաշա անիլ ուան, Պեպո ջան, թեգուլ հենց էտու խաթիր կէհամ դժուխը։ (Միծաղում են։) Տո՛, հանեցը դենը, էլի լա՛վ պտռտեցեք, կուլի գինը վի։

ՊԵՊՈ

Տակն ու վրա ինք արի տուն ու տիղը, ի՞նչս ասում։

ԿԱԿՈՒԼԻ

Իժում էն գոմշի գլուխ էլ գիդե՞, վուր բարաթը կորիլ է՞։

ՊԵՊՈ

Գիդե, վուր չէ տալի, է՞։

ԿԱԿՈՒԼԻ

Տո՛, խո գի՞դե վուր պարտ է։

ՊԵՊՈ

Բա՛ս չի գիդի՞։

ԿԱԿՈՒԼԻ

Գե՛, ուա, է՞։

ՊԵՊՈ

Անկճիտ բամբակը հանե՛, տո՛. էն մարթն ասում է թե՝ միտս չէ, կոսե, դավթրներումս չիմ գթնում, կոսե, բարաթը բի՛, ասում է, ու փո՛ւղը տար, կոսե։

ԿԱԿՈՒԼԻ

Աստուած գիդենա, Պեպո, զարթնի դնքսիլը ուրիշ ճար չկա։ Դուն ինձ թո՛ղ. էն Օրթաճալեմեն վուր յիդ է գալի, ձեռնիրը էհենց դարսած, (Ձեռները ետևն է դարսում և մի քանի քայլ անցնում Արութինի նման։) հե՛ստիկ շինիմ, հե՛ստիկ շինիմ, վուր սեփիլի բայաթի կանչիլ տամ յիս նրան։

ՊԵՊՈ

Էրանի՞ քիզ, Կակուլի, վուր քուր չունիս մարթու տալու։

ԿԱԿՈՒԼԻ

Էտու համա էլ դարդ չէի անի. ձիզ պես կուպեծներու էդնեն չէի ենգնի։ Վիրչի կինտոյին կու փո՛խիմ նրանց հի՞դ։ Միզ վուր ստիղծիլ է աստուած, թուչունքի հանգն է ստիղծի՝ օր դաղինք, օր ուտինք, էլ մեռնելիս անդերձի գլուխ ո՞վ ունե, տո՞։

ՊԵՊՈ

Լա՛վ է, լա՛վ, խիլքիտ մի՛ դոռ տա, հերիք է. գնա՛ էն մուրծեքը մորթոտե՛, նստինք մե-մե թիքա չոռլամիշ ըլինք, իժում տեսնինք՝ աստուծ ի՞նչ է տալի։

ԿԱԿՈՒԼԻ

Հա՛, էտ իմ խիլքի բան է՞. մե սուփրեն վո՞ւրդի է, էստունք հիդ դարսինք։

Վերցնում է կապոցը։

ՊԵՊՈ

Է՛ս սահաթիս... (Մուքաֆաեերը մի կողմն է դնում և բարեթից վայր է բերում հին ձևի կապույտ նախշուն սփռոց, փայտե դեղին գդալներ և մի քանի ափսե։) *Ա՛յ, բի՛։*

Սփռոցը բաց է անում տախտի վրա և իրեղենները վրան դարսում։

ԿԱԿՈՒԼԻ, շոռում է տախտի վրա, թեով գլխարկը հետ է քաշում ճակատից և կապոցը բաց է անում. հետո թաշկինակից հետ դարսելով սփռոցի վրա՝ մի կտոր դոշ, կանանչի, լոշ և մոթալ։ [Դոշը և մոթալը կաղամբի թարմ տերևներում։]

Մտի՛կ էս ալաբալուխին, է՞. էս էլ կանանչի, էս էլ լոշ, էս էլ մոթալ։

Դատարկ թաշկինակը վերցնում է։

ՊԵՊՈ, մոթալը զննելով և տխուր։

Լավն է երևում։

ԿԱԿՈՒԼԻ

Իժում էս կանանչուն ի՞նչս ասում... (Վեր առնելով կանանչին և բափ տալով։) *Մտի՛կ է՞. կոսիս կանանչ մախմուր ըլի։*

ՊԵՊՈ, միշտ տխուր։

Ղռչաղ իս, Կակուլի. մե ստաքնիր էլ բերիմ։

ԿԱԿՈՒԼԻ, տեղից վեր թռչելով։

Վա՛, միխկ չէ՞ .էս հանգի գինին ստա՞քնով կու խմի՞ն. հոքուտ ի՞նչ իս ասում... (Գլխարկն ուղղելով գնում է կես-թունգաճոցը վերցնում։)

Տո՛, էն քի՛ղանը բի, վուր խմելիս էրեսարքը մեչն էրևա քրիստոնի պես, է՞։

Կես-թունգաճոցը տանում դնում է սփռոցի վրա։

ՊԵՊՈ, նույն միջոցին, գնալով։

Գիդիմ, գիդիմ... (Թարեթից վերցնում է և բերում մեկ հատ բրեղան, մի քանի գինու բաժակ և ուրծաթազարդ փայտե կուլա։) *Հը՞, էս էլ քու քիղանը. էս էլ վրեն ավել, թե գուզիս։* (Բոլորը դարսում է սփռոցի վրա և կարգի բերում։)

ԿԱԿՈՒԼԻ, վերցնելով կուլան։

Օ՞հ, քու հոքուն մեռնիմ, Պեպո ջան... Ի՞նչ լոթին իս էլի, տո՞... Ա՛յ զայիդի բա՞ն... (Բարձրացնելով դատարկ կուլան բերանից փոքր ինչ հեռու, իբր թե խմում է։) *Կ՛ըլ կըլ կըլ կըլ կըլ կըլ կըլ... Ջա՞ն... Հոքիս չիմ խնահի էտ քու բլբուլի ճկճկուցին... Ը՞հ...* (Համբուրում է կուլան։) *Ջարդ տանիմ յիս։*

ՊԵՊՈ

Ա՛խ, Կակուլի ջան, պիտի դարդ չունենամ, վուր լավ ըլի։

ԿԱԿՈՒԼԻ

Տո՛, մարթ էս հանգի հոքեվուրթի ունենա, էլ դարդը ի՞նչ վուտնիրս է։

Կուլան վայր է դնում սփռոցի վրա։

ՊԵՊՈ

Լա՛վ է, լա՛վ... Դե՛, գնա՛, էլ մի՛ ուշացնի. էստունք յիս կարքի կու բերիմ։

ԿԱԿՈՒԼԻ

Մե ձո՛ւգն էփիմ, մե ձո՛ւգն էփիմ, Պեպո ջան, (Գնալով։) *քեփդ բաց ըլի։*

Մտնում են դիմացի դռնից՝ Նուշանը դաթիքայով և Պիոռն գլխարկով ու ձեռնափայտով։

ՏԵՍԻԼ Ը

ՆՐԱՆՔ, ՇՈՒՇԱՆ, ԳԻՔՈ

ԿԱԿՈՒԼԻ

Բարո՛վ, դեղի ջան։

Պեպոն անշարժ և ճեռամբրությամբ նայում է Շուշանին։

ՇՈՒՇԱՆ, Կակուլուն։

Ա՛պրիս, վուրթի։

ԿԱԿՈՒԼԻ

Օ՜, ա՛ղա Գիքո, բարով յիս ու գուն։ (Առաջ գալով և Պեպոյին՝ ցածր։) *Ինչ վրա լավ զոնաղ չգթա՞ր, տո՛։*

ՊԵՊՈ

Մո՛լափ... (Շուշանին։) *Ի՞նչ իմացաք։*

Կակուլին Գիքոյի ետեից նրա նման իբր թե քթախոտ է քաշում, բայց խնկույն դադարում է և ուշադրությամբ լսում խուզոցներին։

ՇՈՒՇԱՆ

Էլ ի՞նչ իմացա. գեղինը պատռե ու ինձ գեվեր տանե։ Թե էսօր չճարեցինք, Պեպան ջան, էս գիշեր դիփ մետի մոշլա է ըլում... Ա՛յ յիրգնքեն առնիս մագիերն, Ա՛րութին։ (Վաթիբան վեր առնելով։) *Նա խո էսօր չի տա ու, ուրիշ տիղ ո՞վ ինչ կու ավտա միզ։ Էլի հոքուն վրա հասա էն կապկտրած Նաթելին, թե չէ էն է, վիրշի խոսկն էր տանում նուր սխչկա տիրուչմեն էն միր սիվերես փեսի մոդ։ Սատանեն անե նրա դիվանը, հրա՛։*

ՊԵՊՈ

Տո՛, փեսիմեն ի՞նչ իս ուզում. ինչ խոստացիլ ինք պիտի տա՞նք թե չէ։ Նա էլ մարթ է, գլխին գլակ ունե ծածկած, միզմեն էլ վո՞ւրդի խափվի. աշխարքն ալան թալան իս չէ՞... Էնդուդա ասի, վուր մո՛ւլափ, դեղի, ջեր փուղը գուս գա, թժում էինք նշնի. ամա ձիր օխտեմեն ո՞վ գու քա... Ի՞նչ հաջաթ ու, ո՛ւր կու կորչի ու, Արութինը միր միխկն ի՞նչ կոնե ու, հա՛շա խոմ չի ուտի ու. դե՛, գնա՛ առ, տեսնիմ վո՞ւնց իս առնում։

ԳԻՔՈ, նստելով սեղանի մոտ և ծերկար հոգվոց հանելով։

Ա՛խ, իմ գոզալ բարա՛թ... յարաբ վո՞ւնց կորար։

Խփում է ծնկանը։

ՊԵՊՈ

Զե՛նդ, Գիքո, թե չէ, մասաբս գիդենա, ինչ ջիգրն ունիմ, դիփ քիզ վրա կու հանիմ էս սահաթիս։ Դուն վուր չէիր խառնվի էս բանումը, էս խայտառակութինն էլ չէր գա միր գլուխը. ջնա՞նգամը փուղի գլուխը, նրա մոգոնողին էլ ի՞նչ ասիմ։

ԳԻՔՈ

Ա՛խ, Պեպո, վուրթի, չիս գիդի թե սիրտս ի՞նչ հանգն է փոթոթի գալի... Ի՞նչ անիմ։ Ի՞նչ ասիմ... Լավ կոնիս՝ սպանիս ինձ, պրծնիմ, գնամ դնջանամ։

ՊԵՊՈ

Աբա էտ խո՞սկ է, վուր դուն իս ասում, Գիքո՜... Տեսնում իս՝ սաղ օճոռքը գլխիս քանդվում է. էլ ի՞նչ իս, էս չգրած վուխտը, ցավիս վրա նուր ցավ ավելցնում... Մե իմ դա՛ղդն էլ իմացի, հեր օխնած, է՞։

ԳԻՔՈ, խորը հոգվոց հանելով և ցածր։

Ա՛խ, ա՛խ, ա՛խ...

Զեռոով աչքերը սրբում է։

ԿԱԿՈՒԼԻ

Մո՛ւլափ, մե բան ասիմ յիս, Պեպո. օմքին վկա չկա՞, վուր վրահասու ըլի էտ պարտկի՞ն։

ՊԵՊՈ

Միթա՞մ դուն էլ խիլքիտ զոռ տվիր. էտով վուր բան էր դառի, խո էս խաթաբայեն էլ չէր ըլի։

ԳԻՔՈ

Ա՛յ, վկա չի՞մ, բաս ի՞նչ զահրումար իմ... ամա վուր չէ ըլում։

ԿԱԿՈՒԼԻ

Վա՜հ, ինչի՞։

ՊԵՊՈ, Կակուլուն.

Էս բանումը վկա-մկա չի ըլի, կոսե, չի՞ս իմանո՜ւմ։

ԿԱԿՈՒԼԻ, առանձին. գլուխը շարժելով։

Չէ՛, յիս նրան պիտի հարիմ։

ՇՈՒՇԱՆ

Ախար, էն օրը էն սիվսրտովն ի՞նչ ջուղաբ էրիտ կտրական։

ՊԵՊՈ

Միթամ ջեր չիս իմացի... Ասավ՝ յիս միտս չունիմ, կոսե, դավթըրներումս չէ էրևում, կոսե, թե բարաթ իմ տվի ձիզ, բերե՛ք ու փո՛ւղը ատրեք, կոսե։

ՇՈՒՇԱՆ

Բաս միթամ հա՞շա է ուզում ուտի՞։ էտ վո՞ւնց կոնե, Պեպան. աբա քիմեն չիմ արմընո՞ւմ։ էնենց հարուստ մարթը լա՞յիզ պիտի անի էտ հանգի բա՞ն։ Նրա համա հարուր թումանն ի՞նչ—մե գրոշ, վուր ուզենա բախշելով էլ կու բախշե։

ՊԵՊՈ

Վո՞ւնց չէ, դեմ է բերում։

ՇՈՒՇԱՆ

Ա՛յ, կու տեսնիս թե չէ... (Լացի ձայնով։) Կեհամ, առչիվը կու չոքիմ, լաց կուլիմ, իր վուրթկերանց արիվ սադալա գուզիմ, օրթում կուտիմ, վուր թե միր մեչը բարաթ լուս ննգնի, թիքա-թիքա անե միզ, բաթըլնամա էու տամ, տասը վկի ձեռք կու քաշիլ տամ. մե օր հոքի ունե տալու. իր հոքեմեն ձեռը վո՞ւնց կու վիկալնե։

ՊԵՊՈ

Մո՛ւլափ. մո՛ւլափ, դեգի, գո՛ւն մուլափ, յիս կէհամ, յիս. էս սհաթիս հիդ գու քամ. ինչրու դուք նստեցե՛ք։

ՇՈՒՇԱՆ

Ջեր մե թիքա հա՛ց կի. մե սահաթ առաչ ըլի, հիդ ըլի, դիփ մեկ է։

ՊԵՊՈ

Չէ՛, ինչրու չտեսնիմ, բողազումս հաց չի դեվեր գնա. շուրիրս վո՞ւրթեն է։

ՇՈՒՇԱՆ

Էրեգ զանդուկը դրի։

ԿԱԿՈՒԼԻ

Յիս էլ գա՞մ, Պեպու։

ՊԵՊՈ

Չէ՛, դուն գնա՛ բանդ տիս. էս սահաթին գալիս իմ։

Դուրս է գնում աջ դռնից։

ԿԱԿՈՒԼԻ

Դուն գիդիս... (Խփելով իր կրծքին։) Ա՛խ, Արութի՞ն, յիս թե քու օխտեմեն չէկա ու կու տեսնիս։

Դուրս է գնում դիմացի դռնից։

ՏԵՍԻԼ Թ

ՇՈՒՇԱՆ, ԳԻՔՈ

ԳԻՔՈ, նստած սեղանի մոտ, ֆթախոտ ֆաշելով։

Է՛հ, աստո՛ւձ, օրհնվի քու դադաստանը։

ՇՈՒՇԱՆ, նստում է տախտի վրա և ձայնը երկարացնելով։

«Ա՛խ, աստո՛ւձ, վա՛խ, աստո՛ւձ, վուրին կու տա՛ս սելով փետ, վուրին չիս տա՛ ցախ, ա՛ստուձ»։

ԳԻՔՈ

Հա՛, հա՛, Շուշան։

ՇՈՒՇԱՆ

Է՛հ, օրհնվի նրա դազգահը. վուրին էնդադա դովլաթ է տալի, վուր իր դովլաթը չէ կանացի մարսի, ու վուրիմեն օրվան թիքեն խլում է ու էն էլ դովլըթավուրին է տալի... Փա ոչ իրան, իր կամքն է. հալբաթ միր ճակտին էս էր գրած։

ԳԻՔՈ, մոտենալով սփոցին։

Էլի աստուձ օղորմած է, Շուշան... **(Վերցնելով դոշը և գլուխը շարժելով։)** *Ի՞նչ դիամաթ իմքին է՞։*

Դոշը կրկին իր տեղն է դնում։

ՇՈՒՇԱՆ, առանձին։

Քու ա՛ճկն էլ... (Գիքոյին։) Էլ ի՞նչ օղորմած է, ջուրն էկի՛լ է ու միզ տարիլ է։ Էն անաստուձը վուր էլի մե բան մոգոնե ու փուղը չտա էսօր,

յարաբ ի՞նչ կուլի միր չարեն. ճլե՞րք կու ննգնի խիղճ ախչիկս։ Թավաթ օրն օրվան վրա հալվում է, էլ ի՞նչը կու ապրեցնե նրան։ (Լացով։) Խի՞ղճ իմ Կեկել, նորչի արիվդ պիտի փչանա, էլի՞, թագի մագիեր սիվ գերեզմանը պիտի մտնիս...

Լաց է լինում։

ԳԻՔՈ, լացի ձայնով։

Օ՛հ, օ՛հ, օ՛հ...

Դուրս է գնում ձախ դռնից աչքերը սրբելով, իսկ աջ դռնից մտնում է Պեպոն զարդի հագուստով, գլխարկը ծածկած, արխալուխի մի քանի կոճակը բաց, քամարը կապած և նրա վրա գոտիկը կապելով։

ՏԵՍԻԼ Ժ

ՇՈՒՇԱՆ, ՊԵՊՈ

ՇՈՒՇԱՆ

Տա՛, աբաբ, ջեր մե թիքա հաց կուտեիր։

ՊԵՊՈ

Հաց չէ, զա՛հրումար ուտիմ... Ի՞նչ կոնիմ հաց. գանա հա՞ցի արժանի ի՞մ... (Գոտիկը կապելով։) Հացը վուր ստիղծած է, գանա ի՞նձ համա է ստիղծա՞ծ, հացը վուր յիս ուտիմ, ա՞ղա Արութինը ի՞նչ ուտե։ Նա՛ էլ հաց ուտե, յիս էլ հաց ուտի՞մ... (Դառը ծիծաղելով։) Հրա՛, հրա՛, հրա՛...

ՇՈՒՇԱՆ

Սի՛վցիլ էր իմ օրը, ահրա՛։

Աչքերը սրբելով դուրս է գնում ձախ դռնից։

ՏԵՍԻԼ ԺԱ

ՊԵՊՈ, մենակ, արխալուխի կոճակները մեր գցելով։

Գնա՛, Պեպո, գե՛դինը լգե, խալխի վուտներուն պա՛չ արա, նրանց վուտի ցի՛խը լկե... Ո՞վ իս դուն. ի՞նչ իս դուն, ի՞նչ մարթահեսաբումն իս դուն, ի՞նչ անում ունիս դուն... Ցիփոր գուզի՞ն, վուտի տակը կու գցին քիզ, վրետ կու ման գան, գեդնի հիդ կու հավսրրին... ի՞նչ հաչաթ ջիանճվելի վրա ինչո՞վ իս ավել... Դուն իստ մարթ չիս, մարթկերանց համա կերակուր է ստիղծի քիզ աստուծ... Գի՛շիր չարչըրվի, ցե՛րեկ չարչըրվի յիրգնքի տա՛կը լուսացրու, անձրըվի ու քամու հիդ կոի՛վ տու, ձմեռը ցրտե՛մեն կոնկոռնա, ամառը արեգակի շուքումն է՛րվի ու խո՛րվի... գնա՛ էնենց մե թիքա հա՛ց ճարե ու էն թիքա հացով զե՛դիտ ու քվի՛րդ պահե... Էս ի՛նչ, ի՞նչ մարթութին... Էսենց շունն էլ է ճարում մե թիքա, վուր տունը պահում է... Միթամ դուն էլ շուն իս... քանի աշխրքիս էրեսին ման իս գալի, դուն էլ շա՛ն պես կերակրվի... Էս ի՞նչ մարթութին է... (Դադար։) Մա՞րթ էիր ուզում դառնա՞. կէհեիր մարթիք կու թալնեիր, գողութին կոնեիր, իմ նման խղճերուն կու գրնեիր. քանուհինգ հազար տիզ արեն արտրսունք կու թափիլ տէիր, էն արտրսունքները փուղ կու շինեիր ու էն փուղով օսկե տնիր... Մեչը փառավուր ման գու քէիր... դրոշկա, կալասկա, ձիանիր կու սարքեիր, քսանուհինգ ինձպեսին գլխիտ զարավաշ կու կանդնեցնեիր... Ա՛յ, էն չախը կոսեի քիզ՝ մարթ իս. Պեպո, ի՞նչ մարթուն պիտի... ի՞նչ քեփդ գուզեր, է՛ն սահաթին կու ճարեիր... Էն չախը դիփունքը քիզ գլուխ կու տէին, կու մեձրեին, պատիվ կու տէին ու մեկս մեկու գլո՛ւխ կու կոտրեին, վուր քու աճկը նրանց վրա քաղցը ըլի։

Դուրս է գնում դիմացի դռնից։

ԱՐԱՐՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Հարուստ դանլիճ Աբութիճի տանը: Աջ, ձախ և դիմացը դռներ, ամենաշքեղ դրապարիներով զարդարած: Վերջի դուռը բացվում է դեպի նախասենյակը, որի լուսամուտներից երևում է պարտեզը: Դանլիճի հատակը ամբողջապես ծածկած է գորգով, իսկ առաստաղից կախած է ոսկեզօծ չահ հանգած մոմերով: Աջ կողմը՝ բնկողմարան (մուշեթ), ձախ կողմը՝ մեծ հայելի և բազմոց, որի կողմին ամենաբանկագին սփռոցով ծածկած սեղան և նրա վրա հանգած լապտեր: Մնացած տեղերում, ուր հարկն է աթոռներ, բազկաթոռներ, փոքրիկ սեղաններ, վազաներ, կինկետներ ու կանդելաբրներ դարձյալ հանգած մոմերով, արմավենիք, կիտրոնի և ուրիշ ծառեր, ծաղիկներ, ալբոմներ և պատկերներ: Դիմացը, դռան աջ կողմը՝ փակած դաշնակ իր բոլորակ աթոռով, իսկ ձախ կողմը՝ վառարան և նրա վրա դրած գեղեցիկ ժամացույց, որի սլաքները ցույց են տալիս ժամը ճիշտ երկուսից քառորդ պակաս: Ժամացույցը բաներ է: Սկզբում բեմը փոքր ժամանակ դատարկ է: Ցերեկ է:

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ԳԻԳՈԼԻ, հետո ՍԱՄՍՈՆ

ԳԻԳՈԼԻ, երևում է դիմացի դռան շեմքում մեկ մշակի հետ, որի ձեռքին մեկ մեծ և բավականին ծանր զամբյուղ զանազան իրեղեններով: Զամբյուղում կա՝ շամպայն, կասիս, սարդին, զուրգիել, թիթեղի արկղիկով խավյար, Շվեյցարիայի պանիր, վարունգ, առանձին-առանձին թղթերի մեջ կարմիր ու սպիտակ ընտիր կեռաս, մի ուրիշ թղթում կարկանդակ:

Լա՛վ, թո՛ղ։ **(Վերցնելով գլխարկը զամբյուղն առնում է մշակի ձեռքից. մշակը գնում է, իսկ ինքը դժվարությամբ ներս է բերում զամբյուղը, վայր դնում և հոգնած ընկնում դիմացի դռան մոտ դրած աթոռի վրա:)**

Ո՜ւֆ... (Փոքր ժամանակից հետո գլխարկով սրբում է ճակատը և ցածր ձայնով կանչում:) *Սա՛մսոն, Սա՛մսոն,* (Մոտենալով աջ դռանը, ներից կանչում է:) *Սա՛մսոն։* (Սամսոնը դուրս է գալիս նույն դռնից արխալուխի կրծքի կոճակները բաց, ձեռքին շամպայնի գավաթ՝ սպիտակ երկար սրբիչով մաքրելիս:) *Աբա՛, գեթաղվա, Սամսոն ջան, գնա՛ չուստ, ախչիկ-պարնին ի՛մաց արա։*

ՍԱՄՍՈՆ

Էկա՞ր. ինչի՞ ուշացար. կրակ է վեր ածում ախչիկ-պարունը։

ԳԻԳՈԼԻ

Վա՛, յիս ի՞նչ անիմ. հեստի բան ասավ, վուր սաղ աշխարքը մանչկա, չճարեցի։

ՍԱՄՍՈՆ

Վա՜։

ԳԻԳՈԼԻ

Ումը հարցրի, վրես ծիծաղեցան, կա՞կլի տոլ էլ, ասում է, կլուրնիկ կուլի, կոսե՜։

ՍԱՄՍՈՆ

Հալբաթ կուլի, վուր ասավ... (Ցնցելով գամբյուղը:) *Մնացածը դիփ բերի՞ր։*

ԳԻԳՈԼԻ

Դի՛փ, դի՛փ. ամա էն մունդռեկ կլուրնիկը չճարեցի։ Էքուցութին կի մե տիղ խոստացան, կուլի ճարինք, կոսե։

ՍԱՄՍՈՆ

Հոքուն կու վրա հասնի. ղոնաղլուղութինը էսօր է, էքուց խո չէ՞։

ԳԻԳՈԼԻ

Բաս ի՞նչ անիմ, Սամսոն ջան։ Չի ըլի՞, վուր առանց էն յոլա գնա բանը՞։ Հե՛ստի բալիք իմ բերի, վուր ամեն մեկը կոսիս գոմշի աճկն ըլի։

ՍԱՄՍՈՆ

Թե ինձ կու հարցնիս, Գիգոլի, առանց էտ բալին էլ փուրը լավ կու կշտանա, ամա ախչիկ-պարնի խասիաթը գիդիմ, վուրդիոր ըլի, պիտի ճարիս. Կալոնիումը, նեմեցներու բաղերումը, էնդի հարցրու։

ԳԻԳՈԼԻ

Հոքիս դուս էկավ, ի՞նչս ասում... Դուն գնա՛ իմաց արա... (Նստում է նույն տեղը, իսկ Սամսոնը գնում է դեպի ձախ դուռը:) *Խի՛ստ դաթրեցա։*

Նայելով այն դռան կողմը, հանկարծ տեղից վեր է թռչում:

ՏԵՍԻԼ Բ

Նրանք, ԷՓԵՄԻԱ

ԷՓԵՄԻԱ, դուրս գալով հույն [ձախ] դռնից, ամենաշքեղ հագուստով և ակնեղեններով զարդարված:

Օ՛հ, չարա էլա՞վ. էսենց ուշանալն էլ ի՛նչ է։ Հոքիս դռնաղնիրը մոդ կուլին. յի՞փը պիտի վրա բերիմ, էլի աշխարքի բան կա։

ԳԻԳՈԼԻ

Հենդադա ման իմ էկի, ախչիկ-պարուն, աստուծ գիդենա, էլ ծնգնեբումս ջան չկա։

ԷՓԵՄԻԱ

Ջա՛նդ դուս գա, մա՛ն արի. բաս յի՞ս մատն գա՞մ։ Ա՜խ, Տի՞դ դարս տեսնիմ ի՛նչ իս առի։

Նստում է:

ԳԻԳՈԼԻ, զամբյուղը բերում դնում է Էփեմիայի մոտ, առջևը չոքում է մեկ ծնկան վրա և մեկ-մեկ ցույց տալիս նրան միջի իրեղենները:

Ա՛յ, ախչիկ-պարուն. էս շանփանսկիքը, տասն ու ութ աբասեն պակաս չտվին բոթլիկեն. յիրիք բոթլին է, թե ավելնա, մեկը պիտի հիդ վիկալնին, էնենց իմ բարիշած. էս էն կարմիր լիկորը, ֆրանցուզիմեն առա, չուրս ու տաս շահի առավ անիծածը. էս սարդինկեքը, պե՛րվի սորտ, թամամ կես դուժին է, վունցոր ասիր. խելի վուխտ հերիք է. էս Դոնու զուռգիել. էս կարտոբկումը ժիտկա, մե ջուխտ մինձերեմեն բերի, պստրկնիր լավը չկեր. խիստ թազեն է, նուր բաց արին. օրթում հավատ արավ, վուր էստու վրա լավը չի ըլի, կոսի. էս գրանիցի պանիրը, դիդին քարվա ըլի հենց գիդենաս, մտի՛կ, է՞, էս նեմենցու բալին, էրկու ռանգն է, ա՜յ. ամեն մեկը մե գրվանքա գուքա. (Հանելով թղթերից մի քանի հատ կեռաս:) *ձեռս կու կտրիմ թե էստու վրա լավը կու ճարվի. էս խիար, ի՞նչ շուշնգն է՞, տի՛ս, ախչիկ-պարուն. էս պիբոմնի, կանդիտրի շինածիմեն փեր չի դա բուլկիքն էլ հորես կու բնին։*

ԷՓԵՄԻԱ, տեղից վեր թռչելով:

Վո՞ւնց թե վեր չի գա, աբա էստի շա՛նց տու. բաս վո՞ւրդի առար։

ԳԻԳՈԼԻ, վերցնելով կարկանդակը և իսկույն ոտի կանգնելով:

Միչի փողոցումը։

ԷՓԵՄԻԱ, իր բշին ձեռ դնելով:

Արա էտ ա՞բարմունք է, Դիկոլի՞. յիս քիզ չասի՞ թե ֆրանցուզի մոդ ա՞։

ԳԻԳՈԼԻ

Դիպ մեկ է, ախչիկ-պարուն, աստուծ գիդենա. գրվանքումը մե աբասի անմիզ ավելի ո՞ւր էլի տվի։ Տի՛ս ի՞նչ լավն է։

ԷՓԵՄԻԱ, գնելով կարկանդակը:

Աբա, վի՞ս էկադրեբա, նրանց հա՞տն ու կտուրն է. էսենց բեդաալուբթինն էլ ի՛նչ է։ Տա՛ր, տա՛ր, էս սհաթիս հի՛դ տու։ Ինչ ասում իմ քիդ, լսի՛. դուն քու գլխեմեն բանիր մի՛ մոգոնի։ Ուրիշ... (Մտածելով:) *Ուրիշ ի՞նչ ասի, միտս չէ գալի։*

ԳԻԳՈԼԻ, կակազելով:

Կլուբ...նի...կա։

ԷՓԵՄԻԱ

Հա՛, զուրթ. վո՞ւրդի է։

ԴԻԳՈԼԻ

Ջճարեցի, ախչիկ-պարուն։

ԷՓԵՄԻԱ, թուշը վեր բերելով և սաստիկ նեղացած:

Վո՞ւյ, քոռանամ յիս։

ԳԻԳՈԼԻ

Վուր չկա, ի՞նչ անիմ։

ԷՓԵՄԻԱ, բարկանալով:

Գժվիլ ի՞ս, թե ի՛նչս ասում։ Էրեք իմ աճկով տեսա ու իմ բերնով կերա Դանդրումանինց տանը։ Ի՞նչ կոսե խալխը. նրանց տա՞ղն ըլի ու իմ տանը չէ՞։ Գնա՛, գնա՛, էս սահաթիս բա՛ղե բաղ նստի, դրո՛շկա բռնե ու

վուրդիոր ըլի հենց է՛ս սահաթիս էվետ ճարե, թե չէ էլ հոքով ու մարմնով ինձմեն չիս պրծնի... Ի՞նչ իս կանգնի, չիս իմանո՞ւմ, քիզ իմ ասում։

ԳԻԳՈԼԻ

Գնում իմ, գնում իմ, ախչիկ-պարուն։

Կարկանդակը դնում է զամբյուղը և կամենում է գնալ։

ԷՓԵՄԻԱ

*Գժվիլ ի՞ս, թե ի՛նչ ասու

է խոսվի. էտ պիրոժնին էլ տա՞ր, է՛։*

ԳԻԳՈԼԻ, կարկանդակը վերցնելով։

Տանում իմ, տանում, ախչիկ-պարուն... (Փնթփնթալով։) *Ցիս էլ չիմ իմանում, ինչ իմ անում։*

Շտապով դուրս է գնում դիմացի դռնից։

ՏԵՍԻԼ Գ

ԷՓԵՄԻԱ, ՍԱՄՍՈՆ

ՍԱՄՍՈՆ

Իստակ շշկլեցրիր, ախչիկ-պարուն։

ԷՓԵՄԻԱ, ճոնճերը կիտած այս ամբողջ տեսիլում։

Քիզ ո՞վ է հարցնում, էրնեկ գիդենամ. դուն տա՞ր էստունք կարքի բի ու չա՛լիշ արի ինձ չամանչեցնիս էսօր, Սամսոն, թե չէ, էլ ինձմեն չիս պրծնի։

ՍԱՄՍՈՆ

Դիփ լավ կուլի, ախչիկ-պարուն։

ԷՓԵՄԻԱ

Ինչ ասիլ իմ, լա՛վ միտդ պահե. դի՛փ լազաթով ըլի, ամեն բանը իր վուխտը մոդ գա. մե խոսկով՝ մա՛զը մազեմեն չանց կացնիս։

ՍԱՄՍՈՆ

Դի՛փ, դի՛փ, ախչիկ-պարուն։

ԷՓԵՄԻԱ

Ու դուն էլ է՛նենց հաքի, վուր դիփունանց ա՛ճկը վրեն մնա. սոսանի ատլաս արխալուխը, սիպտա չերքեզկեն, մաշեքը կարքով հիդ կու ծալիս, էրծրթե քամարը...

ՍԱՄՍՈՆ, խոսքը կտրելով։

Խանջալն էլ կապի՞մ, ախչիկ-պարուն...

ԷՓԵՄԻԱ, շարունակելով։

Բաս, քա՛, էնդուր խո չբախշեցի վուր զանդկումդ պահիս. խա՛նջալն էլ կապե ու (Ձախ ձեռքը աջ ուսից կրծքի վրա տանելով մինչև ձախ կողմը։) *սապիրիս ծամլեն էլ շինե՛։ Մե խոսկով՝ դիփունի մոդ լա՛զաթի էրևա, վուր դիփունքն ասին, վուր մարթ իս ու մարթու տանն իս ղուլուղ անում։*

ՍԱՄՍՈՆ

Վո՞ւր օրը լազաթով չիմ էլի, ախչիկ-պարուն։

ԷՓԵՄԻԱ

Քու գլխի պատուվիլը գիդենա, մեկ էլ հի՛մի իս լազաթով. աբա էտ ի՞նչ կարք է, լեվրելելո ման իս գալի։ Քա՛նի ջեր իմ քիզ ասի, վուր էտենց ինձ մոդ մի՛ տուն գա. օմքին տեսնե, ի՞նչ կոսե։ Չէ՞իր կանա դոշիտ կոճկնիրը կապի՞։ Լաքիեն պիտի լաքիա ըլի։ Աճկիրդ բա՛ց արա, էլի՛. տեսնում իս խալխի լաքիեքը վունց ին ժաժ գալի, դուն էլ է՛նենց ժաժ արի, էլի՛. նրանցմեն պակաս մարթու վուրթու մոդ ի՞ս, թե ինչ է։

ՍԱՄՍՈՆ

Ձեռիս բան ունիմ, ախչիկ-պարուն, խո տեսնում իս։

ԷՓԵՄԻԱ

Տուտուց-տուտուց մի՛ խոսի, ցիս քեզ ինչ ասում իմ, դուն ի՛մը լսե։ Մե խոսկով՝ իստակ կարքի, քաղաքավարի տուն ու դուս կոնիս. (Առանձին, կիսաձայն։) *Թո՛ղ տեսնին ու ճիկրվին...* (Սամսոնին։) *Մեկել լաքիերու աբով չթողնիս, փարվընի պես ման գու քաս սուփրի բոլորքը. մե տիղ իմքին մաշուր արիր թե չէ, է՛ն սհաթին դրստե... Բլուդնիրն էլ առչի գամն ինձ մոդ կու բերիլ տաս։*

ՍԱՄՍՈՆ

Ի՞նչ կոսին ղոնաղնիրն, ախչիկ-պարուն։

ԷՓԵՄԻԱ

Է՛յի... *Մոդեն դո՞ւն լավ գիդիս թե չիս. թո՛դ տեսնին ու սորվին։* (Մտածելով։) *Էլի ի՞նչ էի ուզում ասի...* (Մոռացել է)։ *Հա՛...* (Մի քանի քայլ գնալով։) *Դուն տա՛ր էտունք սիղավուրե ու տի՛ս մտեղ չգցիս ինչ ասի, հրա՛...*

Ցուցամատով սպառնում է նրան և շտապով դուրս գնում ձախ դռնից։

ՏԵՍԻԼ Գ

ՍԱՄՍՈՆ, մենակ։

Է՛ս հանգի էլ ախչիկ-պարո՛ւն. դաղդըղանի իմ էկի, էլի՛... էս կո՛ճակդ կապև, էս է՛սենց հաքի, էս է՛նենց ման արի. չիմ գիդի, թե ի՛նչ է ուզում ինձմեն... Փիե՛, դա՛վի է դրուստ, էլի՛... Տո՛, քիզ ի՞նչ, չիս խո իմ բանը չինում իմ։ (Լռություն։) *Օ՛հ, հո՛, հո՛, շատ ախչիկ-պարնիր իմ տեսի, շատ նրանց բույուր-միշնիր իմ լսի, ամա սա չափեմեն անց կացավ։ Մե տեր հարցնող ըլի, թե ո՞վ է, ո՞ւմ վուրթի է. իր հորանց տանն, ասում ին, շապիք չուներ հաքնելու... ու հիմի՝ փառասիրութենեմեն տրաքվում է։*

Ձեռքը ձեռքին է խփում։

ՏԵՍԻԼ Ե

ԱՐՈՒԹԻՆ, ՍԱՄՍՈՆ

ԱՐՈՒԹԻՆ, ճերս մտնելով դիմացի դռնից, գլխարկը ծածկած։

Ի՞նչ խաբար էր, ի՞նչ ձեն էկավ։

ՍԱՄՍՈՆ

Ֆունչիչ, ա՛ղա։

ԱՐՈՒԹԻՆ

Վո՞ւնց թե վունչիչ, իմ անգճովս իմացա. ո՞վ էր էստի։

ՍԱՄՍՈՆ

Օչով. ա՛ղա, ախչիկ-պարունն էր։

ԱՐՈՒԹԻՆ

Ախչիկ-պարունը՞... Ի՞նչ էր ասում։

ՍԱՄՍՈՆ

Ա՛յ, ա՛ղա, Գիգոլին էստունք էբի էս սահաթիս. էլի ինչի համա էլ ղրգից նրան ախչիկ-պարունն ու ինձ հրամայում էր, վուր էստունք սիղավուրիմ։

ԱՐՈՒԹԻՆ

Հա՛... Դե՛, տի՛ղավուրե, էլի՛. էլ ի՞նչ իս շինում։ Ինչի՞ր է էտի։

ՍԱՄՍՈՆ

Խմիչկ է, մրքեղեն է, զակուսկեք է։

ԱՐՈՒԹԻՆ, զամբյուղը գցելով։

Օ՛հ, օ՛հ, օ՛հ, օ՛հ, կոսիս շահ-զադի վուրթիք ունենանք մեծրած։ Դե՛, տա՛ր... (Սամսոնը կամենում է վերցնել զամբյուղը։) *Ի՞նչ իմ ասում. քա՞նի պրիբոր իս պատրաստում։*

ՍԱՄՍՈՆ

Ախչիկ-պարունը հրամայից, վուր դրուստ քսան ու չուրս պրիբոր ըլի դարսած, կոսե։

ԱՐՈՒԹԻՆ

Ախչկաս մոդ խո չղրգի՞ց քիզ։

ՍԱՄՍՈՆ

Չէ՛, ա՛ղա, վունչիչ չէ ասի։

ԱՐՈՒԹԻՆ

Բա՛ս էրկու պրիբոր էլ ավելցրո՛ւ ու էս սահաթիս գնա՛ ախչկաս էլ ու փեսիս էլ խնդրե, վուր շնուրհ բերին, ու իմ մագիներ կոսիս՝ թե չին գա, խիստ բեդամաղ կուլիմ, ասա՛... Դե՛, գնա՛ չուստ, բա՛նդ տիս, մի՛ ուշանա։

ՍԱՄՍՈՆ, վերցնելով զամբյուղը։

Է՛ս սահաթիս, ա՛ղա։

Դուրս է գնում աջ դռնից՝ մեջքը ծռած զամբյուղի ծանրությունից։

ԱՐՈՒԹԻՆ, մենակ, գլխարկը վեր առնելով և դնելով սեղանի վրա։

Սահաթի յի՛րիքին էլ ճաշ կուլի՞... Է՛հ, մա՛խլաս։ (Հայելումը ուղղվում է։) *Չէ՛, ջեր էլի լավն իմ... Ի՞նչս է պակաս. բրյիս շիմշատ է հենց գիդենաս, էրեսիս ոանկը, կոսիս, էարմիր գարթ ըլի, մաղնը էլ սիվ սաթ, ինչ անիմ թե ներկած է. ո՞վ ինչ գիդի՝ ի՞նչ խաբար է։* (Նստելով ընկուզմարանի վրա։) *Ջահել կնգա պես մարթու ջահելացնող վունչիչ չի ըլի աշխարքումս. մարթու տարին էլ, քեփն էլ գիպ կնգամեն է։ Օղորմած հոգի իմ առչի կնիկն էլ լավ աթմորթի էր, ամա բա՞նի լազաթը չէր գիդի։ Ինչի՞ նման էի էն չարիր. հիմի մարթ իմ երևում, ինչ մարթուն պիտի։ Շա՛տ ջահել ֆրանտ աղա էրնեկ կուլի տալի ինձ...* (Շապկի բեռնոցները տնտղելով։) *Փրա՛հ, սիպաս ձուն է՝, վո՞ւրդի էր էստունք...* (Հոգվոց հանելով։) *Ամա էս մե բանը կի լավ չէ լյում, վուր էզդաղա փուղիր է միսիլ տալի ինձ... յի՞ս վուր մե գրոշի համա հոգիս տալիս իմ... Փա՛ռք քիզ, աստուած, փա՛ռք... էս էլ հալբաթ քու դէրք է... Քե՛փ արա, քեփ արա, Փեփել, ու դուշմնի ա՛ճկը հանե։*

ՏԵՍԻԼ Է

ՆՈՒՆ, ԷՓԵՄԻԱ

ԷՓԵՄԻԱ, մտնելով ձախ դռնից։

Աբա՛ էս օ՞րենք է՝։

ԱՐՈՒԹԻՆ

Ի՞նչ է։

ԷՓԵՄԻԱ

Միթամ չի՞ս գիդի... Ո՞ւզում իս մե բաշ Բուլանա՞մ, խա՞յտառակ ըլիմ խալխումը՞։

ԱՐՈՒԹԻՆ

Ի՞նչ է, վա՛։

ԷՓԵՄԻԱ, շարունակելով։

Դի՞փունքը վրես ծիծաղի՞ն, մե մատը մի՞ղր դառնամ աշխարքումը՞։

ԱՐՈՒԹԻՆ

Տո՛, ախար, ի՞նչ է, մե ասա՛, է՝։

ԷՓԵՄԻԱ, սուտ լաց լինելով։

Է՞ս է քու օրթում հավատը, վուր ինձ սի՛բում ի՞ս։

Աչքերը սրբում է։

ԱՐՈՒԹԻՆ, ձայնը բաղցրացնելով և վեր կենալով տեղից։

Ախար, սատանա խո չիմ, մե խո՛սի, է՝։

ԷՓԵՄԻԱ

Էլ ի՞նչ խոսիմ, մե բանը մե ջեր կոսին, հազար ջեր խոմ չի՞ն ասի։

ԱՐՈՒԹԻՆ

Տե՛ր օղորմած աստուած։

ԷՓԵՄԻԱ

Ախար, փեսիտ ու ախչկատ վուր կանչում իս էստի, աբա ըլե՞լու բան է՝։

ԱՐՈՒԹԻՆ

Է՛, լա՛վ է, քու հո՛րն օղորմի Փեփել, ախար, քինթն էրեսեմեն վե՞ր գու քա՞։

ԷՓԵՄԻԱ

Ցիս ի՞նչ միղ ունիմ։

ԱՐՈՒԹԻՆ

Է՛հ, հակառակ իս։

ԷՓԵՄԻԱ

Ցի՞ս իմ հակառա՞կ... Ի՞նչ ասիս էրեսիս ասում է քու ախչիկը, վրես քինթը վիր է քաշում, մասխարա է գցում, ու հա՞կառակը յիս ի՞մ... Մե խոսկին տասը ջուղաբ է տալի, ի՞նչ շառիր ասիս վրես է մոգոնում, խուղի հիդ հավսրիլ է ինձ, ու հա՞կառակը յիս ի՞մ... Իմ մամեն, ասում է, էլ խիլք չունե, կոսե։

ԱՐՈՒԹԻՆ

Վա՛։

ԷՓԵՄԻԱ, շարունակելով։

Միթամ դիղիլ իմ քիզ, խիլքետ արիլ իմ, բուրթու պես վուրթենն ուզում իմ, էնթենն իմ գցում քիզ... վուխչ կայինքտ ուզում իմ զավթի յիս, ու հա՞կառակը յիս ի՞մ... Էլ կա՞նամ յիս նրանց էրեսը տեսնի՞. աթմորթին կու հա՞մփիրե էստո՞ւնք։

ԱՐՈՒԹԻՆ

Էլի դուն պիտի համբերես, հե՛ր օխնած, էս սահաթիս ծնող իս հիշվում նրանցը։

ԷՓԵՄԻԱ

Ցիս իմ ծնող հիշվո՞ւմ... Նրանց համա չիս ծնող կի չիմ, դո՞ւշման իմ, գե՞լ իմ, շո՞ւն իմ, կա՞տու իմ... (Լաց լինելով։) *Մի՛ վցիլ էր իմ օրը ու էս տուն վուտս տուն չէի գրի։ Ի՞նչ կանիմ էս փա՞ղքը, էս պա՞տիվը, էս շո՞ւրիրը, էս ա՞կնեղենները. թո՛ղ էլի իմ տանը ննգած էի էլի՝ քա՞ղցած, ծա՞րավ, հացի հասրաթ ու էս օրը չէի տեսի ցիս...*

Ընկնելով բազմոցի վրա լաց է լինում։

ԱՐՈՒԹԻՆ

Լա՞վ է, լա՛վ, Փեփել ջան. (Լացի ձայնով։) *սիրտս մի՛ պատոտի... ցիս էլ լավ գիդիմ ի՞նչ պտուղնիր ին. ամա ասում էի, միթամ խալխի խոսելու չդառնանք։*

ԷՓԵՄԻԱ

Խալխն ի՞նչ գուզե ասե. նրա խոսելու հիդ վուր մարթ ննգնի, ո՞ւր կէհա... Խալխն էն էլ է ասում, վուր հա՞շաքար իս միթամ, շա՞տ օմքնու իս զբնի միթամ. աբա էս ա՞վտալու է՞...

Վեր է կենում։

ԱՐՈՒԹԻՆ

Վքեա՞ ջառիր ին մոգանում...

ԷՓԵՄԻԱ, շարունակելով։

Վուր միթամ պա՞ռավ իս դուն...

ԱՐՈՒԹԻՆ, նեղանում է և հազում։

Հո՞ւ...

ԷՓԵՄԻԱ, շարունակելով։

Մի՛թամ մազիրդ ներկում իս...

ԱՐՈՒԹԻՆ, կրկին հազում է։

Հո՞ւ, հո՞ւ...

ԷՓԵՄԻԱ, շարունակելով։

Մի՛թամ ինձ խաբում իս։ Ի՞վ կու ասում. թո՛ղ խալխն ի՞նչ գուզե ասե։

ԱՐՈՒԹԻՆ, հազից խեղդվելով։

Խալխը տուտուց է, Փեփել. դուն չի՞ս գիդի վուր չեհել ի՞մ... Վո՞ւր չեհելը կուլի ինձ վրա զոչաղ։

ԷՓԵՄԻԱ

Աբա՛, ցիս վո՞ւր մեկին հասկացնիմ։

ԱՐՈՒԹԻՆ

Տո՛, դուն էն սարսաղներուն ասա՛, վուր պատավ զոչադը լավ է։ կանց չեհել դամբլեն։ (Իր մազերը բռնելով և գլուխը մոտ տանելով։) *Աբա՛, էս նե՞րկած է՞։*

ԷՓԵՄԻԱ, Աբուրիկի գլուխը բռնելով և ծպտալով։

Դուշմանը շատ բան կոսե, Արտուշկա ջան։ (Համբուրելով գլուխը։) *Մա՞նուշակի հոտ է գալի՞։*

ԱՐՈՒԹԻՆ, փաթաթվելով։

Ա՛յ, կուդիան, քու մե պաչը մի թաքավորությունն ատեր։ (Քայլելով։) *Ղուրթ վուր խիլքեմեա հանում իս. ի՞նչ ասիս վուր քու խոսկը չկատարիմ։*

ԷՓԵՄԻԱ

Բաս չի՞նք կանչում, էլի՞։

ԱՐՈՒԹԻՆ

Ո՞ւմը։

ԷՓԵՄԻԱ

Փեսիտ ու ախչկատ։

ԱՐՈՒԹԻՆ

Է՛հ...

ԷՓԵՄԻԱ, սուտ լաց լինելով։

Ա՛փսուս իմ գլուխ։

ԱՐՈՒԹԻՆ, բաղձալի։

Լա՞վ է, լա՛վ, քու ջեգին ըլի։

ԷՓԵՄԻԱ, փաթաթվելով։

Իմ սի՛րուն, իմ խո՛խոբ, իմ ջե՛յրան, իմ ա՛կռավ...

ԱՐՈՒԹԻՆ

Ակռա՞վ... վա՛հ, էտ լա՞վ էր։

ԷՓԵՄԻԱ, ծիծաղելով։

Վո՛ւյ, քոռանամ յիս. ուզում էի ասի, իմ ա՛ղունակ։

ԱՐՈՒԹԻՆ

Հա՛, աղունակը լավ է։

ԷՓԵՄԻԱ, փաթաթվելով։

Բաս ի՞նչ իս, վուր աղունակ չիս։

ԱՐՈՒԹԻՆ

Ցիրիշս էլ կուլի նման աղունակինը... Աղունակն էլ դուն իս, Փեփել, (Փաթաթվելով։) *վա՛րթն էլ ու մանուշակն էլ։*

ԷՓԵՄԻԱ

Ցիս վարթ իմ ու դուն էլ բլբուլ, Արտուշկա ջան։

ԱՐՈՒԹԻՆ

Հա՛, գթա՛ր. դուն վարթ իս ու յիս էլ բլբուլ. խիստ իմ սազ գալի։ (Էփեմիայի թշին մատով խփում է և թիվ։) *«Կոկոբո վարդո, ար դամագդո, վար մոնա շենի։»*

ԷՓԵՄԻԱ, նույնպես թիվ։

«Պիրզեդ գաքվս խալի, շավ. շավի թվալի, տուրփաթ մշվենի շեն։»

ԱՐՈՒԹԻՆ

Վա՜հ, հե՛ր օխնած, ասում իս, ասա՛, վուր ջանումս նստի, է՛։

ԷՓԵՄԻԱ

Է՛հ, բա՞ դրոս է, էրնեկ գիդենամ, աշխարքի բան ունիմ։

ԱՐՈՒԹԻՆ

Գեթաղվա, Փեփել ջան։

ԷՓԵՄԻԱ

Ո՛ւհ, քիմեն խում չիմ պրծնի ու, հրա՛։ (Երգում է Արութինին շողոքորթելով)։

«Կոկոբո վարդո, ար դամագդո, վար մոնա շենի,
Պիրզեդ գաքվս խալի, շավ շավի թվալի։
*Նախվա մսուրս շենի։»** (Եվ այլն։)

ԱՐՈՒԹԻՆ

Օ՜հ, քու հո՜քուն մեռնիմ, Փեփել ջան... (Գրկում համբուրում է։) *Սաղ աշխարքը շուռ կու տաս դուն...*

ԷՓԵՄԻԱ

Գիդիս ի՞նչ ասիմ, Արտուշկա ջան... (Ձեռքը դնելով Արութինի ուսի վրա։) *Միր հալիլեքն է՛լ պետկը չէ, մոդեն անց է կացի. մե տիզ տեսիլ իմ, ջուխտը քառասուն ու հինգ թուման ին ասում...* (Արութինը, առանձին, դեմքը ծամածռում է։) *Ուզում էի բեհը տա, ամա առանց քի հարցնելու գաբեդվա չարի։*

ԱՐՈՒԹԻՆ, Էփեմիայի թշին ձեռք տալով։

Շա՜տ օյինբազն իս։

ԷՓԵՄԻԱ

Գե՛թաղվա, Արտուշկա ջան։

ԱՐՈՒԹԻՆ, մտածելով և բարձր։

Քառասուն ու հինգ թուման...

ԷՓԵՄԻԱ

Էն շենքի իմքինը բաս պա՞կաս կուլի՜, քա՜։

ԱՐՈՒԹԻՆ

Էնդու վրա հիմի քիչ ցածրն ըլի, ի՞նչ հաջաթ։

ԷՓԵՄԻԱ

Աբա՜, վի՞ս էկադրեբա. էնդու վրա ցածրը խում միրիրն է... ամա վուր պետկը չէ... խալը գիդենա, ամանչում իմ, վուր էրեսս մեչը տեսնում իմ։

---

* Վրացերեն է.

Կոկոն իմ վարդիկ, մի՛ թողնիր ինձ, քո սորուկն եմ ես։
Երեսիդ ունիս՝ խալ, սև-սև աչեր, տեսիդ կարոտ եմ ես։

ԱՐՈՒԹԻՆ

Տո՛, հոքիս հանեցիր խոմ... դիփ սակն ու վրա արիր էզանցորեն։ Ախար՝ էս զալեն պետկը չէ... էս մեբիլը պետկը չէ... էս զանավեսկեքն լ՚սենց չէ... էս գդա՛կդ փոխե... էա դեմիկիտոնի մագիեր պլա՛տնո հաքի...

ԷՓԵՄԻԱ, փաթաթվելով։

Թե ինձ կու սիրիս, Ա՛րտուշկա ջան։

ԱՐՈՒԹԻՆ

Քիզ վուր չիմ սիրի, բաս ո՞ւմն իմ սիրում... (Փոքր լռությունից հետո)։ *Ամա դուն էլ դուրթ խի՞ստ իս սիրում ինձ, Փեփե՛լ։*

ԷՓԵՄԻԱ

Զարթնի քեզ ո՞վ ունիմ աշխարքումը. իմ հոքին ու մարմինը դուն իս, իմ շունչն ու կենթանութինը դուն իս։

ԱՐՈՒԹԻՆ

Օ՞չով աճկումդ չէ գալի՛։

ԷՓԵՄԻԱ

Աբա՛, մի՞խկ չէ, Արտուշկա ջա՛ն, ի՞նչս ասում. ախչիկը քի պես մարթ ունենա ու նրա աճկումն էլի օ՞մքին գու քա աշխարքումը։

ԱՐՈՒԹԻՆ

Բե՛րիլ տու, բե՛րիլ տու հալիլեքը, (Համբուրելով։) *գենացվալե՛ սուլշի։*

ԷՓԵՄԻԱ, փաթաթվելով։

Աբա՛, ո՞վ կանա ասի, վուր դուն գուփող ու գլլող իս։

Արութինի փողպաան ու շապիկը ուղղում է։

ԱՐՈՒԹԻՆ

Խբատ իա ֆրանտացնում, ամա քու կարմքը բանտի պես չի ըլի, Փեփել։

ԷՓԵՄԻԱ, շարունակելով։

Մո՛ւլափ։ (Ավարտելով գործը, փոքր ինչ հեռանում է Արութինից և այնպես նայում նրան։) *Աբա՛, վո՞ւր ֆրանտը կույի քի պես։*

ՏԵՍԻԼ Ը

ԵՐԱՆՔ, ԳԻԳՈՒԼԻ

ԳԻԳՈՒԼԻ, ներս մտնելով դիմացի դռնից՝ գլխարկը կոճատակին, մեկ ձեռքին փոքրիկ զամբյուղով ելակ, կաճանչ տերևներով ծածկված, մյուս ձեռքին թղթով կարկանդակ։

Ա՛յ, ճարեցի, ախչիկ-պարուն. ամա էլի կակլի տու չէ կլուբնիկեն։ Թեգուզ սպանե՛, էլ էստու վրա մինձ չի ըլի, կոսե։

ԷՓԵՄԻԱ, տնտղելով ելակը։

Ա՛յ, հենց էս էի ասում։

ԳԻԳՈՒԼԻ, ուրախ։

Հենց էն է դրոշկեն ուզում էի բռնի, տեսնիմ մե կինտո վուրդիոր ճարիլ էր։ Ախար, առուտեհան էլ օչով չթողի, դիփունանցն ասի։

ԷՓԵՄԻԱ, շարաճալով։

Ա՜խ, Գիգոլի, քու բեդասլութինը խոմ ինձ իստակ սպանում է։ աբա՛, վո՞ւր օրն իմ յիս ֆինտոիմեն իմքին առի, վուր հիմի էս էլ իս մոգոնի. չէ՞իր կանա դուն ինքդ գնա բաղը՛։

ԳԻԳՈՒԼԻ, շփոթված։

Ախչի՛կ... պարուն...

ԱՐՈՒԹԻՆ, էփեմիայինն։

Վա՛, հեր օխնած, էլի բաղի կուլի. ախար, կինտոն ինքը խո չէ՞ շինում։

ԷՓԵՄԻԱ

Աբա՛, վի՞ս էկադրեքա. նրանց կիխտուտ ձեռնիրը, (Զգվանքով։) *թը՛, թը՛, թը՛, թը՛... Վա՛յ, վուր զոնաղնիրը պիտի գան հորես, թե չէ է՛ս սհաթիս ակոշկեն կոծեի դիփ մետի...* (Գրկելով Գիգոլուն։) *Թերի՞շ, էտի՞նչ է։*

[illegible]

Էս էլ պիրոշկեքն է. փոխանցի։

ԷՓԵՄԻԱ

Հա՛, (Զննելով [illegible], [illegible]։) *Ամ՛ամոն, Ամ՛ամոն։*

ԱՐՈՒԹԻՆ, Գիգոլու ձեռքում ելակը տնտղելով։

Գնա՛ ու գնա՛, Փեփել, խիստ թագեն է, կոսիս ձեռով չէ քաղած։ (Մեկ հատ ելակ բերանն է գցում և ծամելով։) *Լա՛վն է. իմ մամա կիրակուն էլ առանց էս յոլա չէր գնում։*

ԳԻԳՈԼԻ

Էլ խո բան չո՞ւնիք, ախչիկ-պարուն։

Աջ դռնից մտնում է Սամսոնը արիալոխի կոծի կոճակները դուրս բաց, ինչպես առաջ։

ՏԵՍԻԼ Թ

ՆՈՒԱՆՔ, սկզբում նաև ՍԱՄՍՈՆ

ԷՓԵՄԻԱ, Գիգոլուն։

Բա՛ս բան չունի՞մ... Մո՛ւլափ էստի։ (Սամսոնին։) *Էս կլուբնիկը տա՛ր սարդափն ու էս պիրոժնին էլ վազերումը լա՛վ բաբաթ շինեն։* (Սամսոնը վերցնում է։) *Է՛լի դոշիտ կոճկնիրը բաց տուն էկար ինձ մո՞դ։ Աստուծ գիդենա, վիրչի գամն իմ ասում, թե մեկ էլ տեսիլ իմ քեզ էտենց, էլ մե՛ սահաթ չիմ պահի քիզ։*

ԳԻԳՈԼԻ, առանձին, գլուխը շարժելով։

Օ՛հ, օ՛հ, օ՛հ, կրա՛կի կտուր է՞։

ՍԱՄՍՈՆ

Բանումն էի, ախչիկ-պարուն։

ԷՓԵՄԻԱ, բարկանալով։

Ջո՛ղաբ էլ է տալի (Առուրիինին։) *Աբա՛, պահելու է՞։*

Գիգոլին, առանձին, թափ է տալիս օձիքը։

ԱՐՈՒԹԻՆ, Սամսոնին սպառնալով։

Հը՛ա, մո՛ղայիթ կաց... Դե՛, գնա՛ բանիտ, էլ ի՞նչ իս էտի կանգնի։ (Սամսոնը գլուխը շարժելով դուրս է գնում աջ դռնից, զամբյուղն ու կարկանդակը ձեռքին։ Հետո էփեմիային, ցածր։) *Ախար, ձեռին բան ունե խիղճը, տեսնում իս քրտնքումը ծլծլում է. բա՞ս էմարթլեքի։*

ԷՓԵՄԻԱ, շարունակելով։

Չէ՛, խիստ է խարաբ ըլում, ախար, է՞։ Էսօր դոշը բաց տուն էկավ, էքուց առանց արիալուխ կու տուն գա։ Բչի համարցակութինը վի՞ս էկադրեբա։ Մե-մե ախչիկ-պարուն էլ կա, իրանց բչի հիդ մասլահաթնիր ին անում. խո գի՛դիս չիս էս հանգի բանիր չիմ սիրի։ Լաքիեն պիտի լաքիտ ըլի։

ԱՐՈՒԹԻՆ

Լա՛վ է, լավ, էս մեկը բախշե՛. չիս կու խրատիմ իրան։ (Առանձին։) *Բախտավոր մարթ իմ, չիս ու իմ հոքին...* (Գնալով ձեռքերը ետեր դարսած և ճամբիշը ձեռին, կես ճանապարհից կիսաձայն երգում է։)

«Պիրզեդ դաքվս խալի, շավ շավի թվալի,
Նախվա մսուրս շենի։»

Դուրս է գնում ձախ դռնից։

ՏԵՍԻԼ Ժ

ԷՓԵՄԻԱ, ԳԻԳՈԼԻ

ԷՓԵՄԻԱ

Չէ՛, մե հենց ասլրիս, Գիգոլի. հասկացրո՛ւ էն լպստածին, վուր քաղաքավարի կենա. իմանում ի՞ս, ի՞նչ իմ ասում։

ԳԻԳՈԼԻ

Իմանում իմ, իմանում, ախչիկ-պարուն, (Գլուխը հետ գցելով։) *բա՛ս չիմ իմանո՞ւմ։ Ուրիշ ի՞նչ էիր հրամայում։*

ԷՓԵՄԻԱ

Ա՛յ, Գիգոլի, է՛ս սահաթիս գնա, Թաղլիթինց մաղազինումը հալիլեք իմ տեսի, չուխտը քառասուն ու հինգ թուման ին ասում, հենց է՛ս սհաթիս էվետ վազեցնիլ տու. թեզուղ չո՛ւրս մշակ բռնե, էգեբա ինչրու զոնաղներու գալը վրա հասցնինք։

ԳԻԳՈԼԻ

Է՛ս սհաթիս, ախչիկ-պարուն. ամա աղեն ասիլ է՞։

ԷՓԵՄԻԱ, բարկացած։

Հիմի դո՛ւռ աղեն յիս իմ, հրամայում իմ, էլի՜։ Դրսից աղմուկ է լսվում։

ԳԻԳՈԼԻ

Է՛ս սհաթիս, է՛ս սհաթիս, ախչիկ-պարուն։

Դիմացի դռան մոտ դրսից լսվում է ՍԱՄՍՈՆԻ ձայնը՝ *Կա՛ցի, գնամ ասիմ, է՜...* ՊԵՊՈՅԻ ձայնը՝ *Կա՛ցի-մացի չիմ գիդի, թո՛ղ, թե չէ, էս սահաթիս...*

ՏԵՍԻԼ ԺԱ

ՆՐԱՆՔ, ՊԵՊՈ

ՊԵՊՈ, ներս մտնելով դիմացի դռնից, գլխարկը ծռած և զարդի հագուստով։

Փի՜ե....

Գլուխ է տալիս։

ԷՓԵՄԻԱ

Ի՞նչ իս ուզում. ո՞վ իս։

ՊԵՊՈ

Ո՛վ ի՜մ. ղոնաղ իմ, վա՜։

ԷՓԵՄԻԱ

Դո՞ւն՝ միր ղոնա՞ղ։

ՊԵՊՈ

Հե՛նց յիս։

ԷՓԵՄԻԱ, ձիկա տալով։

Աա՜... Օտկեցե՛ք, օտկեցե՛ք, ո՞վ է քրիստոնա։

Դուրս է վազում ծախ դռնից։

ՏԵՍԻԼ ԺԲ

ՊԵՊՈ, ԳԻԳՈԼԻ

ՊԵՊՈ, առաջ գալով, առանձին։

Ա՛յ, քնթեմեն դատ գա էն հացը, ինչ մարթ ձեր հացն ուտե, հրա՜։

ԳԻԳՈԼԻ

Ի՞նչ իս ուզում, ախպեր, ի՞նչ բան ունիս։

ՊԵՊՈ

Հալբաթ բան ունիմ, վուր էկիլ իմ, էլի՜, վա՜։

ԳԻԳՈԼԻ

Ջի ըլի՞, վուր մինք էլ իմանանք։

ՊԵՊՈ

Ի՞նչ կու ավելանա քիզ. դուն գնա՛ աղա Արութինին իմաց արա, վուր յիս էստի իմ։

ԳԻԳՈԼԻ

Ախար, դուն ո՞վ իս։

ՊԵՊՈ

Յիս... (Նստելով ըձկողմարանի վրա։) *յիս իմ։*

ԳԻԳՈԼԻ

Վա՜...

ՏԵՍԻԼ ԺԳ

ՆՐԱՆՔ, ԱՐՈՒԹԻՆ

ԱՐՈՒԹԻՆ, ներս վազելով ձախ դռնից։

Ի՞նչ խաբար է, ի՞նչ խաբար։

Տեսնելով Պեպոյին, մնում է սառած։

ՊԵՊՈ, վեր կենալով տեղից, գլխարկը վեր է առնում և գլուխ տալիս։

Բա՛րի աչողում, ա՛ղա Արութին։

ԱՐՈՒԹԻՆ, Գիգոյուն, ցածր։

Դուն գնա՛ բանդ տիս։

ԳԻԳՈԼԻ, առանձին։

Ղո՛ւրթ, հալիլեքը։

Դուրս է վազում դիմացի դռնից։

ՊԵՊՈ, ԱՐՈՒԹԻՆ

ԱՐՈՒԹԻՆ

Հը, ո՞ւր իս էկի, ախպեր։

ՊԵՊՈ

Ա՛յ, համեցե՛ք, նստի՛։

Ինքը մոտ քաշելով մի աթոռ, նստում է։

ԱՐՈՒԹԻՆ, նստելով ընկողմարանի վրա, առանձին։

Իմ տանը սա է մոհբաթ անում ինձ։ (Պեպոյին)։ *Ախար, էս չախն ո՞ւր իս էկի։*

ՊԵՊՈ

Կուշտը քաղցածին ի՞նչ է հարցնում... Բողազս մի՛ դուս կտրի, ա՛ղա Արութին. թե էս սհաթիս չիս տա, վարցկ կոնիս, վուր ինձ սպանիս էստի էվետ։

ԱՐՈՒԹԻՆ

Թե իմքին պարտ իմ, ախպեր, բա՞ս գեմարթլիքի։ Ո՞ւմ փուղն իմ կերի, վուր քու փուղն ուտիմ... Ինչոր բարաթ էիր ասում... Գթա՞ր, բերիլ ի՞ս։

ՊԵՊՈ, առանձին, կրծքին խփելով։

Ը՞մ... (Բարձր։) *Բա՛ռաթը չկա, խո գի՛դիս. դուն քու դավթրներումը գթա՞ր թե չէ։*

ԱՐՈՒԹԻՆ

Իմ դավթրներումը շատ պտռտեցի, հա՛խ աստծու, ամա մե ասո էլ չգթա ձիզ համա։

ՊԵՊՈ

Բաս ի՞նչ անինք հիմի։

ԱՐՈՒԹԻՆ

Ի՞նչ պիտի անինք. դուն քիզ համա, յիս ինձ համա։

Գրպանից հանում է սաթե համրիչը և զցում։

ՊԵՊՈ

Վո՞ւնց թե՝ դուն քիզ համա, յիս ինձ համա։ Բաս քու մտկումը պա՞ռտ չիս ի՞նձ։

ԱՐՈՒԹԻՆ,

Ախպեր, ի՞նչ պիտի պարտենամ. բարա՛թ դուն չունիս, դա՛վթրրումդ յիս վունչիչ չունիմ գրած, ի՞նչ պիտի պարտենամ քիզ։

ՊԵՊՈ

Բաս քու սրտի դավթրրումն էլ վո՞ւնչիչ չկա գրա՞ծ։

ԱՐՈՒԹԻՆ

Սրտի դավթարը վո՞ւրն է։

ՊԵՊՈ

Բաս քու խճպտանքը վո՞ւնչիչ չէ ասում քիզ, է՛լի. խո գի՛դիս, վուր պարտ իս։

ԱՐՈՒԹԻՆ

Վուր գիդենամ խո կու տամ, էլի՛. էլ ո՞ւր իմ խոսեցնում։

ՊԵՊՈ

Բաս Գիքոն ո՞ւր է ասում... Նրա հալալութինը դիփունքը գիդին։

ԱՐՈՒԹԻՆ

*«Մելամ», ասում է, «Թավիսի կուդի մոիղվանա մոծամեթ։»**

ՊԵՊՈ

Ադա Արութին, վերիվը խո աստուձ կա՝ ու քու սիրտն էլ է կարթում, իմ սիրտն էլ, ա՛րի աստձեմեն ձեռը մի՛ վիկալնի։

ԱՐՈՒԹԻՆ

Ի՞նչ շառիր իս մոգոնում գլխիս, ախպեր. օմքին լսե, հենց կու գիդենա դուրթ իս ասում։

ՊԵՊՈ

Դուն գի՛դիս վուր դուրթ իմ ասում։ Քու վուրթկերանց արիվ սադաղա խղճա՛ միզ։ Էտ փուղը յիս ինձ համա չիմ ուզում...

ԱՐՈՒԹԻՆ, խոսքը կտրելով։

Տե՛ր օղորմած աստուձ։

---

* Վրացերեն է—*Աղվեսն իր պոչը բերեց վկա։*

ՊԵՊՈ, շարունակելով։

Մո՛ւլափ, մո՛ւլափ, ինչրու վիրչն ա՛նգամ դի. էտ փուղով իմ քուրը նշնած է, խոստացիլ ինք, պիտինք տա, ու թե էս սահաթիս չտվի՛նք, քվիրս թո՛ղնում ին, ո՛ւրիշ ախչիկ ին ուզում էս գիշիր։ Ախար, մե աստղու այաղ դադաստանը մի՛տդ բի, է՛... խո քիզ էլ կու խոսեցնին էնդի, ինձ էլ. ի՞նչ ջուղաբ կու տաս, վուր չիս տալի։

ԱՐՈՒԹԻՆ,

Փի՛ե... (Մտածմունքի մեջ է ընկնում։) *Այաղ դադաստանը գիդենա վուր դրուստ միտս չէ էտ պարտկը։*

ՊԵՊՈ

Յիս ասում իմ դրուստն, էլի՛. ինձ չիս ավտո՞մ։

ԱՐՈՒԹԻՆ

Վա՛, էտ վո՞ւնց կուլի, Պեպան. ամեն մարթ վուր գա ու էտենց խոսի, տասը միլիոն էլ վուր ուններամ, մե օրումը կու հատնի։ Չէ՛, ախպեր, մեր առուտրի հեսաբը էտենց չէ։

ՊԵՊՈ, վեր կենալով տեղից և գլխարկը ծածկելով։

Բաս չի՛ս տալի, էլի՛։

ԱՐՈՒԹԻՆ.

Պարտկով կի վունչիչ տալացու չիմ, ախպեր. ամա քուր իս մարթու տալի՛, ջո՛ւմատ աճկիս։ (Մոցից հանում է պորտմոնեն։) *Ըա՛հա,* (Թղթադրամ տալով։) *վարցկ բան է, բռնե՛, ախպեր։*

ՊԵՊՈ, գլխարկը վեր առնելով, գլուխ է տալիս։

Ա՛յ, աստուած վուրթիքդ ղորացնե՛։

Առնում է փողը։

ԱՐՈՒԹԻՆ

Է՛տ հինգ թումա՞ն... համբրե՛, (Պեպոն զուսնավում է։) *դրուստ հինգ թուման է... հինգ թուման էլ, դուքնովս ա՛նց կացի, էնդի կու տան. էս սահաթիս օմքին կու ղրգիմ։ Գնա՛, ախպեր, աստուած բարի վայելումը տա։*

ՊԵՊՈ, փողին հայելով և շփոթված։

Հի՛նգ թուման ու հինգ թուման՞... (Լուրյուն, հետո գլխարկը ծածկելով։) Մնա՞ցածը... Ախար, իմ քվիր համա հարուր թուման ինք խոստացի։

ԱՐՈՒԹԻՆ,

Ցիս ի՞նչ անիմ, վուր խոստացիլ իք. բեհեստաբ նամաղուլ իք արի, վուր խոստացիլ իք. ո՞ւմ փուղն էիք խոստանում, վուր խոստացիլ իք։ Մարթ իր լեհբի գորա կու ձքե վո՞ւտը թե չէ։ Դուք էլ վուր հարուր-հարուր թումնիր իք խոստանո՞ւմ, ուրիշն ի՞նչ անե։ Էսի՞նչ խարաբ էլալ աշխարքն, օշովու համա շափս ու ձիվ չկա։

ՊԵՊՈ

Միր բանը մինք գիդինք, պարուն, ձիր բանը դուք. խոստացիլ ի՞ք, ձիր փուղն ինք խոստացի, քիզ ինչ դաքի։

ԱՐՈՒԹԻՆ

Խոստացիլ իս ու տար ի՛րան տու, է՛լի. էլ ի՞նչ իս ուզում։

ՊԵՊՈ

Ի՞ս տու, վուր տամ, է՛. ախար. էս վուր տաքիս խս, մասխարա չա գցո՞ւմ, թե ի՞նչ խարաբ է։

ԱՐՈՒԹԻՆ

Ա՛յի ու սրապեանորուն գա՛ղցկ արա։ Տո՛, ինչո՞վ չիս իմանում, վուշ վունչիչ պարտ չիմ յիս ձիզ ու էտ էլ ինչոր տալիս իմ, հոքուս համա բաշշում իմ։

ՊԵՊՈ

Բա՛խշում ի՞ս... Դանա յիս ա՞խկատ իմ, եկել իմ օ՛զարմաթին իմ ուզում քիմե՛ն. յիս իմ հա՛խն իմ ուզում, իմ հա՛խը. ի՞նչ կանիմ յիս քու բախշիշը։

ԱՐՈՒԹԻՆ

Ջիս ուզի ու է՛ստի տու, ինձ պետկը գու քա։ Ախկատ ու հմպարտ, վուր կոսիմ, էս է, ա՛յ։ Բի՛, էլի՛, բի՛. ի՞նչ իս թամաշա անում։

ՊԵՊՈ

Բաս թուման չի՛ս տալի, էլի՛։

ԱՐՈՒԹԻՆ.

Տո՛, գժվել ի՞ս, թե ինչ խաբար է. ի՞նչ իս ուզում խնամեն։ Ջոռավ ոգ՛րտկ կուլի աշխարքումը՝ չլինքս՞ իս գցո՞ւմ։

ՊԵՊՈ, առաջ գնալով:

Աբա օ՛րթում կի թե պարտ չիս, օ՛րթում կի, էլի՛. մա՛րթ կուլիս՝ օրթում կուտիս։

ԱՐՈՒԹԻՆ

Օ՛րթում, հա՛վատ, ա՛ստուծ, (Պեպոն զարհուրանք է արտահայտում:) *յի՛րգինք, իմ վո՛ւրթկերանց արիվը գիդենա, վուր վունչիչ պարտ չիմ...*

ՊԵՊՈ, զայրացած:

Ա՛յ, աստուծ ու յիրգինք խռով կենա գլխիտ։ (Խփելով փողը Արութինի երեսին:) *Հը՛, բռնե՛, ա՛ճկդ դի, կնգատ համա իմքին կունենաս առնելու։*

ԱՐՈՒԹԻՆ, այաղակելով և տեղից վեր թռչելով:

Օտկեցե՛ք, ղարաո՛ւլ. սպանեցին, մորթեցին... Ո՞վ կաք էտի...

Ներս են թափվում՝ ձախ դռնից էփեմիան, աջ դռնից Սամսոնը, հագնված և զարդարված, ինչպես պատվիրել էր էփեմիան երեռոդ տեսիլում, իսկ դիմացի դռնից երկու այլ ծառա ֆրակով և սպիտակ ձեռնոցներով: Պատկեր։

ՏԵՍԻԼ ԺԵ

Նրանք, ԷՓԵՄԻԱ, ՍԱՄՍՈՆ, երկու այլ ծառա

ՊԵՊՈ, ձախ ձեռքով ցույց տալով ծառաների վրա։

Է՞ս է քու մարթուԹինն, էլի՛... (Երկաք լռություն:) *Ա՛յ, հա՛ռամ ըլի քիզ քու հարստուԹինը։*

ԱՐՈՒԹԻՆ, սաստիկ շփոթված, ծառաներին։

Տո՛, օտկեցե՛ք, է՛. ի՞նչ իք թամաշա անում. տեսնում իք՝ ուզում է սպանի ինձ։

Սամսոնը և ծառաները մոտենում են Պեպոյին։

ՊԵՊՈ, ծառաներին մղելով:

Մո՛ւլափ, դե՛նը... (Արութինին:) *Էս օսկե պատիրը վուր սարքիլ իս, ո՞ւմ փուղով... Հազար ինձ պեսներուն, թա՛ղնիլ իս, գա՞նա. քար ու կիրը մեր ա՛ռնով իս շաղըղի, գա՞նա. դիփունանց աճկիրը աբլանդվա իս արի ու հիմի ծանդր ու բարակ քիզ համա նստած քե՛փ իս անում, է՛լի։*

ԷՓԵՄԻԱ

Դո՛ւս արեք, դո՛ւս արեք։

ԱՐՈՒԹԻՆ

Դո՛ւս, դո՛ւս ասում իմ։ (Ծառաներին:) *Դո՛ւս արեք. չիք իմանո՞ւմ։*

Ծառաները հարձակվում են Պեպոյի վրա:

ՊԵՊՈ

Դո՞ւս... (Ծառաներին նորից մղելով:) *Դե՛նը, դե՛նը։* (Ծառաները փոքր ինչ հեռանալով, կանգնում են դիմացի դռան առաջ: Արութինին:) *Փուղիրս հաշա իս ուտում, ու դո՛ւս էլ իս անում, է՛լի..* (Լռություն:) *Դո՛ւս կէհամ, դո՛ւս կէհամ. չարես ի՞նչ է, զորը քունն է, տերը դուն իս էստի... Ամա լավ գիդացի, պարուն Արութին, էս արարմունքը քիզ չի մնա... վերիվն աստուծ կա, քնթեմետ կու հանե քու անօրենուԹինը...* (Ծառաներին նրելով:) *Դե՛նը, դե՛նը...*

Դուրս է գնում դիմացի դռնից:

ԱՐՈՒԹԻՆ, Պեպոյի ետևից, ծառաներին:

Գնացե՛ք, գնացե՛ք հիդը, վունչիչ չտանե, վունչիչ չփախցնե։

Ծառաները դուրս են վազում Պեպոյի ետևից:

ՏԵՍԻԼ ԺԶ

ԱՐՈՒԹԻՆ, ԷՓԵՄԻԱ

ԱՐՈՒԹԻՆ

Է՛սենց էլ լպստա՞ծ։

Կռանում է և փողերը հավաքում:

ԷՓԵՄԻԱ

Գի՞ժ է էն մարթը, թե էս ի՞նչ խաբար է... էլախտ էլ էնենց վախեցրուց։

ԱՐՈՒԹԻՆ, փողերը ծոցը դնելով:

Արի՛ ու սրապեսներուն վա՛ղցկ արա հիմի։

ԷՓԵՄԻԱ

Էս ի՞նչ բան է, ախար, չի՛ս ասի՞։

ԱՐՈՒԹԻՆ

Աստուած վո՛ւշ գիդե նրա գլուխը. քուր իմ մարթու տալի, կոսե. յիս ի՞նչ անիմ վուր մարթու է տալի։

ԷՓԵՄԻԱ

Բաս էն ինչ էր ասում, թե փուղիրս հաշա իս ուտում, կոսե։

ԱՐՈՒԹԻՆ

Վաբա՛, քիմեն չիմ արմրնում, էփեմիա՛. փո՛ւղ հաշա ուտիմ ու էն էլ նրա՛ պես մարթունը՛, չի՛ս ճանչնում ի՞նձ։

ԷՓԵՄԻԱ

Էտ փուղիրը վուր ծո՛ւցդ դրիր, նրա՞նը չէր բա՛ս։

ԱՐՈՒԹԻՆ

Նրա հո՛րն օղորմի, վուխչ իմ կայինքն էլ նրանը կուլի, բա՛ս... էկա՛վ, թե խիղճ մարթ իմ, կոսե, քվիրս համա բաժինք չունիմ, կոսե, քու վուրթ-կերանց արիվ սաղաղա օտկե՛ միզ, կոսե. յիս էլ ա՛խմախ-ախմախ հանեցի ու բախշեցի (նեղանալով:) Շնորհակալութենի մագիերն է՞ր, վի-կալավ ու ճակտիս խփից. քի՛չ է, կոսե։

ԷՓԵՄԻԱ, թուշը վեր բերելով:

Վո՛ւյ, քոռանամ յիս, զո՞ւրթ իս ասում, Արութին ջա՛ն։

ԱՐՈՒԹԻՆ

Բաս սո՛ւտ իմ ասո՛ւմ։

ԷՓԵՄԻԱ, չարացած:

Քու հա՛խն է, խիստ լավ էլ է արի՛... էտ էն գիդենա, վուր ժամեմեն դուս գալիս, հարուր ախկատ էլ վուրչլի դռանը, դիփունանց ձեռին՝ (Գոր-ծողությամբ ցույց տալով:) *«բռնե՛, բռնե՛, բռնե՛»... Իժում է՞տենց կու թողնիս էտ անբատվութինը՛։*

ԱՐՈՒԹԻՆ

Ի՞նչ պիտի անիմ։

ԷՓԵՄԻԱ

Աշխրքի լափը գլուխտ ածալ...

ԱՐՈՒԹԻՆ

Ի՞նչ անիմ։

ԷՓԵՄԻԱ

Վո՛ւյ, քոռանամ յիս. էլ բան չմնաց, վուր քիզ չասավ, ու էնղադա բեաբուութինը դուն կուտի՞ս։ Ի՞նչ կոսին խալխը։

ԱՐՈՒԹԻՆ

Խալխն ի՞նչ գիդե, գլուխը քարը տա. թո՛ղ, խիղճ մարթ է։

ԷՓԵՄԻԱ

Վո՞նց թե խալխն ի՞նչ գիդե. էնղադա բջերանց մոդ չէ՞ր, վուր վրետ բղավեցավ ու ճղավեցա՛վ։ (Ձավազանցնելով Պեպոյի խոսքերը։) *Աշ-խարք ու յիրգիր իս թափեի, կոսե, քսան ու հինգ հազար խղճի տուն իս քանդի, կոսե, էս արարմունքներիր քիզ չի մնա, կոսե, ու էստունք պիտի մա՞ռսիս դո՞ւն։ Բջերանց բերնումը ի՛մքին կու կանգնի՛. չիս գիդի՞, վուր էքուց ինչկլի էս վախտը վո՛ւխչ քաղաքը կու իմանա՛։ Մա՛րթ ըլիմ, գլխիս գդա՛կ ունենամ ու դա՛բուլ անիմ, վուր էս հանգի պաժարնին իմ տանը ինձ ա՛նպատիվ անե՛, ասե վուր նրա փուղիրը հա՛շա իմ ուտո՛ւմ, թա-վաթ ի՞նչ ասիս ասում են քիզ վրա ու հիմի պա՞կասը թամամ ըլի՛...*

Նայում է դիմացի դռան կողմը։

ՏԵՍԻԼ ԺԷ

ՆՐԱՆՔ, ԳԻԳՈՒԻ

ԳԻԳՈՒԻ, գլխարկը ձեռին, շտապով ներս մտնելով դիմացի դռնից։

Հալիլեքը բերի, ախչիկ-պարուն։

ԷՓԵՄԻԱ, հանկարծ փոխվելով և ուրախ:

Հալիլեքը՛... (Շտապով գնում է. կես հանապարհից Արութինին, հափշտակված:) *Մե ա՛րի, Արտուշկա ջան, տի՛ս թե ի՞նչ հալիլեք է, ի՞նչ ա՛նտիկա, նե՛ժնի հալիլեք...* (Կանչելով:) *Սա՛մսոն, Սա՛մսոն...*

Շտապով դուրս է գնում դիմացի դռնից։ Գիգոլին և Սամսոնը՝ որ դուրս է վազում աջ դռնից, հետևում են նրան։

ՏԵՍԻԼ ԺԸ

ԱՐՈՒԹԻՆ, մենակ, երկար լռությունից հետո։

Տո՛, ղո՛ւրթ, ի՞նչ օյին էկավ գլխիս էն լոթի պաժարնին... էլ մինձ ու պստիկ չկա աշխարքումը... էն հանգի ախկատ դաղոն վրես է՛ենց ըղավի՞, (Ման գալով։) *էն հանգի խո՛սկիր ասե՛...* (Հայելումը ուղղվում է։) *Բո՛շացավ, բո՛շացավ աշխարքի բանը...* (Հեռանում է հայելիից։) *Պարտ իս, կոսե... Գժվի՛լ է՛... Ի՛նչ պարտկ, ի՛նչ փլան, ի՛նչ փստան... Ո՞վ ասավ, վուր պարտ իմ... ո՞վ գիդե, վուր պարտ իմ... Թե պարտ իմ, ինչի՞ ինչկլի էսօր հիդ չիմ տվի... Ցա նրան վուր տամ, մեկելներուն ի՞նչ ասիմ... նրանք ի՞նչ գլթ ին արի... Չէ՛,* (Նստում է։) *վունչիչ պարտ չիմ... սուտ շա՛ռիր ին մոգոնում... Թե պարտ իմ, ինչի՞ բարաթ չունե... Վո՞ւրդի է... Ո՞վ ունե... Ի՞նչ բարաթ... Բարաթ չկա՛... գնա՛ցիլ է... չնչվի՛լ է... թե չէ էլ ի՞նչ օրութին է... Ամա էն լոթի պաժարնին պիտի ամեն տիղ բղավի, վուր փո՛ղ իմ պարտ ու հիդ չիմ տալի՛...* (Վեր է թռչում տեղից։) *Չէ՛, չէ՛, էփեմիեն դրուստ է ասում... Պիտի յի՛ս բղավիմ, յի՛ս պիտի հարայի տամ, ա՛շխարք ու յիրգիր զարթեցնիմ, վուր ի՛նձ՝ ի՛նձ պես աղա մարթուն էսենց ա՛նպատիվ արին, էսենց շա՛ռիր ին գցում վրես... Մո՛ւլատ, յիս քիզ կու շանց տամ, լո՛թի պաժարնի։*

Դուրս է գնում ձախ դռնից։

ԱՐԱՐՎԱԾ ԵՐՐՈՐԴ

Առաջին արարվածի սենյակը, միևնույն ձևով կահավորված և դամբը թոկի վրա փռած։ Առավոտ է։

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ԿԵԿԵԼ, մենակ, տախտի վրա նստած, լուռ կարում է, ապա մութքաֆի վրա դրած կարի բոխչից վերցնելով մի կտոր, շարունակում է կարը և հետո էլ երգում։

«Սիրելիդ, ինձ ատել ես,
Ատել ես, նախատել ես,
Ջիգարքս կտրատել ես,
Արնաշաղաղ ես արել։»

(Աչքերը սրբում է։)

«Ինձ տեսնելիս տո՛ւր բարով,
Խո՛րհուրդդ ասա գրով։»

(Լացի ձայնով։)

«Ինձ խո մորթել չես սրով՝
Անսուր մատաղ ես արել։»

(Կարը բռնելով՝ լաց է լինում։)

Ա՛խ, ա՛ստուած, յիս էլ կոսիմ թե աթմորթի իմ... Ինչի՞ ստիղծեցիր ինձ, ինչա՞ցու իմ աշխարքումը. անմիկ գեղնի էրեսին տիղ իմ բռնում... Էն ուփրո լավ չի ըլի՞, վուր գեղնի տակն ըլիմ ու գերեզմանս վուտի տակը

կո՛խշրտում ըլի՞ն... Ինչի՞ չիս սպանում ինձ, ա՛ստուծ... Դու խո լավ գիդիս, վուր մահն ուփրո հիշտ է ինձ համա, կանց շունչ քաշիլը... (Լռություն:) Ջուրը ննգնի՞մ, թոկով խիխտվի՞մ, դանակ ցցիմ սրտո՞ւմս. ի՞նչ ջուզար տամ քիզ... (Լաց է լինում:) Ա՛ստուծ, ա՛ստուծ, յա՛ կնծակ վե՛ր գցե գլխիս, յա՛ կարմնջի վրա անց կենալիս կարմունջը փո՛ւլ ածա վուտիս տակը, յա՛ գեղնին ման գալիս, գեղինը պա՛տռե ու ինձ դե՛վեր տար...

Լաց է լինում:

ՏԵՍԻԼ Բ

ՆԱ, ՇՈՒՇԱՆ

ՇՈՒՇԱՆ, ներս մտնելով ձախ դռնից:

Էլի լա՛ց իս ըլում, Կեկե՛լ:

ԿԵԿԵԼ, պչրերը սրբելով:

Զարթնի լացը՝ ի՞նչ է մնացի ինձ, դեդի... Էս արտրսունքն էլ վուր չըլի տվի աստուծ, սիրտս ինչո՞վ հովցնիմ:

Կարը գցում է տախտի վրա:

ՇՈՒՇԱՆ

Ախար, է՛տղադա արտրսունք կուլի, վուրթի՛. խո քամվեցար իստակ.

ԿԵԿԵԼ

Բաս ի՞նչ անիմ. դոշիս հենց գիդիմ աղաքար է պառկած... Էս արտրսունքն է ինձ օտկում մե քիչ, թե չէ դարդու խիխտվում իմ:

ՇՈՒՇԱՆ

Դա՛րդ ցավի գա ու աստուծու պատիվի էն սիվարտովը: Աժե՞, վուր է՛տղադա դարդ իս անում նրա համա՞:

ԿԵԿԵԼ

Աշխարքումը բեդնամ էլա, զրուխս դուս կտրվեցավ, էլ տուլի ու սծորի էրեսին չիմ կանացի մտիկ տա. Էս ա՛պրիլ է՞:

ՇՈՒՇԱՆ, նստելով Կեկելի մոտ սրոռի վրա:

Մի՛ դարդ անի, Կեկել ջան, մի՛ դարդ անի. աստուծ օղորմած է, կոպի նրա վրա լավ մարթու է ռասք բերում քիզ:

ԿԵԿԵԼ

Մարթու աճկն էլ կարիմ. նրանք խնպատ՞նք ունի՞ն, նրանք գո՞քի ունի՞ն... Ինձ պաչ արավ ու իմ պաչը տարավ ո՛ւրիշին էրիտ... (Գլուխն խփելով:) Գեդինը պատռե ու ինձ դեվեր տանե՝ էլ չիս յիրգնքի էրես վո՞ւնց պիտի տեսնիմ:

ՇՈՒՇԱՆ

Աբա՛, դուն վուր էտունք իս անում, Կեկե՛լ, չիս ի՞նչ անիմ... (Լաց լինելով:) Միխկը չի՞մ. բաս չիս վո՞ւնց դիմնամ՝ իմ սիվ ու մութ օրին մե կուռը, քիզ մեկելին... Էտ հանգի օրինակնիր շատ է էլի, վուրթի. մենակ միզ համա խո չէ ստիղծած աշխարքը: Քա՛նի միզպեսնիրը կան, քա՛նի միզ վրա վա՛տթարն ասա, հացի հասրաթ ածած ի՛ն, մե թիքա հացին էրնկ ին տալի, դոնե դուռը ախկրտութին ին անում ու էն թիքա հացը՝ թե հաղրենը մեկը տալիս է, մնացածնիրը կի՛նծումը խփելով դուս ին անում... Միզ խո աստուծ մե թիքա տվիլ է, փա՛ռք իրան, ի՞նչ անիս, հալբաթ մեր ճակտին էս էր գրած: Էլի փա՛ռք տանք իրան, աղանչանք անինք, վուր էստու վրա վատթար օրին չռաստ բերե միզ. իմ Պեպոյին ջան տա, վուր ինչ թիքա միզ տալիս է նրա ձեռով, էն թիքեմեն էլ չզրգե միզ:

ԿԵԿԵԼ

Էրնեկ աստուծ ինձ մա՛հ տա, ուրիշ վունչիչ չիմ ուզում:

ՇՈՒՇԱՆ, մոտենալով և գրկելով Կեկելին:

Մի՛ ասի, մի՛ ասի, Կեկել ջան. (Նստելով կողմին:) միխկ է աստուծու մոդ, գենա՛ցվնալու դեդեն:

ԿԵԿԵԼ, Շուշանի գրկում:

Ա՛խ, դեդի ջան...

Նոր լաց է լինում:
Փակվեր

ՏԵՍԻԼ Գ

ՆՐԱՆՔ, ԳԻՔՈ

ԳԻՔՈ, ներս մտնելով դիմացի դռնից գլխարկով և ձեռնափայտով:

Վա՛, օ՛խնած հոքիք, գարթնի էտ՝ բա՞ն ու գուրձ չունի՞ք:

ՇՈՒՇԱՆ, թողնելով Կեկելին, կանգնում է:

Ուրիշ ի՞նչ բան ու գուրձ պիտի ունենանք, թե գուզիս՝ դուն ծա՛փ տու, մինք խաղանք։

ԿԵԿԵԼ, վերցնելով կարը:

Վա՜յ իմ օրին...

Աչքերը սրբելով՝ շտապով դուրս է գնում աջ դռնից: Կարի կիսաբաց բռիչաքն մնում է մուրճի վրա:

ՏԵՍԻԼ Գ

ՇՈՒՇԱՆ, ԳԻՔՈ

ԳԻՔՈ

Է՜, լա՛վ է, ձիր հորն օղորմի. աթմորթին էլ մե քիչ համփիրութին պիտի ունենա։ Ախար, մե գլուխ դիփ լաց իք ըլում, խան մեկն ու խան մեկելը. էտենց վո՞ւնց կուլի։

ՇՈՒՇԱՆ, նստելով տախտի վրա:

Ի՞նչ անիս, ի՜նչ միր գլխին բան էկավ, աստուած միր դուշմընին էլ չտա։

ԳԻՔՈ

Աստծու բանը դուն չի՛ս գիդի, Շուշան, ուրիշ հանգն է սարքի աշխարքը. ուրախութենի հիդ դարդ է տալի մարթու ու դարդի էդնեն ուրախութին... (Առաջ քաշելով աթոռը՝ նստում է տախտից վոր ինչ հեռու և թախտու քաշում:) *Հը՜մ, է՜...* (Երկու ձեռքի ցուցամատները միմյանց կպցնելով:) *Էսենց է, ա՜յ. քուր ու ախպեր։ Վունցոր քուր ու ախպեր մեկս-մեկեմեն չին բաժնվի, էնենց էլ ուրախութինն ու տխրութինը։*

ՇՈՒՇԱՆ, առանձին:

Քու ա՜ճկն էլ։

ԳԻՔՈ

Շա՜տ լավ է չինի, է՜... Ասում է մարթուն՝ էս քիզ ուրախութին, գնա՜, քե՛փ արա, ասում է. իժում էն քեփումը մեկ էլ տեսնիս մե դարդ է լուս գցում միզ համա, վուր ինչ է՝ հը՜ը՜... Իրան չմտեն գցինք... Գոհանա՜մ քիզ, ա՜ստուած։

ՇՈՒՇԱՆ

Էրնեկ գիդենամ՝ բա՞ դրոս քարոզի վուխտ է։

ԳԻՔՈ

Մո՜ւլափ, Շուշան, մո՜ւլափ. ախար, դուն չիս գիդի թե խոսկս վո՜ւրդի է գալի, է՜։ Ինձի ինձ էրվում իմ, խորվվում իմ, ամա էլ ի՞նչ կանամ օտկի։ Մեկ փիքը իմ անում, վուր կուլի դժուխկը գնամ. ամա մեկ էլ ասում իմ, վուր հալբաթ էս աստծու բան էր։ Հիմի գուզիք ինձ սպանեցեք, գուզիք աստծուն փա՛ռք տվեք, վուր հոքիս բերնումս է ու խոսում իմ։

ՇՈՒՇԱՆ

Վա՞խտ իս գթի դուն էլ, Գիքո՜. առանց էն էլ դարդու տրաքվում իմ։

ԳԻՔՈ

Ցիս էլ էտ իմ ասում, Շուշան, է՜։ Տի՜ս հիմի, էտ դարդի հիդ ի՞նչ ուրախութին է գալի։ (Շուշանը զարմացած նայում է:) *Արմընում իս, գա՞նա, Շուշան։ Վուրն է՜ն չախը թա՛մաշա արա, լիփոր դիփ կոսիմ։* (Գրպանից հանում է փոստի մի կապտագույն բաց ծրար, որի վրա երևում են կարմիր զմռե կնիքներ, և աջ ձեռքով բարձրացնելով:) *Ա՜յ։*

ՇՈՒՇԱՆ

Էտ ի՞նչ է։

ԳԻՔՈ

Ի՜նչ է՜... է՜ն է, է՜ն,Շուշան։

ՇՈՒՇԱՆ

Վուր չի՜մ իմանո՜ւմ։

ԳԻՔՈ

Ա՜յ, կու իմանաս. համփիրութինը բաժնելիս աստուած քիչ փային կնիկարմատին էրիտ։ Հիմի ի՜նչ համփիրութին տվիլ է քիզ աստուած, ցիփ մետի մո՜դ արա ու ծանդր ու բարակ ինձ ա՜նգաճ դի, վուր լիզուս չխառնվի։

ՇՈՒՇԱՆ, առանձին:

Ցա՜րաբ էս հանգի էլ մա՜րթ կուլի՜։

ԳԻՔՈ, շարունակելով:

Գիդիս ի՞նչ է, Շուշան... Օղորմած հոքի քու մարթը՜...

ՇՈՒՇԱՆ, երկար ու ծիգ կոկորդային ձայնարկությամբ հառաչելով:

Ը՞հը՞գ...

ԳԻՔՈ, գրպանից թաշկինակը հանում է և աչքերը սրբում: Լացի ձայնով:

Աստուած օրորմի, աստուած հոգին լուսավորեր. լավ մարդ էր, անուշով մարդ էր խիղճը: Քա՛նի ջեր է ձիով Գանջա գնացի ու էկի օրորված հոգին:

ՇՈՒՇԱՆ, հոգոց հանելով:

Ա՛խ, ա՛խ, ա՛խ...

ԳԻՔՈ

Է՛հ, փո՛ւչ աշխար, Շուշան:

ՇՈՒՇԱՆ

Իժո՞ւմ:

ԳԻՔՈ

Հա՛... (Խորար:) Մահմանն մեր քանի օր առաջ, յիս խոմ դեռ կշտեն էի, գիդիս, ծիտերի գոմերը կորոգիլ էրիտ, մնացինք յիս ու օրորված հոգին...

Աչքերը սրբում է:

ՇՈՒՇԱՆ, տխուր:

Մի՛տս էլ:

ԳԻՔՈ, ձեռքով իր բերանը ծածկելով:

Մո՛ւլավ... Ջիրիմեն բալնքնիրը հանից ու էն ձիր սիվ պստի դուքին ուզից, յիս էլ մոդ տարա. սա բաց արավ, էս Թուխատը հանից ու ինձ էրիտ: Անդերձ արավ, վուր ինչրու վիրչի ժամ անակը վո՛ւնց քիզ խմաց անիմ, վո՛ւնց Պեպոյին: Պեպոս, ասում է, ջեհնել է, կոսե, վա՛յ թե փչացնե, կոսե, ու իմ Շուշանք կնիկարմատ է, կոսե, վա՛յ թե Պեպոյի ճանդը գցե, կոսե: Ինչրու վուքտը չգա, կոսե, վունց մեկին մի՛ ասի, թե դուն ունիս, կոսե: (Ծուարից հանում է մի ծալած ապխտակ հին թուղթ և, մատնացույց անելով, լացի ձայնով ու բարձր:) *Իմ կեկելի բա՛ժինքը էստումն է, կոսե:*

ՇՈՒՇԱՆ, վեր թոչելով:

Էտ ի՞նչ թուխատ է, գանա:

ԳԻՔՈ

Ի՞նչ թո՞ւխատ... Ա՞գատիկի թարաթը:

ՇՈՒՇԱՆ, մռա վազելով:

Ի՞նչս ասում, Գիքո... (Խլելով թուղթը ձեռքից:) Ո՛ւզում իս հոգիս հանի՞: (Բաց է անում թուղթը և ճանաչում Աբուլիքի պարտամուրհակը:) է՛ս է... Օտկեցե՛ք... սիրտս գնաց... (Գնում է, իր տեղը վայր ընկնում: Ջարմացած նայում են միմյանց. երկար լռություն:) *կինաղամ մնա... իժում, ա՛նաստուած, ինչրու հիմի ո՞ւր էիր պահում. կեկելիս սպանեցիր ու հիմի՞...*

ԳԻՔՈ

Յիս միդ չունիմ, Շուշան, գիդե աստուած, վուր միդ չունիմ:

ՇՈՒՇԱՆ, շտապով:

Ա՛յ, աստուած անե քու դիվանն ու դագաստանը: է՛տենց կատարեցիր անդերձը՞:

ԳԻՔՈ

Ախար, մե անգամ դի, է՞...

ՇՈՒՇԱՆ, խոսքը կտրելով:

Անգամ ցավի գաս ու աստուծու պատիժի. էս օ՞բենք է, վուր դուն արի՞ր:

ԳԻՔՈ

Ախա՞ր, Շուշան...

ՇՈՒՇԱՆ, անդադար Գիքոյի խոսքը կտրում է մինչև նրա վեր կենալը:

Ախար քիզ ու... (Առանձին:) *չոռ ու ցավ:* (Գիքոյին:) *Լո՞բիս*

ԳԻՔՈ

Փի՞ւ...

ՇՈՒՇԱՆ.

Ախար, ինչի՞ պահեցիր, ինչի՞, ինչրի էաբ: Քու պատճառն ի՞նչ իս ասում, քու հոքուն ի՞նչ ջուղաբ կու տաս:

ԳԻՔՈ

Տո՛, մե ա՛նգամ դի, է՞...

ՇՈՒՇԱՆ

Աբա՛, ա՛սա, է՛լի:

ԳԻՔՈ

Ա՛յ, Շուշան...

ՇՈՒՇԱՆ, շարունակելով:

Ա՛սա, ա՛սա։

ԳԻՔՈ

Օ՞օվե...

ՇՈՒՇԱՆ

Տեսնիմ ի՞նչ իս ասում։

ԳԻՔՈ

Ախար...

ՇՈՒՇԱՆ

Մե տուտուց բան պիտի ասիս, էլի՞։

ԳԻՔՈ

Տո՛, խոսքս բերնեմես մի՛ խլի, է՞...

ՇՈՒՇԱՆ

Ասածու զազաբի գաս, հը՞։

ԳԻՔՈ, վեր կենալով և գլխարկը թափ տալով:

Էլ վունչիչ չիմ գիդի... (Գնալով:) *Կնի՛կարմատի պես էլ անդնջո՞ւմ։*

ՇՈՒՇԱՆ, բարձր:

Մո՛ւլափ, մո՛ւլափ... (Կանչում է:) *Գի՛քո։*

ԳԻՔՈ, հետ դառնալով:

Ախար, օ՛խնած հոքի, մե քիչ հա՛մփիրութին ունեցի, ասում իմ, է՞։ Ցիս խիստ ուրախ ի՞մ, վուր է՛սենց էլավ բանը՞. ամա ասածու դարսոդութենին վո՞ւնց հակառակվի մարթ... (Նստում է միևնույն տեղը և բախտ բաշում:) *Հը՞մ...*

ՇՈՒՇԱՆ, առաջին:

Կրի՛մ քու գլուխն, բահա՞։

ԳԻՔՈ, բիրը սրբում է:

Ցիս գիդի, թե ի՛նչ օյին էկավ գլուխս։

ՇՈՒՇԱՆ

Էլ մի՛ ծրծռեցնի, թե քու ասածն կու սիրիս։

Մուրհակը գցում է տախտի վրա։

ԳԻՔՈ

Ցէ՛, ա՞յ, էս սհաթիս, քիչ է մնացի... էտ բարաթը վուր տալիս էր ողորմած հոքին, շատ ասի, թե իմ բանը չէ. էտ հանգի ծանդր բիռն, ասի, վրես մի՛ շալկի, ասի, էլ դնջութին չիմ կանա ունենա, ասի. ամա չարավ... Հալալ մարթ իս, Գիքո, կոսե, (Լացի ձայնով:) *զարթնի քիզ ճար չունիմ, կոսե... է՞հ, չարես ի՞նչ էր, դուն ինձ ասա՞, վիկալա բարաթն ում յիրիք-չուրս օրվան էդնեն հոքին էրիտ խի՞ղճը... Աստուձ հոքին լուսավուրե,* (Աչքերը սրբելով և լաց լինելով:) *բարեխոս ըլի իր Կեկելի համա։*

ՇՈՒՇԱՆ, աչքերը սրբելով, երկար հոգվոց է հանում:

Ը՞հ, հը՞, հը՞, հը՞...

ԳԻՔՈ

է՞հ, մա՛խլաս. դիփ մահի վուրթիք ինք... վո՞ւրդի էի՞։

ՇՈՒՇԱՆ

Վուր բարաթն էրիտ ջրատարը։

ԳԻՔՈ

Հա՛, էրիտ... Առա, տարա տուն, պահեցի... Մե-մե մարթ կա խապինա է պահում. յա՞բաբ նրա քունը վո՞ւնց է տանում գիշիրով... Պահեցի... Հին սիգելնիր ունեի էրեկլե-Պարնի վախտվա... Ցիս խո զարթնի մե քոխին ուրիշ վունչիչ չունիմ. ամա էնենց պահում էի էն սիգելնիրը, մարթու թանդիխան կարթացնել էի տալի, դուր էր գալի խուսկիրը... Դուն չիս տեսի, Շուշան... Ջե՛ր աստուձու անումն է գլխին գրած, իժում Քրիստուսինը, իժում հոգի սուրփը. գալիս է, ա՞ղա ջան, իժում ավետարանիչնիրը, սրփիրը, դի՞փ մե-մեկ, մե-մեկ. է՞նդադա օրհնանք, է՞նդադա բանիր... է՞հ, գնա՞ց դիփ մետի... Հա՞յիփ, հա՞յիփ միր ժամանակ...

ՇՈՒՇԱՆ

Էտ խի՞ստ հիռու գնացիր, Գիքո։

ԳԻՔՈ

Հիռու կի չէ, խի՞ստ մոդկացա... Ախար հենց էն սիգելնիրումը պահեցի էտ բարաթն, է՞։ Կապեցի, դրի զանդկիս քունջը, բալնիքն էլ ջիրեմես չէի հիռացնում։ Ամիս չէր անցկենա, վուր մե էրկու ջեր զանդուկս չէի բաց արի ու կապուցկս չէի տնդդի։ Ամանաթի պես դժար վունչիչ չկա աշխարքումը։ Աստուձ, աստուձ էի անում, վուր Կեկելի բախտը մե վախտի

բաց ըլի, ու բաց էլ արավ խոմ աստուած... Մե օր էլ՝ բաց անիմ զանդուկս, տեսնիմ սաղ կապուցկը չկա։ Հա՜յ դես, հա՜յ դեն՝ չկա՛, չկա՛, չկա՜... Զարթնի էս՝ մե քանի հատ էլ հնուց, շատ հնուց, ա՜յ, սի-փուղ ունեի, էն սի-փուղն էլ հիդր գում ու կլան է էլի՜. մեկել բանիրը կի զանդկումը իր տիղը անշարժ, սաղ-սալամաթ դարսած է... Ախպեր, թե գուդ էկա՜վ, կանց հին գրոշնիրն էր տանում, թադա փո՜ղն էր տարի՜. էրկու թուման ավել դիփ թադա՝ Նիկալայի ղըղըդան մանեթնիր ունեի. թե սատանա մտավ զանդուկս, էն վո՞ւնց տուն գնաց ու դուս էկավ, վուր մե տիղ ծակ չէթող զանդկումը... թե չէ՝ զանդուկը կոխպած, բալնիքը ջիբումս, վո՞ւնց հանդավ էնդունք... Ի՜նչ իմ հալն էր, Շուշան, էն աստուած գիդե, մե օր հոքի ունիմ տալու... Գարի ասիս, յիս իմ գցիլ տվի, էփեմերդի ասիս, յիս իմ բաց անիլ տվի, չոքած՝ էգեղեցու բոյորքն ասիս, յիս իմ աղոթկ արի... Իշտահս կապվեցավ, քունս կորվեցավ, ջում-ջումի դառա... Էստի խո՝ քանի ձիզ տեսնում էի, քանի ձիր լացն ու սոգը իմանում էի, սիրտս կրա՜կ էր ննգնում։

Աչքերը սրբում է։

ՇՈՒՇԱՆ։

Ախար, էնդադա վուր հարց ու փուրց ելնք անում, մե օր վո՞ւնց չիստրվեցար, օ՜խնած հոքի... Փարազի ասինք՝ անդիրքը կապում էր քիզ էն գլխին, իմում էլ է մե՛ խոսկ մայինց կոտեիր, է՜ր

ԳԻՔՈ։

Է՜, Շուշան... Քանի ջեր ուղեցիլ իմ բաց անի է՛ս բանը, ամա թե ահու վունչիչ չէի կամենում ասի. լիգուս չէր գտրում, ի՞նչ անիս... Ա՜յ, էստու առաչ, էլ, էս մոդիկ ժուգն էր, քիչ էր մնում դիմի մեռի թամամ հի՛ ասեի, դրուստ հենց, լիզվիս ծերին պատուտ էկավ. ամա փիս վուխտ ռաստ էկա՝ Պեպոն խիստ ջգրած էր, էլ ջուրաթ չարի, բերնես չկանացի դուս թողնի... Վախեցա, չէ թե ինձ համա, Շուշա՜ն, ձիզ համա, գիդե աստուած. մե փրթոնա չննգնի էստի, ասի, իմքին չար բան չառաչանա, ասի... (Սաստիկ հուզված։) Վիկալա էլի ու սրտիս խուդուկը, ա՜խ ու վա՜խով, հաբի պես հիդ կուլ տվի... (Դարձյալ աչքերը սրբում է. Շուշանը, առանձին, անհամբերություն է ցույց տալիս։) Ամա չասիս, Շուշան, թե ձիր միիսկը կու տանեի, իմ աղանչաքը դիփ էն էր, վուր ինչրու էս պարտքը չպրծնիմ, աստուած հոքիս չհանե... Պարծանքսով չիմ ասում, Շուշան, աստուած գիդենա, քոխիս գրավ դրի ձիզ համա ու փուղիրը էս երկու օրումը պիտի բան. ամա ի՞նչ փայիդա վուր իր վուխտը չվրա հասավ... Հալբաթ

էսենց պիտեր... Փա՜ռք քիզ, ա՛ստուած, փա՜ռք, մեռնիմ քու ամենակարող զորութենին։

ՇՈՒՇԱՆ

Իժում վո՞ւնց գթար, ախար, էս բարաթը։

ԳԻՔՈ

Վո՛ւնց գթա՜... Ցիս խո չգթա, Շուշան. իրան-իրան էկավ... Հիմի ասա՛ թե վո՞ւնց։

ՇՈՒՇԱՆ, առանձին։

Վի՜հ... Հա՛լից ու մաշից։

ԳԻՔՈ, շարունակելով։

Էս իմ սատանի սրուց քվիր տղե՜ն...

ՇՈՒՇԱՆ

Հիմի վուր Ռուսեթ է՞։

ԳԻՔՈ

Հա՜, հենց էն աղա-զադեա։ Մե օր, քանի՜ չեր էստի էր, շատ աղանչաք արավ, վուր էտ սիգելնիրն, ասում է, ինձ տու, Կոսե, իմ ուսումին պետկը գու քա, Կոսե, չունքի հին բանիր է, Կոսե։ Քիզ դրուստն ասիմ, չտվի. ասի չպատուտե, դեն չածե, ասի։ Ախար, թե թազա ուսում ին ստանում, հին բանիրը ինչի՞ն է պետկ։ Անց կացավ, գնաց... Գնալու վուխտը՜...

ՇՈՒՇԱՆ

Նրա գնալը մե յիրիք ամիս կուլի, գա՞նա։

ԳԻՔՈ

Հա՜, էտենց է։ Սա, մի՛ ասի, բալնիքս ջիբեմես կու հանե, յիս ո՞վ գիդե՝ ի՞նչ էրազումն էլի էն չախը, աղավարի զանդուկս բաց կոնե, կապուցկն ու հին փուղիրը կու ծպրպե, զանդուկը հիդ կու կոխպե, բալնիքը ջիբս կու դնե ու՝ հայդե՜... Արի՜ ու հիմի դուն ինձ լո՜բի ասա, տեսնիմ թե ինձ վրա զոշաղի ձեռնեմեն ի՞նչ կու դուս գեր... Ախար, մարթու խոսկը կու իմանան ջեր, Շուշան, իժում դնամիշ կոնին, թե դնամիշ անելու է. թե չէ լո՜բին ի՞նչ անե, վուր ինձ լոբի՝ իս ասում, Շուշան։

ՇՈՒՇԱՆ

Իժո՞ւմ։

ԳԻՔՈ

Իժո՜ւմ էլ է՛Ն, վուր էտ բարաթը փոշտով ղրգիլ է հիմի ու մե կա-բաբադին էլ մասխարութիննիր է գրի վրես... Քու սիգելնիրը, կոսե, Փռանգստուն ղրգեցի, կոսե, ու սի-փուղերու համա, ասում է, թե գուզիս՝ մե մենդալ կու ղրգին քիզ համա, կոսե, ու էս բարաթն էլ, ասում է, հիդ քիզ փեշքաշ, ասում է... Գիրն էլ հորեսա էստումն է, թե գուզիս... Ա՜յ...

Դանդաղ վեր կենալով, գնում է դեպի Շուշանը:

ՇՈՒՇԱՆ, նույն միջոցին:

Գեղինը պատվի ու նրա սատանին դե՛վեր տանե, ըհբա՜:

ԳԻՔՈ, առաջարկելով ծրարը Շուշանին:

Տի՛ս, թե սուտ իմ ասում: Մե դավի-դառաբա էլ էս փակեթի դուս բերիլն էր էսօր. ջա՛նս գնաց շատ դես ու դեն ննգնելեն:

ՇՈՒՇԱՆ

Տա՛ր, տա՛ր, ինձ հարկավուր չէ, էլի քի պետկը գու քա. ա՛ռանց էտ էլ ավտում իմ քիզ:

ԳԻՔՈ

Արա՛, Շուշան, յիս ի՞նչ միդ ունիմ:

ՇՈՒՇԱՆ

Կեկելս կի մեռնում է ու ի՞նչ անիմ թե միդ չունիս:

ԳԻՔՈ

Աստուձ օղորմած է, Շուշան, աստուձ օղորմած է:

ՇՈՒՇԱՆ

Աստուձ միր աճկը հանիլ ու պրծավ, էլ ի՞նչ օղորմած է:

ԳԻՔՈ

Մի՛ ասի, Շուշան, մի՛ ասի. նրա դարսողութինը օշով չի կանա իմանա... Հալբաթ նրա կամքն էսենց էր:

ՇՈՒՇԱՆ

Փա՛ռք իրան, ի՛նչ անինք:

ԳԻՔՈ, նստելով նույն աթոռի վրա:

Լավ մարթ վուր էլիլ էր, խո փուղի համա չէր թողնի Կեկելին:

Ծրարը պահում է:

ՇՈՒՇԱՆ

Յիս էլ միթամ էտ իմ ասում դիփ, ամա էլ ի՞նչ փայիդա. նամուսներուս կտրվեցավ, սիրաթներուս գնաց, աշխարքի համա ղենո ու մասխարա ինք դառի: Էլ ո՞վ գուզե իմ Կեկելին... Խի՜ղճ իմ Կեկել... (Լաց լինելով:) *Նորչի արիվը փչանում է...*

ԳԻՔՈ

Է՜, հե՛րիք արա, քու հորն օղորմի, Շուշան:

ՇՈՒՇԱՆ, լալով:

Ա՛խ, Կեկել ջան, Կե՛կել...

ԳԻՔՈ, աչքերը սրբելով ու լացի ձայնով:

Օ՛հ, օ՛հ, օ՛հ, օ՛հ...

ՏԵՍԻԼ Ե

ՆՐԱՆՔ, ԿԱԿՈՒԼԻ

ԿԱԿՈՒԼԻ, ներս մտնելով դիմացի դռնից:

Է՛ստի մտիկ. քու պտոտելեմեն ջանս գնաց, դուն կի էստի ծանդր ու բարակ նստած իս:

ԳԻՔՈ

Հը՜, ի՞նչ խաբար է:

ԿԱԿՈՒԼԻ, Գիքոյի կուրը բռնելով:

Վի՛կաց. վի՛կաց, չո՛ւստ արա:

ՇՈՒՇԱՆ

Ի՞նչ է պատահի:

ԿԱԿՈՒԼԻ, թողնելով Գիքոյին:

Աստուձ վուչ գիդի խիղճ մարթու գլուխը:

ՇՈՒՇԱՆ, վախեցած:

Ի՞նչ է:

ԿԱԿՈՒԼԻ

Պեպոյին տարան էս օր առուտեհան։

ՇՈՒՇԱՆ

Ո՞ւր տարան, ի՞նչ իս ասում։

ԿԱԿՈՒԼԻ

Ա՛յ, էն դժուխկի մաշխալեն ինչոր գանգատ է տուն տարի։

ՇՈՒՇԱՆ

Ո՞վ, ի՞նչ գանգատ։

ԿԱԿՈՒԼԻ

Ա՛յ, էն շեյթան Արութինը, ձիզ վուր փուղ պարտ է։ (Կրծքին խփելով։) *Թե մի ճա՛նգս կու ննգնի՞...*

ՇՈՒՇԱՆ

Վո՞ւյ, քոռանամ ու կուրանամ յիս. իժում ի՞նչ կոնին Պեպոյիս։

ԿԱԿՈՒԼԻ

Ո՛վ գիդե, դեդի, ինչոր չանին միզ, արմընելուն էն է։ (Գիքոյին։) *Դե՛, մի՛ ուշացնի, Գիքո, է՛, առուտվան դեսն է քիզ իմ պտուտում. ավյտաս չվրա հասնինք էլ։*

ՇՈՒՇԱՆ

Փուղը նա՛ է պարտ ու էլի նա է գանգատ անո՞ւմ։ Ա՛յ, հախմիան տերն անեն քու դադաստանը, Ա՛րութին։ (Գիքոյին)։ *Վի՛կաց, էլի՛, ա՛ մարթ, յիս իմանում։* (Մուրճակը վերցնելով և տալով Գիքոյին։) *Տա՛ր, տա՛ր էս բարաթը, սի՛վցրու նրա էրեսը։*

Գիքոն առնում է մուրճակը և դնում գրպանը։

ԿԱԿՈՒԼԻ

Ի՞նչ բարաթ։

ՇՈՒՇԱՆ

Էն սի՛վերես ու սիվսրտով Արութինի բարաթը։

ԿԱԿՈՒԼԻ, ուրախ։

Ղո՞ւրթ... Գթա՞ք... (Վեր թռչելով։) *Վա՞, յիս ձիր հոքո՛ւն մեռնիմ... Ա՛յ հրաշկ... Իժում էտ վո՞ւնց էլավ, վո՞ւնց գթնըվեցավ։*

ՇՈՒՇԱՆ

Ա՛յ, ճամփին կոսե։

ԿԱԿՈՒԼԻ

Սա գթա՞վ, սա՞...։

ՇՈՒՇԱՆ

Հա՛, հա՛...։

ԿԱԿՈՒԼԻ, փաթաթվելով Գիքոյին։

Ջա՛րդ տանիմ յիս, Գիքո ջան, աբա լոթին դուն իս հիմի, ա՛յ, հոքումս կու նստեցնիմ քիզ հորեսի դենը, իմ հերն իս դուն հիմի...

ԳԻՔՈ

Իմ տարսը դառնաս, վուրթի։

ԿԱԿՈՒԼԻ, շտապով և ցածր։

Սաղ ըլիս. Գիքո ջան... (Բարձր։) *Դե՛, վի՛կաց, էլ մի՛ ուշացնի... Հը՛մ, Արութին,* (Կրծքին խփելով։) *տեսնինք Ֆիմի՝ ի՞նչ իս ասում, ի՞նչ իս էլի մոգոնում...* (Գիքոյի թևից բռնելով։) *Աբա՛, Գիքո ջան, հը՛ա...*

ՇՈՒՇԱՆ

Ա՛խ, ա՛ստուած, ա՛ստուած։

ԿԱԿՈՒԼԻ, Շուշանին։

Դարդ մի՛ անի, դեդի ջան, աստուած օղորմած է։

ՇՈՒՇԱՆ

Գնա՛ցեք, շտա՛պեցեք, վունչիչ չանին Պեպոյիս։

ԿԱԿՈՒԼԻ, վեր քաշելով Գիքոյին։

Վա՛, հե՛ր օխնած, մի՞խած իս էտի՞։

ԳԻՔՈ, վեր կենալով։

Ա՛յ, գնա՛նք, գնա՛նք... (Պատրաստվում է քթախոտ քաշելու։) *Տեսնիմ թե վո՞ւնց է հաշա ուտում հիմի։*

ԿԱԿՈՒԼԻ, ձեռքից խլելով քթախոտի տուփը։

Տո՛, արի ճա՛մփին քաշի, է՛լի, վա՛։

Թևից բռնած շտապով տանում է։

ԳԻՔՈ, գնալով:

Ո՜ւհ, ո՜ւհ, ո՜ւհ...

ԿԱԿՈՒԻ, փաթաթվելով:

Էլ զահրուղբթի չիմ ասի, քի մատաղ, Գիքո ջան։

Դուրս են գնում դիմացի դռնից:

ՏԵՍԻԼ Զ

ՇՈՒՇԱՆ, ճեռռ ԿԿԿԼ

ՇՈՒՇԱՆ, մենակ, կանգնած:

Ցա՜րաբ ի՞նչ իս ուզում միզմեն, ա՜ստուծ. ի՞նչ գեթ ունիմ քի մոդ։ Ջեր աճկս հանեցիր, մարթուս խլեցիր, իժում ախչկաս բախտը քար ու քանդ արիր, հիմի էլ ի՞նչ իս պատրաստում իմ սիվ ու մութ օրի համա։ Խղճա՛, ա՜ստուծ, խղճա՛. վունչիչ չիմ ուզում քիմեն՝ վո՛ւնց փառք, վո՛ւնց գովլաթ, վունց պատիվ, օղոնդ էս դա՜ռն օրվան վրա ուփրո դառն օր չչանց տաս միզ։ Դո՛ւն փրկե ու ազատե իմ Պեպոյին։ (Նահալու տակից շտապով հանում է դաթիքան և բաց անելով, գնում է ու կանչում:) *Կե՛կել...* (Կեկելը կարը ձեռին վշտաբեկ դուրս է գալիս աջ դռնից:) *Մե՛ արի, հենց ապրիս, էստի դռնիրը կոխպե. համբուրելու իմ գնում էստի դեմուդեմը, չուստ գու քամ։*

ԿԿԿԼ

Է՛ս սահաթիս, դեդի ջան։

Շուշանը շտապով դուրս է գնում ձախ դռնից:

ՏԵՍԻԼ Է

ԿԿԿԼ, մենակ:

Ֆի՛ղճ դեդա... (Շտապով առաջ գալով դեպի տախտը:) *Էլ վունց խեչն է միզ օտկում, վունց աստուծ...* (Հավաքում, վերցնում է կարի բոխչան:) *Տանջվիլ ու տանջվիլ, էն գլխեն էս գլուխը էս է գրած միր ճակտին...*

Կարը և բոխչան ձեռին դուրս է գնում ձախ դռնից:

ՏԵՍԻԼ Ը

ՊԵՊՈ, մենակ: Ներս է մտնում դիմացի դռնից գլխարկով ու զարդի հագուստով:

Է՛սենց էլ աշխա՜րք... (Վերցնում է գլխարկը, աջ ձեռքի ցուցամատով ճակատի քրտինքը սրբում և գլխարկը կրկին ծածկում:) *Մարթ գըլխեմեն ինչրու վուտը ղուրթ ըլի ու էլի ի՛նքը սուտ դուս գա՜... Պատժելու մագիեր ի՛նքը պատժըվի՜... Գնա՛, գնա՛ հիմի, Պեպո, նստի՛ բիրթումն ու լավ բաբաթ փիքր արա աշխրքի բանիրը... Դուն հալալութենի էդնեն մա՛ն արի, տեսնիմ՝ ի՞նչ է տալի քիզ քու հալալութինը... Մտիկ իս անում՝ սա՛ղ քաղաքը գիլաներով լքցվիլ է. ո՞վ է ասում քիզ, վուր օխշրի յիրիշով ման գաս... Ջիս գիդի՞, վուր բո՛ւրթդ կու գզի՛ն... Քիզ ո՞վ էր ասում ձենդ բացրացնիս. ո՞ւմ վրա իս ձենդ բացրացնում, ինչո՞վ... Ի՞նչ կա ձեռիտ... Փո՛ւղ ունիս ջիբումը՞դ, խի՛լք ունիս գլխումը՞դ, ղա՛լամ ունիս ձեռումը՞դ. ի՞նչ ունիս, ի՞նչ, տո՛, օ՛ղորմելի, վուր գառնի պես բռնչում իս... Ջիս գիդի՞, վուր գառնի վիրչը ղա՛սաբխանեն է՞... Է՛ն է քու բինեն, Պեպո, է՛ն... Գնա՛ պառկի, վուր բողազդ դուս կտրին... Մի՛ վախենա, մե դանկի մագիեր տա՛սը դանակ կու լուս ննգնի քիզ համա։*

Նստում է սեղանի մոտ աթոռի վրա և ընկղմվելով մտածմունքի մեջ՝ գլուխը շարժում:

ՏԵՍԻԼ Թ

ՆԱ, ԿԿԿԼ

ԿԿԿԼ, ներս գալով ձախ դռնից:

Էկա՞ր, Պեպո։

ՊԵՊՈ

Էկա ու գնում իմ. մե քանի վուխտ մնա՛ս բարով։

ԿԿԿԼ

Ո՞ւր իս գնում, ի՞նչս ասում։

ՊԵՊՈ, հեգնորեն և ժպիտն երեսին:

Տաք տիզ, մայինց մինք փետ չունինք ո՞ւ...

ԿԿԿԼ

Ջիմ իմանում՝ ի՞նչս ասում։

ՊԵՊՈ, վեր կենալով:

Բ՛լբին ին տանում ինձ, Կեկել։

ԿԵԿԵԼ, վախեցած:

Ինչի՞։

ՊԵՊՈ, սենյակի մեջտեղը մնացած աթոռը դնելով իր տեղը: *Էնենց, խաթրիչուն։*

ԿԵԿԵԼ

Վա՛, Պեպո ջան, ի՞նչ իս ասում։

ՊԵՊՈ

Հանաք չիմ անում, Կեկել. մի՛ վախենա, վունցոր ըլի յոլա կէհաք։ Ո՞ւր է դեդեն, տանը չէ՞։

ԿԵԿԵԼ

Էս սահաթիս գու քա. համբուրելու գնաց Էսաի մոդիդ։

ՊԵՊՈ

Խի՛ղճ դեդա...

ԿԵԿԵԼ

Ախար, մե դրուստ խոսի, Պեպո. է՛. բիրթումն ի՞նչ բան ունիս։

ՊԵՊՈ

Վունչիչ... (Իսոը ժպիտով:) Շատ դամբ գցելեն կուռդ դաթրեցավ, կոսե. գնա՛ հիմի մե քիչ դնջացի, կոսե։

ԿԵԿԵԼ

Ա՛խ, Պե՛պո ջան, ջիդարս մի՛ պատռաի, թավաթ էրած իմ ու խորված։

ՊԵՊՈ

Հինգ հաղար էլ էրվիս ու խորվվիս, ո՞վ է հարցնում։ Փճռած բան է, պիտի գնամ բիրթը։

ԿԵԿԵԼ

Ինչի՞, ո՞ւմ խաթիր. ի՞նչ իս արի։

ՊԵՊՈ, դառնորեն:

Գո՛ղութինս։

ԿԵԿԵԼ

Դո՛ւն՝ գողութի՞ն։ Չէ՛, չէ՛, Պեպո, ասա՛՝ ի՞նչ բան է, խո հոքիս դուս էկավ։

ՊԵՊՈ

Թո՛ղ դուս գա, իմն էլ հիդը, ումն ի՞նչկու պակսի. շա՛տ հարկավուր է խալխին քու հոքին, յա իմը՞։

ԿԵԿԵԼ, աչքերը սրբելով ու լացի ձայնով:

Ա՛խ, Պեպո ջան, խո սպանեցիր ինձ։

ՊԵՊՈ

Սպանողը սպանից, յիս ի՞նչ անիմ։

ԿԵԿԵԼ

Ո՞վ, ախար։

ՊԵՊՈ

Ո՞վ... Ա՛ղա Արութինը... (Իսոը ծիծաղում է:) Հը՛, հը՛, հը՛...

ԿԵԿԵԼ

Ինչի՞։

ՊԵՊՈ

Աստուած վուչ գիդե նրա գլուխը... Իմ տանն ինձ անպատիվ արավ, կոսե. փուղ բախշեցի ու էրեսիս խփից, կոսե... Գատի բան չպիդենա՞ս, կեկել, մինձ մարթու զեհին դիբչիլը։ Ինձ պես խիղճ օղորմելին համարցակվի էն հանգի ա՛ղա մարթու ճակատին իմքին խփե՞... Հա՛նաք բան է՞... (Իսոը ծիծաղով:) Հը՛, հը՛, հը՛... (Ձեռքերը բարձրացնելով:) Ա՛ստուած, ա՛ստուած...

ԿԵԿԵԼ, մոտենալով և փաթաթվելով Պեպոյին:

Էտ խո ի՛մ խաթիր, ի՛մ խաթիր, Պեպո ջան. սիվցիլ էր իմ օրն ու ինձ պես բաչիղուշ քուր չէիր ունեցիր։ Ի՞նչ էիր ուզում ինձմեն. քեզ ո՞վ էր ասում, վուր էնենց մինձ մարթուն բիդամաղ անիս։ Մայինց էսենց էր ու էսենց իմ բանը, էլ ցավիս վրա ցավ ո՞ւր էիր ավելցնում։ Ի՞նչ անինք հիմի... Գնդեն վուր իմանա, ի՞նչ կանե. դամբրա կու նեղնի իմանա։

Հաց է լինում:

ՊԵՊՈ

Դեդեն շատ ցավի է գիմցի, էսաուրն էլ կու գիմնա։

ԿԵԿԵԼ, լալով:

Ա՜խ, աստուած, ինչի՞ բան-հոգի չիս անում ինձ էստի էվեստ։

Գնում է ընկնում է տախտի վրա ու լաց լինում:

ՊԵՊՈ, մոտենալով Կեկելին:

Հե՛րիք է, թե քու ա՛ստուած կու սիրիս։ Խո տե՛սար, վուր լացն էլ վունչիչ չօգկից... (Դեպի երկինք աղաղակելով:) *Է՛ս է քու դադաստանն, էլի՜, ա՛ստուած... Արութինը թալնե, Արութինը զբնե, Արութինը հաշա ուտե ու մի՛նք տանջվի՜նք... նա խրխնջա ու մինք ա՛խ քաշի՜նք... նա քեփ անե ու զող անե ու մինք դա՛ռը-դառը լաց ըլի՜նք...*

Դուրս է գնում աջ դռնից:

ԿԵԿԵԼ, լաց լինելով:

Պե՛պո ջան, Պե՛պո ջան...

Դուրս է գնում Պեպոյի ետևից:

ՏԵՍԻԼ Թ

ԱՐՈՒԹԻՆ, ԳԻՔՈ. երկուսն էլ գլխարկով:

ԳԻՔՈ, ներս գալով դիմացի դռնից:

Ա՛յ, թե սուտ իմ ասում։

ԱՐՈՒԹԻՆ, ճետևելով:

Աբա՛, աբա՜։

ԳԻՔՈ, առաջ գալով:

Մո՛լափ, հա՛մեցեք նստի, մե տերն էլ գա։

ԱՐՈՒԹԻՆ

Դիփ մեկ է, Գիքո, մե տեսնիմ թե էտ ի՞նչ թուխտ է։

ԳԻՔՈ

Ա՛յ, ի՛նչ թուխտ է, ա՛ղա Արութին։ (Զեռքը գրպանն է տանում և հանում քթախոտի տուփը:) *Չէ՛, էս չէր, ամա դիփ մեկ է...* (Քաշում է:) *Հը՛մ... Ա՛յ,* (Պանում է քթախոտի տուփը և մուրճակը հանում:) *դուն մե քիչ հի՛ռու կանգնի, ա՛ղա Արութին։*

Ինքը հեռանում է դեպի տախտը:

ԱՐՈՒԹԻՆ

Վա՜, վա՞խենում իս, վուր չխլի՜մ. աշխարքն ալան թալան իս չէ՞։

ԳԻՔՈ

Չէ՛, չէ՛, ա՛ղա Արութին, էտ վո՞ւնց կոնիս, գա՞նա դուն է՛տ հանգի մարթ ի՜ս. ամա էս թուխտը խիստ փաթերակավուր իմքին է։ Ասում իմ ձեռդ չդիրչի։ (Բաց անելով մուրճակը:) *Ա՜յ, տի՜։* (Հեռվից ցույց տալով:) *Էս է՞։*

ԱՐՈՒԹԻՆ, գլուխը մոտեցնելով մուրճակին:

Աբա՛, աբա՛։

ԳԻՔՈ, մատնացույց անելով:

Վա՜, ա՛յ. «Զեմի վալիա, Արութին Զիմզիմովիչ»*

Զարմանք: Տեսարան:

ԱՐՈՒԹԻՆ, շփոթվելով և կակազելով:

Է՛տ... է՛տ... (Զեռքը մեկնելով:) *Ի՛մ... ի՛մ... ձեռքն է՞։*

ԳԻՔՈ, մոտեցնելով մուրճակը:

Բաս ի՛մն է՞։

ԱՐՈՒԹԻՆ, ճանաչելով մուրճակը, տանձին:

Էս ի՞նչ ֆիրգնուց պատիժ էր... (Զեռքերը առաջ տանելով:) *Մե լավ տեսնիմ...*

ԳԻՔՈ, մուրճակը հեռացնելով:

Մո՛լափ, ադա ջան, է՞։ Ախար, էնղադա վուր ասում էի թե ֆիս վկա իմ, վուր պարտ իս, սո՛ւտ էի ասո՛ւմ. ամա վուր քու օխտեմեն չեկա, ֆիս ի՞նչ անիմ։ (Աղաղակելով:) *Գոհանա՜մ քու դադաստանին, ա՛ստուած։*

ԱՐՈՒԹԻՆ, կամենալով մուրճակը խլել:

Մե տեսնիմ, ասում իմ...

ԳԻՔՈ, գրպանը դնելով մուրճակը:

Է՜, ա՛ղա Արութին, ձե՛ռը վիկալ, քու հորն օղորմի։ Ասում իմ, վուր փաթերակի թուխտ է, է՞։ Էս սահաթիս գու քա Պեպոն, Կակուլին մե նմու-

* Վրացերեն է.—*Իմ պարտքն է։*

տումը կու գթնե նրան։ Դուն էստի մո՛վափ տու, մե գնամ Շուշանին իմաց անիմ։

Ճանապարհից ետ նայելով Արութինին, դուրս է գնում ձախ դռնից։

ՏԵՍԻԼ ԺԱ.

ԱՐՈՒԹԻՆ, մենակ, երկար ժամանակ սառած կանգնած է, հետո ուշքի գալով։

Է՛ս հանգի էլ օյի՛ն... Շատ բան է էկի գլուխս, ամա էս թահարը չէ էլի... վո՞ւրդանց լուս ննգավ էս անիծած բարաթը.. վո՞ւնց լուս նընգավ... է՛բազ է՛... Չէ՛, վո՞ւրդանցի էբազ է... Թե էբազ է, (Շուրջը նայելով։) էստի ի՞նչ իմ շինում... էս... Պեպոյի տունը ու յիս... (Շոշափում է իրան։) Արութին Զի՛մզիմովս էստի՞... Չէ՛, դրուստ ասածու պատիժ է... Չելավ, էլի՞... Է՛նղադա բանիրը մարսեցի ու կուժը էս մեկի վրա է կոտրըվում, էլի՞. է՛ս էր վիրչն, էլի՞... խալխը վուր իմանա, ի՞նչ կոսին... էլ ո՞վ կու ավտա ինձ... Ագահութինը աճկիրս կապից, էլ սիվ ու սիպտակ չչոգեցի... Հենց էս սահաթիս էլ էնղադա խալխումն ասի... վուր յիս վունչիչ պարտ չիմ, ասի... Հիմի գնա՛, սիվցավ էրեսդ... Ա՛մութ քիզ, Արութին, ա՛մութ քիզ. էս վո՞ւնց բիրիր բանդ, վո՞ւնց... (Երկար լռություն։) Չէ՛, ուրիշ շարա չկա, վունցոր ըլի պիտի էստի էվետ ապատիմ բարաթս... Թեզուզ տաս թուման էլ գլուխ դնամ... Թեզուզ քսան, թեզուզ յարսուն, թեզուզ մեկն էրկու... Իմ հա՛խն է, թո՛ղ ջանս դուս գա։

Ընկնում է աջ կողմի աթոռի վրա։

ՏԵՍԻԼ ԺԲ

ՆՆ., ՊԵՊՈ

ՊԵՊՈ, ներս է գալիս աջ դռնից, առաջին արարվածի հասարակ հագուստով և գլխարկը ծածկած։ Տեսնելով Արութինին, ապշում է։

Վա՛ դուն էստի՞։

ԱՐՈՒԹԻՆ, գլխարկը վերցնելով, դնում է սեղանի վրա։

Հա՛, հենց յիս, ի՞նչ իս արմընում։

ՊԵՊՈ

Գանա դուն ինքդ չիս արմընո՞ւմ, վուր է՛ստի ի՞ս, յիս վո՞ւնց չարմընամ... Մե ասա՛, ի՞նչ քամին է բերի քիզ էսթենը, յա ի՞նչ բարի հրիշտակ է մտի սրտումդ, յա ի՞նչ չար սատանա բերի քիզ դռանը։

ԱՐՈՒԹԻՆ

Ղոնաղի մոհբաթ չիս գիդացի, Պեպո։

ՊԵՊՈ

Դո՛ւն՝ իմ ղոնա՞ղ. էրեսդ խե՛չը հանե։ Քիզ վրա մինձ դուշման չունիմ յիս աշխարքումը, ու դո՛ւն իմ ղոնա՞ղ։

ԱՐՈՒԹԻՆ

Նստի՛, հալա հենց ապրիս։

ՊԵՊՈ

Դուն նստած իս, էլի՞. յիս էսենց էլ լավ իմ։ Մե ասա՛՝ ի՞նչ իս ուզում... Թե ձուզն առնելու իս էկի, յանղլիշ իս, (Դառը ժպիտով և հեգնորեն։) դա՛դաղա է։

ԱՐՈՒԹԻՆ

Պեպա՛ն... ա՛րի, ախպեր, բարիշինք։

ՊԵՊՈ, ծաղրելով։

Օմքին խո չէ՞ աղոթի քիզ, ա՛ղա Արութին։

ԱՐՈՒԹԻՆ

Աղոթիլ ին թե չին աղոթի, յիս քիզ ասում իմ, ա՛րի բարիշինք։

ՊԵՊՈ

Իմ բարիշիլը ինչի՞տ է հարկավուր, ա՛ղա Արութին. դուն մինձ մարթ, յիս մե խիղճ օղորմելի, դուն հարուստ, յիս ախկատ... (Հեգնորեն։) Վա՛խենում իս, վուր իմ մագիեր քիզ չղրգին բիրթը՛, թե՞ ճոնիրդ դողում է ինձմեն։

ԱՐՈՒԹԻՆ

Տո, յիս ուզում իմ քիզ լավութին անի։

ՊԵՊՈ

Ի՛նչ ձեռնեմետ էկավ, խո ա՛րիր. փուղ էիր պարտ՝ հաշա կերար, էկա տունդ՝ խնդրելու, տանետ դուս արիր, վիրչը բիրթն էլ իս ղրգիլ տալի, ուրիշ ի՞նչ լավութին պիտի դուս գա ձեռնեմետ, ա՛ղա Արութի՛ն։ Էկիլ իս, վուր մա՛սխարա գդիս ի՞նձ։ Հե՛րիք է, հե՛րիք, պարոն... Գնա՛, գնա՛, աստծուն փա՛ռք տու, վուր իմ տանն իս ուիմ ոճրագործ տակնիս գթնվում,

Թե չէ էս էրած սրտիս վրա էլ սաղ չէիր պրծնի իմ ձեռնեմեն։ Միտտ է՞... խո մի՛տտ է՝ ինչ հանգի դուս արիր ինձ քու տանեմեն... էն արարմունքը քի՛ գ կու սաղ գեր, քի՛ գ, ա՛դա Արութին։ Ցիս քիգ խնդրում իմ, համեցեք գնա՛, ջա՛փա քաշե վի՛կաց։ Հորես կու տանին ինձ, էլ վուխտ չկա, ուզում իմ մորս ու քվիրս բարովիմ։

ԱՐՈՒԹԻՆ

Տո՛, էտ բանը իմ ձեռին չէ՝։ Էլ շղրգիլ տամ քիզ բիրթը, ուրիշ ի՞նչ իս ուզում։

ՊԵՊՈՆ զարմացած նայում է, իսկ դրսից լսվում է ԿԱԿՈՒԼԻՈՒ ձայնը՝

Էկա՞վ։

ՏԵՍԻԼ ԺԹ

ՆՐԱՆՔ, ԳԻՔՈ, ԿԱԿՈՒԼԻ

ԳԻՔՈ, դիմացի դռանը, Կակուլուն։

Կորիլ ին, կորիլ։ օչով չկան։

ԿԱԿՈՒԼԻ, ներս գալով, Գիքոյին։

Տո՛, ա՛յ Պեպոն, ի՞նչ իս ասում։

ԱՐՈՒԹԻՆ, տեսնելով Կակուլուն, առաձին։

Է՛լի էս պաժարնին։

ԳԻՔՈ, ներս գալով։

Էս վո՞ւնց էկար, Պեպան, վուր չտեսա։ (Արութինին։) *Ա՛յ, ա՛դա Արութին, հիմի կու տա՛մ,* (Մատնացույց անելով Պեպոյին։) *Թե կոսե։ Է՛տ դուն, է՛ս սու։*

ՊԵՊՈՆ

Էս ի՞նչ խաբար է, չիմ իմանում։

ԿԱԿՈՒԼԻ

Վա՛, աղա Արութինի մոդ դուն իս խոսում ու մի՛ զ իս հարցնո՛ւմ։

Գիքոն անցնում է բեմի ձախ կողմը։

ՊԵՊՈՆ

Սրա ասածը խո ուփրո չիմ իմանում։ (Հեգնորեն։) *Էկիլ է՝ բա՛րի-շինք կոսե։*

ԿԱԿՈՒԼԻ, ծաղրելով։

Հա՛... (Հեգնորեն գլուխ տալով Արութինին։) *Բաս մե լավ շնորհակալութին անինք։*

ԱՐՈՒԹԻՆ, առանձին, շփոթված։

Մտի՛կ էս լրփին։

ԿԱԿՈՒԼԻ, Պեպոյին։

Տո՛, թե՞ ասում էիր, թե լավ մարթ չէ, կոսե, աղա Արութինը։

ԱՐՈՒԹԻՆ, առանձին։

Անսկա՞մ։

ՊԵՊՈՆ, ժպտալով։

Ի՞նչ գիդիմ, խճպատանքը գարթիլ է։

Գիքոն շարժում է գլուխը։

ԿԱԿՈՒԼԻ, Պեպոյին։

Իժում վո՞ւնց է բարիշում, կեսը տալիս է՞։ (Մոտենալով Արութինին։) *Ցիս քու մարթ ասողին...* (Բռունցքը բարձրացնելով։) *Դե՛, հոքիտ պա՛հ տու ու սե՛րթուկդ հանե։*

ՊԵՊՈՆ

Կա՛կուլի, Կա՛կուլի։

ԳԻՔՈ, Պեպոյին։

Տո՛, բան-հոքի չանե։

ԿԱԿՈՒԼԻ, Արութինին, ձախ ձեռքով բռնելով նրա օձիքից։

Ը՛, քու... (Աջու բռունցքը ցույց տալով։) *Դե՛, գնա՛ հիմի՝ գա՛նգատ արա...*

ԱՐՈՒԹԻՆ

Տո՛, գժվիլ ի՞ս, է՛յ։

ՊԵՊՈՆ, հեռացնելով Կակուլուն Արութինից։

Մո՛ւլափ, Կակուլի, էտ մարթութին չէ։

ԱՐՈՒԹԻՆ, շորերը ուղղելով:

Ֆրի՛ ու ձիպ պիտներուն լա՛վութիւն արա։

ԿԱՍՈՒԼԻ, Պեպոյի ձախ կողմը կանգնած, Արութինին:

Լավութի՞ն... (Պեպոյին:) Ի՞նչ պտուղ է՞... Դիպ հոքու էգնեն է ման գալի, ա՛յ, կա՞նա չիմ գիդի... (Նայելով Արութինին, գլուխը շարժում է, ետեւը կրկին դառնալով Պեպոյին:) Աբա բարաթը չէր լուս ննգի, տեսնիմ թե վո՛ւնց էր լավութիւն անում։

ՊԵՊՈ

Ի՞նչ բարաթ։

ԿԱՍՈՒԼԻ, նույն դրությամբ:

Վա՛ռ, բան չեր չիս գիդի՞. ա՛յ, էս ապա պարնի բարաթը։ (Գնալով դեպի Գիքոն:) Տո՛, բի՛, է՞, (Պեպոյին:) էս սհաթիս ճամփին վուր իմացայ, ոանգ ու ոունգը գնաց իզձինը... Ուզում էի էնգի էվետ դրա ժամը դուս բերի, ամա վուխտը չէր. քու իրուն էի շտապում... (Գիքոյին:) Դե՛, չո՛ւստ արա, Գիքո ջան, է՞։

ԳԻՔՈ, զրպանից հանելով մուճակը:

Մո՛ւլափ, մո՛ւլափ, տիրոջը տուր։

Մուճակը մատնցնում է Պեպոյին:

ԿԱՍՈՒԼԻ, մուճակը խլելով Գիքոյի ձեռքից և տալով Պեպոյին:

Վո՛ւնց է, վո՛ւնց, լոքին։

ՊԵՊՈ, գնելով մուճակը, հետզհետե զարմանում է: Տեսարան:

Էս է՞բազ է՞...

ԿԱՍՈՒԼԻ

Էրազ ու կես է։

ԳԻՔՈ

Ղո՞ւրթ վուր էրազ, Պեպո ջան։ Չիս գիդի թե...

ԱՐՈՒԹԻՆ, առանձին:

Է՞սղադա էլ խայտառակութի՞ն։

ԿԱՍՈՒԼԻ, մատնացույց անելով Գիքոյին:

Սրան թե խոսնցրիր, Պեպո, օխտը դիվի հեքիաթի վրա էրգար է էտ գարագի առակը։

ՊԵՊՈ

Ախար, էս վո՞ւրդանց լուս ննգավ։

ԳԻՔՈ, հատելով տախտի վրա և պատրաստվելով գնալու:

Ա՛յ, Պեպան ջան, վունց էր...

ԿԱՍՈՒԼԻ, Գիքոյի բերանը ձեռքով ծածկում է:

Սո՛ւ, սո՛... դուն սո՛ւս, Գիքո ջան... (Պեպոյին:) Էտ վունցոր լուս ննգավ, իժում կասինք. ամա գուն էտ անասանուն վա՛մալա արա։

Արութինը տատապելի դրության մեջ է:

ՊԵՊՈ, թերև նայում է Արութինին և խիզախ դառնալով հայացքը մուճակի վրա, վերցնում է գլխարկը և դեպի երկինք ոտաղակում:

Գոհանա՛մ քի, տե՛ր, գիտունի գաղասանի վրա քու գաղասանն է էլի դուրթ... (Գլխարկը ծածկելով, Գիքոյին:) Ա՛ռաս իմանում էր ախար, է՞...

ԳԻՔՈ

Գիդե աստուած, վուր չիս մեղ չունիմ, Պեպո ջան...

Կակալին ձեռքով իր բերանը ծածկելով, հարցնում է Գիքոյին թե:

ՊԵՊՈ

Իմ բարի հրիշտաքն իս դուն էս սահաթիս, Գիքո ջան, ի՞նչս ասում

Լուռ և անշարժ նայում է Արութինին երկար ժամանակ:

ԳԻՔՈ, նույն միջոցին, ցածր ձայնով:

Բարի հրիշտաքն ըլի քու քոմագը, վուրթի։

Երկար լռություն: Պատկեր:

ՊԵՊՈ, ծանր մոտենում է Արութինին և մուճակը ցույց տալիս:

Էս կու ճանչնա՞ս, ա՛ղա Արութին... (Երկար և լուռ նայելով երեսին, գլուխը շարժում է:) Հի՛մի իմ իմանում քու էստի գալը... Լա՛յիզ արիր, հա՛... Թե՛ գոսե վունչիչ պարտ չիմ, թե՛ վուր օրթում հատարտ արիր, թե՛ վուր վուրթկերանցով օրթում գերարտ... Ի՞տ է քու օրթումն, էլի՞. Է՞տոնց իս ամեն օր օրթում ուտում, էլի՞. Է՞տով իս աշխարքին խափում, էլի՞. Է՞տ օրթումնեղով իս մոդ արի Էսղադա փուրն, էլի՞... Ա՛յ, խոռ՞վ կենա քիզ

քու օրթումները։ Ամեն մե քու օրթումը օ՛րթունք կտրվի ջանումտ ու ջանդ ծակծկվի, վուր հոքիտ էգերա լիրգնքի լուս տեսնե... (Ավելի մոտենալով։) *Զէ՛, չիս ամանչո՞ւմ... Խնդատանքը խո գարդակ քամի է քիզ համա։* (Մուռնակը ճորից ցույց տալով։) *Է՛ս ի՞նչ է, ի՞նչ, էստուրն ի՞նչ կոսիս։ Է՛ստումեն էլ չիս ամանչո՞ւմ, էս քու կո՛տրած ձեռով չիս գրի՞... Ասա՛ չէ, էլի՞, ասա՛. քիզ համա խո հաշա ուսիլը հիշտ է... Ա՛յ, գե՛դինը մտնիս էտ քու պատվական շուրեբով։*

Աբուլինը սատկիկ շվարվում է։

ԿԱԿՈՒԼԻ, որ գտնվում է բեմի ձախ կողմը, գլխարկը վեր առնելով բացականչում է։

Հա՛-ջան, հա՛-ջան, ադա Աբուլին... (Գլխարկը ճորից ծածկելով և ձայնը փոխելով։) *Թոքա՛, թե չիս ուզենամ քու տիղն ըլիմ։*

ԳԻՔՈ, վեր կենալով։

Էս Շուշանն ի՞նչ էլավ։

Գլուխը շարժելով դուրս է գնում ձախ դռնից։

ՏԵՍԻԼ ԺԹ

ՆԻԱՆՔ, առաջ ԳԻՔՈՅԻ

ԱԲՈՒԼԻՆ, ուշքի գալով, Պեպոյին։

Տո՛, ի՞նչ խս սարսաղ-սարսաղ դուս տալի, վուր միտս էր էլի, խո՞ կու տանի, էլի՞...

ԿԱԿՈՒԼԻ, ձեռքերը բարձրացնելով։

Հը՛մ...

Ձեռքերը վայր թողնելով խփում է միմյանց և հետո բթամատները ֆամարին հագցնում։

ՊԵՊՈ, Աբուլինին։

Միտդ չէ՞ր... Խի՛ճ օղորմելի. յարաբ վո՞ւնց իս մե թիքա հաց ճարում ուտելու... Ո՞ւմն իս խափում, ո՞ւմը... Էս սահաթիս դատամերի մոդ հաշա կերար, վուր քու օրումն էլ ինձ վունչիչ չիս պարտեցի, վուր սուտ շառիր իմ մոգոնում յիս քիզ վրա. Էս սահաթիս ձեռք քաշեցիր էստու

թխտիրը ու հի՞մի միտդ չէ՞ր... ու հի՞մի բարիշի՞նք... Էսղադա վուխտ շարչրրեցիր, էսղադա գլուխտ անիծիլ տվիր ու հի՞մի լավ մարթացար մե-բա՞շ... Վախենում իս, հա՛. վախենում իս վուր աշխարքը չիմանա քու զալթաբանդութինը, հա՛. վախենում իս, վուր դատամերի մոդ էրեսդ չսիվնա, հա՛... Քու մակումը, թո՛ղ միզ մոդ սիվնա մեննակ, ի՞նչ հաչաթ, մինք անմիզ օմքնիր ինք, ո՛վ ինչ կու իմանա. օղոնդ խալխը չիմանա, օղոնդ քու ննգրտիքը չիմանան... (Ձայնը փոխելով։) *Գնա՛, գնա՛, ասում իմ։*

Կակուլին ազատելով ձեռքերը, սպառնալի կերպով շարժում է գլուխը և բռունցքը կրծքին խփում։

ԱԲՈՒԼԻՆ

Խո պրծա՞ր, ախպեր. ինչ ասելու ունեիր, խո ա՞սիր, սիրտդ խո հի՞դ էկավ։ Հիմի մե ի՛նձ լսե. յիս քիզ ասում իմ՝ փո՛ղիրտ առ, բարաթս ի՛ս տու ու քու բիրթը մոշլա անիմ էս սհաթիս։

ՊԵՊՈ

Կէհամ բիրթը, կէհամ, յիս քու օղորմութինը չիմ ուզի ու (Մուռնակը ցույց տալով։) *էս փուղիրը առանց քու ասելու էլ կու առնիմ։*

ԱԲՈՒԼԻՆ

Գժութին մի՛ անի, Պե՛պան։ (Ձեռքը ծոցը տանելով։) *Ա՛ռ էս փուղիրտ, ասում իմ։* (Պեպոն գլուխը շարժում է։) *Ա՛ռ, մե իմքին էլ ավելցնիմ. հը՛ ի՞նչ դադա... մե հինգ թուման ավելցնի՞մ... տա՞ս... քսա՞ն...*

ՊԵՊՈ, որ արհամարհանքով նայում է Աբուլինին, դիմում է Կակուլուն։

Մտի՛կ իս անո՞ւմ, Կակուլի, մտի՛կ իս անում սրա՞ն. ինչրու հիմի գլուխկն էլ չէր տալի ու հիմի ավելցնում էլ է... Է՛սենց ին, ա՛յ, դի՛փ էսենց ին. քանի օչով չի գիդի, հախն էլ ին կտրում ու յիփոր վախենում ին՝ բանն աշքարանա, է՛սենց ին ժաժ գալի, ա՛յ, է՛սենց, վուր անումներուն չկոտրվի միթամ։

ԿԱԿՈՒԼԻ, Պեպոյին, ցածր։

Տո՛, ա՛ռ, ա՛ճկը հանե, ու դրա չիգրը (Բռունցքը ցույց տալով։) *յիս գիդիմ, էտ դա՛լբի դուլաբինը։*

ՊԵՊՈ, շարունակելով, Աբուլինին։

Յիս քու բախշիշը չիմ ուզում, ա՛ղա Աբուլին, տար ա՛ճկդ դի. ամա ա՛ճկդ կու հանիմ ու գլուխկը, վուրդիոր ինձ էս սահաթիս ասեցիր, է՛նքի

կու առնիմ. Լ'նդի. Թո՛ղ դիփունքը ճանչնենան՝ ի՛նչ մարթ էլ իս, Թո՛ղ դիփունքն իմանան քու արարմունքը։ Էստու համա բիրթը կի չէ, Թեգուզ հո՛ւրումը կու նստիմ, հո՛ւրումը։

ԿԱԿՈՒԼԻ, Պեպոյին

Ը՞, յիս քու խելքին ի՛նչ ասիմ։

ԱՐՈՒԹԻՆ

Բոնե՛, իսուն թուման ավելցնիմ։

ԿԱԿՈՒԼԻ, մոտենալով Արութինին։

Բի՛, յիս բարիշեցնիմ։

ՊԵՊՈ, Կակուլուն ետ մղելով։

Քու բանը չէ, Կակուլի։

ԿԱԿՈՒԼԻ, ետ գնալով։

Ա՛յ սարսա՛ղ։

Կրկին անցնում է բեմի ձախ կողմը։

ՏԵՍԻԼ 36

ՆՐԱՆՔ, ՇՈՒՇԱՆ, ԳԻՖՈ

ՇՈՒՇԱՆ, դաքիրայով դիմացի դռան շեմքում, Գիմոյին, որ հետևում է նրան։

Վո՛ւյ, քոռանամ յիս, զուրթ իս ասո՞ւմ, Գիքո՛... (Առաջ գալով և դաքիրան վերցնելով։) Վո՞ւրդի է, վո՞ւրդի, մեր Հոքեհանը... Սա է՞... Դաքիրան գցում է տախտի մոտ դրած աթոռի վրա, իսկ Գիքոն գնում կանգնում է տախտի մոտ։

ՊԵՊՈ

Սա՛, սա՛, դեղի. ա՛յ մեր բախտավուրողը։

ՇՈՒՇԱՆ, Արութինին, շտապով։

Ա՛յ, գեղինը պատվի ու քիզ դեվեր տանե։ Ի՞նչ իս ուզում միզմեն, ի՞նչ... Փուղենիրուս հաշա կերար, ախչկաս բողազը դուս կտրեցիր ու

հիմի Պեպոյիս էլ բի՛րթն իս ղրգիլ տալի՞. չի՛գր իս մտի միզ հի՛դ... ո՛ւզում իս վի՛ր ջնջի մի՞զ...

ԱՐՈՒԹԻՆ, առանձին։

Կարկուտ է՞ անիծածը։

ՇՈՒՇԱՆ, շարունակելով։

Ա՛յ, վի՛ր ջնջվի քու անումը, քանդվի ու բրիշակ ըլի տուն ու տիդդ. քու անամութ կնգա սրտումը ենգնի էն կրակը, ի՛նչ կրակ մեր սիրտը դցեցիր։

ԿԱԿՈՒԼԻ, առանձին և կիսաձայն։

Ամի՛ն։

ՊԵՊՈ

Դե՛դի, դե՛դի...

Կեկելը ներս մտնելով աջ դռնից, դամբի մոտ. անկյունումը, լուռ լաց է լինում։

ՏԵՍԻԼ 39

ՆՐԱՆՔ, ԿԵՆԼ

ԱՐՈՒԹԻՆ, Շուշանին։

Խի՛լքի արի, խի՛լքի, ինչի՞ր իս ասում, դեղի։

ՇՈՒՇԱՆ, շարունակում է, դառնալով մյուսներին։

Ո՞ւր է. սիվցրիք էրեսը. ո՞ւր է էն սիվ ու մութ բարաթը։ (Արութինին։) Հի՞մի էլ կոսիս, վուր վունչիչ պարտ չէա մի՞զ։

ԱՐՈՒԹԻՆ

Պա՛րտ իմ, պա՛րտ իմ ու տալիս իմ, ուրիշ ի՞նչ իք ուզում։

ՇՈՒՇԱՆ

Բաս բիրթն էլ ո՞ւր իս ղրգիլ տալի։

ԱՐՈՒԹԻՆ

Բի՛րթն էլ չղրգիլ տամ. վո՛ւղն էլ տամ, մե ի՛մքին էլ ավելցնիմ. ամա վուր չէ բարիշում, յիս ի՞նչ անիմ։

Նուշանը զարմացած նայում է։

ՊԵՊՈ, Առութինին:

Հի՞մի բարիշի՜նք, հիմի՜... (Մոտենալով Կեկելին:) *Իժում սրան ի՞նչ իս ասում...* (Զախ ձեռքով բռնում է Կեկելի աջ ձեռքը և առաջ բերում:) *սրա մոդ վո՞ւնց իս բարիշում։ Սաղ-սաղ գերեզմանը դրիր, օրն ու ումբրը խավրեցրիր, կինքը հառամ արիր. վո՞ւնց իս բարիշում սրա հիդ, վո՜ւնց... Վո՞ւնց իս հիդ տալի սրան, ինչոր խլեցիր սրամեն, վո՜ւնց։ Քու վուխչ հարստութինն էլ չի կանա լավցնի է՛ն յարեն, ի՜նչ յարա բաց արիր դուն սրա սրտումը... Գնա՛, գնա՛. էլ մինք բարիշելու վունչիչ չունինք։ Գնա՛, քանի սաղ իս աշխրքումը, սրա արտրսունքնիրը մի՛տդ բի, վուր էգեբա էլ մեկելներուն չանիս, ի՜նչ սրան արիր։*

ԿԵԿԵԼ, աշխատելով ազատել ձեռքը:

Թո՜ղ, Պե՛պո ջան, թո՜ղ... (Պեպոն թողնում է նրա ձեռքը:) *ի՞րան սիվցրու իր բարաթը։*

Անցնում է Պեպոյի աջ կողմը:

ԳԻՔՈ, Պեպոյին:

Տո՛, հա՛դիր բարիշի՜ս։

ԿԱԿՈՒԼԻ, Շուշանին:

Ասա՛, դեդի, վուր բարիշի, հադիր ավել է տալի։

ՇՈՒՇԱՆ

Իր ա՛ճկը դնե ավելին, թաք Պեպոյիս ձեռը չտա։

ԿԵԿԵԼ

Բա՛րիշի, Պեպո ջան, բա՛րիշի։

ԱՐՈՒԹԻՆ

Ա՛րի կոտրվի, Պեպան, բա՛րիշինք։

ՊԵՊՈ

Ա՛րի բարիշինք, ա՛րի... Արի գնանք, վուրդիոր ինձ էս սահաթիս ստեցիր, ա՛րի մեկ էնդի էս բարաթը շանց տամ, մե էրևա վուր սուտը յիս չիմ, թեգուզ գլըխկեմեն էլ մե իմքին քիզ փեշքաշ... Ա՛րի, է՛լի, ա՛րի։

ՇՈՒՇԱՆ, Առութինին:

Գնա՛, գնա՛, վունցոր միր էրեսը սիվցրիլ իս, թո՛ղ հիմի քու էրեսը սիվնա։

ՊԵՊՈ

Ա՛րի, է՛լի։

ԱՐՈՒԹԻՆ

Էտ վուր ուզենամ, իսո էս դադա էլ աղանչաք չիմ անի։

ՊԵՊՈ

Ը՛ը, գո՛ւդ, ավազա՜կ...

ԿԱԿՈՒԼԻ, առաձին, կիսաձայն և կրծքին խփելով:

Վո՜ւյ մե՜... (Դիմացի դուռը դռսից բախում են: Լռություն:) Մոտենալով դռանը և փորր ինչ բաց անելով, որպես թե մեկի հետ խոսում է:) *Հա՛, էստի է։* (Առաջ վազելով, Պեպոյին:) *Տո՜, գժվիլ ի՞ս, քո՛ւթահ արա, պրիստավն է։*

ԿԵԿԵԼ, ՊԵՊՈ, ՇՈՒՇԱՆ, միասին:

Պրիստավը՜։

ԳԻՔՈ

Պրիստավը՜։

Պատկեր

ԱՐՈՒԹԻՆ

Ի՞ս տու բարաթս, Պեպան, թե չէ բիրթն ին տանում։

ՊԵՊՈ

Հաջաթ չէ, կէհամ բիրթը, կու նստիմ. էնդի իսո չիմ մեռնի... Մե օր կու աղատվիմ ախար, էլի՜. վադեն հիսու չէ... Շա՛տին իս խափի էսենց, շա՛տի գլխին իս օլին էկի էսենց, շա՛տի բողազն իս դուս կարի էսենց, ու յիս Պեպոն չիմ ըլի, թե դիփունանց ջիգրը չիմ հանի... Սա՛ղ աշխրքումը էրեսդ մուր կու շինիմ... Մնա՛ս բարով, դեդի... Մի՛ լաց ըլի, Կեկել, աստուծ օղորմած է, խղճի ճակտին էսենց է գրած։

Կակուլին կամաց-կամաց գնում կանգնում է դամբի մոտ և հետզհետե սպառնալի դիրք բռնում:

ԱՐՈՒԹԻՆ, սաստիկ շփոթված և առաձին:

Ի՞նչ անի՛մ հիմի։

ԿԵԿԵԼ, փաթաթվելով Պեպոյին:

Մի՛ գնա՛, Պե՛պո ջան, մի՛ գնա։

ՇՈՒՇԱՆ, Պեպոյին, մյուս կողմից:

Ի՞նչ իս անում, Պե՛պո. ի՞րան սիվցրու էս սիվ ու մութ բարաթը։

ՊԵՊՈ

Իրան տամ, վուր սրա մա՛սխարեն դառնա՞մ... վուր խալխի աճկումը սո՛ւտը յիս էրնամ, զուրթը սա՛... բիրթի ահու գլո՛ւիս ծախի՞մ... Չէ՛, դեղի, էս բարաթը աստուած թուր է դեվեր ղրգի ինձ համա... է՛ստով պիտի կտրիմ յիս սրա գլուխը... Քա՛նի քի պեսնիրն ին էրվում սրա ձեռնեմեն, քա՛նի (Մատնացույց անելով Կեկելին:) սրա պեսնիրն ին լաց ըլում, քա՛նի ինձ պեսնիրն ին տանջվում... Մեկն էլ է չի՞մաց անե աշխըրքին սրա արարմունքը՞, մեկն էլ է հարայի չկանենա տա՞, վուր էս մարթը, վուրին դիփունքը գլուխ ին տալի, դիփունքը հարգում ին ու պատվում ին, դիփունքը մի՛նձացնում, փա՞ռավուրում ու յիրգի՞նք բացրացնում... սա է՛ն մարթն է, վուրի համա վունչիչ բան սուրի չկա աշխրքումը... Հիմի լա՛ց ըլեք, ինչղադա գուլիք... Խղճի լացը հալբաթ էնդուր է ստիդծի աստուած, վուր հարուստի արարմունքը լվացվի։ (Դուրը կրկին բախում են:) *Մնա՛ք բարով...*

Դուրս է գնում դիմացի դռնից:

ՏԵՍԻԼ ԺԷ

ՆՐԱՆՔ, առանց Պեպոյի

ՇՈՒՇԱՆ, լաց լինելով Պեպոյի ետևից:

Պե՛պո, Պե՛պո...

ԿԵԿԵԼ, նույնպես և նույն միջոցին:

Պե՛պո ջան, Պե՛պո ջա՛ն...

Նետվելով դեպի տախտը, բերանիսիվայր ընկնում է մուրտի վրա և բարձրաձայն հեկեկալով լաց լինում մինչև վերջը:

ԱՐՈՒԹԻՆ, սեղանի մոտ կանգնած. երկու ձեռքով գլխին խփելով և առանձին:

Էս ի՞նչ բան էկավ գլխու։

Մնում է անշարժ:

ՇՈՒՇԱՆ, Արութինին, ծառանալով իր ամբողջ բարձրությամբ:

Յի՞րգնային թաքավորն անե քու դադաստանը...

Դուրս է վազում Պեպոյի ետևից:

ՏԵՍԻԼ ԺԸ

ՆՐԱՆՔ, առանց Շուշանի

ԳԻՔՈ, Արութինին:

Է՛ս էիր ուզում, էլի՞, հե՛ր օխնած։ (Մատնելով Կեկելին:) *Մի՛ լաց ըլի, Կեկել ջան, մի՛ լաց ըլի, աստուած օղորմած է։*

Գլուխը քարշ գցած դեպի Կեկելը, նույնպես մնում է անշարժ:

ԿԱԿՈՒԼԻ, մոտենալով Արութինին, նախ ձեռքը կանք արած, խակ աչը վայր թողած:

Հիմի, ա՛ղա Արութին, մնացինք յիս ու դո՞ւն...

Մնում են անշարժ: ՎԱՏԿԵԸ: Վարագույրը իջնում է կամաց-կամաց:

ՎԵՐՋ

ԷԼԻ ՄԵԿ ԶՈՀ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹՅՈՒՆ ՀԻՆԳ ԱՐԱՐՎԱԾՈՎ

1870

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՍԱՐԳԻՍ, հարուստ վաճառական
ԲԱՐԲԱՐԵ, նրա կինը
ՄԻՔԱՅԵԼ, նրանց որդին
ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ ՍՈՒՐԱԹՈՎ, գնդապետ
ՍԱԼՈՄԵ, նրա կինը
ԱՆԱՆԻ, նրանց աղջիկը
ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ ԲՐԻԼԻԱՆՏՈՎ, միլիոնատեր
ՎԱՆՈ, Բրիլիանտովի որդին
ՆԱՏՈ, Բրիլիանտովի աղջիկը
ՕՍԵՓ, Վանոյի ծառան

Առաջին և չորրորդ արարվածները կատարվում են Սարգսի տանը, երկրորդն ու հինգերորդը՝ Սուրաթովի տանը, իսկ երրորդը՝ Բրիլիանտովի տանը։

Անցքը պատահում է Թիֆլիզում 1860-ին։

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱԿՆ ՈՒ ՀԱԳՈՒՍՏԸ

ՍԱՐԳԻՍ, 55 տարեկան, եվրոպական սև հագուստով։
ԲԱՐԲԱՐԵ, 50 տարեկան, տեղական հագուստով։
ՄԻՔԱՅԵԼ, 27 տարեկան, եվրոպական հագուստով։
ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ, 50 տարեկան, զինվորական հագուստով։ Ուսերի վրա գնդապետի փնջավոր սպիտակ ուսնոցներ, իսկ կրծքին սուրբ Գեորգի սպիտակ խաչ 4-րդ աստիճանի (նշան քաջության) Հանդիսի նշանագեստի վրա գնդապետի աստիճանին վայել և ուրիշ շքանշաններ ու շքադրամներ։ Տանից դուրս գնալիս կամ դրսից տուն գալիս գաշտոնական թուր։ Գործ է ածում երկար ծխաքարշ։
ՍԱԼՈՄԵ, 40 տարեկան, տեղական հագուստով։
ԱՆԱՆԻ, 19 տարեկան։
ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ, 60 տարեկան։
ՎԱՆՈ, 25 տարեկան։ } *եվրոպական*
ՆԱՏՈ, 18 տարեկան։ } *հագուստով*
ՕՍԵՓ, 20 տարեկան։

ԾԱՌԱ, Սարգսի տանը, հասարակ սև չերքեզկայով։

ԱՐՔԱՅԱՆ ԱՌԱՋԻՆ

Սարգսի տանը մի զարդարուն սենյակ շատ դռեռով՝ աջ, ձախ և ետևից խորքում: Այս վերջին դռներից աջ կողմինը գլխավոր մուտքն է, իսկ ձախինը դեպի պարտեզն է տանում: Սենյակի հատակը ծածկված է գորգով, առաստաղից կախված է քան հանգած մոմեռով: Աջ կողմը՝ լուսամուտ և սիրուցով ծածկած սեղան, որի վրա գտնված են մի քանի գրքեր, իսկ ձախ կողմը բազմաց և սեղան: Ուր հատակն է՝ արտաներ, բազկաթոռներ, հանգած լապտերներ և հանգած մոմերով աշտանակներ: Ցերեկ է:

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ՍԱՐԳԻՍ, ԲԱՐԲԱՐԵ

ՍԱՐԳԻՍ, մտնելով աջ դռնից, գլխարկը ձեռքին, բարկացած

ԷՍենց էլ իր ասածի՞. «Հա ու չէ» չէ իմանում, էլի՞։

Գլխարկը գցում է սեղանի վրա:

ԲԱՐԲԱՐԵ, հետևելով:

Բթխիզտ խո չի՞ս կանա անի խղճին. տեսնում իս չէ ուզում, զոռով բան կուլի՞։

Նստում է:

ՍԱՐԳԻՍ

Ձե՛նդ, ձե՛նդ, դիփ քու միղն է, Բարբարե, վուր էնենց դալիմ է կանգնած։

ԲԱՐԲԱՐԵ

Վո՞ւնց չէ, մե իմ խիլքով է ապրում, մեկ էլ քու խիլքով։

ՍԱՐԳԻՍ

Ցիս էլ էտ իմ ասում, է՞, վուր ի՞նչ ուզեց՝ հիգը գնացիր, ի՞նչ ասավ՝ հիգը բանի տվիր ու վիրչը բերիր էն տիղը, վուր վունց հորն է լսում, վունց մորը։

Բարկացած մտնում է գալիս:

ԲԱՐԲԱՐԵ

Թե կի նա իր հոր վրա էլ ու մոր վրա էլ խելոք է, յիս ի՞նչ անիմ էտումը, ջա՞։

ՍԱՐԳԻՍ

Ա՛յ, ա՛յ, էտենց իս խոսում դիփ, վուր իրան էլ իս գժվեցնում, է՞։

ԲԱՐԲԱՐԵ

Դուն թե գժվեցնում իս, թե չէ յիս իսկի էլ չիմ գժվեցնում։

ՍԱՐԳԻՍ

Ի՞նչ, ի՞նչ... յիս իմ գժվեցնո՞ւմ. արի ու տիղը խոսի։

ԲԱՐԲԱՐԵ

Բաս ի՞նչ իս անում. ամալ աշքարա ասում է վուր չէ ուզում, դուն կի ուզում իս զոռով ուզիլ տա. ախար վո՞ւր խելոքը կու լսե. հա գժվեցնիլ է ու գժվեցնիլ։

ՍԱՐԳԻՍ, ձեռքերը բարձրացնելով:

Տո, Ստեփան Դանիելիչը, Ստեփան Դանիելիչը, էն միլիոններու տերը, ախչիկ ըլի տալի աղանչաքով, պաղանտանքով, էնղադա փուղ ու բաժնքով ու խելոքը չուզե՞... Տո՛, հաղիր ասիս թե՝ վո՞ւր խելոքը չի ուզի՞։

ԲԱՐԲԱՐԵ

Ի՞նչ անիմ. իսո տե՛սնում իս վուր նրա ուշկ ու միտկը Անանին է։

ՍԱՐԳԻՍ

Ցիս նրան Անանի կու շանց տամ, հալա մե մուլափ տա։ Էսե՛նց էլ օյի՞ն. մարթ ձիեմին վեր գա՝ իշին նստի՞, մարթ թալ ու խալիչեն Փողնե՝ գեղնի վրա գլորվի՞... Տե՛ր օղորմա տատա։ Ը՞մ, Յագոր Սիմոնիչ, է՞ս էր քու մտկումն, էլի՞... է՞նքան էկավ ու գնաց, է՞նքան տարավ ու էրի, ինչրու աղունակի պես էրեխես խիլքեմին տրավ իստակ։ Բաս թե

յիս քու տակը մնացի, Յա՛գոր Սիմոնիչ, էլ յիս մարթ չիմ ըլի, (Գլխարկը ցույց տալով:) *էլ էս գդակը գլխիս գդակ չի ըլի... էս ի՞նչ բանիր մոդա էկավ, ախպեր, թե յադի տանը յադի տղեն տուն ու դուս անե, ճաշ գնա, իրիգուն գնա, ախչկա հիդ սազ ու բազ անե, կոսիս նրա բիձու տղեն ըլի։ Ի՞նչ է՝ հարևնիր ինք, կոսե. հարևնիր չդառան՝ ցա՛վ դառան. յիրգնուց պատիժ էկան գլխիս, է՛լի։* (Ձայնը փոխելով:) *Դուն էլ ամեն սահաթի՝ էս ճա՛շ սարքե նրանց համա, էս մո՛ւրաբեք մոդ տար, էս մի՛րք առնուլ տու... է՛ս էիր ուզում, էլի՛... աստուծ քի՛զ կու հարցնե, քի՛զ, Բարբարե. Միխեիլի գժվեցնողը բաշտան չեր դուն իս։*

ԲԱՐԲԱՐԵ

Ի՞նչ հանգն իս խոսում, ա՛ մարթ. դուն վուր հե՛ր իս, յիս մե՛ր չի՞մ, դուն վուր ուզում իս Միխեիլի լավութինը, յիս չի՛մ ուզո՛ւմ։ Տեսնում իս իր ասածն է. ախար վրեն չարանում իս, է՛ն խիլքի տերն է վուր վախենա՛։

ՍԱՐԳԻՍ

Բա՛ռնեց ասա՝ ձեռներուն էլ պաչ անիմ, է՛լի։

ԲԱՐԲԱՐԵ

Ո՞վ է ասում վուր ձեռքեն պաչ անիս. ամա ամագ իս արի, աշխատանք իս քաշի, ուսում իս տվի, բերիլ իս մարթ իս շինի. քա՛, թո՛ղ ինչ քեփը տա էն անե, է՛, քիզ ի՞նչ։

ՍԱՐԳԻՍ

Ի՞նչ քեփը տա էն անե՛. վո՛ւնց չէ, յիս էլ դիփ էտ թադարիկումն իմ։ Աստուծ գիդենա, տանեմեն դուս կոնիմ, թե էս բանումն ինձ չի լսի։

ԲԱՐԲԱՐԵ

Շատ կի կու վախեցնիս նրան. էլի աստձուն փա՛ռք տու վուր էտենց խոնար վուրթի է տվի քիզ, թե չէ քու դուս անելուն չէր մնա ինչրու էսօր։

ՍԱՐԳԻՍ, բարկացած:

Էս կնիկն ինձ կու գժվեցնե դրուստ էսօր, աստուծ գիդենա։

ՄԱՌԱ, մտնելով խորշի աջ դռնից, որ գլխավոր մուտքն է:

Ա՛ղա, Ստեփան Դանելիչն է։

ՍԱՐԳԻՍ, շվարված:

Ստեփան Դանելիչը՞... վո՞ւրդի է, վո՞ւրդի. գիվիր էկա՞վ։

ՄԱՌԱ

Չէ՛, աղա, ներքիվը կալասկումը մնում է։

ՍԱՐԳԻՍ

Ի՞նչ անիմ հիմի, ի՞նչ մոգոնիմ... (Մտածային:) *Գնա՛, գնա, համեցե՛ք ասա։* (Մառան դուրս է գնում:) *Աբա՛, ի՞նչ չուզար տամ, ի՞նչ, քիզ իմ հարցնում, ասա՛, է՛լի։*

ԲԱՐԲԱՐԵ, բարկացած:

Ի՞նչ չուզար գուզիս տո՛ւ. էն դուն, էն քու Ստեփան Դանելիչը։

ՍԱՐԳԻՍ, ավելի բարկացած:

Ը՞մ, ը՞մ, մե մտիկ, է՞...

ԲԱՐԲԱՐԵ

Քու գլուխը չունիմ, քա՛...

Գնում է, բայց տեսնելով Ստեփան Դանելիչին գլխավոր դռներում, շվարվում է։

ՏԵՍԻԼ Բ

ՆՈՒՆՔ, ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

ՍԱՐԳԻՍ, առաջին:

Քու [illegible] գալու սահաթն էլ, հրա՛...

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Բա՛րի լուս ձիգ։

ԲԱՐԲԱՐԵ

Աստուծ բարին, համեցե՛ք։

ՍԱՐԳԻՍ, խաղցրությամբ:

Ախար, Ստե՛փան Դանելիչ, ո՞ւր իս էլի ջափա քաշի. ինձ վուր հրամայիլ էիր, չէի գա՞։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Ի՞նչ անիս, պարուն, ովոր ում մոդ բան կունենա, նա պիտի գնա... (Նստելով:) *Էլ ձիր թավազին չիմ մնում։*

ՍԱՐԳԻՍ

Վա՜, հա՜մեցեք, գիթաղվա։

ԲԱՐԲԱՐԵ

Էտ ի՞նչ խոսկ է, պարուն, էլ ի՞նչ միր թավաղեն է հարկավոր, ձիր տունն է։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Շնորհակալ իմ, իմ քուր... խիսա դաթրեցա. էս ձիր սանդուխտն էլ խոմա՝ մե ծերը գեղնքին է, մեկելը՝ չիրգնքին։

ՍԱՐԳԻՍ

Ախար, օխնած հոքի, չիս էլ էս իմ ասում վուր դուն ո՞ւր էիր նիղանում, է՜. գիդիս քու խաթիր ինչրու չիրգնքի վուռքը կէհամ։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Գիչիմ, գիդիմ, պարուն... վա՜, նստեցե՛ք, է՜... (Նստում են՝ Բարբարեն Ստեփան Դանելիչի աջ կողմը, իսկ Սարգիսը ձախ կողմը։) Ուրիշ ի՞նչ բարին հարցնիմ, իմ քուր։

ԲԱՐԲԱՐԵ

Փա՜ռք աստուծու. հրամանքդ վո՞ւնց իք։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Է՛հ, ապրում ինք, էլի՜... (Սարգսին։) Անց էի կենում էսթենը, ասի քիզ էլ ուրախացնիմ. էն փոդրաթն ինձ վրա մնաց, վունցոր ասում էի քիզ, էնդու վրա շատ պակաս։ Մեկը տասը կտրե, ավտաս։

ՍԱՐԳԻՍ, զարմանալով։

Թե՛ քու աստուծ կու սիրիս... Գնա՜ ու գնա, Ստեփան Դանելիչ. ա՛յ, աստուծ վուր կու տա, էրկու ձեռով կու տա, է՜. էտ խո խե՛լի դադում կոնե։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Դադումն էն է, ա՛դա Սարգիս, վուր էլ մի՛ ուշացնի էն բանը։

ԲԱՐԲԱՐԵ, կամենալով վեր կենալ։

Դաշլա չանիմ ձիզ։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Չէ՛, չէ՛, իմ քուր. նստի՛. դուն էլ իմացի. չիս թաքուն բան բանիլ չիմ սիրի. դուն էլ մեր իս. կուրի գիգենաս էլ. քու Միխեիլին ուզում իմ փնտա չինի իմը... (Ցույց տալով Սարգսի վրա։) Կոսեր, է՛լի։

ԲԱՐԲԱՐԵ

Տարի քիզ ումբը, պարուն, վուր ձիձ բախտավորութին է միզ համա. ամա Միխեիլն ասում է վուր ջեր կնիկ ուզելու միտկ չունիմ, կոսեր։

ՍԱՐԳԻՍ, Բարբարեին։

Է՛հ, դուն ի՞նչ գիդիս։ (Ստեփան Դանելիչին։) Գուզե էլ, Ստեփան Դանելիչ, ու ձեռիդ էլ պաչ կոնե. քու արիվը։

ԲԱՐԲԱՐԵ, առանձին, ճեղանալով։

Տե՛ր օղորմած աստուած։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ, Բարբարեին։

Ումիկ ունիմ վադ բան չիմ ասում, իմ քուր։ (Սարգսին։) Գիտի շատ պիցնիս. ադա ջան. դիփ էրկու շաբաթ չի քաշի ինչրու էն փոդրաթը կու հաստատին. ասում իմ վուրտը ըլի, վուր քու տղին կառավարիլ տամ էս բանը, էլ ուպրավլիալուշչերու ճանդր չգցիմ մեկ էլ։ Դիփունանցը փորցեցի, դիփունքը խաչեցին անիծածնիրը. գիփ իրանց կուր քաշեցին։

ՍԱՐԳԻՍ

Նրանց ադաթն է, ի՞նչ անիս, Ստեփան Դանելիչ։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Է՛հ, պլոկեցին, ասում իմ, ադա ջան, պլոկեցին։

ՍԱՐԳԻՍ

Աբա էտ հանգի բան վո՞ւնց կոնե իմ Միխեիլը. ա՛րխային կաց. Ստեփան Դանելիչ, իմ հոքին էլ գիպենա ու նրա արիվն էլ իմ ասում, վուր դենիշկեն ինչ է, մե՛ դենիշկումը չի խափի ջիզ։

ԲԱՐԲԱՐԵ

Էրնեկ էլավ իմ Միխեիլին։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Էտենց վուր չըլիմ ճանչնում, խոմ էտենց էլ տաք-տաք չիմ ըլի վրպչում. ո՞ւմը տամ իմ աչկան վուր ձեռիս չպաչ անին. ամա մե խոսկով

ձիր տղին յիս էն գլխեն հավնեցա։ Ես գի՛դիս՝ ինչ մակումս մեկ դրի. պիտի կատարիմ, ու վիրչը թե նա էլ կու խափե ինձ, թո՛ղ խափե։

ԲԱՐԲԱՐԵ

Էն օրը մահ ըլի ինձ։

ՍԱՐԳԻՍ, մեղմ ծիծաղելով։

Հ՛ը, հ՛ը, հ՛ը... ինչ իս ասում, Ստեփան Դանելիչ։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Խոսկի վրա իմ ասում, թե չէ խափելու ի՞նչ ունե, իրն է ու իրը։ Էն մե ախչիկն ունիմ, է՛լի, իմ քուր, մեկ էլ մե տղա. հալալ կես կոնիմ կաչինքս՝ կեսը մեկին, կեսը մեկելին։

ԲԱՐԲԱՐԵ

Աստուած էրկուսին էլ քիչ տա։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ, շարունակելով։

Թո՛ղ խափե, տեսնիմ ինչո՞ւմն է խափում։ (Միծաղելով։) Հը՛, հը՛, հը՛... իմ կամքով վուր կես կաչինքս տալիս ի՞մ, էլ էստու վրա ավելի ի՞նչ գուգե։

ՍԱՐԳԻՍ

Քու արիվը, Ստեփան Դանելիչ, դրուստ աստծու օղորմութին է էտ բանը ինձ համա էլ, նրա համա էլ. ամա էն օրն էլ ասի վուր մե քիչ պիտի ժամանակ տաս, ինչրու մե տիղ մեկ-մեկու ուստ գան, թե չէ խում գի՛դիս, փուղն ու միրու պանտեն նրա համա դիփ մեկ է։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Վա՛, հեր օխնած, էտ խիստ է էրգարանում բանը։

ՍԱՐԳԻՍ

Ինչի՞, Ստեփան Դանելիչ, էրեգ մեկ, էսօր էրկու, չեր էտենց ի՞նչ վախտ է անցկացի. էս մե էրկու շափթումը կու վրա բերիմ, է՛լի. բաս էլ ինչի՞ հեր իմ, վուր էտ էլ չկանենամ։ Ամա թե ինձ կու հարցնիս, յիս ասում իմ վուր մե տիղ ուստ գան, գոստանան. ի՛նչ անիս, ասում ին՝ հիմի մոդեն էտենց է, կոսե։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Խիլքումս նստում է ասածտ, աղա ջան. բաս չեր էտու վրա պիտի փիքր անինք։

ՍԱՐԳԻՍ

Բա՛ս, բա՛ս, Ստեփան Դանելիչ, յիս կու իմաց անիմ։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Է՛հ, նիրողութին, գլխացավութին տվի։ (Վեր է կենում, մյուսները ճեռևում են։) Մնա՛ք բարով, էս օրերումը կու մնամ քիզ, աղա ջան, էլ մի՛ էրգարացնի, քու հորն օղորմի։

ՍԱՐԳԻՍ

Վրա՛ աչկիս, վրա՛ աչկիս, Ստեփան Դանելիչ։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Աստուած վիրչեներուս բարի անե։

ՍԱՐԳԻՍ

Ամին, ամին, տե՛ր աստուած։

ԲԱՐԲԱՐԵ

Աստուած վուրթիքդ զորացնե։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Էրգար օր ունենաս, իմ քուր, աստծու քու Միխեիլին պահե, լա՛վ զավակ է, լավ. էրնեկ չի ըլի իմ Վանոն էլ նրա խիլքն ու վարքն ունենա... Թեգուզ էնդու կեսը։

ՍԱՐԳԻՍ

Ի՞նչն է պակաս, Ստեփան Դանելիչ. անմիղ իս գանգատվում։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Է՛հ, աղա ջան, խիստ ջնեելութինեիր է անում, է՛... Մե էս բանը պրծիլ էր, ասում էի, ու իժում պիտի նրա վուտումն էլ բուխավ գցիմ, թե չէ անումս իստակ բեդնամ կոնե, քու արիվը։

ՍԱՐԳԻՍ

Աստուած մե լավ հալալ կաթնակիրի արժանի անե։

ԲԱՐԲԱՐԵ

Աստուած էնենց բախտավուրե, վունցոր ձիր սիրտը գուզե։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Բերանդ շա՛քար, իմ քուր։ (Գնում է և ճանապարհից հետ դառնալով։) *Ղո՛ւրթ, Սե՛րգեյ Տարասիչ, ի՛նչ միտս էկավ. Սուրաթինք մնամ էստի ձիզ մոդիկ հարևներ ին. ո՞ւմ տանն ին կենում, խո չի՞ս գիդի։*

ՍԱՐԳԻՍ

Իրանց տներումը, հենց էստի էվետ, դրուստ էս տան դեմուդեմը։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Է՛հ, աղբաթդ խեր ըլի։

ՍԱՐԳԻՍ

Ի՞նչ կոնեիր, Ստեփան Դանելիչ։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Վունչիչ, աղա ջան. էն օրը Սոբրանիումը բարեկըմացանք, ա՛յ էն վուր խղճերու համա բալ էին սարքի։

ՍԱՐԳԻՍ

Հա՛, հա՛, Ստեփան Դանելիչ, իմացիլ իմ։ Ջիմ գիդի... (Բարբարեին։) *վո՞ւր օրն էր...* (Ստեփան Դանելիչին։) *Յագոր Սիմոնիչի կնիկը մեր տանն էր, հիդ էր ասում։*

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Շատ լավ խալխ ին էրևում, ա՛յ։

ԲԱՐԲԱՐԵ

Դիա՛խ, մարթը դրուստ ասածու գառն է։

ՍԱՐԳԻՍ, առանձին ցածր։

Նրանց ա՛նումն էլ կարվի։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ, շարունակելով։

Ախչիկը խո մե հայերեն է խոսում, վուր քեփը գու քա մարթունը, քու արիվը։

ՍԱՐԳԻՍ

Գիդիմ, գիդիմ, Ստեփան Դանելիչ։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Խիստ դուր էկավ, է՛. խնդրեցի վուր միզ մոտ գնալ դալ ունենան։ Ա՛վ գիդե վունց ռաստ գա. ասում իմ՝ վաղօրոկ էվետ տունը գիդենամ, վիզիտի վուխտը էլ դես ու դեն չենգնիմ։

ԲԱՐԲԱՐԵ

Հենց միր տան դեմուդեմն է։ (Լուսամուտից ցույց տալով։) *Ա՛յ։*

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ, մոտենալով լուսամուտին։

Վա՛... Դրուստ դեմուդեմն է էլի... Շնորհակալ իմ, իմ քուր. մնա՛ս բարով, աղա ջան։

Սարգսին ձեռք է տալիս։

ՏԵՍԻԼ Գ

ՆՐԱՆՔ, ՍԱԼՈՄԵ

ԲԱՐԲԱՐԵ, տեսնելով Սալոմեին, որ մնում է գլխավոր դռնից։

Քա՛, ա՛յ ինքը Սալոմեն։ (Սալոմեին։) *Համեցե՛ք։*

Սալոմեն մնում է շվարված։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Վա՛, էս լավ ռաստ էկանք, հենց ձիզ վրա էինք խոսում, համեցե՛ք։

ՍԱՐԳԻՍ, առանձին։

Վուր չըլիմ ամանչում, սա՛ղ-սա՛ղ կուտիմ։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ, Սալոմեին։

Վո՞ւնց իք, իմ քուր. Յագոր Սիմոնիչս վո՞ւնց է։

ՍԱԼՈՄԵ, ծանր ողջունելով՝ ու ֆրֆրվելով։

Աստուած ձիր մե օրը հազար անե, լավ ինք. հրամանքդ վո՞ւնց իք, երեխերքը խո լա՞վ կան, գենացվալե։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Փա՛ռք աստծու, դիփունքս սաղ սալամաթ ինք... Միր կուրը մեկ չանց-կացաք։

ՍԱԼՈՄԵ

Միզ համա մինձ պատիվ է, պարուն. էլի վուր գու քանք։ (Աջ ու ձախ ճայելով։) *Վուտի վրա ինչի՞ ինք.* (Ստեփան Դանելիչին։) *Հա՛մեցեք, գեթաղվա։*

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Էս է գնում էի վուր հրամանքդ տուն էկար... Հարկավուր խոսկ ունեի սրա մոդ, ասելուս ասի, հիմի դուք խոսեցեք, յիս էլի մե քանի տիղ բան ունիմ։ Է՛հ, մնա՛ք բարով։ (Գնալով։) *Մա՛խլաս, շարշրվում ինք, է՛լի։* (Սարգսին։) *Էլ մի՛ ծոծրուեցնի, ա՛յ։*

ՍԱՐԳԻՍ

Ջո՛ւխտ աչկիս, Ստեփան Դանելիչ, ջիբումդ գիդացի։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ, Սալոմեին։

Իմ կուղմանե Յագոր Սիմոնիչին կոսիս վուր միզ չմոռանա ու ախչըկատ շա՛տ ու շատ բարով... (Սալոմեն ողջունում է։) *Ապրիս, ասա՛... Խիստ լավ ախչիկ ունիս, իմ քուր, բախտավուր կնիկ իս, յիս ու իմ հոքին... Ղրգե միր տուն, քու հորն օղորմի, ախչիկս կու ուրախանա։* (Գնում է, ամենքը ճեռևում են։) *Մի՛ նիղանաք, խնդրում իմ։* (Սարգսին գլխավոր դուռն մոտ։) *Քու հորն օղորմի, ձե՛ռը վիկալ։*

ՍԱՐԳԻՍ

Վա՛, վա՛, Ստեփան Դանելիչ։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Է՛հ, թա՛ղը տու, ա՛ղա ջան, է՛։

ՍԱՐԳԻՍ, ճեռևելով։

Ինչի՞, ինչի՞, իմ պարտկն է, Ստեփան Դանելիչ։

Ստեփան Դանելիչն ու Սարգիսը դուրս են գնում։

ՏԵՍԻԼ Դ

ԲԱՐԲԱՐԵ, ՍԱԼՈՄԵ

ՍԱԼՈՄԵ

Ի՞նչ սառած մնացի, քա՛... (Նստում են։) *Լիզուս կապվեցավ դրուստ... Յա՛ռաք նրա պես պատվական մարթ էլի կուլի՞։*

ԲԱՐԲԱՐԵ

Էն դովլաթն ո՞ւմը տաս, Սալոմե, վուր դիփունի համա պատվական չըլի։

ՍԱԼՈՄԵ

Էլ մի՛ ասի, Բարբարե ջան, գլխեմեն ինչրու վուտը զըմզըմում է... Ասում ին յիրիք-չուրս միլիոն ավել կունենա։

ԲԱՐԲԱՐԵ

Էլի ինչոր նուր փոդրաթ է վիկալի... Մեկը տասը կու դադե, կոսե, առում էր հիմի։

ՍԱԼՈՄԵ, ճոգվոց ճանելով։

Ը՛մ... ինչի՞ չի դադի... ջուրն էկիլ է ու միզպեսներուն է տարի... Քանի ջեր ասի իմ մարթուն, վուր մե փոդրաթ վիկալնե, ամա էնդուրն էլ շնուք պիտի, ի՞նչ անիս։

ԲԱՐԲԱՐԵ

Մենակ շնուքի բան չէ, Սալոմե ջան. աստուծ ումը կու տա, կու տա. ամա ինձ թե կու հարցնիս, օշովի դովլաթն աճկումս չէ գալի... կու մեռնինք, դիփ էստի կու մնա... չուրս գազ պատանքն ու միր ջանը. Թո՛ղ մոդ անին, քանի կանան։

ՍԱԼՈՄԵ

Ախավագլախ նրանց գլխին։ (Մոտեցնելով աթոռը։) *Քի մոդ բանի իմ էկի, Բարբարե ջան... Ախար էս քու Միխեիլը վուր էսենց սրտով կպիլ է միզ, ի՞նչ պիտի անինք։*

ԲԱՐԲԱՐԵ

Կուլի՞ դուր չէ գալի ձիզ։

ՍԱԼՈՄԵ

Վո՛ւյ իմ աճկին, էտ ի՞նչ իս ասում, Բարբարե ջան. էն օրը մահ ըլի ինձ. վո՞ւնց թե դուր չէ գալի... էնենց սիրում ինք նրան դիփունքս ու պատվում, վունցոր միր տանու վուրթուն... Նա ուրիշ ազիզ-մազիզն է. շատ ծնող պարծենա վուր նրա պես վուրթի չունենա.. Անանիս խոմ նրա մոդ էնենց է, վունցոր քուր ու ախպեր. ամա մե բանով պիտի քութահ ըլի՞ թե չէ։

ԲԱՐԲԱՐԵ

Իմ ձեռին ի՞նչ կա, Սալոմե ջան... Գիդե արարիչը վուր քու Անանուն էնենց գուդիմ իմ հարս ըլի, վունցոր հոքուս համա արքաութին. ամա ի՞նչ անիմ վուր Միխեիլի հերը կրակ է վեր ածում... Հենց էսօր էլ խոսկ վեր ննգավ, քու արիվը։ «Տա՛նեն դուս կոնիմ, թե էտ բանը կուլի», կոսե։ Աբա ի՞նչ անիմ, Սալոմե ջան։

ՍԱԼՈՄԵ

Վո՛ւյ քոռանամ յիս, էտ հանգի բան վո՞ւնց կոնիմ. աշխարքի ղենո ու մասխարա խո չիմ գառնա։ Յիս վուր ասում իմ, ասում իմ համոզութենով ըլի բանը, թե չէ ի՞նչ լուգաթ ունե... Լավ տղա է քու Միխեիլը, հասը չունե, քու արիվը. ամա յիթե իր հորն ընդեմ կուլի, ի՞նչ կոնիմ, ի՞նչ արած կուլինք էնչախը... Անանուս վուր տալիս իմ, Բարբարե ջան, յիս մենակ Միխեիլին չիմ տալի, ձիզ իմ տալի, ձեր կարողութենին իմ տալի, թե չէ դարդակ չինովնիկը ի՞նչ գլուխս իմ տալի... Հիմի ի՞նչ անինք, վուր ուրիշներու պես բահր ու բաժինք չունինք հաղիր. համ փուղ, համ էլ էն հանգի ախչիկ ո՞վ կու տա ձիզ ախար, յա գլուխս էն տիղն ո՞ւր գցիմ վուր իմ վուտով գամ ու ձիզ աղանչաք անիմ։

ԲԱՐԲԱՐԵ

Վա՛յ, աճկիրս քոռանա, Սալոմե, թե օմքնու բաժինքը յա իմ այնումն ըլի գալի, յա Միխեիլինը... Նա պրծնի ամեն ցավեմեն, վուր դրուստ իմ ասում։ Ասած է՝ «Սուխ ու հաց, սիրտը բաց». ամա էլախտ էլ ասի վուր հերը դաբուլ չէ անում։

ՍԱԼՈՄԵ

Բաս իմ չարեն ի՞նչ է, Բարբարե ջան։ Մե բանով կտրական արեք թե ասում կու սիրեք. ան՝ հա՛, ան՝ չէ... Յիս էլ ախչկա տեր իմ, հենց բոնե ճոշալու իմ դառի, քու արիվը... Թե կուզի, խո խիստ լավ, թե չէ ու Միխեիլին դեմուդեմ կոսիմ, ասում գիդենա, վուր մե քիչ վուտը հիդ խփե... Խալխի խոսելու ո՞ւր իմ դառնում անմիղ տիղ։

ԲԱՐԲԱՐԵ

Ի՞նչ անիմ, Սալոմե ջան, յիս էլ մոլբրվիլ իմ, ասում գիդենա։

ՍԱԼՈՄԵ

Քիզ կտրականն ասիմ, Բարբարե, մե քանի օր էլի կու մնամ, ինձ ջուղարն ի՛մաց արա... Հալբաթ յիս էլ միր գլխի չարեն կու տեսնիմ։ (Ոտի ձայն է լսվում, շվարվում է։) *Մնամ վուր քու մարթն է։* (Վեր է կենում։) *Գնամ, զալմաղալ չբաց անե։* (Բարբարեն ևս վեր է կենում։) *Մի՛ նիղանա, գեթաղվա, յիս էսղանց բախչեմեն դուս կէհամ,* (Գնալով։) *ճանփին չռաստ գամ։*

ԲԱՐԲԱՐԵ, առաձին։

Ջար սատանեն ռաստ գա քիզ։

Հետևում է Սալոմեին։

ՍԱԼՈՄԵ

Աբա ո՞ւր իս ջափա քաշում, գենացվալե։

ԲԱՐԲԱՐԵ

Ի՛նչ կա։

ՍԱԼՈՄԵ

Իմ ումիկը դուն իս, Բարբարե ջան։

Դուրս է գնում դեպի պարտեզը։

ՏԵՍԻԼ Ե

ԲԱՐԲԱՐԵ, հետո ՍԱՐԳԻՍ

ԲԱՐԲԱՐԵ, մենակ, առաջ գալով։

Քու աճկն էլ. խիղճ էրեխիս ջադոյից դրուստ։

ՍԱՐԳԻՍ, վերադառնալով։

Իր բա՞խտը վուր գնաց, թե չէ մե բեաբռու կոնեի էս ջգրած սրտիս վրա, վուր էլ հավիդյան վունց դեսն էին էկի, վունց Միխեիլին տեսի։

ԲԱՐԲԱՐԵ

Հիմի է՞տ էր պակաս։

ՍԱՐԳԻՍ

Հը՞, էրկու-էրկու դեղա նստեցա՞ք, խոսեցա՞ք, ձևեցի՞ք, կարեցի՞ք յիս վունչիչ է՛լի... Մուլափ տան հալա. հեստի օր կանգնեցնիմ յիս նրանցը, վուր ասին՝ հա՞... խո տե՛սար, տե՛սար էն պատվական մարթուն, խո քու անգճով իմացար հիմի էն խոսկիրը. էն էլ յիս էի՞։

ԲԱՐԲԱՐԵ

Խուլ խո չէի. ամա աստուձ կու վիկալնե՞, վուր էտենց սուտ-սուտ ումիկնիր տվիր էն մարթո՞ւն. խո գի՛դիս վուր Միխեիլը չի ուզի։

ՍԱՐԳԻՍ

Ա՛յ, կու տեսնիս թե չէ։

ԲԱՐԲԱՐԵ

Վո՛ւնց չէ, ավտաս աղանչաք անե։

ՍԱՐԳԻՍ, սաստիկ բարկացած:

Բարբարե, հիռացի՛ աճկեմես, թե չէ քիզ էլ ու նրան էլ էս սահաթիս... բերնումս ինչիր է գալի։

ԲԱՐԲԱՐԵ, բարկացած:

Մի խի՛ստ չարացի, խի՛ստ, հենց գիդենաս աշխարքի տերը դուն ըլիս... (Առանձին:) *Լա՞վ տարի քիզ գա, լավ իմքին դուն իս դառի։*

Բարկացած դուրս է գնում ձախ դռնից:

ՏԵՍԻԼ Զ

ՍԱՐԳԻՍ, մենակ:

Ը՞մ, ձեր քո՛քը, քո՛քը... Ի՞նչ ստիղծելու էր կնիկարմատը վուր ստիղծից աստուձ... (Բարկացած մաճ է գալիս կրծքին խփելով:) *Ա՛խ, Միխեիլ, քու խիլքն էլ անիծվի, քու ուսումն էլ։ Դրուստ կոոյի ջինս է անիծածը. ախար Թորոզի թուռն է, է՛։ Էսենց էլ մկրա՞տ։ Համով ասի—չէ՛, աղանչաք արի— չէ՛, ջգրվեցա— չէ՛, չարացա վրեն—չէ՛... պստիկ էլա մայինց ըլի, մե ոոզգատրաք անիմ... Ի՞նչ անիմ, վո՞ւնց կոտրիմ... ախար քարափի տոլ դովլըթին ածկի է տալի՝ու շուռ է գցում... է՛սենց էլ մա՞րթ։*

(Լռություն, հետո, իբրև թե մի բան մտաբերելով:) *Սո՞ւ, սո՞ւ...* (Սպառնալի ձևով:) *Օ՞, Միխեիլ, մո՛ւղայիթ կաց, փի՛ս բան էփվեցավ գլխումս։*

Գլխավոր դռնից մտնում է Միքայելը գլխարկը ձեռին:

ՏԵՍԻԼ Է

ՍԱՐԳԻՍ, ՄԻՔԱՅԵԼ

ՍԱՐԳԻՍ, երկար լռությունից հետո, առանձին, մինչդեռ Միքայելը սեղանի մոտ զբաղված է:

Ամա չէ՛, Բարբարեն դրուստ է ասում, էլի կուլի համովութենով բան դառնա։ (Մոտենալով Միքայելին և բաղցրությամբ:) *Ախար օրս ո՞ւր իս սիվցնում, վո՛ւրթի, ի՞նչ գլեթ իմ արի քիզ. աշխարքին դուն իս իրատում, վո՛ւրթի, էտենց վա՞րվիլ կուլի վուր դուն իս վարվում քու հոր հի՞դ։*

ՄԻՔԱՅԵԼ

Ա՛խ, հայր իմ. սպանի՛ր ինձ ու վերջացրու։

ՍԱՐԳԻՍ

Աբա՛ էտ խո՞սկ է վուր դուն իս ասում, վուրթի՞։

ՄԻՔԱՅԵԼ

Ուրիշ ոչինչ չէ մնում ինձ ասելու։

ՍԱՐԳԻՍ

Նստի՛ էստի, վո՛ւրթի, նստի՛։ (Նստում են. միայն Միքայելը հետո վեր է կենում, բայց կրկին նստում ու վեր կենում՝ նայած իր ներին հուզմունքին:) *Աբա՛ մե փի՛քր արա թե ի՞նչ իս ասում։ Ասում իս վուր կինքդ չի՞ս խնահում ինձ, է՛լի։*

ՄԻՔԱՅԵԼ

Այո՛։

ՍԱՐԳԻՍ

Լա՞վ, ասածդ վուր արարմունքիտ նման չէ՛. մարթ վուր մարթուն կինք չխնահե, նրա համա էլ ամեն բան պիտի վի՛ղն առնե թե չէ։

ՄԻՔԱՅԵԼ

Ա՛յ, հայր իմ, ո՛չ. ես պատրաստ եմ որևիցե վտանգի ժամանակ քեզ ազատելու համար կյանքս զոհել, բայց դու կամենում ես, որ ես ամեն օր մահին երանի տամ. այս ո՛չ մեկ որդի պարտական չէ իր հորը։

ՍԱՐԳԻՍ, գլուխը շարժելով։

Աբա՛ ի՞նչ խոսիմ քի մոդ վո՛ւրթի. էն լավ չէ՞՝ յիս մեռնիմ, կանց քիզ էրնեկ տալ տամ մահը։ Իմ չալիշն ի՞նչ է ախար, չիս իմանո՛ւմ. զարթնի քու բախտավորութինը ուրիշ ի՞նչ կանամ ուզի յիս քիզ համա։

ՄԻՔԱՅԵԼ

Է՛հ, հայր իմ, դու քու տեսակ ես հասկանում բախտավորությունը, ես իմ տեսակ. ինչքան որ խոսենք այս մասին, մենք միմյանց չենք կարող հասկանալ։

ՍԱՐԳԻՍ

Իմ ասածը դիփունքը կու հասկանան, դո՛ւն իս, վուր չիս հասկանում. ամա քու ասածը յիս չիմ կարծում վուր քախկումը մե մարթ ըլի, վուր կանենա քիզ հասկանա։

ՄԻՔԱՅԵԼ

Ես կարծում եմ, որ ամեն զարգացած ազնիվ մարդու համար իմ ասածը շատ հասկանալի է։

ՍԱՐԳԻՍ

Քու արիվը գիդենա, վուր վո՛ւնց ազնիվը կանա հասկանա քիզ, վո՛ւնց քախկցին։

ՄԻՔԱՅԵԼ, ժպտալով։

Այդպես ես նայում գործին, որ միմյանց չենք հասկանում, է՞։

ՍԱՐԳԻՍ

Լավ է, հենց ապրիս, էգզամինի վուխտ չէ... յիս քիզ ասում իմ քու խերը ճանչցի, թե չէ, աստուծ գիդենա, ջրատար կու մնաս քախկումը։ Աբա մե աչ ու ձախ մտի՛կ արա. մեկը կա՞ն վուր քու հանգն ըլի վարվո՛ւմ, քու հանգը ժաժ գալի՞։ Խոսկերով շատ բան ին ասում, շատ բանիր ին քովլանում, ի՞նչ հաշաթ, խոսկը խո փուղով առնելու չէ, վուր հեսաբով մխին. ամա դուն նրանց արարմունքին թա՛մաշա արա։ (Միքայելը անհամբերություն է ցույց տալիս։) *Ցիրիք քու տոլ իմ, յիս շատ բան իմ տեսի քախկումը. առանց խեր օչով օչովու բարի լուս չէ տալի։*

ՄԻՔԱՅԵԼ, դառնությամբ։

Այո՛, այո՛։

ՍԱՐԳԻՍ, շարունակելով։

Օմքնու մեչը խեր կա՞, դիփունքը միղրաճանջի պես գլխին մոդ ին ըլում... Լավ մարթն էլ նա է էրևում, խելոքն էլ նա է էրևում, գիդունն էլ նա է էրևում, արթարն էլ նա է էրևում. ամա մարթ ինչ գուզե արթար ըլի, ինչ գուզե խելոք ըլի, ինչ գուզե գիդուն ըլի, թե խեր չկա նրա մեչը, հալալ ախպերն էլ էրեսը շուռ է տալի նրամեն, ո՛ւր մնաց վուր մեկելնիրը։ Խոսկերով կի, տարի քիզ ումբը, ի՞նչքան գուզիս կու գովին, ամա դիփ դարդակ՝ «Բոշ չանախ, բոշ չվալ»։ Տո՛, առանց խեր թաքավուրն էլ թաքավուրի հիդ բարեկամութին չէ անում, ի՞նչ իս ասում դուն։

ՄԻՔԱՅԵԼ, առանձին։

Կատարյալ տանջանք է։

ՍԱՐԳԻՍ

Օչովիմեն քիզ խրատ չի հասնի, վո՛ւրթի. փա՛ռք աստծու, տեսնում իմ խիլքով խելոք իս. ամա յիս ուրիշ իմ... յիս վուր կամ, քու հերն իմ, ուզում իմ ինչ յիս փորցվիլ իմ՝ իմ փորցածն էլ գիդենաս, վուր փորցվելու վրա էլ նուր մեկանց ժամանակ չկորցնիս։ Լավ գիդացի, վո՛ւրթի, դիփ սուտ է էս աշխարքումը՝ սերն էլ, բարեկմութինն էլ, ասկականութինն էլ, մե բանն է ղուրթ...

ՄԻՔԱՅԵԼ, դառնությամբ։

Փո՛ղը։

ՍԱՐԳԻՍ

Հա՛, ապրիս. դիփ փո՛ւղը, փո՛ւղն ու փո՛ւղը. առանց փուղ դիփ մե գրոշ։ Փո՛ւղ ունիս՝ աշխարքը քունն է. թեզուզ քաշալ ըլիս. թեզուզ հիմար ըլիս, թեզուզ հուտած ըլիս, դիփունի համա սառը-շաքարը դուն իս, օչով քիմեն չի բեզրի։ Դարդակ խճպտանքն ու գիդութինը վունչիչ։

ՄԻՔԱՅԵԼ

Բավական է, հայր, այդքան խրատները։ Մի՞թե ես ինքս չեմ հասկանում, որ աշխարհիս մեծ մասն այդպես է. բայց այդ չէ նշանակում, թե այն վարմունքը, որ ուրիշների կողմից անգամ ինձ զզվանք է պատճառում, ես ինձ թույլ տայի անձամբ կատարելու... Ես նպատակ չունիմ ուրիշների պես հարստանալ և հասարակական եմ դրել, որ ես միայն իմ սեպհական աշխատանքիս ընենեմ պարտական։

ՍԱՐԳԻՍ

Ո՞վ է խլում, ախպեր, քու աշխատանքը քու ձեռնեմեն. աշխատե՛, աշխատե՛, շատ լավ էլ իս անում, աստծու դուրեկանն էլ էտ է. ամա հազիր հադրաբաշի աշխատանքը վուր քիզ թայգուլի պես թավազա ին անում, ինչի՞ իս էրեսդ շուռ տալի։

ՄԻՔԱՅԵԼ

Այսինքն պարոն Բրիլիանտովի հարստության մեկ մա՞սը, որ նա տալիս է իր աղջկան իրրև բաժինք։

ՍԱՐԳԻՍ

Հա՛. ի՛նչ փիս բան է, ախար։

ՄԻՔԱՅԵԼ

Այն՝ որ ես նրա աղջկան չեմ հավանում և երբեք էլ չեմ կարող հավանել։ (Լռություն։) *Ես արդեն ընտրել եմ մի այնպիսին, որ կատարելապես համապատասխանում է իմ գաղափարներին... Եվ եթե այդ ես չլինեք՝ ես մեծ անպատվություն կհամարեի փողի համար պսակվել։*

ՍԱՐԳԻՍ

Տո՛, մենակ դուն խոմ չի՞ս բախկումը. ախար մի ծաղկով գարունք գու քա՞, մենակ դուն դուս էկա՞ր գիդունն աշխարքումը՞. չէ՞ վուր քու ննգբրտինքն էլ քի պես ուսում առած էին... Աբա վո՞ւրն արավ՝ ինչոր դուն իս ուզում անի. ո՞վ ուզից մուքթ ախչիկ, վուր դուն իս ուզում. ո՞վ ածկի էրիտ բահը ու բաժնքին, վուր դուն իս ածկի տալի... Քա՞նիսի անումը գուզիս տամ... (Լռություն։) *Էկա՞ն, փրփուտացին, քու հանգի բանիր շատ ասին. էս մարթուքին, ասում է. էս սեր ու միաբանուքին, ասում է. էս խղճի պահպանուքին, ասում է. ամա վիրչը վուրդի էրկու հազար ու յիրիք հազար թումնի ձեն իմացան, տրտինգ տալով ձեռն էնդի կպցրին։ Տի՛ս վուր միր քաղաքը նրանք լավ ճանչցան ու էնենց էլ վարվեցան. հիմի դո՛ւն իս ուզում օրինակ դառնա դիփունանց համա՞։*

ՄԻՔԱՅԵԼ

Ես ոչ ոքի համար օրինակ չեմ կամենում դառնալ. հա՛յր. ինչ որ խելքս կտրում է ու խղճմտանքս տալիս է, այնպես եմ վարվում։ Իմ ընկերներից մեկ քանիսին օրինակ ես բերում, նրանք ի՞նչ լավ օրինակ կարող են լինել. ամբողջ իրանց կյանքում աշխատում էին արդարության սանդուխքը բարձրանալ, բայց վերջին աստիճանին չհասած՝ ճանապարհից հանկարծ վայր գցեցին իրանց։ Ես տեսնում եմ, որ շատերի համար նրանք պարծանք են, շատերը երանի են տալի նրանց, որ ոչինչ չունեին ու այժմ երեք հարկանի տներ են ձգել, կառք ու կարետաներ սարքել. բայց այն մարդու համար, որ ունի այստեղ (Ձեռքը կրծքին է խփում։) *սիրտ ու ազնվություն, նրանք կորցրին իրանց մարդկային արժանիքը... Չէ՛, չէ՛, հայր, չէ՛, իմ համոզմունքները խորը արմատներ են ձգել սրբությունս և միայն այն ժամանակ կարելի է հանել նրանց, երբ խելքս կկորչի և սիրտս կմեռնի։* (Լռություն։) *Ստեփան Դանելիչի աղջիկն ինձ բոլորովին հետաքրքիր չէ. նրա համար շատերը կան, որոնք նրա փողով և բաժինքով իրանց շատ և շատ բախտավոր կհամարեն։*

ՍԱՐԳԻՍ

Բաս քու միտկն ի՞նչ է, հենց ապրիս, դրո՛ւստն ասա։

ՄԻՔԱՅԵԼ

Իմ միտքն արդեն քեզ հայտնի է, հայր. իմ ընտրածն Անանին է, բացի նրանից ես ոչ ոքի հետ չեմ կարող կյանքս կապել։ (Առաջ գալով բռնում է հոր ձեռքը։) *Աղաչում եմ քեզ, հայր իմ. արգելք մի՛ լինիր երջանկությանս. դու լավ գիտես, հայր, որ մինչև ծանր ու բարակ չէի մտածել, ես այսպես հաստատ չէի խոսիլ։ Իմ սերը մի՛ նմանեցնիր այն սիրուն, որ մարդ մի գեղեցիկ աղջիկ է տեսնում և նրա գեղեցկությամբ իսկույն հափշտակվում։ Անանու խելքը, խղճմտանքը, վարքը, ինչպես մեկ բան կշռես, այնպես կշռել եմ և հաստատ համոզված եմ, որ նա այնպիսի կին կլինի ինձ համար, որպիսին ես վաղուց ցանկանում էի և երազում։*

ՍԱՐԳԻՍ, ուսերը բարձրացնելով։

Լավ իս ասում, վուրթի, ամա վուր փո՛ղ չունե՛. դուն «հա ու չէ» չիս իմանո՞ւմ... Ախար դուն ու նա դիփ մենակ խոմ չիք մնա աշխարքումը. չէ՞ վուր էքուց, էլօր վուրթիք կուլին, էն վուրթկերանցը ջեր ծծմեր է հարկավուր, իժում պահնուրթնիր, իժում ուսում. ինչո՞վ իս տալի, ինչո՞վ։ Իմ կայինքը խո գի՛դիս, զարթնի քիզ յիրիք վուրթի էլ ուրիշ ունիմ. ի՞նչ կու ննգնի ձիզ մարթագլուխ, հիշիլն էլ ամութ է, ու քու տոնլուղով խոմ ապրիլ չի ըլի քախկումը։ Քիզ վուր էտղադա ուսում տվի, քու խճպտանքը զաբուլ կոնե՞, վուր քու վուրթիքը քիզ վրա պակաս ուսում ունենան։

ՄԻՔԱՅԵԼ

Իմ որդվոց ուսումը, հայր, ինձ այնքան թանգ չի նստիլ, որքան քեզ։ Երեխայոց սկզբնական կրթության և դաստիարակության համար ո՛չ

այնքան ուսուցիչներ են հարկավոր, ո՞րքան բարի և կրթված մայրեր, և այդ մայրը Անանին է։ Ոչինչ չեմ կամենում քեզանից, հա՛յր, ինչ ծախսել ես ինձ վրա, չափից ավելի եմ համարում, մնացած կարողությունդ թո՛ղ մյուս որդվոցդ լինի. ես միայն քո օրհնությունն եմ խնդրում, հա՛յր, օրհնի՛ր ինձ այս ճանապարհի վրա, էլ ուրիշ հարստություն հարկավոր չէ ինձ։ (Լռություն, ճեռո առնելով ձեռքը։) Ոչինչ չես ասում, հայր, համաձայնվո՞ւմ ես։ (Գրկում է։) Խնդրում եմ, հայր, մեկ «այո», մեկ «այո», և քո Միքայելը ամբողջ իր կյանքում բախտավոր կլինի։

ՍԱՐԳԻՍ, վեր կենալով գրկում է և արտասվալի ձայնով։

Բա՛ռնց ասա, վուրթի, վուր դանակը վիկալնիմ ու իմ ձեռով բաղպդ դուս կտրիմ, է՛լի։ Չէ՛. Միխեիլ ջան, չէ՛, վուրթի, էտ չըլելու բան է. խիլքդ մո՛դ արա ու դուն ինքդ կու իմանաս վուր յանդլիշ իս։

ՄԻՔԱՅԵԼ

Մինչև այսօր քեզ խոնարհ եմ եղել, հայր, խնդրում եմ քեզ իմ խոնարհության կապը մի՛ քանդիր, մի՛ հասցնիր ինձ այն տեղը, որ մեկ քանի՛սի նման իմ հայրական տունը թողնեմ և գնամ իմ ուզածը կատարեմ։

ՍԱՐԳԻՍ

Հաթաթնեք էլ իս տալի՞. է՛տենց իս վչարում իմ ամագը՞։

ՄԻՔԱՅԵԼ

Քո ամագը-երախտիքը որ հասկանալիս չլինեի, հայր, այսքան էլ չէի աղաչիլ։

ՍԱՐԳԻՍ, տաքանալով։

Իմ աղանչաքը խիստ իս լսում, վուր քու աղանչաքը յիս լսի՞մ։ Յիս իմացիլ իմ՝ պստիկը մինձին անդամ դնե, չէ թե մինձը պստըկին։

ՄԻՔԱՅԵԼ, վիրավորված։

Համաձայն եմ, հա՛յր, բայց ճշմարիտ խոսքն էլ պետք է հարգել։

ՍԱՐԳԻՍ, շարաճալով։

Մե ճշմարիտ էլ դուն կուլիս ինձ մոդ, քու գլխի պատրովիլը գիդենա. չէ էլ ամանչում, ի՛նչ հանդն է հիդս խոսում։ (Լռություն։) Յիս քիզ վիրն անդամն իմ ասում, տուտուց բանիրը գլխեմետ հանե՛ ու Ստեփան Դանիելիչի ախչկան ուղե, թե չէ, ասում գիդենա, էլ ինձմեն չիս պրծնիլ։ տանեմեն դուս կոնիմ էս սահաթիս, էլ քիզ չիմ մնա։

ՄԻՔԱՅԵԼ

Ի՞նչ կամենում ես ա՛յն արա, հա՛յր. իմ ընտրածը Անանին է։

ՍԱՐԳԻՍ

Վուր քու ընտրածն է, դե գնա՛ ուղե ու էլ վուրթի մի՛ հիշվի իմը, տեսնիմ վո՞ւնց իս ուզում. ամա յիփոր դուն Անանուն ուզիս, էնչախը պարծեցի։ (Լռություն, կանգնում է Միքայելի առաջ և ձեռքն իր կրծքին խփում։) Ը՛մ, Միխեիլ, յիս թե քու օխտեմեն չէկա, (Ձեռքը տանելով դեպի բնչացքը։) բաս էս ըրիս էսաթի չի ըլի։

Գլխարկը վերցնելով, դուրս է գնում ձախ դռնից։

ՄԻՔԱՅԵԼ

Իսկ ես շուտով կվերջացնեմ գործը, թեև հավիտյան երեսիս չնայես։

Դուրս է գնում աջ դռնից, վարագույրն իջնում է։

ԱՐԱՐՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Բեմը ներկայացնում է Սուրաբեկց տանը մի շքեղ սենյակ երեք դռնով՝ աջ-ձախ և խորքում: Սենյակի հատակը ծածկած է գորգով, առաստաղից կախված է գեղեցիկ ջահ հանգած մոմերով: Աջ կողմը դրած է բազմոց, առաջ մի սեղան բանկագին ծածկոցով և կողմերին բազկաթոռներ, իսկ ձախ կողմը, լուսամուտի մոտ, փոքրիկ դաշնամուր, սեղ բոլորակ սեղան, նույնպես ծածկոցով ծածկված, և երկու աթոռ: Վերջին սեղանի վրա դրած է ձեռագրի մի փոքրիկ գամբյուղ: Խորքում՝ դարձյալ աթոռներ: Լուսամուտները ու դռները զարդարած են դրապարիներով: Ուր հարկն է՝ հանգած լապտերներ և հանգած մոմերով արծաթափայլ աշտանակներ: Երեկո է:

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ, ուսնոցներով և ապիտակ խաչը կրծքին բազմոցի վրա նստած, լրագիր է կարդում, ՍԱԼՈՄԵ, դեմ առ դեմ, բազկաթոռի վրա նստած, սուրճ է պատրաստում, ԱՆԱՆԻ, ձախ կողմի աթոռի վրա նստած, բոլորակ սեղանի մոտ գիրք է կարդում:

ՍԱԼՈՄԵ

Էրնեկ գիդենամ քա՜նի կարթաք... (Անանուն:) *Էտ ի՞նչ գիր է, վուլ էրեգման դեսը ձեռնետ չիս վեր գցում։*

ԱՆԱՆԻ

Օ՜հ, շատ հետաքրքիր գիրք է, մայրիկ, ես դեռ այսպիսի պատմություն չեմ կարդացած։

ՍԱԼՈՄԵ

Մե տուտուց բան կուլի, է՛լի։

ԱՆԱՆԻ

Չէ՛, մայրիկ, դու սխալվում ես։

ՍԱԼՈՄԵ

Բաս չէ ու խիստ խելոք իմքնիր կուլի գրած։ (Տալով մի բաժակ սուրճ Յագոր Սիմոնիչին:) *Կաթ էլ ածի՞մ։*

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Վունցոր գուզիս։

ՍԱԼՈՄԵ

Ի՜հ, ուցնավուր իս, քա՜. յիս խոմ չիմ պիտի խմի։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Հ՜ավ, լավ, ածա՜։

ՍԱԼՈՄԵ, ածում է կաթը:

Ահրա՜... (Անանուն:) *Էտ գրիրն է գժվեցնում դիփ ձիզ։ Յիս պիտի Միխեիլին ասիմ վուր էլ գրիր չտա քիզ։*

ԱՆԱՆԻ

Հավատա՜, մայրիկ, որ եթե լավ գիրք չլիներ՝ Միքայելը չէր տալ ինձ։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ, լրագիրը բանալով և բաժակը խառնելով

Անանին դուրթ է ասում, Սալոմե, Միխեիլի տված գիրը լավը կուլի։ Էտ ի՞նչ է, բոման է՞, Անանի։

ԱՆԱՆԻ

Ո՜չ, սա բոման չէ, հայրիկ, սա մի խեղճ աղջկա պատմություն է, որ սարսափելի տանջանքներ է կրում ծնողների ձեռքից։

ՍԱԼՈՄԵ

Հալբաթ գժութին է էլի անում ու էնդուր էլ տանջում ին էլի։

ԱՆԱՆԻ

Ընդհակառակը, մայրիկ, նա շատ խելոք և պարկեշտ աղջիկ է դուրս բերած այստեղ. խեղճը լուռ ու մունջ տանում է այդ նեղությունը չորս պատի մեջ։

ՍԱԼՈՄԵ

Ա՛յ, բարաքալա ախչիկ։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Իժում վո՞ւնց է վիրչանում էտ պատմությունը։

ԱՆԱՆԻ

Դեռ չգիտեմ, հայրիկ, ես շուտով կվերջացնեմ և կպատմեմ քեզ։

ՍԱԼՈՄԵ

Լա՛վ է, լավ, արի՛ քու փենջանը վիկալ։

ԱՆԱՆԻ

Այո՛, մայրիկ, ես կվերցնեմ, թո՛ղ դեռ մնա։

ՍԱԼՈՄԵ

Օղոնց կի ձեռիտ գիր ըլի ու էն էլ Միխեիլի տված գիր, քիզ համա ղավա է ու ղավա, էլ ղավա ի՞նչ կոնիս։

ԱՆԱՆԻ

Օ՛, ես Միքայելին շատ եմ պարտական, մայրիկ. եթե նա չիներ, ես շատ բաների մասին այսքան հասկացողություն չէի ունենա։

ՍԱԼՈՄԵ, հոնքերը կիտած։

Լա՛վ, լավ... Ամա նա էլ ինչի՞ ուշացավ, թե՛ վուր էն օրը խոստացավ, վուր ղավի վրա էսօր միզ մոտ կուլի։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Ո՞ւր է, չիս էլ նրան իմ մնում, մե էս թուխտն իրան էի տվի. էն խիզ կնգան չիմ գիդի ինչ ասիմ։

ԱՆԱՆԻ

Հա՛նգիստ կաց, հայրիկ, երբ Միքայելը մի բան խոստացավ, անպատճառ կկատարե։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ, ցածր ձայնով, Սալոմեին։

Դուք նրան իք հավնում, նա էլ ձիզ. էլ ի՞նչ է ջանչլացնում հեր օխնածը։

ՍԱԼՈՄԵ, Յագոր Սիմոնիչին, նույնպես ցածր ձայնով։

Ի՞նչ է ասո՞ւմ, մինք հավնում ինք ու դուն չիս հավնո՞ւմ. ամա նրա ուժամուր հորն ի՞նչ անե մարթ. նրա քո՛փակ գլուխն է՞լ։ Ցիս Միխեիլի միտկը լավ գիդիմ, էրեգ նրա մոր հիդ էլ խոսեցա. ջեր ուզում է հոր կամքն ըլի միթամ, թե չէ մե իոսկ վուր ասիմ՝ էսօր էվետ հազիր է, քու արիվը։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ, պատրաստելով ծխամարշը։

Ղուրթ, ի՞նչ ջահիլ է... Ա՛նանի, մե օտկե՛։ (Անանին վեր է կենում, ծխամարշը վառում և հետո կրկին իր տեղը նստում, ձեռագործով պարապում։) *Նրա վրա էլ...* (Միտելով։) *լավ տղա կուլի քախկումը՞։*

ՍԱԼՈՄԵ, երկար հոգվոց հանելով։

Թե փուղ կունենանք, Յագոր ջա՛ն, չիս գիդիմ լավը վուրն է. ամա ի՞նչ անիս, մեր կարողությենի գորա Միխեիլն էլ շատ է, օղոնդ նրա հերը կամք տա։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Բաս ո՞ւմն իս ուզում քու մտկումը, վուր նա էլ շատ է։

ՍԱԼՈՄԵ

Դուն մե էրկու հազար թումանն տո՛ւ, չիս գիդիմ ումնոր կուտամ ախչկաս։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Ասինք ունիմ ու տվի էլ... (Դադարկ ձեռքը ձգելով։) *Ըահա՛, քիզ փե՛շքաշ։*

ՍԱԼՈՄԵ

Ջեր էս վուր ինչ գուզե ուսում առած ըլի ու լավ տղա, քախկցու վուրթուն ախչիկ չիմ տա։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Պոլկովնիցա իս ախար, վո՞ւնց կուլի։ (Միծաղում է։) *Հա՛, հա՛, հա՛... Բաս էսօր-էքուց վուր չիս քիզ գնեերալշա շինիմ մե բաշ, Սալոմե, ավտաս Միխեիլին իսկի տուն էլ չթողնիս, ըա՞։*

ՍԱԼՈՄԵ

Հիմի իսո խիստ ուրախ իմ ու մնացիլ է էնչախը։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Վա՜, գեներալշա Սալոմե... (Վեր կենալով:) Վա՜շե պրեվասխոդիտելստվո... Ըհը՜, ո՜վ դիմնա քիզ։ (Ծիծաղում է:) Հա՜, հա՜, հա՜...

ՍԱԼՈՄԵ

Հա՜, ծիծաղի, ծիծաղի, ինչո՞վ իմ ուրիշներեմեն պակաս, չի սազ գա թե ի՞նչ է։ Ո՜ր գեներալշեք ին, ինձ վրա լավն ի՜ն։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ, ծիծաղում է:

Հա՜, հա՜, հա՜... Վրա էրկուսը՞։

ՍԱԼՈՄԵ, ճեղանալով:

Վրա էրկուսը վուր խղճութինը շատ բան կոնիլ տա մարթու։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Վրա յիրիքը՞։

ՍԱԼՈՄԵ, բարկանալով:

Վրա յիրիքը վուր քու գլուխ չունիմ։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ, ծիծաղելով:

Հա՜, հա՜, հա՜... Դուն ի՞նչ կոսիս, Անանի։

ԱՆԱՆԻ

Ես այն կասեմ, հայրիկ, որ Միքայելը շատ բարի և ազնիվ երիտասարդ է։

ՍԱԼՈՄԵ, բարկանալով Անանու վրա:

Էրնեկ գիդենամ քիզ ո՞վ է խոսեցնում։

ԱՆԱՆԻ, համեստորեն:

Մայրիկ, ես պատասխանում եմ իմ հորը։

ՍԱԼՈՄԵ

Է՛լի։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Նո՜ւ, յիփոր դուն չարացար, Սալոմե, դիփ մեռի փչացավ։

ՍԱԼՈՄԵ, շարունակելով:

Քա՜նի ջիր իմ քիզ ասի, վուր նրան իմ հակառակ մի՛ խոսեցնի. ի՞նչ կարք է։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Լա՜վ, լավ, դուն գիդիս, Սալոմե. կնգդերանց բանումը յիս չիմ խառնվում... Փա՜ս, փա՜ս, յիս փա՜ս։

ՍԱԼՈՄԵ

Էտենց. յիս քիզ ասում իմ վուր քու բանը չէ։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ, զինվորական կանոնին համաձայն ձիգ կանգնում է և աջ ձեռքը ճակատին տանում:

Սլուշայուս։

ՍԱԼՈՄԵ, ոտքը հատակին զարկելով:

Նո՜։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ, ձեռքը ճակատին շուռ գալով:

Նա լե՛վա կրուգոմ, մա՜րշ։

Գնում է դեպի խորքը:

ՏԵՍԻԼ Բ

ՆՐԱՆՔ. ՄԻՔԱՅԵԼ

ՄԻՔԱՅԵԼ, մտնում է խորքի դռնից:

Բարի օր ձեզ։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Ա՜, Միխեիլ, ա՜ռի, է՜, քիզ ինք մնում։

ՄԻՔԱՅԵԼ, Յագոր Սիմոնիչի ձեռքն առնելով:

Ի՞նչպես եք։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Շատ լավ, վունցոր տեսնում իս։

ՄԻՔԱՅԵԼ, Սալոմեի ձեռքն առնելով։

Բա՛րև ձեզ, տիկին... (Անանուն։) *Բա՛րև, օրիորդ։*

Գնում է դեպի Անանին։

ԱՆԱՆԻ, դեմ գնալով։

Բա՛րև ձեզ, Միքայել. (Միմյանց ձեռք են տալիս։) *Ինչի՞ այդքան ուշացաք, անցյալ օրը դուք չասացի՞ք որ այսօր ազատ եք և ամբողջ օրը մեզ մոտ կանցկացնեք։*

ՄԻՔԱՅԵԼ

Այո՛, օրիորդ, միայն ներողություն, գործ պատահեց։

ԱՆԱՆԻ

Օ՜, գործ, մի՛շտ գործ...

ՄԻՔԱՅԵԼ

Ի՞նչ արած, օրիորդ, քանի որ մարդ ստիպված է։

Գնում է դեպի Սալոմեն, Անանին նստում է իր տեղը։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Հա՛մեցեք նստի՛։

ՍԱԼՈՄԵ

Նստի՛, Միխեիլ ջան։

ՄԻՔԱՅԵԼ, աթոռը մոտ քաշելով։

Ներեցե՛ք, մի փոքր ուշացա։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ, հրավիրելով բազմոցի վրա նստել, ուր իճքն էլ է նստում։

Է՛ստի, էստի, դիվանի վրա, ինձ մոտ, Միխեիլ ջան։

ՄԻՔԱՅԵԼ

Դուք առանձին սեր եք ցույց տալիս դեպի ինձ, Յագոր Սիմոնիչ։

Նստում է բազմոցի վրա։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Գիդե աստուծ, վուր քիզ (Անանու վրա ցույց տալով։) *նրամեն չիմ ջոգում։*

ՍԱԼՈՄԵ

Քիզ վուր չսիրինք, Միխեիլ ջան, բաս ո՞ւմը սիրինք. քիզ ո՞վ չի սիրի։ Աբա դավեն վո՞ւնց իս կամենում՝ կաթնո՞վ, թե անկաթ։

ՄԻՔԱՅԵԼ

Եթե կներեք ինձ, ես բոլորովին չիմ կամենում։

ՍԱԼՈՄԵ

Ինչ է էլի ձիզ էսօր. վունց դուն իս ուզում, վունց Անանին։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Մեկ-մեկու մոդ գրաղ կուլին էկի, Սալոմե։

ՍԱԼՈՄԵ

Ա՛յ, Անանու փնջանն էլ էստի է սառում։

ԱՆԱՆԻ, վեր կենալով տեղից։

Ես կխմեմ, մայրիկ։

ՄԻՔԱՅԵԼ, նույնպես վեր կենալով։

Մի՛ նեղանաք, օրիորդ, ես կբերեմ։

Տանում է Անանու բաժակը։

ԱՆԱՆԻ, առնելով բաժակը։

Շնորհակալ եմ, Միքայել. իսկ դո՞ւք։

ՄԻՔԱՅԵԼ

Ճշմարիտ, ցանկություն չունիմ։

ՍԱԼՈՄԵ, Անանուն։

Արի՛, արի՛, Անանի, մե քու ձեռով պատրաստե՛, տի՛ս ինչ լավ է խմում. քու շինածն ուրիշ է դուր գալի դրան։

ՄԻՔԱՅԵԼ, ժպտալով։

Դուք շատ բարի եք, տիկին։

ՍԱԼՈՄԵ

Բարի հրիշտակը պահե քիզ, վուրթի։

Միքայելը ողջունում է։

ԱՆԱՆԻ

Դուք տխուր եք, Միքայել, ի՞նչ է հանդիպել։

ՄԻՔԱՅԵԼ

Առանձին ոչինչ։

ԱՆԱՆԻ

Օ՜, ես կիմանամ. առանց պատճառի չէ։ (Գնում է սուրճ պատրաստելու. իսկ Միքայելը վերցնում է Անանու գիրքը։) *Դու նկատո՞ւմ ես, մայրիկ, ի՜նչպես տխուր է։*

ՍԱԼՈՄԵ

Ո՜վ գիդե, ի՜նչ դարդ ունե։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Առանց դարդ ծիտն էլ չի ըլի, ասում ին։ (Միքայելին։) *Քեփիտ չիս էրևում, Միխեիլ։*

ՄԻՔԱՅԵԼ

Այո՜, մի փոքր լավ չեմ զգում ինձ։ (Թերթում է գիրքը, հետո ձգելով սեղանի վրա, առանձին։) *Պետք է իսկույն վերջացրած։*

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ, Սալոմեին ցածր։

Ջգրած է էրևում։

ՍԱԼՈՄԵ, նույնպես։

Խիստ։

ԱՆԱՆԻ, բաժակը տալով Միքայելին։

Ահա՛ և ձեր բաժակը... (Միքայելը ողջունում է։) *Բայց ի՞նչ է պատահել ձեզ, Միքայել, ասացե՛ք խնդրեմ, ես ձեզ երբեք այդպես չեմ տեսել, ձեր դեմքը փոխվել է բոլորովին...*

ՄԻՔԱՅԵԼ, բաժակը դնելով սեղանի վրա։

Ուշադրություն մի՛ դարձնեք, խնդրեմ, փոքր ինչ գլուխս ցավում է։ (Ցածր։) *Օրիորդ, ձեզ հետ առանձին խոսելիք ունիմ։*

ԱՆԱՆԻ

Առանձի՞ն։

ՄԻՔԱՅԵԼ

Այո՜... (Բարձր։) *Արդեն բավականին կարդացել եք այդ գիրքը, ի՞նչպես է, հավանո՞ւմ եք...*

ԱՆԱՆԻ, նստելով իր տեղը։

Օ՜, շատ հետաքրքիր է, շատ շնորհակալ եմ. բայց ափսոս որ տկար եք, ես այսօր կամենում էի լսել ձեր կարծիքն այս գրքի մասին։

ՄԻՔԱՅԵԼ

Վերջացրե՛ք, վերջացրե՛ք, օրիորդ, մենք այդ գրքի մասին շատ կխոսենք։

ՍԱԼՈՄԵ

Հենց ապրիս, Միխեիլ ջան, էլ էտ հանգի գիր մի՛ տա դրան. իրիդուն ինչրու կես-գիշիրը կարթում էր ու էսօր սաղ օր ձեռնեն չէ վեր գցի ջեր. քանի կարելու ու գործելու բան ունե իժում։

ԱՆԱՆԻ, վերցնելով ձեռագործը։

Ես իմ գործը շինում եմ, մայրիկ։

ՍԱԼՈՄԵ

Սո՛ւ, լավ է, ձե՛նդ։ էրնեկ գիդենամ ի՜նչ է դուս գալի էտ կարթալեմեն. հաց չէ տալի ու ջուր։

ՄԻՔԱՅԵԼ

Իզո՛ւր եք այդպես դատում, տիկին։

ՍԱԼՈՄԵ

Բաս ի՞նչ է։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ, Սալոմեին։

Թողե՛ք էտունք... (Միքայելին։) *Մե արի՛, նստի՛ էստի հալա... Ա՛յ, էն խիզճ կնգա թուխտը, վուր ասում էի։* (Տալով թուղթը։) *Տի՛ս, թե կանաս օտկե՛, հենց ապրիս։*

ՄԻՔԱՅԵԼ

Մեծավ ուրախությամբ։

Նստում է աջ կողմը և լուռ կարդում։

ՍԱԼՈՄԵ, ծանր քայլերով մոտենում է Անանուն, ցածր։

Աբա մե տեսնիմ վո՛ւնց է դուս գալի։ (Ձեռագործը վերցնելով։) *Էս սիվ թիլն ո՞ւր իս խառնի, քա՛։*

ԱՆԱՆԻ

Մի՞թե չէ սազում, մայրիկ, կարծեմ դա ավելի է գեղեցկացնում։

ՍԱԼՈՄԵ, նստելով Անանու մոտ։

Իսկի էլ չէ. կարմիրն ուփրո լավ կուլի։

ԱՆԱՆԻ

Ինչպես կհրամայես, մայրիկ։

Խոսում են ձեռագործի մասին։

ՄԻՔԱՅԵԼ, Յագոր Սիմոնիչին։

Սա մի դժվար գործ չէ։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Մե չա՛րա արա, արիվրդ սիրիս. էն կնգա օխնանքը քիզ հերիք է։

ՄԻՔԱՅԵԼ

Միա՛միտ կացեք, ես հենց այսօր կաշխատեմ։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Ա՛յ, ապրիս, վարցկ գուզիս, էտ է։ Ախար կանգնիլ ին փուղ ին ուզում. ինքն ի՛նչ ունե էն խիղճ կնիկարմատը, վուր ուրիշին ի՛նչ տա, է՞։

ՄԻՔԱՅԵԼ, վեր կենալով տեղից։

Փո՛ղ, փո՛ղ ու միշտ էլ փո՛ղ...

ՍԱԼՈՄԵ

Ի՞նչ անիս, վուրթիս։ էս ժամանակին ինչոր վուր է, խոսկը փուղն է։

ՄԻՔԱՅԵԼ

Է՛հ, տիկին, դուք էլ հորս պես եք դատում։

ՍԱԼՈՄԵ

Թե կի առանց փողմարթը մարթ չէ։

ԱՆԱՆԻ

Ի՞նչ ես ասում, մայրիկ, մի՞թե ով փող չունի, նա մարդ չէ։

ՍԱԼՈՄԵ

Բաս չէ ու...

Անանին զարմացած նայում է մորը։

ՄԻՔԱՅԵԼ

Մի՛ զարմանա՛ք, օրիորդ, մայրդ կրկնում է այն, ինչ որ շատերն են ասում... Ո՞րքան էլ մարդ գիտություն ունենա, ո՞րքան էլ ազնիվ զգացմունքի, հանճարի տեր լինի՝ եթե փող չունի, նրան մարդատեղ չեն դնիլ... Ամենաերևելի մարդը նա է այստեղ, ով շա՛տ փող ունի, թեև հիմարներից ու տգետներից մեկը լինի... Ցավալի՛ բան... շուտով կսկսեն փողը աստուծո տեղ պաշտել...

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Շատ դրուստ իս ասում, Միխեիլ ջան։

ՍԱԼՈՄԵ, աչքերով բեմի աջ կողմը։

Էրանի կուլեր, վուրթի, էտենց չէր էլի. ամա աշխարքը դուն խո չիս կանա դըրստի։

ՄԻՔԱՅԵԼ

Ես ի՞նչ կարող եմ, ես մի հասարակ մահկանացու եմ. բայց զզվելի է, երբ մարդիկ փողի համար իրանց մոռանում են և ամեն աններելի միջոցներ գործ դնում՝ ուրիշի աշխատանքին տիրանալու։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Ա՛խ, Միխեիլ ջան, պիտի քիպես մե քանիսն էլ ըլին, վուր ինձպես մարթու բանն էլ լավ գա։

ՄԻՔԱՅԵԼ

Մեծ պատիվ եք անում ինձ, Յագոր Սիմոնիչ։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ, վեր կենալով։

Էրեսպաշտություն չիմ անում, գիդե աստուծ։ (Միխայելը ողջունում է։) *Ճաշին խո միզ մոդ իս։*

ՍԱԼՈՄԵ, Յագոր Սիմոնիչին։

Բա՛ս, քա. թե՛ վուր առուտանն էվետ ասի։

ՄԻՔԱՅԵԼ

Շատ շնորհակալ եմ. ես ինքս ինդրեցի օրիորդին։

ԱՆԱՆԻ

Այո՛, հայրիկ, պարոն Միքայելն այնքան բարի է, որ խոստացավ ամբողջ օրը մեզ նվիրել։

ՄԻՔԱՅԵԼ

Օ՜, օրիորդ, ինձ համար առանձին ուրախություն է այդ։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Մեզ համա ավելի ուրախություն է, Միխեիլ ջան. խիստ լավ իս փիքր արի... Յիս մե հարկավոր բան ունիմ, շուտով հիդ գու քամ... Սա՛լոմե, մե արի, մունդիրս հանե։ (Աջ դռնից դուրս գնալով՝ կանչում է։) *Է՜յ...*

ՍԱԼՈՄԵ

Էս սահաթիս. Միխեիլ ջան։

Հեռանում է Յագոր Սիմոնիչին։

ՏԵՍԻԼ Գ

ԱՆԱՆԻ, ՄԻՔԱՅԵԼ

ԱՆԱՆԻ

Միքայել, դուք վշտացած եք։

ՄԻՔԱՅԵԼ

Այո՛, շա՛տ։

ԱՆԱՆԻ, մոտենալով Միքայելին։

Ո՞ւմ վրա և ինչի՞ համար։

ՄԻՔԱՅԵԼ

Մեկ օր կիմանաք։

ԱՆԱՆԻ

Չէ՛, չէ՛, խնդրում. աղաչում եմ ձեզ, Միքայել, ասացե՛ք՝ ի՞նչ է ձեր նեղության պատճառը... Մի՞թե ինձ այլևս ձեր բարեկամը չեք համարում. մի՞թե չեք կամենում ինձ ձեր նեղությանը մասնակից անել... Ասացե՛ք ձեր բարեկամուհուն, եթե իրավի ձեր բարեկամն եմ։

ՄԻՔԱՅԵԼ

Մի՞թե դուք կասկածում եք. ուրեմն ո՞վ է իմ բարեկամը, եթե դուք չեք... Լա՛վ իմացեք, Անանի, որ ձեզանից առավել թանկագին բարեկամ ես ոչ ոք չունիմ այս աշխարհում։

ԱՆԱՆԻ

Հապա ի՞նչ է պատճառը. ասացե՛ք, խնդրեմ, Միքայել, հայտնեցե՛ք ձեր նեղությունը։ Հավատացե՛ք՝ չեմ կարող հանգստանալ, մինչև չպատմեք ինձ բոլորը։

ՄԻՔԱՅԵԼ

Հորս հետ սաստիկ կռվել եմ։

ԱՆԱՆԻ

Օ՜, Միքայել, այդ ի՞նչ եք ասում, մի՞թե ծնողների հետ կարելի է այդպես վարվել։

ՄԻՔԱՅԵԼ

Ամեն բանի մեջ չափ ու սահման կա, Անանի... Մենք, իհարկե, պարտավոր ենք երախտագետ լինել դեպի մեր ծնողները՝ հարգել նրանց, սիրել, պատվել, օգնել, մինչև անգամ չինայել մեր կյանքը, եթե այդ հարկավոր է նրանց կյանքն ազատելու. բայց կատարել նրանց անտեղի պահանջները, նրանց ստրուկը դառնալ, զոհել մեզ միմիայն նրանց կամակորությանը բավականություն տալու համար՝ մենք ամենևին պարտական չենք... Քանիցս անգամ մենք արդեն խոսել ենք այս հարցի վերաբերմամբ. կարծում եմ, որ ինձ հետ համաձայն եք, այնպես չէ՞։

ԱՆԱՆԻ

Այո՛, այո՛, Միքայել, ես լիովին համաձայն եմ ձեզ հետ... Իհարկե այդպես է... Բայց կռվել ծնողի հե՞տ... (Լռություն։) *Հետաքրքիր էր իմանալ թե՝ ի՞նչ այնպիսի պահանջ կարող էր ունենալ հայրդ ձեզանից, որ դուք այդ աստիճան վշտանայիք։*

ՄԻՔԱՅԵԼ

Ներեցե՛ք, խնդրեմ, այդ մասին մյուս անգամ... Ես կպատմեմ ձեզ, հավատացե՛ք, կպատմեմ։ Այժմ ուրիշ խնդիր ունիմ ձեզ հաղորդելու։

ԱՆԱՆԻ

Այո՛, դուք առանձին խոսելիք ունեիք... (Հրավիրելով նստելու:) *Խնդրեմ։*

Ինքն էլ նստում է իր տեղը։

ՄԻՔԱՅԵԼ, նստում է նրա դիմացը. կարճ լռություն:

Ա՛նանի... շատ ժամանակ է մենք միմյանց ճանաչում ենք՝ միմյանց սիրտն ու միտքը հասկանում... (Անանին շփոթվում է:) *Խնդրեմ, վախենալու ոչինչ չկա... Կյանքի վրա մենք շատ անգամ խոսել ենք. մեր համոզմունքները գրեթե մեկ են... ասացե՛ք այժմ, Անանի, դուք համաձայն կլինի՞ք ձեր կյանքը հավիտյան կապել իմ կյանքի հետ...* (Անանին ամոթխածությամբ գլուխը խոնարհեցնում է. լռություն:) *Ինչի՞ ոչինչ չեք խոսում, Անանի...* (Առնելով ձեռքը:) *Դուք բոլորովին գրավել եք իմ սիրտը, իմ ուշքը, իմ միտքը... Ասացե՛ք, Անանի, դուք կկամենայի՞ք իմս լինել։*

ԱՆԱՆԻ, ամոթխած:

Մնողներիս հետ խոսե՞լ եք, Միքայել։

ՄԻՔԱՅԵԼ, ձեռքը բաց թողնելով:

Ձեր ծնողների կողմից ոչինչ արգելք չի լինիլ, Անանի, ես այդ մասին բոլորովին վստահ եմ։

ԱՆԱՆԻ

Իրավ է, նրանք շատ են սիրում և հարգում ձեզ... բայց և այնպես՝ խոսեցե՛ք նրանց հետ։

ՄԻՔԱՅԵԼ

Այո՛, այո՛, կխոսեմ... ինձ նախ հարկավոր էր ձեր համաձայնությունը։

ԱՆԱՆԻ

Ես... ես... համաձայն եմ, եթե, իհարկե, ծնողներս էլ կկամենան... Իսկ ձեր հայրը, Միքայել, մի՞թե նա համաձայն է. ձեզ հայտնի է, որ բացի իմ սեպհական թույլ ուժերից ես ուրիշ ոչինչ չունիմ։

ՄԻՔԱՅԵԼ

Ինձ միայն ձեր սիրտն է հարկավոր, Անանի։

ԱՆԱՆԻ, առնելով ձեռքը:

Ա՛խ, ազնի՛վ, Միքայել...

ՄԻՔԱՅԵԼ, համբուրելով նրա ձեռքը:

Այժմ ես բոլորովին երջանիկ եմ... Ես ես, Անանի, բացի աշխատանքից ոչինչ չեմ կամենում ունենալ... Մենք կվարձենք մեզ համար առանձին տուն, կմիացնենք մեր ուժերն ու ձեռք ձեռքի ված կաշխատենք, կապացուցանենք աշխարհին, որ առանց ուրիշի օգնության կարող ենք ապրել...

ԱՆԱՆԻ

Օ՜, այն ժամանակ, Միքայել, ես քո հավատարիմ ընկերուհին կլինեմ, ես կօգնեմ քեզ, կաշխատեմ բաժանել քո լծի բոլոր ծանրությունը, ինչքան հնար է ինձ... Ես կիրագործեմ իմ երազած կյանքը...

ՄԻՔԱՅԵԼ, նորից համբուրելով Անանու ձեռքը:

Իմ ազնիվ, իմ քա՛ղցր Անանի... Ո՜րպիսի երջանկություն, որ ամբողջ կյանքս քեզ հետ պիտի անցկացնեմ... Այո՛, ես երջանիկ եմ, ա՛յն աստիճան երջանիկ, որ կարծում եմ թե այս բոպեիս աշխարհիս երեսին չկա ինձ նման մեկ ուրիշը։ (Կրկին ու կրկին համբուրում է նրա ձեռքը:) *Ա՛հ, թուղթը...* (Վեր կենալով:) *Շտապեմ, այս հանձնարարությունը կատարեմ...* (Վերցնում է թուղթը. Անանին ևս վեր է կենում:) *Ես շուտով կվերադառնամ և կխոսեմ ծնողներիդ հետ...* (Դարձյալ համբուրելով Անանու ձեռքերը:) *Ցտեսություն, իմ թանկագին. իմ աննմա՛ն Անանի... Ես այս բոպեիս...*

Դուրս է վազում խորքի դռնից:

ՏԵՍԻԼ Դ

ԱՆԱՆԻ, հետո ՍԱԼՈՄԵ

ԱՆԱՆԻ, մենակ, երկար լռությունից հետո:

Ազնիվ, ազնի՛վ Միքայել. ի՞նչքան սիրելիս է եղել ինձ... Օ՜, ո՛րքան երջանիկ եմ ես այս բոպեիս...

ՍԱԼՈՄԵ, դուրս գալով ձախ դռնից:

Միխեիլն ի՞նչ էլավ։

ԱՆԱՆԻ, ընկնելով մոր գիրկը։

Ա՛խ, Մայրիկ...

ՍԱԼՈՄԵ, փոքր լռությունից հետո։

Ի՞նչ է. ի՞նչ է պատահել։

ԱՆԱՆԻ, աչքերը սրբելով։

Միքայելը... Միքայելը խնդրում է իմ ձեռքը։

ՍԱԼՈՄԵ

Ի՞նչ. Միխեիլն ուզում է քի՞զ։

ԱՆԱՆԻ

Այո՛, այո՛... նա իսկույն կվերադառնա և կխնդրե ձեր համաձայնությունը։

ՍԱԼՈՄԵ

Մո՛ւլափ, մուլափ, Անանի ջան, իժում ի՞նչ ասավ... հե՛րը կամք է տվի՞... ասա՞վ։

ԱՆԱՆԻ

Չգիտեմ, մայրիկ. նա այդ մասին ոչինչ չասաց ինձ։

ՍԱԼՈՄԵ

Ի՞նչ է ասում, քա՛, բաս առանց իր հորը՞. էտ խոմ առանց քիզ էլ գիդեի։ (Քաղցրությամբ։) *Ուզում իս քա՛ղցուրձ անե միզ էն մարթը՝։*

ԱՆԱՆԻ

Ոչինչ չգիտեմ, մայրիկ...

ՍԱԼՈՄԵ

Լավ գիդենաս վուր ինչրու հերը կամք չտա, յիս վունչիչ բանով դա՛բուլ չիմ անի... Իմացա՞ր... Տե՛ր ասուած, ի՞նչ պիտի ըլի էս չեհելներու բանը... (Նստում է բեմի ձախ կողմը։) *Նրան ո՞վ էր ասում քիզ հիդ խոսի, չէր կանա ջեր մե ի՛նձ հիդ մասլահաթ անի՞։*

ԱՆԱՆԻ

Նա իսկույն կգա։

ՍԱԼՈՄԵ

Իժում դուն ի՞նչ ասիր. խոսկ տվի՞ր։

ԱՆԱՆԻ

Այո՛, մայրիկ, ասացի, որ ես իմ կողմից համաձայն եմ։

ՍԱԼՈՄԵ

Վո՛ւյ քոռանամ յիս. առանց ի՞նձ... էտ է քու ախչկութինը՞։

ԱՆԱՆԻ

Ես նրան ասացի, որ ես համաձայն եմ, եթե իմ ծնողները ևս համաձայն կլինին. կարծեմ թե ձեզ ընդդեմ չեմ վարվել։

ՍԱԼՈՄԵ

Լա՛վ է, լավ, դուն մե էտունք վի՛քաղե, օմքին գա ի՞նչ կոսե, տեսնինք իժում աստուած ի՞նչ է տալի։ (Անանին շվարված նավաթում է սրճի բոլոր պարագաները սկուտեղի վրա. իսկ Սալոմեն, նստելով բեմի ձախ կողմը և շարունակելով Անանու ձեռագործը, առանձին։) *Խիլքս չէ կըտրում, վուր էն քուփակը ղաբուլ ըլի արի... ամա ախավագլախ նրա գլխին, փուղ չունիմ ու բաժինք, բաս ուրիշ ո՞վ գուզե դար ու դարդակ ախչկաս։*

ՏԵՍԻԼ Ե

ՆՐԱՆՔ, ՍԱՐԳԻՍ

ՍԱՐԳԻՍ, մտնելով խորքի դռնից, սառնորեն ողջունում է։

Բա՛րի լուս ձիզ։

ՍԱԼՈՄԵ, ճպարտաբար վեր է կենում և ողջունում։

Աստծու բարին, համեցե՛ք։ (Առանձին, միևնույն ժամանակ։) *Թային կուվելու է գալի հիդս. քու բեղասլ գլո՛ւխն էլ...* (Սարգսին, սառնորեն։) *Համեցե՛ք, նստեցե՛ք։* (Անանուն, նստելով։) *Ի՞նչ էլավ քիզ, մո՛դ արա ու տար է՛լի։*

ՍԱՐԳԻՍ, նստելով։

Էս ո՞ւր է Յագոր Սիմոնիչը. տանը չէ՞։

ՍԱԼՈՄԵ

Հիմի դուս գնաց։

ՍԱՐԳԻՍ

Ուփրո լավ. քի մոդ կու խոսիմ։

ԱՆԱՆԻ, առանձին։

Ա՛խ, ասուած իմ, ի՞նչ է լինելու արդյոք։

Դողալով ասնում է սրճի բաժակները։

ՍԱԼՈՄԵ

Հրամայե՛, պարուն։ (Այս միջոցին Անանին ձախ կողմի դռան մոտ վայր է գցում մեկ բաժակը, որը կոտրվում է։) *Ա՛նշնուք, էտու կոտրիլն էլ ի՞նչ էր։*

Անանին դուրս է գնում։

ՏԵՍԻԼ Զ

ՍԱՐԳԻՍ, ՍԱԼՈՄԵ

ՍԱՐԳԻՍ

Հաջաթ չէ. կուլի շառն էտու վրա անց կենա... Դուն ինձ ասա՛, իմ քուր, էս ի՞նչ օրենք է. յիս մեռիլ ի՞մ թե ջեր էլի գեղնի էրեսին ման իմ գալի... Ախար առանց ինձ էտ հանգի բան բռնիլ կուլի՞... էլ հեր ու վուրթուլթինը գանա վիր ննգավ աշխրքեմե՞ն։

ՍԱԼՈՄԵ

Ինչի՞ վրա իս ասում, յիս չիմ հասկանում։

ՍԱՐԳԻՍ

Խիստ լավ հասկանում իս էլ ու գիդես էլ։ Ախար էս իմ տղին ո՞ւր իք գժվեցրի. յիս բաց աչկով կու թո՛ղնիմ վուր նա մուքթ ախչիկ ուզե՞։

ՍԱԼՈՄԵ

Միզ անմիղ իս միղ դնում, պարուն. ամեն մարթ իր բանը գիդե. թե կի քու տղեն միզ է հավնում ու մինք էլ նրան, էտումը ինչո՞վ ինք միղավուր։

ՍԱՐԳԻՍ

Բաս յիս էլ վունչիչ, է՞լիլ

ՍԱԼՈՄԵ

Ո՞վ է ասում, ո՞վ է ասում, պարուն. լավ գիդացի՝ էլի քու խաթր ու պատիվն է, վուր ինչրու էսօր մնացիլ է բանը, թե չէ վից ամիս վաղ կու փսակեի...

ՍԱՐԳԻՍ

Շատ շնորակալ իմ էտղադա պատվի համա, շա՛տ... Ամա մե ինձ ասա՛, Սալոմե, դուն խելոք կնիկ իս, իմ ասածը չուստ կու հասկանաս... Փուղ ու բաժինք դուք չիք տալի, ախպեր, ու չունիք էլ... բեդամաղ մի՛ ըլի, գնթաղվա, ու յիս խոմ՝ թե Միխեիլի ու Անանու բանը գլուխ իք բիրի՝ էն յիրգնային թաքավուրի զորութինը գիդենա, վուր մե՛ գրոշն ինչ է, չէ՛ թե մե գրոշ չիմ տա Միխեիլին՝ ամա էլ հավիդենական մոդ չիմ թողնի վունց մեկին... Հիմի միխկն ու վարցկը քու շլնքին։

ՍԱԼՈՄԵ

Ի՞նչ իս ղնամիշ անում, պարուն, թե փուղ չունինք... շատ մարթ կա փուղ ունե, շատն էլ ազնվութին։

ՍԱՐԳԻՍ

Գիդիմ, գիդիմ վուր ազնիվուրթիք իք, յիս մե բեդասլ քախկցի իմ, ի՛նչ անինք։

ՍԱԼՈՄԵ

Հա՛, լա՛վ գիդացի, պարուն, վուր փուղ էլ ունենանք, էլ Անանուս քու Միխեիլին չէի տա. նրա վրա լավիրն էլ շատ կան։

ՍԱՐԳԻՍ

Ա՛յ, օղորմի քու հորը. յիս վուր ասում իմ խելոք իս, է՛տ իմ ասում, է՛... Բաս էս սահաթիս յիս վուր ձիզ համա իմ Միխեիլի վրա լավը հաբիլ ըլիմ, վուր ազանչաքով, պաղանտաքով ուզում ըլին ձիր Անանուն, ի՞նչ կոսիք։

ՍԱԼՈՄԵ

Ցիս Միխեիլին էլ դաբուլ իմ, քու արիվը, օղոնդ քու կամքն էլ ըլի։

ՍԱՐԳԻՍ

Է՜հ, Միխեիլը վո՞ւրն է. Միխեիլի վրա սիրուն, Միխեիլի վրա սիսուկ, Միխեիլի վրա ջահիլ ու հարուստ, հա՜ բուստ, վուր քախկումը մեկն էլ չկա։

ՍԱԼՈՄԵ

Էտ ո՞վ է։

ՍԱՐԳԻՍ, ինքնաբավական։

Հը՜մ, Ստեփան Դանելիչ Բրիլիանտովի տղեն։

ՍԱԼՈՄԵ, զարմացած։

Էն վուր էրեգ ձիր տանը տեսա՞. նրա տղե՞ն։

ՍԱՐԳԻՍ

Հա՛, հենց նա։

ՍԱԼՈՄԵ, ուրախ։

Հանաք իս անո՞ւմ, պարուն, թե մասխարա իս գցում։

ՍԱՐԳԻՍ

Հանաք-մասխարութինը վո՞ւրն է, օ՛խնած հոքի։ (Սուտ։) Էրեգ հենց էտ բանի վրա էի խոսում հիդը, վուր դուն շնուրհ բերիր։

ՍԱԼՈՄԵ

Հալա թե քու ա՛ստուծ կու սիրիս։

ՍԱՐԳԻՍ

Աստուծն էլ ու յիրգինքն էլ չիս ավտո՞ւմ... Ինձ թավաքալի մարթ մի՛ գիդենա, Սալոմե։

ՍԱԼՈՄԵ

Իժում ինչի՞ Բարբարեն վունչիչ չասավ ինձ։

ՍԱՐԳԻՍ

Ջեր վո՛ւրդի էր Բարբարեն... Նա վուր չէր տուն էկի՝ էրեգ էվետ կու վիրչացնեի։

ՍԱԼՈՄԵ

Քու արիվը, պարուն, կիսի կեսին էլ արժանի չինք, թե էտ բանը կուլի։

ՍԱՐԳԻՍ

Էտումը յիս թավդեք, քիզ ի՞նչ դավի։ Թե վրա էկավ բանը խո լավ, թե չէ ու ձիր հավնած Միխեիլը խոմ էնդի է ու էնդի։

ՍԱԼՈՄԵ

Իժում ումիկ էրիտ Ստեփան Դանելիչը՞։

ՍԱՐԳԻՍ

Կիսկներքումը իրիստ նստեցավ, քու արիվը... Իմ տղի համա լավ բան կուլի, կոսե... մե հիդը խոսիմ, կոսե։

ՍԱԼՈՄԵ

Հիմի իմ իմանում էն խոսկիրը, վուր ասավ թե՝ յիս իմ ասելուս ասի, ասում է, հիմի դուք խոսեցե՛ք, կոսե։

ՍԱՐԳԻՍ, կեղծավորությամբ։

Ախար վուր ասում իմ...

ՍԱԼՈՄԵ

Աբա ի՜նչ փիքր կոնեի... Էնդուր էլ էնենց հարապատիկ արավ։

ՍԱՐԳԻՍ

Բաս յիս էլ ի՞նչ իմ ասում, ախար։

ՍԱԼՈՄԵ

Տղեն խո, քու արիվը, էն օրը Սաբրանիի բալումը գլխներուս փարվնի պես պտուտ էր գալի. ի՜նչ սիրուն ախչիկ ունիս, կոսե. խոստացան էլ, վուր վիզիտով գան մեզ մոտ, ամա ջեր չին էկի։

ՍԱՐԳԻՍ

Մե աստուծ տա վիրչանա էս բանը, վիզիտով էլ գու քան հորեսի դենն ու առանց վիզիտի էլ։

ՍԱԼՈՄԵ

Ի՜նչ ասիմ, պարուն, էտ էն հանգի լավութին կոնիս մեզ, վուր ինչրու մահը պարտական կուլինք։

ՍԱՐԳԻՍ

Ջէ՜, Սալոմե, յիս սուտ սիլի-բիլիք չիմ դիդի. դուրթ է, լավութին իմ անում ձեզ, մի՜նձ լավութին, ամա ուփրո մինձ լավութին յիս իմ գլխին իմ անում՝ իմ Միխեիլին. մե էս փորցանքեմեն ազատիմ յիս նրան։

ՍԱԼՈՄԵ

Աստուած նրան էլ էնենց բախտավորե, վունցոր քու սիրտը գուզե։

ՍԱՐԳԻՍ

Ախար կանգնիլ է վրես թե՝ կնիկ ուզող մարթը, ասում է. պիտի կինաց նեզիր պտուն իր համա, չէ թե փուղ ու բաժինք, կոսե։ Աբա էս օրենք է՞. քիզ իմ հարցնում։ Առանց փուղ նեղրութին կուլի աշխարքումը՞... Օրինակ ասինք՝ յիս վունչիչ չունիմ ու հրամանդ էլ վունչիչ, ինչո՞ւմը կու դառնանք նեզիր... Հը՛մ... Բեսաբ նամադուլ արի, է՛լի, վուր յիս նրան Ռուսեթ ղրգեցի ու էն ուսումը տալ տվի. ամա էլ ի՞նչ փայդա։

ՍԱԼՈՄՆ

Ամեն իմ լավ ուզողի վուրթին դուս գա էնենց։

ՍԱՐԳԻՍ

Է՛հ, ծրեմեն դուսն է, ասում իմ, է՛. մեկ վուր ասում է «չէ», հենց մկրատի պես կանգնած է. մե պուկ հրիշտակ ու սատանա վուր մոդ ըլին դլխին, նրա ասածը չին կանա փոխիլ տա։ Հիմի թե քու Անանին էլ էս հանգն է, յիս դավի չունիմ։

ՍԱԼՈՄԵ

Տղի բանն ուրիշ է, պարուն, ախչկա բանն ուրիշ. վո՞ւնց կանա Անանին իմ խոսկը չլսե։ Դուն ջա՛փա քաշե, էլ մի՛ ուշացնի, Անանու համա խա՛թրջամ կաց։

ՍԱՐԳԻՍ

Ո՛վ գիդե, Սալոմե, ուսում առած ախչիկ է... իրանց ասածնիր ին։ Ախար ախչկա էտղադամի ուսումն էլ ո՞վ է իմացի... Ջխայտառակվիմ էն մարթու մոդ, ամութ է։

ՍԱԼՈՄԵ

Չէ՛, չէ՛, պարուն, ի՞նչ իս ասում, դուն էնդի գլո՛ւխ բի բանը. Անանու ջուղաբը յիս իմ տալի քիզ։

ՍԱՐԳԻՍ

Ղոչաղ կնիկ իս, յիս ու իմ աստուածը... (Վեր կենալով։) Բաս ես կո տեսնիմ Ստեփան Դանելիչին։

ՍԱԼՈՄՆ, նույնպես վեր կենալով։

Հա՛, գեթաղվա. էլ ի՞նչ ադանչաք անիմ։

ՍԱՐԳԻՍ

Էն յիս գիդիմ։

ՍԱԼՈՄԵ

Ջուղաբն էգեբա չուստ իմաց անիս, թե չէ էլ չիմ դնչանա։

ՍԱՐԳԻՍ

Վա՛, բա՛ս, էսօր էվետ. յա՛ շա՛տ, շատ ուշացնիմ, էքուց ինչրու էսչախը... (Գնում է, հետո հետ դառնալով։) Ամա ի՞նչ միտս էկավ, Սալոմե. թե քու վուրթկերանց արիվը կու սիրիս, Միխեիլի անգաճը չգցիք, ինչրու բանը քութահ չըլի, թե չէ նրամեն էլ սաղսալամաթ չիմ պրծնի։

ՍԱԼՈՄԵ

Աբա ի՞նչ իս ասում, պարուն, քիմեն չիմ արմնո՛ւմ... էրեխա ի՞մ։

ՍԱՐԳԻՍ

Բեդամաղ մի՛ ըլի, աստուած կու սիրիս, էնենց մուղայթացնում իմ. ո՛վ գիդե մե բաշ իմքին չասե Անանուն ու դիփ տակն ու վրա չըլի մեր դարսողութինը։

ՍԱԼՈՄԵ

Ա՛րխաին կաց, արխաին։

ՍԱՐԳԻՍ

Ղոչաղ կնիկ իս, յիս ու իմ հոքին... (Գնում է, Սալոմեն փոքր ինչ հետևում է։) Մա՞րթ չիմ ըլի, թե վրա չիմ բերի... (Առանձին, ֆթի տակ)։ Հը՛մ, Միխեիլ...

Դուրս է գնում խորհի դռնից։

ՏԵՍԻԼ Ֆ.

ՍԱԼՈՄԵ, մենակ, երկար լռությունից հետո։

Միխեիլին չասիս, կոսե. գժվիլ ի՞մ թե խիլքես էլիլ իմ. հենց գիդե բանի զորութինը ես չիմ իմանում... Ո՛վ Փեթխայինի աստուածային, դո՛ւն բարեխոս ըլիս... Ո՞վ կու փիքր աներ, յա ո՞ւմ մակումը գու քեր... Մեռ-

նի՞մ քու հրաշագործութենին, դո՛ւն տաս միտկ Ստեփան Դանիլիչին, վուր էս բանը գլուխ դա... էլի վուր քու գորութինն է փիքր անիլ ավի Սարքսին, թե չէ ի՞նչ կուգե ասե՝ իր Միխեիլի համա էլ լավ կուլեր... Մէկ գլուխ գա էս բանը, էլ Միխեիլը վի՞ս էկադրերա... Ա՛խ, աստուծաձին, սդոնդ կատարիս էս իմ սրտի խոհուրթը, գլուխս չարի փուխ կոնիմ քիզ. բան ու գուրձս քու սանդխտնիրը կու շինիմ, իմ մատներով քիզ համա փիանդազ կու կարիմ, աճկիրս քու փիշի թոզով կու լցնիմ, իմ մատի մինձ մատնիրը մոշլա կոնիմ՝ խաչ կու շինիլ տամ ու իմ ձեռով ճամիդ կու քաշ անիմ... (Կանչում է:) Ա՛նանի, Ա՛նանի։

ՏԵՍԻԼ Ը

ՍԱԼՈՄԵ, ԱՆԱՆԻ

ԱՆԱՆԻ, դուրս գալով ձախ դռնից:

Ի՞նչ ես կամենում, մայրիկ։

ՍԱԼՈՄԵ

Աբա, Անանի ջան, դուն գիդիս վունցոր խելոք կու ժաժ գաս էսօր։ (Անանին շվարվում է:) Ջա՛լիշ արի վուր խոսկ չտանուլ տաս Միխեիլի մոդ։

ԱՆԱՆԻ

Այսինքն ի՞նչ ես կամենում ասել, մայրիկ։

ՍԱԼՈՄԵ

Էն՝ վուր ավելի ումիկնիր չտաս նրան... Ի՞նչ ասիլ իս խոսկիտ վրա դայիմ կանգնի... Դուն բանն ի՞նձ վրա գցե։

ԱՆԱՆԻ

Մի՞թե նրա հայրը...

ՍԱԼՈՄԵ, նստելով:

Հա՛, հերը... դաբուլ չէ... կրակ էր վեր ածում էս սահաթիս... էրկուսին մետի տանեմեն դուս կոնիմ, կոսե։

ԱՆԱՆԻ

Ա՛խ, աստված։

ՍԱԼՈՄԵ

Ամա իրան Միխեիլին վունչիչ չասիս, թե չէ էլ ինձմեն չիս պրծնիլ։

Լռություն:

ԱՆԱՆԻ

Ինչի՞, ինչի՞ չասել, մայրիկ. ինչի՞ չպարզել գործը։

ՍԱԼՈՄԵ

Ինձ համա պարզած էլ է ու պրծած էլ։

ԱՆԱՆԻ, սիրտը կոտրած:

Բայց ի՞նձ համար, մայրիկ։

ՍԱԼՈՄԵ

Է՛լի... ինձ չիս ավտո՞ւմ, քու վադն իմ ուզե՞ւմ... Պիտի էնենց բրունինք բանը, Անանի ջան, վուր էլի հերը գա էստի, է՛ստի—վուտիս տակն աղանչաք անե... Մո՛ւլափ տա հալա... փուղ չունիք, կոսե...

ԱՆԱՆԻ, ադիողում:

Բայց մեր անփողությունը Միքայելին չէ արգելում ինձ ուզել... նա ինքն ասաց...

ՍԱԼՈՄԵ

Ի՞նչ է ասում, քա՛... Միխեիլը վուր ուզում է, իժում յիս կու թողնիմ վուր նրա հոր ընդեմ ըլի՞... Ուզում իս էրկուսիտ մետի դար ու դարդակ թողնե ու աշխարքի մասխարա դառնա՞ք... էլ գլուխս սաղ ի՞նչ կ՝ունիմ... Ախկտութենի իմ մինձացրի քիզ գանա՞... Չէ՛, վուրթի, յիս քիզ էտենց չուստ չիմ ղիմիշ անի։

ԱՆԱՆԻ

Օ՜հ, ես շատ լավ զգում էի, որ ինձ համար բախտավորություն չկա։

Աչքերը սրբում է:

ՍԱԼՈՄԵ, վեր կենալով:

Աբա էտ ի՞նչ արարմունք է. էրեխա ի՞ս թե ինչ է. քու տարս աղջիկը կու լաց ըլի՞, չիս ամանչո՞ւմ... Միխեիլը չըլի, ուրիշն ըլի, ի՞նչ կա... քիչ կա՞ն։

ԱՆԱՆԻ, լացով։

Մա՛յրիկ, մայրիկ, այդ ի՞նչ ես ասում։

ՍԱԼՈՄԵ

Ի՞նչ ասում իմ, լա՛վ լսե. յիս փիս բան չիմ բռնի... դուն անմիզ ա-ճկիրդ մի՛ խարաբ անի... (Ոտքի ձայն է լսվում։) *Ովոր գալիս է. նա չըլի, ի՞նչ կոսե։*

ԱՆԱՆԻ

Ա՛հ, ո՛րքան տարաբախտ եմ ես։

Աշխեբը սրբելով դուրս է գնում ձախ դռնից։

ՏԵՍԻԼ Թ

ՍԱԼՈՄԵ, ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ, հանդիսի նշանազգեստով և բռով։

ՍԱԼՈՄԵ, բարձրաձայն։

Ո՛վ քաղցր աստուծամին, դուն բարեխոս ըլիս իմ Անանու համա։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ, մտնում է խորհի դռնից։

Ո՞ւմ հիդ իս մենակ խոսում։

ՍԱԼՈՄԵ

Ա՛խ, Յա՛գոր ջան. չիս գիդի թե ի՞նչ բան է պատրաստում աստուծ միզ համա։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Ինչի՞ վրա իս էտենց ուրախ։

ՍԱԼՈՄԵ

Անհատնելի դովլաթ է բաց անում միզ համա աստուծ, Յա՛գոր ջան. Անանու համա հեստի տղա է լուս գցի, վուր էլ ի՞նչ ասիմ։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Միխեիլի վրա լավը՞։

ՍԱԼՈՄԵ

Միխեիլը վո՞ւրն է, քա՛. (Առհամարանքով։) Միխեիլի հա՛տն ու կտուրն է... Բրիլիանտովի տղեն, Բրիլիանտովի տղեն, Յա՛գոր ջան։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Վո՞ւր Բրիլիանտովը։

ՍԱԼՈՄԵ

Աշխարքումը քա՞նի Բրիլիանտով կա գանա. Ստեփան Դանելիչի տղեն, Յա՛գոր ջան, միլիոններու տերիրը։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Էն գիշիրը վուր Սաբրանիումը դոստացա՞նք։

ՍԱԼՈՄԵ

Հա՛, հենց նրանք։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ, զարմացած։

Ղուրթ իս ասո՞ւմ, Սալոմե։

ՍԱԼՈՄԵ

Քու արիվը գիդենա, Յագոր ջան։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Իժում էտ ո՞վ ասավ։

ՍԱԼՈՄԵ

Միխեիլի հերը. էս սահաթիս էստի էր, գնաց վուր բանը էս օրերումը վիրչացնե։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ, զարմացած։

Միխեիլի հերը՞... (Ծխատարշը կպցնելով։) *Տո՛, թե լավ մարթ է, Ստեփան Դանելիչի վուրթու համա ինչի՞ է չալիշ գալի. իր Միխեիլն էնդի չէ՞ հազիր հադրաբաշի։ Նրա դունգը չիմ փոխի սաղ Ստեփան Դանելիչի վուրթու հիդ.* (Նստում է։) *Ի՞նչ անիմ վուր հարուստ է։*

ՍԱԼՈՄԵ

Աբա վի՞ս էկադրեբա. վո՞ւնց կանա Միխեիլը նրա մոդ գա. զարթնի իր խիլքն ու ուսումը ի՞նչ ունե... Նրա բեդասլ հորն ասիմ թե՞ Ստեփան Դանելիչի ասկն ու տակը. մումով էլ վուր պտռիլ էինք, էս հանգի բախտի չէինք կանա ռաստ բերի Անանուն։

Նստում է։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ, ծխելով։

Ցիս կարծում իմ, Սալոմե, վուր Անանին Միխեիլի հիդ ուփրո բախտավուր կուլի, կանց Ստեփան Դանելիչի կալասկումը։

ՍԱԼՈՄԵ

Քիզի-քիզ ձևում իս ու կտրում. օրինակ ասինք՝ Միխեիլի մոդ շատ էլ բախտավուր կուլի Անանին, ամա վուր հերը չէ ուզում, վուտնիրքը խո չի՛նք կանա ննգնի։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Ի՞նչ գիդիս թե չէ ուզում։

ՍԱԼՈՄԵ

Հազիր իր բերնով ասավ էս սահաթիս ու էլ էստուրն ի՞նչ գիդենալ է հարկավուր. իր Միխեիլի համա վուր ուզում ըլի, նրանց համա ո՞ւր է խոսում։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Ո՛վ գիդե, սատանա մարթ է Սերգեյ Տարասիչը. կուլի դասիդի է մնչ բերում Ստեփան Դանելիչին, վուր միր միտկը դրուստն իմանա. ուզում է միթամ առչի գամը միզ ասեցնել տա, վուր էգեբա ավելի իմքին դուս գչլե։

ՍԱԼՈՄԵ, վեր կենալով։

Ցիս քիզ ասում իմ վուր ամալ-աշքարա իր բերնով ասավ էն մարթը, վուր Միխեիլի համա վունչիչ բանով չի ուզի Անանուն. փուղ ու բաժինք չունիք, կոսե։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Է՛հ։

ՍԱԼՈՄԵ

Աստուծ գիդենա։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ, վեր է կենում և ման է գալիս։

Նո՛ւ, թո՛ղ բաս գլուխը քարը տա, հենց գիդե նրա փուղի վրա շատ իմ արմնում. դիփ մաշենիկութենով կուլի մոդ արած... Ամա Միխեիլը լավ ուչա է. ա՛փսուս վուր նրա վուրթին է։

ՍԱԼՈՄԵ, հետը ման գալով։

Քու արիվը, Ստեփան Դանելիչի վուրթուն յիս օչովի վրա չիմ փոխի. ի՞նչ անինք թե մինձ ուսում չունե. մենակ նրա ասկը քսան Միխեիլին աժե ու ինչ գուզե պակասութին էլ ունենա, դովլթի տակը չի էրևա։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ, նստելով։

Քիզ համա օղոնդ դովլաթ ըլի ու ասկով սզնիվ։

ՍԱԼՈՄԵ

Բաս չէ ու՝ Թորոզի վուրթի Սարքսի բե՛դասլ գլուխն է հարկավուր... (Նստելով։) *Նրա ա՛ճկն էլ կարիմ... Մե աստուծ տա էս բանը գլուխ գա, իժում դուն թա՛մաշա արա, թե քա՛նի ախչկա տիրուչը էլդա է դիբչում։*

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Փառասիրութենով լիքն իս, Սալոմե։

ՍԱԼՈՄԵ

Փառասիրութենով կի չէ, խի՛լքով լիքն ասա։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Հա՞, խիլքով. քո մա՛զերուն էլ հարցրու։

ՍԱԼՈՄԵ

Ի՜հ, լավ է. բան իք չինի ձիզ համա... Ինչո՞վ չէլավ էս աշխարքը չիմացար. զարթնի Անանուն էրկու ախչիկ էլ ուրիշ է մինձանում մարթու տալու, հիդնուհիդը տղերքն ուփրո գին ին բռնում, տեսնիմ թե վո՞ւնց իս մարթու տալի։ Ջեռնեմես դուս կու թողնի՞մ էս բանը. հավիտենական տեր կու դառնա Ստեփան Դանելիչը միրը։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ, ծխելով։

Հը՞մ...

ՍԱԼՈՄԵ

Հը՞մ կի չէ, ղուրթ իմ ասում։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ, վեր կենալով։

Մո՛ւլափ, Սալոմե, մո՛ւլափ, յիս ջեր մե խոսիմ Սերգեյ Տարասիչի հիդ. մե նրա միտկն իմանամ. տեսնիմ Միխեիլի համա ինչ է ասում, իժում կու փիքր անինք Ստեփան Դանելիչի վրա։

ՍԱԼՈՄԵ, տեղից վեր թռչելով։

Չէ՛, չէ՛, չէ՛, չէ՛... հայրեցվուրթի վունչիչ չասիս, վո՛ւնց Սերգեյ Տարասիչին, վո՛ւնց նրա Միխեիլին. փիքր էլ իմ արի ու պրծիլ էլ իմ։

Մտկումս դրի՝ վուր Ստեփան Դանելիչի տղին պիտի տանք ու էտենց էլ պիտի ըլի, էլ էստումը խոսկ չունիս դուն։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Հը՛մ...

ՍԱԼՈՄԵ

Հա, հը՛մ... Իմանում ի՞ս... վունչըչեմեն վունչիչ չգիդենաս վունց մեկի մոդ, թե չէ էլ ինձմեն չի՛ս պրծնի։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Վուր ասում իս, չիմ ասի, վա՛. իմ գլխի դուշման իս չիմ։

ՍԱԼՈՄԵ, փաթաթվելով։

Թե ինձ կու սիրիս, Յագոր ջան, չեր վունչիչ շասիս. միթամ իսկի վունչիչ չիս էլ գիդի։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Չիմ ասի, քու արիվն իմ ասում, վա՛... Բաս չեր Անանուն էլ վունչիչ չիս ըլի ասի։

ՍԱԼՈՄԵ

Հայհարայ ո՞ւր էի ասում. չեր մեր էնդանց դրուստ խոսկ իմանամ, է՞։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Ո՞ւր էր վազում հեր օխնածը, մեր բիչ չէ՞ր կանա մուլափ տա. փաֆիեն իս չէր սաոի, յիս էլ իմացիլ էի, է՞։

ՍԱԼՈՄԵ

Ա՛յ, իմանում իս, է՛լի. լավ բան վուր չէր ըլի, խում առանց քու Ֆարցնիլ չէի բռնի։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Դիփ լավ, Սալոմե, ամա Անանին վուր չուզի նրան, էնչափան ի՞նչ կանիս։

ՍԱԼՈՄԵ

Վո՞ւնց կանա վուր իմ խոսկը չկատարե։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Դուն գիդիս, Սալոմե, կնգդերանց բանումը յիս չիմ խառնվում։

ՍԱԼՈՄԵ

Հա՛, Յագոր ջան, էտենց. ի՞նչ քու բան է ախար. դուն ինձ թո՛ղ, իմ բանը յիս գիդիմ։

Դուրս է գնում ձախ դռնից։

ՏԵՍԻԼ Ը

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ, մենակ, ներից ծխամարշը կպցնելով։

Էս դիփ տակն ու վրա էլավ... Ա՛խսուս, ա՛փսուս Միխեիլ. ամա կնգդերանց օխտեմեն ո՛վ գու քա... (Ձախ բռան մեջ նայելով և երևակայելով բղթախաղը։) Թուխտը փոխվեցավ. էլ Սարքիս ու Միխեիլ չկա... Նրանց մագիար Ստեփան Դանելիչ, Իվան Ստեփանիչ... (Աջ ձեռքի ցուցամատը ճակատին դնելով։) Իվա՛ն Ստեփանիչ... Իվա՛ն Ստեփանիչ...

Գնում է դեպի աջ կողմի դուռը։

ՏԵՍԻԼ ԺԱ

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ, ՄԻՔԱՅԵԼ

ՄԻՔԱՅԵԼ, մտնելով խորքի դռնից։

Կարող եմ ձեզ ուրախացնել, Յագոր Սիմոնիչ. ես գնացի ուղղակի մեծավորի մոտ, (Թուղթը ցույց տալով։) և ահա՛, տեսե՛ք նրա ձեռքը։ (Թուղթը տալիս է Յագոր Սիմոնիչին։) Նա յոթն օր ժամանակ նշանակեց այս գործը վերջացնելու։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ, նայում է թղթին, հետո առնելով Միխայելի ձեռքը, մոտ է քաշում իրան և ճակատից համբուրում։

Շա՛տ ապրիս. Միխեիլ ջան, շա՛տ շնորակալ իմ։

Հրավիրելով Միխայելին նստելու, ինքն էլ նստում է։

ՄԻՔԱՅԵԼ

Չարժե շնորհակալության. (Նստելով։) Ճշմարիտ, ես ինքս ուրախ եմ, որ կարողացա այդ խեղճ կնոջն օգնել. այդպիսի ծառայություններն ինձ առանձին բավականություն են պատճառում։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Զորանաս, Միխեիլ ջան, զորանաս. շատ ուրախացրիր ինձ... Մինձ վարցկ բան արիր, գիդենաս. աստուձ մուրազիտ հասցնե... (Միքայելը ողջունում է:) *Է՜հ, ուրիշ նուր ի՞նչ խաբար։*

ՄԻՔԱՅԵԼ

Իսկույն կիմանաք, Յագոր Սիմոնիչ... Ես կարծում եմ մենք միմյանց բավական հասկանում ենք, ուրեմն էլ երկար խոսքեր հարկավոր չեն լինիլ հայտնելու ձեզ իմ միտքը...

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ, ընդմիջելով:

Քու միտկն էլ գիդիմ, Միխեիլ ջան, քու խղճմտանքն էլ. ավատա՜ ինձ, վուր քիզ իմ վուրթկերանցմեն պակաս չիմ սիրում։

ՄԻՔԱՅԵԼ, ողջունելով:

Հաստատ գիտեմ, Յագոր Սիմոնիչ, և այդ հույսով համարձակվում եմ...

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Զարմացնում իս ինձ, Միխեիլ ջան...

ՄԻՔԱՅԵԼ, վեր կենալով:

Ես խնդրում եմ ձեզանից Անանու ձեռքը։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Վա՜հ, իժում քու հերը՞։

ՄԻՔԱՅԵԼ

Հորս հետ ես վերջացրի գործը։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ, զարմացած, վեր կենալով:

Տե՜ր օղորմած աստուձ... (Լռություն:) *Ախար քու հերը... չիմ հասկանում, աստուձ գիդենա... Ախար քու հերը... զաբուլ է՞։*

ՄԻՔԱՅԵԼ

Յագոր Սիմոնիչ, իմ հոր համաձայնության վրա հետո կիուենք, բայց դուք ի՞նչ եք ասում։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Ինչ իմ ասո՜ւմ... (Առաձին:) *Ա՜խ, Սալոմե...* (Միքայելին:) *Աբա մե սո՜վրեցրու թե ի՜նչ ջուղաբ տամ։*

ՄԻՔԱՅԵԼ, տարակուսած:

Ճշմարիտ, ես ձեզ չեմ հասկանում։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Տո տը, բրատ...

ՄԻՔԱՅԵԼ

Ուրեմն դուք փոխե՞լ եք ձեր միտքը։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ, գրկելով ու համբուրելով Միքայելին:

Էտ մի՜ ասի, Միխեիլ, էտ մի՜ ասի... Աստուձ է վկա, վուր քիզ վրա լավ ուչա ինձ չէ ռաստ էկի, ու քիզ էնենց իմ սիրում, վունցոր հատուկ իմ կուրթի. ամա էս բանը կնգդերանց բան է, չիս մեչը չիմ խառնվում. վունցոր Սալոմեն գուզե, չիս նրան խոսկ իմ տվի... Տղա վուր ըլի իմ խոսքն է հարկավուր, ամա ախչկա բանը կնիկարմատը գիդե։

ՄԻՔԱՅԵԼ

Դուք իզուր մի՜ք մեղադրիլ Անանու մորը, ես հաստատ գիտեմ, որ նրա կողմից ոչինչ արգելք չի լինիլ, եթե միայն դուք համաձայն կլինիք։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Ա՜խ, Միխեիլ, էլի բանն ինձ վրա իս գցում... Աստուձ է վկա, իմ չիրիք վուրթին ապրին, վուր քիզ վրա լավ տղա չիս չիմ ուզի Անանուս համա... Լավ գիդիմ քու սիրտն էլ, քու ազնվութինն էլ, գիդիմ ինչքան էլ բախտավուր կուլի Անանին քի մոդ. ամա ի՜նչ անիմ, վուր մենակ չիս չիմ տերը... Թաք Սալոմեն ուզե էս բանը, ազնիվ խոսկ իմ տալի, Միխեիլ ջան, եթե ինձ ազնիվ մարթ իս ճանչնում, (Բազուկները տարածելով.) *վուր էրկու ձեռս բաց արած գուզիմ քիզ։*

ՄԻՔԱՅԵԼ, շվարված, առաձին:

Այլևս կասկած չկա... անշուշտ այստեղ մեկ բան է պատահել, որի պատճառը ես չեմ կարողանում հասկանալ։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Ինձմեն մի՛ նիղանա, Միխեիլ ջան, Սալոմի հիդ դուն ի՛նքդ խոսի. նրան թե կոտրեցիր՝ դե՛մուկեմն արի ինձ մոդ, էն սահաթին կու օխնիմ քիզ. հաստատ գիդիմ վուր Անանին ավելի կու ուրախանա, կանց կու հակառակվի. քիզ նման ազիզ է Անանիս, էրանի նրան, ում կնիկն էլ նա՛ կու դառնա... է՛տենց, էտենց, Միխեիլ ջան... (Գրպանում թաշկինակը որոնելով:) *Ի՞նչ էլավ։*

ՏԵՍԻԼ ԺԹ

ՆՐԱՆՔ. Սալոմե:

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ, նկատելով Սալոմեին, որ մտնում է ձախ դռնից.

Ա՛յ, Սալոմեն։

ՍԱԼՈՄԵ

Աա՛, էկա՞ր, Միխեիլ ջան, համեցե՛ք նստի, հորես ճաշը հազիր կուլի... Թազա ի՞նչ կա։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Թազեն էն է, Սալոմե, վուր էկիլ է ու միր Անանուն ուզում է։

ՍԱԼՈՄԵ, հոնքերը կիտելով:

Էրնեկ գիդենամ բա՛ դրոս հանաք է։

Բարկացած նայում է Յագոր Սիմոնիչին:

ՄԻՔԱՅԵԼ, ժպտալով:

Յագոր Սիմոնիչը հանաք չէ անում, տիկին, մենք այս րոպեիս հենց այդ բանի վրա էինք խոսում։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ, գրպանում որոնելով:

Էս աղլուխս ի՞նչ էլավ...

Դուրս է գնում աջ դռնից:

ՏԵՍԻԼ ԺԹ

ՄԻՔԱՅԵԼ, ՍԱԼՈՄԵ

ՍԱԼՈՄԵ, մոլորված ձևանալով:

Արա ի՛նչ ասիմ, վուրթի, չիմ գիդի, աստուած գիդենա... (Նստում է:) *Մե էրկու օր մո՛ւլափ տու, Միխեիլ ջան, դրուստ ջուղաբը կու իմաց անիմ. մե Անանուս էլ հարցնիմ... խո գիդիս առանց նրան չի ըլի։*

ՄԻՔԱՅԵԼ

Ես այսօր Անանու հետ խոսեցի, միայն մնում է ձեր համաձայնությունը։

ՍԱԼՈՄԵ

Աբա էտ օրենք է՞, Միխեիլ ջան. առանց ինձ նրա հիդ ո՞ւր էիր խոսում էտ բանը... քիմեն էտուրը չէի մնում, քու արիվը։

ՄԻՔԱՅԵԼ

Ի՞նչ վատ եմ արել, եթե խոսել եմ. դուք ինքներդ, տիկին, բավական հասկացրել եք ինձ, որ ես իրավունք ունեի այդ քայլն անելու։

ՍԱԼՈՄԵ

Ասիլ իմ ու էլի կոսիմ, Միխեիլ ջան, վուր քիզ վրա լավ փեսա չիմ ուզի, քու արիվը, ամա ի՞նչ անիմ, վուր քու հերը կրակ էր վեր ածում էսօր էստի...

ՄԻՔԱՅԵԼ, շվարված:

Հայրս այստե՞ղ էր միթե...

ՍԱԼՈՄԵ, վեր է կենում և ձեռքը Միքայելի ուսին դնում:

Վո՛ւյ, գնթաղվա, Միխեիլ ջան, վունչիչ չասիս իրան... Թո՛ղ մե քանի օր անց կենա, մե էլի հիդը խոսիմ, էգեբա կոտրվի... Ի՞նչ անիս, վուրթի, չիմ ուզում նրա ընդդեմ դուս գա բանը... Օրթում հավատ էր անում, վուր բաց աչկով չիմ թողնի վուր Միխեիլը մուքթ ախչիկ ուզե, կոսե. էլ հավիտենական վունց մեկին չիմ մոդ թողնի, կոսե... Անմիդ անիծելու ինչի՞ դառնանք... Թե կուլի նրամով, վուրթի, խո լավ, թե չէ խում էսարի ինք ու էստի, ո՞ւր ինք փախչում... վունցոր քեփդ տա, էնենց ժաժ արի... (Ցույց տալով աջ կողմի դուռը:) *Համեցե՛ք կաբինետը։*

Դուրս է գնում ձախ դռնից:

ՏԵՍԻԼ ԺԴ

ՄԻՔԱՅԵԼ, մենակ, երկար լռությունից հետո:

Այժմ ես բոլորը հասկացա... Ուրեմն ա՞յս էր իմ հոր սպառնալիքը. ուրեմն այսպիսի ճանապարհներո՞վ է ուզում նա խանգարել իմ երջանկությունը... Հայրս ինձ թշնամացել է... Գործի՛ր, գործի՛ր, հայր, բաց պատերազմ է հայտնված մեր մեջ, անշուշտ մեկը մեզանից հաղթող պետք է հանդիսանա. միայն լա՛վ իմացած կենաս, հայր, որ քո բոլոր ուժը կփշրվի կամքիս առաջ և Անանին իմս կլինի, թեև հարկավոր լիներ նույնիսկ խլել նրան իր մոր գրկից։

Գնում է դեպի աջ կողմի դուռը. վարագույրն իջնում է։

ԱՐԱՐՎԱԾ ԵՐՐՈՐԴ

Ստեփան Դանելիչի տանը Վանոյի առանձնասենյակը ամենաշքեղ կերպով զարդարած թանկագին կահ-կարասիքով, դրապրիներով, պատկերներով և ընտիր ծաղիկներով: Հատակը ամբողջապես ծածկած է գորգով, առաստաղից կախած է ոսկեզօծ ջահ հանգած մոմերով: Ձախ կողմում մեծ հայելի, աջ կողմը՝ գրասեղան, որի վրա դարսած են դարձյալ պատկերներ, ալբոմներ և սեղանի զանազան պարագաներ: Խորքում բազմոց: Ուր հարկն է՝ աթոռներ, բազկաթոռներ: Հանգած լապտերներ և հանգած մոմերով աշտանակներ: Անկյուններում մեծ կանդելաբրներ նույնպես հանգած մոմերով: Վառարանի վրա ժամացույց: Խորքում և կողմերում դռներ: Ցերեկ է։

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ՎԱՆՈ, ֆրակով կանգնած է հայելու առաջ և կիսաձայն երգում է որևէ օպերայից մի կտոր, ՕՍԵՓ, խոզանակով սրբում է նրա հագի ֆրակը։

ՎԱՆՈ, շուտ գալով:

Լա՛վ, հիմի էսքենը։ (Երգը շարունակում է, հետո ձեռքով Օսեփի մազերը շոշափում ու ձեռքն իր բթին մոտեցնում:) *Էլի իս գողցի իմ պոմադեմեն։*

Մատները սրբում է թաշկինակով:

ՕՍԵՓ

Չէ՛, աղա, էս էն պոմադեն է, վուր դուք ինձ տվիք։

ՎԱՆՈ, կամաց խփելով նրա գլխին:

Քեր էս վուր քա՛նի չեր իմ քիզ ասի՝ ինձ աղա մի՛ ասի- շատ՛զա աղա։

ՕՍԵՓ

Ա՛խ, վինավատ, պարուն ջան։

ՎԱՆՈ

Հա՛, է՛տենց ասա, հի՛մար։ Աղեն փողոցի մարթկերանցն ին ասում, վուր փուրը փքած ման ին գալի ու տուն գալիս մավի աղլխով մե էրկու շաու կանանչի ին տուն բերում։ Ինձ աղա կու սաղ գա՞. վո՛ւրղանցի աղա իմ յիս։

ՕՍԵՓ

Էս մեկը մտես ննգավ, աղա ջան, հորեսի դենը դիփ պարուն կոսիմ, տղա ջան։

ՎԱՆՈ, դառնալ գլխին խփելով։

Էլի խառնեցէ՞ր. քիզ իմ օրումը խիլք չիմ կանա սովրեցնի։

ՕՍԵՓ

Ախար ի՞նչ անիմ, ա՛... պա՛րուն ջան. յիս ի՞նչ միդ ունիմ, վուր միր լիզվումը մե խոսկի մագիար էրկու կա. լիզուս խառնվում է։ Ա՛յ, տերը բարի տա ռսներուն... նրանք մե գլուխ դիփ բա՛րին ին ասում... Մեկ էլ էն ծտի լիզուն վուր խոսում ին՝ մուսա, մուսա. էստու վրա հիշտ ի՞նչ կա։

ՎԱՆՈ, ծիծաղում է։

Հա՛, հա՛, հա՛... Ասա՛՝ մոսիեո [monsieur]*։*

ՕՍԵՓ

Մուսիե։

ՎԱՆՈ

Մոսիեո։

ՕՍԵՓ

Մոսիե։

ՎԱՆՈ

Մոսիեո բալվան։

ՕՍԵՓ

Մոսիեո բալվան։

ՎԱՆՈ

Տի սա՛մ բալվան, դուրա՛կ. յիս քիզ իմ ասում, չէ թե դուն ինձ ասիս... Նո՛ւ, ասա՛՝ մոսիեո։

ՕՍԵՓ

Մոսիեո։

ՎԱՆՈ, ձեռքը կամաց Օսեփի թշին խփելով։

Նո՛ւ, մայադեց, էլ չմտեդ գցիս։

ՕՍԵՓ

Չէ՛, աղա, էլ չիմ մտես գցի։

ՎԱՆՈ, ատը հանակին խփելով։

Էլի՞, հիմա՛ր։

ՕՍԵՓ, խոսքը բերանից խլելով։

Վա՛յ, վա՛յ, վա՛յ... պա՛ռուն, պարուն ջան։

ՎԱՆՈ

Էտենց։ Գլուխդ դարդակ դիռում է. աբա ինչի՞ յիս մտես չիմ գցում. մեկ ասել իմ քիզ՝ ժոզեֆ, դիփ ժոզեֆ իս։

ՕՍԵՓ

Ժոզեֆ իմ, պարուն ջան, ժոզեֆ։ Աբա տեսեք, մնամ վուր վրեդ էլ վունչիչ չկա։

ՎԱՆՈ, ձայելու մեջ զննվելով՝ մի որևէ երգի եղանակ է սուլում, ձեռքը ցույց է տալիս մեջքի կողմը։

Էս ի՞նչ է, հիմա՛ր։

ՕՍԵՓ

Էս անիծած բմբուլը հիմի նստեցավ։ (Սրբելով։) *Սրան է՛լ կու թաքնիմ։*

ՎԱՆՈ, զննելով։

Լա՛վ, լավ... Ը՛մ, ժոզե՛ֆ...

ՕՍԵՓ

Համմե՛։

ՎԱՆՈ

Մե ջուխտ թաղա պերշատկա՛բի՛։

ՕՍԵՓ, մոտենալով պատուհանին։

Ի՞նչ ռանգը, պարուն։

ՎԱՆՈ

Չիս գիդի՞ ի՛նչ ռանգը. ֆրակի մոդ ի՞նչ ռանգը պիտի. քանի՛ չեր իմ սովրեցրի։

ՕՍԵՓ, մոտ բերելով մի զույգ այցի գունավոր ձեռնոց։

Ա՛յ, էստո՞ւց։

ՎԱՆՈ

Չէ՛, պալեվի տո՛ւ։

ՕՍԵՓ

Բա՛ս էն օրը ֆրակով վուր գնացիր էնդի, էս փերշտկներեմեն հաքար։

ՎԱՆՈ

Ը՞, հիմա՛ր, էն ուրիշ է, էս ուրիշ. էս օր պռաշի անգամն իմ վիզիտ գնում, օրենքը պալեվին է։

ՕՍԵՓ, տալով ճարդագույն ձեռնոցներ։

Բաս նրան թողնում ի՞ս։

ՎԱՆՈ

Չէ՛, ո՞վ ասավ քիզ թե թողնում իմ։

ՕՍԵՓ

Բաս ո՞ւր իք գնում։

ՎԱՆՈ

Ինչրու ամեն բանը չիմանաս, չի՛ ըլի, քու գլխի արիվը։

ՕՍԵՓ

Ի՞նչ յիս գիդիմ, քու խոստովնահերն էլ չի գիդի էնքանն ո՞ւ։ Ո՞ւր իս գնում, պարուն, գե՛թաղվա։

ՎԱՆՈ

Շատ մի՛ խոսի, հիմար, մե աղլուխ էլ տո՛ւ։

ՕՍԵՓ, պահարանից թաշկինակը ճանելով։

Դուխի՞, պարուն։

ՎԱՆՈ

Դուխի էլ, դուխի էլ։

Օսեփն անուշանոտում է թաշկինակը և ծածկաբար էլ իր գլուխը, իսկ Վանոն ոչ կողմի սեղանից վեր է առնում ժամացույցը, երգելով լարում ու գրպանը դնում, հետո մատանին մատն է դնում և կոկվում։

ՕՍԵՓ

Համեցե՛ք աղլուխը։

ՎԱՆՈ, առնում է թաշկինակը և հոտ կալնում։

Հենը էս է։ (Խորի դռան կողմից թույլ հազի ձայն է լսվում. Օսեփը մոտենում է դռանը։) *Ո՞վ է։*

ՕՍԵՓ

Կուշերն է, բուկետը ճարիլ է։ (Առաջ բերելով մի հիանալի ծաղկեփունջ։) *Վուալա, մոսիե, ա՛ֆ՝ ի՛նչ լավն է։*

ՎԱՆՈ, առնելով ծաղկեփունջը։

Ա՛խ, չորտ վազմի, իստակ մտես ննգավ։ (Ժամացույցին նայելով։) *Չեր չէ ուշացի... էս սահաթիս, Ժոզեֆ, տա՛ր էս էնդի. գիդի՞ս վուրդի իմ ասում։*

Ծաղկեփունջը հետ է տալիս։

ՕՍԵՓ

Վո՛ւնց չիմ գիդի. իմ բողազի ճանփեն էլ չիմ գիդի էնենց, վունցոր էն գիդիմ. մադամ Կարոլինա։

ՎԱՆՈ

Մադմուազել, հի՛մար, չէ՛ թե մադամ։

ՕՍԵՓ

Մադամ-զուլո Կարոլինա։

ՎԱՆՈ

Մադմուազել [Mademoislle], *տո՛։*

ՕՍԵՓ

Մե խոսկով, պարուն ջան, Կարոլինի տունը գիդիմ։

ՎԱՆՈ

Նո՛ւ, հենց էնդի. գնա՛ էս սահաթիս։ (Ձախ կողմից լսվում է Նատոյի ձայնը՝ «*Ցիս հազիր իմ, Վա՛նո*»)։ *Գալիս իմ, գալիս, լիս էլ հազիր իմ։* (Օսեփին։) *Դե՛, գնա՛, էս սահաթիս. էտ իմ մագիար իրան կու տաս ու կոսիս վուր էս գիշիր սահաթի ուիթին ինձ մնա։*

ՕՍԵՓ

Վուր հարցնե թե հրամանքդ ի՞նչ իս շինում, ի՞նչ ասիմ։

ՎԱՆՈ

Ասա՛, վուր իմ քվիր հիդ վիզիտ գնացի։

ՕՍԵՓ

Իժում էն կու հարցնե թե ո՞ւր գնաց, ի՞նչ ջուղաբ տամ. ասիմ թե չիմ գիդի, չի՛ ավտա։ Ախար ինձմեն ի՞նչ իս թաքցնում, ս՛արուն ջան։

ՎԱՆՈ

Նո՛ւ, ասա՛, վուր Սուրաթինց տուն գնացինք վիզիտ. ի՞նչ կա էստի թաքցնելու։

ՕՍԵՓ, ձախ ոտը դեպի հետ վեր քաշելով ու աջ ձեռքով ականջի վերևը քորելով։

Սուրաթինց տո՛ւն... էն սիրուն ախչիկ վուր ունի՞ն. քոմա՞ն վու պարտե, մադամգել, հրա՛։ Ա՛յ, սիրուն։

ՎԱՆՈ, մատներու ծայրը համբուրելով։

Պծա՛մ... տո՛ տը, ա՛յ, սիրուն. քու Կարոլինեն նրա վուտի պճիղն էլ չարժե։

ՕՍԵՓ, ծաղրելով։

Քու Կա՛րոլինեն... Քո՛ւ Կարոլինեն, պարուն, քո՛նը։ Ամա Սուրաթինց ախչիկը քիզ ի՞նչ ձևոք կու տա. էն վարթն օչով չի թողնի քիզ վուր կտրիս։

ՎԱՆՈ

Վուրդի վուր վարթ տեսնին, դիփ կտրին, ո՞ւր կէհա, հիմա՛ր. խանդեխան մենակ հուտ [illegible] էլ [illegible] չէ։ (Ասելիս [illegible] հոտ է

առնում. կողմից դուրս լսվում է Նատոյի ձայնը՝ «*Ցիս գալի՞, Վանո՛։*») *Գալիս իմ, գալիս։* (Օսեփին։) *Դե՛, գնա՛, չո՛ւստ արա։*

ՕՍԵՓ

Էս սահաթիս, պարո՛ն ջան։ (Գնում է և հետ դառնում։ Աղերսելով։) *Մըսիե ժա՛ն...*

ՎԱՆՈ

Հըա՛, էլի իմքին իս ուզո՛ւմ։

ՕՍԵՓ

Ախար, էրեգ Կարոլինեն ասավ վուր՝ ինչի՞ բատինկեքդ (Աջ ոտը կրնկի վրա խաղացնելով և վրան նայելով։) *լավ չէ պլպլում, կոսե. քի ալես ադի,* (Մտաբերելով որ սխալվեց, բռում է։) *թվո՛ւ, պարնի պես լաքիեն էտենց չի պիտի ման գա, կոսե։*

ՎԱՆՈ, մինչդեռ Օսեփը խոսում էր, մի երգի եղանակ է սուլում։

Ֆյո՛ւ, ֆյո՛ւ, ֆյո՛ւ... Իժո՞ւմ։

ՕՍԵՓ

Ախար, էլի էսենց գնա՞մ։

ՎԱՆՈ

Նո՛ւ, թա՛զեն առ։

ՕՍԵՓ, գլուխը քորելով։

Փո՞ղը։

ՎԱՆՈ, ծիծաղելով։

Փուղն էլ ճարե՛, էլի՛։

ՕՍԵՓ

Վո՞ւրդի ճարիմ, էլ մե գրոշ չունիմ։

ՎԱՆՈ

Վո՛ւրդիոր գուղիս։

ՕՍԵՓ, ոտը ոտի մոտ դնելով, փոքր առ փոքր առաջ է գալիս դեպի սեղանը, որի վրա դրած է փողի քսակը։

Ա՛յ, ճարած է հազիր, պարուն ջան։

ՎԱՆՈ, ծիծաղում է։

Հա՛, հա՛, հա՛... Նո՛ւ, ժոզեֆ, էժան չիս նստում [illegible]։

ՕՍԵՓ

Կարոլինեն վուր չլլի, պարուն ջան, ի՛նչ կոնիմ. էս բատինկեքն էլ լավն է։

ՎԱՆՈ

Լա՛վ է, լավ, գլուխս մի՛ տանի։ (Մոտենալով սեղանին՝ փող է հանում քսակից:) *Հը՛ա, բոնե՛. էս օխտը մանեթը հե՛րիք է... Դուն ինձ կու քանդիս դրուստ։*

ՕՍԵՓ

Է՛հ, մինձ աղեն սաղ ըլի, պարուն ջան։

ՎԱՆՈ, փողը տալիս է, Օսեփը համբուրում է ձեռքը:

Նո՛ւ, պաշո՛լ։

ՕՍԵՓ

Սեր չա՛ս։

Թոշկոտելով դուրս է գնում խորշի դռնից:

ՏԵՍԻԼ Բ

ՎԱՆՈ, հետո ՆԱՏՈ

ՎԱՆՈ, մենակ:

Էս ժողեֆին վուր չունենամ, իմ բանը դժար է։ (Քսակի մեջ փող է ածում և դնում ծոցը, հետո սուլելով գնվում է հայելու մեջ:) *Շի՛կ...*

ՆԱՏՈ, դուրս գալով ձախ դռնից, ձեռքին թատրոնի ծալած հայերեն հայտարարություն:

Ի՞նչ էլավ քիզ, Վանո. քա՞նի զուքվիս, մոն շեր։

ՎԱՆՈ

Զուքածը դուն իս, Նատո. էտ ի՞նչ դերիա է, չեր չիմ տեսի։

ՆԱՏՈ

Էս օր օբի կարողը։ (Վանոյի առաջ շուռումուռ գալով և հայելու մեջ գնվելով:) *Աբա՛, լավն է՞, լավ է կանգնա՞ծ, նե՞ս պա։*

ՎԱՆՈ

Շի՛կ, շի՛կ, վրե՛ շիկ։

ՆԱՏՈ

Շիկը թե զուգիս, Վանո, է՛քուց տիս. ուրիշ հեստիկը կարվում է ինձ հումա վուր է, քախկումն օչով չի ունենա։ (Ձեռքերով ցույց տալով:) *Էստի կարած կուլի գյուպյուրնիր, էսթենը կուլի բանտ, էսթենն իրմեն բուկետ, էսթենը պստի ջիբ, բոլորքը մանդր, մանդր, մանդր ծիբծիբեք, ու էդնեն ծալիր, ծալիր, ծալիր, ծալիր, ծալիր, Վա՛նո ջան, ծալիր վուր ի՛նչ ասիմ, պրոստո պրե՛լեստ. սը սրա շարման. ա՛յ շիկ...*

ՎԱՆՈ

Ա լա դերնիեր մոդ։

ՆԱՏՈ

Սերթենըման...

ՎԱՆՈ

Էտ ի՞նչ է, աֆիշկա է՞։

ՆԱՏՈ

Հա՛, հիմի բերին. տի՛ս, թազա բան է։

ՎԱՆՈ, առնելով Նատոյի ձեռքից հայտարարությունը:

Նո՛ւ... Հայոց թատրոն, շատ հարկավուր է. յիս դեն ածելու փուղիր չունիմ։ (Ձգելով սեղանի վրա:) *Միթամ բան ին մոգոնի, գլո՛ւպըստ կա-կայա։*

ՆԱՏՈ

Աբա՛, գնանք, էլի՛. ի՛նչ մոգոնից պապաշեն։

ՎԱՆՈ

Ցիս շատ ուրախ իմ, Նատո, Անանուն կու տեսնինք. էն բալեմեն դեսը մտկեմես չէ դուս գնում։ Էրանի թողնե մե պաչ անիմ, ի՛նչ զուզե կու տամ։

ՆԱՏՈ

Ֆի՛ դոն... նա էտ հանգի ախչիկ չէ։

ՎԱՆՈ

Ի՞նչ հանգի էլ զուզե ըլի, ուզենամ թե չէ էրկու օրումը խիլքեմեն կոնիմ. ժը լյուի [lui] *թուրնըրե լա թեթ, ադնիմ սլովոմ...*

ՆԱՏՈ

Թե էտ հանգի բանիր կոսիս էլ հիդդ չիմ գա, Վանո. թյու է զեռն [tu es un] մովն սյուժեն։

ՎԱՆՈ

Լա՛վ է, լավ, մի՛ ջգրվի, Նատո. արի՛ գնանք։

ՆԱՏՈ

Քանի վուխտ է յիս էլ էտ իմ ասում, ամա վուր ծանդր իս ժաժ գալի՞. ինձ էլ ուշացնում իս. իժում քա՛նի բան ունիմ էսօր, վուր գիդենաս։

ՎԱՆՈ

Իմ տոլ բան դուն վո՞ւրդի կունենաս։

ՆԱՏՈ

Դիա՛խ, դիա՛խ. արա՛ ի՞նչ բան ունիս։

ՎԱՆՈ

Աբա՛ ջեր դո՛ւն ասա։

ՆԱՏՈ

Ջէ՛, ջեր դո՛ւն ասա։

ՎԱՆՈ

Ջէ՛, դուն ասա։

ՆԱՏՈ

Ջէ՛, դո՛ւն ասա ջեր։

ՎԱՆՈ

Ջէ՛, դո՛ւն ասա։

ՆԱՏՈ

Ջէ՛, դո՛ւն ասա։

ՎԱՆՈ

Ա՛յ, քանի բան ունիմ. էս վիզիտը...

ՆԱՏՈ

Էտ խոմ յիս էլ իմ գալի։

ՎԱՆՈ

Աթանդե՛։ (Աչու մատով ձախու մատները ճամրելով։) Էս վիզիտը. իժում պիտի գամ տուն, շորիրս փոխիմ...

ՆԱՏՈ, բեղմիչելով։

Ցիս էլ...

ՎԱՆՈ

Աթանդե՛, աթանդե՛։ (Վրա տալով։) Շուրս պիտի փոխիմ, պիտի հաքնիմ վիզիտկա, պիտի գնամ պարտնոուս տեսնիմ, իժում պիտի գամ նոտիր առնիմ, մե ախչկա իոստացիլ իմ՝ յուն [une] ժոլի ղըմուապել, իժում էն նոտիրը պիտի տանիմ իրան տամ, իժում պիտի գամ տուն ու նուր մեկանց մեկել վիզիտկես հաքնիմ. գնամ կլուբը՝ տեսնիմ իմ ննգըրտիքն ի՞նչ ին շինում, իժում պիտի տուն գամ իմ հոր առչիվը ծանդր ու բարակ ձքվիմ վուր հաց ուտինք, իժում պիտի ձի նստիմ, գնամ Մուշթեիդ, կուլի ճանփին ինչ պատահի, չորտ պաքերի, իժում պիտի տուն գամ չայ խմիմ, իժում պիտի շարչրվիմ, վուր ութ սահաթը դառնա ու ութ սահաթին՝ (Մի ոտը բարձրացնելով, մյուսի վրա պտույտ է գալիս և մատներու ծայրը համբուրում։) պծա՛մ... էլ չիմ ասի։ Աբա դուն ի՞նչ բան ունիս։

ՆԱՏՈ, ծիծաղում է։

Հա՛, հա՛, հա՛... շատ բան ունիմ, շատ բան. հա՛, հա՛ հա՛... էտ-զադա բան խոմ յիս էլ ունիմ. (Նույնպես վրա տալով։) յիս էլ պիտի տուն գամ, շուրս փոխիմ, ուրիշ շուրիր հաքնիմ, ճաշ էլ ուտիմ, չայ էլ խմիմ, իրիգնահաց էլ ուտիմ, պարկիմ, քնիմ, էքուց վիկենամ, էրեսս լվանամ, հա՛, հա՛, հա՛... էտղադա, քա՛նի գուզիս բան ունիմ հա՛ հա՛, հա՛... Քը թյու [tu] է դրու, մոն շեր, հա՛, հա՛, հա...

ՎԱՆՈ, ծաղրելով։

Հա՛, հա՛, հա՛... Ինչո՞վ է քու բանն ավելի իմ բանի վրա... ի՞նչ բան ունիս, ի՞նչ, արա՛ ասա։

ՆԱՏՈ, նույնպես ծաղրելով։

Ի՞նչ բան ունիս, ի՞նչ... Միթամ չիս գիդի ի՞նչ բան ունիմ. մե սահաթվան էդնեն մոսիեո Գուժոն պիտի գա ու էրկու սահաթ ֆորտոպյանի վրա գլուխս ցավ տա, իժում պիտի մե էրկու սահաթ էլ մադամի մոդ՝ քոման վու փորտե վու. մեքսի, մադամ, մեքսի, մոսիեո. իլ ֆո բո թան. էլ ֆե մովե թան...

ՎԱՆՈ, ընդմիջելով։

Սե շարման, վու զեթ շարմանթ, վուլե վու դանսե, վուլե վու վալսե. էտունք խո յիս շատ վուխտ է գիդիմ, հիմի թո՛ղ քու գլուխն էլ ցավ տան, մա՛ շեր, իմ գլուխը կատլետ շինեցին։

ՆԱՏՈ

Ղո՛ւրթ վուր կատլետ. խանդեխան դլուխս էնենց ցավում է էն անիծած մադամիմէն վուր էլ չիմ գիդի վուրթենը ննկնիմ. սա մամբեթ, Վանո... Ամա փա՛ռք աստծու, չուստ կու ապատվիմ էստունցմեն. ինչ սովրեցա էն էլ հե՛րիք է։ Պապաշեն ասավ, վուր էս օրերումն ուզում է ինձ նշնի, ու մեկել տեսար, շեր Վանո, քու մադմուազել Նատոն դառավ՝ (Խորը բեվերանս անելով:) *մադա՛մ... Ինձ համա իմ սալոնը կունենամ, իմ բուդուարը. ինձ մոդ գու քան, կէհան բալիր, վեշերնիր կու սարքիմ. օ՜, սը սրա էոն* [un] *վրե՛ դելիս։*

ՎԱՆՈ

Իժում ո՞ւմն է տալի քիզ պապաշեն։

ՆԱՏՈ

Ջիմ գիդի, ջեր չէ ասում... Գիդիս ի՞նչ, շեր Վանո, (Թևն առնելով:) *դուն վուր ուզենաս, մինձ լավութին կոնիս ինձ...* (Նստում են): *ո՛վ գիդե պապեն ումը ջոգե ինձ համա, ու իսո գի՞դիս՝ նրա կամքին հակառակվիլ չի ըլի . դուն մե էնենց ի՛մաց արա նրան, վուր յիս մեկին հավնում իմ։*

ՎԱՆՈ

Գիդիմ, գիդիմ,— մոսիեո Ալմասյան։

ՆԱՏՈ

Վո՞տ եշշո... Ալմասյա՛ն... դուն էլ օ՛քմին գթար... Ի՞նչ կոնիմ յիս նրան. մադամն ասում է վուր հայքը կոպիտ ին ու կնգա գինը չին գիդի... Ֆի՛, մովե ժանր... Տո լի դելս՝ Սելիֆոնտ Իվանիչ...

ՎԱՆՈ

Ա՛, մոսիեո Ռումյա՛նսկի...

ՆԱՏՈ

Լյուի [lui] *մեմ, լեդ դը քան պրենս Ռումյա՛նսկի։*

ՎԱՆՈ

Օ՛հ, հո՛, մտիկ թե վուրդի իս ձքվում... Մադամ լա պրենսես դը Ռումյա՛նսկայա. ո՛վ դիմնա քիզ էն չախը... Իժում նա գուզե քի՞զ։

ՆԱՏՈ

Պապաշեն կամք տա, թե չէ նա ինձ համա գժված է. տեատրումը վուր նստած է, լոռնետը գցում է աճկերուն ու դիփ ինձ է մտիկ տալի։

Ցիս էլ նրան իրիստ իմ հավնում, մոն շեր Վանո. սիրուն, կոկած, տրոսած, օլբրած բիխերով, դիդին էպոլետնիրն ուսին, էքսիլբանտնիրը քաշ արած, շպորնիրը կրնդնիրուն, պրե՛լեստ պրոստո... Քանի կուս կռանը գցած բուլվարի վրա անցուդարց կոնինք, թուրը գեդնին՝ (Գնալով մի կողմից մյուսը:) *թիկ, թիկ, թիկ... ու իմ շլեյֆն էլ հիդը՝* (Հետ դառնալով:) *շիկ, շիկ, շիկ... վուալա էոն* [un] *վրե շի՛կ, նե՞ս պա, մոն շեր Ժան, ու կալասկով վուր գնում կուլինք, յիս* (Նստում է և ձգվում՝ հովհարելով:) *էսենց... Տի՛ս, տի՛ս, մոն շեր Սելիֆոնտ Իվանիչ, վունց ին դիփունքը միդ մտիկ անում...* (Վեր թոչելով:) *Օ՜, յիս կու գժվիմ...*

ՎԱՆՈ, նույնպես վեր թոչելով:

Օ՜, յիս էլ կու գժվիմ... Ցիս քիզ կու օտկիմ, շեր Նատո. դուն ինձ ասա՛, շատ ախչկերանց հիդ կու ճանչցնիս ի՞նձ։

ՆԱՏՈ

Ում հիդ գուզիս, շեր Վանո։

ՎԱՆՈ

Ա՜, չորտ վազմի, կուտի՛տ տրկ կուտի՛տ... Ամա էնչախը տանցուվատ կոնիմ, ա՛յ... (Կուրը գցելով Նատոյի մեջքին:) *Ղուրթ, արի՛ մե թուր դը պոլկա* [polka]*։* (Պար է ածում պոլկա, բերանով նույնը եղանակելով:) *Թրա լա լա, թրա լա լա, թրա լա լա լա, թրա լա լա...*

ՆԱՏՈ, պարելով:

Ուշացանք, ուշացանք, Վանո։

ՎԱՆՈ, շարունակելով։

Թրա լա լա, թրա լա լա...

ՏԵՍԻԼ Գ

ՆՐԱՆՔ, ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ, մտնում է աջ դռնից:

Է՛ստի մտիկ... (Վանոն ու Նատոն թողնում են միմյանց:) *Ջեր էստի ի՞ք։*

ՎԱՆՈ

Ա՛յ գնում ինք, պապա։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Դե՛, գնացեք. մե սահաթ ավելի է կալասկեն լծած է, դուք կի էստի տրտինգ իք տալի, միխկ ին ձիանիրը։

ՆԱՏՈ

Քանի վուխտ է պատրաստ իմ, պապա, սա է վուր նորահարսի պես զուքվիլ գիդե։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Վունց մեկդ պակաս չիք... Դե՛, գնացե՛ք. ամա ինչ իմ ասում, Վանո, ծրտի-պրտի չխոսիս էնդի, ամութ է։

ՎԱՆՈ

Մի՛ վախենա, պապաշա, հեստի խոսիմ վուր է՝ իստակ բոն տոն։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Հըա՛, մուղաթթ կաց. Յագոր Սիմոնիչիմեն իմ կուղմանե նիրոդուքթին գուղիս, վուր յիս չկանացի գա։

ՏԵՍԻԼ Դ

ՆՐԱՆՔ, ՍԱՐԳԻՍ

ՍԱՐԳԻՍ, խորքի դռնից գլուխը հանելով։

Կուլի վուր տուն գա՞մ, Ստեփան Դանելիչ. ծառեն ասավ, վուր ընթունում իք։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Հա՛մեցեք, հա՛մեցեք, աղա ջան։

ՍԱՐԳԻՍ

Հա՛մարցակութթինս բախշեցեք։ (Ողջունում է Վանոյին և Նատոյին, նրանք էլ պատասխանում են. հետո ձեռք է տալիս Ստեփան Դանելիչին և Վանոյին։) *Քեփումդ վո՞ւնց իս, Իվան Ստեփանիչ։*

Նորից ողջունում է Նատոյին։

ՎԱՆՈ

Լե՛ավ... (Աջ ձեռքով խփելով Սարգսի փորին։) *Դուն վո՞ւնց իս, վո՞ւնց, Սարքիս աղա։*

ՍԱՐԳԻՍ

Վա՛...

ՎԱՆՈ, բեֆվելով գլխի Սարգիսը և իբր թե ականջում։

Սիպտա օքմնիրը վո՞ւնց ին։

ՍԱՐԳԻՍ

Է՛, Իվան Ստեփանիչ...

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ, բարկանալով։

Վանո՛։

ՎԱՆՈ

Վա՛, բաս սա վուր ասում է։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Սո՛ւս, ասում իմ... (Սարգսին։) *Բեղամաղ մի՛ ըլի, գե՛թաղվա, քու էրեխերքն ին։*

ՍԱՐԳԻՍ

Աստուձ քիզ բախշե. զորանաք, վուրթիք։ Խոմ դաշլա չի՞մ անում ձիզ։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Չէ՛, չէ՛, Սերգեյ Տարասիչ, համեցե՛ք նստեցեք. սրանցը Սուրաթինց տուն իմ դրգում վիզիտ։

ՍԱՐԳԻՍ, ուրախ։

Վա՛, դուրթ իս ասո՞ւմ. էտ լավ է։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Ի՞նչ արմըցար, էրեգ ձիր տանն էինք խոսում։

ՍԱՐԳԻՍ

Ղո՞ւրթ խոմ. մի՛տս է, միտս. Ստեփան Դանելիչ։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Մնում էի վուր ջեր նրանք գան, ամա էս փիլիսոփեքն ասին վուր ինչրու մինք չեհանք, նրանք չին գա, կոսե։ Դե՛, գնացե՛ք, վուրթիք, էլ մի՛ ուշանաք։ (Վանոն և Նատոն Սարգսին ողջունում են և գնում։) *Ինչ իմ ասում, Վանո։*

Կամաց խրատում է։

ՍԱՐԳԻՍ, այս միջոցին, առանձին:

Աստուած է շինում իմ բանը՞... (Նայելով Նատոյին:) Մտի՛կ, է՞, շահ-զաղի լայիզ է... արա՛ Անանու հատն է՞։

ՆԱՏՈ, խորքի դռնից:

է բիեն, ժա՛ն, վի՛են դոն։

ՎԱՆՈ

Վուի, վուի [oui, oui], *գալիս իմ...*

Քշփշում են ու բրջալով դուրս գնում բեակցած:
Քրիջը շարունակում են և բեմից դուրս:

ՏԵՍԻԼ Ե

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՋ, ՍԱՐԳԻՍ

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՋ, գլուխը շարժելով:

Մա՛խլաս... (Առաջ գալով:) *Վա՛հ. համեցե՛ք նստի. է՞...* (Ինքը նըստում է:) *Աբա, ի՞նչ լավ խաբար իս բերի։*

ՍԱՐԳԻՍ, նստելով:

Մե՛ խաբար իմ բերի, Ստեփան Դանելիչ, մե՛ խաբար, վուր էս սահաթիս ինձ մե լավ թամքած ձի փեշքաշ անիս, արժանի իմ, հախ աստծու։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՋ

Հը՛, խոսեցա՞ր, Միխեիլի հիդ։

ՍԱՐԳԻՍ

Է՛հ, Ստեփան Դանելիչ, Միխեիլը վո՞ւրն է. մե՛ բանի իմ էկի, մե՛ բանի իմ էկի, վուր Միխեիլին էլ մտես ննգավ, նրա հերն էլ... էս սահաթիս հարցնում է իր, թե ինչի՞ վրա արմըցա, վուր էրեխանցդ Սուրաթինց տուն էիր դրգում. ա՛յ, կոսիմ ու հիմի դո՛ւն արմըցի... Դուն ինձ ասա՛, Ստեփան Դանելիչ, Ցագոր Սիմոնիչի ախչիկը... լավ ախչիկ է գա՞նա։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՋ

Լա՛վ։

ՍԱՐԳԻՍ

Միրո՞ւն։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՋ

Միրո՛ւն։

ՍԱՐԳԻՍ

Խելո՞ք։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՋ

Խելո՛ք։

ՍԱՐԳԻՍ

Գիդո՞ւն։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՋ

Գիդո՛ւն։

ՍԱՐԳԻՍ

Է՛, էլ ինչի՞ն իս մնում։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՋ

Վո՞ւնց թե ինչին իմ մնում։

ՍԱՐԳԻՍ

Էլ էստու վրա լավը վո՞ւրդի կու ճարիս քու տղի համա։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՋ, ձայնը երկարացնելով:

Վա՛։

ՍԱՐԳԻՍ, նույնպես:

Ջա՛ն։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՋ, վեր կենալով:

Փիե՛...

ՍԱՐԳԻՍ, նույնպես:

Գուզիս տա՛սը փիե ասա, յիս վուրնոր դրուստն է ու տպածն է, էն իմ ասում, Ստեփան Դանելիչ։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՋ, նորից նստելով:

Տո՛, ախար յիս քիզ ի՞նչ ասի, քիմեն ի՞նչ ջուղաբի էի մնում՝ դուն ի՞նչ իս ասում հիմի։

ՍԱՐԳԻՍ, նույնպես:

Հալալ քու խոսկի ջուղաբն է. դուն ուզում իս իմ տղի բանը շինի, յիս էլ քու տղի բանն իմ շինում. ասած է՝ «Ի՞նչ կու ցանիս, է՞ն կու հնձիս»։ Դուն ինձ ասա՛, մե քու մտկումն էլ էկիլ է էս բանը՞, թե չէ։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Մարթու միտկը ծով է, ախպեր, ի՞նչ գուզիս կու անց կենա. ամա հենց դուն էլ վո՞ւրդի փիքր արիր էս բանը։

ՍԱՐԳԻՍ

Վո՞ւնց է, վո՞ւնց Թորոզի վուրթի Սարքիսը. ղոչաղ ի՞մ, թե չէ։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Զալում մարթ իս, ախպեր. ամա մե դրո՛ւստն ասա՝ ինձ՝ էս զո՛ւն փիքր արիր, թե Յազոր Սիմոնիչն է ղրգի քիչ մոցիքուլ։

ՍԱՐԳԻՍ

Ա՛յ, Ստեփան Դանելիչ, չիս քիչ դրուստն ասիմ բանը վո՛ւնց էր, չիս սուտ չիմ սիրի, սուտը սատանինն է։ Էս բանը վունց չիս մոգոնեցի. վունց Յազոր Սիմոնիչը. դրուստ աստծու բան է, քու արիվը գիդենա, թե չէ հնդու էկած դավրիշն էլ չէր կանա մոգոնի։ Մե մտիկ թե վո՛ւնց էկավ... Մեկել օրը հրամանքդ վուր միր տանն էիր, Յազոր Սիմոնիչի կնգան իտ քու աճկով տեսար էնդի...

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Հա՛, դուրթ է, ադա ջան։

ՍԱՐԳԻՍ

Շատ պատվական կնիկ է, է՛... Գնացիր թե չէ, տեսնիմ ինքը Յազոր Սիմոնիչը տուն էկավ. խիստ հարկավոր բան ունիմ, կոսե։— Ի՞նչ խաբար է, Յա՛զոր Սիմոնիչ։— Սա թե՝ Մելիք-Զանգակինք տաք-տաք կպիլ ին, ախչկաս ուզում ին, կոսե, ու ինձ սովետ էր հարցնում։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ, ձայնը երկարացնելով։

Է՛։

ՍԱՐԳԻՍ

Բա՛ս... էլ չիմ գիդի վունց էլավ, քու արիվը. ինչրու Յազոր Սիմոնիչի խոսկի ջուղաբը կու տեի, հենց գիդիմ շինքումս մեբաշ բոկեցիր... էն քու խոսկիրը, էն քու ախչկա գովիլը մե նմուտումը, էս հալա էրգար իմ հիդ ասում. կեծակի պես անց կացավ մտկումս... էլ վունց տարա, վունց բերի, դեմոզեմն էն ասի, վուր Մելիք-Զանգակինց տղի վրա չիս ձիգ համա ուիրու լավ տղա ճարիմ, ասի... Դուն ինձ ասա՛, թե ատտձու բան չէր, էն սահաթին ախար նա հայցնում է, չիս ջուղաբ իմ տալի ու իմ ջուղաբն ի՞նչ նրա խոսկի ջուղաբն էր, վուր մե բաշ քու տղեն միտս էկավ։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Տո՛, ախար մե քիչ վաղ կոսեիր, է՛. էլ էրեխերանցս էնդի վիզիտ չէի ղրգի, է՛. ի՞նչ կոսին հիմի։

ՍԱՐԳԻՍ

Ի՞նչ պիտին ասի, սրանեերուն ուփրու ումիկ կու տվվա։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ, գլուխը շարժելով։

Օյին գուզի՞ք, ա՛յ, էս է։

ՍԱՐԳԻՍ

Դուն ինձ ասա՛, Ստեփան Դանելիչ, փիս խոմ չիմ ժաժ էկիս

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Չէ՛, չէ՛, շատ շնորակալ իմ. ամա մե քիչ փիքր անիլ գուզե էտ բանը։

ՍԱՐԳԻՍ

Էլ փիքր անելու էստի վունչիչ չկա, Ստեփան Դանելիչ։ Էրեգ շատ ման էկա քարվասլումը, քիզ չգթա, ու հենց էս է էս սահաթիս Յազոր Սիմոնիչին ռաստ էկա, ուզում ին էսօր էքուց վիրչացնի։ Զունքի քիմեն խոսկ չունեի, Ստեփան Դանելիչ, ադանչաք արի, վուր ինչու իրիգնապահն ինձ մուլաի տան... Հիմի դուն գիդիս, Ստեփան Դանելիչ, չիս իմ բանը պրծա։

Զեոֆերը միմյանց է խփում թաի տալով։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Ախար մե իրան էլ հարցնիմ—տղիս, է՞։

ՍԱՐԳԻՍ

Ի՞նչ ունիս հարցնելու. նրա պես ախչկան ո՞վ չի հավնի. սադ աշխարքը վուր ման գաս, էլ նրա վրա լավն ու ձեռնտու չիս կանա գթնի քու տղի համա։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Ախար չիս ասում էի, Սերգեյ Տարասիչ, չեր մե իմ ախչկա ու քու տղի բանը քութահ էինք արի, իժում էտուրն էինք ձեռը տվի։

ՍԱՐԳԻՍ

Էրկուսը մեկ է գալի. Ստեփան Դանելիչ. առչի գամը թեգուզ ապիտ նշնիս, թեգուզ ախչկատ, դիփ էրկու յիրիք օր թափահութին չի անի։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Ավտաս Միխեիլի հիդ ջեր էլի վունչիչ չիս խոսի։

ՍԱՐԳԻՍ

Վո՞ւրդի կու խոսեի. էս բանը վուր դրի մտկումս, Միխեիլն էլ մտես ննգավ ու իմ գլուխն էլ։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Ազնիվ բարեկամ իս էլի, աղա ջան. բաս մե ինչրու իրիդնապատը մո՛ւլափ տու, Սերգեյ Տարասիչ, մեկ էլի լավ փիքր անիմ ու դրուստ ջուղաբը քիզ իմաց կոնիմ։

ՍԱՐԳԻՍ

Դուն գիդիս, Ստեփան Դանելիչ, յիս իմ պարտկը պրծա։

ՏԵՍԻԼ Զ

ՆՐԱՆՔ, ՕՍԵՓ

ՕՍԵՓ, երգելով ու թոչկոտելով մտնում է խորհի դռնից, ձեռքին նամակ:

Վայ մե՛...

Նամակը թաքցնելով մնում է շվարված:

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Էտ ի՞նչ գիր էր, տո՛։

ՕՍԵՓ

Վունչիչ, աղա ջան, անմիղ թուխտ է։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Էստի շա՛նց տու։

ՕՍԵՓ

Պստի աղինն է, աղա ջան, վո՞ւնց կուլի, կու ջգրվի։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Իս տո՛ւ էստի, թե չէ քիզ էլ, քու պստի աղին էլ..

ՕՍԵՓ

Աղա ջան, միխկ իմ ախար, տանեմեն դուս կոնե ինձ։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ, վեր կենալով:

Ի՞ս տու, թե չէ էս սահաթիս յի՛ս դուս կոնիմ քիզ։

ՕՍԵՓ, տալով նամակը:

Գե՛թաղվա, աղա ջան, չասիս էլա թե յիս իմ տվի։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Զէ՛, չէ՛. կոսիմ էստի ստոլի վրա գթա։ (Ձեռքերով նամակը:) *Էս ինչ հանգն է ծալած, մուհր չկա վրեն։* (Բաց անելով:) *Ա՛յ, սատանի ծալ գուզիս, է՛ս է. ռսեվար է գրած։* (Կարդալով՝ հետզհետե շփոթվում է, հետո մոտենալով Սարգսին, բարկացած:) *Մտի՛կ, է՛, մտի՛կ է՛.* (Սարգիսը վեր է կենում:) *մտի՛կ թե փուղիրս ինչի՞ վրա է փչացնում։*

ՍԱՐԳԻՍ

Ի՞նչ խաբար է, Ստեփան Դանելիչ. էտենց ի՞նչ նիղացար։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Ա՛յ, իմացի։ (Նամակը կարդալով:) *«Իմ սիրեկան ժան», ասում է, անումն էլ վուր իրանց հանգն ին կնքի անիծածնիրը՝. «քու դրգած բուկետը» ասում է, «ստացա, շնորակալ իմ. ամա քու տված փուղիրն», ասում է, «հատավ։ էս գիշիր վուր գալիս ըլիս, մե տաս-տասնուհինգ թուման հիդդ բի՛. սահաթի ութին, վունցոր ասիլ էիր», կոսե, «մնում իմ քի՛զ։ Ինչրու մահը քու կարոլինե՞ն»։ Իմացար էս լրփութինը՞։*

ՍԱՐԳԻՍ, առանձին:

Թային սատանեն էլ է օտկում ինձ։ (Ստեփան Դանելիչին:) *Հանաք թե կուլի, Ստեփան Դանելիչ. մի՛ նիղանա, թե աստուձ կու սիրիս։*

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Է՛հ, հանաքը վո՞ւրն է, Սերգեյ Տարասիչ։ (Օսեփին:) *Տո՛, քիզ էնդուր իմ պահում էստի վուր է տանող-բերողութին անի՞ս։*

Նամակը ձեռքից վայր է ընկնում. Սարգիսը վերցնում է և ծալերը գնում:

ՕՄԵՓ

Ցիս ի՞նչ անիմ, աղա ջան. ուրոր ղրգում է՝ վո՞ւնց կանամ վուր չգնամ։ Ցիս ի՞նչ հիդիմ՝ ո՛ւմոդ ի՛նչ հնարք ունեմ Թե կոսիս, աղա ջան, հորեսի դենն ուրոր կու ղրկե, ջեր գու քամ քիզ կու իմաց անիմ։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Գնա՛ ջեր աճկեմես հիռացի, իժում կու խոսինք։

Սեփը դուրս է գնում ծոծրակը քորելով։

ՏԵՍԻԼ Է

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ, ՍԱՐԳԻՍ

ՍԱՐԳԻՍ, նամակից հոտ առնելով։

Վա՛, էս էլ չէի իմացի... Մե մտի՛կ՝ ի՛նչ հոտ ունե։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ, առնելով և հոտ քաշելով։

Ա՛յ, ձիր անումը կտրե աստուած, հա՛. արա՛, ասում էիր՝ հանաք է, կոսե. (Նորից հոտ քաշելով։) *էս հանաք է՞։*

ՍԱՐԳԻՍ

Է՛, խիստ իս նիղանում, Ստեփան Դանելիչ, քու արիվը. ջեհել է, կու կոտրվի։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ, ման գալով։

Ջէ՛, ցիս նբա գլխին պեակ է օյին գամ, Թե չէ խստակ կու փշվի։

ՍԱՐԳԻՍ

Իմ ասիլն էլ էտ է, Ստեփան Դանելիչ, է՛, վուր վուտնիրը չուստ բուխավ էիր գցի. ամա էլի դուն ծանդր ու Թեթիվ իս անում։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ, նամակը ծոցը դնելով։

Ղո՛ւրթ իս ասում, ղուրթ, աղա ջան. (Նստում է բեմի աջ կողմը։) *տեսնում իմ վուր դուն ինձ վրա խելոք իս։*

ՍԱՐԳԻՍ, նստելով։

Է՛, պարոն, էտ ի՞նչ խոսկ է վուր դուն իս ասում. ամա իմ խիլքով, Անանու պես ախչիկը մե էրկու ամսումը խիլքի կու բերե քու տղին։ Կուլի էն ախչկու վրա լավիրն էլ ուփրո շատ բին, ամա վո՞ւնց ջոդև մաչ։ Անանին կի վուր կա, փորցած ակն է, աչքարա գիդինք ինչոր վուր է։ Նրան ձեռնեմեն դուս Թողնիլը միխկ է, ցիս ու իմ հոքին։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Դե՛, գնա՛, կամք իմ տվի քիզ. Ցագոր Սիմոնիչի հիդ վունցոր գուզիս, էնենց խոսի իմ մագիար։

ՍԱՐԳԻՍ

Ջուիստ աչկիս։ (Վեր կենալով. առանձին։) *Էսօր էվետ մի օխչար պիտի մատաղ անիմ։*

ՏԵՍԻԼ Ը

ՆՐԱՆՔ, ՎԱՆՈ

ՎԱՆՈ. մտնելով խարի դռնից, կանչում է։

Ժոզե՛ֆ։

Մտում է սառած, հետո առաջ է գալիս։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Էկա՞ր, աղաղադա. քուրբտ ի՞նչ էլավ։

ՎԱՆՈ

Իր օթախը գնաց։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Տանն էի՞։ (Հրավիրելով Սարգսին նստելու։) *Համեցե՛ք, պարոն։*

Սարգիսը նստում է բեմի ձախ կողմը։

ՎԱՆՈ, նստելով մեջտեղը։

Հա՛, դիփունքը տանն էին։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Ի՞նչ ասիք, ի՞նչ լսեցիք։

ՎԱՆՈ

Աշխարքումն էլ բան չմնաց, ամեն բանի վրա խոսեցանք. տեսարի վրա, կլուբի վրա, Մուշտեի՛գ, Սան-սուսի՛, Մոն-պլեզի՛ր...

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ, ընդմիջելով, բարկացած։

Մա՛խաթ, Օ՛քրո-ղանա, Սե՛իդ-աբաթ, Վե՛րա...

ՍԱՐԳԻՍ, արտահայտելով Ստեփան Դանելիչի բարկությունը, առանձին։

Ի՛ծանիր...

ՎԱՆՈ

Մասխարա իս գցո՞ւմ, պապա. Վերի վրա էլ խոսեցանք՝ կինգրուսան էնդի չէ՞։

ՍԱՐԳԻՍ

Էտ ի՞նչ խոսկ է, չիմ իմանում։

ՎԱՆՈ

Վա՛, դարդդ թո՛ղ, ասում է, էլի՛. մարթ վուր դարդուտ գնա էնդի, մե սահաթվան էդնեն առանց դարդ կու դուս գա։

ՍԱՐԳԻՍ

Վա՛հ, էտ լա՛վ դիղ ինչ գթի։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Ուրիշ էլ ի՞նչ խոսեցաք։

ՎԱՆՈ

Դի՛փ, դիփ, էլ վունչիչ չթողինք։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Ավտաս դիփ դուն էիր խոսում։

ՎԱՆՈ

Չէ, նրանք էլ էին խոսում, ամա ավելի հիրթ չէի տալի. առաչի վիզիտն էր, թո՛ղ ճանչնենան ինձ, վուր շատ բան գիդիմ։

Սարգիսն, առանձին դեմքը ծամածռում է։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Դուն ինձ ասա՛, ախչկան վո՞ւնց հավնեցար։

ՎԱՆՈ

Էն ախչկան յիս լավ կու ճանչնամ, պապաշա, էսօր խոմ չիմ տեսնում. էստու առաչ չէ՞ր վուր Սարբանիի բալումը մետի տանցավատ էինք անում։ Շատ սիրուն ախչիկ է, պապա, դրուստ Ռափայելի մադոնա է։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Ինչ ասի՞ր, ի՞նչ...

ՎԱՆՈ

Ռափայելը հին ժամանակվան նաղշքար էր, նա մե սիրուն ախչիկ նխշից, էնդուրն ին ասում՝ մադոնա։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Էտ քա՞նի տարվան բան իս ասում։

ՎԱՆՈ

Մե հազար տարի կուլի։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Իժում դուն վո՞ւրդի տեսար։

ՎԱՆՈ

Չիմ տեսի, ամա իմացիլ իմ։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ, գլուխը շարժելով։

Դուն ինձ ասա՛, վո՞ւնց իս տեսնում, խելոք է էն ախչիկը՞, թե չէ։

ՎԱՆՈ

Հա՛, խելոք է, խելոք։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Նրա խիլքը քու խիլքի հիդ վո՞ւնց գու քա։

ՎԱՆՈ

Վո՞ւնց կուլի վուր նա իմ տոլ խիլք ունենա. նա ախչիկ է, յիս տղա իմ։

Սարգիսը ծածուկ ծիծաղում է։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ, գլուխը շարժելով։

Թե ամեն բանը էտենց իս իմանում, է՞րանի է ինձ։

ՎԱՆՈ

Վա՛, ո՛ւմը գուզիս հարցրո՛ւ, պապա, թե սուտ իմ ասում։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Լա՛վ է, լավ, ցանցար-ցանցար մի՛ դուս տա... Դուն ինձ ասա՛, էս գիշիր ութ սահաթին վո՞ւրդի իս։

Սարգիսը ձախ ձեռքով երեսը ծածկում է նրանցից և դեմքը ծամածռում։

ՎԱՆՈ, փոքր ինչ շփոթված։

Օչով։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Բաս օքմնու խոսկ չիս տվի՞։

ՎԱՆՈ

Չէ՛։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Բաս էս գիշիր ութ սահաթին հա՛զիր կաց, յիս ու դուն մետի մե տեղ պիտի գնանք։ (Վանոն շփոթվում է։) *Իմացա՞ր, թե չէ։*

ՎԱՆՈ, ձեռքը տանելով դեպի գլուխը։

Ա՛խ, պապա, մտես ննգավ. էս գիշիր ութ սահաթին հարկավոր բան ունիմ։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Ի՞նչ հարկավոր բան ունիս։

ՎԱՆՈ, կակազելով։

Իմ... ննգրուշը... խոստացա, վուր Մուշտեիդի տեատր գնանք։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Բե՛հեսաբ իս անում։

ՎԱՆՈ

Ավատա՛, պապաշա, էրեգ մեկսմեկու խոսկ տվինք։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Նա՛մաղուլ իս անում։

ՎԱՆՈ

Բիլեթներն էլ առած ունինք։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Բե՛հեսաբ նա՛մաղուլ իս անում ու սո՛ւտ իս խոսում։

ՎԱՆՈ

Աստուած գիդենա։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ, տեղից վեր թռչելով, բարկացած։

Ա՛յ, աստուած խոով կենա քիզ, փո՛ւչ, փչանալու։ (Ոտքից ճամակը ճանելով ու երեսին գցելով։) *Այ՛, ութ սահաթին վուրդի իս։* (Վանոն տեղից վեր է կենում և շվարվում։) *Վի՛կալ, վի՛կալ կարթա... Ի՞նչ սառեցար. սատանի ծալի վրա ճանչցար, հա՞. սատանի լիզուն սատանեն գիդե ախար, է՞... Վի՛կալ, վի՛կալ, յիս քիզ ասում իմ, կարթա՛ ու դո՛շիդ կպցրու։*

ՎԱՆՈ, վեր առնելով ճամակն ու ճանաչելով, առանձին։

Ա՛խ, աստուած, Կարոլինի գրածը... (Ասստիկ շվարվում է։) *Էս վո՞ւրդանց։*

Ձեռքը աթոռի վրա, մնում է արձանացած։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Լի՛րփ անսկամ... է՛տ էիր ասում թե՝ դիփ մինձ մարթկերանց մոդ իմ նստում ու վիկենում, կոսե՞. յիս էլ վուր ավտում էի ու մուխտաբար-մուխտաբար էնղադա փուղիրը տալիս էի՛... Ա՛յ, ջո՛ւր էիր կտրվի քու մոր փուրումն ու աշխար չէիր էկի, վուր ինձ էսենց բեդնամ չէիր արի, հը՞... Ուզում իս մե քանիսի նման վուխշ կայինքս քա՛մու տաս, իժում ախկատ դադո դիփունանց մա՛սխարա դառնա՞ս. հազիր իմ ձեռով ախկատացնիմ քի՛զ.. Դադելու շնուք չունիս, տո՛, հի՛մար, դադածն էլա մի՛ փչացնի, է՛... էս սահաթիս դո՛ւս իմ տանեմեն... Գնա՛, դառը քրտինքով մե թիքա հա՛ց ճարև, վուր մեկելներու դալին իմանաս. գնա՛, քու փային դիփ ախկրտներուն կու բախշիմ, մե օդորմի էլա մայինց կոսին... Գնա՛... Դո՛ւս... դո՛ւս, ասում իմ...

ՍԱՐԳԻՍ, վեր կենալով տեղից և ալերսալի ձայնով։

Էս մեկը, Ստեփան Դանելիչ, բախշե՛, ի՞նձ պատիվ արա, ու հորեսի դենը յիս թավդեք սրա համա, վուր էտ հանգի բան էլ չի անի։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ, ապաղակելով։

Ա՛խ, աստուած, էն հանգի ի՞նչ գեթ ունեի քի մոդ վուր էս թավուր վուրթի բահամ բերիր ինձ համա... Ախար ասած է՝ վուր հարուստի վուր-

Թին լավը չի դուս կանգնի, է՜... Չէ՜, հալբաթ իմ միխկի պատիժն է... Միղա՜ քիզ, տե՜ր աստուած, միղա՜...

ՍԱՐԳԻՍ

Լա՜վ է, լա՜վ, Ստեփան Դանելիչ, սիրտդ հիդ բի, թե աստուած կու սիրիս, քու մեռելին պա՜տիվ արա։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ, լալով ու աչքերը սրբելով։

Խի՜ղճ իմ Նանո, էրանի է քիզ վուր էստուրը չվրահասար... Օղորմած հոքին սրա խաթիր չուրս տարի դիդց ու խնձուր չկերավ... ինչ ուխտ ասիս սրա համա է կատարի... (Սարգիսը կեղծավորությամբ աչքերը սրբում է։) բոբլիկ վուտով Սոնղալուխեմեն խտրտած Թելեթ է տարի... ամեն ասծու էրկուշափթի պաս է պահի... էստու համա՞... Ա՜յ, հա՜բամ ըլի քիզ քու մոր ամագը...

ՍԱՐԳԻՍ, մոտենալով Ստեփան Դանելիչին և սուտ լացով։

Թե իմ խաթրն ու պատիվն ունիս, Ստեփան Դանելիչ, էս մեկն ի՜նձ պատիվ արա, ի՜նձ։

Աչքերը սրբում է։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Մեկն էս է, հազարն էլ ուրիշ կուլի։

ՍԱՐԳԻՍ

Չէ՜, չէ՜, յիս ումիկ ունիմ աստձեմեն, վուր ինձ չի ամանչեցնի բի մոդ։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Իր գլուխն ու իմը վուր չխնահից, քու գլուխը կու խնահե՞։

ՍԱՐԳԻՍ

Յիս թավդեբ իմ, Ստեփան Դանելիչ. օմքնու խոսկն էլ լսի, հե՜ր օխնած, է՜։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Թավդեբն էն է վուր՝ (Մատիցը մատանին հանելով։) էս մատնիքը տա՜ր, Սերգեյ Տարասիչ, Յագոր Սիմոնիչին տո՜ւ իմ մագիար. կոսիս վուր նրա ախչկան ուզում իմ էս փուչ փչանալու համա, թե իրանք էլ լայիզ կու տեսնին։

ՍԱՐԳԻՍ, առնելով մատանին։

Ձեռիտ էլ պաչ կոնին։

ՎԱՆՈ, թոթովելով։

Պապա՜... ախար...

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Սո՜ւ, սո՜ւ, ձե՜նդ, թե չէ էս սահաթիս տանեմեն դուս կոնիմ, աստուած գիդենա։

ՎԱՆՈ, աչքերը սրբելով։

Ախար, պապա, ջեր ի՜նչ վուխտի իմ կնիկն է, իմ ննգրտերանց էրեսին իժում վո՞ւնց մտիկ անիմ։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ

Փուչ արարմունքով խո կանաս մտիկ անի. էրևում է նրանք էլ լավ պտուղնիր ին էլի։

ՎԱՆՈ, լալով։

Մե քիչ... ժա... մա...նակ տո՜ւ, պապաշա ջան, փիքր անիմ։

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ, զայրացած։

Խե՜րով բան կու փիքր անիս, քու գլխի պատովիլը գիդենա... էլ յիս ժամանակ-մամանակ չեմ գիդի. էս սահաթիս կամ «հա՜», կամ թե չէ էլ իմը վուրթի չիս. խո գիդիս իմ խոսկը խոսկ է... էլ քի մոդ խոսելու պչուխ չունիմ... Սիրտս շուռ էկավ. մե դուս գնամ շունչ քաշիմ... էս սահաթիս գալիս իմ, Սերգեյ Տարասիչ... Մե էս անիրավին հասկացրո՜ւ, վուր կիսին էլ արժանի չէ էն խիղճ ախչկանը... Հայի՜փ, հայիփ ախչիկ, յիս ու իմ հոքին։

Դուրս է գնում աջ կողմից. Վանոն ընկնում է զրասեղանի մոտ, աթոռի վրա։

ՏԵՍԻԼ Թ

ՍԱՐԳԻՍ, ՎԱՆՈ

ՍԱՐԳԻՍ, բեմի ձախ կողմում կանգնած, առանձին։

Միթամ իմ վրթու քարոզիլը հերիք չէր ինձ... (Երկար լռությունից հետո քայլ առ քայլ մոտենում է Վանոյին։) Լա՜վ պրծար, յիս ու իմ հոքին. պատժելու մագիար, քու հերը քիզ նուր բախտի է ռաստ բերում։

ՎԱՆՈ, տեղից վեր թռչելով։

Էս ո՞վ մոգոնից, ո՞վ էդի նրա միտկը. դուք ասի՞ք, մոցիքուլը դուք ի՞ք։

ՍԱՐԳԻՍ

Չէ՛, չէ՛, վուրթի, ի՞նչ իմ բան է. առուտրի հեսաբ ունեի քու հոր հետ...

ՎԱՆՈ

Բաս էտ մատնիքը քիզ ո՞ւր էրիտ։

ՍԱՐԳԻՍ

Յագոր Սիմոնիչի մոդիկ հարևան իմ, պարուն, էնդուր թե էրիտ քու հերը... Դուն հենց գիդիս շա՛տ շնորակալ ի՛մ. ամա ի՞նչ անիմ, քու հոր խաթրը չիմ կանա կոտրի. չարես ի՞նչ է, պիտի տանիմ։

ՎԱՆՈ

Բաս ո՞վ ասավ, ո՞վ. իմ հերն իրան-իրան վո՞ւրդի փիքր արավ էտ բանը։

ՍԱՐԳԻՍ

Ախպեր, իմ գալուն իս միդ գնո՞ւմ... Ջեր յիս վուտս էլ չէի տուն դրի էստի, վուր դուք Յագոր Սիմոնիչի մոդ էիք գնում. աբա՛ մե փի՛քր արա, հենց ապրիս, է՛. յիս ի՞նչ միդ ունիմ։

ՎԱՆՈ

Ա՛խ, էրանի գիդենամ թե ո՛վ էդի էս բանը իմ հոր մտկումը, էս սահաթիս մաս-մաս կոնիմ, վից լուլանի բեվոլվերը մետի կու դարդըկիմ նրա սրտումը. նրա հե՛րն անիծած, նրա հե՛րը...

ՍԱՐԳԻՍ

Ի՞նչ իս ուշունց տալի, վուրթի, էգեբա լավ մարթ է։

ՎԱՆՈ

Լավ ցավի ռաստ գա ու սիվ սատանի. քոռանա, իլանա...

ՍԱՐԳԻՍ

Վա՛...

ՎԱՆՈ

Լիզուն պապանձվի, չորնա նրա բերանը...

ՍԱՐԳԻՍ

Վա՛, վա՛...

ՎԱՆՈ

Վուշ տեսնե իր վուրթու բախտավուրութինը, թե վուրթի ունե։

ՍԱՐԳԻՍ

Վա՛, վա՛, վա՛...

ՎԱՆՈ

Անիծվի, փչվի, փչանա, վուր էս բանը չէր մոգոնի ինձ համա։

ՍԱՐԳԻՍ

Քու հորմեն անբավական իս, վուրթի, յադերամեն ի՞նչ իս ուզում։

ՎԱՆՈ

Ախար էս հանգի բան կուլի՞։

ՍԱՐԳԻՍ

Ի՞նչ փիս բան է, վուրթի. էն ախչկան յիս կու ճանչնամ, շատ լա ախչիկ է, ստատուն գիդենա... իմ վուրթկերանց արիվը վկա։

ՎԱՆՈ

Էտ յիս էլ գիդիմ վուր լավ ախչիկ է. ամա բա՞ դրոս իմ կնիկն է, բա դրոս... Իմ ննջրտիքը վուրդի վուր ուզենան քեփ անին, յիփոր էլ ուզենա էն չախը տուն գնան. յիս կի իմ կնգա կուդի պիտի դառնամ, շլեյֆի պե պիտի թրևի ինձ, ուրոր գնա պիտի հիդն ըլիմ... Իժում պիտի էրեխեր ըլին, նրանց էդնեն ման գամ, նրանց ճղավելուն անգամ դնիմ. (Ներխա ների նղավոցը ծաղրելով։) ա՛... ո՛ւ... ի՛... ու իմ ննգրտիքը կի քե անին առանց ինձ... (Մազերից քաշելով։) Ա՛խ...

Բռունցքով խփում է գրասեղանին, մոտը նստում ու ձախ արմնկի վրա հենվելով գլուխը բռնում։

ՍԱՐԳԻՍ

Ջեր չհել իս, վուրթի, քու գլխի գինը չիս գիդի... Ափսուս չէ՞ քու սի ռուն էրեսարքը, վուր սատանի պռոշնիր ըլի դիբչում վրե՛ն։

ՎԱՆՈ

Սատանեն վո՞ւրն է։

ՍԱՐԳԻՍ

Թեգուզ հենց քու Կարոլինեն։

ՎԱՆՈ

Ի՞նչ իս ասում, է՛յ, պարուն. նա հրիշտրքի նման ախչիկ է։

ՍԱՐԳԻՍ

Մի բան պակաս կուլի. քու աճկումը կու էրևա հրիշտաք... Քու փուղերով իստակ հաքնվում կուլի, բերանը դուխերով ու օդիկալոնով օդողում կուլի, ձեռնիրը բաբաթ-բաբաթ սապներով լվանում կուլի, հա՛ հրիշտաք է ու հրիշտաք։ Էտենց վուր անիմ, յիս էլ հրիշտաք կու էրևամ... Ամա լավ գիդացի, վուրթի, վուր հրիշտաք չէ, սատանա է, սատաներով լիքն է։ Խիլքեմետ կու հանին, մի՛ ավտա դուն նրանցը... Դուն հենց գիդիս էն ձեռիտ ու վուտիտ վուր պաչ ին անում, շլնքիտ օցի հանգը փաթրթվում ին ու ասում ին՝ դո՛ւշինկա Վանո ջան, ղուրթ քի՛զ ին ասո՛ւմ։

ՎԱՆՈ

Բաս ո՞ւմն ին ասում։

Հետզհետե մտածմունքի մեջ է ընկնում և մնում է անշարժ՝ գլուխը ձեռքերի մեջ, արմնկների վրա հենած։

ՍԱՐԳԻՍ

Դիա՛խ, վո՛ւնց չէ. քու ջիբի փուղերուն ին ասում։ Աբա՛ մե էրկու շափաթ փուղ մի՛ տա,— ասա՛ վուր հորեսի դենը զարթնի սերը վունչիչ հեսաբ չի պիտի ըլի միր մեչը, ասա՛. դուն ինձ՝ դուշինկա Վանո ջան իս ասում, ասա՛, յիս էլ քիզ՝ դուշիչկա հրիշտաք ջան իմ ասում,— աստուած գիդենա, դիփ կինծումդ տալով դուս կոնե տանեմեն։ Բե՛դամաղ չըլիս, գե՛թաղվա, մեբաշ լեզվիս էկավ. էնենց իմ խոսում քի մոդ, միթամ իմ վուրթու մոդ... Աբա՛, վո՛ւրթի, էսենց է նրանց բանը. նրանք վուր կան՝ ջիբի ծուրբելեք ին, չէ թե աթմորթիք. քրիստոնեն կու ավտա նրանցը՞... Քի մոդ օրթում կուլի ուտում, վուր զարթնի քիզ՝ նրա համա աշխրքումը վունց արեգագ կա, վունց լուսնիակ. ամա քսանուհինգ լուսնիակ ու արեգագ էլ ուրիշ կունենա, աստղիրը հալա դենը կենա։ Լավ իմացի՝ էտ նրանց փեշակն է... (Լռություն։) Խիլքումդ նստում է գա՞նա... Քա՞նի մարթ է խարաբ էլի նրանցմեն. ա՛փսուս չէ՞ քի պես տղեն, էն էլ քի պես խե՛լոքը, վուր նրանց ճանգումն ըլի՞... Էքուց էլօր, աստուած մի՛ արասցե, ով գիդե ի՞նչ օյին էին բերի գլուխդ. միխկը չէր քու տերը՞... Գնա՛, վո՛ւրթի, գնա՛, աստուն փա՛ոք տու, վուր էս միտկն էրիտ քու հորը... Իժում ի՞նչ ախչիկ է՝ թե՛ օսկով լիքը խոպինա իս ճարի, թե՛ նրան, դիփ մեկ է, յիս ու իմ աստուածը... Գնա՛, ձեռին պա՛չ արա, շնորակալութին արա՛, վուր աշխրքի փորցանքեմեն քիզ ազատում է... (Մոտ է գնում։) Արի՛, արի՛, վո՛ւրթի, (Թևից բռնում է։) արի՛ մետի գնանք։

ՎԱՆՈ, տեղից վեր թռչելով։

Ի՞ս տու էտ մատնիքը։

ՍԱՐԳԻՍ

Վո՞ւնց թե քիզ տամ։

ՎԱՆՈ

Ի՞ս տու, ի՞ս տու, յիս կնիկ-մնիկ չիմ գիդի։

ՍԱՐԳԻՍ, առանձին։

Արի՛ ու գիլի գլխին Ավետրան կարթա։

ՎԱՆՈ

Ի՞նչ իս փիքր անում, ի՞ս տու էստի, ասում իմ։

ՍԱՐԳԻՍ

Ախար, վո՛ւրթի, ի՞նչ իս ասում. քու հորը չիս ճանչնո՞ւմ։

ՎԱՆՈ

Ի՞նչ անիմ, չարացած էր, մեբաշ ասավ. մե էրկու օրվան վրա հիդ գու քա։

ՍԱՐԳԻՍ

Չէ՛, վուրթի, չէ՛, չիմ կանա տա. քու հորն ի՞նչ ջուղաբ տամ. թե դուն չիս վախենում նրամեն, յիս վախենում իմ, ա՛խպեր։

ՎԱՆՈ

Գե՛թաղվա, ի՞նչ ջուղիս կու տամ։

Փաթաթվում է։

ՍԱՐԳԻՍ

Չիմ կանա, քու արիվը։

ՎԱՆՈ, փաթաթված:

Քու լավութինը կու վչարիմ։

ՍԱՐԳԻՍ

Չիմ կանա, աստուծ գիդենա... Իմ հոր գերեզմանը գիդենա, չիմ կանա։

ՎԱՆՈ

Ա՛յ, թե չիս կանա...

Կամենում է մատանին խլել:

ՍԱՐԳԻՍ, մատանին բերանն է գցում:

Է՛, ձե՛ռը վիկալ թե քու աստուծ կու սիրիս... (Ազատվում է:) *Փիե՛...*

Փախչում է խորքի դռնից, Վանո վազում է ետեից: Վարագույրն իջնում է:

ԱՐԱՐՎԱԾ ՉՈՐՐՈՐԴ

Թեմը ներկայացնում է Միքայելի գրասենյակը, որ զարդարված է բեև համեստ, բայց նուրբ ճաշակի կահ-կարասիքով: Աջ կողմը՝ մեծ լուսամուտ և գրասեղան, որի վրա դարսած են հանգած մոմերով երկու աշտանակ և գրասեղանի զանազան պարագաներ, իսկ ձախ կողմը՝ բազմոց, վառարան և դուռը: Ուր հարկն է սրոռներ և բազկաթոռներ: Խորքում ևս դուռը, որից աջ՝ գրասեղանի դիմացը, գրադարան ծերեկ է։

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ՄԻՔԱՅԵԼ, մենակ, գրասեղանի մոտ՝ ոտի վրա, պայուսակի մեջ դասավորում է գրքեր, հագուստներ և զանազան իրեղեններ։

Մնա՜ս բարյավ, դու՝ իմ հայրակա՛ն տուն... (Նայում է իր շուրջը:) *Մնա՜ք բարյավ, մանկությանս քա՛ղցր հիշատակներ... Այստեղ ծնվեցի, այստեղ մեծացա, բայց այժմ այս ահագին տանը մի անկյուն անգամ չէ մնում ինձ համար, ուր կարողանայի ազատ շունչ առնել... «Դուրս կանեմ տանից, դուրս կանեմ», սպառնում ես դու, հա՛յր. ահա՛ ես ինքս իրագործում եմ քո ցանկությունը... Թափառի՛ր այժմ սենյակից սենյակ, կանչի՛ր, աղաղակի՛ր ո՛րքան էլ կամենաս, սակայն իմ հետքն անգամ չես կարող գտնել այստեղ....* (Ընկղմվում է մտածմունքի մեջ. լռություն:) *Այո՛, գնալ, գնալ, կորչել այստեղից...*

Նստում է գրասեղանի մոտ և շարունակում իր գործը։

ՏԵՍԻԼ Բ

ՄԻՔԱՅԵԼ, ԲԱՐԲԱՐԵ

ԲԱՐԲԱՐԵ, ներս գալով ձախ դռնից:

Էստ ի՞նչ իս անում, Մի՛խեիլ ջան։

ՄԻՔԱՅԵԼ

Ահա՛, տեսնում ես, մա՛յրիկ... Ես արդեն ասացի քեզ, թե իմ այստեղ մնալն այլևս անկարելի է։

ԲԱՐԲԱՐԵ

Է՜, ձե՛ռը վիկալ, Մի՛խեիլ ջան, հենց ապրիս. խո չի՞ս կանա սպանի ինձ... Ախար միխկը չի՞մ, վո՛ւրթի. քու գլուխը չիս խղճում, ինձ էլա խըղճա՛, է՜... Է՛տ է քու սերը՞...

ՄԻՔԱՅԵԼ

Դու ինքդ էլ լավ գիտես, մա՛յրիկ, որ եթե քո սերը չլիներ, ես մինչև այսօր մի րոպե անգամ չէի մնալ այստեղ։

ԲԱՐԲԱՐԵ, խլելով Միքայելի ձեռքից գիրքը, որ նա դնում էր պայուսակի մեջ, և գցելով սեղանի վրա։

Աբա յիս բաց աճկով կու թողնիմ, վուր դուն էտ բանն անի՞ս։

ՄԻՔԱՅԵԼ, վեր առնելով նույն գիրքը և դնելով պայուսակը։

Ո՛չ, ո՛չ, մա՛յր իմ, ես արդեն վճռել եմ, որ էլ այստեղ չկենամ և կյանքովս եմ երդվում, որ ոչ մեկ բանով չեմ փոխիլ իմ վճիռը...

ԲԱՐԲԱՐԵ, նստելով մոտը։

Ջո՛ւրն էկիլ է ու ինձ տարի...

ՄԻՔԱՅԵԼ

Հայրս ինձ այս դրությանը հասցրեց։

ԲԱՐԲԱՐԵ

Քու հերը քու բախտավորութինն է ուզում միթամ, վո՛ւրթի։

ՄԻՔԱՅԵԼ

Նրա բախտավորությունը փողն է...

ԲԱՐԲԱՐԵ

Է՜հ, վո՛ւրթի, ծիր մարթ է, նրա ասածն ի՞նչ իս այնումդ գցում։

ՄԻՔԱՅԵԼ

Ի՜նչպես թե՝ ի՜նչ ես այնումդ գցում... Նա ուզում է, որ ես ո՛չ կամք ունենամ, ո՛չ սիրտ, ո՛չ խելք, ամեն դեպքում իր խելքով շարժվեմ, իր

կամքը կատարեմ... (Վեր կենալով։) *Ես չեմ կարող դիմանալ, մա՛յրիկ, ես էլ մարդ եմ... աստված իմ, ա՛յսպես էլ բա՜ն. հայրը որդի մեծացնի, ուսում տա—սև ու սիպտակը հասկացնել տա նրան և երբ երեխան մարդ դառնա, ամեն օր այն կոիվն ու անբավականությունն ունենա թե՝ ինչի՞ մարդը նորից երեխա չի դառնում... Կատարյա՛լ պատիժ, ճշմարիտ։ Ի՜նչ է՝ կուրորեն չեմ հետևում նրա խորհուրդներին, նա սպառնում է ինձ տանից դուրս անել և բավական չէ որ այս երեսիս է ասում, այլև երեկ գնացել, Սալոմեի մոտ էլ է պարծեցել... Օ՜հ, նա իմ սիրտս բոլորովին թունավորել է։*

Բարկացած ման է գալիս, հետո վառարանի վրա աջ արմնկով հենվում՝ գլուխը ձեռքի մեջ առած։

ԲԱՐԲԱՐԵ, երկար լռությունից հետո։

Դո՛ւն էլ վուր նրանցն ավտում ի՞ս, վո՛ւրթի, արմնում իմ քիմեն, քու արիվը... Ասած է՝ «Օցը դրսեմեն է Ջրել, մարթը՝ նեքսեմեն»... Լա՛վ գիդենաս, վուր նրանք չէ թե քիզ ին ուզում, քու հոր կարողութենի վրա ունին աճկը... Էլախտ էլ ասի, վո՛ւրթի, վուր էն օրն իր վուտով էկավ Սալոմեն ու իր բերնով ասավ էս բանը, քիզ կի սուտ ումիկնիր է տվի. աբա ավտալու է՞... Ո՛վ գիդե նրանց մտկումն էլ ի՜նչ կա ու քու հորն ին սուտ մահանա բերում... (Դարձ լռություն։) *Քիզ ի՜նչ ասիմ, Մի՛խեիլ ջան, վուր քու գլխի ղաղրը չիս գիդի. էն հանգի չուղաբ իմացար նրանցմեն ու էլի նրանց վրա իս փիքր անում, վո՛ւրթի։*

ՄԻՔԱՅԵԼ

Է՜հ, մա՛յրիկ, մեկն ասում ես, մյուսը չէ...

ԲԱՐԲԱՐԵ, գնալով դեպի Միքայելը։

Ախար գլուխդ խուզի հիդ հավսըրեցիր. գնացիր դեմուդեմը խնդրեցիր ու ջուխտ ձեռով վուտիտ չփաթըթվեցան ու էն սահաթին չտվին քիզ իրանց ախչիկը. էլ նրանց էրեսին կու մտիկ անի՞մ, յա բարիլուս կու տամ հորեսի դենը՞... Գլուխը քա՛ըը տան, էրեսը սի՛վ պատռվը. դուն էլ թքե նրանցն ու մտկեմետ հանե՛։

Նստում է բազմոցի վրա։

ՄԻՔԱՅԵԼ, մոտենալով մորը։

Մայրիկ, ես սիրում եմ Անանուն, հասկանո՞ւմ ես, սիրում ե՛մ։

ԲԱՐԲԱՐԵ

Ուցնավուր իս դուն էլ, Մի՛խեիլ. ի՞նչ անիմ վուր սիրում իս, քախկումը ախչիկը կտրվիլ է՞... Նրա վրա լավը հորին քու հոր ասածն է, հազիր աղանչաքով տալիս է քիզ նրա տերը՝ էնղադա փուղ ու բաժընքով. ամա վուր քու ասածի իս, ի՞նչ վայ տամ չիս իմ գլուխը։

ՄԻՔԱՅԵԼ, գրասեղանի մոտ։

Մայրիկ, ի սեր աստուծո, այդ բանի մասին էլ ո՛չ մի խոսք։

ԲԱՐԲԱՐԵ

Բաս ի՞նչ ասիմ, վո՛ւրթի. թե կի հերն ու մերը ղուրթ ղաբուլ չին անի, տանեմեն խո չի՞ս կանա փախցնի ախչկան։

ՄԻՔԱՅԵԼ

Թե աղջիկն էլ համաձայն է, ինչի՞ չէ, լա՞վ...

Մաճ է գալիս։

ԲԱՐԲԱՐԵ

Վո՛ւյ քոռանամ չիս, էտ է պակաս... էտ ի՞նչ իս ասում, Մի՛խեիլ ջան. ուզում իս աշխարքի «ասա-կոսեն» դուն դառնա՞ս։

ՄԻՔԱՅԵԼ

Այո՛, գիտացիր, որ այդպես էլ կանեմ, եթե այդ տեղը կհասցնեն։

ԲԱՐԲԱՐԵ

Ու է՛տու համա էլ հիռանում իս ինձմեն, էլի՛, վո՛ւրթի... (Աչքերը արբում է։) *Քանի տարի գնացած իս էլի ուսումիտ, էնղադա վուխտ աճկէս հիռու իս էլի իստակ, հալվիլ ու մաշվիլ իմ քու փքրու, ամա սիրտս մե օր էլ չէ ցավի ու մխկտացի էնչախն էսենց, վունցոր հիմի... էս ի՞նչ բան իս բերում իմ նաչար գլխին, վո՛ւրթի...*

Լաց է լինում։

ՄԻՔԱՅԵԼ, նստելով մոր կողքին։

Դու հա՛նգիստ եղիր, մա՛յրիկ, մի օր էլ չեմ անց կացնիլ առանց քեզ տեսնելու. ես հորիցս եմ հեռանում և ոչ թե քեզանից։

ԲԱՐԲԱՐԵ, լալով։

Սիվցիլ էր իմ ծնելու սահաթը... վո՛ւր մեկիտ դիմնամ. դուն մե կուորը, քու հերը մեկելը...

ՄԻՔԱՅԵԼ, գրկելով մորը։

Թե ինձ սիրում ես, մա՛յրիկ, մի՛ դառնացնիր օրս... Անանուն խոսք եմ տվել, ես նրանից ձեռք չեմ վերցնիլ՝ թեկուզ աշխարհը տակն ու վրա լինի. իսկ նրան այստեղ բերել անհնարին է, դու էլ գիտես, որ անհնարին է՝ ո՛չ հայրս թույլ կտա և ոչ էլ ես կկամենայի, որ այն խեղճ աղջիկը հորս նախատինքները լսեր ամեն օր... Միակ ճանապարհը՝ գնալ, հեռանալ այս տանից... Մի՛ լար, մա՛յր իմ, աղաչում եմ, մի՛ լար. հայրս ինձ անիծում է, նրա անեծքի հետ թո՛ղ գոնե քո օրհնությունը հետս տանեմ։

ԲԱՐԲԱՐԵ, փաթաթվելով Միքայելին և լալով։

Ա՛խ, Մի՛խեիլ ջան, վո՛ւրթի ջան, քի չարի փուխ ըլի քու մերը... Դանակով վուր կտրտիս սիրտս, էն լավ կուլի ինձ համա, կանց քու հիռանալը... (Ձեռքերը բարձրացնելով։) *Քանդվիլ էր էն սահաթը, ի՞նչ սահաթի նրանք միր հարևան դառան... Վո՛ւյ էիր տեսի դուն նրանցը...*

ՄԻՔԱՅԵԼ, վեր կենալով։

Օ՜հ, ա՛ստված, աստված... (Ճփռված մաճ է գալիս, հանկարծ կանգ է առնում լուսամուտի առաջ և դարը ծիծաղում։) *Հա՛, հա՛, հա՛... Ահա՛, տե՛ս, մա՛յր իմ, տե՛ս, դու քո ա՛չքովը տես, թե ի՞նչպես հայրս ծիծաղելով դուրս է գալիս այնտեղից. հա՛, հա՛, հա՛... Այն մարդը, որ տարեկան մեկ անգամ չէր գնում նրանց տուն, այժմ ամենայն օր է այցելում նրանց. հա՛, հա՛, հա՛...*

ԲԱՐԲԱՐԵ, մոտենալով լուսամուտին, հեռու առանձին։

Էս էլ ի՞նչ է... հա՛մ էրեգ, հա՛մ էսօր...

ՄԻՔԱՅԵԼ

Իմ բախտավորության համար աշխատողը... (Ծարուճակում է նույն դարը ծիծաղը։) *Հա՛, հա՛, հա՛... Տե՛ս, տե՛ս՝ թե ինչ սիրով բարևում են միմյանց նա ու Սայոմեն... Օ՜, հա՛յր իմ, դու ինձ համար հո՞ր ես փորում...*

ԲԱՐԲԱՐԵ

Հանգստացի՛, հանգստացի՛, գե՛նացվալե, Մի՛խեիլ ջան։

ՄԻՔԱՅԵԼ

Հանգստացի՞ր, հանգստացի՞ր... Սրտիս մեջ կրակ է վառվում, իսկ սա ասում է հանգստացիր...

Բարկացած մաճ է գալիս, հանկարծ մոտենում է սեղանին և վերցնելով զանազան իրեղեներ՝ շտապով ածում է պայուսակի մեջ։

ԲԱՐԲԱՐԵ, երկու ձեռքով խփելով գլխին։

Վա՜յ իմ օրին...

Գնում է նստում բազմոցի վրա և լաց լինում։

ՏԵՍԻԼ Գ

ՆՐԱՆՔ, ՍԱՐԳԻՍ

ԲԱՐԲԱՐԵ, Սարգսին, որ մտնում է խորքի դռնից։

Է՛ս էիր ուզում, էլի՜...

ՍԱՐԳԻՍ

Էս ի՞նչ խաբար է։

ԲԱՐԲԱՐԵ

Վուրթուտ տանեն արիր, էլ ի՞նչ խաբար պիտի ըլի։

ՍԱՐԳԻՍ, նստելով։

Ո՜ւհ, դաթրեցա... (Միքայելը շարունակում է իր գործը, Բարբարեն լուռ լաց է լինում։) *Աստուած բարի ճանապարհ տա... էս ո՞ւր իս հազրվում, ա՜զազազա...* (Լռություն։) *Չեն էլ վուր չէ տալի՜... Տո՛, չի՞ս իմանում, քի՛զ հիդ իմ...* (Միքայելը դառնալով դեպի հայրը, խեթ նայում է նրան։ Խորին լռություն։) *Ի՞նչ իս լեգզու հանգը խիթում ինձ, չիս կանա մե ձեն հանի՞։*

ԲԱՐԲԱՐԵ, Սարգսին։

Էրնեկ գիդենամ, ի՛նչ իս նահատակում խիղճ էրեխիս։

ՍԱՐԳԻՍ

Բարբարե, դուն ձե՛նդ...

ԲԱՐԲԱՐԵ

Քոծ խո չի՞մ, չիս էլ մե օր պիտի ձեն հանի՞մ, թե չէ... Հազիր համով խոսիս հիդը, վուր աշխրքի դե՛նո ու մասխարա չդառնա՜նք... Աբա ի՞նչ կոսե խալխը, վուր էս հանդի վուրթին չէ կանացի քի մոդ դիմնա։

ՍԱՐԳԻՍ, գոռալով։

Տո՛, ձե՛ռը չիս վիկալնի ինձմե՛ն։

ԲԱՐԲԱՐԵ

Մե խի՛ստ բղավի վրես, շատ այնումս գալիս է. հիմի գուզիս գլուխս էլ ջարթե, յիփոր չիս էս օրին արժանի էլա։

ՍԱՐԳԻՍ, վեր կենալով։

Ցիս քիզ ասում իմ, Բա՛րբարե, դի՛նջ կաց, թե չէ հանաքը չանաք կու դառնա ու տեսնիմ թե ո՛վ է օտկում քիզ։

ՄԻՔԱՅԵԼ, մոտենալով մորը։

Մայրիկ, տեսնում ես, որ սրա համար էլ ոչինչ չկա՝ ո՛չ որդի և ոչ կին. էլ մի՛ խոսիր հետը, խնդրեմ։

ԲԱՐԲԱՐԵ, վեր է կենում և փաթաթվում Միքայելին։

Մի՛ գնա, մի՛ գնա, Միխեիլ ջա՛ն... (Սարգիսը այդ միջոցին մոտենում է պայուսակին և ձեռքերն ու գլուխը շարժելով՝ անբավականություն արտահայտում։) *Չարըդ տանիմ, մի՛ գնա...*

ՄԻՔԱՅԵԼ

Աստված սիրես, մա՛յրիկ, դրա մասին էլ չխոսենք։

ԲԱՐԲԱՐԵ, լալով։

Ա՛խ, Մի՛խեիլ ջան, քիմեն էտ ումիկը չունեի. գնա՛ հիմի, վո՛ւրթի, ի՛նչ գուզիս արա՛. ամա լավ գիդացի, վուր կինքս հառամ էլավ... (Գնալով։) *Վա՛յ իմ ապրելուն հորեսի դենը...*

Լալով դուրս է գնում ձախ դռնից։

ՏԵՍԻԼ Դ

ՄԻՔԱՅԵԼ, ՍԱՐԳԻՍ

ՄԻՔԱՅԵԼ, շվարված, առանձին։

Ա՛խ, ա՛ստված, այս ի՞նչ օր է։

ՍԱՐԳԻՍ, պայուսակի մոտ, առանձին։

Արի ու վո՛ւրթի մինձացրու... (Միքայելին, մոտենալով։) *Տո՛, հիմի էլ ջուղաբ չիս տա՞. ախար էս ո՞ւր իս հադրվում։*

ՄԻՔԱՅԵԼ, գնում է դեպի գրասեղանը։

Ի՞նչ հարկավոր է ձեզ իմանալ. բավական է որ ձեր ցանկությունը կատարում եմ և չեմ սպասում, որ ձեր ձեռքով դուրս ածեք այս իրեղենները։

ՍԱՐԳԻՍ, նստելով բազմոցի վրա։

Վունցոր դարսիլ իս, հիդ իր տի՛ղը դարսե ու բե՛սաբ նամաղուլ մի՛ անի, թե չէ դուն ինձ ջեր լավ չիս ճանչնում։

ՄԻՔԱՅԵԼ։

Արդեն ուշ է, հա՛յր, այլևս ոչինչ չի օգնիլ... Այժմ գնացե՛ք ամեն տեղ ավելի լա՛վ պարծեցնք, թե ինձ տանիցը նրա համար դուրս արիք, որ ես Անանուն ուզեցի։

ՍԱՐԳԻՍ, ճեղքոռեն։

Ո՛ւզեցիր, ո՛ւզեցիր... Փոանգստնու հանգը ժամ իս էկի՝ դիմուդեմը խոսիլ իս. վա՛յ մոցիքլերու միխկը հորեսի դենը... Հայբաթտա վուր ուզեցիր... էրևում է էնդու համա իս հաղրվում վուր գնաս քու աներանց տանը կենաս... Աշխրքումը շատ տնփեսա կա, մե տնփեսեն էլ դուն կուլիս... (Միծաղում է։) *Հա՛, հա՛, հա՛...*

ՄԻՔԱՅԵԼ

Բա՛վական է, բավական, հա՛յր. իմ գլուխը ծաղրելու չէ. որ ծաղրում եք... Ամանի մեջ այնքան կածեն, ինչքան կարող է տանել, ավելին ափներից կթափվի. իսկ իմ սիրտը պոնկե պոռնկ լցրել եք դառնությամբ... Ի՞նչ է ձեր միտքը, հա՛յր, ի՞նչ. դուք չէ, երկնքից որ հրեշտակ վայր իջնի՝ դարձյալ չէ կարող ինձ Անանուց հեռացնել։

ՍԱՐԳԻՍ

Է՛տ էլ կու տեսնինք։

ՄԻՔԱՅԵԼ

Կտեսնենք, կտեսնենք։

ՍԱՐԳԻՍ

Կա՞մաց պարծենաս։

ՄԻՔԱՅԵԼ

Կամաց պարծենալը ձեզ կվայելե, հա՛յր, ես բարձր եմ խոսում և ոչ ոքից չեմ վախենում։

ՍԱՐԳԻՍ

Ինձմեն էլ չիս վախենո՞ւմ։

ՄԻՔԱՅԵԼ

Դուք ինքներդ կտրեցիք ձեր ահը իմ սրտից։

Մոտենում է պայուսակին։

ՍԱՐԳԻՍ, վեր կենալով։

Փա՛ռք քիզ, ա՛ստուած, վուր էս օրին էլ հասցրիր ինձ... Մարթ ամագանե, աշխատանք քաշե, վուրթի մինձացնե ու վիրչը է՛ստունք լսե՛... Տո՛, սա՛րսաղ, ինձ ի՞նչ իս միզ դնում, մե ասա՛. աճկիրդ քոռացիլ է, միտկդ մթնիլ է ու քու լավն ու վադը չիս տեսնում, էստումը չիս ի՞նչ միզ ուիմ... Դուն ուզում իս, վուր աղանչաք անիմ քիզ, թե Ստեփան Դանելիչի աղջկան թո՛ղ ու գնա Անանուն ուզե՛. վուր չիմ կանա, թեզուզ վուտեմես քա՛շ արա՝ չիմ կանա... Դուն քու հանգն իս ժամ զալի, չիս էլ իմ հանգը։ Հիմի ուզում իս՝ չիս էլ քու աճկով մտիկ անիմ ու քու խելքով ման գա՞մ. վուր չի ըլի, սուտ չէ՞։

ՄԻՔԱՅԵԼ

Ես ինքս հասատ գիտեմ, որ ո՛չ դուք կարող եք իմ խելքով ման գալ և ոչ էլ ես ձեր խելքով, բայց դուք աշխատում եք քանդել իմ բախտավորությունը։

ՍԱՐԳԻՍ

Ցիս իմ քանդում քու բախտավորութինը՞, չի՞ս։

ՄԻՔԱՅԵԼ

Այո՛, դո՛ւք, դո՛ւք, հա՛յր... Ինչե՞ր էիք ասում այժմ Սալոմեին, ինչե՞ր ավելացրիք ձեր երեկվան ասածներին։

ՍԱՐԳԻՍ, ներից նստում է։

Քիզ ի՞նչ, քիզ ի՞նչ դավի. ինձ համա խո մեդիատոր չին ջոգի քիզ. քիզ ի՞նչ, ինչոր ասում էի... Իմ հարցմունքին խիստ իս ջուղաբ տալի, վուր քու հարցմունքին չիս ջուղաբ տա՞մ... Դուն բարգդ դարսում իս, դարսե, ա՛խպեր, էլ ինձմեն ի՞նչ իս ուզում. էլ խո չիս քու հեր չիմ. էլ խո դուն քու գլուխը վուրթիս չիս համարում իմը, մինք միր հախ ու հեսաբը պրծանք... Բե՛սաբ արի՝ մե բան ասի... Գնա՛ հիմի, ի՛նչ քեփտ ուզե, է՛նարա, էլ հեր ու վուրթութինը մոդա չէ հորեսի դենը... Գնա՛ քու ճանփեն. աստուած ձեռք տա, տեսնիմ առանց ինձ վո՞ւնց իս յոլա գնում. ախար վիրչը կու էրևա, էլի՛... Գնա՛, ա՛խպեր, գնա՛, դուն քու ճա՛նփեն գնա, չիս իմ ճանփեն։

ՄԻՔԱՅԵԼ

Բայց դուք ձեր ճանապարհով չեք բավականանում, հա՛յր, այլև իմ ճանապարհի վրա էլ քար եք գցում...

ՍԱՐԳԻՍ, ծաղրալի դեմքով նայում է և երկու ձեռքը ձգելով դեպի Միքայելը:

Վա՜յ, քու տիրուչ միխկը, վուր աշխարքի ափալը ջեր չիս իմանում... Ցի՛ս իմ քար գցում քու ճանփի՞ն... (Լուռ շարժում է գլուխը:) *Տո՛, ինչո՞վ չիմացար, վուր ամեն մարթ իր խերն է պտռում... Նրանք հնստի տղի ին տալի Անանուն, վուր նրա վուտի պճեղն էլ չարժիս...* (Միքայելը ապշած նայում է հոր երեսին:) *Ինչկի հիմի կուլի դուն էլ շատ լավն էիր նրանց համա, ամա հիմի էլ վունչիչ... Չիս գիդի, վուր լավի վրա լավը ուփրո լավ է՞... Վո՞ւր գիժը կուլի վուր ձեռին ակն ունենա, ակը դեն գցե ու նրա տիղ անմիղ կենճի վիկալնե...* (Երկար լռություն:) *Ի՞նչ իս մտիկ անում, գնա մտկեմետ հանե՛, էլ Անանի չկա քիզ համա, Անանիտ ուրիշի վրա է նշնած:*

ՄԻՔԱՅԵԼ

Ուրիշի վրա նշնա՞ծ... Անանի՞ն... (Գիծաղում է:) *Հա՛, հա՛, հա՛...*

ՍԱՐԳԻՍ

Գիծաղի՛, ծիծաղի՛, չիս ավտում միթամ. աճկով վուր տեսնիս, էնչախը իտ կու ա՞վտաս:

ՄԻՔԱՅԵԼ

Դուք ու Սալոմեն շատ բան կարող եք հնարել, միայն ես խորհուրդ կտայի՝ հանգիստ մնայիք ձեզ համար:

ՍԱՐԳԻՍ

Էս խրատը վուր քու գլխի համա պահիս, ուփրո լավ կուլի, էնդուր վուր, չիս քիզ ասում իմ՝ Անանին նշնած է, ու թե գուլիս իմանաս թե քիզ վրա լավն ո՛վ լուս նենգավ նրանց համա, է՛ն հարցրու... Շատ հարկավուր է նրանցը քու գի՛րն ու դալամը՞... Ինչո՞վ չիմացար, վուր հիմիկվան ժամանակը ինչոր վուր է՝ փուղն ու հարստութինն է... Քու մտկիրը դուն գնա ո՛ւրիշ տիղ քարոզե, նրանք իրանց ախչիկը Իվան Ստեփանիչին տվին:

ՄԻՔԱՅԵԼ

Իվան Ստեփանի՞չ...

ՍԱՐԳԻՍ

Հա՛, Իվան Ստեփանիչ... Ովոր քիզ ախչիկ է տալի ու դուն չիս ուզում, հենց նրա տղեն:

ՄԻՔԱՅԵԼ

Այն թեթևամիտը՞... (Գիծաղում է:) *Հա՛, հա՛ հա՛,... Սո՛ւտ է, սո՛ւտ, երբեք չեմ կարող հավատալ...*

ՍԱՐԳԻՍ

Սուտը դուն իս, վուր վունց անգճներուտ իս ավտում, վունց հորդ. մնացածն էլ քու աճկով կու տեսնիս, էլի՞... Տանու բարեկամ իս ասիսը, քիզ էլ կու կանչին նշանտեքումը. առանց քիզ վո՞ւնց կուլի...

ՄԻՔԱՅԵԼ

Այժմ եմ հասկանում ձեր նրանց մոտ գնալ-գալու պատճառը, այժմ եմ հասկանում թե ի՞նչ խորհուրդներ կունենայիք դուք ու Սալոմեն... Լավ պաշտոն եք հանձն առել, հա՛յր, շնորհավորում եմ... Այս բոպեիս որ ուրախ-ուրախ ճանապարհ դրեց ձեզ Սալոմեն, երևի այդ ձեր նոր աշխատության վարձատրությունը կլիներ... Օ՜, հա՛յր, երջանիկ եք, որ ծնողի անուն եք կրում, ոչինչ չեմ կարող անել... որդիդ եմ... Որդի՞... Ի՞նչ որդի, փո՛ղ, փո՛ղ և միայն փող. ձեր ատվածը նա է, նրան պետք է պաշտեք ձեր բոլոր կյանքում... Բայց լա՛վ գիտացեք, հա՛յր, որ ես ձեր ծախած ու գնած ապրանքը չեմ, որ ինչպես կամենաք, այնպես վարվեք հետս... Գնացե՛ք, նստեցե՛ք Սալոմեի հետ, դարսեցե՛ք, շինեցե՛ք, քա՛րե պարիսպներ բարձրացրեք, միայն իմացա՛ծ կացեք, որ զուր է ձեր աշխատանքը. Անանին ի՛մն է լինելու՝ թեկուզ տասը Սալոմե դուրս գա դժոխքի խորքից:

Գլխարկը ձեռին դուրս է գնում խորհի դռնից:

ՏԵՍԻԼ Ե

ՍԱՐԳԻՍ, մենակ, երկար լռությունից հետո, հեգնորեն ցածր ծիծաղում է:

Հա՛, հա՛, հա՛... Մո՛ւլափ, մո՛ւլափ, Մի՛խեիլ. ձգան պես դամբումը բռնվիլ իս ու ջեր խիստ իս փրփրտում, ամա վիրշը վուրդի վուր նիղ քունջն է, էնդի կուլ գու քաս... Շատ տրտինգնիր կոնիս ջեր էլի, ամա վիրշը իմ քեփի մարդ կու դառնաս, մի վախենա... (Մոտենալով պայու-

սակին:) Էստունք էլ վուր ադավարի դարսիլ է՞. մեքաշ յաքա տուն չբռնիս քիզ համա... Իմ ամագն ու աշխատանքն էստու համա է՞ր... (Պայուսակը շուռ է տալիս և միջի իրեղենները վայր ածում:) Էսենց վուրթի կուլի վուր իմ սերը չէ հասկանո՞ւմ... Տե՛ր աստուած, էս ի՞նչ ժամանակի ինք հանդիբի... (Ընկղմվում է մտածմունքի մեջ:) Փիս ժաժ էկա մեքա՞մ... Ինչի՞... Ծառի շվաքը վուր դաշլա է անում իմքնին, ծառը տակռեմեն հանում ին ու դեն ին գցում... Խոսկիրը ի՞նչ զորութին ունե քիզ համա... վունչիչ... դարդակ քամի... ա՛յ, (Փչում է:) փֆո՛ւ... փչեցիր, գնաց ու տիղը վունչիչ չմնաց... Քիզ գուրծք էր հարկավուր, Մ՛ր՛խեկիլ, գուրծք, է՛ն հանգի գուրծք, վուր անգճով իմացիլ էիր ու աճկով տեսի... Էն գուրծքը յիս մոգոնեցի, դարսեցի ու տիղը հասցրի... Հիմի ի՞նչ ձեռնեմետ գա, է՛ն արա... Էլ Ինանի չկա քիզ համա, գնա՛ց, ջնջվեցավ հավիդենական... Գնա դա՛ղվի, է՛րվի, խո՛րվվի, վուր խիլքդ հասնի ու աշխարքը ճանչնենաս... Տեսնիմ իժում դուն իս քու գրերով ուփրո խե՛լոքը, թե յիս իմ փոդոցի խիլքով։

Դուրս է գնում ձախ դռնից. վարագույրն իջնում է:

ԱՐԱՐՎԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Երկրորդ արարվածի՝ Աուրաթենց, տան սենյակը. միենույն գաղարանոցով: Գիշեր է: Աջ կողմի սեղանի վրա դրած է վառ լապտեր, իսկ ձախի վրա՝ ճանգված մոմ, լուցկատուփ և նույն գիրքն ու գամբյուղը։

ՏԵՍԻԼ ԱԳԱՋԻՆ

ՍԱԼՈՄԵ, ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

ՍԱԼՈՄԵ, ուրախ-ուրախ դուրս գալով աջ դռնից, մատանին ձեռին:

Վո՞ւնց է, վո՞ւնց, իմ ասածը։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ, հագնված ինչպես երկրորդ արարվածի սկզբում, բեյի բաժակը ձեռին, հեռանում է Սալոմեին:

Աճկերուս չիմ ավտում, աստուած գիդենա, Սալո՛մե։

ՍԱԼՈՄԵ

Հիմի էլ կոսլես, վուր խիլք չունի՞մ։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ, նստելով բազմոցի վրա:

Շնուքով իս, շնուքով, Սա՛լոմե։

ՍԱԼՈՄԵ

Բաս չէ ու քի պես ա՛նշնուք կուլիմ... Յարաբ ի՞նչ կուլեր քու չարին վուր յիս չէի ռաստ էկի ջիզ։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ, բաժակը խառնելով ու ժպտալով:

Էգեբա քի վրա չավին էի ռաստ գալի, Սա՛լոմե։

ՍԱԼՈՄԵ, ֆրֆրվելով։

Վո՞ւնց կուլեր քու բանը. մե էրկուսն էլ կան ինձպես ախչկիրք, (Աջ ձեռքը շարժելով։) գա՛նա չիմ գիդի։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ, ծիծաղում է։

Հա՛, հա՛, հա՛...

ՍԱԼՈՄԵ, մոտենալով լապտերին՝ գնում է մատանին։

Մե մտի՛կ, մե մտի՛կ, Յա՛գոր ջան, ի՛նչ ջուր ունե. վրեն էվետ էրեում է, վուր տերն էլ իրպես ասլզադա է... (Ծաղրելով։) «Տուտուց կնիկ իս ու, մագիրդ էրգեն ունիս ու, աստուձաձնին նիղացնում իս ու...» տի՛ս վուր ինձ ավելի է ավտում աստուձաձինը... Փո՛ւխ էհամ նրա զորութենին։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ, խմելով թեյը։

Ավտաս ինչի՞ր իս խոստացի, Սա՛լոմե։

ՍԱԼՈՄԵ

Էն յիս գիդիմ... Քանի ջեր իմ փորցի. նրա փիշը վուր դայիմ բռնիլ իմ, իմ սրտի ուլածը դիփ կատարիլ է... Ավատացած էի, վուր էս բանն էլ պիտի էսենց ըլի։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Մե քիչ կի սիրտդ գնաց ու էկավ վուր էս բանը մե քիչ ուշացավ. կինաղամ ումիկդ կտրվում էր։

ՍԱԼՈՄԵ, նստելով նրա դեմ առ դեմ բազկաթոռի վրա։

Քու արիվը, Յա՛գոր, հանց քուր ու ախպեր վիզիտով էկան էսօր՝ սիրտս խաթրջամացավ։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Հա՛, հիմի էտենց կոսիս. էրեգվան դեսը կի տասը ջեր քուչի դուռը դուս վազեցար։

ՍԱԼՈՄԵ

Ո՞վ էր էլի իմ մագիար վուր սիրտն էնենց չէր շուռ էկի վունցոր իմը. մնալու պես դժար վունչիչ չկա... Դուն էն քոփակին ասա՛ թե մատնիքը ջիբումտ ունիս, էլ ի՛նչ իս ուշանում, արի՛, է՛։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Է՛հ, հե՛ր օխնած, էգեբա ի՛նչ հարկավուր բան ուներ։

ՍԱԼՈՄԵ

Էստու վրա էլ հարկավուր բան վո՞ւրը կուլեր. աճկիրս ջուր դառավ նրա մնալեն։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Էգեբա...

Ականջումը ֆշֆշում է։

ՍԱԼՈՄԵ

Ի՛հ, լավ է, քա՛, ի՛նչ ասիս դուն կու մոգոնիս։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ, ծիծաղում է։

Հա՛, հա՛, հա՛....

ՍԱԼՈՄԵ, նորից գնելով մատանին։

Ավտաս հարուր թուման ավել աժենա, Յա՛գոր ջան։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ, առնելով մատանին ու գնելով։

Բաս չի աժենա՛. անտիկա իմքին է։

Մատանին հետ է տալիս և գնում աջ անկյունից ծխամարշը վերցնում։

ՍԱԼՈՄԵ

Ջեր անմիղ բելգեն վուր է՛ս է՛, դուն մեկելնիրը հե՛սաբ արա թե ի՛նչ կուլի... (Ձախ կողմի սեղանից լուցկատուփը վերցնելով։) Գնա՛ ու գնա՛, Ա՛նանի, բախտավուր աստղի իս ծնած. գուքած վուր դուս գաս, ավտաս հինգ հազար թումնի մենակ ակնեղեն ըլի վրետ։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ, ծխամարշը պատրաստելով։

Դիփ լա՛վ, Սա՛լոմե, ամա (Գլուխը շարժելով։) չիմ գիդի թե Անանուն վո՛ւնց պիտի կոտրիս...

ՍԱԼՈՄԵ, երկյուղով նայում է ձախ դռանը, որ ծածկած է։

Էտ յիս գիդիմ, դուն բան չունիս։

Ծխամարշը վառում է։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ, ծխելով։

Գիդիմ, գիդիմ. իմ ասելուն յիս ասիլ իմ, միխկն ու վարցկը քու շլրնքին, Սա՛լոմե։

ՍԱԼՈՄԵ, թեակցած առաջ բերելով նրան:

Ամեն իմ միխեր ասածս մատ էս բլի։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Ա՛խ, Մի՛խեիլ, քու հորն ի՞նչ ասիմ։

ՍԱԼՈՄԵ, լուցկատուփը թողնելով աջ կողմի սեղանի վրա:

Աբա Միխեիլի հա՛տն ու կտուրն է՞, Յագոր. ի՞նչ իս ասում. մե քիչ ա՛ստուծ ունեցի, է՞։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ, ճոճքերը կիսելով:

Լա՛վ է, լավ, քու հորն օղորմի. ի՞նչ էլավ, էլավ։

Թեակցած գնում են ձախ կողմը:

ՍԱԼՈՄԵ

Ըհա՜, պրծավ գնա՞ց. վարսպան, վայրքալամ. էլ ի՞նչ նուր շար, նուր բարի։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ, նստում է Անանու աթոռի վրա. իսկ Սալոմեն աջ արմնկով հենվում է նրա ձախ ուսին:

Ասստուծ տա, Սա՛լոմե, վիրչը չփոշիվնինք ու ուրախանալու մագիար սրտեներուս չդառնացնինք. օրինակներիր ասում ին շատ է էլի՝ վուր սրտի ընդեմ մարթու տված ախչիկը էրգար օր չէ ունենում։

ՍԱԼՈՄԵ

*Էտ օրինակները ասու

մարթկերանց ասած թե կուլի ու դուն էլ ավտում իս... Նշնելու ախչկա սիրտն ո՞վ է հարցնում. նրանք ի՞նչ գիդին՝ վո՛ւրն է իրանց համա լավը, վո՛ւրը վադը... Ինձ վուր նշնում էին, դո՛ն հենց գիդիս խիստ էի հավնում քի՛զ. ամա չարես ինչ էր՝* (Յագոր Սիմոնիչը գլուխը տրտնջալով ու ժպտալով խարդ նայում է Սալոմեին:) *իմ հերն ու մերը վրես չաքուլի պես կանգնած էին... Իժում իմացա վուր վադ չին ուզեցի ինձ համա. աստուծ հոքեներուն լուսավուրեն։*

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Հաա՜, փա՛ռք աստծու։

Արձակելով ձիպ գունդ, ձիաքարշը վայր է դնում սենյակի անկյունում և վերցնում պաշտոնական բուրը:

ՍԱԼՈՄԵ

Բաս ի՞նչ գիդեիր. յիս քիզ ասում իմ, վուր կնիկարմտի բանը քու բան չէ։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ, թուրը գցելով ուսին։

Յիս ձեռս լվացիլ իմ, Սա՛լոմե. կնգդերանց բանումը չիմ խառնվում... (Գլխարկը վերցնելով:) *Յիս գնում իմ կլուբը, էս գիշիր ուշ կու տուն գամ։*

ՍԱԼՈՄԵ

Խիստ լավ էլ կոնիս։

ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ, խորքի դռանը:

Է՞յ։

ՍԱԼՈՄԵ, առաջին:

Էրնեկ կուլեր կնգդերանցը վուր քու աբով էին մնացի... (Հասնելով Յագոր Սիմոնիչին:) *Յիս կու օտկիմ։*

Դուրս են գնում խորքի դռնից:

ՏԵՍԻԼ Թ

ԱՆԱՆԻ, մենակ, սև հագուստով և սպիտակ փոքրիկ վերարկուով, դուրս է գալիս ձախ դռնից, ծաղր քայլերով գնում, նույն կողմի լուսամուտը բաց է անում և դուրս նայում:

Չկա, չէ երևում... (Լուսամուտը փակում է:) *Աչքերս ջուր կտրվեց ամբողջ օրը նրա ճանապարհը պահելով, իսկ նա դեռ ևս չէ գալիս... Երբեք այսպես չեմ ցանկացել նրան տեսնել, ինչպես այժմ, երբեք սիրտս այսպես չէ լցվել, ինչպես այժմ... Օ՜հ, ո՞րքան բան ունիմ նրան պատմելու։* (Ձախ սեղանի վրա որոնում է լուցկատուփը և գնում վերցնում աջ սեղանից:) *Ա՛խ, Մի՛քայել, Մի՛քայել, եթե այս էր վերջը, եթե այսքան արգելքներ պիտի ծագեին մեր մեջտեղում, ինչի՞ ասացիր ինձ այն քաղցր խոսքերը, ինչի՞ խոստացար ինձ քո սերը, ինչի՞ խլեցիր ինձանից իմ հանգստությունը... Ապրում էի ինձ համար անհոգ, քեզ տեսնելով ուրախանում, քեզ հետ խոսելիս բավականություն ստանում, բայց քո բացակայությունը երբեք ինձ վիշտ չէր պատճառում... Այժմ... այժմ ի՞նչ արիր դու ինձ, այս ի՞նչ կրակ գցեցիր սրտիս մեջ, որ առանց քեզ, առանց քեզ վրա մտածելու, առանց քո անունը հիշելու շունչ չեմ կարողանում քաշել...* (Լռություն:) *Ա՛խ, աստված, մի՞թե մեկ բոպե նրա հա-*

մար միայն ուրախացրիր ինձ, որ հետո այսպիսի տանջանքներ կրեմ... Ի՞նչ ճար կա իմ խեղճ գլխին... (Վառում է ձախ կողմի սեղանի վրա դրած մոմը, առաջը նստում, ձեռագործը վերցնում, գնում և հետո զամբյուղը գցում. հետո վերցնում է գիրքը և մի քանի վայրկյան կարդում): Խե՜ղճ աղջիկ, դու էլ ինձպես տանջվում ես. հասկանում եմ քեզ, հասկանում, բայց ոչ ոք օգնող չկա մեզ... (Դարձյալ մի քանի վայրկյան կարդում է, հետո ձայնով գիրքը:) Կարդալու սիրտ ես չկա... (Գնում է դաշնամուրի առաջ նստում և նվագելով երգում է մի տխուր եղանակ, բայց շուտով կըտրում է երգը և աչքերը սրբելով վեր կենում:) Էլ չեմ կարող, կարծես թե խեղդվում եմ... (Նորից նայում է լուսամուտից:) Չեկավ։

ՏԵՍԻԼ Գ

ԱՆԱՆԻ, ՍԱԼՈՄԵ

ՍԱԼՈՄԵ, վերադառնում է խորքի դռնից:

Ինչի՞ ես փաթրթվի, մրսում ի՞ս։

ԱՆԱՆԻ

Այո՛, լավ չեմ զգում ինձ։

ՍԱԼՈՄԵ

Հիվանդ խո չի՞ս։ (Ձեռքը բռնում է:) Էս ի՞նչ է, տաքութին ունի՞ս։

ԱՆԱՆԻ

Կարելի է։

ՍԱԼՈՄԵ

Հաջաթ չէ, կու անց կենա։

ԱՆԱՆԻ

Ասա՛, խնդրեմ, մա՛յրիկ, այս ի՞նչ է անցնում այստեղ. ինձանից ծածուկ հավաքվում, փակվում, խոսում եք... Ո՛րքան էլ մտածում եմ, մտածում, ոչինչ չեմ կարողանում հասկանալ։

ՍԱԼՈՄԵ

Նստի՛ էստի, վո՛ւրթի, նստի՛... (Նստում են՝ Սալոմեն բազմոցի վրա, Անանին՝ մոտը, բազկաթոռի վրա:) Ջարթնի քիզ ի՞նչ ունինք խոսելու. միր ուրախութինն էլ դուն իս, միր դարդն էլ, միր ասելուն էլ, միր լսելուն էլ... Քիզ նշնում իմ, Ա՛նանի ջան...

ԱՆԱՆԻ, ուրախ:

Ուրեմն Միքայելի հայրը համաձայնվո՞ւմ է։

ՍԱԼՈՄԵ

Միխեիլը վո՞ւրն է... Հեստի բա՛ն ուրախացնիմ քիզ, Ա՛նանի ջան, վուր Միխեիլին էլ մտեդ գցիս, ի՛նձ էլ... Ստե՛փան Դանելիչն ուզում է քիզ իր վուրթու համա... (Լռություն:) Ի՞նչ իս արմբնում, զուրթ իմ ասում, քու արիվը...

ԱՆԱՆԻ

Ես քեզ չեմ հասկանում, մա՛յրիկ։

ՍԱԼՈՄԵ

Վո՞ւնց թե չիս հասկանում... (Գրպանից հանում է մատանին:) Ա՛յ, էս էլ բելգեն. էս սահաթիս էկավ... Գնա՛ ու գնա՛, տասը մատիտ մում վառե ու աստձուն էնենց փա՛ռք տու, վուր էս հանգի բախտի է քիզ ռաստ բերում, էրազումտ էլ չէիր կանա տեսնի...

ԱՆԱՆԻ

Դու հա՞նաք ես անում, մա՛յրիկ։

ՍԱԼՈՄԵ

Հանաքը վո՞ւրն է, քա՛. քու արիվը սուտ օրթում կուտի՞մ... Էսօր հանց էսղանց գնացիլ է տուն խիղճ տղեն, հոր առչիվը չոքիլ է ու հենղադա աղանչաք է արի, ինչրի նա էլ մատեմեն էս մատնիքը հանիլ է ու ղրգիլ է... Ախար աշքարա տեսնում էի, վուր խիլքի ծերը գնում էր էն տղինը քիզ հիդ խոսելիս. գենա՛ցվալե նրա կոկոր բիխերուն, ցուգրումելա իքմին է։

ԱՆԱՆԻ, վեր կենալով:

Ինչե՞ր ես պատմում, մա՛յրիկ. ես դեռ ես ականջներիս չեմ հավատում։

ՍԱԼՈՄԵ

Վո՞ւնց թե չիս ավտում, թուրքերեն խոմ չիմ խոսում ու լեզգերեն. Ստեփան Դանելիչի տղեն ուզում է քիզ, ասում իմ, ուրիշ էլ ի՞նչ ավտալ գուզիս...

ԱՆԱՆԻ

Բայց Միքայե՞լը, Միքայե՞լը. մա՛յրիկ. նրա մեկ մազը չեմ փոխիլ տասը Ստեփան Դանելիչի որդու հետ։

Գնում է դեպի ձախ։

ՍԱԼՈՄԵ, հեռանալով։

Ա՛յ, անխիլ իս ու անխիլ էլ խոսում իս. աբա նրանց մոտ ի՞նչ հիշելու է Միխեիլը։

ԱՆԱՆԻ

Ի՞նչպես... Մինչև այսօր Միքայելի նմանը ոչ ոք չկար քեզ համար, իսկ այժմ նրան հիշելն անգամ շարժի՞։

ՍԱԼՈՄԵ

Ի՞նչ կու փիքր աննինք, թե աստուած Ստեփան Դանելիչի տղին ռաստ կու բերե վիրչը. նրա բանն ո՛ւրիշ է, նրա բանն ուրիշ։

ԱՆԱՆԻ

Այդպես է, հա՛... Օր չէր անցնիլ որ Միքայելի համար չասեիք՝ «լավ տղա է, ուսում առած է, խելոք է, ազնիվ սիրտ ունի, նրա նմանը ոչ ոք չկա քաղաքում, երանի կլինի քեզ ուզե...», իսկ այժմ նրա բանն ուրիշ է՞. ա՛յժմ, երբ սիրես էլ, միտքս էլ նրան եմ տվե՛լ... Իմ սիրտը քո հագուստների պահարանը չէ, մա՛յրիկ, որ ի՞նչ տեսակ հագուստ կամենաս, այն պահես մեջը։

Անցնում է աջ կողմը։

ՍԱԼՈՄԵ

Ծա՛լպակաս, ծա՛լպակաս մի՛ խոսի... Իժում ո՞վ ասավ, վուր Միխեիլն ուզում է քիզ։

ԱՆԱՆԻ

Պարզված չէ մի՞թե. նրա առաջարկությունն արդեն հայտնի է՝ նա սիրում է ինձ և... ես էլ նրան։

ՍԱԼՈՄԵ, մոտենալով։

Էքկուզդ մնաք. ձիր սերը վի՛կալեք, ղա՛յիմ ծալեցեք ու սրտի մագիսը ջիբներումդ պահեցեք. հաստատ կիդացի վուր էլ նա չի կանա ուզի քիզ։

ԱՆԱՆԻ

Ինչի՞։

ՍԱԼՈՄԵ

Էնդուր վուր նրա հերը չէ ուզում... քա՞նի ասիմ քիզ։

ԱՆԱՆԻ

Նա իր հոր խիլքով չէ ման գալիս։

ՍԱԼՈՄԵ

Ի՞նչ է ասում, քա՛. բարեմց էրկուսդ մե՛տի գնացեք ու թաքուն փսակվեցեք, է՛լի, ու աշխարքի մա՛սխարա գտեք։

ԱՆԱՆԻ

Հավատացա՛ծ կացեք, մա՛յրիկ, որ բացի Միքայելից ես ուրիշ ոչ ոքի չեմ ուզիլ։

Գնում է ձախ կողմը։

ՍԱԼՈՄԵ, հեռանալով։

Քու քեփի ո՞վ է թողնում քիզ, էրնեկ գիդենաս. ի՞նչ գիդիս դուն քու լավն ու վատը... Դուն ինձ վրա շատ իս հասկանո՛ւմ. քու տոլ խիլք. ղընգներումս էլ ունիմ։

ԱՆԱՆԻ

Այո՛, այո՛, մա՛յրիկ, իհարկե դուք ավելի եք հասկանում. բայց թողե՛ք այդ, ուրիշ բան խոսենք, խնդրեմ։

ՍԱԼՈՄԵ

Ի՞նչ է ասում. քա՛. ուրիշ ի՞նչ պիտի խոսիմ, ի՞նչ ունիմ խոսելու. ասիմ վուր արեգագը առուտեհան դուս է գալի, իրիգնուին մեր է մտնո՞ւմ. ի՞նչ կա, կա. ու ինչոր հիմի ասում իմ՞ պիտի ըլի։

ԱՆԱՆԻ

Անկաբելի է. մա՛յրիկ. ա՛նկաբելի։

ՍԱԼՈՄԵ

Կարած էլ է ու ձևած էլ։

ԱՆԱՆԻ

Ա՛խ, ա՛ստված։

ՍԱԼՈՄԵ

Աստուած քու բանը շինիլ էլ է ու կրծիլ էլ. ամեն սահաթի քիզ համա պարապ չէ։ Ի՞նչ գիդիս՝ քանի խելչ ու սուրփ իմ մեչ գցի... (Մոտենալով:) Բռնի՛ դուն էս մատնիքը. տի՛ս ինչ լավն է՝, անգին ակն է։

ԱՆԱՆԻ, առնում է մատանին ու դեն գցում:

Թո՛ղ տանեն իրանց համար պահեն, ինձ հարկավոր չէ։

ՍԱԼՈՄԵ

Վո՛ւյ քոռանամ յիս... (Մատանին վեր առնելով:) էտ ի՞նչ արարմունք է... էրեսդ պա՛րզ կինա, լա՛վ իս գիդացի մոր պատիվը։

ԱՆԱՆԻ

Ես քեզ չեմ անպատվում։

ՍԱԼՈՄԵ

Անպատվին էլ վո՞ւրը կուկեր, ձեռնես առար ու գլխես խփեցիր։

ԱՆԱՆԻ

Ների՛ր ինձ, մա՛յրիկ, ճշմարիտ որ ես ինձ մոռացա։

ՍԱԼՈՄԵ, նստում է աջ կողմի բազկաթոռի վրա:

Չէ էլ ամանչում. էն հանգի տանեմեն ուզում ին քիզ ու դուն էլ նազ իս անում։

ԱՆԱՆԻ

Ո՛ւմ տանից էլ կուզե լինի, ես նրա ընկերը չեմ։

ՍԱԼՈՄԵ

Քու արիվը, էնենց ննգիր իք մեկմեկունը, վունցոր խնձուրը կես անիս, դրուստ մեկմեկու վրա ձևած իք՝ դուն ջեհել, նա ջեհել. դուն սիրուն, նա սիրուն. դուն խելոք. նա հարուստ. էստու վրա էլ լավ ննդրուքին կուլի՞։

ԱՆԱՆԻ

Չե՛մ կարող, մայրիկ, եթե սպանես էլ՝ չե՛մ կարող... Ես նրան չեմ կարող ուզիլ, չե՛մ ուզում... ո՛չ ոքի չե՛մ ուզում...

ՍԱԼՈՄԵ, վեր կենալով:

Բաս մնա՛ վուր տանը քացխիս... Գիժը յիս իմ, վուր ծանգը ու բարակ հիդդ մասլահաթ իմ անում... Շնորակալ էլ չիս, վուր քիզ բան իմ հարցնում... Քի պես վուր նշնելու էի, քու հորը բերին մեբաշ գլխես կանգնեցրին ու ասին թե՝ ա՛յ քու մարքը։

ԱՆԱՆԻ, ձախ կողմը կանգնած:

Ի՞նչ անեմ, եղել է ժամանակ, երբ որդուն տանում էին փողոց և այնպես ծախում, ինչպես այսօր մեկ ոչխար ծախեն։

ՍԱԼՈՄԵ, մոտենալով, բաղցրությամբ:

Բաս էտ է՞ քու խոնարհութինը, Ա՛նանի։

ԱՆԱՆԻ

Կարծում եմ որ մինչև այսօր քեզ միշտ խոնարհ եմ եղել, մա՛յրիկ, բայց ինչ որ ինձանից չէ կախված՝ չեմ կարող կատարել։

Աչքերը սրբում է:

ՍԱԼՈՄԵ

*Էնդուր վուր դուն մենակ քու գլխի համա իս փրքը անում։ Սրտիդ հիդ ննգիլ իս ու էլ խիլքիդ չիս հարցնում։ Քիզ համա էլ վո՛ւնց մեր կա, վո՛ւնց հեր, վո՛ւնց քուր ու վունց քվերտիք մարթու տալու... Խո տեսնում իս՝ ի՛նչ ժամանակ է էկի... Աստուած քիզ համա բաց արավ էս բախտը վուր մուքթ ուզում ին քիզ. իր օղորմութինը դիփ խո մե օջախի չի տա... Լն էլ շատ է, ինչ քիզ համա է տալի աստուած... Էսօր է թե էքուց քվիրտիքդ ջի պես մարթու տալու կու դառնան, ինչո՞վ ինք մարթու տալի, քիզ իմ հարցնում... Լավ գիդենաս, վուր քու հերը վունչիչ չունե. ամսե ամիս տոնլուղը վիր է կալնում ու վայ-նայարի, վունցոր ըլում է, ապրում ինք. էկող ամսվանն էլ էս գլխեն ինք ուտում... Էս տուն ու տիղը կարքած ու սարքած վուր տեսնում իս, աշխարքի համա ինք սարքի. էսանց էլ վունչիչ չկա... վիրչի թիքեն վրեն ինք բանեցրի։ Ինչի՞ համա, չէ՞ վուր է քու ապզացնելու...Հիմի փի՛քր արա. հերտ օրն օրվան վրա ծիրանում է, աստուած մի՛ արասցե, դուլուղեմեն մեբաշ դուս արին. (Անանին թաշկինակով ծածկում է աչքերը և լաց է լինում:) առուտուր չի գիդի, վուր գնա նուր մեկանց փուղ աշխատե, ինչո՞վ պիտի ապրինք, ինչո՞վ, քիզ իմ հարցնում. ջուրն էկիլ ու տարիլ է միզ էնչախը... Աբա՛, Անանի ջան, էստունք էլ փի՛քր արա, է՛. մենակ սրտի հիդ գնալը վո՞ւնց կուլի. ամա Ստեփան

Դանելիչը վուր կա հավիտենական զամին է տալի միզ աստուած... Դուն հենց գիդիս Միխեիլին քիմեն պա՛կաս իմ ուզում չի՞ս, քիմեն պա՛կաս իմ հավնո՞ւմ. ամա ի՞նչ անիմ, առանց իր հորը, նա էլ մե քու հոր նման մարթ դուս գու քա... Էնղադա նա ի՞նչ կանա ուշխատի ու ճարի, վուր համ քիզ պահե, համ միզ, ու նրա հերը խոմ՝ աշքարա գիդիմ, քու արիվն էլ իմ ասում, քու մեկելներունն էլ, վուր բաց աճկով իր Միխեիլին չի թողնի վուր քիզ ուզե. էրեգ առուտյան, խո ասի էլ, իր բերնով ասավ՝ «փուղ ու բաժինք չունիք», կոսե... (Անանին նեղություն է արտահայտում:) *Դառը խոսկիր է, դա՞նա, վո՛ւրթի. ամա էս անգճովս իմացա, ա՛յ... Էտենց է, վո՛ւրթի. մարթու ճակատին գրած է՝ վուր դիփ իր սրտի ուզածը չի կանա կատարի... Էտենց վուր չլի, խոմ ամեն մարթ թաքուզածը չի կանա կատարի... Էտենց վուր չլի, խոմ ամեն մարթ թաքավուրի կնիկ... Խիլքումդ նոսատում է, դա՞նա... Հերիք է, վո՛ւրթի, աճկիրդ մի՛ խարար անի։*

ԱՆԱՆԻ

Ա՛խ, ա՛ստված, ո՞ւր էիր մարդուն սիրտ տալիս։

Նստում է իր սովորական տեղը:

ՍԱԼՈՄԵ

Սիրտը տվիլ է, վո՛ւրթի, ամա խիլքն էլ հիդն է տվի, վուր սրտին կառավարիս... Փի՛քր արա, վո՛ւրթի. փի՛քր. դուն ինքդ կու իմանաս, վուր ծուռը չիմ խոսում քի մոդ... (Մոտ է գնում գրկում և համբուրում:) *Գե՛նացվալե, Ա՛նանի ջան, լա՛վ փիքր արա... Գիդիմ վուր խոնար իս, գիդիմ վուր պուվդ չիս խնայի միզ համա, վուր ասիմ՝ ջո՛ւրը ննգի, ջուրը կու ննգնիս, ամա գոռ չիմ ուզում բանեցնի... չիս ուզում իմ է՛նղադա փիքր անիս, վուր քու խիլքն ասե քիզ՝ «հա՛»...* (Մի քանի քայլ գնում է:) *Հե՛նց արա, Ա՛նանի ջան, վուր դիփունքն ասին՝ ա՛յ, բա՛րաքալա ախվիկ։*

Դուրս է գնում ձախ դռնից։

ՏԵՍԻԼ Դ

ԱՆԱՆԻ, մենակ. փոքր ժամանակից ճետո վեր կենալով:

Ա՛խ, ա՛ստված, ինչի՞ ծանոթացրիր ինձ Միքայելի հետ... Ի՞նչ անեմ այժմ, ո՞ր ջուրն ընկնեմ ես... Մի՞թե խեղճի համար բախտավորություն չկա այս աշխարհում, մի՞թե ամեն բան առևտրի վրա է հիմնված, մի՞թե էլ սուրբ ոչինչ չէ մնում մեզ... (Կարճ լռություն:) *Ի՞նչ անեմ այժմ, ա՛ստված իմ, ի՞նչ անեմ... Մի՞թե պետք է ծախեմ ինձ ծնողաց համար... Օ՜հ, թե թանկ գնով է վճարվում ծնողաց խնամքը... Ինչ որ ուրիշների մեջ ծաղրել եմ, այժմ ինձ է հանդիպում—հարստությանը պետք է զոհեմ ինձ...* (Դառը ծիծաղով:) *Դրսից զար ու փարչայով փայլեմ, իսկ սրտիցս արյուն կաթի... Աշխարհը պետք է ինձ երանի տա, բայց ես՝ այն ոսկու և արծաթի մեջ, մերջի՛ն աղքատին... Ի՞նչպես հաշտվեմ ես, ի՞նչպես, այսպիսի դրության հետ... ի՞նչպես դառնամ թեթևամիտ Բրիլիանտովի կինը... Նրա հետ կառքի մեջ նստած լինիմ ու Միքայելը ինձ տեսնի, արդյոք ի՞նչ պետք է կարծե նա իմ մասին, ո՞ւմ հետ կհամեմատե նա ինձ... Չէ՛, չեմ կարող ես Միքայելին ուրանալ. առանց նրան աշխարհս սուտ է, առանց նրան կյանք չկա ինձ համար...* (Սաստիկ հուզմամբ:) *Ա՛խ, ա՛ստված, ինչի՞ ստեղծեցիր ինձ, ինչի՞ տվիր ինձ հոգի, որ շունչ եմ քաշում, ինչի՞ տվիր ինձ սիրտ, որ այսքան սիրեմ Միքայելին...* (Ձեռքը դնելով ճակատին:) *Էլ չգիտեմ ինչ եմ ասում... Գլուխս այրվում է, աչքերս մթնում, առաստաղը գլխիս պտույտ է գալիս։*

Ընկնում է իր աթոռի վրա և հեկեկալով լաց է լինում երկար ժամանակ։

ՏԵՍԻԼ Ե

ԱՆԱՆԻ, ՄԻՔԱՅԵԼ

ՄԻՔԱՅԵԼ, մտնում է խորքի դռնից, առաջ է գալիս, մի վայրկյան լուռ նայում է Անանուն և ճետո մոտենալով:

Անանի՛։

ԱՆԱՆԻ, վեր թռչելով տեղից:

Ա՛խ, Մի՛քայել, դո՞ւ ես... (Աչքերը սրբում է և ձեռքը բռնում:) *Ոգնի՛ր ինձ, Մի՛քայել, օգնի՛ր... ինձպես տարաբախտ աղջիկ չկա...*

ՄԻՔԱՅԵԼ

Հանգստացի՛ր, հո՛գիս, (Համբուրելով ձեռքը:) *հանգստացի՛ր, նստի՛ր դեռ այստեղ...* (Նստեցնում է:) *Ինչի՞ ես այդպես լաց լինում...* (Նստելով կողքին:) *Պատմի՛ր, ի՞նչ է պատահել։*

ԱՆԱՆԻ

Մեզ հավիտյան բաժանում են, Մի՛քայել...

ՄԻՔԱՅԵԼ

Բաժանո՞ւմ... հավիտյան բաժանո՞ւմ... Բայց եթե դու չե՞ս կամենալ, Անանի, ո՞վ կարող է մեզ բաժանել։

ԱՆԱՆԻ

Մնողներիս խեղճությունն ու հորդ ագահությունը...

ՄԻՔԱՅԵԼ

Հորս ագահությունը մեզ հետ գործ չունի, Ա՛նանի, իսկ քո ծնողներին ի՞նչ է հարկավոր. հարստություն չեմ կարող խոստանալ, իհարկե, բայց դու լավ գիտես, որ նրանց անկարիք ապրելու համար ոչինչ չեմ խնայիլ...

ԱՆԱՆԻ

Ա՛խ, Մի՛քայել, դու դեռ բոլորը չգիտես... Մայրս ստիպում է ինձ թեթևամիտ Բրիլիանտովին ուզել...

ՄԻՔԱՅԵԼ

Դո՞ւ էլ արտասանեցիր այդ անունը, դո՞ւ էլ ասացիր այդ խոսքերը... Գիտեմ, գիտեմ, Ա՛նանի, բոլորը գիտեմ, ես բոլորը լսել եմ... (Վեր կենալով։) *Այս ի՞նչ դժոխային հնարք են գործ դրել... Հայրս և մայրդ երդվել են մեզ քամբախտացնել. բայց, դո՞ւ, դո՞ւ, Ա՛նանի, մի՞թե դու համաձայն ես, մի՞թե կարելի է թվում քեզ այդ ամուսնությունը, մի՞թե հարստության զորությունը կարողացավ և քո սիրտը հափշտակել...* (Անանին վշտանում է։) *Չէ՛, չէ՛,* (Նստելով կողմին։) *ների՛ր ինձ. ես չեմ կամենում այդ բանին հավատալ. դու չես ուրանալ ինձ, դու չես կարող ուրանալ...* (Ձեռքերը բռնելով։) *Այնպես չէ՞, Ա՛նանի, դու ինձ չե՞ս ուրանալ... Դու իմն ես, իմ նշանածն ես, դու խոստացել ես իմս լինելու. մայրդ ես խոստացավ. նա միայն մի քանի օրով հետաձգեց մեր ամուսնությունը, նա իրավունք չունի քեզ հետ այդպես վարվելու... Դու մի՛ վախենար, ես եմ քո պաշտպանը, քո տերը, քո ամուսինը, ո՛չ ոք չէ կարող խլել քեզ ինձանից, ո՛չ ոք, քանի որ դու ինքդ չես կամենալ...*

ԱՆԱՆԻ

Բայց, մա՛յրս, մա՛յրս, Մի՛քայել... նա այժմ ոչինչ չէ կամենում լսել...

ՄԻՔԱՅԵԼ, վեր կենալով։

Մա՛յրս, մա՛յրս... Երեխա ես դու, ի՞նչ է... Ո՞վ կարող է քո կամքի հակառակ պսակ դնել գլխիդ... Ահա՛ թե քո չափազանց խոնարհությունը

ո՞րպիսի ծայրահեղության է հասել, որ համարձակվում են մինչև անգամ այդպիսի առաջարկություններ անել քեզ... Օ՜հ, ա՛ստված իմ, այս ի՞նչ մարդիկ են, այս ի՞նչ հասարակություն է. պատիվ, սեր, զավակ, խղճմտանք, բոլորը բոլորն ունայն խոսքեր են այստեղ. այս հասարակության երջանկությունը միմիայն փո՛ղն է և եթե այդ փողը մարդու սրտի մեջ անգամ լինի պահված, սիրտը կճղեն որ միջից հանեն... (Լռություն։) *Գնա՛, գնա՛ ուրեմն դու էլ ծախի՛ր քեզ՝ մորդ կամքը կատարելու համար։*

ԱՆԱՆԻ, մոտենալով։

Մի՛ ասիր, Մի՛քայել, մի՛ ասիր, մի՛ արտասանիր այդ դառը խոսքերը. թո՛ղ ես չլսեմ քո բերանից այդպիսի նախատինքներ, սիրտս առանց այն էլ կտրատվում է...

ՄԻՔԱՅԵԼ

Ների՛ր, խնդրեմ...

ԱՆԱՆԻ, շարունակելով։

Ինձ ույժ է հարկավոր, Մի՛քայել, և այն ույժը ես քեզանից եմ խընդրում, քե՛զանից, Մի՛քայել. դու ես իմ բարի հրեշտակը, իմ եղբայրը, իմ հայրը... Ասա՛, ի՞նչ անեմ, ի՞նչպես ազատվեմ ես այս հուսահատ դրությունից...

ՄԻՔԱՅԵԼ

Հուսահատվելով ոչինչ չես կարող օգնել, իմ քա՛ղցր Անանի, այստեղ հարկավոր է միայն սառը դատողություն և հաստատուն կամք...

ԱՆԱՆԻ

Դատողությունս էլ կորավ, Մի՛քայել, ու կամքս էլ. ես ինքս չեմ հասկանում թե ի՞նչ եմ անում կամ ի՞նչ եմ խոսում...

Անցնում է բեմի աջ կողմը։

ՄԻՔԱՅԵԼ

Հորդ հետ խոսե՞լ ես, Ա՛նանի. նա ի՞նչ է ասում. մի՞թե այն բարի մարդն էլ այն աստիճան քարացավ, որ քո արտասուքներն անգամ չեն շարժում նրա սիրտը։

ԱՆԱՆԻ

Հորս դեռ չեմ տեսել, նա տանը չէ. բայց մի՞թե նրան չես ճանաչում. նա միայն մեկ կամք ունի, այն է՝ միմիայն մորս կամքը. նա ի՞նչ կարող է, կամ ի՞նչ օգնություն պետք է սպասել նրանից։

ՄԻՔԱՅԵԼ, կարճ լռությունից հետո:

Անանի՛, դու ինձ սիրո՞ւմ ես։

ԱՆԱՆԻ

Մի՞թե դու կասկածում ես, Մի՛քայել։

ՄԻՔԱՅԵԼ

Ուրեմն իսկույն վճռի՛ր՝ կամ ինձ հետ խեղճ ապրել մեր սեպհական աշխատանքով, կամ մորդ խորհրդով հարստանալ. երկուսից մեկը...

ԱՆԱՆԻ

Ա՛խ, Մի՛քայել, ի՞նչ ես ասում. ի՛նչ հարստություն կարող է ինձ տալ այն երջանկությունը, որ ես կունենայի քեզ հետ ապրելով, թեկուզ ամենադառն աղքատության մեջ... Ես պատրաստ եմ շարշարվել, տանջվել, բոլոր նեղություններն ուրախությամբ տանել, միայն թե քեզ հետ լինիմ։

ՄԻՔԱՅԵԼ

Ջե՛ռքդ տուր. (Ձեռքը բռնելով:) դնա՛նք իսկույն պսակվենք... Արի՛, արի՛ շուտով հեռանանք այստեղից։

ԱՆԱՆԻ, բաց թողնելով ձեռքը:

Փ՞նչ ես ասում, Մի՛քայել... Ծածո՞ւկ, առանց ծնողներիս գիտության։ հեռանալ տանի՞ց, փախչե՞լ ուրեմն. անկարելի է, Մի՛քայել, ա՛նկարելի. մահն ավելի լավ է ինձ համար, քան թե այդ բանը. էլ աշխարհի երեսին չեմ կարող նայել ես...

ՄԻՔԱՅԵԼ

Սուտ էին բոլոր իմ հույսերը. դու արդեն նվիրել ես քո սիրտը Ստեփան Դանելիչի որդուն։

ԱՆԱՆԻ

Խնայի՛ր ինձ, Մի՛քայել, խնայի՛ր. եթե սիրտս նրան լինեի նվիրած, էլ այսքան արտասուք չէի թափել... Ես նրան ա՛յնքան եմ դանկանում, որքան դժոխքի կրակը...

ՄԻՔԱՅԵԼ, ձեռքը բռնելով:

Գնա՛նք ուրեմն, Ա՛նանի. բոպեն թանկ է մեզ համար... (Մի ճանի քայլ տանելով:) *Ուրիշ փրկություն չկա։*

ԱՆԱՆԻ, ազատվելով:

Կա՛ց, կա՛ց, Մի՛քայել... ամբողջ մարմնով դողում եմ, ծնկներս ծալվում են... Ժամանա՛կ տուր ինձ վերջին անգամ խոսեմ մորս հետ. ոտքերը կընկնեմ, կաղաչեմ, որ ինձ կենդանի գերեզման չդնե...

Ընկնում է աջ կողմի բազկաթոռի վրա:

ՄԻՔԱՅԵԼ

Իզուր կլինի, Ա՛նանի, քո աղաչանքը. նա քեզ խղճացողը չէ, նա չի կարող խղճալ, նրա սիրտը մոր սիրտ չէ. այժմ ես նրան լավ եմ ճանաչում.... Նա ի՞նչ տեսակ է հասկանում երջանկությունը...

ԱՆԱՆԻ

Ա՛խ, խելքս խառնվում է...

ՄԻՔԱՅԵԼ

Գնա՛նք, ասում եմ, գնա՛նք իսկույն, և եթե կամենում ես վաղը բոլորովին կորչենք այստեղից, ուրիշ քաղաք գնանք, հե՛ռու, հե՛ռու, ո՛ւր որ կամենաս. ամեն տեղ մենք միասին երջանիկ կլինինք... Գնա՛նք, սիրելի՛դ իմ Անանի. մի՞թե ինձ չես հավատում, մի՞թե իմ սերը հաստատ հայտնի չէ քեզ... Վե՛ր կաց, ինչի՞ ես կաշկանդվել, վե՛ր կաց, իմ սի՛րուն Անանի. իմ քա՛ղցր Անանի. ոչինչ չեմ խնայիլ քեզ համար՝ հանգըստություն, կյանք, բոլորը, բոլորը քեզ եմ նվիրել. քո բոլոր կամքը, քո ամենափոքր պահանջն անգամ սրբությամբ կկատարեմ... Վե՛ր կաց, մի՛ լաց լինիր, այլևս ժամանակ մի՛ կորցնիր, շտապի՛ր... (Վեր է կացնում:) *Գնա՛նք...*

ԱՆԱՆԻ

Չեմ կարող, Մի՛քայել, իսկույն վայր կընկնեմ... (Դողում է:) *Խղճա՛ ինձ, Մի՛քայել, աղաչում եմ՝ խղճա՛...*

Ընկնում է նույն բազկաթոռի վրա:

ՄԻՔԱՅԵԼ

Սակայն ես քեզ այդպես թողնելու չեմ, ես իսկույն կերթամ հորդ կգտնեմ, ամենայն միջոց գործ կդնեմ, որ ջոնե նա գթա... Վերջապես նա մարդ է, մորդ պես քարասիրտ չէ. թո՛ղ գա տեսնի քո արտասուքները, նա անպատճառ կխղճա քեզ... Մի՛ վախենար, հո՛գիս, (Համբուրելով ձեռքը:) *ես իսկույն կվերադառնամ...* (Գնալով:) *իսկույն կբերեմ հորդ..*

Դուրս է գնում խորթի դռնից:

ՏԵՍԻԼ Զ

ԱՆԱՆԻ, մենակ. երկար լռությունից հետո վեր է կենում:

Գնա՛ց... Ի՞նչ անեմ, ա՛ստված իմ, ի՞նչ անեմ այժմ... Ո՞ւմ հետ կարող եմ փոխել Միքայելին. ո՞վ կա նրա նման... Այնքան սիրել՝ որքան նա է ինձ սիրում, ո՞վ կարող է...

ՏԵՍԻԼ Է

ԱՆԱՆԻ, ՍԱԼՈՄԵ, որ մտնում է ձախ դռնից:

ԱՆԱՆԻ, բռնկելով մոր ոտքերը և փաթաթվելով ծնկներին:

Մի՛ տարաբախտացնիր ինձ, մա՛յրիկ. առանց Միքայելին ես չեմ կարող ապրել... Մի՞թե Ստեփան Դանելիչի հարստությունը ինձանից ավելի թանկ է քեզ համար. եթե ես չեմ լինի, ի՞նչ հարկավոր է քեզ այն հարստությունը:

ՍԱԼՈՄԵ

Վի՛կաց: Ի՞նչ իս անում. էտ էիր փիքր անում ինչրու հիմի՞, էտ՝նց չուստ քամու տվիր իմ խրատնիրը՞:

ԱՆԱՆԻ, վեր կենալով:

Ի՞նչ անեմ որ սիրտս Միքայելին է ջաշում...

ՍԱԼՈՄԵ

Էլի Միխեի՞լ. էտ խում էլախտ ասինք էլ ու լսեցինք էլ. խի՛լքումդ չնստեցավ վուր անկարելի բան է՞:

ԱՆԱՆԻ

Ի՞նչ ես կամենում դո՛ւ, մայրիկ, ի՞նչ... Բրիլիանտովի հարստությունը չէ կարող տալ քեզ այն՝ ինչ որ Միքայելը չի խնայիլ քեզ. նա իր աշխատանքով, եթե իմ մատի պտղունցով գիշերը ցերեկ կշինենք ու քո սրտի բոլոր ուզածը կկատարենք:

ՍԱԼՈՄԵ, հեգնորեն:

Բաս ի՞նչ իք արի:

ԱՆԱՆԻ

Հավատա՛, մա՛յրիկ, որ մենք մեր սեպհական աշխատանքով ավելի կարող ենք օգնել քեզ, քան թե Բրիլիանտովը իր ամբողջ հարստությունով... Ամեն հարուստ իր համար է հարուստ և ոչ մեկ հարուստ իր ունեցածը խեղճերին չէ բաժանել. մի՛ հուսար թե նրանք քեզ հազարներով փող կտան...

ՍԱԼՈՄԵ

Ցիս նրանց հազարնիրը չիմ ուզում. յիս քու լավութինն իմ ուզում:

ԱՆԱՆԻ

Եթե իմ լավությունն ես ուզում, մա՛յրիկ. թո՛ղ ես Միքայելին ուզեմ:

ՍԱԼՈՄԵ

Դուն «հա ու չէ» չի՛ս իմանո՛ւմ, թե գժվիլ իս ու տուտուցացիլ իս, չիմ դիդի. չիմացա՞ր, վուր նրա հերը չէ ուզում, խուլ խում չի՞ս:

ԱՆԱՆԻ

Ի՞նչ անեմ թե հայրը չէ ուզում. այդ չէ արգելում Միքայելին ինձ ուզել. նա այս րոպեիս այստեղ էր...

ՍԱԼՈՄԵ, բեղմիչելով:

Ո՞վ էր էստի. Միխեիլը՞... էն վո՞ւնց էկավ ու գնաց վուր չտեսա... էս ի՞նչ ժամանակ էկավ, ա՛ստուած գիդենա. ո՛վ էր իմացի էսենց տղա ու ախչկա խոսիլը... Դիփ իմ միդն է, վուր մոդնի ժամ էկա, վիկալնիս ու քարգուրձ անիս ինձ... Իժում ի՞նչ էր ասում էն բեհայենս:

ԱՆԱՆԻ, զառնացած:

Բեհայեա՞...

ՍԱԼՈՄԵ

Բաս ի՞նչ է վուր բեհայիա չէ. յիս իր հոր բերնով ապսպրեցի, վուր քիզ նշնում իմ, ուրիշին իմ տալի, էլ ո՞ւր էր գալի. ի՞նչ քաղաքավարութին է. ի՞նչ է ուզում միզմեն, նշնած խում չիմ թողնուլ տալի քիզ...

ԱՆԱՆԻ

Նա ինձ սիրում է, մա՛յրիկ. մի՞թե սա ավելի հաստատ նշան չէ:

ՍԱԼՈՄԵ

Էտենց իս կարծում. սերը քոռացրիլ է քու աչկիրն էլ, նրանն էլ ու էլ սիվ ու սիպտակ չիք տեսնում վունց մեկդ... (Հանելով գրպանից մատանին:) Ցիս քիզ ասում իմ՝ ա՛ռ էս մատանիքն ու ձեռիս ուշ՝ արա։

ԱՆԱՆԻ

Չեմ կարող, մա՛յրիկ, չե՛մ կարող, մորթես էլ՝ չե՛մ կարող...

ՍԱԼՈՄԵ

Վո՞ւնց թե չիս կանա. բաս ցիս էլ մե՛ր չիմ քունը՞... Ջուր չիր կտրվի ու քիզ չէի բերի... Էս է իմ ամագը՝, էտենց իս վչարո՞ւմ... Ինչի՞ քիզ ուրիշներու պես կոպով ու կոխպած չմինձացրի, էնչախը կու իմանեիր իմ գինը... Ցիս իմացիլ իմ, վուր ուսումն ավելի պիտի սորվեցնի հորն ու մոր պատիվը, չէ թե էտենց հակառակ խոսիլը... (Անանին թաշկինակը տանում է աչքերին:) Բռնե՛, ասում իմ, բռնե՛ էս մատանիքն ու մի՛ անիծիլ սա ինձ քու ծնելու ու իմ ծնելու սահաթը. Հանե՛ Միխաիլը մտկեմեդ։

ԱՆԱՆԻ

Ա՛խ, ա՛ստված, որ ո՞չ մտքիցս է հեռանում, ո՞չ սրտիցս, մա՛յրիկ, ի՞նչ անեմ...

ՍԱԼՈՄԵ, հեռագնեան տամանալով:

Մտկեմետ չէ՛ հիռանում ու սրտեմե՛տ... Դե՛, գնա՛, դուրը բաց է... Գնա՛ ձեռը բռնե ու էս սահաթիս հի՛դը փսակվի... Գնա՛ աշխարքի ղե՛նդ դառի. գնա՛, էլի՛, գնա՛, քիզ իմ ասում, գնա՛ էտ անենամուսուիթինն արա՛, ուրիշ էլ ի՞նչ է մնում... Ա՜խ, գեդինը պատռվի ու քիզ դե՛վեր տանե, հրա՛...

ԱՆԱՆԻ

Բավական է, մա՛յրիկ, էլ ես ոչ ոքի չեմ ուզում, ո՛չ Միքայելին և ոչ էլ մի ուրիշին։

ՍԱԼՈՄԵ, շարունակելով:

Թե՛հայիա, կա՛պ կտրած, չէ էլ ամանչում... Ցիս մեր ըլիմ, քիզ բան ասիմ ու իմ խոսկը չկատարի՞ս... Էլ ի՞նչ մեր, ի՞նչ կոնիս դուն մեզ... քու մերը չար սատանեն է, վուր մտիլ է ջանտ ու էլ վունչիչ չիս իմանում։

ԱՆԱՆԻ

Խղճա՛ ինձ, մա՛յրիկ, աղաչում եմ քեզ, խղճա՛ ինձ. Թո՛ղ աշխարհից հրաժարվեմ, Թո՛ղ կուսանաց մտնեմ՝ ցիշեր ցկրեկ աղոթք կանեմ քեզ

համար, իմ քույրերի համար, բայց Բրիլիանտովի հարստության կերակուր մի՛ շինիր ինձ, մա՛յրիկ։

ՍԱԼՈՄԵ

Ա՛յ, փչանաս, փչվիս, վի՛ր ջնջվի քու անումը, քիզ էլ թաղիմ, քու քվիրտերանցն էլ, յիրիքիտ մե նաշումը տեսնիմ...

ԱՆԱՆԻ, ադիոդարս:

Օ՜, մա՛յր իմ, մա՛յր իմ...

ՍԱԼՈՄԵ

Մայր աստուձը խռով կենա քիզ, վուր էլ ցիս քու մերը չըլիմ. իմ մոր մեչկը չորցիլ էր, վուր ինձ չէր բերի ու քիզ չէի ունեցի...

ԱՆԱՆԻ, բեմի ծախ կողմը կանգնած:

Ա՛խ, ա՛ստված, ինչի՞ հենց այս բոպեիս հոգիս չես առնում։

ՍԱԼՈՄԵ, կանգնած բեմի աջ կողմը:

Ա՛ղանչաք արա աստծուն, ա՛ղանչաք, վուր մերաչ մեռնիմ ցիս, թաղիս ինձ, մազիրդ գցլտելով լաց ըլիս ինձ վրա, սուտ սիվիր հագնիս, մե էրկու ամսվան վրա մարսիս իմ մահը ու իժում գնաս քու սրտի ուզածն անիս՝ քու Միխեիլին ուղիս. տեսնիմ թե վո՞ւնց է խերում քիզ աստուձ...

ԱՆԱՆԻ, սաստիկ հուզված՝ արագ մոտենալով մորը:

Դուք իմ մահն եք կամենում, մայր, (Խլելով մատանին:) շուտով կտեսնեք...

Մի քանի քայլ շտապով գնում է դեպի ծախ:

ՏԵՍԻԼ Ը

ՆՐԱՆՔ, ՄԻՔԱՅԵԼ, ՅԱԳՈՐ ՍԻՄՈՆՈՎ

ԱՆԱՆԻ, տեսնելով Միքայելին, մտնելիս խորքի դռնից։

Ա՛խ...

Շփոթվելով բռնում է ձախ կողմի աթոռը:

ՄԻՔԱՅԵԼ, սառնորեն ողջունելով Սալոմեին՝ շտապով մոտենում է Անանուն, մինչդեռ Ցագոր Սիմոնիչը նոր է մտնում նույն դռնից:

Ահա՛ և հայրդ, Անանի. նա մեզ հետ համաձայն է. նա քո երջանկությունն է ցանկանում...

ՍԱԼՈՄԵ, Ցագոր Սիմոնիչին, բարկացած:

Թե մի խոսկ ասիլ իս, գլուխս էստի էվեստ կու սպանիմ, գի՛դե արա՛բիր... (Անանուն աջ ձեռքով ձախ դուռը ցույց տալով:) Հի՛ռացի էս-դանց։

ԱՆԱՆԻ, Միքայելին:

Ների՛ր ինձ, Միքայել, ների՛ր... ես վճռեցի զոհել ինձ մորս կամքին... Մնա՛ս բարյավ հավիտյան...

ՄԻՔԱՅԵԼ, Անանու ձեռքը բռնելով:

Այդպե՞ս, Անանի...

ԱՆԱՆԻ, ազատելով ձեռքը:

Ա՛խ, Միքայել...

Գնում է դեպի ձախ դուռը:

ՄԻՔԱՅԵԼ, շվարված:

Օ՜, ես թշվա՛ռս...

Խփում է ճակատին և մնում անշարժ. իսկ Անանին ուշաթափ՝ հենվելով դռանը, մի վայրկյան նայում է Միքայելին և արագ ճակատը բռնում:

ՍԱԼՈՄԵ, արագ գնալով, Միքայելին:

Քու հերն է՛սենց կամեցավ, վո՛ւրթի, մինք ի՞նչ անինք։

Թեքց բռնելով՝ դուրս է տանում Անանուն, որը ձեռքը ճակատին, հուսահատ հետ է գցում գլուխը: Ցագոր Սիմոնիչը՝ կանգնած Միքայելի ձախ կողմը, նայում է նրան. ուսերը բարձրացնում և թևերը բանալով արտահայտում, թե բոլորը վերջացավ. նույնպես մնում է անշարժ: ՎԱՐԱԳՈՒՐԸ: Վարագույրը կամաց-կամաց իջնում է:

Վերջ

ՔԱՆԴԱԾ ՕՋԱԽ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՔ ԱՐԱՐՎԱԾՈՎ

1872—1873

«Քանդած օջախ» կատակերգությունը նվիրված է մեծարգո պարոն **Հովհաննես Տեր-Գրիգորյանին** հետևյալ ուղերձով

ՎԱՆՈ ՋԱՆ

Դու էիր, որ 1871 թվի ամառը, Կրծանիսում, մեկ-մեկ գրում էիր ասածներս «ՔԱՆԴԱԾ ՕՋԱԽԸ» հեղինակելիս:

Նրանից դեսը կարմրշի տակով շատ շուր անց կացավ, բայց քո արած լավությունը սրտիցս չհեռացավ:

Սրա համար էլ այս աշխատանքս քեզ եմ նվիրում, որ կարդալիս միտդ բերես քեզ սիրող ու պատվող բարեկամ

Գաբրիել Սունդուկյանցից:

Թիֆլիզ,
1882 թ. հունիսի 29-ին։

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԳՈՒԼԱԲԻՆՑ ՕՍԵՓԸ, վաճառական
ՍԱԼՈՄԵ, նրա կինը
ՆԱՏՈ, նրանց աղջիկը
ԽԱԽՈ, Օսեփի հորաքույրը
ԳԵՎՈ, Օսեփի բարեկամ, վաճառական
ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՐՄԱՐՈՎ, ասորեստանցի երիտասարդ
ԼԵՊՐՈՒՆՑ ՄԱԹՈՒՍԻ ՎՈՒՐԹԻ ՓԱՐՍԻՂԸ, վաճառական
ՔԱԼԻ, նրա կինը
ԳԻԺ-ՄՈՉԻ, Լեպրոնցի մոտիկ ազգական
ՄԻԽՈ, Փարսիղի դուքսի պատի աշկերտ
ԴԱՐՉՈ, Փարսիղի դուքսի մեծ աշկերտ
ՄԱՐԹԱ, լոտոբազ այրի կին
ՆԻՆՈ, հյուր
ՓԻՓՈ, երգեցող հյուր

Լոտո ու վիշեր, լոտո խաղացող բազմաթիվ կանայք, երիտասարդներ, Սուղեքնի-Պրիստավ, նրա գրագիրը, պարտատերեր, վկաներ և ծառաներ։

Առաջին և երրորդ արարվածները կատարվում են Օսեփի տանը, իսկ երկրորդը՝ Փարսիղի տանը։

Անցքը կատարվում է Թիֆլիզում 1871-ին

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՕՍԵՓ, 45 տարեկան բարձրահասակ տղամարդ գեղեցիկ, դրավիչ դեմքով։ Երեսը ածելած, գլխի մազերը փոքր ինչ սպիտակախառն, իսկ հոնքերը և բեխերը սև։ Տեղական բոլորովին սև հագուստ՝ կաբան և անդրավարտիքը մահուդից, փողպատ և արխալուխը մետաքսից. միջքին արխալուխի վրայից արծաթե նեղ քամար, կաբայի վրայից մետաքսյա դապույտ գոտի։ Ընդհանրապես հագնված է թեև հասարակ, բայց մեծ ճաշակով։ Գործ է ածում բուխարու սև մորթե գդակ՝ ծայրը փոքր ինչ ներս ծալած և մետաքսյա կապույտ ծաղկախառն թաշկինակ։ Շարժվածքը և խոսակցության ձևերը ամենապատիվ։

ՍԱԼՈՄԵ, 35 տարեկան փառահեղ կին սև մազերով։ Առաջին արարվածում՝ երկու ձեռք եվրոպական մոդայի հագուստ, մինը—սկզբում, ամենօրյա, իսկ մյուսը—Մարմարովին ընդունելիս. ընտիր։ Երկրորդ արարվածում՝ բուն վրաց շքեղ հագուստ դոշ ու գոտկով, գլխի սպիտակ փաթաթանով և քաթիբայով, որ դարդարած է ոսկե կոճակներով և մարգարտե լայն բաֆթայով. ձեռնոցներ և գունավոր փոքրիկ հովանոց։ Երրորդ արարվածում՝ դարձյալ վրաց ամենաշքեղ մի ուրիշ հագուստ նույնպես դոշ ու գոտկով, բայց առանց քաթիբայի։ Գլուխը, նույն իսկ առաջին արարվածից, միշտ զարդարված է վրացական՝ զանազան շիբիլանեներով և ոսկեկար ճակտի-աղլուխներով։ Գործ է ածում թանկագին սակնեղենները և ոսկե ժամացույց ոսկե շղթայով։ Շարժվածքը գոռոզ, խոսակցության ձևերը փքուն։ Առհասարակ մեծ կարծիք ունի իր վրա։

ՆԱՏՈ, 18 տարեկան, շատ գեղեցիկ, բայց թեթևսոլիկ օրիորդ։ Երեք ձևով եվրոպական մոդայի շքեղ հագուստ։ Մինը՝ առաջին արարվածի սկզբում, գլխարկով, բոլով, ձեռնոցներով, վերարկուով և փոքրիկ հովանոցով. մյուսը՝ նույն արարվածի վերջում, ինչպես հիշված է իր տեղը. իսկ երրորդը՝ վերջին արարվածում, սպիտակ հովհարով։ Գլուխը բաց, միշտ եվրոպական ձևով զարդարված։ Խոսակցությունը արագ և կրակոտ, շարժվածքը կենդանի։

ԽԱԽՈ, 65 տարեկան այրի կին։ Վրաց հագուստ, գլուխը վրացնակ ծածկված հասարակ շիրիչայով և մուգ-դալամբարե ճակտի-աղլուխով, առանց քորոցի։ Մուգ-կապույտ դոշ սև թավիշե ժապավենով բոլորած և մեծ փիրուզե քորոցով ամրացրած։ Մետաքսյա սև գերիա, քիրմանե սև շալ և նույն շալից գոտի։ Ոտնամանը՝ հին ձևի սև ծուղեք և տափակ կրնկանի սև քոշեր։ Ակղրում՝ սպիտակ զաթիբա և մետաքսյա սև դապտախառն գլխի-փաթաթան։ Խոսակցությունը և շարժվածքը ծանր։ Ամենապատկառելի անձն։

ԳԵՎՈ, 45 տարեկան, հաճելի դեմքով և սպիտակախառն սև մազերով։ Երեսը աճեալ, բեխերը միջակ։ Տեղական համեստ հագուստ՝ սև մահուդե կաբա և անդրավարտիք, մուգ-կապույտ մետաքսյա արխալուխ, մուգ-մանիշակագույն մետաքսյա գոտի և Բուխարա։ սև մորթե գդակ։ Խոսակցությունը և շարժվածքը ծանր։

ԱԼԻՔՍԱՆԴՐ, 30 տարեկան, գեղեցիկ կազմվածքով, հաճելի դեմքով, սև մազերով և կարճ մորուքով, բայց կզակը աճեալ։ Հագուստը բոլորովին եվրոպական, միշտ ձեռնոցներով, գլխարկը՝ սիլինդր։ Երրորդ արարվածում՝ մուգ-կանաչ մահուդե պաշտոնական ֆրակ (վիցմունդիր) սև թավիշե օձիքով և ոսկեգոծ կոճակներով։ Գործ է ածում պենսնե։ Շարժվածքը և խոսակցության ձևերը անձնագով (ֆատ)։

ՓԱՐՍԻՂ, 35 տարեկան, միջին հասակով և տգեղ դեմքով հաստափոր մարդ։ Մազերը սև, հոնքերը հաստ, բեխերը կարճ, երեսը աճեալ։ Եվրոպական հասարակ, անճաշակ հագուստ՝ սև մահուդե լայն սերթուկ, երկար ժիլետ և փոքր ինչ լայն անդրավարտիք. փողպատը սև մետաքսյա թաշկինակից։ Կրծքին արծաթե ժամացույց սև ժապավենով։ Գլխարկը՝ փոքրիկ սև ֆուրաժկա։ Շարժվածքը և խոսակցության ձևերը ամենահասարակ։

ՔԱԼԻ, 40 տարեկան, սպիտակ. բայց տգեղ դեմքով և շեկ մազերով կարճահասակ, նիհար կին։ Հագուստը բոլորովին վրացնակ՝ չիքիլայով, ճակտի-աղլուխով և դոշ ու գոտկով։ Զարդարված է զանազան թանկագին ակնեղեններով։ Ընդհանրապես հագնված է հասարակ և անճաշակ։ Շարժվածքը և խոսակցության ձևերը գոնհի։

ԳԻԺ-ՄՈՉԻ, 30 տարեկան, սև մազերով գեղեցիկ երիտասարդ։ Բեխերը փոքրիկ, երեսը աճեալ, աչ թշին սև նիշ։ Տեղական համեստ, բայց ճաշակով հագուստ՝ սև մահուդի կուրծքը բաց կաբա, նույն մահուդից լայն անդրավարտիք, սպիտակ չթե արխալուխ, մեջքին արխալուխի վրայից արծաթե նեղ քամար, կրծքին ժամացույցի հասարակ կարճ շղթա և գլխին սև փոքրիկ ֆուրաժկա։ Գործ է ածում մետաքսյա դեղին ծաղկախառն թաշկինակ, որ սկզբում գցած ունի պարանոցին, ծայրերը կրծքի կողմից քամրի տակ ամրացրած։ Շարժվածքը կենդանի, խոսակցությունը կրակոտ։

ՄԻՆՈ, 16 տարեկան, կարմիր երեսանի, սև մազերով պատանի։ Սև սերթուկ, դեղին չթե արխալուխ, կաշվե սև նեղ քամար, շատ նեղ ու կարճ գունավոր անդրավարտիք և փոքրիկ սև ֆուրաժկա։

ԴԱՐՋՈ, 25 տարեկան, սև մազերով, փոքրիկ բեխերով և խորամանկ դեմքով երիտասարդ։ Տեղական հագուստ՝ մահուդե կուրծքը բաց սև կաբա։ Մետաքսյա արյունագույն արխալուխ, կուրծքը ոսկեթել ժապավենով բոլորած, մոխրագույն մահուդե անդրավարտիք, արծաթե նեղ քամար արխալուխի վրայից, կրծքին ժամացույցի ոսկե շղթա և ձեռքին փոքրիկ սև ֆուրաժկա։

ՄԱՐԹԱ, 50 տարեկան, կարմիր և լիքը երեսով, սև մազերով ու բարձրահասակ հաստափոր կին։ Բոլորովին վրաց հագուստ՝ մետաքսյա մուգ-միխակագույն գերիա և սև, բաց ծաղկախառն, լայն ժապավենից դոշ ու գոտիկ։

ՓԻՓՈ, 30 տարեկան, գեղեցիկ, կրակոտ կին, վրաց շքեղ հագուստով։ Երգում է հիանալի։

ՆԻՆՈ, 35 տարեկան, նիհար կին, վրաց նույնպես շքեղ հագուստով։

ԲԱՋՄԱԲԻՎ ԿԱՆԱՅՔ (մոտավորապես քսան հոգի), զանազան հասակի, բոլորն էլ վրաց շքեղ հագուստներով։

ՕՐԻՈՐԴՆԵՐ, եվրոպական հագուստներով, երկու-երեք հոգի։

ՍԻԻԴԵԲՆԻ-ՊՐԻՍՏԱՎ, եվրոպական հագուստով և պաշտոնական շղթայով։

ԴՐԱԳԻՐ, եվրոպական հագուստով։

ՊԱՐՏԱՏԵՐԵՐ և ՎԿԱՆԵՐ (մոտավորապես հինգ հոգի), տեղական և եվրոպական հագուստներով։

ԾԱՌԱՆԵՐ, մինը ֆրակով և սպիտակ ձեռնոցներով, մյուսը շքեղքեղի ընտիր հագուստով։

ԱՐԱՐՎԱԾ ԱՌԱՋԻՆ

Օսեփի տանը բավականին հարուստ սենյակ բանկագին կահ-կարասիքով: Առաստաղից կախած է չան հանված մոմերով. հատակը ծածկած է զորգով: Աջ ու ձախ դռներ: Հարևան, աջ կողմը՝ լայն դուռ. փեղկերը բացված. և դռան հետը հանդիսանալով, ինչ ձախ կողմը՝ լուսամուտ, որի միջով երևում է պարտեզը: Դռներն ու լուսամուտը զարդարված են գեղեցիկ դրապերիներով: Սենյակի աջ կողմը՝ բազմոց մեծ և փոքրիկ սեղաններով, որոնց ծածկված են թանկագին գունավոր սփռոցներով. ձախ կողմը՝ զորգով, ճեշտալի և մուրճաճներով զարդարած տախտակ: Որ հարկն է սրբանոր, բազկաթոռներ, հաստված լապտերներ և հանված մոմերով աշտանակներ ու կանդելաբրներ: Յերեկ է:

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ՍԱԼՈՄԵ, ԽԱԽՈ

ՍԱԼՈՄԵ, բեմի խորքում, նախասենյակի դռանը:

Համեցե՛ք, համեցե՛ք... Ա՛յ, տերը բարի տա քիզ, բատոնո ջան, ջափա քաշեցիր:

ԽԱԽՈ, դաթիբայով, գալիս է նախասենյակի աջ կողմից:

Բարի լուս ձիզ: (Առաջ գալով և դաթիբան վեր առնելով:) *Ի՞նչ իս հայ-հարա ապսպրի:*

Դաթիբայի մեկ ծայրը տալիս է Սալոմեին:

ՍԱԼՈՄԵ, դաթիբան ձգելով:

Ի՜հ, բատոնո ջան, հե՛ստիկ իմ, հե՛ստիկ իմ, վուր դանակ խփին սրտումս, մև պուտ արուն չի կաթի:

Խոսելով ծալում են դաթիբան:

ԽԱԽՈ

Ի՞նչ է, չէ՞ ըլո՞ւմ:

ՍԱԼՈՄԵ

Աբա վո՞ւրդանց կուլի, բատոնո ջան. նրանք ութ հարուր թումնի վրա զայիմ կանգնած ին, ու Օսեփին էնղադա չէ տալի. խոմ կու ճանչնաս ի՞նչ մկրատն է:

ԽԱԽՈ

Նա էլ ուզնավոր է, քա՞:

ՍԱԼՈՄԵ

Ախար, աստուած կու վիկալնե՞, բատոնո ջան, վուր մև էրկու հարուր թումնի խաթիր է՞ս հանգի բանը մոշլա ըլի՞, է՞ն հանգի տղին ձեռնեներեմես գնա՞, է՞ն չնի ու փառքի տերը՞:

ԽԱԽՈ

Էտենց իր ասածուքինն էլ ի՞նչ է, քա՞:

ՍԱԼՈՄԵ

Աբա՛, բատոնո ջան, հենց էտու համա ջափա տվի քիզ, վուր մև Օսեփի հիդ խոսիս, էգեբա բան հասկացնիլ տաս, հենց քու Սիսոն պրծնի ամեն ցավեմեն:

ԽԱԽՈ

Կու խոսիմ, կու խոսիմ, քաս խոմ էտենց չինք թողնի, վուրթի: (Մալած դաթիբան դնում է տախտի ճեշայի տակ և ոտները կախ գցած վրան նստում:) *Վի՜հ, գենացվա, էս քուչի քարիրը խո վուտնիրս կոտրատից:*

ՍԱԼՈՄԵ, նստելով աթոռի վրա:

Ա՛յ, տերը բարի տա քիզ, բատոնո. կամարկատարն ըլի քու վուրթերանց համա բարեխոս, վունցոր հիմի դուն բարի իս խոսում-իմ նատոյի համա:

ԽԱԽՈ

Նատոն կի իմը վուրթի չէ, թե ի՞նչ է. վենացվալե նրա պետրած ջանին. ո՞ւր է, տանը չէ՞:

ՍԱԼՈՄԵ

Վունց չէ, շուր է հաքնում... Աբա դուն գիդիս, բատոնո ջան, վունցոր կու խոսիս. էգեբա գլուխ բերիս էս բանը: Էս օր էվետ կտրական ջուղաբ ին ուզում. առուտեան վաղ-վաղ էստի էր էն տղի քուրը, հարեա էլի գու քա:

* Ասում են և առուտեանն:

ԽԱԽՈ

Է՛ս սահաթիս, է՛ս սահաթիս, վուրթի, դուն դնշացի՛. ո՞ւր է Օսիփը, վո՞ւրթենն է։

ՍԱԼՈՄԵ

Բան ունե, հորես դուս գու քա. կանգնիլ է թե քախկրցու պիտի տամ, կոսե։

ԽԱԽՈ

Հա, ի՞նչ է, վուրթի, լավ քախկրցին ուփրո լավ չէ՞, վուր ջիբումը փուղիրը չըխչըխկում ըլի՞։

ՍԱԼՈՄԵ

Արա էտ խո՛սկ է, վուր դուն իս ասում, բատոնո ջա՛ն. վո՞ւր քաղկրցին գու քա Մարմարինց Ալեքսանդրի հիդ. քախկրցերու հա՛տն ու կտուրն է՛. նրա մարիփաթն ամի մենակ տասը քախկրցի։ Էն օրն էլի էստի էր վիգիտով, խիլքիս ծերը գնաց, քու արիվը, նրա արարմունքի վրա. ինքն էլ իում ջահիլ, սիրուն, ուսում առած, լավ տիղ, լավ տոնլուղ ու օրն օրվան վրա խիստ առաչ կէհա, կոսե, կուլի վիրչը գուբերնատոր էլ դառնա, կոսե։

ԽԱԽՈ

Դիփ լավ, Սալոմե ջան, ամա վուր բանը գլուխ չգա, չարեն ի՞նչ է. վուրն էլ պիտի տղամարթուն լսիք, իր օրումը քաղցած չին մնա, անկարիք կու անցկացնին իրանց օրը։ Ի՞նչ է, բան իք չինի ձեզ համա՝ չի՛նովնիկ, չի՛նովնիկ։

ՍԱԼՈՄԵ

Լավ իս ասում, բատոնո ջան, ամա Նատոն քախկրցի չէ ուզում, գլուխը մահու է տալի... Ո՞ւր է՝ էրնեկ չի՛ ըլի ուզե, վուր գլխամեռ չի ուլախանա. ամա քանդվի հիմիկվան ժամանակը. էս դուս էկավ դրանց ուսումեմեն, էլ հորն ու մորը չին լսում։

ԽԱԽՈ

Հեի՛ գիդի աշխարք, հայ-թե փոխվեցար. Քուռն ու քարափը էլի էնդունք է ու մարթիքը ուրիշ դառան... Ի՞նչ իմացա, Սալոմե, Լեպրոյինք էլ չալիշ ին գալի, կոսե. ղո՞ւրթ է՞։

ՍԱԼՈՄԵ

Բա՛ս, բատոնո ջան, չարեչար մոցիքլիր է, վուր բանում է նրանց տանեմեն... Աբա աստուձ կու վիկալնե՞, վուր է՛ն հանգի տղեն նրանց փեսա դառնա ու իմ ախչիկը մնա՞, կուպե՛ծի կնիկ չինի՞մ։

ԽԱԽՈ

Նրանք էլ վուր մարթ դառնա՞ն... Լե՞պրոյինց Փասոն... Փա՛ռք քիզ, աստուձ, փառք, էս էլ հալբաթ ժամանակի հիդ է գալի։ Էրեգ չէր մեկել օրը բազասխանումը աշկիրտ էր, հենց գիդիմ աճկիս առչիվը կանգնած է. կանանչ կամլոտե կաբեն հաքին, նիղ սոսանի գոդիկը, արիալուիի արմընգնիրը դուս թափած, լափչըքնիրը չուրս տիղ կարկտնած, շալակը շալկին կու բարցեին վրեն խղճինը։ Քանի ջեր է թոփերով չթիր դիվիր բերի միր տուն գազը ձեռին ու գրոշներով շագիրդանա տարի միզմեն... Վայ-ցե՛ն, հիմի մարթ է դառի. գլխումը փամփելով տասը ջեր հիդ ու հիդ կու ղրգեինք։ Ամա սուտ կու խոսեր, սուտ կու խոսեր, Սալոմե, վուր տերը թափե ու աստուձ ազատե։ Ի՞նչ անիս՝ հալալութինը քաղցած սպանում է մարթու։

ՍԱԼՈՄԵ

Հենց էտ Փասոն է, բատոնո, վուր հիմի Վասիլ Մաթվեիչ ին ասում դիփունքը։

ԽԱԽՈ

Նրա մամա Մաթուսին էլ վուր Մաթվեիչ ին չինի՞, ո՞վ դիմնա նրանցը։ Փի՛նալի Մաթուսը քա՛նի ջեր է իմ քոշիրը կարկտնի. դուքանը Նորաշնի թաղումն ուներ։ Տե՛ր աստուձ, դիփ տակն ու վրա էլավ աշխարքը...

ՏԵՍԻԼ Բ

ՆՐԱՆՔ, ՆԱՏՈ

ՆԱՏՈ, մտնելով ձախ դռնից, դրսի հագուստով։

Մամաշա՛... Մամիդա ջան, է՛ստի ի՞ս։

Փաթաթվում է և համբուրում կուրծքը։

ԽԱԽՈ

Մեռնի մամիդեն պետլած ջանիս։ (Համբուրում է։) Ի՞նչ թլթլալի իս, քո՞ծ, թո՞խլո ձու ի՞ս։ Էս ո՞ւր իս հազրվում, քա՛. իմ գալը դուր չէկա՞վ։

ՆԱՏՈ

Էտ ի՞նչ իս ասում, մամիդա ջան, էս սահաթիս գու քամ, փողոցն իմ գնում. մե էրկու իմքին պիտի առնիմ։ (Դառնում է դեպի Սալոմեն։) Մամաշա ջա՛ն։

Խոսում են ցածր ձայնով։

ԽԱԽՈ, առաջին:

Աբա սուտ խո չէ ասում սրա մամեն։ (Բարձր:) *Ցիս գնամ մե էրեխանցը տեսնիմ։* (Ուզում է վեր կենալ:) *Մե արի՛, ապլաջիջի, ձե՛ռտ իս տու, ծնգնիրս էլ չէ գալի։*

Նատոն աշխատում է վեր կացնել:

ՍԱԼՈՄԵ, օգնելով:

Ցիս էլ օտկիմ, բատոնո ջան։

ԽԱԽՈ, վեր կենալով:

Ապրի՛ք, վուրթիք, իմ տա՛րսը դառնաք։ (Նատոյին:) *Մեռնիմ քու պետլած ջանին, մե քու թագին ու փռակին արժանի անե ինձ աստուծ։*

ՍԱԼՈՄԵ

Աստուծ լսե քիզ, բատոնո ջան։

ԽԱԽՈ

Կուլի, կուլի, վուրթ։ (Գնալիս, դեպի հանդիսականները:) *Ի՜հ, աստուծ, աստուծ, պատվեցա։*

Դուրս է գնում ձախ դռնից:

ՏԵՍԱՐԱՆ

ՍԱԼՈՄԵ, ՆԱՏՈ

ՆԱՏՈ

Մի՞ ուշացնի է՞, մամաշա։

ՍԱԼՈՄԵ

Էդզամանին մեռի վուր չըլի, ի՞նչ է, քա՛։

ՆԱՏՈ

Գնթապվա, մամաշա ջան։ Հարկավուր է։

ՍԱԼՈՄԵ, ձեռքը գրպանը դնելով:

Քիմեն խո չիմ պրծնի ո՛ւ... (Հանում է խակը և փող որոնելով): *բա՛հա...*

ՆԱՏՈ, ձեռքը տանելով դեպի խակը:

Ա՜յ, մամաշա։

ՍԱԼՈՄԵ

Մո՛լապ, քա՛։ (Հանելով փողը և տալով Նատոյին:) *Բռնե՛, քու մամիմեն չիմ պրծնի։*

ՆԱՏՈ

Վուր հարկավուր է, վա՛, յիս ի՞նչ անիմ։

ՍԱԼՈՄԵ

Հարկավուր է, հարկավուր է, էլ վիրչ կի չկա ու... (Նատոյի զբաղմունքն ուղղելով:) *Էս ի՞նչ հանգն իս ծածկի. ծաղկներուն էլ մտի՛կ, մեկը վուրթենն է, մեկելը վուրթենը։*

Ուղղում է:

ՆԱՏՈ

Դիպ մեկ է, մամաշա։

ՍԱԼՈՄԵ

Ուցնավուր իս, քա՛։ (Քողն ուղղելով:) *Վռալն էսե՛նց. ջանս գնաց քու դրստելեմեն։*

ՆԱՏՈ

Խիստ իս սիրունացնում, մամաշա։

ՍԱԼՈՄԵ

Սիրունացնիմ, չսիրունացնիմ, վիրչը կուպծի կնիկ պիտի դառնաս։

ՆԱՏՈ

Դիա՛խ, դիա՛խ, բաս ի՞նչ իմ արի։

ՍԱԼՈՄԵ

Քու մամեն դիպ քիզ է հարցնում, գա՛նա չիմ գիդի։

ՆԱՏՈ

Բաս ո՞ւմը կու հարցնե։

ՍԱԼՈՄԵ

Դուն է՛տենց ասա ու, նա ճկրատի պես կանգնած է, վուր քախկցու պիտի տամ, կոսե։

ՆԱՏՈ

Վո՞ւնց չէ։

ՍԱԼՈՄԵ

Աստուած գիդենա։

ՆԱՏՈ

Ղո՞ւրթ իս ասում, մամաշա՜։

ՍԱԼՈՄԵ

Քու արիվը. էսօր էլ էտ էինք խոսում։

ՆԱՏՈ

Իժում վճռա՞ծ բան է՞։

ՍԱԼՈՄԵ

Ուրիշ ճար վուր չկա, ի՞նչ անիմ յիս. էնղադա փուղ չկա։

ՆԱՏՈ

Էտ է, կուպեծի կնի՛կ շինեցեք ինձ, վուր դիփունքը վրես ծիծաղին, (Լացի ձայնով:) *վուր դիփունքը մասխարա գցին ինձ. էլ էտու համա էսենց ինչի՞ էիք մինձացնում ինձ։ Նրա՞ համա սորվեցա ռսեվարը՜, ֆրանցուցեվարը՜, ֆորտոպիանը՜. ի՞նչ կոնե նա ֆորտոպիան, նրան բուխի քիլեք է հարկավուր. ի՞նչ կոնե նա ֆրանցուցեվարը, վո՞ւնց պիտի խոսի հիդս, թեզուզ հենց ռսեվարը՝ մոյա պաշոլ, տվոյա վիդալ։*

ՍԱԼՈՄԵ

Ի՜հ, լավ է դուն էլ, թավլափիան։

ՆԱՏՈ, լաց լինելով:

Չի ըլի, մամաշա, չէ, չիմ կանա, յիս քախկըցի չիմ կանա ուզի, չիմ ուզի, ջուրը կու ննգնիմ ու չիմ ուզի, գլուխս կու սպանիմ ու չիմ ուզի։ (Լաց է լինում և փողը վերադարձնում Սալոմեին:) *Բոնե՜, էլ ի՞նչ հարկավուր է ինձ, էլ ո՞ւր գնամ, ինչի՞ համա գնամ, ո՞ւմ համա գնամ...*

Հովանոցն ու վերարկուն վայր է ածում, նստում է բազմոցի վրա և հեկեկալով լալիս է:

ՍԱԼՈՄԵ

Ա՜խ, աստուած, աստուած, էս ի՞նչ պատիժ է. վո՞ւր մե կրակին դիմնամ յիս։ (Նատոյին:) *Սո՜ւ, լավ է, բեհայա։*

ՆԱՏՈ

Է՞սօրուվին էիք մինձացնում ի՞նձ, ձիր ամագն ու աշխատանքն է՛ս.ու համա է՞ր։ (Լաց է լինում:) *Նա՞ պիտի ինձ բուլվարի վրա ման ածի՜, նա՞ պիտի ինձ Կրուժոկը տանի՜, նրա՞ հիդ պիտի գնամ տեա՜տր։* (Լաց է լինում:) *Հը՜, հը՜, հը՜...*

ՍԱԼՈՄԵ

Լա՜վ է, լավ, սիրտդ անմիղ մի՜ շուտ բերի։

ՆԱՏՈ, հանկարծ վեր է թռչում տեղիցը ու փաթաթվում է Սալոմեին։

Գեթաղվա, մամաշա, գենացվալե, մամաշա ջան, ազատե՜ ինձ։

ՍԱԼՈՄԵ

Մամաշի գլուխը մեռիլ էր ու էս օրը չէր ննգի, հրա՜։

ՆԱՏՈ

Գենացվալե, մամաշա, ազատե՜, թե չէ ճլերք կու ննգնիմ, աստուած գիդենա։

Աչքերը սրբում է։

ՍԱԼՈՄԵ, լացի ձայնով։

Ճլերք ննգնի հիմիկվան ժամանակը, հը՜։

Նույնպես աչքերը սրբում է։

ՆԱՏՈ

Գուզիս քու օրումը մարթու մի՜ տա ինձ, մամաշա ջան. գուզիս տանը քոծուվին կոնիմ դիփ ու էս բանը մո՜շլա արա, գեթաղվա, մամաշա ջան։

ՍԱԼՈՄԵ

Մոշլա արած է, մոշլա արած, վուրթի։

ՆԱՏՈ

Գենացվալե, մամաշա ջան։

ՍԱԼՈՄԵ

Ասում իմ է՛լի, քա՜։

ՆԱՏՈ

Ղո՞ւրթ, մամաշա ջան։

ՍԱԼՈՄԵ

Քու արիվն իմ ասում։

ՆԱՏՈ, համբուրելով Սալոմեին։

Ա՜խ, մամաշա ջան։

ՍԱԼՈՄԵ

Պրծա քիմե՞ն. լացի գուդա իս դրուստ, կինաղամ ինձ էլ լացցրիր։

ՆԱՏՈ, ծիծաղում է։

Հը՜...

ՍԱԼՈՄԵ

Հիմի ծիծաղի։

ՆԱՏՈ, երկար ծիծաղում է։

Հա՛, հա՛, հա՛... վախեցա, վա՜։

ՍԱԼՈՄԵ

Շատ քարափշուտեն իս։ (Փողը Նատոյի ձեռքը դնելով։) *Բանե՛, էլ մի՛ ուշանա։* (Նատոյի մազերը ուղղելով։) *Միշտա-մոշտեն մեչը դրիր։*

ՆԱՏՈ, ազատվելով մոր ձեռքից։

Լա՛վ է, լավ, մամաշա։

Վերցնում է վերարկուն և ճովանոցը։

ՍԱԼՈՄԵ

Աճկիրդ լա՛վ սրփե, ամութ է։

ՆԱՏՈ

Սրփած է, սրփած. իմ աճկերու մոգ ո՞վ ինչ բան ունե։

Ուզում է գնալ։

ՍԱԼՈՄԵ

Ջո՛ւստ արի, շուշանաս։

ՆԱՏՈ

Էս սահաթիս, մամաշա ջան։

Դուրս է գնում նախասենյակի աջ կողմից։

ՏԵՍԻԼ Գ

ՍԱԼՈՄԵ, մենակ։

Չէ՛, ուրիշ ճար չկա. վունցոր ըլի պիտի գլուխ բերիմ էս բանը, թեզուզ գլուխս գրավ դնիմ... Ո՞վ քաղցր ասուծածին, դուն բարեխոս ըլիս իմ Նատոյի համար։

ՏԵՍԻԼ Ե

ՍԱԼՈՄԵ, ՕՍԵՓ

ՕՍԵՓ, մտնելով աջ դռնից, առանց գոտկի։

Էս Նատոն ո՞ւր գնաց։

ՍԱԼՈՄԵ

Էստի, դեմուդեմը, մաղազիեն. ինչոր նոտ է ուզում։

ՕՍԵՓ

Հե՛յ գիդի ժամանակ, ա՛րի ու սրա պես աղջկը հիմի մեր քախկըցուն կնգութին արա։

Նստում է բազմոցի վրա։

ՍԱԼՈՄԵ, մոտենալով։

Ցիս էլ էտ իմ ասում, Օսեփ ջան. (Ձեռքը ուսին դնելով։) *ախար մի՛խակը չէ՞։*

ՕՍԵՓ

Ցիս ուփրա միխակ իմ, ո՞վ է ինձ ինչ տալի։

ՍԱԼՈՄԵ

Բաս քախկըցու կնիկ շինինք, է՞լի։

ՕՍԵՓ

Ի՞նչ է, քախկըցին փիս մարթ է, հա՛. յիս փիս մարթ իմ, հա՛, վուր գլուխս ձիր գերի իմ շինի։

ՍԱԼՈՄԵ, փաթաթվելով Օսեփին։

Աբա էտ վո՞ւնց իս ասում, Օսեփ ջան, ամա ախար Նատոն միխակ է. ո՞ւր է, էրնեկ չէր ըլի ինձպես էր միանացի։

ՕՍԵՓ, ժպտալով։

Մե խերով պտուղ էլ էնչախը կուլեր։

ՍԱԼՈՄԵ, ճեռացնելով ձեռքը։

Էտ լավ էր, քա՛, ինչ ուզում իս, ինձ իս ասում. խի՞ղճ իմ գլուխ։ Ասա՛, ասա՛, ինչ քիփդ տա, է՛ն ասա. մե էս Նատոյի բանը պրծի ու իժում ինչ գուլիս ասա՛։

ՕՍԵՓ

Տո՛, թե՛ պրծա, ուրիշ ի՞նչ իս ուզում։

ՍԱԼՈՄԵ

Ախար, վուր ինչ ուզում ին, թամամ չիս տալի։

ՕՍԵՓ

Վո՞ւրդանց տամ, վուր էնդադա չունիմ։

ՍԱԼՈՄԵ, կրկին փաթաթվելով նրան։

Գեթաղվա, Օսեփ ջան։

ՕՍԵՓ

Ջիմ կանա, չէ՛։

ՍԱԼՈՄԵ, ավելի աղաչելով։

Գենացվալե, Օսեփ ջան։

ՕՍԵՓ

Ա՛ կնիկ, դուն հա ու չէ չիս իմանում, թե՞ ինչ է։ Ցիս քիզ մե խոսկով ասում իմ, վուր մեճկս չէ գալի, չէ՛. մարթ իր լհեբի գորա կու ձքե վուտը թե՞ չէ. ո՞ւնիմ ու չիմ տալի՞, խնա՞հում իմ, էն էլ իմ վո՞ւրթու համա՞։

ՍԱԼՈՄԵ

Ունիլ-չունիլն ո՞վ է հարցնում, էն հանգի տղա ըլի նշնելու ու գլուխս գրա՛վ չիմ դնի՞։ Ուրիշնիրը խիստ շա՞տ ունին, վուր տալիս ի՞ն. բա՛ս նրանք գժվիլ ի՞ն։

ՕՍԵՓ

Տո՛, էգեբա գողնովի փուղ ունին, տալիս ին, քիզ ի՞նչ դավի։ Անգճիտ բա՛մբակը հանե. ասում իմ՝ չունիմ, չէ՛, չէ՛, չէ՛ ու չէ՛։ Էսօր էքուց մե բանի իմ մնում, թե գլուխ չէկավ՝ հոքով մարմնով բաթմիշ էլա. դուն կի էստի հոքեհանի պես կանգնիլ իս գլխիս ու էլ ինձ չիս հարցնում։

ՍԱԼՈՄԵ

Ի՞նչ իս չարանում, քա՛, մարթ չկա՞նենա քի մոդ բերան բաց անի՞։

Անբավական նստում է տախտի վրա։

ՕՍԵՓ

Չարանում ի՞մ. տո՛, դուք հրիշտակ կու գժվեցնիք, չէ թե աթմորթու։

ՍԱԼՈՄԵ, կշտամբելով։

Լա՛վ է, խաչը գիդենա. յիս սրտացավութենով բան ըլիմ ասում միր աչկա համա, դուն կի էտենց վրես չարանա՞ս... Հեր իս, միթամ յիս չկամ, չի՞ս փիքր անի քու աչկա համա՞։

ՕՍԵՓ

Փի՞քր չէ, տո, ա՛նաստուծ, վուր յիրիք-չուրս տղերանց անում տվի՞, հազիր աղանչաքով ուզում էի՞ն. ջեհել, շնուքով, աշխատող ու իմ բաբ մարթի՞ք։ Ամա ձիր օխտեմեն ո՞վ գու քա. առանց այլիվայլի չինովնիկ պիտի ըլի, կոսե։ Քու սիրտը քու աչկա համա կի չէ ցավում, փառասիրութենի համա է ցավում։

ՍԱԼՈՄԵ

Աբա՛ ի՞նչ խոսիմ քի մոդ, նրանք միր լա՛յիղ ի՞ն. ո՞վ ին նրանք, ո՞ւմ վուրթիք ին։

ՕՍԵՓ, տեղից վեր կենալով։

Տո, դո՛ւն ո՞վ իս, դո՛ւն... դուն ո՞ւմ վուրթի իս, դուն ո՞ւմ կնիկն իս. էրեկլե-խանի չամոմավլորեն իս, թե՞ Պարնի հարսը։

ՍԱԼՈՄԵ, նմանապես կանգնելով։

Ի՞նչ է ասում, քա՛. դո՛ւն մինձ մարթու վուրթի իս ինձ վրա՛։

ՏԵՍԻԼ Զ

ՆՐԱՆՔ, ԽԱԽՈ

ԽԱԽՈ, մտնում է ձախ դռնից։

Էս ի՞նչ խաբրներումն իք, ջա՛։

ՕՍԵՓ

Օ՜հ, մամիդա, դուն ի՞ս։

ԽԱԽՈ

Հենց յիս-ին, գլխովս ու վզովս. վո՞ւնց իս, վո՛ւրթի։

ՕՍԵՓ

Փառք աստծու. դուն վո՞ւնց իս, մամիդա։

ԽԱԽՈ

Ի՞հ, վաչանչալեք, վուրթի, է՞լի։ Ամա էս ի՞նչ բաներումն իք, ձիր ձենը քուչեն է գնում։

ՍԱԼՈՄԵ

Վունչիչ, չի՞ տգիդի մարթ ու կնգա բանը, բատոնո՞։

ԽԱԽՈ

Էնդադա տարի քիզ ումբը, վուրթի՝ «Ցոլ դա քմրիս չխուրի ըեգվեն կացս գաղրա էգոնա»*, կոսե։ Ամա ձիզ էլ ի՞նչ էլավ, վուրթիք. էսդադա տարի է մարթ ու կնիկ իք, մեկմեկու խասիաթը չիմացա՞ք։

ՕՍԵՓ

Նստի՛, նստի՛, մամիդա... (Խախոն, fոշերը քողնելով ներքև, Սալոմեի օգնությամբ բարձրանում է տախտի վրա։) Դուն է՛ն ասա. մե լուծ յիզումը մեկը վուր դեսը քաշե ու մեկելը դենը, սելնվ առաչ կէհա՞։

ԽԱԽՈ, ծալապատիկ նստելով։

Էնենց կու վազի, վունցոր վուր յիս հիմի... Ի՞նչը կու ժաժ տա ինձ հիմի էսդանցեն։

ՕՍԵՓ

Չէ՞ վուր է մեկմեկու պիտի օտկին. թե չէ մեկն ինչ գուզե ղոչաղ ըլի, մեկելը թե հիդը չէկավ, իր էդնեն մնալով համ իր գլուխը կու խիխտե, համ ղոչաղինը։

ՍԱԼՈՄԵ

Ղոչաղը դուն իս ու դամբլեն յիս իմ, էլի՞։

ՕՍԵՓ

Մո՛ւլափ մե, քու հորն օղորմի։

* Վրացերեն։— Ամուսիններիր վեճը հիմարը ապահարզան էր կարում։

ԽԱԽՈ, Սալոմեին։

Ի՞ի, անդազա է ասում միթամ, վուրթի, քու դամբլութինն ո՞վ կանա ասի։

ՕՍԵՓ, նստելով։

Ախար հազար-հազար թումանանուց տիգիրն է ձգվում, դուն ինձ ասա՝ միր բան է՞։

ՍԱԼՈՄԵ

Ուր հարուրը հազար է՞։

ՕՍԵՓ

Էրկուսը մե զահրումար է ինձ համա, բաս ի՞նչ է։

ՍԱԼՈՄԵ

Ինչոր վուր է, ինձ համա խո չիմ ուզում. է՛լի քու ախչկա համա իմ ասում։

Խռված նստում է բազմոցի վրա։

ՕՍԵՓ

Տո, ախչկա համա վուր ասում իս, չէ՞ վուր է չափս ու ձիվ կա։ Ախար էրկուսն էլ ուրիշ ին մինձանում. իժում նրանցն ի՞նչ իս տալի։

ԽԱԽՈ

Օսեփ, վուրթի, ինչի՞ իս սատանի ձիու վրա նստի։

ՕՍԵՓ

Սատանի ձիու վրա յիս կի չիմ նստի, դուք իք նստի. քշում իք ու էլ ինձ հիդ չիք մտիկ անում։

ԽԱԽՈ.

Նո՞ւր իս սկուպոացի, Օսե՛փ. թումներով վուր շաբաշնիքը կու բախշեիր սազանդրերուն, էնչա՛խն էիք դայբաթ-աքի՞։

ՕՍԵՓ

Էն վուխտը գնա՞ց, մամիդա, ուդա՞ բուրիսակեն։ Էնչախը կանեի, հիմի էլ չիմ կանացի. առուտուրը կանգնեցավ, բանն լավ չէ գնում, մամիդա։

ԽԱԽՈ

Քու դուշմնի բանը գնա փիս, վուրթի, քու բանը փիս վո՞նց կէհա։

ՕՍԵՓ, առանձին:

Ա՛բի ու հրսր սրանց առչիվը դավթրրնիրդ բա՛ց արա։ (Բարձր:) Գիդիս ի՞նչ է, մամիդա, յիս կտրական խոսիլը կու սիրիմ. էն տղին հա՞վնում իք, ո՞ւզում իք, իմ աչկան դո՞ւր է գալի, յիս էլ մե էն հանգի վունչիչ չունիմ փուտը դնելու։ Գնացե՛ք, թե բանը գլուխ գու քա, մե վից հարուր թուման կու տամ, շինեցե՛ք, թո՛ղ ջանս դուս գա. ամա, մամիդա՛, լա՛վ գիդացի՝ վիրչի խոսկն է, դանարես վուր քաշ անին, էլ մե գրոշ չիմ ավելցնի։

ԽԱԽՈ

Բա՛ դագեմարթա քիզ, Օսեփ. վիցը վուր տալիս իս, մե խուն ու հարուր թումնի համա խո չի՞ս մոշլա անի բանը։

ՕՍԵՓ

Գի՛դիս ինչ է, մամիդա՛, յիրգնուց վուր ձեն գա վիրչի խոսկս էր. մե գրոշն ինչ է, մե գրոշը, թեգուզ կաշիս պլոկիք, էլ չիմ կանա։

Վեր է կենում:

ԽԱԽՈ

Մի՛ շարանա, վուրթի ջան, կուլի վից հարուրով գլուխ է գալի, տեսնինք ջեր։

ՕՍԵՓ

Հա՛, էտ է, է՛տ։

ՍԱԼՈՄԵ

Վից հարուր թումնի մոդ էլ հարուրն ու էրկու հարուրն ի՞նչ հիշելու է, վուր անմիդ սիրտդ շուռ իս բերում։

ՕՍԵՓ, նեղանալով:

Կնգդերանց ձեռնեմեն աստուծ ազատե։ Ախար ասած է, վուր մե կնիկարմատ էրկու տղամարթու կու ախտե, յիս կի մենակ էրկուսիս հանգը իմ ննգի։ Վո՞ւրդանց վուրդի լուս ննգավ էն անիծածը։ Է՛ս դուս էկավ էլի նրա վիդիտներեմեն... Մե տեր հարցնող ըլի, թե նա ո՞վ, մինք ո՛վ. (Սալոմեին:) ախպեր չէ քունն ու բիձու տղա. ի՞նչ բան ունե, ի՞նչ, վուր վիզիտնիր է ման գալի էստի. ջեր ավտաս յիրիք ջեր է էլի... էլ նրա հո՛ւտը չըլի էստի։

ԽԱԽՈ

Հանգստացի՛, վուրթի, ի՞նչ իս չարանում։

ՕՍԵՓ

Է՛հ, մամիդա, դուն էլ չիս գա, չիս գա, ու հենց էսօր վո՞ւրդի էկար։

ԽԱԽՈ

Թե իմ գալու վրա խիստ իս նիղանում, վուրթի, ձիր սարդփումը լավ սառը ջուր կա։

ՕՍԵՓ

Տո՛, ախար մարթ իմ, գլխիս գդակ ունիմ, ասում իմ, վուր չիմ կանա, չիք ավտո՞ւմ։

ԽԱԽՈ

Ավտում ինք, ավտում, վուրթի. ամա միր ասիլն, էն է, վուր ախչկա բաժինքը ուրիշ բան է. չիս գիդի՞, վուր ուրիշ բան է՞։ Տուն առնիլ խո չէ, վուր մարթ իր ջիբին մտիկ անե։ Էս բանումը, վուրթի, մարթ էլ վունց ջիբին պիտի հարցնի, վունց զանդկին։ Քաղքանչելա Յազորին խո կու ճա՞նչնիր. վիրչի տնիրը ախչկա բաժընքի համա ծախից ու իժում ախկատ դաղո ապրեցավ. վուր մեռավ, թաղմելա չուներ, աստուծ գիդենա, խո դուն էլ լավ գիդիս։ Դուն նրա վրա փի՞ս մարթ ի՞ս, դուն նրա վրա խի՞ղճ ի՞ս, վուր մե է՛րկու հարուր թումնի համա խոսում ի՞ս։

ՕՍԵՓ

Ա՛խ, աստուծ, էս ի՞նչ պատիժ է թե ա՛խչիկ մինձացու, վրեն էնդադա փո՛ղ մխսե, ո՛ւսում տու ու վիրչը մե ջվալ էլ փո՛ղ բարցե շլնքին, վուր էգեբա օմքին ձեռը բռնե ու էնենց տանե... Փո՛ւ, միր նամուսին։

ԽԱԽՈ

Ի՞նչ անիս, վուրթի, միր հնուց ծես ու ադաթ է, պիտի կատարինք. վա՛յ միր տիրուչ միխկը։

ՍԱԼՈՄԵ

Աշխարքի ծեսն ու ադաթը դուն խո չի՞ս կանա ջանդի։

ՕՍԵՓ

Ձիր ծեսին էլ աստուծ խոով կենա, ձիր ադաթին էլ։ Տո՛, թե էտենց զայիմ կանգնած իք ծես ու ադաթի վրա, ամեն բանումն էլ է՛տենց զայիմ

ելի՞ք, ամեն բանումն էլ ծե՛ս ու ադաթ միտը բերի՞ք։ Ծես ու ադաթ է՞, վուր ծուղի ու քոշի մագիեր բատինկա իք հաքնում ու տղամարթու կրընգ-նիրն էլ տակը կպցնո՞ւմ։ Ծես ու ադաթ է՞, վուր ախչիկը իրավուրիմեն էլ կու քաշվեր ու հիմի յա՛դ տղի հիդ կուրը կռանը գցած բոլթա է տալի՞։ Վո՞ւրն է, վո՞ւրը միր ծեսը՝ ա՛պրիլը, ո՛ւսիլը, տո՛ւնը, տի՛զը, հա՛քուստը, բա՛լիրը, վե՛չերնիրը. վո՞ւրդի էր Էստունք, էստո՞ւնցն էլ կոսիս թե հին ծես ու ադաթ է՞։ Ա՛նում ինք էստո՞ւնք, մո՛դնի ինք ժաժ գալի՞. տո, թո՛ղ ամեն բանն էլ մոդնի ըլի, է՞։ էլ տասը ձեռք գողենքն ի՞նչ է, էլ ծալքն ու թոնդիրն ի՞նչ է, քեչին ու մափրաշն ի՞նչ է, ծլնգդնի մոդ ամսներով կե-նալն ի՞նչ է, հարսնքքումը հարուր հոքի մեձրիլն ի՞նչ է, քելեխն ու չուրս քսան կնիկարմատի սուք ու շիվանն ի՞նչ է, վուր բայղուշի պես գոռում ին. ի՞նչ է, ի՞նչ էստունք... (Ցույց տալով տախտը։) Թե է՛ն ինք, (Տա-նելով ձեռքերը տախտից դեպի բազմոցը և ընդհակառակը։) էս ի՞նչ է, ու թե է՛ս ինք, էն ի՞նչ է. էրկուսին մետի դի՛մնալ կուլի՞... (Դադար։) Միր ապրելու ու կինքի օրինակը միր կնգդերանց հաքուսան է, վուր վուտեմեն ինչրու բողազը Փոանգստնու է ու (Ձեռքը ճակատին խփելով։) գլուխը կի էլի էն է մնացի։

Լռություն։

ՍԱԼՈՄՆ, վեր կենալով տեղից։

Լա՛վ է, լավ, մի՛ շարանա, վիցը խո տա՞լիս ես, խո ա՞սիլ ես. ինչ կու պսեսի, մնացածն էլ յիս կու տամ։

ՕՍԵՓ

Վո՞ւրդանց կու տաս վուր կու տաս, քու հոր բաժընքեմեն, գանա չիմ գիդի։

ՍԱԼՈՄՆ

Բաժինք չիմ ունեցի, ի՞նչ իս էտու համա քիքս գալի. ամա ի՞նչ ունիմ ու չունիմ կու ծախծխիմ, գրավ կու դնիմ, քաթիրիս բաւիթեն մոշլա կոնիմ, օսկե կոճկնիրը կու հալիլ տամ, դոշիս փորմիալեն կու մոշլա անիլ տամ, ակնիրը, յարա կու ծախիլ տամ, տասերկու շաղա մարքրիտը յա-քա, թե ճակտիս քորցնիրը պետկ էկավ, էն էլ չիմ խնահի, թո՛ղ դիփ մետի Նատոյի չարը տանե, նրա չարի փուխ ըլի, գլուխս էլ նրա չարի փուխ կոնիմ ու էն տղին ձեռեմես չիմ թողնի։

Շտապով դուրս է գնում ձախ դռնից։

ՏԵՍԻԼ Է

ՕՍԵՓ, ԽԱԽՈ

ՕՍԵՓ

Էս թամաշեն տեսա՞ր, մամիդա՛. աբա օ՛րենք է՞, քիզ-իմ հարցնումմ

ԽԱԽՈ

Ի՞հ, աբա ի՞նչ այնումը գցելու է, վուրթի։

ՕՍԵՓ

Սարի էծ է՞ անիծածը. աբա հախը չէ՞՝ գնամ քինթ ու պռունգը ջարդ թի՞մ։

ԽԱԽՈ

Հիմի է՛տունք առա, էսքադա տարի է մե ծկիպարտ չիս խփի, հիմի նո՛ւր չար, նո՛ւր բարի՞։ Ա՛մ էլ գու քա քու ասլութենին։

ՕՍԵՓ

Է՛, մամիգա, զահլես գնացիլ է՝ ասում իմ, աստուծ գիգենա. էն յիս իմ, վուր համփիրում իմ, թե չէ ուրիշը վուր էլիլ էր իմ տիղ, հարուր ջեր կու բաժնվեր ինչրու հիմի։ (Նստում է։) Ախար ո՛ւմ վրա ինչ տեսնում է, ո՛ւմ տանն ինչ տեսնում է, թե էն սահաթին չառավ ու չսարքից, իրն իրան է հասնում. մայմունի ջի՛նս է անիծածը։ Է՞սենց էլ բան կուլի՞։

ԽԱԽՈ

Դիփունանց կնգդիրքն էտենց ին, վուրթի, դուն ո՞ւր իս էտու համա նիղանում։

ՕՍԵՓ

Էհեհ, բան իք շինի ձիզ համա՝ դիփունքը, դիփունքը։ Տո՛, դիփունքը, գլուխը քարն ին տալի, յի՞ս էլ քարը տա՛մ. յիս ասում իմ՝ ի՞նչ ինձ կու սազ գա, է՛նենց ժաժ գա։

ԽԱԽՈ

Ի՞հ, Օսեփ, վուրթի, ինչի՞ր իս ասում, նետայի գիդենամ։ Էս սաա-թիս վուր էստի գալիս էի, մե փեշաքրի կնիկ իմ տեսի, փրփրալի գնում էր, վուր թավադի կնիկը վի՞ս էկադրեբա։ Յասամանի գլասեն հաքին, սիվ շաբաքա պլատոկը վրեն, (Շրթունքները սեղմելով։) կոխտա փերչտկնիրը

ղլաց, ատլասե զոնտիկը ձեռին, գնում էր, գնում էր, վուր խիլքիս ծերը հիդը գնաց։ Յիրիք արշին էլ կուդին՝ շլեփ ին ասում, ինչ զահրումար ին ասում, թրևում էր էդնեն։ Սրտիս ծերը մխկտաց, քու արիվը, վուր էն արմաղան դերիեն գեղնին էնենց թավիլ-թավիլ էր գալի ու ի՞նչ ասիս հիդը տանում էր՝ չալա, փալաս, խուղ. գնում էր ու հիդը տրոտրոն սըրփում էր. էրնեկ գիդենամ էլ ցխի փոդրաթչիկին փուղ ո՞ւր ին տալի։ Քու արիվը, վուրթի, խելի ժամանակ կանգնեցա ու էլ աճկս չկանացի հիռացրիլ էի. ասի՝ փա՜ռք քիզ, աստուած, էս ի՞նչ բարգութին իս ղրգի միր գըլխին, վուր էլ մինձ ու պստիկ չէ ջոգվում։ Աբա՛, վուրթի, փեշաքրի կնիկը վուր էսենց է դուս գալի, մեկելներու վրա էլ մարթ ի՞նչ ասե։

ՕՍԵՓ

Տո, յիս էլ է՛տ իմ ասում ախար, է՛, իմ ասածն էլ է՛տի է գալի, է՛։ Ի՞նչ է՝ չինովնիկ է լուս ննգի, կոսե, ու ուրիշնիրը ախչիկ ին տալի՛, կոսե, գլուխը սղոցում է, վուր դիփունանց առաչկը կտրե։

ԽԱԽՈ

Դուն էլ ուցնավուր իս. քա՛. էնղադա փուղ իս մսխի վրեն, օրինավուր ուսում իս տվի, մոդնի մինձացրիլ իս, պորտուպիանի ածիլ իս սորվեցրի, ախար մե փի՛քր արա, է՛...

ՕՍԵՓ

Ա՛յ, վո՛ւչ էր էլի էն ուսումը, հրա՛։ Ի՞նչ կոնիմ էն ուսումը, թե ինձ պիտի նիղացնի։ Էս ի՞նչ ուսում է, վո՞ւրղանցի ուսում է. միզ է՛ս հանգի ուսում կու սազ գե՛ր... Ա՛խ, ա՛խ, իմ գրանիցա։ (Խփում է ծնկանը։) Ա՛յ ուսում, ա՛յ լուսավուրութին. ամեն մարթ իր չափս ու ձիվը գիդե, իր կարողութենի գորա ժաժ գալի. վունցոր ա՛շխատում է, էնենց էլ մխսում է... Վո՞ւրդի է, վո՞ւրդի էն ուսումն ու լուսավուրութինը՝ հանգիստ ապրիլ էինք միզ համա... (Ձայնը փոխելով։) Էլի հինը լավ էր, յիս ու իմ հոքին, էս կարք ու սարքի վրա։ Մամա-պապեուլ վունցոր ապրիլ ինք, էնենց միր չլումը պիտի մնացիլ էինք, վուր մարթ մե թիքա համով հաց էր կերի։ Հիմի էս ի՞նչ է, էս ի՞նչ բանիր է, էս ապրելուն թա՞մաշա իս անում. էլ վո՞ւրդի է էն համով հացը, դիփ յաղու ու դարիշխանա ինք ուտում... Յիս վո՞ւրդի է էն համով հացը, դիփ յաղու ու դարիշխանա ինք ուտում... Յիս ո՞վ. գալեն ու գաստինեն ո՛վ, պովարն ու լաքիեն ո՛վ, Լոնդոնի չուգունի պլիտեն ո՛վ, պադիեզդն ու լամպեքն ո՛վ։ Էս գազին ախար կտա՞վ պիտի վուր դիմնա՞, թե չէ։

ԽԱԽՈ

Չէիր ուզում՝ չէիր սարքի, ո՞վ ինչ անե։

ՕՍԵՓ

Յիս իմ սարքի՞, յի՞ս. ա՛յ, սարքողի վիզը կոտրե աստուած։ Ծիս կի չիմ սարքի, իրան-իրան սարքվեցավ։ Վո՞ւնց էլավ, յիս ինքս էլ չիմ գիդի. ամա հին ապրիլս ու հիմիկվան ապրիլս վուր մեկս մեկու վրա չափում իմ, վո՞ւրդի էր քսան տարի առաչ էստունք. կոսիս մի՛նիստար ըլիմ։ (Տեղից վեր է կենում։) Դիփունքս էսենց, դիփունքը, դիփ մե բարթ ինք. ո՛ւմ դուռը բաց անիս, ո՞ւմ տունը գնաս, դիփունանց տանը էլի էս դանգ ու դվալը. ախար էստունցը դիմնալ գո՞ւզե թե չէ։ Հազար թումնի գելուրի տերը անում է էստունք, իրան հալալ, ախպեր. տո, հա՛ռուր թումնի տերն էլ վուր չէ ջոգվում նրամեն, էլ խալխն ի՞նչ սորվի միզմեն, ի՞նչ օրինակ ինք նրանց համա։ Հայի՛փ չէ՞ր վաղուցվան ժամանակը, մե դարբրսումը մետի ապրում էի՛նք, յիրիք-չուրս ախպեր օղլուշաղով մետի էինք կենո՛ւմ. նրանց ճրաքն ու մումն էլ բարաքա ուներ, գործլի ու փետն էլ բարաքա ուներ, աստծու աճկն էլ վրեն էր. հիմի կի մե ախպեր վուր հինգ թուման է մխսում, մեկելը նրա ջգրու ուզում է տասը փչացնի, վուր ի՞նչ է, նրամեն վեր չգա... էլ վո՞ւրդի կա ախպեր. ի՞նչ ախպեր, ի՞նչ քուր, ի՞նչ հեր, ի՞նչ մեր. ջնջով էլ վուր ուզենա մարթ, չի կանա դիփունանցը մետի մե շափաթ մոդ արած պահի. է աստծու բարգութին չէ՞, բաս ի՞նչ է։

ԽԱԽՈ

Ի՜հ, Օսեփ ջան, հին դարդիրս մի՛ աշլա անի։ Ջարփայի տախտը դրած կուլեր ու էրգեն ու մեկ խալին վրեն գցած կուլեր։ Կու մթնաներ, լոնդի մաշխալեն մեչտիղը կու վառեինք ու փարվնի պես էրեխերքը բոլորքը պտուտ գու քեինք. միր լամպեն էլ էն էր, միր ճաղն էլ։ Իժում տախտի վրա մե ծերեմեն ինչրու մեկելը մավի դաջած սուփրեն գաշլա կոնեինք ու աշխարքի լավութինը վրեն կու դարսեինք։ Կու նստեինք բոլորքը ժվժվալի՝ պապեն, մամեն, բիձեն, դեդեն, ձալոեքը, ախպրտիքս, քվիրտիքս. մեղվինեն գինին կու գչգչեցներ ու հազարփեշեն մե ծերեմեն մեկելն էր անցկենում։ Քսան հոքի ավել կուլեինք էն դրգյալ դարբրսումը. հիմի կի հինգ հոքի վուր մե օթախումը մոդ ին ըլում, շունչը կտրվում է մարթունը։ (Ձեռքը բարձրացնելով։) Պո՞ւլոդակի ծակ ունեինք, վուր քսանուհինգ ակոշկեք ածեր, կու լուսաներ, յիրգնքի լուսն էնղանց էր դեվեր գալի, ու կու մթնաներ՝ աստղերու պսպղուցն էլ էնդղանց։ Իժում դիփունանց տիդիրը մետի կու գցեին, քու արիվն, ու ծուլի-ծուլի կու խաղեինք. թե լուսնիակ էլ կուլեր, իսո դիփունանցս մետի լուս կու տեր... Պղինձն ու շամփուրը տանը, շամչեն ու քափկիրը կշտին, մնացածը աղլուխ-աղլուխ տուն էին բերում տղամարթիքը մեկ-մեկու վրա լավը դիփ, քու արիվը։ Էփողն էլ մինք էինք ու շինողն էլ. հիմի կի լավ թիքեքը պովարն ու լաքիեքն ին

ուտում. կրի՞մ նրանց դածումպլա արած գլուխը, հա՞... Միր սունը գազարն ու կարտոփիլը քանդից, վուրթի։

ՕՍԵՓ

Ի՞նչս ասում, ի՞նչ, մամիդա, տասը տարի չի քաշի, աստուծ գիդե՛նա, վուղչ քաղաքը կուտր կու ննգնի. թանգութինն ու մոդեքը մե կուտը, մեր հիմարութինն ու ագաթնիրը մեկելը։ Էսենց ա՞պրել կո՛ւլի ախա՞ր, մե ցավ է, էկել է մեր գլխին, է՛լի։ Աստուծ գիդենա, մամիդա, ամսենը մե թուման մենակ սուքարու ու զդոբնի բուլկու իմ տալի էրեխանց համա։

ԽԱԽՈ

Դուն էլ պակսեցրո՛ւ, վուրթի, ի՞նչ է...

ՕՍԵՓ

Ի՞նչ հիշտ-հիշտ ասում ի՞՝ պակսեցրո՛ւ. ա՛րի պակսեցրու, տեսնիմ վո՞ւնց իս պակսեցնում։ Տո, էն օրը յարմունկումը յիրիք աբասի տվի, էրեխի համա բատինկնք առա. է՛սդանց է՛նդի շպրտից, ա՛յ. էրկուս ու տաս շաանուց պիտի ըլի, կոսե. էն վից տարեկան (Ձեռքով ցույց է տալիս երեխայի հասակը։) էրեխեն, ա՛յ. լացու տրաքեցավ կինազամ։ Չեկի՞ գնացի, չէի՞ առի. էտ էնչախը կուլեր, վուր դիփունքս մե էրես էինք կապի։ Պա՛կսեցու*, կոսե. ո՞վ կանա պակսեցնի։ Քսան տարի է կինքի հիդ կռիվ իմ տալի ու վունցոր մե լավ լիզնուրթ Քոումը ննգած շատ լիզ տալեմեն կոնիրը գաթրիլ ըլի ու դուս գալու ճամփա էլ չըլի գթնում, ննգիլ իմ գո՛չգոչանեքն ու, էսօր թե էքուց, գլուխս յա՛ քարի վրա կու փշրվի, յա՛ բրշի վրա... Տո, պա՞կսեցնիլ չէ, վուր ասում իմ թե իմ բանը չէ՞, ամա՞ոմը կու հասկացնիս. ա՛րի պակսեցրու։

Նախասենյակի աջ դռնից մտնում է Նատոն՝ ձեռքին չորս օրինակ նոտայի տետրակներով։

ՏԵՍԻՔԸ

ՆՐԱՆՔ, ՆԱՏՈ

ՕՍԵՓ, շարունակելով։

Ինչ, պա՛կսեցրու։

ԽԱԽՈ.

Էտ ի՞նչ չուստ էկար, վուրթի։

ՆԱՏՈ

Էստի մոդիկ էի, մամիդա ջան։

Հովանոցն ու վերարկուն դնում է աթոռի վրա։

ԽԱԽՈ

Մեռնի մամիդեն պետլած ջանիտ, էտ ինչի՞ է, վուրթի։

ՆԱՏՈ

Թազա նոտիր առա ինձ համար։

ՕՍԵՓ, առաջ գալով։

Պա՛կսեցու... (Առնելով մի տետրակ Նատոյից։) Ի՞նչ տվիր էստուրը։

ՆԱՏՈ, շվարված։

Ջուրս աբտսի։

ՕՍԵՓ, առնելով երկրորդ տետրակը։

Էստո՞ւրը։

ՆԱՏՈ, նայելով տետրակի երեսին։

Էստուրը վից աբտսի։

ՕՍԵՓ, առնելով երրորդ տետրակը։

Է՞ս։

ՆԱՏՈ, վրդովված։

Էտ էլ մանեթ ու կես։

ՕՍԵՓ, առնելով վերջին տետրակը։

Է՞ս էլ մանեթ ու կես, է՛լի։

ՆԱՏՈ, դողալով։

Չէ՛... պապաշա, էտ էքուս ու տաս շայի։

ՕՍԵՓ, տամանալով։

Պա՛կսեցու, ա՛րի պակսեցու. մի տեր հարցնող ըլի թե ինչ իմ բանն է։ Ջուրը մեսի վուր չէիր առի, մեկը հերիք չէ՞ր, էրկուսը հերիք չէ՞ր։

ՆԱՏՈ, վախեցած։

Վուր հարկավուր է, պապաշա։

* Պակսեցրո՛ւ—պակսեցո՛ւ. երկուսն էլ ուղիղ են Թիֆլիսի բարբառում։ Այսպես ասում են՝ մինձացրո՛ւ—մինձացո՛ւ, ավելցրո՛ւ—ավելցո՛ւ և այլն։

ՕՍԵՓ, ավելի ու ավելի տաքանալով:

Աբա՛, ասում իս, մամիդա. ի՞նչը օխտա գու քա, ի՞նչ։ Էրանի մե դրուստ ածիլ մայինց գիդենա. մե էրկու իմքին կու թխթխկեցնե, պորտուպիան ածիլ գիդիմ, կոսե։ Ածիլը յիս չիմ գիդի, ամա ածողնիր տեսիլ իմ. ա՛յ, նրանցը սազ գուքա էստունք, թե չէ ի՞նչ իմ բան է, սրա մոդա գցողին էլ ի՛նչ ասիմ։ (Բարկացած դեն է ածում տեատրակները:) *Յիս ձեռըս կու կտրիմ թե սա դրուստ ածիլ կու գիդենա։*

Նատոն մնում է ապշած։

ԽԱԽՈ

Ի՛ի, լավ է դուն էլ։

ՕՍԵՓ, շարունակելով:

Կիսատ, դիփ կիսատ. ածիլն էլ կիսատ, սորվիլն էլ կիսատ, ուսումն էլ կիսատ, խոսիլն էլ կիսատ։ Ի՞նչ գիդե, ի՞նչ. կա՞նա մե օրինավոր իմքին կարի՞, կա՞նա իր դերիեն ձեի՞. մեբաշ Փռանգստնու ախչկերանց հիդ չգա։ Հինգ չե՛ր Լեպցիխ իմ էլի, վիրչի ախկտի ախչիկը սրա վրա շատ բան գիդե. ձեռի պտղունց իմ տեսի նրանցը, վուր բերանս բաց մնացիլ է։ Կա՞նա դրուստ հայերեն խոսի, վուր իր հավտի լիզուն է՞, կա՞նա դրուստ մե էրես բան գիր գրի՞, կա՞նա տասը խոսկ փրանցուցեվար վրա ու վրա ասի, վուր է՛նղադա փուղ է նստի։ Ինչա՞ցու է, ինչա՞ցու սա, քիզ իմ հարցնում. մեբաշ էքուց տանդիկնութին չանե սա... Ի՞նչ տանդիկին... Հայի՞փ տղա, յիս ու իմ հոքին, վուր սրա մարթ պիտի դառնա. սա՞ պիտի նրա հիդ լուծ քաշե՞, էքուց էլօր պիտի մեր դառնա ու սա՛ էրեխերք մինձացնե՞. ա՛յ խոով կենա ինձ սրա մինձացրածը։ Սրան հազիր հազրաբաշի մոդ արած փուղ պիտի ըլի, վուր տիկնի պես զուքիս ու զուքած մարդ ածիս, բալիր ու վեչերնիր տանիս, ինչա՞ցու է սա, ինչա՞ցու...

Նատոն լաց է լինում։

ԽԱԽՈ

Օ՛սեփ, Օսեփ, վո՛ւրթի։

ՕՍԵՓ, շարունակելով:

Կա՞նամ էստունցը ախտի՞, կա՞նամ սրանց օխտեմեն գա՞։ Պա՛կսեցու, կ՚ոսե։ (Բռնելով Նատոյի այուսիկի ծայրերը:) *Էս ի՞նչ է, էս տասէրկու էտաժ բանն ի՞նչ է, մեճկը տաքցնում է՞. էս վո՞ւնց պակսեցնիմ. պատոտի՞մ, էստով քո՞ւ թահ կուլի բանը՞. դի՞փունքը կու պատոտի՞ն, ո՛վ է հիդս պատոտում տեսնիմ։*

Նատոն շարունակում է լալ։

ԽԱԽՈ

Իմ գալուն էիր մնում, թե ի՞նչ է. թե՞ կոսե դիփունքն ի՛նչ գո՛ւգե անին. էլ ինչի՞ն իս մնում. խիղճ ախչկա սիրտը շուտ բերիր անմիդ, անգեթ։

Լուռ տեսարան։

ՕՍԵՓ, ձեռքը տանելով դեպի ճակատը և ուշքի գալով:

Ա՜խ, աստուած, աստուած, էս ի՞նչ իմ անում. խիլքս խառնվեցավ։ (Մոտենալով Նատոյին:) *Դո՛ւն չէ, դո՛ւն չէ, Նատո ջան,* (Գրկում է:) *քի՛զ չիմ ասում, քի՛զ չէ, դուն միդ չունիս, մինք ինք միդավուրը, յիս իմ միդավուրը, յիս՝ վուր աշխարքին մտիկ տալով, ի՛նչ աշխարքին սազ գու քեր, էն ճամփի վրա կանգնեցրի քիզ։ Մի՛ լաց ըլի, մի՛. Անմիդ չարացա, ջգրած էի, աշխարքի ջիգրը քի վրա հանեցի։* (Հավաքում է տեատրակները և տալիս է Նատոյին:) *Բռնե՛, վուրթի,* (Նորից գրկում է:) *գնա՛, է՛լի առ, ի՛նչ քեփդ տա, է՛ն արա, օշովիմեն մի՛ զբնվի. վունչիչ չէ՛ պակսի քիզ ինչրու։ Էսօր, աստուած տա էնղադա փուղ ըլի քիզ համա, վուր ինչրու վիրչն էլի վունչիչ չպակսի։*

Համբուրում է և ուզում է գնալ։

ԽԱԽՈ

Բարեմեց մե ի՛մքին էլ ավելցու, Օսեփ, ու քո՛ւթահ արա։

ՕՍԵՓ

Վուր գլխամեռ չի ուզի, ամա ինչ չիմ կանա, չիմ կանա։

Դուրս է գնում աջ դռնից:

ՏԵՍԻԼ Թ

ՆԱՏՈ, ԽԱԽՈ, հեռո ՍԱԼՈՄԵ

ՆԱՏՈ, տեատրակները վայր է ածում տախտի վրա և հեկեկալով ընկնում խախոյի գիրկը:

Ա՜խ, մամիդա ջան։

ԽԱԽՈ

Մեռնի մամիդեն քիզ համա... Սո՛ւ, լավ. քու հերն է, ի՞նչ անինք... Հե՛րիք արա, հե՛րիք, վուրթի։

ՍԱԼՈՄԵ, ուրախ-ուրախ դուրս գալով ձախ դռնից:

Բա՛տոնո ջան, բա՛տոնո, պրծա, քո՛ւթահ արի բանը։ (Հանկարծ կանգ է առնում:) *Էս ի՞նչ խաբար է. ինչի՞ է լաց ըլում։*

Նատոն աչքերը սրբելով գնում է դեպի բազմոցը։

ԽԱԽՈ

Վունչիչ, խո կու ճանչնաս սրա մամին, խոսեցավ, է՛լի, ու լացըցրուց։

ՍԱԼՈՄԵ

Թե մամեն լացըցրուց, դեղեն կու ուրախացնե. քիզ նշնեցի, Նատո ջան։ (Նատոն զարմացած նայում է:) *Գնա՛ ու գնա. ինչ սիրտդ ուզում էր, աստուծ էլ կատարից... Ալեքսանդր Պետրովիչ Մարմարովին ի՞նչ կոսիս։*

ՆԱՏՈ

Ղո՞ւրթ, մամաշա ջա՛ն։

ԽԱԽՈ, միանգամայն ժամանակ:

Ղո՞ւրթ իւ ասում, քա՛։

ՍԱԼՈՄԵ, Նատոյին:

Քու արիվը, քա՛։

ՆԱՏՈ, ընկնելով Սալոմեի գիրկը:

Ա՛խ, մամաշա ջան։

ՍԱԼՈՄԵ, փաթաթվելով և համբուրելով:

Զլիվ մե պրծա քու դարդեմեն. ուրախութենի ըլի, վուրթի։ Գնա՛, շուտ շո՛ւրիրդ հաքի, էս սահաթիս գու քա էն տղեն։

ՆԱՏՈ

Է՛ս սահաթի՞ս։

ՍԱԼՈՄԵ,

Հենց է՛ս սահաթիս. դուն գիդես վունցոր կու սիրունանաս։

ՆԱՏՈ, շափից դուրս ուրախ և շուտ-շուտ:

Ախպատա բարեժը, մամի բանտը սիվ բարեբանի լենտի վրա պատի խաչն ու մամի լենտով կոաֆյուր։ (Գրկում է խաչքանդին:) *Մա՛միդա ջան...*

ԽԱԽՈ, փաթաթվելով և համբուրելով։

Բա՛ի սահաթի ըլի, շարդ անե մամիգեն։

ՆԱՏՈ, ճորից գրկելով մարը և համբուրելով ճեռան։

Դուշկա մամաշա... դարագայա մամաշա ջան...

Դուրս է վազում ձախ դռնից, տանելով ճեռը ճովանոցը, վերարկուն և տեսարակները։

ՏԵՍԻԼ Ժ

ՍԱԼՈՄԵ, ԽԱԽՈ

ԽԱԽՈ, աջ ձեռքը տանելով դեպի թերանը։

Էս ի՞բազ է, թե ի՞նչ խաբար է, չիմ գիդի։

ՍԱԼՈՄԵ

Էրազը վո՞ւրն է, բատոնո ջան, նրա քուր խամփերին էս սահաթիս դուս գնաց էսղանց ու հինգ նմուտ չի քաշի էն տղեն գու քա. էստի էվետ ին կենում։

ԽԱԽՈ

Ախար թե էտենց հիշտ բան էր, էն կոիվ ու դալմաղալն էլ ի՞նչ էր, քա՛։

ՍԱԼՈՄԵ, կիսաձայն:

Ի՞նչս ասում, բատոնո ջան, քարդուրձ անելու իմ. օխտը հարուր թումանով կտրական արի ու մե քսան թուման էլ փքան խամփերուն խոստացա։

ԽԱԽՈ

Վո՛ւյ, քոռանամ չիս, առանց Օսեփի՞ն։

ՍԱԼՈՄԵ, կիսաձայն:

Դանակով խո չիմ մորթի ու, ի՞նչ գուզե ասե, ի՞նչ անիմ։ Վի՛կաց, վի՛կաց, բատոնո ջան, գնանք էն օթաքը։ (Վեր է կացնում:) *Օսեփը չիմանա։*

Ուրախ-ուրախ դուրս է վազում ձախ դռնից:

ԽԱԽՈ, ոչերը հագցնելով։

Տեր աստուած, էս ի՞նչ ին դառի հիմիկվան կնգդիրքը։

Դուրս է գնում նույն դռնից։

ՑԵՍԻԼ ԺԱ

ՕՍԵՓ, մենակ։ Գոտին կապելով՝ գլխարկը ձեռին դուրս է գալիս աջ դռնից, սկզբում խորը մտածմունքի մեջ ընկղմված՝ ձեռքերով զանազան շարժվածքներ է անում։

Տո՛ւ, տո՛ւ... Վո՞ւրդանց տամ, վուր ինչ տալիս իմ, էն էլ դժարս գալիս է... Ամա թե կի առանց էն չէ ըլում, ի՛նչ իմ յիս էլ էսենց քար կտրվի, յիս՝ վուր իմ վուրթկերանց համա հոգիս էլ չիմ խնահի... Չէ՛, չէ՛, թային տղեն էնդադա քեփումս չէ գալի, թե չէ վունցոր վիցն իմ ասում, մե էրկուսն էլ էնենց կանամ ճարի... Հա՛, է՛տ է, էտ. տղեն էն չէ, ինչոր սիրտս ուզում է... Լավը վուր ըլի, էս առուտուրը չէր սարքի գլխիս։ Նրա լավութինը, նրա մարթութինը հիմի կու էրևա, հի՛մի... Տե՛սնինք, տեսնինք հալա թե ի՛նչ է ըլում։ Խոսկս ինչրի էսօր վունչըլումը չիմ կոտրի ջեր ու քանի էս բանումն էլ հաստատ ըլիմ իմ խոսկին, խերն էնդումն է։

Գնում է դեպի նախասենյակը։

ՑԵՍԻԼ ԺԲ

ԳԵՎՈ, ՕՍԵՓ

ՕՍԵՓ, ճանդիպելով Գեվոյին՝ որ մտնում է նախասենյակի աջ կողմից։

Օ՛հ, Գևո ջան, ի՞նչն է բերի քիզ։ (Մեկնելով ձեռքը։) *Համե՛ցեք, համեցե՛ք։*

ԳԵՎՈ

Գիդիս, է՛լի, ինչրու հարկավուր բան չըլի, չէի գա։

ՕՍԵՓ

Ի՞նչ կա ղուլուղիտ. համեցե՛ք, նստի։

ԳԵՎՈ, նստելով։

Է՛հ, ղուլուղը վո՞ւրն է, ի՞նչ իս ասում. մարթուս բանը էրազ է դրուստ, աստուած գիդենա։ Ախար էն անիծած Սանթուրովը...

ՕՍԵՓ, ընդհատելով խոսքը և վախեցած։

Հը՞... ի՞նչ է պատահի։

ԳԵՎՈ

Աստուած վո՛ւչ գիդե նրա գլուխն ու արիվը։

ՕՍԵՓ

Ի՞նչ խաբար է։

ԳԵՎՈ

Էլ ի՞նչ խաբար պիտի ըլի, Օսեփ ջան. սուփրեն վիր է քաղում։

ՕՍԵՓ, շփոթված և ձայնը ցածրացնելով։

Էտ ի՛նչս ասում, Գևո ջան, խո հոքով մարմնով բաՖմիշ էլա։

ԳԵՎՈ

Բաթմիշ ըլի նրա գլուխն ու արիվը։ Արի՛ մարթու ավատա. նրա ապրիլը մարթ տեսնե, կոսիս դրաֆ ըլի։

ՕՍԵՓ, ցածր ձայնով։

Էտ խո սպանեցիր ինձ, Գևո ջան։

ԳԵՎՈ

Յիրգնային թաքավուրը պիտի նրան վաղ էր սպանի, վուր էս բանը չէր արի։ Սատանեն գիդե նրա գլուխը. օմքին տուն էր գնում նրա մաղազինը՝ օրինավուր, կարքով, սարքով, խոսկի տեր, վաղա ճանչնող. արի՛ ու իմացի թե տակն ի՛նչ կա։

ՕՍԵՓ, նույնպես։

Տո, ախար յիս հենց նրա ումիկով էի, Գևո ջան, ինչի՞ր իս ասում. հազար թուման ավելի փուղ պարտե իմը, էն պիտի առիլ էի, վուր տերե տեր էի արի, է՞։ էքուց դրա վաղեն էր ու էլօր իմ վաղեն, ախար, է՞. ի՞նչ ջուղաբ տամ հիմի, ի՞նչ. ա՞սիմ վուր Սանթուրովը չէրիտ ու յիս էլ չիմ տալի՞. յի՞ս էլ Սանթուրովի պես կուտր ննգնի՞մ։ Վա՞յ, գեդինը վուր մտնիմ, է՞ն լավ չէ ինձ համա՞։

ԳԵՎՈ

Ա՛յ, գեդինը մտնի նա, վուր աշխարք չէր էկի։ Մե-էրկու հարուր ձեռաց ունիմ, Օսեփ, թե գուզիս էքուց էվետ։

ՕՍԵՓ

Լա՛վ, լավ, շնորհակալ կուլիմ. ամա իժում ի՞նչ է ասում էն սիվ-էրեսը. չի՞ս տեսի, չի՞ս խոսի։

ԳԵՎՈ

Բաս չի՞մ տեսի. հենց էս սահաթիս նրամեն չի՛մ գալի՞։

ՕՍԵՓ

Թե ի՞նչ կոսե. իմքին տա՛լիս է՞։

ԳԵՎՈ

Թե նրա խոսկին ավատա մարթ, էլի թե իմքին տալիս է, քիզ է տալի մենակ միթամ. ուրիշնիրն ի՛նչ գուզե անին, ասում է։ Դե՛, չո՛ւստ արա, Օսեփ ջան, քանի բանը չէ աշքարացի, էգելա իմքին օտկիս։

ՕՍԵՓ

Ա՛րի, ա՛րի, Գևո ջան, թե չէ աշխարքի ղենո ու մասխարա պիտի դառնամ։

ԳԵՎՈ

Փո՛ւ նրա նամուսին։

Դուրս են գնում նախասենյակի աջ կողմից...

ՏԵՍԻԼ ԺԴ

ՍԱԼՈՄԵ, մենակ: Դուրս է գալիս ձախ դռնից:

Վո՛ւյ, քոռանամ յիս, պստի ճամփով է գալի։ (Դուրս է նայում լուսամուտից:) *Դիվիր էկավ բալկոնը։* (Առաջ գալով:) *Սիրտս ի՛նչ դնգդնգում է... Անգսկածի վո՛ւրդի նիղացավ էս դերիես։*

Գնում է դեպի նախասենյակը: Ալեքսանդրը երևալով լուսամուտից, ներս է մտնում նախասենյակի ձախ կողմից:

ՏԵՍԻԼ ԺԴ

ՍԱԼՈՄԵ, ԱԼԵՔՍԱՆԴՐ

ՍԱԼՈՄԵ, նախասենյակի դռներում:

Համեցե՛ք, համեցե՛ք, գեթաղվա։ (Ձեռն է տալիս:) *Քու վուտը բարի ըլի, վուրթի, միզ համա։*

ԱԼԵՔՍԱՆԴՐ, անտարաշտ շինելով

Ա՛խ, Սալոմե Ավետովնա, (Համբուրում է ձեռքը:) *Ցիս բախտավուր իմ, վուր արժանացա ձիր վուրթի հիշվիմ հարեսի դենը։*

ՍԱԼՈՄԵ, ճակատը ճամբուրելով:

Ճստուն էնենց բախտավուրե, վունցոր քու մոր սիրտը գուզե։ Համեցե՛ք, համեցե՛ք նստեցեք, գեթաղվա, հորես Նատոս էլ դուս գու քա։

Նատում են:

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Ի՞նչպես իք, Սալոմե Ավետովնա, Նատալիա Օսիփովնեն վո՞ւնց է. էն գիշերվան դեսը էլ չինք ռասա էկի։

ՍԱԼՈՄԵ

Լավ, լավ, փառք աստծու. յիս շատ հավնեցա էն գիշերվան կանցերտը։ Տերը բարի տա, լավ բան մոդա էկավ. նշնելու ախչկերանց համա լավ բազար բաց էլավ. աբա էն կանցերտը վուր չէր էլի, վո՞ւրդի կու բարեկամանեինք առչի գամք, յա վո՞ւրդի կու տեսնեիք ու կու հավնեիք իմ Նատոչին։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Նատալիա Օսիփովնեն էն հանդի ախչիկ է, Սալոմե Ավետովնա, վուր առանց կոնցերտի էլ դիֆունանց հավնելու ու սիրելու է, ու յիս իմ ատղամեն պիտի ըլիմ շնորհակալ, վուր նրա սիրտը ինձ ենդավ։

ՍԱԼՈՄԵ

Բաս էտենց հա՞վնում իս, փեսա ջան, իմ Նատոչի՞ն։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Ք՞օ՞օ՞, յիս նրան սիրում իմ, սի՛րում, Սալոմե Ավետովնա։

ՍԱԼՈՄԵ

Վուր էտենց սիրում էիր, վուրթի, էլ ի՞նչ էիր միզ չարչրում. հարուք թումեի խաթիր կինաղամ բանը մոշլա էր ըլում։ Քու քուր խամփերին օրթում-հավատ արավ, վուր թե մինք չինք տա էնդադա, էսոր էվետ միթամ հեպրոչենց Փարսիզի ախչրկա վրա պիտի նշնվիլ էիր։

ԱԼԵՔՍԱՆԴՐ, կոտրատվելով։

Յիս զարմանում իմ ձիզմեն, Սալոմե Ավետովնա, վուր ավատում իք էտ հանգի բաներուն. աբա յիս Լեպրոյինց աչկան գուզեի՞։ Նատալիա Օսիփովնին թողած, նրա բարի սիրտը, նրա սիվ աճկիրը թողած, մարթ փո՛ւղի չդնեն ննգնի՞, ամութ չէ՞։ Յիս ձիզ ճշմարիտն ասիմ, Սալոմե Ավետովնա, յիս շատ նիղացա, վուր իմ քուրը ձիզ մոդ առուտուր է սարքի. ֆի՞. մովե ժանը... ամա էլ ի՞նչ փույթ, աստուձ վիրշեներուս բարի անե։

ՍԱԼՈՄԵ

Անփոշիվնելի ըլի, վուրթի, անփոշիվնելի քիզ համա էլ, միզ համա էլ։ (Վերկենալով։) *Էս սահաթիս, փեսա ջան, գենացվալե... էս Նատոս ի՞նչ էլավ։* (Ալեքսանդրը ևս վեր է կենում։) *Համեցե՛ք նստեցեք, գեթաղվա, աբա դուք ո՞ւր իք ջափա քաշում, էս սահաթիս գալիս իմ։*

Դուրս է գնում ձախ դռնից։

ՏԵՍԻԼ ԺԵ

ԱԼԵՔՍԱՆԴՐ, մենակ։

Վիրշը հասա մուրազիս. սիրուն կնիկ ու փուղ, էրկուսը մետի ձեռիս է... Փուղը, փուղը՝ խոսկը փուղն է, առանց փուղ մարթը մե գրոշ չարժե... Ի՞նչ գուզիս չարշրվի, ինչ գուզիս տանջվի, թե փուղ չունիս՝ օշով մարթահեսաբ չէ գցում... Ամա մե բան լավ չարի վուր շտապեցա... մե քիչ էլ դայիմ էի կանգնի, ութ հարուր թուման կու տեին, հարուր թումանս կորավ... Ի՞նչ անիս, չէր ըլում... Հաջաթ չէ, վունցոր կուլի, կու դուս գամ... (Աջ ու ձախ նայելով։) *Ջաղ տիղ դեվեր ննգա. լավ հարուստնիր ին էրևում, օղոնդ գլուխս սիրիլ տամ։ Մե ծուրբելի տոլշնուք վո՞ւնց չունիմ. կպա՞՝ ծծեցի... Գնացե՛ք տրաքվեցե՛ք. սաղ կանցելարիեն տակն ու վրա կուլի էքուց։* (Ուրիշի ձայնով։) *Գի՛դիք ինչ է՞՝ Մարմարովին օխտը հարուր թուման ին տվի ու է՛ննենց սիրուն ախչիկ, է՛ննենց սիրուն ախչիկ,* (Մատներու ծայրը համբուրելով։) *պծա՞մ։* (Դարձյալ ուրիշի ձայնով։) *Վաա՞։* (Իր ձայնով։) *Տո տը։ Շարման, Սաշա, շարման...* (Զննելով իրան։) *Շի՞կ, ջենտլմեն, պրոստո ջենտլմեն։ Լավ առաչ գնացիր. էքուց էլօր մտիկ թե ո՞ւր կէհաս, դուն օղոնդ փուղի ղադրը գիդացի։ Առանց փուղ դիփ սուտ է, դիփ դարդակ խոսկիր է... Էս փուղի շահը, էն տոնլուղը, մե-էրկու հարուր թուման էլ էսղանց էնղանց՝ էս տարենը յիրիք-չուրս հարուր թուման փուղ է անում։ Տարենը վուր հարուր թուման հիդ գցիմ, էս օխտը*

ութը տարումը հազար թուման փուղ կոնե, տասնուհինգ տարումը՝ էրկու էնղադա, իժում է՛լի էնղադա, իժում էլի էնղադա, վոտ տեբե ի մոսեռ Մարմարով. քեփ արա ու դիփունանց աճկը հանե։

ՏԵՍԻԼ ԺԶ

ԱԼԵՔՍԱՆԴՐ, ՍԱԼՈՄԵ, ՆԱՏՈ

ՍԱԼՈՄԵ, Նատոյի ձեռքը բռնած՝ մտնում է ձախ դռնից։

Ա՛յ, վուրթի. քու մարթը. ա՛յ, փեսա ջան. քու կնիկը։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Ա՛հ, Նատալիա Օսիփովնա, վուխչ գիշիր էրազումս քիզ էի տեսնում։

Համբուրում է ձեռքը։

ՍԱԼՈՄԵ

Թշին. թշին, վուրթի. ու բելգեն էլ տո՛։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Իմ վուխչ կյանքս քիզ փեշքաշ, Նատալիա Օսիփովնա։ (Ձեռքի մատանին տալով Նատոյին։) *Համեցե՛ք, հորեսի դենը դուն իմն իս, Նատալիա Օսիփովնա, ու յիս քունը։*

Համբուրում է։

ՍԱԼՈՄԵ

Բախտավուր ըլիք, վուրթի, մետի ծիրանաք։ (Համբուրում է Ալեքսանդրին, հետո Նատոյին։) *Շնահավուր ըլի, վուրթի։ Համեցե՛ք նստեցեք, փեսա ջան։* (Ցույց է տալիս բազմոցը, որի վրա Ալեքսանդրը և Նատոն նստում են։) *Հորես սրա հերն էլ տուն գու քա։*

Հափշտակված այս և այն կողմն է ընկնում։

ԱԼԵՔՍԱՆԴՐ, նայելով Նատոյին

Նատաշա ջան, ինչի՞ վունչիչ չիս ասում... մե քու քախցը ձենն ինձ ի՛մաց արա։

ՆԱՏՈ

Հիզուս կապվեցավ, մոսեռ Մարմարով։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Մոսեո՞։

ՆԱՏՈ

Ա՛լեքսանդր, Սա՛շա։

ԱԼԵՔՍԱՆԴՐ, Նատոյի ձեռքը բռնելով։

Սաշա, Նատաշա. ի՞նչ սաղ ինք գալի։

Համբուրում է ձեռքը։ Զախ դռնից մտնում է Խախոն։

ՏԵՍԻԼ ԺԷ

ՆՐԱՆՔ, ԽԱԽՈ

ՍԱԼՈՄԷ

Մե արի՛, բատոնո ջան, է՞։

ԽԱԽՈ

Է սենց էլ բան կուլի՞։ (Սալոմեին։) *Քա՛, մե մո՛ւլափ չէիք տա՝ էն մարթն էլ տուն էր էկի՞։*

ՍԱԼՈՄԷ

Ի՞նչ հաչաթ, հորես գու քա, ջեր մե դուն չավ բաբաթի օխնե հալա։

ԽԱԽՈ

Աստուձ օխնե. իմ միղավուր բերնով խնդրում իմ՝ կամար-կատարելի ձիր, քոմագը։ (Ալեքսանդրը և Նատոն վեր են կենում։) *Աստուձ անփոշիվնելի անե. ձլի՛ք, ձախկի՛ք, մե բա՛րցի ձիրանաք։*

Օսեփը մանելով ճախատենյակի աջ կողմից, մնում է զարմած։

ՏԵՍԻԼ ԺԸ

ՆՐԱՆՔ, ՕՍԵՓ

ԽԱԽՈ, շարունակելով։

Առնիկը տղա տա աստուձ. մեկմեկու սիրիք ու պատվիք, թաքավուրի աձկը քաղցր ըլի քի վրա, վուրթի... (Տեսնելով Օսեփին։) *Ա՛յ, մնացածն էլ իր հերն օխնե։*

ՍԱԼՈՄԷ

Ա՛յ, Օսեփ ջան. շնահավուրե քու աչկա բախտավորութինը։

ՆԱՏՈ

Պապա՛շա...

Մոտենալով Օսեփին, ձեռքը համբուրում է։ Օսեփը մնում է անշարժ։

ԱԼԵՔՍԱՆԴՐ, առնելով Օսեփի ձեռքը։

Հորեսի դենը, իմ հեր, յիս էլ ձիր վուրթկերանց հեսաբումն իմ։ (Նփոթված հետ դառնալով դեպի Նատոն։) *Էս ի՞նչ բան է։*

ՍԱԼՈՄԷ

Էտ ի՞նչ քաղաքավարութին է, Օսեփ։

ԽԱԽՈ

Ի՞նչ էլավ քիզ, Օսեփ։

ԱԼԵՔՍԱՆԴՐ, Սալոմեին։

Ցիս վունչիչ չիմ հասկանում։ (Օսեփին։) *Նեղացած իք էրևվում, իմ հեր։*

ՕՍԵՓ, ուշքի գալով։

Ցի՞ս... չէ՛... հա՛, գլուխս պտուտ էկավ մեքաշ։

ԱԼԵՔՍԱՆԴՐ, աթոռ մոտ տանելով։

Հանձեցե՛ք, իմ հեր։

ՕՍԵՓ, Ալեքսանդրին։

Մի՛ նիղանա... անցկացավ։

ՍԱԼՈՄԷ

Ախար փեսին է՞տենց կու հանդիբին ու էն էլ է՛սթավուր փեսի՞ն. մե ի՛մքին ասա, է՞։

ՕՍԵՓ

Էլ ի՞նչ ասքա...նշնիլ իք, աստուձ վիրչը բարի անե։ (Ալեքսանդրին։) *Համեցե՛ք, նստեցեք։*

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Իմ հեր, աբա յի՞փը կու հրամայիք նշվանտեքը. էքո՞ւց թե էլոր։

ՕՍԵՓ

Քու քեփն է. վունցոր գուզիս։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Մե քսան մարթով գու քամ. իմ նաչալնիկին էլ պիտի ասիմ, չի ըլի։

ՕՍԵՓ

Վունցոր կու հրամայիս։

ԱԼԵՔՍԱՆԴՐ, Սալոմեին։

Կո՞ւլի բեդամաղ է ինձմեն. թե իմքին գեթ ունիմ, ասե՛ք, խնդրում իմ։

ՍԱԼՈՄԵ

Չէ՛, ի՞նչս ասում, վուրթի, վո՞ւնց կուլի։

Շարունակում են ցածր ձայնով խոսել բեմի աջ կողմում։

ՕՍԵՓ, բեմի ձախ կողմում, Խախոյին։

Տո, ա՛նաստուծնիր, մե քիչ չէ՛իք կանա մուլափ տա՞։

ԽԱԽՈ

Ի՞նչ է պատահի։

ՕՍԵՓ

Աստուծ վուչ գիդե իմ գլուխն ու արիվը. Սանթուրովը կուտրացավ։

ԽԱԽՈ

Վո՞ւյ, քոռանամ յիս։

ՍԱԼՈՄԵ, բարձր, Ալեքսանդրին։

Համեցի՛ք, փեսա ջան, գնա՛նք գաստինեն։

ԱԼԵՔՍԱՆԴՐ, թեթև առաջարկելով Նատոյին։

Էստի մե բան կա, Նատաշա։

Դուրս են գնում ձախ դռնից, Սալոմեն հետևում է նրանց։

ՕՍԵՓ

Ա՛խ, աստուծ, ա՛ստուծ, յարաբ ի՞նչ իս գրի ճակտիս։

ՍԱԼՈՄԵ, ճանապարհից հետ դառնալով, Օսեփին։

Գուզիս ինձ սպանի, Օսեփ, օխտը հարուր իմ խոստացի։ (Դնալով Խախոյին։) *Համեցի՛ք, բատոնս ջան, դեսը։ Ա՛յրի, Օսե՛փ։*

Դուրս է գնում ձախ դռնից։

ՑԵՍԻԼ ԺԹ

ՕՍԵՓ, ԽԱԽՈ

ՕՍԵՓ, սաստիկ նեղացած։

Էս ի՞նչ իմացա... ղո՞ւրթ ասա՛վ... քիզ իմ հարցնում, չի՛ս իմանո՛ւմ, ի՞նչ իս պապանձվի։ (Լացի ձայնով։) *Ղուրթ է էլի, ղո՞ւրթ. տեսնում իմ վուր ղուրթ է... Օ՜հ, աստուծ, ինչի՞ կեծակ չիս վեր գցում էս անիծած տուն ու տիղիս վրա, վուր դիփունիս մետի գեդինը դեվեր տանե... Աշխարքի փուղ կորավ իմն էս սահաթիս. տուն էի գալի, վուր դիփ մետի մոշլա անիմ բանը, ու դուք էս ի՞նչ բերիք գլուխս, ի՞նչ։*

ԽԱԽՈ

Իմ միղն է, իմ միղը, վո՛ւրթի. մի՛ շարանա, գենացվալե, հաբուռ թուման իմ թա՛ղմելեն կու տամ։

ՕՍԵՓ

Քու թաղմելե՞ն... Փա՛ռք քիզ, աստուծ, փա՛ռք. հասա էն տիղը, վուր ախկտի պես օղորմութենի արժանի էլ դառա... Քու փուղիրը քիզ հա՛մա պահե, ինձ հարկավուր չէ... ինձ միխկտ իսկի էլ մի՛ բերի, յիս հարուստ իմ, խի՛ստ հարուստ իմ. ի՞նչ անիմ թե Սանթուրովը կուտրացավ, ինձ ի՞նչ հաշաթ, ո՞վ կանա ինձ ժաժ տա՝ զար ու զամինի պես կանգնած իմ, տանս անհատնելի փուղե ծղարդ է դուս գալի։ (Մազերը քաշելով։) *Ա՛խ, աստուծ, ա՛ստուծ...* (Բարկացած մաճ է գալիս։) *Գնա՛, գնա՛, փեսին հանդիբի, չո՛ւստ արա, ամութ է, մարթը չինովնիկ է,* (Դառը ծիծաղելով։) *հա՛, հա՛, հա՛...*

Դուրս է գնում աջ դռնից։

ԽԱԽՈ

Տեր աստուծ, դո՛ւն թափե ու ազատե։

Դուրս է գնում ձախ դռնից։

Վարագույրն իջնում է։

ԱՐԱՐՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Փարսիդի տանը փարթամ սենյակ՝ անճաշակ կերպով կահավորված. հատակը ծածկած է գորգով, առաստաղից կախած է բյուրեղյա չան ճոճված մոմերով։ Աջ, ձախ և դիմացը դռներ՝ բավիչ դրապերիներով զարդարած։ Ձախ կողմը՝ բազմոց, որի մոտ սեղան, ճայելի և լուսամատ. իսկ աջ կողմը՝ գունավոր ապակով ծածկած մի այլ սեղան։ Խարտում՝ քնկողմարան [ֆուշեք]։ Ուր հարկն է արձաններ, բազկաթոռներ, ճոճված լապտերներ և ճոճված մոմերով աշտանակներ ու կանդելաբրներ։ Ցերեկ է։

ՑԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ՓԱՐՍԻՂ, նստած է աջ կողմի սեղանի մոտ, որի վրա դարսած են համարակալ և բաց հաշվեմատյաններ, Միխոն, կոճգնած, կտավի մի կտոր ձեռքին, գագով չափում է։

Միխոն

Էս էրկու, էս յիրիք, էս չուրա, էս հինգ, էս վից, էս էլ... պակսեցավ, աղա։

ՓԱՐՍԻՂ, վեր կենալով տեղից և Միխոյի գլխին խփելով։

Ա՛յ, թե պակսեցավ. չա՛փե նուր մեկանց։ Հոգիտ կու հանիմ թե մի վերշոկ պակսեցրիլ իս օխտնեմեն։

Միխոն, սկսելով ճորից չափել։

Ա՛խ։

ՓԱՐՍԻՂ

Անգճներեմետ կու հանիմ էտ ախը. դե՛, չո՛ւստ արա. (Կամաց վզակոթին տալով։) *հը՛։*

Միխոն

Ա՛յ, աղա. (Զափում է։) *էս մեկ, էս էրկու...*

ՓԱՐՍԻՂ, աջ ձեռքը բռունցք արած բթամատով Միխոյի գլխից իբրև մի բան արմատախիլ է անում։ (Գլխից բողկ հանել։)

Ջքե՛, տո անիծած, է՛։

Միխոն, սաստիկ ձգելով։

Էս յիրիք, էս չուրս...

Ճակատից քրտինքը սրբում է։

ՓԱՐՍԻՂ

Հը՛, իշի բիրն ունիս շալկա՞ծ։

Միխոն

Էս հինգ...

ՓԱՐՍԻՂ

Ջքե՛, ձքե՛։

Միխոն

Էս վից, էս էլ... էլի յիրիք վերշոկ պակասեցավ։

ՓԱՐՍԻՂ, Միխոյի ականջները քաշելով։

Յիրիք վերշոկ պակսեցա՛վ... էստի կու ավելնա։

Միխոն, լալով։

Վա՛յ մե, վա՛յ մե, վա՛յ մե, վա՛յ մե...

ՓԱՐՍԻՂ

Իշի գլուխ, յի՞փը պիտի դուն մարթ գառնաս։

Միխոն

Վա՛յ, դեդի չան, վա՛յ, դեդի չան...

ՓԱՐՍԻՂ, ավելի ոլորելով նրա ականջները։

Պա՛կաս է՛։

Միխոն, աղաղակելով։

Ա՛ղա չան, ա՛ղա, քու հոքուն մեռնիմ, ա՛ղա չան...

ՓԱՐՍԻՂ

Ա՜յ, թե պակաս է։

ՄԻԽՈ

Թա՛մամ է, թա՛մամ, ա՛ղա ջան, մե՛կ էլ թո՛ղ, ա՛ղա ջան։

ՓԱՐՍԻՂ

Դե՜, վի՛կալ. ամա մո՛ւղայիթ կաց։

ՄԻԽՈ, առանձին

Ցա՜ սուրբ Կարապետ։ (Բարձրաձայն չափում է։) Մե՛կ...

ՓԱՐՍԻՂ

Ուտիս կրկոնե՛ք։

ՄԻԽՈ

Էրկու...

ՓԱՐՍԻՂ, բրթմնջում է ետոռ։

Հայվա՛ն։

ՄԻԽՈ

Յիրիք...

ՓԱՐՍԻՂ

Աճկիրդ բա՛ց արա, է՛լի, անիծած։

ՄԻԽՈ

Ջուրս...

ՓԱՐՍԻՂ

Տեսնում իս Դարչոն վո՛ւնց է չափում։

ՄԻԽՈ

Հինգ...

ՓԱՐՍԻՂ

Դուն էլ սորվի, է՛լի։

ՄԻԽՈ

Հինգ...

ՓԱՐՍԻՂ

Թե չէ՝ էտենց մնացիր, դուքանս քարուքանդ կոնիս։

ՄԻԽՈ

Հինգ, հինգ...

ՓԱՐՍԻՂ

Էլ մե օր չիմ պահի, ասում գիդենա։

ՄԻԽՈ

Հինգ, հինգ, հինգ...

ՓԱՐՍԻՂ

Դե՜, գա՛գրդ բանեցրու...

ՄԻԽՈ

Հի՛նգ... (Առանձին։) Ցա՜ սուրբ Գեվորքի զորութին։ (Բարձր։) Էս վից... վի՛ց... Կու պատռվի, աղա, խիստ իմ ձքում։

ՓԱՐՍԻՂ

Բա՛նքդ տիս։

ՄԻԽՈ, հանկարծ։

Վա՛յ, վա՛յ, վա՛յ, վա՛յ, ինչոր ձեն հանիցս։

ՓԱՐՍԻՂ, տնտղելով։

Ջէ՛, վունչիչ չկա. հոքիտ կու հանիմ թե պատռիլ իս։

ՄԻԽՈ

Էս էլ (Տնտղելով։) օխտանեմեն կես վերշոկ պակաս։

Դիմացի դռնից մտնում է Գիժ-Մոզին և ետեր լուռ կանգնում։

ՏԵՍԻԼ Թ

ՆՐԱՆՔ, ԳԻԺ-ՄՈԶԻՆ

ՓԱՐՍԻՂ, Միխոյի գլխին խփելով։

Աբա դուն ինչ շնուք ունիս, վուր էս կես վերշոկն էլ չդուս քերիր։

ՄԻԽՈ, զոռալով։

Վուր չկա, աղա, յիս ի՛նչ անիմ, վա՛։

ՓԱՐՍԻՂ, նրա մազերից ու ականջներից քաշելով։

Սո՛ւտ էլ վուր խոսում է՛։

ՄԻԽՈՆ, գոռալով:

Վա՛յ մե, դե՛դի ջան, դեդի ջան... աստուծ չունի՞ս, խո չի՞ս կանա սպանի ինձ. արա դո՛ւն չափե թե օխտն է։

ՓԱՐՍԻՂ, շարանալով վերցնում է գազն ու կտավը:

Օխտը չէ՞. ա՛յ, թե օխտը չէ։ (Զափում է:) *Էս մեկ, էրկու, յիրիք, չուրս, հինգ, վից, օխտը, էս էլ քի մե չարեք ավելի փեշքաշ։ Էս ի՞նչ է թե օխտը չէ՞. վուր մեռնիս պիտի սորվիս. շա՞գիրդանի համա ունիս աճկիրդ բա՞ց։ Դե՛, չո՛ւստ արա։*

ՄԻԽՈՆ

Ա՛խ, աստուծ, ի՞նչ անիմ։ Էս մեկ, էս էրկու...

ՓԱՐՍԻՂ

Կամաց, չպատռիս։

ՄԻԽՈՆ, լաց լինելով:

Ախար, յիս վո՞ւր չուրը ննգնիմ. քաշում իմ՝ պատռվում է ու չիմ քաշում՝ չէ դուս գալի։

ԳԻԺ-ՄՈՉԻ, առաջ գալով:

Էհե՛յ, կտո՞ գուլիաեա... Գիժ-Մոզի՛... (Միջադեմ է:) *Հա՛, հա՛, հա՛...*

ՓԱՐՍԻՂ, առանձին:

Էս գիժ անիծածն էլ վո՞ւրդի էր։

ԳԻԺ-ՄՈՉԻ, խլելով Միխոյի ձեռից գազն ու կտավը:

Ցի՛ի, լաչաթրիան, ի՛ս տու էստի։ Էստի օխտն էլ կա, քսան ու օխտն էլ։ (Զափում է շուտ-շուտ:) *Մեկ, էրկու, յիրիք, չուրս, հինգ, վից, օխտը, ութը, ինը, տասը, տասնումեկ, տասէրկու, էս էլ տաս յիրիք, էս էլ տասչուրս. հը՛, է՛լի գուլի՞ս. էս էլ տասնուհինգ, էս էլ տասնումից. գո՞ւլիս է՛լի դուս բերիմ... Սլլեցո՛ւ, է՛ֆ, ատ՛, չիս իմանո՞ւմ։* (Գազը և կտավը Միխոյի վրա ածելով:) *Բռնե՛, մա՛րթ դառի, է՛լի. սրա պես աղա մարթու մոդ աշկիրտ իս, էստու շնուք էլ չունի՞ս, մե կես վերշոկի գողնալ էլ չսորվեցա՛ր ինչրու հիմի՞... Շաբլո՛ւթ...*

Միխոն ուզում է ազատվել կտավից, բայց ավելի է խանգարվում:

ՓԱՐՍԻՂ, Գիժ-Մոզուն։

Ցիս քիզ ասում իմ լպստած-լպստած մի՛ խոսի ինձ մոդ, թե չէ՞։

ԳԻԺ-ՄՈՉԻ

Էտենց է աշխարքն, ա՛յ. լավութենին լավութին չկա։ (Մատնացույց անելով Միխոյին:) *Ուզում իմ մարթ դառնա։* (Միխոյին:) *Գնա՛, գնա՛, վուրթի, գնա՛ մարթ դառի. սո՛րվի, է՛լի, քու աղիմեն, տե՛սնում իս ինչ զադա փուղ է մոդ արի։* (Փարսիղին:) *Ակա՛, կեսօրի վուխտ է, սո՛ւփրեն գցին, ասա՛, է՛լի. զոնաղ իմ էկի։ Ի՞նչ ունիս ճաշին. զո՞շի ծվենի թե կո՛նչոլ, քեփ է վուր կու շանց տաս, օ՛հ, հո՛, հո՛, հո՛... Շաբլո՛ւթ։*

ՓԱՐՍԻՂ, առանձին:

Էս անիծածը խիստ է հարփած։ (Միխոյին:) *Գնա՛ կորի էսդանց։*

Միխոն գնում է կտավի մնկ ծայրը ձեռին, մյուսը ետևից գետնին քարշ տալով:

ԳԻԺ-ՄՈՉԻ, հետևելով վայր ընկած կտավի ծայրին:

Է՛ստի մտիկ է՛... (Փարսիղին:) *Արի՛ վրեն նստի, միթամ սանկա է քիզ համա, էլ սանկի փուղ չիս տա. խիստ ձուն է գալի, քու արիվը։* (Ինքը նստում է կտավի ծայրին:) *Ա՛րի, է՛լի... Շաբլո՛ւթ... Քա՛շե, տո՛։*

ՓԱՐՍԻՂ

Տեր օղորմած աստուծ։ (Զարանալով Միխոյի վրա:) *Ջէ՞իր կանա կարքի մոդ անի՞։*

Խփում է Միխոյի գլխին և քաշում է կտավը:

ԳԻԺ-ՄՈՉԻ

Տպրրրո՛ւ...

Թափ է տալիս կտավը:

ՓԱՐՍԻՂ, որ փոքր էր մնում վայր ընկներ, բարկությունից խփում է Միխոյին:

Էս դիփ քու միղն է, անիծած։

Միխոն դուրս է վազում դիմացի դռնից:

ՏԵՍԻԼ Գ

ՓԱՐՍԻՂ, ԳԻԺ-ՄՈՉԻ

ԳԻԺ-ՄՈՉԻ, շարունակելով:

Մո՛ւլափ, էստի հարկավուր է։ (Տեղից վեր է թռչում:) *Էս ամերիկեն էլ ո՞ւր իս ղրգում, օխնած հոքի. էսօր է թե էքուց պիտի մեռնիս, էսու վրա լավ պատանք ո՞վ կու տա քիզ։* (Կտավով շափում է Փարսիղի հասակը ետևից:) *Էս մեկ,* (Զափում է առջևից:) *էս էլ մեկ. էլի խելի մնում է։*

ՓԱՐՍԻՂ, ազատվելով:

Գժվի՞լ իս, տո՛։

ԳԻԺ-ՄՈՉԻ, շարունակելով:

Խիստ հանգումն է, քու արիվը։

ՏԵՍԻԼ Դ

ՆՐԱՆՔ, ՔԱԼԻ

ՔԱԼԻ, մտնելով ձախ դռնից:

Ա՛յ, թազա իաբար։ (Տեսնելով Գիժ-Մոզուն, շվարվում է:) *Վո՛ւյ, քոռանամ չիս. էտ ի՞նչս անում, տո՛։*

ԳԻԺ-ՄՈՉԻ

Վա՛, չիս տեսնո՞ւմ, պատանք իմ ձևում. ա՛րի, գո՞ւզիս քի համա էլ. (Պատրաստվում է չափել և նրա հասակը:) *քանի գուզիս դուս գու քա, էնզադա քաշքշվեցավ էս իրիդ ամերիկեն։*

ՔԱԼԻ, հեռանալով:

Դե՛նը, դե՛նը։ Է՛լի սիվցար դեսը՞։

ԳԻԺ-ՄՈՉԻ

Վա՛հ, բաս առանց ձիզ կու դիմնեի՞։ (Նորից մոտեցնում է կտավը Քալիին:) *Ա՛րի, է՛, տիս քա՛նի պատանք է դուս գալի։*

ՔԱԼԻ

Ի՛նչ աստուած է խոովի գլխիտ, քա՞։

ՓԱՐՍԻՂ

Էտ ի՛նչ իշավարի հանաք է, տո՛։

ԳԻԺ-ՄՈՉԻ

Քու քաղաքավարի ջանին մեռնիմ. մե անգճնիրուտ էլ թա՛մաշա արա, Օրթաճալու էշն էլ չունե էտղադա անգճնիր... Պստի վուտնի՞րը. է՛ստի մտիկ, կոսիս էրեխի կուբո ըլի։ Ա՛փսուս չէ իշի վուտնիրը՝ սուփթա, լաղաթի. քու մատներու վրա կի բարակ է ու. էտ ի՞նչ է, դա՛թվու վուտնիր է՞։

ՔԱԼԻ

Գժվի՞լ իս, տո՛, թե ինչ խաբրներումն իս էս։

ԳԻԺ-ՄՈՉԻ

Գիժը դո՛ւն իս, սարսաղ, վուր էսթավուր մարթու պատիվը չիս իմանում։

ՓԱՐՍԻՂ, նստելով աջ կողմը և առանձին:

Ի՞նչ փիս է հարփած անիծածը։

ՔԱԼԻ

Ջե՛նըտ, ասում իմ, է՞։

ԳԻԺ-ՄՈՉԻ

Խալը գիդենա, հանաք չիմ անում. աբա ջիբումտ ի՞նչ ունիս. հինգ մանեթ ունի՞ս, բի՛ իրան տանք՝ տասը կու շինե. տասն ունի՞ս՝ քսան կու շինե։ Գոդիկդ քա՞նի արշին է, հի՞նգ. գո՞ւզիս ձեռաց օխտը դուս բերե էս սահաթիս։ Ա՛յ, ժռնով տուտիմ ձիզ էրկուսիտ միտի, հըա՞։ Խիզճ Միխոյի անգճնիրը յիրիք գազ ձքից, վուր էս ամերիկի կտուրը օխտն արշին դուս բերե, ամա ինչոր չկա, վո՞ւնց կու դուս գա։ Ա՛րի ինձ խե՛լոք ասա, կու խելոքանա՞մ, ա՛րի սրան ճքնա՛վուր ասա, կա՞նա ճքնվի՞. արի քիզ սի՛րուն ասա, օ՛հ, հո՞, հո՞, հո՞, ի՞նչ ի՞ս։ (Երգում է:)

«Հոյի՞ գաբադրուլո մթվարե,
Ընելս վզի վար մոմեխմարե,
Մնաթոբլադ գանմիարե,
*Մեց գանմինաթլե արե։»**

---

* Վրացերեն.—
Ո՛վ փառահեղ լուսին,
Նստած եմ խավարում, օգնի՛ր ինձ,
Զգի՛ր քո փայլուն լույսդ ինձ վրա
Եվ լուսավորի՛ր բոլոր շուրջս։

Դուն էլ կոսիս՝ աթմորթու պատկիր ունիմ. տարեմուտ գիշերը մեր թամարոն վուր բասիլեք է թխում, մատով էրկու տիղ քիշմիշ է ցցում, աճկիր է, կոսի, ու մեչտիղն էլ կես նուշը կպցնում է, դառավ քինթ, կոսե. դրուստ էն չի՞ս Օ՜հ, շենի կի ճիրիմե. (Փաթաթվում է և ուզում է համբուրել:) արեգագի շուխկը վրեմետ վե՛ր է գալի՞։

ՔԱԼԻ

Ի՜հ, խուզիմ քու գլուխը, շիրաչիանի հուտումը մլլում իս։

ԳԻԺ-ՄՈՉԻ

Վա՜հ, գանա չիմ գիդի՝ ամեն օր վարթ-մանուշակի իս հուտ կալնում։ (Շարժվածքով ցույց է տալիս Փարսիղի վրա:) Մե քինթ ու պոռնգին էլ թա՛մաշա արա, է՛ (Միծաղում է:) Հա՛, հա՛, հա՛...

ՓԱՐՍԻՂ. առանձին:

Է՛սենց էլ լպստա՜ծ։

ԳԻԺ-ՄՈՉԻ, նորից փաթաթվելով Քալիին:

Մե ա՛րի, է՛։ Է՛ստի մտիկ, վո՞ւրդի իս գողցի էտ ճակտի աղլուխը։

ՔԱԼԻ, հեռացնելով:

Մե դե՛նը, հենց ապրիս, թավաթ սիրտս տրաքած է ու պատռած։

ԳԻԺ-ՄՈՉԻ

Տրաքվի ու պատռվի ամբախտ մարթու գլուխն ու արիվը։ (Ցույց է տալիս Փարսիղի վրա, որ այս միջոցին հաշվեմատյանին էր նայում, և հեգնորեն:) Բա՞ս էմարթլեքի խղճին, իր համա հալալ մրամրտ, տերողորմեն առչիվը, Սաղմուս է կարթում։

ՓԱՐՍԻՂ

Գիժ-Մոզի, լիզվիտ ա՛ղ արա, ասում իմ։

ԳԻԺ-ՄՈՉԻ

Վա՜, մեքաշ անգճներուս վրա սուխ չկոտորիս։

ՔԱԼԻ, գնալով դեպի Փարսիղը, Գիժ-Մոզուն չանչ է անում:

Քու հարփած գլուխն է՛լ։ (Փարսիղին:) Էս իմացա՞ր։

ՓԱՐՍԻՂ

Թո՞ղնում է մարթո՞։ Ի՞նչ խաբար է։

ՔԱԼԻ

Էլ ի՞նչ խաբար պիտի ըլի. Մարմարինց տղեն իրիգուն նշնվիլ է։

ՓԱՐՍԻՂ

Վա՜հ, ղո՞ւրթ։

ՔԱԼԻ

Աստուծ գիդենա։

ՓԱՐՍԻՂ

Ո՞ւմ ախչկա վրա։

ՔԱԼԻ

Գուլաբինց Օսեփինը։

ՓԱՐՍԻՂ

Ղո՞ւրթ իս ասում։

ՔԱԼԻ

Բաս սո՛ւտ իմ ասո՞ւմ։ Հազար թուման էլ փուղ ին տվի։ Էնղադա ասի՝ ավելցո՛ւ, ասի. գնաց, է՛լի, ձեռներիմես. իժում ի՞նչ տղա էր։ Խիստ մինձ-մինձ ին պատռվում. ո՞վ էրիտ նրանցն էսղադա փուղը։

ՓԱՐՍԻՂ, վեր կենալով:

Վա՛յ քու տղիս տղա. լիս նրան հազար թումանը կու շանց տամ... (Կանչում է:) Մի՛խո, Մի՛խո. գնա՞ց թե էստի է։ (Կրկին կանչում է:) Մի՛խո։

Մտնում է Միխոն դիմացի դռնից:

ՏԵՍԻԼ Ե

ՆՐԱՆՔ, ՄԻԽՈ

ՓԱՐՍԻՂ

Էս սահաթիս դեվեր վազի Տափի-թաղը. Գուլաբինց Օսեփի դուքանը խո գի՞դիս։

ՄԻԽՈ

Էն օրը վուր փո՛ւղ էրի՞։

ՓԱՐՍԻՂ

Հա՛, հենց նա։ Գնա՛, վուրդիոր ըլի գթի՛ ու ասա, վուր մեռցածը էս սահաթիս էվետ բերի. դե՛, չո՛ւստ արա։ Ի՞նչ իմ ասում՝ (Մատնանշելով կտավը։) *Էս պատանքն էլ տար։*

ԳԻԺ-ՄՈՉԻ, ծիծաղում է։

Հա՛, հա՛, հա՛... ա՛յ, ասուած լսե։

ՓԱՐՍԻՂ

Ցիս էլ ի՛նչ իմ ասում, խիլքս խառնվեցավ։ (Միխոյին, շարանալով։) *Ի՞նչ իս բերանդ բաց արի, չիս իմանո՞ւմ. վի՛կալ էս ամերիկի կտուրը։* (Միխոն աշխատում է հավաքել։) *Աբա-հրա՛, իժում գնա՛ դուքանն ու Դարչոյին կոսիս, վուր էս նմուտիս էվետ էստի բանվի։* (Խփելով Միխոյի գլխին։) *Տո՛, ձեռնիրդ փա՛փա է ուտո՞ւմ։* (Միխոն աշխերը սրբում է։) *Ըահա՛...* (Հավաքելով կտավը և տալով Միխոյին, որին կրկին խփում է։) *Դե՛, չո՛ւստ։*

Միխոն կտավը ձեռքին դուրս է գնում դիմացի դռնից։

ՏԵՍԻԼ Զ

ՔԱԼԻ, ՓԱՐՍԻՂ, ԳԻԺ-ՄՈՉԻ

ՓԱՐՍԻՂ, շարունակելով։

Տեսնիմ վո՞ւնց է տալի հազար Թուման... վուր տալիս է, ո՞ւմ փուլի է տալի։

ՔԱԼԻ

Թա՛վլափիան Սալոմի, փեսին ձեռնենրեմիս խլից, է՛լի։

ՓԱՐՍԻՂ

Տի՛ս Թե ի՞նչ օրը հասցնիմ յիս նրան։

ԳԻԺ-ՄՈՉԻ

Հեստի բան քովլացի վուր չկանենաս, Թե չէ վաղուԹինը քու փեշակն է։ Օսեփն ի՞նչ միզ ունե վուր ջիգրը նրա վրա իս հանում։ Քու աղչիկը վուր տուտուց ըլի ու յիրիք գազ բերան ունենա, Օսեփն ի՞նչ անե էտումը, էլ Միխոյի անգնեռուն ըա՞ս էմարԹլեբի. պակասը Թաման կոնեիր, է՛լի։

ՓԱՐՍԻՂ, շարանալով։

Փիե՛։

ԳԻԺ-ՄՈՉԻ

Փիե՛ քիզ ու աստուած կրակ. կու տեիր դուն էլ, էլի՛, ինչի՞ չէիր տալի, ո՞ւմ համա իս մոդ անում. էքուց էլօր կու սատկիս, դիփ մունդռեկ կու մնա։

ՓԱՐՍԻՂ

Ձե՛նդ, Թե չէ՛։

ՔԱԼԻ, ԳԻԺ-Մոզուն։

Դուն էլ ի՛նչ իս մե կուրը տրաքեցնում, տո՛. միր դարդը միզ հերիք է։

ԳԻԺ-ՄՈՉԻ

Դարդ ցավի գաք ու աստծու պատիժի. յիս ու իմ աստուածը, բախտավուր է էն տղեն, վուր Օսեփին է ռաստ էկի ու ձիզմեն ազատվիլ է. գլխով վուտով Օսեփի դունգը չաժիք։

ՓԱՐՍԻՂ, շարանալով։

Գնա՛ գլխեմես ռադ ըլի, Թե չէ էս չարացած սրտիս ինչ ջիգր ունիմ քիզ վրա կու հանիմ։

ԳԻԺ-ՄՈՉԻ

Վա՛ա, (Բռունցքը բերանին մոտեցնելով։) *պըռըծ... Ի՞նչ պիտի անիս, ճռնիրս դողում է քիմեն. մեքաշ իմ դուքանն էլ չմհրիլ տաս։ Ի՞նչ մարԹ իս դուն, ի՞նչ։*

ՓԱՐՍԻՂ

Ի՞նչոր վուր իմ, քի վրա խո լավ մարԹ իմ։

ԳԻԺ-ՄՈՉԻ

Ինչո՞վ իս լավը։

ՓԱՐՍԻՂ

Մեկ էս վուր յիս խելոք իմ, դուն գիժ իս։

ԳԻԺ-ՄՈՉԻ, ծիծաղում է։

Հա՛, հա՛, հա՛... վուր խելոք ըլիս, էտ չիս ասի։ Ինչո՞վ իմ գիժ. վուր քու արարմունքն էրեսիտ ասում ի՞մ։ (Մաղրելով։) *Խե՛լոք իմ, կոսե. ավասս տելեգրաֆի մավԹուլը դուն մոգոնեցիր, ա՛յ։*

ՓԱՐՍԻՊ

Յիս փուղ ունիմ։

ԳԻԺ-ՄՈՉԻ

Քու փուղը տար ու... (Մի քանի խոսք է ասում ականջին։) *Էսղանց, էնղանց փախցրիլ իս, ինձմեն խլիլ իս, նրամեն գողցիլ իս, փուղ իս չինի ու էնդով դրոշկա ու կալասկա իս սարքի ու մեչն ուռած ու փքած սեիր իս անում. Է՞ս է քու փուղն, է՛լի... Քու մամա Մաթուսն էլ առանց կալասկա դուքանը չէր գնում, հա՛ քու արիվը... Փուղ ունիմ, կոսկ... Վուր գլխամեն քի վրա հարուստ չէ. աբա քու հալալ աշխատանքն էլ հնսաբ անինք, իմն էլ... տեսնինք՝ ո՛վ շատ ունի։* (Գրպանից քսակը հանելով և աջ ձեռքով վրան խփելով։) *Ա՛յ, ա՛յ, ա՛յ,* (Աջ ձեռքով իբրև հակառի քրտինքը սրբելով։) *դիր էսենց, ա՛յ... Բաս չէ ու քի պես էգեղեցու համա փուղ կու մոդ անեի ու ջիբս կոծեի... Ի՞ս տու իմ մեմանեթը... Ի՞նչ տամ մեմ ձեռաց ծուտ կուտր ննգնիս։*

ՓԱՐՍԻՊ

Միղայի աստծու։

ԳԻԺ-ՄՈՉԻ

Օ՛հ, հո՛, հո՛, հո՛, ավտաս տուչի գամը կուլի, ա՛յ։ Վուր մեռնիս տոպ-ըրկներով գերեզմանդ կոծին։ Հա՛, քու գլխի արիվը գիդենա։

ՓԱՐՍԻՊ, շարաճալով։

Տո, ձեռը չի՞ս վիկալնի ինձմեն։

ՔԱԼԻ, նույնպես։

Ջիս ամանչո՞ւմ։

ԳԻԺ-ՄՈՉԻ, Փարսիպին։

Վուր մեռնիս, ձեռը չիմ վիկալնի. քանի սաղ իս, քիզ համա օրթունք է ստիղծի ինձ աստուծ. պիտի ջանտ ուտիմ ու յիփոր կու մեռնիս, էն չախը թա՛մաշա արա՝ սիպտա--սիպտա օրթունքնիրը կու փաթրթվին վրես ինթիքը, անգճեմետ տուն կէհան ու քնթեմետ ու բերնեմետ դուս գու քան... ֆհե՛յ. կաա՞ գուլիաետ... Շաբլո՞ւթ։ Ա՛փսուս չէ՞ քու սիրուն աճկիրը վուր մեչն օրթունք նստի։ Ա՛րի մե պաշ անիմ, գեթաղվա։

ՓԱՐՍԻՊ, մեկնելով ձեռքը։

Ջեռիս պիտի պաշ անիս։

ԳԻԺ-ՄՈՉԻ

Վա՛հ, վարթապիտ խոմ չիս... Էնենց պոռշտի անինք թե գուզիս։ (Ձեռքը Փարսիպի ուսին գցելով։) *Է՞ստի մտիկ, կոսիս դժուխկի մաշխալա ըլի։* (Հեռանում է։) *Ղո՛ւրթ, հանաքը դենը, ադա Փարսիղ, ամա կու լաց ըլի խալխը քու մեռնելիս... վուրդի խղճի արտսունք կա, դիփ էն օրը կու թափվի, ա՛յ...* (Միծաղում է։) *Հա՛, հա՛, հա՛... Դե՛, մե՛ռի, էլի՛. կուբոյի փուղը յիս կու բախշիմ։*

ՓԱՐՍԻՊ, սառտիկ շարաճալով.

Տո՛, կո՛րի էսղանց, թե չէ...

ՔԱԼԻ

Գնա՛, թե չէ էս սահաթիս բչերանցը կանչեցի, աստուծ գիդենա։

ԳԻԺ-ՄՈՉԻ

Բչերանցը՞... Ա՛յ, թե բչերանցը... (Բռունցքները շարժելով և ծաղրածությամբ հարձակվելով աջ ու ձախ։) *ո՛ւհ, ո՛ւհ... ո՛ւհ, ո՛ւհ...* (Փարսիպն ու Քալին այս և այն կողմն են վազվզում, իսկ իմը կանգնում է մեջտեղը և հանկարծ փրթկում է։) *Փրա՛հ, հա՛, հա՛, հա՛,.. էտ չի՞ք... Էս էլ դառավ էն օրվան գիշիրը, վուր դուռը չբաց անիլ տվիք։ Շա՛տ հարկավուր է ձիր գլուխն ի՞նձ. աշխարքին շարա էլավ, յիս կի չկանացի մե ազատվի ձիզմեն... Ցի՞փ կուլի ձիր քելեխը բաժնիլ ըլիմ. առանց էն խո վարցկ չիք անում ու էգեբա էն օրվան ձիր շիլափլավը աստուծ վարցկ համարե ձիր հոքու համա...* (Փարսիպին։) *Ի՞նչ չիս արի դուն, ի՞նչ. ախպեր ասիս՝ դուն իս զքնի, ննգիր ասիս՝ դուն իս խուփի, պարտկ ասիս՝ դուն իս հաշա կերի, զոռով պարտկ ասիս՝ դուն իս վիզը դրի օմքնու վրա, դուդուքին ասիս՝ դուն իս արի, վուրթու բողաղ ասիս՝ դուն իս դուս կարի, հարենի դուքան ասիս՝ դուն իս կրակ տվի։ Ո՞ւր է, ո՞ւր, պիտի գիդենա ո՛վ իս, վուր վուտեմետ քաշ անին քիզ։ Աշխարքը քոռացիլ է ու քիզ համա հիշտ ու հանգիստ գիդնի էրեսին ման իս գալի. ա՛յ, խուղիմ քու գլուխը, լավ մարթ դուն իս, հրա՛։ Փուրդ վուր հաստացրիլ իս ու էլ օշովու այնումդ չիս գցում. գնում էս սահաթիս թե աշխարք չգցիմ վուր ինչի համա էիր օլբրում Միխոյի անգճնիրը, յիս Գիժ-Մոզին չիմ ըլի։ Գնամ, գնամ. չիմ ուզի յիս ձիր ճաշը. գնամ, ման հալալ ու ջան ազատ ձիզմեն։ Գնամ խիղճ Ասեփին*

ասիմ, վուր իր գլխի չարեն տեսնեն, թե չէ վայ նրա միխկը ձիր ձեռին։
(Լեզգերեն պարելով։)

Բրա՛խմա պուտրա, պուտրա, պուտրա.
Բի՛ են պուտեր, պուտեր, պուտեր... Շաբլո՛ւթ։

Դուրս է գնում դիմացի դռնից։

ՑԵՍԻԼ Է

ՓԱՐՍԻՂ. ՔԱԼԻ

ՓԱՐՍԻՂ

Ա՛յ, գնալդ ըլի ու գալդ վուչ։

ՔԱԼԻ

«Սին ծղալի դա ուկան խմալի»* հրա՛...

ՓԱՐՍԻՂ

Պա՛տուհաս է անիծածը՝։

ՔԱԼԻ, լալով։

Պատիժ է ստեղծի ինձ համա աստուծ, է՛լի։

ՓԱՐՍԻՂ

Ջհա՛նդամը իր գլուխը, ի՛նչ անում է էստի, թո՛ղ անե, թաք խալխումը բեաբրու չըլի անում։

ՔԱԼԻ

Դիպ քու միղն է, ի՞նչ իս անմիղ էրես շանց տալի. նրա լպստամ գլուխն էլ։

ՓԱՐՍԻՂ

Է՛ստի մտիկ, յի՞ս իմ նրան էրես շանց տալի՛. մե աստծու բարդուքին է գլխիս, էլի՛. ուրոր գնամ, շվաքի պես պիտի հիդս ըլի։

ՔԱԼԻ

Ախար չի՞ս կանա մե օր իստակ վուտը կտրի նրան էսղա՛նց։

* Վրացերեն է։— Առջեդ չուր, հետդ սուր։

ՓԱՐՍԻՂ

Վուր փողոցումն էլ ճամփա չտա ի՛նձ։ Ո՞ւզում իս մե մատը միղը շինե քախկումը՝։

ՔԱԼԻ

Էլ մի՛ խոսի հիդը։

ՓԱՐՍԻՂ

Վուր գլխամեռ ուզում է նրա հիդ խոսիլը. խոսիս, չխոսիս, նրա համա դիպ մեկ է։

ՔԱԼԻ

Բաս ի՞նչ պիտի անենք ախար։

ՓԱՐՍԻՂ, առաճգիճ։

Ջահրումար ու աստծու կրակ. ձիր ռաստ գալու սահաթն էլ անիծվի։

ՔԱԼԻ

Ջի՞ս իմանո՛ւմ։

ՓԱՐՍԻՂ, շարաճալով։

Տո՛, դուն էլ ի՞նչ իս ձիու ճանչի պես կպի, իմ ջիգրն էլ է հերիք ինձ։ (Աեռքը ձեռքին խփելով։) Գնաց, է՛լի. անշնուք իս, անշնուք։

ՔԱԼԻ

Ցիս ի՞նչ անիմ, վուր դուն փուղը խնահիս. աբա մե հազար թուման կու տեսիր, տի՛ս կուլեր թե չէ։

ՓԱՐՍԻՂ

Նրա հորն օղորմի. հազարով իսո նրա վրա լավը կա։

ՔԱԼԻ

Ցիս գիդիմ ումնոր ասում իս. դե՛, բի՛, է՛լի, էսօր էվետ շինենք։

ՓԱՐՍԻՂ, ծաղր անելով։

Բի՛, էլի՛. ի՛նչ հիշտ-հիշտ ասում իս. թթան ծա՞ռ է վուր մե խփելով հազարը մետի վեր թափի՛։ Իմ մանեթներն էտենց էժան չգիդենաս. ամեն մեկի համա քսան ջեր հոքիս ծախիլ իմ։

ՔԱԼԻ

Մուլափ տա էն թավլափիան Սալոմո՛ն. հե՛ստի շինիմ, հե՛ստի շինիմ, խաչը գիդենա, վուր աշխարքի լափը գլուխն ածիմ. մե ռաստ գա՛։

Բարկացած դուրս է գնում ձախ դռնից։

ՏԵՍԻԼ Ը

ՓԱՐՍԻՂ, մենակ։

Վուրն ի՞նձ թամաշա արա... Մո՛ւլափ, Օսեփ, հե՛ստի օր կանգնեցնիմ գլխիտ, վուր դիփ (Աջ ձեռքի բթամատը ցույց տալով։) *էս էսղադա բլիս լաց ըլում։ Շատ վուխտ էր մահանա էի պտռում ու աստուձ ռաստ էբի։ Էն հմպարտ-հմպարտ վուր խոսում իս, տի՛ս թե վուտիս տակը վո՛ւնց իմ թավիլ-թավիլ բերում քիզ։ Ինձ փինաչի Մաթուսի վուրթի Փաստ կոսին։ Մե-մե ախմախ էլ վուր ասում է թե՝ փլանը յա փստանը վունչիչ չուներ, կոսե, ու մեբաշ մարթ վո՞ւնց դառավ, կոսե. էսենց դառավ, ա՜յ։ Էս աշխարքը միդրե կարաս է. ով շերեփը ձեռին՝ մեկին դեսը կու բոթե, մեկելին դենը, ու շատ փային ինքը կու փախցնե, ղոչաղը նա է, անումն ու պատիվն էլ նրանն է. ամա ով հմպարտ Օսեփի պես բոլորքը կու կանգնի ու հիրթին կու մնա, դառավ իշի մարտիրո՞ս։*

Մտնում է Դարչոն դիմացի դռնից։

ՏԵՍԻԼ Թ

ՓԱՐՍԻՂ, ԴԱՐՉՈ

ՓԱՐՍԻՂ

Դարչո՛... էս ի՞նչ չուստ էկար։

ԴԱՐՉՈ

Էստի էվետ ռաստ էկավ Միխոն, ասավ վուր կանչում իս։

ՓԱՐՍԻՂ

Հա՛, խիստ հարկավուր բան ունիմ։ (Նստում է։) *Էս ո՞ւր իս էլի։*

ԴԱՐՉՈ

Կոմբոստինց ծագորի մոդ. մե քիչ նիսիա կեր նրա վրա, էս շափթին օխտը ջեր իմ էլի։

ՓԱՐՍԻՂ

Խիստ ջանջալն է. իժո՞ւմ, էրի՛։

ԴԱՐՉՈ

Վա՛, ջանը չէ դուս գա։ էլ դուքնեմեն չհիռացա. ինչ մուշտարի էկավ, նրա մոդ էրեսս ժեշտ շինեցի, աստուձ գիդենա. դիփունի մոդ նուր մեկանց ուզեցի. չարեն կտրվիցավ, ամութու վուրդիոր էլավ ճարից ու էրիտ։

ՓԱՐՍԻՂ

Է՛տենց, վուրթի, էտենց. է՛տենց ժաժ արի, վուր մարթ դառնաս։ Ա՛յ, ի՛նձ թամաշա արա, վուրթի. մե օր կեր գլխումս փամփելով Փաստ էին կանչում, իժում դառա Փարսիղ, իժում աղա Փարսիղ, հիմի Վասիլ Մաթվեի՛չ։ Քու տոլ վուր էի, ի՛նչ էի յիս. ամա հիմի մարթ իմ, ինչ մարթուն պիտի. իմ մամա Մաթուսը վուր սաղ ըլի, նա էլ կու փքվի։ Էստունք էնդուր իմ ասում, վուր դուն էլ չալիշ գաս՝ Դարչի Կիրիլիչ դառնաս, քու մամի պոդոսկապանութինը դիփունանցը մտեն գցիլ տաս։ Վուրթին էս հանգի բան է աշխրքումը. հոր անումը կու շինե էլ, կու քանդե էլ։

ԴԱՐՉՈ

Դուն էլ լավ իս տեսնում, Վասիլ Մաթվեիչ, վունցոր չալիշ իմ գալի։ Աստուձ գիդենա, դուքանը վուր բաց իմ անում առուտեհան, էլ Միխոյի գալուն չիմ մնում, ավիլը վիր իմ կալնում, յիս իմ սվիլում, ու մուշտրու մոդ վունցոր ժաժ իմ գալի, խո դուն էլ տեսնում իս։

ՓԱՐՍԻՂ

Տեսնում իմ, տեսնում, վուրթի, ու էնդուր էլ սիրում իմ քիզ. էս տարին էլ թամամի, էկող տարի ննգիր կու շինիմ քիզ, աստծո՛վ. փուղը իմը, ջանը քունը, վուրթի։

ԴԱՐՉՈ

Աստուձ վուրթիքդ զորացնե, յիս էլ քու ճրաքն իմ. միթամ մե ծառ իմ՝ տնգիլիս, ումիկ ունիմ վուր լավ խեր անիմ ու դուն էլ վրես ուրախանաս։ (Աջ ու ձախ նայելով և մտերմաբար։) *էն փթած ապրանքն էլ սաղացրի, ա՜յ։*

ՓԱՐՍԻՂ

Է՛հ։

ԴԱՐՉՈ

Աստուձ գիդենա։

ՓԱՐՍԻՂ

Էտ ո՞ւմ վրա։

ԴԱՐՉՈ

Մե սղնաղեցի էր։ Էրկու թոփ լավը խառնեցի մեչն ու աճկիրն աբլանդվա արի. դե՛, տանե հիմի ու վայ տեր կանչե։

ՓԱՐՍԻՂ

Իժո՞ւմ, նիսիա՛։

ԴԱՐՉՈ

Վա՜հ, գի՞ժ ի՜մ. վո՞ւր օրն իմ փթածը նիսիա ծախի, վուր հիմի էի ժաժ էկի էնենց։ Մե իմքին սուտ պակսեցրի, խաթրիչուն միթամ, ու փուղը թամամ առա. գնա վուրդիոր իրն ասե, էնդի էլ իմն ասե։

ՓԱՐՍԻՂ

Ա՛յ, ղոշաղ Դարչո ջան. է՛տենց, է՛տենց, վուրթի. յիս քիզ ասում իմ վուր դուն մարթ կու դառնաս. թա՛յին, թա՛յին մարթ կու դառնաս։

ԴԱՐՉՈ

Ումիկ աստձու։ Ուրիշ մե հրամայի՛, Վասիլ Մաթվեիչ, է՛. դուքանը մենակ է։

ՓԱՐՍԻՂ

Ղո՞ւրթ, կինաղամ մտես էր ննգնում. Գուլաբինց Օսեփը թե ձեռաց փուղ ուզե դուքնեմեն, էլ մե գրոշ չտաս։

ԴԱՐՉՈ

Վա՜, ի՞նչ է պատահի։

ՓԱՐՍԻՂ

Խիստ ջիգրն ունիմ նրանը։

ԴԱՐՉՈ

Ցիս էլ պակաս ջիգր չունիմ. մե ասա՛՝ ի՞նչ խաբար է՛. օ՛չովու վուր մարթահեսաբ չէ գցում։

ՓԱՐՍԻՂ

Ա՛յ, յիս նրան կու շանց տամ հիմի. նրա առուտուրը մե շալակ խուտի նման բան է, մե սպիչկեն հերիք է, հրա՜. մե նմուտումը կու բլբլա։

ԴԱՐՉՈ

Տասն էլ չիմ խնահի. մե ասա՛՝ ձեռնեմես ի՞նչ պիտի գա՜, մնացածը յիս գիդիմ...

ՓԱՐՍԻՂ

Ա՛յ, էս սահաթիս։ Դուն ինձ ասա՛։ Դարչո ջան, մե շաբաթ բան ու գուրձեմետ վուր հիդ ըլիս ննգի ու շատ պտրտելով մերումը մե լավ խընձուրի ծառ ըլիս գթի, էն լավ թուրաշավուր խնձուր, վուր ղորղի պես կիտած ըլի, վուր դուն էլ ասիս թե՝ հաա՜, էս էի ուզում, ու ինչրու գնաս

տուն վուր քթուցը բերիս, տեսնիս վուր քու հալալ քթուցը մի անչնուք մարթ բան ըլի ուզի տանեմետ ու էկիլ ըլի քու գթած ծառը թափ ըլի ավի ու էն քու գոզալ խնձուրը տանում ըլի, էն էլ քու քթուցով...

ԴԱՐՉՈ

Վա՛յ, վա՛յ, վա՛յ, վա՛յ...

ՓԱՐՍԻՂ

Օրե՞նք է՞։

ԴԱՐՉՈ

Վո՛ւրդանցի օրենք է։

ՓԱՐՍԻՂ

Դուն ինձ ասա՛՝ ի՞նչ կոնիս։

ԴԱՐՉՈ

Վա՛, էնդի էվետ կինծումց կու խփիմ ու ձեռնեն կու խլիմ խնձուրն էլ ու քթուցն էլ։

ՓԱՐՍԻՂ

Ու թե խնձուրը չկա՞նացիր։

ԴԱՐՉՈ

Վա՜հ, քթուցը էլ մե նմուտ չիմ տուր տա. էնդի էվետ վեր կոծիմ. կու թո՞ղնիմ վուր իմ ամագը մուքթ կորչի՞։

ՓԱՐՍԻՂ

Ա՛յ, զորանա՜ս։ Ասում իմ, է՛, վուր մարթ կու դառնաս։ (Մոտենալով։) Քիմեն ի՞նչ թախկացնիմ, Դարչո ջան, տեսնում իս վուրթու պես սիրում իմ քիզ։

ԴԱՐՉՈ

Գիդե աստուձ, վուր յիս էլ քիզ հոր պես պաշտում իմ։

ՓԱՐՍԻՂ

Գիդիմ, գիդիմ... Տո՛, ախար ախչկաս համա մե լավ փեսացու էի գթի, մե շափաթ ավելի խոսում էինք ու հենց էն է, բանը պրծած էր, ուզում էինք էսօր-էքուց վրա բերի. մի՛ ասի դուն՝ էս քու Օսեփը մեր խոստացածի վրա մե իմքին ավելցնում է ու իրիգուն ախչկան նշնում է՞։

ԴԱՐՉՈ

Օ՛հ, հո՛, հո՛, հո՛... ա՛յ, անաստուձ մարթ։

ՓԱՐՍԻՂ

Աբա՛, իժում էն էլ ո՞ւմ փուղով. իմը կուլի, է՛լի։

ԴԱՐՉՈ

Էա է, է՛տ. խնձուրն էլ փախցրիլ է, քու արիվն, ու քթուցն էլ քունն է բանեցնում, է՛լի։

ՓԱՐՍԻՂ

Բա՛ս, յիս էլ էտ իմ ասում, Դարչո ջան, է՛. խնձուրը տարավ՝ նա փայդա, քթուցն էլ հիդը չկորչի ասում իմ։

ԴԱՐՉՈ

Վա՛հ, վո՞ւնց կանա։

ՓԱՐՍԻՂ

Ո՛վ գիդե, նրա բանը ուրիշ հանգն է էրևում. մեկ էլ տեսար ախչկան փսակից ու սուփրեն վիքաղի՛ց. իժում գնա՛ ու հիդը դա՛վի արա, էլ ի՞նչ կու դուս գա։

ԴԱՐՉՈ

Վա՛հ, կէհամ էս սահաթիս էվետ գուզիմ։

ՓԱՐՍԻՂ

Ցիս Միխոյին ղրգեցի. ամա ուսթկ չունիմ վուր էս սահաթիս էվետ տա, ու քիզ է՛նդուր ապսպրեցի, վուր մե լավ օմքին գթնիս, փուղիրս չկորչի։

ԴԱՐՉՈ

Մե ա՛դվոկատ գիդիմ, մե ա՛դվոկատ, Վասիլ Մաթվեիչ, վուր յիրիք սահաթումը դուքանը կու մնթել տամ։

ՓԱՐՍԻՂ

Ղռլաղ, ղռլաղ, Դարչո ջան, յիս քիզ ասում իմ վուր մարթ կու դառնաս։

ԴԱՐՉՈ

Լավ ուստի աշկիրտը լավ կուլի, է՛լի։

ՓԱՐՍԻՂ

Դե՛, գնա՛, մի՛ ուշացնի։

ԴԱՐՉՈ, գնալով։

Մե սահաթ չիմ քաշեցնիլ տա, քու ազիզ արիվն իմ ասում։

ՓԱՐՍԻՂ, հետևից։

Գնա՛, տեր ընդ քիզ։

Դարչոն դուրս է գնում դիմացի դռնից։

ՏԵՍԻԼ Ժ

ՓԱՐՍԻՂ, մենակ։

Դե՛, գնա՛, Օսեփ, ի՛նչ ձեռնեմետ գա, հիմի է՛ն արաւ Տասը մում պիտի վառիմ քիզ համա, վուր հոքիտ ու մարմի՛նդ գցեցիր ձեռս ու իմ ճանգը ննգար։

Դուրս է գնում աջ դռնից հաշվեմատյանը հետը առնելով։

ՏԵՍԻԼ ԺԱ

ՔԱԼԻ, հետո ՍԱԼՈՄԵ

ՔԱԼԻ, դուրս գալով ձախ դռնից։

Մտի՛կ, մտի՛կ էս թավլափիանին։ (Բաց անելով լուսամուտը. դուրս է նայում և կանչում։) *Է՛ստի արի, քա՛, է՛ստի, չի՞ս իմանո՛ւմ. Սա՛լոմե, Սա՛լոմե, քա՛, Սա՛լոմե... Հա՛, յիս իմ, յիս իմ կանչում. մե սահաթ էստի արի։* (Հեռանում է լուսամուտից։) *Գալիս է... Մո՛ւլափ տու դուն, թե՛հայ, չէ էլ ամանչում. թե աշխարքի լափը գլուխդ չածիմ՝ու կու տեսնիս։*

ՍԱԼՈՄԵ, նորաձև տարազով շքեղ հագնված և ձեռքին հովանոց, մտնում է դիմացի դռնից։

Ի՞նչ էիր կանչում. բարի լուս, վո՞ւնց իք։

Ձեռք են տալիս միմյանց։

ՔԱԼԻ

Փառք աստծու, համեցե՛ք, նստի՛։ (Նստում են։) *Ախչկատ նչնեցի՞ր։*

ՍԱԼՈՄԵ

Հա՛, Քալի ջան, քու Նինոյի բախտավորութենին էլ աստուած արժանի անե, իրիգուն նշնեցի։ Հե՛ստի փեսա ճարեցի, հե՛ստի, վուր կոսիս խոխոբ ըլի. ուրախու էլ վուտիս վրա չիմ կանացի կանգնի։

ՔԱԼԻ

Էրեսդ պա՛րզ կենա։

ՍԱԼՈՄԵ, այլայլվելով։

Ի՞նչ խաբար է, չի՛մ իմանո՛ւմ։

ՔԱԼԻ

Մե լավութին էիք պարտ, արիք, էլի՛։

ՍԱԼՈՄԵ

Ի՞նչ իմ արի։

ՔԱԼԻ

Էլ ի՞նչ պիտեիր անի, փեսիս ձեռնեմես խլեցիր ու միթամ վունչիչ, է՛լի։

ՍԱԼՈՄԵ

Աբա՛, Քալի ջան, էտ խո՞սկ է, վուր դուն իս ասո՛ւմ։

ՔԱԼԻ

Սո՛ւ, սո՛ւ, Սալոմե, վուր ի՞նչ անց է կացի, դիփ մե՛-մեկ գիդիմ։

ՍԱԼՈՄԵ

Վո՛ւյ, քոռանամ յիս. էտ ինչի՞ր իս ասում, Քալի ջան։

ՔԱԼԻ

Ջէ, չէ՞իր գիդի վուր յիս էի տալի՛։

ՍԱԼՈՄԵ

Աբա էտ ի՞նչ խոսկ է. դուն ինձ բա՛ն ասիլ ի՛ս։

ՔԱԼԻ

Ցիս վուր չիմ ասի, ասողը խո ա՛սավ։

ՍԱԼՈՄԵ

Ինձ օչով վունչիչ չէ ասի։

ՔԱԼԻ

Սուտ էլ վուր խոսում է՛, ուցիտ չէ՛, քա՛։

ՍԱԼՈՄԵ

Սուտը սատանինն է, ինչի՞ր իս շառիր գցում վրես։

ՔԱԼԻ

Աբա դուն ու քու հոքին, դրո՛ւստ ասա. չէ՞իր իմացի, վուր յիս էի տալի նրան ախչի՛կ։

ՍԱԼՈՄԵ

Ի՞նչ անիմ վուր իմացիլ էի. իր օրումը տղի համա տասը կու հիշվի, մեկը գուզե։

ՔԱԼԻ

Տի՛ս. տի՛ս վուր գիդացիլ իս, է՛լ սուտ ո՞ւր իս խոսում։

ՍԱԼՈՄԵ

Ո՛ւցնավուր իս, քա՛. գի՛դացիլ իմ. մա՞րթ իս դրգի ինձ մոդ թե՛ օմքնու բերնով ապսպրիլ իս, վուր յիս փլանին ախչիկ իմ տալի, դուն չտա՛ս։ Ախար, յիս ի՞նչ միդ ունիմ էտումը. վունցոր յիս իմ գիդացի, էնենց էլ դուն իս գիդացի... Ինձ վուր քիքս իս գալի, էլ դուն ո՞ւր էիր խոսում ու մարթիք մեչ գցում։

ՔԱԼԻ

Առչի գամը յիս խոսեցրի։

ՍԱԼՈՄԵ

Առչի գամը մարթ տափումը շատ ծաղիկ է տեսնում, ամա կտրողը կտրում է ու տանում է։

ՔԱԼԻ

Վուր մուլափ չտվի՛ր, էգեբա յիս էի կտրում։

ՍԱԼՈՄԵ

Իժում, ինչի՞ չկտրեցիր, քա՛։

ՔԱԼԻ

Տուր տվիր գանա՞. միր խոստացածի վրա էլ կունձի փուղը վուր ավելցրիր ու իրան տվիր, հենց գիդիս, չի՛մ գիդի՞։

ՍԱԼՈՄԵ

Վո՜ւյ, քոռանամ յիս, Քալի ջան, աբա էտ վո՞ւնց իս ասում. դուք ի՞նչ էիք տալի գանա։

ՔԱԼԻ

Ի՞նչ էինք տալի, միթամ չի՛ս գիդի. ութ հարուր թուման։

ՍԱԼՈՄԵ

Ա՜յ, տերը բարի տա քիզ. մինք վուր օխտը հարըրեն ավելի չինք տվի, էս ա՞վելցնիլ է՞։

ՔԱԼԻ

Դիա՛խ, դիա՛խ, դեմ էր բերում։

ՍԱԼՈՄԵ

Վո՜ւյ, իմ Նատոն պրծնի ամեն չարեմեն, վուր ղուրթ իմ ասում։

ՔԱԼԻ

Էտ է վուր ավտացի։

ՍԱԼՈՄԵ

Ի՞նչ է ասում, քա՛. իմ ախչկա անումը սո՞ւտ իմ օրթում ուտո՞ւմ։

ՔԱԼԻ

Բաս չէ ու ղուրթ իս ուտում. ութ հարուրն էթող ու օխտը հարուրն ուզից։

ՍԱԼՈՄԵ

Յիս ի՞նչ անիմ էտումը, քա՛. հալբաթ քու ախչկան չհավանեցավ ու էնդուր չուզից։

ՔԱԼԻ

Ի՞նչն է պակաս, վուր չհավանեցավ. քու ախչիկը կուլի լավը, թա՛վլափիան, չէ էլ ամանչում։

ՍԱԼՈՄԵ, վեր կենալով տեղից։

Թավլափիան էլ իս ու չիս էլ գիդի. է՞տու համա էիր կանչում, քա՛։ Քու ախչկա հատն ու կտուրը կուլի իմ Նատոն. յիս ի՞նչ անիմ, վուր քու ախչիկը լեն բերան ունենա։

ՔԱԼԻ

Լեն բերան էլ ունիս ու չիս էլ գիդի, բե՛հայա. քու լպստած ա՞խչիկը կուլի լավ։

ՍԱԼՈՄԵ

Ի՞նչ է ասում՝ լպստա՛ծ. նրա քաղաքավարի խոսկ ու ջուղարին էլ կու սաղ գա։ Քու ախչկան ասիս, վուր դիփունքն ասում ին թե տուտուց է՞, ու դրուսաը թե գուզիս, հենց էտու համա չուզից։

ՔԱԼԻ

Հա՛, քու գլխի պատուվիլը գիդենա. խիղճ տղին ճանգիլ իք ու խափում իք. մեքաշ չտաք ինչոր խոստացիլ իք։

ՍԱԼՈՄԵ

Միր բանը մինք գիդինք։ Վուտս կոտրվիլ էր ու չէի էկի էստի։

Գնում է մինչև դուռը։

ՔԱԼԻ

Ինչրու բողազը պարտկումը վուր խիխտվում իք, մեքաշ չհամբրրիք։

ՍԱԼՈՄԵ, հետ դառնալով։

Պարտկումն իմք թե պարտկումը չէ, ձիզ պես գողնովի փուղիր խոչունինք։

ՔԱԼԻ, վեր թռչելով տեղից։

Գուղ էլ իս ու չիս էլ գիդի. չիքիլեն վրետ կու պատռտիմ, բե՛հայա, թա՛վլափիան։

ՍԱԼՈՄԵ, մոռեցնելով իր չիբիլեն։

Աբա փորցե՛, է՛լի, փորցե՛, տեսնիմ վո՞ւնց իս պատռտում։ Մինձի մինձ չէ պատռտվում, քա՛, (Զգվանքով։) փի՞նաչի Մաթուսի հարսը։

ՔԱԼԻ, երկու ձեռքով շանչ անելով։

Ը՛հ, խո՜ղիմ քու բեղոլվաթ գլուխը. սա էլ վուր օմքնու մասխարա ըլի ոցո՛ւմ, բա՛ղմնչու ախչիկը. կա՛պ-կտրած, ա՛ննամուս։

ՍԱԼՈՄԵ

Կապ-կտրածն էլ դուն իս ու աննամուսն էլ։ Հազար վուր ճխկվիս, դիփունքը գիդին վուր աշխարք ու յիրգիր իք թալնի ու էնդով առաչ էկի. քու դածումպլա արած գլուխն էլ խուղիմ։

ՔԱԼԻ

Մե մտի՛կ էս թավլափիանին... (Հարձակվում է և չիբիլեն պատռում։) կա՛պ-կտրած...

ՍԱԼՈՄԵ

Քա՛, քա՛, քա՛...

Բռնում է Քալիի կավքը և խաշխշում։

ՔԱԼԻ

Քա՛, քա՛, քա՛...

ՍԱԼՈՄԵ

Մե մազ չիմ թողնի գլխիտ...

Ապշած նայում է ձեռքումը մնացած կավքին։

ՏԵՍԻԼ ԺԲ

ՆՐԱՆՔ, ՕՍԵՓ

ՕՍԵՓ, մտնում է դիմացի դռնից։

Վա՛հ։

ՔԱԼԻ, իջելով Սալոմեից կավքը։

Վո՛ւյ, քոռանամ յիս։

Ամոթահար դուրս է վազում աջ դռնից։

ՏԵՍԻԼ ԺԳ

ՍԱԼՈՄԵ, ՕՍԵՓ

ՍԱԼՈՄԵ, չիբիլեն ուղղելով, առաջին։

Մա՛յմուն։

ՕՍԵՓ

Էս ի՞նչ խաբար է։

ՍԱԼՈՄԵ

Աստուած վո՛ւյ գիդե իմ գլուխը. քուչումը ինձ համա միամիտ գնում էի, հայ-հարա դիվիր կանչից ու չիբիլեն գլխիս պատուտից. փեսիս ձեռնեմես ինչի՞ խլեցիր, կոսես։

ՕՍԵՓ

Շատ լավ էլ է արի, աճկտ էլ է հանի. էտ էն գիդենա վուր ինձմեն թաքցրիր ու առանց ինձ վիցը օխտը շինեցիր։

ՍԱԼՈՄԵ

Վուտս կոտրվիլ էր. ու տուն չէի էկի էս քար ու քանդ տանը. միթամ էրես պահեցի. քանդվի ու բրիշակ ըլի սրանց տունն էլ ու տիղն էլ։ (Չիբիլի պատուածը գնդասեղով կպցնում է։) *Աճկը հանեցի, յիս էլ կավին գլխեն վեր բերի. գնա՛ վուրդիոր իրն ասե, էնդի էլ իմն ասե։ Մեքաշ վուր դուս փախավ. օչով չիմանա միթամ, վուր կավքնիրն էլ էնենց ղալբ ունե, վունցոր ամեն բան։*

ՕՍԵՓ

Ինչի՞ գեդինը չէ պատովում ու գեվեր չէ տանում ինձ էս սահաթիս, քիզ էլ հիդը։

ՍԱԼՈՄԵ, լաց լինելով։

Ցիս ի՞նչ միդ ունիմ, քա՛։

ՕՍԵՓ

Քա՛խկըցու կնգան թամաշա արիք. էտ ի՞նչ է քու հալը։ Գնա՛, գնա՛, վուր էլ օմքին չտեսնե քիզ էստի. քիմեն մե բալումը չիմ ու էրկուսումը. գնա՛, աստծուն ա՛ղանչաք արա, վուր կեսորը կեսգիշիր շինե ու քուչեքը մութն ու խավարով լքցնե, վուր օչով չտեսնե թե գլխիտ պատուած չիքիլա ունիս։

ՍԱԼՈՄԵ, աչքերը սրբելով։

Վա՛յ իմ միխկը քու ձեռին։

Դուրս է գնում դիմացի դռնից։

ՏԵՍԻԼ ԺԴ

ՕՍԵՓ, մենակ։

Ա՛խ, աստուած, էս ի՞նչ հանգն իս սարիզի աշխարքը. մե ցավ վուր տալիս իս մարթու, մեկելն էլ հիդն իս վրա բերում, վուր ինչրու մեկիմին պատվի մարթ, մեկելը դռանն է կանգնած, վուր պակասը թամամ անե։ Իմ պարակը հերիք չէ՞ր, վուր կընգդերանց կոիվն էլ վրեն ավելցրի՞ր։

ՕՍԵՓ, ՓԱՐՍԻՂ

ՓԱՐՍԻՂ, մտնելով աջ դռնից, բարկացած։

Բա՛ս յիս մարթ չիմ ըլի...

ՕՍԵՓ

Բարի լուս, պարուն։

ՓԱՐՍԻՂ

Էլ ինձ վունց քու բարիլուսն է հարկավուր, վունց քու աստծու բարին։ Էկիր իս կնգատ քո՞մագ անելու, է՛լի. ա՛րի, է՛լի, ա՛րի, դուն էլ ի՛նձ ծեծե, պակասը թա՛մամ արա, էտ էլ իմ փուղի շահը կուվի։

ՕՍԵՓ

Հանգստացի, պարուն, ինչի՞ր իս ասում։

ՓԱՐՍԻՂ

Մազիրը վուր գլխեն գչլոտիլ է, էս անպատվութինը կու բա՞խշիմ յի՛։

ՕՍԵՓ

Ի՞նչ է մնացի բախշելու, հեր օխնած, վուր բախշիս. նա նրա չիքիլեն է պատռի, նա էլ նրա կավին է վեր բերի։

ՓԱՐՍԻՂ

Աբա չիքիլեն կավքներու մազերու հիդ գու քա՞։

ՕՍԵՓ

Է՛է, ձի՛ռը վիկալ, քու հորն օղորմի. կընգդերանց կոիվը ի՞նչ քու լայիղ, յա իմ լայիղ բան է։

ՓԱՐՍԻՂ

Դուն էտենց ասա ու տի՛ս թե լիկորի աստղին չիմ կպցնի յիս ձիզ։

ՕՍԵՓ

Դնջացի՛, դնջացի՛, պարուն Փարսիղ։

ՓԱՐՍԻՂ

Ես ձիզ դնջանալ կու շանց տամ։

ՕՍԵՓ

Ախար, վուր քիզ չէ սազ գալի էտ բանը՞։

ՓԱՐՍԻՂ

Չիքիլեն պա՞տռից, կոսե. չիքիլեն ի՛նչ է, մե առնովի իմքին է, է՛լի, շատ ըլի նրա գինը էրկու մանեթ։

ՕՍԵՓ

Է՛է, հեր օխնած դուն էլ, վո՛ւնց թե քու կնգա կավքնիրն է էլի մորուց, ի՞նչ իս էտու համա նիղանում։ Էրկու մանեթանուց չիքիլումը էրկու գրոշանուց լենտ է կտրվի վիրշն, է՛լի... էնդի չէ՞ էն լենտը՝, կպցնի ու կապե, է՛լի։

ՓԱՐՍԻՂ

Չէ՛, չէ՛, յիս էս անպատվութինը չիմ բախշի։

ՕՍԵՓ, առանձին։

Ա՛խ, աստուծ։

ՓԱՐՍԻՂ

Մո՛ւլափ տվեք հալա։

ՕՍԵՓ

Դե՛, ի՛նչ քեփդ տա, է՛ն արա, ախպեր... Ցիս էստու համա խո չիմ էկի. Միխոյին ղրգիլ էիր...

ՓԱՐՍԻՂ

Հա՛, բերի՞ր փուղս, ի՛ս տու էս սահաթիս։

ՕՍԵՓ

Ի՞նչ հանգն իս խոսում, պարուն. քու բիշ խո չիմ, վուր վրես բղավում իս. ո՞ւմ վրա իս բղավում։ Բղավիլ չըլի, թե չէ, հե՛ստ կու բղավիմ վուր լիզուտ փուրը ննգնի։

ՓԱՐՍԻՂ

Վա՜հ, փուղը դուն իս պարտ ու էլի դո՞ւն իս հարցա գալի՞։

ՕՍԵՓ

Փուղը վուր պարտ իմ, գլուխս խո քիզ վրա չիմ ծախի։ Օրինավուր հիդ խոսում իմ, օրինավուր ջո՛ղաբ տու, հեր օխնած։

ՓԱՐՍԻՂ

Ցիս վունչիչ չիմ գիդի. փուղս բերի՞լ իս թե չէ, դուն է՛ն ասա։

ՕՍԵՓ

Վո՞ւր օրն իմ քու փուղը կարի, վուր հիմի ուտիմ։

ՓԱՐՍԻՂ

Դե՛, բի՛, է՛լի։

ՕՍԵՓ

Ախար էն օրը...

ՓԱՐՍԻՂ

Ախար-մախար չիմ գիդի։

ՕՍԵՓ

Պարոն Փարսի՛ղ, է՞բաղ իս տեսի թե ի՞նչ խաբար է։

ՓԱՐՍԻՂ

Էբաղ իմ տեսի թե չիմ տեսի, փուղս տո՛ւ էս սահաթիս։

ՕՍԵՓ, աթոռ վերցնելով և նստելով։

Յանղլիշ իս, պարոն Փարսիղ, յանղլիշ. համեցե՛ք նստի՛։

ՓԱՐՍԻՂ

Փիե՛։

ՕՍԵՓ

Դուն ինձ ա՛սա՝ մարթ իս ու գլխիտ գդակ ունիս ծածկած թե չէ։

ՓԱՐՍԻՂ

Գդակ ունիմ թե չունիմ, փուղս տո՛ւ էս սահաթիս, հե՛նց էս սահաթիս։

ՕՍԵՓ

Տո՛, գժվի՞լ իս թե ի՞նչ խաբար է։

ՓԱՐՍԻՂ

Հիմի գի՛ժ էլ ասա. իմ հաին է, յիս ու իմ աստուծը։

ՕՍԵՓ

Ախար, էն օրը հինգ հարուր թումանը վուր տվի, դուն չա՞սիր վուր մնացածը մե ամսվան էդնեն ըլի, կոսե՛։

ՓԱՐՍԻՂ, նստելով։

Ի՞նչ անիմ վուր ասի, հիմի ինձ հարկավուր է։

ՕՍԵՓ

Հարկավուր էր, ախպեր, էնչախն էվետ կոսեիր, էլ տիղ է տիղ չի անի. էս նմուտիս վուր ուզում իս, յիս վո՞ւրդի ստիղծիմ, աստուծ խո չի՛մ։

ՓԱՐՍԻՂ

Վուրդիոր գուզիս, ինձ էս նմուտիս հարկավուր է։

ՕՍԵՓ

Տե՛ր օղորմած աստուած։ Տո՛, էլ մե ամիս վադա ո՞ւր էիր տալի ու էրկու շահի շահը վրեն ո՞ւր էիր գալի էս գլխեն, թե էտենց էր։

ՓԱՐՍԻՂ

Ի՞նչ վադա. աբա թուխտ ո՞ւնիս, հա՛նե։

ՕՍԵՓ

Վա՛յ, խոսկը թուխտ չէ՞ր, էլ ի՞նչ թուխտ էր հարկավոր։

ՓԱՐՍԻՂ

Յիս վունչիչ խոսկ չիմ տվի։

ՕՍԵՓ

Խոսկ չի՛ս տվի՞. տո՛, է՛ս սահաթիս չէ՞ր վուր էլի ասի՞ր։

ՓԱՐՍԻՂ, վեր կենալով։

Չէ՛, չէ՛, վունչիչ չիմ ասի։

ՕՍԵՓ, նույնպես։

Օ՛հ, տեր աստուած, էս ի՞նչ տեսա ու էս ի՞նչ իմացա։ (Մոտենալով Փարսիղին։) Է՞տ է վաճառականի խոսկը բաս, վուր գեղնի հիդ հավսրում ի՛ս։ Մե խչալաթ քաշե, է՛։ (Կոնիցը բռնելով առաջ է տանում դեպի հայելին։) Մտի՛կ, մտի՛կ, մե էրեսարքիտ մտի՛կ. ինչի՞ իս կանանչում ու մավանում, թե չիս ասի։

ՓԱՐՍԻՂ

Թո՛ղ, թո՛ղ ձեռս։

ՕՍԵՓ, Փարսիղի կուրը ամուր բռնած։

Խճպտանքդ վուր խուրը թաղիլ իս ու հոքեմետ ձեռը վիր իս կալնում, մե էս հալիլեմեն էլ է մայինց ամանչի, է՛։ Ինչի՞ է պռոշնիրդ դիլնում, ինչի՞։

ՓԱՐՍԻՂ

Տո՛, թո՛ղ ասում իմ, է՛։ (Թափ է տալիս կուրը և ազատվում։) Կոսիս թե պարտկան տերը դուն ըլիս։

ՕՍԵՓ

Դո՛ւն իս, դո՛ւն, պարտկան տերը. գեղինը մտնիմ էն լավ է, կանց թե քու հանդը պարտկան տեր ըլիմ էլ ի՞նչ մարթ իս դուն հորեսի դենը իմ աճկումը. գիդացի վուր վուտի ցիխը լավ է քի վրա. փո՛ւ քու նամուսին, էլ ի՞նչ կոնիս դուն աճկիր, պոռշնիր, թշիր, մե ժեշտ վի՛կալ էրեսիտ կպցրո՛ւ ու էնենց մա՛ն արի հորեսի դենը։

ՓԱՐՍԻՂ

Ցիս քիզ ասում իմ փուղս բի՛ էս նմուտին, թե չէ վեկսիլնիրտ էս սահաթիս տարա սուդը... էն ախչկատ վուր մարթու իս տալի ու էնդադա փուղը խոստացիլ իս, իմ փուղերով դա՞նա։ Փուղիրը համբրիս, տաս ու ինձ դառ ու դա՞րդակ թողնի՞ս։

ՕՍԵՓ

Մի՛ վախենա, մի՛ վախենա, պարոն. դուն էլ վուր աղանչաք անիս, է՛լ քու փուղը չիմ պահի, աստուձ մի՛ արասցե։ Էքուց ինչրի էս չախը դիվ մեսի թամամ կու ստանաս ու էքուցվան դենը էս էրեսը սիվնա թե քու էրեսը տեսնե։

ՓԱՐՍԻՂ

Չէ՛, չէ՛, հենց էս սահաթիս էվետ։

ՕՍԵՓ

Ա՛րի, ա՛րի, թո՛ղ հենց էս սահաթիս էվետ ըլի. ցավեմեն մարթ քանի չուստ ազատվի, լավն էն է։ Իս տո՛ւ էն չարչու բարաթը... Ամա մի՛ տա, դուն ինձ չիս ավտա, չաժիս վուր ինձ ավտաս. դուն ինքդ վի՛կալ, ա՛րի հիդս, գնանք էս սահաթիս էվետ փողոցումը խուրդանանինք ու քու փուղը թա՛մամ վիկալ... Թո՛ղ մե իմքին զարար էլ անիմ, հաչաթ չէ, էն զարարի դիմնալը հիշտ է ինձ համա, կանց քի մոդ խոսիլը, էնդուր վուր ամեն մե քու խոսկը հազար զարարի վրա վաթար է։ (Լռություն։) Ջի՞ս իմանո՛ւմ, քիզ իմ ասում, ա՛րի, է՛լի։

ՓԱՐՍԻՂ

Հրա՛։

ՕՍԵՓ, առանձին, ցածր։

Ջա՛հրումար։ (Փարսիղին։) Չարչու բարաթը մի՞կալ, ասում իմ, չի՞ս իմանո՛ւմ։

ՓԱՐՍԻՂ

Ի՞նչ չարչու բարաթ։

ՕՍԵՓ

Ռոստոմի բարաթը։

ՓԱՐՍԻՂ

Ռո՞ստոմի բարաթը՞. էն բարաթի մոդ դուն ի՞նչ դավի ունիս։

ՕՍԵՓ

Վո՞ւնց թե՝ ի՞նչ դավի ունիմ. էտ էլ խո խոսկ չէ վուր հաշա իս ուտում. թո՛ւխտ է, թո՛ւխտ ձեռիտ։

ՓԱՐՍԻՂ

Իմ ձեռին վուր թուխտ ըլի, քիզ ի՞նչ դավի, ախպեր. յիս գիդիմ ու Ռոստոմը։

ՕՍԵՓ

Դո՛ւն գիդիս ու Ռոստոմը՞... (Լռություն։) Տո՛, դուն զարթնի հաշա ուտիլը, թուրմե գուղ ու ավազակ իս էլի։ Թուրմե ղուրթ ին էլի ասում, ինչ վուր ասում ին քիզ համա։ Թուրմե ղուրթ է էլի, վուր դուն մարթիք իս թալնի ու էնենց մոդ արի կայինքդ։ Թուրմե ղուրթ է էլի, վուր դուն քսանուհինգ օջախ իս քար ու քանդ արի, նրանց մումը հանգցրի ու էնդով քու մումը վառի... Հի՞մի իմ իմանում, հի՛մի, վուր ի՞նչ ասում ին, ղուրթ ին էլի ասում... Հիմի ամեն բանին կու ավտամ վուր էս կոնսլեքը, էս դիվանը, էս ստոլը, էս հալիլեն, քու սերթուկը, քու գդակը, քու շապիքը, ամեն մեկը մե-մե մարթ է քիմեն թալնած. տա՛ր իմ օսկրտանքն էլ վրի՛ն ավելցրու ու պակասը թա՛մամ արա... Խճպտանքդ վուր քար իս շինի ու վունչիչ չիս իմանում, լավ գիդենաս, մե օր կու զարթի ու ամեն մեկին՝ ի՞նչ էստի դարսած է, ի՞նչ վրետ հաքիտ է, ամենին լիզու կու տա ու մե-մեկ մե-մեկ միտդ կու բերե քու արարմունքը։ Գնա՛ ու էնչախը ջո՛ւղար տու քու ստիղծողին։ Փո՛ւ, քու մա՛րթ ասողին էլ ինչ ասիմ։

Դուրս է գնում դիմացի դռնից։

ՓԱՐՍԻՂ, մենակ, բարձրաձայն ծիծաղելով։

Փհա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛... Մո՛ւլափ, մո՛ւլափ, գո՛ղն էդի գամն է... Տի՛ս թե ի՞նչ բան իմ բերում յիս ձիր գլուխը... (Շարունակելով ծիծաղը։) Հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛...

Գնում է դեպի աջ կողմի դուռը, վարագույրն իսկույն իջնում է։

ԱՐԱՐՎԱԾ ԵՐՐՈՐԴ

Սեփի տանը եվրոպական ճաշակով զարդարած շքեղ հյուրասենյակ և նրա ետևը նույնպես շքեղ մեծ դահլիճ, որը բաժանվում է հյուրասենյակից հոյակապ լայն կամարով: Հյուրասենյակի հատակը ծածկած է զորգով, իսկ առաստաղից Երկու սենյակներումն էլ կախած են ոսկեզօծ ջահեր վառ մոմերով: Հյուրասենյակի առաջին կարգում (պլանում), աջ կողմը՝ բազմոց, ձախ կողմը՝ ընկողմարան. Երկրորդ կարգում, աջ կողմը՝ մեծ հայելի և ծաղիկներ, ձախ կողմը՝ վառարան, որի վրա դարձյալ հայելի, ժամացույց և անոթների մեջ ծաղկի փնջեր. երրորդ կարգում՝ կողմնակի դռներ: Այս սենյակի մեջտեղը՝ սպիտակ սփռոցով ծածկած երկայն սեղան, որի վրա դրած են մի քանի կանդելաբրներ վառ ու հանգած մոմերով և ԼՈՏՈՅԻ արկղը իր պարագայով, Կամարի աջ ու ձախ անկյուններում դարձյալ կանդելաբրներ հանգած մոմերով: Դահլիճի մեջտեղը նույնպես սպիտակ սփռոցով ծածկած և կիսով չափ վառ կանդելաբրներով լուսավորված մի ուրիշ երկայն սեղան, որի վրա դարսած են գեղեցիկ վազսներով զանազան բաղդրավենիք, շամբանդեն, պաֆսիմատներ, պտուղներ, անոթներով ծաղիկներ, շիշերով բմպելիքներ և այլն ըստ սովորության: Խորքում՝ դաշնակ իր բոլորակ աթոռով և լուսամուտներ, որոնց միջից երևում է լապտերներով լուսավորված պարտեզը: Երկու սենյակներումն էլ, ուր հարկն է, աթոռներ, բազկաթոռներ, փոքրիկ սեղաններ զանազան զարդարանքներով, վառ ու հանգած լապտերներ, ծառեր, ծաղիկներ, պատկերներ և այլն: Բոլոր դռները, լուսամուտները և կամարը զարդարած են թանկագին դրապիներով և վարագույրներով:

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ՆԱՏՈ, մենակ, գեղեցկապես զարդարված: Վարագույրը բացվելիս, աջ կողմը կանգնած, մեծ հայելու առաջ ուղղվում է և կիսաձայն երգում եվրոպական մի եղանակ. հետո հանում է ծոցից մի փոքրիկ լուսանկար և սկսում է հետը խոսել հայելու մեջ:

Ա՛խ, դո՛ւշկա, դո՛ւշկա։ (Լուսանկարը սեղմում է կրծքին և համբուրում:) *Մոն շե՛ր, ա՛րի տանցավատ անինք։* (Լուսանկարի հետ սեղանի շուրջը պար է գալիս պոլկա:) *Տրա, լա, լա՛... տրա, լա, լա՛... տրա, լա, լա, լա՛... տրա, լա, լա՛...* (Նստում է աջ կողմը։) *Ո՛ւհ, դաթրեցա։* (Ջենում է լուսանկարը և յուրաքանչյուր անգամ համբուրելով:) *Սա՛շա, Սա՛շենկա, Սա՛շենկա, Սաշո՛ւրկա, Սաշո՛ւրեշկա...* (Նորից զենելով:) *Պստի հոքի իս դրուստ։ Ինչի՞ իս էտենց սիրուն. սիվ աճկիր, իմ աճկիրն էլ սիվ է. բարակ ունքիր,* (Իր հոնքերը շոշափելով:) *իմ ունքի նման է պստի կոկոր բիխիր. յիս վուր բիխիր չունիմ... Դո՞ւն սիրուն իս թե յիս։— Չէ՛, յիս սիրուն իմ։— Չէ՛, յիս իմ սիրուն։— Չէ՛, դո՛ւն իս սիրուն։— Չէ՛, յիս իմ սիրուն...* (Վեր թռչելով տեղից:) *Աբա՛, աբա՛...*

Վազում է դեպի նույն հայելին, որի մեջ իրան համեմատում է լուսանկարի հետ: Ալեքսանդրը մտնում է դահլիճի աջ կողմից, գլխարկը ձեռին:

ՏԵՍԻԼ Բ

ՆԱՏՈ, ԱԼԵՔՍԱՆԴՐ

ՆԱՏՈ, չնկատելով Ալեքսանդրին:

Չէ՛, դո՛ւն իս սիրուն, դո՛ւն։ (Եռանդով համբուրում է լուսանկարը: Ալեքսանդրը ծածուկ մոտենում է Նատոյին և նույն եռանդով պինդ համբուրում է: Նատո, վախեցած։) *Ա՛խ։*

ԱԼԵՔՍԱՆԴՐ, ողջունելով:

Դո՛ւն իս սիրուն, դո՛ւն, Նատա՛շա, մա շե՛ր Նատաշա։

ՆԱՏՈ

Ա՛խ, մոն շեր Սա՛շա, ի՛նչ հանգի վախեցրիր ինձ։

ԱԼԵՔՍԱՆԴՐ, գրկելով:

Ա՛րի, մեկ էլ պաչ անիմ, կու անցկենա։ (Համբուրում է:) *Դո՛ւն էլ պաչ արա, է՞։*

ՆԱՏՈ, համբուրելով:

Ա՛յ։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Էտենց, ա՛յ, յիս ուփրո լավ չի՞մ է՛տ թխտի վրա՞։ (Գլխարկը վայր դնելով և Նատոյի ձեռքը բռնելով։) *Էս ի՞նչ խաբար է... լոտո՛։*

Նստում են աջ կողմը բազմոցի վրա, այնպես որ Ալեքսանդրը գտնվում է Նատոյի ձախ կողմը:

ՆԱՏՈ

Մոդ ին էլի շնահավուրելու։ Բախշեն լիքն է ղոնաղներով։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Ա՜խ... մադամ դիդիդա՛, մադամ մամիդա՛, մադամ ձալո՛... Դո՞ն էլ կու սարքիս էս հանգի վեշերնիր, Նատաշա՜։

ՆԱՏՈ, ֆմծիծաղ տալով։

Հը՜, հը՜... մինք էսենց վեշերնիր չինք սարքի, մոն շեր Սա՛շա... սե մո՛վե թոն։ Մինք տանցավալնի վեշրնիր կու սարքինք. էրկու. շարթենը մե ջեր, ժուր ֆիքս, հինգշափթեքը կամ յիրիքշափթեքը վո՞ւրը լավ կուլի, յերիքշափթեն լավ է հրա՜, Սա՛շա...

ԱԼԵՔՍԱՆԴՐ, առանձին, երեսը ծամածռում է։

Վո՛ւնցոր գուզիս, շեր Նատաշա. գուզիս ամեն շափաթ։

ՆԱՏՈ

Չէ, յիրկու շափթենը մե ջեր լավ է։ Ա՜յ, Սո՛նիչկեն, հիմի վուր մադամ Զա՛րինսկայա է, նա էլ երկու շափթենը մե ջեր ունե։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Լա՛վ, լավ, Նատաշա։

ՆԱՏՈ

Յիրիքշափթեքն, ա՜յ, Սա՛շա, ու հինգշափթեքը Կրուժոկումը տանցավատ կոնինք։ (Ալեքսանդրը, առանձին, ճորից ծամածռում է երեսը։) *Ամեն հինգշափթե, ա՜յ, Սա՛շա։*

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Խի՞ստ իս սիրում Կրուժոկը՛, Նատաշա։

ՆԱՏՈ, արագ-արագ և ձեռքը Ալեքսանդրի ուսին։

Կրուժոկն ո՞վ չի սիրի. էն հանգի տիղը կո՞ւլի վուր մարթ չսիրե՛։ էն էրգեն գալեքը, շեր Սաշա՛, էն բուդուարը, էն օթախնիրը, էնդադա ախչկիրքը, էն մուդիկեն, էն գուքսը, ա՜խ... Գրկում է։) Տանցավատ կոնինք, կու դաթրինք, տուն կէհանք հալիլի օթախը, էնգի կու նատինք, կու դանջանանք, կու խոսինք, կու ծիծաղինք...

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Իժում էլի տանցավատ կոնինք, է՛լի կու դնջանանք, է՛լի կու խոսինք, է՛լի կու ծիծաղինք։

ՆԱՏՈ

Պրե՛լեստ պրոստու։ (Համբուրում է։) *Լավ կու հա՛քնիմ, լավ կու զո՛ւքվիմ, ա լա դերնիեր մոդ, վուր գիփունքն ասում ըլին թե՝ մոի՛կ, մոի՛կ, մոսիո Մարմարովը ի՛նչ կնիկ ունե։ Մեկ էլ, Սաշա ջան, ուրփաթնիրը աբոնիմենտ կունենանք տեատրումը։*

ԱԼԵՔՍԱՆԴՐ, առանձին, կրկին ծամածռելով երեսը։

Հիմի էստունք։

ՆԱՏՈ, շարունակելով։

Վերիվն, ա՜յ, ձախ կուռը, ֆուայիեն մոդիկ է էնգի։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Շափթենը վուր էրկու աբոնիմենտ ունենանք, ուփրո լավ չէ՞, Նատաշա։

ՆԱՏՈ

Էտ մե քիչ թանգ չի նստի՞, Սաշա։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Ի՞նչ անիմ թե թանգ կու նստի. քիչ համա յիս փո՞ղ կու խնահի՞մ. դուխս գրավ կու դնիմ քիչ համա։

ՆԱՏՈ, գրկելով։

Դուն ինձ խի՞ստ իս սիրո՞ւմ, շեր Սա՛շա։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Խիստ, խիստ, շեր Նատա՛շա։ Տեսա թե չէ, էն օրն էվետ սիրեցի քիզ։

ՆԱՏՈ

Ջիմ ավտում, ջիմ ավտում, Սա՛շա, կավալերնիրը գիփ էտենց ին խոսում։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Ա՜խ, Նատա՛շա, գանա յիս նրանց նմա՞ն իմ. նրանց լիգուն ուրիշ է, սիրտը ուրիշ. ամա իմ լիգուն... (Ձեռքը կրծքին խփելով։) ա՜յ։

ՆԱՏՈ, հեգնությամբ։

Գի՜դիմ, գի՜դիմ... Ցիս վուր բաժինք չէի ունեցի, խում չէիր ուզի ինձ։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Նատա՜շա, Նատա՜շա, ինձ անպատիվ իս անում, մա շեր։ Բաժինքն ի՞նչ է, ֆի՜։

ՆԱՏՈ

Բաս ի՞ի՞ստ իս սիրում ի՜նձ։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Խիստ, խիստ, Նատա՜շա. ի՜նչումը գուզիս փորցե՜ ինձ։

ՆԱՏՈ

Գիդիս ի՞նչ է, Սաշա՜. իմ պիանինոն պետկը չէ...

ԱԼԵՔՍԱՆԴՐ, գլուխը fորելով և առանձին։

Է՜լի Թաղա իմքին։

ՆԱՏՈ, շարունակելով։

Մե լավ ռոյալ ա՜ռ ինձ համա, էսօր մագազինումը տեսա, իսուն Թուման ին ասում։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Ի՜սուն Թումա՜ն, էտ լավը չի ըլի, Նատաշա՜։

ՆԱՏՈ

Դո՜ւշինկա, Սա՜շա։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Մե քիչ մուլափ տո՜ւ դուն, Նատա՜շա. իմը մե բարեկամ զագրանիցեմեն կու բերե հե՜ստի ռոյալ, հե՜ստի ռոյալ, վուր հարուր Թուման, հարուր ու իսուն Թուման կու աժենա։

ՆԱՏՈ, համբուրելով Ալեքսանդրին։

Ա՜խ, Սա՜շա, դո՜ւշինկա, պտա՜շեչկա, դարագո՜ի, ի՜մ հոքի։ (Վեր կենալով։) *Էս սահաթիս գալիս իմ, գնամ լոտոյի համա լոբի բերիմ, Թե չէ մամաշեն կու ջգրվի...* (Կիսաձայն երգելով։) *Թրա լի՜, Թրա լի՜, Թրա լի լա լայա լա՜...*

Դուրս է գնում ճյուրասենյակի ձախ դռնից։

ՏԵՍԻԼ Գ

ԱԼԵՔՍԱՆԴՐ, մենակ, տեղիցը վեր թռչելով, ծիծաղում է։

Հա՜, հա՜, հա՜... Վեչեր, բալիր, Կրուժոկ, աբոնիմենտ, զուքսիր, հա՜, հա՜, հա՜... մի՞լիոն ունիմ Թե ինչ է. . Ցիս կի չիմ ուզի, վո՜ւրդի է. հենց գիդենաս հինգ հազար Թուման ըլի բերում։ Էտ ի՜ժում, ի՜ժում, Նատաշա, մե տաս տարվան էդնեն, քսան տարվան էդնեն, կալյասկա էլ կու սարքիմ, ամա հիմի գլխեմետ հա՜նե էտունք... Հիմի ամեն օր ղուրթ վուր էսենց ուզե ու ուզե, էս ո՞ւր կէհա... Կոի՜վ, ղալմաղալ. ա՜րի ու էնչախը հիդ գցե տարենը հարուր Թուման։ Չէ՜, չէ՜, դժար պահելու իս, Նատա՜շա... Ինչի՞ էստունք վաղ փիքր չարի... է՜հ, ի՜նչ գուզե ասե. նա լրն ասե, լիս իմը կոնիմ։

ՏԵՍԻԼ Դ

ԱԼԵՔՍԱՆԴՐ, ՆԱՏՈ

ՆԱՏՈ, մտնելով ճյուրասենյակի ձախ դռնից, ձեռին ափսեով լորի, դառնում է դեպի կուլիսը։

Է՜ս սահաթիս, է՜ս սահաթիս, էս նմուտիս գնում իմ։ (Ափսեն դնելով սեղանի վրա։) *Էս էլ լոբին... Ա՜րի, Սա՜շա, գու քա՞ս, գնանք բախչեն. մամաշեն դիվիր է գալի, ղոնաղնիրը մենակ ին էնդի։ Ա՜րի տիս՝ ի՜նչ սիրուն ստոլ ունինք սարքած էնդի չայու—ա լա դերնիեր մոդ։*

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Ցիս քու հորն իմ մնում, Նատա՜շա, հարկավուր բան ունիմ հիդը խոսելու։

ՆԱՏՈ

Ի՜նչ կա, հիմիսկ էվետ հիդ կու դառնանք։ Գնանք, չայ խմինք էնդի, ինչրու պապաշեն էլ գու քա. ի՞նչ կու շինիս էստի մենակ։ (Թևից բռնելով։) *Ջո՜ւստ, է՜, գնում իմ։*

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Լա՜վ, գնա՜նք։

ՆԱՏՈ

Ա՜րի, ա՜րի, մե իմ նեժնի ձալոյի հիդ ճանչցնիմ քիզ։

Ծաղրաճոով ներկայացնում է իր ֆեֆուչ ֆեռակնոչը։ Ալեքսանդրը ծիծաղելով, գլուխը շարժում է։ Թևակցած և fրfռալով դուրս են գնում դահլիճի ձախ կողմից։

ՏԵՍԻԼ Ե

ԽԱԽՈ, ՍԱԼՈՄԵ, մտնում են Հյուրասենյակի ձախ դռնից։

ԽԱԽՈ

Չէ, քու արիվը, Սալոմե, լավ չէ անում, պիտի խրատիս, նշնած աղջկա համարցակութիւնն ո՞վ է իմացի։

ՍԱԼՈՄԵ

Մոդեն էտենց է, բատոնո ջան, ի՞նչ անիս։

Լոտոյի արկղը բանալով՝ թղթերը կարգի է բերում։

ԽԱԽՈ, նստելով ձախ կողմը, ընկողմարանի վրա, ոտները կախ գցած։

Հե՜յ գիդի ժամանակ, շարխի պես պտուտ իս գալի... Ցիս վուր նշնած էի, Սալոմե, դունչս կոսեիր կոխպքով էր կոխպած ու աճկերով վո՞ւնց կանեի օմքնու էրեսին մտիկ անի. կոսեիր գեղնումը ցցած է։

ՍԱԼՈՄԵ

Յա՛բաբ վո՞ւնց էիք դիմնում էնչախը, բատոնո. աթմորթին աճկիր ունենա ու չկանենա, օմքնու մտիկ անի՞. լիզու ունենա ու չկանենա խոսի՞. կուճիս կու տրաքի, աստուձ գիդենա։ Լավն էն է, պրծանք էն ժամանակեմեն, թե չէ ճլերք կու ննգնեի։

Գնում է կարգի բերում դահլիճի սեղանը։

ԽԱԽՈ

Ձի՛ր ժամանակը կուլի լավը. աբա էս ի՞նչ բան իք սարքի. տղամարթիքը շափթներով դադում ին ու դուք կի մե գիշիրումը խժռում իք։ էն ամդահա վուրփևերին էլ պիտի խաղա՞, չումպո փուրո՞վ. իսուն տարեկան ավել կուլի։*

ՍԱԼՈՄԵ

Առանց նրան լոտո կուլի, քա՜։

ԽԱԽՈ

Կրի՞մ նրա սատանի գլուխը. քու տարոը փսակած աղջիկ ունեն։

* *Խոսքը Մարթայի մասին է։*

ՍԱԼՈՄԵ

Ի՜ի, բատոնո, նա հալա ունե, խաղում է, դուք քոռ Գիգոլու կնգան ասա, վուր նրա մարթը հաց չունե ուտելու ու ինքը կի միզ մոդ է ձքվում. վո՞ւնց կուլի նրա բանը։

ԽԱԽՈ

Ի՜հ, Սալոմե, վուրթի, նրա բանը ի՜նձ հարցու. քու արիվը, մե շափաթ չի ըլի էրծթե բադիեն բերիլ է, մարթումեն թաքուն, միր հարևնի մոդ գրավ է դրի հինգ մանեթով, ամսենը պիտի էրկու շայի էլ շահ տա, էս թումանը մե աբասի կոնե։ Գնացիլ է ու աճկը դուս է էկի, էն գիշերն էվեռ դիփ մետի տանուլ է տվի լոտոյումը քու արիվը. տեսնիմ թե յիփն է թափում։

ՍԱԼՈՄԵ, հայելու մեջ ուղղվելով։

Ի՜հ, օշովու համա շափս ու ձիվ չկա, բատոնո ջան։

ՏԵՍԻԼ Զ

ՆՐԱՆՔ, ՕՍԵՓ

ՕՍԵՓ, մտնելով դահլիճի աջ կողմից, նեղացած։

Հը՜... էս ի՞նչ իս սարքի, է՛լի։

ՍԱԼՈՄԵ

Բաս ի՞նչ էի արի, հորեն աշխարքի գոնալնիր ին մոդ էլի բախչումը։

ՕՍԵՓ

Թեհեսաբ նամաղուկ ին արի, վուր մոդ ին էլի. ո՞վ էր ասում նրանցը վուր մոդ ըլին. մե ինձ էլ հարցնին, է՛։

ՍԱԼՈՄԵ

Ուցնավուր իս, քա՜. աղջիկ ինք նշնի; չգա՞ն, չշնահավուրի՞ն։

ՕՍԵՓ

Շնա՜հավուրին... Դիփ իմ ուրախութենի համա ին ուրախանում, գա՜նա չիմ գիդի. նրանց ուրախութենն էն կուլի, վուր մարթ բեբախտանա, նստին, վրեն խոսին ու ծիծաղին։

ԽԱԽՈ

Ի՜նչ խիստ իս ժանգոտի սիրտդ, Օսե՛փ. ախար էտղադա նի՛ղանալ ու չա՛րանալ կուլի՜, վուր էս էրկու օր է դուն իս նիղանում ու չարանում, վուրթի՜։

ՕՍԵՓ

Ա՜խ, մամիդա, նետայի մե ըլելու բան ըլի, դոշս դանակով կիս անիմ ու սիրտս հանիմ քի շանց տամ, վուր էնչախն իմանաս թե ի՜նչ իս ասում։

ԽԱԽՈ

Մամիդի սիրտը կես ըլի. վուրթի, ու էտ չտեսնե։

ՕՍԵՓ

Աբա ասում իս, ի՜նչ անիմ ախար. լոտոյի վո՞ւխտ է վուր շոկրոկվիլ ին ու համեցեք ին էլի՜։ Ավտաս քսան հոգի ավել ըլին։ Շնահավուրիվ էին ուզում, ամեն մարթ իր համա էր էկի շնահավուր արի, թե չէ դիփունանցը մնտի հենց մե վուխտը վո՞ւրդի միտն էկանք։ Կու դրչեին էլի մեկս մեկու մոդ թե՝ աբա՜, Սալոմեն ախչկան նշնիլ է ու չի՞ գալի՜. գնանք. վիրչը՝ էս մունդոեկ լոտոյի համա, է՜լի։ Վուրին էլ սա կու կանչեր թե՝ փլանինք էստի ին ու դուք էլ համեցե՜ք։ (Սալոմեին։) Ասա՜ չէ, է՜լի։

ՍԱԼՈՄԵ

Ի՜նչ է ասում. բաս քու բիձանցը չէի՞ իմաց արի՜։

ՕՍԵՓ

Է՞լ։

ՍԱԼՈՄԵ

Էլ ո՞վ. քու բիձանցն իմ իմաց արի, քու դեդիդի ախչկերանցն ու էստի քու ախպուր կնգա մոդ ղրգեցի հիմի։

ՕՍԵՓ, չարանալով։

Ինչի՞, ինչի՞. նրանք էլ մի ուրիշ օր էին էկի։

ՍԱԼՈՄԵ

Աբա՜, դուն միր հեսաբն ի՜նչ գիդիս, վուր խոսում իս անմիդ. թավաթ ի՜նչ ասիս վրես ին ասում ու չէ՜ի կանչի, վուր խոռվիլ էին ու մե տարի հիդս խոռվ էին կացի՜։

ՕՍԵՓ

Ա՜խ, աստուած, աստուած, է՜սղադա էլ քոռութի՜ն... (Հարձակվելով դեպի լոտոյի սեղանը՝ սփոռցի ծայրը քաշում է։) *Սիրտս ասում է՝ էս սահաթիս փուլուփանդը մե՜չը դի։*

ՍԱԼՈՄԵ

Ի՜ի, քու գլուխ չունիմ, քա՜։

Դժգոհ դուրս է գնում հյուրասենյակի ձախ դռնից։

ՏԵՍԻԼ Է

ՕՍԵՓ, ԽԱԽՈ

ՕՍԵՓ

Ա՜խ, աստուած, կնիկարմտին գանա է՞նդուր իս ստիղծի աշխարքի էրեսին, վուր տղամարթու արունը խմե՜։

ԽԱԽՈ

Հա՜մփիրե, հա՜մփիրե, Օսեփ ջան, վո՜ւրթի ջան, դուրթ իս ասում, դի՜փ դուրթ իս ասում. ամա վուրն էլ պիտի յոլա տանիս. ի՞նչ անիս, էկիլ ին, տանեն խո չի՞ս կանա դուս անի ու աշխարքի խոսելու չիս դառնա էտու համա։

ՕՍԵՓ

Աշխարքի խոսելուն վուրն էնչախը թամաշա արա դուն, վուր էքուց էլօր գու քան, դռանս պուբլիկացիա կոծին։

ԽԱԽՈ

Ի՜հհ, լավ է դուն էլ, քա՜։

ՕՍԵՓ, նստելով լոտոյի սեղանի մոտ։

Լավեն վուրն է, ի՞նչս ասում. հենց գիդիմ օճոռքը գլխիս քանդվում է։

ԽԱԽՈ

Ի՞նչ է պատահի, Օսեփ։

ՕՍԵՓ

Աստուած վուչ գիդե իմ գլուխն ու արիվը. հորեն Լեպրոյինց Փասոն, ասում ին, գանգատ է տուն տարի ինձ վրա։

ԽԱԽՈ

Ի՞նչ գանգատ։

ՕՍԵՓ

Փուղ իմ պարտ ու հոքեհանի պես ուզում է։

ԽԱԽՈ

Վո՛ւյ, քոռանամ յիս։

ՕՍԵՓ

Էն անաստուծը, զարթնի իմ բարաթը, ձեռին չարչու բարաթ ունե իմը գրավ ու հաշա է ուտում։

ԽԱԽՈ

Յա՛բաբ նրա պես էլ անաստուծ մարթ կուլի՞։

ՕՍԵՓ

Անաստուծ ասիր ու պրծա՞ր։ Ա՛յ, կու կանչին ու կու տեսնին. ամա ինձ էս սահաթիս փուղ է հարկավուր, փո՛ւղ, ու չիմ կանացի ճարի. ումն ուզեցի՝ էլ բարաթով օչով չմավա գնաց, ու ապրանքս իսո կիսագնով չի՞մ կանա ծախի։ Հալբաթնա՛, ափալս իմացան ու դիփունքը գլխներիը վիքաչեցին։ Է՛ս արավ ինձ Սալոմեն, է՛լի. էն օխտը հարուր թումանը վուր խոստացավ, տեսնիմ հիմի ո՞վ է համբրում։

ԽԱԽՈ

Ախար էտ ինչի՞ր իս ասում, Օսեփ. ախչկատ բողազը իսո դո՛ւս կու կտրվի։

ՕՍԵՓ

Իմ բողազն ուփրո վաղ է դուս կտրվում։ Տեսնիմ թե էքուց աստուծ ի՞նչ է տալի. մե տիղ էլի ումիկ ունիմ։

ԽԱԽՈ

Ախար դուն էն անաստուծուն վո՞ւնց էիր մավա գնում. աջա՛ր քու խիլքին, Օսեփ։

ՕՍԵՓ

Է՛հ, մամիդա... Կարիքն իր խիլքն ունե... Բա՛ս... յիս վուր ասում էի թե հիմիկվան ապրելուն մարթ չի կանա դիմնա՛, է՛ս էի ասում, ա՛յ։ Հալալ առուտրումը խեր չկա, հառամ առուտրի շնուք յիս չունեի, ու էկավ, է՛լի, տարես տարի ավելցավ ու վուրդիոր բարկեցավ, էնպի կտրվեցավ։

ԽԱԽՈ

Վո՛ւյհ, վո՛ւյհ, վո՛ւյհ, վո՛ւյհ, ինչի՞ գիդինը չիմ մտնում։

ՕՍԵՓ, վեր կենալով։

Միր առուտրումը դիփ հինգ-վից մարթ չկա վուր իրանց փուղով ըլին առուտուր անում, էն փուղն էլ հալալ է թե հառամ. աստուծ գիդե, մնացածը դի՛փ նիսիա, դի՛փ նիսիա. քու ապրանքը ծախեցի՝ սրա փուղը տվի, սրա ապրանքը ծախեցի՝ նրա փուղը տվի. էտենց գնո՛ւմ է չարխի հանգն, է՛լի, ինչրի մեկը կու ռաստ գա ու գուլբքի չխիրը կու հանե՝ գնա՞ց մե ծերեմեն մեկելը, դիփ մետի քար ու քանդը մեչը գնվեցավ։ Ախար մարթ համ գուքնի քրիհին դիմնա, համ պրիկաշչիկներու ուտիլ խմելուն ու տոնլուղին դիմնա, համ փուղի տիրուչ շահին դիմնա, համ կորած նիսիին դիմնա, համ փչացած ու փախցրած ապրնքին դիմնա, համ էլ իր տանը (Լուռոյի սեղանին ձեռով խփում է։) է՛ս դաղգին դիմնա ու սրա հիդ էլ մեկելներո՛ւն։ (Նորից խփելով։) Դի՛փ կնգդիրքը, դի՛փ կնգդիրքը... Իմ կնիկը վուր առանց ինձ վից հարուրը օխտը չէր շինի, խո դիփ մետի մոչլա կուլեր ու էս բանը չէր գա գլուխս։ Ո՞ւր է, ո՞ւր էն ուսումն ու յուսավուրութինը, վուր միր կնգդիրքը միզ պետկը գան։ Հայի՞փ, հայի՞փ, հայի՞փ իմ գրանիցա։ Ա՛յ կնգդիրք... Ի՞նչ գուզե բանումն ըլի աղամարթը, իմ դարաջի մարթու կնիկը հալալ հիդը ննգիր է. էփողի կնիկը էփող է, գրողի կնիկը գրող է ու վաճառականի կնիկը վաճառական. մետի դաղում ին, մետի ուտում ին, դարդն էլ կես է, ուրախութինն էլ. էստի կի հազիր հազրաբաշի* դաղած փուղ պիտի ըլի, վուր նստին ու էս (Կրկին խփելով սեղանին։) մունդռեկ բանի վրա մաշին իրանց կինքը։ Էրնեկ գիդենամ ի՞նչ է դուս գալի էսղանց... (Կանացի ձայնով և ծաղրելով։) Սեմդիսեռ սե՛մ, սեմդիսեռ դվա՛... Ա՛յ շոռ ու ցավ ու աստծու կրակ։

ԽԱԽՈ

Դուն ժա՛մանակն ասա, վուրթի, ժամանակը, թե չէ հորեն մա՞րթիքը չին վուր գիշերն ինչկի լուսը նստած կլուբերումը թուխտ ին խաղո՞ւմ։

ՕՍԵՓ

Օ՞հ, հո՞, հո՞, հո՞, թե չէ կնգդիրքը իսո լայիզ չին անում թուխտ խաղալն, ա՛յ։ Էտ մե թուխտն էք, էտ էլ խլեցին ձեռներումես, փառք աստծու. մի՛ վախենա, էքուց էլօր բիլիարդ էլ կու խաղան աստծու կարող

* Թիֆլիսի բարբառում ասվում է և՝ հազիր հազրաբաշի։

զորութենով։ Ի՞նչ իս ասում, ի՞նչ. մարթիքը խա՛ղում ի՞ն, հա՛զրենը մեկը, հա՛զրենը մեկը. ամա կնգդիրքը՝ հազարումը ինը հարուր ինըսուն ու ինը զոմարբազ ին. աբա վո՞ւր տղամարթը գու քա հիմիկվան կնգդիրանց մոդ, ի՞նչս ասում։ Էլի աղբաթը խեր ըլի տղամարթկերանցը. տեսան վուր ապրիլը դժարացավ, շատ բանեմեն ձևոը վիկալան։ Էլ վո՞ւրդի է վաղուցվան ըրգիսպուրիքը, թայիսմելեքը, զուռնով քեփիրն ու զոդիրը. թարգը տվին, դիփ թարգը... ամա կնգդիրքը ի՞նչ կնին, կնէն, ինչոր չէ, ու (Ձախ ձեռքը բարձրացնում է և իբրև մեկ ծանր առարկա բռնած վայր է թողնում։) վիկալան ու մե բան էլ վրեն ավելցրին։ Էս պիկնիկ է, կոսե, էս վնչեր է, կ՚ոսե, էս յիրիք, օրով բաղումը մեձարք է, կոսե մարթիքը մնացիլ ին տարեկուս արած ու էրեխերքը մե ձեն վա՛յ դեդ՝ ին կանչում զուլուղչերու ձեռին։ Ո՞ւր է, ո՞ւր, դատաստանը պիտի ինձ տան վուր է...

Ջարացած ման է գալիս։

ԽԱԽՈ, դժվարությամբ վեր կենալով, առանձին։

Ցիս ու իմ հոքին դրուստ է ասում, դի՞փ դրուստ է ասում։

Դուրս է գնում հյուրասենյակի ձախ դռնից։

ՏԵՍԻԼ Ը

ՕՍԵՓ, հետո ԱԼԵՔՍԱՆԴՐ

ՕՍԵՓ

Ա՜խ, ա՜խ, ա՜խ...

Սրմունկը հենելով վառարանի զեռին, գլուխը բռնում է և մնում անշարժ, տխուր դրության մեջ։ Երկար լռություն։

ԱԼԵՔՍԱՆԴՐ, մտնում է դահլիճի ձախ կողմից։

Ա՜խ, իմ հեր, էկա՞ք։ (Լռություն։ Մոտենում է Օսեփին։) *Իմ հե՛ր...*

ՕՍԵՓ

Օ՜հ, Ալեքսանդրե, (Ձեռք տալով։) *համեցե՛ք, նստի՛։ Հի՞մի էկա՞ր։*

Նստում են։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Չէ՛, շատ վուխտ է էստի իմ, բախչումն էի։

ՕՍԵՓ

Ուրիշ, թազա ի՞նչ խաբար։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Թազեն էն է, իմ հեր, վուր էն շափթին ուզում իմ փսակվի։

ՕՍԵՓ

Էտենց չո՞ւստ։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Հա՛, իմ նաչալնիկը գնալու է Պետերբուրգ ու խնչախպերս պիտի նա ըլի։

ՕՍԵՓ

Լա՛վ, վուր հիդ գա, էնչախն ըլի, ի՞նչ հաչաթ։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Չէ՛, էտ խիստ կու ուշանա, իմ հեր։

ՕՍԵՓ

Լա՛վ, քու քեփն է, վունցոր գուզիս։

ԱԼԵՔՍԱՆԴՐ, կակազելով։

Ախար... իմ հեր...

ՕՍԵՓ

Հա՛, հա՛, իմանում իմ. փուղիրը համբրիմ էս սահաթիս։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Հա՛, իմ հեր, թե կարելի է։

ՕՍԵՓ

Քիզ դրուստն ասիմ, Ալեքսանդրե, ձեռաց չունիմ, պիտի մե քիչ մուլափ տաս, ու թե առանց փուղի իս ուզում փսակվի՝ էտ դուն գիդիս, ախպեր։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Վա՛, էտ ինչի՞ր իս ասում, իմ հեր։

ՕՍԵՓ

Լավն էն է ասիմ քիզ. ախպեր, կանց խափիմ։ Դուն ինձ ասա՝ հիմիկվան օրենքը վո՞ւնց է, յիս վուր բարաթով օմքնու փուղ պարտենամ ու

Նա ինձ վրա գանգատ տուն տանե, չեր պիտի կանչին ինձ, խոսեցնի՞ն թե չէ։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Բարաթը ի՞նչ հանգի բարաթ է։

ՕՍԵՓ

Վեքսիլ։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Հա՞ստատած։

ՕՍԵՓ

Հաստատած։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Էտու օրենքն էնենց է, վուր կարող ին մեքաշ տուն գա էստի, ու թե էս սահաթին չհամբրեցիր, տուն ու տիղդ կու մհրին։

ՕՍԵՓ

Ա՛ռանց ինձ կանչելո՞ւ։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Հա՛, առանց կանչելու։ Էտուրը կոսին՝ աբեզպեչենիե իսկա։

ՕՍԵՓ

Ի՞մ վեքսիլումը վուր նա ուրիշի բա՞րաթ ըլի ստացի ինձմեն գրա՞վ։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Հա՛, էտ ուրիշ է. թո՞ւիստ ունիս էտումը՞։

ՕՍԵՓ

Չէ՛, ամա օրթումով կու հաստատիմ։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Էտու օրենքն էլ էնենց է վուր չեր քու վեքսիլի փուղը կու համբրիլ տան ու իժում, թե կանաս, հաստատե վուր նա քունը ուրիշի բարաթ ունե ձեռին։

ՕՍԵՓ, սաստիկ շփոթված։

Ղո՞ւրթ իս ասում։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Ղուրթ։

ՕՍԵՓ, ծնկանը խփելով և տեղից վեր թռչելով։

Բաս, տունս քանդվեցավ։

Լռություն։ Դահլիճի ձախ կուլիսից լսվում է Նատոյի ձայնը՝ *Սա՛շա, Սա՛շա, ովոր կանչում է քիզ։*

ԱԼԵՔՍԱՆԴՐ, մոտենալով Օսեփին։

Էտ ի՞նչ խաբար է. մե դրուստ ասա՛ ինձ։

ՕՍԵՓ

Կոսիմ, կոսիմ, հալա գնա՛, կանչում ին։

ԱԼԵՔՍԱՆԴՐ, գլխարկը վերցնելով և առանձին։

Յիս վուր տեսնում իմ, իմ տունն էլ է քանդվում։

Դուրս է գնում դահլիճի ձախ կողմից, բայց իսկույն վերադառնալով անհետանում է դահլիճի աջ կողմից։

ՏԵՍԻԼ Թ

ՕՍԵՓ, մենակ։

Էս ի՞նչ իմացա։ Հիմի ղուրթ վուր գան էստի, էս խո գեղինը մտա յիս։ Ինչի՞ հիմիսկ էվետ դեվեր չիմ բշկվում էստի։ Վո՞ւրդի ճարիմ էս սահաթիս էնղադա փուղը. էստուրը ժամանակ է հարկավուր ու նրանք կուլի էսօր էվետ գան, հենց էս սահաթիս. խո գնացի, խարաբ էլա, էլ ո՞վ ինձ ի՞նչ կու տա։ Մեքաշ կու փաթրթվին պարտկան տերիրը դլխիս, բողաղումս հուլի կու տան, էլ չին խոսեցնի, էլ ձեն չին հանիլ տա... «Ի՞ս տու, ի՞ս տու էս սահաթիս...» (Մագերը քաշելով։) Ա՜խ, Սա՜լոմե, Սա՜լոմե...

Դահլիճի աջ կողմից մտնում է Գևոն։

ՏԵՍԻԼ Ժ

ՕՍԵՓ, ԳԵՎՈ

ՕՍԵՓ, շարունակելով։

Ա՜յ, սա էլ, ա՜յ...

ԳԵՎՈ

Բարիգուն, Օսեփ։

ՕՍԵՓ, իրան մոռանալով։

Դո՞ւն էլ էկա՞ր, դո՞ւն էլ քու փուղն իս ուզո՞ւմ։ Դե չո՛ւստ արա, չո՛ւստ, հո՛քիս հանե, քանի բերնումս է, մեկն է՛րկու շինե պարտկս։ Ասա՛, ասա՛... ասա՛ վուր էրկու հարուր պարտ չիմ, ասա՛ վուր չուրս հարուր իմ պարտ, ասա՛, է՛լի, պարտկան տեր իս։ Ասա՛, մի՛ խնահի ինձ, պիտի քու փուղը սաղանա, էլ ինչի՞ն իս մնում, պլո՛կե կաշիս, հա՛նե ջիգարըս սաղ-սաղ, մա՛ս-մաս արա ու ամեն մե կտուրը մե-մե գրո՛շով ծախե վուր փուղդ չկորչի... (Գևոն աչքերը սրբում է։) *Լա՛ց ըլի, լա՛ց, կո՛րավ փուղիրդ...* (Խփում է ճակատին։) *Կո՛ւտրացա, կո՛ւտրացա...*

ԳԵՎՈ, փաթաթվելով Օսեփին։

Օ՛սեփ ջան, Օ՛սեփ։

ՕՍԵՓ

Դո՞ւն իս ասում ինձ՝ ջա՛ն, թե՞ վուր դուն էլ իմը պարտկան տեր իս։

ԳԵՎՈ

Քու չարը տանե, Օսեփ ջան, քու չա՛րը։

ՕՍԵՓ, ուշքի է գալիս և լացի ձայնով։

Փչա՛ցա, Գևո ջան, (Գրկում է Գևոյին։) *փչա՛ցա։*

Լուռ տեսարան։

ԳԵՎՈ

Սի՛րտդ բռնե, հեր օխնած, տղամարթ չի՞ս։

ՕՍԵՓ

Էլ ի՛նչ տղամարթ, մե անմիղ ջուրի կտուր իմ. դիփ մետի ձեռնես գնում է... Գնա՛ց, գնա՛ց նամուսս.. (Լալով։) *իմ պատվական նամուսը թա՛ղեցի։*

Աչքերը սրբում է։

ԳԵՎՈ

Աստուած օղորմած է, Օսեփ ջան։

ՕՍԵՓ

Աստուած էլ խռով կացավ գլխիս ու յիրգինքն էլ։ Էս արավ ինձ, է՛լի, է՛ս, իմ ախչկա մարթու տալը։ Նեռայի մե քու փուղը թամամ մայինց կանենամ տա. կու տամ, վունցոր կուլի կու տամ, մի՛ վախենա։

ԳԵՎՈ

Ի՞նչս ասում, Օսեփ, նեռայի ունենամ, վուր գլխամեռ էս սահաթիս էրես չի ըլի դիփունանցը. բաս էլ ինչի՞ բարեկամ իմ։

ՕՍԵՓ

Վուր ունենաս, Գևո ջան, էլ բարեկամ չիս ըլի իմը, էտ սիրտն էլ չէիր ունենա էնչախը. թո՛ղ էլի էտենց խիղճ ըլիս, վուր կանենամ քիզ բարեկամ ասի։ Էտ քու մե սրտացավ ձենն է մնացի ինձ աշխարքումը, թո՛ղ էտումեն էլ է մայինց չկրգվիմ։ Գորցեցի, դիփ մե օրումը փորցեցի. էլ օչով չինահից ինձ՝ վունց բիձա, վունց ախպեր, վունց բիձու տղեն... Տեսան վուր հոքեվարք իմ, դի՞փունքը մետի թողին ինձ ու դոնիրը վրես ղայիմ կոխպեցին։

ԳԵՎՈ

Ա՛րի, էգերա էլի մե իմքին չարա ըլի։

ՕՍԵՓ

Քու դո՞ւշմանին չարա ըլի էնենց, վունցոր ինձ չարա կուլի։

ԳԵՎՈ

Ա՛րի, ա՛րի հալա, բան կա։

ՕՍԵՓ

Էլ ի՞նչ բան պիտի ըլի։

ԳԵՎՈ

Ա՛րի, մի՛ ուշացնի։

ՕՍԵՓ

Ի՞նչ է, մե ասա, է՛։

ԳԵՎՈ

Ա՛րի, ա՛րի, ճամփին կոսիմ։

ՕՍԵՓ

Ուրիշ հանգն իս ասում. ասա՛՝ ի՞նչ իսաբար է, ի՞նչ է պատահի. ասա՛, մի՛ վախենա, մի՛ խնահի ինձ, ինչ էլավ, էնդու վրա ավելի ի՞նչ պիտի ըլի. թոփի գուլեն դիբիլ է սրտումս, ի՞նչ հաջաթ հիմի թե դոշս էլ կու պատռտին ու սպանած սիրտս մեչեն կու դուս գչլին. ասա՛՝ ի՞նչ է, ի՞նչ. դուքանս խո չի՞ն մհրում։

ԳԵՎՈ

Ա՛րի, ա՛րի ու կու տեսնիս։

ՕՍԵՓ

Մհրո՞ւմ ին բա՞ս։

ԳԵՎՈ

Ասում իմ, է՛լի։

ՕՍԵՓ

Ա՛յ, գեդինը մտի, Օսեփ։ (Մոռանալով իրան հարձակվում է դեպի լոտոյի արկղը, միջից թղթերը հանում է և անկարգ այս ու այն կողմն ածելով։) *Խաղացե՛ք, հի՛մի խաղացեք...* (Մի քանի թղթեր թափվում են հատակի վրա։ Գնալով։) *Խաղացե՛ք, խաղացե՛ք...*

Դուրս է գնում դանլիճի աջ կողմից։

ԳԵՎՈ, հետևելով։

Հայի՛փ, հայի՛փ մարթ։

Դուրս է գնում Օսեփի հետից։ Դանլիճի ձախ կողմից երկու ծառա, հագնված ինչպես ցույց է տված նկարագրության մեջ, բերում են մեծ վազանեռով դարձյալ մի քանի տեսակ պտուղներ և դնում են այնտեղ սեղանի վրա, հետո երկու սենյակներումն էլ բոլոր հանված մոմերն ու լապտերները վառում, լոտոյի սեղանի շուրջը աթոռներ դասում, վայր թափած թղթերից զարմանքով մի քանիսը հավաքում, սեղանի վրա են դնում ու դուրս գնում հյուրասենյակի ձախ դռնից։

ՏԵՍԻԼ ԺԱ

ՍԱԼՈՄԵ, ՄԱՐԹԱ, ՆԻՆՈ, ՓՈՓՈ, ԲԱՂՄԱԹԻՎ ԿԱՆԱՅՔ, գեղեցկապես զարդարված մտնում են դանլիճի ձախ կողմից։

ՍԱԼՈՄԵ, մտնելով։

Համեցի՛ք, համեցի՛ք, գեթաղվա, ա՛նուշ արեք, ո՞վ ինչ կամենաք, լոտոն հադիր է։

ՄԱՐԹԱ, առաջ գալով։

Ուցխո չէ՛, քա՛, թխտիրն էլ բաժնած։

Մյուս կանայք ցածրաձայն խոսելով և ծիծաղելով մտնում են դանլիճի սեղանին։

ՍԱԼՈՄԵ, առաջ գալով և տեսնելով, որ լոտոյի թղթերը անկարգ ածած են։

Էս ի՞նչ խաբար է, էս ո՞վ է արի։

ՄԱՐԹԱ

Թային կատու է ման էկի վրեն, քու արիվը, Սալոմե։

ՍԱԼՈՄԵ

Չիմ իմանում թե էս ի՞նչ է։

ՄԱՐԹԱ, Սալոմեի ձեռքը բռնում է և առաջ բերելով։

Ի՞նչ ի՛մ ասում, Սալոմե, (Մյուս հյուրերը խումբ-խումբ հավաքված, դանլիճի սեղանի շուրջը, ուտում, խմում, խոսում, ծիծաղում են։) *կազնաչեի Մաշինկին չլինիս, գեթաղվա։*

ՍԱԼՈՄԵ

Ի՞նչ խաբար է։

ՄԱՐԹԱ

Քա՛, չի՞ս իմացի՞, էն օրը Խնդոյինց տանը պոլուիմպերիալը ձեռաց ծղպըղպից։

ՍԱԼՈՄԵ

Միթամ էտ ղո՞ւրթ է՞, ինձ Քա՛լինկեն ասավ։

ՄԱՐԹԱ

Ի՞նչ է ասում, քա՛, աշքարա իմ աճկերով տեսա։

ՍԱԼՈՄԵ

Վո՛ւյ, գե՛դինը պատռե, նրա սատանին դեվեր տանե. յիս վուր չէի ավտում։

ՄԱՐԹԱ

Խիստ գուղն է, ասում իմ, է՛։ Մեկել օրն էլ Խիրրոյինց տանը էրկու մանեթը նրա առչիվը ստոլի տակը գթա. (Ձեռքով ցույց տալով։) *էսենց դեվեր էր քաշի։ Ստոլի տակը մտիկ անիմ, տեսնիմ, էրկու վուտը վրեն դայիմ վրա է հարի։* (Ծաղրելով։) *«Վո՛ւյ, քոռանամ, ասում է, էս վո՞ւնց է դեվեր ննգի վուր չիմ տեսի», կոսե։*

ՆԻՆՈ, մոտենալով Սալոմեին մյուս կողմից։

Ի՞նչ իք քչփչում, քա՛։

ՄԱՐԹԱ, Սալոմեին, ծածուկ։

Գեթաղվա, Սալոմե ջան, դրան վունչիչ չասիս։

ՍԱԼՈՄԵ, Մարթային։

Աբա՛, թիմեն չիմ արմնո՞ւմ։

Մարթան հեռանալով Սալոմեից, մոտենում է դահլիճի սեղանին, նստում, խմում է. հետո վերցնելով մի ափսեի վրա զանազան մրգեր և քաղցրավենիք, գնում խառնվում է մյուս հյուրերի հետ, որոնցից մի քանիսն արդեն լոտոյի սեղանի մոտ տեղ են բռնել։

ՆԻՆՈ, Սալոմեին։

Ի՞նչ էր ասում, ո՞ւմն էր բամբասում։

ՍԱԼՈՄԵ

Վո՛ւնչիչ, մե բան էր, Նինո ջան։

Գնում է դեպի լոտոյի սեղանը։

ՆԻՆՈ, չթողնելով Սալոմեին։

Հալա, Սալոմե ջան, գեթաղվա։

ՍԱԼՈՄԵ

Վո՛ւնչիչ, քու արիվը, Նինո ջան, Մաշինկի վրա էր խոսում։

ՆԻՆՈ

Ի՜հ, կրիմ դրա ամկը. ինչ դա ասե, դուն էլ ավտա՛. իրան ասիս վուր դալը փուղը վեր է գալի ու իժում հաշա է ուտում։

ՍԱԼՈՄԵ

Ի՜հ, դուն էլ, Նինո։

ՆԻՆՈ

Աստուձ գիդենա։ Մո՛ղայիթ կաց, Սալոմե, դրա փուղին։

ՄԱՐԹԱ, ափսեն ձեռքին, խնձոր կրծելով և ծամելով, հեռվից կանչում է։

Աբա՛, չի՞նք կցո՞ւմ, Սալոմե, ա՛րի, է՛լի։

ՍԱԼՈՄԵ, հյուրերին։

Համեցե՛ք, համեցե՛ք, գեթաղվա. (Նինոյին։) *ա՛րի, Նինո։*

Դահլիճի ձախ կողմից մտնում են Նատո և նրա ընկերուհիները թե-թեի տված։

ՑԵՍԻԼ ԺԹ

ՆՐԱՆՔ, ՆԱՏՈ և ՆՐԱ ԸՆԿԵՐՈՒՀԻՆԵՐԸ

ՍԱԼՈՄԵ, հավաքելով լոտոյի թղթերը, զարմացած։

Է՛ս ո՞վ է արի, նետայի գիդենամ։ (Նատոյին։) *Էս դո՞ւն իս արի, Նատո՞։*

ՆԱՏՈ

Չէ՛, մամաշա, ձեռն էլ չիմ տվի։

ՍԱԼՈՄԵ

Չիմ իմանում թե էս ի՞նչ բան է։ (Հյուրերին։) *Համեցե՛ք, նստեցե՛ք, գեթաղվա։*

Բոլոր հյուրերը նստում են լոտոյի սեղանի շուրջը։ Նրանցից մեծ մասը բերել դրել են իրանց առաջ տեսակ-տեսակ մրգեր և քաղցրավենիք։ Նատոն հյուրասիրում է իր ընկերուհիներին։ Սալոմեն կանգնած՝ բաժանում է լոտոյի թղթերը, որ հյուրերը ձեռքից ձեռք հասցնում են միմյանց։

ՓՈՓՈ, որ ամենից շատ քրքրվում ու ծիծաղում էր. այս միջոցին սկսում է ցածրաձայն երգել թասիբի եղանակով։

Ուստի՞ գու քաս, դարիբ բըլբուլ,
Դու մի՛ լաց ըլի, յիս իմ լալու.
Դու վարթ պըտռե՛, յիս գոզալին,—
Դու մի՛ լաց ըլի,

ՓՈՓՈ և ՄԻ ՔԱՆԻ ԿԱՆԱՅՔ, խմբովին։

Յիս իմ լալու։

ՍԱԼՈՄԵ

Բա՛ցր ասա, բա՛ցր, Փոփո ջան, գեթաղվա։

Շարունակում է թղթերը բաժանել։

ՓՈՓՈ, բարձր ձայնով երգում է։

Արի՛, բըլբուլ, խոսի՛ բառըն,
Օխընվի՛ քու էկած սաթըն.
Քի վարթն էրից, ինձ իմ յարըն,—
Դու մի՛ լաց ըլի, յիս իմ լալու։

ԲՈԼՈՐԵՔՅԱՆ

Ղաբուլ ինք, ղաբուլ։

ՍԱԼՈՄԵ, ջարուՆակելով։

Աբա՛, մե-մե մանեթ վեր գանք ու մե-մե թումանի վիկալինինք, էրկու խաղ կոնե, լա՞վ կուլի՞։

ԲՈԼՈՐԵՔՅԱՆ

Լա՛վ, լա՛վ, լա՛վ։

ՓՈՓՈ, ծիծաղելով։

Վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ, քանդվի ձիր օջախը։

ՍԱԼՈՄԵ

Դուն էլ քու մարթու պես սկուպոյի մի ըլի, քա՛։

ՓՈՓՈ

Դիա՛խ, դիա՛խ, սաղ էլ գու քա։ (Փողը տալով։) *Բռնեցի՛ք, տարի՛ք, տարե՛ք, ձիզմեն ո՞վ կու պրծնի։*

ՍԱԼՈՄԵ, գրպանից տասը ռուբլիանոց հանելով։

Էս իմ մանեթի տիզ, թումանանուց է գիդենա՛ք։ Աբա՛, բերե՛ք։

Դանիլեի աջ կողմից մտնում է Ալեքսանդրը։

ՏԵՍԻԼ ԺԳ

ՆՐԱՆՔ, ԱԼԵՔՍԱՆԴՐ

ՆԱՏՈ, մոտենալով Ալեքսանդրին։

Ա՜խ, Սա՛շա, ինչի՞ ուշացար։

Նատոյի և Ալեքսանդրի այս խոսակցության ժամանակ բոլոր նյութերը կարգով տալիս են Սալոմեին, միմյանց հասցնելով, փողեր, մատանի, ապարանջան, մեդալիոն և այլն։ Սալոմեն հավաքում է այդ իրերը իր առաջ, կարգով դասում և լոքիներով նշանակում։

ԱԼԵՔՍԱՆԴՐ, գլխարկը մի կողմ դնելով։

Բան ունեի։ (Առաջ բերելով Նատոյին, շփոթված և կիսաձայն։) *Մո՛ւլափ, Նատա՛շա, բան իմ ասում։*

ՓՈՓՈ և ՄՅՈՒՍՆԵՐ

Դու մի՛ լաց ըլի, յիս իմ լալու։

Նատոն և նրա ընկերուհիները կամաց զոյց են անում դաշնակի մոտ, զանազան նոտաներ զննելով։

ՓՈՓՈ, շարունակում է։

Ման իմ գալի դիդարի հիդ,
Վունց դարիբ բըլբուլ խարի հիդ։
Դու վարթի հիդ, յիս յարի հիդ,—
Դու մի՛ լաց ըլի, յիս իմ լալու։

ՓՈՓՈ և ՄՅՈՒՍՆԵՐ

Դու վարթի հիդ, յիս յարի հիդ,
*Դու մի՛ լաց ըլի, յիս իմ լալու։**

ԲՈԼՈՐԵՔՅԱՆ, ծափ տալով։

Բրա՛վո, բրա՛վո, բրա՛վո, Փոփո։

Նատոն և նրա ընկերուհիները թեակցած ման են գալիս դանլիենում և ճեռա նատում են լոտոյից հեռու, աջ կողմը։

ՍԱԼՈՄԵ, տալով վերջին թուղթը։

Աբա՛, թա՞մամ է՞։

ԲՈԼՈՐԵՔՅԱՆ

Թա՛մամ է, թա՛մամ, դիփունքս ունինք։

ՍԱԼՈՄԵ, նատելով սեղանի աջ կողմը։

Աբա՛, վե՛ր էկեք, ախչկիրք, ձիր կաղնաչեին յիս իմ, դա՞բուլ ի՞ք։

* Այս երգի շարունակությունն ու վերջը՝
Սալբուի նրման կանանչ իմ,
Ե՛կ, իսոսի՛՝ ձայնրդ ճանանչիմ։
Դու վա՞րթ կանչի՛, յիս յա՞ր կանչիմ,—
Դու մի՛ լաց ըլի, յիս իմ լալու։

Ղա՞բիբ բըլբուլ՝ ձայնիդ մալում,
Ցիս ու դու էրվինք մի հալում։
Սայաթ-Նովեն ասաց՝ գա՞լում,—
Դու մի՛ լաց ըլի, յիս իմ լալու։

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ

ՆԱՏՈ, նմանապես կիսաձայն։

Ի՞նչ խաբար է, ձեռտ ինչի՞ է դողում։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Քու հոր վրա գանգատ ին տուն տարի։

ՆԱՏՈ

Ի՞նչս ասում, Սա՛շա, ի՞նչ գանգատ։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Օմքնու փուղ է պարտ։

ՆԱՏՈ

Ո՞վ ասավ։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Ինքը քու հերը։

ՆԱՏՈ, բարձրաձայն ծիծաղում է։

Հա՛, հա՛, հա՛... (Կիսաձայն։) *Իմ հերը պարտկ չունե, Սա՛շա...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ

Վո՛ւնց չէ վուր ինքն ասավ։

ՆԱՏՈ

Հանաք է արի, Սա՛շա, ինչի՞ր իս ասում. (Ծիծաղելով։) *Հա՛, հա՛, հա՛...*

Մոտենում է իր ընկերուհիներին։

ԱԼԵՔՍԱՆԴՐ, առանձին, շվարված։

Ա՛րի ու բա՛ն հասկացրու... Նե՛տ, դուդկի, բրատ. ինչրու իմ փուղերը թամամ չտան, էլ վուտս չիմ տուն դնի էստի։

ՍԱԼՈՄԵ, վերջացնելով փողերի նշանակելը։

Քա՛, տոպրակն ի՞նչ էլավ։

ՆԱՏՈ, իր ընկերուհիների հետ մոտենում է Ալեքսանդրին և բև-բևի տալով։

Ա՛խ, Սա՛շա, Սա՛շա... (Ծիծաղում է։) *Հա՛, հա՛, հա՛...*

Գնում են դահլիճը, ուր Նատոն հյուրասիրում է Ալեքսանդրին և կրկին իր ընկերուհիներին։

ՄԱՐԹԱ, Նատոյին։

Ի՞նչ խաբրներումն իս, քա՛։

ՍԱԼՈՄԵ

Ո՞վ ունե տոպրակը։

ՄԱՐԹԱ, բարձրացնելով տոպրակը։

Ցիս ունիմ, յիս, ա՛յ։

ՍԱԼՈՄԵ

Ի՞ս տու էստ։

ՄԱՐԹԱ

Չէ՛, յիս պիտի ասիմ ջեր։

ՍԱԼՈՄԵ

Քա՛, բի՛ էսթենը, կարքով գու քա, է՛լի։

ՄԱՐԹԱ

Չէ՛, չէ՛, օչովու տուր չիմ տա, պիտի ջեր յիս ասիմ։

ՍԱԼՈՄԵ, նեղացած։

Դե ասա՛. (Առանձին։) *ախավագլախ քու գլխին։*

ՄԱՐԹԱ, շարժելով տոպրակը։

Բը՛խը, բը՛խը՛... (Հազում է, հետո հանելով զարերը և բարձրաձայն։) *Պիտդիսիա՛, վո՛սեմդիսիա։*

ՓՈՓՈ, ծիծաղելով։

Աբա՛, Մարթա, վունցոր գիդիս մե։

ՄԱՐԹԱ

Տրո՛իկա, (Մեկ ֆանի խաղացողներ իրանց մեջ լուռ՝ ամբոխերնո են խաղում։) *սիմնա՛ցետ... տո՛ւդի սուդի՛... ստա՛րիկա... չո՛խլոխանա՝ չետիրի է, գիդենաք... դեսետնիկ Բև՛ռոա... Սո՛ռոկա։*

ՍԱԼՈՄԵ

Ի՞նչ ասիր, չիմացա։

ՄԱՐԹԱ

Սորոկա, քա՛... Դվանա՛ցետ... սե՛մ... Պետր Իվա՛նիչ... է՛լի Սո՛ռոկա թավիս ջոխիթ։

Բոլոր հյուրերը ծիծաղում են։

ՓՈՓՈ, ծիծաղելով։

Էտ էլ ի՞նչ վագլախ է։

ՄԱՐԹԱ

Սորոկ ադին, քա՜... Սիմդիսիա սե՜մ... պե՜տլած է... տրիցե ռո՜վ-նա... Բարաբանի պա՜լկա։

ՍԱԼՈՄԵ

Կրի՜մ դրա գլուխը, հա՜։

ՄԱՐԹԱ

Սիմդիսիա դվա՜...

ՏԵՍԻԼ ԺԴ

ՆՐԱՆՔ, ԽԱԽՈ

ԽԱԽՈ, տուն վազելով հյուրասենյակի ձախ դռնից ու Մարթային ընդհատելով։

Ա՜յ, չո՜ռ ու ցավ ու աստծու կրա՜կ։ Մո՜շլա արեք, մո՜շլա արեք, տնա՜քանդնիր։

Ընդհանուր զարմանք։

ՍԱԼՈՄԵ

Ի՞նչ խաբար է, ի՜նչ խաբար, բատոնո։

ԽԱԽՈ

Էլ ի՞նչ խաբար պիտի ըլի, գեդինն ինք մտնում, չուստ մո՜շլա արեք։

ՄԱՐԹԱ

Ինձ բաս մեմարթլիբի, վուր չոռ ու ցավ իս ասում։

ԽԱԽՈ

Էն վուր, դուն էլ սրանց խիլքի հիդ իս ննգի ու վուրդիոր լոտո ըլի բաց, գլխին դուն իս ձքած։

Հեռվից աղմկալի ձայներ է լսվում՝ *Ա՜յ, հա՜, չէ՜...* Օսեփի ձայնը՝

Էկեք, էկե՜ք...

ՄԱՐԹԱ, վեր կենալով տեղից, բարկացած։

Ցիս էս աբիդին չիմ թողնի։

ԽԱԽՈ, Մարթային չանչ անելով։

Ը՜հ... (Սալոմեին։) *Չի՞ս իմանում, քա՜։*

ՏԵՍԻԼ ԺԵ

ՆՐԱՆՔ, ՓԱՐՍԻՂ

ՓԱՐՍԻՂ, ներս է մտնում դահլիճի աջ կողմից և աջ ձեռքը շարժելով։

Էս լա՜վ է, յիս ու իմ հոքին, յիս կընձկընձալի ապրիմ ու դուք էստի իմ փուղերով շրա՜ղդան սարքի՜ք։

ԽԱԽՈ, Սալոմեին, մինչդեռ ամենքը շփոթվում են ու շվարվում։

Է՞ս էիր ուզում, է՜լի։

ՍԱԼՈՄԵ, վեր կենալով։

Գժվի՞լ իս, պարուն. դո՜ւս արեք, դո՜ւս։

ՓԱՐՍԻՂ

Ա՜յ, յիս ձիզ կու շանց տամ դո՜ւս արեքը։

ՍԱԼՈՄԵ

Փե՜սա ջան, մե դո՜ւս արա էտ մարթուն, է՜։

ԱԼԵՔՍԱՆԴՐ, Փարսիդին։

Ի՞նչ իս ուզում, պարուն, էտ ի՞նչ քաղաքավարութին է։

ՓԱՐՍԻՂ

Քու բանը չէ, պարուն, յիս իմ փուղն իմ ուզում ու թե կանաս դուն էլ քունն ուզե. մեքաշ չհամբրին, ինչ խոստացիլ ին։

ԽԱԽՈ, Փարսիդին։

Ցիրգնքեն չի՞ս վախենո՜ւմ։

ՓԱՐՍԻՂ

Ցիս իմ պարտկն իմ ուզում, իմ պարտկը...

Դահլիճի աջ կողմից անմիջապես լսվում է Օսեփի աղաղակը՝ *Էկե՜ք, էկե՜ք...*

ՆՐԱՆՔ, ՕՍԵՓ, ԳԵՎՈ, ՍՈՒԴԵԲՆԻ-ՊՐԻՍՏԱՎ, պաշտոնական շղթայով, նրա ԳՐԱԳԻՐԸ, ԴԱՐՋՈ, ՋԱՆԱՋԱՆ ՄԱՐԴԻԿ, ՏԵՂԱԿԱՆ և եվրոպական ճագուստով մտնում են դահլիճի աջ կողմից։

ՕՍԵՓ, շարունակելով, խելացնոր նետվում է հյուրասենյակը։

Էկե՛ք... (Մյուսները մնում են խորհում։) Խաղացե՛ք, խաղացե՛ք ու իմ բնաբռութենի վրա ծիծաղեցե՛ք, քանի կանաք։

Հյուրերը շփոթված վեր են կենում իրանց տեղերից։

ԽԱԽՈ, առանձին։

Հիմի կի բաթմիշ էլանք։

ՍԱԼՈՄԵ

Էս ի՞նչ խաբար է։

ՕՍԵՓ

Աստուծ վո՛ւչ գիդե քու գլուխը, իմն էլ հիդը։ (Դառնալով դեպի Սուդեքնի-Պրիստավը և մյուսները։) *Էկե՛ք, վի՛ր գրեցեք, մհրեցե՛ք, տո՛ւն, տի՛ղ, ճա՛ղ, մո՛ւմ ու* (Ցույց տալով լուռոյի սեղանը։) *Էս դա՛զգեն էլ հիդը։*

Դահլիճի ձախ կողմից մտնում են ծառաները և մնում են այնտեղ անշարժ մինչև վերջը։

ՓԱՐՍԻՂ

Վի՛ր գրեցեք, վի՛ր գրեցեք էս սահաթիս։

ԽԱԽՈ, առանձին։

Էս ի՞նչ աստծու բարգութին է։

Սուդեքնի-Պրիստավը իր գրագրի օգնությամբ սկսում է վեր գրել բեմի խորքում գտնված առարկաները և ըստ սովորության նրանց վրա թղթեր կպցնել։ Հյուրերը շվարված հավաքվում են լուռոյի սեղանի ձախ կողմը։

ՍԱԼՈՄԵ, գլխին խփելով։

Վո՛ւյ, քո՛ռացի, Սա՛լոմե։

ՄԱՐԹԱ

Էսենց անպատվութինն էլ ի՞նչ է։

ԽԱԽՈ, Մարթային, կիսաձայն։

Քա՛, ձե՛նդ կտրե, է՞։

ՕՍԵՓ

Իմ պատիվը թա՛ղվեցավ։ (Մատնացույց անելով Փարսիղին։) *Սրա՛ն տվեք պատիվ հորեսի դենը, սրա՛ն. լավ լոռոն սա կու սարքի ձիզ համա, սա՛՝ վուր շապիքը վրեմես հանից ու վուղչ կայինքս զավթից։*

ԱԼԵՔՍԱՆԴՐ, առանձին։

Իմ քվիր տունը քանդե աստուծ, վուր ինձ էստի դեվեր գցից։

ՕՍԵՓ, հեգնորեն։

Պարուն փեսա, գլխիտ չարեն տի՛ս, էլ յիս փուղ չունիմ քի տալու։

ԱԼԵՔՍԱՆԴՐ, սաստիկ վիրավորված։

Յիս քու մա՞սխարեն իմ թե ի՞նչ է, վուր վրես ծիծաղում իս էլ. յիս քու բարեբար մարթ չիմ, պարուն։

ՕՍԵՓ

Հա՛խն է, հա՛խը, (Զարկելով գլխարկը լուռոյի սեղանին։) *հա՛խը։*

Գլխարկը թողնում է այն սեղանի վրա։

ԱԼԵՔՍԱՆԴՐ, վերցնելով իր գլխարկը, բարկացած։

Յիս իմ պատիվն էնդու համա չիմ ճարի, վուր էսենց անպատվին։

ՕՍԵՓ, դառը ծիծաղով։

Հա՛, հա՛, հա՛... Պա՛տիվը... հա՛... հա՛, հա՛...

ԱԼԵՔՍԱՆԴՐ, մոտենալով Նատոյին։

Յիս քիզ շա՛տ էի սիրում, Նատա՛շա, ամա դուն ինքդ տեսնում իս՝ յիս միզ չունիմ, մնա՛ս բարով։

Գնում է։ Փարսիղը ուրախություն է արտահայտում։

ՕՍԵՓ, հարձակվելով դեպի Սալոմեն, որ շվարված կանգնած է աջ կողմը, ձախ ձեռքով բռնում է նրա աջ թևը, իսկ մյուս ձեռքով մատնացույց է անում Ալեքսանդրին։

Մտի՛կ, մտի՛կ. ա՛յ քու չինովնիկը։

ՆԱՏՈ, ձախ կողմը ընկողմարանի մոտ կանգնած՝ կանչում է։

Սա՛շա, Սա՛շա...

Ալեքսանդրը դուրս է գնում դահլիճի աջ կողմից։

ՏԵՍԻԼ ԺԷ

ՆՐԱՆՔ, առանց ԱԼԵՔՍԱՆԴՐԻ

ՆԱՏՈ, շարունակելով:

Սա՜շա...

Ընկնելով ընկողմարանի վրա, լաց է լինում:

ՍԱԼՈՄԵ, երկու ձեռքով գլխին խփելով և կիսաձայն:

Գեղինը պատռե ու ինձ դեվեր տանե։

ՕՍԵՓ, Սալոմեին:

Աճկդ դո՛ւս էկա՜վ։ (Դառնալով դեպի Փարսիղը:) *Հրա՛, բռնե՛, կըշտա՛ցի։* (Կարեն հանում է:) *Բռնե՛, բռնե՛,* (Զգում է Փարսիղի վրա:) *էս էլ քունն ըլի։* (Վրա է ընկնում լոտոյի սեղանից վերցնում է իր գլխարկը և ձգում Փարսիղի ոտքի տակ:) *էս էլ վո՛ւտիդ տակը հավսրե, էլ ինձ վունչիչ հարկավուր չէ։*

Խելագարի պես այս և այն կողմն է ընկնում:

ՓԱՐՍԻՂ, ցածր ձայնով:

Բի՛, բի՛...

Դառնալով Սուդերնի-Պրիստավին, հետը խորհրդակցում է:

ՕՍԵՓ, լոտոյի սեղանից զանազան առարկաներ դեն ձգելով:

Հրա՛, հրա՛, (Ձգելով վառ կանդելաբրը:) *աճկդ դի՛, հրա՛...*

ՀՅՈՒՐԵՐԸ, նույն միջոցին:

Օ՜, օ՜հ, խիլքեն էլավ, խելքեն էլավ. մտի՛կ, մտի՛կ։

Նատոն շարունակ լալիս է. ընկերուհիները մխիթարում են նրան: Սալոմեի սիրտը նեղանում է:

ԽԱԽՈ, որ գտնվում է Օսեփի աջ կողմը:

Օ՛սեփ ջան, վո՛ւրթի ջան։

ԳԵՎՈ, փաթաթվելով Օսեփին մյուս կողմից:

Օ՛սեփ ջան, Օ՛սեփ ջան, խի՛լքի արի, ի՞նչ իս անում։

ՕՍԵՓ, մի փոքր լռությունից հետո, ուշքի գալով:

Ա՜խ, ա՜խ, ա՜խ... Ա՜խ, Գևո ջան, իմ խիլքն էնչախը կորավ, վուր էս քախկումը յիս տուն ու տիղ սարքեցի... Ջդի՜մցա, ախպեր ջան, չդի՜մցա յիս էս կինքին, ու թե լավ բարեկամ իս իմը, ա՜րի, սաղ-սաղ ինձ գե՛րեզմանը դի, վուր էլ աշխարքի էրես չտեսնիմ... Ցիս փչա՜ցա, գնա՜ցի, օջախս քա՜նդվեցավ, ու նա քովլանա հորեսի դենը, ով իր բանն ինձ վրա լավ բերե...

Դուրս է գնում հյուրասենյակի աջ դռնից:

ՏԵՍԻԼ ԺԸ

ՆՐԱՆՔ, առանց ՕՍԵՓԻ

ՍԱԼՈՄԵ, ձեռքը ճակատին տանելով և ընկնելով աջ կողմը, բազմոցի վրա, ցածր ձայնով երկար հոգվոց է հանում։

Ա՜խ...

Մնում է անշարժ ընկնված դրության մեջ։

ԳԵՎՈ

Ափսո՜ւս, ափսո՜ւս իմ Օսեփ...

Ձեռքը գլխին տանելով, մնում է տխրության մեջ խորասուզված:

ՓԱՐՍԻՂ, որ խորհրդակցում էր Դարշոյի հետ, նորից դառնում է Սուդերնի-Պրիստավին:

Էլ ի՞նչ իք թամաշա անում, պարուն, վի՛ր գրեցեք դիփ մեռի...

Պրիստավը զզվանքով նայում է Փարսիղին, հետո առաջ գալով՝ լոտոյի սեղանի մոտ և իր պաշտոնը շարունակում:

ՄԱՐԹԱ, նույն միջոցին, հյուրերին։

Մինք էլ ի՞նչ ինք շինում էստի, քա՜... (Երկու ձեռքով շանչ ուղարկելով Սալոմեի ու Խախոյի կողմը և առանձին:) *Լա՜վ տարի ձիզ գա, լավ անում դո՛ւք վիր արիք։*

Գնում է դեպի դռնիցի աջ կողմը. մի քանի կանայք հետևում են նրան, մյուսները մնում են ապշած զանազան դիրքով:

ԽԱԽՈ, նայելով դեպի երկինքը:

Վա՜ղ էի մեռի՝ էս օրը չէի տեսի։

ՏԵՍԱՐԱՆ: Վարագույրը կամաց-կամաց իջնում է։

Վերջ

ԱՄՈՒՍԻՆՆԵՐ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹՅՈՒՆ ՁՈՐՍ ԱՐԱՐՎԱԾՈՎ

1888

Տիկին Սոֆյա Սունդուկյանին

ԱՆՁՈՒԳԱԿԱՆ ԻՄ ՍՈՖԻ

«ԱՄՈՒՍԻՆՆԵՐ» կատակերգությանս բնագիրը ես նվիրեցի Քեզ՝ մեր ամուսնության հանենիգամյա տարեդարձին:

Այժմ, հասարակաց սեփականություն դարձնելով այս երկը, ես թույլ եմ տալիս ինձ վերստին Քո անարատ անունով զարդարել սրան:

Թո՛ղ Քո մաքուր կենցաղը պաշտպանե գրվածքիս իմաստն ու նպատակը և թո՛ղ Քո բարեկրթության ճառագայթը լուսազարդի այն պատկերները, որ ես նկարագրել եմ սրա մեջ:

Քո ԳԱԲՐԻԵԼ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԱՐԿԱԴԻ ՍԱՄՍՈՆՅԱՆ, նշանավոր պաշտոնյա
ՄԱՐԳԱՐԻՏ, նրա կինը
ԱԲԵԼ ՄԱՍՏԱԿՅԱՆ, Սամսոնյանի ստորադրյալ
ԷԼԻԶ, նրա կինը
ՎԱՐԴՈՒՀԻ ՎԱՐՎԱՌՅԱՆ, այրի կին
ՀԵՂԻՆԷ–ԱՆԹԱՅԻԱՄ, որբ աղջիկ, վարժուհի
ԱՐՏԱՇԵՍ ԱՐԱՄՅԱՆ, սպա
ԼԵՎՈՆ ՇԻՐԱԿՅԱՆ, գյուղատնտես
ԳԱՅԻԱՆԷ
ԼՈՒՍԻԿ
ԱՍՏՂԻԿ
ԱՆՈՒՇ
ՆՈՒՆՈՒՇ
ՀՈՒՓՍՈ
ՍԵՍԻԼ, աղախին
ԱՆԱՀԻՏ, մի ուրիշ աղախին
ՍՊԱՍԱՎՈՐ

Առաջին արարվածը կատարվում է «Ժողովարանի» այգում, երկրորդն ու երրորդը Սամսոնյանի տանը, իսկ չորրորդը Մարգարտի և Հեղինեի կացարանում:

Անցքը պատահում է Թիֆլիզում:

ԴԵՐՍՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՍԱԿԸ

Արկադի՝ 42 տարեկան
Մարգարիտ՝ 25 տ.
Աբել՝ 50 տ.
Էլիզ՝ 27 տ.
Վարդուհի՝ 30 տ.
Հեղինե՝ 22 տ.
Արտաշես՝ 30 տ
Լևոն՝ 28 տ.
Գայիանե՝
Լուսիկ՝ 20—22 տ.
Աստղիկ՝
Անուշ՝
Նունուշ՝ 18—20 տ.
Հռիփսո՝
Սեսիլ՝ 20 տ.
Անահիտ՝ 30 տ.
Սպասավոր՝ 45 տ.

Ամենքն էլ եվրոպական հագուստներով։

ԱՐԱՐՎԱԾ ԱՌԱՋԻՆ

Բեմը ներկայացնում է «Թիֆլիզի ժողովարանի» այգին ընտանեկան երեկույթի ժամանակ։ Աջ ու ձախ, ծառերի տակ, նստարաններ, խորքումը ռատոնդ, ուր ժամանակ առժամանակ պարում են։ Այգին լուսավորված է լապտերներով, իսկ ռատոնդը—ջահերով։

ՑԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ԷԼԻԶ, ԱՐԿԱԴԻ, գալիս են ձախ կողմից։

ԷԼԻԶ

Ինչպես տեսնում եմ, դու ո՛չ միայն կնոջդ ես խաբում, այլ ինձ էլ ես խաբում, պարոն։

ԱՐԿԱԴԻ

Մեղք չէ՞ հոգուդ, որ այդպես ես խոսում։

ԷԼԻԶ

Ուղիղ խոսելը որ մեղք է, ուրեմն քո արարմունքը արդար կլինի, հա՞։

ԱՐԿԱԴԻ

Կարելի է շատ էլ մեղավոր եմ, բայց քո առաջ, Էլիզ, երկինք վկա, միշտ արդար եմ եղել։

ԷԼԻԶ

Ինչպես այսօր. գիտե՛մ, գիտե՛մ։

ԱՐԿԱԴԻ

Այսօր էլ, վաղն էլ, մի՛շտ և հավիտյան։

ԷԼԻԶ

Սո՛ւս, սո՛ւս, այսօր էլ, վաղն էլ, մի՛շտ և հավիտյան սուտ ես իմ առաջ. սուտ, մի՛շտ սուտ։

ԱՐԿԱԴԻ

Հոգյա՛կս։

ԷԼԻԶ

Ճշմա՛րիտն ասա. այս գիշեր այդ խոսքը քա՞նի անգամ ասացիր նրան... Դու կարծում ես չտեսա՞...

ԱՐԿԱԴԻ

Ի՞նչ, ի՞նչ...

ԷԼԻԶ

Անիրա՛վ։

Նստում է ձախ կողմը։

ԱՐԿԱԴԻ, նստելով մոտը։

Էլի՞զ։

ԷԼԻԶ

Թև-թևի տված որ գնում էիք այս բոպեիս...

ԱՐԿԱԴԻ

Ի՞նչ կա որ...

ԷԼԻԶ

Եթե մարդավարի գնայիք, իհարկե ոչինչ. բայց այնպես կպել էիք մեկ մեկու, որ ձեր տեղը ես էի ամաչում այսքան բազմության մեջ... Միայն մեկ պաչն էր պակաս. էլ ինչի՞ն էիք սպասում։

ԱՐԿԱԴԻ

Է՜հ, զարմանալի կին ես, ճշմարիտ։

ԷԼԻԶ

Հը՞մ, անօրեն, թո՛ղ մեկ էլ տեսնե՞մ։

Հովհարով սպառնում է։

ԱՐԿԱԴԻ

Լա՛վ, լա՛վ, դու ինձ ա՛յն ասա՝ ընթրիքը հո միասին ենք ուտելու այստեղ։

ԷԼԻԶ

Եթե արժան կհամարես, պարոն։

ԱՐԿԱԴԻ

Հե՛րիք է, խնդրում եմ։

ԷԼԻԶ

Ինչի՞, կարելի է նրա հետ ավելի անուշ է թվում քեզ։

ԱՐԿԱԴԻ

Եթե չես վերջացնելու, գիշեր բարի։

Կամենում է գնալ։

ԷԼԻԶ, բռնելով։

Լա՛վ, լա՛վ, այս մեկ անգամ ներում եմ. համեցե՛ք ընթրենք միասին... Բայց կինդ ի՞նչ կասե։

ԱՐԿԱԴԻ

Ի՞նչ պիտի ասե։

ԷԼԻԶ

Այս քանի ժամանակ է հետս թթված է, չգիտեմ՝ ի՛նչ եմ արել։

ԱՐԿԱԴԻ

Է՜հ, դու նրա կապրիզներին ի՞նչ ես ուշք դարձնում։

ԷԼԻԶ

Ա՜խ, Արկադի, այդ ի՞նչ ես ասում։ Ես նրան այնպես եմ սիրում, ինչպես իմ հարազատ քրոջս. երեխա ժամանակ միասին ենք մեծացել, ես չեմ ուզում վշտացնել նրան։

ԱՐԿԱԴԻ

Աստված բարի վայելումն տա։

ԷԼԻԶ

Դու ա՛յդպես ասա, բայց ես ինձ հանցավոր եմ զգում նրա առաջ. երեսին ուղիղ նայել չեմ կարողանում... Եվ այս ամենը քե՛զ համար, քո սիրո համար. իսկ դու այլևս ինձ չես սիրում։

ԱՐԿԱԴԻ

Դարձյա՞լ։

ԷԼԻԶ

Մի՛ նեղանար, Արկադի, խնդրում եմ, մի՛ նեղանար. ի՞նչ անեմ, որ սիրտս վստահ չէ քեզ վրա։ Ասա՛, ասա՛, որ սիրում ես ինձ, էլի ա՛յնպես ես սիրում, ինչպես առաջ։ Դու չգիտես թե ի՛նչքան քաղցր է ինձ համար քո բերանից լսել այդ խոսքը։

ԱՐԿԱԴԻ

Ինչ՛ երկե սիրում եմ. քեզ որ չեմ սիրում, հապա ո՞ւմն եմ սիրում։

ԷԼԻԶ

Եվ բացի ինձանից էլ ուրիշ ո՛չ ոքի՞։

ԱՐԿԱԴԻ

Ո՛չ ոքի, ոչ ոքի, վկա է աստված։

ԷԼԻԶ, նայում է այս ու այն կողմը։

Ա՛խ, Արկադի, հոգիս, իմ աստվածը դու ես։

ԱՐԿԱԴԻ

Դե՛, արի ու մի՛ սիրիր... Ի՞նչպես կարելի է քեզ չսիրել։

ԷԼԻԶ

Շա՛տ ես սիրում ի՛նձ, շա՞տ։

ԱՐԿԱԴԻ

Շա՛տ, օ՛, շա՛տ. արևս վկա, շա՛տ։

ԷԼԻԶ

Արևիդ մեռնի էլիզը։

ԱՐԿԱԴԻ

Ուրեմն թո՛ղ իմ արևն մեռնի, եթե բացի քեզանից կարողանամ ուրիշին սիրել։

ԷԼԻԶ

Ա՛խ, ի՞նչպես պինդ կհամբուրեի քեզ այժմ։

ԱՐԿԱԴԻ, վեր թռչելով։

Սը՛ս, գալիս են։

ԷԼԻԶ, ճեռ ճայելով։

Ա՛խ, ամուսինս...

Գնում է դեպի Աբելը, որ գալիս է աջ կողմից, իսկ Արկադին ծածուկ դուրս է գնում ձախ կողմից։

ՏԵՍԻԼ Բ

ԷԼԻԶ, ԱԲԵԼ

ԷԼԻԶ

Այս ո՞րտեղ ես, երանի գիտենամ. ծնկներս թուլացան քեզ փնտրելով։

ԱԲԵԼ

Վա՛, ես էլ քեզ եմ փնտրում։ Ո՞ւմ հետ էիր այստեղ։

ԷԼԻԶ

Բարեկամ աղջկերք կային. միասին ման էինք գալիս։

ԱԲԵԼ

Ո՛վ գիտե քանիսի տունը շինեցիք, քանիսինը քանդեցիք։

ԷԼԻԶ

Է՛հ, խոսում էինք, էլի՛։

ԱԲԵԼ

Դուք ու ձեր խոսելը. մի քանի աղջկերք որ հավաքվում եք, էլ վերջ չի լինում ձեր ասա-կոսեին։

ԷԼԻԶ

Իսկ տղամարդիկդ հո խոսել չգիտե՛ք. խեղճե՛ր, մեղքս գալիս եք։

ԱԲԵԼ

Մենք որ խոսում ենք, էլիզ, բան-ենք խոսում, ապրուստի միջոց ենք որոնում. ձեզ համար ենք մտածում... Իսկ ձեր խոսելն ի՞նչ է. բոլորը դատարկաբանություն, միշտ ճոշալ ու բամբասել։

ԷԼԻԶ

Դե՛, լավ է, հա՛, դո՛ւք էլ մի շատ բարի պտուղ չեք. ձեզ էլ եմ ճանաչում... (Թեռն առնելով։) Արի՛ մեկ ինձ դեպի ռոտոնդա տար, տեսնեմ այնտեղ ի՛նչ կա։

ԱԲԵԼ

Ա՛յնքան բազմություն կա հավաքված այնտեղ, էլիզ, որ ասեղ գցելու տեղ չկա. մի ինչ-որ վրացի իշխանուհի է եկել նոր, ասում են հիանալի չեզգինկա է պար գալիս։

ԷԼԻԶ

Գնա՛նք, գնա՛նք։

ԱԲԵԼ

Առանց ինձ չե՞ս կարող գնալ, ի՛նչ է։ Ես ուզում եմ Նորին վսեմությանը տեսնեմ. ասացին այս կողմն է ման գալիս... Չե՞ս տեսել։

ԷԼԻԶ

Կարծեմ որ նա էր, աչքովս ընկավ, մեկի հետ գնում էր շատ տաքտաք խոսելով... Հետ էլ չնայեց Նորին վսեմությունը, որ գլուխ տայի։

ԱԲԵԼ

Հենց միշտ քեզ վրա՛ է մտածում... Մարդն աշխարհքի գործ ունի, ո՛վ է իմանում գլխումն ինչե՛ր է պտույտ գալիս։

ԷԼԻԶ

Չէ՛, ի՛նչ ուզում ես ասա՛, Աբել, բայց նա էլ ա՛յն չէ։

ԱԲԵԼ

Ախար, հոգիս, այն մարդը հո չի կարող միշտ մեր հետևից ման գալ... Էլի փա՛ռք աստուծո, որ ժամանակ է գտնում երբեմն մեզ ևս մտաբերելու. հազար գործի տեր է, ասում են։

ԷԼԻԶ

Աստված տա, իր բանն աջողի... Ահա՛ նա. այս կողմն է գալիս։

ՏԵՍԻԼ Գ

ՆԵՐԱՆՔ, ԱՐԿԱԴԻ

ԱԲԵԼ, թողնելով էլիզին։

Սպասի՛ր, (Արկադիին։) Ձերդ վսեմություն. մեկ ժամ է՝ ձեզ եմ որոնում։

ԱՐԿԱԴԻ

Ա՛, բարև, պ. Աբել։ Ես էլ ձեզ էի որոնում... Բարև ձեզ, հարգելի տիկին. այս ո՞ւր եք, չեք երևում։ Նո՞ր եկաք։

ԷԼԻԶ

Ձեզ ասացեք, պարոն. մոտիցս անցնում եք ու վրաս էլ չեք նայում։

ԱՐԿԱԴԻ

Այդ ե՞րբ։

ԷԼԻԶ

Ա՛յ, փոքր ինչ առաջ, մեկի հետ խոսակցելով գնում էիք։

ԱՐԿԱԴԻ

Ձեմ տեսել, ճշմարիտ, եթե ո՛չ՝ ի՞նչպես չէի բարևիլ ձեզ։

ԷԼԻԶ

Բայց և այնպես, էլ առաջվա նման ուշադիր չեք դեպի մեզ։ Առաջ շաբաթ չէր անցնիլ, որ մեկ անգամ գոնե չհանդիպեիք, իսկ այժմ ամիսներ է անցկենում, շնորհ չեք բերում մեր տունը։

ԱՐԿԱԴԻ

Ի՞նչ անեմ, տիկին, ներեցե՛ք... Դուք գիտեք, որ ես ձեզ շատ եմ հարգում, միայն սաստիկ զբաղված եմ. մի՛ նեղանաք, խնդրում եմ։

ԷԼԻԶ

Դո՛ւք գիտեք։

ԱՐԿԱԴԻ

Հավատացե՛ք, տիկին, ի՛նչ եղել եմ, էլի նո՛ւյն եմ ձեզ համար։

ԱԲԵԼ

Ձերդ վսեմություն, դուք էլ որ կինարմատի խոսքը բանի տեղ եք դնում, զարմանում եմ, ճշմարիտ... Մի՞թե կարելի է սրանց ասածին նշանակություն տալ։

ԷԼԻԶ. Աբելին։

Շա՛տ շնորհակալ եմ, պարոնս։

ԱՐԿԱԴԻ

Ինչի՞, պ. Աբել, տիկնոջը ես շատ եմ հարգում և բնավ չէի ցանկանալ, որ զուր տեղն ինձանից նեղանար։

ԱԲԵԼ

Ձերդ վսեմություն, մենք հո մի օրվա բարեկամներ չենք. թե դուք մեր պատիվն ունիք, մենք էլ պակաս չենք հարգում ձեզ, հավատացեք, և ինչ որ ասում է, ձեզ հարգելուցն է ասում, լա՛վ իմանաք։

ԷԼԻԶ

Իհարկե սրտանց հարգում եմ և հենց դրա համար եմ նեղանում, որ ուշ-ուշ ենք հանդիպում։

ԱՐԿԱԴԻ

Շա՛տ շնորհակալ եմ, տիկին. կգամ, կգամ, մի նեղանաք։

ԷԼԻԶ

Կտեսնենք... Առայժմ մնա՛ք բարյավ, գուցե դուք այստեղ առանձին գործ ունիք, ես մի փնամ տեսնեմ այն կողմն ի՛նչ կա... Անշուշտ այս երեկո դարձյալ պատիվ կունենամ ձեզ տեսնելու։

ԱՐԿԱԴԻ

Ա՛նտարակույս, տիկին, ա՛նտարակույս։

Էլիզը գնում է. ֆաղցրությամբ հետ նայելով Արկադիին, հետո պատահելով մի խումբ կանանց, նրանց հետ մտնում է ռոտոնդը։

ՏԵՍԻԼ Դ

ՆՐԱՆՔ, առանց ԷԼԻԶԻ

ԱՐԿԱԴԻ

Հրամայեցե՛ք, Աբել,- ասա։

ԱԲԵԼ

Հրա՛մանքդ շատ... Ուրեմն էլ դուք եք, Ձերդ վսեմություն, պարոնն էլ. ես միայն ձեր խոնարհ ծառան եմ, միշտ պատրաստ՝ ձեր հրամանները կատարելու... Դուք ի՞նչ էիք կամենում ասել։

ԱՐԿԱԴԻ

Ի՞նչ արիք, տեսաք՝ այն պարոններին. ժամանակն անցնում է։

ԱԲԵԼ

Այո՛, Ձերդ վսեմություն, այս օրերս բոլոր գործը կվերջացնեմ և ամբողջ գումարն անձամբ կներկայացնեմ ձեզ... Միայն հիմա մեկ ուրիշ բան ունիմ ասելու, բայց չնեղանաք, աղաչում եմ։

ԱՐԿԱԴԻ

Ի՞նչ է պատահել։

ԱԲԵԼ

Գիտե՞ք ինչ է, Ձերդ վսեմություն, ես ձեր լավ բարեկամն եմ և ձեզ էլ իմ լավ բարեկամս եմ համարում... (Լռություն։) Ներեցե՛ք, աղաչում եմ... Ա՛յ, լեզվիս ծայրին պտույտ է գալիս, բայց չեմ համարձակվում ասելու, սակայն (Ցույց տալով կոնդոռդը։) այստեղ է հասել։

ԱՐԿԱԴԻ

Վախեցնում եք ինձ, սիրելի բարեկամ։

ԱԲԵԼ

Ո՛չ, ո՛չ, Ձերդ վսեմություն, դեռևս վախենալու բան չկա և իմ ջանքն էլ հենց այն է, որ վերջը վախենալու չդառնա։

ԱՐԿԱԴԻ, գունաթափ

Բոլորովին շվարվեցի։

ԱԲԵԼ

Ձեր արևը, ոչ ոք չէր համարձակվիլ այս բանը ձեզ ասելու, բայց էլ ինչի՞ բարեկամ եմ, եթե ծանր բոպեին ամեն բան ուղղակի չասեմ։

ԱՐԿԱԴԻ

Դե՛, ասացե՛ք ու վերջացրեք, էլի՛։

ԱԲԵԼ

Ասացե՛ք ու վերջացրե՛ք... Լեզուն էլ պիտի զորե՞ ախար, թե՞ ոչ... Ա՛յրի ու ասա... Հեշտ բան է՞, կարծում եք, մարդ մարդու կնոջ վրա բան ասե՞։

ԱՐԿԱԴԻ

Ո՞ւմ կնոջ.

ԱԲԵԼ

Ձեր կնոջ, Ձերդ վսեմություն։

ԱՐԿԱԴԻ, զարմացած։

Իմ կնո՞ջ... Ես կարծեցի ձեր կնոջ մասին եք ասում։

ԱԲԵԼ

Ի՞նչպես թե իմ կնոջ... Աստված մի՛ արասցե, մեկ օր էլ տանը չէի պահիլ... Զգո՛ւյշ կացեք, ձերդ վսեմություն. մի ինչ-որ նոր զինվորական է եկել, էլ պոկ չեն գալիս մեկ մեկուց. հա՛ խոսում են ու խոսում...

ԱՐԿԱԴԻ

Այո՛, ես մի անծանոթ սպա տեսա կնոջս հետ։

ԱԲԵԼ

Բայց մի՞թե կարելի է մի օտար մարդու հետ այդքան երկար զրույց անել... Այս գիշեր ամենքն էլ նրանց վրա դարձրին իրանց ուշադրությունը. իսկ դո՛ւք, ո՛վ գիտե, ի՛նչ կարևոր խնդիրների մասին էիք մտածում այստեղ... Զգուշացե՛ք, ձերդ վսեմություն՝ կինարմատը եթե մրքումը մի բան դնի, էլ ոչ ոք նրա հախիցը չի կարող գալ. նա իր ուզածը կանե, ա՛նպատճառ կանե... Այս էր, եղբայր, իմ բարեկամությունը, և հույս ունիմ, որ ձերդ վսեմությունը չի նեղանալ ինձանից...

ԱՐԿԱԴԻ

Շա՛տ և շա՛տ շնորհակալ եմ, սիրելիս։ (Ձեռքն առնելով։) *Հատուկ պարտավորեցրիք։*

Շտապով գնում է դեպի ռոտոնդը։

ԱԲԵԼ, առաջին։

Խե՛ղճ մարդ... Ձեր կնոջ, ասում է... Նրա համար է ասած, որ մարդ իր աչքի գերանը չի տեսնիլ, է՞...

Գլուխը շարժելով՝ գնում խառնվում է մի խումբ մարդկանց հետ ու անհայտանում։

ՏԵՍԻԼ Ե

ՎԱՐԴՈՒՀԻ, ԱՐԿԱԴԻ

ՎԱՐԴՈՒՀԻ, գալով ձախ կողմից, կանչում է Արկադիին, մինչդեռ նա բարձրանում է ռոտոնդի աստիճաններով։

Պա՛րոն Արկադի, պա՛րոն Արկադի... Սպասեցե՛ք, սպասեցե՛ք։

ԱՐԿԱԴԻ

Ա՜խ, դո՞ւք եք... Բարև ձեզ, աննման իմ տիկին։

ՎԱՐԴՈՒՀԻ

Այդ ո՞ւր եք շտապում այդպես։

ԱՐԿԱԴԻ

Ուզում էի կնոջս գտնել։

ՎԱՐԴՈՒՀԻ

Ի՞նչ է պատահել... Ահա՛ նայեցե՛ք, նա այնտեղ կանանց շրջանի մեջ նստած խոսում է։

ԱՐԿԱԴԻ, ճույն կողմը նայելով։

Այո՛, ճշմարիտ եք ասում։

ՎԱՐԴՈՒՀԻ

Ի՞նչպես թե ճշմարիտ եմ ասում. ես ե՞րբ եմ սուտ խոսել։

ԱՐԿԱԴԻ

Ո՛չ, հրաշալի տիկին, ինձ այնպես ասացին, որ իբր կինս շարունակ մի զինվորականի հետ է խոսում, և հանկարծ զարմացա, երբ կանանց մեջ տեսա նրան։

ՎԱՐԴՈՒՀԻ

Ի՞նչ կա այստեղ զարմանալու... Հենց ասենք թե շարունակ մի զինվորականի հետ է խոսում, ձեզ ի՞նչ փույթ. չէ՞ որ դուք շարունակ ասում եք թե նրան չեք սիրում։ (Քնքշությամբ հովհարով սպառնում է։) *Խանդո՛տ։*

ԱՐԿԱԴԻ

Իհարկե չեմ սիրում, սակայն այստեղ պատվի խնդիր է։

ՎԱՐԴՈՒՀԻ, ծիծաղում է։

Ինչի՞դ է պետք նրա պատիվը, երբ իրան չեք սիրում։

ԱՐԿԱԴԻ

Ես իմ պատիվն եմ ասում։

ՎԱՐԴՈՒՀԻ, ավելի է ծիծաղում։

Հիանալի՜ է, հիանալի՜... Ահա ա՛յդպես եք տղամարդիկդ, ամե՛նդ էլ այդպես եք... Ձեզ ամեն բան ներելի է. խոսել՝ ո՛ւմ հետ կամենաք,

Ժամանակ անցկացնե՛լ ի՛նչպես կամենաք, բայց հենց որ խեղճ կինն սկսի մեկի հետ խոսել, իսկույն ձեր աչքերը վառվում են Օթելլոյի նախանձով... Պատիվս, ասում է... Թողե՛ք խնդրեմ, մենք ձեր ստրուկնե՞րն ենք, ի՛նչ է։

ԱՐԿԱԴԻ

Օ՜հ, աննման իմ տիկին, ո՛չ թե ստրուկ, դուք երկնային հրեշտակ եք ինձ համար։

ՎԱՐԴՈՒՀԻ

Դարձյա՛լ... ես ձեզ քանիցս անգամ արգելել եմ ինձ հետ այդ ձևով խոսել։

Հեռվից լսվում է մեղմ երաժշտություն, որ շուտով դադարում է։

ԱՐԿԱԴԻ

Ի՞նչ անեմ, տիկին, որ չեմ դիմանում... Ես ձեզ սիրում եմ, դուք գիտեք, որ սաստիկ սիրում եմ ձեզ։

ՎԱՐԴՈՒՀԻ, նստելով աջ կողմը։

Լռեցե՛ք, խնդրեմ, ես ձեզ չեմ հավատում և կարիք էլ չունիմ հավատալու... Սիրել ուզում եք, սիրեցե՛ք ձեր կնոջը, նա ըստ ամենայնի արժանի է ջերմ սիրո. բայց դուք նրան գնահատել չեք իմանում։

ԱՐԿԱԴԻ, նստում է մոտը։

Մի՞թե մեղավոր եմ, տիկին. որ սիրում եմ ձեզ։

ՎԱՐԴՈՒՀԻ

Բավական է. դուք ինձ ձանձրացնում եք վերջապես։

ԱՐԿԱԴԻ

Բարկացե՛ք, տիկին, բարկացե՛ք, բայց դարձյալ հույս ունիմ, որ մի օր քաղցր աչքով կնայեք վրաս։

ՎԱՐԴՈՒՀԻ, հեգնությամբ։

Ի՞նչպես չէ, հաստա՛տ պահեցեք այդ հույսը։

ԱՐԿԱԴԻ

Հույսը լավ բան է, տիկին։

ՎԱՐԴՈՒՀԻ, տեղից վեր կենալով։

Դուք անուղղելի եք, պա՛րոն։

ԱՐԿԱԴԻ, հույնպես։

Ես կուղղվիմ, տիկին, երբ դուք սկսեք մի փոքր սիրել ինձ։

ՎԱՐԴՈՒՀԻ, քաղցրությամբ։

Հավատացե՛ք, պարոն Արկադի, ես ձեզ վերջին անգամն եմ ասում, որ եթե չեք դադարիլ այդ լեզվով խոսել ինձ հետ, հավիտյան կզրկվիք իմ բարեկամությունից։

ԱՐԿԱԴԻ

Տերը մի՛ արասցե, ավելի հեշտ է ինձ գլխիցս զրկվիլ, քան այն ժամանակ կխղճաք ինձ։ (Վարդուհին ծիծաղում է։) *Միծաղեցե՛ք, ծիծաղեցե՛ք, տիկին, իսկ ես հավատացած եմ, որ դուք այն ժամանակ դառնապես լաց կլինիք, թե ինչո՞ւ ինձ այսքան տանջեցիք։*

ՎԱՐԴՈՒՀԻ, ավելի է ծիծաղում։

Սևեր էլ կհագնեմ, այնպես չէ՞։

Շարունակում է ծիծաղել։

ԱՐԿԱԴԻ

Իհարկե կհագնեք։

ՎԱՐԴՈՒՀԻ

Լա՛վ, լա՛վ, վերջ դնենք այս կատակներին... (Թեթև առեղով։) *Բարեհաճեցե՛ք ինձ ռոտոնդի կողմը տանել։ Ի դեպ, դուք կամենում էիք ձեր կնոջը տեսնել։*

ԱՐԿԱԴԻ

Ա՜խ, տիկին, խելքից հանում եք մարդու և դարձյալ ինձ եք մեղադրում։

ՎԱՐԴՈՒՀԻ, թողնելով Արկադիի թևը։

Ուրեմն ցտեսություն։

Միծաղելով հեռանում է։

ԱՐԿԱԴԻ

Տի՛կին, տի՛կին... Աղաչում եմ, լսեցե՛ք... (Առաջին, միեշդեռ Վարդուհին դուրս է գնում ձախ կողմից։) *Այս կինը խելագարության կհասցնե ինձ։*

Շտապով դուրս է գնում Վարդուհու հետևից։

ՏԵՍԻԼ Է

Օրիորդներ՝ ԳԱՅԻԱՆԵ, ԼՈՒՍԻԿ, ԱՍՏՂԻԿ, գալիս են աջ կողմից։

ԳԱՅԻԱՆԵ, ծիծաղելով։

Ի՜նչպես քաշ ընկավ հետևից։

ԼՈՒՍԻԿ

Տղամարդիկ ամենքն էլ այդպես են։

ԱՍՏՂԻԿ

Ա՜խ ու մարդ ուզիր։

ԳԱՅԻԱՆԵ

Խե՜ղճ Մարգարիտ, հետո ի՜նչ աղջիկ է։

ԼՈՒՍԻԿ

Որ իմանա, սաստիկ կվշտանա։

ԳԱՅԻԱՆԵ

Ոչինչ չասես, Լուսիկ, մեղք է։

ԼՈՒՍԻԿ

Ո՛չ, ո՛չ, Գարո ջան, հո չեմ գժվել։

ԱՍՏՂԻԿ

Ես անպատճառ կասեմ. ինչո՞ւ ծածկենք... Օ՜, ես տղամարդկանց վրա շատ եմ բարկացած... Այստեղ՝ աստված, երկինք, քեզ շատ եմ սիրում, իմ շունչս ու կենդանությունը դու ես, իսկ այնտեղ՝ մի ուրիշի հետևից գլխապատառ վազում են... Ո՛հ, մեկ թո՛ղ սպասեն։

ԼՈՒՍԻԿ

Բոլորի վրեժը դու հո չես կարող հանել։

ԱՍՏՂԻԿ

Գոհ կլինեմ, եթե մեկից գոնե վրեժս հանեմ։

ԳԱՅԻԱՆԵ

Դրանից բան չի դուրս գալ, Աստղիկ. իզուր պետք է խեղճ կնկա սիրտը կոտրես։

ԱՍՏՂԻԿ

Օ՜, անպիտանների՛ր... Իմ օրումը ես մարդ չեմ ուզելու։

ԼՈՒՍԻԿ

Էլի լավ է մարդու գնալ, քան թե անմարդ պառավել։

Այս միջոցին երեք զրոսնող երիտասարդներ խորհում կանգնում, խոսում են։

ԳԱՅԻԱՆԵ

Հետո ինչո՞ւ չես գնում։

ԼՈՒՍԻԿ

Ա՜խ, Գարո ջան. ես ուզում եմ մարդու գնալ, բայց ինձ ոչ ոք չէ ուզում։

ԳԱՅԻԱՆԵ

Ինչո՞ւ, ի՞նչդ է պակաս։

ԼՈՒՍԻԿ, հեգնորեն։

Փո՜ղս...

Բոլորեքյան բարձրաձայն ծիծաղում են։ Երիտասարդները խոսելով գնում, անհետանում են։

ՏԵՍԻԼ Ը

ՆՐԱՆՔ, ՀԵՂԻՆԵ

ՀԵՂԻՆԵ, գալով աջ կողմից։

Ձեր ծիծաղի ձայնից իմացա, որ դուք եք։

ԳԱՅԻԱՆԵ, զարմացած։

Ա՜խ...

ԼՈՒՍԻԿ, նույնպես և միևնույն ժամանակ։

Վա՜...

ԱՍՏՂԻԿ, նույնպես։

Հեղինե՜... (Շարունակելով։) Այդ դո՞ւ ես, հոգիս։

ՀԵՂԻՆԵ

Այո՛, ես ինքս. անգի՛ն իմ Աստղիկ... (Ամենքին ձեռք տալով։) *Բա՛րև, բա՛րև ձեզ...*

ԳԱՅԻԱՆԵ, ԼՈՒՍԻԿ, ԱՍՏՂԻԿ, միասին։

Բա՛րև, բա՛րև...

ԳԱՅԻԱՆԵ, շարունակելով։

Շատ ուրախացա, Հեղինե ջան...

ԼՈՒՍԻԿ, ԱՍՏՂԻԿ, միասին։

Մենք ևս։

ՀԵՂԻՆԵ

Նույնպես և ես, իմ թանկագին բարեկամուհիք... Ի՞նչպես եք, ի՞նչպես է ձեր առողջությունը։

ԳԱՅԻԱՆԵ, ԼՈՒՍԻԿ, ԱՍՏՂԻԿ, միասին։

Լա՛վ, լա՛վ. իսկ դու ի՞նչպես ես։

ՀԵՂԻՆԵ

Ինչպես տեսնում եք, փառք աստուծո։

ԼՈՒՍԻԿ

Այս ե՞րբ ես եկել, այսպես հանկարծ ո՞րտեղից բուսար։

ՀԵՂԻՆԵ

Այսօր առավոտվա գնացքով եկա։ Այցելությունների գլուխ չունիմ, ներեցեք, թո՛ղ ոչ ոք չսպասի։ Մտածեցի՝ այս դիշեր ամենքիդ միասին այստեղ կտեսնեմ։

ԳԱՅԻԱՆԵ, ԼՈՒՍԻԿ, ԱՍՏՂԻԿ, միասին։

Մենք կգանք քեզ մոտ...

ԱՍՏՂԻԿ, շարունակելով։

Քո այցելությունները դու քե՛զ համար պահիր։

ԳԱՅԻԱՆԵ, ԼՈՒՍԻԿ, միասին։

Այո՛, այո՛...

Դարձյալ երաժշտություն, որ ցած ձայնով շարունակ լսվում է մինչև այս տեսիլի վերջը։

ՀԵՂԻՆԵ

Շատ շնորհակալ եմ... Հանգի՛ստ եղեք, ձեզ մոտ գալու ժամանակ ես կգտնեմ։

ԳԱՅԻԱՆԵ

Ուրեմն երկա՞ր ես մնալու այստեղ։

ՀԵՂԻՆԵ

Այո՛, այո՛, Գարո ջան, իմ հացն այժմ պիտի այստեղ ճարեմ։

ԳԱՅԻԱՆԵ, ԼՈՒՍԻԿ, ԱՍՏՂԻԿ, միասին։

Օ՜, ա՛յ ուրախություն։

ԳԱՅԻԱՆԵ

Այստեղ մենք քեզ համար լավ պաշտոն կգտնենք, Հեղինե ջան։

ՀԵՂԻՆԵ

Անչափ շնորհակալ եմ... Մի՛ վախենաք, քաղցած չեմ մեռնիլ։

ԳԱՅԻԱՆԵ

Իհարկե... Բայց մեկ ասա՛, տեսնենք, գնալդ ի՞նչ էր, գալդ ի՞նչ. ի՞նչ պատահեց։

ՀԵՂԻՆԵ

Օ՜, պատմությունս երկար է. կասեմ, կասեմ, մեկ օր կասեմ։ Միայն ասացե՛ք ինձ՝ Մարգարտին հո չե՞ք տեսել. այստե՞ղ է, ո՞ր կողմը որոնեմ նրան։

ԳԱՅԻԱՆԵ

Արի՛, ա՛րի, Հեղինե ջան. հենց այս բոպեին քեզ ցույց տամ. ես գիտեմ, նա որտեղ է նստած։

ԼՈՒՍԻԿ

Ո՞րչափ կ՝ուրախանա, քեզ որ տեսնի։

ԱՍՏՂԻԿ

Էլ ի՞նչ ասել կուզի։

ՀԵՂԻՆԵ

Այո՛, մենք իրար շատ ենք սիրում։

ԳԱՅԻԱՆԵ, Հեղինեի թևն առնելով։

Անգին մեր Հեղինե։

ՀԵՂԻՆԵ

Անգին քույրերս...

Ամենքն էլ ուրախ-ուրախ և թև թևի տված դուրս են գնում աջ կողմից։ Երաժշտությունը դադարում է։

ՏԵՍԻԼ Թ

Սրիտոդներ՝ ԱՆՈՒՇ, ՆՈՒՆՈՒՇ, ՀՈՒՓՍՈ, գալիս են ոտտենդից։

ԱՆՈՒՇ

Օ՜հ, հոգնեցա։

Նստում է և հովնարում։

ՆՈՒՆՈՒՇ

Իմ օրումն այսքան չեմ պարել։

ՀՈՒՓՍՈ

Ես էլ... Ի՞նչ հիանալի է պարում։

ՆՈՒՆՈՒՇ

Եվ ո՜րչափ գեղեցիկ է՞։

ԱՆՈՒՇ, մոտենալով։

Ո՞վ է գեղեցիկ. ո՞ւմ մասին եք խոսում։

ՆՈՒՆՈՒՇ

Պարոն Լևոնի, որ մեզ հետ պարում էր այժմ։

ԱՆՈՒՇ

Այո՜, նա բավականին գեղեցիկ է, միևնույն ժամանակ լավ երիտասարդ և շատ էլ գործունյա։

ՆՈՒՆՈՒՇ

Դու նրան ճանաչում ե՞ս, Անուշ։

ԱՆՈՒՇ

Ի՞նչպես չէ, Նունուշ ջան, նա մեզ ազգական է։

ՄՅՈՒՍՆԵՐԸ, միասին։

Մի՞թե։

ԱՆՈՒՇ

Այո՜։

ՀՈՒՓՍՈ

Ինչո՞վ է պարապում նա։

ԱՆՈՒՇ

Գյուղատնտես է։

ՀՈՒՓՍՈ

Ի՜նչ ես ասում... Ո՜վ կկարծեր։

ԱՆՈՒՇ

Այո՜, այո՜, Հուփսո ջան, դու պետք է տեսնես նրան աշխատելիս, որ հիացած մնաս։ Այստեղ, մեկ մոտիկ գյուղում... ա՜խ, անունը մոռացա... հողեր ունի վարձած։ Ի՜նչ վար ու ցանք, արտեր, այգիներ. գյուղացիք բոլորն էլ նրա արևովն են երդվում։ Միշտ նրանց մոտ է, նրանց սովորեցնում է իր գիտությունը... Մեկ բոպե հանգիստ չէ մնում. փորում է, կըտրում է, հետո գալիս՝ կարդում, գրում, մեկ խոսքով՝ հազար ու մեկ բան է ջինում. և երբ այստեղ է լինում, այդպես գեղեցիկ էլ պարում է։

ՆՈՒՆՈՒՇ

Իրավ որ հիանալի երիտասարդ է եղել... Իսկ այն մյուսն ո՞վ է, Անուշ ջան, որ նրա հետ խոսում է, արդյոք չգիտե՞ս։

ԱՆՈՒՇ

Ո՞րը, այն դինվորակա՞նը։

ՆՈՒՆՈՒՇ

Այո՜. ես առաջին անգամ եմ տեսնում նրան այստեղ։

ԱՆՈՒՇ

Մի՞թե դեռ չգիտես, Նունուշ. նա մեր հայտնի վիպասան Արտաշես Արամյանն է, որի գրվածքները մենք այնքան սիրով կարդում ենք։

ՆՈՒՆՈՒՇ

Մի՞թե նա է, ի՞նչ ես ասում, Անուշ. եռևի դու սխալվում ես, հոգիս։

ԱՆՈՒՇ

Ո՛չ, ո՛չ, Նունուշ, նա ինքն է, հավատա՛. ինձ Լևոնն ասաց. նրա սրտակից բարեկամն է։

ՆՈՒՆՈՒՇ

Զարմանալի բան, զինվորակա՞ն ու այդպես գեղեցիկ գրող։

ԱՆՈՒՇ

Ի՞նչ կա զարմանալու, սիրելիս, ո՛ւմ տված է, տվա՛ծ է։

ՆՈՒՆՈՒՇ

Իհարկե, բայց այնուամենայնիվ ինձ համար անսպասելի էր։

ՀՈՒՓՍՈ

Կացի՛ր, Անուշ. չլինի՞ թե դա այն Արամյանն է, որի համար մի քանի տարի առաջ ասում էին, իբր թե պատերազմում սպանել են։

ԱՆՈՒՇ

Այո՛, նա է, նա՛, Հռիփսո ջան. մի գիտնական հանձնաժողովի ղեկավար է նշանակված այստեղ։

ՀՈՒՓՍՈ

Մի՞թե։

ԱՆՈՒՇ

Այո՛, Լևոնը պատմում էր, լավ չհասկացա... Աշխարհագրական թե աղգագրական ինչ-որ հետազոտություններ, չգիտեմ։

Գնում, նստում է։

ՀՈՒՓՍՈ

Ափսոս չէ՞ր, որ սպանե՞ին... Ահա՛ գեղեցիկ տղամարդը դա է, Նունուշ ջան, թե ուզում ես։

ՆՈՒՆՈՒՇ

Ես պարոն Լևոնին ավելի եմ հավանում։

ՀՈՒՓՍՈ

Պարոն Լևոնը որտե՞ղ, նա՛ որտեղ։

ՆՈՒՆՈՒՇ

Ո՛չ, ո՛չ, նրան միայն զինվորականի զգեստն է փայլ տալիս։

ՀՈՒՓՍՈ

Ա՜խ, ի՞նչ ես ասում, Նունուշ, գեղեցիկ մարդուն ինչ էլ հագցնես, նա դարձյալ գեղեցիկ կերևա։

ՆՈՒՆՈՒՇ

Դու ինչ ուզում ես, ասա՛, Հռիփսո, պարոն Լևոնը ավելի գեղեցիկ է։

ՀՈՒՓՍՈ

Ո՛չ, զինվորականն է գեղեցիկ։

ԱՆՈՒՇ, մոտենալով։

Ի՞նչ եք կռվում. եկե՛ք ես ձեզ հաշտեցնեմ։

ՆՈՒՆՈՒՇ

Անուշ ջան, թե արևդ կսիրես, ուղիղն ասա՛. ո՞վ ավելի գեղեցիկ է՝ պարոն Լևոնը, թե՞ այն նոր եկած զինվորականը։

ՀՈՒՓՍՈ

Տե՛ս, Անուշ, առանց կողմնապահության։

ԱՆՈՒՇ

Ասե՞մ ո՛վ է ավելի գեղեցիկ։

ՄՅՈՒՍՆԵՐԸ, միասին։

Այո՛, այո՛։

ԱՆՈՒՇ

Ասե՞մ...

ՄՅՈՒՍՆԵՐԸ, միասին։

Խնդրում ենք։

ԱՆՈՒՇ

Ուղի՞ղը...

ՄՅՈՒՍՆԵՐԸ, միասին։

Հատուկ խնդրում ենք։

ԱՆՈՒՇ

Այն երկուսից ավելի գեղեցիկը նա է, ով որ..

ՆՈՒՆՈՒՇ

Ով ո՞ր...

ՀՈՒՓՍՈՆ

Ով որ ի՞նչ...

ԱՆՈՒՇ

Ով որ... ով որ մեկն ու մեկիդ ուզի...

Փախչում է։

ՆՈՒՆՈՒՇ, հարձակվելով։

Ա՜խ, փո՜ւչ փչանալու։

ՀՈՒՓՍՈՆ, նույնպես։

Թո՜ղ քե՜զ ուզե, անպիտան...

Բոլորեքյան ծիծաղելով վազում են. Անուշը մտնում է ռոտոնդը, իսկ Նունուշն ու Հոփսոն, պատանելով մի խումբ երիտասարդների, նրանց հետ խոսակցելով կամաց-կամաց դուրս են գնում աջ կողմից։

ՏԵՍԻԼ Ժ

ՄԱՐԳԱՐԻՏ, պարանոցին մարգարտաշար մանյակ, ԱՐԿԱԴԻ

ԱՐԿԱԴԻ, շտապով գալիս է ձախ կողմից, բայց տեսնելով Մարգարիտին ռոտոնդից դուրս գալիս և կանգ առնելով, տատանվելով։

Ա՜խ, կինս...

ՄԱՐԳԱՐԻՏ, իջնելով ռոտոնդի աստիճաններից։

Ա՜, դու այստե՞ղ ես... Ի՞նչպես է որ մենակ ես մնացել։

ԱՐԿԱԴԻ

Ասա՜, խնդրեմ, ո՞վ է այն դինվորականը, որի հետ դու ամբողջ երեկո այնպես երկար ու հափշտակված խոսում էիր։

ՄԱՐԳԱՐԻՏ

Նա մեր հայտնի վիպասան Արտաշես Արամյանն է, որ նոր վերադարձել է ճանապարհորդությունից։

ԱՐԿԱԴԻ

Ո՞րտեղից ես ճանաչում դու նրան։

ՄԱՐԳԱՐԻՏ

Մենք վաղեմի ծանոթներ ենք։

ԱՐԿԱԴԻ

Վաղեմի ծանոթնե՞ր եք։

ՄԱՐԳԱՐԻՏ

Այո՜, դեռ քեզ չէի էլ տեսել, երբ նրան ճանաչում էի։

ԱՐԿԱԴԻ

Դա ինձ զարմանալի է թվում, սիրելիս։

ՄԱՐԳԱՐԻՏ

Հանգստացի՛ր. այստեղ զարմանալու բան չկա... Պարոն Արամյանը մեզ դրացի էր. երեխա ժամանակ միասին ենք մեծացել և ես դեռ տասնուհինգ տարեկան էի, երբ նա իր ուսման ընթացքն այստեղ ավարտելով՝ գնաց մտավ համալսարան...

ԱՐԿԱԴԻ, ընդմիջելով։

Եվ չկարողանալով շարունակել համալսարանական ուսումը, հարկավ վռնդվեցավ այնտեղից և մտավ զինվորական ծառայություն։

ՄԱՐԳԱՐԻՏ

Սխալվում ես, պարոն... եթե դու փոքրիշատե ընթերցասեր լիներիր ու մեկ անգամ գոնե աչքի անցներիր նրա հեղինակությունները, այդպես չէիր խոսիլ... Ինչևիցե, տասը տարի կլինի, որ մենք բաժանվել ենք և ահա՛ այսօր առաջին անգամն ենք տեսնում միմյանց։

ԱՐԿԱԴԻ

Շատ բարի, բայց այնպես ծանր ու բարակ ի՞նչ էիք խոսում այսքան բազմության առաջ։

ՄԱՐԳԱՐԻՏ

Առանձնապես ոչինչ. ես իմ անցկացրած օրերի մասին էի պատմում, նա էլ իրան։ Նա եկել է այստեղ աշխարհագրական, թե ազգագրական մի ժողովի հանձնարարությամբ...

ԱՐԿԱԴԻ

Հավատում եմ, բայց այնքան երկար խոսելով նրա հետ, դու ամենքի ուշադրությունը քեզ վրա դարձրիր։

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՞ւմ ի՛նչ գործն է, որ ես իմ բարեկամի հետ խոսում եմ։

ԱՐԿԱԴԻ

Բարեկա՜մ։

ՄԱՐԳԱՐԻՏ

Այո՛, բարեկա՜մ. զարմանո՞ւմ ես թե նախանձում, չգիտեմ։

ԱՐԿԱԴԻ

Ո՛չ զարմանում եմ, ո՛չ նախանձում. ես նեղանում եմ միայն, որ հասարակությանն իզուր առիթ ես տալիս վրդդ խոսելու։

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՞վ է ինձ վրա խոսողը։

ԱՐԿԱԴԻ

Երևի խոսողներ կան, որ ասում եմ։

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՞վ է, ո՞վ. ասա՛, ո՞վ է խոսում։

ԱՐԿԱԴԻ

Ես քեզ ասում եմ, որ խոսում են. իսկ եթե ինձ չես հավատում, կարող ես բարեկամիս հարցնել, տե՛ս ինչ է ասում։

ՄԱՐԳԱՐԻՏ

Այսի՞նքն։

ԱՐԿԱԴԻ

Պարոն Աբելին։

ՄԱՐԳԱՐԻՏ

Խնդրեմ, խնդրեմ, նա թո՛ղ իր գլխին տերություն անե։

ԱՐԿԱԴԻ, զայրույթ նետած։

Դրանով ի՞նչ ես ուզում ասել։

ՄԱՐԳԱՐԻՏ

Ոչինչ...

Աչքի տակով նայում է ամուսնուն։

ԱՐԿԱԴԻ, առաջին։

Մի՞թե կասկածում է։

ՄԱՐԳԱՐԻՏ

Իսկ ի՞նչ կվերաբերի քո խանդոտությանդ, կամ ավելի ճիշտն ասած՝ նեղանալուդ, այդ, հիրավի, ինձ զարմացնում է... Որպես թե ես քեզ համար ո՛րևէ նշանակություն ունիմ և կամ սիրելի եմ քեզ։

ԱՐԿԱԴԻ, ուրախ դեմք ստանալով։

Իհարկե որ սիրելի՝ ես։

ՄԱՐԳԱՐԻՏ, հեգնորեն։

Եվ շա՜տ ես սիրում ինձ։

ԱՐԿԱԴԻ

Շա՜տ, այո՛, շա՜տ։

ՄԱՐԳԱՐԻՏ, դառն ժպիտով։

Եվ բացի ինձանից էլ ուրիշ ոչ ոքի չե՞ս սիրում իհարկե։

ԱՐԿԱԴԻ

Ոչ ոքի, վկա է երկինքը։

ՄԱՐԳԱՐԻՏ, լուռ շարժում է գլուխը և խորին դառնությամբ։

Նայի՛ր վերև. նայի՛ր և տե՛ս, թե քանի վկա կա այնտեղ... Նայի՛ր, նայի՛ր, մի՛ վախենար, աստղերը ձայն չունին. նրանց լեզուն ամեն մարդ միայն ինքն է հասկանում, և եթե մի բան ասեն այժմ, մենակ քե՛զ կասեն։

ԱՐԿԱԴԻ

Ինչե՞ր ես ասում, ես ոչինչ չեմ հասկանում։ Եթե բան գիտես, կամ մի մարդ սուտ լուրեր է հաղորդել քեզ իմ մասին, ա՛յն ասա։

ՄԱՐԳԱՐԻՏ

Ոչ ոք ինձ բան չէ ասել և ոչ էլ ես ուրիշի խելքով կամ խոսքով եմ մտնում գալիս։ Ինչ որ գիտեմ, ինձ ու ինձ գիտեմ և հաստատ էլ համոզված եմ, որ դու իմ մասին այնքան ես մտածում, որքան Չինաստանի մասին։

ԱՐԿԱԴԻ

Ուրի՞շ։

ՄԱՐԳԱՐԻՏ

Ուրիշ ոչինչ... (Նկատելով բեմի խորքում է-ոդ տեսիլի օրիորդներին, որոնցից Գայիանեն ասում է՝ *Ահա՛ Մարգարիտը։*) *Ես այն օրիորդների*

հետ կլինեմ... (Առաջին և հեգնորեն:) Ես քեզ սիրում եմ, ասում է... Գնում է դեպի օրիորդները, բայց տեսնելով Հեղինեին, որ առաջ է վազում, զարմացած կանգ է առնում: Մյուս օրիորդները, պատահելով մի քանի երիտասարդների, նրանց հետ խոսակցելով անհետանում են:

ԱՐԿԱԴԻ, առաջին:

Աստված այս կնոջը կատարյալ պատիժ է ստեղծել ինձ համար:

Դուրս է գնում աջ կողմից:

ՏԵՍԻԼ ԺԱ

ՄԱՐԳԱՐԻՏ, ՀԵՂԻՆԵ

ՄԱՐԳԱՐԻՏ

Այս ո՞ւմն եմ տեսնում:

ՀԵՂԻՆԵ

Մարգարի՛տ...

ՄԱՐԳԱՐԻՏ

Իմս, Հեղինե՛, դո՞ւ ես:

ՀԵՂԻՆԵ

Հոգի՛ս...

Սիրով համբուրում են միմյանց:

ՄԱՐԳԱՐԻՏ, Հեղինեի ձեռքը բռնած և առաջ գալով:

Այս ի՞նչպես, այս ե՞րբ:

ՀԵՂԻՆԵ

Այսօր: Հենց ա՛յսօր եմ եկել:

ՄԱՐԳԱՐԻՏ

Առավոտվա գնացքո՞վ իհարկե:

ՀԵՂԻՆԵ

Այո՛:

ՄԱՐԳԱՐԻՏ

Հետո՝ մի՞թե չէիր կարող իմաց տալ, որ գայի քեզ դիմավորելու:

ՀԵՂԻՆԵ

Հենց դրա համար էլ չուզեցի իմաց տալ, որ քեզ անհանգիստ չանեմ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ինչե՞ր ես ասում, Հեղինե. ի՞նչպես թե անհանգիստ չանես: Մի՞թե այդպես է:

Նստում է և Հեղինեին նստեցնում իր կողմին:

ՀԵՂԻՆԵ

Գիտեմ, գիտեմ, անգին իմ Մարգարիտ, որ դու ինձ այնպես ես սիրում, ինչպես ես քեզ, և հենց այդ սերն էր պատճառը, որ ես չուզեցի առավոտյան անուշ քունդ խանգարել... Ա՜խ, իմ հրեշտակ Մարգարիտ, վերջապես նորից արժանացա տեսությանդ և այս անգամ հույս ունիմ որ մեկ օր էլ չեմ անցկացնիլ առանց քեզ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ա՜խ, Հեղինե, աստված քեզ ինձ համար է ուղարկել... Ուրեմն այնտեղ պաշտոնդ թողե՞լ ես:

ՀԵՂԻՆԵ

Այո՛, ընդմիշտ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Բայց վերջին նամակումդ հակառակն էիր գրում:

ՀԵՂԻՆԵ

Ուղիղ է, բայց այնպիսի մի անակնկալ հանգամանք պատահեցավ, որ պաշտոնս էլ թողի, քաղաքն էլ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ի՞նչ ես ասում, Հեղինե. ի՞նչ պատահեցավ արդյոք:

ՀԵՂԻՆԵ

Մի շատ սովորական բան... Նոր հոգաբարձուք մտան ուսումնարան, մենք միմյանց չհասկացանք, և ահա՛ ես այստեղ եմ... Ես կպատմեմ քեզ, Մարգարիտ, բոլորը կպատմեմ, առայժմ թո՛ղ մնա:

ՄԱՐԳԱՐԻՏ

Թո՛ղ մնա, հոգյակս... Բայց այսօր ամբողջ օրը ո՞ւր էիր. ինչո՞ւ առաջին անգամ այստեղ ենք տեսնվում... Ո՞ւմ մոտ ես իջել, ո՞ւմ գերապատեցիր ինձանից: (Դժգոհ:) Սպասի՞ր դեռ:

ՀԵՂԻՆԵ

«Կովկաս» հյուրանոցում մի փոքրիկ սենյակ եմ վարձել, մինչև տեսնեմ՝ գործս ի՞նչպես է գնում։

ՄԱՐԳԱՐԻՏ

Ինչ ասացի՞ր, ի՞նչ. ի՞նչպես թե հյուրանոցում... Ուրեմն ես այլևս քո Մարգարիտը չե՞մ։ Ի՜սկույն, ի՜սկույն, հենց ա՛յս գիշեր տեղափոխվիր ինձ մոտ։

ՀԵՂԻՆԵ

Որ մենակ լինեիր, իմ անգին Մարգարիտ, ինչո՞ւ չէ, մեծ ուրախությամբ, բայց կարելի է ամուսնուդ հաճելի չթվի։

ՄԱՐԳԱՐԻՏ

Այդ կողմից դու բոլորովին հանգի՞ստ եղիր։ Ես ինձ համար իմ առանձին սենյակներն ունիմ։ Մի՛ վախենար, ես քեզ այնպես կպահեմ, որ դու կարողանաս լիովին վայելել քո ազատությունը։

ՀԵՂԻՆԵ

Հավատացած եմ, հոգիս, բոլորովին հավատացած և շատ շնորհակալ եմ, միայն թե... բայց...

ՄԱՐԳԱՐԻՏ

Ոչինչ չեմ ընդունում, ոչինչ՝ ոչ քո միայն թե-ն և ոչ էլ բայց-ը, ես քեզ հյուրանոցում թողնողը չեմ... Ե՛կ, ե՛կ, հատուկ խնդրում եմ, ե՛կ, հետս ընկերությո՛ւն արա, կյանքս էլ այնպես ծանր չի երևալ... Դու չգիտես, Հեղինես, թե ի՞նչ մեծ բարություն արած կլինիս ինձ. անչափ, անչափ կպարտավորեցնես։

ՀԵՂԻՆԵ

Եթե այդպես է, իհարկե պետք է գամ։

ՄԱՐԳԱՐԻՏ

Այսօր միանգամից ես երկու ուրախության արժանացա։ Այս գիշեր մինչև քեզ տեսնելս, հենց այստեղ ո՞ւմ պատահեցա, ի՞նչ ես կարծում. մեր վիպասան Արտաշես...

ՀԵՂԻՆԵ

Արտաշես Արամյանի՞ն...

ՄԱՐԳԱՐԻՏ

Այո՛։

ՀԵՂԻՆԵ

Քո մանկության ընկերո՞ջը։

ՄԱՐԳԱՐԻՏ

Հենց նրան։

ՀԵՂԻՆԵ

Մի՞թե։ Ինչ ուրախություն... նա հիմա հասուն տղամարդ կլինի դարձած։

ՄԱՐԳԱՐԻՏ

Ավելացրու նաև՝ կտրիճ զորական... Գնա՛նք, գնանք, ես քեզ ծանոթացնեմ նրա հետ։

Թև թևի տված դուրս են գնում աջ կողմից։

ՏԵՍԻԼ ԺԹ

ԱՐՏԱՇԵՍ, գինվորականի զգեստով, կրծքին քաջության պատվանշան, ԼԵՎՈՆ, հասարակ զգեստով, գալիս են հակառակ կողմից։

ԱՐՏԱՇԵՍ

Այո՛, Լևոն, ես քեզ մեծ ապագա եմ գուշակում։

ԼԵՎՈՆ

Շնորհակալ եմ, Արտաշես, ես այժմ էլ գոհ եմ իմ վիճակից, և ճըշմարիտն ասեմ, լիովին երջանիկ կլինեի, եթե ունենայի կյանքիս մի լծակից, որ իր բարեմասնություններով կարողանար նեցուկ լինել ինձ աշխատության ժամանակ։

ԱՐՏԱՇԵՍ, տխուր։

Որոնի՛ր, եղբայր, գուցե գտնես։

ԼԵՎՈՆ

Այո՛, բայց մինչև այսօր դեռևս չպատահեց մինը, որի մասին կարողանայի ասել՝ ահա՛ նա, առանց որի կյանքը կյանք չէ ինձ համար։

ԱՐՏԱՇԵՍ

Միայն թե ընտրածիդ ուրիշը չառնե, կամ, որ ավելի վատն է, ուրիշի կինը չլինի քո սիրածը։

ԼԵՎՈՆ

Ի՞նչ ես ուզում ասել... (Արտաշեսը խոր հոգվոց է հանում։) Դու տխուր ես, Արտաշես, փոքր ինչ առաջ այդպես չէիր։

ԱՐՏԱՇԵՍ

Այո՛, ես շատ զղջում եմ, որ այս երեկո ժողովարան եկա։

ԼԵՎՈՆ

Զղջո՞ւմ ես։

ԱՐՏԱՇԵՍ

Սասսիկ, թեև միևնույն ժամանակ ուրախության սահման չկա։ (Լռություն։) Այո՛, կարծում եմ շուտով ճանապարհ եմ ընկնելու կրկին։

ԼԵՎՈՆ

Ի՞նչ ես ասում, եղբայր, և դեպի ո՞ւր։

ԱՐՏԱՇԵՍ

Դեպի գավառները։

ԼԵՎՈՆ

Ինչի՞։

ԱՐՏԱՇԵՍ

Ես քեզ պատմել եմ արդեն. Աշխարհագրական Ընկերության հանձնարարությամբ...

ԼԵՎՈՆ

Այո՛, այո՛, գիտեմ։ Բայց դու կամենում էիր դեռ ես մի քանի ամիս մնալ այստեղ։

ԱՐՏԱՇԵՍ

Շատ անգամ հանգամանքներն շտապեցնում են գործը։ Ես հենց վաղը կգրեմ գործակիցներիս, որ ինձ սպասեն... Այո՛, պետք է գնալ, ուրիշ կերպով սթափվել անկարող եմ։

ԼԵՎՈՆ

Ես քեզ չեմ հասկանում. ասա՛, ի՞նչ է պատահել։

ԱՐՏԱՇԵՍ

Ո՛չ, Լեոն, դու չգիտես, թե ո՞րքան անբախտ եմ։

ԼԵՎՈՆ

Անբա՞խտ... Դո՞ւ...

ԱՐՏԱՇԵՍ

Թողնենք, խնդրեմ։

ԼԵՎՈՆ

Բայց ի՞նչ կա վնասպես։

ԱՐՏԱՇԵՍ, փոքր լռությունից հետո։

Ես... սիրում եմ...

ԼԵՎՈՆ

Սիրո՞ւմ ես։

ԱՐՏԱՇԵՍ

Այո՛, և անհույս։

ԼԵՎՈՆ

Ի՞նչ... մի՞թե ծնողները...

ԱՐՏԱՇԵՍ

Ո՛չ, ո՛չ. բոլորովին ուրիշ արգելք... նա ամուսնացած է։

ԼԵՎՈՆ

Ամուսնացա՞ծ... Ո՞հ, թշվառդ... Եվ նա էլ փոխադարձաբա՞ր...

ԱՐՏԱՇԵՍ

Այո՛, բայց ինչպես իր եղբորը... Հրեշտակային անմեղ սիրով է սիրում նա ինձ... Իսկ զգացմունքներիս մասին ոչինչ չգիտե։

ԼԵՎՈՆ

Նա Թիֆլիզո՞ւմն է։

ԱՐՏԱՇԵՍ

Այո՛, և այժմ իսկ այս ժողովարանում... Դու տեսար ինձ նրա հետ խոսելիս։

ԼԵՎՈՆ

Նրա հետ...

ԱՐՏԱՇԵՍ

Այո՛... Տիկին Սամսոնյանի։

ԼԵՎՈՆ

Տիկին Սամսոնյա՞ն...

ԱՐՏԱՇԵՍ

Այո՛։

ԼԵՎՈՆ

Պարոն Արկադիի կի՞նը։

ԱՐՏԱՇԵՍ

Այո՛։

Հեռվից կրկին լսվում է մեղմ երաժշտություն, որ տևում է մինչև նշանակած տեղը։

ԼԵՎՈՆ, երկար լռությունից հետո։

Արտաշե՛ս, Արտաշե՛ս, դու խելքդ կորցրել ես բոլորովին։

ԱՐՏԱՇԵՍ

Տասը տարի էր, Լևոն, օ՜, տասը երկար տարիներ, հասկանո՞ւմ ես դու, մենք բաժանված էինք, և բավական էր այս գիշեր մեկ անգամ տեսնել նրան, որ սրտիս մեջ անթեղած կրակը նորից բորբոքվեր իր բոլոր ուժով... պիտի իմանաս, թե փոքր ինչ առաջ ի՜նչ պատահեցավ ինձ. երբոր հանկարծ նրա ձեռքն զգացի իմ ձեռքիս մեջ... Ճշմարտությունը վկա, Լևոն, ես երբե՛ք այնպես չեմ ցնցվել... Կարծես ինքն էլ նկատեց այդ և իսկույն հետ քաշեց ձեռքը... Օ՜, ազնի՜վ Մարգարիտս, անգի՜ն Մարգարիտս...

ԼԵՎՈՆ

Իրավ, շատ ազնիվ կին են ասում։

ԱՐՏԱՇԵՍ

Հավատա՛ ինձ, Լևոն, եթե գրվածքներիս մեջ պատահում է մի բարի, ազնիվ, առաքինի, վեհ կին, ես միշտ նրան եմ ունեցել աչքիս առաջ... (Լռություն։) *Այո՛, այո՛, պետք է շուտով կորչեմ այստեղից... Այդ կինը կյանքիս մեջ միշտ վճռական դեր է խաղացել և, երևի, պիտի խաղա, քանի շունչ կա բերանումս... Նրա սերն էր, որ ինձ մղեց դեպի կրակը, դեպի գոռ պատերազմները։*

ԼԵՎՈՆ

Ի՞նչպես։

ԱՐՏԱՇԵՍ, փոքր լռությունից հետո։

Իմ սերը դեպի այդ աննման էակը սկսվում է այն օրերից, երբ ես դեռ ուսանում էի այստեղ... Մենք միևնույն տանն էինք կենում, համար-

յա միասին ենք մեծացել... Չգիտեմ ինչպես եղավ, ես նրան սիրեցի, սիրեցի, եղբայր, որպես մի խելագար, ինչպես և սիրում եմ մինչև այսօր... Ես ուխտեցի վերջապես կյանքս հավիտյան կապել նրա հետ. նրա համար ապրել, նրա համար մեռնել... Սկսեցի աշխատել, անդուլ աշխատել, որ թե՛ գիտությամբ և թե դիրքով կարողանամ արժանի լինել իրան... Եվ ահա՛ սնուցանելով ինձ քաղցր հույսերով՝ ես վերջացրի ուսումս այստեղ և գնացի համալսարան... Նա այն ժամանակ տասն և հինգ տարեկան էր... (Խորը հոգվոց հանելով։) *Այո՛...*

ԼԵՎՈՆ

Հետո՞։

ԱՐՏԱՇԵՍ

Չորս տարի անցկացրի համալսարանում հուսո և երկյուղի մեջ... Ես աշխատում էի գիշեր և ցերեկ... Կյանքի դժվարություններից և սրտումս վառվող սիրո կրակից հանգստություն չունեի. միայն Մարգարտիս հրեշտակային պատկերն էր, որ ուժ և զորություն էր տալիս ինձ... (Դադար։) *Ես ավարտում էի ուսումս... Վերջին քննությանս նախընթաց օրը հանկարծ լուր եմ ստանում, որ իմ աննման Մարգարտին մարդու են տալիս... Ա՜խ, Լևոն, ո՜րպիսի ծանր, ո՜րպիսի զարհուրելի բոպե էր այդ ինձ համար...*

ԼԵՎՈՆ, ձեռքը բռնելով։

Հասկանում եմ, Արտաշես, քո դրությունը... Այո՛, զարհուրելի է։

ԱՐՏԱՇԵՍ

Հուսահատությունս քիչ էր մնում անձնասպանություն գործել տար ինձ. բայց դիմացա, եղբայր, դիմացա... (Երաժշտությունը կամաց-կամաց դադարում է։) *Մեռնել, գոնե այնպես մեռնել, ասացի, որ մեկ բանի նման լինի... Ես վճռեցի... Ես ձգեցի ամեն ինչ և անմիջապես մտա զինվորական ծառայություն՝ մահը պատերազմի դաշտում որոնելու։ Իմ բախտից պատերազմի տաք ժամանակն էր, երբ ամենքն էլ ոգևորված էին ազգերի ազատության գաղափարով...*

ԼԵՎՈՆ

Ահա՛, թե ո՛րտեղ պետք էր որոնել քո փառավոր հաղթանակների շարժառիթը։

ԱՐՏԱՇԵՍ

Այո՛, այդ պատերազմը մեծ դարման էր բորբոքված սրտիս, բանալով աչքիս առաջ մի նոր ասպարեզ... Դու երևակայել անգամ չես կարող,

թե ի՞նչ զգացմունք է տիրապետում քեզ պատերազմի դաշտում, երբ հանկարծ գիմացդ կանգնած ես տեսնում... զարավոր թշնամուդ, որ հափշտակել է քո հայրենի երկիրը, որի համար քո պապերն ու նախնիքը իրանց քրտինքն ու արյունն են թափել, ուր ամեն մի քար, ամեն մի ավերակ պատմում է քեզ անցյալի փառքը... Ո՜հ, այն ժամանակ, Լևոն, բոլորը մոռացվում է, բոլորը, և ամբողջ գոյությունը միայն մի տենչով, մի ցանկությամբ է համակվում՝ կամ մահ, կամ կյանքիդ հետ քո հայրենի երկիրը... Դու ինձ հասկանո՞ւմ ես, Լևոն։

ԼԵՎՈՆ

Լիովին, եղբայր։

ԱՐՏԱՇԵՍ

Մահն ինձ համար արդեն խաղալիք էր, բայց մնացի ողջ և առողջ, ինչպես տեսնում ես .. Պատերազմը վերջացավ, ես հաշտվեցի կյանքի հետ. իսկ Մարգարտի սերը մնաց սրտիս խորքում որպես մի թանկագին գանձ, որ հետս ման եմ ածում անբաժան, ուր որ գնում եմ։

ԼԵՎՈՆ

Ապարա՜խտ Արտաշես։

ԱՐՏԱՇԵՍ

Սը՜ս... Նա ինքն է, այս կողմն է գալիս։

ՏԵՍԻԼ ԺԳ

ՆՐԱՆՔ, ՄԱՐԳԱՐԻՏ, ՀԵՂԻՆԵ, որոնք վերադառնում են ձախ կողմից։

ՄԱՐԳԱՐԻՏ, Հեղինեի հետ թև թևի տված և առաջ գալով։

Թույլ տվեք, պարոն Արտաշես, ծանոթացնել ձեզ բարեկամուհուս հետ, օրիորդ Հեղինե-Անթառամ։

ԱՐՏԱՇԵՍ

Մեծ ուրախությամբ։ (Ողջունելով Հեղինեին։) Պատիվ ունիմ, օրիորդ, Արտաշես Արամյան։

Միմյանց ձեռք են տալիս։

ՄԱՐԳԱՐԻՏ

Օրիորդն էլ ինձ պես զմայլված է, պարոն Արտաշես, ձեր գրվածքներից։

ՀԵՂԻՆԵ

Այո՛, պարոն, ուրախ եմ, որ ծանոթանում եմ ձեզ հետ։

ԱՐՏԱՇԵՍ

Մեծապես պատվում եք ինձ, օրիորդ... (Մարգարտին։) Տիկին, թո՛ւյլ տվեք և ինձ ներկայացնել ձեզ իմ մտերիմ բարեկամիս, Լևոն Շիրակյան։

ՄԱՐԳԱՐԻՏ

Շատ ուրախ եմ։ (Ձեռք է տալիս Լևոնին։) Ես ձեզ արդեն փոքր ինչ ճանաչում եմ, պարոն Լևոն։ Պարոն Արտաշեսը խոսում էր ձեր մասին, երբ դուք պարում էիք մեր օրիորդների հետ։ (Մատնացույց անելով Հեղինեին։) Խնդրեմ ծանոթանաք.... (Հեղինեին։) Պարոն Շիրակյան... (Լևոնին։) Օրիորդ Հեղինե-Անթառամ։ (Հեղինեն և Լևոնը ձեռք են տալիս միմյանց։) Դուք հիանալի պարում եք, պարոն։ Հեղինեն էլ լավ պարող է։

ԼԵՎՈՆ, Հեղինեին։

Եթե կբարեհաճեք, օրիորդ, հետևյալ կադրիլը միասին, պարենք... Ինձ շատ կպարտավորեցնեք։

Հեղինեն գլուխ է տալիս։

ՄԱՐԳԱՐԻՏ

Իսկ առայժմ նստենք, պարոններ, ինչո՞ւ ենք կանգնած մնացել։ (Նստում են՝ Մարգարիտն ու Հեղինեն միասին, իսկ Արտաշեսն ու Լևոնը նրանց հանդեպ։) Պարոն Լևոն, ուրեմն դուք մեծ մասամբ գյուղո՞ւմն եք անցկացնում, ինչպես պատմեց ինձ պարոն Արտաշեսը։

ԼԵՎՈՆ

Այո՛, տիկին, ես ինձ լիովին նվիրել եմ հողին և հողագործներին։

ՄԱՐԳԱՐԻՏ

Լսել եմ, պարոն Լևոն... Պետք է մեկ օր գանք տեսնենք ձեր աշխատությունները, եթե թույլ կտաք. ամուսինս ուրախ կլինի ձեզ հետ ծանոթանալու։

ԼԵՎՈՆ

Տիկին, ես ինձ երջանիկ կհամարեի, եթե ձեզ պես հյուրեր տեսնեի իմ աղքատիկ ագարակում։

ՄԱՐԳԱՐԻՏ

Օ՜, դուք շատ բարի եք, պարոն Լևոն... Ուրեմն այդպես, այս օրերս գնանք միասին, եթե կկամենաք, պարոն Արտաշես։ (Արտաշեսը լուռ ողջունում է։) *Եվ դու, Հեղինե։*

ՀԵՂԻՆԵ

Մեծ ուրախությամբ։

ՄԱՐԳԱՐԻՏ, մտահույզ։

Ես սաստիկ սիրում եմ բնությունը։

ԱՐՏԱՇԵՍ

Այո՛, տիկին, լավ հիշում եմ, որ դուք գեղեցիկ տեսարաններ էիք նկարում բնությունից։ Արդյոք այժմ էլ շարունակո՞ւմ եք նկարչությունը։

ՄԱՐԳԱՐԻՏ

Ի՞նչպես չէ, այդ ինձ համար մեծ սիրափանք է։

ԼԵՎՈՆ

Օ՜, տիկին, եկե՛ք, եկե՛ք, խնդրում եմ. դուք այնտեղ սքանչելի նյութեր կգտնեք ձեր վրձինի համար։

ՄԱՐԳԱՐԻՏ

Անպատճառ, պարոն Լևոն, և առաջին պատկերը, որ կնկարեմ ձեր գյուղի տեսարաններից, ես խոստանում եմ ձեզ նվիրել։

ԼԵՎՈՆ, ողջունելով։

Այդ անմոռանալի հիշատակ կլինի ինձ համար, տիկին։

ՄԱՐԳԱՐԻՏ, ժպտալով։

Շատ շնորհակալ եմ... (Լսվում է կաղրիլի ռիտուրնելը։) *Ահա՛ ձեզ են հրավիրում։* (Լևոնը ոտքի է կանգնում։) *Այս օրերս կսպասեմ ձեզ... Պարոն Արտաշեսը խոստացել է գալ մեզ տեսության, միասին շնո՛ր բերեք, խնդրեմ։*

ԼԵՎՈՆ, ողջունելով Մարգարտին։

Առանձին պատիվ եք անում ինձ, տիկին։ (Հեղինեին։) *Թո՛ւյլ տվեք։ օրիորդ...*

Առաջարկելով թևը, գնում է նրա հետ միասին և մտնում ռոտոնդ։

ՏԵՍԻԼ ԺԴ

ՄԱՐԳԱՐԻՏ, ԱՐՏԱՇԵՍ

ՄԱՐԳԱՐԻՏ, փոքր ինչ լռությունից հետո։

Ո՛րքան ուրախ եմ, որ ձեզ կրկին տեսնում եմ... Ի՜նչքան գեղեցիկ հիշողություններ են գալիս միտս մեր մանկությունից... Այն ժամանակ ես այնպես էի հավատացած, թե մենք միշտ նույնը կմնանք, մինչդեռ այժմ անցած օրերն ինձ թվում են որպես երազ... Մտաբերո՞ւմ եք, պարոն Արտաշես, ինչպես մենք խաղում էինք, ինչպես վազվզում մեր փոքրիկ պարտիզում... Մտաբերո՞ւմ եք և իմ խիզճ մորը, թե ի՜նչպես էր նա ձեզ գուրգուրում... Օ՜, խեղճ կինը շատ էր սիրում ձեզ, շա՜տ...

Աչքերը արբում է։

ԱՐՏԱՇԵՍ

Մի՞թե կարող եմ ես մոռանալ այն բարի կնոջը երբեմն... Ես սիրում էի նրան ինչպես հարազատ մորս... Ամեն-ինչ, ամեն ինչ միտս է. մեր խաղն էլ, մեր ուրախություններն էլ, մեր զվարճություններն էլ... Հավատացե՛ք, տիկին, օր չի եղել, որ այդ ամենը չմտաբերեի, և շատ անգամ, նույնիսկ պատերազմի դաշտում, թշնամու գնդակների դեմ կանգնած՝ ձեր պատկերը սավառնել է աչքիս առաջ։

ՄԱՐԳԱՐԻՏ

Շնորհակալ եմ, բարեկամ, ես ևս միշտ մտաբերել եմ ձեզ. մանավանդ ձեր հեղինակությունները կարդալիս շատ անգամ պատահել է ինձ, որ մտքիս հետ ընկնելով, ամբողջ ժամեր եմ անցկացրել միևնույն թերթի վրա... (Արտաշեսը խորը հոգվոց է հանում. երկար լռություն։) *Գնա՛նք, պարոն Արտաշես, մեր բարեկամներին գտնենք...* (Գնալով։) *Ինձ թվում է, թե մենք դարձյալ մեր պարտիզումն ենք ման գալիս...*

ԱՐՏԱՇԵՍ

Այո՛, երջանիկ օրեր էին...

Խորքում երևում են Էլիզը և Արկադին թև թևի տված, իսկ կողքին Ֆրեդը և մի ուրիշ խմբում Վարդուհին։

ՏԵՍԻԼ ԺԲ

ՆՐԱՆՔ, ԱՐԿԱԴԻ

ԱՐԿԱԴԻ, առաջ գալով։

Մարգարիտ, ժամանակ է. ընթրիքն արդեն պատրաստ է։

ՄԱՐԳԱՐԻՏ, Արտաշեսին։

Պարոն Արտաշես, ամուսինս է, խնդրեմ ծանոթ լինիք։ (Արկադիին։) *Պարոն Արտաշես Արամյան, մանկությանս ընկերը։*

ԱՐԿԱԴԻ, իրան զսպելով։

Շատ ուրախ եմ, պարոն։

Տալիս է ձեռքը։

ԱՐՏԱՇԵՍ

Պատիվ եմ համարում, պարոն։

ԱՐԿԱԴԻ

Շատ ուրախ եմ ձեզ հետ ծանոթանալու... Ամբողջ հասարակությունն այս կիշեր ձեզ վրա է խոսում, ձեր քաջության մասին պատմում։

ԱՐՏԱՇԵՍ

Օ՜, խնդրեմ։

ԱՐԿԱԴԻ

Հույս ունիմ, որ այսուհետև ինձ ևս ձեզ հարգողներից մինը կհամարեք։

ԱՐՏԱՇԵՍ

Չափազանց բարի եք, պարոն։

ԱՐԿԱԴԻ

Իմ պարտքս է, պարոն... Միայն այժմ կներեք, խնդրեմ. մեզ սպասում են։

ԱՐՏԱՇԵՍ

Ա՜, խնդրեմ, պարոն։

ԱՐԿԱԴԻ, Մարգարտին։

Գնա՛նք, սիրելիս։

ՄԱՐԳԱՐԻՏ, Արկադիին, ցածր և հանդիմանական հայացքով։

Բայց հյո՞ւրը... (Բարձր։) *Պարոն Արտաշեսը ևս այն կողմն է գալու, մենք խոստացանք բարեկամուհուս։* (Արտաշեսին։) *Գնա՛նք, պարոն Արտաշես, օրիորդ Հեղինեն մեզ սպասելիս կլինի։*

ԱՐՏԱՇԵՍ, առաջարկելով թևը։

Խնդրեմ, տիկին։

ՄԱՐԳԱՐԻՏ, առնելով թևը։

Շնորհակալ եմ.... (Արկադիին։) *Գնա՛նք, Արկադի...*

Գնում են։

ԱՐԿԱԴԻ, առանձին, բարկացած։

Անիծյա՛լ...

ՎԱՐԴՈՒՀԻ, հեգնորեն, Արկադիին։

Խե՛ղճ Արկադի։

Միջադեմ է։ Նույն միջոցին լսվում է երաժշտություն, որ նվագում է կադրիլ կամ տեղական երաժշտության լեզգիերեն պարի եղանակը։ Ժողովուրդը շտապով գնում է դեպի ռոտոնդը, իսկ Արկադին, Վարդուհին և խորհում էլիզն ու Արեգը մնում են անշարժ։ Պատկեր։

ԱՐԱՐՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Ցամսոնյանի տանը մի փարքամ դահլիճ՝ շուրջ դռնով, որոնցից երկուսը ձախ կողմը, մինը աջ և մինն էլ խորքումը: Ձախ կողմի առաջին կարգի դուռը տանում է Մարգարտի սենյակը, երկրորդ կարգինը՝ Հեղինեի սենյակը. աջ դուռը, որ գտնվում է երկրորդ կարգում, Արկադիինն է, իսկ վերջինը բացվում է դեպի նախասենյակը, որի լուսամուտներից երևում է մի գեղեցիկ պարտեզ: Աջ կողմը, առաջին կարգում, մի լուսամուտ կա: Դահլիճի հատակը ամբողջապես ծածկած է գորգով, իսկ առաստաղից կախած է ոսկեզօծ շահ հանգած մոմերով: Դահլիճը զարդարած է ամենաշքեղ դրապրիներով և կահ-կարասիքով՝ դաշնամուր, հայելիներ, ժամացույց, պատկերներ և այլն: Մի պատկեր, որ պարտեզ է ներկայացնում, դրած է սենյակի աջակողմյան անկյունում ոսկեզօծ պատկերակալի վրա: Ձախ կողմը՝ արմավենիք, լիմոնի ծառեր և ծաղիկներ ծածկում են երկրորդ դուռը: Ցերեկ է:

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ՄԱՐԳԱՐԻՏ, միշտ միևնույն մանյակով, ՍԵՍԻԼ

ՄԱՐԳԱՐԻՏ, նստած սուրճ է պատրաստում:

Ո՞ր ժամն է:

ՍԵՍԻԼ, դնելով սեղանի վրա պամսիմատով սկուտեղը:

Կես օրից մեկ քառորդ պակաս է, տիկին:

ՄԱՐԳԱՐԻՏ

Լա՛վ, գնացե՛ք, տեսեք թե օրիորդը տուն է եկել, ասացեք որ սուրճը պատրաստ է:

ՍԵՍԻԼ

Իսկույն, տիկին. իսկ պարոնի՞ն:

ՄԱՐԳԱՐԻՏ

Նա տա՞ն է:

ՍԵՍԻԼ

Այո՛, տիկին, նոր է վեր կենում:

ՄԱՐԳԱՐԻՏ

Դարձյա՞լ... Այս ի՞նչ սովորություն է ընդունել:

ՍԵՍԻԼ

Առավոտյան ժամի չորսին է տուն եկել, տիկին:

ՄԱՐԳԱՐԻՏ, առանձին:

Հետզհետե ավելի ու ավելի ուշ... Արդյոք ո՞րտեղ է անցկացնում նա իր ժամանակը:

ՍԵՍԻԼ

Ի՞նչպես կհրամայեք, տիկին:

ՄԱՐԳԱՐԻՏ

Լա՛վ, գնացե՛ք, պարոնին էլ խնդրեցեք. եթե կամենում է, թո՛ղ գա... Միայն դարձյալ կրկնում եմ, Սեսիլ, որ օրիորդի սենյակի վրա առանձին ուշք դարձնեք... Ամեն բան իր տեղը լինի, խնդրեմ, բոլորը մաքրած, սրբած լինի. փոշի չնկատվի և ո՛չ մի տեղ:

ՍԵՍԻԼ

Հրամել եք, տիկին:

Սպասավորը բերում է արծաթյա սկուտեղով մի ծուռ:

ՄԱՐԳԱՐԻՏ, վերցնում է ծուռը:

Օրիորդինն է: (Սպասավորին:) *Լա՛վ:* (Սպասավորը դուրս է գնում: Սեսիլին:) *Գնացե՛ք, իմացեք՝ պարոնը սուրճը կամենո՞ւմ է:*

ՍԵՍԻԼ

Այս րոպեիս, տիկին... Բայց ահա՛ ինքը պարոնը:

Մարգարտի նշանով դուրս է գնում նախասենյակ:

ՏԵՍԻԼ Բ

ՄԱՐԳԱՐԻՏ, ԱՐԿԱԴԻ, գիշերազգեստով։

ԱՐԿԱԴԻ, հոռանջելով գալիս է իր սենյակից։

Ինչքա՜ն քնել եմ։

ՄԱՐԳԱՐԻՏ

Այդ ի՞նչ կարգ է, ասա՛, խնդրեմ. մի՞թե չգիտես, որ տանը օտար աղջիկ կա. նա իսկույն դուրս կգա. նրա մոտ էլ պետք է այդպես երևա՞։

ԱՐԿԱԴԻ

Եթե մեր տանն է կենում, էլ ի՞նչ օտար։

ՄԱՐԳԱՐԻՏ

Խնդրեմ, խնդրեմ, գնա՛ հագնվիր իսկույն. այդ ի՞նչ քաղաքավարություն է։

ԱՐԿԱԴԻ

Գնում եմ գնում, լավ։

Նստում է աջ կողմը և դարձյալ հոռանջում։

ՄԱՐԳԱՐԻՏ, ձեռքը գլխին տաճելով։

Ա՜խ։

ԱՐԿԱԴԻ

Իսկույն, իսկույն... Թո՛ղ մեկ ձգձգեմ։

Ճապկոտում է։

ՄԱՐԳԱՐԻՏ, տեղից վեր թռչելով։

Անտանելի՜ է... Ես կհեռանամ, եթե դու չգնաս։

ԱՐԿԱԴԻ, վեր կենալով։

Սարսափելի կին ես. մարդ իր տան մեջ էլ հանգստություն չունենա՞։

ՄԱՐԳԱՐԻՏ

Գնա՛, քո սենյակո՛ւմ հանգստացիր... էլ ո՞ւր էիր այդպես վաղ զարթնում։

ԱՐԿԱԴԻ

Լա՛վ, լա՛վ, բաժակս տո՛ւր, ես իմ սենյակը կերթամ։

ՄԱՐԳԱՐԻՏ, ածելով մի բաժակ սուրճ։

Ահա՛, վե՛ր առ։

ԱՐԿԱԴԻ, վերցնելով բաժակը։

Այս ի՞նչ հիանալի պաքսիմատ է... Ո՞րտեղից են գնել։

ՄԱՐԳԱՐԻՏ

Հետո, հետո. գնա՛, շո՛ւտով հագնվիր։

ԱՐԿԱԴԻ

Գնում եմ, գնում։ (Քնքշությամբ նայելով։) *Բայց ի՞նչ գեղեցիկ ես դու այսօր, Մարգարիտ։* (Մոտենալով։) *Կարելի՞ է՝ մեկ համբույր տաս։*

ՄԱՐԳԱՐԻՏ

Հեռացե՛ք, խնդրեմ։

ԱՐԿԱԴԻ, ավելի մոտենալով։

Ճշմարիտ, այսօր շատ ես դուր գալիս ինձ։

ՄԱՐԳԱՐԻՏ, գնալով հակառակ կողմը։

Կատարյա՛լ պատիժ է։

ԱՐԿԱԴԻ, բաժակը դնելով սեղանի վրա։

Ժանգո՛տ...

Սուլելով օպերետայից մի եղանակ, գնում է իր սենյակը։

ՄԱՐԳԱՐԻՏ, մենակ։

Այս մարդը հետզհետե անտանելի է դառնում։ (Նեղացած նստում է։) *Ա՜խ..*

Վերցնում է մի ոսկեզօծ գիրք և լուռ կարդում է. հետո գլուխը ձեռքի մեջ առնելով, արմունկով հենվում է սեղանին։

ՏԵՍԻԼ Գ

ՄԱՐԳԱՐԻՏ, ՀԵՂԻՆԵ

ՀԵՂԻՆԵ, մտնում է գլխարկով իր սենյակից։

Զուշացա՞ արդյոք, Մարգարիտ։

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՛չ, ո՛չ ,հոգիս. նստի՛ր, խնդրեմ... (Սուրճ ածելով:) *Ի՞նչ արիր, ի՞նչ շինեցիր, պատմի՛ր, տեսնեմ։*

ՀԵՂԻՆԵ, վերցնելով գլխարկը:

Իսկույն, Մարգարիտս... Միայն ասա՛, ինչո՞ւ ես տխուր։

ՄԱՐԳԱՐԻՏ

Ոչինչ։

ՀԵՂԻՆԵ

Առավոտվանից արդեն նկատում եմ, որ մի բանից վշտացած ես։

ՄԱՐԳԱՐԻՏ

Ուշադրություն մի՛ դարձնիր. խնդրեմ, դու քո գործերի մասին պատմիր։

Հնչեցնում է սեղանի վրա դրած զանգակը:

ՀԵՂԻՆԵ

Օ՜, գործերս առժամանակ հիանալի են գնում. մոդա եմ ընկնում ինչպես վարժուհի. շատերն են դիմում... Կարծեմ ժամանակ չպիտի ունենամ ամենքին հասնելու։

ՄԱՐԳԱՐԻՏ

Շատ ուրախալի է, Հեղինես... Ես հավատացած էի, որ գործերդ լավ կերթան։ (Տալով ծրարը:) *Ահա՛, կարծեմ, մի հրավեր ես։* (Սեսիլին, որ մտել էր նախասենյակից:) *Պարոնի բաժակը տարե՛ք։*

Սեսիլը աչքերը վայր թողնելով, դնում է բաժակը արծաթյա փոքրիկ սկուտեղի վրա և տանում է Արկադիի սենյակը:

ՀԵՂԻՆԵ, ճամակը կարդալուց հետո:

Այո՛, հիրավի մի նոր հրավեր է... Զարմանալի երևույթ է, ճշմարիտ. կամ ամենևին ոչ ոք չէ հրավիրում, կամ հենց որ մեկը հրավիրում է, ամենքն էլ աշխատում են միմյանց առաջը կտրել... Այս ի՞նչ տեսակ բան է։

ՄԱՐԳԱՐԻՏ

Դու էլ դրանց միջից ընտրություն արա... Ավելի լավ է մարդ ընտրելու բան ունենա, քան թե ամենևին ոչինչ չունենա։

ՀԵՂԻՆԵ

Բայց ժամանակը կորչում է իզուր... Այն՝ ինչ որ կարելի է դասատան մեջ բազմաթիվ աշակերտների հետ կատարել մի ժամումք, այժմ ամբողջ օրեր կպահանջե միայն երեք-չորս աշակերտի համար։

ՄԱՐԳԱՐԻՏ

Այո՛, քեզ ուսումնարան է հարկավոր։

ՀԵՂԻՆԵ

Այո՛, ուսումնարան։ Այնտեղ ես իմ դերումն եմ, այնտեղ ես զգում եմ, թե արդարև գործ եմ կատարում. ես իմ պաշտոնիս վսեմությունը դասատան մեջ եմ միայն հասկանում... Ա՜խ, Մարգարիտ, երբ ես կանգնած եմ երեսուն-քառասուն աշակերտների առաջ, երբ նրանց վառվռուն աչքերն ինձ են նայում, երբ հարց ու փորձ անելով համոզվում եմ, որ մի ժամվա ընթացքում նրանք ամենքն էլ մի բան սովորեցին ինձանից, ես ինձ երջանիկ եմ համարում այն ժամանակ։

ՄԱՐԳԱՐԻՏ

Աստուծով կրկին կհասնես նպատակիդ։

ՀԵՂԻՆԵ

Այո, իմ կոչումը ուսումնարանի մեջ է... Ի՜նչպես լավ էի իմ պաշտոնում, ո՜րչափ երջանիկ... Բայց ի՞նչ արած, ուրիշ ելք չկար՝ պետք է կամ գաղափարներիցս հրաժարվեի, կամ պաշտոնիցս... Երեք տարվա աշխատանքս իզուր անցավ։

ՄԱՐԳԱՐԻՏ

Ափսո՛ս, շա՛տ ափսոս...

ՀԵՂԻՆԵ, աչքերը սրբելով:

Ափսո՛ս իմ հրեշտակի նման աշակերտներ... Ես նրանց այնպես էի սիրում, ինչպես իմ հարազատ քույր ու եղբայրներիս... Չէ՛, ես պետք է իմ սեփական ուսումնարանն ունենամ, որ կարողանամ առանց ուրիշի միջամտության իմ ուզած ձևն ու կերպարանքը տալ նրան։

ՄԱՐԳԱՐԻՏ

Ի սրտե ցանկանում եմ քեզ այդ բանը, խնս Հեղինե։

ՀԵՂԻՆԵ

Շնորհակալ եմ, հոգիս. այսպես թե այնպես՝ ես կհասնեմ նպատակիս... Միայն դու մի պատմի՛ր, թե ի՞նչ է պատահել քեզ... Քանի օր է նկատում եմ, որ դու թեև աշխատում ես միշտ ուրախ երևալ, բայց հետզհետե ավելի ու ավելի տխրում ես... Դու ծածկում ես ինձանից քո տխրության պատճառը. դու երջանիկ չես, Մարգարիտ։

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՜հ, թանկագին իմ Հեղինե, այո՛, դու քո առաջ տեսնում ես ամենաթշվառ մի կին։

ՀԵՂԻՆԵ

Ի՞նչպես... Մի՞թե ճշմարիտ դու անբախտ ես։

ՄԱՐԳԱՐԻՏ

Այո՛, անբախտ եմ... (Լռություն։) *Օ՜, եթե հնար լիներ ճանաչել մարդկանց այնպես, ինչպես որ նրանք են իսկապես, այն ժամանակ, կարծում եմ, աշխարհիս երեսին ոչ մի կին անբախտ չէր լինիլ... Կարո՞ղ էի արդյոք մտքովս անգամ անցկացնել, թե այն բարի, ազնիվ, համեստ երիտասարդը, որ մի քանի տարի առաջ ներկայացավ ինձ իբրև իմ փեսացու, այս անառակ, վավաշոտ, խաբեբա մարդն է, որին դու տեսնում ես այժմ որպես իմ ամուսին։*

ՀԵՂԻՆԵ, կցելով ձեռքերը և զարմացած։

Մարգարի՜տ...

ՄԱՐԳԱՐԻՏ

Մի՛ զարմանար, հոգիս, խոսքերիս մեջ չափազանցություն չկա... Ահա՛, տե՛ս՝ պարոնը նոր է զարթնում. առավոտյան ժամի չորսից հետո է տուն եկել։ Ես չեմ կասկածում, որ նա ամբողջ գիշեր անառակությամբ է անցկացրել... Այո՛, այո՛։

ՀԵՂԻՆԵ

Եվ դու չե՞ս սխալվում։

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՛չ, ո՛չ, ես գիտեմ, թե ի՛նչ եմ ասում. պարոն ամուսնուս ես լա՛վ եմ ճանաչում... (Լռություն։) *Գուցե ինձ պատիվ չէ բերում այսչափն էլ ասել, բայց եթե քեզ ես չասեմ, Հեղինե, էլ ո՞ւմ ասեմ, էլ ո՞ւմ բանամ սիրտս...*

(Ձեռքը կրծքին տանելով։) *Էլ հատա՜վ այստեղ...* (Լռություն։) *Եթե ամբողջ աշխարհն անգամ ինձ տան, էլ աչքիս ոչինչ չի երևալ...* (Արտասվում է։) *Կարծես թե ես ինձ ծախած լինեմ այս փառքին, այս հարստությանը...*

Աչքերը սրբում է։

ՀԵՂԻՆԵ

Խե՜ղճ իմ Մարգարիտ։

ՄԱՐԳԱՐԻՏ

Օ՜, Հեղինե, թե ի՜նչ տանջանքներ եմ կրել այս տանը և ի՜նչքան արցունք թափել այս ոսկե պատերի մեջ, այդ միայն աստուծուն է հայտնի...

ՀԵՂԻՆԵ

Իսկ ամբողջ հասարակությունը քեզ երջանիկ է համարում, և շատերը մինչև անգամ նախանձում են վիճակիդ։

ՄԱՐԳԱՐԻՏ, դառնությամբ։

Նախանձո՞ւմ են... հը՜մ... հասարակական կարծիքի ստրուկ եմ դարձել, Հեղինե, և ոչ մի կողմից փրկություն, չկա...

Լռություն։

ՀԵՂԻՆԵ

Բայց մեկ բան շատ է զարմացնում ինձ, Մարգարիտ. ամուսինդ, ոչքան կարողացա նկատել այս մի քանի օրս, միշտ քաղցրությամբ է վարվում հետդ... Եթե նա քեզ չսիրեր, հազիվ թե այդպես լիներ։

ՄԱՐԳԱՐԻՏ

Դիմա՛կ, դիմա՛կ, սիրելիս, բոլորը դիմակ է... Նա ինձ հետ այդպես վարվում է միայն քո ներկայությամբ, ուրիշների առաջ, հասարակության մեջ, թեև ինքն էլ լավ գիտե, որ ես իրան չեմ հավատում... Ա՜խ, նրա բարության և ազնվության այդ դիմակն էր, որ ինձ մոլորեցրեց։

ՏԵՍԻԼ Դ

ՆՐԱՆՔ, ԷԼԻԶ, ԱԲԵԼ, պաշտոնական հասարակ նշանագգեստով, պարանոցին շքանշան։

ՍՊԱՍԱՎՈՐ, ծանուցանելով։

Տիկին և պարոն Մաստակյաններ։

ՄԱՐԳԱՐԻՏ, Հեղինեին, ցածր և դժգոհ։

Ամուսնուս մտերիմ բարեկամնե՞րն են։ (Առաջ գնալով և սառը քաղաքավարությամբ։) *Համեցե՛ք։*

Սպասավորը դուրս է գնում։

ԱԲԵԼ, ձեռքին թերթապան։

Բարի օր ձեզ, տիկին։

ՄԱՐԳԱՐԻՏ, ձեռք տալով։

Բարև ձեզ, պարոն։

ԷԼԻԶ, նույնպես։

Բարև, սիրելի Մարգարիտ, ի՞նչպես ես։

ՄԱՐԳԱՐԻՏ

Շնորհակալ եմ, դու ի՞նչպես ես։

ԷԼԻԶ

Ինչպես տեսնում ես, լավ եմ։

ԱԲԵԼ

Ինչի՞ լավ չենք լինիլ, փառք աստուծո, ջաններս սա՞ղ, քեֆներս քո՞ք, հացներս բո՞լ, հա լա՛վ ենք ու լա՛վ, էլի՞։

ՄԱՐԳԱՐԻՏ, ճրավիրելով։

Համեցե՛ք, խնդրեմ։ (Մեկնելով ձեռքը դեպի Հեղինեն։) *Օրիորդ Հեղինե։*

ԱԲԵԼ

Գիտեմ, գիտեմ, ճանաչում եմ։ (Ձեռք տալով Հեղինեին, բայց խոսքերն ուղղելով Մարգարիտին։) *Այն գիշերը չէ՞ր, այն պարահանդեսի գիշերը, որ Ժողովարանում միասին ընթրիք արինք։* (Հեղինեին։) *Ապրիս, շատ ապրիս, զավակս։*

Թերթապանը դնում է աջ կողմի սեղանի վրա։

ԷԼԻԶ, ճամբուրելով Հեղինեին։

Իսկ մենք նույն գիշեր բարեկամացանք արդեն։

ՄԱՐԳԱՐԻՏ

Նստեցե՛ք, խնդրում եմ։ Մի-մի բաժակ սուրճ, եթե թույլ կտաք։

ԷԼԻԶ

Ո՛չ, շատ շնորհակալ ենք, մենք արդեն խմել ենք։

ԱԲԵԼ

Ես իմ սուրճն էլ, իմ թեյն էլ վաղուց խմել-պրծել եմ։

ՀԵՂԻՆԵ, Մարգարտին, կիսաձայն։

Ես գնամ, տեսնեմ ի՞նչ են ուզում։ (Հյուրերին։) *Ներողություն եմ խնդրում, ես ստիպված եմ գնալու։*

ԱԲԵԼ

Վա՜, մեր գալը ձեզ դուր չեկա՞վ, ի՞նչ է։

ՀԵՂԻՆԵ

Ա՜խ, ի՞նչ եք հրամայում, պարոն, ես արդեն գնալու վրա էի, երբ դուք եկաք։

ՄԱՐԳԱՐԻՏ, ճամակը տալով Հեղինեին։

Այո՛, օրիորդին ահա՛ հրավիրել են։

ԱԲԵԼ

Գնա՛, գնա՛, զավակս, շատ-ապրիս, գործիդ միշտ այդպես ա՛րի եղիր։

ՀԵՂԻՆԵ

Շատ շնորհակալ եմ, պարոն։ (Ձեռք տալով։) *Մնաք բարյավ։* (Էլիզին նույնպես։) *Ցտեսություն, տիկին, ներեցե՛ք, խնդրում եմ։* (Մարգարտին։) *Ես շուտով կվերադառնամ, Մարգարիտ։*

Գլխարկը ձեռքին գնում է իր սենյակը։

ՏԵՍԻԼ Ե

ՆՐԱՆՔ, առանց ՀԵՂԻՆԵԻ

ԱԲԵԼ

Այս ի՞նչ է նշանակում. մինչև այժմ տանն է մեր վսեմաշուք պարոնը։

ՄԱՐԳԱՐԻՏ

Այս գիշեր շատ ուշ է տուն եկել։

Հնչեցնում է զանգակը։

ԱԲԵԼ

Զարմանում եմ... Գիշերս նա մեզ մոտ էր և դեռ ժամի տասնումեկը չկար, փալ ավ. պետք է տուն գնամ, ասաց... Շա՜տ խնդրեցի, բայց չկացավ...

ԷԼԻԶ

Ո՛վ գիտե ճանապարհին ում է պատահել. դու չես ասո՞ւմ, որ գործ շատ անի։

ԱԲԵԼ

Մի պատճառ կլիներ, էլի՜։

ՄԱՐԳԱՐԻՏ

Իհարկե առանց պատճառի չէր լինիլ։ (Նորից ճնշեցնում է զանգակը. մտնում են՝ նախասենյակից սպասավորը և Հեղինեի դռնից [Ձախ կողմի երկրորդ կարգի դուռը] Սեսիլը։) *Այս ո՞ւր եք, Սեսիլ, այսքան կանչում եմ ձեզ։* (Սպասավորը դուրս է գնում։) *Հավաքեցե՛ք այս ամենը։*

ԱԲԵԼ, Սեսիլին, մինչդեռ սա հավաքում է ուրեցի բոլոր պարագաները։

Չգիտե՞ս, սիրելիս, կարելի՞ է պարոնին տեսնել. հարկավոր գործ ունիմ։

ՍԵՍԻԼ, նազով։

Չգիտեմ, պարոն։

ՄԱՐԳԱՐԻՏ, Սեսիլին։

Ասացե՛ք, որ հայտնեն պարոնին։

ՍԵՍԻԼ, ցածր։

Իսկույն, տիկին։

Սկուտեղը ձեռին դուրս է գնում նախասենյակ։
Արելը առանձին հավաքության նշան է անում Սեսիլի վերաբերմամբ։

ԷԼԻԶ, որ հետաքրքրությամբ զննում էր Սեսիլին։

Այս աղախինին նո՞ր եք վարձել... Անցյալ անգամ, կարծեմ, դա չկար։

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՛չ, կար. մեկ ամսից ավելի է մեզ մոտ է։

ՏԵՍԻԼ Զ

ՆՐԱՆՔ, ԱՐԿԱԴԻ, պաշտոնական հասարակ հագուստով, կրծքին աստղանշան, իսկ պարանոցին շքանշան։

ԱՐԿԱԴԻ

Ա՜, բարո՛վ, հազար բարի եք եկել։

Տալիս է ձեռքը նախ էլիզին և ապա Արելին։

ԱԲԵԼ

Բարով, ձերդ վսեմություն... Կես օրն անց է և դուք դեռ տա՜ն եք։ Երեկոյան մեզ մոտ ընթրիքի էլ չմնացիք. պետք է տուն գնամ, կինս մեղք է, ասում է... Այդ է՞։

ԱՐԿԱԴԻ

Հավատացե՛ք, հարգելի բարեկամս, ես ինքս էլ չէի սպասում.... Հենց ձեր տանից մի տասը քայլ հազիվ էի անցել, որ իմ լավ բարեկամներից մեկը պատահեցավ, արտասահմանից նոր էր եկել... Կամենում էի հետս տուն բերել, բայց որովհետև մի փոքր ուշ էր, մտածեցի՝ անհանգիստ չանեմ կնոջս... (Մարգարիտն ձեռք տալով։) *Ա՜խ, բարի լույս, անգինս, ի՞նչպես ես։* (Մարգարիտը լուռ ողջունում է։) *Խոսելով գնացինք հյուրանոց, ուր նա իջել էր... Դե՛հ, գիտեք էլի, երկու լավ բարեկամ որ միմյանց պատահում են, էլ վերջ չի լինում նրանց քաղցր խոսակցությանը...* (Խորհրդավոր հայացք է ձգում էլիզի վրա, որ թաշկինակով ծածկում է բերանը։) *Ժամի չորսն անց էր, որ բաժանվեցանք։*

Էլիզը թաշկինակը բերանին բռնած հագում է։

ԱԲԵԼ

Տեսե՛ք, է՜. ուղիղ ժամի չորսն էր, որ սա էլ ինձ զարթացրեց իր աղմուկով... Թրը՛խկ, թրը՛խկ... Գնացին, եկան, վայր գցեցին, կարծեքի գողեր են եկել... Դուրս նայեմ, ի՞նչ տեսնեմ. աղջիկ պարոնս մենակ բոլթա է տալիս դահլիճում... Ի՞նչ է, ի՞նչ է պատահել. սա թե՝ վախեցա, գետինը ժաժ էկավ, ասում է... Դուք իմացա՞ք գետնի ժաժ գալը... Ը՞մ, ի՞նչ գետին ժաժ գալ, ի՞նչ ֆլան, ի՞նչ ֆստան... Մի՜ ասիլ, երազումը վախեցել է աղջիկ-պարոնս, վեր է թռել հանկարծ, քնաթաթախ դուրս է ընկել դահլիճ, ես հո մյուս ծայրին եմ քնած, դիպել է աթոռին, աթոռն էլ մյուսին ու երկուսը միասին՝ շրը՛խկ, թրը՛խկ, վայր են թափվում հատակի վրա... Գետինը ժաժ էկավ, ասում է... (Ծիծաղում է։) *Այդպես որ ամեն*

ժամանակ գետինը ժաժ գա, այդ ո՞ւր կերթա, ձեզ եմ հարցնում... էլ քարը քարի վրա չի մնա, աստված է վկա։

ԷԼԻԶ, ամաչելով։

Վա՜, ես ի՞նչ անեմ, որ վախեցա։

Խորհրդավոր ճայացք է ձգում Արկադիի վրա, այդ ընթացքում է Մարգարիտը, որ սկսում է հետզհետե ավելի և ավելի հուզվել։

ԱՐԿԱԴԻ, գսպելով ծիծաղը։

Շատ բնական է, որ մարդ երազի մեջ վախենա, ի՞նչ կա որ։

ԱԲԵԼ

Է՜հ, ձերդ վսեմություն, վախենալն էլ իրանից է... Այնքան ասում եմ՝ մենակ մի՛ քնիր. գիշերն առանձին սենյակ հարկավոր չէ քեզ... բայց ո՞ւմ կհասկացնես. կինարմատի հախիցը ո՞վ կարող է գալ... Այս ամենը ձեր շնորհիվն է, ձերդ վսեմություն. չէ՞ որ դուք ես առանձին-առանձին սենյակ ունիք... Նայեց կինս և սովորեց։

ԱՐԿԱԴԻ

Է՜հ, պարոն Աբել, նոր ժամանակ, նոր սովորություններ...

ԱԲԵԼ

Դուք գիտեք, ձերդ վսեմություն... Քնելն էլ որ մոդայի տակ գցեցիք, էլ ի՞նչ բարիքի սպասի մարդ... Տեսնենք վերջն ի՞նչ է լինելու... Ես միայն այսքանը կասեմ, որ եթե սրա հավատարմության մասին բոլորովին վստահ չլինեի, մի բոպե էլ կողքիցս չէի հեռացնիլ, հավատացե՛ք ինձ։

ԷԼԻԶ

Դու հո չես կարող փոխել աշխարհի սովորությունը...

ԱԲԵԼ

Նորից մի՛ սկսիր, լա՛վ։

ԱՐԿԱԴԻ, էլիզին, որ խորհրդավոր կերպով նայում է իր ձեռքի պայուսակին։

Այդ ի՞նչ հիանալի պայուսակ է, տիկին։

Առնում է ձեռքից։

ԱԲԵԼ, էլիզին։

Մեր տատերը որ այդ չէին գործ ածում, է՜հ, հավատա՛, հարյուր տարի չէին ապրում, չէ՞։

ԷԼԻԶ

Զարմանալի դատողություն... Չգիտեմ թե պայուսակի գործածությունը ո՛ւմ ինչ վնաս կարող է տալ։

ԱՐԿԱԴԻ, իբր թե զննում է պայուսակը։

Հիանալի՜ է, հիանալի՜։

ԱԲԵԼ, էլիզին։

Ո՛վ է իմանում, հոգիս, կարելի է մեծ վնասը հենց դրա մեջն է։ (Մարգարտին, միևնույն սա և էլիզը տարբեր հուզմունքով նայում են Արկադիին, որ այս միջոցին պայուսակից մի փոքրիկ թուղթ է հանում ծածկարար։) *Կատակ չեմ անում, տիկին, այնպիսի բաներ մոդա եկան, որ էլ մարդ չէ իմանում թե ինչից է մեր կյանքը կարձանում։*

ԱՐԿԱԴԻ, թուղթը ծոցումը պահելով։

Զարմանալի լավ ճաշակ ունիք, տիկին։ (Պայուսակը վերադարձնելով էլիզին։) *Բարով վայելեք։*

ԷԼԻԶ

Մի՞թե այդքան հավանում եք։

ԱԲԵԼ, Մարգարտին, որ կուրծքը բռնած և բոլորովին զունաթափ ոտքի է կանգնել։

Տիկի՛ն... (էլիզին հրելով։) *Այս կո՛ղմը նայիր։*

ԱՐԿԱԴԻ, էլիզին։

Հիանալի՜ է, հիանալի՜... (Մարգարտին։) *Ի՞նչ եղավ, սիրելիս, ի՞նչ պատահեցավ։*

ՄԱՐԳԱՐԻՏ, սաստիկ հուզված։

Ո՛չինչ, ո՛չինչ... (Աբելին։) *Ներողություն, պարոն, ես տկար եմ։*

ԱԲԵԼ

Խնդրում եմ, տիկին։

ՄԱՐԳԱՐԻՏ, սիրտը բռնած գնում է. ետո, առանձին, դառն հեգնությամբ։

Հիանալի՜ է, հիանալի՜...

Գնում է իր սենյակը, բոլորեցյան շվարվում են։

ԱՐԿԱԴԻ, անմիջապես։

Կացե՛ք, դո՛ւք կացեք։

Շտապով հետևում է Մարգարտին։

ԷԼԻԶ. առանձին։

Արդյոք բան նկատե՞ց։

ԱԲԵԼ

Այս ի՞նչ է նշանակում։

Էլիզը ճանկռած մագում է դեպի Արկադին, որ վերադառնում է։

ԱՐԿԱԴԻ, դռներում։

Ո՛չինչ, ո՛չինչ, հանգի՛ստ եղեք։

ԷԼԻԶ, Արկադիին, ցածր։

Կարելի է տեսա՞վ։

ԱՐԿԱԴԻ, նույնպես։

Ո՛չ, նրան այդպես պատահում է երբեմն։ (Բարձր։) *Ներեցե՛ք, ես իսկույն կվերադառնամ։ Նստեցե՛ք, խնդրեմ։*

Հետ է գնում։

ՏԵՍԻԼ Ե

ԱԲԵԼ, ԷԼԻԶ

ԱԲԵԼ

Ցավագար է եղել խեղճը։

ԷԼԻԶ

Ո՛չ թե ցավագար, այլ իստերիկա ասա՛։

ԱԲԵԼ

Ում ինչ պատահի, քեզ համար բոլորն էլ իստերիկա է։

ԷԼԻԶ

Ո՞ր բժշկին կամենաս հարցրու։

ԱԲԵԼ

Իստերիկան ի՞նչ բան է, ասա՛, խնդրեմ... Ի՞նչ հիմար անուն ասես բժիշկները կհնարեն... Ցավը ցավ է, հիվանդությունն էլ հիվանդություն։ Հետը խոսելիս էլ պարզ տեսնում էի, որ գունաթափվում էր... Ինչի՞ դու չես գունաթափվում այդպես կամ ինչի՞ դու չունիս այդ իստերիկան, եթե լավ բան է։

ԷԼԻԶ

Աստված մի՛ արասցե։

ԱԲԵԼ

Այո՛, ես քեզ ասում եմ, մոդնի բաներից ձե՛ռք վերցրու, եթե ոչ մեկ օր քեզ էլ կպատահի այդ իստերիկա է, ինչ զա՛հրումար է։

ԷԼԻԶ

Վա՜յ, անիծում ե՞ս։

ԱԲԵԼ

Ընդհակառակը, իմ սիրուն թոչնակս, ես քեզ խրատում եմ. այդ իմ պարտավորությունն է... Օրինակ՝ ի՞նչ է ավելանում, որ անունդ դրել ես Էլիզ... Մկրտությանդ անունը Եղիսաբեթ է, Եղիսաբեթ էլ կա՛ց քեզ համար. եթե ոչ, ի՞նչ է՝ Էլիզ, Էլիզ... քաղցրություն ես ուզո՞ւմ, ահա՛ քեզ՝ Եղսո, կամ Սաբեդ... Ա՛րի Սաբեդ դառիր, եթե ուզում ես։

ԷԼԻԶ

Լվացարա՞ր եմ, ի՞նչ է։

Գնում է և Մարգարտի սենյակի դռնից ծածուկ նայում։

ԱԲԵԼ, առանձին։

Ինչի՞ցն է, որ կանայք այսպես հետաքրքիր են։

Հետևում է կնոջ օրինակին։

ԷԼԻԶ, ուրախ։

Նա բոլորովին առողջ ման է գալիս։

ԱԲԵԼ

Է՜հ, փա՛ռք աստուծո... Երանի մի շուտով այն մարդը դուրս գար, (Թերթապահից մի ծուար հանելով։) *մեկ այս ցավից ազատվեի։*

ԷԼԻԶ

Սպասի՛ր մի փոքր, ի՞նչ եղավ քեզ։

ԱԲԵԼ

Ինչպես կհրամայես, իմ սիրելի Սաբեդ։

Առանձին, ծիծաղելով երեսը ծամածռում է։

ԷԼԻԶ

Ես քեզ հրամայում եմ, որ այսուհետև չհամարձակվիս Սաբեդ ասել ինձ։

ԱԲԵԼ

Լա՛վ, լա՛վ, ներիր, մի՛ բարկանար, իմ անգին Էլիզ, մա՞ շե՞ր Էլիզ... Դու գիտես, որ ես քեզ շատ եմ սիրում և ոչինչ չեմ խնայիլ քեզ համար... Ես պատրաստ եմ գլուխս քեզ մատաղ անել։

ԷԼԻԶ

Իհարկի գիտեմ և հենց դրա համար էլ քո մեկ մազը ամբողջ աշխարհի հետ չեմ փոխիլ։

ԱԲԵԼ, գրկելով։

Իմ աղավնյա՛կս... իմ հրեշտա՛կս...

ԷԼԻԶ, ազատվելով։

Գալիս են, գալիս...

ՏԵՍԻԼ Ը

ՆՐԱՆՔ, ԱՐԿԱԴԻ

ԱՐԿԱԴԻ, ծափահարելով։

Ապրի՛ք, ապրի՛ք, կեցցե՛ք։

ԷԼԻԶ, Աբելին, ցածր։

Խայտառակեցիր։

ԱՐԿԱԴԻ

Ո՛րչափ հաճելի է սիրով ամուսիններ տեսնելը։

ԱԲԵԼ, փոքր ինչ շվարված։

Է՜հ, ի՞նչ անենք, ձերդ վսեմություն, շատ մարդ սովորություն ունի՝ ուրիշի կնկան է գրկում, այս մեկն էլ իմ կնկան ես ինքս լինիմ գրկած, ի՞նչ կա որ։

ԱՐԿԱԴԻ

Կատարելապես իրավունք ունիք, բարեկամս։

Հանդիմանական հայացք է ձգում Էլիզի վրա։

ԷԼԻԶ, հայացքով հանգստացնում է Արկադիին։

Ի՞նչպես է Մարգարիտս։

ԱՐԿԱԴԻ

Փառք աստուծո... Մի քիչ կողքը ցավում էր, բայց անցավ։ Երևի մրրսել է։ (Աբելը շարժվածքով հիշեցնում է Էլիզին, որ իենն ուղիղ էր նկատել, թե Մարգարիտը հիվանդ է։) *Միայն ներողություն է խնդրում, որ չէ կարող դուրս գալ... Ես ինքս առաջարկեցի, որ փոքր ինչ հանգստանա։*

ԱԲԵԼ

Մենք հս օտարներ չենք. ձերդ վսեմություն. թո՛ղ հանգստանա, ավելի լավ։

Մոտենում է սեղանին և զբաղվում է ծրարով։

ԷԼԻԶ. Արկադիին, ցածր։

Ուրեմն ոչինչ չէ՞ նկատել։

ԱՐԿԱԴԻ, նույնպես։

Հա՛նգիստ եղիր... (Աբելին, բարձր։) *Այդ ի՞նչ է, սիրելիս։*

Էլիզը մի կողմը քաշվելով, զբաղվում է ալբոմով։

ԱԲԵԼ

Ձեր վսեմությանը հայտնի բարեգործության համար հավաքած։

ԱՐԿԱԴԻ, բնդմիջելով։

Գիտեմ, գիտեմ...

ԱԲԵԼ, ծրարը տալով Արկադիին, ցածր։

Բոլորն այդտեղ է՝ փողն էլ, հաշիվներն էլ։

ԱՐԿԱԴԻ, ծրարը դնելով ծոցը:

Լա՜վ, լա՜վ...

ԱԲԵԼ, Արկադիին, ծածուկ:

Ես իմ մասն արդեն վերցրել եմ։

ԱՐԿԱԴԻ

Շատ բարի... Ես այսօրևեթ կհրամայեմ, որ բոլոր գործերը վերջացնեն... Ուրիշ ի՞նչ կա այդտեղ թերթապահում։

ԱԲԵԼ

Ամենահարկավոր պաշտոնական թղթեր են, ձերդ վսեմություն։

ԱՐԿԱԴԻ

Թո՛ղեք այստեղ, ես շուտով կվերադարձնեմ... Այդպե՛ս, այդպե՛ս՝ թերթապահով։

ԱԲԵԼ

Եթե թույլ կտաք, ձեր սենյակը կտանեմ։

ԱՐԿԱԴԻ

Ա՜խ, դուք ինչի՞ եք նեղություն կրում։

ԱԲԵԼ

Ի՞նչ եք հրամայում, ձերդ վսեմություն, ի՜նչ նեղություն։

Թերթապահը ձեռքին դուրս է գնում աջ դռնից:

ԷԼԻԶ, վազելով դեպի Արկադին, ցածր:

Ես կարծում եմ, որ բռնվեցանք։

ԱՐԿԱԴԻ

Ո՛չ, ասում եմ. միա՜միտ եղիր... (Ձեռքը տանելով ծոցը:) *Այս ի՞նչ ես գրել։*

ԷԼԻԶ

Կկարդաս, կիմանաս...

ԱՐԿԱԴԻ, ծոցից հանելով թուղթը:

Ի՞նչ գաղտնիք է։

ԷԼԻԶ

Ա՜, խնդրեմ։

Վազում է դեպի ալբոմը և առաջվա դիրքն ընդունում:

ԱԲԵԼ, վերադառնալով:

Բոլորը կարգով դարսեցի սեղանի վրա։

ԱՐԿԱԴԻ, պահելով թուղթը:

Շա՜տ շնորհակալ եմ։

ԱԲԵԼ

Ցարժե, ձերդ վսեմություն։

ՏԵՍԻԼ Թ

ՆՐԱՆՔ, ՀԵՂԻՆԵ

ԱՐԿԱԴԻ, Հեղինեին, որ մտնում է իր սենյակից:

Ա՜, օրիորդ Հեղինե, բարև ձեզ... Ի՞նչպես եք, այսօր դեռ չենք տեսնվել։

ՀԵՂԻՆԵ

Շատ շնորհակալ եմ, պարոն. դո՞ւք ինչպես եք։

ԱՐԿԱԴԻ

Ինչպես տեսնում եք, օրիորդ, ես միշտ լավ եմ, միշտ առողջ, միշտ էլ ուրախ... Կարծեմ, տիկնոջը և բարեկամիս ճանաչում եք։

ՀԵՂԻՆԵ

Այո՛, պարոն, փոքր ինչ առաջ մենք արդեն տեսնվեցանք այստեղ։

ԱԲԵԼ, Արկադիին:

Շատ լավ բան եք արել, ձերդ վսեմություն, որ օրիորդին ձեզ մոտ եք ընդունել։ Այսպիսի վտանգավոր ժամանակ, երբ ամեն մի քայլափոխում մի-մի գայլի է հանդիպում մարդ, ձեզ պես տեր ունենալը մեծ բախտ է (Հեղինեին:) *Այո՛, օրիորդ։* (Էլիզին:) *Է՛հ, գնանք, հոգիս, ժամանակ է* (Արկադիին:) *Ներողություն։*

ԱՐԿԱԴԻ

Իսկույն, իսկույն։ (Սեղմում է էլեկտրական ճնշակի կոճակը։) *Մեր կառքով գնացեք, խնդրում եմ։*

ԷԼԻԶ, կեղծելով։

Ինչի՞ եք նեղություն քաշում, պարոն, շատ շնորհակալ ենք, այնպես էլ կերթանք, հեռու չենք։

ԱՐԿԱԴԻ

Հատուկ խնդրում եմ։

ԱԲԵԼ

Ճշմարիտ, իզուր նեղություն եք կրում, ձերդ վսեմություն. չէ՞ որ դուք ես գնալու եք շուտով։

ԱՐԿԱԴԻ, սենյակի ժամացույցին նայելով։

Օ՜, ես դեռ բավական ժամանակ ունիմ... (Ներս մտնող սպասավորին։) *Տիկնոջը և պարոնին մեր կառքով թո՛ղ տանեն։*

Սպասավորը գլուխ է տալիս և դուրս է գնում։

ԷԼԻԶ, առանձին, շեշտելով։

Շա՛տ շնորհակալ ենք, որ այդպես պատվում եք մեզ... (Ձեռք տալով։) *Մնաք բարյավ. մեզ մի՛ մոռանաք, խնդրում եմ։* (Հեղինեին, համբուրելով։) *Ցտեսություն, օրիորդ...*

ՀԵՂԻՆԵ

Ցտեսություն, տիկին։

ԱԲԵԼ, ձեռք տալով։

Մնաք բարյավ, օրիորդ... Ո՛ղջ և առողջ լինե՛ք, ձերդ վսեմություն։

ԷԼԻԶ, ամուսնու թևն առնելով, Հեղինեին։

Մարգարտիս լա՛վ պահեցեք։ (Արկադիին։) *Հույս ունիմ՝ այս անգամ երկար սպասել չեք տալ մեզ։*

ԱՐԿԱԴԻ, ուղեկցելով։

Անչափ բարի եք, տիկին։

Էլիզն ու Աբելը դուրս են գնում։

ՀԵՂԻՆԵ, ԱՐԿԱԴԻ

ՀԵՂԻՆԵ

Մարգարիտս ո՞ւր է։

ԱՐԿԱԴԻ

Իր սենյակումն է։ (Հեղինեն կամենում է գնալ։) *Սպասեցե՛ք, օրիորդ։*

ՀԵՂԻՆԵ

Ի՞նչ կհրամայեք։

ԱՐԿԱԴԻ

Նստեցե՛ք, խնդրեմ, օրիորդ, արդյոք գո՞հ եք ձեր սենյակից։

ՀԵՂԻՆԵ

Ես շատ գոհ եմ, պարոն, իմ սենյակից և անչափ շնորհակալ եմ ձեր հյուրասիրությունից։

ԱՐԿԱԴԻ

Ի՞նչ եք հրամայում, օրիորդ, այդ իմ պարտականությունն է։ Դուք այնպիսի սուրբ գործի եք ծառայում, որ մարդ ինչ էլ կատարի ձեզ համար, դարձյալ քիչ է... Տարածել լույս և գիտություն մատաղ սերնդի մեջ, պատրաստել հասարակության համար բարոյապես զարգացած մայրեր... Մի՞թե սրանից էլ ավելի վսեմ աշխատանք կա աշխարհիս երեսին... Օ՜, ես սաստիկ հարգում եմ լուսավորությունը և, հավատացե՛ք, գիտեմ գնահատել ձեզ նման աշխատավորներին... Ձեր կոչումը, օրիորդ, վսեմ է և սուրբ. ես խոնարհվում եմ այդ կոչման առաջ և երջանիկ կլինեի, եթե կարողանայի մի կերպ հաճելի դառնվել ձեզ։

ՀԵՂԻՆԵ

Դուք չափից դուրս բարի եք, պարոն, շատ շնորհակալ եմ։

ԱՐԿԱԴԻ

Օ՜, օրիորդ, իմ կնոջ սրտակից բարեկամուհու համար ես ոչինչ չեմ խնայիլ, հավատացե՛ք... Ես շատ եմ սիրում կնոջս, շա՜տ, և այդ պատճառով սիրում և հարգում եմ ամենին, ով նրան սիրում է... Խեղճը հիվանդոտ է, տեսնում եք. միշտ տխուր, միշտ սիրտը ծածկված... Չգիտեմ, ի՞նչ անեմ, ի՞նչպես ուրախացնեմ... ոչինչ չէ հաջողվում ինձ... Այս մի

քանի օր է միայն, որ ես նրա երեսին երբեմն ժպիտ եմ նշմարում... Ուրեմն դուք ինքներդ կարող եք դատել, թե ո՛րքան պիտի գոհ լինիմ, որ դուք մեզ մոտ եք... Ասված կվարձատրե ձեզ ձեր բարի, ազնիվ սրտի համար։ (Ժամացույցին նայելով։) *Սակայն ժամանակ է...* (Տալով ձեռքը։) *Հատուկ ներողություն եմ խնդրում, օրիորդ, պաշտոնական գործերս սահմանում են ինձ ձեզ թողնելու։ Ցտեսություն, օրիորդ։*

Թողնում է ձեռքը։

ՀԵՂԻՆԵ

Ցտեսություն, պարոն։

ԱՐԿԱԴԻ, գնալով, մեկուսի։

Օ՜, ո՛րպիսի գեղեցիկ աչքեր...

Դուրս է գնում։

ՏԵՍԻԼ ԺԱ

ՀԵՂԻՆԵ, մենակ։

Ես այլևս ոչինչ չեմ հասկանում... Մի՞թե Մարգարիտը սխալվում է... (Կամենում է մտնել Մարգարտի սենյակը։) *Դուռը փակած է։* (Կամաց բախում է դուռը, լսվում է Մարգարտի ձայնը... *Ո՞վ է...) Ես եմ։* (Դարձյալ Մարգարտի ձայնը՝ *Իսկույն)։*

ՏԵՍԻԼ ԺԲ

ՀԵՂԻՆԵ, ՄԱՐԳԱՐԻՏ

ՄԱՐԳԱՐԻՏ, զգուշությամբ դուրս նայելով։

Դու մենա՞կ ես։

ՀԵՂԻՆԵ, ապշած։

Այո՛։

ՄԱՐԳԱՐԻՏ, աչքերը սրբելով։

Ամե՞նքը գնացին։

ՀԵՂԻՆԵ

Այո՛, ամենքը։ (Մարգարիտը նստում է և կրկին աչքերը սրբում։) *Բայց դու ինչո՞ւ ես լաց լինում... Կրկին մի նոր վի՞շտ։* (Լռություն։) *Ինչո՞ւ ոչինչ չես խոսում։* (Նստելով կողքին, առնում է ձեռքը։) *Ասա՛, հոգիս, ասա՛, ի՞նչ է պատահել. չէ՞ որ ես քո Հեղինեն եմ, դու ինձանից ոչինչ չունես ծածկելու...* (Թողնելով ձեռքը։) *Բավական է, Մարգարիտս, բավական. հանգստացի՛ր, աղաչում եմ... Երևի քեզ վշտացրել են։*

ՄԱՐԳԱՐԻՏ

Շա՜տ, շա՜տ...

ՀԵՂԻՆԵ

Ո՞վ... ամուսի՞նդ։

ՄԱՐԳԱՐԻՏ

Ամուսի՜նս... Վաղուց է որ ես նրան ճանաչել եմ. նրա արարմունքն ինձ չի վրդովեցնում այլևս... Բայց երբ քեզ խաբում է քո ընկերուհին, որի հետ դու երեխա մեծացել ես, որին դու քույր էիր համարում միշտ... Ա՜խ... (Շարժվածքով արտահայտում է վերին աստիճանի հուսահատություն։) *Իզուր չէր կասկածս...* (Հեղինեն ապշում է։) *Թողնենք, թողնենք խնդրում եմ... Ես այժմ ոչինչ չեմ կարող ասել... Ես սաստիկ անպատված եմ... բոլոր ցավս արտահայտել անկարող եմ... Ես կխեղդվեմ պատմելիս... Ինձ հիմարի տեղ են ընդունում... ինձ կույր են համարում...*

ՀԵՂԻՆԵ

Հանգստացի՛ր, Մարգարիտս, աղաչում եմ, հանգստացի՛ր։

ՄԱՐԳԱՐԻՏ, Հեղինեի ձեռքը բռնելով։

Այո՛, այո՛, քույրիկ, այո՛, հոգիս, ես բոլորը կպատմեմ քեզ, բոլորը. այժմ ների՛ր։

ՀԵՂԻՆԵ

Լա՛վ, լա՛վ, հանգստացի՛ր միայն, հետո իհարկե կպատմես. այժմ ուրիշ բան խոսենք։

ՄԱՐԳԱՐԻՏ

Այո՛, ուրիշ բան, ուրիշ բան... Թո՛ղ մտքիցս հեռանան այն զզվելի տեսարանները... (Բռնելով Հեղինեի թևը, նրա հետ միասին լուռ մաճ է գալիս ծանր քայլերով և տխրադեմ, հեռու բեկված ձայնով։) *Դու ի՞նչ արիր։*

ՀԵՂԻՆԵ

Շատ խիստ պահանջներ են առաջարկում, Մարգարիտ. երեք երեխա, առավոտները դասեր զանազան առարկաներից, նրանց հետ միասին ճա-

չել, իսկ երեկոյան՝ զբոսանք։ Այդ շատ ծանր է ինձ համար... Ուրեմն պետք է ամբողջ օրս նրանց նվիրեմ։

ՄԱՐԳԱՐԻՏ

Հետո համաձայնեցի՞ր։

ՀԵՂԻՆԵ

Ո՛չ, մերժեցի։

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՞րքան գոհ եմ, Հեղինե, որ մերժել ես... Այլևս անկարող եմ առանց քեզ ապրել... Բացի քեզանից էլ ոչ ոք չունիմ։

ՀԵՂԻՆԵ

Իսկ ես ո՞վ ունիմ բացի քեզանից։

ՍՊԱՍԱՎՈՐ

Տիկին, մի անծանոթ գինվորական է։

Արծաթե փոքրիկ սկուտեղով առաջարկում է մի այցետոմս:

ՄԱՐԳԱՐԻՏ, հուզվելով վերցնում է այցետոմսը:

Արտա...շես Արա---մյան... (Սպասավորին:) *Խնդրի՛ր։* (Սպասավորը դուրս է գնում:) *Ա՜խ, Հեղինե, ես այսպես...*

ՀԵՂԻՆԵ

Ի՞նչ պատահեցավ քեզ, Մարգարիտ. դու բոլորովին գունատվեցար։

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՞վ, ե՞ս... Մի՞թե...

ՀԵՂԻՆԵ

Այո՛, այո՛, հոգիս։

ՄԱՐԳԱՐԻՏ

Ա՜խ, նա բարձրանում է։

ՀԵՂԻՆԵ

Իսկ ես փախչում եմ։

ՄԱՐԳԱՐԻՏ

Սպասի՛ր, սպասի՛ր, խնդրում եմ։

ՀԵՂԻՆԵ

Ես գործ ունիմ։

ՄԱՐԳԱՐԻՏ

Մի քանի րոպե միայն...

ՀԵՂԻՆԵ

Կուշանամ, Մարգարիտ։

ՄԱՐԳԱՐԻՏ

Ազաչում եմ... Ես իսկույն... դո՛ւ ընդունիր...

Դուրս է վազում իր սենյակը։

ՏԵՍԻԼ ԺԳ

ՀԵՂԻՆԵ, ԱՐՏԱՇԵՍ

ՍՊԱՍԱՎՈՐ, ծանուցանելով:

Պարոն Արտաշես Արամյան։

ԱՐՏԱՇԵՍ

Բարև ձեզ, օրիորդ։

Սպասավորը դուրս է գնում:

ՀԵՂԻՆԵ

Բարև, պարոն։ (Միմյանց ձեռք են տալիս:) *Նստեցե՛ք, խնդրեմ, տիկին Մարգարիտն իսկույն դուրս կգա։*

Նստում են:

ԱՐՏԱՇԵՍ

Գո՞ւցե ես անհարմար ժամանակ եմ եկե

ՀԵՂԻՆԵ

Ընդհակառակը, պարոն Արտաշե՛ս... Վաղուց է որ սպասում էինք ձեզ և ձեր բարեկամին... Ինչո՞ւ նա էլ ձեզ հետ շնորհ չբերեց։

ԱՐՏԱՇԵՍ

Ներողություն, օրիորդ, պարահանդեսի երկրորդ օրը գյուղացիք տարան նրան մի կարևոր գործի համար և ահա մինչև այժմ դեռ չէ վերադարձել... Այսօր ես ևս թողնում եմ Թիֆլիզը։

ՀԵՂԻՆԵ

Մի՞թե։

ԱՐՏԱՇԵՍ

Այո՛, օրիորդ, ստիպված եմ... եկել եմ հրաժեշտիս ողջույնը տալու ձեզ և տիկին Մարգարտին։ (Նկատելով պատկերակալի վրա դրած նկարը, հանկարծ:) *Ա՜խ... ներեցե՛ք, խնդրեմ...* (Մոտենում է նկարին:) *Սա տիկնոջ նկարածը պետք է լինի։*

ՀԵՂԻՆԵ

Այո՛, պարոն Արտաշես. այդ նկարը ներկայացնում է այն պարտեզը, ուր Մարգարիտս անց է կացրել իր մանկությունը։

ԱՐՏԱՇԵՍ

Այո՛, այո՛, ծանոթ է ինձ... Ո՜հ, ո՜րքան քաղցր հիշողություններ...

ՏԵՍԻԼ ԺԴ

ՆՐԱՆՔ, ՄԱՐԳԱՐԻՏ, զգեստը փոքր ինչ կարգի բերած:

ՄԱՐԳԱՐԻՏ

Պարոն Արտաշես, բարև ձեզ։

ԱՐՏԱՇԵՍ

Բարև ձեզ, տիկին... (Միմյանց ձեռք են տալիս:) *Ես հիացած նայում էի ձեր նկարին։*

ՄԱՐԳԱՐԻՏ

Օ՜, այդ մի չնչին բան է։ (Հրավիրելով:) *Համեցե՛ք, նստեցե՛ք, խընդրեմ։* (Նստում են:) *Իսկ պարոն Լևոնն ո՞ւր է. չէ՞ որ դուք խոստացաք միասին գալ։*

ԱՐՏԱՇԵՍ

Այո՛, տիկին, բայց նա գնաց գյուղ և դեռ երևի ուշ կվերադառնա։

ՀԵՂԻՆԵ

Գիտե՞ս, Մարգարիտ, պարոն Արտաշեսը գնում է։

ՄԱՐԳԱՐԻՏ

Մի՞թե...

ԱՐՏԱՇԵՍ

Այո՛, տիկին, ես հենց այսօր գնալու եմ. եկել եմ ձեզ բարև-մնաք ասելու։

ՄԱՐԳԱՐԻՏ

Մի՞թե այդպես շուտ... Եվ երկա՞ր կտևի ձեր բացակայությունը։

ԱՐՏԱՇԵՍ

Չգիտեմ, տիկին, այդ կախված է հանգամանքներից. գուցե մի քանի շաբաթ ուշանամ։

ՄԱՐԳԱՐԻՏ

Իսկ ձեր նոր վե՞պը... Շարունակո՞ւմ եք արդյոք։

ԱՐՏԱՇԵՍ

Ի՜նչպես չէ, տիկին, բոլոր ազատ ժամերս նրան եմ նվիրում։

ՄԱՐԳԱՐԻՏ

Հաջողություն եմ ցանկանում... (Լռություն:) *Այդպե՞ս... Գնո՞ւմ եք ուրեմն...*

ՀԵՂԻՆԵ, տեղից վեր կենալով:

Ներողություն եմ խնդրում, պարոն Արտաշես, ստիպված եմ, դասի եմ գնալու։

ԱՐՏԱՇԵՍ, նույնպես:

Ա՜, խնդրեմ, օրիորդ։

ՀԵՂԻՆԵ, ձեռք տալով Արտաշեսին։

Բարով գնաք, բարով գաք... Եթե պարոն Լևոնին տեսնեք, ինձանից շատ բարև արեք։

ԱՐՏԱՇԵՍ

Անշուշտ, օրիորդ, ես նրա գյուղովն եմ անցնելու։

Հեղինեն ողջունում է և գնում իր սենյակը:

ՏԵՍԻԼ ԺԵ

ՄԱՐԳԱՐԻՏ, ԱՐՏԱՇԵՍ

ԱՐՏԱՇԵՍ, նստելով:

Ճշմարիտ որ շատ համակրելի օրիորդ է... Բարեկամս իզուր չէ այնպես հրապուրվել։

ՄԱՐԳԱՐԻՏ

Իրա՞վ... Ուրեմն պարոն Լևոնը հավանո՞ւմ է Հեղինեին։

ԱՐՏԱՇԵՍ

Այո՛, տիկին, շատ է հավանում։

ՄԱՐԳԱՐԻՏ

Հեղինեն էլ հաճախ է մտաբերում նրան... Փոխադարձ համակրանք...

ԱՐՏԱՇԵՍ

Իսկ ես համոզված եմ, տիկին, որ բարեկամս մինչև անգամ սիրում է օրիորդին։

ՄԱՐԳԱՐԻՏ

Այդպե՛ս... Տա աստված... Երկուսին էլ սքտանց երջանկություն եմ ցանկանում։

ԱՐՏԱՇԵՍ

Երբ երկու սիրտ իրար հասկանում են և գնահատում, երջանկությունն այնքան էլ հեռու չէ նրանցից...

ՄԱՐԳԱՐԻՏ, հոգվոց հանելով:

Այո՛, եթե միայն այդ սրտերը անհաղթելի արգելքների չեն հանդիպում...

Աշխատում է մի կերպ ծածկել հուզմունքը:

ՏԵՍԻԼ ԺԶ

ՆՐԱՆՔ, ԱՐԿԱԴԻ

ՄԱՐԳԱՐԻՏ

Ամուսի՛նս...

ԱՐԿԱԴԻ, գալով դռից, առանձին, դժգոհ:

Դարձյալ այս զինվորականը... (Առաջ գալով:) Ա՜, պարոն Արամյան... (Արտաշեսը ոտի է կանգնում:) Շա՜տ ուրախ եմ... (Միմյանց ձեռք են տալիս:) Նստեցե՛ք, խնդրեմ։ (Նստում են:) Ի՞նչպես եք, ի՞նչպես է ձեր առողջությունը։

ԱՐՏԱՇԵՍ, սառը քաղաքավարությամբ:

Շնորհակալ եմ, պարոն, դո՞ւք ինչպես եք։

ԱՐԿԱԴԻ

Ես միշտ լավ եմ, փառք աստուծու։ Եթե բժիշկներն իմ հույսով մնային, քաղցած կմեռնեին... Շատ ուրախ եմ, շա՜տ, ձեզ իմ տանը տեսնելով... Ձեր հայրենասիրության և քաջության մասին շատ գովասանքներ եմ լսում։

ԱՐՏԱՇԵՍ

Թողնենք այդ, պարոն։

ԱՐԿԱԴԻ

Օ՜, ես շատ եմ սիրում քաջ և մանավանդ հայրենասեր երիտասարդներին։ Արդարև ես ինքս ձեզ պես քաջագործություններ արած չեմ, բայց իմ հայրենասիրական... զգացմունքներս ուրիշներից պակաս չեն, հավատացե՛ք... Ձեռքիցս եկածը չեմ խնայիլ իմ պաշտելի հայրենիքիս համար...

ԱՐՏԱՇԵՍ

Օ՜, պարոն, ես այդ մասին չեմ կասկածում։

ԱՐԿԱԴԻ

Եվ ատելով ատում եմ այն մարդկանց, որոնք միայն իրանց համար են ապրում... Ուտում են, խմում, զվարճանում, իսկ ժողովրդի բարօրության մասին բնավ չեն էլ մտածում։ Այդպիսիների համար երկրորդական բաներ են՝ ազգ, հայրենիք, մարդկություն... Կան նաև այնպիսիները, պարոն, որ ձեր առաջ ձևանում են ամենաջերմ ազգասեր, ընտիր հայրենասեր, մարդասեր և էլ չգիտեմ թե ինչասեր, միով բանիվ՝ իբրև շատ և շատ բարձր գաղափարների տեր մարդիկ. բայց լա՜վ խմացած եղեք, պարոն, որ այդ բոլոր գեղեցիկ բառերը նրանք գործ են ածում որպես զենք՝ միայն միամիտներին շլացնելու համար։ Մեկ կոպեկ շահի համար նրանք պատրաստ են տասն անգամ ծախել իրանց ազգն էլ, հայրենիքն էլ...

ԱՐՏԱՇԵՍ

Շա՜տ ճշմարիտ եք ասում, պարոն. բայց ի՞նչպես զանազանենք արդարը խաբեբայից, քանի որ խաբեբաների հատուկ սովորությունն է միշտ արդարի դիմակով երևալ։

ՄԱՐԳԱՐԻՏ

Եվ ամենավտանգավոր մարդիկը հենց դրանք են, որ իրանց արատները վարպետությամբ ծածկում են առաքինության քողի տակ։

ԱՐԿԱԴԻ

Ա՜խ, ազնիվ ընկերս, դու տկար էիր, մոռացա հարցնել առողջության մասին... Ների՛ր, խնդրում եմ. ի՞նչպես ես այժմ, լա՞վ ես։

ՄԱՐԳԱՐԻՏ, մեղմորեն:

Իմ մասին մի՛ հոգար, ես շատ լավ եմ։

ԱՐԿԱԴԻ

Շատ ուրախ եմ. ես շարունակ քեզ վրա էի մտածում, սիրելիս։ (Արտաշեսին:) *Դուք ևս շատ ուղիղ եք դատում, պարոն։ Այո՛, մի փոքր դժվար է խաբեբաներին իսկույն ճանաչել...* (Սոցի ժամացույցին նայելով, Մարգարտին:) *Հիանալի եղանակ է, սիրելիս. կամենո՞ւմ ես մի փոքր մաքուր օդ ծծել. կառքը պատրաստ է։*

ՄԱՐԳԱՐԻՏ, ճանգիստ:

Շնորհակալ եմ. ես այսօր դիտավորություն չունիմ տանից դուրս գալու։

ԱՐԿԱԴԻ

Բայց առողջությո՛ւնդ, սիրելիս, առողջությո՛ւնդ... Ես շատ ցավում եմ, որ դու բոլորովին արհամարհում ես քո առողջությունը... Այսպիսի եղանակին քեզ հարկավոր է բացօթյա զբոսանք։

ԱՐՏԱՇԵՍ, վեր կենալով:

Ես ձեզ արգելք չլինիմ։

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՛չ, ո՛չ, պարոն Արտաշես, նստեցե՛ք, խնդրում եմ...

ԱՐԿԱԴԻ

Այո՛, պարոն, նստեցե՛ք, նստեցե՛ք, խնդրում եմ... (Ինքը ոտքի է կանգնում:) *Տիկինը կարող է գնալ էլ, գալ էլ, իսկ մենք կարող ենք խոսել, դատել, վիճել, ինչքան կամենանք։*

ԱՐՏԱՇԵՍ

Շատ շնորհակալ եմ, պարոն, հատուկ պարտավորեցնում եք ինձ... (Հեգնորեն:) *Ձեր առանձին ուշադրությամբ, բայց ներողություն եմ խնդրում, ժամանակ է։*

ԱՐԿԱԴԻ, նույնպես հեգնելով:

Ափսոսում եմ, շա՛տ ափսոսում եմ, հավատացե՛ք ինձ... Գիտեմ, որ դուք սաստիկ զբաղված եք և բոլորովին ժամանակ չունիք ունայն այցելություններով պարապելու, այնուամենայնիվ, խնդրում եմ, երբ ազատ լինիք ձեր ծանր գործերից, երբեմն-երբեմն մե՛ղ ևս մտաբերեք... իմ տան դռները միշտ բաց են, պարոն, ազնիվ մարդկանց համար, մանավանդ... Կնո՛ջս բարեկամների համար։

Մարգարիտը՝ այս միջոցին սաստիկ նուզված, կսկծված, ջուր է ածում և խմում։

ԱՐՏԱՇԵՍ, Արկադիին, հեգնորեն:

Ջափից դուրս բարի եք... (Գնում է դեպի Մարգարիտը և մեղմորեն:) *Մնա՛ք բարյավ, տիկին...*

ՄԱՐԳԱՐԻՏ, Արտաշեսի ձեռքը բռնած։

Հույս ունիմ, պարոն Արտաշես, որ դուք դարձյալ կայցելեք մեզ...

Թողնում է ձեռքը և ուղեկցում է:

ԱՐԿԱԴԻ, նույնպես ուղեկցելով:

Այո՛, այո՛, ես ևս խնդրում եմ։

ԱՐՏԱՇԵՍ, հեգնորեն:

Օ՜, ձեր սիրալիր ընդունելությունը, պարոն, ես երբեք չեմ մոռանալ... (Մարգարտին:) *Մնա՛ք բարյավ...*

Դուրս է գնում:

ՄԱՐԳԱՐԻՏ, ԱՐԿԱԴԻ

ԱՐԿԱԴԻ, երկար լռությունից հետո, մինչդեռ Մարգարիտը դժգոհությամբ նայում էր նրան:

Ասա՛, խնդրեմ, ի՞նչ է նշանակում այս բոլոր կատակերգությունը։

ՄԱՐԳԱՐԻՏ, առաջ գալով:

Այդ հարցն ի՞նձ է վերաբերում... ի՞նձ։

ԱՐԿԱԴԻ

Այո՛, քե՛զ, քե՛զ. մի՞թե պարզել է հարկավոր... Հանկարծ հիվանդանում ես, ամբողջ տունը տակնուվրա է լինում, գործերս համարյա անկատար եմ թողնում քեզ համար, վազում եմ տուն. և ի՞նչ եմ տեսնում. հիվանդս հանգիստ նստած՝ ամենասիրալիր ընդունելություն է ցույց տալիս մի բախտախնդիր զինվորականի, որ չգիտեմ՝ ո՛վ է կամ ի՞նչ է։

ՄԱՐԳԱՐԻՏ

Նա իմ մանկության բարեկամն է, ես արդեն ասել եմ քեզ։

ԱՐԿԱԴԻ

Բարեկա՛մ, բարեկա՛մ... Երևի բարեկամից էլ մեկ բան ավելի է, որ հիվանդությո՛ւնդ անգամ մոռացել ես նրա համար։

ՄԱՐԳԱՐԻՏ

Դուք ինձ վիրավորում եք, պարոն, բայց իզուր. ես արդեն այստեղ էի Հեղինեի հետ, երբ նա եկավ։

ԱՐԿԱԴԻ

Եվ դու, տիկին, հարկավոր համարեցիր ընդունել նրան, լավ իմանալով, որ այդ ինձ դուր չի գալ։

ՄԱՐԳԱՐԻՏ

Ի՞նչ եք կամենում ասել։

ԱՐԿԱԴԻ

Նոր ոչինչ. այսօր բարեկամ, վաղը երկրպագու և վերջիվերջո խայտառակություն... Միշտ այդպես է լինում։

ՄԱՐԳԱՐԻՏ

Երկնքից չե՞ք վախենում, որ այդպիսի մեղադրանք եք բարձում ինձ վրա... Դուք անպատվում եք ինձ, պարոն։

ԱՐԿԱԴԻ

Օ՜հ, մեծ-մեծ խոսքերդ մի կո՛ղմ դիր... Ինձ խաբելը հեշտ չէ. ես շատ բան եմ տեսել կյանքումս։

ՄԱՐԳԱՐԻՏ, դառն նեգնությամբ:

Եվ շատ բան էլ փորձել եք իհարկե։

ԱՐԿԱԴԻ, բարկացած:

Այո՛ և փորձել եմ, եթե կամենում ես... Օ՜, ես ոչ ոքի չեմ թույլ տալ, որ մեկ մաղի չափ անգամ արատավորի իմ պատիվը... Այսուհետև թո՛ղ չհամարձակվի այդ պարոնը իմ տունը մտնել։

ՄԱՐԳԱՐԻՏ

Դուք այնքան քաղաքավարի վարվեցաք նրա հետ, որ հազիվ թե նա մեր դռնովն անգամ անցնի երբևիցե։

ԱՐԿԱԴԻ

Շատ լավ էլ արի։ սի՛ռոդ ցավեց, հա՜... (Բարկացած ման է գալիս:) *Գոնե ավելի քաղաքավարի, քան թե դու՝ իմ բարեկամներիս հետ... Համարյա վիրավորված գնացին այստեղից...* (Հանկարծ կանգ առնելով, խփում է ճակտին:) *Ա՜...* (Լռություն, հետո ծիծաղում է:) *Հասկացա, հասկացա, ա՛յժմ հասկացա...* (Կանգնում է Մարգարտի առաջ և գլուխը շարժում:) *Դո՜ւք, տիկին, սպասում էիք նրան և սուտ հիվանդացաք, որ ինձ և իմ բարեկամներին շուտով հեռացնեք այստեղից...* (Մարգարիտը՝ ձեռքերը միացնելով, զարհուրած նայում է Արկադիին:) *Այո՛, այո՛, այլևս կասկած չկա...* (Հեգնությամբ:) *Օ՜, ի՞նչ խորամանկություն...* (Հեգնորեն ծիծաղում է:) *Բայց այդպես չէ, տիկին, ես ձեզ երկուսիդ միասին կոչնչացնեմ, մինչև որ դուք հնար կգտնեք ինձ խայտառակելու...*

ՄԱՐԳԱՐԻՏ

Բա՜վական է, պարոն, բա՜վական է... Ձեզ խայտառակողը ձեր վարմունքն է... Ձեր չափով մի՛ չափեք ուրիշներին։

ԱՐԿԱԴԻ, բարկացած:

Ի՞նչպես, ի՞նչպես եք համարձակվում այդպես խոսել հեռու։

ՄԱՐԳԱՐԻՏ

Այլևս վերջացա՞վ... Գնացե՛ք, գնացե՛ք, պարոն, բարեկամուհիս սպասում է ձեզ և ա՛յս գիշեր։

ԱՐԿԱԴԻ

Ի՞նչ բարեկամուհի, ի՞նչ եք բարբաջում։

ՄԱՐԳԱՐԻՏ

Այդ դուք լա՛վ գիտեք, պարոն, ինչպես և ե՛ս...

ԱՐԿԱԴԻ

Սո՛ւտ եք խոսում, սո՛ւտ, տիկին... Լռեցե՛ք։

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՛չ, պարոն, ո՛չ բավակա՛ն է, ի՛նչքան լռեցի. այժմ ամբողջ աշխարհի առաջ պետք է աղաղակեմ... Թո՛ղ ամենքն իմանան ձեր վարմունքը, թո՛ղ ամենքը լսեն, թե ի՛նչ օրեր եմ քաշել ես ձեր ձեռքին, ի՛նչքան արտասուք թափել այս պատերի մեջ...

ԱՐԿԱԴԻ

Դուք խելագարվել եք, տիկին... Հեռացե՛ք այստեղից։

ՄԱՐԳԱՐԻՏ

Խելագարվե՞լ եմ (Ծիծաղում է։) *Ո՛չ, պարոն, ո՛չ, ես այժմ եմ միայն արթնանում... Կես ժամ առաջ ձեր սիրահարական սխրագործությունները ակամա վկա լինելով, քիչ էր մնում ամոթից մեռնեի։*

ԱՐԿԱԴԻ, բերանը փրփրած։

Սո՛ւտ է, սո՛ւտ... Հեռացե՛ք աչքիցս, ասում եմ, ապա թե ո՛չ՝ այս բոպեիս կսպանեմ ձեզ։

ՄԱՐԳԱՐԻՏ

Սպանեցե՛ք ու վերջացրեք. գոնե մեկ անգամից կազատվեմ այս տանջանքներից։

ԱՐԿԱԴԻ

Օ՜, այդ արդեն չափից դուրս է, տիկին... (Ձայրացած մաճ է գալիս։) *Այս ամենը ես պարտական եմ այն անիծյալ զինվորականին...* (Հանկարծ հարձակվելով սեղանի զանգակին, բոլոր ուժով զանգահարում է։ Զանազան դռներից շտապով ներս են մտնում Սեսիլն ու սպասավորը։) *Ես ձեզ խստիվ հրամայում եմ, որ այսուհետև չհամարձակվեք ընդունել այն բախտախնդիր զինվորականին... միևնույն է՝ նա ինձ հարցնի, թե տիկնոջը։*

Սեսիլն ու սպասավորը շվարվում են։

ՄԱՐԳԱՐԻՏ, զսպելով իրան և բոլորովին գունաթափ։

Այո՛, պարոնի հրամանը կատարեցեք խստությամբ, ես ևս հրամայում եմ... (Մեկնելով ձեռքը դեպի դուռը։) *Հեռացե՛ք...* (Սեսիլն ու սպասավորը դուրս են գնում։ Լռություն։ Սասիլիկ վրդովված և արտասուքից խեղդվելով։) *Շա՜տ շնորհակալ եմ, պարոն... Ա՛յս էլ իմ այսքան տարվա տանջանաց վարձատրությունը... Այսուհետև ես մի անարժան կին եմ ձեզ համար... Այս օրվանից ամենայն ինչ վերջացավ մեր մեջ... Ահա՛...* (Պարանոցից կտրում է մանյակը։) *Առե՛ք այն շղթան, որով ինձ կապել կաշկանդել էիք այսքան տարիներ...* (Մանյակը շպրտում է։) *Ո՜հ, աստվա՛ծ ամենակարող...*

Դուրս է գնում իր սենյակը։
Արկադին մնում է ապշած։

ԱՐԱՐՎԱԾ ԵՐՐՈՐԴ

Միևնույն տեսարանը. պակասում է միայն պատկերակալն իր նկարով։

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ԱՐԿԱԴԻ, ԱԲԵԼ

ԱՐԿԱԴԻ, մաճ գալով։

Ո՛չ, ո՛չ, պարոն Աբել, խոսքս խոսք է. ես նրան գլխագիր չեմ տալ, մինչև որ այդ թղթին չստորագրեն։

ԱԲԵԼ, մի ծալած թուղթ ձեռքին։

Ձեր կամքն է, տեր, միայն թե...

ԱՐԿԱԴԻ

Այո՛, այո՛, այդպես է... Տարե՛ք այդ թուղթը և մի կե՛րպ աշխատացեք, որ ստորագրեն։

ԱԲԵԼ, փոքր լռությունից հետո։

Մինչև օրս, ձերդ վսեմություն, բոլոր ձեր հրամանները միշտ կատարել եմ սրբությամբ, այժմս էլ պատրաստ եմ կատարել և ներկա հանձնարարությունը. սակայն ես ինձ թույլ եմ տալիս նկատել, որ եթե կարողանայիք մի կերպ հաշտվել տիկնոջ հետ, ճշմարիտ, ավելի լավ կլիներ։

ԱՐԿԱԴԻ

Անհնարին է, պարոն Աբել, մեր մեջ հաշտություն չի կարող կայանալ. անունս ու պատիվս խայտառակեց նա... Հը՞, թշվառական...

ԱԲԵԼ

Ի՞նչ արած, ձերդ վսեմություն, էլի դուք պետք է ներողամիտ լինիք... Չէ՞ որ նա ձեր կինն է... Մի՞թե այս լավ է՝ ահա՛ երեք ամիս է ամբողջ քաղաքը ձեզ վրա է խոսում։

Թուղթը դնում է սեղանի վրա։

ԱՐԿԱԴԻ

Թո՛ղ խոսեն, ո՛րքան կամենան։

ԱԲԵԼ

Դարձյալ ձեզ է վնաս, ձեր անունն է վնասվում, ձերդ վսեմություն... (Արկադին նստում է և գլուխը ձեռքի մեջ առնում։) *Ինձանից ձեզ խրատ չի հասնիլ իհարկե, բայց ձեր բարին ցանկանալով, ինչպես և միշտ, ես համարձակվում եմ հայտնել իմ կարծիքը... Միայն չբարկանաք, ի սեր աստուծո։*

ԱՐԿԱԴԻ

Շարունակեցե՛ք, շարունակեցե՛ք, խնդրեմ։

Ձեռքի նշանով հրավիրում է նստել։

ԱԲԵԼ, նստելով։

Այո՛, վսեմափայլ տեր... Ի՞նչքան էլ կինը պակասություն ունենա, ինչքան էլ մեղավոր լինի նա, դարձյալ ամուսնու ո՛չ թե սոսկ պարտավորությունն է միայն, այլև նրա ամենամեծ արժանավորությունը... լռել և միշտ լռել այդ մասին։ Հակառակ դեպքում նա իր սեփական պակասությունը խոստովանած կլինի, իր մեղապարտությունը, իր թերությունը... (Արկադին գլուխը կամաց-կամաց շարժելով, մեկուսի ժպտում է։ Լռություն։) *Համարձակությանս համար ներողություն եմ խնդրում ձեր վսեմությունից. միայն ես աններելի հանցանք կհամարեի, եթե իմ սրտիս խորհուրդը ծածկեի ձեզանից...* (Արկադին գլուխը ձեռքի մեջ, աումնկով նեռված է սեղանին։ Երկար լռություն։) *Ձեր մեծահոգությանն եմ դիմում, ձերդ վսեմություն... Եթե թույլ կտաք, տիկնոջը ես շուտ կհամոզեմ, միայն թե դուք համաձայնեիք հաշտվել հետը։*

ԱՐԿԱԴԻ

Իզուր կլինի ձեր աշխատանքը, սիրելիս... (Ոտքի է կանգնում, Աբելը նմանապես։) *Եթե ես ուզեմ էլ հետը հաշտվել, նա ինքը չի կամենալ. ես*

Նրան լավ եմ ճանաչում... Այն կապը, որ մեզ կապում էր, խորտակված է հավիտյան. այժմ մնում է մեզ ձևակերպել մեր իրավունքները և օրինական ընթացք տալ մեր ներկա կացությանը։ (Աբելը վերցնելով բուղթը, կամենում է կարդալ։) *Տարե՛ք, տարե՛ք այդ թուղթը... այնտեղ կկարդաք, տարե՛ք։*

ԱԲԵԼ

Ես իմ պարտքս կատարեցի, ձերդ վսեմություն. այժմ կանեմ, ինչ որ հրամայում եք։

Թուղթը դնում է բերբապահի մեջ։

ԱՐԿԱԴԻ

Աշխատեցե՛ք շուտով վերադառնալ։

ԱԲԵԼ

Անպատճառ, ձերդ վսեմություն։

Մի քանի քայլ գնում է։

ԱՐԿԱԴԻ

Սպասեցե՛ք, պարոն Աբել... Այս ծրարը կհանձնեք իրան։ (Մոցից հանում է մի փոքրիկ ծրար և տալիս է նրան։) *Տասը հազարի ստանագիր է բանկից իր անունով. թո՛ղ բարով վայելե... Իսկ եթե այդքանն էլ քիչ է, կարող եք դարձյալ խոստանալ... Բայց ո՛չ, փողի մասին ո՛չ մի խոսք. նա կարող է վիրավորվել... Միայն ա՛յդ տվեք, այդ ծրարը, և չմոռանաք հասկացնել նրան, որ մինչև հանցանքն իր վրա չառնե, գլխագիր չի ստանալ երբեք։*

ԱԲԵԼ

Գիտեմ, ձերդ վսեմություն։

Ծրարը դնում է ծոցը։

ԱՐԿԱԴԻ

Դե՛հ, շո՛ւտ, պարոն Աբել, ի սեր աստուծո, շո՛ւտ. ես կսպասեմ անհամբեր։ Պետք է մտածենք և վկաների մասին։

ԱԲԵԼ

Կես ժամից հետո այստեղ կլինիմ, ձերդ վսեմություն։

Թերբապահը ձեռքին գնում է։ Երկրորդ արարվածի սպասավորը բերում, առաջարկում է Արկադիին մի այցետոմս։

ԱՐԿԱԴԻ, հրճվանքով։

Վարդուհի Վարվառյա՞ն... Մի՞թե... Նա ի՞նքը...

ՍՊԱՍԱՎՈՐ

Այո՛, ձերդ վսեմություն։

ԱՐԿԱԴԻ, Աբելին։

Կացե՛ք, կացե՛ք, պարոն Աբել։ (Սպասավորին։) *Գնա՛, խնդրիր խնդրե՛. ուրիշ ոչ ոքի չես ընդունիլ։* (Սպասավորը դուրս է գնում։) *Դուք, պարոն Աբել, ա՛յն կողմից գնացեք...* (Ցույց է տալիս ձախ կողմի երկրորդ կարգի դուռը։) *Թո՛ղ նա ձեզ չտեսնի։*

Այցետոմսը ձեռքին շտապով գնում է իր սենյակը։

ԱԲԵԼ, հետևից։

Հա՛նգիստ եղեք։ (Մենակ։) *Օհո՛, գնամ կնոջս թազա խաբար ասեմ։*

Դուրս է գնում ցույց տված դռնից։

ՏԵՍԻԼ Բ

ԱՐԿԱԴԻ, զգեստը փոխած, հետո ՎԱՐԴՈՒՀԻ

ԱՐԿԱԴԻ, մենակ ձեռքին անուշահոտ ջրի շիշ սրսկիչով (Pulvérisateur), իր սենյակի դռնում, հրամայում է։ *Սո՛ւրբը չմոռանաք...* (Սրսկում է օդի մեջ և ինքը նրա տակ շուռումուռ է գալիս. հետո գնում է և նախասենյակի դռնից նայում։) *Գալիս է...* (Առաջ գալով և ձեռքը տանելով սրտին։) *Ի՞նչպես սիրտս բաբախում է, կարծես տասն և յոթը տարեկան պատանի լինիմ...* (Սրսկիչը պահում է, հետո Վարդուհուն, որ մտնում է նախասենյակից։) *Բարև, բարև ձեզ, պաշտելի իմ տիկին.. ամբողջ երեք ամիս է ձեզ տեսնելու բախտ չեմ ունեցել։*

ՎԱՐԴՈՒՀԻ, տալով ձեռքը։

Բարև ձեզ, բարեկամ... Մի քանի օր է միայն, որ ամառանոցից վերադարձել եմ...

ԱՐԿԱԴԻ

Համեցե՛ք, նստեցե՛ք, խնդրեմ։

ՎԱՐԴՈՒՀԻ, նստելով։

Շնորհակալ եմ... ի՞նչպես եք։

ԱՐԿԱԴԻ

Փա՛ռք աստուծու։ Դուք ի՞նչպես եք, տիկին։

ՎԱՐԴՈՒՀԻ

Ինչպես տեսնում եք, լավ եմ։ (Ցայց տալով աթոռը։) *Ինչի՞ եք կանգնած մնացել։*

ԱՐԿԱԴԻ, նստելով։

Այս ի՞նչ բարեհաջող դիպվածով, տիկին, շնորհ եք արել ինձ մոտ գալ։

ՎԱՐԴՈՒՀԻ

Ինչի՞ եք զարմանում, վսեմափայլ պարոն, մի՞թե ես չեմ կարող գործ ունենալ։

ԱՐԿԱԴԻ

Իհարկե կարող եք, հրաշալի իմ տիկին, բայց դուք ինչո՞ւ էիք նեղություն կրում... Մի՞թե չէիք կարող հրամայել. ես ինքս ձեզ մոտ կգայի։

ՎԱՐԴՈՒՀԻ

Հավատացած եմ, որ ձեր վսեմությունն ինձ շատ է հարգում, բայց գործը խիստ կարևոր է և շտապողական, դրա համար էլ ինքս եկա։

ԱՐԿԱԴԻ

Հրամայեցե՛ք, տիկին. ինչ որ ձեռքիցս գա, չեմ խնայիլ։

ՎԱՐԴՈՒՀԻ

Օ՜, այդ ես լավ գիտեմ։ Մեկ օր ինձ հավատացնում էիք, որ ձեր կյանքն էլ չեք խնայիլ ինձ համար. բայց լեզուն շատ բան կասի իհարկե։

ԱՐԿԱԴԻ

Սրտա՜նց, սրտա՜նց, տիկին, հավատացնում եմ, սրտա՜նց... Եթե ինձ հրամայեք գնալ ջուրն ընկնել, իսկույն կերթամ ջուրը կընկնեմ։

ՎԱՐԴՈՒՀԻ, ծիծաղում է։

Ուրեմն՝ իսկո՛ւյն գնացեք և ջո՛ւրն ընկեք։

ԱՐԿԱԴԻ, ոտքի կանգնելով։

Գնա՞մ։

ՎԱՐԴՈՒՀԻ, ժպտալով։

Գնացե՛ք, այո՛, գնացե՛ք։

ԱՐԿԱԴԻ

Տեսե՛ք, տիկին, կերթամ. հավատացնում եմ ձեզ, կերթամ։

ՎԱՐԴՈՒՀԻ

Հրամայում եմ։

ԱՐԿԱԴԻ

Ո՜հ, քարասիրտ... Ահա՛, մնա՛ք բարյավ հավիտյան։ (Գնում է մինչև նախասենյակի դուռը, հետո վերադառնալով։) *Բայց ո՜չ, ձեզ մենակ թողնել չեմ կարող։*

ՎԱՐԴՈՒՀԻ, երեսը բարձրացնում։

Նստեցե՛ք, պարոն, նստեցե՛ք... Ես ձեզ քանի-քանի անգամ ասել եմ՝ մի՛ արտասանեք այնպիսի խոսք, որը կատարել չեք կարող։

ԱՐԿԱԴԻ

Ահա՛, դարձյալ չեք հավատում, տիկին։

ՎԱՐԴՈՒՀԻ

Հավատում եմ, հավատում, պարոն, դիցուք թե շատ էլ հավատում եմ. բայց ջուրն ընկնելու պետք չկա... Իմ խնդիրքը ոչինչ զոհաբերություն չէ պահանջում և նրա կատարելն էլ շատ հեշտ է... Միայն մի խոսք է հարկավոր ձեր կողմից... (Ձեռքի պայուսակը բանալով։) *Բայց դուք ինչի՞ եք այդքան հեռու նստել... Նստեցե՛ք այստեղ...* (Կոտրտվելով։) *Մո՜տիկ, մո՜տիկ... Մի՛ վախենաք, ես ձեզ կուլ չեմ տալ։*

ԱՐԿԱԴԻ, մոտենալով։

Ա՜խ, տիկին, խելքից հանում եք ինձ։

ՎԱՐԴՈՒՀԻ, ճեռանալով։

Օ՜հ, օ՜հ, ձերդ վսեմություն, մի փոքր հեռու, խնդրում եմ։

ԱՐԿԱԴԻ, օրինավոր նստելով։

Ահա՛, տիկին... Հրամայեցե՛ք, ի՞նչ եք կամենում։

ՎԱՐԴՈՒՀԻ

Շատ չնչին բան ձեզ համար... Ձեր խոսքն ամեն տեղ անցնում է. անչափ ծանոթներ ու բարեկամներ ունիք դուք... (Պայուսակից հանելով մի հեռագիր:) *Արտասահմանից մի քանի կտոր թավիշ են ուղարկել ինձ և ահա՛, ինչպես հեռագրում են Բաթումից, իմ արկղիկը պետք է որ այս գիշեր այստեղ լինի...* (Տալով հեռագիրը:) *Ինչպես էլ լինի, պետք է վաղը իմ ձեռքը հասնի այդ, էլ մաքսատանը երկար չպահեն։*

ԱՐԿԱԴԻ, աչքի անցնելով հեռագիրը:

Իրա՛վ որ շատ չնչին բան է եղել... Ես էլ մտածում էի թե ի՞նչ կարող է լինել։

ՎԱՐԴՈՒՀԻ

Ներեցե՛ք, անհանգիստ եմ անում ձեզ։

ԱՐԿԱԴԻ

Ա՜խ, ի՞նչ եք ասում, տիկին, իմ բոլոր հանգստությունս ձեր չա՞ր տանի. այդ ի՞նչ խոսք է։

ՎԱՐԴՈՒՀԻ

Դուք մարմնացած քաղաքավարություն եք, պարոն։

ԱՐԿԱԴԻ

Օ՜, չափից դուրս բարի եք, տիկին։

ՎԱՐԴՈՒՀԻ

Ես ճշմարիտն եմ ասում։ (Վեր կենալով:) *Ուրեմն վաղը կստանա՞մ։*

ԱՐԿԱԴԻ, նույնպես:

Ա՛նպատճառ, ա՛նպատճառ, աննման իմ տիկին։

Սեղմում է էլեկտրական հնչակի կոճակը.

ՎԱՐԴՈՒՀԻ

Շատ շնորհակալ եմ, շա՜տ, պարոն Արկադի. հատուկ պարտավորեցնում եք ինձ։ Ուղիղն ասեմ՝ այսպիսի մի չնչին բանի համար ես ձեզ նեղություն չէի տալ, բայց քույրս վաղը անպատճառ գնալու է Բաքու. ես շատ գոհ կլինեի, եթե կարողանայի անձամբ իրան հանձնել իր մասը։

ԱՐԿԱԴԻ

Հա՜նգիստ եղեք, տիկին, ես ինքս կբերեմ ձեր արկղիկը։

ՎԱՐԴՈՒՀԻ

Ո՜չ, նեղություն մի՛ քաշեք, պարոն, կարող եք ուղարկել... Թեև ես շատ ուրախ կլինեի ձեզ իմ տանը տեսնել։

ԱՐԿԱԴԻ

Ի՜նչ նեղություն... Այս րոպեիս ինձ նման երջանիկ մարդ չկա աշխարհումս։

Կրկին սեղմում է հնչակի կոճակը:

ՎԱՐԴՈՒՀԻ

Մի՞թե։

ԱՐԿԱԴԻ

Հավատացնում եմ, տիկին։ (Սպասավորին, որ ներս է մտնում մեծ սկուտեղով բերում է պատվիրած սուրճը և պաֆսիմատ, ցածր:) *Ինչի՞ ուշացրիր։* (Վարդուհուն, մինչդեռ սպասավորը սկուտեղը դնում է սեղանի վրա և բաժակները կարգի բերում:) *Թույլ կտա՞ք ինձ, տիկին, մի բաժակ սուրճ առաջարկել ձեզ։*

ՎԱՐԴՈՒՀԻ, քրքվելով:

Չգիտեմ, ճշմարիտ, ի՞նչ պատասխանեմ... Դուք այնքան բարի եք դեպի ինձ, որ մերժել չեմ վստահանում։

ԱՐԿԱԴԻ

Կատարելապես երջանկացնում եք ինձ, տիկին։ (Սպասավորին:) *Էա՛վ, գնա՛, ես ինքս կպատրաստեմ։* (Սպասավորը դուրս է գնում: Վարդուհուն արդեն առաջարկելով սուրճի սեղանի մոտ:) *Համեցե՛ք, խնդրում եմ։*

ՎԱՐԴՈՒՀԻ, նստելով:

Շնորհակալ եմ... Այս մի բաժակն ի՞նչ գեղեցիկ է... Երևի ձեր սովորական բաժակն է։

ԱՐԿԱԴԻ, պատրաստելով սուրճը:

Ո՜չ, տիկին, ես դրանով երբեք չեմ խմում։

ՎԱՐԴՈՒՀԻ

Երևելի՞ բաժակ է... (Հանկարծ:) *Ա՛յդպես չէ, պարոն, ա՛յդպես չէ. թողե՛ք ես պատրաստեմ։* (Ոտքի կանգնելով:) *Դուք նստեցե՛ք, խնդրեմ։*

ԱՐԿԱԴԻ

Ի՜նչքան բարի եք, տիկին։

Նստում է։

ՎԱՐԴՈՒՀԻ, հեգնորեն։

Եվ միշտ այդպե՞ս եք պատրաստում ձեր սուրճը։

ԱՐԿԱԴԻ

Ո՛չ, տիկին, սպասավորն է հոգում։

ՎԱՐԴՈՒՀԻ, ածելով սուրճը։

Սպասավորը՞... Խե՜ղճ մարդ, մեղքս գալիս եք, ճշմարիտ...
Ահա՛, այդպե՛ս իմացեք տանտիկնոջ արժեքը... (Տալով նրան գեղեցիկ բաժակը։) *Համեցե՛ք։*

ԱՐԿԱԴԻ, առնելով բաժակը։

Օ՜, տիկին... (Համբուրում է Վարդուհու ձեռքը և բաժակը նրան առաջարկում։) *Հատուկ խնդրում եմ։*

ՎԱՐԴՈՒՀԻ, նստելով։

Շնորհակալ եմ... (Արկադին իր համար վերցնում է մյուս բաժակը։) *Այո՛, ես ձեզ խորհուրդ եմ տալիս, գնացե՛ք, ձեր կնոջ ձեռքը համբուրեցե՛ք... Բավական է ինչքան խռով մնացիք. խնդրեցե՛ք, որ գա ձեզ տերություն անի։*

ԱՐԿԱԴԻ

Ո՛չ, ո՛չ, տիկին, մեր մեջ ամեն բան վերջացած է։

ՎԱՐԴՈՒՀԻ

Է՜հ, բարեկամ, մարդ ու կնոջ մեջ այդ տեսակ թյուրիմացություններ շատ է պատահում... Մի քանի ժամանակից հետո դարձյալ այնպես կապրեք միասին, ինչպես ապրել եք... Հետևապես՝ որքան շուտ, այնքան լավ երկուսիդ համար էլ... Գնացե՛ք, գնացե՛ք, սի՛րտն առեք... Դուք ի՜նձ լսեցեք, ես ձեզ վատ խորհուրդ չեմ տալիս։

ԱՐԿԱԴԻ

Ա՜խ, տիկին, ի՜նչ եք հրամայում. ես հենց այս րոպեիս սպասում եմ նրա խոստովանությանը։

ՎԱՐԴՈՒՀԻ

Ի՞նչ խոստովանություն։

ԱՐԿԱԴԻ

Որ նա՛ է պատճառը մեր բաժանման և որ բոլոր հանցանքը նա իր վրա է առնում։

ՎԱՐԴՈՒՀԻ

Ի՞նչպես... Չէ՞ որ օրենքով այդպիսի գործերում սեփական խոստովանությունը ոչինչ նշանակություն չունի։

ԱՐԿԱԴԻ

Այո՛, բայց երբ վկաները հաստատում են, հարցը փոխվում է։

ՎԱՐԴՈՒՀԻ

Այդ ես բոլորովին չեմ հասկանում... Եթե վկաներ ևս կան, էլ ի՞նչ հարկավոր է մեղապարտի հանձնառությունը։

ԱՐԿԱԴԻ

Բանն էլ այն է, տիկին, որ այս գործում վկա գտնելն անհնարին է, եթե ինքը՝ հանցանք ընդունողը, հոժար չէ... Օ՜, ես այս խնդիրը լիովին ուսումնասիրել եմ... Այս միշտ այսպես էլ կատարվում է ամենուրեք։

ՎԱՐԴՈՒՀԻ

Ուրեմն, ինչպես երևում է, կատակ չէ՞ այդ ամենը։

ԱՐԿԱԴԻ

Մի անգամ բաժանվելուց հետո՝ էլ կատակը ո՞րն է։

ՏԵՍԻԼ Գ

ՆՐԱՆՔ, ՍՊԱՍԱՎՈՐ

ԱՐԿԱԴԻ, տեսնելով սպասավորին, որ մի այցետոմս ձեռքին, Վարդուհուց ծածուկ նշան է անում։

Ի՞նչ կա։ (Դեմ է վազում։) *Ես քեզ ասացի՛ չ, որ ո՛չ ոքի չընդունես...։* (Վերցնելով այցետոմսը, մեկուսի։) *Էլի զ...*

Մնում է շվարված։

ՍՊԱՍԱՎՈՐ

Շտապեցե՛ք, ձերդ վսեմություն, մեծ աստիճանավոր է, սպասում է ձեզ ներքև, նախասենյակում։

ԱՐԿԱԴԻ, սպասավորին, ցածր։

Անիծյա՜լ։ (Վերադառնում է դեպի Վարդուհին։) *Ա՜խ, տիկին, հատուկ ներողություն եմ խնդրում, մի բոպե թո՛ւյլ տվեք ինձ... Պաշտոնական ամենահարկավոր գործի են եկել։*

ՎԱՐԴՈՒՀԻ

Խնդրեմ, ձերդ վսեմություն, իմ մասին անհանգիստ մի՛ լինեք։

ԱՐԿԱԴԻ

Ա՜նչափ բարի եք, տիկին։

Դուրս է վազում. սպասավորը հետևում է նրան։

ՏԵՍԻԼ Դ

ՎԱՐԴՈՒՀԻ, մենակ. փոքր լռությունից հետո աջ ցուցամատը նակատին տանելով։ *Վարդուհի՛, զգո՛ւյշ...* (Հանկարծ ոտքի է կանգնում, առանց տեղից շարժվելու նայում է հայելու մեջ, գլխարկը ծռում և կրկին նըստում։ Հետո լսելով դրսի դռան ձայնը, տեղից վեր է բռնում, վազում է դեպի լուսամուտը և ձգձգվելով դուրս նայում։) *Ո՞վ էր... Ափսո՛ս չտեսա։*

Շտապով վերադառնում է իր տեղը և առաջվա դիրքն ընդունում։

ՏԵՍԻԼ Ե

ՎԱՐԴՈՒՀԻ, ԱՐԿԱԴԻ

ԱՐԿԱԴԻ, վերադառնալով, մեկուսի։

Ո՜ւֆ, ազատվեցա... (Վարդուհուն։) *Հատուկ ներողություն եմ խընդրում, տիկին... Հազիվ ազատվեցա. պաշտոնատեր մարդը ինքն իրան չէ պատկանում, ի՜նչ արած։*

ՎԱՐԴՈՒՀԻ

Հասկանալի է... Միայն շատ եմ ցավում, որ ձեր թանկագին ժամանակը խլեցի և արգելք եղա ձեր գործերին... (Վեր կենալով։) *Մնա՛ք բարյավ։*

ԱՐԿԱԴԻ

Ես այժմ բոլորովին ազատ եմ, հավատացե՛ք... Մնացե՛ք մի փոքր ևս, խնդրում եմ... Այդպես շուտ մի՛ խլեք ինձանից այս երջանկությունը... Աղաչում եմ ձեզ, տիկին։

ՎԱՐԴՈՒՀԻ

Բայց ժամանակ է, պարոն։

ԱՐԿԱԴԻ

Գուցե կբարեհաճեք, տիկին, պարտեզը տեսնել... Հազվագյուտ ծաղիկներ կան։

ՎԱՐԴՈՒՀԻ

Շատ շնորհակալ եմ, պարոն, մի ուրիշ անգամ։ (Հայելում նայելով։) *Ա՜խ, այս ի՜նչպես է ծռվել գլխարկս։* (Վերցնելով գլխարկը։) *Կներեք ինձ՝ մի փոքր ուղղեմ։*

ԱՐԿԱԴԻ

Խնդրեմ, տիկին, համարեցե՛ք թե ձեր տանն եք։

ՎԱՐԴՈՒՀԻ

Բայց դուք այս կողմը չնայեք, ա՛յ։ (Իբր թե գնդասեղներն ամրացնում է։ Հանկարծ երկար ու նիհանալի մազերը թափվում են ուսերի վրա։) *Ա՜խ, ներողություն եմ խնդրում, այս ի՜նչ անքաղաքավարություն է իմ կողմից։*

ԱՐԿԱԴԻ

Մարդասպանությո՛ւն ասացեք, տիկին։ (Վարդուհին հետ է նայում և ճնշությամբ սպառնում է մատով։) *Ի՜նչ կամենաք, արե՛ք. այլևս չեմ կարող դիմանալ...*

Վրա է բռնկում և ստեպ-ստեպ համբուրում է մազերը։

ՎԱՐԴՈՒՀԻ

Պարո՛ն, պարո՛ն, ի՞նչ եք անում, ի՞նչ եք անում... (Մազերը բռնելով հետ է քաշվում։) *Դուք ձեզ մոռանում եք...*

ԱՐԿԱԴԻ, շարունակելով համբուրել մազերը և ուսերը։

Օ՜, իմ թագուհի, իմ միակ աստվածուհի...

ՎԱՐԴՈՒՀԻ

Ա՜խ, բավակա՜ն է, խնդրեմ...

ԱՐԿԱԴԻ

Ո՜չ, ո՜չ, էլ ձեռք չեմ վերցնիլ ես ձեզանից... Բավակա՜ն է ինչքան տանջեցիք ինձ... Այսուհետև դուք իմն եք, ես ձերը...

Գրկած համբուրում է:

ՎԱՐԴՈՒՀԻ

Ա՜խ... (Իր թե աշխատում է ազատվել:) *Թողե՛ք, թողե՛ք... Օգնություն կկանչեմ... Ա՜... ա՜... ա՜խ...*

Սուտ ուշաթափվելով հետ է ընկնում Արկադիի թևի վրա:

ԱՐԿԱԴԻ

Իմ հրեշտա՜կ, իմ հոգյա՜կս... (Համբուրում է:) *Այսուհետև պետք է միասին ապրենք, միասին մեռնենք։*

ՎԱՐԴՈՒՀԻ, իր նոր ուշքի գալով:

Ա՜խ, թողե՛ք, թողե՛ք... (Ազատվում է Արկադիի գրկից:) *Շա՜տ շնորհակալ եմ, պարոն... Այս անպատվությունը ես երբեք չէի սպասիլ ձեզանից...* (Մազերը նավամեջով:) *Լա՜վ դաս տվիք դուք ինձ.... Ա՜յդպես է ուրեմն...* (Սուտ լաց լինելով:) *Մի օրինավոր կին իրավունք չունի ծանոթ մարդու մոտ գործի գնալ...* (Գլխարկը ծածկում է և կեղծ լացով:) *Օ՜հ, ես հիմարս...*

Ընկնում է աթոռի վրա և հեկեկալով սուտ լաց է լինում:

ԱՐԿԱԴԻ, նստելով մոտը:

Հանգստացե՛ք, տիկին, աղաչում եմ, հանգստացե՛ք... Իմ դիտավորություններս մաքուր են... Ես կամենում եմ կյանքս հավիտյան կապել ձեզ հետ... Ես կամուսնանամ ձեզ հետ, վկա է երկինքը... Միայն խոստացե՛ք իմս լինել։

ՎԱՐԴՈՒՀԻ, աչքերը սրբում է և զենոզ հայացքով նայում Արկադիին: Երկար լռություն:

Կամուսնանաք...

ԱՐԿԱԴԻ

Այո՛, օրինավոր կերպով կամուսնանամ։

ՎԱՐԴՈՒՀԻ, ֆրիջ բարձրացնելով:

Երեխա՞ եմ, ի՞նչ է... դեռ մեկից չազատված՝ մյուսի վրա ամուսնանա՞լ եք կամենում։

Շարունակում է ֆրիջալ:

ԱՐԿԱԴԻ

Լսեցե՛ք, տիկին, աղաչում եմ, լսեցե՛ք... Ես ձեզ չեմ խաբում, իզուր եք այդպես զարմանում... Ես իմ կյանքումս մի անպատիվ քայլ անգամ չեմ արած... Երդվում եմ, որ պարզ սրտով եմ խոսում... Իմ ապահարզանի գործը առաջ է գնում իր կարգով, շուտով էլ կվերջանա... Այսօր է թե վաղը ես կստանամ իմ ազատության վկայագիրը...

Ձախ կողմի երկրորդ կարգի դռնից մտնում է Էլիզը, ֆոդալ ծածկված, և բռնվում է ծառերի ու ծաղիկների հետևը:

ՏԵՍԻԼ Զ

ՆՐԱՆՔ, ԷԼԻԶ բռնված:

ԱՐԿԱԴԻ, շարունակելով:

Մտադիր էի թուղթը ձեռքիս գալ ձեր ոտքերն ընկնել.... Ես ազատ, դուք ազատ, մի երկու շաբաթ չի տևիլ, ես կտանեմ ձեզ եկեղեցի և այնտեղ, սուրբ սեղանի առաջ, կխոստանամ ձեզ իմ սիրտն էլ, իմ կյանքն էլ։

Համբուրում է նրա ձեռքը: Էլիզը սարսափելի դրության մեջ է:

ՎԱՐԴՈՒՀԻ, վեր կենալով:

Այդ մասին մենք կխոսենք, երբ ձեր ազատությունը ձեռք կբերեք։

ԱՐԿԱԴԻ, նույնպես:

Մի համբույր, միայն մի համբույր, տիկին, որպես գրավական մեր ամուսնության...

ՎԱՐԴՈՒՀԻ

Ո՜չ, ո՜չ, պարոն, ես իմ պատիվս ոտնակոխ չեմ անիլ... (Տալով ձեռքը:) *Մնա՛ք բարյավ... Մոռացե՛ք բոլորը և խելո՛ք կացեք։*

ԱՐԿԱԴԻ, Վարդուհու ձեռքը բռնած:

Խղճացե՛ք ինձ, տիկին... Այրվում եմ...

ՎԱՐԴՈՒՀԻ, ժպտալով։

Մի՞թե... (Ջուր է ածում բաժակը և հազիվ կարողանալով զսպել իր ծիծաղը։) *Համեցի՛ք, վսեմափայլ տեր։* (Առաջարկում է բաժակը։) *Ա՛խ, չե՞ք կամենում...* (Բաժակը դնելով սեղանի վրա։) *Ուրեմն այսպե՞ս...* (Հովհարում է Արկադիին, որ լուռ և անշարժ նայում է նրան, հետո frfիչ բարձրացնելով։) *Ի՞նչ զվարճալի եք այդպես։* (Հովհարը դնելով Արկադիի ձեռքը։) *Ահա թողնում եմ հիշատակ ձեր բորբոքված սիրտը հովացնելու... հույս ունիմ, որ արկդիկս վաղը կստանամ...*

Խորը ողջույն (Révérence) է տալիս և frfչալով դուրս գնում։

ՏԵՍԻԼ Է

ԱՐԿԱԴԻ, ԷԼԻԶ, սկզբում թաքնված։

ԱՐԿԱԴԻ, մի քանի վայրկյան լուռ և անշարժ մնալուց հետո։

Օ՜, կանայք... (Բարկացած մաճ է գալիս։) *Ուրեմն, ես մարդ չեմ լինել, եթե քեզ չհաղթեմ։* (Հովհարը ձգում է սեղանի վրա։ Էլիզը, որ փոքր ինչ առաջ էր եկել, հեգնորեն ծիծաղում է։) *Ա՛խ...*

Զեռքը ճակատին մնում է ապշած։

ԷԼԻԶ, բացականչելով։

Ահա՜... չէ՞իր սպասում... Ասա՛, ասա՛, որ ոչ ոք չկար այստեղ, ասա՛... Քեզ համար սուտն ի՞նչ նշանակություն ունի... (Վերցնելով Վարդուհու հովհարը։) *Այս ի՞նչ է, ա՛յս. այս էլ նրանը չէ՞....* (Կտրտում է հովհարը և դեն ածում, հետո հարձակվելով դեպի սուրճի սեղանը, վերցնում է Վարդուհու բաժակը։) *Այս բաժակն էլ նրա ձեռքին չէ՞ր...* (Շպրտելով։) *Ահա՛ քեզ...*

ԱՐԿԱԴԻ

Էլի՛զ, էլի՛զ, ո՛ւշքի արի, աղաչում եմ. ամոթ է, ծառաները կարող են տեսնել։

Փակում է նախասենյակի դուռը։

ԷԼԻԶ, պոկելով իր գլխի քողը։

Ահա՛ ամոթը... ես իմ ամոթը վա՛ղ թաղեցի։

Դեռ է ձգում։

ԱՐԿԱԴԻ

Ի սեր աստուծո, դադարի՛ր... Ամուսինդ գալու է... Նա այս րոպեիս կգա։

ԷԼԻԶ

Թո՛ղ գա... ես էլ ոչ ոքից չեմ վախենում... Թո՛ղ գա տեսնե՝ ո՛րպիսի կին եմ եղել ես նրա համար... Թո՛ղ մաս-մաս անե ինձ... Թո՛ղ երեսիս մուր քսե և մազերիցս բռնած՝ փողոցի փողոց ման ածե, ես արժանի եմ...

ԱՐԿԱԴԻ

Ա՛խ, աստված...

ԷԼԻԶ

Ա՞յդ էր, ա՛յդ, քո պաշտոնական հարկավոր գործը. այդպե՞ս էիր միշտ խաբում ինձ։ Հենց այս րոպեիս նախասենյակում... (Ներկայացնելով ինչպես Արկադին խաբում էր նրան նախասենյակում։) *«Ա՛խ, էլիզ, հոգիս, ների՛ր, տունս պաշտոնյաներով լիքն է, սպասում եմ նույնիսկ նահանգապետին»... Եվ սրա հետ՝ տաք-տաք համբույրներ...* (Գլխի շարժվածքով ներկայացնում է ինչպես Արկադին նրան համբուրում էր նախասենյակում։) *Ո՜հ, Հուդա՜....* (Թաշկինակով սրբում է երեսը։) *Եվ դու կարծում էիր, որ ես չգիտեի թե ո՛վ էր այստեղ...* (Հեգնորեն ծիծաղում է։) *Օ՜, վաղուց է որ ես քեզ չեմ հավատում... Ինձ փաստ էր հարկավոր, փաստ, և ահա՛ այս անգամ բռնվեցար վերջապես... Խոսի՛ր, խոսի՛ր, պա՛րոն... Ո՞ւր են քո երդումները, քո աստվածը, քո երկինքը... Ո՜հ, ի՞նչ ծաղրալի ես դու այժմ...*

Երկար ծիծաղում է։

ԱՐԿԱԴԻ, մոտենալով։

Հանգստացի՛ր, էլիզ, աղաչում եմ...

ԷԼԻԶ

Հեռո՜ւ, հեռո՜ւ... Դու ոչ աստված ունիս, ոչ հոգի... Այսուհետև չհամարձակվես ինձ դիպչել... մեր մեջ ամենայն բան վերջացավ... Գնա՛, գնա՛, այժմ քո գեղեցիկ Վարդուհու առաջը չոքիր, նրա ոտի հողը դարձիր... գնա՛, հարսանիքիդ պատրաստությունները տես... (Հազիվ ճազ կարողանալով պահել լացը։) *Կյանքս, բարի անունս, պատիվս ես զոհեցի քեզ համար, իսկ դո՜ւ...* (Զեռքի պայուսակից հանելով մի բանալի և շպրտ-

տելով:) *Ահա՛, ա՛ռ քո պարտիզի բանալին... Մնա՛ս բարյավ հավիտյան... Ես իմ պատիժը կրեցի...*

Թոշկիճակը աշխերին՝ լալով դուրս է գնում ձախ կողմի երկրորդ կարգի դռնից: Արկադին մնում է քարացած:

ՏԵՍԻԼ Ը

ԱՐԿԱԴԻ, հետո ՍՊԱՍԱՎՈՐ

ԱՐԿԱԴԻ, մենակ, երկար լռությունից հետո:

Ի՞նչ են կատաղել վրաս... (Բարկացած մաճ է գալիս, հետո վերցնելով բանալին:) *Դե՛ն ձգեց.... Շա՛տ հարկավոր է. դու չլինիս, ուրիշը կլինի...* (Հնչեցնում է զանգակը: Լռություն: Նորից հնչեցնում է. հետո բարկացած:) *Է՛յ...* (Լսելով որ նախասենյակի դուռը շարշարում են, գնում է, բաց անում: Ներս մտնող սպասավորին:) *Հավաքի՛ր այդ ամենը...* (Լուռ մաճ է գալիս, մինչդեռ սպասավորը կատարում է հրամանը:) *Անպիտա՛ն... Ես քեզ հրամայեցի որ ոչ ոքի չընդունես... Ի՞նչպես համարձակվեցար ասել, որ ես տանն եմ։*

ՍՊԱՍԱՎՈՐ

Ես մեղավոր չեմ, ձերդ վսեմություն, տիկին Վարդուհու կառապանն ասել էր արդեն։

ԱՐԿԱԴԻ, սարսափած:

Ի՞նչպես... Ուրեմն նա էլ սրա՛ գալը կիմանա։

ՍՊԱՍԱՎՈՐ

Երևի...

ԱՐԿԱԴԻ, բարկացած:

Դժո՛խք... (Մաճ է գալիս:) *Շո՛ւտով, շուտով վերջացրո՛ւ և կորի՛ր աչքիցս։*

ՍՊԱՍԱՎՈՐ

Իսկույն, ձերդ վսեմություն։

Արկադին նստում է, բռունցքը սեղանին խփում և հետո, գլուխը երկու ձեռքի մեջ առնելով, արմունկներով հենվում է սեղանին, իսկ սպասավորը հավաքելով հավճարի կտորները, զարմանք է արտահայտում, հետո վերցնելով էլիգի քողը, նոտ է բաշում և ծոցում պահում: Լռություն:

ԱՐԿԱԴԻ, վեր թռչելով տեղից:

Ճաշին տուն չեմ գալ... Խոհարարին կասես, որ լավ ընթրիք պատրաստե... Սեղանը պարտեզումը բաց կանես... Տե՛ս որ ամեն բան կարգին լինի։

ՍՊԱՍԱՎՈՐ

Քա՞նի հոգու համար, ձերդ վսեմություն։

ԱՐԿԱԴԻ

Քա՛նի էլ կուզես... Հինգ, տասը, տասնուհինգ... Պետք է բարեկամներիս հրավիրեմ... մի փոքր զվարճանամ... Շամպայնը վաղօրոք սառույցի մեջ կդնես։

ՍՊԱՍԱՎՈՐ

Կանայք էլ կլինի՞ն։

ԱՐԿԱԴԻ

Կանայք, երգչուհիք, երաժշտություն... ամեն բան, միայն թե այս դժոխքից ազատվեմ...

ՍՊԱՍԱՎՈՐ, սկուտեղը ձեռքին:

Այո՛, ձերդ վսեմություն, երկու կնոջ հետ միաժամանակ գործ բռնելը շատ վտանգավոր է։

ԱՐԿԱԴԻ

Կորի՛, անպիտան... (Մաճ է գալիս: Սպասավորը գլուխը շարժելով դուրս է գնում:) *Ասաված իմ, այս ի՞նչ չար աստղի տակ եմ ծնվել ես։*

ՏԵՍԻԼ Թ

ԱՐԿԱԴԻ, ԱԲԵԼ

ԱՐԿԱԴԻ

Ա՛... Թերի՞ք ստորագրությունը։

ԱԲԵԼ, շվարված:

Այո՛, ձերդ վսեմություն։

ԱՐԿԱԴԻ

Թերե՛ք, բերե՛ք, պետք է վերջ դնել այս կացությանը։

ԱԲԵԼ, անվստահ հանում է թերթապահից մի ծալած թուղթ, որ արտաքուստ բոլորովին նման է նախկին թղթին։

Ահա՛, ձերդ վսեմություն... Միայն այս այն չէ։

Տալիս է թուղթը։

ԱՐԿԱԴԻ

Ի՞նչպես թե այն չէ... (Բանալով թուղթը։) Այս ի՞նչ է... Այս ի՞նչ եք արել։

ԱԲԵԼ

Վատ ոչինչ, ձերդ վսեմություն... (Մինչդեռ Արկադին լուռ և դժգոհությամբ կարդում է թուղթը։) *Իմ կարծիքով այդ ավելի մեծ ապացույց է. բոլորն էլ իր ձեռքով է գրած...* (Թերթապահից հանում է նախկին թուղթը և փոխարկի ծարը։) *Իսկ այս՝ ի՛նչքան էլ աշխատեցի, նա չկամեցավ ստորագրել, ոչ էլ այս ստանալիքն ընդունեց... Ինձ ոչինչ ողորմություն հարկավոր չէ, ասաց և սաստիկ բարկացավ...*

Ծարն ու թուղթը դնում է սեղանի վրա։

ԱՐԿԱԴԻ, ձեռքը խփելով թղթին։

Հ՛ը, խորամանկ... Այս թուղթը մեկ կոպեկ չարժե։

ԱԲԵԼ

Ինչի՞, ձերդ վսեմություն. չէ՞ որ հանցանքը նա իր վրա է վերցնում։

ԱՐԿԱԴԻ, մեկուսի։

Դժո՛խքը կլանե քեզ... (Աբելին։) *Զարմանում եմ, պարոն Աբել... Այսքան տարի է ապրում եք աշխարհիս երեսին և մինչև օրս ամենատարրական բաներն անգամ չգիտեք... Ո՞րն է այստեղ հանցանքի խոստովանությունը, ձեզ եմ հարցնում, ա՛յն հանցանքի, որ օրենքը պահանջում է, այսինքն՝ ամուսնական անհավատարմության... Ի՞նչ է գրում այն օձն այստեղ, ի՞նչ...* (Կարդալով։) *«Թողեցի ամուսնուս իմ հոժար կամքով, որովհետև չկարողացա նրա հետ հաշտ ապրել»... Ի՞նչ մեծ գյուտ... Ի՞նչ իրավունք կարող եմ ստանալ սրանով, ի՞նչ... եթե հարյուր վկա անգամ ստորագրեն այս թղթին...*

Բարկացած ճզմում է թուղթը և դեն ձգում։

ԱԲԵԼ

Այն միայն աստծուն է հայտնի, ձերդ վսեմություն, թե ի՞նչքան եմ աշխատել, որ կարողացել եմ գոնե այդ թուղթն առնել, այն էլ միայն այն պայմանով, որ դուք կբարեհաճեք իր գլխագիրն ուղարկել շուտով։

ԱՐԿԱԴԻ

Ես նրան գլխագիր կցույց տամ, թո՛ղ դեռ սպասի... Դառն արտասուքով կլացացնեմ ես նրան, քանի կենդանի է... Նահանգական Դատարանին կդիմեմ, որ քաշ տալով բերեն նրան այստեղ. տեսնեմ թե ինչպես չէ ստորագրում... Հ՛ը, թշվառական... (Աբելը կամենում է սեղանի վրա դրած թուղթը վերցնել։) *Թողե՛ք, թողե՛ք այդ թուղթը. դրա փոխարեն ես մի ուրիշը պետք է պատրաստեմ... Դուք գնացե՛ք, ոստիկանին և փաստաբանիս իսկույն այստե՛ղ ուղարկեցեք. մնացածը ես գիտեմ...* (Բարկացած։) *Այս ի՞նչ անիծյալ օր լուսացավ ինձ համար...*

Կատաղած ման է գալիս սենյակում։

ԱԲԵԼ, թերթապահը ձեռքին, մեկուսի, ցածր։

Օ՜հ...

Սարսափից բռնված հեռանում է մատների ծայրերի վրա, ճանապարհիդ ետ է նայում Արկադիի կողմը և դուրս գնում, իսկ Արկադին ճեռվում է իր սենյակը։

ԱՐԱՐՎԱԾ ՁՈՐԲՈՐԴ

Մարգարտի և Հեղինեի կացարանում հասարակ սենյակ, ճաշակով կահավորված և հասակն ամբողջապես մոմլարով ծածկած: Սենյակը երկու դուռ ունի՝ մեկը ձախ կողմում, իսկ մյուսը բեմի խորքում, որ և բացվում է դեպի նախասենյակը: Աջ կողմում՝ մեծ լուսամուտ: Դռներն ու լուսամուտը զարդարած են դրապրիներով և վարագույրներով: Սեղան, գրասեղան, գրքերի պահարան, պատկերներ, արձանիկներ, գրքեր, նկարչության պարագաներ և այլն: Երկրորդ արարվածի այն նկարը, որ դրած էր պատկերակալի վրա, կախած է պատից: Ցերեկ է:

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ՄԱՐԳԱՐԻՏ, զոգնոցով, ՀԵՂԻՆԵ

ՄԱՐԳԱՐԻՏ, աջ կողմում, իր պատկերակալի առաջ, նկարչությամբ է պարապած, տխուր:

Ապա՛, Հեղինես, մեկ այս կո՛ղմը նայիր։

ՀԵՂԻՆԵ, որ, վարագույրը բացվելիս, ձախ կողմում գրում էր զանազան գրքերի նայելով, մոտենում է:

Հիանալի է՞... Ես իզուր չէի ասում, Մարգարիտ, որ դու մեծ տաղանդ ունիս... Օ՜, հրաշալի տեսարան է...

ՄԱՐԳԱՐԻՏ

Հորիզոնը հաջողվա՞ծ է։

ՀԵՂԻՆԵ

Շա՜տ, շա՜տ, անգին իմ Մարգարիտ։

ՄԱՐԳԱՐԻՏ, հեռվից գննելով իր նկարը:

Այո՛, ես գոհ եմ...

ՀԵՂԻՆԵ

Գիտե՞ս, Մարգարիտ, քո այս նկարը շատ նման է մեր դրությանը... Հորիզոնից այս կողմը ամեն ինչ մութ ու խավարով պատած, իսկ այն կողմը, հեռուն, երկինքն արևի մոտալուտ ծագումն է ավետում... Այդ կարծես այն հույսն է, որով ապրում ենք մենք։

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՞վ գիտե, Հեղինե, կարելի է ճշմարիտ, մեր արևն էլ ծագի մի օր... Հույսը լավ բան է և շատ անգամ ավելի քաղցր, քան թե նրան իրագործված տեսնելը։

ՀԵՂԻՆԵ, գննելով նկարը:

Ա՜խ, ա՜խ, ի՜նչ սքանչելի տեսարան է... Ի՞նչպես ես համբերել, զարմանում եմ, որ շարունակ այս արհեստով չես պարապել... Երջանիկ ես, ճշմարիտ, որ այսպես գեղեցիկ վրձին ունիս։

ՄԱՐԳԱՐԻՏ, դառնությամբ:

Երջանի՜կ... Ա՜խ, իմ սիրունիկս, եթե միայն այդ լիներ երջանկությունը... Ի՜նչ երջանիկ... ամենքից արհամարհված, ասա՛, ամենքի աչքից ընկած... Ի՜նչ եմ ես հիմա խակապես. մի թշվառ կին. որ հասարակաց կարծիքի առաջ կորցրել է իր անունը, իր պատիվը...

ՀԵՂԻՆԵ

Ո՞վ կհամարձակվի քո պատվի վրա մի ստվեր անգամ ձգել։

ՄԱՐԳԱՐԻՏ

Ամենքը, ամենքը, թանկագին իմ Հեղինե, բացի քեզանից և մի քանի բարեկամներից, ամենքը... Ամուսնաթող կնոջ վերադիրը մեր հասարակության մեջ միայն ամոթն ու անպատվությունն է... Վրաս այնպես են նայում, կարծես մի մահապարտ լինիմ. համարյա՛ ոչ ոք չի էլ ուզում հետս խոսել... Եվ ինչի՞, ի՞նչ եմ արել, ի՞նչ հանցանք եմ գործել... Ես թողել եմ ամուսնուս, որի հետ ապրելն ինձ անտանելի էր... Նա ինքը շատ ուրախ է, որ ազատվեցավ ինձանից. նա երջանիկ ապրում է իր համար, նրան ամեն բան ներվում է... Իսկ ես՝ քանի որ կենդանի եմ, քանի շունչս բնարանումս է, պետք է տանջվիմ, շարունակ տանջվիմ՝ ամենքից արհամարհված... Ա՜խ, թողնենք, խնդրեմ... Ավելի լավ է քո մասին, քո սրտի մասին խոսենք։

ՀԵՂԻՆԵ

Խոսենք, Մարգարիտ... Ինքս վաղուց է պատրաստվում եմ սիրտս բանալ, խոստովանվել քո առաջ...

ՄԱՐԳԱՐԻՏ

Գատմի՛ր, պատմի՛ր, հոգյակս։

ՀԵՂԻՆԵ

Ես... Ես սիրում եմ, Մարգարիտ...

ՄԱՐԳԱՐԻՏ, հոգվոց հաճելով։

Սիրո՞ւմ ես...

ՀԵՂԻՆԵ

Այո՛, և սաստիկ։

ՄԱՐԳԱՐԻՏ

Այդ ես գիտեմ, Հեղինե. վաղուց է որ ես այդ նկատում եմ։

ՀԵՂԻՆԵ

Դու գիտե՞ս, դու նկատո՞ւմ ես. ի՞նչպես...

ՄԱՐԳԱՐԻՏ

Օ՜, հա՜նգիստ եղիր, ինքն ըստ ինքյան երևում է։

ՀԵՂԻՆԵ

Ա՜խ, Մարգարիտ, շատ էի կարդացել, շատ լի՜ լսել, բայց այժմ եմ միայն հասկանում, թե ի՜նչ զգացմունք է սերը... Կատարյալ մի ցավ, մի հիվանդություն և միևնույն ժամանակ մի անսահման երջանկություն սրտիդ մեջ... Ես երբեք չէի փորձել այդ զգացմունքը... Միշտ նա, միշտ աչքիդ առաջ, միշտ նրան ես տեսնում, նրա ձայնը լսում, նրա հետ խոսում...

ՄԱՐԳԱՐԻՏ

Ի՜նչ... աստված ինքն է օրհնում քո սերը... Դու ազատ, նա ազատ... (Հոգվոց հաճելով։) *Երկուսդ էլ կարող եք երջանիկ լինել... Նա շատ ազնիվ երիտասարդ է և լիովին արժանի է քո սիրուն։*

ՀԵՂԻՆԵ

Լինում են բոպեներ, Մարգարիտ, որ ուզում եմ հանկարծ գիրկն ընկնել և ասել նրան բոլո՛ր, բոլորը...

ՄԱՐԳԱՐԻՏ

Նա ինքն էլ անչափ սիրում է քեզ, Հեղինե։

ՀԵՂԻՆԵ

Ի՞նչպես. դու ա՞յդ էլ ես նկատել։

ՄԱՐԳԱՐԻՏ

Այո՛... Մինչև օրս ես ոչինչ չէի ասում քեզ, որպեսզի խոսքերիս ազդեցության ներքո չգտնվիս, բայց այժմ՝ երբ դու ինքդ էլ խոստովանում ես ինձ քո զգացմունքները, ես կարևոր եմ համարում հայտնել քեզ, որ նա ևս տանջվում է քո սիրուց և այդ մասին շատ անգամ է խոսել հետս...

ՀԵՂԻՆԵ

Իմ բարի, իմ քնքուշ Մարգարիտ, ո՜րքան երջանկացնում ես ինձ այս բոպեիս...

ՄԱՐԳԱՐԻՏ

Քանի ժամանակ է, Հեղինե, ես նկատում եմ, որ դու գիշերներն էլ հանգիստ քուն չունիս... Երևի բաց աչքով հենց նրա վրա ես մտածում։

ՀԵՂԻՆԵ

Ա՜խ, Մարգարիտ, քունս կորել է բոլորովին... Ցերեկն էլ ման գալիս, կարծում եմ օդի մեջ եմ շրջում. կարդալիս, գրելիս, ինչ գործ էլ շինում եմ, միտքս հանկարծ թռչում է դեպի նա և գործը ձեռքիցս վայր է ընկնում... Մարգարի՜տս...

Ընկնում է գիրկը։

ՄԱՐԳԱՐԻՏ, խորը հոգվոց հաճելով։

Այո՛, դու սիրում ես....

Պատկեր։ Դրսից լսվում է Լևոնի ձայնը։ *Տա՞նն են։*

ՀԵՂԻՆԵ

Նա՛ է։

Աշխերը սրբելով գնում է դեպի իր տեղը և աշխատում է մի կերպ հուզմունքը ծածկել. մինչդեռ լսվում է Անահիտի ձայնը՝ *Տանն են, տանը, պարոն Լևոն։*

ԱՆԱՀԻՏ, ներս գալով։

Պարոն Լևոնն է։

ՄԱՐԳԱՐԻՏ

Խնդրի՜ր։

Անահիտը դուրս է գնում։

ՏԵՍԻԼ Բ

ՆՈՒՆՔ, ԼԵՎՈՆ

ԼԵՎՈՆ, Անահիտին, դռնեռում:

Կարելի՞ է։

ՄԱՐԳԱՐԻՏ, դռան կողմը նայելով և քաղցրությամբ:

Կարելի՜ է. կարելի. մտե՛ք, խնդրեմ։ (Անահիտը Լևոնի ձեռքից ծածկում է դուռը:) *Ա՜, պարոն Լևոն, համեցե՛ք, համեցե՛ք, խնդրեմ։*

ԼԵՎՈՆ, երկու փոքրիկ ծաղկեփունջ ձեռքին:

Բարի օր ձեզ, տիկին. բարև ձեզ, օրիորդ։

Հեղինեն լուռ ողջունում է:

ՄԱՐԳԱՐԻՏ

Բարև ձեզ, պարոն։

Տալիս է ձեռքը:

ԼԵՎՈՆ, առաջարկելով մեկ փունջը:

Խնդրեմ, տիկին, այս հատուկ ձեզ համար է։

ՄԱՐԳԱՐԻՏ

Շատ շնորհակալ եմ, պարոն Լևոն, դուք միշտ ուշադիր եք դեպի մեզ։

ԼԵՎՈՆ

Օ՜, տիկին... (Գնում է դեպի Հեղինեն և առաջարկում երկրորդ մյուս փունջը:) *Օրիորդ, բարեհաճեցե՛ք։*

ՀԵՂԻՆԵ, փոքր ինչ շփոթված, ընդունում է փունջը:

Շնորհակալ եմ։

Կարճ լռություն:

ՄԱՐԳԱՐԻՏ, փունջը դնելով թաժակի մեջ:

Աքանչելի ծաղիկներ են... Դուք մեզ հատուկ պարտավորեցնում եք, պարոն Լևոն... Թեև, պիտի նկատեմ, այս անգամ մի փոքր ուշ մտաբերեցիք մեզ։

ԼԵՎՈՆ

Մեկ բոպե անգամ մտքիցս չեք հեռացել, տիկին, ոչ դուք, ոչ օրիորդը, հավատացե՛ք. միայն հարկադրված էի փոքր ինչ երկար մնալ գյուղում... (Հեղինեն փունջը ձեռքին գնում է դեպի խորքը, ուր մի հարմար բաժակ է որոնում:) *Ա՜, շնորհավորում եմ, տիկին, դուք արդեն վերջացրել եք նկարը։ Եվ ի՜նչ գեղեցիկ է դուրս եկել... Այո՜, այո՜, հրաշալի է... Ձեր տաղանդը ինձ հիացնում է, տիկին... Ընդունեցե՛ք խորհուրդս. գնացե՛ք, Գեղարվեստից Ճեմարան մտեք. հոչակավոր անուն կհանեք, հավատացե՛ք ինձ։*

ՄԱՐԳԱՐԻՏ

Է, պարոն Լևոն, մինչև այսօր ձեր գյուղն էլ չկարողացա տեսնել, ո՞ւր մնաց Ճեմարանը։

ԼԵՎՈՆ

Սակայն ես հույս ունիմ, տիկին, որ մեկ օր շնորհ կանեք և այցելության կգաք իմ խրճիթը։

ՄԱՐԳԱՐԻՏ

Կաշխատեմ... Թեպետ ես կցանկանայի տեսնել ձեզ այդ խրճիթում, երբ արդեն որոշած կլինեիք ձեր վիճակը և ձեր իզձերը կատարած։

ԼԵՎՈՆ, հետ նայելով դեպի Հեղինեն, որ գտնվում է բեմի խորքում:

Իմ զգացմունքները ձեզ լիովին հայտնի են, տիկին, և կարող եք երևակայել, թե ո՜րքան երջանիկ կլինեի, եթե ձեր ցանկություններն իրականություն ստանային։

ՄԱՐԳԱՐԻՏ

Աստուծով... (Վերցնելով ծաղկեփունջը:) *Ի՜նչ անուշահոտ են այս ծաղիկները... Դարձյալ ձեր գյուղի՞ցն է իհարկե։*

ԼԵՎՈՆ

Այո՜, տիկին, իմ փոքրիկ պարտեզից։

ՄԱՐԳԱՐԻՏ, ճոտ քաշելով։

Հիանալի ծաղիկներ են... (Մտածմունքի մեջ է ընկնում, մինչդեռ Լևոնը աչքը չէ հեռացնում Հեղինեից։) *Ասացե՛ք, խնդրեմ, ի՞նչ լուր ունիք ձեր բարեկամից... Անցյալ անգամ ասում էիք, որ նա Հայաստան է գնացել։*

Փունջը դնում է իր տեղը։

ԼԵՎՈՆ

Այո՛, տիկին, բայց թե ո՛րտեղ է այժմ, ես այդ հաստատ չգիտեմ։

ՄԱՐԳԱՐԻՏ

Նա բավականին ուշացավ։

ԼԵՎՈՆ

Նամակիս էլ չպատասխանեց։

ՄԱՐԳԱՐԻՏ

Չիցե՞ թե որևէ փորձանքի հանդիպած լինի։

ԼԵՎՈՆ

Ո՛չ, ո՛չ, տիկին... Այդ մասին հանգի՛ստ եղեք. ես հաստատ տեղեկություն ունիմ, որ մոտ օրերս նրան անձամբ տեսել են ողջ և առողջ... Երևի գյուղից գյուղ շրջում է իր հետազոտությունները լրացնելու և շատ հավանական է, որ նամակներս էլ ստացած չլինի...

Լռություն։ Մարգարիտը կամաց-կամաց զաղտագնաց լինելով, քաղցրությամբ հետ է նայում դուրս գնալիս, մինչդեռ Լևոնը սիրով նայում է Հեղինեին, որ այդ միջոցին ջուր է ածում մի գեղեցիկ բաժակի մեջ։

ՏԵՍԻԼ Գ

ՀԵՂԻՆԵ, ԼԵՎՈՆ

Հեղինե, առաջ գալով։

Գեղեցիկ ծաղիկներ են... Շատ շնորհակալ եմ, պարոն Լևոն։

Մաղկեփունջը բաժակով դնում է իր սեղանի վրա և տետրակները կարգի բերում։

ԼԵՎՈՆ

Անչափ ուրախ եմ, օրիորդ, որ կարողանում եմ գոնե մի չնչին զվարճություն պատճառել ձեզ... Ինչ՞ խանգարում արդյոք։

ՀԵՂԻՆԵ

Ո՛չ, ո՛չ, պարոն Լևոն. ես արդեն վերջացրել եմ... նստեցե՛ք, խնդրեմ։

Նստում են։

ԼԵՎՈՆ

Ձեր սովորական պարապմունքն է երևի։

ՀԵՂԻՆԵ

Այո՛, աշակերտներիս տետրակներն են։

ԼԵՎՈՆ

Երևակայել չեք կարող, օրիորդ, թե ի՞նչ հրճվանք եմ զգում, երբ տեսնում եմ, որ դուք այդքան սիրով շարունակում եք ձեր պարապմունքը։

ՀԵՂԻՆԵ

Դուք շատ բարի եք, պարոն Լևոն... Ես իմ փոքրիկներիս համար կատարում եմ այն, ինչ որ դուք անում եք ձեր գյուղի մեծերի համար... (Կարճ լռությունից հետո։) *Բայց ո՞ւր էիք այսքան ժամանակ։*

ԼԵՎՈՆ

Ուր որ միշտ, օրիորդ. անձամբ գյուղում, իսկ հոգվով և սրտով այստեղ, ձեզ մոտ։

ՀԵՂԻՆԵ, քաղցրությամբ նայում է Լևոնին։

Եվ ա՛յդ էր պատճառը, իհարկե, որ այս քանի օրս մեզ չայցելեցիք։

ԼԵՎՈՆ

Հավատացե՛ք, օրիորդ, ես երջանիկ կլինեի, եթե միշտ ձեզ մոտ գտնվեի, ձեզ տեսնեի, ձեր ձայնը լսեի. բայց այս ամենը կախված է ձեր կամքից և միմիայն ձեր կամքից... (Տեղից վեր է կենում։ Հեղինեն հրճվում է։) *Ձեզ հայտնի են, օրիորդ, իմ զգացմունքները, իմ սրտի ամենախորին խորհուրդները, Ինչպես և ես գիտեմ, որ ձեր սրտումն էլ գոնե*

մի փոքրիկ անկյուն կա ինձ համար... Եվ ահա՛ ես սպասում եմ այն երջանիկ օրին, երբ դուք կտաք ինձ ձեր համաձայնությունը։

ՀԵՂԻՆԵ, ոտքի կանգնելով։

Իմ համաձայնությո՞ւնը...

ԼԵՎՈՆ

Այո՛, ձեր համաձայնությունը, որից և կախված է իմ երջանկությունը։

ՀԵՂԻՆԵ

Եվ դուք հիրավի համոզվա՞ծ եք, որ ես կարող եմ ձեզ երջանկացնել։

ԼԵՎՈՆ

Հաստատապե՛ս։

ՀԵՂԻՆԵ

Եվ ինքս էլ երջանի՞կ լինել։

ԼԵՎՈՆ

Այո՛, այո՛, որովհետև ես ձեզ սիրում եմ... Դուք գիտեք, որ սիրում եմ... Սիրում եմ ձեզ անկեղծ, անդավաճան, սուրբ սիրով, սիրում եմ այն զգացմունքով, որ ոչ մեկ բան չէ կարող խախտել... (Հեղինեն լուռ ճայում է։) Մի խոսք, միայն մի քաղցր խոսք, օրիորդ, և դուք կարող եք հավիտյան երջանկացնել ինձ։

ՀԵՂԻՆԵ

Եվ միշտ կսիրե՞ք ինձ այդպես։

ԼԵՎՈՆ

Մի՛շտ, մի՛շտ, երդվում եմ։

ՀԵՂԻՆԵ

Ես ձեզ հավատում եմ, Լևոն։

Մեկնում է ձեռքը։

ԼԵՎՈՆ, համբուրելով ձեռքը։

Հավատացե՛ք, օրիորդ, հավատացե՛ք, որ ես ձեզ սիրում եմ բոլոր սրտով, հոգվույս բոլոր զորությունով։

ՀԵՂԻՆԵՆ, փոքր ընդմիջումից հետո քնկնում է Լևոնի գիրկը։

Լևո՛ն...

ԼԵՎՈՆ

Հեղինե՛ս... (Համբուրում է։) Վերջապես դու իմն ես։

ՀԵՂԻՆԵ

Հավիտյա՞ն...

Աչքերը սրբում է։

ԼԵՎՈՆ

Հրեշտա՛կս...

ՀԵՂԻՆԵ

Լսի՛ր, Լևոն. ես կարևոր բաներ ունիմ քեզ հաղորդելու... (Նստում են։) Այն օրից, երբ քեզ հետ ծանոթացա Ժողովարանում, քեզ հետ պարեցի, այն օրից սիրտս կպավ քեզ, այն օրից ես քեզ սիրեցի, Լևոն։

ԼԵՎՈՆ

Ի՜նչպես... Ուրեմն էլ ինչի՞ էիր հետս այնպես սառը վարվում և ինձ տանջում... Օ՜, Հեղինե, մի՞թե մեղքդ չէի գալիս։

ՀԵՂԻՆԵ

Հավատացի՛ր, Լևոն, այդ վարմունքը նպաստ չէր իմ կողմից... Ես ինքս պակաս չէի տանջվում, բայց չէի համարձակվում սիրտս բաց անել քո առաջ։

ԼԵՎՈՆ

Աննման իմ Հեղինե...

ՀԵՂԻՆԵ

Մտնելով այժմ մի նոր ասպարեզ՝ հետդ կյանքի լուծը քաշելու, ես կամենում եմ նույն իսկ առաջին քայլում պարզել քո առաջ իմ զգացմունքները... Ես սիրում եմ քեզ, Լևոն, սիրում եմ սրտի աստիճան, որ պատրաստ եմ կյանքս զոհել քեզ համար...

ԼԵՎՈՆ, համբուրելով ձեռքը։

Հոգյա՛կս...

ՀԵՂԻՆԵ

Հավատում եմ, որ նույնքան էլ դու ես ինձ սիրում...

ԼԵՎՈՆ

Այո՛, հրեշտակս, իմ սերը դեպի քեզ երբե՛ք չի սպառվիլ, երդվում եմ քեզ։

ՀԵՂԻՆԵ

Այսուհետև, Լևոն, դու և ես մի ենք. քո կամքը՝ իմ կամքն է, քո սիրտը՝ իմ սիրտն է, քո կյանքը՝ իմ կյանքն է... Իմ մեջ դու կգտնես քո հավատարիմ ընկերակիցը, քո անձնվեր բարեկամը... Ինչ որ կարող եմ, ինչ որ ձեռքիցս գա, քո բոլոր պահանջները միշտ կատարած համարիր... Միայն սիրի՛ր ինձ, Լևոն, մի՛շտ սիրիր... Երբե՛ք չդադարես ինձ սիրելուց, երբե՛ք, գիտե՞ս... Իմացի՛ր, Լևոն, եթե մի ժամ, մի րոպե դադարես ինձ սիրելուց, ինձ ուրանաս, լավ է՝ եթե իսկույն սպանես ինձ։

ԼԵՎՈՆ

Ամբողջ կյանքս՝ մինչև վերջին շունչս քո երջանկությանը կնվիրեմ, անգին իմ Հեղինե։

ՀԵՂԻՆԵ

Օ՜, ես երջանիկ եմ... (Աչքերը սրբում է: Փոքր լռությունից հետո:) *Բայց գիտե՞ս ինչ կա, Լևոն... Մարգարտի դրությունը բեզ հայտնի է, նրան մեզանից երբեք չպիտի հեռացնենք։*

ԼԵՎՈՆ

Դու էլ գիտես, հրեշտակս, որ տիկին Մարգարտին ես սիրում եմ որպես իմ հարազատ քրոջս, ինչպես նա կմնա մեզ մոտ։

ՀԵՂԻՆԵ, մեկնելով ձեռքը:

Շնորհակալ եմ, Լևոն։

ԼԵՎՈՆ

Իմ անգի՛ն, Հեղինե։

Ցեղից վեր են կենում:

ՀԵՂԻՆԵ

Մի խնդիր ես, Լևոն... Ի՞նչ դրության էլ հասնիս աշխարհիս մեջ, ո՛րքան էլ հարստանաս, ի՞նչքան էլ մեծ դիրք ստանաս հասարակության մեջ, դու պետք է թո՛ւյլ տաս, որ ես իմ պարապմունքներս շարունակեմ։

ԼԵՎՈՆ

Ես քեզ պաշտում եմ, իմ աննմա՛ն Հեղինե... Աշխատի՛ր, հոգիս. իմ ուզածս էլ հենց այդ է... Դեռ դու՞ սպասի՛ր, մեր ապագայի մասին մտքումս ա՛յնպիսի բաներ են պտույտ գալիս, ա՛յնպիսի գեղեցիկ պատկերներ են նկարվում... Քեզ համար ես առանձին ուսումնարան կհիմնեմ մեր գյուղում, ուր երկուսս էլ լայն ասպարեզ ունինք գործելու... Դու ուսումնարանում գիտության լույսը կտարածես մեր ապագա հույս մանուկների մեջ, իսկ ես բաց երկնքի տակ կգործեմ նրանց ծնողների հետ և մենք մեր անձնական օրինակով կխրախուսենք ու կառաջնորդենք նրանց։

ՀԵՂԻՆԵ, բռնելով Լևոնի ձեռքը։

Օ՜, Լևոն...

ԼԵՎՈՆ, Հեղինեի ձեռքը բռնած:

Այո՛, իմ անգին ընկերս. այսպես ձեռք ձեռքի տված առաջ ընթանալով, մենք կաշխատենք մշակել մեր փոքրիկ անդաստանը և գուցե կարողանանք՝ թե՛ ծառայել ժողովրդին և թե՛ լիություն ու անդորրություն տարածել մեր շուրջը։

ՀԵՂԻՆԵ

Ի բոլոր սրտե սիրում եմ քեզ, Լևոն։

Միմյանց գիրկն են ընկնում և համբուրվում։

ՑԵՍԻԼ Դ

ՆՐԱՆՔ, ՄԱՐԳԱՐԻՏ, առանց գոգնոցի:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ա՜, շնորհավորում եմ...

ԼԵՎՈՆ

Ա՜խ, տիկին...

ՀԵՂԻՆԵ, ընկնելով Մարգարտի գիրկը։

Ա՜խ, Մարգարիտ...

ՄԱՐԳԱՐԻՏ

Վերջապե՞ս...

Համբուրում է Հեղինեին:

ԼԵՎՈՆ

Օրհնեցե՛ք մեզ, տիկին... Ձեր բերանով օրհնված՝ մենք ավելի երջանիկ կլինինք։

ՄԱՐԳԱՐԻՏ, մեկնելով ձեռքը, որ Լևոնը համբուրում է:

Աստված ինքն է ձեզ օրհնողը, բարեկամներս, որովհետև դուք սիրում եք միմյանց։ Իսկ ես ցանկանում եմ, որ այդ սերը ձեր մեջ միշտ

անխախտ մնա ձեր ամբողջ կյանքի ընթացքում... Ամուսինների համար ամենամեծ երջանկությունը փոխադարձ սերն է...

ԼԵՎՈՆ

Հավատացնում եմ ձեզ, տիկին, որ իմ սերը դեպի Հեղինեն կյանքիս հետ միայն կվերջանա։

ՄԱՐԳԱՐԻՏ

Լիովին համոզված եմ։

ՀԵՂԻՆԵ

Ի՞նչ ավելի երջանիկ կլինեինք, Մարգարիտ, եթե քեզ ես բախտավոր տեսնեինք։

ՄԱՐԳԱՐԻՏ

Իմ վիճակը վշտալի է, հոգիս, և ես համբերությամբ պիտի տանեմ իմ խաչը։

ԼԵՎՈՆ

Մենք կաշխատենք թեթևացնել այդ խաչի ծանրությունը... Մենք ձեզ սիրում ենք ինչպես մեր հարազատ քրոջը... Դուք կբնակվեք մեզ մոտ։

ՀԵՂԻՆԵ

Այո՛, այո՛, Մարգարիտս... (Լռելով։) Իմ բարի, իմ ազնիվ Լևոն։

ՄԱՐԳԱՐԻՏ, ձեռքը Լևոնին մեկնելով։

Ազնիվ եղբայր, այդ համակրանքն արդեն թեթևացնում է իմ լծիս ծանրությունը և մեծ սփոփանք է վիրավոր սրտիս համար... Ամեն բան կախված է նախախնամության կամքից... Առայժմ խնդրում եմ երկուսիդ էլ, որ ընդունեք այս նկարը որպես գրավական մեր բարեկամության։

ԼԵՎՈՆ, համբուրելով ձեռքը։

Ի սրտե շնորհակալ եմ... Ձեր պաթգեր մեզ համար թանկ է և խորհրդավոր։

ՀԵՂԻՆԵ, համբուրելով Մարգարտին մյուս կողմից։

Ա՜խ, իմ անգին Մարգարիտ...

ՄԱՐԳԱՐԻՏ

Այսօր ձեր կյանքի համար նոր արշալույս է բացվում. թո՛ղ ձեր օրով ծագի ա՛յն արևը, որի մասին ա՛յնքան հառաչել և ա՛յնչափ շատ երազել եմ ես Արշալույսի ոչ պատկերը նկարելիս...

ՀԵՂԻՆԵ

Ի՞նչ երջանկություն...

ԼԵՎՈՆ

Օ՜, մեր երջանկությանը երջանկություն չի հասնիլ այն օրը...

ԱՆԱՀԻՏ, փոքրիկ սկուտեղով բերում է մի այցետոմս։

Տիկին, ձեզ են հարցնում։

ՄԱՐԳԱՐԻՏ, վերցնելով այցետոմսը։

Արտաշե՜ս...

ԼԵՎՈՆ

Մի՞թե...

Շտապում է դեպի դուռը, Մարգարիտը սաստիկ ճուզվում է։

ՀԵՂԻՆԵ

Ա՜յ ուրախություն։

ՏԵՍԻԼ Ե

ԼՐՆԼ, ԱՐՏԱՇԵՍ

ԼԵՎՈՆ, ճանդիպելով Արտաշեսին նախասենյակում։

Արտաշե՜ս...

ԱՐՏԱՇԵՍ

Լևո՜ն...

Գրկվում և համբուրվում են, ինչպես ընտանիք։

ԼԵՎՈՆ

Վերջապե՜ս...

Արտաշեսը շտապով մտնում է։

ՄԱՐԳԱՐԻՏ

Պարոն Արտաշե՜ս...

ԱՐՏԱՇԵՍ

Բարև ձեզ, տիկին...

ՄԱՐԳԱՐԻՏ, տալով ձեռքը։

Բարև ձեզ... Ահա՜ և դուք...

ԱՐՏԱՇԵՍ, ճամբուրելով ձեռքը։

Օ՜, տիկին...

ՄԱՐԳԱՐԻՏ

Այս ի՞նչպես, այս ե՞րբ...

ԱՐՏԱՇԵՍ

Հենց նոր... (Հեղինեին։) *Բարև ձեզ, օրիորդ։*

ՀԵՂԻՆԵ, տալով ձեռքը։

Բարև, պարոն Արտաշես. գալուստդ բարի։

ԱՐՏԱՇԵՍ, Լևոնին։

Դա՜ռնյալ բարև, բարեկամս։

ԼԵՎՈՆ

Բարև, բարև, եղբայր, աչքներս ջուր կտրվեց քեզ սպասելով։

ՄԱՐԳԱՐԻՏ

Նստեցե՛ք, խնդրեմ։ (Նստում են՝ Մարգարիտն ու Արտաշեսը աջ կողմը, իսկ Հեղինեն ու Լևոնը—ձախ. Անահիտը դուրս է գնում։) *Դուք մեզ բոլորովին մոռացաք, պարոն Արտաշես։*

ԱՐՏԱՇԵՍ

Մոռացա՜... Ո՜չ, ո՜չ, տիկին, մի րոպե անգամ չեմ մոռացել։

ԼԵՎՈՆ

Բայց այս ո՞ւր էիր կորել, ասա՜, խնդրեմ... նամակներս ստացե՞լ ես։

ԱՐՏԱՇԵՍ

Իհարկե։

ԼԵՎՈՆ

Հետո ինչի՞ չպատասխանեցիր։

ԱՐՏԱՇԵՍ

Է՜հ, եղբայր, առանց քո նամակների էլ ես շատ անգամ ուզեցել եմ մի երկու խոսք գրել քեզ, բայց ճանապարհորդությունս այնպես դժվարին էր և արկածներով լի, որ համարյա հանգիստ չունեի... Իսկ նամակներդ միայն մի քանի օր կլինի, որ բոլորը միասին հանձնեցին ինձ և ահա՜ ես

ինքս անձամբ եկա, որպես գսդանի պատասխան... Կպատմեմ, կպատմեմ, ամենայն ինչ կպատմեմ քեզ, Լևոն... Պատմելու բաներ շատ կա և, տարաբախտաբար, շա՜տ անմխիթար բաներ... Ինչևիցե, ես երջանիկ եմ, որ դարձյալ ձեզ հետ եմ և ձեզ ողջ և առողջ եմ տեսնում։

ԼԵՎՈՆ

Եվ միևնույն ժամանակ տեսնում ես բարեկամիդ՝ իր կյանքի ամենաերջանիկ րոպեի մեջ։

ՄԱՐԳԱՐԻՏ

Այո՜, պարոն Արտաշես, կարող եք շնորհավորել... Լևոնն ու Հեղինեն հենց այս րոպեիս պարզեցին միմյանց իրանց զգացմունքները։

ԱՐՏԱՇԵՍ

Ի՜նչ ուրախալի լուր... (Տեղից վեր թռչելով։) *Շնորհավորում եմ, Լևոն։* (Գրկվում են և համբուրվում։) *Դեռ չգնացած ես գուշակում էի, որ ձեր համակրությունն այդպիսի վախճան պիտի ունենա։* (Հեղինեին։) *Շնորհավորում եմ ձեզ, օրիորդ... քույրիկս...* (Համբուրելով ձեռքը։) *Այսուհետև ինձ թույլ կտաք այդպես անվանել ձեզ... Լևոնի հարսնացուն չէ կարող ինձ օտար մնալ։*

ՀԵՂԻՆԵ

Շատ ուրախ կլինեմ, պարոն Արտաշես, ձեզ պես եղբայր ունենալու։

ԱՐՏԱՇԵՍ, Հեղինեին գլուխ է տալիս, ճեռը դառնալով Լևոնին։

Կրկին շնորհավորում եմ, եղբայր... (Հեղինեին։) *Պետք է իմանաք, քույրիկ, թե մինչև ո՜ր աստիճան գրված ունիք դուք Լևոնի սիրտը...* (Լևոնին, ձեռքը ծոցը տանելով և ժպտալով։) *Կուզե՞ս բարձրաձայն կարդամ քո ճարտասանական դարձվածքները...*

Միծաղում է։

ԼԵՎՈՆ, բռնում է Արտաշեսի ձեռքը և ժպտալով։

Ո՜չ, ո՜չ, մենք քեզ հավատում ենք... Դու մեկ ա՜յս կողմը նայիր...

Ցույց է տալիս ճկարը։

ԱՐՏԱՇԵՍ

Վա՜հ, այս ի՞նչ սքանչելիք է...

Մնում է ապշած։

ԼԵՎՈՆ

Տիկնոջ գործն է։

ՀԵՂԻՆԵ

Մարգարիտս հենց այսօր վերջացրեց այդ պատկերը։

ԼԵՎՈՆ

Միանգամայն հիացած եմ։

ԱՐՏԱՇԵՍ

Մքանչելի է... (**Մարգարտին:**) *Շնորհավորում եմ, տիկին... Դուք կատարելության եք հասցրել ձեր վրձինը...* (Մարգարիտը թեթև գլուխ է տալիս:) *Իսկ և իսկ Արշալույս...*

ԼԵՎՈՆ

Շնորհավորի՛ր և մեզ, Արտաշես։ (Մարգարիտն անցնում է ձախ կողմը:) *Այդ պատկերը մենք պարգև ստացանք մի քանի բոպի առաջ ի հիշատակ մեր երջանիկ նշանադրության։*

ԱՐՏԱՇԵՍ

Շնորհավորում եմ, ի սրտե շնորհավորում եմ։ Տա աստված, որ այս պարգևը երջանկություն բերե ձեզ... (Սեղմում է Հեղինեի և Լևոնի ձեռքը:) *Տե՛ս, տե՛ս, Լևոն, տե՛ս թե այս փոքրիկ կտավի կտորը ո՛ւր է տանում մարդու միտքը, հոգին... Հավատա՛, Լևոն, ինձ թվում է, որ ես հենց այս բոպեիս դարձյալ այն սրբավայրերումն եմ շրջում, և մեր թշվառ եղբայրակիցներին տեսնում եմ երկնքից օգնություն սպասելիս...* (Ամենքին:) *Դուք չգիտեք, թե ի՛նչ դրության մեջ են այն խեղճերը։ Պատիվ, կյանք, կայք, ընտանիք, ոչինչ, ոչինչ ապահով բան չունին այն թշվառները։ Բայց այդ մասին հետո...* (Լևոնին:) *Դու ասա՛, տեսնեմ, ի՞նչ եք անելու, ի՞նչպես եք տուն ու տեղ սարքելու... Կարծում եմ, որ դու քո գյուղից ձեռք չես վերցնիլ։*

ԼԵՎՈՆ

Իհարկե չէ... Ի՞նչը կարող է փոխարինել գյուղական կյանքի վայելչությանը։ Հեղինեիս հետ մենք իսկույն որոշեցինք մեր բոլոր ուժերը գյուղին նվիրել։

ԱՐՏԱՇԵՍ

Կատարյալ հաջողություն եմ ցանկանում ձեզ։

ԼԵՎՈՆ

Նույնը և քեզ ենք ցանկանում։

ՀԵՂԻՆԵ

Ի բոլոր սրտե։

ԱՐՏԱՇԵՍ, գլուխ է տալիս նրանց և գնում է դեպի Մարգարիտը։

Իսկ ձեզ, տիկին, չգիտեմ ինչ ասեմ. լեզուս կաշկանդվում է... (Նրստում են բեմի ձախ կողմում: Հեղինեն ու Լևոնը մի կողմը քաշվելով նույնպես նստում են և սիրով խոսակցում:) *Ինձ այնպե՛ս ապշեցրեց ձեր բաժանությունը։*

ՄԱՐԳԱՐԻՏ

Վիճակս էր այդ, ի՛նչ արած... Դուք ի՞նչպես ճանապարհորդեցիք. վերջացրի՞ք արդյոք ձեզ տված հանձնարարությունը։

ԱՐՏԱՇԵՍ

Այդպես շուտ անկարելի էր, տիկին.. Գործը դեռ շարունակվում է... Ընկերներս այնտեղ մնացին։

ՄԱՐԳԱՐԻՏ

Աստված ինքը հաջողի... (**Առաջնեաց գլուխ է տալիս: Լռություն:**) *Գիտե՞ք, ես արդեն սկսել էի ոտոտիկ անհանգիստ լինել ձեր մասին... Ամբողջ երեք ամիս է գնացել եք և այդքան ժամանակ ձեզանից ա՛ջ մի նամակ չէր ստացվում։*

ԱՐՏԱՇԵՍ, ճուզված:

Ա՜խ, տիկին, եթե գիտենայիք....

ԱՆԱՀԻՏ, դրսից բերում է մի ծրար և տալիս է Մարգարտին:

Պատասխանի են սպասում, տիկին։

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՞ւմից է։

ԱՆԱՀԻՏ

Չգիտեմ, տիկին, առանցքոչ ժառան բերեց։

ՄԱՐԳԱՐԻՏ, բանալով ծրարը:

Դարձյա՛լ... (Աչքի անցնելով թուղթը և ասոտիկ քվարվելով:) *Աստվա՛ծ իմ....*

Տեղից վեր է թռչում: Ամենքն էլ ոտքի են կանգնում:

ԱՐՏԱՇԵՍ

Ի՞նչ է...

ՀԵՂԻՆԵ, միաժամանակ:

Ի՞նչ կա...

ԼԵՎՈՆ, նույնպես:

Ի՞նչ է պատահել։

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՛չինչ, ո՛չինչ... (Անահիտին:) *Ասա՛, լա՛վ։*

Անահիտը դուրս է գնում:

ԱՐՏԱՇԵՍ

Ի՞նչ բան է, տիկին։ Ջե՞նք կարող արդյոք պիտանի լինել։

ԼԵՎՈՆ

Իհարկե։

ՄԱՐԳԱՐԻՏ

Շնորհակալ եմ, բարեկամներս, դուք ոչնչով չեք կարող օգնել... Իմ վիճակս կախված է մի ա՛յնպիսի մարդու կամքից, որ վայելում է իր դիրքի բոլոր արտոնությունները, իսկ ես՝ թշվառս, նույն իրավունքներից զուրկ, անօգնական և անպաշտպան, ստիպված եմ նրա կամայականությանը զոհ լինել ամբողջ կյանքիս ընթացքում։ (Տալով թուղթը Լևոնին:) *Տեսե՛ք ահա՛ այս երրորդ անգամն է, որ ոստիկանությունը պահանջում է ինձանից իմ գլխագիրը, բայց մինչև օրս ես չեմ կարողանում ձեռք բերել այդ ողորմությունը իմ պարոն ամուսնուց...*

ԱՐՏԱՇԵՍ

Ի՞նչ... Մի՞թե չէ տալիս նա ձեզ այդ թուղթը։

ՄԱՐԳԱՐԻՏ

Այո՛, չէ տալիս։ (Մինչդեռ Լևոնն ու Արտաշեսը կարդում են թուղթը, մեկուսի:) *Կաղատվե՞մ արդյոք ես այս տանջանքներից...*

ԱՐՏԱՇԵՍ

Հանգստացե՛ք, տիկին, մենք կկարգադրենք այս գործը... Ամենահասարակ քաղաքավարությունն իսկ պահանջում է, որ նա ապահովացնե ձեր կացությունը գոնե այդ կողմից։

ԼԵՎՈՆ, թուղթը տալով Հեղինեին, որ նույնպես հետաքրքրվում էր։

Այո՛, պետք է աշխատենք շուտով ձեռք բերել այդ գլխագիրը, ապա թե ոչ, ինչպես երևում է, ոստիկանության համբերությունը հատնում է արդեն։

ՄԱՐԳԱՐԻՏ

Բայց ի՞նչպես ձեռք բերել. ո՞վ կտա ինձ իմ գլխագիրը, ո՞վ ունի իրավունք բացի իմ ամուսնուց... Դուք լավ գիտեք, որ այդ կախված է միմիայն նրա կամքից, և ո՛չ մի զորություն չէ կարող ստիպել նրան այդ արտոնագիրն ինձ տալու, եթե ինքը չկամենա...

ԱՐՏԱՇԵՍ

Իզուր եք այդչափ անհանգիստ լինում, տիկին. այդ այնքան էլ դժվար չէ, որքան կարծում եք։

ԼԵՎՈՆ, առնելով թուղթը Հեղինեի ձեռքից։

Այո՛, տիկին, ահա՛ ես ու Արտաշեսը իսկույն կերթանք ոստիկանատուն և կաշխատենք որ մի փոքր ժամանակ տան մեզ, իսկ այդ միջոցին, իհարկե, մի ելք կգտնենք։

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՛չ, դուք մնացե՛ք... Ես ինքս պետք է գնամ, ես ինքս պետք է դնեմ դուռն ընկնեմ, ազգականներիս միջնորդությանը դիմեմ, տեսնեմ թե ի՞նչ կարող եմ անել իմ սև ու մութ օրիս համար... Դուք մնացե՛ք, թո՛ղ իմ անբախտությունը չխանգարե ձեր երջանկությունը... (Գնալով:) *Օ՜, այս ամենը ամուսնուս գործն է, ես լավ գիտեմ...*

Դուրս է գնում ձախ կողմի դռնից:

ՀԵՂԻՆԵ

Մտածեցե՛ք, պարոններ, աշխատեցե՛ք, ազատեցե՛ք նրան... Ի սեր աստուծո, ազատեցե՛ք...

Դուրս է գնում Մարգարիտի հետևից:

ՏԵՍԻԼ Զ

ԱՐՏԱՇԵՍ, ԼԵՎՈՆ

ԱՐՏԱՇԵՍ

Ես կարծում եմ, որ ոստիկանապետը չի մերժիլ մեր խնդիրքը։

ԼԵՎՈՆ

Իհարկե... Ոստիկանության պահանջը, երևի, ստորին պաշտոնյաների ավելորդ եռանդի հետևանքն է։ Մեր ոստիկանապետը բարեկիրթ մարդ է և շատ էլ ազնիվ. հազիվ թե նա կամենա հալածել մի կնոջ, որ հասարակության ընտիր դասակարգին է պատկանում։

ԱՐՏԱՇԵՍ

Գնա՛նք, փորձենք, հետո ե՛ս գիտեմ իմ անելիքը։

ԼԵՎՈՆ, բուղրը դնելով սեղանի վրա։

Արդեն գլուխդ տաքացավ։

ԱՐՏԱՇԵՍ

Ես կցնորվիմ, Լևոն, եթե որևէ միջոցով ձեռք չբերեմ Մարգարտի գլխագիրը։ Այդ ամենակարևոր մի թուղթ է այս ժամանակին, ոստիկանությունը պահանջի, չպահանջի, այդ միևնույն է։

ԼԵՎՈՆ

Մի փոքր համբերություն, Արտաշես... Չէ՞ որ տիկնոջը գլխագիր տալը բացառապես կախված է միմիայն իր ամուսնու կամքից։

ԱՐՏԱՇԵՍ

Հավատա՛ ինձ, Լևոն, եթե մեզ չհաջողվի մի բանով օգնել, ես այդ գլխագիրը դեմ առ դեմ կառնեմ հենց նորին վսեմությունից... Ես նրա հետ հին հաշիվներ ևս ունիմ... Ինչքան ցավում եմ, որ այն ժամանակ ոչինչ չգիտեի դրանց հարաբերությունների մասին, ես նրան քաղաքավարության դասեր կտայի. բայց ի՞նչ արած, Մարգարտի պատվի համար ես ստիպված էի համբերությամբ տանել այն պարոնի վիրավորեցուցիչ ակնարկությունները և նրա վարմունքը։

ԼԵՎՈՆ

Խե՛ղճ կին... Ինչպես երևում է նա վաղուց տանջվելիս է եղել իր շվայտասեր ամուսնու ձեռքին։

ԱՐՏԱՇԵՍ

Օ՜, ես մի անգամ ընդմիշտ կազատեմ Մարգարտիս այն բռնակալից։ Ա՜խ, Լևոն, քո նամակներն ինձ խելագարության հասցրին... Հենց որ ստացա այդ նամակները, բոլոր գործերս թարձիթողի արի և գլխապատառ ճանապարհ ընկա.... Ահա՛ հինգ օր է, մեկ րոպե հանգստություն չեմ ունեցել. գիշեր ցերեկ սլանում էի անդադար. սար, ձոր, գետ, դաշտ կարծես գոյություն չունեին ինձ համար... Լևո՛ն, Լևո՛ն, եթե դու կարողանայիր երևակայել, թե ինչ կրակով է այրվում սիրտս, ո՛րպիսի սիրով եմ սիրում ես Մարգարտին... Ես պատրաստ եմ ամեն բան անել, ամեն բան մոռանալ և ուրախությամբ մեռնել նրա ոտների տակ, միայն թե մի օր երջանիկ տեսնեի նրան...

ԼԵՎՈՆ, փոքր լռությունից հետո։

Ես քեզ հասկանում եմ, Արտաշես... Եվ նա լիովին արժանի է այդ սիրուն։

ԱՐՏԱՇԵՍ

Գիտե՞ս, եթե այս փոփոխությունը չպատահեր նրա կյանքի մեջ, ես վճռել էի այլևս չերևալ նրա աչքին... Բայց գնա՛նք, Լևոն, ուշանում ենք։

ԼԵՎՈՆ

Իսկույն, Արտաշես, թո՛ղ նրանք էլ դուրս գան։

ԱՐՏԱՇԵՍ

Ա՛խ, այո՛, ես բոլորովին շփոթվեցա... (Մառ է գալիս, ճանկռած կանգ է առնում նկարի առաջ։) *Տե՛ս, Լևոն, կհավատա՞ս, այլևս ոչինչ չեմ որոշում, աչքերս մթնել են միանգամայն։*

ՏԵՍԻԼ Է

ՆՐԱՆՔ, ՄԱՐԳԱՐԻՏ, ՀԵՂԻՆԵ

ՄԱՐԳԱՐԻՏ, դուրս է գալիս Հեղինեի հետ. երկուսն էլ բոլորովին պատրաստ՝ տանից դուրս գնալու։

Ներեցե՛ք, պարոններ, որ ձեզ մենակ եմ թողնում, ես շուտով կվերադառնամ։

Հեղինեն մոտենում է իր սեղանին, վայր դնելով հովանոցը։

ԱՐՏԱՇԵՍ

Դուք սպասեցե՛ք, տիկին, հանգստացե՛ք, ի սեր աստուծո. մի կես ժամ միջո՛ց տվեք մեզ, մենք ահա՛ գնում ենք ոստիկանատուն։ Եթե մեզ

այնտեղ ոչինչ չհաջողվի, խոսք եմ տալիս ձեզ, որ ես անձամբ կերթամ պարոն Սամսոնյանի մոտ, կխոսեմ նրա հետ և ինչպես էլ լինի՝ կառնեմ նրանից ձեր գլխագիրը։

ՄԱՐԳԱՐԻՏ, սաստիկ ջփոթվելով։

Ի՞նչպես... Դո՞ւք, դո՞ւք, դո՞ւք նրա մոտ կերթաք... Ո՛չ, ո՛չ, մի՛ անեք այդ բանը, աղաչում եմ...

ԱՐՏԱՇԵՍ

Իսկ եթե ուրիշ ելք չլինի...

ՄԱՐԳԱՐԻՏ, վայր դնելով հովանոցը։

Իզուր, իզուր կլինի այդ բոլորովին... Դուք դեռ ամենը չգիտեք... նա զայրացած է իմ դեմ, նա պահանջում է, որ ես հանձն առնեմ մի հանցանք, որի հիշելն անգամ ինձ ամոթ է պատճառում... Աղաչում եմ ձեզ՝ մի՛ գնաք նրա մոտ... Զարհուրելի չարիք կարող է առաջ գալ այդ տեսակցությունից։

ԱՐՏԱՇԵՍ

Դուք անհանգիստ մի՛ լինիք, ոչինչ վտանգ չի կարող պատահել։ (Լևոնին։) Գնա՛նք, Լևոն (Մարգարտին։) Ես չեմ հանգստանալ, տիկին, մինչև ձեռք չբերեմ ձեր գլխագիրը։

Դուրս է գնում։

ՄԱՐԳԱՐԻՏ, այս ու այն կողմն ընկնելով։

Օ՜, Տեր աստված, նա գնաց... Ի՞նչ պետք է անեմ ես...

ԼԵՎՈՆ

Մի՛ հուսահատվեք, տիկին, ես նրանից չեմ հեռանալ։

ՄԱՐԳԱՐԻՏ

Շտապեցե՛ք, շտապեցե՛ք, աղաչում եմ. արգելեցե՛ք մի կերպով։

ԼԵՎՈՆ

Դուք անհո՛գ եղեք, տիկին։

Դուրս է գնում։

ՏԵՍԻԼ Ը

ՄԱՐԳԱՐԻՏ, ՀԵՂԻՆԵ

ՄԱՐԳԱՐԻՏ

Եվ այս ամենն ի՞նձ համար... ի՞նձ համար... Օ՜, ես թշվառս... էլ ո՞ւր գնամ այժմ. մինչև կտեսնեմ մեկին, նա արդեն իրանը կկատարե։

Վերարկուն հանելով, հուսահատ ընկնում է աջ կողմի աթոռի վրա և հենվելով սեղանին, գլուխը ձեռքերի մեջ է առնում։

ՀԵՂԻՆԵ, մի փոքր լռությունից հետո։

Մի՛ հուսահատվիր, Մարգարիտ, մի փոքր համբերությո՛ւն ունեցիր. տեսնենք ի՞նչ է լինում։

ՄԱՐԳԱՐԻՏ, տեղից վեր կենալով։

Ա՜խ, Հեղինե, եթե դու կարողանայիր թափանցել սրտիս խորքը, եթե դու կարողանայիր տեսնել, թե ի՞նչ է կատարվում այստեղ... Ա՜խ... ես ինձ համար չեմ մտածում, Հեղինե, թո՛ղ պատահի, ի՞նչ որ պատահելու է... Ես պատրաստ եմ ամեն նեղություններ, ամեն զրկանքներ կրելու, բայց իմ պատճառով ինչի՞ ուրիշները վտանգի ենթարկվին... Մինչդեռ ես՝ թշվառս, հնար չունիմ խափանել այդ վտանգը...

ՀԵՂԻՆԵ

Ինչե՞ր ես ասում, Մարգարիտ. երեխա՞ է, ի՞նչ է։

ՄԱՐԳԱՐԻՏ, բռնելով գլուխը։

Ես ինքս էլ չեմ հասկանում՝ ինչ՛եմ ասում. միտքս շփոթվում է, գլուխս պտույտ է գալիս, ես խելագարվում եմ։

ՀԵՂԻՆԵ

Հանգստացի՛ր, ի սեր աստուծո... Ինչի՞ ես չափազանցության հասցնում գործը... Չէ՞ որ Լևոնը խոստացավ նրանից չհեռանալ։

ՄԱՐԳԱՐԻՏ

Լա՛վ, հոգիս, լա՛վ, դու գնա՛, գործդ վերջացրու, ժամանակ է, շուշանաս։

Հանում է գլխարկը և նստում է նույն տեղը։

ՀԵՂԻՆԵ

Այո՛, Մարգարիտս. միայն այս տետրակը հասցնեմ ուսումնարան... (Վերցնում է տետրակը:) *Ես շուտով կվերադառնամ...* (Գուրգուրելով Մարգարտին:) *Մի՛ հուսահատվիր, հոգիս, աղաչում եմ քեզ, մի՛ հուսահատվիր. աստված ողորմած է։* (Վերցնելով նովանոցը, մեկուսի:) *Խե՛ղճ, խե՛ղճ իմ Մարգարիտ...*

Դուրս է գնում նախասենյակից։

ՄԱՐԳԱՐԻՏ, մենակ:

Աստվա՜ծ իմ, աստվա՜ծ... (Տեղից վեր է թռչում:) *Ի՜նչ անեմ, ի՜նչ անեմ... Ո՞ւմ դիմեմ...*

Հուսահատ ման է գալիս։

ՏԵՍԻԼ Թ

ՄԱՐԳԱՐԻՏ, ԱՆԱՀԻՏ

ԱՆԱՀԻՏ, մտնելով նախասենյակից:

Տիկին, այն օրվա մարդն է։

ՄԱՐԳԱՐԻՏ

Ի՞նչ մարդ։

ԱՆԱՀԻՏ

Ա՛յ, այն հաստ-հաստ մարդը, անցյալ շաբաթ որ այստեղ էր։

ՄԱՐԳԱՐԻՏ

Վե՜րջապես... խնդրի՛ր։

ԱՆԱՀԻՏ, նախասենյակի դռներում:

Համեցե՛ք, պարոն։

Ներս թողնելով Աբելին՝ ինքը դուրս է գնում:

ՏԵՍԻԼ Ժ

ՄԱՐԳԱՐԻՏ, ԱԲԵԼ

ՄԱՐԳԱՐԻՏ, մեկուսի:

Օ՜, սոսկալի մարդ...

ԱԲԵԼ, թերթապանը ձեռքին։

Բարի լույս ձեզ, տիկին։

ՄԱՐԳԱՐԻՏ, սառը:

Բարև, պարոն։ (Հրավիրելով նստել:) *Համեցե՛ք... Վերջապես շնորհ բերիք, պարոն...* (Նստելով:) *Գլխագիրս բերի՞ք արդյոք։*

ԱԲԵԼ, թերթապանը բանալով:

Այդ հեշտ է, տիկին, միայն թե կարողանամ մի կերպ համաձայնություն կայացնել ձեր մեջ։

ՄԱՐԳԱՐԻՏ

Ի՜նչ... Մի՞թե դեռ էլի չեք բերել. ամբողջ շաբաթ է սպասում եմ... Չէ՞ որ դուք ինձ խոստացաք։

ԱԲԵԼ

Այո՛, տիկին, բայց ես մեղավոր չեմ. գիտե աստված, որ մեղավոր չեմ։ (Նստելով:) *Նորին վսեմությունը, այսինքն ձեր ամուսինը, տեղեկացավ ուր հարկն էր... Այն ստորագրությունը, որ դուք ինձ հանձնեցիք անցյալ անգամ, բավարար չէ, այսինքն... օրինական ամեն ձևերը չունի... Նրա փոխարեն պետք է այս թղթի տակ ստորագրեք։*

Հանում է թերթապանից թուղթը, որ արտաքուստ նման է նախկին թղթերին: (Քառածալ մի թերթ:)

ՄԱՐԳԱՐԻՏ

Իսկ իմ գլխագի՞րը, պարոն, իմ գլխագիրը... Ոստիկանությունը պահանջում է, հասկանո՞ւմ եք դուք։ (Ցույց է տալիս սեղանի վրա դրած ոստիկանության թուղթը:) *Ահա՛...*

ԱԲԵԼ

Այո՛, տիկին. բայց Նորին վսեմությունը բացորոշ հայտնեց, որ նա ձեզ գլխագիր չի տալ, մինչև դուք չստորագրեք այս թղթին...

ՄԱՐԳԱՐԻՏ

Այդ գարշելի թղթին ես երբեք չեմ ստորագրիլ, ես ձեզ ասացի արդեն։

ԱԲԵԼ

Ո՛չ, ո՛չ, տիկին, մի՛ բարկանաք, այս այն չէ... Այս թուղթը բոլորովին նոր է գրած։ Նորին վսեմությունը իր ձեռքով մեղմացրեց դարձված-

ներքո... Գործի էությունը նրանումն է միայն, որ հանցանքը դուք ձեզ վրա պիտի առնեք։

ՄԱՐԳԱՐԻՏ

Աստված էլ գիտե, մարդիկ էլ գիտեն, որ ես ոչինչ հանցանք չունիմ և չեմ էլ կարող ճանաչել... Ինչ որ գրեցի անցյալ անգամ, այն էլ բռնի հարկադրեցիք ինձ գրելու։

ԱԲԵԼ, շվարված։

Այս էլ թեթև է գրած, տիկին։

Տատանվելով առաջարկում է թուղթը։

ՄԱՐԳԱՐԻՏ, առնելով թուղթը և աչքի անցնելով, գունաթափվում է և տեղից վեր թռչում։

Երբե՛ք, երբե՛ք... Երբե՛ք չեմ ստորագրիլ ես այս թղթին... (Գցում է թուղթը սեղանի վրա։) Դարձյալ նույն խայտառակությունը, նույն գարշելի զրպարտությունը... Ի՞նչ կա այստեղ փոփոխած։

ԱԲԵԼ, ոտքի կանգնելով։

Բայց, տիկին...

ՄԱՐԳԱՐԻՏ

Իզուր եք աշխատում, պարոն... Երբե՛ք, երբե՛ք չեմ տալ ես այդ զզվելի ստորագրությունը... Հասկանո՞ւմ եք դուք... երբե՛ք։

ԱԲԵԼ

Սակայն...

ՄԱՐԳԱՐԻՏ

Այլևս ո՛չ մեկ խոսք, խնդրում եմ... Այդ տեսակ խայտառակություն երբեք չեմ ընդունիլ ինձ վրա, ասացի ձեզ... Ի՞նչն է փոխած այստեղ, ի՞նչը... Անհավատարիմ եմ եղել ես իմ ամուսնուն, արատավորել եմ ես նրա անունը, նրա պատիվը. ուրիշ էլ ի՞նչ մնաց... (Զայրացած։) Ո՜հ, աստվա՛ծ, աստվա՛ծ, ինչի՞ ամոթից գետինը չեմ մտնում այս րոպեիս։

ԱԲԵԼ

Մտածեցե՛ք, տիկին. նա ձեր օրինավոր ամուսինն է... Նա զայրացած էր ձեր դեմ, նրա խոսքն ամեն տեղ անցնում է... Նա շատ չարիք կարող է հասցնել ձեզ։ (Խոստովանաբար։) Եվ ուղիղն ասեմ ձեզ, տիկին... Նա արդեն դիմել է Նահանգական Դատարանին։ Հետևանքը դուք ինքներդ գիտեք, տիկին... Ո՞վ կարող է օրենքին ընդդիմանալ...

ՄԱՐԳԱՐԻՏ

Գիտեմ, գիտեմ, պարոն, և դրա համար էլ օգուտ եք քաղում ձեր իրավունքներից... Գիտեմ... Այստեղ օրենքները ձեր օգտին են խոսում, ձեզ են պաշտպանում։ Ի՞նչ կարող եմ անել... Բայց կա և երկնային դատաստան, որի առաջ դուք մեկ էլ պատասխան եք տալու։

ԱԲԵԼ

Երկնային դատաստանը վկա, տիկին, որ այսօր է թե վաղը ձեզ դատարան կհրավիրեն, եթե չեք ստորագրիլ այս թղթին, և ձեզ կհարկադրեն ձեր ամուսնու մոտ ապրել... Օ՜, դուք երբեք չեք ազատվիլ նրա հալածանքներից։

ՄԱՐԳԱՐԻՏ

Ի՜ղ տանե, ի՞նչ կամենա... Եթե ելք չկա ինձ ազատվելու, մահը կազատե ինձ նրանից։

ԱԲԵԼ, փոքր լռությունից հետո վերցնում է իր բերած թուղթը։

Տիկի՜ն, լսեցե՛ք դուք իմ բարեկամական խորհուրդը... Կատարեցեք ձեր ամուսնու ուզածը և այն ժամանակ ամեն ինչ կարգին կերթա... Նա կվերջացնե գործը հաշտությամբ... դուք հանգիստ կապրեք ձեզ համա՛ր... ձեզ ոչ ոք չի նեղացնի՜...

ՄԱՐԳԱՐԻՏ, ընդմիջելով։

Թողե՛ք ինձ, թողե՛ք...

ԱԲԵԼ

Իզուր եք բարկանում, տիկին, չէ՞ որ այս մի գատարկ ձևականություն է, որով ձեր խիղճը չի արատավորվի երբեք... Ի՞նչ կպակասի ձեզ, եթե ստորագրեք այս թղթին։

ՄԱՐԳԱՐԻՏ, ստատիկ զայրացած։

Դուք կամենում եք խելագարության հասցնել ինձ... (Հուսահատված կանչում է։) Անահի՜տ...

ՏԵՍԻԼ ԺԱ

ՆՈՒՆՔ, ԱՆԱՀԻՏ

ԱՆԱՀԻՏ, ներս վազելով։

Ի՞նչ կկամենաք, տիկին։

ՄԱՐԳԱՐԻՏ, բռնելով Անահիտի ձեռքը:

Կա՛ց այստեղ, Անահիտ, ես նվազում եմ... (Ցածր:) Այս մա՜ղը...

Թողնելով Անահիտին, աշխատում է իշխել իրան:

ԱՆԱՀԻՏ, Աբելին:

Ի՞նչ եք ուզում մեզանից, պարոն. հա՜նգիստ թողեք տիկնոջը, ի սեր աստուծու:

ԱԲԵԼ, Մարգարտին:

Ներողություն, տիկին... ես աշխատում էի որ գործը խաղաղությամբ վերջանա, բայց դուք ինձ չհասկացաք... Այժմ ես անպարտ եմ... Մնաք բարով... (Վերցնում է թերթապահը:) *Այն միայն աստուծուն է հայտնի, թե ի՞նչ վիշտ է պատճառում ինձ ձեր դրությունը... Իմ այնքան գալ-գնալս իզուր անցավ...* (Մեկուսի:) *Փառք քեզ, աստված, որ ինձ էս հանգին կնիկ չես ավել...* (Գնում է, ճանապարհից հետ է նայում Մարգարտի կողմը և օձիքը բաց տալով, առանձին:) *Օ՜հ, հո՜, հո՜, հո՜, հո՜, հո՜...*

Գլուխը շարժելով դուրս է գնում նախասենյակից:

ՏԵՍԻԼ ԺԲ

ՄԱՐԳԱՐԻՏ, ԱՆԱՀԻՏ

ՄԱՐԳԱՐԻՏ

Ա՜խ, սիրտս...

ԱՆԱՀԻՏ

Հանգստացե՛ք, տիկին... Ա՜խ, ի՞նչքան չարչարում են ձեզ այդ մարդիկը:

ՄԱՐԳԱՐԻՏ

Պետք է տանջվիմ այսպես, քանի որ կենդանի եմ: (Աստաստուրը պանելով:) *Գնա՛, տե՛ս, դոնները բաց չմնան:*

ԱՆԱՀԻՏ

Ճշմարիտ, ես կհրամայեմ դռնապանին, որ այսուհետև բնավ չընդունի այդ պարոններին:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ուժով ներս կթափվեն, Անահիտ, ո՞վ է ինձ պաշտպանողը:

ԱՆԱՀԻՏ

Աստված ողորմած է, տիկին:

ՄԱՐԳԱՐԻՏ

Երանի աստված հոգիս առնե ու պրծնեմ ես այս աշխարհից:

Աչքերը սրբում է:

ԱՆԱՀԻՏ

Խնայեցե՛ք ձեզ, տիկին, մեղք եք:

Տխուր դուրս է գնում նախասենյակից:

ՏԵՍԻԼ ԺԳ

ՄԱՐԳԱՐԻՏ, մենակ, դառնությամբ:

Խնայեցե՛ք ձեզ... Ամբողջ կյանքս փշրած է, այլևս ի՞նչ մնաց խնայելու... (Երկար ժամանակ արտանայտում է վերջին ատելանի հուսահատություն:) *Կրկին նրա մոտ տարե՞լ... Օ՜, ավելի լավ է ջուրն ընկնեմ, քան թե կրկին նրա ձեռքի տակը լինիմ...* (Նայելով ժամացույցին:) *Ի՞նչ եղաք...* (Մոտենում է լուսամուտին և անշարժ դուրս նայում: Հանկարծ հեռանալով լուսամուտից:) *Ի՞նչ պատահեց արդյոք... Չլինի՞ թե գնաց նրա մոտ... Ա՜հ...* (Շտապով ծածկում է գլխարկը և վերարկուն ու հովանոցը վերցնում:) *Օ՜հ, ի՞նչ թշվառն եմ, ի՞նչ թշվառը...*

Գնում է դեպի նախասենյակը:

ՏԵՍԻԼ ԺԴ

ՄԱՐԳԱՐԻՏ, ԼԵՎՈՆ

ԼԵՎՈՆ, մտնելով նախասենյակից:

Վերջապես կարող եմ ձեզ շնորհավորել, տիկին...

ՄԱՐԳԱՐԻՏ

Ի՞նչ, մի՞թե...

ԼԵՎՈՆ

Այո՛, այո՛... Բայց ես ձեզ խանգարեցի. կարող եմ ուղեկցել ձեզ և ճանապարհին պատմել:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՛չ, ո՛չ, ես դեպի ձեզ էի շտապում... Պատմեցե՛ք, պատմեցե՛ք...

Վերարկուն ու հովանոցը վայր է դնում:

ԼԵՎՈՆ

Ոստիկանապետը սիրով ընդունեց մեր խնդիրքը և հրամայեց իսկույն կարգադրել, որ անհանգիստ չանեն ձեզ, մինչև ձեր գործը օրինական ընթացք կստանա... Նա այնքան բարի էր, որ խոստացավ անձամբ միջնորդել Նահանգապետի առաջ՝ ձեզ գլխագիր տալու։

ՄԱՐԳԱՐԻՏ, սեղմելով Լևոնի ձեռքը։

Շնորհակա՛լ եմ, բարեկամ... Շա՛տ, շա՛տ շնորհակալ եմ... Նստեցե՛ք... Իսկ պարոն Արտաշեսն ի՞նչ եղավ։

Նստում է:

ԼԵՎՈՆ, նստելով:

Նա իսկույն կգա, սպասում է այնտեղ հրամանագրին. ես վազեցի որ մի քանի բոպե առաջ ուրախացնեմ ձեզ։

ՄԱՐԳԱՐԻՏ

Դուք շատ բարի եք, պարոն Լևոն։

Հանում է գլխարկը:

ԼԵՎՈՆ

Օ՜հ, տիկին, այս մի չնչին ծառայություն է։

ՏԵՍԻԼ ԺԵ

ՆՐԱՆՔ, ԱՐՏԱՇԵՍ

ԼԵՎՈՆ, տեսնելով Արտաշեսին նախասենյակից մտնելիս:

Ահա՛ և Արտաշեսը։

ԱՐՏԱՇԵՍ, մի ծրար ձեռքին:

Ահա՛, տիկին, ոստիկանության պահանջներից դուք ազատ եք, իսկ գլխագիր կստանաք Նահանգապետից... Լևոնը պատմած կլինի։

ՄԱՐԳԱՐԻՏ, վեր կենալով:

Այո՛. շնորհակալ եմ նրանից էլ, (Առնելով Արտաշեսի ձեռքը:) *ձեզանից էլ, պարոն Արտաշես... Նստեցե՛ք, խնդրեմ։*

Իջեր նստում է:

ԱՐՏԱՇԵՍ, ողջունելով Մարգարտին, դառնում է Լևոնին:

Դու կամենում էիր անձամբ հանձնել այս հրամանագիրը թաղապետին։

ԼԵՎՈՆ, առնելով ծրարը և դնելով սեղանի վրա:

Անշուշտ... (Մարգարտին:) *Ուղիղն ասած, տիկին, եթե Արտաշեսի աշակցությունը չլիներ, ես մենակ ոչինչ չէի կարող անել։*

ԱՐՏԱՇԵՍ

Լևո՜ն...

ՄԱՐԳԱՐԻՏ

Կրկին շնորհակալ եմ, բարեկամներս... Այդ հրամանագիրն էլ մեծ ողորմություն է... Փա՛ռք աստուծո, այժմ գոնե մի փոքր ժամանակ հանգիստ կթողնեն ինձ, թեև այն բռնակալը, ասում են, դիմել է արդեն Նահանգական Դատարանին, (Դառն ժպիտով:) *որ քա՜շ տալով տանեն ինձ նրա դուռը։*

ԼԵՎՈՆ

Օ՜, տիկին։

ԱՐՏԱՇԵՍ, որ մնում է ոտքի վրա:

Զարմանալի ոչինչ չկա, Լևոն, օրենքը տալիս է նրան այդ իրավունքը... (Մարգարտին:) *Այնուամենայնիվ դուք հանգի՛ստ եղեք, տիկին, մենք ինքներս ճանապարհ կգտնենք գործելու...*

ՄԱՐԳԱՐԻՏ

Ի՜նչքան վիշտ ու չարչարանք եմ պատճառում ես իմ բարեկամներիս։

ԱՐՏԱՇԵՍ

Ա՜խ, ի՞նչ եք հրամայում...

ԼԵՎՈՆ

Մի՞թե պարտավոր չենք...

ՆԻԱՆՔ. ՀԵՂԻՆԵ

ՀԵՂԻՆԵ, նախասենյակի դռներից:

Ի՞նչ արիք, պարոններ, ի՞նչ շինեցիք։ (Հովանոցն ու վերարկուն տալիս է Անահիտին, որ ճեռնում էր նրան:) *Կարողացա՞ք մի ճար անել արդյոք։*

ԼԵՎՈՆ, վեր կենալով:

Ուրախացի՛ր, հրեշտակս, ուրախացի՛ր. ահա՛, ոստիկանապետի հրամանը, իսկույն տանելու եմ թաղապետի մոտ։ Տիկնոջը հանգիստ կթողնեն։

ՀԵՂԻՆԵ

Ի՞նչպես, մի՞թե... Օ՜հ, ա՛յ ուրախություն... (Մարգարտին:) *Շնորհավորում եմ, հոգիս...* (Վրա ընկնելով. համբուրում է նրան:) *Սրտանց շնորհավորում եմ...*

ՄԱՐԳԱՐԻՏ, համբուրելով Հեղինեին:

Շնորհակալ եմ, Հեղինես...

ՀԵՂԻՆԵ

Ջասացի՞ քեզ, որ ասված ողորմած է... Ահա՛ վերջապես...

Վերցնում է գլխարկը:

ՄԱՐԳԱՐԻՏ

Այո՛...

ՀԵՂԻՆԵ

Իսկ գլխագի՞րը... Չէ՞ որ նորին վսեմությունը չէ համաձայնում։

Գլխարկը տալիս է Անահիտին, որ վերցնելով և Մարգարտի վերարկուն, հովանոցն ու գլխարկը, բոլորը միասին դուրս է տանում ձախ դռնից:

ԱՐՏԱՇԵՍ

Այդ մասին դուք երկյուղ մի՛ կրեք, քույրիկս, գլխագիրն էլ կլինի։

ԼԵՎՈՆ

Օ՜, այժմ մենք ապահով ենք... (Մարը ցույց տալով:) *Քանի որ այս կա, գլխագիր պահանջող չի էլ լինիլ այստեղ։*

ՀԵՂԻՆԵ

Տա՛ր, Լևոն, տա՛ր այդ ծրարը, թո՛ղ այսուհետև է՛լ ոստիկանի երես չտեսնենք մենք այստեղ։

ԼԵՎՈՆ

Միամի՛տ եղիր, էլ ո՛չ ոք չի նեղացնիլ մեզ։

ՀԵՂԻՆԵ

Փա՛ռք աստուծո, վերջապես հանգստացանք։ Այժմ ես գնամ և ճաշի պատրաստություն տեսնեմ։

ԼԵՎՈՆ

Ինձ էլ կթողնե՞ս, հոգիս, որ օգնեմ քեզ, այնպես չէ՞։

ՀԵՂԻՆԵ

Կարող ես։ (Ժպտալով:) *Չէ՞ որ մեր նշանաքանն է՝ միասին աշխատելս։*

Մարգարիտը ճեռգինեան տխրում է:

ԼԵՎՈՆ

Անշուշտ... (Արտաշեսին, որ այս միջոցին կանգնած է նկարի առաջ:) *Դու այսօր մեր հյուրն ես իհարկե։*

ՀԵՂԻՆԵ

Իհարկե... հույս ունիմ որ մեր եղբայրը կհամաձայնի մասնակից լինել ընդհանուրիս ուրախությանը։

ԱՐՏԱՇԵՍ

Մեծ հոժարությամբ, բայց մի կես ժամից հետո պարտական եմ գնալու... Կարևոր գործ կա և խոստացել եմ։

ՀԵՂԻՆԵ

Վնաս չունի. մենք ձեզ կսպասենք թեկուզ մինչև երեկո։ (Արտաշեսը գլուխ է տալիս նրան: Դիմելով Մարգարտին:) *Իսկ դու, հոգիս, ինչի՞ այդպես տխրեցիր... Բավական է, խնդրեմ, մի փոքր էլ ուրախանանք... Դեռ տե՛ս՝ թե ի՛նչ օրեր ենք անցկացնելու գյուղում...* (Արտաշեսին:) *Գիտե՞ք, եղբայր Արտաշես, Լևոնս այնքան բարի է, որ կամենում է հատկապես ինձ համար ուսումնարան հիմնել մեր գյուղում։*

ԱՐՏԱՇԵՍ

Հրաշալի՜ գաղափար, հրաշալի՜ ասպարեզ գործունեության...

ԼԵՎՈՆ, Արտաշեսին:

Այդ մասին դեռ ես շա՜տ բան ունինք կարգադրելու...

ՀԵՂԻՆԵ, շարունակելով:

Կարող ենք երևակայել, պարոն Արտաշես, թե ո՜րքան ուրախ եմ ես, ի՜նչքան երջանիկ, որ ապրելով սիրած մարդու հետ՝ միևնույն ժամանակ պարապ չեմ մնալու և որ ես ևս մասնակից եմ լինելու ժողովրդի հառաջդիմության գործին։

ԱՐՏԱՇԵՍ

Ես լիովին ըմբռնում եմ, քույրիկս, ձեր զգացմունքը։

Հեղինեն գլուխ է տալիս:

ԼԵՎՈՆ

Գիտե՞ք ինչ, պարոններ... Եկե՛ք՝ ուշդակի քշենք գնանք մեր գյուղը, հենց իսկույն։ Համաձա՞յն եք։

ՀԵՂԻՆԵ

Հիանալի՜ է։

ԼԵՎՈՆ, Մարգարիտին:

Ի դեպ. տիկին, ձեզ վրա մի փոքրիկ պարտք էլ կա. հիշո՞ւմ եք... ԿՀաշենք այնտեղ, կուրախանանք և եկեղեցական դարձյալ կվերադառնանք միասին։

ՄԱՐԳԱՐԻՏ

Ես համաձայն եմ։

ՀԵՂԻՆԵ, հրճված:

Հրաշալի՜ է, հրաշալի։

ԼԵՎՈՆ, Արտաշեսին:

Իսկ դու ի՞նչ կասես... Կարող ես գործդ վերջացնել և հասնել մեզ ուղղակի կայարան։

ԱՐՏԱՇԵՍ

Կաշխատեմ։

ՀԵՂԻՆԵ

Աշխատեցե՛ք, եղբայրս, ձեզ հետ միասին մենք ավելի ուրախ կլինինք...

ԱՐՏԱՇԵՍ

Ես ամենայն միջոց գործ կդնեմ, որ չզրկեմ ինձ ձեր ընկերակցությունից։

ԼԵՎՈՆ, վերցնում է ծարը:

Իսկույն կվերադառնամ։ (Կանանց:) *Դուք էլ, տիկնայք, պատրաստ եղեք։* (Արտաշեսին:) *Տե՛ս, մենք կսպասենք քեզ. շուտո՛վ արի, խնդրեմ... Քեֆը քե՛ֆ է...*

ՀԵՂԻՆԵ

Ա՛յ թե կ՝ուրախանանք...

ԼԵՎՈՆ, Հեղինեին, որ նրան ճանապարհ է գցում:

Հոգյա՜կս... (Համբուրում է ձեռքը:) *Ես իսկույն կգամ...*

Դուրս է գնում:

ՀԵՂԻՆԵ

Իսկ ես կերթամ, կպատրաստեմ ամեն բան և հետո՝ բարի ճանապարհ. (Գիմելով Արտաշեսին:) *բայց անպատճառ ձեզ հետ միասին, պարոն Արտաշես։* (Գրկելով Մարգարտին:) *Ի՜նչքան ուրախ եմ, ի՜նչքան երջանիկ եմ ես, իմ անգին Մարգարիտս...*

Դուրս է վազում ձախ կողմից:

ՏԵՍԻԼ Ժ Է

ՄԱՐԳԱՐԻՏ, ԱՐՏԱՇԵՍ

ԱՐՏԱՇԵՍ, կարճ լռությունից հետո, նստելով:

Երջանի՜կ զույգ։

ՄԱՐԳԱՐԻՏ

Այո՛, ես հավատում եմ, որ Հեղինեն երբեք դղջալու տեղիք չի ունենա։

ԱՐՏԱՇԵՍ

Անկասկած... Լևոնը թեթևամիտ երիտասարդ չէ։

ՄԱՐԳԱՐԻՏ

Այո՛, ճանաչում եմ։ (Փոքր լռությունից հետո հոգվոց քաշելով:) *Եթե ամենայն ամուսնություն այդպես կատարվեր, գուցե այն ժամանակ*

ինձ նման թշվառ կանայք սակավ լինեին... (Աչքերը սրբում է:) Ներեցե՛ք, պարոն Արտաշես, ներեցե՛ք իմ արտասուքները։ Ի՞նչ արած՝ բախտս այնպես բերեց, որ ես այս օրին հասա... Իրավունքներից զո՛ւրկ, անունից զո՛ւրկ, ազատությունից զո՛ւրկ...

ԱՐՏԱՇԵՍ

Հանգստացե՛ք, տիկին, աղաչում եմ ձեզ, հանգստացե՛ք. ձեր դրությունն աննկարագրելի ցավ է պատճառում ինձ, ձեր արտասուքներն այրում են սիրտս։

ՄԱՐԳԱՐԻՏ

Գիտեմ, պարոն Արտաշես, գի՛տեմ՝ թե ո՞րչափ կարեկից եք ինձ։

ԱՐՏԱՇԵՍ, վեր կենալով:

Կարեկից ե՞մ, և միմիայն կարեկի՛ց... Ո՛չ, տիկին, ո՛չ, ավելի խորին զգացմունք է ալեկոծում իմ սիրտը։ Հավատացե՛ք, տիկին, ես պատրաստ եմ հանձն առնել ամեն տեսակ զոհաբերություն, ամեն տեսակ տանջանք, միայն թե կարողանամ թեթևացնել ձեր դրությունը, բարեփոխել ձեր վիճակը։

ՄԱՐԳԱՐԻՏ, վեր կենալով:

Բարեկա՛մս... (Մեկնելով ձեռքը:) Իմ անգին, իմ հավատարիմ բարեկամս...

ԱՐՏԱՇԵՍ, բռնելով ձեռքը:

Ա՜խ, Մարգարիտս, իմ մանկության Մարգարիտս...

Սիրով վառված՝ ստեպ-ստեպ համբուրում է ձեռքը:

ՄԱՐԳԱՐԻՏ, մեղմությամբ ազատելով ձեռքը:

Արտաշե՛ս...

ԱՐՏԱՇԵՍ, շարունակելով, կրկին բռնում է ձեռքը:

Այսուհետև միայն մա՛հը կարող է բաժանել ինձ քեզանից։

ՄԱՐԳԱՐԻՏ, խղճությամբ:

Բարեկա՛մս... Արտաշե՛ս... խնդրում եմ...

ԱՐՏԱՇԵՍ, բորբոքված և սկզբում Մարգարտի ձեռքը բռնած:

Լսի՛ր, լսի՛ր, Մարգարիտս, աղաչում եմ քեզ, լսի՛ր ինձ... Թո՛ւյլ տուր պապանձված լեզուս բանալ, թո՛ւյլ տուր ասել քեզ այն, ինչ որ այսքան

տարի չեմ համարձակվել արտասանելու... Թո՛ւյլ տուր ինձ ասել, որ ես սիրում եմ քեզ, սիրում եմ այն օրերից, երբ դեռ երեխա միասին խաղում էինք, միասին զվարճանում... Ո՜հ, Մարգարիտս, իմ անգին Մարգարիտս, ես քեզ սիրում եմ հոգվույս բոլոր զորությունով, սիրում եմ ա՛յնքան, որքան բնությունը մարդուս ույժ է տվել սիրելու... Աստված քեզ ինձ համար էր ստեղծել, մարդիկ խլեցին ինձանից...

ՄԱՐԳԱՐԻՏ, սթափվելով:

Արտաշե՛ս, Արտաշե՛ս, դու ինձ տարար բոլորովին մի ուրիշ աշխարհ... Կարծես թե այս ամենը ցնորք է, լուսազարդ մի ցնորք... Այո՛, դու ինձ սիրում ես... Վաղուց է, որ զգում եմ ես այդ սերը, վաղուց է որ հասկանում եմ ես դրան... Հավատա՛ ինձ, Արտաշես, որ նույն անսահման սիրով ես ես քեզ եմ սիրում և ամբողջ աշխարհում ես ամենաերջանիկ կինը կլինեի, եթե կարողանայի քեզ պատկանել հավիտյան...

ԱՐՏԱՇԵՍ, հրճված:

Մարգարի՛տս... Ուրեմն բոլորը կորած չէ՞ ինձ համար. ուրեմն դեռ ես երջանկության հույս կա՞ ինձ համար։

ՄԱՐԳԱՐԻՏ, մեկուսի:

Ո՜հ, ո՜րքան ապաբախտ եմ ես... (Անցնելով մի քանի քայլ:) ո՜րքան ապաբախտ...

ԱՐՏԱՇԵՍ, մոտենալով:

Մարգարի՛տս...

ՄԱՐԳԱՐԻՏ

Ա՜խ, Արտաշես, խորին անդունդը բաժանում է մեզ միմյանցից... Մեր մեջ կանգնած է մի դարավոր պարիսպ, որը քանդելու համար գուցե մեր ամբողջ կյանքը բավական չլինի։

ԱՐՏԱՇԵՍ

Ոչինչ, ոչինչ արգելք մեզ չի կարող բաժանել այսուհետև. մենք սիրում ենք միմյանց։

ԱՐՏԱՇԵՍ

Դեռ երեխա՝ ես քեզ սիրում էի, չհասկանալով այդ սերը... Ծնողներս այնպես արին, որ ես մի անարժան մարդու կին դարձա... Շատ աշխատեցի, շատ տանջանքներ կրեցի, շատ պատերազմեցի ինքս ինձ հետ, որ սիրեմ նրան, բայց չկարողացա... Նա իր վարմունքով սիրտս հավիտյան

կարեց իրանից... Ես համբերեցի, որքան հնարավոր էր համբերել... Այժմ մենք բաժանված ենք, ես նրանից ազատվել եմ, նա իրավունք չունի արգելք դնել իմ երջանկությանը, որովհետև ինքն ապրում է, ինչպես կամենում է... Բայց հասարակությունը իր պահանջներն ունի, իր սահմանած կարգ ու կանոնը, որի առաջ ես պարտավոր եմ խոնարհվել... Ես երջանիկ կլինեի միայն քո անունը կրելով, Արտաշես, միայն արժանավոր ամուսին դ լինելով...

ԱՐՏԱՇԵՍ

Երկնային հրեշտակս, ես հասկանում եմ քո զգացմունքը, քո արդարացի պահանջը... Այդ մասին ես հենց այսօրվանից խաշխատեմ, դու միասի՞ն եղիր. ես մի րոպե անգամ չեմ հանգստանալ, մինչև ազատություն ձեռք չբերեմ... Բայց մինչև այդ երջանիկ օրը, մինչև որ մեր ամուսնության իրավունքն ստանանք, մինչև որ կարողանանք մեր միության ծեսը կատարել մարդկանց առաջ, մի՞թե մենք սրդեն ամուսիններ չենք աստուծո առաջ... Մենք սիրում ենք միմյանց, մեր երջանկությունը միայն քեզանից է կախված, իմ անմահ Մարգարիտ... Տո՛ր ինձ այդ երջանկությունը... աղաչում եմ քեզ, Մարգարիտ. մենք հավիտյան երջանիկ կլինինք...Դու գիտես, որ հավիտյան կսիրեմ քեզ, և այս սերը միայն մահը կարող է դադարեցնել... (Լռություն:) *Մարգարի՞տս...*

ՄԱՐԳԱՐԻՏ

Հավատացի՛ր, Արտաշես, ես ես պակաս չեմ սիրում քեզ, որովհետև երբ կամենաս, երբ հարկավոր լինի, կյանքս կզոհեմ քե՛զ, քե՛զ համար, քո՛ երջանկության համար... Բայց որ քեզ պատկանեմ և միևնույն ժամանակ ուրիշի ամուսինը համարվիմ, այդ ես չեմ կարող. մեր բոլոր երջանկությունը թունավորված կլինի...

ԱՐՏԱՇԵՍ

Այդ մասին անհո՛գ եղիր, իմ թանկագին Մարգարիտ. մենք կդիմենք հոգևոր ատենին և ամենը կկարգադրվի, ինչպես պետքն է։

ՄԱՐԳԱՐԻՏ

Ա՛խ, Արտաշես, չէ՞ որ այնտեղ էլ հարկավոր կլինի ապացուցանել, որ նա հանցավոր է... Ի՞նչպես կապացուցանենք... Եվ ի՞նչ հարկավոր են մեզ այդ ապացույցները... Ազատությունը ես որոնում եմ սկզբունքով... Երևակայի՛ր, թե ո՞րքան անբախտ կանայք կան, որոնք ինձ նման իրանց ամբողջ կյանքը անց են կացնում ցավով և արտասուքով, որոնք անկարող լինելով տանել իրանց տառապանքները, անձնատուր են լինում կյանքի հոսանքին, կորցնում են իրանց անունը, իրանց պատիվը և նախատինք են կրում այն հասարակությունից, որը միակ պատասխանատու է նրանց վարք ու բարքի համար... Է՛լ բավական է. պետք է վերջ ունենա այս ամենը... Քո սիրուց զրկված, ի՛մս Արտաշես, ինձ նման թշվառ կանանց սիրուց և կարեկցությունից զրկված, ես հենց այսօրվանից, բազմաթիվ տրտունջներն ու խոչընդոտներն արհամարհելով, բարձրացնում եմ իմ ձայնը իմ անձիս և ինձ նման տառապյալների պաշտպանության համար... Թո՛ղ մեր տառապանքները ապացույց լինին մեր դատի ճշմարտության... Դու ինձ սիրում ես, Արտաշես, դու պիտի օգնես ինձ, որ կարողանամ ձեռք բերել մեր անկախությունը... Ազատությո՛ւն, ազատությո՛ւն նախ և առաջ և այնուհետև ես հավիտյան քոնը կլինիմ ..

ԱՐՏԱՇԵՍ

Ո՛րքան վեհ ես դու այս վայրկյանիս, ո՛րքան պաշտելի՛...

ՄԱՐԳԱՐԻՏ

Երկուսս էլ թշվառ ենք, Արտաշես... երկուսս էլ պիտի տանջվինք...

ԱՐՏԱՇԵՍ

Ես ամեն բան կտանեմ, միայն թե դու երջանիկ լինիս...

ԱՆԱՀԻՏ, բերում է Նահանգական Դատարանի երկու կոչնագիր, որոնցից մեկին կցած են և ուրիշ թղթեր:

Նահանգական Դատարանիցն է, տիկին։

Տալիս է Մարգարտին:

ՄԱՐԳԱՐԻՏ, աչքի անցնելով կոչնագրերը:

Ահա՛ այս էր սպառնալիքը... (Կոչնագրերը ձգում է ձախ կողմի սեղանի վրա:) *Ինձ դատարան են կանչում...* (Արտաշեսը վերցնում է կցած թղթերով կոչնագիրը և աչքի անցնում:) *Ի՞նձ կամենում են իմ ամուսնու ոտների տակ ձգել...* (Վերցնում է գրիչը:) *Նորին վսեմությունը գործեց և այս ստորությունը...*

Ստորագրում է մյուս կոչնագիրը:

ԱՐՏԱՇԵՍ, դառնությամբ:

Այո՛, Նորին վսեմությունը դիմել է Նահանգական Դատարանին, ոչ ստիպմամբ ենթարկեն ձեզ նրա իշխանությանը...

ՄԱՐԳԱՐԻՏ, ստորագրած կոչնագիրը տալով Անահիտին, որ իսկույն դուրս է տանում:

Նա ավելի շուտ իմ դիակը կտեսնի իր իշխանության ներքո, քան թե ինձ կենդանի...

ԱՐՏԱՇԵՍ

Հանգստացի՛ր, հոգիս, չէ՞ որ այդ ամենը դատարկ ձևականություններ են, չէ՞ որ դու, երբ բռնի կերպով ամուսնուդ տունը տանեն քեզ, իսկույն կարող ես ձգել-հեռանալ այնտեղից:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ես այս գիտեմ... Գիտեմ, որ տասն անգամ էլ կարող են տանել ինձ ամուսնուս տունը և ամեն անգամ ես կարող եմ նորից հեռանալ այնտեղից, առանց նրա երեսն անգամ տեսնելու... Բայց ինչո՞ւ պետք է այդպես անեն, քանի որ ես չեմ կարող կամ չեմ կամենում ապրել նրա մոտ... Իսկ եթե նա չի էլ պահանջում իմ վերադարձը, ենթադրենք, որ իրավունք էլ չունի պահանջելու. չէ՞ որ ես, այնուամենայնիվ, ե՛մ և մնում ե՛մ մի մարդ առանց իրավունքների, մի ստրկուհի, որ կախված է ուրիշի ամայականությունից... Ո՛չ և ո՛չ... Ես ուզում եմ ազա՛տ լինել, ազա՛տ և անկա՛խ, տե՛ր և ղեկավարող իմ անձիս...

ԱՐՏԱՇԵՍ, կոչնագիրը դնում է սեղանի վրա և մոտենում է Մարգարտին:

Մարգարի՛տ, մինչև օրս քո սիրով եմ ապրել, մինչև օրս դու ես եղել միայն ինձ առաջնորդող փայլուն աստղը... Այժմ երդվում եմ քեզ մեր անբիծ սիրով, երդվում եմ քո արևով, Մարգարիտ, որ կյանքիս միակ նպատակն այսուհետև քո ազատությունը պիտի լինի...

ՄԱՐԳԱՐԻՏ

Այո՛, բարեկամս, մեր երջանկության միակ ճանապարհը դա է...

ԱՐՏԱՇԵՍ

Օ՜, հավատացա՛ծ եղիր, հոգիս, ես ամենայն միջոց գործ կդնեմ... Մնաս բարյավ, ես գնում եմ... (Համբուրում է ձեռքը:) Ես գնում եմ, պահապան հրեշտակս, և, կրկնում եմ, մի բոպե էլ չեմ հանգստանալ, մինչև որ քո ազատությունդ ձեռք չբերեմ... Միևնույն ժամանակ մինչև հոգվույս խորքը տոգորված լինելով քո զգացմունքներով ու գաղափարներով, խոստումն եմ անում քեզ, որ հենց այս վայրկյանից բոլոր ուժով պիտի ջանամ. գրեմ, խոսեմ, քարոզեմ ամենայն ժամ և ամենայն տեղ, մինչև որ քո ձգտումները, քո ցանկությունները կատարած տեսնեմ—մինչև որ քեզ նման տառապյալները աղատ ապրելու իրավունք ստանան... Իսկ երբ կարժանանամ ամուսինդ լինելու, այն օրից, Մարգարիտս, մենք երկուսս միասին կաշխատենք ընդհանուրի բարօրության և երջանկության համար... Թո՛ղ ուրեմն քո սերը հիմք ու ապացույց լինի այն սիրուն, որ մենք պիտի տածենք դեպի մեկ նմանները...

ՄԱՐԳԱՐԻՏ, Բուզված մեկնում է ձեռքը:

Պաշտելիդ իմ Արտաշես...

ԱՐՏԱՇԵՍ, համբուրելով ձեռքը:

Դու իմ աստվածուհին ես, Մարգարիտ... Թո՛ւյլ տուր մի անգամ համբուրեմ անարատ ճակատդ, որպես նշան միության, և թո՛ղ այդ համբույրը առաջինն ու վերջինը լինի մինչև մեր պսակադրության օրը... (Մարգարիտը մոտեցնում է գլուխը, Արտաշեսը համբուրում է ճակատը:) *Մնաս բարյավ...* (Գնում, վերցնում է կոչնագիրը:) *Այժմ դեպի ազատությո՛ւն...*

Շտապով դուրս է գնում դիմացի դռնից:

ՄԱՐԳԱՐԻՏ, մենակ:

Այո՛, դեպի ազատություն... Ազատությո՛ւն, ազատությո՛ւն... և մի՛միայն ազատություն...

Մնում է անշարժ. Զախ դռնից շտապով մտնում է Հեղինեն, գլխարկը ծածկած և հովանոցն ու վերարկուն ձեռին:

ՏԵՍԻԼ ԺԸ

ՄԱՐԳԱՐԻՏ, ՀԵՂԻՆԵ, հետո ԼԵՎՈՆ

ՀԵՂԻՆԵ, հովանոցն ու վերարկուն ձգելով աթոռի վրա:

Մարգարիտ, ժամանակ է: (Առաջ գալով:) *Լևոնը գալիս է...*

ՄԱՐԳԱՐԻՏ

Օ՜, Հեղինե...

Գնում, բռնում է նրա գիրկը, դիմացի դռնից մտնում է Լևոնը և ապշում: Ամենքը մնում են անշարժ: ՊԱՏԿԵՐ:

Վերջ

ԲԱՂՆԸՍԻ ԲՈԽՋԱ

ԿԱՏԱԿ ԵՐԿՈՒ ԱՐԱՐՎԱԾՈՎ

1907

Այս գրվածքը, որին ես կատակ անունն եմ տվել, իսկապես մի դառն երգիծաբանություն է, Թիֆլիզի կյանքից առված։ Սա իմ «Պեպո» կատակերգությանն հառաջաբանը, ես հախերգանքն է, ուր Աղալոյի և Թալալի դիմակի տակ մանրամասնորեն նկարագրված է, թե ինչպես գոռան մխիթարեց և ամուսնացան «Պեպոյի» Զիմզիմովն ու նրա բնարուծ ու ոիրած էվեմիան։

Գ. Ս.

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԹԱԼԱԼ, գեղեցիկ մատաղահաս որբևայրի
ԿԱՏԱՐԻՆԵ, Թալալի սկեսուրը, ճասակավոր որբևայրի
ՍԱՆՎԵԼ, Թալալի տեզրը, անզործ չմավոր երիտասարդ
ԷԼԻՍԱՐԵԹ, Թալալի մայրը
ՕՀԱՆԵՍ, Թալալի հայրը, անճանկացած արհեստավոր
ԱՎԵՏԻՔ, սրանց ազգական, գործից հետ քաշված վաճառական
ՄԱԹՈ, մոցիմոլ (միջնորդ)
ԱՂԱԼՈ, տարիքավոր այրի, հարուստ վաճառական

Սաղանդարներ և ծառաներ։ Երգեր և պարեր։

Առաջին արարվածը կատարվում է Թալալի մարդանց տանը, իսկ երկրորդը—նրա հորանց տանը։

Անցքը պատահում է Թիֆլիզում անցյալ դարում։

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԹԱԼԱԼ, 30 տարեկան։ Առաջին արարվածում սգի տեղական հագուստով, իսկ երկրորդ արարվածում դարձյալ տեղական, բայց ամենաշքեղ բաց-կապույտ դերբիայով, վրայնակ գլխով, ոսկեկար ճակտի ալյուսով, ծաղկե կարմիր գոշ ու գոտկով և զանազան այնեղեններով զարդարված։

ԿԱՏԱՐԻՆԵ, 55 տարեկան։ Նույնպես սգի տեղական հագուստով։

ԷԼԻՍԱԲԵԹ, 45 տարեկան։ Տեղական մուգ հագուստով, առաջին արարվածում հասարակ, երկրորդում՝ զարդի։

ՄԱԹՈ, 60 տարեկան։ Տեղական մուգ հագուստով և Քիրմանի շալե գոտկով։

Կատարիչներն գործ է ածում սպիտակ դաթիրա, իսկ մյուս կանայք—իրանց դերերին համապատասխան սև վերարկու, ինչպես նշանակած է իրանց տեղերում։

ՍԱՆՎԵԼ, 30 տարեկան։ Տեղական հագուստով։ Գլխարկը սև ֆուրաժկա։

ՕՀԱՆԵՍ, 55 տարեկան. նույնպես տեղական հագուստով։ Գլխարկը Բուխարու սև գդակ։

ԱՎԵՏԻՔ, 45 տարեկան։ Եվրոպական հագուստով։ Գլխարկը սև շլյապա։

Երկուսն էլ ամբողջ ժամանակ գլխաբաց են։

ԱՂԱՀՈ, 60 տարեկան։ Կարմիր թշեր, ալրած բեխեր, հաստ հոնքեր, սև ներկած մազեր։ Սա էլ եվրոպական հագուստով է, բայց պարտադիր են սպիտակ շապիկ, գունավոր փողպատ, նույնպիսի մկինս և պանտալոն, սև սերթուկ և գլխարկ—ցիլինդր. բոլորը նորը ճաշակի։ Գործ է ածում գունավոր մետաքսե թաշկինակ, ոսկե ժամացույց ոսկե շղթայով և հոցի մեջ արծաթե փորթմոնեա։ Պատշգամբի վրա (երկրորդ արարվածում) վեր։ ելնում, ձեռնափայտով և գլխարկով է։

ԵՐԿՈՒ ԾԱՌԱ, մինը՝ շրեղ հիրբեզկայով, արծաթե քամարով և արծաթապատ դաշույնով. մյուսը՝ սև ֆրակով և սպիտակ փողպատով, ժիլետով ու ձեռնոցներով։ Երկուսն էլ առանց գլխարկի են։

ՍԱՋԱՆԳԱՐՆԵՐ, տեղական զարդի հագուստներով։

ԱՐԱՐՎԱԾ ԱՌԱՋԻՆ

Բեմը ներկայացնում է Թալալի մարդանց տանը մի հասարակ սենյակ երկու գոնով՝ ձախ կողմը և դիմացը։ Աջ կողմը տախտ, գորգով և մուրահաներով զարդարած, իսկ ձախ կողմը հայելի և բազմոց սովորական սեղանով ու բազկաթոռներով։ Դիմացը, երկու դռան մեջ՝ ճենապարան (commode)։ Ուր հարկն է՝ աթոռներ։ Երեկո է։

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ԿԱՏԱՐԻՆԵ, տախտի վրա ծալապատիկ հատած, գալոշա է գործում, ԹԱԼԱԼ բազմոցի վրա նստած, չիբուխ է կարում։ Երկուսն էլ ոգի հագուստով են։

ԿԱՏԱՐԻՆԵ

Ի՞նչ էլավ քիզ, Հարսի, քա՞նի լաց ըլիս... Իմ դարդն էլ է ինձ հերիք. էլ ցավիս վրա ցավ մի՛ ավելցնի, է՛, օխնած հոքի։

ԹԱԼԱԼ, աչքերը սրբելով։

Ի՞նչ անիմ, բատոնս ջան. ինչ ինձ բան էկավ, իմ դուշմնին էլ չգա։

Շարունակում է աչքերը սրբել։

ԿԱՏԱՐԻՆԵ

Բանը ինձ էկավ, վուրթի, քիզ ի՞նչ էկավ։ Քունը թե մարթն էր էն չրատարը, իմը վուրթի էր։ (Զայնը երկարացնելով։) *Իմ դարդիմա՜նդ Մի՛խակս։* (Երկու ձեռով ծնկանը խփելով։) *Մեռնի քու դեղեն, վուրթի. խուղի տակը փթում իս... Վա՜յ, վա՜յ, վա՜յ, վա՜յ... սիրտս փոթորթի է դալի։*

ԹԱԼԱԼ

Աբա՜, ասում իմ, բատոնո. իմ սիրտն էլ էտենց փոթոթի է ըլում, վուր էսենց լացատրաք իմ ըլում, է՞։

ԿԱՏԱՐԻՆԵ

Ի՜հ, վուրթի, շատ քի պեսնիրն ին էլի, ամա մե էրկու տարի չին անցկացրի, նուր մեկանց մարթու ին գնացի։

ԹԱԼԱԼ

Էն օրը մահ ըլի իմ գլխին... Ցիս գանա մա՞րթու էրես պիտի տեհնիմ, էլի՞... Իմ մարթը սիվ խուղն է հորեսի դենը... Ո՞ւր է, մե վախտի հոքիս տամ ու գնամ իմ մարթու մոդ պառկիմ։

ԿԱՏԱՐԻՆԵ

Մի՜ ասի, վուրթի, մի՜ ասի, ջեր ջեհել իս. էսօր է, թե էքուց, մե ջեհել, սիրուն տղա կու լուս ննգնի, կու մտնի դամարդ ու դիպ մետի քամու կու տաս։

ԹԱԼԱԼ

Վա՜յ, խուղն ըլի իմ գլխին։

ԿԱՏԱՐԻՆԵ, ձայնը երկարացնելով։

Իմ փա՜շա ու դրո՜շա Մի՜խակ ջան, վուր տուն գու քեիր, տունը վուտիտ տակը գմզըմում էր, (Լալով։) հը՜, հը՜, հը՜, հը՜...

ԹԱԼԱԼ, բարձրաձայն հեկեկալով։

Ը՜հ, հո՜, հո՜, հո՜... Ցա՞բաք նրա նման էլի օմքին կուլի աշխարքումը՜։

ԿԱՏԱՐԻՆԵ

Է՜տ ասա, է՜տ ասա, վուրթի... Ասուած խռովեցավ իմ գլխին, տուն ու տիղս դիպ մետի բրիշակ էլավ։

ԹԱԼԱԼ

Սիվնա իմ օրը, վուր էլ աշխարքի էրես չտեսնիմ յիս։

ԿԱՏԱՐԻՆԵ, սգալով։

Միխակ ջա՜ն. Միխակ ջա՜ն... քու օլբրած բիխերուն մեռնի դեղեն։

ԹԱԼԱԼ, լալով։

Ը՜հ, հը՜, հը՜...

ՆՐԱՆՔ, ԷԼԻՍԱԲԵԹ

ԷԼԻՍԱԲԵԹ, վերարկուով, մտնում է դիմացի դռնից։

Բարի իրիդուն ձիզ։

ԿԱՏԱՐԻՆԵ

Աստուծու բարին, խնամի ջան, համեցե՛ք։

ԷԼԻՍԱԲԵԹ, վերարկուն վերցնելով և ձգելով մուտքի մուտ դրած աթոռի թիկունքի վրա, դիմում է Թալալին։

Ի՞նչ էլավ քիզ, վուրթի, փե՛շակ իս շինի քիզ համա՜... Մե օր չէկա, վուր քիզ էտենց չտեսնիմ. լացի գուդա ի՞ս, թե ի՞նչ է... (Կատարինեին։) Ինչի՞ չիս խրատում, բատոնո ջան. ախար միխկը չէ՞։

ԿԱՏԱՐԻՆԵ

Ջրատարի հոքին գիդենա, (Մի կողմ նայելով։) սիվնա քու դեդի օրը, վունցոր վուր սիվցավ, վուրթի, (Էլիսաբեդին։) էս սահաթիս հենց էտ էի խրատում. ամա սրա անգնումը վունչըշեն վունչիչ չէ տուն գնում։ Էրանի էն օրը Հավլաբար չէիր դուս տարի ու խղճի գերեզմանը նուր-մնկանց չէիր շանց տվի սրան. էնդումեն դեսը էլ ամկը չէ ցամքեցրի։

ԷԼԻՍԱԲԵԹ, հեռվով Թալալի ուսը։

Հերիք է, քա՜։

Նստում է բազմոցի մուտ դրած բազկաթոռի վրա։

ԹԱԼԱԼ

Հիչտ-հիչտ ասում իս, դեդի ջան. էրանի չէր ըլի, իսկի էլ մարթու չէիր տվի ինձ էստու համար։

ԷԼԻՍԱԲԵԹ

Մարթ ցավի գա ու սիվ սատանի քու դեղեն, վուրթի։ Առչինը քիս դուն ու վերջինը. աշխարքն էտենց էկիլ է, էտենց էլ կէհա։ Ինչոր շատին, էն էլ մրդ։ Քի՞չ վուրփներիք կան աշխարքումը՜, մեկն էլ դուն իս. ի՞նչ անինք, վուրթի, աստուծու կամքն է։

ԿԱՏԱՐԻՆԵ

Օխնըվի նրա դարգահը, դաղից միզ ու դաղդրղանի էրի։

ԹԱԼԱԼ, մորը։

Ա՜խ, ջնդի ջան, յարաբ յիս վո՞ւնց իմ ապրում ու շունչ քաշում։

ԷԼԻՍԱԲԵԹ

Լա՛վ է, հենց ապրիս. քու դլուխ չունիմ... Վի՛ կաց, հադրվի... (Կատարինեին:) *Սրան ուզում իմ բաղնիս տանիմ, բատոնո. դաստուր կու տա՞ս։*

ԿԱՏԱՐԻՆԵ

Ինչի՞ չէ, խնամի ջան... (Թալալին:) *Վի՛ կաց, վուրթի, վի՛ կաց։*

ԷԼԻՍԱԲԵԹ

Վի՛ կաց, էլի բո՛խչետ կապե. չիս իմանո՞ւմ։

ԹԱԼԱԼ, մորը:

Էրնեկ գիդենամ ըա՞դրոս բաղնիս է, դեդի... Ցիս պիտի սիվ գերեզմանը գնամ, ըա՞ մեբաղնիսեբա։

ԷԼԻՍԱԲԵԹ, Թալալին, ցածր:

Վի՛ կաց, քա, ճարկտրած, է՛. (Ավելի ցածր:) *Հորես գու քա...* (Թալալը, առանձին, ուրախանում է:) *Քիզ իմ ասում...* (Կատարինեին:) *Մե հրամա՛ե, բատոնո ջա՛ն, է՛։*

ԿԱՏԱՐԻՆԵ, Թալալին։

Հա՛ ու չէ, չի՞ս իմանում. քա՛. վի՛ կաց, էլի։

ԹԱԼԱԼ, ուրախությունը զսպելով, դիմում է մորը:

Մախլաս, ինչ ուզում իք, անում իք ինձ, է՛լի։

Վեր է կենում և գրպանից հանելով մի բանալի, գնում բաց է անում հեշտդարանի երկրորդ ձոցը (tiroir):

ԿԱՏԱՐԻՆԵ, վեր կենալով:

Գնամ, ֆաետոն ասիմ ձիզ համա։

ԷԼԻՍԱԲԵԹ, ոտի կանգնելով:

Հրամանքդ ո՞ւր իս նիղանում, գեթաղվա։

ԿԱՏԱՐԻՆԵ

Ձիզ համա վուր մե քիչ նեղանամ է՛լ, խնամի ջան, ի՞նչ հաչաթ, թե չէ՝ ի՛նչ նիղութին է։

Դուրս է գնում ձախ դռնից:

ԷԼԻՍԱԲԵԹ, ԹԱԼԱԼ

ԷԼԻՍԱԲԵԹ

Դե՛, չո՛ւստ արա, քո՞ծ, չո՛ւստ. էլ մի՛ ուշացնի։

ԹԱԼԱԼ, նայելով դեպի ձախ դուռը, հանկարծ մոտ է վազում էլիսաբեթին։

Ղո՞ւրթ իս ասում, դեդի ջա՞ն։

ԷԼԻՍԱԲԵԹ

Վո՛ւյ իմ ապրելուն, բաս սո՛ւտ իմ ասո՞ւմ։ Դուն գնա՛, բա՛նգ տի՛ս, չիս էստի ղարաուլութին կոնիմ։

Կանգնում է ձախու դռան մոտ:

ԹԱԼԱԼ

Իժում, դիփ հաղիր է՞։

ԷԼԻՍԱԲԵԹ

Դի՛փ, դիփ. դիփ մեռի սարքած է ու կարքած. քիզ ինք մնում... Հեստի օթախ ունինք հիմի զուքած ու զարթարած, վուր քեփիդ գու քա, քու արիվը. կոսիս՝ շահզադի լայիզ է դրուստ։

ԹԱԼԱԼ

Ձլիվ մե չպրծա էս տանեմե՞ն... (Վազում է դեպի հեշտդարանը, բռնչան լցնում է գունավոր շալերով և հագուստներով [ի միջի այլոց բացկապույտ դերիա] :Հետո բանալով և դուրս քաշելով վերևի ձոցը, հանում է միջից զանազան տուփեր ակնեղենների, դնում է գրպանը և մի քանի հատ էլ բերում տալիս էլիսաբեթին:) *Բռնե՛, դեդի, էստունք էլ գո՛ւն պահե, էլ ջիբումս տիղ չկա։*

ԷԼԻՍԱԲԵԹ, առնելով տուփերը և գրպանը դնելով:

Բի՛, բի՛, վուրթի։ Տի՛ս թե էլի իմքին կա, բի՛. չիս մինձ ջիբ ունիմ։

ԹԱԼԱԼ

Ամնամ վուր դիփ վի կալա։ (Դարձյալ մոտենում է հեշտդարանին ու քրքրելով ձոցերը:) *Չէ՛, չէ՛, էլ վունչիչ չկա. մնացածը խո տուն տարանք էն օրը...* (Կրկին գտնելով մի քանի մանր իրեղեներ:) *Հա՛, հորես. կինազամ մտե՛ս էր ննգնում...* (Բերում տալիս է մորը:) *Էս էլ, էս էլ, դեդի, էստունք էլ իմն է։*

ԷԼԻՍԱԲԵԹ, առնելով իրեղենները։

Լա՜վ, լա՜վ... (Գրպանում պահելով։) *Գնա՛, կամոդդ կա՛րքի բի, վունչիչ մաշուր չանին...* (Թալալը շտապով գնում է, հեշտադարաձը կարգի է բերում։) *Պրծի՛...* (Բռնչաձ վերցնելով։) *Էսդադա էլ բաղնրսի բոխչա կուլի՞...* (Տանում դնում է այն արոռի վրա, որտեղ իր վերարկուն է։) *Վուր ուեսնին, ի՞նչ կոսին...* (Վերարկուի ծայրով ծածկում է։) *Սկեսուրիտ բարդիեիս էնենց գռնդնի ապիվը, վուր վունչիչ չտեսնե դուս տանելիս...* (Նոի ձայն լսելով։) *Գնա՛, ի՞նչա ապա, գալիս ին։*

ԹԱԼԱԼ, շտապով հատելով հեշտադարաձի երկրորդ ձգոցից սև շալ ու վերարկու և ձգոցը հետս մղելով։

Պրծա, հապիր իմ։

Ձգելով վերարկուն արոռի վրա, իսկ շալը գլխին, բաձալին մոռանում է հեշտադարաձի ձգոցի վրա։

ՏԵՍԻԼ Դ

ՆՈՒՆՔ, ՍԱՆՎԵԼ

ՍԱՆՎԵԼ, մտնում է դիմացի դռնից։

Օ՜, խնամի՛, բարի իրիկուն. էս վո՞ւրթենը։

ԷԼԻՍԱԲԵԹ

Ասծու բարին, խնամի ջան... Ախչկաս էս գիշիր տուն իմ տանում։

ՍԱՆՎԵԼ

Փառք աստծու. ձլիվ մե չարա էլավ էս խղճին, թե չէ՝ նստած մե գյուխ դիփ ախ ու վախ է քաշում... Էս մե շափաթ է խո, ինչ սրան Հավլաբար դուս տարար, խիստ ավելցրուց արտսունքը... Սրա միխկու էլ չկամ, աստուծ գիդենա... (Թալալին։) *Վո՞ւնց իս, Հարսի ջան։*

ԹԱԼԱԼ

Ջիգ լավ ունենամ. կամ, էլի՞։

ՍԱՆՎԵԼ

Աստուծ օղորմած է... Լավ տխպեր փչացավ իմը, ամա էլ նափա՛կդա... իմ տեր ու տիրականը նա էր։

ԷԼԻՍԱԲԵԹ

Ինչ նրան օր պակսեցավ, վուրթի, աստուծ քիզ ավելցնե։

Թալալը հանկարծ ուղղվում է։

ՍԱՆՎԵԼ

Ըմբրով կշտանաս, դեդի... էլի փառք աստծուն՝ քու ալչկան միզ համա մխիթարութին էթուղ... Միր տանու շրաղը սա է։

ԷԼԻՍԱԲԵԹ

Աստուծ քու շրաղին քիզ արժանի անե, վուրթի։

ՍԱՆՎԵԼ

Է՛հ, դեդի, էլ էտու համա ո՞վ է փիքր անում. թաք մե սա չավ ըլի, ուրիշ դարդ չունիմ, ավատա՛... Էնենց սիրում իմ սրան, վունցոր մարթ իր հալալ քվիրը սիրե. գիդե աստուծ, դուրթ իմ ասում։

ԷԼԻՍԱԲԵԹ

Մուրազիտ հասնիս, վուրթի։

ՍԱՆՎԵԼ

Աստուծ ձիր մուրաղը կատարե։

ԷԼԻՍԱԲԵԹ

Ապրիս, վուրթի։

ՍԱՆՎԵԼ

Դուք էլ ապրիք, դեդի... (Գրպանից ծխամարշ հանելով։) *Էս ո՞ւր է դեդեն, տանը չէ՞։*

ԷԼԻՍԱԲԵԹ

Վանց չէ. էս սահաթիս դուս գնաց։

ԹԱԼԱԼ, հեռանալով հայելուց։

Հորեն գալիս է։

ՏԵՍԻԼ Ե

ՆՈՒՆՔ, ԿԱՏԱՐԻՆԵ

ԿԱՏԱՐԻՆԵ, մտնելով ձախ դռնից, Թալալին։

Աբա՛, հադրվեցա՞ր, վուրթի։

ԹԱԼԱԼ

Հրամանք իս, բատոնու։

ԿԱՏԱՐԻՆԵ

Դե՛, գնացե՛ք, խնամի ջան, քանի լուս է. է՛լ մի՛ ուշանաք, ֆաետոնը հազիր է։ (Ոտները կախ գցած նստելով տախտի վրա։) *Իրիգնահացի կու մնամ սրան, գիդենաս։*

ԷԼԻՍԱԲԵԹ

Էս գիշեր թո՛ղ միզ մոդ ըլի, խնամի ջան, ու էքուց առուտյան յիս ինքս կու բերիմ։

Սանվելը վառում է ծխամարշը և ծխում։

ԿԱՏԱՐԻՆԵ

Էտ բանը մի՛ անի, գեթաղվա, խնամի ջան. առանց սրան վո՞ւնց կու դիմնամ .. Մե գիշեր վուր սրա ձենը չիմանամ, խնամի ջան, ջումջումի գու քամ ,աստուած գիդենա. էնենց սորվեցա էս քոծին։

ԷԼԻՍԱԲԵԹ

Աստուած քիզ էրգար օր տա, բատոնո ջան, վուր էտենց սիրում իս իմ Թալալին. ամա թո՛ղ էս մե գիշերը ինձ մոդ ըլի։

ԿԱՏԱՐԻՆԵ

Չէ, չէ, խնամի ջան, գեթաղվանե։

ԷԼԻՍԱԲԵԹ

Լա՛վ, տեսնիմ, բատոնո ջան։

ՍԱՆՎԵԼ, Կատարինեին։

Վա՛,դեղի ջան, խնդրում է, թո՛ղ էս մե գիշերը իրան փեշքաշ. նա էլ դեղա է, հալալ չէ իրա՞ն, թե ի՛նչ։

ԷԼԻՍԱԲԵԹ

Ա՛յ, ապրիս, վուրթի... Դիպ ձիզ մոդ է ու ձիզ մոդ պիտի ըլի. թո՛ղ էս մե գիշերն էլ միզ մոդ անցկացնե։

ԿԱՏԱՐԻՆԵ

Լա՛վ է, խնամի ջան, քու կամքն ըլի... (Թալալին։) *Է՛ստի արի, քո՛ծ ..* (Թալալը մոտենում է։) *Դուն վո՞ւրդի ուփրո լավ աշիս. էստի՞, թե քու հորանց տանը։*

ԹԱԼԱԼ

Հալբաթա վուր էստի լավ աշիմ. հորանց տունը շատ վուխտ է մառես ենգավ։

ԿԱՏԱՐԻՆԵ

Հա՛յ, կուդիա՞ն... Լա՛վ է, վուրթի, գնա՛, բարի գիշեր. սամա աճկիրս ջուր չկտրիս էքուց քու ճամփին... (Թալալը մի փոքր հեռանալով, թաշկինակով աչքերը սրբում է։) *Էլի կդնցի՞ր...* (Էլիսաբեդին։) *Էլ գերեզմանատուն չտանիս սրան, խնամի ջան. դեմուդեմն էստի զրգե, թե աստուած կու սիրիս։*

ԷԼԻՍԱԲԵԹ

Վո՞ւյ իմ աճկին... Առուտյան վաղ.վաղ էստի կուլի, քու արիվը. ինքս կու բերիմ, վունցոր ասի... է՛հ, բարի գիշեր, բատոնո ջան։

ԿԱՏԱՐԻՆԵ

Աստուած բարին ձիզ հիդ, խնամի ջան... էքուց առուտյան կու մնում ձիզ։

ԷԼԻՍԱԲԵԹ

Խա՛թրջամ կաց... (Մոտենալով Սանվելին։) *Բարով մնաս, վուրթի։*

ՍԱՆՎԵԼ

Բարով գնաս, դեղի ջան։

Կամենում է ուղեկցել նրան։

ԷԼԻՍԱԲԵԹ, արգելելով։

Մի՛ նիղանա, գեթաղվա։

Ողջունելով Սանվելին ու Կատարինեին, խոնարհվոր ճայացք է ձգում Թալալին և շտապով գնում է դեպի բակաշան։

ԹԱԼԱԼ, մոտենալով Կատարինեին։

Բարի գիշեր, բատոնո ջան։

Կանգնելով Կատարինեի առջև, ինչպես մայրը պատվիրեց, կուրծքը համբուրում է. Էլիսաբեդը դուրս է ծլկվում բակաշան ու վերադառնում ձեզնից։

ՏԵՍԻԼ Զ

ՆՐԱՆՔ, առանց ԷԼԻՍԱԲԵԹԻ

ԹԱԼԱԼ, շարունակելով։

Ինչրու ձիզ կու տեսնիմ, իմն ինձ կու հասնի։

ԿԱՏԱՐԻՆԵ

Իմ տարսը դառնաս, վուրթի... Ջանով ու վուխչութենով լիղնաս։

ԹԱԼԱԼ, ողջունելով Կատարինեին, դառնում է Սանվելին։

Բարի գիշեր, իմ տեքր. դեղին լա՛վ պահե։

ՍԱՆՎԵԼ

Բարին քիզ հիդ, հարսի ջան... (Ուղեկցելով Թալալին մինչև դիմացի դուռը։) *Բարով գնաս, բարով գաս։*

ԿԱՏԱՐԻՆԵ

Տեր ընդ քիզ։

Թալալը ծածկելով վերարկուն և ընդհանուր ողջույն տալով, դուրս է գնում դիմացի դռնից։

ՏԵՍԻԼ Է

ԿԱՏԱՐԻՆԵ, ՍԱՆՎԵԼ

ՍԱՆՎԵԼ, ծխամարշը ձեռին։

Խիզճ ախչիկ, միխկս գալիս է, աստուծ գիդենա։

ԿԱՏԱՐԻՆԵ

Է՛հ, վուրթի, միխկը գալուն մինք ինք, թե չէ՝ նրան, էսօր է, թե էքուց, մե չարա կուլի, է՛լի։

ՍԱՆՎԵԼ

Վո՞ւնց թե չարա կուլի։

ԿԱՏԱՐԻՆԵ

Վունցոր մեկելներուն չարա է ըլում, վո՞ւնց պիտի ըլի... Մե էրկու տարվան էդնեն վի կու կենա ու մարթու կէհա. ա՛յ, վունց էլ չարա կուլի։

ՍԱՆՎԵԼ, նստելով բազմոցի վրա։

Է՛հ, դեղի, հեստի բա՛ն ասա, վուր բանի նման ըլի։ Գանա մեր հարս Թալալը էս հանգի ախչիկ է՞. վրեն չէ երևո՞ւմ։

ԿԱՏԱՐԻՆԵ

Ա՛յ, տուտուցանաս դուն. բաս չէ ու քու դեղի պես նահալին տակը կու փթեցնե... Ջեհել ախչիկ ու սիրուն... էն ճրեյ աճկերուն թամաշա իս անո՞ւմ. տակը հարուր սատանա կուլի ման գալի... էսօր վայ է տալի, սուք է անում, էքուց էլօր մե ուրիշի մոդ նստած կոսե շեն սլորի խար ցխոնեբուլա։

ՍԱՆՎԵԼ, առանձին և ցածր ձայնով։

Վա՜յ էն օրին։

ԿԱՏԱՐԻՆԵ, ծնկաները խփելով։

Ափսո՜ւս, ափսո՜ւս, Միխակ ջա՛ն, վուրթի, վուչ էր ունեցի քիզ քու դեղեն։

ՍԱՆՎԵԼ

Է՛հ, թարգը տու, դեղի ջան, աստուծ կու սիրիս... Ինչ էլավ, էլավ. ի՞նչ կու օտկինք։

ԿԱՏԱՐԻՆԵ

Էրանի դուն էլ է մե բանի կանգնիս. ի՞նչ իս պարապ ալամո տուն ու դուս անում։

ՍԱՆՎԵԼ

Վո՞ւր գլխամեռ չի ուզի, դեղի ջան. ամա ի՛նչ անիմ. մայա չունիմ, մասկան. տեր չունիմ ու տիրական... էն մե տերն ունեի, էն էլ աստուծ խլից... Փալաբաշութին խում չի՛մ կանա անի ո՛ւ... Մե քիչ փուղ պիտի ըլի ձեռիս, վուր մե պապիրոզի դուքան էլ է մանինց բաց անիմ։

ԿԱՏԱՐԻՆԵ

Դուն վուր տղամարթ իս ու չիս կանացի ճարի՛, յիս վո՞ւրղանց ճարիմ քիզ համա։

ՍԱՆՎԵԼ

Ա՛րի ճարե.... (Բերանը բաց անելով և առաստաղին նայելով։) *Ա՛աա... Թո՛ղ դեվեր ածե աստուծ, է՛լի։*

ԿԱՏԱՐԻՆԵ

Էտենց արիր, վուրթի, վուր դառ ու դարդակ մնացիր ինչիլի էսօր։

ՍԱՆՎԵԼ

Գիդիս, դեղի, ի՞նչ ասի՞մ. ամա չչըգրվիս, գեթաղվա... էս մե քանի օր է, մտկումս մե բան անցկացավ, վունցոր օրթունք դուզս ուտում է. ամա չիմ համարցակվում, վուր ասիմ։

---

* Վրացերեն է.—Դուն ավելի լավն ես, քան հանգուցյալը։

ԿԱՏԱՐԻՆԵ

Ի՞նչ է, ի՞նչ բան է, վուրթի։

ՍԱՆՎԵԼ, վեր կենալով տեղից։

Գնթացվա, չչըգրվիս, դեղի... (Օխտաարշը մի կողմ դնելով և մոտենալով Կատարինեին։) *Էս միր հարսը, վուր Լնդադա ակնեղենները Լնդի ածած ունեն...*

Մատնանիշ անելով հեշտդարանը։

ԿԱՏԱՐԻՆԵ

Հա՞, ի՞նչ է։

ՍԱՆՎԵԼ

Նիթար, նա իտ, էս ջեր մե տարի էլ կու անց կենա, Լնդունք չի բանեցնի... Հիմի չի ըլի՞, վուր մե բարաթ նրան հասկացնինք, վուր մե էրկու իմքին տա ինձ, տանիմ Լոսրարդունը գրավ դնի՞մ։ Էրկու ամսումը իր շահով հիդ ի՞նչ տամ, աստուծ գիդենա։

ԿԱՏԱՐԻՆԵ, վրդովված։

Վո՞ւյ, քոռանամ ու չուրանամ չիս, վուրթի... Ո՞ւզում իս՝ աշխարքի մասիարա գանա՞նք... Ամուրթ չէ՞, վուրթի՞... Յա իմ բերանը վո՞ւնց պիտի զորա, յա քունը, վուր էս թավուր բանը հարսին ասինք, յա նրա անգամը դցինք. դեղինը վուր մանիմ. էն լավ է, վուրթի։

ՍԱՆՎԵԼ

Բաս ի՞նչ անիմ, գեղի։

Կանգնում է մոտ առաջ։

ԿԱՏԱՐԻՆԵ

Ինչ որ գուզիս, վուրթի, ամա էս բանը մտկեմետ հանե։

ՍԱՆՎԵԼ, մտածմունքի մեջ ընկղմած, մի քանի անգամ անց ու դարձ է անում. հետո հանկարծ կանգնում է հեշտդարանի մոտ և բռունցքով խփելով վրան։

Ը՛հ, քու դինը, քու դինը... (Տնսնելով բանալին հեշտդարանի ձգոցի վրա։) *Սո՛ւ, Էստի մտիկ, բալնիքը մտեն է գցի, դեղի։*

ԿԱՏԱՐԻՆԵ, վեր բռնելով տեղից։

Ի՞հ, դարդու նրա միտկն էլ է մոլըրվի, վուրթի, ինձպես... (Սանվելը հանելով բանալին երկրորդ ձգոցից, կամենում է դուրս քաշել վերևի ձգոցը։) *Մի՛ անի, մի՛ անի, վուրթի. ինձմեն չիս պրծնի, քու արիվը։*

ՍԱՆՎԵԼ, հետ նայելով։

Վա՞հ, խո չիմ գողանում. մե տեսնիմ վո՞ւրն ուփրո ձեռք կու ատ.. (Դուրս է քաշում ձգոցը։) *Էս ի՞նչ է, դիփ դարդակ է։*

ԿԱՏԱՐԻՆԵ

Վո՞ւնց թե դարդակ է, ի՞նչ իս ասում... (Նայելով ձգոցի մեջ։) *Էս ի՞նչ է...* (Բոլոր ձգոցները մեկ-մեկ շտապով դուրս քաշելով։) *Վա՛յ... Դիփ տարիլ է, դիփ. էլ իսկի մե ակնեղեն չէ թողի էստի էն սիվ էրեսը... Ջա՞սի քիզ, վուր սատանա թեռնով լիքն է՞։*

ՍԱՆՎԵԼ

Վա՞հ, վա՞հ, վա՞հ, վա՞հ... Էս ի՞նչ է արի... Իժում ի՞նչ հանգն էի սիրում լիս նրան, է՞... Հալա՛լ սրտով, աստուծ գիդենա, դեղի։

Մնում է ապշած։

ԿԱՏԱՐԻՆԵ

Հիմի ա՞տե, քանի կանաս, իրան էլ ու իր գող-ավազակ մորն էլ... Աստուծ անե նրանց դիվանն ու դադաստանը, հը՞... Գնա՛, գնա՛, հասի մե էդնեն էն կապ-կտրածներուն... Էս ի՞նչ ին արի էն սիվ սրտովնիրը... (Սանվելը կանգնած է անշարժ։) *Ջի՞ս իմանում, տո՞. քիզ իմ ասում... Ջիս գնո՞ւմ։*

ՍԱՆՎԵԼ

Ո՞ւր գնամ, ի՞նչ իս ասում, դեղի... Նրանք հիմի տանն էլ կուլին։

ԿԱՏԱՐԻՆԵ

Բա՛ս լավ, մետի գնանք... Թո՛ղ մե քիչ մթնի, ինչրու լիս էլ կու հագրվիմ... (Անցնելով հեշտդարանի առջևից, կրկին նայում է վերևի ձգոցի մեջ։) *Տարիլ ին, գողցիլ ին. փախցրիլ ին... Տի՛ս թե ի՞նչ օյին էկան միր գլխին էն աննամուսնիրը՞։*

Դուրս է նետվում ձախ դռնից։

ՏԵՍԻԼ Ե

ՍԱՆՎԵԼ, մենակ։

Վա՛յ, վա՛յ, վա՛յ, վա՛յ... Մտի՛կ թե հրիշտրքի կաշու տակ ի՞նչ սատանա է էլի նստած... Կերա՞ր... Հե՞... Քու հա՛խն է, Սանվել... Քիզ ո՞վ էր

ասում ուշկ ու միտքդ նրա վրա պաթրեցնիս, կիշիր-ցերեկ նրա վրա փիքր անիս, սուս ու փուս սիրիս նրան քու մակուրը... Իմ բախտին էլ ի՞նչ ասիմ... Գնա՛ հիմի, ամկդ դուս էկա՛վ, հիմի էլ էնենց սուս ու փուս տնքա՛ ու տա՛նչվի, քանի կանաս... Ի՞նչ չարա կա իմ սաբասդ գլխին... Վո՞ւնց ազատվիմ... (Աեռը սրտին տանելով:) Էս մունդրեկ սրտի օխտեմեն վո՞ւնց գամ. ի՞նչ անիմ յիս սրա՛ն... (Բռունցք արած, բթամատով խփում է սրտին:) *Վո՛ւհ...*

Դուրս է վազում ձախ դռնից: Վարագույրն իջնում է:

ԱՊԱՐՎԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Բեմը ներկայացնում է Բալալի հորանց տանը մի վայելուչ նյուրասենյակ երեք դռնով՝ աջ, ձախ և գիմացը: Վերջի դռան աջ ու ձախ կողմը լուսամուտներ, սոնց միջով, նաև դռնից, երևում են գույնզգույն բդրեն լապտերներով լուսավորված պատշգամբ և նրա նախից, խոռոում, պարտեզի կանաչ ծառերի մի քանի զազգրներ հատած պտուղներով: Գիմացի դուռը և լուսամուտները ամբողջ ժամանակ բաց են: Երկնքում փայլում է լուսինը, որ նույնպես լուսավորում է ծառերի տերևները: Հյուրասենյակը զարդարած է գեղեցիկ կահկարասիքով, իսկ դռները և լուսամուտները—բավիշ գրապերիներով, վերջինները—նաև սպիտակ տյուլ բացված վարագույրներով: Առաստաղից կախած է ոսկեզօծ չամ վառ մոմերով. հատակը ամբողջապես ծածկած է զորգով: Աջ կողմը՝ բազմոց, բազկաթոռներ և բանկագին ոսկեցով ծածկած սովորական սեղան, որի վրա դրած են ծաղկեփունջ և վառ լապտեր: Ձախ կողմը՝ ընկողմարան, բոլորակ փոքրիկ սեղան և բազկաթոռ: Ուր հարկն է՝ աթոռներ, հայելիներ, թղթախաղի ծալովի սեղաններ, վառ լապտերներ, կանդելաբրներ և աշտանակներ: Դրսից եկողները գալիս են պատշգամբի աջ կողմից, անցնելով աջակողմյան լուսամուտի առջևով:

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ՕՀԱՆԵՍ, ԱՎԵՏԻՔ

ՕՀԱՆԵՍ, աջ կողմը, բազմոցի վրա նստած:

Մա՛խլաս... Կարիքը շատ ճամփա կու սորվեցնե մարթու ու քաղցածութինը շատ բան կոնիլ տա։

ԱՎԵՏԻՔ, ձախ կողմը, ընկողմարանի վրա նստած:

Քու արիվը, վուր գնա՛ ու գնա. թային աստծու մոդ մե վարցկ ունեիր, վչարից... Հեստիկ է, վուր էսենց՝ ա՛յ... (Երկու ձեռը հետ ու առաջ տանելով:) *զմզրմում է։*

ՕՀԱՆԵՍ

Ցիս էլ էտուրը թամահ ենգա, թե չէ էն տարսը մարթուն ախչիկ կու տեի՞... Ասում ին յիրիքսան տարեկան ավել կուլի։

ԱՎԵՏԻՔ

Է՛հ, տարին ինչ խիլք ունե, Օհանես ջան, ի՞նչ իս ասում. տեսնում իս շիմշատի պես ման է գալի... Նրա մոդ յարսուն տարեկնին էլ շեարցխվինոս։

ՕՀԱՆԵՍ

Շատ լավ իս ասում, Ավետիք ջան. ամա մենակ էտ չէ իմ դարդը... Առչի կնգամեն հորեն վից էրեխա ունե. հանաք-մասխարութին չէ նրանց զալմաղալին դիմնալը։

ԱՎԵՏԻՔ

Արմքնում իմ յիս քու խիքեմեն... էտ նա դարգ անե, ով սիրթ չունե... էնղադա փուղ ու կարողութենին թեգուղ տասնուվից էրեխա ըլի, ի՞նչ հաչաթ. դիփունացը վուր ինչրու բողաղը լքցնիս, էլի աշխարքի դովլաթ կու մնա... Վո՞ւնց ճարից էնղադա փուղը, ախպեր. վուր փիքր իմ անում, բեքանս բաց է մնում։

ՕՀԱՆԵՍ

Ինչի՞, ախպեր. վիրչի զոշունորին լավ փոդրաթ ուներ...

ԱՎԵՏԻՔ

Հա՛, էտ փոդրթումը, ասում ին, խիստ շենացավ. ամա փոդրթով էտենց շենանալ կուլի՞... Ուստա մարթ է, ի՛նչ անիս, ախպեր։

ՕՀԱՆԵՍ

Է՛հ, աստուծ վիրչը բարի անե... էս ումիկը կի ունիմ, վուր ինչ ախկրտութին քաշեցինք ինչրի էսօր, հորեսի դենը կուլի վիրչ ըլի... էսենց էկավ բանս, ի՛նչ արած... Փեշակումս էլ խեր չկա, ախպեր. ֆաբրիկեքն ու զավոդնիրը շատացավ, ինձպեսներու օշախը քանդվեցավ... Ո՞ւր է վաղուցվան ժամանակը, վուր դիփունի համար մատով շանց տալու վա՛ր-պիտ էի. տաս-տասէրկու քարդար էի պահում, տասնուհինգ ավել աշկիրտ ունեի. հիմի կի օչով մարթահեսաբ էլ չէ գցում ինձ։

ԱՎԵՏԻՔ

Էտենց է, Օհանես ջան. մարթ վուր փուղ ու կարողութենեմեն զրգբվում է, նրա խաթր ու պատիվն էլ հիդն ին թաղում մարթիք... էրևում է՝ էտ բնութենի է ստիղծած աթմորթին, ի՛նչ անիս. յադ թե իրավուր դիփ մեկ ին... էլի յաղը էնենց չէ դաղում մարթու սիրտը, վունցոր իրավուրը... Կաշուս վրա փորցած բան իմ ասում, լավ գիդենաս... (Տեղից վեր է կենում և այս ու այն կողմը նայելով, մոտենում է Օհանեսին:) *Էս մի քանի տարի առաչ բանս վուր ձախվեցավ ու առուտուրս ծուվեցավ, մե խոսկով ուտելու հացս վուր պակսեցավ, դիփունի համա ամկի փուչ էի գրուստ. դիփունքը էրեսը շուռ տվին ու քուչումը ռաստ գալիս հենց բոնե գլուխ էլ չէին տալի ինձ... Հիմի կի մե քիչ վուր հիդ ամալի էկա, սիրելի բարեկամները* նուր մեկանց կցեցին իրանց սիլիբիլիքն ու օրթում հավատը, վուր իմ խաթր ու պատիվը շատ ունին. ամա էլ օչովի չիմ ավտում յիս նրանցը։*

ՕՀԱՆԵՍ, նույնպես վեր է կենում:

Ցիս էտ դարդակ խոսկիրն էլ չիմ իմանում հիմի իմ սիրելի բարեկամներեմեն, ինչ խոսկիր քիզ ին ասում էսօր քու սիրելի բարեկամները. ուր մնաց, վուր նրանք ինձ դուրթ սիրին ու պատվին։ Ցաղերեմեն էլ ի՛նչ գանդատվի մարթ... (Լուռ անց ու դարձ է անում:) *Խաթրն էլ կորավ ինձ համա, Ավետիք ջան, պատիվն էլ... Գնա՛ց դիփ մետի. էլ վունց մեկի համա մե գրոշ չաժիմ, ի՛նչ արած... Սիպտա հացս վաղ կերա, մնաց սիվ հացը... էս մե տունն ու էն բախչեն է ձեռիս, էն էլ գրավ է. էսօր է, թե էքուց տորգով կու ծախին դիփ մետի։ Տեսնիմ հիմի՝ վո՞ւնց է աստուծ օտկում ու ազատում ինձ էս սիվ ու մութ օրեմեն...* (Ցույց տալով հյուրասենյակի կահ-կարասիքը և զարդարանքը:) *Ա՛յ, տեսնում ի՞ս. դիփ բանազրվի է, աստուծ գիդենա... Ղուլուղչիքը խոմ մեկին դուն ղրգեցիր կլուբեմեն ու մեկելը բան-ուզրվի է ու բան-ուզրվի. իմ լաչաթրիան պստի բիչը չէր սաղ գա էս գիշեր էսաթ... Հարևներու գլուխը տարա էսօր, խան մեկին ու խան մեկելինը, վուր* (Կրկին մատնանիշ անելով հյուրասենյակի կարմ ու սարմը:) *Էստունք բան տան... Շատ աղանչաք անելին չանեքս ցավեցավ։*

ԱՎԵՏԻՔ, կրկին նստելով:

Բա՛ս, ախար, վուր ասում իմ... Մե էրկու սահաթվան համա միթամ ի՛նչ էր սրանց մալիաթը, վուր էտղադա աղանչաք էին անիլ տալի... (Նստում է և Օհանեսը:) *Աբա՛, մե ունեուր մարթ էիր էլի, թե իրանք էվետ չէին բերի ու իրանց ձեռով չէին դարսի էստի, վունցոր գաբաած է... խոսկի վրա իմ ասում, թե չէ ունեուրը խա առանց նրանցն էլ ունե ու ունե էստունք։*

---

* Ասում են և՝ բարեկմիր, բաց թողնելով ե և մյուս հոլովներում.— բարեկմերուց, բարեկմերեմեն կամ բարեկմերեն և այլն։

ՕՀԱՆԵՍ

Մե հարևանս քու ասածի վրա ուզիր հիմու գնաց... Ջեր խիստ դալիս ֆանգնեցավ, վուր նրանեն մե քանի իմբին բան ուզեցի. հերս վուր գ-ըեգմնեմեն վի կենա, ասում է, չիմ կանա բան տա, կոսե... Ամա յիփոր իմացավ, վուր էնենց հարուստ փեսա իմ ճարում, չէ թե՝ ինչ ուզում էի, էրիտ էնդունք, վիրչը էս գանոգեսկեբն էլ, առանց իմ ասելու ու խնդրելու, իրան-իրան ղրեցի, ուսարին էլ հիդը. ու բաշ սանիլ էրիտ էստի, վունցոր տեսնում իս... Ջիմ գիդի թե ի՞նչումը պիտի պեսկ դա նրան իմ փեսի հարստութինը։

ԱՎԵՏԻՔ

Գիդիմ, գիդիմ, Օհանես ջան, փորջիլ իմ, կու ճանչնամ՝ ի՞նչ պատուղնիր էլ ին... Հարստութենի ձենը վուր իմանան, չէ թե՝ հոր գերեզմանը, վուրթունն էլ չին խնահի, քու արիվը։

Աչ դռնից մտնում է չերեզկավոր ծառան։

ՏԵՍԻԼ Բ

ՆՐԱՆՔ, ԾԱՌԱ

ԾԱՌԱ, Օհանեսին։

Աղա, սազանդարնիրն ին, էկան։

ՕՀԱՆԵՍ

Լա՛վ, թո՛ղ էնդի կենան. յիփոր վուխտը կուլի, յիս կու իմաց անիմ։

Ծառան դուրս է գնում նույն դռնից։

ՏԵՍԻԼ Գ

ՕՀԱՆԵՍ. ԱՎԵՏԻՔ

ԱՎԵՏԻՔ

Հազիր էստի ըլին, խաղ ասի՞ն։

ՕՀԱՆԵՍ

Քի դրուստն ասիմ, Ավետիք ջան, սազանդրի սիրտ չունիմ. էն էլ Մաթոյին խոսկ տվի, կանչեցի... Ջեր տեսնինք բանը վունց է գնում։

ԱՎԵՏԻՔ

Դու գիտես... էտ էլ մե ուռումուլի բան է դուրս գալի, սազանդար ըլի ու դոնաղնիր չէ։

ՕՀԱՆԵՍ

Ինչ անիս, էտենց կամեցավ նորաբեսեն, լավ գիդիս... Ցիս էլ մեռնակ քիզ իմաց արի, ուրիշ սրտացավ բարեկամ էլ օչով չունիմ. համ էլ մեկին վուր մեձրում իս ու մեկելին չէ, դավիդատաբա է դառնում դրուստ։

ԱՎԵՏԻՔ

Էտ իսո էտենց է ու էտենց։

ՏԵՍԻԼ Դ

ՆՐԱՆՔ, ՄԱԹՈ

ՄԱԹՈ, վերարկուով մտնելով դիմացի դռնից։

Աբա՛, հազիր ի՞ք... էս լավ իք սարքվի՞։

ՕՀԱՆԵՍ, վեր կենալով։

Մինք հազիր ինք, դուն վո՞ւնց իս։

ՄԱԹՈ, վերարկուն վերցնելով։

Ցիս էլ, վունցոր տեսնում իք, իմ խոսկին դրուստ իմ... (Վերարկուն նգում է դիմացի դռան մոտ դրած աթոռի վրա։) *Էս նմուտիս էվետ էստի կուլի։*

ՕՀԱՆԵՍ

Հա՛, գնամ ասիմ...

Մի քանի քայլ գնում է։

ՄԱԹՈ

Սազանդար խո կուլի՞։

ՕՀԱՆԵՍ

Էստի ին։

ՄԱԹՈ

Լա՛վ... Ցիս թե նրան խիլքին չարի էս գիշիր ու կու տեսնիք։

ՕՀԱՆԵՍ

Մախլաս... Ինչ չանիս, էն է արմընալուն... (Վերցնելով Մաթոյի վերարկուն։) *Էս դուս իմ տանում։*

ՄԱԹՈ, մոտ վազելով։

Վո՛ւյ իմ աճկին. հրամանքդ ո՞ւր իս նիղանում, գլթաղվա։

ՕՀԱՆԵՍ

Ի՞նչ կա, վուր...

ՄԱԹՈ

Արա՛, յիս բաց աճկով կու թողնի՞մ... (Խլելով վերարկուն, ձախ դրոնից ճաացնում է ամեկին։) *Էս մարդի կենա։*

Օհանեսը դուրս է գնում այն դռնից։

ՏԵՍԻԼ Ե

ԱՎԵՏԻՔ, ՄԱԹՈ

ԱՎԵՏԻՔ

Ղոչա՛ղ, Մաթո, յիս ու իմ հոքին։

ՄԱԹՈ, նստելով, բազմոցի մոտ, բազկաթոռի վրա։

Ինչի՞ ղոչաղ չիմ ըլի. դուն փո՛ղ ասա, թե չէ՝ ամեն բան կու բաշարիմ... Քի՞չ ախչիկ իմ մարթու տվի՞. կես քաղաքը իմ նշնած է։ Հենչաք ըլի մեկ մեկու հավնին։ Չէ, միղայի աստառու, ախչկան ո՞վ է հարցնում. հենչաք ըլի իրան ախչկան հավնին։

ԱՎԵՏԻՔ

Իժում՝ էտ վո՞ւնց իս անում, վուր մի գլուխ դիփ հավնեցնիլ իս տալի։

ՄԱԹՈ

*Էտու վրա էլ հիշտ բա՞ն... Խիղճ տղե՞ն փուղավուր ախչիկ է պրտորում ու փուղավուրը—սիրուն. մնում է ախչկա տնդդիլը... Տանու ախչկերանց համա դիփունի վրա աչող սիրը՝ Սիոնն է, Նորա շենը, Փեթխայինը, խանդիսխան՝ Վանքը, Մելդնի Սուրբ Գևորքը ու էլի ուրիշ էգեղեցիք, վուրնոր ախչկա ամա ուփրո մոդիկ է. տղեն, թո՛ղ ջանը դուրս գա, վազի, քանի կանա, իր բախտը գթնկլու... Տուն ին գնում, պարուն, դուն իմն իս, էգեղեցին ախչիկն էլ, տղեն էլ ու թեժ ադոթկ անելիս, մեկ մեկու զորա խիթում ին, յա թե չէ աստուծանի առչիվը մում վառելիս, տղեն մեքաշ արմունգը դիբցնում է ախչկան, ինենց, միթամ պատահմունքով, ու քանը էնդի էվետ շինվում է ախչկանն էլ, իմն էլ... էտ աստուծանի օղորմութենով է ըլում, փուր էհամ նրա զորութենին... Թե էգեղեցին չէ ըլում, քուչի դուռը խո էնդի է ու էնդի, յա թե չէ հարևնի տունը, Մուշթեիդը, սկաչկեքը ու ուրիշ էլի շատ տիղիր, ումն ինչ սաղ գու քա ու վուրդի ավելի ձեռք կու տա... (Ձայնը փոխելով։) Կրուքնիրը, թեատրիրը, բուլվարնիրն ու բաղիրը միր ղայիդի ախչկերանց համա չէ... Էնդի մանի էկող ախչկերքն ուրիշ ին, (Մատը շրթունքին տանելով։) բարիշնեք ին, մոդնի օմքնիր ին. իրանց բանը իրանք էվետ ին շինում ու միղպեսներու հացը կարում... Հեստրկնիրը կան նրանց մեջը, վուր ամեն մեկը քսան ինձպեսին կու առնե էլ, կու ծախե էլ. լիղու ունին, վուր էսդադա (Ձեռով ցույց է տալիս։) ձիեմեն մարթ կու վեր բերին, քու արիվը... Չէ թե միղ, նրանք իրանց ծնողներուն էլ չին հաացնում. վունցոր քեփիններուն ասլես է, էնենց էլ ժամ ին գալի... Իրանց-իրանց մարթու էլ ին գնում, թեղնում ին էլ. ո՞վ ինչ դավի ունե... Խիստ աշաղլար իմքնիր ին, քի դրուստն ասիմ... էլ ավելի խոսկ չիմ ասում, վուր օչով բեդամաղ չըլի. առանց էն էլ դուշման շատ ունիմ, էլ թաղեքը ինչի՞ ճարիմ... Թո՛ղ իրանք լավ ըլին ու բախտավոր, վունցոր իրանց սիրտը գուզե... Է՛հ, մա՛թլաս... Դի՞ փ էն անիծած մոդերու միջն է մաղուլ դինչ ու հանգիստ ապրում էնենք մեք համա... Ո՞վ գիտի էլի ի՞նչ մոդեք գա էս ախչկերանց համա։

ԱՎԵՏԻՔ

Էտ ախչկիրքը վերչը կու ծեծին քիզ, Մաթո, քու լիզվի համա։

ՄԱԹՈ

Վա՛յ դարդիս... Քրիստուս աստուծուն խաչ հանեցին դրուստ խոսելու համա ու ինձ վուր ծեծին, ի՞նչ մինձ բան է... Մեծի ամը ինձ չի վախեցնի. վուտեմեն էլ փոր քաշ անին, յիսելի էն կու թարավիմ, ի՞նչ էստի իմ ասում հիմի... Թո՛ղ ծեծին, թե կանան. իրանցը կու խայտառակին... Յիս ըլիմ, չըլիմ, աշիրքին վունչիչ չի պակաս. թե կու պակսի, էլի իրանցը կու պակսի, իրանց անումը կու կոտրվի։

ԱՎԵՏԻՔ

Էտունք թողնինք, Մաթո... Դուն էն ասա՝ սիվերումը փաթթած վուրփևերներուն վո՞ւնց իս տնդդիլ տալի ու հավնեցնում։

ՄԱԹՈ

Թե նրանք էլ մոդնի վուրփևերքը ին, նրանց մոդ էլ յիս բան չունիմ, ախպեր. նրանք աղջիկ-մազիզ (Գլուխը խոնարհելով։) մաղամնիր ին, յա նեժնի-մարոժնի (Երկու ձեռքը կրծին՝ դառնալով խոնարհում է գլուխը։) ախչիկ-պարնիր... Նրանք իրանց բանը ինձ վրա լավ գիդին... Ու թե մեր ղայդի ին, Հավլաբարը սաղ ըլի գերեզմանատուն էնդի չէ՞... Էրկու

կոնեն էլ դուս ին գնում էնդի, միթամ իրանց մեռելի վրա լաց ըլելու. մեռելի հոքին էլ, (Հոգվոց ճանելով:) աստուած օղորմի, (Ձեռը դեպի երկինք բարձրացնելով:) էնդի վերիվը բարի է խոսում նրանց համա ու պրծավ գնաց... (Ավետիքը ժպտում է:) Հենց էտենց էլ էլավ էս գիշերվան նորահարս-նորափեսի բա՞նը։

ԱՎԵՏԻՔ

Մա՜շալա, մա՜շալա, Մաթո։

ՄԱԹՈ

Դիպի հիշտ է, Ավետիք ջան. օղոնդ ախչիկը սիրուն ըլի.. Տարի քիզ ումբը, վուր բանս աչող է գնում էնչափը ու գլուխս վի քաշած իմ ման ըլի. մե նմուտումը մալամաթը մեչն իմ գնում, վունցոր հիմի... Ամա բե ախչիկը գիտե է, յա մայիմախ, ան մախինջ ու վագլախ, օյի՜, (Ձգեուսի կրծքի քղանցքը թափ տալով:) տա՜, տա՜, տա՜, տա՜... Տերը թափե ու աստուած ազատի... Աբա՜, ջափես էնդի է ավելնում, ա՜յ... Հա՜յ, Մաթո, գե՜սը ննգի, հա՜յ, Մաթո, դենը ննգի, սո՜ւտ ասա, ղո՜ւրթ ասա, վունցոր ըլում է մեկ մեկու վրա լհեմում իմ... Հազրենը մեկը չի պատահի, քու արիվը, վուր գլուխ չբերիմ... (Ավետիքը գլուխը շարժում է:) *Էսենց, բաս ի՞նչ գիդեիր։*

ԱՎԵՏԻՔ

Լավ խալաթի արժանի իս, Մաթո։

ՄԱԹՈ

Խա՜լաթը վի՞ս էկաթրեբա...* (Մատներով փող ակնարկելով:) *Է՜ս, է՜ս, ա՜յ։*

ԱՎԵՏԻՔ

Օ՜հ, հո՜, հո՜, հո՜... Դուն հիմի պիտի լավ ըլիս քիզ համա, Մաթո, ա՜յ։

ՄԱԹՈ

Վո՞ւրդի է, չկա, Ավետիք։

ԱՎԵՏԻՔ

Ինչի՞, դեդի։ Կես քաղաքն, ասում իս, դուն իս նշնի. մարթագլուխ տաստաս թուման, վուր վիր էիր կալի, քիչ քի՜չ ասիմ մե քսան հազար մանեթ պիտի փուղ ունենաս քիզ համա։

* Վրացերեն է.— *Ո՞ւմը կվայելեն (Ինչ հիշելու է։)*

ՄԱԹՈ

Քսան չէ, յարսուն... խափում ին, խափում, Ավետիք ջան... Քանի չեր բանը չէ պրծած՝ հա՜յ, Մաթո ջան ու Մաթո ջան, իժում կի տուն էլ տուն չին թողնում... Ցիս էլ հիմի աճկեներուն փորում իմ. ինչրու էս գլխեն չիմ առնում, վուտն էլ չիմ տուն դնիլ տալի, քու արիվը։ Ա՜յ, հենց էս սահաթիս, ինչրու էս քու պարուն Աղալոյին յարսուն թումանը չհամբրիլ տվի, ձեռը չվիկալաս։

ԱՎԵՏԻՔ

Օ՜հ, հո՜, հո՜, հո՜... Հոքուտ ի՞նչ իս ասում իժում։

ՄԱԹՈ

Հոքին ի՞նչ բան ունե էստումը։ Բաս էն պատռավ քոփակին ո՞վ էր ուղում։ Ի՜նչ անիմ թե դովլըթումը խիխտվում է... Էրի՜տ, ասի համնցե՜ք... Ջեր հալա քսան թուման էլ ուրիշ խոստացավ. ամա մեռավ կտրվեցավ, հիմի չէրիտ։ Էտ հարսնքքի մեկել էքսը, կոսե. ո՜վ գիդե, ի՜նչ հեսաբ ունե։

ԱՎԵՏԻՔ

Ի՞նչ հեսաբ պիտի ըլի։

ՄԱԹՈ

Վա՜, մարթ է ու քեփ։

ԱՎԵՏԻՔ

Վուր չտա՞, իժո՞ւմ։

ՄԱԹՈ

Վո՞ւնց կանա. կու թո՜ղնիմ, վուր դա էլ խափե ի՜նձ... Մի՜ վախենա, նրա ջիգրը չիմ ուտի, լկամը ձեռիս է. հեստի բան բերիմ գլուխը, վուր հատ տրխով փախչելու դառնա քախկեմեն։

ԱՎԵՏԻՔ

Գիդիմ, գիդիմ, կու ճանչնամ քիզ... Դուն ի՜նձ ասա սրանցմեն ի՞նչ վիկալար։

ՄԱԹՈ

Է՜հ, սրանք ի՞նչ սիվ քար ունին, Ավետիք ջան, ինձ ի՜նչ էին տվի... Թանխեք, մենակ թանխեք... Ումիկ ունիմ՝ չխափին ու թե սրանք էլ կու խափին, ախավագլախ էն փուղի գլուխը. իրանք լավ ըլին, ի՜նչ կանամ անի, մե բաշ քարվասլներուն կրակ չտամ, (Երեսը ծամածռելով ծիծաղում է:) *Հա՜, հա՜, հա՜, հա՜...*

ԱՎԵՏԻՔ

Լա՛վ կա իր համա Աղալոն, չէ՞, Մաթո։

ՄԱԹՈ

Փա՜հ... էրկու-էրկու քարվատրեն իր դիփունքը աճկով տեսնում ին, չուրս տիղ մինձ տնիր ունե, տաս-տասէրկու դուքան ունե... հիմի փո՛ղն ասա՝ ունե ու ունե էն քուիակը։

ԱՎԵՏԻՔ

Տո՛, էտղադամին մո՞ւրդի մոդ արավ անիծածը. գա՛նա փոդրբթով վուր մարթ կու շենանա, լոհնց կու շենանա՞։

ՄԱԹՈ, ձեռք ճակատին տանելով։

Խիլքիտ ասա՝ տո՛ւն արի... Ի՞նչ իս ասում, փոդրաթը փո՞ւրն է. նրա բանիրը ինձ հարցրու... (Ցածր։) Հեստիկն է, վուր հատը չունե. (Այս ու այն կողմը նայելով։) *Հազար ու մե բան է արի։*

ԱՎԵՏԻՔ

Է՜հ։

ՄԱԹՈ

Բա՛ս ի՞նչ դիպեիր։ (Վեր կենալով տեղից, գնում, ծածուկ նայում է ձախ դռնից, հետո մոտենում է Ավետիքին և ձայնը ցածրացնելով։) *Հենց էն փոդրբթումը ննգրուչը խաչից։ Տասէրկու հազար թուման պիտի փուղ էին փայ արի, ննդիրը մնբաշ մնռավ, ութ հազար թումանը մետի վիր խրից. մեննակ չուրս հազարը շանց էրիտ, ու էն չուրս հազարումն էլ, հա՛զարն ,ասում է, քրթքմնիր իմ խոստացի դես ու դեն, կոսե։ Վիրչը, չիմ գիդի ննգրուչ վուրփերուն հազաք ու հինգ հարուրը թամամ էրի՞տ, թե՝ էնդումն էր էլի մե բան մոգոնից ու դառ ու դարդակ նստեցրուց խղճերուն։*

ԱՎԵՏԻՔ

Մաթո, ինչի՞ր իս ասում. մե օր հոքի ունիս տալու, ախար։

ՄԱԹՈ

Վո՛ւյ, իմ հոքին գիդենա, դրուստ իմ ասում։ Ամա էս բանը մեննակ քիզ իմ ասում, գիդենաս... Զըլիմ չիմանամ, ոչովու մոդ քիրնետ չդուս թողնիս, թե չէ՝ ինձմեն չիս պրծնի։ Թո՛ղ ոչովի անգամը ննգնի. անգսկածիր սաղ ջանկումը չավ կուլի։

ԱՎԵՏԻՔ

Չէ՛, չէ՛, ա՛րխային կաց... Ո՞ւմը պիտի ասիմ։

ՄԱԹՈ, կրկին գնալով դեպի ձախ դուռը։

Ոչով չըլի անգամ դնում... (Դուրս է նայում դռնից, հետո հետ դառնալով։) *Ասած է՝ պատն անգամ ունե, կոսե. վախենում իմ՝ օմքին չիմանա, վոր էս բանը յիս քիզ հիդ իմ ասում... Իրանցմեն իմ իմացի. խոստովանք ըլի քի մոդ։*

ԱՎԵՏԻՔ

Տո՛, ո՞վ ինչ գիդե՝ ի՞նչ ինք խոսում էս դարդակ օթախումը... Իժա՞ւմ։

ՄԱԹՈ

Էլ ի՞նչ իժում... Ինչ ա՛սի, էնդու վրա գաս հիմի, աղա ջան, խուզի յիդը... Աբա՛, նա շինից նրա բանը, ա՛յ... ղոշունորի հուտն իմացավ թե չէ, ինչ քսխկումը խուզի յիդ կեր, դիփ մետի առավ ու դարսից սարդրփնեբումը։ Իժում աբա-հա՛, «զորս դու պատվիրեցիր». մեկը հարուր աշխատից։

ԱՎԵՏԻՔ

Վա՜յ, վա՜յ, վա յ, վա՜յ... Տո՛, յիս նրան մե պատվական մարթ գիդեի։

ՄԱԹՈ

Պատվական, վո՞ւնց չէ... Մե պատվական էլ դուն կուլիս փուղի հեսաբումը. էլ ի՞նչ ասիլ գուզե։

ԱՎԵՏԻՔ, տեղից վեր թռչելով։

Մաթո՛, լիզվիտ ա՛ղ արա, թե չէ՞...

ՄԱԹՈ

Ի՞նչ է, պոլիցեն չտանիս ինձ մեբաշ... Իմ վուրթի իս, էրեխա ձեռիս մինձացի. քի մոդ էլ դրուստ չխոսի՞մ։

ԱՎԵՏԻՔ, ժպտալով գլուխը շարժում է։

Հը-ըլի՛, Մաթո՛...

ՄԱԹՈ

Բա՛ս ասում իս, ախար. փուղ մոդ անելումը պատվականութին կուլի՞... Մեկն ու մեկը վուր վունչի չունեին ու մեբաշ հարստացան, փուղերումը լվլըվում ին հիմի ու դովլրթումը փրթփրթում. դիփ պատվականութենով ու հալալութենով է ճարած, գա՛նա չիմ գիդի... Մե տեր հարցնող ըլի, թե վո՞ւրդանց... Ա՛յ, վուրդանց (Նշանացի՝ ձեռով օդի ճիչից իրեն վոդեր է հափշտակում և ամեն անգամ բռունցքը գրպանը սառնում։) *Դի՛մ*

էսենց, դի՛փ էսենց... Թո՛ղ մոդ անին, քանի կանան ու տարեն տասէրկու ամիս մե գլուխ քեփումն ըլին ու զողումը. վերջը պիտի աթիկաս Ղազարոսի արով մնան էն կինքումն ու մե կաթ ջրի համա նրան ազանչաք տանին... (Հոգոց հանելով:) *Վա՛յ նրանց մէրկը...* (Ավետիքը նստում է, իսկ ինքը ճոճվելով:) *Ամա ջիրի էշիումն ու փուղ ծպտելուն սավոր դիփունի վրա ուստա-վարպետն ու վաթարը՝* (Կրկին մատնանշելով Ավետիքին և ցածր ձայնով:) *էս գիշիրվան նորափեսեն է... Ինչ օրումը կուլի սա էլ էն կինքումը, էտ միա՞յն աստծուն է հայտնի. ո՞վ գիդե, էլի ի՞նչ հեսաբնիր ուզին էնդի նրամեն...* (Ավելի ցածր:) *Փարթրեթի բանն էլ է չի՞ս իմացի՞։*

ԱՎԵՏԻՔ

Ի՞նչ փարթրեթ։

ՄԱԹՈ

Տո՛, դուն էս աշխրքումը չի՞ս, թե ի՞նչ է... Ի՞նչ փարթրեթ, ասում է... (Համարյա Ավետիքի ականջում:) *Ախպուր փարթրեթը։*

ԱՎԵՏԻՔ

Վուր չիմ իմանում։

ՄԱԹՈ, դարձյալ ցածր:

Տո՛, ա՛յ հենց էս քու աղա Աղալոն... Իր ախպուրմեն փուղի դավի անում... Քանի տարի քաշից էն դավին, հըա՞... էն խիղճ ախպերը վուր մեռավ, էս քու պատվական Աղալոն տուն ու տիղը վիր գրիլ էրիտ էն խղճին ու իր հալալ ախպուր փարթրեթը տորգով ծախիլ էրիտ... Ա՛յ քիզ պատվականութին։

ԱՎԵՏԻՔ

Սո՛րի, տո՛, պատավ քավթար, է՞։

ՄԱԹՈ

Վա՛յ, թոնդրումն էրվիմ, թե սուտ ըլիմ ասում... Ո՞ւր է, պիտի դիրք ըլի, մարթիք ըլին ջոգած. դուս գան, էտ թավուրներու հալ ու ափալը մե-մեկ քրքրին ու (Խուփ արած ձեռները բաց անելով:) *Բաց անին էսենց, վուր իրանք էվետ բերանը բաց մնան... Մե հարցնին թե՝ ի՞նչ հալալ քրտինք ին թափի էն աղազադեքը, յա ի՞նչ ջափա քաշի ու ջան բանեցրի... Դիփ պատվականութին կու դուս գա, ա՛յ, չէ՞։*

ԱՎԵՏԻՔ

Դժուխկն էրե քիզ, Մաթո... Իժում քու աստծուն ի՞նչ ջուղար իս տալի, վուր Աղալոյի պես մարթու համա սրանց մոդ բարի խոսեցար ու բանը գլուխ բերիր։

ՄԱԹՈ

Դի՛ախ, դի՛ախ... Սրանց մոդ բանը չիս իսկի էլ չիմ կցի... Բաշտան իրանք էվետ աշլա արին ու խնդրեցին, չիս էլ կատարեցի. ի՞նչ փիս իմ արի... Մի՛ վախենա, սրանք ինձ վրա լավ գիդին՝ ինչ պտուղ էլ վուր է Աղալոն. ամա փո՛ղն ասա, փո՛ղը, փո՛ղն ու հարստութինը, վուր դիփունանց աճկիրը շլացնում է... Ա՛րի ու քի պես գժի մոդ դրուստ-դրուստ խոսա։

ԱՎԵՏԻՔ

Մե դրուստն էլ դուն կուլիս, (Հեգնորեն:) *հա՛լբաթտա։*

ՄԱԹՈ, ճարձակվելով Ավետիքի վրա։

Ի՞նչ է ասում, քա՛... Բաս չէ՞ ու դուն կուլիս ինձ վրա դրուստն ու հալալը... Ո՞ւղում իս, քու բաղնըսի բոխչեն էլ բաց անիմ էս սահաթիս ամկիտ տուչիվը ու գիփ մետի մե-մեկ, մե-մեկ էրեսիտ ասիմ քու գուրձիրը, դուն էլ, թե կանաս, իմն ասա, տեսնինք քու արարմունքն է թքելու ու մրելու, թե իմը... Ա՛սա, ա՛սա, էլի։

ԱՎԵՏԻՔ, վեր կենալով:

Լա՛վ է, լա՛վ, գլուխս մի՛ տանի, քու հորն օղորմի։

ՄԱԹՈ

Էսենց, ա՛յ... Ցիս քիզ ասում իմ՝ ինձ մի խոսեցնի... (Երեք անգամ բախում են փողոցի դուռը:) *Քուչի դուռն է, յիրիք ջեր խփեցին. նա է, էկավ։*

ԱՎԵՏԻՔ

Դուն է՞ստի հանդիրի, չիս գնամ ինչրու Օհանեսին իմաց անիմ։

ՄԱԹՈ

Լա՛վ, լա՛վ. բա՛նդ տիս... Ինչրու ծանդր ու բարակ նա դիվիր գու քա էս էրգեն ու մեկ սանդրխտնիրը, չիս կանամ մե դարփա քնի էլ։

ԱՎԵՏԻՔ, գլուխը և ձեռները շարժելով, առանձին:

Օ՜հ, հո՜, հո՜, հո՜, հո՜... Է՞ս հանգի էլ կնի՞կ... «Մա՛ն հալալ ու ջան ազատ:»

Վերցնում է գլխարկը և դուրս է գնում ձախ դռնից:

ՏԵՍԻԼ Զ

ՄԱԹՈ, մենակ։

Պատվականութիւն, ասում է... Հրամանք իս, դեմ ին բերում, վո՞ւնց չէ... Հը՞մ... Ավտաս իրան վուր ռաստ գա, բոդազին կանգնի, ա՜յ... Հենց գիդե, օշով չի գիդի, վուր սուտ կուտր ննգավ, խալխի փուղիրը տակն արավ ու հիմի ուփրո լավ է ապրում կանց վաղ։ (Գնում է, պատշգամբից դուրս է նայում։) *Ջեր վո՞ւրդի է, սանդղխտի վրա վուտն էլ չէ դրի...* (Առաջ գալով։) *Փուղի սեր ու պատվականութիւն ո՞վ է իմացի...* (Նստելով։) *Վուր մեկ մեկու հիդ չին բարիշում, ի՞նչ անիս. աթադան բաբադան, էն գլխեն էս գլուխը մեկ մեկու դուշման ին... Հա՛ բուստ միծատնիր իմ տեսի ու տեսնում իմ հիմի էլ—տղամարթ. Ին կնիկարմատ—վուր փուղի խաթիր ծախիլ ին ու էսօր էլ ծախում ին իրանց պատիվն էլ ու անուն էլ հիդը. ո՞ւր մնաց միզպես բանճպար իայլոր, վուր միր ապրուստը ձլիվ ինք ճարում... Էլի ախրաթը խեր ըլի միրբ...* (Երգախոսությամբ։) *Շատ բան, ինչ նրանք անում ին, մինք չինք անի, էնդունց շնուք չունինք, լայիղ չինք անի...* (Սովորական ձայնով։) *Է՜հ, ջանդամբ նրանց գլուխը. ո՞վ է դրստի աշխարքի բանիրը, վուր յիս դրըստիմ, ինձպես չարչարանքով ու դառը քրտինքով ապրող անուս ու անգիդում մե խիղճ կնիկը... Հնուց դիրք է ու ասած «Ապրիլ կա—էրկաթ է. ապրիլ կա—էրծաթ է»... Հալա փառք աստծուն, յիս, նրա օղորմությանով, մե թիքա հաց մայինց ունիմ. մնացածը ի՞նչ իմ բանն է...* (Վեր կենալով։) *Ցիս գնամ դեմ ու առաջ, կոկոր նորափեսին հանդիբիմ ու առոք փառոք ասուն բերիմ էստի...* (Դիմացի դռանը կանգնած։) *Ջեր դիվիր չէ էկի...* (Դուրս է գնում և պատշգամբից նայում։) *Սանդրխտանների վրա կանդնեցավ... Հալբաթ դաթրեցավ խիղճ պառավ ջհելս...*

Լռություն։ Աղալոյան լուսամուտում երևում է Աղալոն, որ հիացած նայում է պարտեզին, նեռա չերեզկավոր ծառան առնում է նրա ձեռնափայտն ու վերադարձնելով՝ աննկատաբար գնում է աջ կողմը։

ՏԵՍԻԼ Է

ՄԱԹՈ, ԱՂԱԼՈ

ՄԱԹՈ, պատշգամբի վրա, դիմավորելով Աղալոյին։

Հա՛մեցեք, հա՛մեցեք... (Հետևելով Աղալոյին, որ ներս է մտնում գլխարկը ծածկած։) *Համեցե՛ք... Բարի ըլի ջու վուտը։*

ԱՂԱԼՈ, գլխարկը վերցնելով։

Ի՞նչ լավ բախչա ին ունեցի... Արմաղան պտուղներով լիքն է ծառիրը։

ՄԱԹՈ

Քիզ համա հեստի պտուղ կա պատրաստ, վուր հատը չունե քախկումը... (Աղալոն զարմացած նայում է հյուրասենյակի կարմ ու սարքին։) *Համեցե՛ք, նորափեսա ջան...* (Հրավիրում է դեպի բազմոցը։) *Էս վրա քա՞նի ջերն է։*

ԱՂԱԼՈ

Ջե՛նդ, քոփակ։

Գլխարկը վայր դնելով, գնում է դեպի աջ կողմը։

ՄԱԹՈ

Վա՜, սուտ իսո չիմ ասում... (Աղալոն հոնքերը կիտած նետ է նայում Մաթոյին։) *Համեցե՛ք, նստի. հորես դուս գու քան...* (Աղալոն ուղղվում է աջակողմյան հայելում, որ կախած է բազմոցի գլխին, ըստ սովորության։) *Էլի ինձմեն շնորակալ չիս. էս հանդի ախչիկ ճարեցի քիզ համա ու քոփակ էլ իս ասում ի՞նձ։*

ԱՂԱԼՈ, հեռանալով հայելուց։

Բա՛ս ի՞նչ իս, վուր քոփակ չիս։

ՄԱԹՈ

Թե յիս քոփակ իմ, ախպե՛ր, դուն էլ ինձմեն պակաս չպիտի ըլիս... Ցիրիքսան տարեկան յիս իմ, յիրիքսան տարեկան դուն. հա՛ քոփակնիր ինք ու քոփակնիր, (Ծիծաղում է։) *հա՜, հա՜, հա՜, հա՜...*

ԱՂԱԼՈ, նստելով բազմոցի վրա։

Սո՜ւ, ասում իմ... Դուն մե ի՞նձ ասա՝ սրանցն էլ ասի՞ր, վուր յիրիքսան տարեկան ի՞մ։

ՄԱԹՈ

Քիմեն չիմ արմնում, աղա ջա՜ն. սատանեն իր տունը կու քանդե՞... Ասի՝ յարսուն ու հինգ յա կուլիս, յա չէ, (Ծիծաղում է։) *հա՜, հա՜, հա՜, հա՜... Քիզ ի՞նչ, ինչոր ասի. յիս խո բանն էնենց բերի, վուր քիզ ուզեցին։*

Նստում է։

ԱՂԱԼՈ, ծոցից արծաթե փոքրիկ ճանելով և բանալով։

Ի՞նչս էր պակաս, վուր չէին ուզի։

ՄԱԹՈ

Թե էն փուղերը չէի՞ր ունենա, Աղալո ջա՜ն։

ԱՂԱԼՈ, փոքրիկարը ետ ծոցը դնելով առանց ծխամարշ ճանելու

Առանց իմ փուղերը բաս յիս վունչիչ չաժի՞մ։

ՄԱԹՈ

Էտ ո՞վ կոսե. ի՞նչդ է պակաս... Կարմիր թշերը, կոկոր բիխերը, մազերը սիվ սաթ, ո՞վ գիդե թե ներկած է, ջանով, ղուաթով, խոսկ ու ջուղաբդ լավ, լամզդ լազաթի, սրտով արթար ու հա՛լալ. հա՛ նորափեսա իս ու նորափեսա։

Առանձին երեսը ծամածռում է։

ԱՂԱԼՈ

Ա՜յ, կու տեսնիս, թե նորափեսա չիմ։

ՄԱԹՈ

Գիդիմ, գիդիմ, վիցը մեկիմեն ունիս, վիցն էլ մեկելիմեն կունենաս. էլ ի՞նչ ասիլ գուզի։

ԱՂԱԼՈ

Աստծով։

ՏԵՍԻԼ Ը

ՆՐԱՆՔ, ՕՀԱՆԵՍ

ՕՀԱՆԵՍ, մտնելով ձախ դռնից և գլխարկը վայր դնելով սեղանի վրա։

Բարի իրիգուն, փեսա ջան։

ԱՂԱԼՈ, ոտի կանգնելով և տալով ձեռը։

Բարով, աղա Օհանես։

Մաթոն ևս ոտի է կանգնում։

ՕՀԱՆԵՍ

Բարի սահաթի ըլի... Վա՜, համեցե՛ք նստի։

ՄԱԹՈ

Աստուած անփոշիվնելի անե։

ԱՂԱԼՈ

Ամին, տեր աստուած... (Նստում է նույն տեղը։) *Ումիկ ունիմ, աղա Օհանես, վուր չփոշիվնինք... Մի՛ վախենաք, ղուրթ է պառավ իմ էրեսում, ամա ջեր ղոչաղ իմ։ Փուղ էլ շատ ունիմ. ձիր օրումը կարիք չիք տեսնի... Հրամանքդ էլ նստի, է՞։*

ՕՀԱՆԵՍ, նստելով։

Մինք քու մարթութենին թամահ ենդանք, պարոն Աղալո։

ՄԱԹՈ

Մարթութին ասիր ու պրծա՞ր... Սրա պատվականութինը դիփունին հայտնի է, ու ճշմարտասիրութենումը խո հատը չունե սաղ քախկումը... (Առանձին, ցածր։) *Դրա արիվը։*

Նույնպես նստում է։

ԱՂԱԼՈ

Փառք իմ աստծուն, ինչրու էսօր ջեր օչովին արիժատ չիմ ալի, ու ձիր ախչկան էնենց պահիմ, վուր մատով շանց տալու ըլի. վուտեմեն ինչրու գլուխը դիփ օսկով ու բրիլիանտով կու լքցնիմ... Ցիս նրան խիստ իմ հավնում. էն օրը խո գերեզմանատանը տեսա թե չէ, էն սահաթին սրտումս դաջվեցավ։

ՄԱԹՈ, առանձին։

Վա՜յ ձիր միխկը, թա՜դած կնդիրք։

ՕՀԱՆԵՍ

Աստուած օր տա ձիզ, աղա ջան։

ԱՂԱԼՈ

Օղոնդ նա էլ ինձ սիրե, թե չէ հոքիս էլ չիմ խնահի նրա համա։

ՄԱԹՈ, առանձին։

Մտի՛կ էս քոփակին։

ՕՀԱՆԵՍ

Էտումը արիային կաց, պարոն Աղալո։

ՄԱԹՈ, Աղալոյին։

Քի պես տղամարթուն ո՞վ չի սիրի... Նեռայի ջահիլ ըլիմ, յիս կու նշնվեի քիզ վրա, (Ծիծաղում է։) *Հա՜, հա՜, հա՜, հա՜...*

ԱՂԱԼՈ

Օ՜ռ... (Մի կողմ։) *Մոի՛կ էս քավթարին։*

ՄԱԹՈ

Բախտավուր ախչիկ է, յիս ու իմ հոքին, վուր քիզ է ռաստ գալի... Ամա ուփրո բախտավուրը դուն իս, վուր էտ հանգի ախչիկ իս ուզում, բոյով, բուսաթով, ջեհել, սիրուն, խելոք, կտրուկ, բիլան, մարիփաթով, ռանդիկին վուրիչ տուն ու տիղդ էնենց կու կառավարե, վուր էլ ասիլ չի ուզի. ման գալը խո աղունակի յիրիշի է տալի դրուստ, քու արիվը... էստունց հիդ էլ, ասիլ իմ ու էլի իմ ասում, մե ձեն ունե, մե ձեն, մե խաղիր կոսե, վուր ինչ գուզե ջգրած ըլիս, յա դարդուտ, մե նմուտումը քեփդ բաց կոնե... Հիմի խո, զուքած ու զարթարած վուր տեսնիս, խիլքիտ ծերը կէհա, աստուձ գիդենա... Գնա՜ ու գնա՜. ինձմեն պիտի ըլիս շնորակալ...

Ձախ դռնից մտնում են Էլիսաբեդը և Թալալը, երկուսն էլ զուրված, ըստ նկարագրության առաջինը մուզ հագուստով, իսկ երկրորդը—բաց-կապույտ դերիայով և զարդարված զանազան ակնեղենեներով։ Նրանց հետևում է Ավետիքը։

ՏԵՍԻԼ Թ

ՆՐԱՆՔ, ԷԼԻՍԱԲԵԴ, ԹԱԼԱԼ, ԱՎԵՏԻՔ

ՄԱԹՈ, շարունակելով։

Ահրա՜, թե սուտ իմ ասում։

Ամենքը ոտի են կանգնում։

ԷԼԻՍԱԲԵԴ, առաջ բերելով Թալալին։

Ա՜յ, փեսա ջան, թե սիվերով հավնեցար, հիմի ուփրո պիտի հավնիս։

ԱՂԱԼՈ, ընդհանուր ողջույն տալով, նայում է Թալալին։

Խոսկ չունիմ... Ցիս սրան վաղ էլ տեսիլ իմ ու էն գլխեն էվետ հավնիլ իմ. ամա էնթի շափթին, մուշտրու աճկով վուր տնդղեցի, ասի, գթա, ինչ ուզում էի։

ՄԱԹՈ, առանձին։

Թե կու գիդենեի՜։

ԱՂԱԼՈ, բռնելով Թալալի ձեռը։

Ա՜յի, ա՜յի, ախչիկ, նստի էստի կշտիս... (Նստեցնում է բազմոցի վրա իր աջ կողմը և ինքն էլ նստում է կողքին։) *Էրկուսս էլ վուրփաերիք ինք, էրկուսս էլ մեկ մեկու պիտի միխթարինք...* (Թալալը խորը կերպով ողջունում է։) *Դուն ի՜նձ ասա քեփումդ գա՞լիս իմ, թե չէ...* (Թալալը ինքշուրյամբ նայում է Աղալոյին և ժպտում։) *Օ՜հ, հո՜, հո՜, հո՜... ի՜նչ աճկիր իս ունեցի, կու գժվեցնիս դուն ինձ... Ա՜սա, է՜. քեփումդ գալիս ի՞մ։*

ԹԱԼԱԼ, ցածր ձայնով և համարյա թե ականջում։

Խի՜ստ։

ԱՂԱԼՈ, նույնպես ցածր։

Օ՜հ, քու հոքուն մեռնիմ։

Գրկելով պինդ համբուրում է։

ՄԱԹՈ

Վա՜, է՜յ, էտ ո՞վ ղաբուլ կոնե. մուքթ-մուքթ պաչ իս անում, չեր նշանը տու, է՜։

ԱՂԱԼՈ

Դիդիմ, գիդիմ, խամ խո չի՞մ... (Գրպաններից հանում է ակնեղենների հինգ տուփ։) *Մե նշանի մագիեր, յիրիք, չուրսը մետի իմ բերի... էս մա՜տնիք, էս խա՜չ, էս դո՜շի քորոց, էս օ՜ղիր, էս էլ բրա՜սլետ. համբրքեմես ավե, դուս էկավ։*

ՄԱԹՈ, առանձին։

Թաղած կնդդերանց մունգոքկնիրը կուլի։

ԱՂԱԼՈ, տալով տուփերը Թալալին։

Բարով վայիլիս... (Բաց անելով մեկ տուփը, միջից հանում է թանկագին մատանի և հագցնելով Թալալի մատին։) *Էս էլ նշա՜ն... Ուրախութենի ըլի...*

Կրկին համբուրում է։

ՕՀԱՆԵՍ

Աստուձ անփոշիմնելի անե։

ԷԼԻՍԱԲԵԹ

Մե բարցի ծիրանաք։

ԱՎԵՏԻՔ և ՄԱԹՈ

Ամին, ամին։

ՕՀԱՆԵՍ

Ամին, տեր աստուած... Շա՛մփանակին։ (Գնալով դեպի աջ կողմի դուռը։) *Վա՛, շա՛մփանակին...* (Դոնից դեպի կուլիսը։) *Բերեք, է՛... Դրանցն էլ ասեք գան... Հա՛, հա՛, դուք էլ համեցե՛ք։*

Սառաները բերում են նույն դոնից, ուրաքափայլ մեծ սկուտեղներով շամպայն, քաղցրավենիք և զանազան միրգ ու մատուցանում ըստ կարգի։ Նրանց ետեից դուրս են գալիս սազանդարները և նստում են խորքում, աջ կողմը, աթոռների վրա։

ՏԵՍԻԼ Ժ

ՆՐԱՆՔ, ՍԱԶԱՆԴԱՐՆԵՐ

ՕՀԱՆԵՍ, բաժակը ձեռին, մոտենում է նշանվածներին, որ ոտի են կանգնում։

Շնորհավոր ըլի, բախտավոր ըլիք։

ԱՎԵՏԻՔ, սազանդարներին։

Տո՛ւշ, տո՛ւշ։

Սազանդարները ածում են տուշ։

ԷԼԻՍԱԲԵԹ, նույնպես մոտենալով նշանվածներին։

Ուրախութենի ըլի, վուշ կտրվիք մեկզմեկեմեն։

ՄԱԹՈ, նույնպես։

Խի՛թարվիք, վունցոր իմ սիրտը գուզե։

ԱՎԵՏԻՔ, նույնպես։

Աստծու օխնանքը անպակաս ըլի ձիզմեն։

ԱՂԱԼՈ, բաժակը դիպցնելով Ավետիքի բաժակին։

Ա՛պրիս, Ավետիք ջան։

Նշանվածները ողջունում են, մյուսները խմում են, տուշը դադարում է։

ԱՂԱԼՈ, բաժակը ձեռին։

Շնորհակալ իմ, պարոնները... Շնորհակալ իմ, մեր հեր ու մեր մեր, ձեր օրհնանքն անպակաս ըլի մեզմեն։ (Թալալին։) *Էս էլ քու կինացը. բախտավոր ըլիս, վունցոր քու հորն ու մոր սիրտն ու քու սիրտը գուզե։*

Ավետիքի նշանի վրա սազանդարները կրկին ածում են տուշ։

ԹԱԼԱԼ, ողջունելով Աղալոյին, վերցնում է իր բաժակը։

Էս էլ ձեր կինացը, աստուած ձիզ էլ անպակաս անե ինձմեն։

Նշանվածները խմում են և նստում իրանց տեղերը, տուշը դադարում է, ծառաները դնելով սկուտեղները ձախ կողմը, սեղանի վրա, դուրս են գնում աջ դոնից։ Էլիսաբեթն ու Օհանեսը հրճվանքի մեջ են և հյուրասիրում են Մաթոյին ու Ավետիքին, որ ուտում, խմում, ցածր խոսում են իրանց մեջ։

ԱՂԱԼՈ, մատուցանելով Թալալին քաղցրավենքի և մի խնձոր։

Համեցե՛ք... (Թալալը ողջունելով, առնում է քաղցրավենքին և խնձորը։) *Պատվական խնձոր է, քու թշերու նման է դրուստ...* (Թալալը կատրվում է։) *Էրևում է ձեր բախչեմեն է։*

ԹԱԼԱԼ

Հրամանք իս։

ԱՂԱԼՈ

Լավ բախչա իք ունեցի, բալկոնեմեն թամաշա էի անում, քեփս էկավ... Էս տանու միրքն էլ լավն է, ախչիկն էլ... Ամա ինչ գուզե ըլի, քիզ հիդ վունչիչ չի գա... (Վերցնելով աված խնձորը։) *Դուն վուր կաս, ուրիշ պտուղ իս. ի՞նչ ախչիկ կանա քիզ նմանվի... Էրգար օր ունենաս... Մե էրկու կնիկ յիս իմ թաղի, աստուած տա դուն ինձ թաղիս։*

Սկսում են խնձորը կնճել։

ԹԱԼԱԼ

Չէ, գեթաղվա, մարթու թաղիլը դժար բան է. թո՛ղ յիս ձեր մահը չտեսնիմ։

ԱՂԱԼՈ

Էտ աստծու ձեռին է... Մինք հիմիկվան բան խոսինք... Ա՞նումդ, մնամ վուր՝ Թալալ է։

ԹԱԼԱԼ

Հրամանք իս։

ԱՂԱԼՈ

Թալալ անումը մեր թաղին քի սաղ գա... Ցիս քիզ Թա՛լինկա կու կանչիմ, թե դաբուլ իս։

ԹԱԼԱԼ

Վունցոր ձեր կամքն է, յիս դաբուլ իմ։

ՍՂՍՂՈ

Ա՛յ, զորանաս... Թա՛լինկեն լավ է. Սոլոլակում դիպ ինկա ին. (Հանդարտ և շեշտելով։) Դա՛լինկա, Վա՛լինկա, Նա՛լինկա, Կա՛տինկա, Սա՛շինկա, Մա՛շինկա, Ա՛լմասինկա, Զո՛ւրմուքտինկա ու էլի քանի գուլիս դիպ ինկա։

ԹԱԼԱԼ

Ինձ համա ուրախութին է ձեր կամքը կատարիմ։

ԱՂԱԼՈ

Ա՛յ, ապրի՛ս... Հիմի, Թա՛լինկա ջան, դուն ի՞նձ ասա խո գիդիս, վուր վից վուրթի ունիմ, նրանցը տիրուութին կոնի՞ս, թե չէ։

ԹԱԼԱԼ

Վունցոր իմ հատուկ վուրթկերանցը։

ԱՂԱԼՈ

Ա՛յ, ա՛պրիս ու զորանա՛ս... (Մատուցանելով Թալալին խնձորի մի կտոր։) *Ցիս էլ, Թա՛լինկա ջան, քու սրտի ուզածը դիպ կու կատարիմ. մի՛ մաղ չիմ անցկացնի, քու արիվը...* (Թալալը տեղից բարձրանալով, համբուրում է նրա կուրծքը։) *Վա՛, վա՛, վա՛, ի՞նչ ախշիկ իս էլի. յիս քու խիլքին ու խասիաթին մեռնիմ, Թա՛լինկա ջան...* (Համբուրում է Թալալին։) *Ղուրթ վուր լավն իս էլի... Բրիլիա՛նտ... Քանի էտենց քեփս բաց կոնիս, յիս քիզ Բրիլիանտովնա կու կանչիմ...* (Թալալը գլուխ է տալիս։) *Մե խոսկով նուղլ ու շաքար իս ինձ համա...* (Սազանդարներին։) *Աբա՛...* (Սազանդարները ածում, երգում են «Թալալ-Շիրազի» իր թափշուրմով, շատ կարճ ժամանակ, իսկ ինքը շարունակում է Թալալի հետ դեռ լուրջ, հետո սիրահարական խոսակցություն և վերջը ձեռները համբուրում։ Մյուսները, ձախ կողմը նստած, ուտում, խմում, խոսում են իրանց մեջ և երգը վերջանալուց հետո ծափահարում են սազանդարներին։) *Էշխով ին ասում, չէ՞։*

ԹԱԼԱԼ

Հրամանք իս։

ԱՂԱԼՈ

Իմացա դուն էլ լավ խաղ ասիլ իս գիդացի... Աբա՛, իմ խաթիր, մե բա՛ն ասա, թե կանաս... (Թալալը կոտրվում էր։) *Է՞ստի յադ օչով չկա. քու հերն ու մերն ին ու էս մոդին բարեկամները... Ա՛սա, ա՛սա, գեթաղվա. թե իմ խաթրն ունիս ու ինձ պիտի տիրես, ա՛սա։*

ՄԱԹՈ, վեր կենալով։

Հա, ի՞նչ է, վուր ասիս։ Մե էս պատվական նորափեսի քեփը կատարե. թո՛ղ էս գլխեն իմանա ի՞նչղադա խաթր ու պատիվ ունիս իրանց։

Թալալը ճայացքով և շարժվածքով հարցնում է մորը։

ԷԼԻՍԱԲԵԹ, նստած։

Ա՛սա, վուրթի, ա՛սա. Մարթ-Ծուլի խաղիր խո շատ գիդիս։

Մաթոն կրկին նստում է։

ԹԱԼԱԼ, վեր կենալով տեղից, սազանդարներին պատվիրում է երգը։ *«Ինձ սիրեցիր»...* (Թազի հերդաշնակությամբ և Աղալոյին շողոքորթելով հիանալի երգում է Սայաթ-Նովայի հետևյալ ղազալին։)

Ինձ սիրեցիր, էշխըն նընգաթ,
խաղի դավթար իմ քիզ համա.
Մի՛ քաղի փրշի ծաղիկըն՝
վարթ սուսամբար իմ քիզ համա.
Չիմ թողնի աքեզագուլմըն՝
բախչի շաքար իմ քիզ համա.*
Յիս քու մահըն վո՞ւնց կու խընդրիմ՝
նուղլ ու շաքար իմ քիզ համա։

ԱՂԱԼՈ, հիացած, առանձին և ցածր։

Վա՛...

ԹԱԼԱԼ, շարունակում է։

Է՞լ քու բաղին մրտիկ արա՛,
Ուրիշ բաղեն վարթ չի՞ն տա քիզ.
Աղ ու հացն մի՛ դեն գցի,
շափթենք մեկ մրտիկ տո՛ւ մեզ։

* Այն հրատարակության մեջ սխալմամբ տպած է՝ սաղար, փոխանակ՝ շաքար, որ արաբերեն նշանակում է՝ ծառ, թուփ. այնինչ սաղար արաբերեն կնշանակե աչքան կարմիր գույն աչքերի սպիտակացում։

ԱՂԱԼՈ, առանձին ցածր։

Ա՛մեն օրդ՝ ա՛մեն սահաթ։

ԹԱԼԱԼ, շարունակում է։

Թեզուզ աշխարքս պըտուտ գաս՝
չիս տեսնի ինձի պես աղիզ.
Թաք ուրիշ գոզալ չը սիրիս՝
Իղդարով յար իմ քիզ ամա։

ԱՂԱԼՈ, առանձին, կոկորդային ձայնարկությամբ և ցածր։

Ը՛հ...

ԹԱԼԱԼ, շարունակում է։

Աստված վըկա, ղիմիշ արած
գլուխքս քիզ մատաղ ըլի.
Ե՛կ քիզ իդ սիրով դամ անիմ,
օ՛վ գուղե բնդամաղ ըլի.

ԱՂԱԼՈ, առանձին, ցածր։

Ճի՛րի մե շենի, աղունա՛կ։

ԹԱԼԱԼ, շարունակում է։

Ես քու խոսկին չիմ անց կենա,
Թաք քու դամաղըն չաղ ըլի.
Թեզուզ անմահութին ուզիս՝
*սիրով կու ճարիմ քիզ ամա։**

Ամենքը ծափահարում են, Թալալը ողջունում է։

---

* *Բաց են թողած՝ երրորդ և վերջին տները, որոնք հետևյալներն են՝*

Թաք ես մորես չէի ծընի.
Վա՛յ էն օրին ես քիզ տեհա.
Դու բուլբուլ իս, ես կարմիր վարթ.
չասիս, թե՝ վարթըն չալդ կեհա.
Մե փուքրը էանց դիմացի՛,
շուտով Հընդըստան մի՛ էհա.
Անգործիլ, անխարշ ու քըրիհ՝
մանդիլի դար իմ քիզ ամա։

Քու դարդըն ինձի պառվեցուց.
ո՞ւմն ասիմ, Սայաթ-Նովա.
Մի՛ գըցի ձեռնեմէն ձեռըն՝
օսկե թաս իմ, Սայաթ-Նովա.
Փրանգըստանու միչեն էլած՝
դար առլաս իմ, Սայաթ-Նովա.
Ծալե՛ դավթարըդ, զութին դի՛.
ռանդ ու բուքար իմ քիզ ամա։

1754 ապրիլի 1 ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ

ԱՂԱԼՈ, տեղից վեր թռչելով։

Օ՛հ, քու ձենին ու հոքուն մեռնիմ, Թա՛լինկա ջան։

Կրկին համբուրում է Թալալին, սազը դաղարում է։

ՄԱԹՈ, վեր կենալով։

Ա՛պրիս, վուրմի, ինձ պարզ էրես պուս բերիր քու տեր ու տիրականի մոդ։

ԱՂԱԼՈ, բռնելով Թալալի ձեռը։

Ա՛ռի, ա՛ռի, նատի՛ էլի ինձ մոդ... (Նստում են իրանց տեղերը։) *Ա՛յ, ափերո՛ւմ...* (Մաթոյին։) *շնորհակալ իմ քիմեն, Մաթո. մե խմե սրա կինացն, է՛։*

ՄԱԹՈ, բաժակը վերցնելով։

Էրկուսը դարդակիլ իմ, էս էլ վրա յիրիքը... Ձի՛ր կինացը... Էրկուսին կինացը մեսի իմ խմում, էնդուր վուր էրկուսդ հիմի մեկ իք... «Զոր առուած զուգեաց՝ մարդ մի՛ մեկնեսցէ,»* *ասում է... Կի՛նոք ըլիք, ծլի՛ք, ծա՛ղկիք. մե բա՛ռցի ծիրանաք, ըմբրո՛վ կշատանաք, մեկ մեկեմեն չբե՛ղրիք ու չլե՛թվիք ձիր օրումը... Դուշմնի սրտով չըլիք, խնդա՛ք ու խի՛թարվիք, ամիք ու բաղմանաք, առչնիկը ադա ըլի՝ սի՛րուն, քոչորավուր...*

Նշանվածները գլուխ են տալիս. սազանդարները ածում են տուշ ավելի մեծ շուքով ու ճանդեսով։

ՄՅՈՒՍՆԵՐԸ

Ա՛մին, ա՛մին, տեր աստուած։

Նշանվածները կրկին գլուխ են տալիս։

ՄԱԹՈ, շարունակելով։

Յիս էլ ձիր մեչը ըլլըվամ... (Խմում է, տուշը դաղարում է։) *Վոխա՛կ, էս էլ գնաց իր ճամփին...* (Դատարկ բաժակը վայր դնելով։) *Աբա՛, հիմի ծա՛փ տվեք, պիտի լեզգեվար խաղամ...* (Սազանդարներին։) *Ձիր չարը տանիմ, մե լա՛վ լեզգեվար...* (Սազանդարները ածում են լեզգերեն պարի եղանակը։) *Է՛տենց...* (Մի փոքր պարում է։) *Շաբա՛շ... Աբա՛, նորափեսա ու նորահարս, հիմի ձիր հիրթն է։*

---

* *Մատթեոս, գլ. ԺԹ. տ. 6։*

ԱՂԱԼՈ

Ի՞նչ է. հենց գիրքս չիմ կանա՞... (Պարում է, հետո գլուխ է տալիս Թալալին, որ ոտի է կանգնում:) *Արա՛, Թա՛լինկա ջան, մեր քու շնորքը էստումն էլ շա՛նց տու...* (Մյուսներին:) *Դե՛, ծա՛փ տվեք...*

(Թալալը և Աղալոն պարում են միասին:) *Հա՛, ղոչա՛ղ։*

Շարունակում է պարել Թալալի հետ միասին։ Աշակողմյան լուսամուտում երևում են Կատարինեն դաբիբայով և Սանվելը գլխարկով, որոնք այնտեղից մի վայրկյան նայում են պարին։ Ծառաները աջ դռնից բերում են դարձյալ արծաթավայր սկուտեղներով՝ թեյ, պախիմատներ և զանազան շաքարեղեն։ Դիմացի դռան կողմից լսվում է Կատարինեի ձայնը՝ *Թո՛ղեք թո՛ղեք։* Ծառաները զարմացած տեղն ու տեղը կանգ են առնում։

ՏԵՍԻԼ ԺԱ

ՆՈՒՆՔ, ԿԱՏԱՐԻՆԵ, ՍԱՆՎԵԼ

ԿԱՏԱՐԻՆԵ, դաբիբայով հանկարծ մտնում է դիմացի դռնից։ Սանվելը հետևում է նրան, գլխարկը ձեռին։ *Է՞ա էր քաղնիսը՞։*

ԹԱԼԱԼ, ճչալով:

Ա՜խ...

Ընկնում է Աղալոյի գիրկը, երեսը նրա կրծքի վրա ձեռով ծածկելով, ամենքը շվարվում են, սազը դադարում է:

ԿԱՏԱՐԻՆԵ, երկու ձեռով շանչ անելով:

Վո՛ւյ, գեղինը պատրվի ու ձիզ դեվեր տանեն, ձիր բաղնիսի բոխչեն էլ հիղը, ահրա՛։

Աղալոն մեկ ձեռով գրկելով Թալալին և մյուս ձեռով բռնելով նրա բերը, նայում է Կատարինեին:

ՍԱՆՎԵԼ, որ ապշած մնացել էր քեմի խորքում, նայում է Թալալին և առանձին:

Փո՛ս քոս նամուսին։

Ամենքը մնում են անշարժ իրանց դերերին համապատասխան դիրքով,— ծառաները սկուտեղները ձեռներին: ՊԱՏԿԵՐ: Վարագույրն իջնում է կամաց կամաց:

Վերջ

ՍԵՐ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹՅՈՒՆ ՀԻՆԳ ԱՐԱՐՎԱԾՈՎ

1909

Իմ անզուգական սիրելի ամուսնուն

ԻՄ ԱՃԿԻ ԼՈՒՍ ՍՈՖԻ ՋԱՆ.

Լաբ դրուստ շուրս ճան ու ճինզ տարեկան իմ:

Թե ինչրի Լաբ ապրեցա ու ապրում իմ ճիմի, յիս պարտական իմ իմ ճարն ու մարք, պարտական իմ Քիզ, իմ հաղար Սոֆի ջան:

Շատ ուրախ իմ, փար դաբդիան օրը կանացիկ իմ Քիզ թավազա անի իմ ճուր աշխատանքը, վուրի վրա շատ անգամ գլուխ գովեցրիլ իմ:

Կարթա ու ոխս. Սոֆի ջան. շատ բան միայ գուրա միր կիենիմեն, ինչ էս խոսուն ու օխտը տարի է փանկիլի ինչ ու մեսի ինչ ապրում, էնհան ըլի՝ Քի մոդ պարզբրես դուս գամ ու աշիրոում, շամանչիմ:

Էրանի Դուն լավ ըլիս, Սոֆի ջան, ու վուրբկերանցով բախտավոր, իմ գլուխը Քիզ շարի փուխ:

Քու ԳԱԲՐԻԵԼ

29 Հունիսի 1910 թ.
Բորժոմ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՄԵԼՔՈ, ճարուստ վաճառական
ՆԱՏՈ, նրա կինը. ֆնֆուշ, նազելի և ամենագեղեցիկ անձնավորություն
ԳԱՅԻԱՆԵ, Նատոյի մայրը, այրի կին
ՇԱՔԱՐՈ, Գայիանեի հայրը
ԳԱՍՊԱՐ, Մելքոյի եղբայրը, նույնպես վաճառական
ԷՖԵՄԻԱ, նրա կինը
ՏԻԳՐԱՆ, Մելքոյի վաճառատան կառավարիչը, գրավիչ երիտասարդ
ԱՂԱԽԻՆ
ՍԱՌԱ
ԱՅԳԵՊԱՆ

Առաջին և երկրորդ արարվածները կատարվում են Մելքոյի տանը, իսկ մնացածները նրա այգումը՝ Օրթաճալա։

Անցքը պատահում է Թիֆլիզում 1909 թվի ամառը, մի օրվա ընթացքում։

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՂ ԱՆՁԱՆՑ

ՄԵԼՔՈ, 40 տարեկան վայելչակազմ մարդ։ Եվրոպական ընտիր հագուստ։ Գլխարկը՝ սև ցիլինդր։ Սկզբում՝ շագանակագույն ձեռնոցներով է, իսկ հետո բոլորովին առանց ձեռնոցների։

ՆԱՏՈ, 20 տարեկան։ Ամենագեղեցիկ, մատաղահաս և բարձրահասակ կին. քնքուշ և նազելի անձնավորություն, եվրոպական շքեղ հագուստով։

ԳԱՅԻԱՆԵ, 50 տարեկան։ Բոլորովին վրացական մուգ հագուստով, գլուխը վրացական ծածկած։

ՇԱՔԱՐՈ, 96 տարեկան։ Սպիտակ մազերով, բարձրահասակ, գեղեցիկ տղամարդ։ տեղական հագուստով։ Սպիտակ շապիկ, որի կոշիկը սև դայիանով բոլորած. մուգ կապույտ նաշուրից ղոշերավոր արխալուխ. սև մահուդից կարա և լայն շալվար. խաչագի սև լափիններ, շագանակագույն մոքիի մեծ գլուխ. կապույտ ղանավուզի գոտի։ Գործ է ածում կապույտ չիբուխ։ Գլուխը բարձր, բայց հաստատ, շարժվածքը և խոսակցությունը ազնվություն։ Խոսում է մեծ համարձակությամբ, շեշտելով և ընդհատելով երբեմն պարբերությունները, մինչև անգամ առանձին բառերը։ Միշտ գլխարկով է։

ԳԱՍՊԱՐ, 33 տարեկան։ Եվրոպական մաքուր հագուստ։ Գլխարկը սև՝ ցածր շլյապա։

ԷՖԵՄԻԱ, 26 տարեկան։ Գեղեցիկ կին, եվրոպական ընտիր հագուստով։

ՏԻԳՐԱՆ, 25 տարեկան։ Բարձրահասակ, գեղեցիկ երիտասարդ։ Եվրոպական մաքուր և վայելուչ հագուստ։ Գլխարկը՝ սև ցածր շլյապա։ Դեմքով, տեսքով, հագուստով և շարժվածքով շատ գրավիչ է։

ԱՂԱԽԻՆ, 50 տարեկան։ Տեղական հագուստ։

ՍԱՌԱ, 20—25 տարեկան։ Չերքեզի գեղեցիկ հագուստ. սրծաթե քամար և արծաթապատ դաշույն։ Առաջին և երկրորդ արարվածներում գլխարաց է, իսկ մնացածներում՝ միշտ գլխարկով է։

ԱՅԳԵՊԱՆ, 40—45 տարեկան։ Այգեպանի մաքուր հագուստով և գլխարկով։

Ծանոթություն։ Տղամարդիկ ամենքն էլ բեխերով են և երեսները ածելած։ Մելքոն միայն, որ նույնպես ածելած է, բացի բեխերից ունի նաև կարճ մազեր կղակի տակ։

ԱՐԱՐՎԱԾ ԱՌԱՋԻՆ

Բեմը ներկայացնում է մի չքեղ սենյակ հեքեֆ դռնով՝ աջ, ձախ և խորում: **Ձախ կողմը եվրոպական վառարան մեծ ճայելիով և գարակով, որի վրա գտնված են** ժամացույց և զանազան առարկաներ, ըստ սովորության: Անկյունը զարդարած է զեղեցիկ ծաղիկներով, վարագույրներով, պատկերներով և կանգ-կտաստիրով, ի միջի այլոց դաշնամուր, փոքրիկ գրադարան և զանազան անկյուններում գրքեր և լրագիրներ: Առավոտ է, մոտավորապես ժամը 10—11-ը:

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ՆԱՏՈ, ԱՂԱԽԻՆ

ՆԱՏՈ, մտնում է խորի դռնից գլխարկով, վերարկուով, ձեռնոցներով, հովանոցով և ձեռին հիանալի ծաղկեփունջ. հովանոցը տալիս է աղախնուն, որ հետևում է նրան, և առաջ գալով:

Խո օ՞չով չէ հարցրի ինձ:

ԱՂԱԽԻՆ

Չէ՛, տիրիկ-պարոն:

Վերցնում է նրանից վերարկուն:

ՆԱՏՈ, որ իսկույն փայլում է ամենաբանկագին ակնեղեններով:

Հնարամտակալ իմ, Մարիամ... Լա՛վ, տա՛ր:

ԱՂԱԽԻՆ

Թե յարդ ամբին գա, ի՞նչ ասիմ:

ՆԱՏՈ

Ի՞նչ դուզիս... Զարթնի իմ մորը ուրիշ օչովի սիրտ չունիմ:

ԱՂԱԽԻՆ

Շա՛տ լավ, տիրիկ-պարոն:

Վերարկուն և հովանոցը դուրս է տանում խորի դռնից:

ՏԵՍԻԼ Բ

ՆԱՏՈ, մենակ: Ծաղկեփունջը դնում է անոթի մեջ, սեղանի վրա, ձեռնոցները հանում է, գլխարկը վերցնում և նստում սեղանի մոտ: Ճակատին, պարանոցին, կրծքին, ականջներին և ձեռներին ամբողջապես երևվում են բոլոր ակնեղենները: Հոտոտում է ծաղկեփունջը և երկար հոգվոց է հանում:

Ա՜խ... (Արմունկով հենվում է սեղանին, գլուխը ձեռի մեջ առնում և այդ դրության մեջ մնում է բավական ժամանակ լուռ և անշարժ: Հետո վերցնելով գլխարկը, գնում, հայելու մեջ զննում է իրան, հիասքաղ շարժում է գլուխը և շոշափելով մանյակը:) *Էս էլ սուտ է էլի...* (Նայելով մատանիներին և ապարանջաններին:) *Էստունք էլ դիպ սուտ է... Ունայնություն ունայնությունց, վունցոր ասում ին...* (Հուսահատ): *Օ՜հ, թե խափվեցա... Օ՜հ, թե խափվեցա... Ցիս չէի՞, վուր խիլքիս ծերը գնում էր էս դիպի-պիզերու համա՜...* (Մանյակը հետ է անում և ապարանջանները հանում:) *Հիմի հենց գիդիմ ամկերումս դիպ մետի փուշ է էստունք. իմ անխիլութինն է ինձ միտս բերում... Սրանց համա գլուխս ծախեցի, հարբստութենի համա ինձ գերի գցեցի...* (Մանյակը և ապարանջանները ձգում է սեղանի վրա. հետո բարկացած հանելով և սեղանի վրա ձգելով շղթան և մի քանի մատանիներ:) *Սիրտս ասում է՝ վի կալ ու դիպ մետի խղճերուն բաժնե. մե օղորմի էլ է մայինց կոսին:*

Գնում, արմունկով հենվում է վառարանին, հետո մի քանի լրագիրներ աչքի է անցկացնում, վերջապես վերցնելով մի գիրք, նստում, լուռ կարդում է. ապա հուզվելով, աչքերը սրբում է: Խորի դռնից վերարկուով մտնում է Գայիանեն և անշարժ նայում է:

ՏԵՍԻԼ Գ

ՆԱՏՈ, ԳԱՅԻԱՆԵՆ

ԳԱՅԻԱՆԵՆ, վերարկուն հանելով:

Նատո՜... Է՞նի լաց իս բլում, վուրթի՜:

ՆԱՏՈ, վեր կենալով։

Ա՜խ, գեղի՛ ջան... (Ընկնում է մոր գիրկը։) Ինձ պես բեքախտ ախչիկ չկա։ Գեղի՛ ջան... Բեքախտ իմ, բե՛բախտ...

Աշխեր սրբում է։

ԳԱՅԻԱՆԵ

Գիդիմ, վուրթի, գիդիմ, Նատո ջան. ամա հիմի էլ ի՞նչ կանանք անի... Արի՛, Նատի՛ էստի հալա... (Նստում է։) Մե քիչ դնչացի, սիրտդ հի՛ղ բի. ի՞նչ էլավ քիզ։

Գլխի փաթաթոցը վերցնում է։

ՆԱՏՈ

Ինչ էլավ, էլավ, դեղի ջան, ու էլ հար չկա ինձ ազատվելու։

ԳԱՅԻԱՆԵ

Էրանի յիս մեռիլ էի, վուրթի, ու քիզ էտ հալի չէի տեսի։

ՆԱՏՈ

Միթամ իմ դարդը հերիք չէ ինձ, դեղի ջան, ու հիմի է՛տունք էլ ասա։

ԳԱՅԻԱՆԵ

Ախար, յիս վո՞ւր մե ցավին դիմնամ, վուրթի. քու լացին ու գանգատին, թե՛ իմ սրտի քիքս ու քքսանքին... Գիդե աստուծ ու դուն էլ գիդես, վուր յիս մենակ իմ գլխու բան չիմ բռնի, քիզ զոռ չիմ արի, հարցրիլ իմ քիզ։

ՆԱՏՈ, համբուրելով մոր կուրծքը և ձեռները։

Հա՛, հա՛, դեղի ջան, դուն միդ չունիս. յիս իմ միդավուրը, յիս. իմ ջեհելութինը ախտից ինձ... Հարստութենի էղնեն ննգա ու էլ սիվ ու սպիտակ չզոգեցի։

Աշխեր սրբում է։

ԳԱՅԻԱՆԵ

Թե դուն ջեհել էիր, վուրթի, յիս տարով էի ու փորցած... Ամա իմ բեքախտութինը, վուր յիս իմ հորը չլսեցի էնչափը... Հիմի է խիլքումս նստում, հիմի՛, վուր ինչ նա ասում էր, դրուստ էր ասում... Մե քիչ էլ է վուր բանականութին էի ունեցի, յիս չէ թե չէի պիտի բաց արի ու խեյրաթ

տեսի քու շտապով նշնվիլն ու փոակվիլը, յիս պիտի ամեն բարաթ հանատակվիլ էի էտուրը... Էստով իմ յիս միլավուր քի մոդ էլ, վուրթի, իմ գլխի մոդ էլ... Իմ անգիդումութինն ու խոհութինը մե կուռը ու քու մարթու գովլաթն ու հարստութինը մեկելը զուրթ վուր շշկրլեցրուց ինձ խատակ... Ի՞նչ արած՝ քու հորական տունը միդ չէր պահում ու քու շարլարանքը սպանում էր ինձ... Իմ տիղ ո՞վ չէր ննգնի էս գովլաթի էղնեն։

ՆԱՏՈ

Էտ գովլաթն ու հարստութինն արավ, դեղի ջան, վուր սրտեմես արուն է կաթում հիմի ու աճկեմես արտասունքը չէ ցամքում... Յիս գիդիմ, վուր շատ ախչիկ էրնեկ է տալի ինձ, իմ փառքին, իմ պատվին, իմ գովլաթին. ամա օչով չի գիդի, թե ի՞նչ դառն արտասունքով իմ անց կացնում յիս իմ օրը... Ի՞նչ կոնիմ յիս էն ակը, էն մարքրիտը. ամեն մեկը մե-մե փուշ է սրտումս... Ճիտս վասվրոի է տալի իալխի աճկումը, սրտումս կի օչով չէ տեսնում, թե ի՞նչ դժուխկի կրակ է վառ (Բախելով սիրտը։) Էստի ու էրում ու խորովում է ինձ... Էն ավելի լավ չէ՞ր ըլի, վուր էն ըրիլիանտներու մագիեր փշե ֆերմուար էի ունեցի կապած շլնքիս ու սիրտս իր տիղն էր էլի՞... Գի՛փ, դիփ էն ակն ու մարքրիտն արավ, վուր քու աճկիրն էլ կապից, դեղի ջան, ու իմն էլ... Էս հարստութինը վուր չէր էլի, վունց դուն կու խափվեիր, վունց յիս։

ԳԱՅԻԱՆԵ

Ատուծ օղորմած է, վուրթի. մե քիչ համփիրութին ունեցի. վիրչը կու սորվիս հիդը ու կու սիրիս էլ... Էտ հանդի օրինակնիր շատ է էլի, վուրթի։

ՆԱՏՈ

Ա՜խ, դեղի, դուն էլի էն իս ասում, ինչ վաղ էիր ասում, վուր ջեր չէի էլ գիդի, թե սերն ինչ է... Վո՞ւնց պիտի սորվիմ հիդը, վուր ինչրի էսօր էլ յիս նրան չկանացի սիրի, չիմ սիրում ու իմ օրումն էլ չիմ կանա սիրի, վունցոր պարտադան իմ սիրելու։

ԳԱՅԻԱՆԵ

Լա՜վ է դուն էլ, հենց ասրիս... Ի՞նչ մե փիս ու հուտած մարթը նա է, վուր էտունք իս ասում։

ՆԱՏՈ

Փի՛ս ու հուտած... Էտ է պակաս... Էտ էլ վուր ըլի խոմա, էլ մե օր կենթանի չէի մնա... Էն սահաթին կէհեի ու ջուրը կու ննգնեի։

ԳԱՅԻԱՆԵ

Քու բերնով իս ասում, վուրթի, վուր փիս մարթ չէ, ու լավի հիդ մարթ վո՞ւնց յոլա չգնա։

ՆԱՏՈ

Յոլա գնա... Թե՛ վուր յոլա իմ դնում, ուրիշ ի՞նչ պիտի անիմ... Լավ գիդենաս, դեդի ջան, էլի նրա լավութինն է ու բարութինը, վուր ինչկի էսօր դիմնում իմ, թե չէ յիս իմ գլխի ճամփեն վաղ կու գթնեի։

ԳԱՅԻԱՆԵ

Տե՛ր քիզ, աստուած, էս ինչ պատիժ է։

ՆԱՏՈ, արտասվախառն։

Պատիժն իմ գլխին է, վուր աստուած հոքիս չէ հանում։

ԳԱՅԻԱՆԵ, գրկելով Նատոյին և լացի ձայնով։

Մի՛ լաց ըլի, Նատո ջան, չարդ տանիմ, մի՛ լաց ըլի. աստուած կու խղճա քիզ էլ, ինձ էլ. ա՛ղոթկ արա, վուրթի, աղոթկ։

ՆԱՏՈ

Աղոթկ էլ շատ արի, դեդի ջան, մում էլ շատ վառեցի, վուր աստուած ինձ մահ տա, ամա էրևում է, աստուած իմ աղոթկը չէ ընթունում... (Գադար։) *Էրնեկ ըլելու բան ըլի, միր փսակը քանդվի,* (Գայիանեն ապշում է։) *Էն սահաթին էվետ դիփ մեսի կու թողնեի՝ մարթ, տուն, տիղ, հարստութին ու կու քեի հիդ էլի քի մոդ կու կենեի... Վունցոր վաղ ապրում էի, իմ կարով էր թե դասերով, էլի էնենց ինձ համա ազատ չունչ կու քաշեի. էլ օչովի աճկ ու ունքին չէի մտիկ անի, վունց էլ նրա ձեռի օղորմութենին ձեաս կու դեմ տեի։*

ԳԱՅԻԱՆԵ, սթափվելով։

Վո՞ւյ, քոռանամ ու կուրանամ յիս, վուրթի... էտ ինչի՞ր իս ասում. աստծեմեն չի՞ս վախենո՞ւմ... Է՞տու համար իս մոդ արի էսղադա գրիրը գլխի՞ս, վուր էտունք կարթաս ու սորվիս հիմի՞։

ՆԱՏՈ, Բաղցրությամբ։

Է՛հ, դեդի ջան։

ԳԱՅԻԱՆԵ

Հա՛, ի՞նչ է... էտ գրիրն է քիզ գժվեցնում։

ՆԱՏՈ

Էս գրիրն էլ վուր չըլի, դեդի ջան, էնչափը ղուրթ, վուր իստակ խիլքեմես կուլնի։

ԳԱՅԻԱՆԵ

Ախար, էլած բանին էլ ի՞նչ չարա կա, վուրթի... Փսակի քանդիլը, վուր էտենց հիշտ բան ըլի խոմա, կես քաղաքը մե բաշ մեկի կնիկը մեկելինը կու դառնա... Չէ՛, վուրթի, չէ՛. էտ հանգի բանիր մի՛ ասի ու մի՛ փիքր անի... Էլի աստծուն փա՛ռք տու, վուր ուրիշներու պես զբնած ու ղրկած չիս... Հեստրկնիրը կան, վուրթի, վուր ամեն մեկի նիղութենի մոդ քու նիղութինը մե մսխալ էլ չի գա... Բաս նրանք ի՞նչ անին. նրանք միխկը չի՞ն։

ՆԱՏՈ

Խիստ էլ միխկ ին, դեդի ջան, վունցոր յիս իմ միխկ. խիստ էլ սիրաս ցավում է ու մխկտում դիփունի համար, վունցոր քու սիրտն է ցավում ու մխկտում ինձ համա. ամա վուրթենն էլ մտիկ իմ անում, տեսնում իմ, վուր միր ազատութենի համա վունչիչ ճամփա չկա... Էս բանը պիտի վաղ էի գիդացի, վուր էլ էսենց տանջվի... Հիմի իմ իմանում ու հասկանում իմ նմաններու տանջանքն ու նեղութինը, վուր գլխիս վրա փորձում իմ...

ԳԱՅԻԱՆԵ

Ի՜հ, լա՛վ է, հենց ապրիս, ինչ մարթու ճակտին գրած է, գրած է... Աստծուն մի՛ բարգացնի գլխիտ, վուրթի։

ՆԱՏՈ

Դուն է՛տենց ասա, դեդի ջան, ու յիս վուր հաստատ գիդենամ, թե յիս կանամ իմ նմաններու ազատութենին օտկի, յիրգինք վկա ու քու արիվը գիդենա, էլ մե օր չէի մնա, էս սաթիս էվետ կէհնի ու գլուխս նրանց չարի փուխ կոնեի... Ահա հազար էլ գլուխս քարը տամ, օչովին վունչիչ չի՞ կանա օտկի, թե տերը չէ ուզում։

ԳԱՅԻԱՆԵ, վեր կենալով և առանձին։

Ի՞նչ անիմ յիս սրան... (Մոտենալով սեղանին, որի վրա ածած են ակնեղենները, Նատոյին։) *Էս ակնեղեննիրը ինչի՞ է էստի ածած։*

ՆԱՏՈ

Պատկիրքս էտ ակնեղեններով հանիլ ավի հիմի... Թե գլխիս մի բան էկավ, դեդի ջան, գիդենաս, վուր գլուխս դրանցը մատաղ էլավ։

ԳԱՅԻԱՆԵ, առուսավախառն:

Աբա՛, էտ ա՞սկու է, վուրթի, վուր դուն իս ասո՞ւմ... (Աչքերը սրբում է:) *Էտենք է, վուրթի. քանի հիդ քաղցը խոսեցա, էնգաղա, դուն քունն ավելցրիր... Ի՞նձ էլ մե քիչ խղմա, է՞... Միխկը չի՞մ, վուրթի՞։*

ՆԱՏՈ, գնալով դեպի մորը:

Դեդի ջան, դեդի ջան։

Փաթաթվում է նրան։

ՏԵՍԻԼ Դ

ՆՐԱՆՔ, ՄԵԼՔՈ

ՄԵԼՔՈ, ձեռնոցներով և գլխարկը ձեռին, մտնում է խորքի դռնից. Նատոն ու Գայիանեն ուղղվում են և աչքերը սրբում։

Ի՞նչ իաբար է։

Գլխարկը դնում է մուտքի մոտ սեղանի վրա և ձեռնոցները հանում։

ԳԱՅԻԱՆԵ

Է՛հ, վունչիչ, փեսա ջան։

ՄԵԼՔՈ, ձեռնոցները ածում է գլխարկի մեջ և առաջ գալով:

Վո՞ւնց թե վունչիչ, քոռ խոմ չիմ, օխնած հոքի. ինչի՞ վրա իք լաց ըլում էլի։

Նատոն գնում. սեղանի վրա ածած ակնեղենները հավաքում է:

ԳԱՅԻԱՆԵ

Անմիդ իս նիղանում, քու արիվը, փեսա ջան. դեդա ու վուրթի նըստած էինք, (Հոգվոց հանելով:) *ը՛հ, ջրատար քու անիրուչ վրա խոսում էինք. խոսկը խոսկ էբի ու* (Լացի ձայնով և աչքերը սրբելով:) *լաց էլանք...* (Նատոն ևս աչքերը սրբում է:) *Վա՛յ նրա սիվ ու մութ օրին։*

Գնում, նստում է:

ՄԵԼՔՈ, առանձին:

Ղուրթն ու սուտը աստուած գիդե... (Գայիանեին:) *Օխնած հոքի, էլ ի՛նչ էտունք գուզե սա. առանց էն էլ ժանգն էրեսեն վեր է գալի... Մեկ շիմ ասի ու էրկու, վուր հերիք արեք... Ախար, մեռելի վրա խոսիլը ի՞նչ կուտոկն... Մեռավ, աստուած հոքին լուսավուրե... Մեռելին ի՞նչ հաչաթ, իր համար հանգիստ պառկած է. վա՛յ ապրողի գլխին։*

ՆԱՏՈ, առանձին, երկար հոգվոց հանելով։

Ղուրթ վուր՝ վա՛յ ապրողին։

ՄԵԼՔՈ, մոտենալով Նատոյին:

Բա՛րով, Նատո ջան. էլախտվան դեսը վո՞ւնց իս։

ՆԱՏՈ

Շնորհակալ իմ, վունցոր էլիլ իմ։

ՄԵԼՔՈ

Դուս իս գնացի՞... էսենց վաղ-վաղ ո՞ւր իս էլի էտենց զուքած։

ՆԱՏՈ

Հա՛, հենց հիմի տուն էկա. ֆոտոգրաֆի մոդ էի. պատկիրքս հանիլ տվի էս ակնեղեններով։

ՄԵԼՔՈ

Ա՛յ, զորանա՞ս. շատ լավ իս արի։

ԳԱՅԻԱՆԵ, ոտի կանգնելով և երկար հոգվոց հանելով։

Ը՛հ... (Մոտենալով Նատոյին:) *Մի՛ դարդ անի, վուրթի, մի՛ դարդ անի. աստուած քիզ էս հանգի տեր է տվի...* (Մելքոյին:) *Դուն գիդիս, փեսա ջան, վունցոր սիրտը հիդ կու բերիս։*

ՄԵԼՔՈ, Գայիանեին։

Դուն ա՛րխային կաց, իմ մեր, էն յիս գիդիմ. օղոնդ քու մեռելի վրա դուն չիոսիս սրա հիդ ու դարդիրը չաշչա անիս ամեն սահաթի։

ԳԱՅԻԱՆԵ

Նրա հոգին բարեխոս ըլի ձիզ համա...

ՄԵԼՔՈ

Շնորհակալ իմ, իմ մեր... էսօր խոմ մի՞զ մոդ իս։

ԳԱՅԻԱՆԵ

Բաս, ո՞ւր կուլիմ. կար-անողին հիդս իմ բերի... (Երկար հոգվոց հանելով:) *Ը՞հ, հը՞, հը՞...*

Իր փաթաթոցն ու վերարկուն դուրս է տանում ձախ կողմից:

ՏԵՍԻԼ Ե

ՆԱՏՈ, ՄԵԼՔՈ

ՄԵԼՔՈ, գրպանից հանելով դեղին սաթե բանկագին համրիչ:

Աբա՛, տի՛ս... Լա՞վն իմ ճարի էս քահրուբարը՞... Սաղ քախկումը ավտան լիրիքը չունենա էսթավուրը։

ՆԱՏՈ, առնելով համրիչը և տխուր:

Խիստ լավն է, շնորհակալ իմ։

ՄԵԼՔՈ

Լավն է ու բարով վայելիս... Գիտեի, վուր կու հավնիս... Դուն քեփդ քոք պահն, Նատո ջան... (Բռնում է թևից:) *Արի՛, նստի էստի հալա... Դարդով վունչիչ չիս կանա օտկի...* (Նստելով ինքը, նստեցնում է Նատոյին իր կողմին:) *Դիփ մահի վուրթիք ինք. մե օր չիս էլ կու մեռնիմ...* (Թեր Նատոյի պարանոցին գցելով:) *Ի՞նձ համա էլ լտենց դարդ կոնի՞ս...* (Նատոն թաշկինակն աչքերին է տանում:) *Վա՛, դուն հիմիսկ էվնտ իս լաց ըլում ո՞ւ...* (Հեռացնում է թեը:) *Մի՛ վախենա, մի՛ վախենա, ջեր չիմ մեռնի, ջեր շա՛տ պիտի ապրիմ քիզ համա... Դուն ասուձուն փա՛ռք ատ, վուր ինձ ռատա էկար. քիզ համա մարթ էլ իմ, հեր էլ իմ... Ա՛յ, ուրիշը վուր ըլի իմ տիղ, կու նիղանա, վուր դիփ է՛տենց դարդուտ իս. ամա չիս շատ բան իմ ատեսի աշխարքումը. չիս կու մտեդ ըցիլ տամ քու դարդը... Դուն ջեր ջեհել իս, Նատո ջան. մե չիրիք չուրս ամսումը վունցոր վաղ էլիլ իս, էլի էնենց կո՛ւլիս... Հիմի, բան է, առուտրի գնացի, մե քանի ամիս ուշացա. էնչախն ի՞նչ կոնիս։*

ՆԱՏՈ

Կէհամ իմ հորանց տուն, թե կամք կու տաս։

ՄԵԼՔՈ

Էտ վունցոր գուդիս... (Մտածելով:) *Ամա էտու վրա իժում. դուն ինչ քեփդ տա, է՛ն ասա. ծտի կաթ վուր ասիս, կու ճարիմ չիս քիզ համա։*

ՆԱՏՈ

Ինձ վունչիչ հարկավուր չէ... (Երկար հոգվոց հանելով:) *Ա՛հ, ա՛հ, ա՛հ...*

ՄԵԼՔՈ

Է՛, լավ է, քու հորն օղորմի... Ա՛րի, գու քա՞ս, գնանք բաղը, քու սիրած բաղը. կանանչ փոթոլը սրտի մրհլամ է... Ա՛րի, ա՛րի գնանք, աճկըդ բաց կուլի... Գասպարն ու Փեփելն էլ խո միզ մոդ ին էսօր մայինց ուր նրանցն էլ կու տանինք... Հրա՛, գու քա՞ս։

ՆԱՏՈ, տխուր:

Ինչի՞ չէ՛... Վունցոր քու կամքն է։

ՄԵԼՔՈ

Հա՛, հա՛, լավ կուլի... (Վեր կենալով տեղից:) *Տիգրանն էլ* (Նատոն, առանձին, ցնցվում է:) *Էստի է հազիր. նրան կոսիմ, վուր...*

ՆԱՏՈ, գունաթափվում է:

Տիգրանը՞...

ՄԵԼՔՈ

Հա՛, հիդս դիվիր էկավ, էստի կանտորումն է. մաղազինի հեսաբ ունիմ հիդը... Ամա էն հեսաբը թո՛ղ իժում ըլի, հաջաթ չէ. նրան կոսիմ մափրաշեն կապիլ տա... Էս սահաթիս դիվիր կու ղրգիմ։

ՆԱՏՈ, իրան զսպելով:

Էլ նրան ո՞ւր իս նիղացնում. գա՞նա մինք չինք կանա առանց նրա՞։

ՄԵԼՔՈ

Չէ՛, չէ՛, նա ղոչաղ տղա է, մե նմուտումը դիփ մետի կու բաշարե, ինչ հարկավուր է. խիստ չասպանդն է։

ՆԱՏՈ

Շատ էլ չասպանդ ըլի, կարիք չկա նրան նիղացնելու, էնղադա ղուլուղչիքը պարապ ածած ին էնդի... Ամա քու կամքն է, վունցոր գուլիս։

ՄԵԼՔՈ

Ղուլուղչիքը նրա պես լազաթով չին կանա... Անգին ակն է դրուստ էտ տղեն. նրան վուր չունենամ, խիստ դժար է իմ բանը, սաղ մաղազինս նա

Է կառավարում, թե չէ յիս վո՞ւրդի կանեի շատ փայլին, գիդիս, յիս պիտի կանտորումն իմ բլում էստի։

ՆԱՏՈ, ժպտալով։

Էնենց գովում իս, կոսիս նուր ըլիմ տեսնում ու ճանչնում յիս նրան... Նրա լավութինն ու արժանավորութինը շատ ջեր իս պատմի ինձ։

ՄԵԼՔՈ

Ի՞նչ անիս, յիս նրան խիստ իմ սիրում... (Խոդար։) Դուն թե խելք ունիս, նստու չան, դարդին գլուխդ մի՛ տուր տա... Դարդը վուր կա, օրթունք է մարթու սրտումը. քանի էրգար կու պահիս սրտումդ- էնդադա կու չաղանա, էնդադա կու մինձանա, կու զորանա, էնդադա էլ հիշտ կու մաշի ու կուտե սիրտըդ... Դա՛նա մենակ դուն ի՞ս... Անդարդ ո՞վ կա աշխարհումը. ծիտը վուր ծիտ է, ծիտն էլ դարդ ունե, ասում ին... Ամա ոչ խելք ունե, հիդը չէ ննգնում... Ի՞նչ գիդիս թե էն քու Սալոմնն, էն քու Էփեսին, էն քու Նինոն, էն քու Սոփոն, ինչ դարդիր ունին սրտներումը. ամա ո՞վ կանա մաշուր անի թե նրանք իմքին դարդ ունին... Տեսնում իս դիփ խնդում ին ու ճիռում... Դուն էլ է՛նենց կաց, է՛լի... Ի՞նչ էլավ քիզ. ի՞նչդ է պակաս... Էս քիզ տուն, էն քի բաղ, էս քի սիրելի բարեկամնիր*, էն քի լավ հարևնիր... Մե օր դո՛ւն գնա նրանց մոդ, մե օր նրանք գու քան քի մոդ. օր է, է՛լի կու անցկենա, կէհա. դիփ մետի մտեդ կու գցիս... Դեվեր գնամ, յիս էլ մե կանտորին մտիկ անիմ ու Տիգրանին դիվիր ղրգիմ... Վի՛ կաց, վի՛ կաց. իմը լսե... Գնամ, ասիմ՝ կամաց-կամաց ձիանիրը լծին... (Մի քանի քայլ գնում է դեպի աջ կողմը. հետո վերադառնալով։) Հա՛, հենց ապրիս, ձալո էփեմին մե էրկու խո՛սկ գրե, վուր ճաշը բաղումն է, ու խնդրե՛, վուր թաչին գան... Մի՛ դարդ անի։ (Փաթաթվելով։) Աստուած օղորմած է։

Համբուրում է և դուրս գնում աջ դռնից, թողնելով գլխարկը սեղանի վրա։

ՏԵՍԻԼ Զ

ՆԱՏՈ, մենակ։ Իսկույն վեր է կենում։

Ա՛խ, աստուած. էս ի՞նչ պատիժ իս ստեղծի իմ գլխին... Թե էսենց բարի մարթու ռաստ բերիր ինձ, ինչի՞ էն սիրան էլ չտվիր ինձ, վուր սիրիմ իրան... Էն խոսկիրը վուր ասում է նա ինձ, էն խոսկիրը վուր իմանում իմ յիս, ուզում իմ՝ վուտնիրքը ննգնի, ծնգանն ու ձեռներուն պաչ անի. ամա սիրտս քար է կորվի նրա համա... (Ճակատը շփելով։) Ա՛խ, ա՛խ, աստուած, էս վո՞ւնց իս ստեղծի աթմորթուն, վուր կանացիկ է էսենց էրկու էրեսանի ըլի... Ի՞նչ հանգն իմ խափում խիղճ մարթուն. սրտումս ինչի՞ր է անցկենում. բերնով ինչի՞ր իմ ասում իրան... Հենց գիդե իմ լաց ու արտըսունքը իմ հերն է մենակ. էն կի չի գիպի, թե ի՞նչ չար հրիշտակ է մտի սրտումս ու ջանս կրծում է... Քի մոդ էլ միդավուր իմ, իմ հեր, իմ խիղճ հեր. վուր ճշմարտութենի համա գլուխդ հիդ գրած ունեիր ու հիմի գերեզմնումդ էլ դնջութին չինք տալի քիզ միր ստութենով. քու անուշով մարթ ինք խափում էստի... (Աչքերը սրբում է։) Վա՛յ, իմ գլուխ, վա՛յ, իմ գլուխ։

Դռնում, նստում, նամակ է գրում, հետո ծրարը պատրաստելով զանգահարում է։

ՏԵՍԻԼ Է

ՆԱՏՈ, ԾԱՌԱ

ԾԱՌԱ, մտնելով խոհանոցի դռնից։

Ի՞նչ կու հրամայիք, ախչիկ-պարոն։

ՆԱՏՈ, տալով ծրարը։

Էս տա՛ր աղի ախպուր տուն ու էտի Մարիամին ա՛սա գա էստի։

ԾԱՌԱ

Հրամիլ-իք, ախչիկ-պարոն։

Ծրարը ձեռին դուրս է գնում խոհանոցի դռնից։

ՏԵՍԻԼ Ը

ՆԱՏՈ, հետո ԱՂԱԽԻՆ

ՆԱՏՈ, մենակ, հուսահատ մտն է գալիս։

Ցարաբ ի՞նչ պիտի ըլի իմ վիրչը... (Աղախնուն, որ մտնում է ձախ դռնից։) Մարիա՛մ, դեղեն ի՞նչ է շինում էնդի։

* Ասում են և բարեկամիր։

ՄԱՐԻԱՄ

Կար անողի հիդ է, ինչոր չափում ին ու ձևում ին։

ՆԱՏՈ

Լավ. էդ շլյապեն դո՛ւս տար, տի՛ղը դի, խնդրում իմ։

ՄԱՐԻԱՄ

Շատ լավ, ախչիկ-պարուն... (Վերցնելով Նատոյի գլխարկը, մի վայրկյան մնում է անշարժ և նրան նայում։) *Էլի էտենց դարդո՛ւտ։*

Գլխարկը ձեռին դուրս է գնում ձախ դռնից։

ՏԵՍԻԼ Թ

ՆԱՏՈ, մենակ. դարձյալ լուռ մաև է գալիս և խորը հոգվոց հանում։

Ա՛խ... (Մատները հուսահատ կոտրելով, գնում, նստում է դաշնամուրի առջև և նվագում է զանազան եղանակների սկիզբը, բայց շուտով վեր կենալով։) *Չէ՛, էլի իմ Սայաթ-Նովեն...* (Գնում է, սեղանից վերցնում Սայաթ-Նովայի ոսկեզօծ երգարանը և նստում։ Թերթելով գիրքը, վերջապես հավանում է մի երգ։) *Ա՛խ... «Ինձ ու իմ սիրեկան յարին»...* (Այս ու այն կողմն է նայում և բարձրաձայն պերճախոսությամբ արտասանում է։)

Ինձ ու իմ սիրեկան յարին՝
մե տարի բերած գիդենաք.

(Վեր է կենում, կրկնում է և շարունակում ավելի ազդու կերպով, երբեմն միայն նայելով գրքին։)

Ինձ ու իմ սիրեկան յարին՝
մե տարի բերած գիդենաք.
Ա՛խ քաշելեն սրտիս մեջը
արունն մնրած գիդենաք.

Շարժում է գլուխը։

Գիշեր ցերեկ՝ յարի խաթրու՝
ջիգարըս էրած գիդենաք.

Աչկըս թաց, բերանս ցամաք,
լիզուս հիդքերած գիդենաք։

(Գնում, դաշնամուրի ներդաշնակությամբ երգում է՝ «Գիքա ու եմի դունիայի ձեռով, հանգն ղազալի»)

Սիրտըս փուրումըս թուլացավ
անգալներու զախ անելեն,
Ուշկ ու միտկըս խառնըվեցավ
խուրըն-խուրըն խաղ հանելեն,
Աչկեմես ջուհարըն գընաց՝
յարեն կարոտ՝ ա՛խ անելեն.
Էլ ապրելու ումիկ չունիմ,
իմ օրըս կերած գիդենաք։

(Աչքերը սրբում է։ Այստեղ Տիգրանը, ձեռնոցներով և գլխարկը ձեռին, խորքի դուռը կամաց բաց է անում և այնտեղից լուռ ականջ դնելով Նատոյին, հիանում է։)

Էրված խորված մաև իմ գալի,
մի տեղ չըկա մար ունենամ.
Լիգվով չիմ կանացի ասի,
թեզուզ խոսկըս փար ունենամ.
Ափսուսալու հազար ափսուս՝
ես է՞ս զադա դար ունենամ.
Էշխեն ուշկ ու միտկըս կապած,
ինձ չըրի տարած գիդենաք։

(Տիգրանը հանկարծ երկյուղ արտահայտելով, դուռը կամաց հետ է գնում և անհետանում։ Նատոն լսելով դռան ձայնը, ցնցվում է, հետ է նայում և վերկենալով, շարունակում է դարձյալ պերճախոսությամբ։)

Սիրտըս փուրումըս սըքուր է,
ալ աչկիրըս լաց է անում.
Ծովըն նընգած ամրի նըման
դոշս ու յախես թաց է անում.
Քանի վուր մըհլամ իմ գընում,
դուգունս էլ խիստ բաց է անում.
Հալվեցա արնաքամելի՝
յարես հիդարած գիդենաք։

Ով տեսնում է, է՛ս է ասում.
«Վա՛յ քու դարին, Սայաթ-Նովա,
Համաշա քիզ պիտինք տեսնի՝
աչկըդ արին, Սայաթ-Նովա,
Ինչո՞վ չելավ, չը ռասա էկա՞ր
մե լա՛վ յարին, Սայաթ-Նովա».
Ունըրքս էրազի պես գրնաց՝
ծառքս չը խնրած գիդենաք։

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ

1759

Էի՞դճ Սայաթ-Նովա... Ո՞վ գիդե, քանի ջեր իս ինձպես տանջվի (Նայելով Տրգին:) *Հարուր ու իսուն տարի առաջ։*

Համբուրում է գիրքը, դարձյալ նստում է և թերթը դարձնելով, լուռ կարդում մյուս երեսը:

ՏԵՍԻԼ Ժ

ՆԱՏՈ, ՏԻԳՐԱՆ

ՏԻԳՐԱՆ, ձեռնոցներով և գլխարկը ձեռին, մտնում է խորքի դռնից և ցածր ձայնով:

Ախչիկ-պարուն...

ՆԱՏՈ, ցնցվելով և կիսաձայն:

Ա՞յ...

ՏԻԳՐԱՆ, առաջ գալով:

Բարի լուս, ախչիկ-պարուն։

ՆԱՏՈ, իրան գալիով և հեգնարտյամբ:

Բարով, պարուն Տիգրան։

Գիրքը բաց արած թողնելով սեղանի վրա, ոտի է կանգնում և Տիգրանին ձեռն է տալիս:

ՏԻԳՐԱՆ, համբուրում է Նատոյի ձեռը:

Ի՞նչ բարին հարցնիմ, ախչիկ-պարուն... փառք աստծու, էսօր ավելի լավ իմ տեսնում ձիզ։

ՆԱՏՈ

Շնորհակալ իմ, դուք վո՞ւնց իք... Հա՛մեցեք նստեցեք։

ՏԻԳՐԱՆ

Ձիզ լավ ունենանք. դուք վուր լավ իք, մինք էլ դիփունքս լավ ինք... (Նստում են:) *Բաղի համա ինչ հարկավուր էր, դիփ կարքադրեցի. կա՛լի էլի բան ունիք ասելու, հրամայեցե՛ք։*

ՆԱՏՈ

Վունչիչ, վունչիչ, պարուն Տիգրան... Ամա լավ միտս էկավ, մե պատի խնդիրք ունիմ. բաղը մե թեթիվ բան կա ղրգելու. խնդրում իմ, թե կարելի է, հրամայիք՝ էնենց տանին, վուր ճամփին չչարթվի։

ՏԻԳՐԱՆ, ոտի կանգնելով:

Ճուխտ աճկիս, ախչիկ-պարուն, հրամայեցե՛ք. ձիր խնդիրքը հրամանք է ինձ համար։

ՆԱՏՈ

Շնորհակալ իմ, պարուն. ամա հրամանքը դենը կենա, մե պատի խնդիրք է մենակ... էս սահաթիս դալիս իմ... (Մի քանի քայլ գնում է:) *Համեցե՛ք նստեցեք։*

Դուրս է գնում ձախ դռնից:

ՏԵՍԻԼ ԺԱ

ՏԻԳՐԱՆ, մենակ, լուռ նայում է Նատոյի ետևից, նեղան:

Ցարքաք էս հանգի ախչիկ էլի կալի աշխարքումը՛... Սիրե ու պաշտե, քանի կանաս... Ամա, Տիգրան, մուղայիթ կաց, հրա. խիլգդ չտանուլ տաս քու օրումը ու ննգրտերանցումը չամանչիս. մի նմուտ էլ է չըմտեղ դցիս. վուր նա քու տիրուչ ու բարերարի կնիկն է... Դառավ վուր սրփութին է նա քիզ համա. սուրփ էլ համարե համաշա... (Գլխարկը վայր դրնելով:) *Ջըլիմ չիմանամ՝ ուրիշ բարաթ չփիքր տնիս...* (Վերցնելով բաց գիրքը, լուռ կարդում է և նիհանում:) *Վա՛հ, վա՛, վա՛, վա՛... մտիկ, է՛...* (Կարդում է բարձրաձայն:)

Գարուն նքվան վախտըն լրցվիլ է,
— է՛բանի ձիզ, ծաղկած վարիր.
Թե՞ բլբուլին բաղն ղրրգեցիչ,
մանիշակով լիքըն սարիր.

Բաս ինչի՞ ձենքն չէ գալիս,
սալբու չինաբ, էտ ի՞նչ արիր,
Ճուխկտ բըլբուլին սըպանից՝
կարմիր վարթըն խարին մընաց։

Վա՜հ, քու հոքուն մեռնիմ, քունը, Սայաթ-Նովա... Յարաբ, ի՞նչ սիրտ իս ունեցի... Կոսիս՝ բլբուլը վարթի վրա նստած, իր էշխն ու մեղեթին ըլի բայաթի կանչում... Յիս պիտի իմ վուխչումներուն էլ սորվեցնիմ էս գիրը, վուր նրանք էլ Սայաթ-Նովի սիրտը բռնին, նրա հոքիով ըլին շունչ քաշում։

Ձախ դռնից մտնում է Նատոն։

ՏԵՍԻԼ ԺԹ

ՏԻԳՐԱՆ, ՆԱՏՈ

ՏԻԳՐԱՆ, գիրքը իր տեղը դնելով։

Էրևում է, ախչիկ-պարուն, դուք էլ պակաս չիք էլի սիրում Սայաթ-Նովին։

ՆԱՏՈ

Օ՜հ, շա՛տ. մե օր վուր չկարթամ նրան, էն օրը կորած է ինձ համա... (Նստելով։) *Նստեցե՛ք, խնդրում իմ. վուտի վրա ինչի՞ իք...* (Տիգրանը գլուխ տալով, նստում է։) *Էս սահաթիս կու բերին անմրթի իմ, ձրզ նիղացնում իմ։*

ՏԻԳՐԱՆ

Ձիզ համա էլ վուր չնիղանամ, ախչիկ-պարուն, էլ ինչա՞ցու իմ. թե չէ էտ ի՜նչ նեղութին է... Իմ մինձ նիղութինը էն է, վուր հրամանքդ դիփ դարդուտ իք։

ՆԱՏՈ

Վունչիչ, պարուն Տիգրան. ինձ համա մի՛ փիքր անիք։

ՏԻԳՐԱՆ

Ի՞նչ իք ասում, ախչիկ-պարուն, տիղ ննգած տիղը՝ կինքս չիմ խնահի ձի։ Համա, աստուած գիդենա։

ՆԱՏՈ

Շնորհակալ իմ, պարուն Տիգրան, աստուած ձիր կինքը ձիզ պետք անե... Շատ բարի իք. ձիր բարութինն ու հավատարմութինը ինձ շատ վուխտ ի հայտնի է։

ՏԻԳՐԱՆ

Հավատարմութինը իմ պարտկն է, ախչիկ-պարուն. ամա ի՞նչ բարութին իմ արի, էտ ինչ չիմ իմանում, ի՞նչ իք հրամայում... Ձիր օչափին չիս վունչիչ բարութին չիմ արի։

ՆԱՏՈ

Էտ դիփ մեկ է, պարուն Տիգրան. ումնոր բարութին անիք, ձիր սըրտի բարութինն է ցույց տալի... Ջեր տանու ախչիկ էի, ձիզ չէի ճանչնում ու չէի էլ տեսի, վուր չիս դիփ գիդեի... Շատ լավ իք անում, շատ. աստուած ձիզ չի կորցնի։

ՏԻԳՐԱՆ, զարմացած։

Ախչիկ-պարուն...

ՆԱՏՈ

Գիդիմ, դիփ գիդիմ, վունցոր ձիր խիղճ ննգրուչ վուրփերուն քախցածութենեմեն տպատում իք։

ՏԻԳՐԱՆ

Հրամանքդ էտ վուրդանց գիդիք, ախչիկ-պարուն։

ՆԱՏՈ

Էսաի իմացա, վուր էն խղճերու բարերարը դուք իք... Ձիր էտ լավութինը էնքան դուր էկավ ինձ, վուր էն օրվան դեսը վուրդիոր կանացիլ իմ օմքնու ստեղ, չիմ իմանում, ու հարնսի դենը ձիր խղճերու համա էլ ամսե ամիս կու ղրկիմ, ինչ կանամ։

ՏԻԳՐԱՆ, ոտի կանգնելով։

Շնորհակալ իմ, ախչիկ-պարուն... Աբա՛, բարին դուք իք ա՛յ... Ինմնալու էլ չէ. պարուն Մելքոնի կինաց ննդիրը հալբաթնա վուր էտենց բարի կու...։

ՆԱՏՈ, ոտի կանգնելով և ձեռը տալով։

Շնորհակալ իմ, պարուն Տիգրան, էտ քաղցր խոսկերու համա. (Տիգրանը հանդուրժում է Նատոյի ձեռը։) ամա ինչ դուզե բարի ըլիմ. ձիր չափ բարի չիմ կանա ըլի... Յիս էն էլ դիդիմ, վուր բարգավանումը շատերուն կարթալ պրիլ իք սավորեցնում ու օչովիմեն մե գրոշ էլ ուտաչուխ չիք վի կալնում։ Փա՜ռք ու պատիվ ձիզ, պարուն Տիգրան։

ՏԻԳՐԱՆ

Շատ օգորմած իք, ախչիկ-պարուն... Իմ փեշակը վուր ասատութինն ըլի մենակ, ինչի՞ չիմ վի կալնի... ամա յիս իմ փեշակն ունիմ, աստուած օր տա իմ տիրուչը. ավելի թիքեն ուրիշներունն է։

ՆԱՏՈ

Շատ ապրիք, պարո՛ն Տիգրան, ձիր սրտի համար։

ՏԻԳՐԱՆ

Դուք ապրիք, ախչիկ-պարուն... ասում՝ ձիզ օր տա, բախտավոր պահե ձիզ ու անպակաս անե ձիզ ձիր զավլաթը... էն խղճերու աղոթիկը ձիզ հերիք է։

ՆԱՏՈ

Շնորհակալ իմ, պարուն Տիգրան. դուք էլ ձիր մուրազին հասնիք, վունցոր ձիր ծնողներու սիրտը զուրա... Հիմի գնացե՛ք չուշանաք։

Գնում է խոռոչը և ձեռագործը վերցնում։

ՏԻԳՐԱՆ, առանձին։

Արի ասիմ, վուր հօրեսի դենը քուր ու ախպեր ըլինք. վո՞ւնց համարցակվիմ։

ՆԱՏՈ, վերադառնալով։

Էլի իմքին ունիք ասելո՞ւ։

ՏԻԳՐԱՆ

Վունչիչ, ախչիկ-պարուն... Բաղի ամանաթին իմ մնում։

ՆԱՏՈ

Հա՛, զուրթ... Ցիս դեվեր կու զրգիմ...

Աղախինը ձախ դռնից բերում է բզրի մի մեծ տուփ։

ՏԵՍԻԼ ԺԴ

ՆՐԱՆՔ, ԱՂԱԽԻՆ

ՆԱՏՈ, շարունակելով։

Ամա, ա՛յ... Բաղմնչու կնգան խոստացիլ իմ. նրա համա ամոլան ծածկիլու է... (Տիգրանը կամենում է տուփը աղախնուց առնել։) *Չէ՛, չէ՛, չէ՛...* (Խլում է տուփը և տալով աղախնուն։) *Սա կու դեվեր բերե...* (Աղախնուն։) *Մարիամ, չա՛փա քաշե, դեվեր տար. էնդի մեկն ու մեկին տու, ումը* (Մատնանիշ անելով Տիգրանին։) *պարունը կու հրամայե...* (Տիգրանին։) *էն էլ շատ է, ինչ միզ համա նիզանում իք։*

ՏԻԳՐԱՆ

Ձիր կամքն է, ախչիկ-պարուն... Թե էլի հրամանք ունիք, ես էստի իմ։

Վերցնելով գլխարկը, գլուխ է տալիս Նատոյին և դուրս գնում խոռոչի դռնից, աղախինը հետևում է Տիգրանին։

ՏԵՍԻԼ ԺԴ

ՆԱՏՈ, մենակ։ Մի քանի վայրկյան լուռ և անշարժ նայում է խոռոչի դռան կողմը. հետո ձգում է ձեռագործը, շփում նակատը, հեռվում է առաջ ու ընկնում աթոռի վրա, երեսն ի վար հենվելով սեղանին։ Փոքր ժամանակից հետո հանկարծ տեղից վեր է թռչում։

Սա՛ է, սա՛, իմ հոքեհանը սա՛ է... Սա՛ է, վուր մտկեմես չէ հիռանում մե նմուտ... Ի՞նչ կոնիմ էս փառքը, էս հարստութինը, վուր սիրաս նրան է կպած... Ինքը չի էլ զիդի, թե ի՞նչ զուզ է ենգնում ջանս, յիփոր տեսնում իմ իրան... Տեսա թե չէ նրան էստի, մտկս խառնվեցավ ու էնդա մեն դեսը քանի տեսնում իմ չիս նրան, քանի խառում է նա հիրս, խիլքիս ծերը գնում է նրա համա ու իստակ ցնորվում իմ... Ինչի՞... Ի՞նչ միզ ունիմ, վուր էսենց պատծում է ինձ աստուծ... Վո՞ւնց ապատվիմ էս ցավեմեն... Ո՞մեն ասիմ, ո՞մը գանգատվիմ, ո՞վ կու իմանա, թե սրտումս ի՞նչ է պտուտ գալի, ո՞վ կու հասկանա ինձ. զիժ կու համարին, գժանուցը կու զրգին ինձ... Մա՞րթուս ասիմ, թե՛ մորս, վո՞ւնց համարցակվիմ. էրեսիս կու թքին երկուսն էվետ... Ի՞նչ անիմ, ինչ մոգոնիմ, վուր էլ չտեսնիմ չիս նրան... Ամա տեսնիմ, չտեսնիմ, դիպ մեկ է. քանի ուզում իմ՝ էլ չփիքր անիմ չիս նրա վրա, էնդադա ավելի ու ավելի է միաս գալի նա ու գալիս է կենթանի առչիվս կանգնում... Մարթուս անգաճը վուր ենգնի, թե սրտումս էս հանգի բան կա, էն սահաթին էվետ ճամփու կու դնե էն խղճին ու նրա բեբախտացնողը սիրտի չիս դառնամ, նրա հիդ էլ էնդադա հոքի մետի բեբախտացնիմ... Չէ՛, թո՛ղ էլի չիս տանջվիմ... (Ձեռը նակատին տանելով։) Ա՜խ, ա՜խ, ա՜խ... (Շարժում է գլուխը և խորասուզվում մտածմունքի մեջ։) Ուրիշ ճամփա չկա, պիտի տանջվիմ էսենց, ինչրու մե չարա ըլի գլխիս... Հա՛, հա՛, տանջվիլ ու դիմնալ, դիմնալ ու տանջվիլ... Արարիչ աստուծ. դո՛ւն տու ինձ խիլք ու զորութին, վուր կանենամ գլուխս պահիմ ու չխայտառակվիմ աշխարքում։

Դուրս է գնում ձախ դռնից։

ԱՐԱՐՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Առաջին տարվածի սենյակը անփոփոխ: Կեսօր է:

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ԳԱՍՊԱՐ, ՄԵԼՔՈ

ԳԱՍՊԱՐ, գլխարկը ձեռին, մտնելով խորքի դռնից:

Մելքո՜։

ՄԵԼՔՈ, աջ կողմանոցից:

Գալիս իմ, գալիս... (Դուրս գալով աջ դռնից:) *Գասպա՜ր... Վա՜, էս մենակ ի՞նչ էփեմիեր։*

ԳԱՍՊԱՐ

Գալիս է. էստի քուշումը ինչոր կնիկարմատ ռաստ էկավ։

Գլխարկը վայր դնելով, նստում է:

ՄԵԼՔՈ

Հա՜, վախեցա... Կանտորեմեն քիզ մենակ տեսա, էն սահաթին դիվիր վազեցա. հենց գիդեի՝ մենակ իս գալի... Աբա՜, Գասպար, գնում ինք բաղը։

ԳԱՍՊԱՐ

Է՜հ, բա՜ դրոս բաղ է։

ՄԵԼՔՈ

Հը՜, ի՞նչ խաբար է. քեփիտ չիս էրևում։

ԳԱՍՊԱՐ

Օ՜հ, Մելքո, մե ջգրած իմ, մե ջգրած, վուր դանակ խփին սրտումս, մե պուտ արուն չի կաթի։

ՄԵԼՔՈ

Ի՞նչ է պատահի։

ԳԱՍՊԱՐ

Հենց էլ բա՜ն։

ՄԵԼՔՈ

Վուր վոնչիչ չիս ասում։

ԳԱՍՊԱՐ

Պիտի դեղաստանն ինձ տան, վուր...

ՄԵԼՔՈ

Յո՜, ախար, ի՞նչ է անց կացի։

ԳԱՍՊԱՐ

Էլ ի՞նչ պիտի ըլի. էլ աբրու ու սիրաթ չկա աշխարքումը... (Ձեռը ձեռին է խփում:) *Նոքրիմեն մարթ էս օրումն ըլի՜. մարթ էլ չկանենա իր սթախումը շուր հաքնի՜։*

ՄԵԼՔՈ

Տո՜, մե ասա՜, ախար, է՜։

ԳԱՍՊԱՐ

Ինչ վուր ասում իմ, տո՜. չիս իմանո՞ւմ։

ՄԵԼՔՈ

Փիե՜։

ԳԱՍՊԱՐ

Տո՜, ախար... Մի՜ղա քիզ, ասում։

ՄԵԼՔՈ

Տո՜, գժվիլ իս, թե ի՞նչ խաբար է։

ԳԱՍՊԱՐ, վեր թռչելով տեղից:

Տո՜, ինձն էլ չի ըլի էսենց չարացած ու...

ՄԵԼՔՈ

Տե՜ր, ողղեա՜ զճանապարհս...

ԳԱՍՊԱՐ

Տո՛, ախար, մտի՛կ թե ինչ ասիմ... (Ձայնը ցածրացնելով) *Էստի գալիս Փեփելը գնաց իր օթախը՝ մե շուրս փորիմ, կոսե... Վո՞ւրդի իս, վո՞ւրդի չէ, էս միր Սամսոնը։*

ՄԵԼՔՈ

Ի՞նչ Սամսոն։

ԳԱՍՊԱՐ

Լաքիեն...

ՄԵԼՔՈ

Լաքիե՞ն...

ԳԱՍՊԱՐ

Հա՛, բաս ո՞վ. բիձուս տգե՛ն... Տի՛ս թե ի՛նչ մահանա է սարքում ու ալբիոլ՝ դեմ ու դեմը տուն է ննգնում կնգաս մոդ։

ՄԵԼՔՈ

Վա՛հ։

ԳԱՍՊԱՐ

Մե ծիկի ձեն էկավ, Մելքո, մե ծիկի, վուր հենց գիդեի օճոռքը գըլխիս քանդվեցավ... Տուն գնում, ի՞նչ տեսնիմ. Փեփելը հալիլի մոդ շապկանց կանդնած, ահեմեն էնենց դուրիլ է, վուր էրեսարքը շապկեմեն չէր ցոգվում. մե պստի շուն էլ վուտներու տակ թավիլ թավիլ է գալի ու էսթենը, դուան կշաին, էն աննամուսը՝ մինավաթի վար, մինավաթի, քալբատոնո), կոսե... Շանը, վունցոր էլավ, դուս արի՛. մոդ գնամ բշին՝ բիճո՛, աք բա՛, գինդա**), ասի... Գիդի՞ս ինչ ասա՛վ. ի՛մացի, է՛լի. մա՛րթ կուլիս կու իմանաս... (Մելքոն շարժվածքով արտահայտում է, որ չէ կարողանում հասկանալ։) Աբա՛, վո՞ւրդի կու իմանաս, վուր սատանի մըտկումն էլ չի անցկենա... Սա թե՝ վունչիչ, ադա, կոսե. էն շունը էս դուանը մեբաշ հուտ կալավ, կոսե, ու դեմուդեմը էստի տուն ննգավ, ախչիկ-պարնին վախեցրուց, կոսե... Տո՛, էս ի՞նչ շուն է, վուր մինք շուն չունինք, ասի. սա թե՝ միր հարևնի շունն է, հիդս սովոր է, կոսե... Ը՞հ, մե ալիզուլի ծեփիմ յիս նրան, վուր հինդ մատս մեռի վրեն դաչեցի։*

* *Միղավուր իմ, միղավուր, ախչիկ-պարուն։ Մինավաթ—ռուսերենի աղավաղված՝ վինավատ։*

** *Տո՛, էստի ի՞նչ գուդիս։*

ՄԵԼՔՈ

Վա՛հ, էլի՛... Ա՛յ, էտ լավ չիս արի, վուր խփիլ իս... Քանի ջեր իմ ուսի չիդ, վուր աթմորթու ծեծիլը ամութ է մարթու համա ու մինձ մթիկ է ասանու առաչ։

ԳԱՍՊԱՐ. Նստելով։

Է՛հ, դուն էլ... Ախար, հարևնի շունը իմ տանն ի՞նչ բան ունի, յա իմ կնդա վուտներու հիդ ի՞նչ դավի, թե մե բնձաթուիթին չկա էստի... Ի՞նչ է՛, սատ մահանա, ախչիկ-պարնի ձեռնիրը սիպտակ է, մե տեսնե թե՝ գոչն էլ ի՞նչ ռանգն է։

ՄԵԼՔՈ, նստելով։

Ի՞նչ ասիս, դուն կու մոգոնիս... Իժո՞ւմ, էլ խո չիս պահի դուն էն բշին, կու ճանչնամ քիզ։

ԳԱՍՊԱՐ, վեր կենալով։

Պահի՛մ. էն նմուտին էվետ դուս արի, քու արիվը... Կրակի մաշեն վուր չէր պատահի ինձ էնդի, ուզում էր էն, էն, էն, (Կամենալով մի հայհոյական խոսք ասել, հանկարծ մի կողմ բռում է։) *Թիո՛ւ, էն սիվէրեան էլ ինձ խփի... Վո՞ւնց համարձակվեցար, ասում է, վուր ինձ խփեցիր, կոսե։*

ՄԵԼՔՈ

Ի՞նչ անիս, ախպեր. արթարութինը վիրացավ աշխարքեմեն, նբանք էլ գլխնիրը վի քաշեցին։

ԳԱՍՊԱՐ, շարունակելով։

Միրովոյի Սուդը կէհամ էս սատանին, կոսե... Ինչրու քուչի դուռը դիփ կինձի տալով դուս արի, ալատա... (Մելքոն անբավական՝ շարժում է գլուխը։) Թո՛ղ հիմի գնա, վուրդի ուզենա, էնդի գանդատ անե... Մարդ էս օրումն ըլի իր դուլուզումնեն... Էլ ի՞նչ գուլուզի... Գուլուզիքը մինք ինք միր բշերանցը. գուն գնա՛ դաղե, ատ՛ուն բի, նբանք նստին, տեուշ անին ու թե մե բան ասիր, աճկդ էլ հանին... Ո՞ւր է, ո՞ւր, տեր չկա, տիրական. պիտի դաղաստանը ինձ տան, վուր լավ ըլի։

ՄԵԼՔՈ

Լավ դաղաստան կի կոնեիր. էլ ի՞նչ ասիլ գուդե... Ձկլավ, չկանացի հավտի բերի քիզ ու էտ քու Թավրիզի սովորութիններիը մտեդ գցիլ սա... Ինչ էնդանց հիդ իս էկի, ավտաս հարուր ջեր ըլիմ ասի քիզ Քրիստուսի խոսկիրը թե՝ մի՛ անի ուրիշին էն, ինչ չիս ուզի, վուր ուրիշն անե քիզ, ու մեկ էլ էն թե՝ քիզ վադութին սնոդին, քանի կանաս, լավութին սրաս։

ԳԱՍՊԱՐ

Ափսուս՝ վարթապիտ չդառար։

ՄԵԼՔՈ

Թե ճշմարտութին չկա մարթու սրտումը, Գասպար ջան, վարթապիտութինն էլ չի օտկի, ավատա ինձ... Տանու բչիդ ծեծիլ իս ու ղուլուղչերուն դիփ մետի փանում. էտ վո՞ւնց կուլի... Նրանց մնչը լավն էլ կա, ախպեր, վադն էլ։

ԳԱՍՊԱՐ

Մեկը կի չռաստ էկավ ինձ լավն ու... Ավտաս իսուն լաքիա ավել ըլիմ փոխի. դիփ մեկ մեկու վրա վաթար, քու արիվը... էն գլխեն կի, կոսիս, հրիշտաք ասածու ըլին, ամա բռնելիս վո՞ւնց չոգե մարթ, թե ի՞նչ պտուղնիր ին... Ասած է՝ օցը դրսեմեն է ելել, մարթը—նեքսեմեն։

ՄԵԼՔՈ, անբավական, շարժում է ձեռը։

Իժո՞ւմ, էֆեմիեն, ավատաս ի՞նչ հանգը վախեցավ խիղճը։

ԳԱՍՊԱՐ

Վախեցավ ու էտե՞նց. բաս չվախեցա՞վ... Ամա յիս ի՞նչ անիմ. նրան ո՞վ էր ասում, շուր հաքնելիս իր օթախի դուռը բաց թողնե։

ՄԵԼՔՈ

Օ՛, ահը դժար բան է, Գասպար. սրտի թրթրալ կու բերե, մո՛ղայթ կացի. իժում էն էլ կնիկարմատը, նալ իմքին է... Տղամարթու սիրտն ուրիշ է, կնիկարմատինն ուրիշ։

ԳԱՍՊԱՐ

Քու արիվը, տղամարթը իսկի էլ չի դիմնա էնդուրը, ինչին կնիկարմատը կու դիմնա, ի՞նչ իս ասում։

ՄԵԼՔՈ

Յանդլիշ իս, յանդլիշ, Գասպար. կնիկարմատը վուր կա, միր կիսկրներու մե օսկրեմեն է գույացած.. Միր տե օսկորը վուր մե կնիկարմատ է. մինք քա՞նի օսկոր ունինք էլի... Ա՛յ, քու արիվը, տուն էկա, տեսնիմ՝ մե քիչ քեփին չէ քու հարսը. էն սահաթին ասի, վուր գնանք բաղը, էն սահաթին... Բաս էն վուր հարցնում էն թե՝ «տեր ի՞ս» ու դուն էլ ասում իս թե՝ «այո՛, տեր իմ,» էստու զորութինը ի՞նչ է բաս։

ԳԱՍՊԱՐ, կրկին նստելով։

Է՛հ, դուն էլ. օմքին ըլի մեզ տիրութին անե։

ՄԵԼՔՈ

Վա՛, վա՛, վա՛, վա՛...

ԳԱՍՊԱՐ

Արա՛, յիս իմ կնգա շուր հաքնելիս էն սահաթին էնդի վո՞ւրդի էի բսնվի ու դուռը կոխպի, վուր էն լպստած լածիրակը, էն հանգի բան չէր մոգոնի՝ թե դռանը հուտ կալավ ու տուն ննգավ, կոսե... Շան լիզու էլ է մայինց դիդենամ, մե հարցնիմ էն շանը թե՝ ի՞նչ ուներ հուտ կալնելու նա իմ կնգա դռանը, վուր հուտ էր կալնում... Շատ ման էկա իժում, ամա վունց շանը դթես, վունց շան տիրուչը... (Մոռածում է։) Սո՛ւ, սո՛ւ... (Վեր կենալով, ճկուչքը բերանն է տանում։) Էս ի՞նչ անցկացավ մտկումս... (Ձեռը ճակատին տանելով։) Հիմի դուրթ վուր... Օ՛, էլ մե նմուտ սաղ չիմ թողնի վունց մեկին։

ՄԵԼՔՈ

Ո՞ւմը, ի՞նչ խաբար է։

ԳԱՍՊԱՐ

Չէ՛. յիս պիտի դրուստն իմանամ, թե իմ կնգա դռանը ինչի՞ էր հուտ կալնում իմ հարևանի շունը։

Խորի դռնից մտնում է Շամարոն։

ՏԵՍԻԼ Բ

ՆՐԱՆՔ, ՇԱՔԱՐՈ

ԳԱՍՊԱՐ, շարունակելով։

Ա՛յ, անդարդ մարթ, յիս ու իմ հոքին։

ՄԵԼՔՈ, ոտի կանգնելով։

Համեցե՛ք, համեցե՛ք, պապի ջան. լավ վուխտն էկար։

ԳԱՍՊԱՐ

Բարով, պարուն Շաքարո։

ՇԱՔԱՐՈ

Բարով, վուրթի...(Մելքոյին:) Լավ վուխտն էկա՞... Դուն ինձ ասա՞, յի՞փ իմ յիս փիս վուխտն էկի։

ԳԱՍՊԱՐ

Բաղն է գնում Մելքոն։

ՄԵԼՔՈ

Ճաշն էլ էնդի ղրգեցի։

ՇԱՔԱՐՈ, ճոտելով:

Ա՛յ, զորանաս, վուրթի՞... էն բաղը՞, կանանչ փոթոլը՞, էն իմ Օրթաճալե՞ն... Ստաքնի աբով չթողնիս ինձ, հրա՞...

ՄԵԼՔՈ

Քիզ համա քիղան էլ ունիմ էնդի, քիղան։

ՇԱՔԱՐՈ

Հա՛, վուրթի, հա՞... Քիղնի վրա լավը բաղումը՝ կուտլի վուրդն է, հրա՞։*

ՄԵԼՔՈ

Կուտլի վուրք էլ կա։

ՇԱՔԱՐՈ

Գիտի ըլի, բա՞ս... Իժում, հեր օխնած, ինչի՞ մե քիչ վաղ չէիր իմաց անում։

ՄԵԼՔՈ

Էնենց ձեռաց ռաստ էկավ... (Նայելով ծոցի ժամացույցին:) *Ամա չեր էլի վաղ է. ինչրու ճաշը էլի խելի վուխտ կա։*

ՇԱՔԱՐՈ

Ախբաթդ խեր, բաղը վուր կէհա մարթ, սալ օրով կէհա, վուր լուչաթ տեսնե... Իժում, արտալեն էփվում է՞, թե չէ։

ԳԱՍՊԱՐ

Հիմիկվան պուչարները, պարուն Շաքարո, արտալա էփիլ չին սիրում։

* Մի տեսակ կավե աման է, որի միջոցով գետի վրա շինած անիվը (շաբաթ) ջուր է բարձրացնում և ածում ջրփոսի մեջ՝ այգին ջրելու։

ՇԱՔԱՐՈ

Բեդաուրնի դաիխոցնեն, վիրերս դարչաթ մեյղանի ... էն իմ ղոզալ տավրի միսը, վուր բերում ին ու թիփ ին շինում, իժում բերում ին մաթլըբումը ռեվանդի շարբաթ է, թե ինչոր զահրումար, բաղնըսի տաք ջուրն ածում ին ու բուլիոն է, կոսե, ու դուք էլ խպշտում իք, ձիր մրակումը հաց իք ուտում, է՞լի։*

ԳԱՍՊԱՐ

Դրուստ իս ասում, պարուն Շաքարո. հաց կի չինք ուտում, ղուրթ վուր զահրումար ինք ուտում։

ՇԱՔԱՐՈ

Ա՛յ, զորանաս, վուրթի՞. իմ խոսկն էլ էտի է գալի, է՞... Տավրի միսը, կէհամ իմ ձեռով կու առնիմ, իմ ձեռով կու վրեն գնիմ, իմ ձեռով քափը կու քաշիմ, իմ ձեռով կու բրթիմ, սխտուրն ու նախուրը վրեն կոծիմ. կու թրաշիմ էն միսը, վուր շաքրի ծվենին ծյծլա. ա՛յ, աստծու օխնած կերակուրը էս է, վուրթի... է՞հ, բան է, յիս չիմ կանա՞, սյիտի դուսն ըլի՞մ, կնիկարմատը խո էնդի է... Պովար, լաթիա ի՞նչ կունիք, ի՞նչ, վուրթի. ձիր տուն ու տիղը նրանք ին բաթմիշ անում... Ձիր ձե՞ռով առեք, ձիր կնդդերանց ձե՞ռով էփեցեք, վուր իմ տարսը զառնաք... Ջուրս քսան ու տասն ու վից տարեկան իմ. աբա՞, մա՞ջես տեսնեք...

ԳԱՍՊԱՐ, մոտենալով Շաֆարոյին:

Միթամ հնթիմ իմ... (Ջենում է Շաֆարոյի ձեռի երակը:) *Պա՛, պա՛, պա՛, պա՛... Թիկ, թիկ, թիկ, թիկ... Վեր է տալի ու վեր է տա... խփում է ու խփում... Ջանում սան, պապի ջան, դուն սիզ վրա դոչաղ իս։*

ՇԱՔԱՐՈ

Աբա, դուք էլ իմ հա՛նգն ապրեցեք, թե ինձ վրա ղոչաղ չըլիք։

ԳԱՍՊԱՐ

Էրանի չի ըլի, պարուն Շաքարո։

ՄԵԼՔՈ

Շատ ինք չալիշ գալի, պապի ջան, ամա էլ չէ ըլում։

ՇԱՔԱՐՈ

Խիլքներուս բան չէ կտրում, էնդուր էլ չէ ըլում... Կնիկ կա տանը՞, վուրթիք կան տանը՞, ջահել աղչիկ կա տանը՞, ի՞նչ բան ունե, ի՞նչ բի-

* Վրացերեն է.— Նժույգ ձիաներբ սատկեցին, հրապարակը մնաց իշանների։

խերավուրը, վուր իմ կնգա մոդ, իմ աչկա մոդ խոսի ու մասլահաթ անե... Հույ՛, (Կիսով չափ բարձրանալով իբրև թե մեկի վրա ճարձակվում է:) յիս նրա... շաղլամեն վեր կու բերիմ։

Նստում է:

ԳԱՍՊԱՐ

Մարքրիտ է, մարքրիտ խոսկիրդ, պարուն Շաքարու։

ՄԵԼՔՈ

Լավ իս ասում, պապի ջան. ամա ժամանակը փոխվեցավ. հիմի էլ էտունք չէ սաղ գալի։

ՇԱՔԱՐՈ, ժպտալով:

Ձե՛նդ, Մելքո, թե չէ յիս գիդիմ քունը՞... Ժամանակը փոխվեցավ, կոսե. է՛ն աստծու դրած ժամանակը. է՛ն յիրգնային արեգակը, է՛ն յիրգնային լուսնիակը փոխվեցավ, կոսե... Վո՞ւնց թե փոխվեցավ... Ժամանակը կի չէ փոխվի. դուք իք տուտուցացի... էն էտունք վուր սարքած է՞, էտ-զադա զուլուզչիքը տանը, էտ միծատան համա է, միծաօղլանի համա է սարքած. դուք էլ ուզում իք, ամեն մարթ մեծաօղլան էրևաք ու դուս իք գալի աջաբսանդա՞լ... Ուզում իք աղունակի յիրիշի ման գաք, ակոբվինն էլ մտեն իք գցում... Ի՞նչ եք դառի հիմի, ի՞նչ իք դուք, ինչի՞ նման իք... Յա ձիր գդակն է գդակի նմա՞ն, յա ձիր շուրն է շուրի նմա՞ն, յա ձիր լափչիքն է լափչքի նմա՞ն... Ի՞նչն է, ի՞նչը ինչի նման... Նա դեմաք դուր*... էն գոդալ կարմիր դոշը, վուր դոշին չէ փրփրում. է՛ն պատվական ախալուրի գոշը, վուր մաչի վրա չէ հիդ (Ձեռով ցույց տալով:) ծալած. էն արմաղան թիվը, վուր ուսին չէ հիդ գցած էսենց (Ներկայացնում է:) ...ի՞նչ լազաթ... Մա՛խլաս. դիփ տակն ու վրա էլավ, դի՛փ։

ՄԵԼՔՈ

Յիս էլ էտու վրա իմ ասում, պապի ջան, վուր ժամանակը փոխվեցավ, է՛։

ՇԱՔԱՐՈ

Ման նա դիարամ, դամբուլամ նա սոիլիր**... Յիս էլ էլի էն իմ ասում, է՛ն, վուր՝ չէ թե ժամանակն է փոխվի, դո՛ւք իք փոխվի, դո՛ւք, թե չէ՝ ամառը ամառ է, ձմեռը—ձմեռ, ցերեկը—ցերեկ, գիշերը—գիշեր... Տիկնի

* Ի՞նչ ասել է։

** Ե՛ս ի՛նչ եմ ասում, բնարս ի՛նչ է ածում։

շուրիրը հաքիլ իք ու՝ (Աջ ձեռի երկու մատով ձախ բռունցքի վրա փստայի ածելով [զարկելով]:) դեհ, շո՛ւշպար էկեք...։ (Ծիծաղում է:) էտ ի՞նչ է կզակիտ տակը, վուրթի, էտ մո՛զոնովի միրուքը... (Ծիծաղում է:) Հա՛, հա՛, հա՛...

ԳԱՍՊԱՐ

Բիդա՛թ, բիդա՛թ մարթ իս, պարուն Շաքարու։

ՄԵԼՔՈ, ձեռը տաճելով կզակին և ժպտալով:

Էտունք բաղումը կու խոսինք, պապի ջան. դուն խո ֆայետոն չիս նստի ու գնա՛ կամաց-կամաը։

ՇԱՔԱՐՈ

Փա՛յետոն... Դո՛ւք նստեցեք, դո՛ւք. մինձ մարթիք իք... Վո՞ւնց կուլի, վուր էլ ձիր ապիզ վուսնիրը չարթվի... Օրթաճալա է գնում Մելքոն... Հա՛յ-հա՛, Շաբուզաղն բաղի վար... Տո՛, Օրթաճալեն վուտով պիտի գնա մարթ, վուր իշտահը բաց ըլի. վուտով պիտի հիդ գա, վուր կերածը մարսե... Փայետո՛ն, փա՛յ, փա՛յ, փա՛յ... Թախթիրևանին վուր գորգոդաճնիր կպա՛վ, քանդվեցավ աշխարքի բանը... Մարթ ըլիմ... ուղամարթ ըլիմ ու յորղա ձին տանը կապած չունենա՛մ. էն մաթրախը վեր տամ ու Ղարամանիանի ռաշի հանգը էղանց էնդի դուս չթո՛ւի՞... Ձիր ռաշը հիմի ձիր պսվարն ու լաքիեն ին գսոի, վուրթենն ուզում ին, էնթենն էն թոցնում ձիդ։

ՄԵԼՔՈ ԵՎ ԳԱՍՊԱՐ, ծիծաղում են:

Հա՛, հա՛, հա՛, հա՛։

ՇԱՔԱՐՈ, վեր կենալով:

Է՛հ. յիս գնացի... (Գլխարկը վերցնելով և բաք տալով ըստ սովորության:) Ամա չեր մե Նատոյիս տեսնիմ... Վո՞ւնց է, խո լա՛վ է։

ՄԵԼՔՈ

Կա, էլի՛, փա՛ռք աստծու։

ՇԱՔԱՐՈ

Վո՞ւնց թե՝ կա, է՛լի։

ԳԱՍՊԱՐ

Էս Փեփելն ինչի՞ ուշացավ, էս սահաթիս գալիս ինք։

Գլխարկը ձեռին դուրս է գնում խորքի դռնից:

ՏԵՍԻԼ Գ

ՄԵԼՔՈ, ՇԱՔԱՐՈ

ՇԱՔԱՐՈ

Ասա՛, է՛. բեհալ խո չէ՞։

ՄԵԼՔՈ

Բե՛հալ խո չէ. բեհալի վրա վաթար է՝ բեբախտ է, պապի ջան, բեբախտ։

ՇԱՔԱՐՈ

Ի՞նչ է, ի՞նչ խաբար է։

ՄԵԼՔՈ

Նստի՛, նստի՛, պապի ջան. քի մոդ խոստովանք ունիմ... Մայինց ջեր վաղ է ու, ինչրու մինք կու հաղրվինք, դուն էլի միզ վրա վաղ կու հասնիս.

ՇԱՔԱՐՈ, նստելով, գլխարկը կրկին ծածկում է:

Ասա՛, վուրթի, տեսնիմ՝ ինչ բան է։

ՄԵԼՔՈ

Է՛, ի՛նչ բան պիտի ըլի, պապի ջան. սխալվեցա... Շատպով ախչիկ ուղեցի ու նրա միխկը ննգա... Ցիս մենակ իմ սերին մտիկ տվի ու քիզ անգամ չդրի. էլ չփիջր արի թե՝ յարաբ նա՛ էլ ինձ կու սիրե՞, թե չէ։

ՇԱՔԱՐՈ, կիսով չափ բարձրանալով և ձեռները հետևը դարսելով:

Հը՛մ... Վո՞ւնց է Շաքարոյի խոսկիրը... Հիմի խո ա՞վտում իս ինձ։

ՄԵԼՔՈ

Ղուրթ է, ղո՛ւրթ, պապի ջան. քու խոսկիրը վուր միտս է գալի հիմի, ղուրթ վուր ամանչում իմ։

ՇԱՔԱՐՈ, ձեռները առձակելով:

Հիմի՛... (Նստում է:) Կուժը վեր իս գցի, վուրթի, փշրիլ իս, հիմի էլ ինչը՞ կու սաղացնե... Աբա՛, էտու համա էի ասում, ինչ ասում էի, է՛...

*Ղուրթ է, ցիս հին մարթ իմ, հին ղայդի մինձացած. ամա ցիփոր աճկով տեսնում իմ ու իմ կարճ խիլրով հասկանում, վուր նուր կարք ու սարքը լավ է հնի վրա, ցիս էլ հինը թողնում իմ ու նորի հիդ իմ գնում... Համաշա կտենց իմ էլի ու սաղ կինցս էլ էտենց անցկացրի... Դիփ էն էի ասում քիզ էլ. վուրթի, ու նրանցն էլ, վուր ջեր մի՛ շտապեք, մեկ մեկու լա՛վ ճանչցեք, է՛ն հանգի բա՛ն բռնեցեք. վուր վիրը փոշիվնելու չպատնա. ամա վունց մեկիդ բան չկտնացի հասկացնի... Դիփ մեկ էր, թե Սիոնի գլխին կակալ ածելին ՝ Ցիր անգամը վունչիչ չտուն գնաց... Քիզ ախչկա սիրունիթինը գժվեցրուց, ախչկան ու նրա մորը—քու հարստութինն ու կարողութինը... Արմնալուն էն է, վուր դուն Փանգստուն տեսած ու ման էկած, էնենց չժամ էկար, վունցոր քիզ կու վայելեր ու, ես խեյրաթ էի տեսնում, վի կայար ու միր հին ադաթի նշնվեցար ու փսակվեցար, վունցոր միզ ավելի կու սաղ գեր, կտենց քիզ... Ցիս վուր նշնըվում էի, վուրթի, անջախ-անջախ դաստուր տվին ինձ, վուր ախչկան մեկ մայինց ծկլուտ էի արի քուչի դռան ախկնեմեն... Էտենց էլ էլավ... Էստու վրա ավելի մինձ հիմարութի՞ն... Ջեր էլ էսօր շատիրը էնենց ին նշնըվում ու փսակվում, կոսիս դուքնումը ապրանք ըլին ծախում ու առնում. հալա էնդու վրա էլ վաթար... Էսենց էլ դուն ժամ էկար, վուրթի... Բեղամաղ չըլիս, վուրթի. քիզ սիրելով ու սիրտ մխկտալով իմ էրեսդ ասում։

ՄԵԼՔՈ

Ղուրթ է, ղո՛ւրթ, պապի ջան, դիփ ղուրթ իս ասում. ամա հիմի էլ նա՞ փաշիդա. ղուրթ վուր կուժը փշրած է... (Նստում է:) Իմ մտկումը միթամ ուզում էի իմ քեֆի մինձացնի, էնենց մինձացնի, վուր քախկումը հատը չունենա... Ամա տեսնում իմ, վուր բեսաբ նամազուլ իմ արի. նրա սիրտը չէ կպչում ինձ, չէ՛, չէ՛ ու չէ՛... Էս չուրս ամիս է փսակվիլ ինք, մե օր չէլավ, նրա էրեսին ծիծաղ տեսնիմ. դիփ դարդուտ, դիփ ախ ու վախ, դիփ լաց ու արտասունք... Քանի ջեր վրա իմ հասի իր մոր մոդ նստած լալիս... Հենց էսօր էլ, ինչրու քու գալը, էտ հալի տեսա... Մերը թե՝ ջրատար քու անիրուչ վրա խոսում էինք, ասում է. խոսկը խոսկ էբի ու լաց էլանք, կոսե... Ղուրթ էր թե սուտ, աստուած գիդե. ամա ցիս անգամս բաղմնչու արի. միթամ վունչիչ չիմ իմանում. էլ հարց ու փուրց չարի։

ՇԱՔԱՐՈ

Ա՛յ, հա՛յ, հա՛յ, հա՛յ...

ՏԵՍԻԼ Դ

ՆԱՆՔ, ՇԱՌԱ

ՄԵԼՔՈ, ծառային, որ մտնելով խորթի դռնից գնում է դեպի ձախ դուռը:

Ալիքսի՜... Ի՞նչ խաբար է։

ՇԱՌԱ

Ուզում էի ախչիկ-պարնին արգ անիմ, վուր բարաթը ձիր հարսին տվի դեմուդեմը, ձիր ախպերը տանը չէր։

ՄԵԼՔՈ, ծառային:

Լա՜վ, յիս կոսիմ։

Մառան դուրս է գնում խորթի դռնից:

ՏԵՍԻԼ Ե

Դարձյալ՝ ՇԱՔԱՐՈ, ՄԵԼՔՈ

ՄԵԼՔՈ, շարունակելով:

Ախար, ես վո՞ւր մե օրը... Հազար մաղի հաց իմ կերի, ինձ խափվելը դժար է... Էս մե բանումը խափվեցա, էն էլ ուրիշիմեն չիմ խափված, ինձի ինձ խափվեցա. իմ սերը խափից ինձ... Խիլքիս զոռ տվի ու քիզ ղսեցի. վախեցա՝ վա՜յթե իրան օմքին դուր գա ու ձեռնեմես թռչի մեքաշ—շտապեցա... Իմացիլ էի լավ ախչիկ է ու ղուրթ վուր լավն է, յիս ու իմ հոքին՝ հալալ, խելոք, խոնար, մարիփաթով, խոսկ ու ջուղաբով, իմ խոսկի կատարող, սիրունութինը խո էն գլխեն էվետ խիլքես արավ ու գժվեցրուց ինձ. ամա ի՞նչ անիս, վուր սիրտը չէ բարիշում ինձ հիդ... Էրանի էտենց էլ է լավը չէր լլի։

ՇԱՔԱՐՈ

Վա՜հ, վա՜հ, վա՜հ, վա՜հ...

ՄԵԼՔՈ

Նա բեբախտ է, վուր ինձ ռաստ էկավ, յիս բեբախտ իմ, վուր իրան էտենց բեբախտ իմ տեսնում... Ի՞նչ չարա կա միզ։

ՇԱՔԱՐՈ

Վա՜յ, վա՜յ, վա՜յ, վա՜յ... Ծիս էլ էտումն էի վախենում, վուր էնղադա բանիրն առում էի, է՜... Ավատաս, գլխիս էնղադա մազ չունենամ, ինչ յիս բեբախտ փսակնիր իմ լսի, տեսի ու գիդիմ։

ՄԵԼՔՈ

Չէ փիրում ի՞նձ, թո՜ղ չսիրե. ի՞նչ կանամ անի... Զորով սիրիլ ու սիրիլ տալ չի ըլի, դուն էլ լավ գիդիս...

ՇԱՔԱՐՈ

Հնուց ասած է, վուրթի՜, սերը սիրով պիտի, քաշքշելով չի ըլի։

ՄԵԼՔՈ

Էկավ էլի... ինքը միզ չունե, միզը իմն է, իր մորը ու մեկելներունը, ով էնդի կան... Մինձ միղավուրը, գրուստն ասած, յիս իմ, յիս, վուր էն գլխեն մտկումս յիս դրի նրա ուղիլն ու մարթիք մեչ գցեցի նրանց մոդամա էլ ի՞նչ կանամ անի... Հիմի յիս էնենց բան իմ ուզում ըռնի, պապի ջան, վուր անիծելու չշինիմ իմ գլուխը նրանեն... Թո՜ղ յիս գնանամ, էն լավ աշիմ, կանց էն հանգի հրիշակի բերնեմեն անիծվիմ. ասում մի՜ արասցե՝ վուր յիս նրա անիծկն իմանամ... Մարթ ու կնիկ ինք, մեկ մեկու հիդ թոկով ու ջնջլով կապած ինք, մեր բաժնվիլը առանց մե մինձ բեդնամութենի ու խայտառակութենի չի ըլի, քիզ էլ հայտնի է... Վախենում իմ, ճլերք չենդնի, յա մե բան չանե իր գլխին. հավիտենական զնամիշ անելու պատճառը պիտի յիս ըլիս... Նրա միխկու քունս կոտրվիլ է, ասում գիդենա... Բանն էնդումն է հիմի, պապի ջան, վուր էս օրեցումն յիս գնալու իմ Փռանգստուն իմ առուտրի դեիր։

ՇԱՔԱՐՈ

Թային էլի քու սիրած Պարիժ։

ՄԵԼՔՈ

Հա՜, պապի ջան, էլի վուր իմ սիրած Պարիժը. թե իմքին բան գիդիմ ու սորվիլ իմ. Պարիժին իմ պարտական։

ՇԱՔԱՐՈ

Էտ գիդիմ, վուրթի. էնդանցի ռանդեն վրետ էլ է էրևում... Ամա էս գամոքը, ի՞նչ իս էտենց շտապում. ջեր խոմ խրիդ անելու վուխտ շատ կա։

ՄԵԼՔՈ

*Էի դրուստս ասիմ, պապի ջան, էս տարի չէս ուզում էի իսկի էլ չգնամ... Մտկումս ունեի՝ իմ տիզ էլի իմ Տիգրանին էի զրդի. փառք աստուծու, էնդանցի առուտուրը լավ գիդե ու լիպսն ինձ վրա ավելի լավ... Ամա նատոյի՝ դարդտա սիրտն ու նրա դախտ ու բնախտ աստաջտունը ինձ գլնջուին չէ տալի... Թա՞ղ մե քիչ վուրտա գնամ, կաշխիմ էսդանց, վուր իմ էրեսը չտեսնե՝. կուլի առանց ինձ սիրտը դարարի ննգնի... Մե իրան-իրան փիքր անե, թե վիրշն ի՞նչ է ըլելու... Թե բախտս կու կտրե ու ուդուրս կու բանի էնչախն ու նրա սիրտը կու բարիշի ինձ հիդ, թո՞ղ կանչն ինձ, ինչ գուզե հարկավուր բան ունենամ, դիփ մետի կու թասնիմ էն սատաթին ու տաս, տասնուհինգ օրումը էստի կու բանվիմ, թե չէ ու առանց վիրշ խո վունչիչ չկա աշխարքումն ու հալբաթ միր բանն էլ մե բաբաթ կու վիրշանա։

ՇԱՔԱՐՈ, նուզված, շաբժում է գլուխը, ձեկաեը խփում և աջ ձեռը բարձրացնելով։

Մա՛խլաս... Ի՞նչ ասիմ, վուրթի. քու բանը դուն ինձ վրա լավ գիդիս... Էստի խնդրելու ու խորուրթ տալու վունչիչ չէ մնում։

ՄԵԼՔՈ

Էսաու համար էլ էրգար փիքր իմ արի ու վճռիլ իմ, վուր թե սիրտը տալիս է ձիր ախչկան, նա էլի էս տանը կենա, վունցոր հիմի կենում է, իր մորն էլ բերե, էստի պահե... Ցա թե գուզե, գնա իր հորանց տուն, էնդի կենա էլի իր մոր մոդ... Վուրն էլ կու ջոգե, իր կամքն է... Ամա էս էլ գիդենա, վուր էստի կու լի, թե հորանց տանը, մե գրոշ չիմ պակսեցնի հիմիկվան իր ապրուստին... Վունցոր պահիլ իմ ինչկլի էսօր, էլի էնենց կու պահիմ, արարիչ աստուձն իմ օրթում ուտում ու իմ հորն ու մոր գնրեզմանը, խո գիդիս՝ իմ խոսկը խոսկ է։

ՇԱՔԱՐՈ

Գիդիմ, գիդիմ, վուրթի, կու ճանչնամ քիզ. մեկելներու նման չիս... Քու դարդակ խոսկն ավելի ավտալու է, կանց շատ մարթու հաստատած ձեռացագիրը։

ՄԵԼՔՈ

Է՛հ, պապի ջան, մարթ էլ կա, մարթ էլ։

ՇԱՔԱՐՈ

Ղուրթ իս առում, վուրթի. մարթիկ ջուրա-ջուրա ին աշխարքումը... ասած է՝

Ադամ վար քի ադամլարն նախշի դբր,
Ադամ վար քի զայրի օնդան յախշի դբր,
Ադամ վար քի հայվան օնդան յախշի դբր,
Ադամ վար քի դնդբրմասան յախշի դբր։*

ՄԵԼՔՈ

Էտ խո էտենց է ու էտենց, պապի ջան, ամա մարթը էլ ի՞նչ մարթ է, վուր իր տված խոսկը գին չդնե ու չկատարե։

ՇԱՔԱՐՈ

Ցարի քիզ ումբր, վուրթի, ինչ յիս մարթիք գիդիմ, շատ ու շատ մարթիք, նրանց մեչը քի վրա ավելի մինձ կարողութենի տեր մարթիք էլ, վուր նրանց խոսկն էլ, պատվական խոսկն էլ, նրանց գիրն էլ, նրանց զալամն էլ, նրանց օրթումն էլ մե գրոշ չաժե... Խափիլը, սուտ խոսիլը, հաշա ուտիլը միս ու արուն ին շինի իրանց համա. ո՞ւր մնաց էլ փեշակն ու ադաթը, վուր էն ասիմ... Մա՛խլաս... Մինք միրը խոսինք... Ասա՛, ասա՛, վուրթի։

ՄԵԼՔՈ

Էլ ի՞նչ ասիմ, պապի ջան. ինչ ասում իմ ու խոստանում, սրփութենով կու կատարիմ։

ՇԱՔԱՐՈ

Ցիս էլ սրփութենով ավտում իմ քիզ, վուրթի։

ՄԵԼՔՈ

Ամեն ամսի մեկին Նատոն իր խարջլուխը թամամ կու ստանա իմ կանտորեմեն... Շատ մարթ կա, էգեղեցի է շինում իր հոքու համա. թո՛ղ իմ էգեղեցին էլ էս ըլի... Իմ հիդ գալիս, թե սաղ մնացի ու մե օր ղուրթ հիդ էկա, տեսնինք՝ աստուձ վիրշն ի՞նչ է տալի։

ՇԱՔԱՐՈ

Ապրիս, վուրթի, զորանաս. ստիղծող աստուձը քիզ չի կորցնի... Ամա խիլքս չէ կտրում, վուր Նատոն ղաբուլ անե՝ քու կարողութինը առանց քիզ վայիլե։

---

* *Այնպես մարդ կա՝ բոլոր մարդկանց զարդն է,*
Այնպես մարդ կա՝ մյուսն իրանից էլ լավն է,
Այնպես մարդ կա՝ անասունից վատթարն է,
Այնպես մարդ կա՝ որ ձեռք չտաս՝ էն լավն է։

ՄԵԼՔՈ

Դուն մե՛ ջափա քաշե, պապի՛ ջան, մե՛ հիդեներուն խոսի՛ ու ջուղաբն ինձ ի՛մաց արա, վուր յիս էլ էնենց կարքադրիմ... Դեմուդեմը չիմ խոսում նրանց հիդ, սիրտ չունիմ, քիզ իմ նիղացնում։

ՇԱՔԱՐՈ, վեր կենալով։

Ջուխտ աճկիս, վուրթի։

ՄԵԼՔՈ, նույնպես վեր կենալով։

Հենց էսօր առուտեհան ուզում էի իմ գնալու բոթը տամ իրան, Նատոյին. բոթն ասիմ, թե ուրախութինը, չիմ գիդի... էն է, լիզվիս ծերին պտուտ էկավ, ամա առանց քիզ էլ ջուրաթ չարի՝ խոսկս վիրչացնի... Իմ ումիկը դուն իս, պապի՛ ջան։

ՇԱՔԱՐՈ

Հիմի խում էլ վուխտ չէ մնում, վուրթի, ու յիս կու խոսիմ Նատոյիս հիդ էլ, ախչկաս հիդ էլ, կուլի հենց էսօր, յա թե չէ՝ էքուց... Մե գնամ ջեր իրան, Նատոյիս տեսնիմ ու իժում—Օրթաճալա։ (Գնալով դեպի ձախ դուռը։) *Յադ խո օչով չկա՞ էնդի։*

ՄԵԼՔՈ

Չէ՛, իր մերն է մենակ։

ՇԱՔԱՐՈ

Գայիանե՛ս. ուփրո լավ... Քի պես մարթ պիտի՛ շատ ըլի, վուր դիփունի բանը լավ ըլի. ասած է՝ մե ծաղկով ամառ չի գա։

ՄԵԼՔՈ

Է՛հ, պապի՛ ջան, սիրում իս ինձ, քիզ էտենց է թվում։

ՇԱՔԱՐՈ, բռնելով նրան թևից։

Քիզ էլ վուր չսիրիմ, վուրթի, բաս ո՞ւմը պիտի սիրիմ։

Դուրս է գնում ձախ դռնից։

ՏԵՍԻԼ Զ

ԷՓԵՄԻԱ, ԳԱՍՊԱՐ

ԷՓԵՄԻԱ, գլխարկով, վերարկուով, ձեռնոցներով և նովանոցը ձեռին։ Մտնելով խորքի դռնից, Գասպարին, որ գլխարկը ձեռին, հետևում է նրան։

Ուցնաուր իս, քա՛... Ասում իմ՝ չիմ գիդի, չիս ավտո՞ւմ։

ԳԱՍՊԱՐ

Բաս ի՞նչի էր էն շունը վուտիդ տակը թավիլ-թավիլ գալի։

ԷՓԵՄԻԱ

Ա՛մարթ, ի՞նչ է պատահի քիզ, ինչի՞ր իս հարցնում. յիս չան լեզու գիդի՞մ, վուր հարցնիմ ու իմանամ, թե ում շունն է՞։

ԳԱՍՊԱՐ, գլխարկը վայր դնելով։

Ցիս կու իմանամ, ումնոր վուր է, մի՛ վախենա։

ԷՓԵՄԻԱ

Ի՞նչ գուզիս իմացի. քու գլուխ չունիմ։

ՏԵՍԻԼ Է

ՆՐԱՆՔ, ՄԵԼՔՈ

ՄԵԼՔՈ, դուրս գալով ձախ դռնից։

Օ՜հ, բա՛րով, ձալո ջան... (Տալով ձեռը)։ *Ի՞նչ բարին հարցնիմ, վո՞ւնց իս։*

ԷՓԵՄԻԱ

Փա՛ռք աստծու, դուք վո՞ւնց իք, Նատոս վո՞ւնց է։

ՄԵԼՔՈ

Մինք էլ, փառք աստծու, կանք, է՛լի... (Գնում է ձախ դռնից ձայն է տալիս դեպի կողմանոցը։) *Նատո՛, ձալո էփեմիեն էստի է...* (Առաջ գալով, էփեմիային։) *Համեցե՛ք նստի, ձալո ջան... Բաղն ինք գնում, խո գու քա՞ս...* (Մատնանիշ անելով Գասպարին։) *Կոսեր։*

ԷՓԵՄԻԱ, ճստելով։

Հա՛, ճամփին ասավ հիմի... Գու քամ, բաս չիմ գա՛. կուլի սիրտս բաց ըլի, մե քիչ չգրաած իմ։

ՄԵԼՔՈ

Ի՞նչ խաբար է։

ԳԱՍՊԱՐ

Թե՛ ասի էլախտ, Հարևնի շունը վախեցրուց։

ՄԵԼՔՈ

Հա, հա՛... (էփեմիային։) Փա՛ռք աստծու, է՛լի լավ իս պրծի, փորցութենով լիքն է աշխարքը։

Գասպարը առանձին գլուխը շարժում է։

ՏԵՍԻԼ Ը

ՆՐԱՆՔ, ՆԱՏՈ

ՆԱՏՈ, դուրս գալով ձախ դռնից։

Բա՛րով ձիզ։

ԳԱՍՊԱՐ

Բա՛րով, ձալո ջան։

Միմյանց ձեռն են տալիս։

ԷՓԵՄԻԱ, ոտի կանգնելով։

Բա՛րով, Նատո ջան... (Համբուրվում են։) Վո՞ւնց իս, քեփիտ չիս էրևում։

ՄԵԼՔՈ

Հենց էտու համա էլ բաղն ինք գնում. էգեբա մե քիչ էլ է քեփը բաց ըլի։

ՆԱՏՈ, էփեմիային։

Վունչիչ, Փոփո ջան, գլուխս մե քիչ ցավում է... Դուն վո՞ւնց իս։

ԷՓԵՄԻԱ

Էրկուսս էլ մե օրումն ինք, Նատո ջան. ամա ֆիս իմ ցավն ու դարդը այնումս էլ չիմ գցում, ավատա՛... Դուն լավ կաց... Ի՛նձ մտիկ արա. հեստի բանիր ասիմ քիզ բաղումը, վուր մե նմուտումը, քեփդ բաց ըլի։

ՆԱՏՈ

Շնորհակալ իմ, Փոփո ջան։

ԷՓԵՄԻԱ, Նատոյին, ծածուկ, միենչդեռ Գասպարը Մելքոյի հետ, հեռվում, մի պատկերի են նայում և ցածր խոսում։

Գենացվալե, Նատո ջան, իմ մարթու մոդ չասիս, թե դուն ինձ մոդ գիր իս գրի... Իժում կոսիմ։

ՆԱՏՈ, նույնպես։

Լա՛վ... (Բարձր։) Նստի՛, ինչի՞ չիս նստում։

ԷՓԵՄԻԱ

Էլ ի՛նչ նստիմ. թե գնում ինք, գնա՛նք, էլի՞։

ՄԵԼՔՈ

Նստեցե՛ք, ինչրու ֆայտոններիրը կու բերին... Տիգրանին խնդրեցի, վուր հրամաթ լավիրը ճարին։

Լսելով Տիգրանի անունը, Նատոն մի փոքր ցնցվում է, բռնում է աթոռի մեջքը և նստում է։ Նստում է և էփեմիան ու հետը ցածր խոսում։

ՆԱՏՈ, նայելով Գասպարի կողմը, էփեմիային ցածր։

Ի՞նչ բան է. իմ գիրն ի՞նչ արավ։

Էփեմիան, նույնպես հետ նայելով, ձեռով նշան է անում Նատոյին լռել։

ՏԵՍԻԼ Թ

ՆՐԱՆՔ, ՇԱՔԱՐՈ, ԳԱՅԻԱՆԵ

ՇԱՔԱՐՈ, դուրս գալով ձախ կողմից, Գայիանեին, որ հետևում է նրան՝ գլուխը փաթաթած և վերարկուն ձեռին։

Ֆիս քիզ ասում իմ, նրա վիրչի խոսկն է... (Աչ թաթի կողմով խփելով ձախ թաթին։) *Կտրած, պրծած է...* (Նատոն և էփեմիան ոտի են կանգնում։) *Ո՞ւր իք նիղանում... Բա՛րով, էփեմիա ջան, ու մնա՛ք բարով դիփունքդ. կես սահաթվան էդնեն էլի մետի կուլինք...* (Գայիանեն ձեռն է տալիս Գասպարին և էփեմիային։) *Է՛հ, յիս գնացի... Ֆիս վուտով, դուք* (Հեգնորեն։) *փա՛յտոններով... Թե Շեիթան փողոցումն էլ սելիր ռաստ էկավ ձիզ, էն է վուր ինձ վրա վազ կու հասնիք։*

ՏԵՍԻԼ Ժ

ՆՐԱՆՔ, ՏԻԳՐԱՆ

ՏԻԳՐԱՆ, ձեռնոցներով և գլխարկը ձեռին, մտնելով խորքի դռնից։ Հետո ԱՂԱԽԻՆ։

Ֆայտոնները հազիր է։

Մտնում է խորքում։

ՆԱՏՈ, մեկ ձեռը տանելով գլխին մյուսը սրտին և ցածր ձայնով:

Ա՜հ...

ՇԱՔԱՐՈ, մոտենալով Նատոյին:

Ի՞նչ էլավ. ի՞նչ, վուրթի։

ՆԱՏՈ, հենվելով Շաքարոյի թևին:

Ա՜խ... (Մյուսները շփոթված նավամբվում են նրա շուրջը:) *Վունչիչ, վունչիչ...* (Ջսպելով իրան:) *Գլուխս պտուտ էկավ։*

ՄԵԼՔՈ

Էլ ո՞ւր ինք գնում... (Նատոյին:) *Գնա՜, դնջացի։*

Աղախինը ձախ դռնից բերում է Նատոյի գլխարկը, վերարկուն ու ճվանոցը և մտնում է խորքում:

ՆԱՏՈ

Չէ՜, չէ՜, գնանք, ինձ հաչաթ չէ, անց կացավ։

ՇԱՔԱՐՈ, Նատոյին:

Գու քա՞ս հիդս, վուրթի՜. քու խաթիր (Առանձին շեշտելով:) *փայ՜ետոն էլ կու նստիմ։*

ՄԵԼՔՈ, Շաքարոյին:

Հազիր, կալասկեն լծած կանգնած է՜։

ՇԱՔԱՐՈ

Կալասկեն էլի հա՜, թե չէ էս շուք պապանաքին կարետումը շունչս կու կըկնի... (Նատոյին:) *Գնանք, վուրթի. քու խաթիր կալասկումն էլ կու նստիմ։*

ՆԱՏՈ

Շատ շնորհակալ կուլիմ, պապի ջան... (Մյուսներին:) *Գնանք, գնանք...* (Գնում, վերցնում է աղախնուց գլխարկը, որ ծածկում է հայելու առջև:) *Էս սահաթիս, պարոններ...* (Կրկին մոտենում է աղախնուն, հագնում է վերարկուն և ձեռնոցները վերցնելով:) *Ըհա՜, պրծա...* (Բռնելով Շաքարոյի թևը և դառնալով մյուսներին:) *Համեցե՜ք։*

ՇԱՔԱՐՈ

Հեի՜ դեդի, Շաքարո՜, ինչրի հիմի փայետոնն էլ լայիղ չէիր անում, հիմի կալասկումը ձքվի... Ա՜յ, հա՜յ, ո՞վ դիմնա քիզ, Շաքարո՜։

ՆԱՏՈ, սեղմելով Շաքարոյի թևը իր կրծքին:

Պապի ջան... (Շաքարոյի հետ միասին գնում է դեպի խորքը և աղախնուն:) *Ա՜յի Մարիամ։*

Շաքարոն և Նատոն դուրս են գնում խորքի դռնից, աղախինը հետևում է նրանց։

ԳԱՅԻԱՆԵ, առանձին:

Վա՜յ իմ օրին... (Էփեմիային:) *Դրան էսենց պատահում է խանդեխան։*

ԷՓԵՄԻԱ

Լավ կուլի, խնամի ջան, մի՜ դարդ անի... (Գասպարին:) *Կուռդ ի՜ս տու։*

Մտնում է նրա թևը:

ԳԱՍՊԱՐ, գլխարկը վերցնելով, Էփեմիային, ցածր:

Էտ է վուր խափեցիր։

ԷՓԵՄԻԱ, թողնելով նրա թևը և դառը ցույց տալով:

Բաս՝ համեցե՜ք... (Գնալով դեպի Գայիանեն:) *Անմրթի իմ, խնամի ջան, քի մենակ էի թողնում։*

ԳԱՍՊԱՐ, առանձին և կրծքին խփելով:

Հը՜մ։

Բարկացած դուրս է գնում խորքի դռնից:

ՄԵԼՔՈ, կանչելով:

Տիգրա՜ն... (Էփեմիային և Գայիանեին:) *Էս նմուտիս գալիս իմ։*

ԷՓԵՄԻԱ, Գայիանեին:

Համեցե՜ք, բատոնս ջան։

Առնում է թևը:

ԳԱՅԻԱՆԵ

Ապրիս, վուրթի։

Դուրս են գնում խորքի դռնից:

ՏԵՍԻԼ ԺԱ

ՄԵԼՔՈ, ՏԻԳՐԱՆ

ՄԵԼՔՈ, շփոթված, ձեռները շարժում է, հետո։

Դիպ ղրգեցի՞ր, Տիգրան ջան։

ՏԻԳՐԱՆ

Հրամանք իս։

ՄԵԼՔՈ

Դուք էլ մաղաղինին մե մտի՛կ արա ու վախտի դեվեր արի, հենց ապրիս. ղուլուղչերեմեն, ումնոր գուղիս, էլի ղրգե։

ՏԻԳՐԱՆ

Մեկին խո էլախտ ճամփու գցեցի ու էրծըթեղենն էլ լաքիի ձեռով ղրրգեցի էս սահաթիս։

ՄԵԼՔՈ

Ապրիս... (Գլխարկը սեղանից վերցնելով։) *Ամա էլ ի՞նչ դես ու դեն. ա՛րի յիս քիզ տանիմ ու էնղանց էլի մետի կէհանք։* (Ձեռը դնելով Տիգրանի ուսին։) *Մա՛խլաս... Քեփս խարաբ է, Տիգրան ջան. Նատոս լավ չէ...*

Գլխարկը ձեռին դուրս է գնում խորթի դռնից։

ՏԵՍԻԼ ԺԲ

ՏԻԳՐԱՆ, մենակ, զգացված։

Էրնեկ նա լավ ըլի ու, թեգուզ յիս մեռնիմ...

Դուրս է գնում նույն դռնից։

ԱՐԱՐՎԱԾ ԵՐՐՈՐԴ

Օրթաճալա։ Կուր գետի ափին մի հիանալի այգի։ Աջ ու ձախ, ուր հարկն է, գեղեցիկ ծառեր, ծաղիկներ, աթոռներ, բազկաթոռներ և նստարաններ։ Մեջտեղը ծաղիկներով շրջապատած ավազան շատրվանով։ Խորքում՝ լայն գետափ, որի եզերքով, ձախից դեպի աջ, հոսում է գետը. սրա մյուս կողմը՝ դարձյալ այգիներ, իսկ այս կողմը՝ գետի մեջ, դեպի ձախ, եզերքի մոտ, ջուր բարձրացնող սովորական ռնիվ (շարխ), որ բանում է՝ արձակելով իր քնորոշ ձայնը և որից բաց ջրփողով* ջուր է գալիս այգին։ Յերեկ է։

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ՇԱՔԱՐՈ, ՆԱՏՈ

ՇԱՔԱՐՈ, Նատոյին, որի հետ խոսելով գալիս է աջ կողմից։

Ա՛յ, վուրթի, նստինք էստի ու խոսինք միզ համա։

ՆԱՏՈ

Լա՛վ, պապի ջան, ամա էս շարխի գոռալը ինձ դուր չէ գալի. հենց գիդիմ՝ ինձ է ջդրեցնում։

ՇԱՔԱՐՈ

Սա էլ իր դարդն ունե, վուրթի... էս սահաթիս բաղմնչուն ասիմ, կանգնեցնիլ տամ... Սաղ բաղը ջրած է ու էս ջուրն էսղանց գալիս է, էնթեննն էլի Քուռն է գնում։

Դուրս է գնում ձախ կողմից։

* *Այս ջրփողը պետք է այնպես լինի շինած, որ կողմանոցում անցուդարձ անելը ոչ ոքի չխանգարե։*

ՆԱՏՈ, մենակ, նստում է և խորասուզվում մտածմունքի մեջ երկար ժամանակ, հետո։

Օ՜հ...

ՇԱՔԱՐՈ, դուրս գալով ձախ կողմից այգեպանի ուղեկցությամբ, Նատոյին։

Էս նմուտիս, վուրթի... (Այգեպանը բարձրանում է անիվի նեցուկի վրա, կանգնեցնում է անիվը ընդունած եղանակով և դուրս է գնում ձախ կողմից։) *Արհա՛, վուրթի։*

Առաջ է գալիս։

ՆԱՏՈ, ոտի կանգնելով։

Շնորհակալ իմ, պապի ջան, նիղացար։

ՇԱՔԱՐՈ

Քիզ համա, վուրթի, վուտով Սոնղալուխ կէհամ, օղոնդ դուն լավ ըլիս։

ՆԱՏՈ

Ա՜խ, պապի ջան։

ՇԱՔԱՐՈ

Յիս քիզ ասում իմ, Նատո ջան, վուրթի, լա՜վ կաց, սիրտդ լա՜վ պահե։

ՆԱՏՈ

Ասիլը հիշտ է, պապի ջան... Լավ վո՞ւնց կենամ, վուր լավ չիմ... Ինքս խո տանջվում իմ ու տանջվում, ինձ մտիկ անողին էլ հիգս իմ տանջում։

ՇԱՔԱՐՈ

Էտու համա մի՜ փիքր անի, վուրթի, դիփ կու անց կենա։

ՆԱՏՈ

Հալբաթտա, պապի ջան, մե օր դիփ կու անց կենա, դիփ անցողական է, վունցոր ասում իս. մինք էլ ով կանք, դիփունքս կու անց կենանք... Ամա իմ ջիգրն էն է գալի, վուր էս սահաթիս չէ թե մենակ յիս իմ նիղանում, ձիզ էլ ինձ հիդ իմ նիղացնում... Էսենց սիվ աստղի իմ ծնած, ի՜նչ անիմ... Ա՜յ, էկանք բաղը. ուրախանալու, քեփ անելու մագիեր, յիս իմ դարդուտ սրտով ու իմ քինթ ու պռունգով էսօրվան բաղի ճաշը դիփունանցը հառամ արի։

ՇԱՔԱՐՈ

Հաջաթ չէ, վուրթի... (Նստելով ձախ կողմը։) *Մե օր էսենց կուլի, մե օր էնենց... Նստի՛, վուրթի...* (Նատոն ևս նստում է։) *Ցիս ումիկ ունիմ՝ էլի շատ ջեր քեփ անիմ իմ Նատոյի հիդ՝ էս բաղումը կուլի թե ուրիշ տիղ, դիփ մեկ է... Դիփունի վրա լավ բաղը աթմորթու ուրախ սիրտն է... Ցիփոր սիրտը ուրախ է, իր տիղն է, բաղ է ու բաղ... Դուն ինձ է՛ն ասա՝ խո լավ իմացար, ինչ ասի քիզ, վուրթի։*

ՆԱՏՈ

Դիփ, դի՛փ, պապի ջան, իմացա ու հասկացա։

ՇԱՔԱՐՈ

Էտենց, վուրթի, հիմի քու կամքն է. վունցոր գուզիս, էնենց վճռե... Գուզի՛ս, գնա՛ քու հորանց տուն—իմ ախչկա մոդ, վուր քու մերն է, գուզի՛ս, էլի է՛նդի կացի, վուրդի էլ կենում իս—քու մարթանց տանը։

ՆԱՏՈ

Ձլիվ մե իր կամքով դաստուր է տալի՝ ինչրու իր հիդ գալը իմ հորանց տանը կենամ, հիմի էլ ի՞նչը կու պահե ինձ նրա տանը... Ցիփոր գուքա ու զորով կու թրևին ինձ նուա մոդ, էնչախը կու տեսնիմ՝ ի՞նչ է ըլում։

ՇԱՔԱՐՈ

Դուն գիդիս, վուրթի, վունցոր խիլքդ կտրե, է՛նենց ժաժ արի... Հա՛, կինաղամ մտես էր ննգնում... Ապրուստի համա ասավ՝ իսկի մի՛ փիքր անի, վունչիչ չի պակսի քիզ, կոսե. ամսե ամիս քու խարջլուխը թամամ կու ստանաս, կոսե։

ՆԱՏՈ

Նրա բարի սրտեմեն էտ էլ արմնալու չէ. ամա յիս նրամեն վունչիչ փուղ ու խարջլուխ չիմ ուզի... Էն լավ է քաղցած մեռնիմ, կանց ձեռս ախկրտի պես դեմ տամ... Ի՞նչ նամուս է, վուր մարթուս չըլիմ սիրում, նրան կնգութին չըլիմ անում, գլուխս նրամեն ազատիլ ըլիմ ուզում ու նրա դովլաթը վայիլում ըլիմ։

ՇԱՔԱՐՈ

Վուր էտենց էր ու էտենց, վուրթի, հազիր լսիլ էիր ինձ ու գլուխդ բալբալեն չէիր գցի՜... Ի՞նչ կոնեիր էս հարստութինը, վուր չիս կանացի մարսի՜... Ասած է՝ ի՞նչ կոնիմ էն օսկե լագանը, վուր մեչը պիտի արուն

թքիմ... էն ուփրո լավ չէ՞ր ըլի, վուր քու դարաջի ու քիմեն սիրած մե աշխատող տղա էիր ուզի, թեգուզ հենց քիպես խղճին, ու հիմի էտ հալումը չէիր էլի՞... Ամա դուն միղ չունիս, մինձ միղավուրը քու մերն է... Շա՜տ ասի նրան, շա՜տ քարոզնիր կարթացի, վուր ջեր մի՜ շտապիք, թո՜ղ մեկ մեկու լավ ճանչնենան, ասում էի... Ամա, դուն չմեռնիս, չէլավ, նրա օխտեմեն չկանացի գա, ու քի մոդ հակառակ խոսիլը խո չէր ըլում, վուրթի. դուն ինքդ էլ զաբուլ էիր։

ՆԱՏՈ

Իմ մերը միղ չունե, պապի ջան, միղավուրը չիս իմ, չիս, վուր իմ լավն ո՜ վաղը չչոգեցի. հարստութինը աճկիրս կապից։

ՇԱՔԱՐՈ

Էտենց է, վուրթի. քանի մարթ ջեր փորցած չէ, կու պատահի... Արեգագը, է՛ն յրգնային արեգագը, վուր աշխարք ու յրգիր է տաքցնում, ամեն արարածի շունչ ու կենթանութին է տալի, էն արեգագը մարթու աճկիրը մթնեցնում է իրան դեմուդեմը թամաշա անելու համա... Ամա ով մեկ էրկու՝ հարարաթը փորցիլ է, բեսար նամաղուլ կոնե ու նուր մեկանց աճկիրը չի չռի վրեն... Հիմի էլի մեր ցավը խոսինք, վուրթի... Մարթուտ չիս սիրում, սիրտդ չէ կպչում նրան, էտուրն ի՞նչ կանամ ասի, վուրթի... Սեր կա՝ ասռանու օղորմութին է, սեր կա՝ յրգնային պատիժ է... (Նատոն հոգվոց է հանում։) Յիրիք տարի էլ խոսինք էստու վրա, չի վիրչանա... Ամա օրինակ ասինք՝ շատ լավ իս անում, վուր նրա տուն ու տիղը թողնում իս. նրան դովլըթիմեն ձեռն իս վի կալնում, նրա տված խարջլուխեմեն էրեսդ շուռ իս տալի, գնում իս էլի քու մոր մոդ ապրելու, էլի քու դասերով ու մատի պտղունցով քու թիքա հացը ճարելու... էդ դիփ լավ, ասինք. էտու դեմ դնամիշ անելու վունչիչ չունիմ, վուրթի... Իմ խիլքով էլ՝ լավ է չսիրած մարթումեն հիռանալ ու իր համա նամուսով խիղճ ապրիլ, կանց նրա ձեռի տակը մնալ, նրան խափիլ ու նրա աշխատանքով կշտանալ, նրա դովլաթը վայիլիլ... Ամա էլի լա՜վ փիքը արա, վուրթի. վիրը էլի փոշիվնելու չչինիս բանը ու գլուխդ վայ տալու չդառնա նուր մեկանց։

ՆԱՏՈ, վեր կենալով։

Չէ՛, չէ՛, պապի ջան, դուն էտու փիքրը մի՜ քաշի... էս չուրս ամսումը, ինչ փսակվիլ իմ, փորցվեցա... էնքան դաղվեցա ու տանջվեցա, վուր խիլքս էլ հասավ, միտկս էլ բաց էլավ... Քանի ջեր իմ քիմեն իմացի, պապի ջան, վուր խիլքի ու մտկի առաչի բալնիքը չարչարանքն է ու տանջանքը... Ինչ չիս չարչըրվեցա ու տանջվեցա էն օսկե պատերումը, էն էլ է հերիք ինձ։

ՇԱՔԱՐՈ

Սերի հնսաբը վուր չըլիմ հասկանում, Նատո ջան, վուրթի, կու արմնամ, վուր էն հանգի պատվական մարթուն չիս կանացի սիրի։

ՆԱՏՈ

Նրա պատվականութենին խոսկ չկա, պապի ջան. հենց էտ պատվականութինն է, վուր ինչկլի էսօր դիմցա, ամա իմ բիբախատութինը, վուր ինչ գ՛ուզե չալիշ էկա, սիրտս չկպավ նրան... Շատ մարթ ինձ գիժ կու համարե էսուս համա, ամա վուր գիդենան՝ սրտումս ի՜նչ է անց կենում, էլ էտենց չին ասի։

ՇԱՔԱՐՈ

Ավտում իմ, ավտում, վուրթի... Սիրիլն ու չսիրիլը վուր զորով էր էլի աշխարքումը, խոմ էսղադա լաց ու արտըսունք չէր ըլի աթմորթու գըլխին, վունց էլ էսղադա տանջանքն ու կոտորուքսը... Իմ ասիլս էն է մենակ, վուր հանաք մասխարութին չէ քու մարթումեն թամամ կտրվիլը... Մո՜ւղայթ կաց, է՛լի իմ ասում. վայ թե իժում փոշիվնիս ու հորանց տանը նուր մեկանց վայ տաս գլուխդ։

ՆԱՏՈ

Ինչ գուզե փոշիվնիմ իմ հորանց տանը ու վայ տամ էնդի գլուխըս, հիմիկվան տանջանքիս հիդ չի գա... Դուն չիս գիդի, պապի ջան, թե ի՜նչ հանգն իմ տանչվում հիմի, ի՜նչ հանգը... Դոշս պիտի փանջարա ըլի, վուր մե տուն մտիկ անիս ու տեսնիս՝ թե ի՜նչ խաբար է (Սիրտը շփելով։) էստի... Չէ՛, չէ՛, պապի ջան, մարթանց տանը ավելի դժար է ինձ համա, կանց իմ հորանց տանը... (Դնում, բաժակում ջուր է ածում և առանձին։) էնդի էլ է չի ռաստ գա նա ինձ... (Խմում է և վերադառնալով, Շաքարոյին։) Իմ մերը վունչիչ չի խնահի ինձ, դուն էլ լավ գիդիս, պապի ջան, ու չիս իմ կաշեմես դուս գու քամ, վուր նրա համա ծանդրութին չըլիմ... Թե էս էլ չաչոդվեցավ՞ու տեսա, վուր մորս նիդացնում իմ, էնչախը չիս գիդիմ։

ՇԱՔԱՐՈ

Ի՞նչ։

ՆԱՏՈ

Կէհամ ու գլուխս կու սպանիմ էն սահաթին. ուրիշներու համա օրինակ մայինց կուլիմ։

ՇԱՔԱՐՈ

Ա՛յ, էրեխա իս ու էրեխա-էրեխա խոսում իս, վուրթի։

Տեղից վեր է կենում։

ՆԱՏՈ

Ուրիշ էլ ի՞նչ է մնում... Կսանանց դոնիրը խո չի՛ն բաց անի ինձ համա ու հարստատիկ չին անի ինձ։

ՇԱՔԱՐՈ

Է՛հ...

ՏԵՍԻԼ Բ

ՆՐԱՆՔ, ԳԱՅԻԱՆԵ

ԳԱՅԻԱՆԵ, ափսեն ձեռին, միրգ ուտելով գալիս է ձախ կողմից։

Էստի ի՞նչ։

ՇԱՔԱՐՈ

Արի՛, արի՛, մե խի՛լքի բի քու աչկան. տի՛ս թե ինչի՞ր է ասում։

ՆԱՏՈ

Ինչի՞ր իմ ասում, պապի ջան... Եթե հալալ ապրելու համա ճամփա չէ մնում մարթուն. էնչախը զարթնի մահը ուրիշ էլ ի՞նչ դրուստ ճամփա կա։

ԳԱՅԻԱՆԵ, հոբը։

Ի՞նչ է. ասի՞ր, մամի։

ՇԱՔԱՐՈ

Ա՛սի, ա՛սի, բաս չամի՞... Դիփ մետի ասի... Մարթանց տանը, գլուխը մահու է տալի, չէ ուզում մնա։

ԳԱՅԻԱՆԵ

Էտ գիդեի, վուր էտենց կուլի. իժում ինձ մոդ էլ չէ ուզո՞ւմ։

ՆԱՏՈ, վազելով դեպի մայրը։

Ա՛խ, դեդի ջան։

Ընկնում է նրա գիրկը։

ՇԱՔԱՐՈ, նստելով բեմի աջ կողմը։

Թե ուզում է, էլի քի մոդ է ուզում. համա էն էր ասում հիմի, վուր՝ թե մորս կու նիղացնիմ, գլուխս կու սպանիմ, կոսե, ու յիս էլ էտու վրա էի ջգրվում։

ԳԱՅԻԱՆԵ, սեղմելով Նատոյին իր կրծքին։

Վա՛յ, Նատո ջան, վուրթի, էտ վո՞ւնց էիր ասում։ Էտենց դեդա իմ էլի քիզ համա՛... (Նատոն աչքերը սրբում է։) Ա՛րի, ա՛րի, վուրթի, քանի նա էստի չի ըլի, ի՛նձ մոդ արի. վունցոր պահիլ իմ քիզ, էլի էնենց կու պահիմ... Ի՛նչ գուզե խիղճ ըլինք, տունը խո էնդի է. իմ փային էլ քու չարը տանե, օդոնդ քու սիրտը լավ ըլի։

ՆԱՏՈ

Ջէ՛, դեդի ջան, չէ՛. ինչրու էտի էլ քիզ չիմ նիղացնի. վունցոր վաղ աշխատում էի, էլի էնենց կու աշխատիմ, դուն հա՛նգիստ կաց։

ԳԱՅԻԱՆԵ

Հենց էտ աշխատանքն էր քունը, վուրթի, վուր քիզ էտ հալը գցեցի... Ուզում էի, վունցոր ասում ին, ունքս շինի, աճկս էլ հանեցի։

ՆԱՏՈ

Ինձ էլ էտենց էլավ, դեդի ջան, հարստութինը խափից միզ. էնչախն յիս ավելի բախտավուր էի, կանց հիմի, վուր մուքթա խորում ապրում իմ... Հիմի իմ հասկանում, վուր առանց աշխատանքի ապրիլ չաժե ու մարթ արժանի էլ չէ ապրելու... Քի մոդ՝ իմ քրտինքով ճարած ցամաք հացը ակելի քաղցր է ինձ համա, կանց էն օսկե պատերումը թաքավուրական մուքթա ճաշիրը։

ԳԱՅԻԱՆԵ

Ա՛խ, Նատո ջան, վուրթի։

Գրկում, համբուրում է։

ՇԱՔԱՐՈ, գլխարկը վերցնում է և դեպի երկինք նայելով։

Փա՛ռք քիզ, աստուած, մեր ու վուրթուքինը խստակ չիս կտրի աշխարքեմեն. սրանց էս մե սերն է, վունցոր մաքուր ստեղծիլ իս, էնենց մաքուր էլ մնացիլ է ինչկլի էսօր։

Գլխարկը ծածկում է։ Առաջին արարվածի չերեզկավոր ծառան, Ֆիգարոյի առաջնորդությամբ, ձախ կողմից բերում է արծաթե սկուտեղով՝ նուրբ, զանազան խմիչքներ և թղթե տուփով շքարեղեն։

ՏԵՍԻԼ Գ

ՆՐԱՆՔ, ՏԻԳՐԱՆ, առանց գլխարկի, ԾԱՌԱ

ՆԱՏՈ, ճեռվի՞ց նկատելով Տիգրանին, մորը ցածր։

Ինձ հաա՞մա էլ դո՛ւն վիկալ, դեդի ջան, թո՛ղ էսենց չտեսնին ինձ։

Գնում է՝ աջ կողմը ծալիկ է որոնում, մինչդեռ Տիգրանը, ձախ կողմը, վերցնելով սկուտեղից մի բաս սուրճ, դնում է սեղանի վրա Գայիանեի առջև։

ԳԱՅԻԱՆԵ

Ապրիս, վուրթի... Մո՛ւլափ, Նատոյիս համա էլ վի կալնիմ... (Տիգրանը իսկույն վերցնում, դնում է սեղանի վրա երկրորդ բասը և շամարեղեն մատուցանում։) *Շնորհակալ իմ, վուրթի։*

Նստում է։

ՏԻԳՐԱՆ

Ջաղցր լիկոր կու հրամա՞ք, իմ մեր։

ԳԱՅԻԱՆԵ

Չէ՛, վուրթի, չէ՛, շնորհակալ իմ. Նատոս էլ չէ խմում։

ՏԻԳՐԱՆ, գնում է աջ կողմը, վերցնում է սկուտեղից մի բաս սուրճ և դնելով Շամարոյի առջև։

Համեցե՛ք, պապի ջան։

ՇԱՔԱՐՈ

Շա՛տ ապրիս, Տիգրան ջան. վո՞ւնց իս, խո լա՞վ իս։

ՏԻԳՐԱՆ

Ձիզ սաղ ունենամ. պապի ջան։

ՇԱՔԱՐՈ

Սաղ ըլիս, վուրթի։

ՏԻԳՐԱՆ, գլուխ տալով։

Ուրիշ ի՞նչ կու հրամայիք, պապի ջան. քախցը լիկո՞ր, թե՞ կոնյակ... Կանփետ չիք սիրում, գիդիմ։

ՇԱՔԱՐՈ

Կո՛նյակ, կո՛նյակ, վուրթի... Շաքար ու շարբաթը ախչկերանցը կու սազ գա... (Տիգրանը մատուցանում է մի ըմպանակ կոնյակ։) *Իմ տարսը դառնաս, վուրթի։*

ՏԻԳՐԱՆ

Աստուձ էլի ավելի օր տա ձիզ, պապի ջան... Մինք էլ ձիր ծաղկնիրն ինք. ումիկ ունիմ, լավ խեր անինք։

ՇԱՔԱՐՈ

Ինձ վրա լավ պտուղ տաք, վուրթի... Քու սրտի համա ու հավատարմութենի համա աստուձ քիզ չի կորցնի, վուրթի... Ինձ խիստ է դուր գալի, վուր էտենց խոնար իս. քու ձեռի տակ մարթկերանց բանն էլ վիզ իս կալնում... էտենց, վուրթի, մինձ ու պստիկ աստձու մոդ դիփ մեկ ին։

ՏԻԳՐԱՆ

Հալբաթտա, պապի ջան, ամա շատ մինձիր կան, վուր պստկին մարթատիզ չին գցում, չին ճանչնում ու չին էլ ուզում ճանչնենա։

ՇԱՔԱՐՈ

Աստուձ նրանցմեն ազատ պահե քիզ ու քու նմաններուն, վուրթի։

Տիգրանը գլուխ է տալիս Շամարոյին և գաղտագողի նայելով դեպի Նատոն, դուրս է գնում ձախ կողմից, ծառան հետևում է։

ՏԵՍԻԼ Դ

ՇԱՔԱՐՈ, ԳԱՅԻԱՆԵ, ՆԱՏՈ

ՇԱՔԱՐՈ, Գայիանեին, մինչդեռ Նատոն խորքում ծաղիկներ է հավաքում։

Իր քաշն օսկի աժե էտ տղեն... Ձիս գիդի թե ի՛նչ բան է գլուխ բերում դա... Էս մոդիկ ժուգը. քախկումը վուր անկարքութիննիր ննգավ, դրա մե ննգրուչը սպանեցին. խղճի օղլուշաղն ու մանդր էրեխերքը մնացին դառ ու դարդակ ու հացի հասրաթ... Դա է վուր քախցածութենեմեն ազատում է նրանցը... Ամսե ամիս մ -մե իմքին մոդ է անում բազարիանումը. գիդիս, դարդիմանդ տղերք շատ կան էնդի. իր ջիբեմեն էլ, ինչ կանացիլ է, վրեն է ածում ու էն խղճերու համա ղրգում։

ԳԱՅԻԱՆԵ

Էն դա է՞. աստուած մուրազին հասցնե... Յիս էտենց քաղաքավարի տղա չիմ տեսի։

ՇԱՔԱՐՈ

Էրեխուց վուանցուզներու մոդ է մինձացի էստի ու իժում իր առուտրի դեիր Պարիժումը շատ չեր ամսներով է կացի. իր տիրուչ պես... Ուրիշ տղա է, ասում իմ... Լավ տղերք շատ կան քախկումք, ամա դրա լագաթն ու խասիաթը դիփ ուրիշ է։

ԳԱՅԻԱՆԵ

Վրեն էրևում է՝ խիստ ղոչաղն է ու կտրուկ... Էնդո՞ւր էլ էնենց սիրում է նրան Մելքոն։

ՇԱՔԱՐՈ

Տիղ ննգած տիղը կինքը չի խնահի մարթու համա, ի՞նչս ասում... Ա՛նթամահ, ա՛նթամահ՝ վուր լիզու չի հիդ ասի. սաղ բազազխանեն նրա արիվով է օրթում ուտում։

ԳԱՅԻԱՆԵ

Աստուած օր տա իրան։

ՆԱՏՈ, առաջ գալով և իր ձեռի ծաղիկներից մինը տալով Շաքարոյին։

Տի՛ս, պապի ջան, ի՛նչ լավ ծաղիկ է։

ՇԱՔԱՐՈ, առնելով ծաղիկը։

Ղուրթ վուր լավն է. քու սիրտը լավ ըլի, վուրթի։

ՆԱՏՈ

Շնորհակալ իմ, պապի ջան... (Նստելով մոտը։) *Ո՞ւմն էիք էտենց գովում, պապի ջան։*

ՇԱՔԱՐՈ

Թազա վունչիչ, վուրթի. Տիգրանի ափալըն էի պատմում, նրա ա՛նթամահութինը... Էն օրը քիզ էլ էի ասում։

ՆԱՏՈ

Հա՛, հա՛, պապի ջան, գիդիմ։

ՏԵՍԻԼ Ե

ՆՐԱՆՔ, ԷՓԵՄԻԱ

ԷՓԵՄԻԱ, սուրճի թասը ձեռին, գալով ձախ կողմից։

Ուցխո չէ, քա՛. իրանք էստի ծանդր ու բարակ նստած՝ քաղցր մասլահաթումն ին ու խեյվնի էնթի ծերին կի ջանդամը ղոնաղներու գլուխը։

ԳԱՅԻԱՆԵ

Դուն ու քու մարթը ի՞նչ ղոնաղներու հեսաբումն իք, Էփեմիա ջան. մե տանու վուրթիք իք՝ դուն էլ, քու մարթն էլ... (Վեր կենալով։) *Համեցե՛ք, նստի... էտ դուն, էս քու Նատոն։*

ԷՓԵՄԻԱ

Վո՛ւյ իմ աճկին, բատոնո ջան. բեդամաղ էլա՞ք... Ղուրթ վուր զոնաղ ըլինք, խո էտենց չէի ասի. իմ լիզուն իմ դուշման է, ի՛նչ անիս։

ԳԱՅԻԱՆԵ

Չէ՛, վուրթի, չէ՛, քու հանաքներու հիդ սովոր ինք. լավ գիդացի, վուր Նատոիմես պակաս չիմ սիրում քիզ... Մինք միր ասելուն ասինք, պրծանք.... Հիմի դուք մասլահաթ արեք, քանի գ՛ուզիք... (Շաքարոյին։) *Գնա՛նք, մամի ջան... Էրեխա մետի մինձացիլ ին, ո՞վ գիդե՝ քանի բան ունին ասելու մեկ մեկու...* (Նատոյին և Էփեմիային։) *Լա՛վ ըլիք, վուրթիք...* (Շաքարոյին։) *Ա՛րի, մամի ջան։*

ՇԱՔԱՐՈ

Գալիս իմ... (Նատոյին։) *Ուրախ իմ, վուր երկուսիտ մետի իմ թողնում...* (Էփեմիային։) *Համաշա էտենց ուրախ ըլիս, վուրթի։*

ԷՓԵՄԻԱ

Ձիր օխնանքն ա՛նպակաս ըլի միզմեն։

ՇԱՔԱՐՈ

Ջունքի բանը օխնանքի վրա ննգավ, դուն էլ ա՛նպակաս թայիզուլ ըլիս միզ համա։ (Տալով նրան իր ձեռի ծաղիկը։) *Էս ծաղիկն էլ քի փեշքաշ, վուրթի. քու ձեռին ավելի կու սազ գա, կանց իմը։*

ԷՓԵՄԻԱ

Շնորհակալ իմ, պապի ջան... Աստուած քու ծաղկնիրը քի բաշխե։

ՇԱՔԱՐՈ

Ապրիս, վուրթի. իմ տարսը դառնաս։

Դուրս է գնում ձախ կողմից Գայիանեի հետ միասին։

ՑԵՍԻԼ Զ

ՆԱՏՈ, ԷՓԵՄԻԱ

ԷՓԵՄԻԱ, հոտ կալնելով ձեռի ծաղիկը։

Իվ՛ֆ...

ՆԱՏՈ, տալով նրան բոլոր իր ծաղիկները։

Ա՛յ էլի, էփեմիա ջան. քանի գ՝ուզիս, (Մատնանիշ անելով տեղը։) *էնդի լիքն է։*

ԷՓԵՄԻԱ, հոտոտելով ծաղիկները։

Ի՛վֆ, ի՛վֆ, ի՛վֆ... Բախտավորիս, Նատո ջան։

ՆԱՏՈ, ցածր ձայնով խորը հոգվոց է հանում։

Ա՛խ...

ԷՓԵՄԻԱ, Նատոյի թևից շարժելով։

Հը՛ա, էլի՞... Մե օր չտեսա քիզ, վուր ժանգն էրեսետ չըլի վեր գալի։

ՆԱՏՈ

Էրանի է քիզ, Փոփո ջան, դարդ չունիս։

ԷՓԵՄԻԱ

Դուն ի՞նչ դարդ ունիս, էրանի գիդենամ... Աշխարքը քիզ էրնեկ է տալի ու դուն էլի գանգտվում իս... Բաս իմ տիզ վուր դուն ըլիս, էն-չախն ի՞նչ կ՝ոնիս։

ՆԱՏՈ

Ի՞նչ է պատահի։

Նստում է և ձեռով հրավիրում է էփեմիային ևս նստել։

ԷՓԵՄԻԱ, նստելով։

Էլ ի՞նչ պիտի պատահի, առուտեհան ինչրու մութը հիդս թշթշում է։

ՆԱՏՈ

Ո՞վ։

ԷՓԵՄԻԱ

Մարթս. ուրիշ ո՞վ պիտի ըլի... էս փլանի հիդ ի՞նչ էիր խոսում, էն փստանի հիդ ի՞նչ էիր ծիծաղում ու հազար էս հանգի տուտուց բանիր. զահլես գնացիլ է, աստուծ գիդենա... էտ հանգի էլ խանդուտ մարթ իմ օրումը չիմ տեսի. էստու հիդ էլ՝ մե՛ բլբլան, մե՛ բլբլան, վուր տերը թափե ու աստուծ ազատե. կոսիս ֆեծ մի կրակ ըլի դրուստ... Յիրիք տարի չի ըլի, ինչ փսակվիլ ինք. մեկ մեկու վրա վուր հեսաբ անինք, դիփ մետի յիրիք ամիս ուրախ օր չիմ անց կացրի հիդը, ավատա՛։

ՆԱՏՈ

Ամա խո սի՞րում իս դուն իրան։

ԷՓԵՄԻԱ

Սիրում իմ, բաս չիմ սիրո՞ւմ... էտ էլ վուր չըլի, խո ջուրը ննգնելու կու դառնամ իստակ։

ՆԱՏՈ

Էրանի է քիզ, Փոփո։

ԷՓԵՄԻԱ

Հալբաթտա վուր էրանի է ինձ. դուն իս վուր չիս սիրում քու մարթուն... Մե քիչ էլ է տիզ չբռնի՞ց սրտումդ ինչրու հիմի՞։

ՆԱՏՈ

Չէ՛։

ԷՓԵՄԻԱ

Էնենց բարի, քաղցր մարթը՞։

ՆԱՏՈ

Նրա բարութինն ու քաղցրութինն է պահում ինձ էլի, թե չէ սիրելով չկանացի, Փոփո ջան, չկանացի սիրի յիս նրան։

ԷՓԵՄԻԱ

Ա՛րի մեկը մեկելի վրա փոխինք, Նատո ջան, թե գուզիս. քու մարթն ինձ, իմ մարթը քիզ... (Երկուսն էլ սաստիկ ծիծաղում են։) *Էտենց, ա՛յ, յիս քիզ խոստացա, վուր քեփդ բաց կ՝ոնիմ... Է՛հ, ասում իմ, է՛լի էտենց վուր դիրք ըլի, խո դիփ մետի տակն ու վրա կու՝լի աշխարքը... Ջիս գիդի թե մե շան. համա ինչ օր կանգնեցրուց գլխիս իմ պարունը։*

ՆԱՏՈ

Էտ ի՞նչ բան է։

ԷՓԵՄԻԱ

Ա՛յ, ասիմ... էսօր, շուր հաքնելիս, միր հարևնի շունը տուն ննգավ օթախս ու մեբաշ խիստ վախեցրուց ինձ... Ծիկիս ձենի վրա նեքսիվ թափեցան՝ ծառեն մե կոնեն, մարթս մեկելը... Մե կռիվ, մե ղալմաղալ սարքից գլխիս աղազադեռ, վուր ի՛նչ ասիմ. սաղ օր է, հոքիս հանից դրուստ... (Ներկայացնելով Գասպարին։) Յադ շունը վո՞ւրղանց կու ճանչնա՝ քիզ ու, ինչի՞ էր վուտիդ տակ գլորվում ու, ո՞ւմն է էն շունն ո՞ւ... (Բնական ձայնով։) Յիս ի՞նչ գիդիմ ումն է. գլուխը շունն էլ քարը տա, շան տերն էլ... Առուտվան դեսը դնչութին չէ տվի ինձ... Էլախտվան ճաշը խո քնթես հանից խստակ... Էրնեկ կշտին չէի նստի։

ՆԱՏՈ

Հազիր ինձ մոդ էիր նստի՞։

ԷՓԵՄԻԱ

Ա՛րի ասա... Աստուձ խռովեցավ գլխիս. միթամ ուզեցի էրես պահի պարնիս ու սիրտը շահի... Հա՛, լավ միտս էկավ... Առուտեհան ասի քիզ, վուր նրա մոդ չասիս, թե ինձ մոդ գիր էիր գրի... Բանն էնդումն է, վուր ձիզ մոդ գալիս մինք մետի էինք գալի. ճամփին մե կնիկ ռաստ էկավ ինձ. յիս նրա մոդ մնացի խոսելու ու աղազադես էկավ ձիր կուռը... Մեբաշ մե հարկավուր բան միտս էկավ, վազեցի տուն ու էնչախը տվին ինձ քու գիրը... Հիմի իմ կասկածուտ ու խանդուտ պարունս վուր իմանա, թե յիս հիդ էլի տուն իմ գնացի, նուր դավի դարաբա կու սարքե գլխիս... Թային, թային էն անիծած շան հիդ կու կապի էս բանը՝ թե հիդ տուն ո՞ւր էի գնում, թե մե սատանութին չկա էստի... Էլ նրա գլուխ չունիմ... Էն յիս իմ, վուր դիմնում իմ նրան, թե չէ դուն վուր ըլիս իմ տիդ, մե նմուտ չիս կենա կշտին, աստուձ գիդենա։

ՆԱՏՈ

Միր ցավերու մեչ, Փոփո ջան, մինձ սար ու ձուր կա... Էրանի քիպես սիրում ըլիմ ու կանենամ սիրի իմ մարթուն, թեգուզ էտու վրա վաթար օր կանգնեցնե գլխիս։

ԷՓԵՄԻԱ

Իժում, իմ տեքրն էլ գիդե՞, վուր չիս սիրում իրա՞ն։

ՆԱՏՈ

Մաշուր թե անում է, թե չէ յիս վունչիչ չիմ ասի իրան ու չիմ էլ կանաքի ասի, չիմ համարցակվում... Ստութենի ու դալբութենի տակ ճխլվում իմ։

ԷՓԵՄԻԱ

Վուր էտենց է ու էտենց, հազիր բաժնվիս հիդը՞։

ՆԱՏՈ

Վո՞ւնց բաժնվիմ, վուր թոկով ու շնչով կապած իմ հիդը։

ԷՓԵՄԻԱ

Վունցար մեկելնիրը. քիչ կա՞ն։

ՆԱՏՈ

Էտ վո՞ւնց։

ԷՓԵՄԻԱ

Էնենց էլի, վա՛. դուն քիզ համա, նա իր համա։

ՆԱՏՈ

Իժո՞ւմ։

ԷՓԵՄԻԱ

Իժում էլի էն կուլի, է՛լի. դուն քիզ համա կուլիս, նա իր համա։

ՆԱՏՈ

Էտ իմանում իմ. ամա անումս ի՞նչ կո՛ւլի։

ԷՓԵՄԻԱ

Անումդ էլ էն կուլի, ինչոր մեկելներունը... Մե մարթաթուզ էլ դուն կու ավելնաս աշխարքին... Էրեխա իս, ի՞նչ է. յիս գիդի, վուր էտենց է՞... Մեկին կու սիրիս ու նրա հիդ կու ապրիս։

ՆԱՏՈ

Ամա Մելքոյի կնիկը կու հի՞շվիմ։

ԷՓԵՄԻԱ

Բա՛ս իմ կնիկը՞։

ՆԱՏՈ

Հանաքի վուխտը չէ, Փոփո ջան, յիս քիզ դրուստ իմ հարցնում։

ԷՓԵՄԻԱ

Ցիս էլ քիզ դրուստ ջուղաբ իմ տալի, Նատո ջան. թե կի ուրիշ ճար չկա, ի՞նչ արած... Մարթ ու կնիկ փսակելիս հեստի հանգը կապում ին ու շարտում մեկ մեկու հիդ, վուր իժում իրանք էվետ չին կանացի հիդ անի... Ո՞ւր է. ճուրտ ու պարնութինը քանի վուխտ է մոշլա էլավ, միր ազատութինը կի ջեր էլ թե գալիս է... Նրանք էլ, ովոր քիպես նազ ու նազանի չին, փսակած թե տանու ախչիկ, էլ կարք ու սարքին չին մտիկ տալի, գնում ին ու ում հիդ ուզում ին, նրանց հիդ ին ապրում. էլ վունց տերտեր գիդին, վունց տիրացու... Դուն էլ է՛նենց ժաժ արի, է՛լի։

ՆԱՏՈ

Կու մեռնիմ ու անումս չիմ կիխտոտի... Ջեր վուր աթմորթուն տված դարդակ խոսկի կոտրիլը մինձ ամութ է համարվում, ի՛նչդադա ավելի մինձ ամութ ու խայտառակութին պիտի ըլի էն խոսկի կոտրիլը, վուր խաչ ու ավետրանով մարթ աստձուն է տալի վկերու առչիվը... Գեդինը վուր մտնիմ, տասը ջեր էն լավ է, կանց էտ հանգի աննամուսութին անիմ։

ԷՓԵՄԻԱ

Գուզիս ա՛ննամուսութին ասա, Նատո ջան, գուզիս ի՛նչ քեփտ տա, է՛ն ասա. ամա էտ էտենց է ու էտենց... Օրթում ուտելիս չէիր գիդի՞, վուր էտենց է՞. ինչի՞ էիր օրթում ուտում։

ՆԱՏՈ

Սխալվեցա... Քսան տարեկան հասակումս մեկ սխալվեցա։

ԷՓԵՄԻԱ

Սխալվեցար ու ջարմեն էլ քաշե հիմի։

ՆԱՏՈ

Ինչի՞... Իրանք ին քարոզում Քրիստուսի խոսկիրը թե՝ օխտանասուն ջեր օխտը գամ վուր միկ անե մարթ մեկի դեմ, պիտի բախշին, կոսե*, ու ցիս օխտը հազար ջեր կու բղավիմ իմ մե սխալը, մե ջեր էլ է թողութին չին տա ի՛նձ։

* Մատթ. Ա.ա. ԺԸ. 21. Ցայնժամ մատեաւ առ նա՝ Պետրոս՝ և ասէ. Տէ՛ր, քանի՞ցս անգամ եթէ մեղիցէ ինձ եղբայր իմ, և թողից նմա. մինչև ցե՞օթն անգամ։

22. Ասէ ցնա Հիսուս. Ո՛չ ասեմ քեզ՝ թէ ցեօթն անգամ, այլ մինչև յեօթանասնեկին եօթն։

ԷՓԵՄԻԱ

Վա՜, վա՜, վա՜... էտ ինչի՞ր իս գիդացի, Նատո ջան. թային գիշերցերեկ բան ու գուրձդ էտ իս շինի։

ՆԱՏՈ

Աբա՜, հիոի քիմեն, դուն էլ իմ տոլ տանջվի ու չարչրվի, թե դուն ինձ վրա շատ չդիդենաս... Ցիս ուզում իմ՝ իմ գլխի տերը յիս ըլիմ, չէ թե՝ հոքով մեկինն ըլիմ, ու մարմնով՝ մեկելինը։

ԷՓԵՄԻԱ

Իմանում իմ քու միտկը, Նատո ջան, իմանում... Մե խոսկով՝ դուն ուզում իս հիդ նուր մեկանց նշնելու ախչիկ դառնաս... (Գլուխը աջ ու ձախ ջարժելով։) Ի՜վֆ, լավ է՛, ու իժում նուր չար, նուր բարի՞... Քիզ համա թազադան ջոգիս քու սիրելուն, նրա հիդ փսակվի՞ս... Բռնեցի քիզ, թե չէ.... Հա՜յ թե գուզիս. լավ իշտահ իս ունեցի, յիս ու իմ հոքին...

ՆԱՏՈ

Էլի կցեցիր քու հանաքնիրը՞։

ԷՓԵՄԻԱ

Իսկի էլ հանաք չիմ անում... Աբա, մե միր ազատութենի ճամփեն գթի, է՛լի, խա՛րաքալա ախչիկ, կոսիմ... Գիդիս թե քա՛նի խունգ ու մում վառող կունենաս քիզ համա՜. մե տասնին յիս կու ճարիմ, ավատա՜։

ՆԱՏՈ

Նրանց խունգ ու մումը հարկավուր չէ ինձ... Էրանի կանենամ միր ազատութենին պետկը գամ, թեգուզ իմ գլուխը դիփունի չարը տանի։

ԷՓԵՄԻԱ

Շատ քիպեսնիրն ին էլի, Նատո ջան. ամա ինչի էսօր վունչիչ չկանացին աշխարովի գլուխ բերի։

ՆԱՏՈ

Գիդիմ, գիդիմ, Փոփո ջան... Ցիս ի՞նչ իմ, վուր աշխարովի ի՞նչ կանենամ. շատ, շատ՝ իմ գլխի ազատութինը գթնիմ... էն թե կույի օրինակ ուրիշներու համա...

ԷՓԵՄԻԱ

Ցիս վուր տեսնում իմ, Նատո ջան, դուն իսկի էլ հանաք չիս անում։

ՆԱՏՈ, երկար հոգվոց հանելով։

Ա՜խ, ա՜խ, ա՜խ... էն վախտը լավ էր, Փոփո ջան, վուր շկոլումը մեռնի սորվում էինք ու խանդախան միր բախտի վրա խոսում... Օսկե պալատներ էր, վուր մեր մտքումը շինում էինք էնչախը, մեկը մեկեկի վրա լավը։

ԷՓԵՄԻԱ

Է՛տ ասա, է՛տ, Նատո ջան... էն քաղցր օրերը չուստ-չուստ է միտս գալի... Ա՛փսուս, վուր ինչրի վերչը չկանացի մնա էնդի քի մոդ...

Խորհում երևում են, գլխարկներով, Շաքարոն, Մելքոն և Գասպարը, որ խոսելով մտնում են ձախ կողմից։

ՏԵՍԻԼ Է

ՆՐԱՆՔ, ՇԱՔԱՐՈ, ՄԵԼՔՈ, ԳԱՍՊԱՐ

ՆԱՏՈ, էփեմայինն, շարունակելով։

Սս... Գալիս ին։

ՇԱՔԱՐՈ, խորհից կանչելով Նատոյին, մինչդեռ Գասպարը առաջ է գալիս աջ կողմով։

Նատո, վուրթի, մե է՛ստի արի։

ՆԱՏՈ, վեր կենալով, էփեմային։

Քի մենակ վո՞ւնց թողնիմ, Փոփո ջան. ա՛րի հիդս, քու մարթն էնդի է։

ԷՓԵՄԻԱ

Հորեն, նա դեսն է գալի։

ԳԱՍՊԱՐ, Նատոյին։

Զալո, քիզ կանչում ին։

ՆԱՏՈ

Էրկուսիտ մետի իմ թողնում։

Գնում է դեպի խորհը ձախ կողմով։

ՇԱՔԱՐՈ, Նատոյին։

Ա՛յ, տի՛ս, վուրթի, քու մարթն ի՛նչ է ասում։

ԳԱՍՊԱՐ, նստելով էփեմիայի մոտ, մինչդեռ Մելքոն և Շաքարոն խոսում են Նատոյի հետ խորհում, թփերի հետ։

Ցիս հենց գիդեի, Փեփել, գուն ինձ սիրում իս, ամա հիմի էլ խիլքս չէ կտրում։

Հանելով գլխարկը, դնում է սեղանի վրա։

ԷՓԵՄԻԱ

Ի՞նչ իմ արի։

ԳԱՍՊԱՐ

Էլ ի՞նչ պիտեիր անի։

ԷՓԵՄԻԱ

Ցի՞ս թե դո՛ւն. սաղ օր գլուխս տարար մե շան համա։

Շաքարոն, Նատոն և Մելքոն խոսելով գնում են մինչև այգու խորհի սահմանը և այնտեղից անհետանում են թփերի հետև, աջ կողմը։

ՏԵՍԻԼ Ը

ԷՓԵՄԻԱ, ԳԱՍՊԱՐ

ԳԱՍՊԱՐ

Չէ՛, անմրրթի իմ քի մոդ. խոսկը չէ թե շան վրա է, իմ սրտի վրա է գալի... Ախար, ինչրու մե շուն օմքնու մոդիկ չճանչնենա ու նրա հիդ սովոր չըլի, նա նրա վուտի տակը դիրամալեք կու խաղա՞։

ԷՓԵՄԻԱ

Աբա՛, էտ ասելու բան է՞, վուր ասում ի՛ս... էն շունը մե օր բալկոնումը քիչ պրծավ վրա էր ննգնում ինձ. ձեռքս հաց ունեի. մե թիքա իրան տվի... էնդումեն դեսը վուրդի տեսնում է ինձ, վուտիս տակն է ննգնում... Շան էտ խասիաթը քիմեն քսան չեր իմ իմացի ու հիմի քու գլխի համա մտեդ ննգա՛վ... Շունը խոմ մարթ չէ, ասում էիր, վուր հարուր լավութին էլ անիս, մե անմիզ բանի համա դիփ մետի մտեն է գցում ու անգրսկածի բլբրլում է, ու հիդտ կռվում, վունցոր հրամանքդ։

ԳԱՍՊԱՐ

*Գիդիմ, գիդիմ... Տաս տարի Թավրիզ իմ կացի, գիդիմ. էնդի չուստ-չուստ ին ասում էտ անդաղեն... էտենց է, էտենց... ասու

անիծե իմ խասիաթը։*

ԷՓԵՄԻԱ

Ա՛բա, ասում իս... էն շունը, մնամ, վուր տանու լվաձկ անողինն է։

ԳԱՍՊԱՐ, ուրախանալով։

Վա՛... էտենց կոսեիր, է՞։

ԷՓԵՄԻԱ, սիրտ առնելով։

Վո՞ւրդանց էի ասի, վուր ջեր էլ դրուստը չիմ գիդի. էքուց հարց ու փուրց արա, կու իմանաս՝ ում շունն էլ վուր է... Անմիղ խիղճ բչին էլ ծեծեցիր ու դուս արիր. իժում ի՞նչ հալալ ու հավատարիմ տղա էր... Հիմի թե շունը հուտով վո՞ւնց իմացավ, վուր դռան էդնեն չիս օթախումն էի, էտ իմ խիլքի բան չէ, հեքիմներու հարցրո՞։

ԳԱՍՊԱՐ, մոտենալով։

Լա՛վ է, լա՛վ, բարիշինք. սուտն ու ղուրթը էքուց կու էրևա։

ԷՓԵՄԻԱ, աչքերը սուտ սրբելով և ավելի համարձակ։

Բարիշինք, չբարիշինք, դուն քու խասիաթը չիս փոխի. մե անմիղ բանի վրա էլի էս կուլի... (Վեր կենալով և սուտ լալով։) *Կաշեմես դուս իմ գալի, վուր քիզ դուր գամ ու դուն կի քու վարմունքով հոքիս հանում իս։*

Մի կողմ ծիծաղում է։

ԳԱՍՊԱՐ

Վա՜հ, բարիշինք, ասում իմ, է՛լի, վա՜։

ԷՓԵՄԻԱ, շարունակելով։

Ջեհել օրս սիվցրի քիզ համա. դուն կի մե օր չէլավ մե շառ չմոգոնիս գլխիս... (Աչքերը սրբում է։) *Բաս վուտներուս տակ մեքաշ վուր մե մարթ ննգնի, էնչախն ի՞նչ կ՝ոնեիր։*

ԳԱՍՊԱՐ

Քիզ էլ կու սպանեի, նրան էլ։

ԷՓԵՄԻԱ

Ա՛յ, արթար դադաստան. չիս ի՞նչ միղ կունենեի։

ԳԱՍՊԱՐ

Էն միղը, վուր հիդը խոսելիս՝ ով գիդե ի՞նչ իս ասի նրան, յա աճկ ու ունքդ ի՞նչ հանգը խաղցրի։

ԷՓԵՄԻԱ

Ա՜խ, աստուած, դուն խո իմանում իս ու տեսնում իս էստունք, մե հոքիս հանե ու պրծնիմ էս աշխրքեմեն։

Ընկնելով աթոռի վրա, աչքերը սուտ սրբում է։

ԳԱՍՊԱՐ, նստելով մոտը։

Լա՛վ է, լա՛վ, թա՛ղը տու... (Էփեմիան շարունակում է աչքերը սրբել։) *Բարիշինք, ասում իմ...* (Կուրը նրա պարանոցին գցելով։) *Ահա՜...* (Համբուրում է։) *Ըհա՜... դուն էլ պա՛չ արա, է՞... Չիս ուզո՞ւմ։*

Գնում, ծածկում է գլխարկը։

ԷՓԵՄԻԱ, վեր կենալով։

Տանը, տանը, հորես գու քան։

ԳԱՍՊԱՐ

Ով գուզե, գա... Կովիլն է ամութ, բարիշիլն ի՞նչ ամութ է. թեզուզ հարուր հոքի գա։

ԷՓԵՄԻԱ

Քիմեն խո չիմ պրծնի ու...

Այս ու այն կողմը նայելով, ընկնում է նրա գիրկը։

ԳԱՍՊԱՐ

Էտենց, ա՛յ.... (Համբուրելով։) *Քու հոքուն մեռնիմ, Փեփել ջան. առանց քիզ չիս վո՞ւնց կու դիմնամ։*

ԷՓԵՄԻԱ

Դենը գնանք, դենը... (Վերցնելով ծաղիկները, գնում է նրա հետ դեպի աջ, ճանապարհին այս ու այն կողմ է նայում և հանկարծ վրա ընկնելով։) *Ահա՜...*

Պինդ համբուրում է ամուսնուն և դուրս վազում այն կողմից։

ԳԱՍՊԱՐ, մենակ նայելով կնոջ հետևից։

Մտիկ, է՞... Ը՛մ, ը՛մ... (Սաստիկ զգացված և ձայնը երկարացնելով)։ *Ճիրիմե շենի, Փեփել ջա՜ն...* (Շարունակում է նայել։) *Ը՜հմ...*

Դուրս է նետվում կնոջ ետևից։

ԱՐԱՐՎԱԾ ՁՈՐՐՈՐԴ

Երրորդ արարվածի տեսարանը անփոփոխ: Անիվը (չարխը) մնում է անշարժ: Ցերեկ է, մոտավորապես 5—6-ը ճաշից հետո:

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ՇԱՔԱՐՈՆ, ՆԱՏՈ, ՄԵԼՔՈ

(Խոսելով գալիս են աջ կողմից:)

ՄԵԼՔՈ, գլխարկը ձեռին, Նատոյին:

Էտ չէլավ, Նատո ջան. թավաթ առանց էտ էլ տանջվում իմ, վուր քիզ էտ օրը գցեցի ու հիմի պակասը թամամ ըլի՞... (Շտաբառն, առաջ գալով, գնում, նստում է նախաբեմի աջ կողմը:) *Խնդրանքս դաբուլ կոնե՞, վուր յիս էսղադա կարողութին ունենամ, էսքան փուղիր ըլիմ բաժնում աչ ու ձախ ու դուն գնաս քու հորանց տանը կարիքումն ապրի՞ս... Ցա ամութ չէ՞ ինձ համա, վուր էլ վունց իմ տուն ու տիղս իս լայիղ անում, վունց ինձմեն մե անմիղ խարջլուխը՞... Էտենց էլ սիրաթս գնա՞ցած իս համարում ի՞նձ... Խալխն ի՞նչ կոսե։*

Նստելով ձախ կողմը, գլխարկը վայր է դնում և նշանացի ճրավիրում է Նատոյին ևս նստել:

ՆԱՏՈ, նստելով:

Խալխի ասակոսեմեն յիս ավելի իմ տանջվում, ո՞վ է ինձ օտկում. համ էլ ի՞նչ նամուս է՝ կնգութին չանիմ քիզ ու՝ կամ տուն ու տիղդ վայիլիմ, կամ կարողութինգ։

ՄԵԼՔՈ

Լա՜վ, վուր չգնամ, էնչախն ի՞նչ կոնիս։

ՇԱՔԱՐՈՆ, Նատոյին:

Աբա՛, վուրթի... (Վեր կենալով:) *Հիմի յիս էլ չիմ սազ գալի էստի. մարթ ու կնգա խոստովանքը վկա չի սիրի... Թե հարկավուր էլա, գիդենաք էստի մոտիկ իմ, յա ախչկաս մոտ կուլիմ։*

Դուրս է գնում ձախ կողմից:

ՏԵՍԻԼ Բ

ՆԱՏՈ, ՄԵԼՔՈ

ՄԵԼՔՈ

Ասա՛, է՛, էնչախն ի՞նչ կոնիս, վուր չգնամ։

ՆԱՏՈ

Էտ քու կամքն է... Կամենաս գնա՛, կամենաս մնա՛. վունցոր կամենաս. է՛ենց ժամ արի. ինձ համա հիմի դիփ մեկ է... (Մեքֆոն փոքր ինչ շփոթվում է:) *Մի՛ նիղանա, խնդրում իմ, լավ է դրուստ խոսիմ, կանց խափիմ քիզ... Յիս ուզում իմ՝ էսօր էվետ գնաս իմ հորանց տուն, եթե քու կամքն էլ կուլի, վունցոր մեկ ասիլ իս ու խոստացիլ իս... Դուն դիդիս՝ ի՛նչ կնգութին իմ արի քիզ, հենց բռնե պաշտիլ իմ քիզ, վունցոր մե սուրփ պաշտին։*

ՄԵԼՔՈ

Գիդիմ, գիդիմ։

ՆԱՏՈ, շարունակելով:

Ամա շատ չալիշ էկա, շատ տանջվեցա, սիրելով չկանացի սիրի քիզ, վունցոր մե կնիկ իր մարթուն պիտի սիրի։

ՄԵԼՔՈ

Էտ էլ գիդիմ։

ՆԱՏՈ

Էստու համա, գուզիս սպանե ինձ էս սահաթիս ու շատ լավ էլ կոնիս, վուր սպանիս. տիղեմես չիմ ժամ գա, երդինք վկա, իմ տանջաքեմեն կու ազատիս ինձ։

ՄԵԼՔՈ

Ինչի՞ր իս ասում, Նատո ջան... Ի՛նչ ձեռնեմես լավութին է գալի, ի՛նչ ջանումս ջան կա, վունչիչ չիմ խնահում քիզ, դուն կի էտունք իս ասում... Էս օրերումը, դիդիս, Փռանգստուն իմ գնում... Ո՞վ գիդե էլի սաղ հիդ գու

քա՜մ, էլի կու արժանանա՜մ քու տիսին, թե չէ՝ էտ մենակ աստՃուն է հայտնի... Ցիս ուզում իմ՝ ամեն բաբաթ բախտավուր ըլիս ու ինձմեն ջնորհակալ, վունչչեն վունչիչ չպակսի քիզ։

ՆԱՏՈ

Վունչիչ չիմ ուզի քիմեն՝ վո՛ւնց տուն, վո՛ւնց տիղ, վո՛ւնց փուղ, վո՛ւնց դովլաթ. մե բան իմ խնդրում մենակ, մե՛նակ մե բան... Ումիկ ունիմ քու բարի սրտեմեն, կու կատարիս խնդիրքս, թե գուզիս իմ բախտավուրիթինը։ (Ոտի կանգնելով։) *Տո՛ւ ինձ իմ հոքու հանգստութինը։*

ՄԵԼՔՈ, լուռ նայում է Նատոյին երկար ժամանակ, հետո նույնպես ոտի կանգնելով։

Ո՞վ է խլում քիմեն, Նատո ջան, քու հոքու հանգստութինը, յա ի՞նչն է նիղացնում քիզ ինձ մոդ։

ՆԱՏՈ

Ինձ նիղացնողը էն կապանքն է, վուր ջնջլով կապում է ինձ քիզ հիդ ու հանգստութին չէ տալի վո՛ւնց հոքուս, վո՛ւնց սրտիս... Տո՛ւ ինձ իմ ազատութինը։

ՄԵԼՔՈ

Քու ազատութինը՜...

ՆԱՏՈ

Հա՜, իմ ազատութինը. առանց էն՝ էլ չիմ կանացի ապրի։

ՄԵԼՔՈ, փոքր լռությունից հետո։

Հը՜մ... Համեցե՛ք... Ջուիտ աճկիս... (Բռնելով Նատոյի ձեռը։) *Թաք դուն բավական ըլիս ինձմեն. յիս վունչիչ չիմ խնահի՝ վո՛ւնց փուղ, վո՛ւնց աշխատանք, թե կու ընթունիս...* (Նատոն համբուրում է Մելքոյի թևը, սա նրա գլուխը։) *Նստի՛ էստի, նստի՛...* (Նատոյին նստեցնում է և ինքն էլ նստում է։) *Ցիս կու խոսիմ քի մոդ չէ թե վունցոր քու մարթը, ամա, գիդե արարիչը, վունցոր քու հալալ հերը... էն ազատութինը, վուրնոր իմ ձեռին է, յիս խստակ սրտով տալիս իմ քիզ, վունցոր ասի... Գնա՝ ի՛նչ գուզիս արա, ի՛նչ քեփդ տա, կատարե, վո՛ւնցոր գուզիս ժաժ արի. քու լավ արարմունքի վրա յիս կու ուրախանամ, վունցոր քու հերը կու ուրախաներ... Ավատացած իմ, վուր քու օրումը փիս բան, կիխտուտ բան, ճոշալու բան չիս բռնի ու վրետ օչովի չիս խոսեցնի... Ամա էն ազատութինը, էն թամամ ազատութինը, վուրի համա աշխարք ու յիրգիր գլուխ ին կոտրում ու իմ խիլքով էլ քիզ հարկավուր է, իմ ձեռին չէ ու առանց մե մինձ*

բեդնամութենի չէ կատարվում... էս բեդնամութինը վո՛ւնց դուն լայիզ կոնիս, վո՛ւնց յիս, վո՛ւնց դուն կու վիզ կալնիս, վո՛ւնց յիս... (Դադար։) *Շատ կան քիպեսնիրը, վուր մարթուն ինքնակամ թողնում ին, նրա էրեսը չին էլ տեսնում, գնում ին, ա՛ռանց ազատութենի, ուրիշի հիդ ին ապրում, վունցոր ուզում ին. յա նրանց վրա վաթարնիրն ասա՝ վուր հա՜մ մարթու մոդ ին ապրում, համ մարթումեն թաքուն ուրիշին սիրում, ուրիշի հիդ քեփ անում ու ղող անում... Դո՛ւն, Նատո ջան, էտ հանգի ախչիկ չիս, էտ հանգի բան չիս անի, կու ճանչնամ քիզ, չի՛ս կանա անի...*

ՆԱՏՈ

Գիդինը վուր մտնիմ, էն լավ է։

ՄԵԼՔՈ

Էտումը քու մագիեր յիս կանամ օրթում ուտի։

ՆԱՏՈ

Իմ խիլքով՝ գուղութինն ու ավազակութինը ավելի պստի միխկ է աստՃու առաչ, կանց կնիկարմատը անհավատարիմ ըլի իր մարթուն ու էլի նրա մոդ ըլի կենում, նրա կայինքն ըլի վայիլում։

ՄԵԼՔՈ

Ա՛ֆերիմ, Նատո ջան... էտենց էլ տղամարթն է իր կնգան պարտական։

Նատոն թեթև գլուխ է տալիս։

ՏԵՍԻԼ Գ

ՆՐԱՆՔ, ԱՅԳԵՊԱՆ, ՇԱՌԱ

ԱՅԳԵՊԱՆ, ձախ կողմից բերում է մեծ խախալով ամենարնտիր մրգերեն, ծաղիկներով զարդարած։

Աղես ու ախչիկ-պարունս սաղ ըլին։

ՄԵԼՔՈ

Շա՛տ ապրիս, Սիմոն, ախչիկ-պա՛ռնին թավազա արա...

Այգեպանը խախալը տանում, դնում է Նատոյի առջև։

ՆԱՏՈ, այգեպանին:

Շնորհակալ իմ, Սիմոն։

Ծառան, նետելով այգեպանին, սկուտեղով բերում է հարկավոր սպասները և դասում է Մելքոյի և Նատոյի առջև:

ՄԵԼՔՈ, Սիմոնին:

Յիս էլ շնորհակալ իմ, Սիմոն... (Փող է տալիս:) *Աըհա՜, գնացեք քե՛փ արեք, ախչիկ-պարնի կինացը դի՛փունքդ խմեցեք։*

ԱՅԳԵՊԱՆ, առնելով փողը:

Էրկուսդ մետի կինոք ըլիք, վուչ կտրվիք մեկզմեկեմեն։

ՄԵԼՔՈ

Սա՛ղ ըլիս, Սիմոն. աստուձ քիզ ջան տա ու դուն էլ էրգար օր ունենաս... Ջարխն ինչի՞ չէ բանում։

ԱՅԳԵՊԱՆ

Մինձ աղեն հրամայից... Բաղը դիփ մետի ջրած է ու հարևնի հիրթը մթանն է գալի... Դրա ճոճոուցը խոսիլը դաշլա է անում էստի։

ՄԵԼՔՈ

Լավ, իրիգնահացութին վի՛ր թող, միթամ զուռնա է միզ համա։

ԱՅԳԵՊԱՆ

Ջուխտ աճկիս։

Դուրս է գնում ձախ դռնից:

ՏԵՍԻԼ Դ

ՆՐԱՆՔ, առանց այգեպանի:

ՍԱՌԱ, որ հավաքում էր դատարկ բասերը և ըմպանակը սկուտեղի վրա, տեսնելով Նատոյի բասը լի և անշարժ:

Ա՛խչիկ-պարուն, էս տանի՞մ, թե կենա։

ՆԱՏՈ

Տա՛ր, էլ չիմ ուզում։

ՄԵԼՔՈ, Նատոյին:

Ջայ խո կուխմի՞ս ինձ հիգ։

ՆԱՏՈ

Ինչի՛ չէ, ուրախութենով։

ՄԵԼՔՈ, ծառային:

Էտ տա՛ր, չայ բի՛, հենց ապրիս. մեկն էլ ինձ համա։

ՍԱՌԱ

Հրամիլ իս, աղա։

Բասերը և ըմպանակը սկուտեղով դուրս է տանում ձախ կողմից:

ՏԵՍԻԼ Ե

ՄԵԼՔՈ, ՆԱՏՈ, հետո ՏԻԳՐԱՆ

ՄԵԼՔՈ, ժոտենալով Նատոյին, ցույց է տալիս միրգը:

Ա՛նուշ արա, Նատո ջան, լավ միրք է։

ՆԱՏՈ

Շնորհակալ իմ։

ՄԵԼՔՈ

Բեդամաղ իս ինձմեն, Նատո ջան. յիս միզ չունիմ, ավատա՛... էրանի փուղի բան ըլի մենակ, վունչիչ չիմ-խնահի քիզ համա, քու արիվը գիրենա ու ջերգինը վկա, ամա անուանի կուաթիրը գժար է, թե չէ յադերուն օտկում ըլիմ ու քի պետկ չգա՞մ։

ՆԱՏՈ

Մե բանը վուր աշխարհովի ըլի, դուն ի՞նչ անխա. իմ ճակտին հալբաթ էսենց էր գրած։

ՏԻԳՐԱՆ, ձերս գալով ձախ կողմից:

Աղա՛, լոքոն ճարեցի... Մե լոք՛ս է, մե լո՛քս, վուր քեզ գու քա... Ասի վուր առանց ձիզ չմորթին։

ՄԵԼՔՈ

Շատ ապրիս, Տիգրան ջան... էտու սիրտ չունիմ. դուն մորթիլ տու, վունցոր գուզիս։

ՏԻԳՐԱՆ

Իրիգնահացի սուփրեն վո՞ւրդի գցիլ տամ։

ՄԵԼՔՈ

Է՛ստի, է՛ստի... (Տիգրանը դուրս է գնում ձախ կողմից: Նատոյին:) *Կուլի դուն գուզեիր լոքոյի մորթելուն թամաշ անիս. թե սիրտդ տալիս է, գնա՛նք։*

ՆԱՏՈ

Չէ՛, շնորհակալ իմ. էտու սիրտ վո՛ւնց յիս ունիմ... (Մի կողմ:) *Օմքին ըլի ինձ մորթե։*

Մելքոն, լուռ անց ու դարձ անելով, խորասուզվում է մտածմունքի մեջ:

ՏԻԳՐԱՆ, կողմանոցում:

Մո՛ւլափ, էտ ո՞ւր իս գնում... Հա՛, հա՛. է՛ստի կաց... (Վերադառնում է ձախ կողմից:) *Աղա՛, հարևնի բաղմնչին է, ուզում է ձիզ տեսնի։*

ՄԵԼՔՈ

Ի՞նչ խաբար է։

ՏԻԳՐԱՆ

Խնդրում է, վուր չարխը վիր թողնին. էրկու սահաթվան էդնեն իմ հիրթն է, կոսե։

ՄԵԼՔՈ

Ո՞վ է խլում նրամեն իր հիրթը... Մե սահաթ էլ չի քաշի՛ էտենց։

ՏԻԳՐԱՆ

Ասինք. օչովի չի ավտում, ուզում է ձիզմեն խոսկ ունենա... Քիչ պըրծավ, էստի էր տուն ննգնում։

ՄԵԼՔՈ

Կու ճանչնամ, խիստ կոպիտն է... Գնա՛ ասա՝ գալիս իմ... Դուն նրան դի՛վիր տար էնդի մառանը, գինի՛ խմեցրու, էս սահաթիս գալիս իմ։

Տիգրանը դուրս է գնում ձախ կողմից:

ՏԵՍԻԼ Զ

ՄԵԼՔՈ, ՆԱՏՈ

ՄԵԼՔՈ, գլխարկը ծածկելով:

Սամա քի մենակ վո՞ւնց թողնիմ։

ՆԱՏՈ

Ի՞նչ հաջաթ, կէհամ Փեփելի մոդ. էլաիտ էնդի չէ՞ր քու ախպուր հի՛դ։

ՄԵԼՔՈ

Լա՛վ, լա՛վ, ա՛րի տանիմ քիզ նրանց մոդ։

ՆԱՏՈ, վեր կենալով:

Էլ դուն ո՞ւր իս նիղանում, մենակ չի՛մ կանա էհա՛. էրեխա խո չիմ։

ՄԵԼՔՈ, առնելով թևը:

Կուլի էնդանց հիռացան հիմի, մենակ ինչի՞ էհաս։

ՆԱՏՈ, թեակցած, հասնելով աջ կողմանոցին:

Ա՛յ, հորեն էրկուսը մետի։

Թողնում է Մելքոյի թևը:

ՄԵԼՔՈ

Քու քեփն է. հիմի արխային իմ... Զայն էնդի կու ղրգիմ, նրանց համա էլ... էս սահաթիս գալիս իմ. մե էն մարթուն հանգստացնիմ... Քու ազատութենի վրա էլի կու խոսինք. ինչրու դուն փի՛քր արա ու վճռե. ինչ ազատութին էլ խոստացա ու իմ ձեռին է, ուրախութենով կու տամ։

Մի փոքր նայելով Նատոյի ետևից, որ մտնում է աջ կողմանոցը, դուրս է գնում ձախ կողմից:

ՏԵՍԻԼ Է

ՆԱՏՈ, մենակ: Մի քանի վայրկյանից հետո զգուշությամբ վերադառնում է աջ կողմից, բայց ուրիշ ճանապարհով, այս ու այն կողմ է նայում, գնում, նստում է իր տեղը և մտածմունքի մեջ ընկղմվում երկար ժամանակ:

Ինչ ազատութին էլ խոստացա, ուրախութենով կու տամ, ասում է... (Տեղից վեր կենալով:) *Էտ ի՞նչ ազատութին է... էտենց խոմ յիս հիմի էլ իմ ազա՛տ. յիփոր ուզում իմ, դուս ու տուն իմ անում, ուրոր ուզում իմ,*

գնում ու գալիս իմ, ում հիդ ուզում իմ, խոսում իմ ու ման գալի ու հազար էս հանգի բանիր... Էսենց խոմ ամեն մարթ ազատ է ու ազատ... Ազատութին վուր ուզում իմ, չիս էն ազատութինն իմ ուզում, վուր պատիվս իստակ պահելով, կանենամ ազատ վայելիմ իմ գլուխը, օչովի ճոշալու ու բամբասելու չըիմ. խայտառակութենեմեն ազատվիմ, չէ՛ թե ավելի մինձ խայտառակութին բարցիմ վրես... Կանենամ ճակատս բաց՝ ազատ սիրի նրան, ումը սրտումս իմ սիրում մենակ. մեկի կնիկ չըլիմ ու մեկելին սիրող... էն ազատութինը ինձ չին տալի... Սիրտս իրն է ասում, մարթիք իրանցը...— Գ'ուզիս, թե չիս ուզի, պիտի քու մարթուն սիրիս, ասում ին...— Վո՞ւնց սիրիմ, վուր չիմ սիրում ու չիմ կանացի սիրի...— Ջոռով սիրիլ կուլի՞... Մի՞թե աստձուն դուրեկան է, մի՞թե մահացու միիկ չէ, վուր սրտումս մեկն ըլի նստած, սաղ հոքիս նա ունենա բռնած ու մարմնով չիս մեկելինն ըլի՞մ... Ամեն օր, ամեն ահաթ խափում ըլիմ իմ մարթուն ու տանջվում ըլիմ էսենց, վունցոր հիմի իմ տանջվո՞ւմ... էլ չիմ կանացի դիմնա էս տանջանքին, էս ստութենին... Մահը ավելի հիշտ է ինձ համա... (Մոածմունքի մեջ է ընկնում:) *Հա՛, հա՛, է՛ս է, է՛ս. զարթնի մահը ուրիշ ճար չկա ինձ ազատվելու... էս է մենակ իմ փրկութինը. էնենց կու ազատվիմ, վուր վունց մե ազատութին չի գա հիդը... Ուրիշներու համա օրինակ մայինց կուլի, վուր էլ չգնան, ինձպես խփած աճկերով, առանց սիրելու, մենակ հարստութենի էղնեն չնգնին... Խոսկը սե՛րն է էլի, սե՛րը, մենակ սերը, վուր իմ կուրացած խիլքով էնչախը չիս ջեր չէի հասկանում...* (Դարձյալ մոածմունքի մեջ է ընկղմվում:) *Հա՛, մա՛հ, մա՛հ...* (Դադար:) *Մնա՛ս բարով, ազնիվ ամուսին. մնա՛ս բարով, պապի ջան. մնա՛ս բարով, իմ խիղճ դեդի. մնա՛ս բարով, դուն էլ, վուր չիս էլ դիդի, թե ի՛նչքան էի քիզ սիրում ու ի՛նչ կրակ էր վառ սրտումս քիզ համա...*

Գնում է դեպի խորքը. ճահապարհին նայելով աջ կողմանցին, ճանկարծ շփոթվում է:

ՏԵՍԻԼ Ը

ՆԱՏՈ, ԷՓԵՄԻԱ

Էփեմիա. անմիջապես ներս գալով աջ կողմից:

Ի՞նչ իս շինում էստի մենակ... Թե՞ գալիս էիր միր կուռը... Քու դարդուտ սրտով դիփունիս դարդոտեցիր։

ՆԱՏՈ, ուրախ ձևանալով:

Ո՞վ է դարդուտ, ի՞նչ իս ասում. ա՛յ թե դարդուտ իմ... (Բռնում է նրան և հետը պարելով վա՛լս:) *Թրա լա լա, թրա լա լա, թրա լա լա, թրա լա լա...*

ԷՓԵՄԻԱ

Հե՛ռիք է, հե՛ռիք, դաթրեցա...

ՆԱՏՈ, շարունակելով հետը պարել:

Թրա լա լա, թրա լա լա, թրա լա լա...

ԷՓԵՄԻԱ, նույնպես:

Հորես վեր կու ննգնիմ...

ՆԱՏՈ, նստեցնելով նրան նստարանի վրա:

Թրա լա լա, թրա լա լա...

Նստում է նրա կողքին:

ԷՓԵՄԻԱ

Ո՛ւֆ, քիչ պրծավ սպանեցիր ինձ։

ՆԱՏՈ, Ծիծաղելով:

Հա՛, հա՛, հա՛, հա՛...

ԷՓԵՄԻԱ

Ի՞նչ իս ծիծաղում, դուրթ իմ ասում։

ՆԱՏՈ, շարունակում է ավելի երկար ծիծաղել:

Հա՛, հա՛, հա՛, հա՛...

ԷՓԵՄԻԱ

Ա՛րի գնանք, է՛նդի ծիծաղի. կու ուրախանան։

ՆԱՏՈ

Գնա՛ ասա՝ էստի գան. թե գուզին, նրանց հիդ էլ պար գու քամ... (Դարձյալ ծիծաղում է:) *Հա՛, հա՛, հա՛...*

ԷՓԵՄԻԱ, վեր կենալով, առաջին:

Խիլքեն էլիլ է։

Մի քանի քայլ գնում է դեպի ձախ կողմը. Նատոն սարսում է, բայց տեսնելով, որ ճանապարհին նա ճանկարծ միտքը փոխում է և դուրս գնում աջ կողմից, ճանգստանում է:

ՏԵՍԻԼ Թ

ՆԱՏՈ, հետո ԳԱՅԻԱՆԵ, ՏԻԳՐԱՆ առանց գլխարկի, ՄԵԼՔՈ, գլխարկով:

ՆԱՏՈ, մենակ: Վեր կենալով տեղից, լուռ այս ու այն կողմն է նայում:

ՄԵԼՔՈ, նույն միջոցին ձախ կողմանոցում:

Ախար, դուն ո՞ւր իս նիղանում, ի՛ս տու էստի։

ՏԻԳՐԱՆ, նույն տեղ:

Վա՛, վա՛, վա՛... Չիմ տուր տա, ձիր արիվը։

Նատոն հանկարծ վազում է դեպի խորքը, ուր պատահելով իր մորը, որ գայլս էր ձախ կողմից, գրկում, համբուրում է նրա կուրծքը, այդուց թքոչում է գետափը և նետվում դեպի գետը:

ԳԱՅԻԱՆԵ, ճչալով:

Ա՛հ...

Ուշաթափ վայր է ընկնում գետնին:

ՏԻԳՐԱՆ, առանց գլխարկի, որ նույն միջոցին բերում էր ձախ կողմից շորս բաժակ թեյ պաֆսիմատներով, նկատելով Նատոյի գործողությունները, ձգում է սկուտեղը և ճչում:

Օտկեցե՛ք...

Թռչում է գետափը և վազում դեպի Նատոն:

ՄԵԼՔՈ, որ Տիգրանի ձայնի վրա, գլխարկը ձեռին, դուրս է վազում ձախ կողմից:

Վա՛հ... (Ճչալով:) *Օտկեցե՛ք...*

Զգում է գլխարկը, նույնպես թռչում է այդուց գետափը և վազում դեպի Նատոն:

ՆԱՏՈ, Տիգրանին, որ մի ակնթարթում հասնում է նրան գետեզրին և բռնում թևից:

Թո՛ղեք, թո՛ղեք...

ՏԻԳՐԱՆ

Կու խիխտվիմ ձիզ հիդ ու ձիզ մենակ չիմ թողնի։

ՄԵԼՔՈ, հասնելով Նատոյին:

Նա՛տո ջան, Նա՛տո ջան, ո՛ւշկի արի, ի՞նչ իս անում... (Տիգրանին:) *Մե ստաքան ջուր...* (Տիգրանը վազելով, գրպանից հանում է գմելին, անիվից կտրում է ջրով լի մի կուտալ և տանում դեպի Նատոն: Առնելով կուտալը:) *Ցիս կու խմեցնիմ, դուն մե ձալոյիս ի՛մաց արա, հենց ապրիս. էտի շար-խեյվնումն է իմ ախպուր հիդ։*

Կուտալից խմեցնում է Նատոյին. Տիգրանը դուրս է վազում գետափի աջ կողմից:

ՏԵՍԻԼ Ժ

ԳԱՅԻԱՆԵ, ՇԱՔԱՐՈ, այգում, ՆԱՏՈ, ՄԵԼՔՈ, գետափում:

ՇԱՔԱՐՈ, Մելքոյի ձայնի վրա նեռս վազելով ձախ կողմից:

Վա՛հ... (Աշխատելով ուշաբերել Գայիանեին:) *Գա՛յիանե, Գա՛յիանե...* (Վազում է անիվի ջրփոցից բռնով ջուր է բերում* և Գայիանեի երեսին սրսկում:) *Գա՛յիանե, ո՛ւշկի արի... Գա՛յիանե...* (Ցնցելով Գայիանեին:) *Ցիս իմանո՞ւմ, քիզ իմ ասում...*

ԳԱՅԻԱՆԵ, ուշքի գալով:

Ըհա՛, բա՛... Նա՛տոս, Նա՛տոս։

ՇԱՔԱՐՈ

Հորեն Նատոն, ի՞նչ իս ասում։

ԳԱՅԻԱՆԵ

Աբա՛, աբա՛...

ՇԱՔԱՐՈ, մատնանիշ անելով Նատոյին, որ գետափում Մելքոյի հետ թևակցած գնում է դեպի մի մեծ քար:

Վա՛, ա՛յ, իր մարթու հիդ։

ԳԱՅԻԱՆԵ

Մամի ջան...

Հափշտակված համբուրում է ձեռները:

* Ցմոռանալ, որ անիվը չէ բռնում և ջրփոցը լի չէ։

ՇԱՔԱՐՈ, տեսնելով ձգած սկուտեղը:

Էս ի՞նչ խաբար է։

ԳԱՅԻԱՆԵ

Կոսիմ, կոսիմ... Մե ձեռդ ի՛ս տու... (Շաքարոյի օգնությամբ ոտի է կանգնում:) *Գնանք ջեր մե դոշիս կպցնիմ Նատոյիս։*

ՇԱՔԱՐՈ, մինչդեռ Մելքոն ելնելով աթոռի վրա փոռում է իր թաշկինակը և Նատոյին վրան նստեցնում:

Վո՞ւրդանց վուրդի պիտի դնաս, ի՞նչ իս ասում... (Բռնելով նրան թեվից:) *Արի ջեր մե դնչացի. թե ինքը չի գա, յիս կու բերիմ նրան քի մոդ...* (Նայելով սկուտեղին, առանձին:) *Էստի ինչոր փիս բան է անց կացի...* (Քաղցրությամբ Գայիանեին, որ կանգ առնելով կրկին ետ է նայում Նատոյի կողմը:) *Ա՛րի, ա՛րի...*

Գայիանեին դուրս է տանում ձախ կողմից։ Այդին մնում է դատարկ:

ՏԵՍԻԼ ԺԹ

ԼՈՒՍԻ ՏԵՍԱՐԱՆ ԳԵՏԱՓՈՒՄ

ՆՐԱՆՔ, ԷՓԵՄԻԱ, ԳԱՍՊԱՐ, ՏԻԳՐԱՆ

Էփեմիան, Գասպարը և Տիգրանը վազելով գալիս են գետափի աջ կողմից և իսկույն շրջապատում Նատոյին, որ բռնելով Էփեմիայի ձեռը ոտի է կանգնում, Մելքոն սրտագին համբուրում է Տիգրանի ճակատը: Նատոն տեսնելով այդ համբույրը, ձեռը տանում է ճակատին և գլուխը ետ ձգում, Էփեմիան և Գասպարը մնում են շվարված: ՊԱՏԿԵՐ:

ԱՐԱՐՎԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Նախընթաց արարվածի տեսարանը մնում է անփոփոխ Թեև բոլորովին լույս է, բայց Զ-դ ՏԵՍԻԼԻՑ (ՄԵԼՔՈ, ՆԱՏՈ) երկնքումը սկսում է փայլել նորածին լուսինը, որ հետզհետե բոլորովին աննկատելի կերպով կամաց-կամաց առաջ է գնում բնական ընթացքով: Անիվը (շարխը) աճշարժ է մինչև վերջի ծանոթությունը: Այդին մաքրած է Տիգրանի ձգած իրեղեններից: Ժամանակը մոտավորապես ժամը 6—7-ն է երեկոյան:

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ՄԵԼՔՈ, ՆԱՏՈ, ՏԻԳՐԱՆ

(Գալիս են աջ կողմից:)

ՄԵԼՔՈ, մտնում է թևակցած Նատոյի հետ, հետո թողնում է նրան և բռնում Տիգրանի ձեռը: Նատոն նստում է:

Ցարաբ ի՞նչ տղա իս, Տիգրան ջան... Աստուած քիզ իմ ուրախութենի է ստիղծի... էնղադա ամագ իս դրի իմ առուտուրը ծաղկեցնելու համա. էն հերիք չէր, հիմա սրան էլ մահեմեն ազատեցիր... Ցիս վո՞ւնց պիտի վչարիմ քու լավութինը... (Փաթաթվում, համբուրում է Տիգրանին. սա կամենում է համբուրել նրա ձեռը:) *Ի՞նչս անում, ի՞նչ...* (Խլում է ձեռը. Տիգրանը համբուրում է նրա ուսը:) *Աստուած բախտավուրե քիզ, վունցոր քու սիրտը գուզե...* (Նատոյին:) *Նատո ջան, դուն էլ շնորհակալութին արա, է՛. կինքդ ազատից։*

ՆԱՏՈ, զսպելով իրան, ոտի է կանգնում:

Շնորհակալ. իմ, պարուն Տիգրան. բախտավուր ըլիք, վունցոր ձիր մոր սիրտը գուզե։

Մեկնում է ձեռը:

ՏԻԳՐԱՆ, համբուրելով Նատոյի ձեռը:

Ցիս իմ պարտական ձիր օջախին։

ՆԱՏՈ, թեթև գլուխ է տալիս Տիգրանին, հետո դառնալով Մելքոյին:

Էս սահաթիս գալիս իմ, գնամ մորս տեսնիմ. ուշկ ու միտկը ինձ մոդ կունենա... (Մոտենալով նրան և ցածր:) Գու քամ ու դիփ կու պատմիմ, վունցոր խոստացա։

ՄԵԼՔՈ, Նատոյին:

Էրկու խոսկ էլ, խնդրում իմ՝ (Նշանացի նրավիրում է նստել:) անգամ դնիս... (Նատոն նստում է: Դառնալով Տիգրանին:) Քու խոնարհութենով, Տիգրան ջան, ու հավատարմութենով շատ վուխտ է սիրտս գրված ունիս. ամա էսօր չափն անց կացրիր... Քանի ժամանակ է ուզում իմ քիզ մե բան ասիմ... Էսօրվան վրա լավ օր չիմ գթնի, հալիր ախչիկ-պարունն էլ էստի է. թո՛ղ նա էլ իմանա՝ ինչդագա լավութին ունիս ցանած ինձ մոդ ու վունց իմ գին դնում ցիս քու ամագն ու հալալ աշխատանքը... Ցիս ուզում իմ, Տիգրան ջան, իմ մաղագինի հեսաբումը հալալ ննգիր շինի քիզ իմը. ի՞նչ կոսիս... (Տիգրանը կամենում է համբուրել Մելքոյի ձեռը, բայց սա թույլ չէ տալիս և համբուրում է նրա հակատը, Տիգրանն էլ համբուրում է նրա կուրծքը:) Գնա՛, վուրթի, աստուծ բարի վայելումը տա. փուղը իմը, ջանը քունը։

Նատոն ոտի է կանգնում:

ՏԻԳՐԱՆ

Կինոք ըլիք. աստուծ ինձ շնուրք տա, վուր կանենամ պարզ էրես դուս գամ ձիզ մոդ։

ՄԵԼՔՈ

Ապրիս, Տիգրան ջան։

ՆԱՏՈ, Մելքոյին:

Հիմի գնամ, թե կամք կու տաս։

ՄԵԼՔՈ

Համեցե՛ք, խնդրում իմ։

ՆԱՏՈ

Էս սահաթիս գալիս իմ։

Դուրս է գնում ձախ կողմից:

ՏԵՍԻԼ Բ

ՄԵԼՔՈ, ՏԻԳՐԱՆ

ՄԵԼՔՈ

Իրիգնահացն ասի՞ր, վուր էստի գցի՞ն։

ՏԻԳՐԱՆ

Հրամանք իս։

ՄԵԼՔՈ

Էլ ի՞նչ հրամանք իս, Տիգրան ջան... Հորեսի դենը ննգիր ինք... Էսօրվան քու ջափի համա ու ղոչաղութենի համա խո հինգ հազար էլ շնորհակալութին անիմ, հերիք չէ. վունչիչ շնորհակալութին չի հասնի քու սրտի շնորհակալութենին—հոքի ազատեցիր... Աստուծ ազատե քիզ ամեն փորցանքեմեն, աստուծ քիզ էրգար օր տա, ջան տա ու էտ սրտով պահե... Էստումեն դենը, Տիգրան ջան, մինք չէ թե մենակ ննգիր ինք, դուն ի՛նձ մտիկ արա, վունցոր հալալ քու ախպուրը... Ի՛նչ կանամ, ի՛նչ ձեռնեմես լավութին գա, վունչիչ չիմ խնահի քիզ... Գնա՛, ախպեր, աստուծ մուրազիդ հասցնե, վունցոր քու հորն ու մոր սիրտը գուզե... Ցիս ուրախ իմ, վուր քու լավութինը կանացի մե քիչ էլ է մայինց վչարի։

ՏԻԳՐԱՆ

Իմ մինձ մուրազն էն է, վուր ինձմեն համաշա բավական ըլիք ու կանենամ ձիր կամքը կատարիմ... Հիմի դաստուր տվեք գնամ իրիգնահացի թաղարիկը տեսնիմ։

ՄԵԼՔՈ

Լա՛վ, լավ, Տիգրան ջան։

Տիգրանը դուրս է գնում ձախ կողմից:

ՏԵՍԻԼ Գ

ՄԵԼՔՈ, մենակ:

Աստուծ էս տղին դուրթ վուր մխիթարութին է տվի ինձ...

Լուռ անց ու դարձ անելով խորասուզվում է մտածմունքի մեջ երկար ժամանակ:

ՏԵՍԻԼ Դ

ՄԵԼՔՈ, ԳԱՍՊԱՐ

ԳԱՍՊԱՐ, մտնում է աջ կողմից և լուռ նայում:

Մելքո՜... Ի՜նչ խուռոր փքրումն իս։

ՄԵԼՔՈ, գլուխը բարձրացնելով:

Չտեսա քիզ... Զալոն ի՞նչ էլավ։

ԳԱՍՊԱՐ

Հարևնի ինգա հիդ նրանց բաղը դուս գնաց... Ցիս դեսը վազեցա՝ մե քու գարդն իմանամ... էս ի՞նչ բան է։

ՄԵԼՔՈ

Ինձ կու սիրիս, ջեր մի՛ հարցնի։

ԳԱՍՊԱՐ

Վունցոր քու կամքն է։

ՄԵԼՔՈ

Նստի՛, նստի՛, Գասպար... (Նստում են:) *Դուն գիդիս, յիս քիզ շատ ինձ սիրում. էստու համա էլ իմ օրումը քիզ իմ դարսողութենումն ու վըճռումը խառնած չիմ, վուր վիրը ղնամիշ անելու վունչիշ չունենաս ինձմեն։*

ԳԱՍՊԱՐ

Գիդիմ, գիդիմ, Մելքո ջան. յիս էլ վունչիշ խորհուրթներով քիզ չիմ նիղացրի ինչրի էսօր։

ՄԵԼՔՈ

Դրուստ է, դրո՛ւստ... Հիմի բանս խիստ դժար տիղն է, Գասպար ջան, էնենց դժար, վուր իմ օրումը վո՛ւնց տեսիլ իմ, վո՛ւնց էլ կու տեսնիմ... Հանած թուրը գլխիս վիրիվը մազով քաշ է արած ու թե մե ճար չգթա, էսօր է թե էքուց, դրուստ գլխումս կու ցցվի... Ուզում իմ ինքս ինձ հիդ, իմ խճպտանքի հիդ մասլահաթ անի ու մենակ վճռի, վուր օշովի չխառնիմ... Թե բանը լավ էկավ, խո շնորհակալ կուլիմ ինքս ինձմեն, մե՛նակ ինձմեն, ու թե վա՛դ, էլ վունչինչ ղնամիշ անելու չիս ունենա ինձմեն. միղավորը իմ գլխի մոդ յիս կուլիմ, էլի մե՛նակ յիս, ուրիշ օշով... Բեղամաղ չըլիս, ինձ կու սիրիս։

ԳԱՍՊԱՐ

Չէ՛, չէ՛, Մելքո ջան. ինչրի էսօր համաշա էտենց իս էլի, վունչիշ չիս կորցրի ու հիմի էլ, ումիկ ասածու. էլի վունչիշ չկորցնիս... Համ էլ իմ խեյրաթը ի՞նչ օգուտ քիզ. լավ ի՞նչ կանամ ասի էն հանգը, վուր դուն ինքդ ինձ վրա լավ չըլիս հասկանում։

ՄԵԼՔՈ, ոտի կանգնելով և առնելով ձեռը:

Շնորհակալ իմ, Գասպար ջան։

ԳԱՍՊԱՐ, նույնպես ոտի կանգնելով:

Ցիս իմ շնորհակալ, Մելքո ջան, վուր ինձ էտենց սիրում իս... էլ գլուխդ չիմ ցավեցնում, թողնում իմ քիզ մենակ քու փքրերու հիդ։

ՄԵԼՔՈ

Ա՛պրիս։

ԳԱՍՊԱՐ

Մի՛ դարդ անի, աստուծ օգորմած է... Մնո՞ւմ ինք թե գնո՞ւմ։

ՄԵԼՔՈ

Մե-մե թիքա կուտինք ու կէհանք, է՛լիս։

ԳԱՍՊԱՐ

Գնամ, կնգաս ազատիմ էն կնգա ասա-կոսեմեն։

Դուրս է գնում աջ կողմից:

ՏԵՍԻԼ Ե

ՄԵԼՔՈ, մենակ:

Օ՜հ, թե ամեն բանում էտենց հիշտ ըլեր աթմորթու ազատիլը, էլ էսղադա չէիր տանջվի... Ջի գիդի թե ի՞նչ ջաղցաքար է գլխիս պտուտ գալի ու տակը ճխլում ինձ.. (Նստում է և կրկին մտածմունքի մեջ է ընկղմվում:) Ա՛խա՜, Մելքո, հիմի դուն գիդիս... Ի՜նչ խելք ուներս ու խճպտանք, ինչ՝ բարութիւն ու նիրա է տվի քիզ աստուած, դիպ մետի մո՛դ արա ու համփիրութենով անցած դի, վուր վունչիշ չտանուլ տաս քու արժանավորութենեմեն... (Ոտի դանգնելով:) Ջա՛լիշ արի, բեղամազ չանիս խղճին... Ի՜նչ ուզե, ի՜նչ ձեռնեմետ լավութին գա, չխնայիս նրան... Ամա նուր ի՞նչ պիտի ուզե... Նրա ուզելուն մե բան է աշխարքումը՝ —իր ազատութինը, իր թամամ ազատութինը, վուր չիս տարի ու չիս ուզում տա... Ինչի՞, մե

տեր հարցնող ըլի... Ինչի՞ր իս ասում թե անումի կոտրիլը դժար է, կոսկ... Թե զուրթ սիրում իս դուն նրան, անումդ էլ նրա չարը տանե, կինքդ էլ ու կայինքդ էլ. ինչի՞ր իս հնարում ու սաբութներու էդնեն ննգի... Ափսուսդ գալիս է, վուր իրմեն զրգվիս, հա՞... Էտենց խո գազանն է վարվում, վուր իրան դուրեկան թիքեն, թռչունք ըլի, թե անասուն, մարթ ըլի, թե ուրիշ կենթանի, ինչրու չճանգե, չխիխտե, չգչլտե ու չկուլ տա, չի դնչանա... Միթամ դուն էլ գազան իս, գազանի հանգը վարվի... Էլ ի՞նչ մարթութին... Ա՛մութ քիզ, ա՛մութ, Մելքո, վուր քու էլած օրումը օչովի բեդամաղ չիս արի, օչովի կինքի վրա, կայինքի վրա աճկ չիս ունեցի ու քու կնգա հիդ, քու սիրած կնգա հիդ կի էտենց իս վարվում... (Դարձյալ նստում է, դադար:) Մարթ իս բանական, մարթավարի էլ վարվի ամեն բանում, է՞... Ինչո՞վ է միղավուր քու կնիկը, վուր չէ սիրում քիզ... Մարթ է ու քիփ. դավի է՞... Ջոռով սիրիլ կուլի՞... Դուն նրան սիրում իս, վունցոր քու աճկի լուսը, ա՞ֆերիմ... Էտ խիստ լավ. ամա նա վուր չէ սիրում քիզ... Էտու դեմ ի՞նչ դիզ կա զարթնի մեկ-մեկեմեն հիռանալը, թեգուզ սիրտդ հազար կտուր էլ ըլի... (Դադար:) Հա՛, ուրիշ ճամփա չկա... (Կրկին ոտի է կանգնում:) Չե՞ վուր նա իր գլխին մե բան բերե, վունցոր էս սահաթիս ուզում էր կատարի, էլ խո հանգիստ չիս կանա ապրի, վունց էլ հանգիստ մեռնի... Կինքդ էլ հառամ կուլի, մահդ էլ... Հորեն գալիս է...

Ձախ կողմից գալիս է Նատոն գլխարկով, վերարկուն ու հովանոցը ձեռին:

ՏԵՍԻԼ Զ

(Այս տեղից երկնքում սկսում է փայլել նոր ածին լուսինը, ինչպես նշանակած է այս արարվածի սկզբում:)

ՄԵԼՔՈ, ՆԱՏՈ

ՄԵԼՔՈ, դեմ գնալով, մինչդեռ Նատոն վերարկուն ու հովանոցը վայր է դնում:

Ա՛րի, ա՛րի, Նատո ջան... (Բռնում է ձեռը:) *Ա՛րի, նստի՛ էստի, ու վունցոր խոստացար, պատմե՛ ինձ՝ ինչի՞ էիր ուզում գլուխդ փչացնի...* (Նստեցնում է Նատոյին բեմի աջ կողմը և ինքն էլ նստում է: Նատոն այս ու այն կողմ է նայում:) *Մի՛ վախենա, օչով չկա։*

ՆԱՏՈ

Ուզում իմ սիրտս խստակ բաց անիմ քի մոդ. չնիղանաս։

ՄԵԼՔՈ

Խոսկ իմ տալի քիզ՝ վո՛ւնց յիս նիղանամ, վո՛ւնց քիզ նիղացնիմ... Ասա՛։

ՆԱՏՈ

Էնենց դառը խոսկ պիտի ասիմ, վուր ամանչում իմ՝ բերնեմես դուս թողնիմ. ամա ինչրու չասիմ, սուտ կուլիմ քի մոդ, վունցոր սուտ իմ էլի ինչրի էսօր։

ՄԵԼՔՈ, զարմացած:

Վո՞ւնց թե սուտ իս էլի... (Ձսպելով իրան և քաղցրությամբ:) *Ա՛սա, ա՛սա...* (Փպիտն երեսին:) *Էտ ի՞նչ բան է... Ի՞նչ գուզե դառը խոսկ ասիս, համփիրութենով կու տանիմ. մի՛ վախենա, սիրտս էսքան իմ լենացրի։*

Երկու ձեռով ցույց է տալիս տարածությունը:

ՆԱՏՈ

Քիզ խափում էի։

ՄԵԼՔՈ, շվարված, ոտի կանգնելով:

Ի՞նչ... խա՛փում էի՞ր...

ՆԱՏՈ

Հա՛, խափում էի ու էս ստութինը ինձ սպանում էր։

ՄԵԼՔՈ

Դո՛ւն... Դո՞ւն... Դո՛ւն ինձ խափում էի՞ր... Քի պես բարի հրիշտակը ինձ խափում է՞ր...

ՆԱՏՈ

Գուրծկով չէ, գիդե արարիչը։

ՄԵԼՔՈ, փոքր լռությունից հետո:

Ավտում իմ... Խոսկով թե կու՛լի։

ՆԱՏՈ

Խոսկով էլ չէ։

ՄԵԼՔՈ, հանգստանալով:

Էտ ի՞նչ հանելուկ է... վո՛ւնց գուրծկով, վո՛ւնց խոսկով... Էտենց վունց էիր խափում ինձ։

ՆԱՏՈ

Մտկով ու սրտով։

ՄԵԼՔՈ, կրկնելով:

Մակով ու սրտո՞վ... (Զարմանք է արտահայտում, հետո մոտենալով Նատոյին, բռնում է նրա ձեռները:) *Ա՛սա, ա՛սա, Նատո ջան, էտ ի՞նչ թազա խաբար է։*

Նատում է:

ՆԱՏՈ

Մեկի սերը ննգավ սիրտս ու գիշիր-ցերեկ տանջվում էի էտ սերը սրտումս պարակելով... (Մելքոն շվարվում է, բայց իրան զսպում է:) *Վո՛ւնց լիզուս էր գորում, վուր ասեի, վո՛ւնց սիրտս էր դիմնում, վուր պահեի...*

ՄԵԼՔՈ, փոքր լռությունից հետո:

Իժում՝ քու սիրածն էլ քիզ է սիրո՞ւմ։

ՆԱՏՈ

Նա իր սիրտը չէ բաց արի ինձ մոդ. ամա խոսկ ու՝ չուղաբի վրա էրեվում է, վուր սիրում է։

ՄԵԼՔՈ, զարմացած և ուսերը վեր քաշելով:

Խո գի՞դե, վուր դուն նրան սիրում իս։

ՆԱՏՈ

Բերնեմես չէ դուս էկի էտ սերը վո՛ւնց նրա մոդ, վո՛ւնց օշովի մոդ։

ՄԵԼՔՈ

Բաս մեկ մեկու հիդ իսկի չի՞ք խոսի ձիր սերի վրա՞... (Նատոն գլուխը բացասական շարժում է:) *Վո՛ւնց դուն, վո՛ւնց նա՞։*

ՆԱՏՈ

Չէ՛, ճշմարտությունը վկա...

ՄԵԼՔՈ, ձայնը երկարացնելով:

Հը՛մ... (ձկույթը բերանին մոտեցնելով և առանձին։) *Նա՛ է, նա՛. ուրիշ օշով չի ըլի...* (Նատոյին:) *Քու մորն էլ չի՞ս հայտնի էտ սերը՞։*

ՆԱՏՈ

Չէ՛, չէ՛, գիդե աստուծ։

ՄԵԼՔՈ, մտածմունքից հետո։

Է՛տ է, է՛տ... Հիմի իմանում իմ քու դարդը... Բա՛ռաքալա, ախչիկ, յիս ու իմ հոքին... Սերը սրտումը թաքցնիլը դժար բան է. հիդը հանար

անիլ չի ըլի... Սերը էրկաթ կու մաշե... (Փոքր լռությունից հետո:) *Իժում՝ ով գիդե, վո՛ւնց էիր տանջվում։*

ՆԱՏՈ

Ինչ յիս տանջվիլ իմ, աստուծ իմ դուշմնին էլ չտա... Ինչրի էսօր էլ թե կենթանի մնացի, էլի քու բարութինը պահից ինձ։

ՄԵԼՔՈ, թեթև գլուխ է տալիս և նստելով:

Յիս վուր տեսնում իմ, դուն էլի կոնիս էսօրվան բանը, թե չարա չէլավ քիզ։

ՆԱՏՈ

Կուլի... (Դնում, վերցնում է վերարկուն և ծածկում:) *Թե կի ուրիշ ճամփա չէ մնում իմ տանջանքեմեն ինձ ազատվելու, ի՞նչ պիտի անիմ... Աշխարովի քունն իմ հիշում, ու հոքիս ու սիրտս ուրիշին է քաշում. էս տանջանքին ու էսքան ստութենին դիմնալ կու՞լի՞... Զաքինի մահը էլ ի՞նչ փրկութին կա ինձ համա։*

Վերարկուն վայր է ընկնում:

ՄԵԼՔՈ, վեր թռչելով տեղից:

Չէ՛, չէ՛, Նատո ջան, չէ՛... (Վերցնում է վերարկուն:) *Յիս չիմ թողնի քիզ՝ գլուխդ փչացնես...* (Վերարկուն գցում է Նատոյի ուսերին, ու գլուխ է տալիս նրան և նստում:) *Խնդրանքիս դեմ է ու մինձ ամոթ ու մահացու միխկ կու համարիմ ինձ համա, վուր իմ պատճառով գլխիս մե բան բերես...* (Նստելով:) *Ո՛վ է քու սիրածը, էլ չիմ հարցնում, վունց էլ հարցնելու է հիմի... Խոսկը էստի...*

ՆԱՏՈ, ընդմիջելով:

Յիս հենց հիմի... (Ձայնը փոխելով:) *Ա՛խ, բա՛խշ...*

ՄԵԼՔՈ

Հրամա՛ն, հրամա՛ն...

ՆԱՏՈ

Յիս հենց հիմի էի ուզում ասի նրա անումը. ամա լիզուս չզորաց...

ՄԵԼՔՈ

Չէ՛, չէ՛, չէ՛... հաբկավոր չէ. էտ քու բանն է.. Ինչ ասիր ու լսեցի, էն էլ հերիք է... Խոսկը էստի քու սեքի վրա ու իմ սեքի վրա է գալի... Յիս քիզ իմ սիրում, դուն ուրիշին. դուն քու սիրով ես հաբշտակված, յիս իմ

սիրով... Ի՞նչ պիտի անիմ. ի՞նչ կանամ կատարի մարթավարի, մարթուն արժանի... Հա՛մեցեք... ի՛նչ ձեռնեմես լավութին է գալի, իմ սուրփ պարտկրն է, թե զուրթ սիրում իմ քիզ, վունչիչ չխնահիմ քիզ... Ա՛սա՝ ի՞նչ գուզի՛ս, ի՞նչ կա իմ ձեռին... (Նատոն դժվարանում է պատասխանել:) *Քու ազատութինը՞... քու կատարյալ ազատութինը՞։*

ՆԱՏՈ, ոտի կանգնելով,— վերարկուն վայր է ընկնում նստարանի վրա,— և հուզված:

Հա՛, իմ ազատութինը... Սիրում ըլիմ յիս օմքնու, թե չէ, էտ դիփ մեկ է. ասինք՝ օչովի էլ չիմ սիրում, յիս իմ ազատութինն իմ ուզում, իմ կատարյալ ազատութինը... Ազատութի՛ն կամ մա՛հ... Էրկուսեն մեկը, վուրնոր կամենաս, յիս պատրաստ իմ։

ՄԵԼՔՈ, նույնպես ոտի է կանգնում և գուրգուրանքով:

Նա՛տո ջան, Նա՛տո ջան, հա՛նգստացի, հա՛նգստացի. արիվդ սիրիս, հա՛նգստացի... Յիս էտենց փիս մարթ չիմ, վուր քու մահն ուզենամ, աստուած մի՛ արասցե... Էն լավ է, Նատո ջան, չեր յիս մեռնիմ, կանց քու մահը տեսնիմ... Յիս քու ազատութինը, քու կատարյալ ազատութինը բերիմ, քի տամ, պատվական խոսկ իմ տալի քիզ. հիշտ ճամփա գթա... (Նատոյի դեմքը հետզհետե պարզվում է:) *Ինչրու չբերիմ, չիմ էհա...* (Նատոն, հրեված. կամենում է համբուրել Մելքոյի ձեռը, որ նա խլում է:) *Չէ՛, չէ՛, իմ պարտկն է...* (Նատոն համբուրում է նրա թևը:) *Դուն արխա՛յին կաց... Կաշեմես դուս գու քամ ու քու ազատութինը գլուխ կու բերիմ։*

ՆԱՏՈ, առնելով Մելքոյի ձեռը և հետզհետե ցնծալով:

Սրտանց շնորհակալ իմ... (Թողնում է ձեռը:) *Ի՛նչ գու քա գլուխս, ի՛նչ կուլի իմ վիրչը, էտ յիս չիմ գիդի. ամա մե բան հաստատ գիդիմ, իմանում իմ ու հասկանում, վուր քու շնորհած ազատութենով դուն ի՛նձ հավիտյան բախտավորեցրիր ու էս լավութինը մե նմուտ էլ մտես չի ննգնի, քանի կենթանի իմ... Օ՜հ, իմ օրումն էլ էսենց ուրախ ու բախտավոր չիմ էլի... Հենց գիդիմ վուտիս վրա չիմ կանգնած, յիրգնքումն իմ թռչում։*

ՄԵԼՔՈ

Յիս ավելի իմ ուրախ, վուր կանացի քիզ էտենց ուրախացնի...

Ձախ կողմից գալիս են՝ Գայիանեն և նրան հետևելով ու իրանց մեջ ցածր խոսելով Շամարոն և Տիգրանը գլխարկը ձեռին. իսկ աջ կողմից—Էփեմիան և Գասպարը գլխարկով:

ՏԵՍԻԼ Է

ԱՄԵՆՔԸ

ԳԱՅԻԱՆԵ, փաթաթոցն ու վերարկուն ձեռին, առաջ գալով:

Քու՞նի խոսիք, չպրծա՛ք։

Փաթաթոցն ու վերարկուն դնում է նստարանի վրա:

ՄԵԼՔՈ

Պրծանք, պրծանք, իմ մեր... Առանց կռվի ու ղալմաղալի միր դավին վիրջացրինք... Ինչ ուզում էր, խոստացա ու իրան իմ տալի... Միզ կապող ջնջիլը կտրվեցավ... (Բռնում է Նատոյի ձեռը և տանելով նրան դեպի ձախ կողմը, ուր կանգնած են՝ Գայիանեն և Շամարոն:) *Համեցե՛ք, իմ մեր ու պապի ջան, էս ձիր ախչիկը. հօրեսի դենը սա ինձմեն թամամ ազատ է։*

Գայիանեն ապշում է:

ՏԻԳՐԱՆ, զարմացած և ցածր ձայնով, առանձին:

Տե՛ր օղորմած աստուած։

Նատոն գնում, համբուրում է մորը, որ մնում է անշարժ, հետո մոտենում Շամարոյին և նրա թևին կպչում:

ՄԵԼՔՈ, շարունակելով:

Զուրթ է՝ էլ փեսա չիմ յիս ձիրը, ամա հավիտենական պաշտպան ու բարեկամ իմ յիս ձիզ համա... Ի՞նչ կանամ, ի՞նչ ձեռնեմես լավութին գա, իմ օրումը չիմ խնահի ձիզ... Իմ տան դռնիրը համաշա բաց է ձիզ համա... (Նատոն թողնում է Շամարոյին և խորին ուշադրությամբ լսում է Մելքոյին ու հետզհետե զմայլվում:) *Ցասիք թե յիս դրան էլ չիմ սիրում ու էնդուր իմ ձեռնես թողնո՞ւմ... Թո՞ղ աստուած ինձ կամ մեռնելու օրը հարցնե՝ ինչ յիս դրան սիրիլ իմ, սիրում իմ ու կու սիրիմ ինչրի իմ վիրչի շունչը...* (Ձայնը հետզհետե խառնվում է:) *Յիս դրան լ՛նքան իմ սիրում, վուր դրա սիրու ինքս ինձ զրգում իմ իրմեն, զրգում իմ ինձ իմ բախտավորութենեմեն՝ ի՛ր կամքը կատարելու համա, ի՛ր բախտավորութենի համա։*

Վերադառնալով աջ կողմը, հանկարծ վատ է զգում իրան և ձեռը նստատին տանում. Տիգրանը իսկույն վազում, բազկաթոռ է առաջարկում նրան. Մելքոն ձեռով հեռվում է բազկաթոռին: Ամենքը հավաքվում են նրա շուրջը. Շամարոն և Նատոն փոքր ինչ հեռու: Գայիանեն կամաց-կամաց սթափվում է: Աղախինը ձախ կողմից բերում է էփեմիայի գլխարկը, վերարկուն ու հովանոցը և մնում է խորհում անշարժ:

ԳԱՍՊԱՐ, մոտենալով Մելֆոյին:

Ի՞նչ պատահեցավ։

ՄԵԼՔՈ, զսպելով իրան:

Վո՛ւնչիչ, վո՛ւնչիչ. գլուխս մե քիչ պտուտ էկավ... Մի՛ նիղանաք. ինձ համա մի՛ դարդ անիք... (Նատոն նայում է Մելֆոյին հուզված կարեկցությամբ:) *Ցիս բեբախտ իմ, խիստ բեբախտ իմ, ամա խիստ էլ բախտավուր իմ ու ուրախ, վուր արթար գուրձ կատարեցի... Տա աստուած դուք ըլիք համաշա ուրախ ու բախտավուր։*

Նատոն լրջադեմ գնում է դեպի մայրը, մինչդեռ Մելֆոն, հոգեկան հուզմունքից ուժասպառ, նստում է բազկաթոռի վրա և ձեռը ճակատին տանում. Շաֆարոն և մյուսները նայում են Մելֆոյին, բացի Նատոյից, որի երեսը մոր կողմն է, և Տիգրանից, որ նայում է Նատոյին:

ԷՓԵՄԻԱ, ամուսնուն կիսաձայն և շարժվածով:

Ա՛յ մարթ։

Գասպարը հոնքերը կիտած նայում է կնոջը, սա անթավական երեսը թեքում է:

ԳԱՅԻԱՆԵ, Նատոյին, մեղմորեն:

Էս ի՞նչ բան բերիր մեր գլուխը, վուրթի։

ՆԱՏՈ

Իմ ազատութենը, դեդի ջան... Ուրախ իմ, ուրախ, վուր ի՞նչ ասիմ. ամա էս ուրախութենումը իմ նմաններու տանջանքն է միտս գալի ու սիրտս ավելի ու ավելի է մխկտում... Էրանի նրանք էլ ինձ պես ազատվին, ինձ պես ուրախանան, ուրիշ դարդ չիմ ունենա... (Դիմելով Մելֆոյին:) *Ո՛վ բարի ու մեծահոգի մարթ,* (Մելֆոն լսում է մտադրությամբ:) *քու շնորհած ազատութենի համա մե օր փառավուր արձան կու կանգնեցնին քու անումով... Ցիս իմ վուր վունչիչ բանով չիմ կանա վչարի քու լավութինը... Իմ անձնական սերը հայտնի է քիզ ու մենակ քիզ, ուրիշ օչովի... Էտ սերը ցիս էլի էնենց անարատ պահում իմ ու կու պահիմ սրտումս խուրը թաղած, վունցոր անարատ պահիլ իմ ինչկլի էսօր... Էտ սերը հորեսի դենը,— վուխչ իմ կի՛նքը ցիս նվիրում իմ իմ նմաններու ազատութենին... Թո՛ղ էս ըլի իմ լումեն էն արձանի համա...* (Հանում է մատից ամուսնական մատանին և տալով Մելֆոյին:) *Համեցե՛ք էս մեր կապանքի նշանը։*

ՄԵԼՔՈ, վեր է կենում և առնելով մատանին:

Օ՜, Նատո ջան, դու յիրգնուց դեվեր ղրգած հրիշտակ իս էլի ինձ համա՝ իմ աճկը բաց անելու, ինձ լավութինը սորվեցնելու... Առանց քիզ էլ ի՞նչ կոնիմ ցիս հիմի իմ հարստութինը, թե բարի գուրձի չիմ պետկ ածի... (Տիգրանը, որ կանգնած էր մտատանջության մեջ, լսում է Մելֆոյին մեծ ուշադրությամբ և հետզհետե զմայլվում է:) *Թո՛ղ դիփ մետի քու չարը, քու նմաններու չարը տանե... Խոսկ իմ տալի քիզ էստի դիփունի մոդ՝ ի՞նչ ջանումս ջան կա, օտկիմ քիզ ու քու նմաններուն. վունչիչ չիմ խնահի՝ վո՛ւնց աշխատանք, վո՛ւնց հարստութին, վո՛ւնց կինքս, թե պետկ էկավ, թաք դուն քու մուրազին հասնիս, դուն ու քու նմանները բախտավուր ըլիք... Քու ասած արձանը ցիս հիմիսկ էվետ կու շինիլ տամ՝ քու անումով, քու հիշատակ, էլ ինչրի վիրչը չիմ մնա. ումիկ ունիմ՝ պարզ-էրես դուս գամ... Էս մատանիքը կու դնիմ էն արձանի հիմքումը ու վերիվը ճակտին օսկե տառերով գրիլ կու տամ՝ «Սեր և ազատություն»...* (Նատոն կամենում է համբուրել Մելֆոյի ձեռը. նա թույլ չէ տալիս և ինքն է համբուրում Նատոյի ձեռը, իսկ սա—նրա թևը. Տիգրանը հիացման մեջ է:) *Գիդիս սրփութենով կու կատարիմ խոսկս։*

ՆԱՏՈ

Օ՜, հավատացած իմ... (Գնում է դեպի մայրը, Մելֆոն մոտենում է Տիգրանին և ձեռը նրա ուսին դնում. իսկ Նատոն դիմելով մորը:) *Էսօր, դեդի ջան, ցիս դիփ մետի թողնում իմ՝ մարթ, տուն, տիղ, հարստութին, դի՛փ, դի՛փ՝ իմ նմաններու ազատութենին օտկելու...* (Մելֆոն, վերցնելով ձեռը Տիգրանի ուսից, ուշադրությամբ լսում է Նատոյին, ինչպես և մյուսները:) *Ի՞նչ կու շինիմ, ի՞նչ կանամ գլուխ բերի, էտ ցիս հիմի չիմ գիդի. ամա ինչրի էնչախ, վո՛ւրդիոր կու ռաստ գա, վո՛ւրդիոր ինձ լսող ու անգամ դնող կունենամ. ա՛մեն տիղ, ա՛մեն տիղ ցիս պիտի պատմիմ իմ պատմութին, իմ սերն ու ազատութին... Ցիս չիմ դինջանա, ինչրի իմ նմաններու ազատութենին չարժանանամ... Քիզ, դեդի ջան, իմ օրումը, քանի աշխարքիս էրեսին ման իմ գալի, քանի շունչս բերնումս է, մե նմուտ էլ սրտեմես ու մտկեմես չիմ հիռացնի...*

ԳԱՅԻԱՆԵ, գիրկը բաց անելով և տխուր:

Ջարդ տանիմ, վուրթի։

ՆԱՏՈ

Դեդի ջան...

Ընկնում է մոր գիրկը:

ՇԱՔԱՐՈ, առաձին:

Դիֆունիդ չարը յիս տանիմ, յիս, վուրթիք...

ԳԱՅԻԱՆԵ, սեղմելով Նատոյին իր կրծքին:

Նատո ջան...

Մելքոն նստում է իր տեղը և Նատոյին նայում. Տիգրանը, նրա ետեր կանգնած և ձեռը նրա բազկաթոռի վրա, նույնպես Նատոյին է նայում:

ՇԱՔԱՐՈ, առաջ գալով, հանում է գլխարկը և դեպի երկինք նայելով:

Էս հանգի էլ մարթ ու կնիկ յիս չիմ տեսի, վունց էլ էս հանգի խաբար իմացի... (Մածկում է գլխարկը:) *Ղուրթ վուր աշխարքը փոխվեցավ...*

Ձախ կողմից ծառան մեծ սկուտեղով բերում է ընթրիքի սփռոցը բոլոր սպասքներով և մնում է խորհում ապշած, այգեպանը, որ հետևում էր ծառային, շտապով բարձրանում է անիվի հեցուկի վրա, բաց է թողնում ութիվը և տեղն ու տեղը նույնպես ապշում է: Ամենքը մնում են արձանացած իրանց դերերին համապատասխան արտահայտությամբ:

ԳԱՏԿԵՐ: Անիվը պտտելով արձակում է իր բնորոշ ձայնը:

Վերջ

ՎԱՐԻՆԿԻ ՎԵՋԵՐԸ

ՎԵՊԻԿ

1877

Ջիմ գիդի թե վուր ամսի մեկն էր, շափաթ օրը լուսանում էր։

Էս էն օրն է, վուր Սանթուրինց Մակակոն մե մինձ փառքի պիտի արժանացիլ էր։

Ո՞վ էր Սանթուրինց Մակակոն։ Սանթուրինց Մակակոն, պարուն դուն իմն իս, մե խիղճ մարթու կնիկ էր, ջեհել ու մե էրեխի դեդա։ Խիղճ էլ վուր ասում իմ, չգիդենաք, աղա ջան, թե մարթ ու կնիկ դոնե դուռը ախկտուքին էին անում։ Ջէ, աստուձ մի արասցե ու էտ օրին չհասցնե նրանցը. ամա մե մարթ հազիր հազրաբաշի դադած փուղ վուր չունենա, ու Լենքթեմուրի թիքը ննգած բաբաթ բաբաթ չըլի անուշ անում, էլի վուր խիղճ է հիշվում։ Ի՞նչ անիս, էսենց է աշխարքը։

Արա ինչ սիվ քար ուներ Մակակոյի մարթը, վուր Լենքթեմուրի էին ժաժ էկի... լուսը լուսանում էր թե չէ, գնում էր իր փեշակին ու սաղ օրվան չարչարանքով մե էրկու աբասի ձլիվ էր տուն բերում ու կնիկը վունց պովար ուներ տանն ու վունց լաքիա. նրա հոքի դնողը մե պառավ Սինդուխտն էր, վուր ճաշն էլ նա էր շինում, ու լվացկն էլ նա էր անում. խիղճ Մակակոյի շատ կար անելեն խո աճկի լուսը թռիլ էր ու մատի ծերիրը բշբշտիլ։ Էսենց օտկում էին մարթը կնգան ու կնիկը մարթուն, ուրիշ մայա նրանք չունեին ու մասկան օր դադում էին, օր ուտում։ Էս էր նրանց խիղճութինը. վայի նաչարի ապրում էին ու օչովուն ձեռը չէին դեմ տալի։ Մի՞ մեչը կոսինք, վուր շատ ձեռը դեմ տվող մարթ կա, վուր Մակակոյի մարթու վրա շեն է։

Մե խոսկով Մակակոյի մարթը, ասում իմ, մե խիղճ փեշաքար էր։ Ղուրթ է նրա հերը, վուր մեռավ, ասում ին, մե յիրիք-չուրս հարուր թուման փուղ էթող. ամա վուրդի էր էն փուղը օչով չկանաց գթիլ էր. մե քանի չար լիզու կի ավելցնում ին, թե էն փուղը նրա բիձեն է տակն արի, ամա դրուստն ու դուրթը աստուձ գիդի։ Ինձ թե կու հարցնիք, քախկի ասա կոսին յիս չիմ ավտում, էնդուր վուր լըվի տոլ բանը ուղտ ին շինում. ախար էտենց վո՞ւնց կուլի, հեր օխնածնիր. օրինակ ասինք դուրթ բիձեն փախց-

ռուց, ի՞նչ կոներ, մե՛ ձիզ իմ հարցնում. քիչ ունե՞ր, թե ի՞նչ է, փախցրուց ու էն էլ իր ախպուրմեն, ախպուր վուրթեմե՞ն. փիե, էս ի՞նչ յիրգիր է մեր յիրգիրը, տո՛, անմիզ անգեթ մե մե էս հանգի բան միզ կու դնին մարթու։ Ախա՜ր, Սանթուրինց Ալեքոն (Մակակոյի մարթու բիձեն), էն անվանի հարուստ մարթը, էս հանգի բան վո՞ւնց կոներ, շառ ին մոգոնի, ձիր արիվը։ Տեր աստուա, մի պատժի միզ էս հանգի շառերու համա։

* *
*

Ինչոր վուր էր, հալբաթ էս ասա կոսի միղն էր, վուր Մակակոյի մարթը ու սրա բիձեն, պարուն Ալեքոն, շատ տարի մեկ մեկու հիդ խռով էին։ Քանի մարթ մեչ ննգան, քանի տերտեր մեչ գցեցին, սրանց բարիշելու չարա չէլավ. ամա առանց վիրջ վունչիչ չկա աշխարքումն, ասում ին Ալեքոյի կնիկը մեռավ ու չանցկացավ մե տարի, աստուծութինն արավ, Ալեքոյին մե ուրիշ հալալ կաթնակիր ռաստ էկավ։

Վուր վուտը տուն էդի էս կնիկը. Ալեքոյի տուն ու տիղը դիփ տակն ու վրա էլավ. շուրս օթախը ինը դառավ, կիղտուտ պատիրը օսկե գաջած թղտիրով զարթարվեցավ. ցընգրուտ բջի մագիեր տասնուհինգ մանեթանոց լաքիա կանգնեցավ ու ինքը Ալեքոն էնենց փոխվեցավ, վուր ով կոսեր թե էս էն վաթսուն տարեկան Ալեքոն է, վուր շափթենը մե ջեր շապիկը ձլիվ էր փոխում ու յիղուտ գլակով ման էր գալի։ Փա՜հ, Ալեքոն Ալեքո դառավ, վուր կոսեիր Փռանգստանեմեն էկած յարսուն տարեկան կարտինկա է՝ յիղուտ գդակը մոդնի շլյապա դառավ ու մգդկած ղալամքարի արխալուխը մախմուր, ժիլետկա. ամա մե մախմուր, մե մախմուր, վուր ձիռը վուր քսում էր, իրան էլ էր դուր գալի. «Մե մտիկ, Վարինկա ջան, ասում էր կնգան, կոսիս քու թշիրն ըլի»։

Էսենց լուսավորից Վարինկեն Ալեքոյին. ամա առանց վարձք լուսավորութինը կորած է, փիքր արավ Վարինկեն, վո՞ւնց կու սազ գա իր անուամին, վուր իր սիրուն, ջեհել Ալեքոն խալթի խոսելու ըլի։ Ինչոր մարթիքն ու տերտերնիրը չ՚կանացին, ինքը պի՛տի կանենա, էդի մտկումն ու կատարից։ Նրա ուզած բանին վո՞ւնց կաներ Ալեքոն հակառակվի. Ալեքոյի սիրտը շինիլ էր իստակ մում ու վունցոր ուզում էր ձեռին էնենց էլ խաղցնում էր. էն իստակ մումը ուզում էր հրիշտակ էր շինում, ուզում էր սատանա, ուզում էր ձի, ուզում էր պստի ջորի ու վուրթենն ուզում էր ջիլավն էնթենն էր քաշում։

«Աբա խռովութինը վի՞ս էկադրեբա, Ալեքո ջան»։ Էս ասավ ու դեմուդեմը ճաշին մնձրից, էնենց, տանավարի, Մակակոյին էլ ու Մակակոյի մարթուն էլ։ Ննգավ բարիշութինը։ Վաղուցվան միչնորդները մե քիչ նիղացան, վուր իրանք չկանացին էս բանը վրա բերի, ամա Վարինկեն ի՞նչ է հոքում, նա իր վարձքը կատարից ու իր խոստովանահուրմեն «օրհնյալ լինիսը» իր անգձով իմացավ։ Խնդաց ու ճխաց Վարինկի մերը, վուր իր միճկեմեն էս հանգի հրիշտակ աստծու բհամ էկավ աշխարքի երեսին։

* *
*

Ի՞նչ ավելացավ էս բարիշութենեմեն Մակակոյի մարթուն, դրուստ չիմ գիդի, աստուա գիդենա, ամա հաստատն էն է, վուր ինչ բարիշութենի առաչ էր, էլի էն խիղճ փեշաքարն էր։ Վունց հագուստն էր փոխվի, վունց տունը... զելենկիկո, զելենկիկո, էլի էն Սելիդաբաթն էր ու Սելիդաբաթը, էլի էն քուչաբանդն ու էն քրիհով տունը թե՛ առաչ, թե՛ հիմի։

Թե Ալեքոն ղուրթ փախցրած փուղ ուներ ու հիդ էրիտ Մակակոյի մարթուն, ի՞նչ էլավ էն փուղն ախար. կուլի թաքուն բանկը գցից, վուր իր վուրթկերանցը մե օր պետքը գա, ամա վո՞ւնց կուլի վուր մարթ յիրիք շուրս թուման փուղ ունենա ու նեղութենումը վունց գլխկին ձիռը տա, վունց շահին. չէ ձիր արիվը, սուտ իմ մոգոնի. ի՞նչ փուղ, ի՞նչ փախցնիլ։ Ես լավ իմ անում, վուր քախկի ասա կոսին չիմ ավտում։

* *
*

Էն գլխեն ասի, վուր շափաթ օրը լուսանում էր ու Մակակոն մե մինձ փառքի պիտի արժանացել էր։

Ի՞նչ էր էն մինձ փառքը։

Վարինկի մարթ Ալեքոն, թե կնգա աղանչաք պաղանտաքով էր, թե ինքն իրան իրան էր փիքր արի, վուր հավիտենական հիշատակ թողնե, տնիրը նորմեկանց տակն ու վրեն էր արի ու մե սարքել էր, մե սարքել էր, վուր լիդու չի հիդ ասի։

Էս նորմնգանց սարքած ու կարքած տնիրումը, հենց էն շաբաթ օրը Վարինկեն մինձ վեչեր ուներ ու էս վեչերումը Մակակոն մնձրած էր։

Գանա Մակակոն էլ վեչեր չէր տեսի՞, էլ լոտո չէր խաղացի՞. վո՞ւնց չէ, ամա էն տեսած վեչերնիրն ու լոտոն վո՞ւրդի գուքեր էս հանգի վեչերի հիդ։ Ո՞վքիր էին տեսած վեչերնիրումը՝ Թուլուխինց Նատալիեն, Զատիրասատինց Անանին, Դարդինց Սոփիոն, Խնգոինց Քաչին, Դանդումինց Մարիամը, դիփ էս թավուր օմքնիր, իրան Մակակոյիմեն ի՞նչով էին լավը։ Ամա Վարինկի վեչերումը, հը՛, նրանք վի՞ս էկադրեբիան, դիփ մինձի մինձ օմքնիր, ձիր արիվը՝ Մոդինց Նատաշեն, Բուդաղինց Անիչկեն, Լաղլաղինց Դարինկեն, Կոմբոսաթինց Քալինկեն, Միվծիվինց Մաշինկեն, Քիրմանինց

Սաշինկեն և էլի ավտաս քառասուն սրանց վրա լավիրը։ Փա՞ռք չէր սրանց մոդ նստիլը, էն էլ մինձ փառք, բաս ի՞նչ զահրումար էր։

Ափսո՜ւս, ափսո՜ւս իմ հալալ, միամիտ Մակակո ջան։

* *
*

Էն բախտավոր շափաթ օրը աճկիրը բաց արավ Մակակոն թե չէ, էս վեչերը միտը ննգավ ու էն սհաթին հենց գիդեր արեգագի շուխկը, վուրնոր Մակակոյի հիդ նուր էր զարթնում, դեմուդեմը սրտին հասավ։ Էսենց ուրախ քիչ էր նա աճկը բաց արի, ամա ինչրու արեգագը թամամ դուս էկավ, Մակակոյի ճակտի վրա մե ինչոր ամբ անցկացավ։ Գնալը ուրախ էր ու մինձ փառք էր. ամա վայ թե մարթու տված, յիրիք մանեթը Վարինկի լոտոյին հերիք չգա՞, ի՞նչ անե, վո՞ւնց օտկե էստուրը։ Էս փքրիրը միտկը խավրեցնում էր։

Ջեր առաչի գիշիր իրիգնահացին վուր նստած էին, Մակակոն շատ ուսուլ-փուսուլնիր բանեցրուց մարթու մոդ, վուր էգեբա ավել իմքին դուս գչլե, ամա դուն չմեռնիս, յիրիք մանեթը յիրիք մանեթ էր։ Շատ ասավ մարթուն թե՝ ամութ է, յիրիք մանեթով էն հանգի միծաողլաններու մոդ նստիլ չի ըլի, թե՞ էն լավ է, վուր իատակ ջոգվի նրանցմեն ու իսկի չխառնվի նրանց մեջը, կանց թե գնա ու խայտառակվի, ամա մարթու խոսկը դիփ էն էր, թե՝ «էն էլ հառամ է, ինչոր տվիլ է, զուզե էն է ու չի ուզի թեզուզ իսկի էլ չգնա, գլուխը նա էլ քար տա ու բիծանք էլ»։ Էս խոսկի էգնեն Մակակոն գլուխը կոացրուց ու Մակակոյի մարթը չարեքանուցը վրա քաշից։ Մե քիչ վուխտ էլ մեկ մեկու հիդ չխոսեցան. բեդամաղութինն էր պատճառը, թե խրամուլը, վուր փուշը բաղադը չննգնի։ Էսենց սուս ու փուս մնացին էրկուսն էվեռ ինչրու։ Մակակոյի մարթը խրամուլի գլուխը վիկալավ, քալլեն էդի բերանն ու դունչը թավազա արավ կնգան։ Ինչոր վուր էր կնիկն էր, ի՞նչ անիս. էստու վրա Մակակոն ծիծաղեցավ ու կցից նուրմեկանց իր գեթաղվին ու շենի ճիրիմեն. ամա Մակակոյի մարթը մեկ վուր աճկիրն օլրրից ու ասավ՝ «ձե՛նդ, թե չէ սուփրեն գլխիտ թափ տվի»։ Մակակոն աշքարա տեսավ, վուր էլ վունչիչ չի օտկի։

Լավ մարթ էր Մակակոյի մարթը, հախ աստուձու. ամա մե խասիաթ ուներ, վուր իր ասած բանը, տիդ ննգած տիղը ձեռուվ ու մուշտով էր հաստատում, էլ լիղվին ավելի զոռ չէր տալի։

Էս միտն էրի Մակակոն ու սաս ու սորախը կտրից։

Էն գիշեր թե Մակակոն էլի իմքին ասավ մարթուն էս բանի վրա, յա ի՞նչ արավ, յիս վրահասու չիմ. ամա բանն էն է, վուր շափաթ օրը վուր լուսացավ, էն յիրիք մանեթին մե գրոշ չէր ավելցի։

* *
*

Շատ բանիր փիքր արավ Մակակոն շափաթ օրը առուտեհան էրես լվանալիս, շատ անիծքնիր ղրգից լոտո մոգոնողի գլխին ու արևուն, ամա վիրչն էն էր դուս գալի, վուր էն գիշիրը նա պիտի գնացիլ էր ձալոյի վեչերը ու յիրիք մանեթեն ավելի չուներ։

Գնա՞, ի՞նչով գնա ու չգնա, վո՞ւնց չգնա ախա՜ր, էն հանգի թամաշեմեն վո՞ւնց զրգվի մարթ, համ էլ ձլիվ բարիշութինը ննգիլ է ու վայ թե ձալոն բեդամաղ ըլի ու նուրմեկանց անմիդ անգեթ էլի խոովութին պատահի։

Մակակոն էսենց էր կարծում ձալոյի վրա ու ձալոն, ինձ թե կու հարցնիք, ավտաս խիստ ուրախ էլ կուլեր, վուր Մակակոն իսկի էլ չէր գնացիլ. բա ինչ Մակակոյի տիղ էր, վուր էն հանգի մոդնի ախչկերանց մեջը ձքվիլ էր. ի՞նչ անիմ թե սիրուն էր ու էն էլ խիստ սիրուն։ Դարդակ սիրունութինը ի՞նչ... էլի մե հարուստ մարթու կնիկ էր էլի Մակակոն, Վարինկի համա էլ փառք կուլեր. ամա ի՞նչ անիս չարա բեչարա էլի պիտի կանչիլ էր, մեկ վուր Մակակոն բեդամաղ չէր էլի ու էլի նուրմեկանց ասա կոսեքը չէր զարթի, մեկ էլ, վուր ջանդամը Մակակոյի գլուխը, ՝թո՛ղ գա ու խալխը տեսնե Վարինկի թավդաբլութինը։ Աստծուն հայտնի էր նրա արած վարձքը, վուր բարիշութինը գցից ու էս վարձքը ի՞նչի պիտի թաքցրիլ էր իր ղոնաղնիրու մոդ, թող նրանք էլ տեսնին ու սովրին, վուր վարձքը լավ բան է։ Դեղեն մեռնի քու վարձկադար ջանին, Վարինկա՜։

Մե խոսկով, Մակակոյի սրտումը հաստատվեցավ, վուր նա էն գիշիրը պիտի գնա ձալոյի վեչերումը, թային, թային, պիտի գնա...

Ամա փո՞ղը։

Ախ, փուղ, ի՞նչի իս էտենց անդադաստան, վուր ում ջիբումը շատ կա, էլի էնդի իս գնում. ի՞նչ կուլեր, մե տաս, տասէրկու մանեթ Մակակոյի ջիբումն էիր էլի։ Էսենց փիքր արավ Մակակոն ու էն սահաթին ձեռը ջիբն էրիտ. մե տեսնե դուրթ խո բարի հրիշտակը դեվեր չէր ածի էն փուղը նրա ջիբումը, ամա ձեռը դարդակ դուս էկավ։ Խիստ սրտին դիբավ, վուր փուղն էսենց անօրենք է վարվում նրա հիդ ու աճկիրն արտսունքոտվեցավ։

Ղուրթ է, իր կարի համա մեկը մանեթուկես պարտ էր, մեկը յիրիք ու տասը շահի. ամա էնենց էր բարիշած, վուր մնացած կարն էլ պիտի տարիլ էր ու էն փուղիրն ու նուր մուզդը մետի պիտի ստացիլ էր. մնացած կարը հազիր չէր ու անգսկածի վունց էր պրծի...

Ի՞նչ անե, կէհա նրանց մոդ, մուշտարիք ին, կու ճանչնան, գո՛ւզե նրանցմեն էն մանեթուկեսն էլ ու յիրիք ու տաս շահին էլ. աստուծ մեջ

կու գցե, վուր խիստ հարկավուր է, աղանչաք կոնե, վուր հիմիսկ էվետ տան... Կոսե վուր քաղցած է, ալուր չունին տանը, պիտի ալուր առնի... ամա վա՛յ թե շտա՞ն, վա՛յ թե ասին, վուր էտենց չին բարիշած, էլ ի՞նչի համա գնա, ի՞նչ էրեսով գնա։ Չէ՛, մահը լավ է էս գնալու վրա։ Պիտի սուտ խոսի, պիտի սուտ օրթում ուտի, պիտի ախկըտի պես ուզի ու ուզածը չկատարվի, պիտի սուտ լաց ըլի... ու դուրթ լաց էլավ...

Ա՜խ, Վարինկա՛, ո՞վ էր ասում քիզ վեչեր սարքիս ու Մակակոյին մեձրիս...

Համ էլ շո՞ւրը, ո՞վ էրիտ նրան Վարինկի վեչերին լայիղ շուրիր... ամա շուրը իսո փուղ չէ, շուրի ճարիլը հիշտ է՝ սլլատոկը Կեկելիմեն բան գուզե, ճակտի աղլուխը Նինուցումեն, դերիեն խո բաշն ուներ, զատկվան կարած, ու գերրի տակը ո՞վ ի՞նչ է տեսնում թե ինչ ունե հաքին... փուղն էր, էն անիծած փուղը, էն էլ էն դաքա փուղը, ինչ էն գիշիր նրան հարկավուր էր, վուր օշով չէր բան տա նրան...

Ո՞վ գիդե, կուլի Կունդուրինց Թաթելը կանենա, հիռու չէր, նա էլ էն քուչաբանգումն էր կենում. ամա Թաթելը առանց գրավ վուր օշովուն վունչիչ չէր տալի, նրան ի՞նչի կու տեր, ի՞նչ անինք թե մոդիկ հարևան է։ Պիտի նրան էլ աղանչաք անի ու նրա մոդ էլ էրեսը սրվնա. էս խո էլի էն դուս էկավ, էլի էն շուղարն իմացավ, ինչոր մուշտերիմեն պիտի իմացիլ էր...

* *
*

Էս մոկիրը ծովի տալղերու պես բաբաթ բաբաթ գալիս ու գնում էին խիղճ Մակակոյի գլխումն ու մեկ մեկու գեպչելով թաց էին անում նրա սիվ աճկիրը։

Ի՞նչի է նա խիղճ, ու ուրիշը չեն. գանգավեցավ իրան իրան Մակակոն, ի՞նչի նա էլ էն զադա շունե, ինչոր ուրիշը, ի՞նչի պիտի զրգվի նա Վարինկի վեչերեմեն, ի՞նչի պիտի ձալոն կարծի, թե լուսոյի փուղ շուներ ու էնդուր չգնաց... Ամուրթու թշերն ալանձուա էլավ ու ջիղը կարի վրա հանից։ Էնենց շտապեցրուց, էնենց շտապեցրուց ֆարը, վուր անգսկածի ասիղը ձեռին փշրվում էր։

Մե բաշ Մակակոն էրեսումը փոխվեցավ՝ Կունդուրինց Թաթելը նուր մեկանց միտն էկավ, ամա էնենց, վուր հենց գիդեր գլուխն կանգնած է ու անգնումը խոսում է. սիրտը դնդղնգաց ու էրեսը խեչը հանից։

«Նալաթ քի չար սատանա», ասավ Մակակոն ու ֆարը վեր գցեց։

Ինքը վիկացավ կարեմեն, թե էն սատանեն վիկացրուց, չիմացավ Մակակոն. ամա մե քիչ վախտվան էրնեն զանդկի առչիվը նստած էր ու զանդկեմեն հանած ճարումադաթ էրծթե սաքեշեն ձեռին տնտղում էր։

Էս սաքեշեն դեդեն էր բախշի բաժնքումն ու էնդումեն դեսը թեգուզ չուրս տարի էլ էր անցկացի, Մակակոն նուր էր ծանդր ու թեթիվ անում ձեռումը, նուր էր տեսնում, վուր տակը ինչոր դամղեք կա, նուր էր վարավուրդ անում, վուր ափներումն ինչոր բարակ հաշիա կա նշխած։

Շուտ ու մուտ էրիտ էս սաքեշեն Մակակոն ու դոշին կպցրուց, հենց գիդեր իր մորն էր փաթրթվում... Խիղճ մեր, յիրիք տարի ավել էր մեռիլ ու Մակակոն հենց գիդեր էս բախշիչը նրամեն նուր էր ստանում...

Էս հանգի իմքինը գրավ կու դնվի՞, միխկ չէ՞ ասձու մոդ, փիքր էր անում Մակակոն թաց աճկիրով. ամա գրավ դնիլը խո ծախիլ չէ, թեգուզ տաս թուման էին տվի, ի՞նչի էր ծախում, էն էլ էն հանգի գրավը, վուր թափելու հաստատ ումիկ ունե։ Ի՞նչ հաջաթ, վուր գրավ դնե... յիրիք մանեթ մարթու տվածն ունե, մանեթուկեսն ու յիրիք ու տաս շահին հին մուզդն է, էս ութ մանեթ, մի վեց մանեթ էլ, կարը վուր թամամ անե, նուր մուզդ կու ննգնի. տաս շուրս մանեթ փուղ կոնե ու էն գիշիրը խո մե տաս, տասէրկու մանեթ ավելի չէ հարկավուր։

* *
*

Ամա մարթը՞... մարթը վուր իմանա, ինչ օր կու կանգնեցնե Մակակոյի գլխին։ Կեծակի պես անցկացավ էս միտկը նրա գլխումն ու սաղ ջանը դուղ ննգավ։

Ուզում էր սաքեշեն էն սահաթին հիդ զանդուկը դնի, ամա սատանականց Վարինկի վուղղ վեչերը էն սաքեշի մեչն էրևաց...

Կպավ Մակակոյի աճկիրը վրեն. ու էլ չէր կանացի հեռացնի, աշքարա տեսնում էր նա էն վեչերը, էն փառքը, էն հարստութինը, էն միծաօղլաններու կնդերանցը, վուր կուրը կռանը գցած, կոսեիր, դիփ մետի էն սաքեշումն էին ման գալի ու ինքն էնդի չէր. նրանք ուրախանում էին, խոսում էին, ծիծաղում էին ու ինքը նրանց մեչը չէր. նրանք նստում էին, խաղում էին, տանում էին. տանուլ էին տալի ու ինքը չեր էլի փուղի էր մանգալի։ Աշքարա տեսավ, վուր ձալոն մոդ էկավ ու ասավ՝ «էրեսդ պարզ ըլի։ ի՞նչի չէկար»... Ի՞նչ ասե, ի՞չ մոգոնե։ Չէ, ինքն էլ ինդի է, մե քընչնումը նստած է, օշով հիդը չէ խոսում, օշով մարթահեսաք չէ գցում, ուզորում անգնումը բան է ասում, էն է ասում, վուր Մակակոն փուղ չունե ու էնդուր չէ խաղում։ Մոդ էկավ էլի ձալոն՝ «ի՞նչի չիս խաղում, քա, թե փուղ գ ուզիս, կուտամ»... Չէ՛. գեդինը վուր մտնի էն լավ է...

Կաթեցավ սաքեշումը Մակակոյի արտրսունքը մե մեկ, մե մեկ։

Ա՜խ, սիրուն իս, Մակակո ջան, էտենց զանդկի առչեը հիդ նստած. մե ձեռումդ զանդկի խուփը, մեկելումը էրծթե սաքեշեն, վուրի մեչը շար-

բաթի մագիեր քու արտասունքներն է թափում։ Բոնե էտ սաքեշեն էտենց. ափսուս է, վուր էտ արտասունքը գեղնին վեր թափվի։

Հովցավ սիրտը, կտրվեցավ արտասունքը. ամա էլի պելացած մտիկ էր անում Մակակոն սաքեշումը. օմքին տեսել էր, կոսեր փալ է բաց անում, մեչը մայինց ջուր էլ կեր։

Հա փալ էր բաց անում։

Էս փալն էն դուս էրի, վուր մե սահաթվան էդնեն ճարումադաթ սաքեշեն Պունդուրինց Թաթելի զանդկումն էր ու Մակակոյի ջիբումը յիրիք մանեթի մագիեր տաս յիրիք մանեթ փուլ կեր։

* *
*

Էտ էլ քու փուղը, Մակակո ջան, ուրիշ ի՞նչ իս ուզում, ի՞նչի իս էլի բեդումադ։ Վախենում ի՞ս մարթդ չիմանա, վուր սաքեշեն գրավ դրի՞ր. մարթուն ո՞վ է ասում, ո՞վ կու իմաց անե, վո՞ւնց կու իմանա։ Թե չի՞ս տանի լոտոումը, կուլի աստուած օտկե ու չտանուլ էլ տաս, մեկելեքսնեետ կու թափիս քու սաքեշեն ու թե տանուլ կուտաս, էնենց աստուած վունց կու խոովի, վուր դիփ մետի տանուլ տաս, մնացածն էլ յիրիք գիշիր վրա ու վրա կու կոտրիս ու մե շափթվան կարդ յիրիք օրումը կու պրծնիս. էն յիրիք օրումը մարթդ խո սաքեշեն չի հարցնի ու յիրիք օրվան էդնեն քու սաքեշեն էլի քու զանդկումը կուլի։

Էս խո էսենց է, դուն էլ իս ասում, վուր էսենց է. բաս ի՞նչն է քիզ նիղացնում, ի՞նչի սիրտդ չէ բաց ըլում։ Կո՞ւլի էնդու վրա իս նիղանում, վուր էրեխետ սաղ գիշիր պիտի մենակ մնա։ Էտու համա ի՞նչ իս նիղանում, օխնած հոքի. ածե, վուր մարթ էտու համա նիղանա՞... Էրեխեն ի՞նչ մարթահեսաբ է. հալա քիզ հեստի Սինդուխտ է տվի աստուած, վուր տասը դեղա ածե. բաս նրանք ի՞նչ անին, ովոր քի պես սրտացավ Սինդուխտ չունե, նրանք միխկը չի՞ն։ Դուն ջեր էլի մե էրեխա ունիս, բաս նրանք ի՞նչ անին, վուր յիրիք-չուրս էրեխին մետի քոծի ու ըջի արով ին թողնում ու ո՞վ գիդե նրանց ձեռին ի՞նչ ին սովրում։ Քիզ էլի հազրենը մե ջեր է պատահում էս հանգի բան, նրան կի, խղճիրը, ամեն օր էս օրումն ին, նրանք կի միխկը չի՞ն բաս։

Ամա չէ՞, Սինդուխտը լավ կնիկ է, նա լավ կու պահե քու էրեխին. բաս ի՞նչի իս էտենց, ի՞նչի իս փքրուտ. էնենց դուն էլ չիս գիդի, ասում իս։

Ա՜խ, քու հոքուն մեռնիմ, Մակակո ջան։

Մոդ էկավ իրիգնապահը. շինվեցավ, սարքվեցավ, զուքվեցավ, կոկվեցավ Մակակոս ու տանեն դուս էկավ մե պստի բիջ էդնեն, վուրին ձեռաց բան էր ուզի մոդիկ հարևնիմեն։

* *
*

Գալիս էր Մակակոս ու ի՞նչ էր գալի. թե հրիշտակ էր, հրիշտակը գեղնին ի՞նչ բան ուներ, էն էլ միր քախկումը, ու թե աթմորթի էր, էն հանգի էլ աթմորթի կուլե՞ր, ինչ էն ճարկտրածն էր էրևում էն զուքսի շուրևրումը։

Ի՞նչ նաղըշքար պիտի ըլի վուր նրա աճկն ու ունքը քաշե. ի՞նչ դիդիր պիտի ըլի, վուր նրա էրեսի ուանգի նման դուս գա, ի՞նչ լիղու պիտի ըլի, վուր նրա մանգալն ու յիրիշը հիդ ասե... Էստումը յիս փաս. ամեն մարթ ձիր սրտի հավնածին տեսել իք մե օր, նրան նմանեցրեք իմ նաղ ու ջեյրան Մակակոյիս։

Անդսկածի դեվեր վազեցավ Մակակոս իրանց թաղը, ննգավ սուրբ Սարքիսի քուչեն, էստի վուտը մե քիչ ծանդրացրուց. սուրբ Սարքըսին վուր հասավ, մոդ գնաց, դրսի քարին համբուրեց ու մտկումն ինչոր ասավ։

Ի՞նչ ասիր, Մակակո ջան, ի՞նչ աղոթկ արիր։

Աղոթկ անելիս սատանեն մարթու անգճումը խանդիսխան քչքչում է, ու կուլի քիզ էլ բան ասավ, կուլի բան միտդ էբի, դրուստ ասա։

Էնչախը քի տեսնելիս մարթ կոսեր թե՝ մտիկ էս ախչկան, արքաութենեմեն ինքն է դուս էկի, սուրբ Սարքիսին է աղանչաք անում, վուր արքաութենին արժանի անե. դուն կե, Մակակո ջան, ավտաս էն ասիր թե՝ «ով զորավուր սուրբ Սարքիս, դուն փրկե ու ազատե էս գիշիր իմ ճարումադաթ սաքեշեն»...

Կուլի յանդղիշ իմ, կուլի շար մտկիր է գալի ինձ, չունքի միղավուր իմ... Համ էլ օմքնու աղոթկը մարթ վունց իմանա, վունց կանա իմանա, յա ինչ դավի ունե վուր իմանա... Աղոթկ անելիս մարթու սիրտը կապվում է աստծու հիդ ու մենակ նրանք գիդին թե ի՞նչ է անց կենում էնչախն իրանց մեչ։

Գալիս է ու գալի Մակակոս.. յիս մե նմուտ էլ աճկս չիմ հիռացնի նրամեն. հորեն, սուրբ Սարքիսի դարի դուսը դեվեր էկավ, բաղնեներու առչիվն անցկացավ, մտավ նիդ քուչեն, էստի Պստի Ռիրթի էգեղեցու պատին էլ դայիմ պաչ արավ... Հորեն հիմի Մեյիդնումն է։ Մակակոս դիդեր, վուր էնդի, Մինձ-Ռիրթի էգեղեցու դնմուդեմը ուփրու մոդիկ ճամփա կա, ամա հիդը ուրիշ ախչկիրքը չկեին ու մենակ բանուղովի ըջի արով գաբեդվա շարավ քարվասլա մտնիլը։

Ինչոր վուր էր, հասավ Մակակոս Կոլոլ-թաղը, իժում Մողնու մեյիդանը (Մողնուբաղ) ու վիրչը յիրանելի Սոյոլակի թաղը։

* * *

Վուտը տուն էդի թե չէ Մակակոս առաջի լեն քուչեն, էն սահաթին բլին հրամայից վուր հիմի մե քիչ հեռու մոդիկ գա. իրան իրան խըջալաթ էր քաշում, ինչ անիս։ Աբա վո՞ւնց կուլի, վուր էս հանգի լեն քուչումը, էս հանգի անցուդարձանոդներումը, էն հանգի լաչաթրիան բիչը նրանն էրեվա, ի՞նչ կոսին։ Իրանց թաղումը—Սեյիդաբաթումը, Սեյիդնումը, նիզ քուչերումը, էլի գլուխը քարը տա, յոլա էր գնում բանը. ամա էստի—Սոլոլակումը քաղաքը ուրիշ քաղաք էր, քուչեն ուրիշ քուչա էր, մարթիքը ուրիշ մարթիք էին ու կնդիրքը—ուրիշ կնդիրք։ Շատ փային դիփ խստակ, լազաթով, չիբիրը ավտաս օսկով լիքը։ Ինքն ի՞նչի էր ջոգվի, ի՞նչի էր նրանցմեն փիսն էրեացի, ի՞նչն էր պակաս՝ բոյին, բուսաթը, թե շուրիրը. սիրունութենով խում ինքն էլ լավ գիդեր, վուր ումնար տեսնում էր, դիփունի վրա սիրունը ինքն էր։

Ինչ մարթու բիձանց մոդ բարիշութինը նեգիլ էր, խելի վուխտ էր Մակակոս էսթենը չէր էլի. էստու համա էլ շատ նուր բանիր տեսավ, շատ բաներու վրա բերանը բաց մնաց։

Հենց տիղնի տիղը, մեկ վուր աչ հիդ մարիկ աբավ, իր աճկերուն չէր ավտում... էնդի էր թե էնդի չէ... Քուչեն էն էր, անիրն էնդունք. ամա ի՞նչեմեն է էլի, յա վո՞ւնց է էլի, վուր էս անիրը մե բաչ դիփ մեսի էրկու, յիրիք գազ բացրացիլ է։ Գանա տունն էլ ծա՞ռ է, վուր իրան իրան բացրանա... էս էլ ի՞նչ էր, քա՛, ասավ Մակակոս։

Ա՜խ, Մակակո ջան, ի՞նչի իս էսենց սաղա, քու հոքուն մեռնիմ. էս իսո ձիր քուչեն չէ, վուր անգերութենեմեն ցիխը ցըխի վրա, ախպեր ախպի վրա, տարես տարի, վրեն էնգադա ավելցիլ է, վուր մե քանի տներու ներքի էտաժը հիմի հենց բռնե սարդափ է կտրվի։

Ի՞նչն է քիզ արմբցնում. մեկին հարկավուրվեցավ, վուր իր սարդըփնիրը մաղազիք դառնա, մեկելեքսնեմա հրամանը հրամանի վրա գնաց ու այ էտենց էլավ, վունցոր տեսնում իս. էստու պես էլ հիշա բա՞ն. ի՞նչ կա էստի արմբնելու։

Դեմուդեմի տնիրը իսո մե հեստի շինվիլ էր, հեստի հանգի ներկվիլ էր, վուր կոսեիր թաքավուրական պալատնիր ըլի։ Ի՞նչ փարշեանգնիր, ի՞նչ արծըվնիր, ի՞նչ բաբաթ բաբաթ վարթիր ու ծաղկնիր, ալիբաստրեմեն շինած էստի էնդի պատերու վրա կպցրած էին, վուրը դռներու ու ապշկերու գլխներու վրա, վուրը սրանց տակն ու կղկներու վրա. ինչ ցուգրումելա պստի բալկոննիր օրփեր ատլասի նման ներկած...

Մնաց հիացած Մակակոս ու ինչրու էն տնիրն անցկացավ, կինազամ շլինքը ծովեցավ խղճինը, շատ վրեն մտիկ անելով։

* * *

Ինչիր չանցկացավ իմ հալալ միամիտ Մակակոյի գլխումը, ինչիր չմիտան էքի նա էս տաս, քսան վուտը փոխեիս...

Ծարաբ վո՞ւնց էր ըլում, ասում էր Մակակոս իր մտկումը, վուր ինքն ու իր նմաններիը հացի հասրաթ ածած ին ու էս տներու տերը էնգադա կարողութին ունե, վուր փուղը գաչ է շինի, գաչեմեն ծաղկնիր ու վարթիր ու պատերուն կպցրի... Թե, ասում է աստուած հրամայից, վուր դիփունքն ինձ մոդ բարեբար ին, կոսե, ու էս վուրդանցի բարեբրութինն էր, ասում է, էս ինչ հանգի դագաստան է, կոսե, ամա էն սահաթին էն միտն եկավ Մակակոյիս, վուր աստուած, ասում է, արթարին ու միղավուրին ջոգում է ու հալբաթ էստու համա կուլի էսենց դագաստան կտրի, կոսե։ Հա՛, հա՛, ինքն ու իր նեգրտինքն ին միղավուրնիրը... էս տան տերն ու նրա նմաններն ին արթարը, թե չէ էսենց վո՞ւնց կուգեր, կոսե։

Ցիրանի էրիտ Մակակոս տան տիրուչն էլ, մեչի կենաղներուն էլ ու մուխը քնթեն դուս էկավ։

Ո՞վ գիդե, ասում էր Մակակոս, ինչ հալալ, աստրձու դուրեկան մարթ էր էն տանտերը, վուր էս փառքին ու հարբստութենին արժանացիլ է... ինքն էր, իր մարթն էր, իր մարթու նմաններն էին միղավուրը, վուր վունչիչ չունին ու չին էլ կանա ունենա։ Աբա ունեցողի ուղողը վո՞ւնց կոներ, քիքս էկավ իրան իրան Մակակոն, վուր մե գիշիրվան վեչերի խաթիր, չէ, վեչերի չէ, թեզուզ ամուրու խաթիր, իր ճարտարագաթ սաքեշեն գրավ էր դրի... Հալբաթաս վուր աստուած կու խոսվեր իրան էլ, իր մարթու գլխին էլ ու բանն էնենց կու բերեր, վուր էն սաքեշի փուղերն էլ Սոլոլակումը կու թողնել տեր, շունքի էս թաղի կինոդնիրն էին արթարը։

Չէ, արի հիդ կէհա... գլուխը մարթու բիձանք էլ քարը տան, նրանց վեչերն էլ. էս սահաթին փուղերը կու տանե Կունգուրինց Թաթելին հիդ կուտա ու սաքեշեն կու ազատե...

Աստուած կու վճարե էս աբարմունքը, ասում էր Մակակոս, ու հենց գիդեր դուրթ հիդ է գնում, ամա տեսավ վուր մե տաս վուտ ուփրո առալ է գնացի։

Ամա էս մտկիրը Մակակոս շուտ քամու էրթա. հենց մե էրկու վուտն էլի փոխից թե չէ, տեսավ էրկու աղչիկ էին գալիս խիստ մոգնի զուրած. էրկուսն էլ մե թահար գլուխ ունեին կապած, էրկուսն էլ մե ռանգի դեբիա ունեին հագած, էրկուսն էլ մե թահար ձախու ձեռով փեշիրը մոդնի բռնած։ Էսենց փեշ բռնելու մոդեն Մակակոն նուր էր վարավուրգ անում ու ջեր չէր հասկանում, թե ինչ է նշանակում. ամա մե էրկու վուտն էլ վուռ անցկացավ ու մե քանի ախչիկ էլի տեսավ նրանց հանգը փեշիրը բռնած,

էնչախն աշքարա իմացավ, վուր էս էլ նուր մոդա է էլի, կոսե։ Տարավ ինքն էլ ձեռն էննենց, ամա էն նմուտին մաշուր արավ, վուր բանը լավաթով չէր դուս գալի ու փիշը վեր էթող... ամուքու էլ չէր գիդի թե ինչ էր արի։

Էսենց էլ անզսկածի բան կուլի՞, ասում էր Մակակոս, վուր էս մոդի ջեր խաբարն էլ չէր հասի իրանց թաղն ու էստի կի դիփունքը սովրիլ էլ ին ու պրծիլ էլ։

Աբա, Մակակո ջան, քիզ ո՞վ էր ասում, վուր Մեյիդաբաթի թաղումը ծնվիս ու մարթու դնաս։

Արա, արի միզ մոդ Սոլոլակ, մինք քի շատ բանիր կու սովրեցնինք, շատ բանիր կու հիշատացնիք քիզ համա. միր թաղի հավեն ուրիշ է... էս-զանցի մայիմունութինը ուրիշ, մայիմուններն ուրիշ... մեկը վուր քինթը բռնած ման գա ու իմանան վուր էս մոդա է, մեկելեքսնեւետ, քու արիվը, դիփունքը քինթը բռնած ման գու քան ու հենց դիփունքն էլ մե թահար։ Դուն կացի աբա միզ մոտ, տես դիփունի վրա լավ քինթ բռնիլը դուն կու գիդենաս, Մակակո ջան։

* *
*

Ինչոր վուր էր, հասավ Մակակոս իր մարթու պատվական բիձա Ալեքոյի տներուն...

Տեսավ, ու ինչ տեսավ Մակակոս... փարշևանգներավուր տնիրը մտեն ննգավ, ձիր արիվը։

Էրկու հարուր մենակ վիշապի գլխնիր էր կպած ագոշկերու ճակտին. բերաններիրը բաց էին արի ու հենց գիդեիր էն սահաթին պիտի կուլ տան թե օմքին ձեռը դիբցրիլ էր պատին։ Կինաղամ վախեցավ խիղճ Մակակոս։ Ծաղկնիրն ու վարթիրը խո վիս էկադրեբա. մե ծաղկնիր ու վարթիր էր օլբրովի բերած ագոշկերու բոլորքը, վուր կոսեիր կռիվ էին տալի դուրթ ծաղկներու հիդ, վուրնոր անթիվ ու անհեսաբ դարսած էին գարշոկներով ագոշկերու մեջ։

Էս էր, էս տնիրն էր, էս տներու տանդիկնի վեչերն էր, վուրդի Մակակոս արժանացիլ էր մեձրվելու։ Փառք վուր չէր, բաս ի՞նչ էր, ձիզ իմ հարցնում։

Մոդ գնաց Մակակոս դռանն ու քաշից զանգակը գլմփ։ գլմփալի սըրտով։ էն սահաթին դես ու դեն հիդ մտիկ արավ, մե տեսնե թե ո՞վ էր նրան թամաշա անում էն հանգի պատվական դռներու առիվը կանգնած։

Ա՜խ, Կեկել ու Նինուցի, ի՞նչ կուլեր մե նմուտ հենց էս չախը մե դեսն անց էիք կացի ու ձիր աճկով տեսի թե ինչ դռներումն է տուն գնում ձիր Մակակոն, էնչախը կու իմանեիք թե ի՞նչ բարեկրմութենի տեր է նա ու յիրանի կուտեիք նրան։

Նեքսեմեն վուտի ձենն էկավ թե չէ, Մակակոս էն նմուտինեւետ բչին ճամփու գցից, վուր դուռ բաց անողն էլ չտեսնե նրան։

Էս գիշերութին խոմ իրան վունց բիջ էր հարկավուր, վունց փանառ մեկելներու պես... աբա նրա մարթը կու թողներ, վուր իր ջեյրան Մակակոն բչի ու փանոի արով էր հիդ գնացի էլես գիշիրին Սոլոլակիմեն Սեյիդաբաթ։ Ճար չկեր, ինքնեւետ պիտի էկիլ էր ու տարիլ իր կնգան. ինչոր վուր էր իր Մակակոն էր, ի՞նչ անիս։

Բաց էլավ դուռն ու մե հրաշալի լաքիա էրևցավ ֆրակով, սիպտա ժիլետկով, սիպտա դալստուխով ու սիպտա փերչըտկներով, վուր Մակակոն ջեր հենց գիդեր ինքը բիձա Ալեքոն է ու կինաղամ խուռը գլուխ վեր էբի, մագրամ չուստ վրա ննգավ բանի զօրութենին ու շտապով դիվիր վազեցավ վաթսունուչրկու վուտանի մարմար քարե սանդուխտը։ Ամա ի՞նչ սանդուխտ, ամեն մե վուտը փոխելիս, հենց գիդեր յիրգինքն էր դիվիր գնում. էննենց դուր էր գալի վրեն դցած կարմիր մահուդն ու դես ու դեն դարսած ռանդե ռանգ ծաղկնիրը։

Աբա ով արժանի կոներ նրան էն օրը էս սանդխաներու վրա դիվիր գնալը, վուր սաքեշեն չէր դրավ դրի։

Վիրշը Մակակոն արժանի էլավ իր անտիկա կարտինկա ձալո Վարինկին ու նրա հիանալի կացարանին։

* *
*

Վարինկին ջեր մե քիչ արեճաշնիկա, վուր առաչի էկողը Մակակոն էր, ամա մեձրած զոնաղ էր, էկիլ էր, չարա բեչարա պիտի ընթունիլ էր, ինչ անիս։ Շատ ասավ իր մտկումը թե էս էլ ինչ բեդասլութին է էսենց վաղ գալը, շատ իրան իրան քրքրվեցավ ու կոտրտվեցավ. ամա յիփոր մոդ էկավ ու գլխեն ինչրու վուտը մե լավ բաբաթ տնդրից Մակակոյին, հեստի սիլիբիլիք կցից հիդը, վուր խիղճ Մակակոյի կինաղամ արտրսունքն էկավ Վարինկի քաղցր խոսկերեմեն։

«Ի՞նչ բարի սրտանի ձալո իմ ունեցի»— փիքր արավ Մակակոն։

Հալբաթ էս բարի սրտութինն էր պատճառը, վուր Վարինկեն ննգավ Մակակոյի առաչ ու վուղչ տուն ու տիղը ման ածավ։

Տուն էր էս թե դրախտ, վունց էր ասի Մակակոն։ Դրախտը ջեր չէր տեսի ու էս հանգի էլ գանա տուն կուլեր գեղնի էրեսին։ Ո՞վ շինից, յա ի՞նչ ձեռը բահամ էբի էն փառավուր օթախնիրը, օսկե գաջած պատիրը, էրգենումեկ հալիլեքը, տուլե զանավեսկեքը, մախմուր փարդեքը, մախմուր մեբիլը, բրոլե ճաղիրը, ռանգե ռանգ ներկած պլպլալի հեստի պոլիրը,

վուր պատկիրքը մեջն էրևում էր։ Վո՞ւր մեկը, վո՞ւր մեկը մարթ հիդ ասե... շշկվեցավ խիղճ Մակակոս ու էլ չէր իմանում ինքն էր էնդի, թե աճկիրը կապիլ ին ու էնենց յիրգնքումը ման ին ածում։

Գնաց, գնաց իմ խիղճ Մակակոյի աճկիրը...

Վուրգի էր կանգնի, վուրդի էր մտիկ արի, վուր օթախն էր ուփրո գովի, վուրի սարքն ու կարքն էր ուփրո հավնի, ինքն էլ չէր գիդի. ամա դիփունի վրա շատ իրա բիձա Ալեքոյի օթախն էր արմցնում։ Վուրչ Ղարամանիանը, կոսեիր, պատերու վրա է դաջած... քանի մեքրիք, ծառիր, ձիավուրնիր, հուրանուրգնիր, մծեուրնիր, նիտ ու անիղնիր, հենց բռնե ինքը Գարդան—Քեշանն էլ դուս էր բերած էնդի։

Կուլի մե օր բիձա Ալեքոն հուրանուրդ է էլի, փիրը արավ Մակակոն, ու էնդուր էլ իր օթախն էսենց է շինիլ տվի. ամա էս վո՞ւնց է էլի, վուր ինչկի էսօր չի իմացի։

Ով գիդե, Մակակո ջան, շատ կարելի է, վուր մե օր պարուն Ալեքոն ջոմարդ ձի նստող է էլի, շատ կարելի է լավ նիտ ու անիղ բանեցող է էլի. յիս էտունց խաբարութին չունիմ. ամա ասում ին, վուր խիստ աստվածապաշտ ջնհել է էլի իր ժամանակին ու ախպրտերանցմեն էնդուր է բաժնվի, վուր էս փուչ աշխարքեմեն հիռանա ու անապատ մտնի. մտգրում բախտը, խոմ գիդիք, խղճի գլխին օյին է էկի ու մե կնիկը, վուր մեռիլ է, մեկելին է ուզիլ տվի։ Հուրս անիլը կի, ասում ին, խիստ լավն է գիդացի, ամա էնենց հուրս, վուր վունց մծևար է էլի հարկավուր, վունց նիտ ու անիղ... էնենց բերում է էլի բանը, վուր ուրիշի ջիբի փուղիրը մե նմուտումը թիվերով ու վուանիրով իր ջիբն է էլի հուրս գնում։ Ամա դրուստն ու զուրթը ասում գիդե, Մակակո ջան, դուն խո գիդիս, յիս էտ հանգի ասա կոսերուն չիմ ազատում։

Վիրշը Վարինկեն էրի Մակակոյին իր օթախն ու ասավ՝ «այ, էս էլ իմ բուդուարը, միթամ իմ խոովլու օթախն ասում է» ու մե մեկ, մե մեկ հիդ էր պատմում էս խոսկի նշանակութինը, վուր ղոնաղնիրը կցեցին գալը ու Վարինկեն դուս վազեցավ նրանց դեմ ու ասաչ։

* *
*

Մնաց Մակակոս Վարինկի բուդուարումը մենակ ու ձլիվ չարա էլավ նրա դաթրած ծնգներուն. էնենց վեր նստավ դիվանի վրա, վուր կինաղամ լիթոնը բլավ պրուժինի հարարաթեմեն։

«Էս էլ ի՞նչ էր, քա՛»,— ասավ Մակակոս ու կցեց վրեն օրրվիլ։

Վարինկի բուդուարն ու Մակակոս մենակ էնդի...

Աբա հիմի իս սիրուն, Մակակո ջան, հիմի է էրևում ինչոր վուր իս. էս օթախը առանց քիզ մե գրաշ էլ չարժե. յիրանի քունն ըլի, ի՞նչ կոնիս. իժում խոմ էլ էս Մակակոն չիս ըլի, Մակակո ջան... էհ, գլուխը քարը տա, մատի ծերերը խո էլ էնենց բշբշտած չի ըլի։

Ինչիր փեքթ արավ Մակակոս մե քանի նմուտումը, ինչ խուռը խուռը հոքուցներ դիվիր էկավ նրա դռշմեն։

Վարինկեն վուր խոովում է, ասում էր Մակակոս, էս օթախումն է թախկենում ու էս դիվանի վրա օրորվում. իրան, Մակակոյի խոովելու օթախը կի թոնդրատունն էր, վուրդիոր դայիմ կոխպլվում էր խանդիխան ու թարևքի կշտին, մե հին կոտրած զանգի վրա նստած, սաղ ատաթնիր էր անցկացնում ինչրու յա չարացած մարթը դուս կկհեր տանիմեն, յա նրա ջնիրը կու դուս կորշեին նրա ջանեմեն։

Հալբաթտա, ասում էր Մակակոս, էս տներուն, էս տներու տանդիկնին էս հանգի բուդուար կու սազգեր ու իր համա թոնդրատունն էլ հառամ էր. ամա միթե ինքը չէր սազգա էստի...

Վիկացավ ու տրյումֆի առչիվը կանգնեցավ... իրան էլ դուր էկավ իր պատկիրը... էսենց սիրուն ջեր չէր տեսի իր գլուխը։ Մտի՛կ, ասում էր, հալիլեն էլ ուրիշ հանգն է շանց տալի էստի։

Խան մե կուռը վի քաշից, խան մեկելը, խան մե կխկնեմեն տնդրից իրան, խան մեկելեմեն ժայտաց, ծիծաղեցավ, խաղաց թրթը թրթը անելով, իժում լիզուն հանից ու քոքոլա ածելով. «քու աճկն էլ» ասավ հալիլին ու հիռացավ։

Ննգավ մեկել բանեու ջանը. մե իմքին, մե իմքին չէթող, վուր ձեռը չէր դիբցրի, դիփ տնդրից, դիփ տեղնե արավ՝ կրե, իլեքը, ստոլի սուփրեն, լամպեն, շամդնիրը, էտաժերքի վրա դարսած մանդր ու մունդր բանիրը, դի՛փ ,դի՛փ. օմքին տեսիլ էր, կոսեր մե սիրուն թռչուն է սիրուն զափաղումն ու կտուցով խան մե իմքնի հիդ է խաղում, խան մեկելի հիդ։

* *
*

Սիրտը բարկեցավ, օչով չէր տուն գալի ու ինքը գաբեդվա չէր անում դուս գնալը։

Նստեցավ էլի դիվանի վրա, էլի իր թոնդրատունն ու կացարանը միտը ննգավ...

Աստուծ, ասում է, հալալին է տալի ու ի՞նչով ինքը հալալ չէր, ի՞նչով իր մարթը հալալ չէր... Ինչու

անիծվում ու Լստու վրա հալալը վո՞ւրը կուլի, ասում էր Մակակոս...

Ղուրթ է, իր մարթը մե պստի մվդ ուներ. էտ էն է, վուր խանդիխան մուշտիք էր վեր տալի իրան Մակակոյին. ամա Լստու շառիմեն ինքն էր քաշում, ով ինչ դավի ուներ, ումն ինչ էր պակսում, ու միթե էսենց պըստի բանի համա, վուր էն էլ հազրենը մե ջեր ձլիվ էր պատահում, աստուած ջիգր է անում։ Յա, ասինք, մարթը խիստ էլ միղավուր է, ինքն ինչով էր միղավուր խիղճը։ Էսենց էլ իր սիրեկան Կեկելն ու Նինուցին, նրանք ինչ գեթ ունեին աստծու մոդ։ Էսղաղա դովլաթը կի բիձա Ալեքոյին է տվի։ Ինչի՞, ի՞նչ էր արի նա, ինչ աստծու դուրեկան բան էր գործի էն հանդը, վուրի նմանը, վուրի տասնեն մեկը, հարբրեն մեկը իր մարթը, Կեկելի մարթը, Նինուցու մարթը, ուրիշ էլ շատերը չին արի, չին՞ կատարի... ի՞նչ էր, ի՞նչ պատճառը։

Բիձա Ալեքոյի օթախը միտն էկավ ու պատերու վրա դաջած հուրսուրդ-նիրը։

— Հա, էս է, էս կուլի պատճառը,— ասաց Մակակոս, վուր Ալեքոն Էսղաղա փուղիրը մոդ է արի, էսենց դովլաթի տեր է դառի։ Ցիրանի իր մարթն էլ, ինքն էլ հուրսնուրդ էին էլի... փիքր էր անում Մակակոս, էնչախը խո իրանք էլ կունենին էս հանգի տուն ու տիղ... ամա հուրս անիլը վուր առանց արուն թափիլ չէր ըլի, նա վո՞ւնց պիտի թուչուններ ու գազանիր էր սպանի, վուր մե հավ մորթելու վրա ջանը դող էր ննգնում։ Համ էլ ո՞վ հուրսնուրդ է, գանա բիձա Ալեքո կդառնա. բաս ինչի իրանց թաղի Դաթեբոն հարուստ չէր, նրա վրա լավ հուրսնուրդ վուրդի կուլեր, վուր ամեն մե գնալով տաս տասը կուրդղել ու թուչուններ էր բերում։

Չէ՛, էսենց հուրս անելով էլ բան չէր դառնա... բաս խիլքո՞վ։ Կուլի բիձա Ալեքոն խիստ խելոք էր... ամա նրա վրա խելոքը իրանց տանու տերտերն էր, վուրնոր խանդիսխան կու նստեր իր մարթու մոդ ու փունչ խմելիս, յա հալարիհշեն ձեռին, Օսեի գեղեցիկի արարմունքն էր հեքիաթ անում, յա Կայինի ու Աբելի բանիրը լազաթով պատմում... Բաս ինչի էն տերտերն էլ էնենց հարուստ չէր ու նրա կնիկն էլ Վարինկի բուդուարի պես բուդուար չուներ։

Չէ՛, էս էլ չէր։

Բաս կո՞ւլի մարթը ղուրթ էր գանգատվում, վուր նրա վուրփութենումը բիձա Ալեքոն յիրիք չուրս հարուր թուման փուղ է փախցրի նրանցմեն... կո՞ւլի էստումը ուրիշ ննգրտիք էլ ունենան, ուրիշներեմեն էլ փախցրիլ ըլի։ Հա՞, էսենց խո հիշտ է... էսենց խոմ դիփունքը կարող ին, էսենց խոմ իր մարթն էլ կարող էր, վուր համքրի փուղիրը պահում էր... ամա խո ղուրթ կայինութին կուլեր, վիկալավ ու ջգրու թքից բուդուարին։

Մե բաշ Մակակոս վիր թռավ դիվանեմեն, կոսեիր խուռը քնեմեն է զարթում. դոներումը հինգ վից ախչիկ մնատ էին տուն գալի ծիծաղով ու քոքռուցով...

* *
*

Էկան ու էկան, մոդ էլան ու մոդ Վարինկի ղոնաղնիրը, լքցվեցավ բուդուարը, զալեն, գաստինեն, դիփ ախչրկիրք, դիփ կնդիրք։

Աբա թամաշեն հիմի էր, աբա տեսիլքն Լստի էր։

Քանի Նատաշա ու Անիչկա, քանի Դարինկա ու Քալինկա, քանի Մաշինկա ու Սաշինկա, քանի Նինիչկա ու Սոնիչկա, քանի էլի ինկա ու մինկա ամեն բաբաթեմեն, ջուրա ջուրա, քանի ջուրա էլ գուլիք։ Ջեր մենակ տասնուօխտը բաբաթ Սոնիչկա կեին՝ բացը, ցածը, տուուզ, նիհար, գիլիկ, դնգր, լոնդի, ճնավո, նազ, բոշա, ապիզ, նեժնի մարոժնի, խելոք, տուտրուց, ցանցառ, շետապուտա, քարափշուտա. քալինկերուն ու մաշինկերուն խո ո՞վ էր համբրում։ Վուր մեկը մարթ կանա հիդ ասի. էլ քախկումը մե միծաղլան հայու կնիկ չէր մնացի, վուր էնդի չէր էլի։

Իժում ի՞նչ ռանգե ռանգ հագուստնիր, ինչ ղուքս՝ կարմիր, կանաչ, մավի, դեղին, գավանա, բորդո, ցիս փեր, ծղլիս փեր, պիրիս փեր, թագվիս փեր, մախոխիս փեր, մոդնիս փեր. ի՞նչ ղումաշնիր՝ գլասե, ֆայե, մորե, կաշմիր, մախմուր. ինչ մոդեք, գիպյուրնիր, բլոնդնիր, բրիլիանտնիր, օսկե ձեցկվիկ ճապաններու հաստութին, մենաքրե սահաթնիր կղկանը դայիմացրած, բրասլետնիր ու ճակտի աղլբխնիր վուր, վուր, վուր... լիզու պիտի վուր պատմե։

Վառվռի էին տալի էն պատվական ախչրկիրքը էնդանցուրօբեն ու դիփունի մեջ ինքը Վարինկեն—խազիաիկեն խո աստղի կտուր էր կոսեիր դրուստ, նրա մե աղունակի յիրիշը յիրիք Քալինկա ու Մաշինկա աժեր։

Խառնվեցավ սրանց մեջ իմ Մակակոն ու սիրտը հուփ էկավ, մե հուփ էկավ, վուր հենց գիդեր մանգանեն ննգավ։

Վա՜յ, դուն էն Մակակոն չիս, Մակակո ջան, վուր դրանց խաթիր սաքեշետ գրավ դրիր... ի՞նչ պատահեցավ քիզ. մի նեղանա գեթաղվանե, զողն էդիգամն է։

Կո՞ւլի էտ հրաշալի ախչրկերանց շուխկը քիզ էրում է ու էնդուր իս էտենց։ Բաս ի՞նչ էիր կարծում. չի՞ս գիդի վուր արեգագին դեմ ու դեմ մտիկ տվողի աչկիրը կու էրվի։

Հիռացի դրանցմեն, դուն իմը լսե, թե չէ կու փոշիվնիս։

Ամա դուն ինձ չիս լսում, յիս միղ չունենամ, Մակակո ջան։

* *
*

Վառվեցավ մումիրը, լամպերը, կանդելաբրիրը, ձքվեցավ էրգեն ու մեկ ստոլը. մոդ էկավ լոտոյի դուրին ու տոպռակը ու թեփշերով կարմիր ու սիպտա լոբին։

Ամա ինչրու լոտոն կու սարքվիր, ինչրու էս պատվական կնդիրքն ու ախչկիրքը բոլորիշուր կու նստեին, մե ժվժվուց վիր արին, մե դալմազալ։ վուր կոսեիր, խոջի բաղնիսն է դրուստ։

Քա՜նի ծիծաղ ու քոքոուցնիր, քա՜նի հանաքնիր ու սուր խոսկիր, քա՜նի գեթաղվեք ու շենի ճիրիմեք, քա՜նի ով է ու վիս էկադրեբեք։

Ում վրա չխոսեցան, ումը չճոշացին, ումը չբամբասեցին։

Քանիսի տուն շինվեցավ, քանիսինը քանդվեցավ, էստի, մե կես սահաթումը։

Ի՜նչիր չասվեցավ, ի՜նչիր չլսվեցավ։

Ո՞վ չդատապարտվեցավ։

Մարթ թամաշա էր արի էնչախն էս պատվական ախչկերանցը, կոսեր քախկի դատամերնիրը սրանք ին ջոգած ու սրանց ձեռին է դիփունի մահն էլ ու կինքն էլ։

Օչով չթոդին, օչովին չմտեն գցեցին իրանց տիս ու ճանչներեմեն իրանց իր ու օտարներեմեն իրանց սիրելի բարեկամներեմեն։

Վիրչը հասան մեկմեկուն։

Բաժնվեցան դաստա-դաստա, թաբուն-թաբուն, վուրը մե քնջումը, վուրը մեկելումը, վուրը նստած, վուրը կանգնած։ Մե դաստի ախչկիրքը մեկել դաստի ախչկերանց վրա էին խոսում, մեկել դաստինը մեկսելներու վրա. մե թաբունի ախչկիրքը մեկել թաբունի ախչկերանցն էին բամբասում ու նախատում ու հիդը մոդնի չայու փնջնիրը ձեռին, մոդնի բրռնած, մոդնի մանդր սուխարուն նեժնի կծում։ Ցադ մարթ անգաճ էր դրի սրանցը, կոսեր դիփունքը փիս ին, դիփունքը անբախտ ին, դիփունքը փիս մարթկերանց կնդիրք ու ախչկիրք ին, դիփունանց մարթիքն ու հերիրը յա կուտրիր ին, յա ուրիշի փուղիրովն ին ապրում. էնենց գատապարտում էին իրանք իրանց գլուխը մեկ մեկու բերնով, էնենց մե դաստի դիփունի վրա լավը մրով ու ցխով էր ներկվում մեկել դաստումը։

* *
*

Ո՞վ էր սրանց մեջը դուրթը, ո՞վ սուտը, շատ դժար էր ջոգիլը. ամա մարթ ինչ էր ասի, ինչ էր փիքր արի, վուր մե դաստի մեկ մեկու բարեկամնիրը, ուրիշ ուրիշ դաստերումը խառնվելիս, մեկ մեկու դուշման էին դուս գալի ու ուրիշ դաստերու դուշմնիրը, մե դաստումը ռաստ գալիս, փըլ-

փըլի դոստիր էին երևում։ Ի՜նչ էր ասի մարթ, ի՜նչ վեհու էր կարթացի սրանց դիխին, վուր մե տիզ մեկ մեկու ձեռն էին հուի տալի, մեկ մեկու դոստ ու դորիլ էին կանչում, մեկ մեկու ջան ու ջիգար էին ասում ու մեկ մեկեմեն էրեսը շուռ տալիս, մեկ մեկու աճկն էին կարում ու գլուխը խոզում։

Հենց բոնե իրան խազիաիկին էլ չխնահեցին։ Նրա դոնաղ էին էկի, նրա համա զուքվիլ էին, նրա վեշերի լոտոումը պիտի ձքվիլ էին, նրա չային խմում էին, նրա մոդնի սուխարիքը կծոտում ու էլի քանի պատիվնիր պիտի ստացիլ էին, քանի մուրաբեք ու մրքիր պիտի անուշ էին արի ու չէին ամանչում ինչիր էին ասում խոզմի վրա, ինչ շառիր էին մոզոնում վրեն։ Էրնեկ գիդենամ, ասում էին, էսղադա հոքուն ուր է մոդ արի. էս խո միզ չէ մեձրի, ասում է, էս էնդու համա է արի, վուր իր մոդնի տուն ու տիզը շանց տա դիփունին, ասում է, շատ հարկավուր է, թող ինքն արմբնա, ասում է։ Փառասիրութենեմեն տրաքվում է, կոսե, մեկին, վո մե գրոշի իմքին է բախշում, էնենց է բերում բանը, վուր դիփունքը տեսնին, ասում է։ Խիստ է քրքրվում, կոսե. մե միտը բերե թե ինչ էր, ասում է։ ու հիմի կի ատլաս բաշմկներով է ման տալի, կոսե, ու կցեցին հին բոխչեքը մե մեկ բաց անիլն ու հասան էն տիզը, վուր սուտ բաղնքսի զուրթ բոխչեն նշվանտեք դառավ։ Ով գիդե էլի ինչիր կու հիդ դարսեին, վուր մե բաշ ինքը Վարինկեն, վուշնոր մե նմուտ մե տիզ չէր դնչանում ու մե դաստեմեն մեկելումն էր խառնվում, մոդ էկավ սրանց մոդ ու նեժնի նեժնի ինչիր էլ պարծեցավ։

«Քիպես էլ խազիաիկա կուլի, Վարինկա ջան, ասին էրեսին, ինչ սիրուն իս ու ինչ ջեհել իս էրևում ու, ինչ լազաթի տուն ու տիզ ունիս ու, քի պես թավդաբալ ախչիկ ով կուլի ու...»

Օ՜հ, տեր աստուած, է՜սքան էլ սուտ սիլիբիլիք, է՜սքան էլ դալբի-զուլաբութին։

Հալբաթտա դիփունքն էս հանգը չէին. դիփունքը խոսող չէին, դիփունքը բերան պատռած չէին. ամա նրանք ջեր նուր էին մարաքա ննգնում, ջեր նուր էին դուս կանգնում։

Հալբաթտա նրանց մեջը մե քանի հալալնիր էլ կեին, մե քանի բարի սրտանի էլ կեին. ամա ինչ գուզե ծաղիկ դեվեր ննգնի Քռի գոչգոչներումը, հալբաթտա հիդը կէհա, հալբաթտա դայտնարներումը ննգնելիս անդունդը դեվեր կու կորչի։

* *
*

Իմ Մակակոն էր մենակ, իմ խիղճ Մակակոն, վուր դիփունիմեն աշքարա ջոգվում էր, վուր տարեկուսարած մնացիլ էր ու էլ չէր գիդի վո՞ւր

մկան ծակը մտնի էս աղաղիլներեմեն։ Հենց գիդեր ջիանճվելա է նրանց մեջն ու ով ուզեցիլ էր նրանցմեն, վուտի տակը կու ճխլեր խղճին։

«Վա՛յ նրա միխկն, ասում էր Մակակոս, ով սրանց ճանգը կու ննգնի»։

Քանի էստի չէր, քանի սրանց մեջը չէր, խիլքի ծերը գնում էր սրանց համա, փառք ու պատիվ էր համարում սրանց մեջը խառնվիլը ու հիմի վուր էստի էր, հիմի վուր սրանց էրեսարքն իր աճկով տեսնում էր, սրանց ձենն իր անդճով իմանում ու ում փեշին ուզում էր, դիբչում էր, հիմի կի էրնեկ էր տալի, վուր մե չուստ էսղանց աղատվի, մե սրտաբաց իր կեկելին ու Նինուցուն պատմե էսղադա բանն ու խաբարը, էս միծաողլաններու ասա կոսեքը։

Էսենց է՝ շատ բան ինչ հիավեմեն էրնեկ տալու է, մոդկեմեն շատ ջեր կորցնում է իր հիացքը։

Համ էլ ինչ դիդեր խիղճը, թե չուրս քսան հոքու վեչեր կուլեր ու էն հանգի աժդահա, գեներալ կնդիրք ու ախչըկիրք կուլեին խառը, վուր կոսեիր սաղ աթմոզթի կուլ կուտեին թոխլո ձվի պես։

Սրանց մոդ Մողնինց Նատաշեն ու Բուդաղինց Անիչկեն փաս, Լաղլաղինց Դարինկեն ու Կոմբոստինց Քաիինկեն հրիշտքներ, Սիվծիվինց Մաշինկեն ու Քիմանինց Սաշինկեն էրեխերք։

Հենց էն ջնջնումը, վուրդի Մակակոն կուչ էր էկի, մեկը հեստիկը կանգնած էր մե ջղուբ ախչըկերանց մեջը, վուր Մակակոս սարսում էր ու դողում քանի վրեն մտիկ էր անում։

Մինձ, լեն, հաստ, էրեսը կարմիր կոմբոստոյի նման, վուր կոսեիր դրագունի ունտրափիցար ըլի պախոդեմեն նուր հիդ դառած։ Ամա մե գուքած, մե նեժնի հաքած, վուր մարթ հենց կու գիդեներ տասնուինը տարեկան նորահարս ըլի հաղրած թագի տակվան համա. ով կոսեր թե քառասունն էլ անց է. չուրս վերշոկ մենակ չիքիլի հաշիի լենքը կուլեր ու բաց մավի մախմուր ճակտի աղլբխումը մե ահագին բրիլիանտե աստղ ուներ ցցած, վուր կոսեիր թաքավորի թագեմեն ըլի փախցրած. էն աստղի տակն էլ յիրիք մանդր էլի բրիլիանտե ցրեմլիքը սիրուն դողդրդում էին, քանի նա գլուխը նեժնի ժաժ էր տալի ու ծիծաղում։

Ինչիր չէր ասում էս գեներալ դնգր դամեն, ինչիր չէր պատմում, վուր Մակակոյի մազիրը բիզ բիզ էր անում դրուստ։

* *
*

Շատ չալիշ էկավ Մակակոս, վուր մե էն քընջնեմեն դուս սլքվի, մե ազատ շունչ քաշե, ամա չէր ըլում, էնենց կանգնած էին անիծածներն առչիվը, վուր ճամփա չէր գթնում անցկենալու ու էնղադա համարցակու-

թինն ով կուտեր նրաս, վուր էն հանգի ազաղիլներուն դեմուդեմն ասիլ էր, թե մե ճամփա տվեք ինձ։

Մե բաշ էն գեներալ դամեն հիդ մտիկ արավ ու մե խիթից Մակակոյին, վուր խիղճը տիղնի տիղը հալվեցավ ու թայլին վեր կու ննգներ, վուր նստած չէր ըլի։

Ինչի խիթից էնենց էն դամեն Մակակոյիս, չիմ գիդի ձիր արիվը՝ հալբաթ էնդուր, վուր նա գեներալ դամա էր ու Մակակոն մենակ Մակակո։

Ամա ինչրու Մակակոս ուշկի գուքեր էն խիթելիմեն, մե ուրիշ գեներալ դամա մոդ էկավ Մակակոյի առչիվը կանգնած դառտի մոդ։ Սա էլ քառասուն տարեկան կուլեր, ամա սա իստակ ուրիշ իմքին էր. կարճ, հաստ, փքած, էրեսը սիպտա գոգրի նման, էլ վունց աճկիրն էր ջոգվում, վունց քինթը, վունց լենքը, վունց էրդենքը. դրուստ կոլոլ բուրթի էր անիծածը. հիդն էլ էնենց փնչում, վուր կոսեիր կրակի մաշինա ըլի բանելիս. ամա մե ղլպլտած, մե ղլպլտած, վուր օսկին ու բրիլիանտները բռնով էր վրեն ածած. մենակ ճակտի աղլուխն ածեր ավտաս հինգ հարուր թուման, դիփ փիրուզենիրեմեն ու բրիլիանտներեմեն ծաղկեիր էր դուս բերած վրեն ու ջինս մարքրտե փոթլիր կլապիտոնով կարած։

«Թազա խաբար, թազա խաբար», ասավ էս բուրթի՝ գեներալ դամեն գնգր գեներալ դամին ու ինչոր քլփլացին ջեր մեկ մեկու անգճումը, իժում մեկելենիրումը։ Մե բաշ դիփունքը մետի հիդ մտիկ արին Մակակոյին ու մե ծիծաղ ու քոքոուցնիր վիր արին, վուր խիղճ Մակակոս իստակ շշկըլվեցավ։

* *
*

Ի՜նչ ահ ու դուղ ննգավ Մակակոյի ջանը, ի՜նչ խաբրնիր անցկացավ նրա սրտումն ու մտկումը, արա վո՞ւնց ասիմ...

Ջեր հենց գիդեր էնդուր ին ծիծաղում վրեն, վուր դիփունքն իմացան, վուր փեշաքրի կնիկ է. ամա նրանց ի՞նչ դավի թե կի ձալոն կանչիլ է ու մեձրիլ... ի՞նչ անինք վուր իրանք միծաողլաններու կնգիրք էին, ինքը խո նրանցմեն վունչիչ չէր խլում։ Իժում իր շուրերուն մտիկ արավ. շուրիրն էլ, ղուրթ էր, նրանց ջուրերու նման չէր, ամա էնենց մասխարա գցելու էլ չէր։ Բաս ի՞նչն էր գժվեցրի նրանցը, վուր էսենց վրեն ծիծաղում էին։ Կուլի էնդուր, վուր մենակ քնջնումը նստած է ու օչով դոստ ու դոբիլ չուներ, վուր հիդը խոսում ըլի. ինքն ի՜նչ անե, ինքն ի՜նչ միդ ուներ։

Մե բաշ սաքիշի գրավ դնիլը կեծակի պես անցկացավ մտկումն ու ձեռն ու վուտը սառուց կտրվեցավ։ Կուլի իմացիլ ին ու էնդուր ին ծիծաղում. վա՛յ գեդինը վուր մտնի էն լա՞վ չէ, ամա վուրդանց կու իմանեին

էս բանը. Կունդուրինց Թաթիկը կեսօրի վուխտը Սելիդաբաթ էր ու էսենց անգսկածի էստի խաբարը վուրդի կու հասցներ. էն էլ էս հանգի պատվական օնչներու մոդ նրան ո՞վ կու մոդ թողներ. համ էլ նա չէ՞ր, վուր օրթում հավատ արավ, վուր խոստովանք կու պահեն։

Չէ, սաքեշի բանը սրանք չին գիդի, չին կանա գիդենա. բաս ի՞նչն էր նրանց էսենց քոքռեցնում... Մտավ խիղճ Մակակոս շփոթված փքրելու ծովը, վուրի մեջ իր անկարա սիրտը էլբան կտրած գեմու պես խան մե տալդի ծերին էր դիվիր ննգնում, խան էրկու տալդի մեջը խիզտվում։

Ա՛խ, Մակակո ջան, յարաբ քու սիրտը քա՞ր է, թե ինչ է. քսան ու չուրս սահաթ չկա, էտ մե լոտոյի խաթիր, քանի բանիր անցկացավ քու սրտումն ու էլի դիմնում խ։

* *
*

Վիրջը Մակակոս հենց դիդեր չիրգնուց ձեն էկավ նրա համա՝ խաղիակեն դիփունին ասում էր «մոբձանդիթ, համե՛ցեք»։

Անչախ գեներալ դամեքը հիռացան իրանց կամպանիով, անգտխ Մակակոս ազատվեցավ նրանցմեն ու ճամփա գիթավ անցկենալու։

Ամեն քնչնեմեն, ամեն օթախեմեն մոդ էին գալի ու մոդ լոտոյի ստոլին մե հարայի հրուցով, մե դալմաղալով ու դիժինով, վուր կոսեիր մե լավ վարժած դոշում թոփ ու յարաղով վրա է դառնում բիրթ վիկալնելու։

Մոդ էկավ իմ խիղճ Մակակոն էլ ու չէր իմանում թե վո՞ւնց է մոդ գալի։

Նստեցան լոտո խաղողնիրը լոտոյի բոլորքը. նստեցավ Մակակոս էլ հիռու, հիռու էն գեներալ դամերեմեն ու իր հոքնհան թաբունիմեն. ամա աճեիրը վուր վիքաշից, տեսավ վուր էն անհավտնիրն էլ էկան ու պուպուզ դեմուդեմը շարվեցան։

Ուզում էր էն սահաթին խիղճ վիկենա ու գնա մեկել ծերը, թեզուղ իստակ դուռ կորչի էնդանց. ամա հենց դիդեր չնչլով կապած է իր սկամու վրա. էնդադա հոքումը ճատով շանց տալու վունց դառնա։ Գլուխը քաշ գցից ու ակրքներուն դայիմ հուպ էրիտ, վուր հոքին դուռ չվազի։

Հանեցին դիփունքն իրանց նեժնի չիբերեմեն նեժնի պորամոնեքը ու հիշտ ու հանգիստ ճարած ու դադած փուղիրը. հանեց Մակակոս էլ դողդղան ձեռով իր դառը տանջանքով ճարած փուղերեմեն մե յիրիք մանեթանուց։

Ամբա սկսեցավ միծողանների միծնակ լոտոյի խաղը իր ամբո տերնաներով, վուրի վրա խոնիրն ու ժամանակ կորցնիլը չաժե։

* *
*

Զարմանք տեսիլք էր էնչախան էնզանցօրեն։ Մոդը խուն հոքի ավել լոտոյի բոլորքը նստած ախշկիրքը, կոսեիր խտակ մումեն շինած աթմորթիք էին, վունց խիլք, վունց սիրտ, վունց դատողութին, վունց զգացմունք, վունչիչ էլ չէր էրևում նրանց մեջը։ Մեկը տոպրկեմեն հանում էր լոտոյի նումերը ու անումը տալիս էր թե չէ, խունը մետի, գլուխը քաշ գցած, մե հանգի աճկիրն ու ձեռնիրը ժաժ էին տալի ու մե բան էին շինում։ Կոսեիր դիփունքը մե թիլի վրա կապած ակիկներիր էին ու էն թիլը ձգելիս դիփունքը մե հանգն էին խաղում։ Քա՛նի սիրուն ու գիդը նրանց մեջը, քա՛նի խելոք ու հիմար, քա՛նի հասակով ու գեհենիր, քա՛նի բարի ու չար, դի՛փ, դի՛փ, դի՛փ մեկ էին, դի՛փ մե նման էնչախ։ Լիզուն, կոսեիր էն ախշկեկանցմեն իրանց գլխի ու դոշի բրիլիանտներն էին խլի ու նրանք էին էնդադա վառած մոմերումը խոսում ու ճկճկում իրանց տերերու մագիեր, քանի սրանք գլուխը ժաժ էին տալի։

Սրանց վրա ավելի մոգնիքը, վուր էլ լոտոն չէին լայիզ տնում, ու մե էրկու. նեժնի վուրփեերիք յիրիք չուրս ատոյի վրա բեզիկ ու ռամս էին խաղում ու փուզիր էին տանում ու տանում տալի, վուր կլուրեմը լուսացնող մարթկերանցն էլ շեարցխվինոս։

Էս խաղացողներու մեջ մե քանի նշնելու ֆրանտ ախշկիրք էլ կուր կռանը գցած ու մինկենեռուն մարթագուպ յիրիք չուրս հազար թուման բաժինք կապած, մե ծերիմեն մեկելեն էին բոլթա տալի ու բուլվարի վրա ու կրուժոկումը տեսած մոդնի ջեհել ազերանց վրա ռանար խասում յա ֆրանսևար կոտրտում. հիդն էլ իսիտ էին ուզում իմանա թե էն ազերանցմեն վուրը կու լուս ննգնի անթամահքար, վուր շալկե ու տանի իրանց բիոներով։

Սրանց հակառակ, կոսեիր, մե էրկու պառավ Մաթա ու նամփերի, ծնգներումը ջանը կորցրած ու տերոզարմեն յա բուանութու կոլտիր ձեռին բռնած, նստած էին տախտի վրա ու էնքան զուրս ու զարթարանքումը, էն օսկե գաջած պատերումը իրանց տեսած օրիրն էին միտը բերում ու մխեմեն սիվցրած դարբքի պատերուն յիրանի տալի։

Մեկն էլ մենակ յաքա ու գիփունի հիդ, մեկն էր մենակ պեպելի նման մե ախզեմեն մեկելը թուռռում, մե օթախեմեն մեկելը գնում, լոտոիմեն բեզիկի մոգ գնում, բեզիկեմեն լոտո ու խան մեկին ատում գեթաղվանե, խան մեկելին շենի ճիրիմե. ղոնաղնիքու փեումն ու էշխումը, նրանց մոդ խոնար ծառա էրևվում ու ծառաներու վրա ատստիկ հրամաններ ծախում։ Էտ իմ բարի, սիրուն, նեժնի, վարձկատար, թավղաբալ Վարինկեն էր, ինքը խաղիարկեն, վուրնոր մե իմքին չէր տանուլ տալի, մե տեղ մե իմքին չէր

պակսեցնիլ տալի ու հիդն էլ դեսերտի ստոլը հաղրիլ տալի իր մոդնի ստալավոումը, մոդնի ահագին բուֆետեմեն աշխարքի լավութին հիդ դարսելով։

Ինչ բաբաթ բաբաթ մուրաբեք ու մրքեղեն, ինչ կանֆետներ ու խմիչքներ։ Թե քախկումը իմքին կու ճարվեր, վունց կուլեր, վուր էն գիշեր Վարինկի ստոլի վրա չէր էլի։

* *
*

Դի՛փ լաղաթի էր, դի՛փ սաղով էն չախն էնդանցուրօբեն, ամա էնդադա զուքս ու զարթարանրումը, էնդադա կնգերանց ու ախչկերանցումը, աճկին մե բան պակաս էր էրևում, սրտին մե բան ցավ էր տալի։

Էն պատվական կնդիրքն ու ախչկիրքը դիփունքն ունեին մե տեղ, յա հեր, յա վուրթի, յա մարթ, յա ախպեր ու նրանցմեն վունց մեկը էնդի չէին ու չէին էլ կանա ըլի, էնդուր վուր ադաթ չէր։ Վունց մեկը, կոսեր, արժանի չին վուր էս հանգի ժամանակ իրանց ախչկա, իրանց մոր, իրանց կնգա, յա քվիր ձենն իմանա, նրանց ասածնիրը հասկանա, նրանց ծիծաղի հիդ ծիծաղի... Արժանավուրնիրը, կոսեր, մենակ ծառեքն ու լաքիեքն էին, վուր լիմոնադներով ու արշատներով նրանց գլխին պտուտ էին գալի, նրանց մեչն անց-ու դարց էին անում, նրանց ծիծաղն ու հանաքնիրն իմանում։

Ո՞վ էր էստու միդավուրը, հալբաթտա վուր իրանք հերիրն ու ախպըրտիքը, իրանք մարթիքն ու տերիրը, վուր նրանք էլ իրանց կնդերանց ու ախչկերանց հիդ ժամանակ անցկացնիլ չէին սիրում ու միթամ իրանց խիստ հարկավուր բանը շինում, յա կլուբներումն ու ուրիշ լավ լավ տիղերում լուսացնում։

* *
*

Ամա մեղայի ասածու, էսղադա անիրավ մարթկերանցմեն ու տերերիմեն մեկը, հեսաբեմեն դուս, հավատարիմ էր մնացի էս դիշիրութին իր սիրեկան նեժնի կնգան, իր սրտով սիրած օղլուշաղին. էտ էն հալալ, աստվածապաշտ, մարթասեր տան տերն էր—ինքը բիձա Ալեքոն, վուր առանց էն մե դիշիր էլ չէր դիմնա առանց կլուբի ու էն շաբաթ գիշիր իր առուտուրի հալալ հեսաբնիրը պրծիլ էր թե չէ, դեմուդեմն էկիլ էր տունն ու իր նիտ ու անիղնիրով ու հուրսնուրդներով դաչած օթախումը խան ժամագիրք էր կարթում, խան փարդի էդնեմեն սիրուն ախչկերանցը թաքուն ծկլուտ անում։

Ժամագիրքը խիստ էր սիրում բիձա Ալեքոն. ամա էնչախը շատ էր ափսոսում, վուր թուրքօբա չէ ու էնղադա սիրուն կնդիրքն ու ախչկիրքը դիփ մետի իր կնիկ չէին։

«Հա՛յ թե կու լվլրվեի», ասում էր իր մտկումն ու մե բաշ սուլթան դառնում. ամա սուլթանի օրը վուր միտն էր բերում ու թախտ կորցնելու ահը սիրտը ննգնում, ինքն իրան ամանչում էր իր տուտուց մտկերեմեն ու իր գլխի վրա ծիծաղում, իժում էլի ժամագիրքը ձեռին վիկալնում ու «Տե՛ր, մի՛ դարձուցաներ ղերեսս քո հինեն» կարթում։ Հիդն էլ իր մախմուր թշերավուր Վարինկեն չուստ չուստ կանֆետներ տուն բերում նրա համա ու էնենց ուստութենով թավաղա անում, վուր կանֆետը բերանն էր դնում ու սիրեկան ձեռի դուլը պռոշներումն մնում։

«Քի պես օշով չի՛ ըլի, Վարինկա ջան»,— ասում էր Ալեքոն։

«Քի պես մարթ օշով չի ունենա, Ալյոշա ջան»,— ասում էր Վարինկեն։

Ու կցվում էր փարդի էդնեն պառավ մարթու ու ջեհել կնգա սերով ճիտն ու պաչը։

Ո՛վ դուք Վարինկի դոնաղ կնդիրք ու ախչկիրքը, ո՛վ դուք գեներալ դամեք, դուք վուր աշխարքումն էլ օշով չթողիք, հենց էտ գիշեր առանց բամբասելու, դուք վուր հիմի ծանդր ու բարակ լոտո, բեզիկ ու ռամս իք խաղում, ինչ իք տեսնում, թե հենց էս սահաթիս ձիր կշտին ինչ է պատահում։

Հա՛յ թե գուզիք, վուր փարդեն մե բաշ հիդ քաշվի ու ձիր անգճով իմանաք թե էնղանց ինչ՛ձեն է գալի, ձիր աճկով տեսնիք թե ձիր նեժնի խազիաիկա Վարինկեն ու իր մարթ աղա Ալեքոն վունց ին մեկմեկու փաթրթած կանգնած դոներումն ու քաղցր քաղցր պռոշտի անում։

Հա՛յ թե ձեռաց կու ծիծաղեիք ու քոքռեիք, հա՛յ թե խոսելու մարաքա կու շինեիք ձիզ համա։ Ամա օշով չի գիդի, կուլի մինձ մարաքեքը էս սահաթիս Վարինկեն ու Ալեքոն ունեին ձիզ վրա սարքած։

Էտենց է, ինչքան էլ հետևաք ու ուրիշին բամբասիք, ձիր օրումն էլ չիք տեսնի թե ձիր քնթի տակն ինչ է անց կենում ու ձիզ էլ վունց ին բամբասում։

Ամա թողնինք բիձա Ալեքոյին իր օթախումը իր բարի ու չար մտկերով, իր ժամագիրքով ու Վարինկով, թողնինք ֆրանտ դամերուն ու նեժնի վուրփևերերուն բեզիկ ու ռամս խաղալիս, թողնինք պառավ Մաթոյին ու Խամփերուն հին դարբսներուն յիրանի տալիս, թողնինք մոդնի նշնելու ախչկերանցը մոդնի անթամահ տղերանցը պտրտելիս։ Ցիս վունց մեկի համա պարապ չիմ. իմ ուշկ ու միտկը Մակակոն է, լոտոն է, վուրդի իմ նաչար Մակակոն նստած է, իմ նահատակ Մակակոն, վուր էլ լավ ու վատ չէր իմանում, էլ տարած ու տանուլ տվածը չէր հասկանում դեմուդեմի ախչկերանց ու գեներալ դամերու քչփչալեմեն ու ծիծաղեմեն։

Ցիրգնուց պատիժ էր էկի գլխին ու մենակ էն էր խնդրում մտկումը,

վուր աստուած կարողութիւն տա էս պատժին դիմանալու ինչրու վիրջն ու հաստատ ուխտ էր դնում, վուր հորեսի դենը էլ իրնի մահի գեսը չանցկենա ու էս հանգի տիղ չդեվեր ննգնի։

* *
*

Ի՞նչ էր արի Մակակոն գեմուդեմի ախչրկերանցն ու էն էրկու գեներալ դամին, ի՞նչ գլիթ ուներ նրանց մոդ, վուր էսենց վրեն ծիծաղում էին ու մասխարա գցում խոճին։

Ցիս կարծում իմ, գիփունքդ, ով Կունդուրինց Թաթելին կու ճանչընաք, առանց իմ ասիլ էլ հասկացաք ու գիդիք էլ։

Ախար էն սիվ սրտով Թաթելը, վուր աշիրքի շեդան գեդան էր ու Սոլոլակի ախչրկերանց համա բաղերումը սաղանդրներով պիկնիկ սարքող, էն օրը ճաշին բուրթի գեներալ դամի մոդ էր էլի ու ինչի վրա էլ մե բաշ խոսկը էկիլ էր, մինչ օրթումներու տակ, տուկրա տուկրա հիդ էր ասի նրան Մակակոյի սաքեշի խաբարը։

Հենց էս խաբարն էր, վուր դնգր ու բուրթի գեներալ դամերուն խիստ էր նիղացնում, հենց էս խաբարն էր, վուրի վրա նրանք ու իրանց կամպանիեն խնդում էին ու խիթարվում. «էս էլ ինչ բեհաութին է, քա՛, ու, էս էլ ինչ ամութ բան է էկի իրանց գլուխն ու, ով էր աղանչաք անում, վուր էկիլ է իրանց մեջը ձքվիլ է ու, էրնեկ ճակը դուս գա, տանուլ տա ու, էրնեկ մարթն իմանա ու մե լավ դնգսե ու...». էլի հազար էս թահարնիրը. հիդն էլ ծիծաղնիր ու քոքուցնիր, վուրի պատճառով իմ խիղճ Մակակոն հենց բոնե էլ վունց նումրի անումն էր իմանում խանդիսխան, վունց կանացիլ էր իր թղտի վրա նումրեքը ջոգի։

* *
*

Էսենց տանջվում էր ու նահատակվում իմ Մակակոն գեմուդեմի գեներալ դամերնեն ու ախչրկերանցմեն, վուրիրը իրանք խիստ արդար ու հալալնիր էին կարծում իրանց գլուխը, էնդուր, վուր նրանցմեն՝

Մեկը էրկու հարուր վուրփի բողազ էր դուս կտրի։

Մեկելը, բուրթի գեներալ դամեն, մարթու տնիրը իր վրա հաստատի, վուր ուրիշին հիդ տալու էլ վունչիչ չմնա։

Մեկուելը, մե ռումբի դամա, էրկու ջեր սուտ կուտր ննգածի կնիկ էր։

Վրա չուրսը, խարթուլինց աքլար ախչիկն էր, վուր մարթու բարաթն ազատելու համա պարտական տիրուչը հեսուի հուփ էր տվի բողազումը, վուր խիղճը մե ձեն ղարտուլ է էլի կանչում, ինչվի էս պատվական ախչրկա պատվական մարթը նաչաք պարտկան տիրուչ ջիբիրն է էլի տընդղում ու խիստ պատվական տեսկերը նրա Ղարաբաղի լափչրքնիրը հանում։

Վրա հինգը, Զառավանդինց Բիժճոյի գեղջի կնիկն էր, վուրի ճրել աճկանի սիվ էրես մարթը ուրիշի դուքներուն ու քարվասիլին կրակ էր տվի ու էնդով հարստացի։

Վրա վիցը, Հոդեչոյինց Ճլերքոն էր, վուրի միխկ բերելու կոլոլ մարթը խալխի քրտինքը իր համա փուղիր էր շինի ու էնդով մինձ մարթացի։

Վրա օխտը, ախկատ Ղազարոսի չամամավլորի լփոշ կնիկն էր, վուր մարթը քանի տարի ջեր գուղերու ուստաբաշի էր ու իժում սալդրթե ալբեմեն իր համա յիրիք շուրս էտաժանի քարվասլեք ու տնիր շինեց։

Վրա ութը, մե նեժնի քրքոշ դամա, հիվընդներու բուլյոնեմեն իր համա մախմուր սալուփ էր կարի։

Վրա ինը, մեկմեկեն հիռու նստած չար ու չասպանդ յիրիք տեքեր կնդիրքն էին, վուր աճկով ամկ չունեին մեկ մեկու տեսնելու։ Նրանց բաներուն, խաբրներուն յիքա գիր ու դավթար պիտի ու ով գուզե ձեռաց իմանա, յիրիքեմեն մեկին հարցնե. նա ինձ վրա լավ հիդ կոսե։

Վրա տասը, մե ծիագլուխ ախչիկ, իր սիրեկան մարթու անդերձը ակռքով էր ծամի ու խժում հաբի պես կուլ տվի։

Վրա տասնումեկը, խիստ վազլախն էր, ֆոմինոումը իր մոդնի փիշի տակ ապրանք փախցրի ու փիս բեաբռու էլի։

Բարեմց մեկն էլ ասիմ ու մե դուժինը թամամ անիմ։

Վրա տասէրկուտը, մե խաբրաբրդան էշխով կնիկ էր, վուր լոտոյի կազնաչեութենումը ուրիշի բրիլիանտե մատանիքը վիր թոցրի ու էնդու համա չիքիլեն պատովի ու հատ կավը կորցրի։

Ինչ դուժին հերիք գու քա. էլի ով չկեր էնդի խառը։

Իրիցփուրի կնիկ, էգեղեցու փուղերով զարթարած. չինովնիկի կնիկ, քրթմներով բողազը լցրած. մինչ արիստոկրատկա, տանեն դուս արած, իր ջուխտ բաժինքով մարթուն էրկու ջեր առած. պատի արիստոկրատկա, մարթումեն դաս առած, մարթուն ջիքը դրած, յադի հիդ ննգած։

Քանի էլի սրանց նմաններ, սրանց վրա ուփրո վաթարներ. քանի ռուլիկ ու խափլանիր, օսկով, բրիլիանտով շարտածներ, մոդերումը փաթրթածներ։

Ո՞վ կու համբրե նրանցը, յա ո՞վ կու իմանա նրանց սարսափելի բաներն ու գործերը։

Ամա, ինչ հաչաթ, նրանց արածները, նրանց մարթու կատարածները մարսվիլ էր, գնացիլ էր, ով էր տեսնում, ով էր հարցնում։ Իրանք լավ հաքած, լավ զուքած, լավ ապրող, լավ տուն ու տիղ ունեցող, լավ սիրելի

բարեկրմի տեր, դիփունին ընդունող, դիփուննանցմեն ընդունած ու ամեն տիզ դիփունի վրա վերի գլխին նստող. հիդն էլ սեմդեսիա դվա ու շեսդեսե տրի նեժնի ասող։

Նրանք ինչ միղավուր էին, նրանք ինչ գեթ ունեին։

Միղավուրն ու գեթ ունեցողը Մակակոն էր, իմ խիղճ Մակակոն, վուր սաքեշեն գրավ էր դրի ու էկիլ էր իրանց առչիվը նստիլ էր ու վուրի համա թոկն էլ ափսուս էր, նրանց մտկով, նրան խիղտելու։

* *
*

Սահաթի տասն էր գիշիրվանը, մումերու կեսն էրվիլ էր. զալումն ու գաստինումը օթը խիստ ծանդրացիլ. դուսը քուչեն էր լքցրվի տանու կարետներով ու կալյասկերով, նեքսիվը կուխնեն ու բալկոնը լաքիերով։ Մակակոյի մարթն էլ դուքանը կոխսվիլ էր թե չէ, փեշաքրի շուրերով դեմուդեմն էկիլ էր ու բալկոնումը հիդ ու առաչ բոլթա տալով ղրգում էր ու ղրգում լոտո մոգոնողի համա էլ ու բիձանց համա էլ, վուր բանն էսենց ուշանում էր ու իր շուրիրով էն հանգի օսկե տներումը գաբեդվա չէր անում տուն գնալը առանց բիձա Ալեքոյին, վուրի համա լաքիեն ասիլ էր, թե տանը չէ, կոսե։ Ով գիդե էն էլ խրատած էր, թե փեշաքրի շուրիրը չդուր էկավ մե հոքևուրին։

Մակակոս խելի տանուլ էր տվի։

Յիս կի չէի գիդի, վուր էտենց կուլի. աբա ի՞նչ սիվ քար կու տաներ էն ազազիլներեմեն, յա ով կուտեր նրան սրտի էնղադա ուժ ու զորութին, վուր էնենց սարքած լոտոեմեն ինքն իրան մե վուխտի վիր էր կացի։

Սիրտն էնենց էր դառի, վուր դանակ էիք խփի մե պուտ արուն չէր կաթի։

Հե՛յ գիդի, ինչ մտկերով էր էկի բիձանց տուն, ինչ մուրազով ու տանջանքներով գրավ դրի իր ճարումադաթ սաքեշեն, ինչ մտկերով նստի էն լոտոյի վրա ու հիմի ինչ էր...

Տանելու ագահութին իսկի չուներ խիղճը ու տանուպտալն էլ չէր խնահում, օղունդ ամութեմեն պարզ էրես էր դուրս էկի, օղունդ մե բարով էր էնղանց ազատվի։ Գլուխը քարը տա, ասում էր, սաքեշի տաս մանեթն էլ, մարթու տված յիրիք մանեթն էլ. դիփ իր աճկի լուսեմեն կու հաներ, իր ատդի ծերեմեն կու քաղեր։ Մագրամ հիմի ինչ անե, վուր էն յիրիք մանեթն էլ գնաց, էն տասն մանեթն էլ ու տասն էլ ուրիշ էր գնում. էս խոմ իստակ խայտառակվեցավ։ Հիդն էլ էն անիծած գեներալ դամերու ծիծաղն ու հանաքները, վուրը Մակակոն շատ փային իր վրա էր վիկալնում, շատն էլ հենց գիդեր իր վրա չէ։

* *
*

Վունց կու վիրչաներ էն անիծած լոտոն նրա գլխի համա, ի՞նչ կուլեր վիրչը, ի՞նչ կու պատահեր. դիփ էս փքրերումն էր տրորվում խիղճը ու էստումը շատ ջեր տարածն էլ չէր մաշուր անում, էնենց վուր կշտին նըստած մե նեժնի ախչկա միխկն էլ էր գալի ու նա օտկում խանդիսխան Մակակոյին։

Էլ չէր գիդի խիղճը ումը միղ դնե, ումը քիքս գա իր բեբախտութինը. իր անկարա սրտումը օչովու գունահը չէր մտնում, օչով միղավուր չէր դուս գալի։ Ինքն իրան էր միղ դնում, վուր իր չլումը չկացավ, վուր միծաօղլաններու մոդ նստիլ ուզից, վուր էկիլ էր ու նրանց մեչը ձքվիլ, վուր մե կես սահաթ առաչ մե քիչ տանելու ումիկ տեսավ թե չէ, հա՛յ հարայ, ջեր դրուստ չտարած փուղերով իր էրեխի համա ինչոր խոստացավ առնելու ու ինչրու վիրչը մե մուլափ չէրիտ տեսիլ էր, թե աստուձ վունց է վիրչացնում բանը։

Հենց էստու համա էլ աստուձ պատժում էր, կարծում էր Մակակոս։ «Հե՛, հախս է, ասում էր իր մտկումը. ա՛յ էտենց կու սիվնա էրեսդ»։

Միղա էր գալի աստրձուն էլ, սուրվ Սարքըսին էլ, աստուձաձնին էլ, խեչերուն ու սրփերուն էլ ու ուրիշ վունչիչ չէր ուզում, ուրիշ վունչիչ չէր աչանչաք անում, օղունդ մե ջեր մայինց տանե, վուր իր տաս յիրիք մանեթեմեն ավելի պարտկ չդնվի վրեն, վուր էրեսը չսիվնա էն սիվ էրեսներու մոդ։

Ամա դուն չմեռնիս, էս խաղն էլ անցկացավ. ովոր տարավ էլի մե թումանը ու իրան Մակակոյին մե մանեթ էլի նուր պարտկ ավելցավ։

«Քսան ու էրկուսով իս հիմի»,— ասավ նրան կազնաչեին ու խիղճս հենց գիդեր օճորքը գլխին ժաժ էկավ։

* *
*

Այ հորես դիփ մոշլա կուլի, հորես դիփ մեսի կու ժաժ ննգնին, կու հանին իրանց պորտմոնեքը. վուրը տարած փուղիրը մեչը կոծե, վուրը տանուլ տվածը կու բաժնե։ Ինքն ինչ անե, ինքն էլ կու հանե իր պորտմոնեն, յիրիք մանեթը խո տված ունե, տասն էլ կուտա. իժո՞ւմ մնացած ինը մանեթն ո՞վ տա, վո՞ւնց տա, ո՞ւմը կու մնա տալացու. կուլի հենց դեմուդեմի գեներալ դամերուն, նրանց մասխարա պիտի դառնա, պիտի էրեսին ասին, վուր թե չուներիր ո՞ւր էիր նստում միղ մոդ, յա իսկի էլ չուզին ասին թե էտ էլ քիզի ինք բախշի, չունքի չունիս. էս խո մատով շանց տալու դառավ, էս խո բեդնամ էլավ աշխրքումը. յա կուլի ինքը ձալոն մեչ

ննգնի, նա տա նրա մագիեր, էս խո գեդինը մտավ, էս խո էլի էն դուս էկավ. էլ սաքեշեն ուր էր գրավ դնում, էլ էսղադա ուր էր տանջվում...

Ա՜խ, ա՜խ, ի՞նչի մենակ չէ, ի՞նչի մագիրը չէ գլտոում, ի՞նչի աճկիրը ասղով չի ծակծկում, ի՞նչի դուղը մկրատով չէ գուս քչփորում. ի՞նչի գեդինը չէ ժաժ գալի ու օճորքը գլխին չէ փուլ գալի. ի՞նչի գեդինը չէ պատրավում ու իր Թավլափիան գլուխը չէ գեվեր տանում։

* *
*

Էս հալումն էր իմ խիղճ Մակակոն, վուր գեմուդեմի դամեքը նուրմեկանց կցեցին իրանց ծիծաղն ու հանաքնիրը։

Էս գամոքը, էլ խսկի չին խնահում Մակակոյին, էրեսին ին ծիծաղում... դրուստ, դրուստ, իրան Մակակոյին ին մասխարա գցում... Ա՜յ, էլի ինչոր քչփըչացին, ինչիր էլ ասին մեկ մեկու ու իրան մտիկ արին, ա՜յ. հիռու ախչըկերանցն էլ ինչոր նշներով իմաց արին...

Մե բաշ, մե լեշխո գոմեշ դամա, վուրի սիվ սիվ մինձ աճկիրը դուրթ գոմշի աճկերու նման էր դրուստ ու վուրի ծառվին լիմոնադն ու արշատնիրը օխտա չէին գալի,— սաքեշով սառը ջուր ուզից։ Էստումը դնգր գեներալ դամեն ասավ, վուր էրծրթե սաքեշով ուփրո սառը կուլի, կոսե, ու նեժնի ծիծաղեցավ։

Մակակոյի սիրտը կինաղամ պատռվեցավ. դնգր դամեն կի թեթիվ հազաց ու իժում նա ու բուրթի գեներալ դամեն մե փիս ծիծաղ վիր արին, վուր էս ծիծաղը բերնե բերան անցկացավ. ով գիդեր խիղճ Մակակոյի խաբարը։

Էլ խիալ չկա, իմացիլ ին, գիդին իր սաքեշի բանը. էս ին ծիծաղում, էս ին մասխարա գցում. դիփ լուս ննգավ. դիփունքը հոբես կու թքին էրեսին. մարթն էլ կու իմանա, ննգավ նրա ածկա տակը, ծեծվեցավ, սպանվեցավ... Թաթելն օրթումը կոտրիլ է... հա՜, հա՜, ա՜յ աշքարա նրա անումն էլ քնթփնթացին, Սեյիդաբաթն էլ հիշեցին...

Էլ չդիմացավ իմ խիղճ Մակակոն. հենց գիդեր մազեքեմեն դիվիր քաշեցին, լոռոն գնաց ու էկավ, տունը ժաժ ննգավ, օճորքը գլխին փուլ էկավ...

Մակակոյի սիրտը գնաց...

Նրանք ջեր էլի զնշրտվում էին, վուր Մակակոս թուլացած ննգած էր սկամու վրա։

Խի՜ղճ Մակակո...

* *
*

«Հա՜յ ջուր, հա՜յ օտկեցեք, հա՜յ ժե դեսը մտիկ արեք...», ննգավ օրիանօրեն։ Փաթթվեցան մե քանիսը Մակակոյի գլխին. վուրը ձեռնիրն էր քաշքըշում, վուրը անգճնիրը, գզգզեցին խղճիս, գլուխը մոշլա արին, դերիեն պատռտեցին, չիքիլեն մաս մաս արին, էրկու գրափինկա ջուր վրեն դարդրկեցին, թոչեցին, խարաբ արին, փչացրին իմ նազ ու ջեյրան Մակակոյին, իմ յիրգնային Մակակոյին։

Մեկ մեկու քիքս՝ «էս դուն արիր, էս դուն». կռիվ. ղալմաղալ, ծիծաղ, ընջրտուքս... դուս ննգավ բիձա Ալեքոն իր օթախեմեն, դուս վազեցավ Վարինկեն ստալավոումեն մուրաբի գդալը ձիռին.. ձլիվ, ձլիվ Մակակոյիս հիդ բերին։

Ջեր էլի թամամ ուշկի չէր էկի, ջեր էլի սիվ ու սիպտակ չէր ջոգում, վուր մարթն էլ բջերանց հարայի հուրաթցումը տուն ննգավ...

Մե ծիկեք, մե նեժնի ախչըկերանց սրտի դնգնգուց ու սրտի գնալ, մե Վարինկի նիղանալ ու բեդասլուքեենի վրա ու բեդասլ ասկականուքեենի վրա չարանալ, մե ղիժինեք ու ղալմաղալնիր, վուր տերը թափե ու աստուձ ազատե։

* *
*

Իմացավ Մակակոյի մարթը դիփ, դի՜փ իմացավ... օչովու բախշիչը չուզից, հանից իր քեսիբ ջիբեմեն դառը քրտնքով հալալ աշխատած փուղերիմեն ինը մաշած ու տրորած մանեթ, էրեսին շպռտից դիփունանցը, բոնից կուռը Մակակոյինը ու ծվծվալի դեվեր թրևից խղճին, էրկու ճղլանի արտրսունքնիրը դեվեր գալիս, վաթսունուէրկու վուտնանի մարմար քարե սանդուխտը, վուրի վրա դիվիր գնալիս Մակակոն հենց գիդեր յիրգինքն էր գնում։

Ցիս էլ դուս իմ գալի էսղանց...

Գլուխը բիձա Ալեքոն էլ քարը տա, նրա կնիկ Վարինկեն էլ, նրա տունն էլ, նրա լոտոն էլ։

Մակակոս վուր չէր էլի, ավատացեք ինձ, յիս վուտս էլ չէի տուն դնի էնդի, թավաթ Վարինկի աճկիրը ինձ համա չէ ուռի։

* *
*

Էտ էլ քու ձալոյի լոտոն, Մակակո ջան, էտ էլ քու միծաղլաններու Քալինկեքն ու Մաշինկեքը։

Միխկս գալիս իս, քու արիվը, Մակակո ջան...

Ցիս քիզ լավ կու ճանչնամ, քու նազ ու ազիզ սրտի խաբարը գիդիմ. էտ քու մարթու տուր ու դմփուցին, էսղադա բեաբրութենին էլ չիս դիմնա...

Չէ թե ձալոյի էրեսը, չէ թե Սոլոլակի էրեսը դուն չիս տեսնի, դուն քու քուչեն էլ չիս դուս գա հորեսի դենը, քու Կեկելիմեն ու Նինուցումեն էլ կու ամանչիս...

Գնա՛ նստի քու կարի վրա, քու արտքսունքներով թաց արա մուշտըրու ապրանքը...

ԻՄ ՄԱՀՆ ՈՒ ԹԱՂՈՒՄԸ

1911

Մնա՛ք բարով, յիս գնացի, գնացի էն հանգի տիղ, վուրդանց, ինչ աշխարքը ստիղծվիլ է, ջեր օչով չէ հիդ էկի։

Դուք լա՛վ ըլիք, էրգար օր ունենաք, ջան՝վ առողջ ըլիք, սրտով ուրախ, հոքով հանգիստ։

Ինչ գեթ իմ արի օմքնու, խնդրում իմ բախշե. ով ինձ է գեթ արի ու դաղիլ է սիրտս, յիս էլ բախշում իմ իստակ սրտով. խնդպտանքը վունչիչ դնամիշ չանե իրան իր օրումը։

Ինձ թաղելիս վունչիչ թանթանեք հարկավուր չէ։ Տան կարք ու սարքին ձեռը չտաք, զարթի իմ բանելու ու քնելու օթախին, վուրդի իմ հավիտենական քնելու գոդենքը պիտի պատրաստիք։ Մնացած օթախնիրը էնենց մնա, վունցոր կա, ինչրի ինձ կու թաղին. իժում դուք գիդիք։

Սիվիր վունց մե օթախումը չըլի ու դուք էլ, իմ ազիզ Սոֆի ջան, ու սրտով սիրած վուրթիքս ու թուռնիրս (Chère Hélène), վուր իսկի էլ սիվիր չհաքնիք, խիստ լավ կո՛նիք։

Վենոկնիր (պսակնիր) մե հատ էլ չըլի, վունց տանը, վունց դուսը, վունց դուք շինիլ տաք, վունց ուրիշիմեն ընթունիք վաղօրոք էվետ հայտնեցեք, վուր օչով չնիղանա։

Կո՛ւբո (դագաղ) դրեք ինձ իմ սիվ սերթուկով ու մորթե իմ սիպտա գդակով։

Իմ թաղումի առաջ՝ տանը վունչիչ պանիխիդեք (ամբիծկնիր) չըլի. մենակ իմ տանու քահանեն հերիք է, վուր էկողներու համա մե «Հայր մերս» ասե, վունցոր վաղ կարք էր։ Ու թե հիռավուրնիրն ու յադիրը իսկի էլ չնիղանան, չգան ու ամեն սահաթի, մեկ մեկու էղնեն, կնգաս ու վուրթկերանցս նուրմեկանց չլացցնին, ավելի լավ կոնին։ Նրանցմեն ով ուզում է իր սրտի ցավը հայտնի իմ դեյիրը, թո՛ղ իր այցետոմսը տա դոներումը կամ թե չէ,

էնդի էվետ դավթումը գրե իր անումը, վունցոր լուսավուր յիրգիրներում ընթունած է։

Մոռացա իր տիղն ասիմ, վուր գազեթնիրը չլքցնիք անթիվ ու անճոռնի հայտարարութիններով ու անտիղի խոսկերով։ Ով չի գիդի, վուր դիփունի համա, ով ինձ սիրում էր, յիս խիստ սիրեկան ու թանդագին իմ էլի. համ էլ ետ խոսկիրը շատիրը, մեկ մեկու մտիկ տալով, մինձ ու դառը, խի՛ստ դառը կսկիծով ին հայտնում։

Մախլաս։

Իմ մահվան հա՛յտարարութինը գրեցեք, առանց չինս հայտնելու, էսենց՝

Գաբրիել Սունդուկյան—Համմալը վախճանվեց (ժամանակը). հուղարկավորությունը տեղի կունենա (օրը), առավոտյան (ժամը), հանգուցյալի բնակարանից, և այլն։

Ինձ թաղելու օրը մե քահանա ըլի մենակ—իմ տանու քահանեն—իմ առչիվը գնացող ու մեկ էլ մե տիրացու, նրան ծառայող Ուրիշ քահաներու, ուրիշ հոքեվորականների օչովի չխնդրիք ու չնիղացնիք։

Ծառայութենի խաչիրու նշաններիր վունց բալըշներով, վունց առանց բալշի իսկի չըլի։

Իմ առչիվը գնացող քահանեն ու տիրացուն սուս ու փուս գնան իրանց ճամփեն տանեմեն ինչրի էգեղեցին ու էնդանց ինչրի գերեզմանս. ճամփին վունչիչ շարական ու բարցրաձայն աղոթկնիր չըլի։

Թանգագին Սոֆի ջան, ու թանգագին զավակնիրս. դուք համաշա խելոք իք էլի. դուք գիդիք, վունցոր սրտեներուդ կու դայիմացնիք ինձ ճամփու գցելիս։

Ամփովան ու ուրիշ ցերեմոնիեք իսկի չըլի. իլաիմ թե ձիաներու գըլխին էն բմբլե թայիգուլնիրը սարքած, վուր ինձ ճիճինի է բերում։ Ութ համալ ու ութ կի՛նտո մեձրեցեք, հիրթով ծտի պես կու թոցնին ինձ։

Կո՛ւլի նրանց մեչը ղուրթ Պեպո էլ ռաստ գա, էտ խիստ մինձ պատիվ կուլի իմ Պեպոյի համա։

Վի՛ըչը թաղեցեք ինձ, վուրդի էլ գուգիք։ Յիս գուգեի իմ մոր մոդ, ամա էնդի տիղ չկա. նրա մոդ թաղած էրեխերքս թարմաժ չըլին։

Գերեզմնիս վրա վունչիչ արձան հարկավուր չէ. մե սիվ քար ու իմ ջանը։

Վրեն գրիլ տվեք էսենց՝

Գաբրիել Սունդուկյան—Համմալ
Մնվեց 1825 թ. հունիսի 29-ին.
վախճանվեց 191... թ.-ին։

Թե սրտով վրես արձան իք ուզում ու արժանի կու համարիք, էտ արձանը, իմ փոխանակ, Պեպոյի հա՛մա կանգնեցրեք, վուրդիոր կու սաղ գա։

Սաղ բոյով կանգնած ըլի բացը պատվանդանի վրա իր հաքուստով, գդակը ծածկած, մե ձեռին Արութինի բարաթը, մեկել ձեռով վրեն գրածն ըլի ցույց տալի նրան, վուր գլխաբաց ու սերթուկով սիվէրես կանգնած է կշտին։

Տակը, պատվանդանի վրա գրած ըլի մենակ էս խոսկիրը՝

Պ Ե Պ Ո

էս քու կոտրած ձեռով չի՞ս գրի՛...

Էն արձանն ու պատվանդանը թուչեմեն ըլի ածած ու շինած. վրեն վունց մե տիղ իմ անումը չհիշիք։

Իմ ցանկութինը էն է մենակ, վուր դիփունի սրտումն ու մտկումը հիդնուհիդը ավելի ու ավելի հաստատվի էն հասկացողութինը թե հաշա ուտիլը (ուրացութինը) մինձ ամութ բան է մարթու համա ու ով իր պարտկը չի ճանչնա, իր տված խոսկը չի կատարի, իր ձեռք քաշած թուխտը կու ուրանա,— նա մարթ չէ, ինչքան գուզե բացըր ըլի կանգնած մարթկերանց մեչ։

Գանք հիմի ասածներուս կատարելու վրա։

Պեպոյի արձանը շատ հիռու բան է. էստու համա օչով չնիղանաք հիմի ու անմիղ ժամանակ չկորցնիք։

Իմ թաղումին ինչ փուղ պետկ գա իմ պարտկն է. էստու ղահրը կնիկս ու վուրթիքս կու քաշին էն պստլիկ կարողութենեմես, վուր թողնում իմ նրանց համա։

Քելեխ-մելեխ իսկի հարկավուր չէ. էն օրվան ախկրտներու ճաշի փուղը իմ տանեմեն կու տաք Հայոց Բարեգործական Ընկերութենին նրանցը բաժնելու։

Մնաց իմ թաղումի կարք ու սարքի կատարիլը, վունցոր գրիլ իմ էսաի վերիվը։ Սրա համա հատուկ խնդրում իմ «Մշակ» լրագրի հարգելի խմբագրութենին, իմ սրտակից բարեկամներուս, աչկիս լուս կնգաս ու վուրթկերանցս աշխատին ճշտութենով գլուխ բերին ասածս ու խնդրածս։

Մնա՛ք բարով։

Մնա՛ս բարով, թանգագին իմ Սոֆի ջան։

Մնա՛ք բարով, թանգագին զավակնիրս։

Մնա՛ք բարով, սիրելի բարեկամնիրս։

Մնա՛ք բարով, սիրելի մարթիք, ինչ ասկի, ցիրի ու հավտի էլ ելիք։
Մնա՛ս բարով, իմ սիրած Թիֆլիզ քաղաք։
Մնա՛ս բարով, սիրելի ու պաշտելի ասկ. աստուծ վաթանիդ արժանի անեն։
Դիփունիդ սերը սրտումս խուռը թաղած տանում իմ հիդս։
Մնա՛ք բարով։

Գաբրիել Սունդուկյան—Համմալ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գաբրիել Սունդուկյան — Սուրեն Աղաբաբյան III
Գիշերվան սարերը խիր է 1
Օսկան Պետրովիչն էն կինրումը 27
Խաթաբալա 51
Եվայն կամ նոր Գիոգինես 171
Պեյպո 217
Էլի մեկ կոհ 320
Ջանդած օջախ 449
Ամուսիններ 550
Բաղնբսի բոխչա 696
Սեր և ապատություն 739
Վարինկի վեչերը 833
Իմ մահն ու թաղումը 865

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Գաբրիել Սունդուկյան

ԵՐԿԵՐ

Габриел Сундукян
СОЧИНЕНИЯ
(на армянском языке)
Издательство «Советакан грох»
Ереван — 1984

Խմբագիր՝ Ռ. Մ. Մուրադյան
Նկարիչ՝ Մ. Ռ. Սոսոյան
Գեղ. խմբագիր՝ Գ. Խ. Գյուլամիրյան
Տեխ. խմբագիր՝ Մ. Է. Ճանճապանյան
Վերստուգող սրբագրիչ՝ Վ. Դ. Ազատյան

ИБ *4836*

Հանձնված է շարվածքի 11. 05. 84։ Ստորագրված է տպագրության 22. 08. 84։ Ֆորմատ 60×84 1/16։ Թուղթ տպագր. № 2։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր, 30,68 պայմ. տպ. մամ., 51,14 պայմ. ներկ. թերթ, 34,3 հրատ. մամ.։ Տպաքանակ՝ 51 000։ Պատվեր՝ 1465։ Գինը 3 ռ. 10 կ.։

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

Издательство «Советакан грох» Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան, Ալավերդյան փող. № 65։

Типография № 1 Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР. Ереван, ул. Алаверяна, 65.